Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնության, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կտեղադրվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

«Գրքամոլ»-ը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք հետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com էլ. հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2016 © Grqamol. All Rights Reserved.

URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

ՀՄԱՅՎԱԾ ՀՈԳԻՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

ՌՈՄԱՆ ՌՈԼԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԱՆԵՏԱ ԵՎ ՍԻԼՎԻԱ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԱՌ

Հայաստան, հրատարակչություն Երևան 1975

Ս (Ֆր)
Ա 65

Ռուսերենից թարգմանեց

ԳԵՎՈՐԳ ՎԻՐԱՊՅԱՆԸ

Ա 70304 (948)
701 (01) 75 259 75 «Տ»

© «Հայաստան» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1975

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կոլա Բրունյոնի» ընթերցողին ուղղված իմ խոսքում, որը գրել եմ 1914 թվականի մայիսին, ես խոսել եմ «Ժան-Քրիստոֆի» ասպազենքերով իմ կաշկանդվածության տասնամյակի մասին, ասպազենքեր, որոնք սկզբնական շրջանում իմ վրայով էին, իսկ վերջում չափազանց նեղ դարձան ինձ համար»։ Անհրաժեշտ էր իրադրությունը փոխել։ Եվ ես այդպես էլ վարվեցի, տրվելով մի գրքի վրա կատարվող աշխատանքին, որը հագեցված է «ազատ պայքարի ուրախ տրամադրությամբ»։ Գիրքը իր ավարտին հասավ ավելի շուտ, քան այն ստեղծագործությունները, որոնց սկսված էին շատ ավելի առաջ։

Այդ ստեղծագործությունների թվում էր գտնվում «Ժան-Քրիստոֆի[1]» որոշ չափով ողբերգական մթնոլորտում իմ կողմից մտահղացած վեպը (այսօր ես կարող եմ համարձակորեն բաց թողնել «որոշ չափով» մեղմացնող բառերը, քանի որ ահա արդեն քսան տարի է, ինչ տրագիզմը սկսել է էլ ավելի ծանրանալ աշխարհի վրա)։ Այդ վեպը հենց «Համայված հոգին» էր, որն արդեն սկսել էր նշմարվել ստեղծագործության նախաստեղծ քաոսի խորքում։

«Ժան-Քրիստոֆի» վերջին գրքի առաջաբանը թվագրված է 1912 թվի հոկտեմբերին։ Հենց այդ նույն օրերին հավետենապես որոնող միտքը թելադրեց ինձ.

---

1 *«Ժան-Քրիստոֆի» որոշ չափով ողբերգական մթնոլորտում ես պատրաստում էի ուրիշ աշխատանքներ — ժամանակակից թեմաներով մի դրամա և մի վեպ («Կոլա Բրունյոնին» ընթերցողին)։ — Ռ. Ռ.*

«Հարկավոր է լայնացնել բարու և չարի սահմանները»։ Նվ իմ միտքը նոր ապարեզ էր փնտրում «ժամանակակից երկու սերունդների հակամարտության պատկերման մեջ—տղամարդկանց սերնդի և կանանց սերնդի, որոնցից յուրաքանչյուրն իր զարգացման մեջ հասել է տարբեր մակարդակի... Գոյություն չունի (իսկ գուցե նաև երբեք գոյություն չի ունեցել) այնպիսի դրություն, որ մի դարաշրջանի կանանց և տղամարդկանց զարգացումը ընթանա զուգահեռաբար։ Կանանց սերունդը միշտ կամ մի ամբողջ դար առաջ է անցնում իր ժամանակի տղամարդկանց սերնդից, կամ ետ է մնում... Մեր օրերի կանայք իրենց համար անկախություն են նվաճում։ Տղամարդկանց համար դա արդեն անցյալի հարց է...[1]»։

«Հմայված հոգու» գլխավոր հերոսուհին, Աննետա Ռիվիերը, պատկանում է այն սերնդի կանանց ավանգարդին, որին Ֆրանսիայում վիճակված էր նախապաշարումների և իրենց ուղեկից-տղամարդկանց չար կամքի դեմ մղած պայքարում համառորեն ճանապարհ հարթել՝ անկախ վիճակ ստեղծելու համար։ Վերջապես վճռական հաղթանակ էր տարված (բոլոր բնագավառներում, բացի քաղաքականությունից, որտեղ ռոմանական երկրներում մինչև հիմա դեռ շարունակվում է տղամարդկանց ավագ սերնդի անողոք դիմադրությունը)։ Սակայն առաջավոր չհկատի համար պայքարը դժվար էր, դա հատկապես դժվար էր այն կանանց համար, իեղճ և միայնակ, որոնք, ինչպես Աննետան, չվախեցան ոչ-ամուսնական մայրության հետ կապված անակնկալներից։ Բայց դրա փոխարեն կյանքը, լեցուն փոթորիկներով ու անվեհեր մենությամբ, երբ այն ժամանակ հազվադեպ կին-մարտիկներից ոչ մեկը ոչինչ չգիտեր իր մյուս զինակցուհիների մասին և պետք է հույսը դներ միայն իր վրա, կոփում էր ավելի ազատասեր և տոկուն բնավորություն, քան այդ նույն սերնդի տղամարդկանց մեծամասնության բնավորությունն էր։ Նվաճված հաղթանակը չէր կարող չդանդաղեցնել առաջընթացը այն մարդկանց,

1 Հոդվածներ 1912 թվի.— Ռ. Ռ.

ովքեր գնում էին առաջին տողանի հետևից։ Քանի որ լոկ փորձությունների և խոչընդոտների հաղթահարման դնով են մարդկային ցեղի ներկայացուցիչները— տղամարդիկ ու կանայք— շարժվում առաջ... Փառք աստծո, փորձություններ և խոչընդոտներ միշտ բավական շատ են եղել իմ հոգևոր դուստր և ուղեկցուհի Աննետայի կյանքում։ Մինչև վերջին օրը Աննետա Ռիվիերը[1] «ձգտում է դեպի ծով... Ո՞չ մի անշարժություն։ Ամբողջ կյանքը շարժման մեջ է... Միշտ առա՞ջ։ Նույնիսկ մահվան մեջ ալիքը մեզ տանում է... Նույնիսկ մահվան մեջ մենք առջևում ենք լինելու...»[2]։

* * *

Այդ կյանքի Դետը, որի ակունքներին ես խոնարհվեցի, իմ առջև հայտնվեց գեթ 1912 թվականի նոյեմբերին, բայց մինչև շարժվելը պետք է ըպասեր ինը տարի։ Քանի որ պատերազմի օվկիանոսը, որը երկար ժամանակ թավալում էր իր արյունահեղ ալիքները, սկսած 1914 և ընդհուպ մինչև 1920 թվականը, լցնում էր իմ հոգին զոհվածների խոր թախծով ու վշտով։ Իմ բանականությունը բռնված էր պայքարով, որի արատացուցանքն հանդիսացան «Իիլյուլին» և «Կլերամբոն»։ Այդ շրջանն ավարտվեց 1919—1920 թվականներին հոգեկան և ֆիզիկական ճգնաժամով, որը նորոգեց իմ հոգին և մարմինը։

1921 թվին իմ նախկին կյանքը մահացավ և մի կողմ նետվեց, «ինչպես դատարկ թաղանթ... Մեռնե՞նք, Քրիստոֆ, որպեսզի նորից ծնվենք»։ Եվ դա հաստատող ակամա սիմվոլիկ ակտը հանդիսացավ իմ մեկնումը Փարիզից, որտեղ ես մինչև այդ պահպանում էի կացարանս. ես մեկընդմիշտ հեռացա Ֆրանսիայից և բնակություն հաստատեցի, նրա սահմաններից դուրս։

Գրառումը, որ ես արել եմ այն օրերին, արել եմ իմ մտահղացած ստեղծագործության համար, բայց դա, թեև

---

1 «Ռիվիեր» ֆրանսերեն նշանակում է «գետ»։

2 «Հմայված հոգու» վերջին հատորը («Նախագուշակ»)։— Ռ. Ռ.

այդ բանը մտքովս չի էլ անցել, լիովին կարելի է վերագրել իմ սեփական կյանքին։

«Իրադարձությունները ընդամենը արտաքին դրդապատճառներ են։ Նրանք, լավագույն դեպքում, արձակում են այն զսպանակը, որը սեղմված էր ներքին անհրաժեշտության դանդաղ ճնշման հետևանքով»։

Իմ մեկնելը հին տնից, հին թաղամասից, հայրենի հին երկրից, որտեղ հասունացել էին իմ մինչպատերազմյան շրջանի ստեղծագործությունները, շրջեց էջը... «Մնաս բարո՛վ, անցյալ...» Բացվում էր նոր գլուխ։

Ես հեռացա Փարիզից 1921 թվի մայիսի վերջին, իսկ սրդեն հունիսի առաջին կեսին, Վիլնյովում, գրում էի.

«Սկսված է նոր վեպ, «Աննետա և Սիլվիա»։ Վիթխարի բավականության զգացում։ Անծանոթ էակ է բնակություն հաստատում իմ մեջ, և ես համակվում եմ նրա կյանքով, նրա մտքերով ու նրա ճակատագրով[1]»։

Ինձ երանություն պատճառող այդ աշխատանքը շարունակվում էր մի շնչով հունիսի 15-ից մինչև 1921 թվի հոկտեմբերի 18-ը, երբ «Աննետա և Սիլվիա» վեպը ավարտվեց։

Արդեն վերոհիշյալ գրառման մեջ ասվում է.

«Սովորաբար ընդունված է գրել մարդկային կյանքի իրադարձությունների պատմությունը։ Դա խոր մոլորություն է։ Իսկական կյանքը՝ ներքին կյանքն է»։

Եվ «Աննետայի և Սիլվիայի» առաջին հրատարակության առաջաբանը խոստանում է «մի կնոջ հոգեկան աշխարհի պատմություն, պատմություն մի երկար կյանքի՝ ապրված խղճի հետ համերաշխ, հարուստ ուրախություններով և տխրություններով, որը զերծ չէ հակասություններից, լի է մոլորություններով և հավիտենապես ձգտել է ոչ թե դեպի

---

[1] Այդ էակն իմ կամքից այնքան անկախ էր զարգանում, որ արդեն աշխատանքի պրոցեսում ես ստիպված եղա փոխել այն կերպարը, որը ձգտում էի պատկերել իմ սեփական ճաշակով։ Նա ինձ թելադրեց բնավորության բոլորովին ուրիշ գծեր և հատկություններ, անսպասելի վարմունքներ, հոգեկան խոհա շրջադարձեր,— ճիշտ այնպես, ինչպես դա կյանքում է լինում, երբ սիրելի կինը հանկարծ քեզ համար անծանոթ դառնում։— Ռ. Ռ.

Ճշմարտություն, քանզի այն անմատչելի է, այլ գեպի ներքին ներդաշնակություն, որը և մեզ համար բարձրագույն Ճշմարտություն է»։

Աննետայի ներքին կյանքը տարբերվում է, օրինակ, Ժան-Քրիստոֆի կյանքից ոչ միայն այն պատճառով, որ դա կնոջ կյանք է, մանավանդ մի այլ սերնդի[1] կնոջ, այլև այն պատճառով, որ Աննետան, անընդունակ լինելով հոգեկան ստեղծագործության հրամայող և սանձահարող անընդմեջ պտղեսեր օգնությամբ ազատագրվել կրքերի բռնկումներից, շատ ավելի անօգնական է իր մեջ փոթորկվող թաքնված ուժերի առաջ։

Շրջապատողներից՝ ոչ ոք չի էլ կասկածում նրա հոգու խորքերում թաքնված կրքի փոթորկումների մասին։ Աննետան ինքը երկար ժամանակ վտանգ չի նկատում։ Նրա գոյությունը առերևույթ հիշեցնում է Մեդոնի անտառի[2] խուլ խորքում նիրհող լճակը։ Բայց այս ստեղծագործության հետաքրքրությունը հենց այն է, որ հավանարակշռված, կարգին և խոհուն կնոջ հոգում, իր համար իսկ անհայտ, անտեսանելիորեն ապրում մի կիրք, որը հաշվի չի առնում Fas և Nefas[3]-ի սահմանները։

Այդ կիրքը հետևողականորեն մի քանի տեսք է ընդունում։ Սկզբում դա հոր հանդեպ ունեցած աղոտ սերն է— տագնապալի և զգալիորեն ավելի ուժեղ, քան դրանում իրեն հաշիվ է տալիս ինքը՝ Աննետան։ Այդ զգացմունքը երևան է գալիս անսպասելի կերպով հոր մահից և նրա գաղտնի

---

[1] Քրիստոֆը մահանում է հիսուն տարեկան հասակում, 1914 թ. նախօրեին։ Նա ինձանից քիչ ավելի մեծ էր։ Աննետան մահանում է դրեթե վաթսուն տարեկան հասակում, մեր օրերի ճակատամարտերի իրադրության պայմաններում։ Նա իր քրոջ հետ պատկանում է այն սերնդին, որը ծնվել է 1875 և 1880 թվերի միջև։ Ասյան և Մարկը պատկանում են 1900-ական թվականների սերնդին։— Ռ. Ռ.

[2] Հիշեցնում է երազ-հայւոցինացիան, որ նկարագրված է «Աննետայի և Սիլվիայի» առաջին էջերում։— Ռ. Ռ.

[3] Թուլատրվածի և չթուլատրվածի (լատ.)։— Fas ac Nefas»— ըստեղծագործության տեքստական, հետագայում հանված ենթավերնագիրը։— Ռ. Ռ.

կապերի հայտնաբերումից հետո։ Այնուհետև բուռն կապվածությունը քրոջ հետ— կապվածություն, որ փոթաթության է ենթարկվում գեղեցկադեմ Պարիսի ակնթարթային հայտնության ժամանակ, որը քույրերին դարձրեց ախոյաններ (խաչեզի կաթսաւոր բռնկումից հետո սկզբում մեկը, հետո մյուսը իր սիրեցյալին զիջում է քրոջը)։ Ավելի ուշ մոր սերն է դեպի որդին, որը առանձնահատուկ տեղ է գրավում կրքի ամպրոպային մյուս պոռթկումների միջև, կիրք, որ ամուսնության մեջ և ամուսնությունից դուրս անիրականանալի ներդաշնակություն է փնտրում։ Որդին այդպես էլ չի իմանում այդ սիրո ամբողջ ուժը, քանի որ Աննետան, որը երկար ու միայնակ ճակատամարտերում ձեռք է բերել իր զգացմունքներին տիրապետելու ունակություն, թույլ է տալիս երևալու իր հոգում այրվող բոցի միայն թույլ ցոլքը։ Այժմ նա— և միայն ու միայն նա— գիտե կրքի այն աշխարհը, որը բոցկլտում է նրա կրծքում և որը ոչ ոքի չի վերաբերվում։ Մի քանի տարի անց, պատերազմի տարիներին,— բուռն կարեկցանքի բռնկումն է դեպի մարդկությունը, որին վիրավորում էին, ատում և ոտնահարում շովինիզմից ծնված գազանային բնազդներով, և որպես այդ ամենից առաջացած ռեակցիա՝ անձնազոհ սիրո դրսևորումը գերի ընկած վիրավոր թշնամու հանդեպ, որի գլխին հայհոյանքներ է տեղում վայրենացած ամբոխը։ Վերջապես, երբ Աննետայի կյանքը դեպի մայրամուտ է թեքվում, նրա հոգին, որ ձգտում էր Անմահության, բացվում է իր ամբողջ անտակ խորությամբ[1]։

Ես այստեղ վերարտադրում եմ հերոսուհու կերպարի զարգացման տոկ հիմնական գծերը, որոնք որոշակի են դառնում ստեղծագործության վրա աշխատանքն սկսելու հենց առաջին օրից։ Մտահղացման որոշ կոզմերը վերափոխվել են և շտկվել[2] հետագա տասը տարիների ընթաց-

---

1 Վերը շարադրված համառոտ կենսագրությունը գրվ վերցված է 1921 թվի հունիսի գրառումներիցը, որը ես արել եմ գրքի վրա աշխատանքն սկսելուց մի քանի օր առաջ— Ռ. Ռ.

2 Սկզբնական մտահղացման այդ «շտկումներից» ամենաէականը հանդիսանում է հոգու ընդվզումը, որը («Նախագուշակի» վերջին հատո-

քում, որի ժամանակ երբեմն դրանք ընդմիջվել են գրքի սկզբնական գաղափարը հարստացնող ուրիշ ստեղծագործությունների վրա կատարվող աշխատանքներով։

Բայց հիմնականում հերոսուհու բնավորությունը մնաց անփոփոխ, նրա ներքին աշխարհի անծայրածիր, անափ գետը սկզբից մինչև վերջը իր ջրերը տանում է բոլորի համար անտեսանելի, անտեսանելի նույնիսկ ամենամոտիկ մարդկանց հայացքների համար, այնպես որ նույնիսկ ամենամտերիմները գլխի չեն ընկնում նրա սահանքի և հորձանուտի մասին։ Միայն որդին կարող է ինչ-որ չափով դրանք զգալ՝ շնորհիվ հոգեկան փոխըմբռնման, բայց, չնայած նրանց արյունակցական հարազատությանը և, վերջապես, ստեղծված խոր քնքշությանը, մայրը նույնիսկ իր ամենասիրելի էակի առաջ հոգևոր կյանքի խոր թաքցրած գաղտնիքները չի բացում։

Այսպիսով, Աննետայի կյանքը զարգանում է երկու զուգընթաց ուղղություններով, և կողմնակի մարդկանց համար հայտնի է միայն արտաքին կյանքը։ Ինչ վերաբերվում է նրբերին կյանքին, ապա այնտեղ Աննետան միշտ մնում է միայնակ։

Միայնակ, բոցերի մեջ, պարուրված սրբազան ծածկույթով։ Ինչի՞ համար է բոցկլտում այդ հավիտենական կրակը, որը երբեմն, թվում է, այրվում է աննպատակ, փոխում է իր ուղղությունը, բայց մնում է անփոփոխ, պահպանում է կյանքը և միևնույն ժամանակ տառապանքների աղբյուր էր։ Դրեթե մահվան չեմին Աննետան վերջիվերջո պատասխան

րում) ապաստամբվում է Անվերջության անդունդի հայեցությունից առաջացած գիտապուշտի սքանչականության դեմ,— ես նկատի ունեմ առնական բացականչությունը. «Ի՞նչ իմանաս», որը վերջնականապես չհեղհեղով, աննումնանիվ, սանձահարում է և ուղղություն տալիս հոգու միստիկական ձգտումներին։ Այստեղ լսելի են կատարի ճակատամարտի արձագանքները, ճակատամարտ, որի ներքին փոփոխությունները ևս կարող էի հետազոտել տարիների ընթացքում իմ նյումներով։ Այդ ճակատամարտի ելքը որոշվում է միայն ստեղծագործության հանգուցալուծման նախօրեին. դա հնչում է որքացած մոր ողբում, մայր, որը գիշերը իր վրայից նետում է ֆլեյտայի խաղաղարար հնչյո նների կախարդանքը. «Ո՛չ, ես չեմ ուզում հովվի սրինգ...»

(1933 թվի մարտի 25-ը)։ —Ռ. Ռ.

կգտնի այդ հարցին—մի պատասխան, որը նրան կօգնի հասկանալ և ընդունել այդ այրումը։

Երբ կյանքի մայրամուտին, նա նորից է մի հայացք գցում իր կյանքի Գետին, նրան ապշեցնում է բոցերի ուժի և նրանց անող այրվող նյութի միջև եղած անհամապատասխանությունը։ Նրանցից յուրաքանչյուրը, ում ուղղված է եղել Աննետայի սերը, խաբուսիկ է։ Հիրավի նրա վրա իշխել է կախաղանմը. դա է դրքի բանալին և իմաստը նրա վերնագրի, որը ես դիտավորյալ թողել եմ որպես առեղծված։ «Համայնած հոգին» ամբողջ կյանքի ընթացքում ցած է նետում իրեն պարուրող երևակայական ծածկույթները։ Յուրաքանչյուր անգամ, ծածկույթից ազատվելով, նա իրեն մերկ է զգում։ Սակայն նոր ծածկույթը փոխարինում է ցած նետածին։ Այս ստեղծագործության յուրաքանչյուր հատորը մեծ երազանքի նոր մարմնացում է։ «Համայնածը» տենդագին կերպով դուրս պրծնելով երազանքների տիրապետությունից, ամբողջ ժամանակ մի երազանքից մյուսին է անցնում, ընդհուպ մինչև վերջինը (արդյո՞ք վերջինը),— երբ հոգեվարքը վերջնականապես կտրում է Աննետային կենդանի մարդկանց աշխարհի հետ կապող թելը։

Բայց եթե ամեն ինչ անցողիկ է, եթե ամեն ինչ ցնորք է, մնում է, այնուամենայնիվ, կարևորագույն մի ուժ—երազելու և անրջելու կարողությունը, մնում է Մեծ կախարդը—կյանքի պոռթկումը, որը մշտապես արարում է և վերածնում։ Դա Աննետայի մեջ է։ Դա Աննետայի կյանքի աղբյուրն է։ Աննետան, ինչպես և Ժան-Քրիստոֆը, թեև միանգամայն ուրիշ պլանով, պատկանում է ստեղծագործական անհատականությունների մեծ կոհորտային[1]։ Նա ստեղծում է կենդանի էակներ, հազվադեպ՝ ստեղծագործություններ։

---

1 Ի՞նչ է նշանակում Աննետայի համար «ստեղծել»։ Ծնել կամ ծնվել։ Նրա նման անհատականությունը պետք է անընդմեջ ստեղծագործի կամ հղացած միտքը հասունացնի,— ուրիշ խոսքով ասած, նախապատրաստի ապագա ծնունդը։ Եթե նա այդ չի անում, զժբախտ է, տագնապի մեջ է, կոթծանիչ ուժերի իշխանության տակ է... Ստեղծագործել կամ կործանել—կործանել սեփական անձը...» (1922 թվի հունիսի 22-ի նշումներից)։— Ռ. Ռ.

«Նա երբեք չի գրում գրելու համար. Նա այդ անում է միայն այն հազվադեպ րոպեներին, երբ շնչահեղձ է լինում, վատնելով այն ամենը, ինչը պահպանում է կյանքը, և երբ նա ստիպված է սնել իր ներքին կրակը սեփական էությամբ. Եվ այդտեղ նա պոեզիայի վայրի ճիչեր է արձակում, որոնք նրա հոգուց դուրս են ժայթքում շնորհիվ կրքի[1]։ Աննետան դուստր է, քույր, սիրեցյալ, մայր, նա «սիեզերական Մայր է», որը հաղորդակից լինելով իր հիվանդության վերջին օրերին բոլոր այրող մարդկանց բերկրանքներին ու տառապանքներին, իր զգացմունքը արտահայտում է այն թոթովանքի մեջ, որտեղ մարդ երանություն է լսում.

«Մանկի՛կ իմ, մանկի՛կ իմ, Աշխա՜րհ. Մի՞թե քեզ համար ավելի լավ չէր իմ ներսում, Ինչո՞ւ աշխարհ եկար[2]...

* * *

Վեպի սկզբում Աննետան դեռ ոչ մի պատկերացում չունի իր հոգու անհունության մասին, որտեղից բխում է կենաց աղբյուրը։ Առաջին գիրքը՝ «Աննետան և Սիլվիան» միայն ցույց է տալիս արթնացումը երանավետ քնից, անհրազ թմրության քաղցրությունից, որի մեջ Աննետան գրտնըվում էր մինչև հոր. մահը։ Այդ քունը կոպտորեն ընդհատվում է մահվան մղձավանջով։ Սիրտը հուսաբեկ սլանում է անհեթեթ սիրտ պատրանքին ընդառաջ։ Զգացմունքների չդիտակցված, բնազդական պոռթկումը այս ու այն կողմ է նետվում ու թպրտում, ինչպես խելագար թռչուն, և սիրտը, առանց դատելու, կատարում է իր ընտրությունը։ Սակայն Մեծ Պատրանքը անպտուղ չէ, նա կյանք է տալիս մանկանը։

«Ամառ» գրքում է, որ փաստորեն սկսվում է ստեղծագործությունը, սկսվում է իսկական կյանքը, որի համար

---

1 1921 թվի հուլիսի 8-ի նշումը— Ռ. Ռ.

2 Վերջին հատոր— «Մեննդարերություն» (անախագուշակ, երկրորդ հատոր, մասն 3-րդ)։— Ռ. Ռ.

«Աննետան և Սիլվիան» ծառայել է տոկ որպես գարնանային պրելյուդիա։ Շատերը հենց այդ պրելյուդիայի վրա էլ կանգ են առնում, ինչպես կանգ էին առնում «Այգաբաց» գրքի վրա «Ժան-Քրիստոֆ» վեպում։ Այդպես կվարվեն նրանք, ովքեր երաժշտության մեջ որոնում են ոչ թե հայտնագործություն, այլ կյանքի մոտացություն, ովքեր երաժշտությունը օգտագործում են որպես աչք կապելու շոր։ Սակայն «Համայնած հոգու», ինչպես և «Ժան-Քրիստոֆի», իսկական իմաստը հենց այն է, որ մեկը մյուսի հետևից պատռել աչքի բոլոր կապերը։

Այն ժամանակ, երբ կույր գեղեցկուհի Աննետան թպրտում է իր պատրանքների ցանցում — երեխայի պատրանքի, սիրեցյալի պատրանքի, երկուսով ապրելու պատրանքի ցանցում, — նրա դաժան ճակատագրի ձեռքը, որին անվանում են պատահականություն և որն ավելի իմաստուն է դուրս գալիս, քան առողջ բանականությունը, հերոսուհու բարեկեցությունը և անհոգ կյանքը դարձնում է ավերակ և նրան ստիպում է անցնել vita nuva[1]-ի շեմքը։

1921 թվի օգոստոսին վերաբերվող նշումներն ասում են. Աղքատությունը Աննետայի համար նույն դերն է խաղում, ինչ որ Քրիստոֆի համար՝ կյանքը օտարության մեջ։ Աղքատությունը Աննետային ստիպում է աշխարհին նայել ուրիշ աչքերով և օգնում է թափանցել ժամանակակից հասարակության կեղծ էության մեջ, որն Աննետան իր ամբողջ ազնվությամբ հանդերձ չէր նկատում, քանի դեռ ինքը այդ հասարակության մի մասն էր։

Այն օրը, երբ Աննետան սկսում է աշխատանքով ձեռք բերել իր հացը, նշանավորում է նրա համար իսկական հայտնագործությունների դարաշրջանը։ Այդ հայտնագործությունների թվում սեր չկա։ Չկա նաև մայրություն։ Մայրության բնազդը նրա մեջ ապրում էր ավելի վաղ, և կյանքը բավականաչափ լրիվ չէր գոհացնում նրան։ Բայց այն օրից, երբ Աննետան անցնում է աղքատության բանակը, աշխարհը հայտնագործվում է նրա համար։

---

1 Նոր կյանք (իտ.)։

Եվ ամենից առաջ կյանքի հրեշավոր անօգտակարությունը, կյանքի իմը տաղանդավորությունը, որը ժամանակակից հասարակությանը այնքան այլանդակ է դարձրել... (Հատկապես կանանց կյանքը...)։

Ուտել, քնել և ծննդաբերել. այո՛, դրան է հանգում կյանքի օգտակար մասը։ Իսկ մնացած բովո՞րը։ Անիմը պրոտեստում է։ Բայց պատռվում է անտեղի... Իսկապե՞ս տղամարդն ստեղծված է մտածելու համար։ Թերևս կարելի է ասել, որ նա այդ բանում իրեն համոզել է, որ նա նշանչնչել է իրեն այդ պատասխանատվությունը և կատարում է, ինչպես մյուս բոլոր, ժամանակի կողմից սրբագործված սովորույթները։ Բայց նա չի մտածում։ Նա շատ նման ենթում է իր սեմենօվյա զբաղմունքների, հաճույքների և դատուվությունների շղթային կապված... Իսկ ի՞նչ ասել կանանց մասին...»։

«Ամառ» գրքում Աննետայի համար բացվում է «այն, ինչ թաքնված է ժամանակակից քաղաքակրթության քողի տակ՝ նրա չքեղությամբ, նրա արվեստով, դատարկությամբ և ազմկարարությամբ հանդերձ... Որքա՜ն հաղվադեպ են այն մարդիկ, որոնց կյանքը օրենքի իրականացումն է։ Անհրաժեշտության... Օ, որքա՜ն դյուրախախտ է մարգպային հասարակության շենքը։ Նա կանգուն է մնում լոկ սովորույթի ուժով։ Եվ անմիջապես կփլվի...»։

Այստեղ Աննետան առաջին անգամ ավետում է ապագա երկրաշարժը, որը տասնհինգ տարի հետո մեծ պատերազմներով ու հեղափոխություններով կցնցի Եվրոպան և աշխարհը։

Աղքատությունը, ասպիզցի Poverello[1]*-ի այդ միստիկական հարսնացուն, ոչ միայն հոգին լցնում է եղբայրական ղգացմունքներով դեպի թշվառները։ Նա հանդես է բերում նոր լուսավոր բարոյականություն։ Ոչ այն նախկին՝ արգելքների և ազոթքների, դատաստանների և խոստովանանքի սահմանափակ ու վախի բարոյականությունը, որ հանդիսա-*

---

1 *Խեղճ, աղքատ (ֆր.)։— Նկատի է առնված կաթոլիկական կուսակրոն Ֆրանցիսկ Ասպիզցին, ֆրանցիսկյան օրդենի հիմնադիրը, որ աղքատության ուխտ էր արել։*

նում է սոցիալական մթնոլորտում անջատված հասարակարգի պահապան շունը, այլ Աշխատանքի նոր բարոյականությունը... Աշխատանքը իսկական աղնվության միակ տիտղոսն է։ Դա ստեղծագործ մարդու հզորությունն է և բերկրանքը, այլ խոսքով ասած, հզորությունը և բերկրանքը միակ էակի, որն ապրում է, ինչպես որ հարկն է, միակ էակի, որը պատվախնամ է հավիտենական ուժերին։ Աշխատանքը դրսևորվում է ամեն մի համահատ և մեծ ստեղծագործական գործունեության մեջ, որը ծառայում է մարդկային հատարակության բարօրությանը։ Գործել, գործել ընդհանուրի շահերի համար—հենց միայն դրա մեջ է Առաքինությունը՝ բառիս բարձր նշանակությամբ։ Մնացած բոլորը վերաբերվում է «փոքր առաքինության» բնագավառին։

Աննետային, հետ այսու ողջ դիերով այդ մեծ, տատանակոտ, բայց ուղիղ ճանապարհին, ազատհոգեն ուղեկից է որոնում իր համար։ Օրվա սիրելիները, որոնց նա հանդիպում է «Ամառում», Աննետային ապացուցում են նրա կյանքի առանցքի երկու կարևորագույն բևեռների՝ Կարեկցանքի և Ճշմարտության զուգակցության անհնարինությունը։ Ջուլը (Ժյուլիենը) չի հանդուրժում մերկ ճշմարտությունը, երա համար այդ ճշմարտությունը պետք է քողարկել։ Լեժեդը (Ֆիլիպը) զուրկ է բարության զգացումից, նա քայքայում է տապալվածների վրա։ Աննետան չի համաձայնվում նրանց համար զոհաբերել ո՛չ ճշմարտությունը և ո՛չ էլ Կարեկցանքը։ Օվ նա նորից մնում է միայնակ իր դժվարին կածանում։ Դրան ավելացրած նաև այն, որ այդ ժամանակ նա իրեն համարում է որդու կողմից լքված, գրեթե ատված (քանի որ նրա կիրքը միշտ և ամեն ինչ չափազանցում է)։ Աննետան բարոյական կործանման եզրին է։

Սակայն այս անգամ ևս, ինչպես և շատ ուրիշ դեպքերում, Աննետային փրկում է նրա բնավորության[1] զարմանալի

---

1 Նա այդ հատկությունները ժառանգել էր հորից, բայց հոր մեջ բնավորության հարատևությունը վեր էր ածվել էգոիստական քմահամոության. իսկ Աննետայի մեջ դա զուգակցվում է կյանքի ուժերի առատության հետ, և դա նրան պաշտպանում է մելամաղձության նոպաներից,

գիմագրողականությունն ու ճկունությունը։ Այն նույն ակնթարթին, երբ նա ուժասպառվում է, հուսաբեկության անդունդից բարձրանում է կյանքի փոթորիկը, որը նորոգում և ամրապնդում է նրա հոգին։ Տառապանքը դուրս է հորդում բանաստեղծության մեջ։ Եվ ահա հոգին ազատ է։ Թուլացած Աննետան սուզվում է քնի մեջ։ Հաջորդ առավոտյան, երբ նա արթնանում է, տառապանքը մնացած է։ Ամեն ինչ նրա շուրջը մնում է նախկինը։ Ամեն ինչ նորոգվում է։ Եվ Աննետան նորից է ծնվում։

«Կարեկցանք, ճշմարտություն։ Ես ոչինչ չզոհաբերեցի։ Նորից մենակ եմ ես։ Ես պահպանեցի իմ ամբողջականությունը։ Ես հասկացա կյանքը, ես գիտեմ նրա գինը, և գիտեմ, թե դա ինչ է նստել ինձ վրա։ Կեցցե՛ կյանքը։ Ես մարտահրավե՛ր եմ նետում աստծուն»։

Դա հավասարակշռություն է մարտում, ակնթարթ՝ հագեցված և վաղանցիկ։ Դա հնարավոր է այն ժամին, երբ Աննետան գտնվում է ուժերի և առողջության ծաղկման մեջ և իրեն դրության տերն է զգում։ Նրա կյանքի ամառը զենիթում է...

«Խարտիշահեր Աննետան, այդ ուժեղ հյուսիսային կինը, կիսում է նորմանների պատրանքները, որոնք իրենց վայկուկներով ակոսել են ծովային տարածություններ։ Նրանք հետևում են, թե ինչպես է իրենց նավի քիթը ճեղքում ալիքները, և ուրախանում են այդ սրընթաց վազքի համար, նրանք իրենց ազատ են զգում, նման այն հսկայական թռչուններին, որոնք թևում են իրենց հետևից... Արա՞գ։ Համարձա՞կ։ Ճեղքելով ծովի ալիքները... Բայց մոտենում է գիշերահավասարը։ Զգուշացեք փոթորիկներից և թևերից ջարդված[1]»։

որին կարող էր նրան նախատրամադրել մոր բնավորությունը՝ հակված դեպի դեպրեսիան և անպտուղ խորհրդածություններ։ Սակայն դառեր բուռն խառնվածքը, որն ամեն ինչի վրա իր կնիքն է դնում, վերափոխում է այդ մռայլ և թուլացնող հակումը հուսաբեկության փոթորկուն պայթյունների, որոնք, սակայն, չեն կործանում այդ ուժեղ հոգուն։ Ցնցելով, դրանք միայն նորոգում են նրան (նշումը 1922 թ.)։— Ռ. Ռ.

[1] *Հոդվածներ, 1921 թ.— Ռ. Ռ.*

Վրա է հասնում պատերազմը։ Գիրքը դրանով վերջանում է։

Աշխատանքը «Ամառ» գրքի վրա շարունակվեց 1922 թվի հուլիսի 11-ից մինչև նոյեմբերի 5-ը։ Այն նորից շարունակվեց և հասցվեց ավարտին 1923 թ. առաջին կիսամյակին։

* * *

Անցավ երկու տարի մինչև ես վերսկսեցի աշխատանքները ստեղծագործության վրա։ Բայց վերսկսեցի հենց այն տողից, այն նույն բացականչությունից, որտեղ ես ընդհատվել էր, և՝ «Ես մարտահրավեր եմ նետում աստծուն[1]» բառերը երբեք մոռացության չէի տվել։ Ոգին, ինչպես ժայռի եզրին կանգնած թռչուն, սպասում է վայրկյանին, որ խոյանա ներքև։

1925 թվի հունվարի 10-ի գրառման մեջ ասվում է.

Այս գիշեր հանկարծ ինձ համար մի ելք բացվեց, որը հնարավորություն է տալիս փրկվելու... Ես ինձ քշված էի զգում պատերազմի փակուղին և ուզում էի ազատվել նրա ճնշող ծանրությունից, որն իշխում է այնպիսի գրքի «պացիֆիզմի» վրա, ինչպիսին «Կլերամբոն» է։ «Աստծուն մարտահրավեր նետող» Աննետային, որին բոլորովին չէին շրփոթեցրել պատերազմի, այդ փոթորկվող տարերքի դաժանությունները, հանկարծ վերափոխեցին զինվորական գերիների՝ վիրավորանքների ենթարկվող պարտիան և կրքի անսպասելի պոռթկումը։

Մինչև հիմա նա պասիվորեն էր ընկալում այն ամենը, ինչը բնության օրենք էր համարում, թեև հենց իր մեջ ապրում էր սեփական բնավորության օրենքը, բնավորություն, որն ավելի վեհ էր, և որը հենց ինքը պետք է հակադրեր զազանացած մարդկանց բնավորություններին։ Հազիվ էր, շնորհիվ ռազմագերիների պաշտպանության վերաբերյալ նրա վճռական եյության, տեղի ունեցել ընդհարումը, երբ անհետացավ նրան տանջող ծանր զգացումը, որը բխում էր ոչ

---

1 Նույն տեղը։

այնքան պատերազմի բուն անմարդկայնությունից, որքան այդ անմարդկայնության նրա սեփական ընկալումից»։

Pax enim non belli privatio,
Sed virtus est, quae ex animi fortitudine oritur[1].

Ուժին պետք է հակադրել ավելի հզոր ուժ, և ո՛չ թե թուլություն, ո՛չ թե հրաժարում։

Եղբայրական մտերմությունը մի մարդու հետ, որը կանգնած է մահվան շեմին, ծանր վիրավորված ժերմենի հետ, սիրուց ավելի խոր այդ բարեկամությունը վճռականորեն Աննետային մղում է երազանքներից դեպի գործունեություն։ Նրա կյանքի նավակը, որը մինչև հիմա անշարժ էր, այժմ իր մեջ գտնվողների հետ,— նրա որդու հետ, որին ճակատագիրն արդեն ուրվագծվում է հեռվում,— սլանում է դեպի ահեղ հորձանուտը։ Ժերմենը, այդ պայծառ մտքի տերը, որի մեջ ամեն ինչ հասկանալու ունակությունը կաթվածի է ենթարկել գործելու կամքը, մեռնելով, հասկանում է իր կյանքի գլխավոր սխալը։

«Նրա մեղքը ամեն ինչ հասկանալու մեջ էր։ Նրա մեղքն այն էր, որ անգործության էր մատնվել... Ամեն ինչ հասկանալ— և գործել...»։

Եվ նա Աննետային ասում է.

«Եղե՛ք ավելի ամուր։ Ձեր սրտի ձայնը ավելի հուսալի է, քան իմ բոլոր «թերևս» ու «գեմերը»։ Դուք տղա ունեք։ Նրան ներշնչեք, որ բավական չէ ամեն ինչ ծանր ու թեթև անել, ամեն ինչ սիրել։ Պետք է որևէ բանի նախապատվություն տալ։ Լավ բան է արդարամիտ լինելը։ Բայց իսկական արդարությունը իր կշեռքի առաջ չի մնում անշարժ, նայելով, թե ինչպես են տատանվում կշեռքի նժարները։ Արդարությունը դատում է, և դատավճիռը ի կատար ածում»[2]։

---

1 *Քանի որ խաղաղությունը ոչ թե պատերազմի բացակայություն է, այլ առաքինություն, ծնված հոգևոր հզորությունից (լատ.)։*

Սպինոզայի այս միտքը էպիգրաֆ է ծառայում «Մայր և որդիք գրքի համար»— Ռ. Ռ.

2 *Նշումը 1926 թվի հունվարի 24-ինը։— Ռ. Ռ.*

նրա ուսերը, քանի որ կեղեքման և համընդհանուր ստորությեան այս դարաշրջանում հետևել «ճշմարիտ արդարության» թելադրանքին— կնշանակի անխուսափելիորեն ճակատագրի զոհ դառնալ։ Եվ Աննետայի պատասխանատվությունը առավել ևս մեծ է, որ գրքի վերջում նա, վերապրելով տանջալից անհայտությունը, դառնում է իր որդու «հայրն ու մայրը»։ Որդին ընտրություն կատարեց[1]։ Իսկ հիմա էլ Աննետան պետք է ընտրություն կատարի նրա համար։ Գրքի վերջում մի կարևոր խոսակցության ժամանակ, երբ մայր ու որդի կիսում են իրենց գաղտնի մտքերը, կիսում են իրենց արհամարհանքը այն հասարակության հանդեպ, որը պատերազմ է ծնել և աշխարհի վրին խաղաղություն է փաթաթում (կեղծ, նոր պատերազմներով հղի խաղաղություն), և խոսում են այդ խաղաղությունը, ինչպես և այդ պատերազմը չընդունելու մասին, Աննետան սարսափով կարդում է Մարկի մտքերում իրեն զոհաբերելու վճռականության, և մայրական սերը, հակառակ նրա սկիզբնական հավատին, փորձում է փոխել որդու համոզմունքը։ Սակայն Մարկը այնպես է հավատում Աննետային, այնպես է համոզված նրա հավատի անսասանությանը, որ վճիռը մոր ձեռքն է հանձնում։ Եվ մայրը անկարող է չարդարացնել որդու վստահությունը։ Իրադրությունները— զինադադար կնքելը— հետաձգում են լուծումը, և, այնուամենայնիվ, միանգամայն պարզ է, որ դա ընդամենը հետաձգում է, և ապագա օրերից մեկում զոհը պետք է բարձրանա խարույկի վրա... «Warte nur...[2]»։ Վերջին էջում Աննետան ձգտում է իր մարզարեական ձիրքը զոդարկել իր էության ընդերքում ապրող երազանքի թանձր ծածկույթով,— այն մեծ երազանքի, որը նրա համար ապաստան է ծառայում և նրա մեջ ծնում պատրանք, իբրև թե նա հաղորդակցվում է համընդհանուր Պատրանքին։ Բայց Աննետան լավ է հասկանում, որ զարթոնքից հետո... «չուտո՛վ, չուտո՛վ...» նրան սպասում է Mater dolorosa-ի[3] ճակատագիրը։

---

1 Մարկն ասում է նրան. «Դու իմ հայրն ես և իմ մայրը։ Ես միայն քեզ եմ պատկանում»։ (Նշումը՝ 1922 թվի դեկտեմբերի 2-ինը)։— Ռ. Ռ.

2 Սպասիր մի քիչ... (գերմ.)։

3 Վշտահար մոր (լատ.)։

* * *

Երեք տարվա ընդմիջում է բաժանում այս գիրքը «Նախագուշակի» երեք մասից։ Ես «Մայր և որդի» գիրքը գրել եմ 1925 թվի հոկտեմբերի 24-ից մինչև 1926 թվի մայիսի 20-ը։ «Նախագուշակի» վրա աշխատանքը սկսվել է 1929 թվի նոյեմբերի 11-ից և շարունակվել մինչև 1933 թվի ապրիլի 7-ը։ Բայց ստեղծագործությունը չէր դադարում հասունանալ կրքերի և իրադարձությունների[1] հուզեհում։

Աննետան և Մարկը չէին միայն, որ հետևում էին աշխարհի ճակատագրերի զարգացմանը և անքուն գիշերներին նորից ու նորից վճիռ կայացնում՝ իրենց զոհաբերելու համար— սպասողական վիճակի մեջ էր նաև ինքը՝ հեղինակը։ Քանի որ այդ անողորմ դարաշրջանում թեև կասկած չէր մնում զոհերի անխուսափելիության մասին, երբ «կյանքը վտանգ չէր ներկայացնում միայն վախկոտների համար» (ինչպես ասում է Աննետան, որը «հաճախ է գիշերները կանխավ ողբում իր որդու մահը») բայց ձեզ համար, երիտասարդներ (ծերերը չարժեն, որպեսզի նրանց մասին խոսվի), գոյություն է ունեցել և միշտ գոյություն ունի զոհաբերության ձև ընտրելու հնարավորություն։ Պետք է միայն որոշել . ո՞ր զոհաբերությունն է, որ չի լինելու ամենադեղեցիկը (անցել են այն ժամանակները, երբ ասում էին, «Մենք գործ չունենք արարքի հետ, միայն թե վարքագի՛ծը հիա-

---

[1] «Նախագուշակի» հիմնական գաղափարը և շատ գլուխների սկզբնավորները սկիզբ են առել 1922 թվին—«Հմայված հոգու» աշխատանքներն ավարտելիս։ Դրանք են. Ժուլիենի վերադարձը, որին վերածնել է նրա կողմից Աննետային պատճառած չարիքը։ Հին խանութպահ-բարեկամի կերպարը։ Մարկի ամուսնությանը վերաբերող մի քանի էջեր։ Մեսսինեին նվիրված էպիզոդը իր հերթին էր սպասում 1908 թվի երկրաշարժի ժամանակից. իր 1906 թվի ապրիլի 8-ի դրամայի մեջ, որը, ինչպես պարզվեց, կանխագուշակել էր իրադարձությունները, հեղինակը ենթադրում էր տարերային աղետը օգտագործել մեծ վեպի համար որպես էպիլոգ (գուցե «Ժան-Քրիստոֆի» համար)։ Բայց հոդվածների մեծամասնությունը և «Նախագուշակ»-ի վրա կատարված աշխատանքի հիմնական մասը վերաբերվում են 1929—1930 թվականներին։ Աննետայի մահվան նկարագրությանը հեղինակն անդրադարձել է— և փոփոխել այն—մոտ քսան անգամ— Ռ. Ռ.

նալի լինի»), բայց լինելու է ամենագործունը, կնշանակի, նաև անհրաժեշտը՝ նոր մարդկության ծննդի համար։

Ես այդ տարիներին մտովի դիմում էի երկու մեծագույն սոցիալական ձեռնարկումների — ձեռնարկումներ, որոնք իրականացել էին Հնդկաստանում և ՍՍՀՄ[1]-ում։ Ես հիանում էի թե մեկով, թե մյուսով։ Եվ դրանց հետ ծանոթանալուց անմիջապես հետո, առաջին իսկ օրից հանդես եկա ՍՍՀՄ-ի և Գանդիի պաշտպանությամբ՝ ընդդեմ նրանց թշնամիների։ Բայց շնորհիվ պատմական կանխորոշման, նրանք գնում էին տարբեր ճանապարհներով։ Եվ ես Մարկի նման իմ ամբողջ ուժով աշխատում էի կապակցող օղակ դառնալ երկու բանակների միջև և աջակցել երկու մեծ հեղափոխությունների — ազատ ոգու և պրոլետարական կազմակերպված մասսաների — միասնական ճակատ ստեղծելուն, ուղղված հասարակական և քաղաքական ռեակցիայի համախմբված ուժերի, իմպերիալիստական կապիտալիզմի և ֆաշիստական ռեժիմների դեմ, որոնք սպառնում են հավիտենապես կանգնեցնել մարդկության առաջընթաց շարժումը[2]։

Երկու հակադիր սկզբունքների — գանդիական Հնդկաստանին բնորոշ պասսիվ Զրնդունման և կազմակերպված հեղափոխական բռնության — միջև դրսից ներդաշնակություն

---

1 *Իմ «Գանդիի կյանքը» գրված է «Հմայված հոգու» առաջին մասերի հետ միաժամանակ (այդ աշխատանքի վերջին էջը և նրան նվիրված ձոնը գրված են 1922 թվի մարտին, մինչդեռ գիրքը հրատարակված է մի տարի ուշ), իսկ «Փորձ միստիկական ուսմունքների և նոր Հնդկաստանի գործունեության մասին» աշխատությունը (I. «Ռամակրիշնայի կյանքը», II. «Վիվեկանանդի կյանքը» III. «Համաշխարհային ավետարանը») գրված է «Մայր և որդի» գրքի ավարտման և «Նախագուշակ» գիրքն ըստ էության աշխատանքների միջև. (1927—1928 թվականներին) և հրապարակված է 1929 թվին։*

Մյուս կողմից, իմ վճռական ելույթները ի պաշտպանություն Սովետական Հեղափոխության — առարկություններ Գաստոն Ռիիի. «Եվրոպա, համախմբվիր կամ մահացիր» և «Հրաժեշտ անցյալին» — գրված են 1931 թվի հունվարի 1-ին և հունիսի 15-ին։ — Ռ. Ռ.

2 *Մասնավորապես ես աշխատում էի այդ անել իմ դիմումներով, որոնք հասցեագրված էին իմպերիալիստական պատերազմի և ֆաշիզմի դեմ ուղղված 1932 թ. Ամստերդամում տեղի ունեցող Միջազգային կոնգրեսին։ — Ռ. Ռ.*

սահմանելու փորձում հաջողության հասնելու համար հաք-կավոր է ամենից առաջ, որ մարդ փորձի այդ ներդաշնակու-թյանը հասնել իր մեջ։ Այդ երկու սկզբունքները իմ գիտակ-ցության մեջ միմյանց հետ վարում էին «ոգու այն մենա-մարտը», որի ավարտը ես գցեցի պատանի Մարկի ուսերին։ Ազատվելով այդ բեռից, ես ըմբռնեցի «մեծ ճակատամարտի անխուսափելի մերձեցման ժամը՝ մեր ներքին աստվածների միջև—մերձեցման ժամը այն Իլիականի, որին արարում և մեր աչքերի առջև ու մեր ձեռքերով վարում է մարդկու-թյունը[1]»։ Մարկ Ռիվիերի նուրբ և ուժեղ բնավորությունը «այդ քառատված, պատառ-պատառ արված, չորս ձիերի պոչերից կապված պատանի էակի» բնավորությունը մարմ-նավորում է «դիոնիսականների սև մեղր» ճաշակելու հուսաբեկ ճիգը, «սև մեղրը», որը, Հերակլիտի արտահայտությամբ, իր մեջ պարունակում է «ամենագեղեցիկ ներդաշնակությունը»։ Եվ եթե նա դրան չի կարողանում հասնել կյանքում, ապա դա ձեռք է բերում իր մահով։ Մարկի ճակատը զարդարված է վաղաժամ կործանման ողբերգական լուսապսակով. այդ պատանեկան գիտակցության մեջ, նրա սրաթռիչ կյանքում բեկվում է Եվրոպայի հոգևոր կյանքի կատաստրոֆիկ զար-գացումը։ Ռևալ իրականության մեջ գոյություն ունի ոչ մի-այն մի Մարկ։ Ինձ ծանոթ են նաև ուրիշները։ Եվ ես գի-տեմ, որ Մարկի մեջ նրանք իրենց են ճանաչել։ Նրանք— մեր ժամանակի այդ լավագույն մարդիկ— իրենց կյանքի սխրանքով կամ իրենց մահվան զնով առաջադրում... լու-ծում են մարդկային գիտակցության մեծ պրոբլեմը, որի լուծման համար մարտնչում է յուրաքանչյուր դարաշրջան. անհատի և հասարակության շահերի հաշտեցման պրոբլեմը։ Այդ հաշտեցումը կարող է ձեռք բերվել միայն այն բանից հրաժարվելուց հետո, ինչը գոյության իմաստն է և անցած— ու գերազանցված—դարաշրջանի հպարտության առարկան, կարող է ձեռք բերվել «ոգու արիստոկրատների» անպատուղ ինդիվիդուալիզմից հրաժարվելուց հետո (անպտուղ ոչ թե ըստ իր էության, այլ իր այլասերման հետևանքով)։ Մի

---

1 «Նախագուշակ»—Ռ. Ռ.

կողմ կանգնելով այժմեականության անխոտան փիլիսոփայության մարտերից, սարսափելով այն կարգապահությունից, որ պահանջում են այդ մարտերը, «ոգու արիստոկրատները» հանդիմանվորվում են բանականության գոռոզ ապազգենքով— մի բանականություն, որ վերացական է, անարյուն և կյանքից հեռու։ Հոգին քայքայող սմքախտից փրկելու համար մարդը պետք է ուզվի հասարակական կեցության խորհրդաններին, իսկ դրան կարելի է հասնել այն ժամանակ միայն, երբ նա իրեն ծառայության է հանձնում շարժման և պայքարի մեջ գտնվող հասարակության։

Մարկը դրան հասնում է տեղորեն իր համար ճանապարհ բացելով հրապարակի Տոնավաճառի միջով, որ շատ ավելի դաժան է և կործանարար, քան այն, որ նկարագրված է «Ժան-Քրիստոֆում» քանի որ Մարկը ապրում է «կործանվող աշխարհի» իրադրության մեջ։ Արյան մեջ շաղախված Մարկը իր մարմնի վրայից չնչում-հանում է կեղծիքի բնաբծերը։ Նա մերկացնում է կեղծիքը և ընկնում նոր դարաշրջանի ջրին, որի գալուստը նախապատրաստված է նրա ամբողջ կյանքի դաժան և անողորմ խոստովանանքով։

Սակայն հենց նրա մահը նշանակում է ծնունդ... Stirb und werde[1]*։ Նա նորից է ելնում և ապրում երկու կանանց սրտերում, որոնք նեցուկ էին ծառայում նրան,— իր սիրած կնոջ սրտում և արտում իր մոր։ Աննետան շարունակում է բարձրանալ այն նույն աստիճանից, որի վրա կանգ էր առել նրա որդու ոտքը։ Նա որդին առաջ է գնում մոր հետ միասին։ Որդին նրա մեջ է։ Աննետան այդ մասին ասում է Ասյային.*

«Աշխարհի օրենքները շրջվել են։ Նա ծնել եմ նրան։ Իսկ հիմա էլ նա է իր հերթին ծնում ինձ»[2]։

Այդպիսին է «Նախագուշակի» վերջին հատորի ենթավերնագրի մխրքը—կրկնակի իմաստը. «Մեծ դարերության»։ Նոր դարաշրջանի ծնունդը՝ սերնդի կամավոր զոհաբերության գնով։ Նա Մոր ծնունդը Որդուց։

---

1 *Մեռիր նոր կյանքի համար (գերմ.)։*

2 *«Նախագուշակ»— Ռ. Ռ.*

* * *

Այսպիսով Անննետան իր զոհված որդուց ավելի հեռու է գնում։ Նա խիզախորեն դուրս է գալիս կռվի, ներգրավելով նրա մեջ իր որդու որդուն և իր բոլոր որդիներին,— որոնց մեջ նույն արյունն էր և նույն ոգին։ Եվ ահա, վերջապես, նրա անունը խորհրդանշող Գետը հասնում է գետաբերանին։ Իր լայն և, կարծես, անափ հունի մեջ նրա կյանքի ալիքները թավալվում են առաջ, խառնվելով ալիքների մեծ բանակին, որն իր համար ուղի է բացում կեղեքման պատի միջով։ In tirannos?[1]

Բայց Հմայված Հոգին, որը «նույնիսկ մահվան մեջ առջևից է գնում», դուրս է գալիս այսօրվա մարտերի սահմաններից, սահմաններից ավերակների և ամրոցների, որոնք նվաճել կամ կառուցել է ինքը։ Իր վերջին երազանքներում Հմայված Հոգին դառնում է Ստեղծագործող Ուժ, որն իր աստվածային կաթով գիշերվա խավարի մեջ ուրվագծում է սեփական Սիր կաթիլները։ Նա միահյուսվում է ճակատագրին՝ վերջինիս առաջ ընթացող հրամայական շարժման մեջ, վերջին ժամին հասկանալով, որ «իր կյանքի բոլոր դառնությունները եղել է միայն ճակատագրի այդ առաջընթաց շարժման արտացոլումը»։

Ես կուզեի, որ Via sacra[2] *սիմֆոնիայի այդ վերջին մասում ընդհանուր հնչման մեջ միահյուսվեին իմ ամբողջ ստեղծագործության լեյտմոտիվները՝ մանկան այգաբացը. Ժորժի և Կոլայի եղբոր թոռնիկի՝ Միլվիայի ծիծաղը, Բեթհովենի «*Durch Leiden Freude»[3] *(գաղափար, որն իմ գրքի խնամատուն հերոսներից երկուսը արտահայտում են. մեկը, Ժուլիենը, «Տառապանքների միջով դեպի ճշմարտություն» խոսքերով (մեռնող Աննետայի բացականչությունը. «Տառապել — նշանակում է հասկանալ») մյուսը, կոմս Բրունոն «Լույսի միջով դեպի սեր» («Per chiarita' carita'») խոսքերով։ Երկու միահյուսվող երաժշտական ֆրազ—«Պայծառություն» և*

---

1 *Բռնակալների դեմ (լատ.)։*

2 *Սրբազան կյանքի (լատ.)։*

3 *«Տառապանքների միջով դեպի բերկրանք» (գերմ.)։*

«Ի՞նչ իմանաս», այդ գունեղ մեղեդիները հովվական սրնգի և հոբոյի, որը քնից արթնացնում էր Մոնտենին,— երազանք (կանտատա «für alle Zeit[2]») և Գործունեություն (այսօրվա լոզունգը)։

Ստեղծագործությունն իրագործում է այդ վիթխարի մտադրությունը (որ չափազանց լայնածավալ է մարդկային ձեռքերի համար) ավելի պակաս չափով, քան դա պահանջում է դարաշրջանի բուռն ձգտումը, որ ամբողջ ուժերով աշխատում է իրականացնել այդ մտադրությունը։ Սիմֆոնիան հարյուրամյակների նվագախմբով կատարվող կոնցերտ է։ Մեզ վիճակված է լսել միայն մի հատված, որից հետո մենք աղեղն ավելի շուտ ենք հանձնում ուրիշներին, քան տարաձայն հնչյունները կհասցնեն ձուլվել մի միասնական ակորդի մեջ։ Բայց դեռ չհասցրած լսել այդ առաջին տարաձայն հնչյունները, մենք արդեն ակորդի ենք սպասում։

Ինչպիսին էլ ուզում է լինի այդ ստեղծագործությունը— դա երաժշտություն է։ Ինչպես և «Ժան-Քրիստոֆը», ես այն նվիրում եմ Հարմոնիային, երազանքների թագուհուն, իմ կյանքի երազանքին։

ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ

1 հունվարի 1934 թվի

---

[1] բոլոր ժամանակների համար (գերմ.)։

Գիրք առաջին

Աննետա եվ Սիլվիա

Մեր, դու առաջնածին դուստրն Հռոգնեի,
Սեր, որ հետագայում մեր Միտքն արարեցիր...

Ինիգ-Վեդա

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Նորից պատրաստվելով ճանապարհ ընկնելու, ոչ այնքան երկար, ինչպիսին էր Ժան-Քրիստոֆի ճանապարհը, թեև ինձ համար քիչ անցումներ և կանգառներ չեն սպասվում, ընթերցողներին հիշեցնում եմ մի բարեկամական խնդրանք, որով ես մի անգամ դիմել եմ նրանց, երբ իմ երաժիշտը երկրնտրանքի մեջ էր։ «Ընդվզումի» առաջաբանում ես զգուշացրել եմ, որ նրանք յուրաքանչյուր գիրքն ընդունեն որպես առանձին գլուխ ստեղծվող երկի, որի գաղափարը զարգանում է պատկերվող իրադարձությունների ընթացքում։ Ես բերել եմ մի հին ասույթ. «Ավարտը պսակում է կյանքը, իսկ երեկոն՝ օրը», և ավելացրել եմ. «Երբ հասնենք ճանապարհի վերջը, այն ժամանակ դատեցեք մեր ջանքերի մասին»։

Իհարկե, ես կուզենայի, որ գրքերից ամեն մեկը իրենից ներկայացներ մի ավարտված ամբողջություն, որ յուրաքանչյուրի մասին դատեին որպես արվեստի ինքնուրույն ստեղծագործության։ Բայց մի՛ շտապեք դատողություն անել վեպի գաղափարի մասին, կարդալով միայն մի գիրքը։ Երբ ես վեպ եմ գրում, ընտրում եմ այնպիսի էակ, որը հոգով ինձ հարազատ է (կամ, թերևս, նա է ինձ ընտրում)։ Եվ այդ ընտրյալ էակին ես գործողության ազատություն եմ տալիս, աշխատում եմ, որպեսզի նրա վրա չազդի իմ անհատականությունը։ Սակը բեռ է այդ անհատականությունը, որին հանդուրժում ես ավելի քան կես դար։ Արվեստը մեզ թույլ է տալիս աստվածային բարեբարություն. նա ազատում է մեզ այդ բեռից, թույլ է տալիս մեր մեջ առնել ու-

ոիշների հոգիները և կերպափոխվել ուրիշ գոյությունների համար (մեր հնդիկ բարեկամները կասեին՝ «Մեր գոյություններից այլոց համար», քանի որ ամեն մեկի մեջ բոլորն է...)։

Եվ այսպես, հարազատանալով Ժան-Քրիստոֆի, Կոլայի թե Աննետա Ռիվերի հետ, ես պարզապես դառնում եմ նրանց մտքերի հավատարմատարը, լսում եմ նրանց, տեսնում նրանց արարքները և ամեն ինչին նայում եմ նրանց աչքերով։ Նրանք աստիճանաբար ճանաչում են իրենց սիրտը և սիրտը ուրիշների, իսկ նրանց հետ միասին ճանաչում եմ նաև ես։ Երբ նրանք գայթաքում են, գայթում եմ ես նույնպես, բավական է ոտքի ելնեն, ես էլ եմ գլուխս բարձրացնում, և մենք նորից ճանապարհ ենք ընկնում։ Ես չեմ պըրնդում, թե այդ ճանապարհը լավագույնն է։ Բայց դա մե՛ր ճանապարհն է։ Քրիստոֆի, Կոլայի և Աննետայի գոյության համար պատճառներ կան թե չկան, միևնույն է, Քրիստոֆը, Կոլան և Աննետան գոյություն ունեն։ Իսկ գոյությունը ինքնին պակաս կարևոր պատճառ չէ։

Ոչ մի վիճելի դրույթ, ոչ մի տեսություն գրքում մի փնտրեք։ Ընդունեք այն որպես մի կնոջ հոգեկան աշխարհի պատմություն. պատմություն մի երկար կյանքի՝ ապրված խղճի հետ համերաշխ, հարուստ ուրախություններով և տխրություններով, որը զերծ չէ հակասություններից, լի է մոլորություններով ու հավիտենապես ձգտել է ոչ թե դեպի ճշմարտություն, քանզի այն անմատչելի է, այլ դեպի ներքին ներդաշնակություն, որը և մեզ համար բարձրագույն ճշմարտությունն է։

Ռ. Ռ

Վզսատաս, 1922 թ.

Աննետան նստել էր պատուհանի մոտ, մեջքով դեպի լույսը, և մայր մտնող արևի շողերը թափվել էին ուսերի վրա, ուժեղ պարանոցին։ Նա հենց նոր էր եկել։ Երկար ամիսներից հետո Աննետան առաջին անգամ էր ամբողջ օրն անցկացրել դրսում, թափառել, վայելել գարնանային արևը։ Անասպարթ ծառերի սավերներից չթուլացած արևը գինու պես արբեցնում էր և ջերմացնում օդը, դեռևս սառը, թեև ձմեռն արդեն անցնելու վրա էր։ Գլխում աղմուկ էր, սրտում՝ բաբախյուն, և լույսի հորձանքը ողողում էր աչքերը։ Պուպուր ու ոսկի էին փակ կոպերի տակ։ Ոսկի և պուրպուր էր ամբողջ մարմինում։ Նա սկսվեց, անշարժացավ բազկաթոռին—մի ակնթարթի ընկավ ինքնամոռացության մեջ։

Անտառի թավուտում՝ լճակ։ Լճակում՝ արևի ցոլք, որ կարծես աչք լինի։ Օզակաձև կանգնած են ծառերը, բները պարուրված են մամուռով։ Ջուրը մտնելու ցանկություն զգաց։ Նա հանվեց։ Ջրի սառցե ձեռքը դիպավ ոտքերին, ծնկներին։ Հաճելի ընդարմացում։ Ահա բոսորագույն-ոսկե լճակում նա զննում է իր մարմինը... Ամոթի աղոտ, անորսալի մի զգացում. կարծես ինչ-որ մեկը տեսավ իրեն, դաբանամուտ եղավ։ Պետք է շուտ թաքնվել,— և նա ջրի մեջ գնում է ավելի ու ավելի խորը, սուզվեց մինչև կզակը։ Ջուրը օձագնալար է տալիս շուրջը. ասես կենդանի մամլակներ լնն։ Մանր լիանաները փաթաթվում են ոտքերին։ Աննետան փորձում է ազատվել նրանցից—և թաղվում է տիղմի մեջ։ Ջրի երեսին նիրհում է արևի ցոլքը։ Աննետան կրունկներով

վրդովված հրում է հատակին և դուրս լողում։ Ջուրը կորցրեց պարզությունը, դառավ գորշ, պղտորվեց։ Բայց նրա փայլփլուն թեփուկների վրա դարձյալ արևն էր... Աննետան կառչում է լճակին խոնարհված ուռենու թաթիկից,— միայն թե դուրս գա կպչուն այդ տիղմից։ Փրչոտ ճյուղը պատսպարում է նրա մերկ ուսերը, ազդրերը։ Մթնում է, իսկ մեղմ քամին սառեցնում է պարանոցը... Աննետան ուշքի է գալիս։ Ընդամենը մի քանի վայրկյան առաջ նա ընկավ ինքնամոռացության մեջ։ Արևը թաքնվում է Սեն-Կլուի բլուրների հետևում։ Իրիկնային զով է։

Աննետան սթափվեց լիովին, թռավ տեղից։ Նա փոքր-ինչ մրսում է, և սրտանեղած կիտում է հոնքերը. զայրացած է, որ տրվեց ինքնամոռացության։ Եվ ահա նա իր սենյակում նստում է վառվող բուխարու առաջ։ Հաճելիորեն բոցկըլտում է կրակը, որ վառել էին նրանով աքանչանալու, թախիծը ցրելու և ոչ թե տաքանալու համար։ Վաղ գարուն էր, և սենյակ էր լցվում մեղմ օդը, իսկ օդի հետ՝ նաև հեռավոր երկրներից վերադարձած թռչունների երգեցիկ ու քնաթաթախ շաղակրատանքը։ Աննետան մտորումների մեջ է։ Սակայն հիմա նրա աչքերը բաց են։ Նա ոտք է դրել իր սովորական աշխարհը։ Իր սեփական տանն է. նա՝ Աննետա Ռիվիերը։ Հետո թեքվեց դեպի կրակը, որ ալ ցոլքեր է գցում նրա երիտասարդ դեմքին, ոտքով փաղաքշում է ոսկերանգ խանձողատների մոտ կուրծքը տաքացնող սև կատվին, և նորից կենդանանում է նրա թախիծը, որը նա կարճ ժամանակով մոռացության էր տվել։ Աննետան վերհիշում է այն մարդու դեմքը (անհետացածը նրա սրտի միջից էր), որին կորցրել էր։ Նա խոր սգի մեջ է։ Տրտմության կնճիռները դեռ երևում են ճակատին, շուրթերի անկյուններում, և կոպերը փոքր-ինչ ուռել են վերջերս թափած արցունքներից։ Բայց, երբ այդ ուժեղ, թարմ, ինչպես ինքը վերակենդանացած բնությունը, կյանքի հյութերով լեցուն աղջիկը, որ գեղեցկուհի չէ, սակայն հիանալի կազմվածք ունի, շագանակագույն վարսերի խիտ դեզ և պարանոցի ոսկեգույն արևայրուկ, աղջիկը, որի ամեն մի նայվածքի մեջ, դեմքին երիտասարդության թովչանքն է, փորձում է հանդգնաբար հա-

յացքը շեղող աչքերին և բոլորակ ուսերին գցել փարատված վշտի քողը, հիշեցնում է երիտասարդ այրի կնոջ, որ տեսել է, թե ինչպես է իրենից փախչում սիրած տղամարդու սովերը։

Անմեատան իսկապես որ սրտով այրի էր, բայց այն մարդը, որի սովերը նրա ձեռքերը չանում էին պահել, իր հայրըն էր։

— Անմեատան կորցրել էր նրան կես տարի առաջ։ Ուշ աշնանը Ռաուլ Ռիվիերին, որ գեռևս ծեր չէր (նա հիսուն տարեկան էլ չկար), երկու օրվա ընթացքում ուրեմխայի նոպան տարավ։ Արդեն մի քանի տարի էր, ինչ նա մտահոգված էր իր առողջությամբ, որը նախկինում չէր պահպանել, բայց չէր էլ սպասում, թե այդքան անսպասելի ասպարիզից կհեռանար Ռիվիերը, որ փարիզյան ճարտարապետ էր, Հռոմի գեղարվեստների ակադեմիայի նախկին սան, գեղեցիկ մի տղամարդ, խորամանկ և բացառիկ հզոր ու փոթորկուն կրքերի տեր, որ սալոններում մեծ հաջողություն ուներ և գովաբանված էր գործարարական շրջաններում, ամրողջ կյանքում պատվերներ, պատիվներ և ամեն կարգի բարիքներ էր ստանում, երբեք ցույց չտալով, թե ինքը հետամրտում է դրանց։ Նա տիպիկ փարիզեցու գեմք ուներ, որը լուսանկարներում, ծաղրանկարներում, գնացուցակների վրա հաճախակի տեսնելուց սովորական է դառնում. լայն, ուռուցիկ ճակատ, փոքր-ինչ առաջ թեքված գլուխ, ինչպես պոզահարելու պատրաստ ցուլինը, կլոր, փուրս պրծած աչքեր, հանդուգն հայացք, կարճ սանրվածքով փարթամ, շեկ մազեր, ծիծաղող, զգայական շրթի վրա՝ բեղ. ամբողջ կեղպարանքով խելք էր, լկտիություն, հրապույր և անամոթություն։ Նրան ճանաչում էր ամբողջ Փարիզը—արվեստի և վայելքների Փարիզը... Եվ ոչ ոք չէր ճանաչում։ Նա երկդիմի մարդ էր, հիանալի հարմարվում էր միջավայրին, օգտագործում էր այն, բայց անձնական կյանքը գաղտնավորում էր գաղտնի։ Մի մարդ էր նա, որ անհագ կրքեր ուներ և ամենասար արատներ, որոնք ինքն էր զարգացնում իր մեջ, աշխատանքով, սակայն, չդրսևորել այնպիսի մի բան, որ կարո-

դանար խրանեցնել պատվիրատուներին— ներս էր թողնում իր հոգու տաճարը (fas ac nefas) միայն ընտրյալներին, հաշվի չէր նստում ազնվակիրթ ճաշակների և բարոյականության հետ, համապատասխանեցնելով, այնուամենայնիվ, նրանց իր ապրելակերպը և պաշտոնական դրությունը։ Ոչ ոք նրան չէր ճանաչում—ոչ բարեկամները, ոչ թշնամիները... Թշնամինե՞ր։ Ասենք, թշնամիներ նա չէր էլ ունեցել։ Նախանձողներ՝ թերևս, սակայն Ռաուլը դրանց մաքրում էր իր ճանապարհից։ Ընդ որում նրանք ոխ չէին պահում իր դեմ։ Ռիվիները մի կողմ էր նետում նրանց, իսկ հետո այնպիսի վարպետությամբ էր շողոքորթում, որ նրանք ժպտում էին և քիչ էր մնում նվերողության խնդրեին, ինչպես այն երկչոտ մարդուկները, որոնք ձեզ ժպտում են, երբ դուք նրանց կոշտուկներն եք տրորում։ Նրա ճարպկությունն ու խորամանկությունը հաղթանակում էին—դրանք օգնում էին նրան լավ հարաբերություններ պահպանել և մրցակիցների հետ, որոնց նա փուրս էր մղում, և կանանց հետ, որոնց լքում էր։

Այդքան հաջողակ չէր նա ընտանեկան կյանքում։ Կինն այն աստիճան անտակտ էր, որ տառապում էր ամուսնու անհավատարմությունից,— Ռիվիները գտնում էր, որ ամուսնական կյանքի քառորդ դարը բավական էր, որպեսզի կինը ընտելանար դրան, բայց նա ոչ մի կերպ չէր հաշտվում։ Կինըն խնքնամփոփ էր, ճշմարտացի, իրեն փոքր-ինչ զոռով էր պահում, և դա համապատասխանում էր նրա՝ լիոնուհու գեղեցկության ոճին։ Նրա զգացմունքները ուժեղ էին, բայց ոչ փոթորկուն, և նա այն կինը չէր, որ կարողանար զսպել ամուսնուն, մանավանդ որ չուներ երջանիկ տաղանդ,— որն այնքան հարմար է—չտեսնելու տալ այն, ինչի ի վիճակի չէ խանգարելու։ Սեփական արժանապատվության զգացումը նրան թույլ չէր տալիս բողոքել, և, այնուամենայնիվ, նա չէր թաքցնում, որ ամեն ինչ գիտի և տառապում է։ Ռիվիները փափկասիրտ էր (համեմատած դեպս, նա իրեն այդպիսին էր համարում) և չէր ուզում այդ ամենի մասին մտածել, բայց նրան զայրացնում էր, որ կինը չի հաղթահարում իր էգոիզմը։ Տարիներ շարունակ նրանք ապրում էին օտար-

ների նման, սակայն լուռ համաձայնությամբ դա թաքցնում էին շրջապատից, և նույնիսկ նրանց դուստրը՝ Աննետան, երբեք իրեն հաշիվ չէր տալիս ծնողների հարաբերության վերաբերյալ։ Նա չէր էլ ուզում խորամուխ լինել նրանց տարաձայնությունների մեջ, դա նրա համար հաճելի չէր։ Երիտասարդ հասակում մարդիկ իրենք էլ սեփական հոգսեր քիչ չեն ունենում, ուր մնաց ուրիշի գործերով հետաքրքրվեն...

Ռաուլ Ռիվիերը դատերը գրավեց իր կողմը—դրանում դրսևորվեց նրա ամբողջ հնարամտությունը։ Հասկանալի է, դրա համար նա ոչինչ չէր ձեռնարկում—հաղթանակողը արվեստն էր։ Հանդիմանանքի ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ Տիկին Ռիվիերի անհրավացիության մասին։ Ռաուլ Ռիվիերը իրեն պահում էր ասպետորեն. թող աղջիկն ինքը կողմնորոշվի։ Եվ Աննետան այդպես էլ արեց. չէ՞ որ նրա վրա հոր հրապույրը նույնպես ազդում էր։ Եվ ինչպես չմեղադրել այն կնոջը, որը դառնալով հոր կինը, անխելքությամբ սպառճառով ինքը փչացրեց իր երջանկությունը։ Անհավասար պայքարում խեղճ տիկին Ռիվիերը նախապես դատապարտվեց։ Նա ինքը պարտության մատնեց իրեն. մահացավ առաջինը։ Ռաուլը դարձավ կալվածքի և գատեր միակ տիրակալը։ Վերջին հինգ տարիները Աննետան ապրում էր պաշտելի հոր բարոյական ազդեցության տակ, հայրը, որը երես էր տալիս նրան և, չմտածելով, թե ինչ է անում, շռայլում էր գատեր համար իր ամբողջ հմայքը։ Նա այդպես առատաձեռն էր, որովհետև չկար մեկ ուրիշը, որի առաջ կարողանար շռայլել իր զեղումները։ Երկու տարի Ռաուլը գրեթե տանից դուրս չէր գալիս—հիվանդության նախանշանները կաշկանդում էին, հիվանդություն, որին վիճակված էր գերեզման տանել նրան։

Եվ այդպես, ոչ մի բան չէր խանգարում այն հոգեկան մտերմությանը, որը միացնում էր հորն ու գատերը և լցնում Աննետայի սիրտը, նրա նիրհող սիրտը։ Նա քսանչորս տարու մեջ էր, բայց սիրտը, թվում էր, ավելի երիտասարդ է. սիրտը չէր շտապում։ Իսկ գուցե և Աննետան, ինչպես բոլոր նրանք, ում դեռ երկար կյանք է սպասվում, զգալով, ինչպես են իր մեջ փոթորկում այդ կյանքի թաքնված ուժերը

կուտակում էր դրանք և առայժմ կարևորություն չէր տալիս։

Աննետան նման էր և՛ հորը, և՛ մորը. հորից նա ժառանգել էր դիմագծերը և գայթակղիչ ժպիտը, որը Ռաուլ Ռիվիերի մոտ խոստանում էր ավելին, քան նա մտադիր էր տալու, իսկ Աննետայի մոտ, որն այնքան անաղարտ էր, այդ ժպիտը խոստանում էր ավելի շատ, քան ինքն ուզում էր։ Մորից նա ժառանգել էր արտաքին հանգստությունը, հավասարակշռությունը, խիստ բարոյականությունը, չնայած, որ ինքն ազատամիտ էր։ Աննետային առանձնահատուկ թովչանք էին տալիս հոր հմայքն ու մոր զսպվածությունը։ Հնարավոր չէր իմանալ, թե այդ բնավորություններից ո՞րն էր գերակշռում նրա մեջ։ Նրա իսկական խառնվածքը դեռ առեղծված էր և՛ ուրիշների և՛ իր՝ Աննետայի համար։ Ոչ ոք գաղափար չուներ նրա նվիրական ներաշխարհի մասին։ Դա պարտեզում ննջող Եվան էր։ Նրա հոգում խռնվել էին ինչ-որ ցանկություններ, որոնք անհասկանալի էին նույնիսկ իր համար։ Ոչինչ նրանց չէր արթնացնում, որովհետև շարժառիթ չկար։ Թվում էր, բավական է ինքը ձեռքը մեկնի, և կքաղի դրանք։ Սակայն նա փորձ անգամ չէր անում, նա քնած էր այդ ցանկությունների փաղաքուշ գեղգեղանքի տակ։ Թերևս, չէր էլ ուզում փորձել... Ո՞վ գիտե, թե մինչև որտե՞ղ է ինքնախաբեության սահմանը։ Մարդ աշխատում է իր մեջ չհայտնաբերել այն, ինչը տագնապ է առաջացնում... Աննետան գերադասում էր ոչինչ չիմանալ իր հոգու ծովի մասին։ Իսկ Աննետան, որին բոլորը ճանաչում էին, Աննետան, որ ճանաչում էր իրեն, այնքան անուշիկ այդ աղջիկը, որ այնպես հավասարակշռված էր, խելամիտ, կարգասեր, զուսպ, ուժեղ կամքի տեր, ամեն ինչի մասին ուներ իր սեփական դատողությունը, առիթ չէր ունեցել դրսևորելու իր բնավորությունը, հակառակ գնալու բարձրաշխարհիկ հավասարակշռության կամ իր ընտանիքի կողմից սահմանված կանոններին։

Աննետան չէր արհամարհում բարձրաշխարհիկ պարտականությունները, զվարճալիքները, որոնք նա խնդրորեն սիրում էր, դրանք չէին ձանձրացնում նրան, բայց նա պահանջ էր զգում ավելի լուրջ զբաղմունքների։ Նա ջանասի-

րությամբ սովորում էր, հաճախում դասախոսություններին, ուսումնասիրում էր բնական գիտություններ, քննություններ էր տալիս և ձգտում էր գիտական աստիճան ստանալ։ Նրա կենդանի միտքը ծարավի էր գիտելիքների, սիրում էր ստույգ հետազոտություններ, հատկապես բնագիտության ասպարեզում, որտեղ մեծ ընդունակություններ ուներ.— գուցե դրա պատճառն այն էր, որ նրա առողջ բնավորությունը, բնազդորեն ձգտելով դեպի հավասարակշռություն, պահանջ էր զգում հակադրելու խիստ, գիտական մեթոդիկությունը և անհանգիստ գրավչության տրամարանական մտածողությունը այն ներքին աշխարհին, որը նա վախենում էր ալեկոծել, և որը, հակառակ նրա կամքին, բախում էր դուռը, երբ դադարում էր գործել միտքը։ Նրա կյանքում ամեն ինչ պարզ էր, ստույգ, կանոնավոր, և առայժմ դա նրան միանգամայն բավարարում էր։ Չէր ուզում մտածել, թե առջևում ի՛նչ է սպասում։ Ամուսնությունը ամենևին չէր հրապուրում նրան։ Եվ նա ցանկություն չուներ այդ մասին մըտածելու։ Հայրը ծիծաղում էր դատեր կանխակալ կարծիքների վրա, բայց վիճելու մտադրություն չուներ. այդպես նրա համար ավելի հարմար էր։

Կյանքից Ռաուլ Ռիվիերի հեռանալը մինչև հիմքերը ցնցեց այն ամբողջ կուռ կառույցը, որի մեջ նա գլխավոր հենարանն էր, թեև Աննետան դա չէր էլ հասկանում։ Նրան ծանոթ էր մահվան դեմքը։ Այդ դեմքը տեսել էր հինգ տարի առաջ, երբ մայրը լքեց նրան։ Բայց մահվան դիմագծերը միշտ չէ, որ միևնույնն են։ Տիկին Ռիվիերը մի քանի ամիս հիվանդանոցում պառկելուց հետո, լուռ հեռացավ, ինչպես և ապրել էր, պահպանելով մահվան սպրպափի գաղտնիքը, ինչպես պահպանել էր գաղտնիքն իր դառնությունների, և Աննետայի երիտասարդ, անկեղծ ու եսասեր հոգում, լուռ թախծի հետ միասին, որ նման էր գարնան անդրանիկ անձրևի, մնաց թեթևության մի զգացում, որը ինքդ քեզ չես խոստովանում, և խղճի վաղանցիկ խայթեր, որոնք երիտասարդության պատճառով շատ շուտ անհոգորեն մոռացվեցին։

Այլ կերպ մահացավ Թաուլ Ռիվիերը։ Նա հանկարծակիի եկավ այն ժամանակ, երբ ըմբոշխնում էր երջանկությունը, երբ նրան թվում էր, թե այդ երջանկությունը ինքը դեռ երկար է վայելելու։ Եվ կյանքից հեռացավ ամենևին էլ ոչ փիլիսոփայի նման։ Նա մահը և տանջանքներն ընդունեց զայրույթի ճիչերով։ Սարսափահար նա կռվում էր մինչև վերջին շունչը, շնչահեղձ լինելով, ինչպես փրփրակալած ձին, որն ամբողջ ուժով սլանում է դարն ի վեր։ Ջարհուրելի այդ պատկերները դաջվում էին, ինչպես մոմի վրա, Աննետայի բորբոքված երևակայության մեջ։ Գիշերները նրան հետապնդում էին տեսիլքները։ Նա պառկում էր իր սենյակի խավարում և, ննջելով կամ հանկարծակի արթնանալով, այնքան ցայտուն էր նորից տեսնում մեռնողի դեմքն ու հոգեվարքի տառապանքները, որ ինքն էր մարմնավորվում նրա մեջ. Աննետայի աչքերը դառնում էին fnr աչքերը, նրա շունչը դառնում էր fnr շունչը։ Աննետան արդեն չէր կարողանում տարբերել դրանք իրարից։ Նրա աչքերը պատասխանում էին խավարող հայացքի կանչին։ Աննետան ինքը քիչ էր մնում կործանվեր։ Բայց երիտասարդությունը այնպե՞ս ուժեղ է ու ճկուն։ Թող աղեղը ձգված լինի մինչև վերջը —ավելի հեռու կթռչի կյանքի նետը։ Կուրացնելու չափ պայծառ, խենթ կերպարները խավարել են հենց նրանից, որ չափազանց պայծառ են եղել, և խավարը պարուրեց հիշողությունը։ Դիմագծերը, ձայնը, հանգուցյալի պայծառ կերպարը—ամեն ինչ անհետացավ։ Աննետան ուժասպառվելու աստիճան ճգնում էր իր հոգում պահել նրա ստվերը, բայց այդ ստվերն այլևս չէր տեսնում։ Աննետան ոչինչ չէր տեսնում, բացի իրենից։ Միմիայն իրենից... որ միայնակ էր։ Եվան դրախտում արթնանում էր առանց ուղեկցի, առանց նրան, ում ինքն այնպես ընտելացել էր, ում կերպարը չէր չանում որոշել, բայց ում մասին մտածում էր ինչ-որ մի սիրահարվածությամբ, ինքն անգամ այդ չզգալով։ Եվ հանկարծ դրախտը կորցրեց անվտանգությունը։ Նրա՝ մեջ սողոսկեցին դրսից եկող անհանգիստ շնչեր՝ և՛ մահվան շունչը, և՛ կյանքի շունչը։ Աննետան աչքերը բացեց և, ինչպես նախամարդը դիշեր ժամանակ, տագնապով զգաց, որ իրեն,

բոլոր կողմերից դարանակալում են անհայտ վտանգներ, որոնց դեմ պետք է պայքարի։ Աննետայի մեջ բոլոր քնած ուժերը հանկարծ միախմբվեցին, շարվեցին իրար հետևից, դարձան տագնապալի։ Նրա միայնակ հոգին լցվում էր ինչ-որ բուռն պոռթկումներով։

Հավասարակշռությունը խախտվեց։ Ոսումն ու պարապմունքները նրա համար ավելորդ դարձան։ Անհեթեթ էր թվում, որ ինքն առաջ այդպիսի մեծ տեղ է հատկացրել դրանց։ Իսկ կյանքի մյուս բնագավառը՝ այն, որին ամայացրել էր վիշտը, նրա առաջ կանգնում էր իր անծայրածիր լայնությամբ։ Հարվածն ալեկոծեց նրա բոլոր զգացմունքները. կյանքի սիրելի ուղեկցի մահվան հետևանքով առաջացած վերքի շուրջը հայտնվեցին սիրո գաղտնի, անհայտ ուժեր։ Նրանց դեպի իրեն էր քաշում գոյացած դատարկությունը, և նրանք այնտեղ էին ձգտում նրա էության խորքերից։ Իսկ Աննետան, զարմացած այդ ներխուժումից, փորձում էր դրան ուրիշ բացատրություն տալ։ Նա համառությամբ աշխատում էր կենտրոնացնել բոլոր այդ ուժերը այն անձնավորության շուրջը, ում ինքը ողբում էր,— բոլոր այդ ուժե՛րը, բոլոր այդ ա՛յրո՛ղ, անհագուրդ ահեղանքնե՛րը Բնության, որի արտաքին, խոնավ շունչը ողողում էր նրան, և՛ խռովահույզ, տիրական ափսոսանքը երջանկության— խորտակված, իսկ մի՞թե ոչ բաղձալի— և՛ ձեռքերը, որոնք պարզված են դեպի անէության, և՛ թալկացող սիրտը, որը ձգտում էր դեպի անցյալը—իսկ մի՞թե ոչ դեպի ապագան։ Այդ՝ամենը վերջացավ նրանով, որ Աննետայի վիշտը սկսեց լուծվել զգացմունքների անըմբռնելի փոթորկի մեջ. թախծի, ցանկությունների, զգացմունքների անբացատրելի անձկության մեջ. այդ բոլորը և՛ տանջում էր նրան, և՛ շարժում զայրույթը...

Այն երեկո, ապրիլի վերջին, հանկարծ զայրույթը համակեց Աննետային։ Նրա պայծառ միտքը ապստամբեց անորոշ երազանքների դեմ, որոնք նա մի քանի չափից ավելի ձգվող ամիսներ թողել էր առանց հսկողության և որոնց վտանգը կանխատեսում էր։ Միտքը ուզում էր քշել այդ

երազանքները, բայց դա այնքան էլ հեշտ չէր. դրանք նրան չէին ենթարկվում, նա կորցրել էր կառավարելու սովորությունը... Աննետան փախչում էր բուխարու մեջ բոցկլտող կրակի հայացքից, իր սև թևերն արդեն տարածած գիշերվա նենգ հարձակումից։ Նա տեղից վեր կացավ, վեր քաշեց մրսած ուսերը և, հոր խալաթը վրան գցելով, վառեց լույսը։

Այդտեղ Ռաուլ Ռիվիերի աշխատասենյակն էր։ Բաց լուսամուտից, ծառերի դեռ դալար, նոսր սաղարթների միջով, խավարում երևում էր Սենան, իսկ նրա մութ, կարծես անշարժ ջրերում արտացոլվում էին գետի մյուս ափին գտնվող լուսավորված պատուհաններով տները և ցոլքերը վերջույսի, որը հանդչում էր Սեն-Կլուի բլուրների վրա։ Ռաուլ Ռիվիերը, որ շատ նրբաճաշակ մարդ էր, թեև խուսափում էր այդ ճաշակը վատնել իր հարուստ պատվիրատուների գռեհիկ շաբլոնի կամ ծիծաղելի տարօրինակություննների համար, Փարիզի՝ Բուլոնյան առափնյակի արվարձանում գնել էր իրեն դուր եկած մի հին առանձնատուն, կառուցված Լյուդովիկոս 16-րդի ոճով, և այդպես էլ չէր վերակառուցել։ Սահմանափակվել էր միայն նրանով, որ զարձրել էր շատ հարմարավետ։ Գործարարական առանձնասենյակը պետք է ծառայեր նաև սիրային գործերի համար։ Եվ, դատելով ամեն բանից, իր այդ ֆունկցիան նա կատարում էր։ Ռիվիերը մի հաճելի հաճախորդուհու չէր, որ ընդունել էր այդտեղ, բայց այդ մասին ոչ ոք չէր էլ կասկածում, քանի որ սենյակն ուներ ուղղակի պարտեզ տանող իր առանձին ելքը։ Սակայն արդեն երկու տարի էր, ինչ նա դրանից չէր օգտվում։ Նրա միակ հաճախորդը Աննետան էր։ Հենց այստեղ էլ նրանք անց էին կացնում իրենց ամենամտերմական րոպեները։ Աննետան սենյակում այս ու այն կողմ էր քայլում, կարգի էր բերում ամեն ինչ, ջուր էր լցնում ծաղկամանների մեջ, անդադար շարժվում էր, հետո հանկարծ գիրքը ձեռքին անշարժանում, նստում էր իր սիրելի անկյունում դրված բազմոցի վրա և լուռ նայում գետի մուգ ժապավենին կամ, չկտրվելով անուշադիր ընթերցումից, մտացրիվ շաղակրատում էր հոր հետ։ Իսկ նա, Աննետայի անհոգ ու խոնջացած հայրը, հենց այդտեղ նստած և գլուխն առանց

ընդհատել, իր ծաղրական աչքերով գաղտնաբար հետևում էր դատեր ամեն մի շարժմանը։ Այդ ծեր երես առած երեխան սովոր էր, որ բոլորը պաշտեին իրեն, և այդ պատճառով ձեռ էր առնում դատերը, սրախոսում, նրա վրա թափելով սիրալիր, կատակային, պահանջկոտ, տաքնապալից հարցերի մի ամբողջ տարափ, միայն այն բանի համար, որպեսզի իր վրա կենտրոնացնի Աննետայի մտքերը և համոզվի, որ նա իսկապես լսում է իրեն։ Եվ վերջիվերջո Աննետան, հնազանդված և ուրախացած այն բանից, որ հայրը չի կարող առանց իրեն յոլա գնալ, ամեն ինչ մի կողմ էր դնում և զբաղվում միայն նրանով։ Այդ ժամանակ հայրը հանդարտվում էր և, նվաճելով դատեր ուշադրությունը, կխոսում էր նրա հետ իր գաղտնիքները, մեկ առ մեկ վերհիշում հուշերը, նվիրաբերում էր դատերը իր փայլուն մտքի բոլոր հրըճատություններըՙ իրենց ամբողջ տարատեսակությամբ։ Հասկանալի է, հայրն աշխատում էր ընտրել իր համար ամենաշոյիչ դեպքերը և դրանք մատուցում էր adusum Delphini[1] իր դոֆինեին, ամենանրբին կերպով հասկանալով և՛ նրա գաղտնի հետաքրքրությունը, և՛ անհաղթահարելի զվարճանքը։ Հայրը դատերը պատմում էր լոկ այն, ինչ նա կցանկանար լսել։ Աննետան ոչ մի բառ բաց չէր թողնում և հպարտանում էր, որ հայրը վստահում է իրեն։ Նրա համար հաճելի էր, որ հայրը իրեն պատմում է շատ ավելին, քան մայրն էր պատմում։ Ներևակայում էր, որ ինքը հոր անձնական կյանքի գաղտնիքների միակ պահապանն է։

Սակայն հոր մահից հետո Աննետայի պահպանության տակ հայտնվեցին ևս որոշ բաներ. նրա բոլոր թղթերը։ Աննետան նույնիսկ փորձ էլ չէր անում պատկերացում ունենալ դրանց մասին։ Այդ թղթերը չէին պատկանում իրեն. այդ էր ներշնչում նրան հարգալից սերը։ Մյուս զգացմունքը հուշում էր. պետք է ուրիշ կերպ վարվել։ Համենայն դեպս պետք էր որոշել նրանց ճակատագիրը. Աննետան, միակ ժառանգորդը, նույնպես կարող էր անհետանալ, չի կարելի

---

1. Հարմարեցված դոֆինի համար (լատ.)։— Այստեղ. մեղմ և պարկեշտ ձևով։

թույլ տալ, որ ընտանեկան թղթերը ուրիշի ձեռք ընկնեն։ Կնշանակի, որքան կարելի է շուտ պետք է դրանք աչքի անցկացնել, և այն ժամանակ պարզ կդառնա, ոչնչացնե՞լ դրանք, թե պահպանել։ Այդպես վճռել էր Աննետան դեռ մի քանի օր առաջ։ Բայց երբ երեկոները մտնում էր սենյակ, որտեղ ամեն ինչ խոսում էր սիրելի հոր ներկայության մասին, նա արիություն էր ունենում միայն մի բան անելու. ժամերով նստել այնտեղ ու անշարժանալ։ Աննետան վախենում էր, որ ընթերցելով անցյալին վերաբերող նամակները, ինքը անմիջականորեն կհաղորդակցվի կյանքի հետ...

Եվ, այնուամենայնիվ, դա անհրաժեշտ էր։ Աննետան դա վճռեց այն երեկո։ Նա տագնապով էր զգում, թե ինչպես է այս տաքուկ դիշերին, շուրջը տարածված գրպանքների մեջ լուծվում իր թախիծը, և նա ցանկություն զգաց հաստատել իր իրավունքը հանգուցյալի վրա։ Նա մոտեցավ վարդագույն փայտից պատրաստած փոքրիկ պահարանին, որն ավելի շուտ պչրուհու կազմր, քան գործարարի,— Լյուդովիկոս 15-րդի ժամանակների այդ պահարանում, նրա դարակների մեջ, որոնք բարձրանում էին հարկ առ հարկ յոթ-ութ շարք միմյանց վրա և պահարանը դարձնում էին կախարդական փոքրիկ մի տնակ, որն իր տեսքով գերազանցում էր ամերիկյան երկնաքերների ձևը, Ռիվիերը պահում էր իր նամակների դարսերն ու բոլոր թղթերը։ Աննետան չոքեց պահարանի առաջ, քաշեց ներքևի դարակը։ Հետո ամբողջովին դուրս հանեց այն, որպեսզի ավելի լավ կարողանա զննել պարունակությունը, և, նորից նստելով բուխարու մոտ, դարակը դրեց ծնկներին և խոնարհվեց վրան։ Տանը ոչ մի շշուկ չէր լսվում։ Աննետան ապրում էր իր ծեր հոր բաքրոջ հետ, որը տնտեսությունն էր վարում և այդպիսի հարցերի հետ գործ չուներ. Վիկտորինա Հորաքույրը, որ անհնազանդելի մի անձնավորություն էր, ամբողջ կյանքը անց էր կացրել եղբոր մասին հոգալով և դա շատ բնական էր համարում, իսկ հիմա նա Աննետայի հոգսն էր քաշում, առաջվա պես տան կառավարչի դեր էր կատարում և, ինչպես ծեր կատուները, ընտելանալով այդ տանը, վերջիվերջո դարձել էր կահույք, որին ինքը կասկածած էր, իհարկե, ոչ ավելի քիչ,

քան իր հարազատներին։ Առավոտ ծեգին նա հեռանում էր իր սենյակը։ Վերևում նրա ինչ-որ տեղ լինելը և նրա թաղիքե ոտնամանների համաչափ քստքստոցը չէին խանգարում Աննետայի խոհերը—այդպես մարդ իր տանը չի նկատում կատվին։

Աննետան սկսեց կարդալ հետաքրքրասիրությամբ ու որոշ տագնապով։ Սակայն դեպի կարգ ու կանոնն ունեցած սերը և դեպի անդորրն ունեցած ձգտումը, որոնք պահանջում էին, որպեսզի և՛ նրա մեջ, և՛ նրա շուրջը ամեն ինչ լինի պարզ, հստակ, Աննետային հարկադրում էին նամակը վերցնել և բացել առանց շտապելու, հանգիստ և սառնասրտորեն, և դա, թեկուզև որոշ ժամանակով, պահպանում էր նրա մեջ ինքնախաբեությունը։

Սկզբում նա կարդում էր մոր նամակները։ Դրանց վրշտալի տոնը իսկույն ևեթ Աննետայի հիշողության մեջ վերակենդանացրեց վազեմի մի զգացում, ոչ միշտ բարյացակամ, երբեմն փոքր-ինչ զրգռված, խղճահարության ինչ-որ երանգով, որը նա, իրեն հատուկ լրջությամբ, համարում էր անպայման հիվանդ մարդու սովորական նվիվոց. «Ես՞ղճ մամա...»։ Սակայն քիչ-քիչ խորանալով ընթերցանության մեջ, նա առաջին անգամ նկատեց, որ մոր հոգեկան այդպիսի վիճակի համար պատճառներ են եղել։ Նրան անհանգստացրին Ռաուլի անհավատարմությանը վերաբերող որոշ ակնարկներ։ Աննետան չափազանց կոմպնապահորեն էր վերաբերվում հորը և այդ տողերը բաց թողնց, ձևացնելով, թե ոչինչ չհասկացավ։ Հոր հանդեպ ունեցած ակնածալից սերը նրան դրնել էր ուշադրություն չդեղելու գերազանց ապացույցներով։ Սակայն Աննետան տեսնում էր, թե ինչպիսի խոր հոգի է ունեցել տիկին Ռիվիերը, ինչպես է վիրավորված եղել նրա սերը, և կշտամբում էր իրեն, որ բալորովին չի ճանաչել մորը, որ ինքը նրա ինքնազոհություններով լեցուն կյանքը դարձրել է ավելի դժնդակ։

Այդ նույն դարակում, հենց կողքին, դրված էին և նամակների կապոցներ (դրանցից մի քանիսի կապերն արձակվել էին և խառնվել մոր նամակներին)—Ռաուլն իր թեթևամտությամբ դրանք պահում էր միասին. այդպես էր նա զու-

գակցում իր բարդ ամուսնական կյանքը և կանանց հետ ունեցած նամակագրությունները։

— Եվ հենց այստեղ էլ այն հանդարտությունը, որ Աննետան ներշնչում էր իրեն, ենթարկվեց ծանր փորձության։ Բոլոր այդ թերթիկներից ձայներ էին լսվում, դրանք միանգամայն ուրիշ ձևով էին խոսում մտերմության մասին, դրանք վատահ էին իրենց իշխանությանը, և ոչ թե նման էին խեղճ տիկին Ռիվիերի ձայնին։ Այդ ձայները հաստատում էին, որ իրենք իրավունք ունեն տիրելու Ռաուլին։ Աննետան վրդովված էր։ Նա ենթարկվեց առաջին ցանկությանը, նամակը ճմրթեց և շպրտեց վառվող բուխարու մեջ։ Սակայն նույն այդ րոպեին նորից ետ ճանկեց։

Նա չփոթահար նայում էր թերթիկներին, որոնց կրակի բոցերն արդեն կրծմրծել էին, կրակի բոցերը, որոնց ճիրաններից ինքը ճիշտ ժամանակին դրանք դուրս բերեց։ Այո, Աննետան հիմքեր ուներ չխառնվելու ծնողների միջև նախկինում եղած անհաշտություններին, իսկ ավելի շատ նա հիմքեր ուներ հոր սիրային կապերի մասին չիմանալու։ Բայց հիմա այդ հիմքերն արդեն դեր չէին խաղում։ Աննետան անձնական վիրավորանք զգաց։ Ինքն էլ չգիտեր, թե ի՛նչ իրավունքով, ինչի՛ց ելնելով, ինչո՛ւ։ Նա նստել էր անշարժ, քիթը կնճռոտած, գլուխը կախ, զայրույթից շրթունքները սեղմած, և, հիշեցնելով մոլեգնած կատվի, դողում էր ձեռքի մեջ ճմրթվող այդ զազրելի թղթի կտորները կրակը նետելու ցանկությունից։ Բայց մատները ետ գնացին, և Աննետան, գայթակղությանը ենթարկվելով, նայեց թղթերին։ Եվ հանկարծ նա վճռականություն զգաց—բացեց ձեռքի ափը, ճմրթված նամակը ուղղեց, խնամքով հարդարեց ծռորված թերթերը... Եվ կարդաց—կարդաց ամբողջը։

Նողկանքով (բայց միևնույն ժամանակ նաև մի տեսակ կախարդված) Աննետան հետևում էր, թե ինչպես են անցնում իր առջևով հոր սիրային կապերը, որոնց մասին ինքը գաղափար անգամ չի ունեցել։ Խայտաբղետ, քմահաճ շարաններ։ Ե՛վ սիրո, և՛ արվեստի մեջ Ռաուլը իր ճաշակը «փոխում էր, ինչպես ձեռնոցները»։ Աննետան գիտեր իր

շրջապատի այդ կանանց անունները և անբարյացակամորեն հիշում էր, թե մի ժամանակ ինչպես էր իրեն ծպտում, ինչպես էր փաղաքշում իրեն հոր ընտրյալներից որևէ մեկը։ Մյուսները կանգնած էին հասարակական սանդուղքի ոչ այնքան բարձր աստիճանին, նրանց ուղղագրությունը ավելի պակաս ազատություն չուներ, քան այն զգացմունքները, որ նրանք զեղում էին։ Աննետան շրթունքներն ավելի պինդ սեղմեց իրար, սակայն նրա մտավոր հայացքը, որը սուր էր և ծաղրող, ինչպես հոր մտավոր հայացքը, տեսնում էր բոլոր այդ տարօրինակ ու զավեշտական, ճակատներին ընկած խոպոպներով կանանց, որոնք լեզուների ծայրերը հանած, խոնարհված թղթերի վրա, քափ ու քրտինք կտրած, հևիհև ուղերձներ էին թխում։ Բոլոր այդ սիրավեպերը— մի քանիսը ավելի երկար, մյուսները՝ ավելի կարճ, իսկ ընդհանրապես՝ բոլորն էլ ոչ տևական—ձգվում էին իրար հետևից, փոխարինելով ու դուրս մղելով մեկը մյուսին։ Աննետան դրա համար շնորհակալ էր նրանց, բայց վիրավորված էր և լցված արհամարհանքով։

Հայտնագործությունները չէին վերջացել։ Ահա նամակների մի կապոց ևս—դրանք դրված էին առանձին, մյուս արկղում, և կապված էին մյուսներից ավելի խնամքով (ավելի խնամքով, քան մոր նամակները), որ խոսում էր տևական մի կապի մասին։ Ամսաթվերը նշված էին անփութորեն, բայց իսկույն երևում էր, որ նամակագրությունը շարունակվել է երկար տարիներ։ Նամակները գրված էին երկու ձեռագրով. դրանց մի մասը— այն նամակները, որոնք երփներանգում էին սխալներով և որոնց տողերը ծուռումուռ էին,— վերջանում էին կապոցի կեսից, իսկ մյուս մասը գրված էր սկզբում մանկական ձեռքով՝ մեծի օգնությամբ, բայց հետո գնալով ձեռագիրը դառնում էր ավելի հաստատուն։ Նամակագրությունը տեղի էր ունեցել բոլոր վերջին տարիներին, դեռ ավելին՝ (և դա Աննետայի համար հատկապես ծանր էր) հոր կյանքի վերջին ամիսներին։ Եվ այդ նամակագիրը, հափշտակելով Աննետայից նրա համար նվիրական շրջանի ժամերը, որոնց տնօրինելու իրավունքը, ինչպես ինքը պատկերացնում էր, տրված էր միայն ու միայն

իրեն,— այդ ինքնակոչ կինը, որը ինքնակոչ էր կրկնակի, իր նամակներում նրա հորը կոչում էր «հայրի՛կ»...

Աննետան անտանելի մի ցավ զգաց։ Մոլեգին շարժումով նա իր ուսերից դեն գցեց հոր խաչաթը։ Նամակները ձեռքից թափվեցին։ Նա ետ ընկավ բազկաթոռի թիկնատեղին և այդպես նստեց առանց արցունքների, վառվող աչքերով։ Աննետան չէր վերլուծում իր զգացմունքները։ Նա այնքան էր շփոթվել, որ դատողություն անել չէր կարող։ Եվ այնուամենայնիվ, այդպես շփոթահար նա մտածում էր մի բան. «Հայրս ինձ խաբեց...»։

Աննետան նորից ձեռքն առավ այդ նզովյալ նամակները և այլևս ցած չդրեց այնքան ժամանակ, քանի դեռ չէր ներծծել ամբողջը, մինչև վերջին տողը։ Նա կարդում էր, և քթանցքները լայնանում էին, իսկ բերանը փակ էր։ Նրան այրում էր խանդի թաքուն կրակը, և ինչ-որ մի մութ զգացում նույնպես ծնունդ էր առնում նրա մեջ։ Ոչ մի անգամ նա չմտածեց, որ թափանցելով այդ նամակագրության սրբոցության սրբոցը, տիրանալով հոր գաղտնիքներին, նա խրճի դեմ քայլ է կատարում։ Ոչ մի անգամ կասկած չզգաց իր իրավունքի նկատմամբ... (Իր իրավունքի։ Բանականության ձայնը լռեց։ Խոսում էր բոլորովին ուրիշ մի ուժ— բռնակալակա՞ն)։ Ընդհակառակը, նա համարում էր, որ շոշափված են իր իրավունքները—այո, հայրը շոշափել է նրա իրավունքները։

Բայց և այնպես Աննետան տիրապետեց իրեն։ Մի ակրնթարթում նա կարծես անցողիկ տեսավ, թե որքան անհեթեթ է իր պահանջկոտությունը։ Ուսերը թոթվեց։ Ի՞նչ իրավունքներ ուներ նա հոր նկատմամբ։ Մի՞թե հայրը ինչ-որ բան էր պարտք իրեն։ Զգացմունքները տիրականորեն ասում էին. «Այո՛»։ Վիճելն անմտություն է։ Աննետան սրտվեց անմիտ զայրույթին, նա տանջվում էր խանդի ասղոտումներից և միևնույն ժամանակ մի դառը խինդ էր զգում այն դաժան ուժերի գրոհից, որոնք կյանքում առաջին անգամ, սուր-սուր ասեղների պես մխրճվում էին նրա մարմնի մեջ։

Գիշերվա մի մասն անցավ ընթերցանությամբ։ Եվ երբ,

վերջապես, Աննետան որոշեց պառկել, նրա փակ կոպերի տակ դեռ երկար ժամանակ առկայծում էին այն տոզերն ու բառերը, որոնցից նա ցնցվում էր, մինչև որ երիտասարդական ամուր քունը հաղթեց նրան։ Այժմ նա պառկած էր անշարժ, խորը շնչառությամբ, հանգարտված, թեթևացած այն վատնած ուժերի շնորհիվ, որը տեղի էր ունեցել նրա մեջ։

Հաջորդ առավոտյան Աննետան բոլորը նորից կարդաց. նա հետագա օրերին նույնպես հաճախ էր կարդում այդ նամակները. նրա մտքերը հենց դրանցով էլ զբաղված էին։ Հիմա Աննետան կամաց-կամաց կարողանում էր պատկերացնել այդ կյանքը—երկրորդ կյանքը, որը ընթացել էր նրա կյանքին զուգահեռ. մայրը ծաղկավաճառ էր, Ռաուլը նրան փող էր մատակարարում, որպեսզի նա խանութ բացի։ Աղջիկը մոդիստուհի էր կամ դերձակուհի (ստույգ տեղեկություններ չկային)։ Մեկի անունը Դելֆինա է, իսկ մյուսինը՝ (որ ավելի երիտասարդ էր) Սիլվիա։ Դատելով ֆանտաստիկորեն անփույթ ոճից, որի անմիջականությունը իր հմայքն ուներ, նրանք նման էին միմյանց։ Դելֆինան, ըստ երևույթին, շատ հաճելի կին էր, ու թեև նա որոշ խորամանկությունների էր դիմում, որոնք մերթ այստեղ, մերթ այնտեղ նամակների մեջ նշմարվում էին, բայց և այնպես իր պահանջներով Ռիվիերին առանձնապես չէր ձանձրացնում։ Ոչ մայրը, ոչ աղջիկը կյանքը չէին ընկալում ողբերգորեն։ Ասենք, նրանք համոզված էին, որ Ռաուլը սիրում է իրենց։ Հավանաբար դա հենց նրա սերը պահպանելու լավագույն միջոցն էր։ Նրանց անպատկառ համոզվածությունը Աննետային վիրավորում էր ոչ պակաս, քան այն ապշեցուցիչ անպարկեշտությունը, որով նրանք դիմում էին իր հորը։

Սիլվիան ավելի էր զբաղեցնում Աննետայի խանդոտ ուշադրությունը։ Մյուսը կենդանի չէր, և Աննետան հպարտությունից ձևացնում էր, թե իրեն ամենևին էլ չի անհանգստացնում Դելֆինայի և իր հոր մտերմությունը։ Աննետան արդեն մոռացել էր, թե ինքն ինչպես էր վիրավորվել մի քանի օր առաջ, երբ իմացավ հոր բոլոր սիրային կապերի մասին։ Այժմ, երբ ինքը պայքարի մեջ էր մտնում ավելի խոր արմատներ ունեցող կապվածության հետ, մյուս բոլոր

ախոյանները չէին վախեցնում նրան։ Հարելով իր միտքը, Աննետան ճգնում էր պատկերացնել անծանոթ կնոջ կերպարը. չէ՞ որ այդ կինը, ինչքան էլ որ Աննետան արհամարհում էր նրան, ընդամենը կիսով չափ էր իր համար օտար։ Ուրախ անկաշկանդվածությունից, նամակներում գործածված հանգիստ «դու»-ից,— զգացվում էր, որ Սիլվիան Ռաուլ Ռիվիերին այնպես է տնօրինում, կարծես վերջինս նրա միապատկան սեփականությունը լինի,— այդ ամենը զայրույթ էր պատճառում Աննետային, նա աշխատում էր լարված հայացքով նայել այդ անտանելի անծանոթուհուն, որպեսզի ոչնչացնի նրան։ Սակայն ինքնակոչը խուսափում էր Աննետայի հայացքից։ Նա կարծես ասում էր.

«Նա ի՛մն է, իմ մեջ նրա արյունն է հոսում»։

Եվ որքան ավելի էր վրդովվում Աննետան, այնքան ավելի ամուր էր հաստատվում նրա մեջ այդ մոտիկությունը։ Աննետան չափազանց երկար էր դիմադրում և կամաց-կամաց ընտելացավ պայքարին ու նույնիսկ՝ իր հակառակորդին։ Դա վերջացավ նրանով, որ ինքն այլևս չէր կարողանում ապրել առանց նրա։ Առավոտյան դեռ աչքերը չբացած, նա խակուլն ևեթ սկսում էր մտածել Սիլվիայի մասին, և ախոյանի խորամանկ ձայնը այժմ արդեն կրկնում էր.

«Իմ մեջ հոսում է fn արյունը»։

Եվ Աննետան այնքան պարզ էր լսում այդ ձայնը, մի անգամ զինչերը նրա աչքին այնքան կենդանի երևաց այդ անծանոթ քույրը, որ ինքը, դեռ լրիվ չարթնացած, պարզեց ձեռքերը, որպեսզի գրկի նրան։

Հաջորդ օրը զայրացած ու դիմադրող, բայց արդեն պարտված Աննետային համակեց քրոջը տեսնելու աննահանջ ցանկությունը։ Եվ նա գնաց Սիլվիային որոնելու։

Հասցեն նամակներում էր։ Աննետան գնաց Մեն բուլվարը։ Կեսօրն անցնելու վրա էր։ Պարզվեց, որ Սիլվիան արհեստանոցում է։ Աննետան սիրտ չարեց գնալ այնտեղ։ Նա մի քանի օր ևս սպասեց, ապա ճաշից հետո, երեկոյան գեմ նորից գնաց Սիլվիայի մոտ։ Սիլվիան դեռ չէր վերադարձել տուն, գուցե նորից էր դուրս եկել, ոչ ոք ստույգ չգիտեր։

Ամեն անգամ չվային անհամբերությունը ամբողջ օրը Աննետային պահում էր լարվածության և սպասումների մեջ։ Նա վերադառնում էր հիասթափված, և փոքրոգությունը գաղտնաբար հուշում էր նրան, որ ավելի լավ է դրանից հրաժարվել։ Բայց նա այն մարդկանցից էր, որոնք երբեք չեն հրաժարվում իրենց ընդունած վճռից, չեն հրաժարվում, որքան էլ համառ լինի դիմադրությունը, որքան էլ սարսափելի լինի այն, ինչ կարող է պատահել։

Եվ Աննետան մի անգամ մայիսի վերջին, երեկոյան ժամը իննի մոտերքը նորից գնաց նրա մոտ։ Այս անգամ ասացին, որ Սիլվիան տանն է, վեցերորդ հարկում։ Աննետան մի շնչով բարձրացավ վերև—նա չէր ուզում, որ մտածելու ժամանակ ունենա, որ հնարավոր լինի ինչ-որ բանով արգելք հանդիսանալ նրա շունչը կտրվում էր։ Կանգ առավ սանդղահարթակին։ Չգիտեր թե իրեն ինչ է սպասում։

Երկար, ընդհանուր միջանցք, առանց գորգի, միայն սալապատած։ Աջ և ձախ կողմերից երկու կիսաբաց դռներ. բնակիչները բարձրաձայն խոսում էին միմյանց հետ։ Կարմիր սալիկների վրա շիկնել էին մայր մտնող արևի շողերը, որոնք ներս էին ընկել ձախ կողմի դռնից։ Հենց դրա հետևում էլ ապրում էր Սիլվիան։

Աննետան դուռը բախեց։ Առանց շաղակրատանքն ընդհատելու, ներսից ձայն տվին. «Մտե՛ք»։ Աննետան դուռը հրեց։ Ոսկեգեն մայրամուտի ցոլքերը խփեցին նրա դեմքին։ Նա տեսավ, թե ինչպես կիսահանված մի աղջիկ, յուրկան հագին, թմփլիկ ուսերը բաց, բոբիկ ոտքերին վարդագույն կիսամաշ քստիկներ՝ սենյակում այս ու այն կողմ է գնում, ճկուն մեջքը իր կողմը շրջած։ Նա ինչ-որ բան էր փնտրում հարդարանքի փոքրիկ սեղանի վրա և ինքն իր հետ զրուցում, բմբուլիկով դիմափոշի քսելով քթին։

— Հը, ի՞նչ կա,— հարցրեց նա սվավացնելով, ոլովհետև բերանը լիքը հերակալներ էին։

Եվ հենց նույն րոպեին նրա ուշադրությունը գրավեց ջրով լի սափորի մեջ դրած յասամանի շյուղը. նա քիթը խրեց ծաղիկների մեջ և հաճույքից սկսեց մոլտալ։ Հետո զլուխը բարձրացրեց, ծիծաղող հայացքով նայեց հայելուն և

տեսավ Աննետային,— վերչինս արևի շողերով լուսավորված, անվճռական կանգնել էր նրա հետևում՝ շեմին. Սիլվիան զարմանքի մի ճիչ արձակեց, շրջվեց Աննետայի կողմը և, ետ տանելով մերկ թևերը, արագ ու ճարպիկ հերակալներով հավաքեց զգգվված մազերը։ Հետո գիրկը բացած մոտեցավ Աննետային, բայց հանկարծ թևերը թողեց և սիրալիր, հյուրասեր, բայց զուսպ մի շարժումով հրավիրեց ներս մտնել։ Աննետան մտավ սենյակ։ Նա ճիգ էր գործադրում, բայց ոչ մի բառ չէր կարողանում արտաբերել։ Սիլվիան նույնպես լուռ էր։ Նա աթոռ առաջարկեց, վրան գցեց երկնագույն զոլերով մի խալաթ և նատեց դիմացը՝ մահճակալի եզրին։ Նրանք երկուսն էլ նայում էին միմյանց և սպասում, թե ով կսկսի...

Որքա՜ն էին տարբեր։ Նրանք միմյանց ուսումնասիրում էին խորաթափանց, գնահատող հայացքներով, առանց նեղոցամտության, աշխատելով իմանալ, դուրս կորզել. «իսկ դու ինչպիսի՞ն ես»։

Աննետան կանգնած էր Սիլվիայի առաջ—կանգնած էր բարձրահասակ, թարմ, լայներես, քիթը փոքր-ինչ վեր ցցած, ոսկերանգ փայլով շագանակագույն գանգուր մազերի դեզի տակ՝ երինջի ուռուցիկ ճակատ, խիտ հոնքեր։ Լայնորեն բացված երկնագույն աչքերը փոքր-ինչ դուրս էին պրծած և սրտային հուզումներից երբեմն մի տեսակ տարօրինակորեն մթին էին տալիս։ Բերանը մեծ, արտահայտիչ շրթունքները, որոնց անկյունները ծածկված են շեկ ազվամազով, սովորաբար փակ են, և նրանց արտահայտության մեջ հակահարվածի պատրաստ ինչ-որ մի բան կա, զուսպ վճռական, բայց ինչպիսի՜ ամենահաղթ, ամոթխած և լուսավոր ժպիտ է կերպարանափոխում ամբողջ երեսը, երբ այդ շուրթերը բացվում են։ Կզակն ու այտերը լիքն են, բայց ոչ գեր, թվում է ձուլվածք է, պարանոցը, ուսերը, թևերը մուգ պրընձի գույն ունեն։ Սքանչելի, ճիգ մաշկը ողողվում է առողջ արյամբ։ Գոտկատեղը որոշ չափով ծանրացած է, իրանը փոքր-ինչ լցված, իսկ ոտինքները լայն, փարթամ։ Սիլվիայի փորձված հայացքը, զգեստի տակ շոշափելով այդ

բոլորը, կանգ առավ սքանչելի ուսերի և պարանոցի ներդաշնակ գծի վրա, այդ ոսկերանգ, կլոր սյան՝ Աննետայի մարմնի ամենակատարյալ գծի վրա։ Աննետան գիտեր ինչպես պետք է հագնվել, նրա կոստյումի ամեն մի մանրուք համազամանորեն մտածված էր,— Սիլվիայի կարծիքով նույնիսկ չափազանց հանգամանորեն։ Մազերը խնամքով հավաքած են, ոչ մի ավելորդ մազափունջ, ոչ մի ցցված մազ։

Եվ Սիլվիան հարցնում էր իրեն. «Իսկ էությունը նրա նույնպե՞ս այդպիսին է»։

Աննետայի առաջ էր Սիլվիան՝ գրեթե նույնքան բարձրահասակ (այո, թերևս ոչ կարճ), բայց բարալիկ, նեղ գոտկատեղով, մարմնի համեմատությամբ փոքրիկ գլխով, խալաթը կիսամերկ մարմնին գցած, ոչ մեծ կրծքով, բայց և այնպես թխլիկ, լիքը ուսերով, իսկ ազդրերը նեղ։ Նա նստած է մի տեսակ օրորվելով, ձեռքերը դրած կլորիկ ծնկներին։ Նրա կզակն ու ճակատը նույնպես կլոր են, փոքրիկ քիթը քիչ ցցված է վեր, մազերը բաց շագանակագույն են, վերին աստիճանի նուրբ և աճում են ուղղակի քներակներից սկսած, այտերի վրա խոպոպիկներ կան, ծոծրակին և սպիտակ, անսահման սպիտակ ու նրբակերտ վզին՝ անհնազանդ գանգրավարսեր։ Տնային բույս։ Նրա պրոֆիլները անհամաչափ էին, աջակողմյանը քնքշանվադուն է, սենտիմենտալ— կատուն քնած է, ձախակողմյանը խորամանկ է, զգոն—կատուն կծում է։ Խոսելու ժամանակ նա այնպես էր ցնցում իր վերին շուրթը, որ մերկանում էին սուր ժանիքները։ Իսկ Աննետան մտածեց. «Աստված հեռո՜ւ տանի սրա հարձակումից»։

Որքա՜ն տարբեր էին նրանք։ Բայց, չնայած դրան, երկուսն էլ առաջին հայացքից մեկը մյուսի մեջ տեսավ հորը. նրա հայացքը, պայծառ աչքերը, ճակատը, շուրթերի անկյուններում ընկած ծալքը...

Աննետան վեհերոտ, լարված, տիրապետեց իրեն և անդիմադրելի հուզմունքից սառած տոնով արտաբերեց իր ազգանունը։ Սիլվիան, առանց նրան ընդհատելու, աչքը չէր հեռացնում նրանից, իսկ հետո, չարագուշակ ժպիտով ցընցելով շուրթը, ասաց.

— Ես առանց այդ էլ դա գիտեի։

Աննետան ցնցվեց։

— Ինչպե՞ս։

— Ձեզ տեսել եմ... և հաճախ... Ձեր հոր հետ...

Սիլվիան կմկմաց վերջին բառի վրա։ Գուցե չպատկերնդ զգացումից նա կուզեր ասել. «իմ հոր հետ»։ Բայց այդ չասաց՝ Աննետայի հանդեպ ունեցած ծաղրական կարեկցանքի պատճառով, Աննետայի, որը դա կարդաց նրա շուրթերից։ Ամեն ինչ հասկացավ, աչքերը մի կողմ դարձրեց և բռնկվեց ստորացումից։

Սիլվիայի աչքից ոչինչ չվրիպեց. նա ըմբոշխնում էր Աննետայի շփոթահար վիճակը։ Նա շարունակում էր խոսել գոռոզամտորեն և առանց շտապելու։ Պատմեց, որ թաղման ժամանակ ինքը եկեղեցում էր, մտել էր անկյուններից մեկը և ամեն ինչ տեսնում էր։ Նա այդ պատմությունն անում էր երգեցիկ ձայնով, բառերը փոքր-ինչ արտասանում էր քթում և ոչ մի հուզմունք չէր դրսևորում։ Բայց եթե նա կարողանում էր տեսնել, ապա Աննետան կարողանում էր լսել։ Եվ երբ Սիլվիան վերջացրեց, Աննետան, աչքերը բարձրացնելով, հարցրեց.

— Դուք շա՞տ էիք սիրում նրան։

Քույրերը քնքշորեն իրար նայեցին, բայց ընդամենը մի ակնթարթ։ Խանդի ստվերը սահեց Աննետայի աչքերի միջով, և նա շարունակեց.

— Նա ձեզ շա՞տ էր սիրում։

Աննետան անկեղծորեն ուզում էր Սիլվիային հաճույք պատճառել, բայց ձայնի մեջ, հակառակ իր կամքի, զայրույթ զգացվեց։ Իսկ Սիլվիային թվաց, թե ինքը որսաց հովանավորող ինտոնացիան։ Նրա թաթերը բացեցին ճանկերը և, աշխուժանալով, ասաց.

— Այո, նա ինձ շա՞տ էր սիրում։

Մի պահ լռեց, և ապա ներողամիտ տեսքով վրա բերեց.

— Նա ձեզ նույնպես շատ էր սիրում։ Նա հաճախ էր ինձ այդ մասին ասում։

Աննետայի ձեռքերը ուժեղ, մեծ և ջղային ձեռքերը, ցնցվեցին հանկարծ, մատները սեղմվեցին։ Սիլվիան այդ

մատներին էր նայում։ Զգալով ինչպես է մի գունդ խեղդում իր կոկորդը, Աննետան հարցրեց.

— Նա հաճա՞խ էր ձեզ հետ իմ մասին խոսում։

— Այո, հաճախ,— անմեղ տեսքով հաստատեց Սիլվիան։

Ըստ երևույթին, դա ճիշտ չէր։ Բայց Աննետան չգիտեր, ինչ բան է կեղծավորությունը, և հավատում էր մարդկանց։ Ահա թե ինչու Սիլվիայի խոսքերը խոցեցին ուղղակի նրա սիրտը... Ուրեմն, այդպես, հայրը Սիլվիայի հետ խոսել է իր մասին, նրանք իր մասին խոսել են միասին։ Իսկ ինքը մինչև վերջին օրը ոչինչ չգիտեր, այնպես էր համոզված, որ հայրը վատահում է իրեն, մինչդեռ նա խաբել է, ամեն ինչ թաքցրել է իրենից։ Ինքը նույնիսկ տեղեկություն չուներ քրոջ գոյության մասին։ Փոփոխամտությունը, անարդարությունը ճնշում էին նրան։ Նա զգաց, որ ինքը պարտված է։ Բայց դա ցույց տալ չէր ուզում։ Աննետան զենք փնտրեց, գտավ այդ զենքը և ասաց.

— Դուք շա՞տ հազվադեպ եք տեսել նրան վերջին տարիներին։

— Վերջին տարիներին՝ այո,— ակամա զիջեց Սիլվիան։ — Ինքնըստինքյան հասկանալի է։ Ջե՞ որ նա հիվանդ էր։ Նրան փակ էին պահում։

Վրա հասավ թշնամական լռությունը։ Նրանք երկուսն էլ ժպտում էին, երկուսն էլ զսպում էին իրենց զայրույթը։ Աննետան՝ մոայլ ու գոռոզ, Սիլվիան՝ երկդիմի, սիրալիր, սեթևեթիկ։ Նրանք հաշվում էին իրենց միավորները, նախքան խաղի շարունակվելը։ Աննետան մխիթարվում էր նրանով, որ ինքը, այնուամենայնիվ, առավելություն ունի, թեև աննշան, բայց հոգու խորքում ամոթ էր զգում իր վատ մտքերի համար, և աշխատեց խոսակցությունը վարել ավելի սրտառուչ տոնով։ Նա ասաց, որ ինքը կուզենար մտերմանալ այն անձնավորության հետ, ում մեջ վերակենդանացել է հոր «մանկիկը»։ Սակայն, իր կամքին հակառակ, նա տարբերություն սահմանեց իրենց միջև, ընդգծեց, որ ինքը արտոնյալ վիճակում է։ Պատմեց Սիլվիային Ռաուլի վերջին տարիների մասին և, չկարողանալով զսպել իրեն, նրան

զգացնել տվեց, որ ինքը ավելի մոտ է եղել հոր հետ։ Սիլվիան օգտվեց դադարից և Աննետային լավություն արեց— հիշեց, թե հայրն ինչքան էր կապված իր հետ։ Եվ մեկը ամամայից նախանձելով մյուսի դերին, աշխատում էր պարծենալ իր դերով. խոսելով կամ լսելով (չզանկանալով լսել, բայց, այնուամենայնիվ, լսելով) նրանք միմյանց զննում էին ոտից մինչև գլուխ։ Սիլվիան ներողամտորեն համեմատում էր իր երկար սրունքները, նուրբ կոճերը, քստիկներ հագած բոբիկ ոտքերը Աննետայի կոպիտ ոտքերի և լայն կոճերի հետ։ Իսկ Աննետան, զննելով Սիլվիայի ձեռքերը, նշում էր, թե ինչքան են աճել նրա չափազանց վարդագույն եղունգափոսիկները։ Հանդիպել էին ոչ թե պարզապես երկու աղջիկ, այլ երկու ախոյան ընտանիքներ։ Ու թեև թվում էր, թե նրանք անկաշկանդ զրուցում են, բայց և այնպես նրանց հայացքներն ու լեզուները թրի պես կտրում էին, երկուսն էլ անբարյացակամորեն հետևում էին միմյանց։ Խանդի զազանային հոտառությամբ յուրաքանչյուրն անմիջապես, առաջին իսկ հայացքից իմացավ մյուսի բոլոր գաղտնիքները, հայտնաբերեց նրա հոգու թաքնված թերությունները, արատները, որոնց մասին մյուսը գուցե չէր էլ կասկածում։ Սիլվիան Աննետայի հոգում տեսնում էր սատանայական հպարտություն, համառություն, անզսպություն, որոնք, հավանական է, դեռ չէին դրսևորվել։ Աննետան Սիլվիայի հոգում չորություն էր տեսնում և ժպտացող երեսպահանություն։ Հետագայում, երբ արդեն սիրեցին միմյանց, քույրերը աշխատում էին մոռանալ այն, ինչ մեկը տեսել էր մյուսի մեջ։ Իսկ այժմ անբարյացակամությունը նրանց ստիպում էր ամեն ինչի վրա նայել խոշորացույցի միջով։ Ժամանակ առ ժամանակ նրանք ատում էին միմյանց։ Աննետան համարյա լաց լինելով մտածում էր. «ինչքա՜ն զզվելի է այս բոլորը, ինչքա՜ն զզվելի։ Ես պետք է օրինակ ցույց տամ»։

Նա աչքերը ման ածեց այդ համեստ սենյակի մեջ, նայեց լուսամուտին, շղարշե վարագույրին, հարևան տան տանիքին ու ծխնելույզներին, որոնք ողողված էին լուսնի լույսով, պոռնկը կոտրված սափորի մեջ գտնվող յասամանի շյուղին։

Աննետան սառնորեն, թեև սիրտը վառվում էր, Սիլվիային առաջարկեց բարեկամություն և օգնություն... Սիլվիան մտացրիվ լսեց մինչև վերջը, ժպտաց անբարյացակամ քմծիծաղով, լռեց... Աննետան մահու չափ վիրավորված էր, և, դժվարությամբ քողարկելով այն, թե որքան է խոցված իր հպարտությունը և ինչպիսի քնքշություն է ծնունդ առնում նրա սրտում, նա հանկարծ տեղից բարձրացավ։ Հրաժեշտ տալիս նրանք իրար հետ փոխանակեցին մի քանի դատարկ սիրալիրություններ։ Եվ Աննետան դուրս եկավ՝ տխուր ու զայրացած։

Նա արդեն անցնում էր սալահատակ միջանցքը, արդեն իջավ սանդուղքի առաջին աստիճանից, երբ Սիլվիան, ճանապարհին կորցնելով կոշիկի թակը, վազելով հասավ նրան և հետևից փաթաթվեց Աննետայի վզին։ Աննետան շրջվեց, հուզմունքից ճչաց։ Զգացմունքի պոռթկումից գրկեց ու սեղմեց Սիլվիային։ Սիլվիան նույնպես ճչաց ու ծիծաղեց Աննետայի ուժեղ սեղմումից։ Նրանք չբոմ համբուրվեցին։ Սիրո զեղումներ։ Քնքշագին շշնջոցներ։ Շնորհակալական խոսքեր, շուտափույթ տեսակցության խոստում...

Վերջապես բաժանվեցին։ Աննետան, երջանկությունից ծիծաղելով, հայտնվեց ցածում, նա չէր հիշում, ինչպես իջավ։ Լսեց վերևից եկող մանկական մի սուլոց, կարծես մեկը կանչում էր շանը, և Սիլվիայի ձայնը.

— Աննե՜տա։

Աննետան գլուխը բարձրացրեց և ամենավերևում՝ լույսի շրջանակի մեջ, տեսավ Սիլվիայի դնչիկը, որը ծիծաղելով դոռում էր.

— Բանի՜ր։

Եվ Աննետայի երեսին թափվեցին չրի ցայտքերն ու յասամանի թաց ճյուղը, որը Սիլվիան գցեց նրան՝ օդային համբույրի հետ միասին։

Սիլվիան փախավ։ Աննետան, գլուխը ետ գցած, դեռ շարունակում էր աչքերով փնտրել քրոջը, թեև նրա հետքն էլ չկար։ Այդ ժամանակ նա ձեռքում սեղմեց յասամանի թաց ճյուղը և համբուրեց։

Տունը հեռու էր, և այս ուշ ժամին այնքան էլ անվտանգ չէր որոշ փողոցներով գնալը, բայց Աննետան վերադարձավ ոտքով։ Նա ուզում էր պարել։ Իսկ տանը չպառկեց, մինչև որ յասամանը չդրեց ծաղկամանի մեջ, իր մահճակալի կողքին,— այնքա՞ն երջանիկ էր, այնքա՞ն հուզված։ Ապա տեղից վեր ցատկեց և յասամանի ճյուղը փոխադրեց ջրով լի սափորը, ինչպես Սիլվիայի տանն էր։ Հետո նորից պառկեց, բայց լամպը չհանգցրեց, որովհետև չէր ուզում բաժանվել այսօրվա օրից։ Իսկ մի երեք ժամից հետո գիշերվա կեսին հանկարծ արթնացավ։ Տաղիկներն իրենց տեղում էին։ Դա երազ չէր, իսկապես որ նա հանդիպել էր Սիլվիային... Եվ Աննետան նորից քնեց սիրելի կերպարը հոգում։

Օրերը գլորվեցին նոր փեթակ կառուցող մեղուների բզզոցների մեջ։ Այդպես հյուսվում է պարսը երիտասարդ Ծագուհու շուրջը։ Իր սիրելի Սիլվիայի շուրջը Աննետան ստեղծում էր նոր ապագա։ Հին փեթակը լքված էր։ Նրա Ծագուհին մահացած է։ Խանդավառ հոգին, աշխատելով թաքցնել պալատական հեղաշրջումը, ձևացնում էր, թե հոր նկատմամբ ունեցած սերը փոխադրել է քրոջ վրա, որ այդ սերը նա կգտնի Սիլվիայի մեջ... Բայց Աննետան գիտեր, որ նախկին սիրուն հրաժեշտ է տվել հավիտյան։

Հրամայաբար նրան կանչում էր նոր սերը, ստեղծարար և կործանիչ... Հոր մասին հիշողությունները անգիտորեն մի կողմ էին նետվել։ Նրա իրերը պատկառանքով հեռացվել էին սենյակների ակնածալից կիսախավարը,— այնտեղ արդեն դրանց ձեռք տվող չէր լինի։ Խալաթը պահված էր հին պահարանում։ Աննետան այն թաքցրեց, հետո նորից հանեց, կանգնեց անվճռական, այտը սեղմեց նրան և, հանկարծ բոլորը հիշելով մի կողմ շպրտեց։ Սիրո մեջ տրամաբանություն չկա։ Նրանցից ո՞վ էր արդյոք դավաճանում։

Աննետան տարված էր հենց նոր գտած քրոջով։ Ինքը բոլորովին չէ՞ր ճանաչում նրան։ Բայց երբ սիրում ես, քեզ անհայտ գծերը հրապուրում են ավելի շատ։ Գաղտնիքի թովչանքը խառնվում է այն բանին, ինչն արդեն գիտես։ Նա Սիլվիային տեսել էր անցողիկ, և ուզում էր հիշողության մեջ պահել լոկ այն, ինչն իրեն դուր էր եկել։ Նա ինքն

իրենից ծածուկ հնարավոր էր համարում, որ դա էլ բոլորովին անորոշ մի բան է։ Բայց բավական է փորձեր անձայնորեն վերակենդանացնել այն, ինչը նրա համար Սիլվիայի կերպարանքում մշուշապատ էր, երբ միջանցքում խոկույն լսում էր փոքրիկ քայիկների թիփթիփոցը, և Սիլվիայի մերկ թևերը կարծես փաթաթվում էին նրա վզին։

Սիլվիան պետք է գար։ Նա խոստացել էր... Աննետան պատրաստվում էր ընդունելության։ Արդյոք ո՞ւր է տանելու նրան։ Իր սիրելի սենյակը։ Սիլվիան կնստի ահա այստեղ, Աննետայի տեղը, բայց պատուհանի մոտ։ Աննետան ամեն ինչին Սիլվիայի աչքերով էր նայում, ուրախանում էր, որ նրան ցույց կտա իր տունը, մանր-մունր զարդարանքները, դալար սաղարթներով պատված ծառերը, և բլուրները, որոնք ծածկված են ծաղիկներով։ Այն մտքից, որ Սիլվիան իր հետ կկիսի հարմարավետությունն ու գեղեցկությունը, Աննետան նորության թարմ զգացումով էր ըմբոշխնում այդ բոլորը։ Բայց ահա նա մտածեց, որ Սիլվիան կսկսի համեմատել իր կացարանը բուլոնյան տան հետ։ Բերկրանքը մթագնեց։ Նրանց վիճակի անհավասարությունը ճնշում էր Աննետային, կարծես դրա մեջ մեղավոր էր նաև ինքը։ Բայց չէ՞ որ նա կարող է ամեն ինչ շտկել, Աննետան կստիպի Սիլվիային օգտվել այն բարիքներից, որ ճակատագիրը տրամադրել է իրեն, Աննետային... Այո, բայց, նշանակում է, նա մի առավելություն ևս կունենա։ Աննետան կանխազգում է, որ առջևում պայքար է սպասվում։ Նա հիշում էր Սիլվիայի ծաղրական լռությունը՝ ի պատասխան իր առաջին հրավերքի։ Պետք էր հաշվի նստել նրա նրբանկատության հետ։ Ուրեմն, ինչպե՞ս անել։ Աննետան մտովի մի քանի պլան տնտղեց։ Բայց ոչ մեկը պիտանի չէր։ Մոտ տասն անգամ նա կահույքը սենյակի մեջ այս ու այն կողմ փոխադրեց։ Մանկական բավականությամբ ի ցույց դրեց բոլոր արժեքավոր իրերը, հետո նորից հավաքեց, թողնելով միայն ամենահասարակները։ Ամեն ինչ մանրամասն քննության առավ. դարակների վրա որտեղ դնել ծաղիկները, որտեղ՝ դիմանկարը... Միայն թե Սիլվիան չգա, քանի դեռ բոլորը պատրաստ չէ։ Բայց Սիլվիայի մտքով չէր էլ անցնում շտա-

պել, Աննետան ինչքան ասես ժամանակ ուներ, և նա ամեն մի իրը դնում ու վերցնում էր, նորից ու նորից փոխելով նրանց տեղերը։ Նա գտնում էր, որ Սիլվիան շատ է ուշանում և, օգտվելով դրանից, որոշ բաներ իր պլաններում ուղղում էր։ Անգիտակից կատակերգությո՞ւն։ Նա խաբում էր իրեն, դատարկ բաներին կարևորություն տալով։ Այդ ամբողջ հուզմունքը, իրերի այդ դնելն ու վերցնելը պարզապես պատրվակ էր, որպեսզի ինքը խուսափի ուրիշ հուզումներից, տենչային այն մտքերից, որոնք խախտում էին նրա ողջախոհ կյանքի սովորական ընթացքը։

Շարժառիթը իրեն սպառեց։ Հիմա ամեն ինչ պատրաստ էր, իսկ Սիլվիան դեռ չէր գալիս։ Աննետան արդեն մի անդամ չէր, որ իր երևակայության մեջ ընդունում էր նրան։ Նա հոգնել էր սպասելուց... Բայց հո չէ՞ր կարելի նորից գնալ Սիլվիայի մոտ։ Է՛հ, ասենք, վեր կացավ ու գնաց, հետո հանկարծ Սիլվիայի ձանձրույթ արտահայտող աչքերում կարդաց, որ առանց իրեն հիանալի յոլա է գնում։ Հենց միայն այդ միտքը քրքրում էր Աննետայի հպարտ հոգին։ Ո՛չ, ավելի լավ է երբեք չտեսնել նրան, քան թե այդպես ստորանալ։ Բայց և այնպես... նա որոշում է ընդունում, շատապում է, հագնում է շորերը, նա կգնա իր մոռացկոտ Սիլվիայի հետևից։ Սակայն ձևնոցները դեռ չէր կոճկել, երբ վճռականությունը լքեց նրան, ոտքերը թուլացան, նա նստեց նախասրահում դրված աթոռին, ինքն էլ չիմանալով, թե ինչ անի...

Եվ այն պահին, երբ Աննետան, գլխարկն առանց հանելու, վհատորեն նստեց դռան մոտ, չիմանալով գնա՞ թե չգնա, հենց այդ նույն պահին Սիլվիան զանգը տվեց։

Զանգից տասը վայրկյան էլ չէր անցել, երբ դուռն արդեն կրնկի վրա բացված էր։ Այդ արագությունը և Աննետայի աչքերի խանդավառ արտահայտությունը պարզ ցույց տվին Սիլվիային, թե՛ իրեն ինչպես էին սպասում այստեղ։ Եվ դեռ շեմին, քույրերը չէին հասցրել մի խոսք փոխանակել, երբ երկու դնչիկներ սեղմվեցին իրար։ Աննետան ուրախության պոռթկումով Սիլվիային քարշ տվեց ամրոցջ տնով մեկ։ Նա բաց չէր թողնում Սիլվիայի ձեռքը, աչքերը չէր հեռացնում

երանից, ծիծաղում էր առանց պատճառի, երջանիկ մանկան պես խելացնոր...

Եվ ամեն ինչ եղավ ոչ այնպես, ինչպես ինքն էր պատկերացնում։ Ոչ մի պատրաստի ֆրազ պետք չեկավ։ Նա Սիլվիային չնստեցրեց իր սերած անկյունում, Երկուսով էլ նստեցին բազմոցին, մեջքներով դեպի լուսամուտը, իրար կողքի, և, նայելով միմյանց աչքերի, շաղակրատում էին իրար ընդհատելով, իսկ նրանց հայացքներն ասում էին.

(Աննետա). «Վերջապե՞ս։ Մի՞թե այդ դու ես»։

(Սիլվիա). «Տեսնո՞ւմ ես, ահա և ես եկա...»։

Սիլվիան Աննետային զննելով հարցրեց.

— Դուք ուզում էիք դո՞ւրս գալ։

Աննետան գլուխն օրորեց. նա չէր ուզում բացատրություն տալ։ Սիլվիան ամեն ինչ հասկացավ, խոնարհվեց նրա կողո՛ւրը և շշնջաց.

— Ջլինի՛, ինձ մոտ էիր ուզում գալ։

Աննետան ոստնեց տեղից և, այտը սեղմելով քրոջ ուսին, ասաց.

— Օ՛ձ։

— Ինչո՞ւ եմ օձ,— հարցրեց Սիլվիան, շուրթերի անկյունով համբուրելով Աննետայի ոսկեգույն հոնքերը։

Աննետան չպատասխանեց։ Սիլվիային պատասխանը հայտնի էր։ Նա չարաճճիորեն ժպտաց, հետևելով Աննետային, իսկ վերջինս խուսափում էր Սիլվիայի հայացքից։ Անհնազա՞նդ հոգի։ Աննետայի տրամադրությունն ընկավ։ Հանկարծ երկչոտությունը վաշկանդեց նրան։ Երկուսն էլ լռեցին, և ավագ քույրը սեղմվեց կրտսերի ուսին, շատ զո՛հ, որ այդքան շուտ հաջողվեց իշխանությունն իր ձեռքը վերցնել...

Հետո Աննետան գլուխը բարձրացրեց, և երկուսն էլ հաղթահարելով իրենց հուզմունքը, սկսեցին շաղակրատել որպես սրտակից ընկերուհիներ։

Այս անգամ արդեն թշնամական մտադրություններ չկային։ Ընդհակառակը, նրանք ծարավի էին իրենց սրտերը բացելու... Այնուամենայնիվ, ոչ մինչև վերջը։ Նրանք գիտեին, որ իրենցից ամեն մեկն ուներ իր անձնականը, նվի-

բականը,— այն, ինչը չի կարելի ցույց տալ։ Նույնիսկ երբ սիրո՞ւմ եսւ Հենց այդպես, երբ սիրում եսւ Ուրեմն, դա ի՞նչ է, ավելի ստույգ։ Նրանք փոխադարձ վստահություն էին զգում, բայց թաքնվում էին, նրանք շոշափում էին այն բանի սահմանը, ինչ մյուսի սերը կարող էր դուրս տանել։ Նվ մի խոստովանություն չէր, որ, սկզբում լինելով անկեղծ, ֆրազի կեսին փոխում էր հոնը և շատ սիրալիր ձևով դառնում կեղծիք։ Նրանք միմյանց չէին ճանաչում, մեկը մյուսի համար նրանք շատ գծերով չբացահատկված առեղծված էին. երկու բնավորություն, երկու աշխարհ, որոնք, չնայած ամեն ինչին, օտար էին։ Քրոջ առաջ Սիլվիան (նա այդ մասին մտածում էր ավելի շատ, քան ուզում էր) գործի էր դրել իր ամբողջ հմայքը։ Իսկ գերել նա կարողանում էր։ Աննետային նա կախարդել էր, և միևնույն ժամանակ Աննետայի համար տհաճ էին Սիլվիայի որոշ ծամածռություններն ու շարժուձևերը, դրանցից նա իրեն վատ էր զգում։ Սիլվիան դա նրկատում էր, բայց մտքով էլ չէր անցկացնում իրեն ուրիշ կերպ պահել։ Ավազ քույրը, որն անկախ էր և միամիտ, փոթորկուն և զուսպ, գրավում էր նրան ու վախեցնում (թեև, լսելով նրա շաղակրատանքները, ոչ ոք դա դիմի չէր ընկնի)։ Վերին աստիճանի խորամանկ և դիտունակ էին և մեկը, և մյուսը, նրանց աչքից ոչ հայացք էր վրիպում և ոչ էլ միտք։ Նրանք դեռ միմյանց վրա վստահ չէին։ Նրանց մեջ և անվստահության կար, և սիրտ բանալու կամ իրարից հոգի չխնայելու պատրաստակամություն։ Սակայն տալ և փոխարենը ոչինչ չստանալ, չէին ուզում։ Քույրերի մեջ նստած էր զոհողության սատանան։ Աննետայի մեջ այդ սատանան ավելի ուժեղ էր։ Բայց ավելի ուժեղ էր նաև նրան մղող սերը։ Նվ թաքցնել այդ՝ Աննետան չէր կարողանում։ Նա պարտություն էր կրում, տալով ավելի շատ, քան ինքը կուզեր, և Սիլվիային դա դուր էր գալիս։ Այդպես երկու պայմանավորվող կողմերի ներկայացուցիչները, այրվելով համաձայնության գալու ցանկությունից, գործում են իմաստուն շրջահայացությամբ և, հետևելով միմյանց վարքագծին, զգուշորեն գնում են դեպի իրենց նպատակը։

Մենամարտն անհավասար էր։ Սիլվիան շատ շուտ հաս-

կացավ, թե Աննետան ինչպիսի տիրական և ինքնազոհ սիրով է համակված։ Նա փորձում էր քրոջը, խաղում փափուկ թաթիկի հետ, կարծես ոչինչ չէր եղել։ Աննետան զգում էր, որ պարտված է։ Նա և ամոթահարված էր, և ուրախ։

Սիլվիան խնդրեց իրեն ցույց տալ ամբողջ առանձնատունը։ Աննետան ինքն այդ չառաջարկեց. վախեցավ, թե քրոջը կխոցի այն բարեկեցությունը, որը շրջապատում է իրեն։ Նրա սիրտը թեթևացավ, երբ տեսավ, որ Սիլվիան իրեն այստեղ այնպես է պահում, ինչպես սեփական տանը։ Դոհ տեսքով նա ետ ու առաջ էր քայլում, նայում էր, ձեռք էր տալիս, կարծես իր տանը լիներ։ Աննետան մի տեսակ շփոթված էր քրոջ հիանալի աննրբանկատ վարվեցողությունից, և միևնույն ժամանակ նրա սիրող սիրտը ուրախանում էր։ Անցնելով Աննետայի անկողնու կողքով, Սիլվիան թեթևորեն շպպացրեց բարձին։ Ուշադիր զննեց հարդարանքի սեղանը, սուր հայացքը սահեցրեց բոլոր սրվակների վրայով, մտացրիվ աչք ածեց գրադարանը, հիացավ վարագույրներով, փնովեց մի բազկաթոռ, նստեց մի ուրիշի վրա, քիթը խոթեց կիսաբաց պահարանը, շոշափեց մետաքսյա շորը և, շրջան կատարելով, վերադարձավ Աննետայի ննջարանը, անվերջ շաղակրատելով, նստեց մահճակալի մոտ դրված ցածրիկ բազկաթոռին։ Աննետան նրան թեյ առաջարկեց, բայց Սիլվիան գերադասեց մի կում քաղցր գինի։ Սիլվիան բիսկվիտ էր ծծում և նայում էր Աննետային, իսկ նա ինչ-որ բան էր ուզում ասել, բայց սիրտ չէր անում, և Սիլվիան քիչ մնաց համբերությունը կորցրած վրա տար.

«Դե ասա, ի՞նչ ես ուզում»։

Եվ ահա Աննետան պոռթկումով ու կորուկ, ջնի՛ր զսպում էր զգացմունքները, Սիլվիային առաջարկեց փոխադրվել իր մոտ։ Սիլվիան լուռ ժպտաց, կուլ տվեց բիսկվիտը և, վերջին կտորը մատների հետ միասին թաթախելով մալագայի մեջ, նորից սիրալիր ժպտաց, շնորհակալություն հայտնեց աչքերով ու լիքը բերանով, գլուխն օրորեց, կարծես խոսելով փոքրիկ երեխայի հետ։ Հետո ասաց.

— Հոգյա՛կս...

Եվ հրաժարվեց։

Աննետան հաստատակամ պնդում էր իր ասածը, հրամայական տոնով, զրեթե զոռով հարկադրում էր նրան համաձայնել։ Հիմա լուռիյուն պահպանողը Սիլվիան էր։ Նա ներողություն էր խնդրում կիսաակնարկներով, մեղմանուշ ձայնով, նույնիսկ ամաչկոտությամբ, բայց ոչ առանց կոկետ խորամանկության։ (Չե՞ որ նա չերմորեն սիրեց ավագ քրոջը— խանդավառ, քնքուշ, ճշմարտախոհ քրոջը...) Սիլվիան կրկնում էր.

— Չեմ կարող։

Աննետան հարցնում էր.

— Ախր ինչո՞ւ չես կարող։

Եվ, վերջապես, Սիլվիան ասաց.

— Ես ընկեր ունեմ։

Աննետան առաջին վայրկյանին ոչինչ չհասկացավ։ Իսկ հետո հասկացավ ամեն ինչ և ցնցվեց։ Սիլվիան, ծիծաղը երեսին, հետևում էր քրոջը, իսկ քիչ հետո տեղից վեր կացավ, համբուրեց նրան, ինչ-որ քնքուշ բան ծլվլաց ու գնաց։

Աննետայի օդային ամրոցը փլվեց։ Հոգին ծանրացած էր և զգացմունքների շփոթից տագնապահար։ Նա գերադասում էր այդ զգացմունքներից շատերի խորքը չթափանցել, դրանք այրում էին իրեն և երբեմն, ինչպես մի գունդ, բարձրանում կոկորդով ու խեղդում։ Աննետան իրեն ազատ էր համարում ամեն տեսակի նախապաշարումներից, բայց այն միտքը, որ իր սիրելի քույրը... Այդ, այդ բոլորը անչափ ծանր էր։ Ինչքա՜ն արցունքներ նա թափեց... Իսկ ինչո՞ւ։ Ինչքա՜ն անմիտ է այս ամենը։ Չլինի՞ նորից խանդ է։ Ո՜չ, ի՜նչ խանդ։

Նա ուսերը ցնցեց ու վեր կացավ։ Ոչ մի բանի մասին այլևս մտածելու ցանկություն չուներ։ Եվ անվերջ մտածում էր... Նա մեծ-մեծ քայլերով չափում էր սենյակները, որպեսզի կտրվի այդ մտքերից։ Նկատեց, որ ինքը բնականաբար նույն շրջանն է կատարում, որը և քույրն արեց։ Մտածում էր միայն նրա մասին։ Նրա և... մյուսի... խանդ է, դա պարզ բան է։ Ո՜չ, ո՜չ, ո՜չ, ի՜նչ խանդ, ի՜նչ բան... Աննետան զայրագին ոտքը հատակին խփեց։ Նա հնարավոր չէր համարում խանդը... Բայց հնարավոր էր համարում թե ոչ,

մինուն է, սիրտը ծանրացած էր։ Նա փորձում էր ամեն ինչ բացատրել բարոյականության տեսակետից։ Եվ բացատրեց։ Նրա անաղարտությունը խոցված էր։ Նրա բարդ բնավորության մեջ, հարուստ հակասություններով, որոնք դեռ ուժի չէին ունեցել ընդհարվելու, կար նաև պուրիտանական խստություն։ Ահենք, նրան խանգարողը կրոնական կեղծ բարեպաշտությունը չէր։ Նրան դաստիարակել էին սկեպտիկ հայրը և ազատամիտ մայրը, կրոնի ամեն տեսակի ազդեցություններից դուրս, և նա սովոր էր ամեն ինչ քննության ենթարկել։ Համարձակ քննադատության էր ենթարկում ամեն տեսակ սոցիալական նախապաշարումներ։ Ազատ սերը հնարավոր էր համարում տեսականորեն, և գերազանց էր տարցվում։ Հաճախ զրուցելով Հոր և իր համակուրսեցիների հետ, նա պաշտպանում էր ազատ սիրո իրավունքները, և այդ իրավունքների պահանջներին նույնիսկ գրեթե չէր խառնվում երիտասարդությանը բնորոշ առաջադեմ երեվալու ցանկությունը։ Նա միանգամայն անկեղծորեն գտնում էր, որ սիրո մեջ ազատությունը օրինական է, բնական և նույնիսկ խելամիտ։ Երբեք նրա մտքով չէր անցել դատապարտել փարիզեցի սիրունիկ աղջիկներին, որոնք ապրում են իրենց ուզած ձևով։ Անհետաև նրանց նայում էր շատ ավելի բարյացակամ, քան թե իր՝ բուրժուական միջավայրի տիկնանց։ Ուրեմն, ի՞նչն էր նրան հիմա այդպես վշտացնում։ Չէ՞ որ Սիլվիան օգտվում էր իր իրավունքից... Իրավունքի՞ց... Ոչ, դա նրա իրավունքը չէր։ Թող ուրիշներն այդ անեն, միայն ոչ նա։ Դա անթուլատրելի է միայն նրանց, ովքեր այնքան էլ բարձր չեն կանգնած։ Իր քրոջը և ինքն իրեն Անհետաև ներկայացնում էր (դա ճիշտ էր, թե ճիշտ չէր— այո, ճիշտ էր) ավելի խիստ պահանջներ։ Սիրել ամբողջ կյանքում,— ահա թե ինչն էր նրան թվում սրտի ամենավսեմ ազնվությունը։ Սիլվիան ընկել էր, և քույրը դրա համար էր զայրանում նրա վրա։ «Սիրել ամբողջ կյանքո՞ւմ։ Ո՞ւմ. քե՞զ... Խանդոտ է այն կինը, ով սիրո՞ւմ է»։ Եվ որքան ավելի էր խանդում Սիլվիային, այնքան ուժեղ էր սիրում։ Չէ՞ որ ոչ ոքի վրա այնպես չես զայրանում, որքան այն մարդու, որին սիրում ես։

Սիրելի քրոջ խովչանքը ստիճանաբար իր գործը տեսնում էր։ Անմտությունն էր գայրանալ, ուղղել Սիլվիային, նրան պետք էր ընդունել այնպես, ինչպես որ նա կա։ Եվ կամաց-կամաց Աննետային սկսեց տանջել մի ուրիշ զգացում՝ հետաքրքրությունը։ Իր կամքից անկախ, նրա միտքն աշխատում էր պատկերացնել, թե ինչպես է ապրում Սիլվիան։ Աննետան այդ մասին անչափ շատ էր մտածում։ Նա իրեն պատկերացրեց նրա տեղը։ Եվ մի տեսակ շփոթվեց, որոշելով, որ դա այնքան էլ վատ չէր լինի։ Ջայրույթն ու իրենից դժգոհ լինելու զգացումը նրան ստիպեցին ավելի մեծ խստությամբ վերաբերվել Սիլվիային։ Նա դեռ զայրացած էր քրոջ վրա և իրեն թույլ չէր տալիս տեսության գնալ նրան։

Աննետան կյանքի նշաններ ցույց չէր տալիս, բայց դա բոլորովին չէր անհանգստացնում Սիլվիային։ Նա ճանաչեց ավագ քրոջ բնավորությունը և զգում էր, որ Աննետան կվերադառնա։ Սպասումը չէր տանջում նրան։ Նա գիտեր ինչով կարող է լցնել իր սիրտը։ Ամենից առաջ ընկեր կար, որը, ճիշտ է, զբաղեցրել էր նրա սրտի միայն մի անկյունը, այն էլ ոչ երկար ժամանակով, և ապա նաև ամեն կարգի ուրիշ բաներ։ Սիլվիան Աննետային շատ սիրեց։ Բայց չէ՞ որ ինքը առանց նրան ապրել էր գրեթե քսան տարի։ Ուրեմն, կարելի է նաև մի քանի շաբաթ էլ ապրել։ Նա գլխի էր ընկնում, թե ինչ է կատարվում քրոջ հոգում։ Դա Սիլվիային զվարճացնում էր, դրան խառնվում էին նաև թշնամանքի արձագանքները։ Երկու ցեղակից մրցակցուհիներ։ Երկու դասակարգ։ Սիլվիան Աննետայի մոտ հյուր եկած ժամանակ ծածուկ համեմատում էր իր և նրա կյանքը, իր և նրա պայմանները։ Մտածում էր.

«Բայց, միևնույն է, գիտե՞ս որ ես էլ ունեմ իմ փոքրիկ առավելությունները։ Ես ունեմ այն, ինչ դու չունես... Դու կարծում էիր ինձ կպահես քեզ մոտ,— ո՞նց չէ, կպահե՞ս։ Այո՛, այո՛, բերանդ ծռիր, փքվիր... Ես, ուրեմն, վիրավորեցի քո բարեվայելչությունը։ Ա՜խ, ինչպիսի հարված։ Ախ՛ Աննետա...»։

Նվ նա քրջում էր, պատկերացնելով Աննետայի դեմքի հիասթափված արտահայտությունը, և օդային համբույրներ հղում նրան։ Սիլվիան բոլորովին չէր վշտանում, թեև գիտեր, որ Աննետան տառապում է, որ նրա համար դժվար է այդ բոլորը կուլ տալ։ Նվ, կարծես կամակոր երեխային հանդոլելով, որ նա գդալի մեջ եղածը ամբողջությամբ ուտի, խաղողն խորամանկությամբ և գրգռիչ տոնով շշնջում էր.

«Ապա, փոքրիկս բերանդ բա՛ց արա։ Կո՛ւլ տուր»։

Բայց բանը միայն բարեվայելչության վիրավորված զգացմունքի մեջ չէր։ Սիլվիան հիանալի հասկանում էր, որ Աննետան վիրավորվել է ուրիշ բանից, որը նա չի էլ ուզում խոստովանել։ Նվ սատանան խորամանկում է, տեսնելով, որ ինքը դրության տիրուհին է, որ ինքը կարող է քրոջը պատեցնել՝ ինչպես ուզի։ «Խե՛ղճ Աննետա։ Դե փորձիր, պաշտպանվի՛ր...»։ Սիլվիան համոզված էր, միանգամայն համոզված, որ ինքը քրոջը կհաղթի։ Նա ծաղրում էր, բայց և այնպես հուզված էր և քրոջը մոտիկ շշնջում էր.

«Գիտես, որ ես դա չեմ չարաշահի...»։

Չի՞ չարաշահի։ Իսկ ինչո՞ւ չվորձել։ Չէ՞ որ չարաշահելը զվարճալի բան է։ Կյանքը պատերազմ է։ Հաղթողինն են բոլոր իրավունքները։ Եթե պարտվողը հաշտվեց դրա հետ, ուրեմն դա նրան ձեռնտու է։

«Բավակա՞ն է։ Հետո կտեսնենք»։

Մի անգամ երկուշաբթի օրը առավոտյան նա մեկնեց քաղաք և, Սեվր փողոցով անցնելիս, հանկարծ տեսավ, որ իր առջևում նույն ուղղությամբ գնում է նաև Աննետան։ Նվ Սիլվիան ի սեր զվարճանքի գնաց նրա հետևից, որպեսզի տեսնի թե նա ինչ է անելու։ Աննետան սովորականի նման մեծ քայլեր էր անում։ Իսկ Սիլվիան արագ ու թեթև քայլերով այնպես էր գնում, կարծես պարելիս լիներ։ Նա ծիծաղում էր քրոջ տղայական, սպորտային քայլվածքի վրա, բայց գնահատեց նրա ալացիկ և ուժեղ մարմնի գեղեցկությունը։ Աննետան, գլուխը բարձր պահած, մտածում էր ինչ-որ բանի մասին և չէր նայում շուրջը։ Սիլվիան հասավ նրան և հիմա արդեն քայլում էր նրա հետ, բայց այնպես, որ Աննե-

տան չնկատի։ Քայլում էր նրա հետ համաքայլ և, ծածուկ նայելով ավագ քրոջը, որը, կարծես, ինչ-որ բանից վշտացած, գուշեր գցել էր, պլուխն առանց շրջելու և շրթունքները հազիվ շարժելով, շշնջաց։

— Աննետա...

Փողոցային աղմուկի մեջ նրան լսելն անհնարին էր։ Ինքը՝ Սիլվիան հազիվ իրեն լսեց։ Բայց Աննետան լսել էր։ Գուցե և նրա զիտակցությանն էր հասել, որ իր նմանակ-կատակաքանը արդեն մի քանի րոպե լուռ ուղեկցում է իրեն։ Աննետան հանկարծ նկատեց ծիծաղող մի կիսադեմ. շրթունքները խիստ զվարճալի շարժվում էին առանց խոսքի, ծաղրասեր, նեղ աչքը խեթ-խեթ նայում է... Եվ նա կանգ առավ ուրախության այնպիսի պոռթկումով, որը մի անգամ այնպես զարմացրել, այնպես կախարդել էր Սիլվիային։ Հանկարծ մեկնված ձեռքեր։ Սմբողջ էությունը համակած խանդավառություն։ Սիլվիան մոռացել.

«Հիմա կցատկի...»։

Բայց ամեն ինչ անմիջապես անցավ։ Աննետան տիրապետեց իրեն և զրեթե սառնությամբ ասաց.

— Բարև, Սիլվիա։

Այնուամենայնիվ, նրա այտերը վարդագունեցին և, չնայած իր զսպվածությանը, նա չկարողացավ պահանջել քրոջ ծիծաղի պոռթկումին, քրոջ, որը հիացած էր իր չարաճճիությամբ։ Աննետան նույնպես ծիծաղեց։

— Այդ ո՞նց ինձ խաբեցիր։

Սիլվիան թևանցուկ արեց նրան, և նրանք շարունակեցին հանապարհը, համբույրներ քայլելով իրար հետ։

— Դու երկա՞ր ժամանակ էիր գալիս իմ կողքից,— հարցրեց Աննետան։

— Մի կես ժամ,— առանց տատանվելու հայտարարեց Սիլվիան։

— Մի՞թե,— զարմացավ պյուրահավատ Աննետան։

— Ես հետևում էի քո ամեն մի շարժմանը։ Ամեն ինչ նկատեցի։ Բոլորը, բոլորը։ Դու քայլում էիր և ինքդ քեզ հետ զրուցում։

— Դա արդեն ճիշտ չէ, ճի՞շտ չէ— չէր համաձայնում Աննետան։ Ախ դու ստախոս...

Նրանք սեղմվեցին իրար։ Սկսեցին իրար տպավորություններ պատմել։ Երկուսն էլ ուրախ էին հանդիպման համար, Սիլվիան հիացած պատմում էր «Բոն-Մարշե» խանութում բացած սպիտակեղենի ցուցահանդեսի մասին, որտեղ նա արդեն հասցրել էր լինել, իսկ Աննետան նոր էր միայն ուզում գնալ։ Հատելով խլացուցիչ աղմուկով լեցուն փողոցը և, Փարիզի իսկական դուստրերին հատուկ ճարպկությամբ խուսանավելով կառքերը, հանկարծ շընջաց քրոջ ականջին.

— Բայց դու ինձ այդպես էլ չհամբուրեցիր։

Աննետան կտրուկ մի շարժում արեց, և նրանք քիչ մնաց ընկնեին կառքի տակ։ Հետո դուրս եկան մայթի վրա և հենց քայլելիս համբուրվեցին։ Նրանք իրար սեղմված քայլում էին ավելի խաղաղ մի փողոցով, որը տանում էր... Ո՞ւր էր տանում...

— Մենք ո՞ւր ենք գնում։

Քույրերը կանգ առան. ծիծաղելի բան ստացվեց, շատախոսեցին, շատախոսեցին և մոլորվեցին։ Սիլվիան բռնելով Աննետայի ձեռքը, ասաց.

— Արի միասին նախաճաշենք։

Աննետան չէր համաձայնվում։ (Ամեն մի անսպասելի բան և հիացնում էր և մի քիչ շփոթեցնում էր նրան. նա մեթոդիկ էր), հավատացնում էր, որ իբրև թե տանը իրեն սպասում է հորաքույրը։ Բայց Սիլվիային այդպիսի մանրուքները չէին շփոթեցնում. նա տիրացել էր Աննետային և ոչ մի կերպ բաց չէր թողնի։ Հետո ստիպեց նրան հեռախոսով զանգել հորաքրոջը և Աննետային տարավ կաթնամթերքի խանութ, որտեղ ինքը հաճախ էր լինում։ Համեստ նախաճաշը, որով Սիլվիան հյուրասիրում էր քրոջը՝ իր համեմատ հարուստին (և այդ բոլորը հասկացողին), բարձրացրեց աղջիկների տրամադրությունը, Աննետային՝ առանձնապես։ Նրա կարծիքով, դրանք շատ համով բաներ էին։ Աննետան հիացած էր հացով, հրուշալի տապակած կոտլետներով։ Իսկ վերջում սերուցքով վայրի եղակ մատուցեցին, և

նրանք երանությամբ անուշ էին անում՝ գդալի միջից հատիկները լեզվով քաշելով բերանները։

Ասենք, նրանց լեզուները ավելի շատ խոսակցությամբ էին զբաղված, քան ուտելիքով։ Թեև նրանք շաղակրատում էին ինչ-որ դատարկ բաների մասին, բայց նրանց հոգիները, նրանց ձայները, նրանց ցնծող հայացքները միաձուլվում էին։ Ինազդն իր ուղիներն ունի—դրանք ավելի կարճ են և ավելի լավ։ Դեռ չէր հասել կարևոր հարցեր շոշափելու ժամանակը։ Քույրերը պատվում էին բուն հարցից դուրս, պատվում էին ուրախ, ինչպես կրեատները, որոնք դզգլավով մի տասն անգամ անցնում են ափսեի շուրջը մինչև որ հանգիստ նստում են։ Բայց նրանք հանգիստ չէին կարողանում նստել...

Սիլվիան տեղից վեր կացավ ու ասաց.

— Հիմա իմ աշխատանքի գնալու ժամանակն է։

Աննետան շփոթված նայեց նրան, ինչպես երեխան, որի ձեռքից անսպասելի խլում են քաղցրեղենը։ Նա ասաց.

— Այսպես այնքան լա՞վ էր։ Ինձ համար սա քիչ է։

— Ինձ համար նույնպես,— ծիծաղելով պատասխանեց Սիլվիան։— Ե՞րբ ենք նորից հանդիպելու։

— Որքան կարելի է շուտ, և ավելի երկար նստենք... Թե չէ սա իսկույն վերջացավ։

— Այդ գեպքում հենց այսօր երեկոյան։ Ժամը վեցին արի ինձ մոտ արհեստանոց։

Աննետան շփոթվեց։

— Իսկ մի՞թե մենք մենակ ենք լինելու։

Աննետան անհանգստանում էր, թե Սիլվիան չի՞ հանդիպելու արդյոք նրա հետ։

Սիլվիան կարդաց նրա մտքերը։

— Այո, այո, մենակ ենք լինելու,— պատասխանեց նա ներողամտորեն ու ծաղրի երանգով։ Եվ շատ հանգիստ բացատրեց, որ նրա ընկերը մի երկու երեք օրով գնացել է տուն, գավառ։

Աննետան կարմրեց, զգալով, որ Սիլվիան կռահեց իր մտքերը։ Նա արդեն չէր հիշում, որ դեռ նախորդ օրը առավոտյան ինքը որոշեց դատապարտել Սիլվիային նրա ան-

բարոյականության համար։ Բարոյականության բոլոր հայրերը մոռացված էին։ Աննետան մի բան էր մտածում. «Այսօր երեկոյան նա չի լինելու»։

— Ինչպիսի՛ երջանկություն։ Ամբողջ երեկոն միասին կանցկացնենք։

Այդ ասելով նա ծափ տվեց։ Իսկ Սիլվիան ոտքով պարաքաշ արեց, կարծես հենց հիմա պարելու էր, և, դեմքին զվարճալի արտահայտություն տալով բացականչեց.

— Բոլորը գո՞հ են, անսահման գոհ։

Սակայն նույն րոպեին, պատկառելի տեսք ընդունելով, քանի որ ինչ-որ հաճախորդ ներս մտավ, նա ասաց.

— Ցտեսությո՛ւն, սիրելիս։

Եվ նետի պես պացավ։

Նրանք հանդիպեցին մի քանի ժամ հետո, երբ արհեստանոցից դուրս թռավ թեթևսոլիկների աղմկոտ պարսը։ Աղջիկներն անընդմեջ շաղակրատում էին, թաքուն աչք ածելով իրենց շուրջը, գնում էին մանրիկ, արագ քայլերով, գրպանի փոքրիկ հայելիների մեջ և ցուցափեղկերի առաջ սանրվածքներն ուղղելով, անվերջ ետ շրջվելով, և նրանց հետաքրքրասեր, կապույտով ներկված աչքերը մխրճվում էին Աննետայի մեջ,— նրանք շորորալով մի կողմ քաշվեցին և, գաղտագողի իրենց շուրջը նայելով ու առանց դադարի շաղակրատելով, նորից շրջվեցին՝ նայելու Սիլվիային, որը գրկում էր քրոջը։ Աննետայի համար դա տհաճ էր. նա հասկացավ, որ Սիլվիան այդ բոլորի մասին բերանից շաղ է տվել։

Նա քրոջը ճաշելու տարավ իր մոտ, բուլոնյան տուն։ Սիլվիան ինքն այդ ուզեց։ Եվ որպեսզի մորաքույրը «ախ» ու «վախ» չանի, ճանապարհին որոշել էին, որ Սիլվիան ներկայացվի որպես ընկերուհի։ Համենայն դեպս, դա Սիլվիային ամենևին չխանգարեց, որ ճաշից հետո, երբ զառամյալ տիկինը, հմայված սիրալիր խորամանկով, գնում էր իր սենյակը, մի տեսակ կատակով ասի նրան՝ «հորաքույր»։

Ամառային պայծառ երեկո է։ Նրանք մենակ են մեծ պարտեզում։ Քնքշորեն իրար գրկած, մանրիկ քայլերով գը-

նում են նրանք, շնչելով այն թունդ բուրմունքը, որ հոսում է ծաղիկներից սաստիկ շոգ օրվա մայրամուտին։ Նրանց հոգիներից, ինչպես ծաղիկների բուրմունքը, հորդում էին գաղտնիքները։ Այս անգամ Սիլվիան պատասխանում էր Աննետայի հարցերին առանձնապես չծածկամտելով։ Նա պատմում էր իր կյանքը մանկության օրերից սկսած։ Եվ ամենից առաջ պատմում էր հոր մասին։ Այժմ արդեն հոր մասին նրանք խոսում էին առանց ամաչելու և մեկը մյուսին չխանգիելով։ Հայրը պատկանում էր նրանց երկուսին էլ, և քույրերը խոսում էին նրա մասին ներողամիտ և փոքր-ինչ հեգնական ժպիտով, ինչպես մի մեծ, զվարճալի, համայիշ, անլուրջ, ոչ շատ բարեկիրթ երեխայի մասին (բոլոր տղամարդիկ էլ այդպե՞ս են)... Հոր վրա նրանք չէին զայրանում...

— Իսկ գիտե՞ս, Աննետա, եթե նա բարեկիրթ լիներ, հիմա ես այստեղ չէի լինի...

Աննետան սեղմեց Սիլվիայի ձեռքը։

— Օ՛յ, կամա՛ց։

Եվ Սիլվիան սկսեց պատմել ծաղկի փոքրիկ խանութի մասին, թե ինչպես ինքը, երբ դեռ փոքր էր, նստում էր վաճառասեղանի տակ, խառնիխշտոր թափած ծաղիկների մեջ, ականջ դնելով, թե մայրն ինչ է խոսում գնորդների հետ, և պատմեց՝ ինչպես նրա առաջին երազանքները Փարիզում միահյուսվեցին կյանքի փորձի հետ, հետո Դելֆինայի մահվան մասին պատմեց (այն ժամանակ Սիլվիան տասներեք տարեկան էր), գերձակուհու մոտ սովորելու տարիների մասին, իրեն պատապարող մոր ընկերուհու մասին, պատմեց այնուհետև այն մասին, թե ինչպես մի տարի հետո վախճանվեց նրա այդ հովանավորը, որի առողջությունը քայքայվեց աշխատանքից (Փարիզում շո՛ւտ են քայքայվում), և այն մասին, թե ինչպիսի զզվոտոցների մեջ ապես, որ չի ընկնել։ Նա ուրախ ծաղրանքով և խիստ զվարճալի երանգներով էր նկարագրում իր անհաջողություններն ու դառը փորձությունները։ Խոսքն եկած տեղը դիպուկ բնորոշումներ էր տալիս մարդկանց, լրացնելով պատմածը որևէ շարժուձևով, ժեստով, բառով, դեմքի շարժումով։ Ամեն ինչ չէր, որ նա պատմում էր,— կյանքը նրան շատ բան էր սովորեցրել,—

որոշ բաներ լուծյան էր մատնում, որոշ բաներ, գուցե, իր համար տհաճ էր վերհիշել։ Բայց դրա փոխարեն նա մանրամասներեն պատմեց իր ընկերոջ, վերջին ընկերոջ մասին։ (Նրա կյանքում, ըստ երևույթին, կային նաև ուրիշ էջեր, որոնք թաքցնում էր)։ Նրա այդ ընկերը բժշկական ինստիտուտի ուսանող էր։ Հանդիպել էին նրանք իրենց թաղամասում պարահանդեսի ժամանակ. (Սիլվիան պատրաստ էր ճաշից հրաժարվել, միա՛յն թե պարեր)։ Շատ գեղեցիկ չէ, բայց լավն է, բարձրահասակ, թուխ տղա է, ծիծաղկոտ կկոցվոզ աչքերով, ցեղական շան պես լայնացող քթանցքներով, ուրախ, պատշաճավ քնավորությամբ... Սիլվիան նախապատրաստում էր իր ընկերոջը առանց որևէ ոգևորության, բայց համակրանքով, գովաբանում էր նրա արժանիքները, կատակով ծաղրում էր նրան և գոհ էր իր ընտրությամբ։ Ինքն իրեն ընդհատում էր, ծիծաղում՝ ուրիշ բան հիշելիս՝ և այն, որի մասին պատմում էր, և այն որը լուծյան էր տալիս։ Աննետան համակ լսողություն էր դարձել, սրսկվել էր. նրան այդ ամենը և շփոթմունք էր պատճառում, և հետաքրքրություն։ Երբեմն-երբեմն նա մի քանի խոսք էր ասում։ Սիլվիան պատմելիս մի ձեռքով բռնել էր Աննետայի ձեռքը, իսկ մյուսով խաղում էր նրա մատների հետ, ինչպես տերողորմյայի։ Նա հասկանում էր, որ Աննետան շփոթահար է, դա իրեն դուր էր գալիս, նա զվարճանում էր քրոջ այդ շփոթմունքից։

Աղջիկները նստել էին ծառերի տակ դրված նստարանին։ Արդեն բոլորովին մթնել էր, և նրանք իրար չէին տեսնում։ Սիլվիան, որ իսկական սատանայի ճոտ էր, այդ առիթից օգտվեց և պատմեց փոքր-ինչ թեթևամիտ և շատ նուրբ տեսարանների մասին, որպեսզի վերջնականապես շփոթահար անի ավագ քրոջը։ Աննետան գլխի ընկավ նրա խորամանկությունը։ Նա չգիտեր, ժպտա՞ թե հանդիմանի քրոջը։ Ուզում էր հանդիմանել, բայց ախր քույրիկը շատ լավն է։ Նրա ձայնը այնքա՜ն ուրախ էր հնչում։ Եվ իսկապես, քրոջ կենսախնդությունը մեջ արատավոր ոչինչ չկար։ Աննետան հազիվ էր ընդում, աշխատելով ցույց չտալ, թե ինչ խուճապի մեջ էին գցել նրան Սիլվիայի սիրային պատմությունները։ Իսկ Սիլվիան զգալով, թե ինչպես են հուզմունքից դող-

դողում քրոջ մատները, դրանից բավարարված լռեց, հնա-
րելով նոր չար կատակներ։ Թեքվեց Աննետայի կողմը և,
կարծես ամեն ինչից անտեղյակ, կիսաձայն հարցրեց, թե
Աննետան ընկեր չունի՞, արդյոք։ Աննետան ցնցվեց (այդ-
պիսի բան չէր ապատում) և կարմրեց։ Սիլվիայի խորաթա-
փանց աչքերը աշխատում էին գնահել խավարով պաշտպան-
ված նրա դեմքը, բայց ոչինչ չէր երևում։ Այն ժամանակ նա
մատներով շոշափեց Աննետայի ատրը և, ծիծաղից թուլա-
ցած, ասաց.

— Ո՛ր ատեներն ուղղակի այրվո՛ւմ են։

Աննետան բռնազբոսիկ ծիծաղեց, և նրա ատները բոցա-
վառվեցին ավելի ուժեղ։ Սիլվիան լռիկամ նրա վզովն։

— Դու իմ անխելք, իմ հիմար Աննետա, ինչքա՜ն ես
լավը։ Ո՛չ, ինչքա՜ն ես ծիծաղելի։ Մի՛ բարկացիր ինձ վրա։
Չի՞ որ ես հոհոան եմ։ Քեզ անչա՛փ սիրում եմ։ Գոնե մի
քիչ էլ դու ինձ սիրիր, քո Սիլվիային։ Իմ մեջ լավ բան քիչ
կա։ Բայց ինչ որ կամ, սա եմ, և ամբողջությամբ քոնն եմ։
Քուրիկս, թռչնակս, թող կտուցդ համբուրեմ, անուշիկս...

Աննետան այնպիսի ուժով գրկեց նրան, որ քիչ մնաց
Սիլվիայի շունչը կտրվի։ Նա աշխատում էր դուրս պրծնել
Աննետայի գրկից և գիտունի տոնով ասում էր.

— Գրկել դու գիտես։ Ո՞վ է քեզ սովորեցրել։

Աննետան կտրուկ շարժումով ձեռքը դրեց Սիլվիայի
բերնին.

— Այդպես կատակելու կարիք չկա։

Սիլվիան համբուրեց նրա ափը։

— Ներիր, էլ չեմ անի։

Նվ ատը սեղմելով քրոջ ուսին, նա խելամտորեն լռեց և
սկսեց լսել, թե նա ինչ է ասում, նայելով ծառերի ճյուղե-
րով կտրտված աղջամուղջային երկնքի լուսավոր շերտին և
Աննետայի երեսին, որը խոնարհված դեպի նա, կամացուկ
ինչ-որ բան էր ասում։

Աննետան նրա առաջ բացել էր իր սիրտը։ Այժմ պատ-
մում էր նա, պատմում էր այն կատարյալ երջանկության
մասին, որը իրեն բաժին էր ընկել երիտասարդական տարի-
ներին, իր առանձնության մեջ, պատմում էր փոքրիկ Դիա-

նայի կյանքի արշալույսի մասին, Դիանայի, որը կրակոտ էր, բայց կրքերից չշփոթվող, որն ունի սրտի ուզած ամեն ինչը, քանի որ ամեն բան, ինչ էլ նա ուզում է այսօր, վաղն իսկ իրականանում է։ Եվ նա այնքան է վստահ վաղվա օրվա համար, որ նախապես ըմբոշխնում է նրա մեղրահամ բուրմունքը և չի շտապում ծաղիկները պոկել։

Նա պատմում էր այդ տարիների անխռով էգոիզմի մասին, տարիներ, որոնք աղքատ էին իրադարձություններով և պոռնկապոռնիկ լի՝ անուրջների նենտարով։ Նա պատմում էր այն հոգեկան մտերմության և ամենակուլ քնքշության մասին, որոնք իրեն այնպես հարազատեցնում էին հոր հետ։ Եվ տարօրինակ բան է, պատմելով իր մասին, նա հայտնագործում էր իրեն. մինչև հիմա ինքն առիթ չէր ունեցել վերլուծելու անցյալը։ Եվ դրանից երբեմն իրեն կորցնում էր։ Ժամանակ առ ժամանակ Աննետան ընդհատում էր պատմությունը. նա դժվարանում էր մտքերը բառերով արտահայտել, մեկ-մեկ դրանք արտահայտում էր հուզված, տաքացած, պատկերավոր։ Սիլվիան ամեն ինչ չէ, որ հասկանում էր, նրա համար դա զվարճալի էր, լսում էր մտացրիվ, բայց հետևում էր քրոջ դեմքի արտահայտությանը, նրա շարժումներին, ինտոնացիային։

Աննետան պատմում էր, թե ինչպես էր իրեն տանջում խանդը, երբ իմացավ հոր երկրորդ ընտանիքի մասին, որի գոյությունը հայրը իրենից թաքցրել էր, և թե ինչպես էր ինքը ցնցված, հայտնաբերելով, որ ախոյան ունի, ունի թույլ։ Նա խոսում էր տաքացած, անկեղծորեն և լուսյան չմատնեց նույնիսկ այն, ինչից ամաչում էր։ Նրա ամբողջ կրքոտությունը արթնացավ, հենց որ այդ հիշեց, և ասաց.

— Ես քո դեմ ատելությա՞մբ էի լցված։

Ասաց այնպիսի զգռովածությամբ, որ նույնիսկ մի պահ լռեց՝ իր ձայնի հնչեղությունից ապշահար։ Սիլվիան, որ հուզված էր շատ ավելի քիչ, բայց խիստ համակված էր հետաքրքրությամբ, զգաց, թե ինչպես է իր այտի տակ դողդողում Աննետայի ձեռքը, և մտածեց.

«Քրոջս մեջ կա՛յծ կա»։

Աննետան շարունակում էր իր խոստովանանքը, և դա թանկ էր իր համար։

Իսկ Սիլվիան մտածեց.

«Աննուշ, թե ինչո՞ւ է այդ բոլորն ինձ պատմում»։

Նա միևնույն ժամանակ զգաց, որ իր հոգում հարգանք է աճում դեպի տարօրինակավուն ավագ քույրը,— իհարկե, հարգանքը ծաղրական է, բայց լի է անսահման քնքշությամբ, և նա փաղաքշորեն այտը քսեց հարազատ ձեռնափին...

Աննետան իր պատմությունը հասցրեց մինչև այնտեղ, երբ հակումը դեպի անծանոթ քույրը, հակառակ իր ներքին դիմադրությանը, համակեց նրան ամբողջապես, և երբ առաջին անգամ տեսավ Սիլվիային։ Բայց այստեղ նրա շիտակությունը չհաղթահարեց սրտի հուզմունքը։ Նա փորձեց շարունակել, լռեց և, հրաժարվելով այդ փորձից, ասաց.

— Այլևս չեմ կարող...

Լռություն տիրեց։ Սիլվիան ժպտում էր։ Նա տեղից բարձրացավ և, այտը հպելով քրոջ այտին, կամքեց նրա կզակը։

— Ի՞նչ հրապուրվողն ես,— շշնջաց Սիլվիան։

— Ե՞ս։— Շփոթահար հարցրեց Աննետան։

Սիլվիան նստարանից վեր թռավ, կանգնեց քրոջ առաջ և, քնքշորեն սեղմելով նրա գլուխը իր կրծքին, ասաց.

— Խեղճ... իմ խե՜ղճ Աննետա...

Այդ օրվանից քույրերը մշտապես տեսնվում էին։ Շաբաթ չէր անցնում, որ նրանք չհանդիպեին։ Սիլվիան երեկոյան կողմը Աննետայի համար անսպասելի ներկայանում էր Բուլոնյան առափնյակը։ Աննետան Սիլվիային այցելում էր ավելի հազվադեպ։ Լուռ համաձայնությամբ այդ հանդիպումները դասավորվում էին այնպես, որ Աննետան չէր հանդիպում Սիլվիայի «բնակիչ» հետ։ Որոշակի մի օր քույրերը նախաճաշում էին կամ ընթրիքի խանութում։ Նրանց զվարճությունն էր պատճառում, որ իրար տեսակցություն էին նշանակում մերթ Փարիզի մի, մերթ մյուս անկյունում։ Այդպիսի հանդիպումները քույրերին ուրախացնում էին։ Եվ դա

նրանց համար պահանջ էր դարձել։ Այն օրերին, երբ քույրերը իրար չէին տեսնում, ժամանակը ձգձգվում էր երկար, պառավ հորաքրոջը չէր հաջողվում Աննետային խոսակցության մեջ քաշել, իսկ Սիլվիան ձանձրանում էր և ձեռ առնում իր ընկերոջը, որն այդտեղ ոչ մի մեղք չուներ։ Հենց միայն այն մտքից, թե քանչքան բաներ նրանք կպատմեն միմյանց հանդիպելիս, սպասումն արդեն թեթևանում էր։ Բայց Սիլվիան երբեմն չէր դիմանում և, երբեք Աննետան իրեն այնքան երջանիկ չէր զգացել, որքան մի անգամ երեկոյան. արդեն ժամը տասն էր, երբ Սիլվիան գոռն զանգը տվեց և ներս մտավ, ասելով, որ ինքը չկարողացավ դիմանալ մինչև վաղը և եկել է Աննետային համբուրելու։ Աննետան ուզում էր քրոջը պահել, բայց Սիլվիան երդվում էր, որ իր տրամադրության տակ ունի ընդամենը հինգ րոպե և, մի ամբողջ ժամ առանց շունչ քաշելու շաղակրատելուց հետո, դուրս վազեց։

Աննետան ուզում էր, որ քույրն ապրի իր մոտ, օգտվի իր բարեկեցությունից։ Սակայն Սիլվիան համառորեն մերժում էր այդ առաջարկությունները. նա իր գլուխն էր մտցրել, իր համառ գլուխը, որ ոչ մի դրամական օգնություն ինքը չի ընդունի։ Բայց դրա փոխարեն նա, առանց քաշվելու, ընդունում էր գիտաններ կամ «պարտքով» փող էր վերցնում (պարտք վերցնում էր, բայց մոռանում էր վերադարձնել)։ Մի երկու անգամ նա նույնիսկ որոշ բաներ թողրել էր... Օ, ոչ թանկարժեք բաներ։ Բայց ինքնըստինքյան հասկանալի է, նա երբեք փողի ձեռք չէր տա։ Չէ՞ որ փողը սրբություն է։ Իսկ զիզիպիզի բաներ, որևէ էժանագին զարդարանք... Դրանց գայթակղությանը չէր դիմանում։ Աննետան նկատեց քրոջ կաշաղակային սովորությունները և նույնիսկ մի տեսակ իրեն կորցրեց։ Ինչո՞ւ Սիլվիան իրենից չուզեց։ Ի՞նչ ուրախությամբ նա այդ բոլորը կտար։ Նա աշխատում էր ոչինչ չնկատել։ Աննետան սիրում էր քրոջ հետ կրծկալ, բլուզ, սպիտակեղեն փոխանակել։ Դրանով սնվում էր նրա քնքշությունը։ Սիլվիան քրոջը սովորեցնում էր զարդարվելու արվեստը և նրա ճաշակի ազդեցության տակ փոխվում էր Աննետայի ավելի խիստ ճաշակը։ Միշտ չէր, որ հաջող էր բա-

տացվում, որովհետև քրոջը պաշտող Աննետան ընդօրինակում էր նրան և, կորցնելով չափի զգացումը, հագնվում էր ոչ իր ոճի համաձայն,— Սիլվիան, որին այդ ամենը շատ զվարճացնում էր, հարկադրված էր լինում սառեցնել քրոջ ավելորդ փութեռանդությունը։ Սիլվիան շատ ավելի շրջահայաց էր և, առանց ավելորդ խոսք ասելու, Աննետային վերցնում էր նրա բարեկիրթ զսպվածությունը, շարժուձևերը և այն, թե ինչպես պետք է արտասանել որոշ բառեր, ինչպես պետք է շարժվել, բայց այդ բոլորը ընդօրինակում էր այնքան նրբորեն, որ կողմնակի մարդուն կարող էր թվալ, թե օրիգինալն է ընդօրինակում նրան։

Եվ, այնուամենայնիվ, չնայած նրանց այդ ամբողջ մրաերմությանը, Աննետային հաջողվեց խանգարել քրոջ կյանքի միայն մի կողմը։ Սիլվիան պահպանում էր իր անկախությունը և դա զգացնել էր տալիս։ Փաստորեն նա լիովին չէր ազատվել Աննետայի նկատմամբ ունեցած դաստիարակչական անբարյացակամությունից. նա ուզում էր Աննետային ցույց տալ, որ իրեն տնօրինել չի կարելի, որ ինքը գալիս է քրոջ մոտ լոկ այն պատճառով, որ իրեն այդպես գուր է գալիս։ Ասենք, նրա ինքնասիրությունը նույնպես վիրավորված էր, որ Աննետան այնքան էլ հավանություն չի տալիս նրա վարքագծին։ Հատկապես սիրային կապին։ Ճիշտ է, Աննետան աշխատում էր դրա հետ էլ հաշտվել, բայց չէր կարողանում թաքցնել, թե ինչպես է իրեն նեղում Սիլվիայի սիրավեպին վերաբերող խոսակցությունը։ Նա կամ խուսափում էր այդ մասին խոսելուց, և կամ, եթե նույնիսկ իրեն հարկադրում էր խոսել Սիլվիայի ընկերոջ մասին՝ քրոջ համար հաճելի բան անելու անկեղծ ցանկությամբ, ապա նրա ձոնի մեջ զգացվում էր անորոշալի մի լարվածություն,— Սիլվիան դա նկատում էր և ակնթարթորեն խոսակցության նյութը փոխում։ Աննետան վշտանում էր։ Նա ամբողջ աբրտով ուզում էր, որ Սիլվիան երջանիկ լինի, երջանիկ իր ձևով։ Այդ ձևը այնքան էլ Աննետայի սրտով չէր, բայց նա չէր ուզում ցույց տալ։ Եվ իհարկե, ցույց էր տալիս։ Մեծ կրքերի տեր մարդը չի կարողանում իրեն կեղծել։ Սիլ-

վիան զայրանում էր և վրեժ լուծում. ամեն ինչ լուսյան էր տալիս։ Եվ ահա միանգամայն պատահաբար Աննետան իմացավ, որ քրոջ կյանքում տեղի են ունեցել ոչ անկարևոր իրադարձություններ, և այն էլ մի քանի շաբաթ առաջ։

Ճիշտն ասած, ոչ մի կերպ չէր կարելի Սիլվիային ստիպել, որ նա այդ իրադարձությունները կարևոր համարի։ Դրանք, ըստ երևույթին, իսկապես էլ սահել էին նրա գիտակցության կողքով. այդպես էր նրա ճկուն բնավորությունը, իսկ գուցեև նա ինքնաապրումից դրդված էր այդ ամենը համարում դատարկ բաներ։ Աննետան պատահաբար իմացավ, որ «որոշ ժամանակից ի վեր» (անհնար է որոշել հատկապես երբվանից. չէ՞ որ դա «վաղուցվա՜ պատմություն է») Սիլվիայի ընկերոջ հետքն անգամ չկա, կապերը խզված են։ Դա Սիլվիային առանձնապես չէր վշտացնում։ Աննետային, թերևս վշտացնում էր ավելի շատ։ Ճիշտ է, նա կատարվածի համար ամենևին չէր ափսոսում։ Փորձում էր— և այն էլ շատ անհաջող ձևով— պարզել, թե ինչ է պատահել։ Սիլվիան, ուսերը թոթովելով, ծիծաղում էր և ասում.

— Ոչինչ էլ չի պատահել։ Ուղղակի մի բան էր— անցավ։

Աննետան պետք է որ ուրախանար, բայց քրոջ խոսքերը նրան վշտացնում էին։ Ի՞նչ տարօրինակ զգացողություն է։ Մի տես, թե ի՞նչ անհեթեթն է։ Եվ այդ «անցավ» բառը... ասվում է զգացմունքների մի ամբո՞ղջ աշխարհի մասին։ Եվ այն էլ ծիծաղով է ասվում...

Իսկ այդ կարևոր իրադարձությունից հետո (կարևոր իր համար) Աննետան մի ուրիշ հայտնագործություն էլ արեց։ Մի անգամ նա ասաց, որ քրոջն ինքը կդիմավորի արհեստանոցի մուտքի մոտ, և Սիլվիան շատ հանդիստ պատասխանեց.

— Իսկ ես է՛լ այնտեղ չեմ աշխատում։

— Ի՞նչ ես ասում,— զարմացավ Աննետան։— Այդ երբվանի՞ց։

— Որոշ ժամանակից... (Ինչպես միշտ, խուսափողակա՞ն է։ Դա կարող էր տեղի ունեցած լինել և երեկ և անցյալ տարի)։

— Իսկ ի՞նչ է պատահել։

— Մի բան պատահել է... Ինչ որ ամեն տարի պատահում է (ինչպես Մալբրուկի մասին երգի մեջ՝ «Ջոտիկին կամ տոնին հոգեգալստյան...») Ձմեռշավներից հետո վրա է հասնում մեռյալ սեզոնը։ Տանտիրուհիները գազան են կըտրում, հազար ու մի պատճառ են գտնում և ամենաազնիվ ձևով մեզ դուրս են շպրտում։

— Բա որտե՞ղ ես աշխատում։

— Որտեղ պատահի։ Ամբողջ օրը այս ու այն կողմ եմ վազվզում և ամեն տեղից մի քիչ վաստակում։

Աննետան ընկճված էր.

— Մնացել ես առանց աշխատանքի, իսկ ինձ ոչինչ չես ասել։

Սիլվիան ձևացրեց իբրև ինքը այն մարդկանցից է, ում համար «եղած-չեղած մեկ է», ով ամեն բանի սովոր է։ Անփութորեն, ներողամտությամբ ծոմովելով (հոգու խորքում ուրախանալով, որ իր համար այդպես հուզվում են), նա խոստովանեց, որ արագ-արագ էժանագին կոստյումներ է կարծրում պատրաստի հագուստեղենի խանութների համար, մանկական շորեր է կարճացնում, տղամարդու անդրավարտիքներ է կարում (դրանք պատմեց կատակի ձևով)։ Բայց Աննետան ծիծաղելու սիրտ չուներ։ Նա իր հետաքրքրությունը շարունակեց և Սիլվիայից խոսք քաշեց, որ վերջինս դռնեդուռ ընկած տեղ է փնտրում և որ երբեմն ստիպված է լինում հոգնեցուցիչ և զզվելի աշխատանքներ կատարել։ Ահա այդ ժամանակ Աննետան հասկացավ, թե ինչու «որոշ ժամանակից» նա սկսել է նկատել, որ քույրը զոնատվել է... Ահա թե ինչու Սիլվիան օրերով չէր գալիս, անհեթեթ պատճառներ հնարելով և դիմելով անմիտ կեղծիքի, մինչդեռ նա, ըստ երևույթին, մինչև կեսգիշեր կարել է առանց դադարի և աչք կպցնելու։ Սիլվիան դիտավորյալ կատակի տալով և շինծու անտարբերությամբ շարունակում էր պատմել իր դատարկ անախորժությունների մասին։ Բայց տեսնում էր, որ քրոջ շրթունքները զայրույթից դողում են։ Եվ Աննետան հանկարծ բռնկվեց.

— Ինչ ստորություն։ Ոչ, ես չեմ կարող, չե՞մ կարող այլևս այդ տանել։ Եվ դու դեռ համարձակվում ես ասել, որ

ինձ սիրում ես, որ դու ինքդ ես ուզում ինձ հետ մտերմանալ, բարեկամ ես ձևանում, իսկ ամենակարևոր բաներն ինձանից թաքցնում ես, թաքցնում ես այն ամենը, ինչ անմիջականորեն քեզ է վերաբերվում։

Սիլվիայի վեր ցցված շուրթը պատկերեց. «Բա՜ն գտավ ասելու, այդտեղ ոչ մի կարևոր բան էլ չկա...»։ Բայց Աննետան հնարավորություն չտվեց, որ նա այդ ասի, հեղեղը հորդեց)։

— ... Ես վստահում էի քեզ, կարծում էի, թե դու ինձ կպատմես քո դժբախտությունների, անախորժությունների մասին, ինչպես ամեն ինչի մասին ինքս եմ քեզ պատմում, որ մեզ համար ամեն ինչ ընդհանուր է լինելու... Իսկ դու ինձանից թաքցնում ես, կարծես մենք օտարներ ենք, և ես ոչի՛նչ չգիտեմ, ո՛չ մի բան։ Չէ որ պատահաբար պարզվեց, որ դու հիմա ծանր վիճակում ես, որ դու գործ ես փնտրում, որ քո առողջությունը վատ է, որ դու պատրաստ ես կատարելու ինչ աշխատանք էլ լինի, միայն թե ոչինչ չասես, թեև դիտես, որ քեզ օգնելը ինձ համար երջանկություն կլիներ... ինչքա՜ն գարշելի է, ինչքա՜ն գարշելի։ Դու ինձ վիրավորեցիր։ Չկա անկեղծություն—չկա և բարեկամություն։ Բայց ես դա էլ չեմ կարող տանել... Բավակա՞ն է... Առայժմ դու կտեղափոխվես ինձ մոտ և կմնաս այնքան, քանի դեռ անգործ ես...

(Սիլվիան զլուխն օրորեց)։

— ... Կտեղափոխվես, մի վիճիր։ Լսիր, Սիլվիա, այլապես ես քեզ հետ չեմ հաշտվի։ Հենց որ «չէ» ասես, մենք կյանքում այլևս չենք հանդիպի երբեք...

Սիլվիայի մտքով չէր էլ անցնում ներողություն խնդրել, բացատրել, նա ժպտում էր և համառորեն պնդում.

Ոչ, սիրելիս, չեմ փոխադրվի։

Նրան մեծ հաճույք էր պատճառում Աննետայի հուզմունքը, որն արդեն չէր տիրապետում իրեն, քիչ էր մնում լաց լինի, պատրաստ էր ծեծկռտուքի բռնվել։ Սիլվիան մտածեց.

«Մի տես թե ինչքա՜ն է լավանում, երբ հուզվում է»։

Սիլվիան չէր հանձնվում։ Բայց Աննետան տեսնում էր, որ նա էլ կամք ունի։

Աննետայի դեմքը զայրույթից վառվում էր, և նա կրկնում էր, աղերսում, պնդում.

— Մնա այստե՛ղ։ Կմնաս... Ես այնպե՛ս եմ ուզում... Լա՛վ։ Կմնա՞ս։ Կմնա՞ս։ Համաձայն ես, ճի՞շտ է։ Դե պատասխանի՛ր...

Իսկ կամակորը գրգռիչ կերպով ժպտաց և պատասխանեց.

— Չեմ մնա, հոգյակս։

Աննետան, ասես ինքն զայրացած, տեղից վեր թռավ.

— Մեր միջև ամեն ինչ վերջացած է։

Մեջքը շրջեց, մոտեցավ լուսամուտին, կարծես ուրիշին չնկատելով Սիլվիային։ Իսկ նա մի քիչ սպասեց, նույնպես վեր կացավ տեղից և շողոմ ձայնով ասաց.

— Յոհաննի՛ս, Աննետա։

Աննետան, առանց շրջվելու, քերանից գցեց.

— Գնա բարո՛վ։

Նրա ձեռքերը չղաձգորեն սեղմված էին։ Մի շարժում — և ով գիտե, թե ինչով կվերջանար այդ բոլորը։ Նա կփղձկար, լաց կլիներ, կգոռգոռար... բայց չշարժվեց, նայում էր գոռոզաբար, սառը։ Սիլվիան մի փոքր շփոթվեց։ Թաքցրած անհանգստությամբ, բայց և այնպես քիչ տակ ծիծաղելով, նա դուրս գնաց և, դուռը հետևից ծածկելով, Աննետային ցույց տվեց քիթը։

Առանձնապես պարծենալու բան չկար, թե իբր հակահարված տվի (թեև մի քիչ, իհարկե, պարծենում էր)։ Իր բռնկումով շատ չէր պարծենում նաև Աննետան։ Նա ընկրճված էր, հասկանում էր, որ կտրել է վերադարձի ճանապարհը, պետք էր համբերությամբ, հմտորեն նվաճել Սիլվիային, իսկ ինքը համարյա դուրս արեց։ Սիլվիան ի վերադառնա — դա անկասկած է։ Աննետան նրան կանգնեցրել էր երկրնարանքի առաջ, փակել էր քրոջ համար իր տան դուռը։ Եվ իրեն արգելել էր բացել։ Հո չէ՞ր կարելի այդ հայտարարությունից հետո վազել Սիլվիայի հետևից։ Իրեն պարտված համարել։ Հպարտությունը թույլ չէր տալիս նրան այդ անելու։ Եվ անվիճելի իրավացիությունը։ Չէ՞ որ Սիլ-

վիան շատ վատ վարվեց... Ո՛չ, ո՛չ մի դեպքում ինքը չի գնա նրա մոտ։

Եվ, գլխարկը դնելով, նա գնաց ուղիղ Սիլվիայի մոտ։

Սիլվիան հենց նոր էր եկել։ Նա միտք էր անում. փորձում էր գլուխ հանել իր դժվարին կացութ յունից։ Ընդունում էր, որ ամեն ինչ անմտութ յուն է, բայց ելք չէր տեսնում, քանի որ անհնար էր համարում այն միտքը, թե իրեն կարող է ստրկացնել Աննետային կամքը, անհնար էր համարում այն միտքը, թե իր կամքը կարող է ստրկացնել Աննետային։ Փաստորեն նա գտնում էր, որ Թռչնակն իրավացի է։ Բայց չէր ուզում հանձնվել։ Սիլվիան անտարբեր չէր երկրային բարիքների նկատմամբ։ Այն բարիքները, որոնք պատկանում էին Աննետային, քիչ չէին գայթակղում նրան, շարժում նախանձը, թեև դա կատարվում էր ենթագիտակցաբար։ Փորձիր ինքդ քեզ հաղթահարել, եթե անգամ դու նախանձ չես, — դրեթե բոլորովին նախանձ չես։ Եվ մի՞թե հնարավոր է, որ մարդն իրեն հաղթահարի, երբ նրա երիտասարդ մարմինը, ծարավի է բերկրանքի, կարելի՞ է չմտածել այն մասին, թե դու ինչպես կտնօրինեիր ունեցվածքդ, ինչպես կօգտվեիր նրանից — կմտածեիր շատ ավելի լավ, քան այն բթամիտները, որոնց բերանը այդ ունեցվածքը երկընքից է ընկել։ Ու թեև նա ինքն իրեն չէր խոստովանում, բայց մի քիչ գայրացած էր Աննետայի վրա։ Ինչևիցե, եթե Աննետան անգամ այլտեղ մեղք ուներ, ապա ամեն կերպ աշխատում էր, որպեսզի Սիլվիան ների իրեն։ Բայց հենց Սիլվիան էր, որ անհրաժեշտ չէր համարում ներել։ Իսկ դա հո չե՞ս խոստովանի։ Մեզանից ամեն մեկը իր հոգու դաշտանարաններում ածեցնում է հինգ-վեց հրեշ մարդուկների։ Դրանցով նրանք չեն պարծենում, նույնիսկ կարծես չեն էլ նկատում, բայց ոչ ոք չի շտապում նրանցից գլուխն ազատել։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ Սիլվիային գայթակղում էին այն բարիքները, որ ինքը չուներ, բայց նա ուզում էր գոռոզութ յուն խաղալ, ձևացնել, իբրև թե ինքը արհամարհում է դրանք։ Ահա և գոռոզացավ, բայց ոչ մի լավ բան չստացվեց։ Ո՛չ, Սիլվիան իր հաղթանակից բացարձակապես ոչ մի հաճույք չստացավ, պարծենալու ոչինչ չկար. հաղթա-

նակեց, բայց և հատուցեց սեփական մաշկով։ Եվ ամեն ինչ հատկապես դժվար էր դասավորվում այն պատճառով, որ իսկապես էլ նրա դրությունը առանձնապես հաճելի չէր։ Սիլվիայի համար հեշտ չէր դուրս պրծնել ձախորդություններից։ Գործազուրկների թիվը գնալով շատանում էր, և, հասկանալի է, ձեռնարկատերերը դրանից օգտվում էին։ Նա փայլուն առողջություն չուներ։ Թուլացնող շոգից (այրող հուլիսն էր), անքուն գիշերներից, վատ սնունդից, գարշելի ջրից, որ խմում էր մի ումպով, նա ձեռք էր բերել աղիների բորբոքում ու դիզենտերիա և հիմա շատ էր թուլացել։ Նրա սենյակի տանիքը արևից շիկանում էր, և Սիլվիան իջեցնելով ժալյուզիները, կիսամերկ վիճակում զգում էր, թե ինչպես է այրվում ամբողջ մարմինը։ Նա ուզում էր կալչել որևէ սառը բանի, որպեսզի ձեռքերը հովացնի, և մտածում էր, թե ինչքա՜ն լավ կլիներ, եթե հիմա հանկարծ հայտնվեր Բուլոնյան առափնյակի տանը։ Նա զուրկ էր ուրիշ հարստություններից, բայց դրա փոխարեն շռայլորեն օժտված էր ծիծաղի զգացումով և ծիծաղում էր իր սեփական հիմարությունների վրա։ Քիչ չանքեր չթափեց Մինչդեռ ինքն ու Աննետան փաստորեն միշտ և ամեն ինչում միաբան էին։ Երկուսն էլ կողքի էին ընկել... Տե՜ր աստված, ի՜նչ անմտություն։ Ո՜չ մեկը չի զիջում...

Նա դիտեր, որ ինքը երբեք չի զիջի. թող այդպես հիմար էլ մնա մինչև վերջ։ Նա քմծիծաղում էր, ցնցելով վերին դունաթաթի շրթունքը, երբ հանկարծ միջանցքից նրա ականջին հասավ Աննետայի արագ քայլերի ձայնը։ Սիլվիան իսկույն ճանաչեց այդ քայլերը, տեղից ցատկեց։

«Վերադարձա՜ր... Աննե՜տա, հարազա՜տս»։

Սիլվիան չէր սպասում քրոջը... ինչ խոսք, Աննետան նրանից լա՜վն է։

Աննետան ներս մտավ։ Նրա դեմքը հուզմունքից, շոգից, արագ քայլելուց այրվում էր։ Դեռ չդիտեր, թե ինչպես կվարվի, բայց բավական էր ոտքը ներս դնել—և ամեն ինչ պարզ դառավ նրա համար։ Աննետան խեղդվում էր շիկացած, կիսախավար փոքրիկ սենյակի տոթից, և նորից նրան համակեց կատաղության նոպան։ Աննետան քայլ արեց դե-

պի Սիլվիան,— վերջինս ընկավ Աննետայի վզով,— իր ջղային ձեռքերով սեղմեց քրոջ խոնավ ուսերը և, չպատասխանելով նրա համբույրներին, դղրդալած ասաց.

Ես քեզ տանում եմ այստեղից... Հաքնվի՛ր... Եվ չվիճես։

Բայց և այնպես Սիլվիան վիճում էր, վիճում էր պարզապես սովորության ուժով։ Զևացնում էր, թե ընդդիմանում է։ Բայց չէր խանգարում։ Աննետան հարցը տնօրինում էր իր ձևով, հագցնում էր Սիլվիային, ոտքերն էր քաշում կոշիկները, կոճկում էր բլուզը, բարկացած գլուխն էր խրում գլխարկը, փաթեթի նման այս ու այն կողմ էր պտտում։ Սիլվիան կրկնում էր. «Պետք չէ, պետք չէ», ձևի համար վրդովված գոռգոռում էր, բայց ցնծում էր, որ իր հետ այդպես են վարվում։ Եվ երբ Աննետան հագցրեց նրան, Սիլվիան բռնեց քրոջ ձեռքերը, պինդ-պինդ համբուրեց—նույնիսկ ատամները դրոշմվեցին—և, ուրախությունից ծիծաղելով, ասաց.

— Տիկին Փոթորիկ... ի՞նչ արած։ Ննջարկվում եմ... Տա՛ր...

Եվ Աննետան տարավ նրան։ Նա իր ուժեղ ձեռքերով այնպես էր բռնել Սիլվիայի ձեռքերը, որ կտրծես սեղմիչների մեջ լինեին։ Նրանք նստեցին տաքսի։ Երբ տեղ հասան, Սիլվիան Աննետային ասաց.

— Հիմա խոստովանում եմ. ես մահու չափ ուզում էի քեզ մոտ փոխադրվել։

— Իսկ ինչո՞ւ էիր այդպես համառում,— հարցրեց Աննետան, բարկացած, երջանիկ։

Սիլվիան բռնեց Աննետայի ձեռքը, ծալեց նրա ցուցամատը և նրանով սկսակացրեց իր ուռուցիկ ճակատը։

— Այո, այդտեղ համառություն շա՛տ կա,— ասաց Աննետան։

— Քոնի նման է,— նկատեց Սիլվիան, հայելու մեջ ցույց տալով իրենց ուռուցիկ ճակատները։

Նրանք երկուսն էլ ժպտացին։

— Իսկ մենք հո գիտենք, թե դրանք ում են քաշել,— ավելացրեց Սիլվիան։

Սենյակը վաղուց ի վեր սպասում էր Սիլվիային։ Աննետան, դեռ առանց տեղեկություն ունենալու Սիլվիայի գոյության մասին, այդ փոքրիկ սենյակը նախապատրաստել էր ապագա ընկերուհու համար։ Ընկերուհին այդպես էլ չհայտնվեց. միայն մի երկու-երեք անգամ նրա սովերը ցոլաց ու անցավ։ Աննետայի յուրօրինակ բնավորությունը, իրեն պահելու ձևը, որը մեկ սառնությամբ էր դրսևորվում, մեկ չերմ սրտացավությամբ, պոռթկուն և անսպասելի խրատությունը, որ նրա զուսպ բնավորության մեջ մարդու ապշեցնում էր, տարօրինակությունները, ինչ-որ չզիտակցված պահանջկոտությունը, տիրական բնավորությունը, որ մարմրում էր նրա հոգում և բռնկվում նույնիսկ այն ժամերին, երբ նա պատրաստ էր կրքոտ հնազանդությամբ զոհաբերել իրեն,— այդ ամենը խրտնեցնում էր իր այն հասակակիցներին, որոնք, անկասկած, հարգում էին նրան և, ասում են, ընկնում էին նրա ազդեցության տակ, բայց՝ զգուշորեն, տարածության վրա։ Բարեկամության այդ փոքրիկ սենյակին առաջինը տիրացավ Սիլվիան։ Նա ներս մտավ այդտեղ, հասկանալի է, առանց հուզմունքի, իմանալով, որ առանց դժվարության դուրս կգա,— դուրս կգա, երբ սիրտն ուզի։ Աննետայից նա ամենևին չէր վախենում։ Եվ սենյակը, որտեղ նա տեղափոխվեց, բոլորովին նրան չզարմացրեց։ Այն ժամանակ, իր առաջին այցելության օրը, Սիլվիան մի քանի մանրուքներից— այդ մանրուքներում կանխամտածված հոգատարություն էր դրսևորվում— և սենյակը ցույց տալու քրոջ ամաչկոտ շփոթմունքից գլխի ընկավ, որ այդ բոլորը նախատեսված է իր համար։

Իսկ այժմ Սիլվիան, իրեն պարտված համարելով,— ի բախտավորություն իր,— ամենանշնչին դիմադրություն անգամ ցույց չէր տալիս։ Նա աղիքային սուր հիվանդությունից հետո դեռ թուլություն էր զգում, և Աննետան այնպես էր ձրև տալիս իր տպտքինվող քրոջը, որ նա ընկղմվում էր երանության մեջ։ Բժիշկ էին կանչել, նա գտավ, որ Սիլվիան արյունապակաս է, խորհուրդ տվեց կլիման փոխել, որոշ ժամանակ ապրել բարձր լեռնային առողջարանում։ Բայց քույրերը չէին շտապում լքել իրենց ընդհանուր բույնը։

Նրանք հմայեցին թշնամին և հարկադրեցին ասել, որ վիրջին հաշվով բուլոնյան տանը նույնպես վատ չէ և որ նույնիսկ որոշ առումով, թերևս, ավելի լավ է հիվանդի ուժերը սկզբում վիրակապելով պատել՝ վիրակապար հանգստության միջ, և հետո միայն ամրապնդել լեռնային կենարար օդով։

Եվ ահա Սիլվիան կարող է անկողնում ուղածի չափ անձնատուր լինել զրզանքին։ Վաղո՞ւց սրտպես չէր եղել։ Ի՞նչ երանություն է քնել, ինչքան սիրուն է, լրացնել բոլոր բաց թողած հրազմները, խոհ ամենահրաշալին՝ հենց այնպես պառկել, հիանալի, նուրբ սավանների վրա փռված, պառկել միևնույն ժամանակ քմրության մեջ սառը մի տեղ փնտրել։ Եվ երազե՞լ, երազե՞լ... Օ, նրա երազանքները չէին թռչում երկնային բարձունքները։ Նրանք պտտվում էին տեղում, ինչպես ճանճը առաստաղի վրա։ Այդ երազանքներում կապակցվածություն չկար։ Քանի անգամ կրկնվում էր միևնույն բանը՝ որևէ դեպք, ապագայի պլան, արհեստանոց, սիրեցյալ, կանացի գլխարկ։ Եվ հանկարծ ամեն ինչ սուզվում էր քնի կանգնած ջրի մեջ...

— Լսիր, Սիլվիա, ապա մի լսիր... (Սիլվիան քնի մեջ ընդդիմանում էր)։ Այդպես չի կարելի... Արթնացիր։

Կիսաբացելով աչքերը, Սիլվիան տեսնում էր իր վրա խոնարհված քրոջ դեմքը և մրմնջում, դժվարությամբ արտասանելով.

— Աննետա՜։ Արթնացրո՜ւ ինձ։

— Արջամո՜ւկ,— ասում էր Աննետան և, ծիծաղելով, քաշքշում քրոջը։

Սիլվիան իրեն փոքրիկ աղջիկ էր ձևացնում։

— Ա՜խ, մամա։ Այս ի՞նչ է պատահել ինձ։ Արթնանալ չեմ կարողանում։

Աննետայի սերն այնքան մեծ էր, որ նա մայրաբար ոգևորվում էր քրոջով։ Նստում էր անկողնու վրա, և նրան թվում էր, թե այդ սիրելի փոքրիկ գլուխը, որը նա իր ձեռքին էր սեղմում,— իր դստեր գլուխն է։ Սիլվիան չէր հակառակում և կամացուկ տրտնջում էր.

— Ի՞նչպես կարելի է անել, որպեսզի մարդ երբեք չաշխատի։

— Դու այլևս չես էլ աշխատելու։

— Այդ էր պակաս, ո՞նց չէ,— վրդովվում էր Սիլվիան։ Նրա քունն իսկույն թռչում էր և, ազատվելով քրոջ գրկից, բարձրացնում էր գզգզված գլուխը և կասկածելի հայացքը հառում Աննետային։

— Ապա մի տեսնեք, անընդհատ երևակայում է, թե իրեն ուզում են զոռով պահել։ Գնա, փոքրի՞կս,— ասում էր Աննետան ծիծաղելով։— Գնա, եթե սիրտդ քեզ այդպես է թելադրում։ Ոչ ոք քեզ չի՛ պահում։

— Որ այդպես է, մնում եմ,— ասում էր հակադրության ոգին։ Եվ Սիլվիան, լարվածությունից հոգնած, սուզվում էր անկողնում։

Այդպես, պարապության մեջ, անցավ ընդամենը մի քանի օր, և Սիլվիան կշտացավ քնից։ Վրա հասավ այն ժամանակը, երբ նրան արդեն հնարավոր չէր տեղում պահել։ Նա ամբողջ օրերով, կխտահագնված, պարապ-սարապ այս ու այն կողմ էր գնում՝ Աննետայի կոշիկները հագած, որոնց մեջ կորչում էին նրա բոբիկ ոտքերը. Աննետայի խալաթը վրան, որի փեշերը ժողովում էր, ինչպես պատմուճանները, մերկ ձեռքերով ու սրնքաձկներով։ Նա սենյակից սենյակ էր անցնում, ամեն ինչ զննելով ու հետախուզելով։ Նրա մեջ առանձնապես ուժեղ չէր զարգացած «քունի» մասին հասկացությունը։ («իմի» մասին՝ ուրիշ բան)։ Քույրը նրան ասաց. «Դու քո տանն ես», և Սիլվիան նրան բռնեց խոսքի վրա։ Նա ամենուրեք քցրում էր։ Բան չմնաց, որ ձեռք չտար։ Ժամեր շարունակ չփչփացնում էր վաննայում։ Ջննում էր ամեն մի անկյուն։ Մի անգամ Աննետան տեսավ, որ քույրը կլանվել է իր թղթերով—ասենք, դրանք շուտ ձանձրացրին Սիլվիային։ Մի ուրիշ անգամ այդ չարաճճին ասպատակել էր հորաքրոջ սենյակի վրա, ապշեցրել էր պառավին, ինչ կա-չկա գլխի վրա էր շրջել, տեղաշարժել բոլոր իրերը, փարվել էր այդ իրերի տիրակալուհուն (որը սրտի դողով հետևել էր նրա ամեն մի շարժմանը), ամեն ինչ թողել այդպես խառնիխուռտ և, շարժելով պառաված աղջկա զորավանքն ու զայրույթը, փախել էր։

Տունը լցված էր անլուրթի գեղգեղանքով, անկապ շաղակրատանքով, դրան որ՝ վերջ չկար։ Որտեղ ասես, ուզածդ տեսքով բազկաթոռի թևակալին նստած թե սանրը ձեռքին՝

մազերը սանրելիս, սանդուղքի աստիճաններին հանկարծ կանգ առած, թե առավոտյան լոգարանից բաղնիքի խաղաթով դուրս գալիս—միևնույն է, քույրերը խոսում էին, խոսում, և մի անգամ սկսած խոսակցությունը շարունակվում էր ժամեր, նույնիսկ ամբողջ օրերով։ Նրանք մոռանում էին, որ քնելու ժամանակն է։ Իզուր էր հորաքույրը զայրանում, հազում, հատակը թխկթխկացնում։ Նրանք աշխատում էին կամաց խոսել, ծիծաղից խեղդվելով, բայց հինգ րոպեից հետո՝ պայթյո՜ւն։ Նորից հնչում էր հոբոյի նման Սիլվիայի բարակիկ ձայնը, իսկ նրան արձագանքում էին, ինչպես միշտ, չափը կորցրած Աննետայի ուրախ կամ վրդովված բացականչությունները. այդ աղջիկը՝ Սիլվիան, մանր-մունր բաներով Աննետային հավասարակշռությունից հանելու հատուկ ձիրք ուներ։ Վերևից հորաքույրը հատակը թխկթխկացնում էր ավելի զայրացած։ Այդ ժամանակ նրանք որոշում էին, որ «աչք կպցնելու» ժամանակն է։ Բայց հանվելու ընթացքում ժամանակը ձգձգում էին։ Նրանց սենյակներն իրար կից էին, քույրերը դռները չէին փակում և, շնչքը անընդհատ անցնելով, բլբլում էին և՛ յուրկաները հագին և՛ յուրկաները հանած։ Նրանք կզրուցեին իրենց մահճակալներից գուցե և ամբողջ գիշեր, եթե քունը, ինչպես դա լինում է երիտասարդ ժամանակ, հանկարծ վրա չհասներ և չդադարեցներ նրանց շաղակրատանքը։ Քունը վայրկենապես հարձակվում էր նրանց վրա, ինչպես ճուռակը՝ հավի ճուտին։ Եվ նրանք ընկնում էին բարձին, բերաններըկիսաբաց, նախադասությունն առանց վերջացնելու։ Աննետան անկողնում պառկում էր ձեռքերը այս ու այն կողմ նետած, քունը ծանր էր, հաճախ անհանգիստ, ահեղական, տեսիլքներով լեցուն. անընդհատ շարժվելուց նա սավանը ճմրթում ու տեղաշարժում էր, խոսում էր քնի մեջ, բայց երբեք չէր արթնանում։ Սիլվիան քնում էր թեթև, քիչ խրոտացնում էր (եթե դուք նրան ասեիք այդ մասին, նա ձեզ կնայեր վիրավորված արժանապատվությամբ), արթնանում էր, ականջ էր դնում, ծիծաղելով քրոջ՝ քնի մեջ ասած անկապ-անկապ բառերի վրա, երբեմն տեղից ելնում էր քայլում մահճակալի շուրջը, որտեղ փռված էր Աննետան և

դիզված էին ցած ընկած սավանները։ Սիլվիան խոնարհվում էր քրոջ վրա և գիշերային լույսի տակ (Աննետան չէր կարողանում առանց լույսի քնել) հետաքրքրությամբ զննում էր նրա ծանրացած, անթափանց դիմագծերը, նրա արտասովոր, երբեմն ողբերգական դեմքը, որը սուզված էր երազների ովկիանոսում։ Սիլվիան չէր ճանաչում նրան։

«Աննե՞տա։ Մի՞թե այդ դու ես, քույր իմ...»։

Նա ուզում էր հենց հիմա արթնացնել քրոջը, փաթաթվել նրա վզին։

— Գայլի ճուտ, դու այստե՞ղ ես...

Բայց նա համոզված էր, որ գայլի ճուտն այդտեղ է, և փորձ չէր անում քրոջն արթնացնել։ Նա հոգով այնքան մաքուր չէր, որքան իր ավագ, մոլեգին քույրը, ինքը նրանից ավելի սովորական էր, խաղում էր կրակի հետ, բայց չէր այրվում։

Նրանք երկա՜ր-երկար զննում էին իրար, երբ հագնվում կամ հանվում էին։ Հետաքրքիր էր համեմատություն անել։ Աննետան վայրի ամոթի նոպաներ էր ունենում, որոնք դվարճացնում էին Սիլվիային։ Սա շատ ավելի ազատ էր և դրա հետ միասին՝ մի տեսակ ավելի հասկանալի։ Հաճախ Աննետան դառնում էր պաղ, համարյա զոռոզամիտ։ Երբեմն դառնում էր տաքարյուն, իսկ մեկ-մեկ էլ առանց պատճառի լաց էր լինում։ Լիոնյան նախանձելի հավասարակշռությունը, որով նա առաջ այնպես հպարտանում էր, դավաճանում էր նրան։ Եվ ամենակարևորն այն էր, որ նա դրա համար չէր էլ ափսոսում։

Հիմա նրանք շատ բան անկեղծորեն խոստովանում էին միմյանց։ Կրկնել այդ ամենը միտք չունի։ Աղջիկներն, իրար հետ մտերմանալով, իրենց զրույցներում — և դա միանգամայն բնական է — շատ հանգիստ կարող են շոշափել ամենաանհավատալի բաները, բայց նրանց շուրթերին դրանք հնչում են զրնգե անմեղորեն։ Իսկ երբ այդ մասին պատմում են ուրիշները, ամբողջ անմեղությունը կորչում է։ Անկապ խոսակցությունների մեջ դրսևորվում էր նրանց բնավորությունների տարբերությունը, մեկի՝ բարեհոգի, անվնաս անբարոյականությունն ու անհոգությունը, մյուսի՝ խոր, կրքոտ, ամհանգիստ, էլեկտրականությամբ լիցքավորված

Խնտաբարս աշխարհը։ Լինում էին ընդհարումներ. թեթևամտությունն ու ուրախ չարաճճիությունը, որով Սիլվիան, թուքը կուլ տալով, խոսում էր սիրային գործերի մասին, զայրացնում էր Աննետային։ Նա հոգով համարձակ էր, բայց խոսքերի մեջ՝ զուսպ։ Թվում էր, թե նրա համար տհաճ է լսել այն, ինչը համապատասխանում էր իր սեփական մրտքերին։ Երբեմն նա պարփակվում էր մտայլ լռության մեջ, և ինքն էլ վատ էր հասկանում, թե ինչու։ Սիլվիան ամեն ինչ հասկանում էր շատ ավելի լավ։ Միանձնական կյանքի երկու շաբաթվա ընթացքում նա Աննետային ճանաչեց ավելի խոր, քան Աննետան ճանաչում էր իրեն։

Սակայն դա չէր նշանակում, թե նրա մտավոր կարողությունները Փարիզի ամենաառաջադիմական աղջկա միջին մակարդակից բարձր էին։ Նա բացառիկ սթափ և հեռատես, գործնական խելք ուներ։ Միայն թե նա դրանից չէր ստանում այն, ինչ կարող էր ստանալ, եթե գերադասեր ենթարկվել իր քմահաճույքներին։ Մյուս բոլոր բաներում նա ոչնչով չէր տարբերվում իր շրջապատի աղջիկներից։ Ճիշտ է, ամեն ինչ նրան հետաքրքրում էր, բայց խորապես ոչինչ չէր կանում նրան, եթե չհաշվել մոդաները. մինչդեռ մոգանե՞րն ուր, խորությո՞ւնն ուր։ Իսկ արվեստին՝ երաժշտությանը, նկարչությանը, գրականությանը, նա վերաբերվում էր այնպես, ինչպես վերաբերվում է ամենամիջակ մարդը։ Երբեմն նրա համար դրանք պարզապես հասկանալի չէին։ Աննետային հաճախ նրա ճաշակը տհաճություն էր պատճառում։ Սիլվիան դա նկատում էր և ասում.

— Օ՛ֆ, էլի ես անհարմար վիճակի մեջ ընկա... Ուրեմն, ասա, հիմա ի՞նչն է մոդայիկ բարձր հասարակության մեջ։

(Նկարի մասին նա խոսում էր այնպես, ինչպես խոսում են կանացի գլխարկի մասին)։

— ... Ինչո՞վ պետք է զմայլվել։ Ինձ պետք է միայն դա իմանալ, որից հետո ես ուրիշներից վատ չեմ երևա...

Բայց Սիլվիան միշտ չէր այդպես խաղաղասեր տրամադրված. պատահում էր այնպես, որ նա փրփուրը բերանին պաշտպանում էր որևէ բուլվարային վեպի հերոսի կամ գեհենիկ ռոմանս, դրա մեջ տեսնելով արվեստի կամ զգաց-

մունքի բնագավառի վերջին խոսքը։ Նա, այնուամենայնիվ, հարկադրեց ավագ քրոջը ընդունել արժանիքը կամ, ավելի շուտ, ընդունել ապագան այն ժանրերից մեկի, որը մինչև հիմա Աննետան համառորեն բացառում էր, թեև դա բոլորովին չգիտեր էլ. Սիլվիան խելքը թողնում էր կինոյի համար և անխտիր նայում էր բոլոր ֆիլմերը։

Ալնպես եղավ, որ Սիլվիան չկարողացավ հասկանալ մի գրքի գեղեցկությունն, որը նրանք երկուսն էլ կարդում էին, բայց որոշ էջեր նրա վրա ազդում էին ավելի ուժեղ, քան Աննետայի վրա—չէ՞ որ Սիլվիան կյանքն ավելի լավ գիտեր, իսկ քրոջը նրա անսքող ճշմարտությունը շփոթմունքի մեջ էր գցում։ Մինչդեռ կյանքը հենց Գրքերի Գիրքն է։ Ոչ բոլորն են ի վիճակի կարդալ այն։ Ամեն մեկն այդ Գիրքն իր մեջ է կրում, և այն գրված է ամբողջությամբ՝ առաջին տողից մինչև վերջինը։ Բայց դա հնարավոր է հասկանալ այն օրը միայն, երբ դաժան ուսուցիչը՝ Փորձը կասվարեցնի նրա լեզուն։ Սիլվիան դա սովորել էր մանկական տարիներից սկսած և կարդում էր սահուն։ Աննետան ուշ սկսեց սովորել։ Նա յուրացնում էր այն դանդաղ, բայց դրա փոխարեն նրա գիտելիքներն ավելի խորն էին։

Այն տարվա ամառը չտեսնված շոգ էր։ Օգոստոսի կեսին պարտեզի փայտյամ ծառերը դեղնեցին։ Տոթ գիշերներին Սիլվիան անհագորեն օդ էր ծծում։ Նրա ուժերը վերականգնվել էին, բայց դեռ գունատ էր և վատ էր ուտում։ Նա միշտ վատ ուտող էր եղել, և եթե ազատություն տային, չէր ճաշի, այլ շատ օրեր կրավարտվեր պաղպաղակով ու մրգերով։ Բայց Աննետան պատրաստ կանգնած էր։ Աննետան բանվանում էր։ Շատ հոգսեր ուներ Աննետան։ Եվ հա նա վերջիվերջո որոշեց ուղևորվել ամրը, թեև գնալը մի շաբաթից մյուսն էր հետաձգում, հոգու խորքում հուսալով, որ կհաջողվի դրանից խուսափել։ Նա ուզում էր, որ քույրը ամբողջ ամառը միայն իրեն պատկանի։

Նրանք մեկնեցին Գրիզոնի առողջարանը։ Այդ առողջարանի մասին Աննետան աքանչելի հիշողություններ էր պահպանել։ Նա շատ վաղուց էր եղել այնտեղ—հիանալի հյու-

թանոց՝ պարզ ու անպաճուճ, իսկ շուրջը՝ հոգին հանգրվանացնող հովվերգական ոճի պեյզաժներ։ Ամեն ինչի մեջ հին Եվեյցարիան էր զգացվում։ Ճիշտ է, մի քանի տարվա ընթացքում շատ բան փոխվել էր։ Հայտնվել էր հյուրանոցների մի ամբողջ շարք։ Մնում էր առել քամաշաղակ հոթելների մի փոքրիկ քաղաք։ Մարգագետիններում էին խրվում ավտոմոբիլային ճանապարհները, իսկ անտառներում լսվում էին տրամվայների զնգզնգոցները։ Աննետան ուզում էր թողնել ու փախչել։ Բայց չէ՞ որ նրանք մի ամբողջ օր ու գիշեր անկված էին եղել տոթ վագոնում, հոգնել էին։ Չգիտեին, թե հիմա ո՞ւր դնան։ Մարդու սիրտ միայն մի բան էր ուզում՝ փռվել ու անշարժ մնալ պառկած. թեև ամեն ինչ այստեղ փոխվել էր, բայց օդը առաջվա նման մաքուր էր, ինչպես բյուրեղը, և Սիլվիան վայելում էր այդ օդը այնպիսի հաճույքով, ինչպես փարիզյան փողոցների ժխորում պաղպաղակ վաճառողի սայլակի կողքին կանգնած պաղպաղակ էր ուտում՝ բաժակի միջից լիզելով ու առնելով բերանը։ Որոշեցին այսպես. մի քանի օր մնալ, մինչև այրող շոգերն անցնեն։ Իսկ հետո ընտելացան։ Եվ գտան, որ այստեղ շատ լավ է։

Սեզոնն աշխույժ էր։ Թենիսի խաղը դիտելու համար հավաքվել էր տարբեր ազգությունների անհանգիստ երիտասարդություն։ Կազմակերպվում էին պարի և ներկայացման երեկոներ։ Դղզացող փեթակը ժամանակն անց էր կացնում անգործության, սիրախաղերի և ցուցամոլության մեջ։ Աննետան առանց դրան էլ յոլա կգնար։ Բայց Սիլվիան ամբողջ սրտով ուրախանում էր, ցնծում հաճույքից, և դա փոխանցվում էր Աննետային։ Քույրերի տրամադրությունը հիանալի էր, և չէին ուզում հրաժարվել այն զվարճանքներից, որ երիտասարդությունն այնպես սիրում է։

Նրանք չահել էին, ուրախ, յուրաքանչյուրն իր ձևով հրապուրիչ, և անմիջապես երկուսին էլ շրջապատեցին երկրպագուները։ Աննետան գեղեցկացել էր։ Մաքուր օդում տեղի ունեցող սպորտային խաղերը ընդգծում էին նրա գրավչությունը։ Նա գեղեցիկ կազմվածք ուներ, ուժեղ էր, սիրում էր ման գալ, տարվում էր սպորտով, թենիսի փայ-

լոն խաղընկեր էր՝ անվրեպ աչք, ճկուն ոտքեր, ճարպիկ ձեռքեր, կայծակնային պատասխան-հարվածներ։ Սովորաբար Աննետային ժեստերը ժլատ էին, բայց անհրաժեշտ րոպեին նա տաքանում էր, և նրա պատասխան հարվածները շշմեցնում էին։ Սիլվիան հիանում էր և ծափ տալիս, երբ տեսնում էր Աննետայի թռիչքները։ Հպարտանում էր քրոջով։ Նա անկեղծ հիացմունք էր ապրում, չէ՞ որ այդ ասպարեզում նույնիսկ փորձեր չէր անում մրցել քրոջ հետ. նույնը փարիզուհին ստեղծված չէր սպորտային խաղերի համար, և առհասարակ այդ խաղերը քիչ էին գրավում նրան— անընդհատ պետք է շարժվեր։ Սիլվիան գտնում էր, որ շատ ավելի հաճելի է,— և որ կարևոր է, ավելի խելամիտ,— մնալ որպես հանդիսատես։ Նա զուր տեղը ժամանակ չէր վատնում։

Սիլվիան իր շուրջը պալատականների խմբակ ստեղծեց և թագավորում էր այնտեղ այնքան անկաշկանդ, կարծես ամբողջ կյանքը հենց դրանով էր զբաղվել։ Աղվեսն ընդօրինակեց երիտասարդ բարձրաշխարհիկ կանանց, որոնց հետևում էր, բարձրամտությունը, սեթևեթանքը և այն ամենը, ինչի փոխ առնելը հեշտ էր։ Արտաքուստ նա անմատչելի էր, համայնորեն ցրված, սակայն ականջները սրած, ոչինչ չէր վրիպում իր ուշադրությունից։ Բայց նրա համար լավագույն տիպարը առաջվա նման մնում էր Աննետան։ Նա անսխալ հոտառություն ուներ, և կարողանում էր շատ ու շատ մանրուքներ ոչ միայն ընդօրինակել, այլև, ընդօրինակելով, փայլ տալ դրանց, փոքր-ինչ ձևափոխելով և նույնիսկ երբեմն հասցնելով դրանք հակադրության—օ՜, միայն թե դուք տա, որքա՜ն է նրբաճաշակ բարձրաշխարհիկ կանոններից այդպիսի աննշան հեռացումը։ Նա հիմար չէր և երբեք դուրս չէր գալիս այն բնագավառի սահմաններից, որտեղ իր ոտքերի տակ ամուր հող էր զգում։ Նրա շարժուձևվելքը, վարքը, տոնը—բոլորը պարզապես անթերի էին։ Նուագի և շարժուձևերի նույնը յուրօրինակությունն ունեցող չարենկիրք աղջիկ։ Աննետան չէր կարողանում ծիծաղը զսպել, երբ լսում էր, թե քույրը ինչպիսի կախարդական ինքնավստահությամբ է իր երկրպագուների առաջ ի ցույց դնում այն բոլոր տեղեկությունները, որոնց բեկորներով ին-

քը քիչ առաջ էր լցրել նրա գլուխը։ Սիլվիան խորամանկորեն նրան աչքով էր անում. կարիք չկա զրույցը խորացնելու։ Չնայած իր խելքին ու լավ հիշողությանը, Սիլվիան կարող էր անզգուշաբար ընկնել տհաճ վիճակի մեջ, բայց նա այդ թույլ չէր տալիս, զգոն հետևում էր իր սահմաններին։ Բացի այդ, նա կարողանում էր խաղընկերներ ընտրել։

Համարյա նրանց բոլորին էլ՝ օտարերկրացի երիտասարդ սպորտսմեններին՝ անգլո-սաքսոնացիներին, ռումինացիներին, ավելի շատ խաղի սխալներն էին տհաճություն պատճառում, քան լեզվական սխալները։ Կանանց խմբակի սիրելին մի իտալացի էր։ Նա շատ հնչեղ ազգանուն ուներ, սերում էր հին լոմբարդական մի տոհմից (տոհմը շատ վաղուց արդեն հանգել էր, բայց չէ՞ որ ազգանունը չի անհետանում)։ Նա պատկանում էր այն տիպերին, որոնք այնքան հաճախ են հանդիպում Ապենինյան թերակղզու ոսկի երիտասարդության մեջ և որոնց բնորոշ են ոչ այնքան ազգային գծերը, որքան՝ դարաշրջանի. նրանց մեջ հետաքրքիր խառնուրդ ես տեսնում Հինգերորդ ավենյուի ամերիկացու և տասնչորսերորդ դարի իտալացի կոնդոտիերի, որն ընդհանրապես երբեմն արտաքինին վնհուիյուն է տալիս (օպերային գերասանի վնհուիյուն)։ Տուլլիոն, որը մի գեղեցիկ, բարձրահասակ, պարթև, բարեկազմ, կրակոտ հայացքով, կլոր գլխով և սափրված երեսով, մեծ, տիրական քիթ ունեցող, ուռչող քթանցքներով և ծանր ծնոտով թուխ երիտասարդ էր, մանր էր գալիս փափուկ քայլվածքով և ուսերը շտկած։ Գոռոզամտությունը, շողոքորթ քաղաքավարությունը և կոպտությունը,— այդ ամենը իրար էր խառնվել նրա շարժուձևերի մեջ։ Մի խոսքով, հմայիչ տղամարդ էր։ Կանացի սրտերը դրվում էին նրա ոտքերի տակ—կուացի՛ր և վերցրո՛ւ։ Բայց նա կռանալու նեղություն չէր տալիս իրեն։ Նա սպասում էր, որ այդ սրտերը մատուցվեն իրեն։

Հավանական է, իոկ այն պատճառով, որ Աննեսան չառաջարկեց նրան իր սիրտը, Տուլլիոյի ընտրությունը կանգ առավ հենց նրա վրա։ Տուլլիոն, որ առաջնակարգ թենիս խաղացող էր, գնահատեց ուժեղ աղջկա ֆիզիկական հատկություններն, իսկ զրուցելով հետը, իմացավ նաև, որ նա

առհասարակ սիրում է սպորտը։ Նրանց ճաշակները համընկնում էին. ձիավարությամբ, թիավարությամբ Աննետան տարվում էր այն նույն կրքոտությամբ, որը զնում էր իր բոլոր գործողությունների մեջ։ Տուլլիոն իր խոշոր քթով զգաց, որ եռանդի առատությունը ազդել է Աննետայի աղջկական մարմինը, և ցանկացավ սիրանալ նրան։ Աննետան, կռահելով նրա մտադրությունը և գերված էր զգում իրեն, և վիրավորված։ Մարմնական ուժերը, ճնշված գրեթե ճգնավորական կյանքի տարիներով, արթնանում էին հրաշալի ամռան բոցերի մեջ, լոկ վայելքների մասին մտածող երիտասարդների շրջապատում, սպորտային աշխույժ խաղերի մեջ։ Սիլվիայի հետ անցկացրած վերջին շաբաթները, նրանց ազատ զրույցները, մի տեսակ անսահման քնքշությունը, որ լցրել էր Աննետայի էությունը,— այդ բոլորը միասին շփոթի էին մատնում նրա և մարմինը և հոգին, որոնք ինքն՝ Աննետան այդքան վատ, այդքան քիչ էր ճանաչում։ Ապահով պաշտպանություն չուներ նրա տունը կրքերի հարձակումից։ Աննետան առաջին անգամ զգաց, թե ինչ է նշանակում զգայական տենչի սրությունը։ Ամոթը, վրդովմունքը համակեցին նրան, թվում էր, թե իրեն ապտակել են։ Սակայն կիրքը դրանից չէր մեղմանում։ Պետք էր վազել, մինչդեռ նա հպարտորեն, սառը տեսքով և սրտի թրթիռով առաջ էր շարժվում։ Իսկ տղան տուփանքը ծածկում էր անբասիր ակնածությամբ, դարձավ էլ ավելի գրավիչ և հրապուրվեց ավելի ուժեղ, երբ տեսավ, որ աղջիկը հասկացել է իրեն, որ նա ընդդիմանում է։ Եվ ահա սկսվեց ուրիշ մրցախաղ՝ յուրովի մոլեգին։ Նրանք միմյանց հանդուգն մարտահրավեր նետեցին, մտան դաժան մենամարտի մեջ, թեև իրենցից ոչ մեկը դա չէր նկատում։ Երբ Տուլլիոն և ակնածանքով և միաժամանակ տիրականորեն խոնարհվում էր Աննետայի առաջ և համբուրում նրա ձեռքը, երբ Աննետան ժպտում էր նրան գոռոզաբար և հրապուրիչ, նա Տուլլիոյի աչքերում կարդում էր.

«Դու իմն ես լինելու»։

Եվ Աննետայի փակ շրթունքները պատասխանում էին.

«Երբե՞ք»։

Սիլվիան լուսանի հայացքով հետևում էր մենամարտին,

նա զվարճանում էր, թայց և այրվում էր մասնակցություն ունենալու ցանկությունից։ Ի՞նչ մասնակցություն։ Ճիշտն ասած, նա ինքն էլ այդ չգիտեր։ Հենց այնպես, պարզապես զվարճանալ էր ուզում և, իհարկե, ինքնըստինքյան հասկանալի է, փրկել Աննետային։ Տուլլիոն սքանչելի է։ Աննետան նույնպես սքանչելի է։ Ինչպե՞ս է զարթարում նրան ուժեղ զգացումը։ Ինչպիսի՞ այրող, մոխրացնող հպարտություն, ծկիկ, որ պատրաստ է մարտի նետվելու։ Մերթ հանկարծ նրա այտերը ողողում են կարմիր ալիքները, մերթ՝ ետ են քաշվում, և Սիլվիան կարծես տեսնում էր, թե ինչպես են այդ ալիքները դողի նման անցնում նրա մարմնով... Իսկ տղամարդը պխոչին սուզվել է խաղի մեջ...

«Ոչինչ դուրս չի գա, տղաս,— նա քոնը չի դառնա, այո, այո, չի՛ դառնա, եթե չուզենա... Իսկ, գուցե, ուզո՞ւմ է։ Թե՛ չի ուզում։ Որոշիր, Աննետա։ Տղան տարված է։ Նվաճի՛ր նրան։ Անխելք։ Չգիտի ինչպես... Շատ լավ, մենք կօգնենք նրան...»։

Գովեստները, որոնք Սիլվիան շռայլում էր Աննետայի հասցեին, նրան մտերմացրին Տուլլիոյի հետ։ Նրանք երկուսով հիանում էին Աննետայով։ Իտալացին անվիճելիորեն սիրահարված էր նրան։ Սիլվիան ցնծում էր և, աչքերը շողշողացնելով, ավելի ու ավելի էր մտնում դերի մեջ։ Նա վարպետորեն գովաբանում էր Աննետային և ոչ պակաս վարպետությամբ ինքն էլ զինվում իր բոլոր դյութանքներով. դրանք գործի էին դրված և այլևս հնարավոր չէր կասեցնել... իզուր էր նա իր այդ դյութանքներին համոզում.

«Հիմա եկեք խաղաղվենք։ Բավական է։ Մենք չափազանց հեռու գնացինք...»։

Այդ դյութանքները ոչինչ չէին լսում, մնում էր մի բան. նրանց գործողության ազատություն տալ... դա շատ դվարճալի էր։ Եվ, իհարկե, այդ հիմարը խելագար բռնկվեց։ Ինչքա՜ն անխելք են տղամարդիկ։ Տուլլիոն երևակայում էր, թե իր հետ սիրալիր են գեղեցիկ աչքերի համար... Ճիշտ է, նրա աչքերը գեղեցիկ էին... Հիմա ինչպե՞ս կվարվի ինքը։ Ջինիկը այս ու այն կողմ է նետվում երկու կարծի միջև։

Չվինի՞ ուզում է երկուսն էլ միանգամից կրակ տալ։ Ի՞նչ կվճռի «Ապա բարեկամս, ընտրիր»։

Սիլվիան ոչինչ չէր անում, որպեսզի հեշտացնի տղայի ընտրությունը, նա նսեմանում էր Աննետայի առաջ։ Աննետան՝ Սիլվիայի առաջ։ Սակայն Աննետան քնազդորեն կրկնապատկեց իր ջանքերը, որպեսզի ամվերում թողնի Սիլվիային։ Քույրերը քնքշորեն սիրում էին իրար։ Սիլվիան հպարտանում էր, որ Աննետային գովաբանում են, Աննետան հպարտանում էր նրանով, թե ինչպիսի տպավորություն է գործում Սիլվիան։ Նրանք խորհրդակցում էին միմյանց հետ։ Հետևում էին, որ ամեն մեկի արգուզարդը պատշաճ լինի իրեն։ Համոզված, ըստ հակադրության, մեկը մյուսի արտաքինի մեջ ընդգծում էր այն, ինչ ավելի լավ է։ Հյուրանոցում երեկույթների ժամանակ իրենց կողմն էին գրավում բոլորի հայացքները։ Սակայն այդ հայացքները ակամա բորբոքում էին նրանց միջև մրցակցությունը։ Ու թեև նրանք այդ բանը իրենց արգելում էին, բայց պարերի ժամանակ մի քույրը իրենից անկախ դնահատում էր այն հաջողությունը, որից օգտվում էր մյուսը։ Հատկապես այն մարդու մոտ, որը, իսկապես էլ, զբաղեցնում էր նրանց մտքերը շատ ավելի, քան իրենք կուզեին... Տուլլիոն նրանց մտքերը սկսեց ավելի շուտ զբաղեցնել այն ժամանակից ի վեր, երբ դադարից հասկանալ, թե քույրերից ո՞րն է, արդյոք, ավելի շատ զբաղեցնում իր մտքերը։ Աննետայի տրամադրությունը փչացավ, երբ նա տեսավ, թե Տուլլիոն ինչպես է պտույտ գալիս քրոջ շուրջը։ Երկուսն էլ հիանալի պարում էին, յուրաքանչյուրն իր ոճով։ Աննետան աշխատում էր հաստատել իր գերազանցությունը։ Եվ, իհարկե, պարում էր ավելի լավ, ըստ գիտակների։ Բայց Սիլվիան իրեն պահում էր ավելի անկաշկանդ, պարում էր ավելի մեծ հափշտակությամբ, իսկ երբ հասկացավ Աննետայի մտադրությունը, ապա պարզապես դարձավ անդիմադրելի։ Եվ Տուլլիոն չդիմացավ։ Աննետան տեսավ, որ լքված է, և դա ցավ պատճառեց իրեն։ Ամառային մի սքանչելի գիշեր Տուլլիոն մի քանի անգամ իրար հետևից պարեց Սիլվիայի հետ, իսկ հետո իրար հետ դուրս եկան շաղակրատելով ու ծիծա-

ղելով։ Աննետան չտիրապետեց իրեն, ինքը նույնպես դահլիճից դուրս եկավ։ Նա իրեն թույլ չտվեց նրանց հետևից գնալ և փորձեց նայել պարտեզ դուրս եկող ապակեպատ պատշգամբից։ Եվ տեսավ նրանց։ Տեսավ, որ նրանք գնում են ծառուղիով, իրար սեղմված, որ համբուրվում են։

Բայց դա այնպես չվշտացրեց նրան, ինչպես այն, որ հետո տեղի ունեցավ։ Աննետան բարձրացավ իր սենյակը և նստեց, առանց լույսը վառելու։ Հանկարծ ցնծուքյամբ ներս վազեց Սիլվիան և, տեսնելով, որ քույրը միայնակ նստած է խավարում, խորը հառաչեց, սկսեց շոյել նրա ձեռքերը, պաչպչել այտերը։ Ինչպես միշտ, հազար ու մի հաճելի դատարկ բաներ ասաց։ Իսկ երբ Աննետան, ասելով, որ ինքը ստիպված եղավ Թողնել-դուրս գալ հանկարծակի սկսած միգրենի պատճառով, հարցրեց քրոջը, թե ինչպես անցավ երեկոն, և ինքը զբոսնե՞ց արդյոք Տուլիոյի հետ, Սիլվիան, անմեղ տեսք ընդունելով, պատասխանեց, որ չի զբոսնել, որ գաղափար անգամ չունի, թե Տուլիոն ինչ եղավ, որ առհասարակ Տուլիոն արդեն ձանձրացրել է իրեն, որ բացի այդ, ինքը չի սիրում չափից ավելի գեղեցիկ տղամարդկանց, խակ Տուլիոն, դրա հետ միասին, նաև պճնամոլ է, նաև թուխ... Եվ վախս երգելով, սկսեց պատրաստվել քնելու։

Աննետան աչք չփակեց։ Սիլվիան քնեց գերազանց։ Նա նույնիսկ չէր էլ կասկածում, այն փոթորկի մասին, որ հենց ինքն էր առաջացրել Աննետան հայտնվեց շղթաների կրտրած գետերի իշխանության ներքո։ Այն ամենը, ինչ տեղի ունեցավ, աղետ էր։ Կրկնակի աղետ։ Սիլվիան դարձավ նրա սիրելյալը։ Սիլվիան սուտ էր։ Իր սիրելի՞ Սիլվիան։ Սիլվիան՝ խնդությունը, հույսը... Ամեն ինչ կործանվեց։ Ինքը այլևս չի կարող նրան սիրել... Չի՞ կարող սիրել։ Բայց մի՞թե կարող է, մի՞թե կարող է չսիրել նրան։ Օ, ինչպես արմատավորվեց իր մեջ այդ սերը, որն ավելի ուժեղ է, քան ինքը կարծում էր։ Բայց Մի՞թե կարելի է սիրել այն, ինչ ատում ես։ Ախ հա՛, Սիլվիայի դավաճանությունը պետք բո՛լորը չէ։ Ինչ-որ մի բան էլ է կատարված... «Ինչ-որ մի բան էլ... մի բան էլ... Բայց ի՞նչ»։

Հա՛։ Այդ գործին խառնված է մի մարդ, որին Աննետան

չէր հարդում, որին Աննետան չէր սիրում և որին հիմա սիրում է։ Սիրո՞ւմ է։ Ոչ։ Որին ուզում է նվաճել։ Հպարտությունն ու խանդը տանջում էին նրան, պահանջում էին, որ ինքը գերեր Տուլլիոյին, որ դուրս քաշեր նրան ուրիշի ձեռքերից, և որ գլխավորն է, թույլ չտար նրան, այդ ուրիշին, պոկել Տուլլիոյին իր ձեռքից... (ուրիշը— ահա թե ինչ էր դառել Սիլվիան Աննետայի համար)։

Այդ դիշեր Աննետան մի ժամ էլ նույնիսկ չքնեց։ Սավաններն այրում էին մաշկը։ Իսկ հարևան մահճակալից լսվում էր թեթև ֆսֆսոց. այնտեղ քնել էին անմեղության քնով։

Որր առավոտյան նրանք կանգնեցին իրար դեմ, Սիլվիան իսկույն տեսավ, որ ամեն ինչ փոխվել է, բայց չհասկացավ, թե ինչ է կատարվել։ Աննետան, որի աչքերի տակ շրջանակներ կային, որը գունատ էր, մռայլ, կոռոզ, բայց տարօրինակությանը հասնելու չափ գեղեցկացած (և գեղեցկացած, և տգեղացած—կարծես ինչ-որ կոչով հանկարծ ուռքի էին ելել նրա բոլոր թաքնված ուժերը), Աննետան, հպարտությամբ զրահապատված, սառը, թշնամական, ինքնամփոփ նայեց Սիլվիային, լսեց, թե նա ինչպես է շաղակրատում, ըստ իր սովորության, ամեն մի դատարկ բանի մասին, հազիվ լսելի բարևեց նրան ու դուրս եկավ սենյակից... Սիլվիան կրմկրմաց կես խոսքի վրա և նույնպես դուրս գնաց, հայացքը չկտրելով Աննետայից, որը առանդուզքով ցած էր իջնում։

Նա ամեն ինչ հասկացավ։ Աննետան տեսավ նախասրահում նստած Տուլլիոյին և շարժվեց նրա կողմը։ Տուլլիոն նույնպես հասկացավ, որ դրությունը փոխվել է։ Աննետան նստեց նրա կողքին։ Սկսեց խոսել ամենաանկյան բաների մասին։ Գլուխը բարձր պահած, արհամարհանքով լեցուն, Աննետան նայում էր մի կետի և աշխատում էր հայացքով չհանդիպել Տուլլիոյի հետ։ Սակայն ուղան չէր կանգնում. Աննետայի հայացքը ձգտում էր իր կողմը։ Կարծես խուսափելով ամենապայծառ լույսից, Աննետայի աչքերը, կապտավուն կոպերով կիսափակ, հարցնում էին.

«Ուզո՞ւմ ես, որ ես քոնը լինեմ»։

Իսկ Տուլլիոն զննում էր իր եղունգները, ինքնագոհ տես-

քով ինչ-որ հիմարություններ էր ասում և, որձ կապավի նման մերթ ընդ մերթ աչքը գցելով Աննետայի մարմնին, ձիգ ատինքներին, փորձում էր խմանալ.

«Չէ՞ որ դա ինքդ էլ ես ուզում»։

«Ես ուզում եմ, որ դո՛ւ ուզես»,— եղավ պատասխանը։

Սիլվիան չէր տատանվում։ Նա պատյտ տվեց նախասրահում, մոտեցավ ու նստեց Աննետայի ու Տուլիոյի մեջտեղը։ Աննետան զայրացած էր, հայացքը մատնեց նրան— մի հայացքը. դա բավական էր։ Նա դիմահար նայեց քրոջը, և Սիլվիան նրա հայացքում արհամարհանք կարդաց։ Նա կկոցեց աչքերը և ձևացրեց, թե ոչինչ չի նկատում, բայց մազերը ցցեց, ինչպես կատուն, որի միջով էլեկտրական հոսանք են թողնում. նա ժպտում էր, մինչդեռ պատրաստ էր կծելու։ Մենամարտն սկսվեց, մենամարտ, որ տեղի էր ունենում երկրի միջև, և կեղծավորաբար սիրալիր էր։ Թվում էր, Սիլվիան դադարել է քրոջ համար գոյություն ունենալուց. Աննետան ուշադրություն չէր դարձնում նրա խոսքերին, նրա գլխի վրայով խոսում էր Տուլիոյի հետ, որը իրեն շատ անհարմար վիճակում էր զգում։ Իսկ եթե մեծ քույրը այնուամենայնիվ ստիպված էր լինում լսել փոքր քրոջը, որովհետև վերջինս անընդհատ բլբլում էր, Աննետան ժպիտով կամ ծաղրական նկատողությամբ ընդգծում էր լեզվական այն մեղանչումները, որոնցով դեռ երփներանգում էր Սիլվիայի խոսակցությունը (աղվեսին դեռևս չէր հաջողվել դրանք դուրս գցել իր բառապաշարից)։

Սիլվիան մահու չափ վիրավորված էր և այլևս Աննետայի մեջ քրոջ չէր տեսնում, տեսնում էր միայն ախոյանի։ Նա մտածում էր.

«Սպասի՛ր, ես քեզ դեռ ցույց կտամ»։

Փոքր-ինչ բարձրացնելով վերևի շուրթը, նա ցույց տվեց ժանիքները։

«Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»... Ոչ, ցույց ակն ընդ ական...»։

Եվ կռվի նետվեց։

Որքա՜ն անզգույշ էր Աննետան։ Սեփական արժանապատվության զգացումը չէր նեղում Սիլվիային. բոլոր զեն-

քերը նրա համար ընդունելի էին, միայն թե հաղթեր Աննեաան, կաշկանդված լինելով հպարտության զրահով, ստրացված կզակր, երե իր զգացմունքի վերաբերյալ Տուլլիոն նույնիսկ որևէ բան նկատեր։ Իսկ Սիլվիային այդպիսի մանրուքները չէին նեղում. թող կավալերը տեսնի, թե իրենք ինչպես են մրցության մեջ մտել. դա նրան կշռյի։

«Ուրեմն, դու ի՞նչն ես դերադասում։ Քեզ հիանալի արհամարհա՞նքն է դուր գալիս, թե՞ երբ քեզանով սքանչանում են...»։

Նա գիտեր. տղամարդը անափառ կենդանի է։ Տուլլիոն շողոքորթության սիրահար էր։ Իսկ Սիլվիան շողոքորթելու մեջ՝ շռայլ։ Միամիտ, հանգիստ անամոթությամբ խորամանկը գովաբանում էր կուրորտային երիտասարդ գատտյամելատայի անթերիությունը. նրա կազմվածքը, խելքը և հագուստը։ Հագուստը՝ գլխավորապես,— նա գլխի էր ընկել, որ հագուստը Տուլլիոն ամեն ինչից բարձր է գնահատում։ Իսկ գովասանքի համար նա մեռած էր։ Հասկանալի է, նա ինքը գիտեր, որ գեղեցիկ է, իսկ մեծահռչակ անունը մասամբ փոխարինում էր խելքին։ Բայց ահա կոստյումը Տուլլիոյի սեփական ստեղծագործությունն էր, նա չէր կարող անտարբեր վերաբերվել ամենագետ փարիզուհու հավանությանը։ Սիլվիան, գիտակ մարդու հայացքով նայելով Տուլլիոյին, մտքում ծիծաղում էր նրա պարզամիտ ճաշակի և ցայտուն զուգակցումների հանդեպ ունեցած սիրո վրա, բայց հիանում էր նրանով ամբողջությամբ՝ ոտքից մինչև գլուխ։ Աննեաան ամոթից ու զայրույթից այրվում էր—քույրն այնքան ակնհայտ էր խորամանկում, որ նա հարց էր տալիս իրեն.

«Ինչա՞ս է Տուլլիոն այս բոլորը տանում»։

Իսկ Տուլլիոն տանում էր գերազանց։ Նա ըմբոշխնում էր այդ շողոքորթությունը։ Սիլվիան նայելով նրան ոտքից մինչև գլուխ, նարնջագույն փողկապից անցավ բաց մանիշակագույն գոտուն, կանաչ ոսկեզող գուլպաներին և այդտեղ շունչ առավ. Սիլվիան իր նկատառումներն ուներ. հիանալով Տուլլիոյի ոտքերի նրբագեղությամբ (Տուլլիոն դրանով շատ էր պարծենում), նա ի ցույց դրեց իր գեղեցիկ ոտքերը։ Ջարտճճի սեթևեթանքով նա դրանք մոտեցրեց Տուլլիոյի ոտքե-

րին, սկսեց համեմատել, բացելով իր ոտքերը մինչև ծընկները։ Հետո շրջվեց դեպի Աննետան, որը արհամարհանքով ետ էր ընկել ճոճաթոռին, և կախարդական ժպիտով ասաց.

— Հոգյա՛կս, ապա մի ցույց տուր քո ոտքերը։ Եվ թափող բարձրացրեց նրա շորի փեշը—երևացին անտաշ, տակառի նման հաստ կոճերը և ապա ոչ այնքան երբագեղ ոտքերը։ Միայն երկու վայրկյանով Աննետան դուրս պրծավ նենգավոր ճանկերից, որոնք, միանգամայն գոհ իրենց արածից, թաքնվեցին։ Տուլիոն ամեն ինչ տեսավ...

Սիլվիան դրանով չհանգստացավ։ Ամբողջ առավոտը նա վարպետանում էր համեմատությունների մեջ, այդ համեմատություններն անում էր մի տեսակ անզուշորեն, բայց դրանք Աննետայի օգտին չէին։ Կարծես կոչ անելով Տուլիոյի նուրբ ճաշակին, Սիլվիան մի գլուխ նրան խնդրում էր նայել օձիքին, բլուզին կամ շարֆին, տղայի ուշադրությունը գրավելով այն բաների վրա, որոնք իր մեջ ամենադեղեցիկն էին, իսկ Աննետայի մեջ՝ ամենավատը։ Աննետան դողում էր և գաղտնաքող տեսքով հազիվ էր իրեն զսպում, որ քրոջը չխեղդի։ Սիլվիան, ինչպես միշտ կախարդանքով լեցուն, երկու դավաճանական արարքների միջև՝ մատները շուրթերին էր սեղմում և Աննետային ուղարկում օդային համբույր։ Բայց ժամանակ առ ժամանակ նրանց հայացքների կայծակները խաչաձևում էին։

(Աննետա)։ «Արհամարհում եմ քեզ»։

(Սիլվիա). «Հնարավոր է, բայց նա ի՛նձ է սիրում»։

«Ո՛չ Ո՛չ»— Ջարմանում էր Աննետան։

«Այո՛, Այո՛»— Պնդում էր Սիլվիան։

Երանք չար բորբոքվածությամբ իրար երես էին նայում։ Աննետան ի վիճակի չէր երկար թաքցնել իր անբարյացակամությունը ժպիտի տակ, ինչպես օձին՝ ծաղիկների տակ։ Եվս մի քանի րոպե—և նա կբղավեր։ Հանկարծ նա լքեց մարտադաշտը։ Հետացավ գլուխը բարձր պահած, վերջում Սիլվիայի վրա նետելով իր հայացք-մարտահրավերը։ Սիլվիայի ծաղրական աչքերը պատասխանեցին.

«Կապրենք՝ կտեսնենք»։

Ճակատամարտը զվարճացող հասարակության հայացք-

նների սակ շարունակվում էր հաջորդ և հետագա մյուս օրե-
րին. ամբողջ հյուրանոցը նկատեց, որ քույրերը պայքար են
մղում, և պարապ ու թունոտ աչքերը դարանամուտ էին լի-
նում նրանց։ Գրազ էին գալիս։ Մրցակիցներն այնքան էին
կլանված իրենց խաղով, որ ուշադրություն չէին դարձնում
մյուսների խաղին։

Բանն այն էր, որ նրանց համար դա արդեն խաղ չէր։
Սիլվիան նույնպես լրջորեն տարվեց։ Ինչ-որ չար մի ուժ
գժտում էր քույրերին, գրգռում էր նրանց ցանկասիրու-
թյուններ։ Տուլլիոն, հպարտ իր հաղթանակով, ոչ մի ուժ չէր
գործադրում կրակը բորբոքելու համար։ Նա իսկապես գե-
ղեցիկ էր, ոչ հիմար և այրվում էր այն ցանկությամբ, որ
բորբոքել էր. արժեր, որ նվաճված լիներ։ Նա ինքը դա լավ
գիտեր։

Երեկոները մրցակից քույրերը հանդիպում էին իրենց
սենյակում։ Նրանք ատում էին միմյանց, բայց այնպես էին
ձևացնում, իբրև թե չգիտեն։ Նրանց մահճակալները դրված
էին կողք-կողքի, և գիշերները իրար մոտ գտնվելը անտա-
նելի կլիներ, եթե ամեն ինչ ասեին իրար։ Չէին խուսափի
նաև բամբասանքներից, որից վախենում էին։ Նրանք հար-
մարվել էին այսպես. դուրս ու ներս էին անում տարբեր
ժամանակ, այլևս չէին խոսում, ձևացնում էին, թե իրար
չեն տեսնում, իսկ եթե դա պարզապես անհնար էր լինում,
շուտ սաթը ատում էին «բարի լույս», «բարի երեկո», կար-
ծես ոչինչ էլ չէր պատահել։ Ամենից ազնիվը, ամենից խե-
լացին այն կլիներ, որ բացատրվեին։ Բայց նրանք այդ չէին
ուզում։ Չէին կարող։ Եթե կիրքը համակել է կնոջը, ազնվու-
թյան մասին նույնիսկ ավելորդ է խոսել։ Դատողության մա-
սին՝ առավել ևս։

Կիրքը Աննետայի համար թույն էր դարձել։ Համբույրը,
որ մի անգամ երեկոյան ծառուղու ոլորանին Տուլլիոն, օգ-
տվելով իր իշխանությունից, բռնի կերպով դրոշմեց հպարտ
աղջկա շուրթերին, որը ժամանակին չկարողացավ պաշտ-
պանվել, ճեղքեց կրքի ամբարտակը։ Նա վիրավորվել էր
դրանից, անողոքացել, նա կռվում էր ինքն իր հետ։ Սակայն
Աննետան չգիտեր, ինչպես դիմադրել. չէ՞ որ կրքի հեղեղը

նրան համակել էր առաջին անգամ։ Վա՛յ պաշտպանվող սրտերին։ Երբ նրանց մեջ է խուժում կիրքը, ամենաառաքինին դառնում է ամենամատչելին...

Այդ անքուն գիշերներից մեկի ժամանակ, գիշերներ, որոնք այնպես տանջում էին նրան, Աննետան սկսեց ննջել։ Ճեև կարծում էր, թե արթուն է։ Նա երազում տեսավ, որ իբր ինքը բաց աչքերով պառկած է անկողնում, բայց տեղից շարժվել չի կարողանում, կարծես ձեռքերն ու ոտքերն կապված լինեն։ Նա գիտի, որ Սիլվիան իր կողքին քնած է ձևանում և որ գալու է Տուլլիոն։ Ահա նա լսեց, թե ինչպես միջանցքում հատակը ճռճռաց, ինչպես գողգող եկող ոտնաձայները ավելի ու ավելի մոտեցան իրեն։ Աննետան տեսավ. Սիլվիան բարձրանում է տեղից, սավանի տակից նրա ոտքերը երևացին, հետո վեր է կենում, սահում դեպի դուռը, որն ինչ-որ մեկը կիսաբաց է արել։ Աննետան նույնպես ուզում է վեր կենալ, բայց չի կարողանում։ Սիլվիան, կարծես լսելով այդ, շրջվում է, վերադառնում դեպի իր անկողինը, նայում է Աննետային, խոնարհվում է նրա վրա, զննում նրա դեմքը։ Բայց չէ՞ որ դա ամենևին էլ Սիլվիան չէ, նույնիսկ նման էլ չէ նրան։ Եվ այնուամենայնիվ դա Սիլվիան է. նրա թունոտ ծիծաղը, նրա սուր ատամները, երկար սև մազերը, առանց գանգրացման, ուղիղ, կոշտ, որոնք թափվեցին Աննետայի ճակատին, երբ Սիլվիան կռացավ, մոտեցրեց, աչքերը։ Աննետան լեզվին ձիու մազի համ զգաց, զգաց նրա տաք հոտը։ Ախոյանի դեմքը հետզհետե ավելի է մոտենում։ Սիլվիան ետ է գցում վերմակը։ Աննետան զգում է, որ նրա սուր ծունկը խրվում է իր ազդրը։ Շունչը կտրվում է։ Սիլվիայի ձեռքին դանակ կա, որի պաղ բերանը խուտուտ է ածում Աննետայի կոկորդը, սա դիմադրում է, ծղրտում... Աննետան արթնացավ. նստած է իր անդորր սենյակում, մահճակալին, սավանները ծռվել էին։ Սիլվիան խաղաղ քնած է։ Աննետան, սպասելով, մինչև սրտի խփոցըն անցնի, ականջ է դնում քրոջ համաչափ շնչառությանը և դեռ շարունակում է ատելությունից ու սարսափից սառմրակել...

Աննետան ատում էր... բայց ո՞ւմ։ Իսկ ո՞ւմ էր սիրում։ Նա դատապարտում էր Տուլիոյին, չէր հարգում նրան, վախենում էր և ամենևին, ամենևին չէր վստահում նրան։ Եվ ահա այդ մարդու պատճառով, որին նա դեռ երկու շաբաթ առաջ չէր ճանաչում, որը իր համար պարզապես ոչ էր, հիմա ինքը պատրաստ է տալ քրոջը, որին աշխարհում ամենից շատ էր սիրում, որին սիրում է նաև հիմա... (Ո՛չ։ Այո՛։ Որին սիրել է միշտ...) Հանուն այդ մարդու նա պատրաստ էր, առանց երկար մտածելու, զոհաբերել իր կյանքը։ Արդյոք ինչպե՞ս... Ինչպե՞ս այդ բոլորը տեղի ունեցավ։

Աննետան զարհուրեց, բայց կարողացավ միայն մի բան անել. որոշել, թե որքան է ամենազոր գայթակղությունը։ Լինում էին րոպեներ, երբ առողջ բանականության փայլատակումը, արթնացած ծաղրը, նախկին քնքշության վերադարձը դեպի Սիլվիան վեր էին բարձրացնում նրա գլուխը հոսանքի խորքից։ Բայց բավական էր մի խանդոտ հայացք, բավական էր տեսնել Սիլվիայի հետ քչփչացող Տուլիոյին, և Աննետան նորից էր սուզվում...

Նա դիրքերը հանձնում էր, և դա պարզ էր։ Այդ պատճառով էլ փոթորկվում էր նրա կիրքը։ Նա ճարպկություն չուներ։ Չէր կարողանում թաքցնել արժանապատվության վիրավորվածությունը։ Տուլիոն, այդ բարի արքայազնը, համաձայն էր նրանց միջև ընտրություն չանել, նա բարեհաճեց երկուսին էլ թալկինակ նետել։ Սիլվիան ճարպկորեն վերցրեց թալկինակը։ Սիլվիան ձևականության հետից չէր ընկնում։ Սպասողական դիրք էր գրավել։ Նա գիտեր, որ Տուլիոն հետո իր դուստրի տակ է պար գալու։ Նրան ամենևին անհանգստություն չէր պատճառել այն բանը, եթե այդ դռնժուանը թաքուն մի քանի համբույր քաղեր Աննետայից։ Թող որ դա տհաճ լինի, բայց ցույց տալու կարիք չկա։ Դա կաթիլի է թաքցնել։ Աննետան չէր կարողանում իրեն այդպես պահել։ Նա կիսատ-պռատություն չէր սիրում, և զգում էր, թե որքան է զզվելի նրա համար Տուլիոյի երկակի խաղը։

Տուլիոն սատում էր նրա նկատմամբ։ Լուրջ կիրքը նրան նեղում էր. Աննետան, «զզվեցրել էր» (այդ բառի մեջ,

ինչպես և օտարերկրացիներից շատերը, Տուլլիոն մի առանձնահատուկ, մայրաքաղաքային փայլ էր տեսնում։ Սիրո մեջ մի քիչ լրջությունը լավ է։ Բայց ոչ չափից ավելի, թե չէ մի տեսակ պարտավորություն կդառնա և ոչ թե հաճույք։ Տուլլիոն կիրքը պատկերացնում էր պրիմատոնայի նման. զգացմունքով կատարելով կավատինոն, նա նորից վերադառնում է բեմ և, ձեռքերը տարածելով խոնարհվում հանդիսատես հասարակությանը։ Բայց Աննետայի կիրքը, ըստ երևույթին, հաշվի չէր նստում հանդիսատես հասարակության գոյության հետ։ Նա խաղում էր միայն ի՛ր համար։ Խաղում էր վատ...

Աննետան այնքան անկեղծ էր, այնքան անկեղծ էր նրա ներքին հափշտակվածությունը, որ նա ընդունակ չէր մտածելու, թե ինչպես փայլ տա իրեն, ինչպես թաքցնի տառապանքների և դեմքին արտահայտված տագնապների կնիքը և հետքերը այն ցերեկային հոգսերի, որոնք իր արտաքինին հետևող կինը մեղմացնում է կամ ջնջում օրը մի քանի անգամ։ Աննետան թոշնել էր։ Նա պարզապես տգեղացել էր, տեսնելով, որ ինքը պարտված է։

Հաղթանակ տարած Սիլվիան, վատահ լինելով, որ խաղը շահել է, հունից դուրս ընկած Աննետային նայում էր այպանանքով համեմված գոհունակությամբ ու ծաղրով, իսկ հոգու խորքում խղճում էր քրոջը։

«Հը, ստացա՞ր։ Հասա՞ր ուզածիդ։ Տեսքդ լա՞վն է... խե՞ղճ, ծեծված շուն...»։

Եվ Սիլվիան նրան համբուրելու ցանկություն էր զգում։ Բայց բավական է մոտենար, Աննետայի դեմքը այնպիսի թշնամական արտահայտություն էր ստանում, որ վիրավորված Սիլվիան՝ մեջքով շրջվում էր նրա կողմը և մռթմռթում։

«Ինչպես կուզես, սիրելիս... Քո գործն է։ Ինքդ դասավորիր քո գործերը։ Ես բարի մարդ եմ։ Բայց ամեն մեկն իր մասին է մտածում և գրողի ծոցը թող գնան բոլորը... Էհ, իսկ եթե այս հիմարը տառապում է, մեղքն իրենն է։ Միշտ ծիծաղելիության չափ լուրջ է, ինչի՞ է պետք դա»։

(Այդպես նրա մասին մտածում էին բոլորը)։

Աննետան վերջիվերջո մի կողմ քաշվեց պայքարից։ Սիլ-

վիան ու Տուլլիոն կենդանի պատկերների երեկո կազմակերպեին, որտեղ Սիլվիան պետք է ցույց տար իր բոլոր գեղեցկությունները և դեռ որոշ բաներ էլ վրան ավելացրած (նա պատկերում էր կախարդ-փարիզուհու. շորի մի կտոր— և նա վերածվում է իր նմանակներին, նմանակների ամբողջական շարքերի, ընդ որում յուրաքանչյուրը բնօրինակից շատ ավելի գեղեցիկ է, բայց ավելացնելով դրան մի նոր բան, նա դառնում է բոլոր նախորդներից ավելի կախարդական, հրապուրիչ, քանի որ այդ բնօրինակի մեջ են ամփոփված նրանք բոլորը)։ Եթե Աննետան փորձաներ մրցել նրա հետ, ապա վերջնական պարտություն կկրեր։ Նա այդ հիանալի գիտեր։ Աննետան կանխատեսում էր իր պարտությունը։ Իսկ ինչպե՞ս կարող էր դրանից հետո ապրել։ Նա հրաժարվեց երեկոյին մասնակցելուց, պատճառաբանելով, որ հիվանդ է,— վատ տեսքը նրա համար արդարանալու միջոց ծառայեց։ Տուլլիոն նույնիսկ նրան համոզելու փորձ էլ չարեց։ Բայց Աննետան, հրաժարվելով, սկսեց տանջվել այն բանից, որ ինքը ցած դրեց զենքը։ Նույնիսկ ամենաանհույս պայքարը ինքնին հույս է։ Այժմ արդեն Տուլլիոն ու Սիլվիան օրվա կեսն անց էին կացնում միասին, երես առ երես։ Աննետան իրեն ստիպում էր գնալ բոլոր փորձերին, որպեսզի խանգարի նրանց։ Բայց դրանով ոչինչ չէր խանգարվում, ինքը, ԹերԼևս, նույնիսկ ավելի էր գրգռում նրանց—հատկապես անամոթ Սիլվիային, որը մոտ տասն անգամ կրկնել տվեց այն տեսարանը, երբ երանուհությունից թալկոտացող հարճին վանգում է բայրոնյան տիպի ծովահենը—նրա աչքերը մռայլորեն փայլփլում են, ատամները կրճտացնում է, տեսքը ճակատագրական է և գիշատիչ,— հովազ, որ պատրաստ է ոստյունի։ Տուլլիոն իր դերն այնպես էր տանջում, որ կարծես հիմա ուր որ է հրի և սրի կմատնի ամբողջ «Պալաս—Հոթել»-ը։ Իսկ Սիլվիան այնպես էր խաղում, որ նրան կարող էին նախանձել դրախտում մարգարեի մորուքը փետող քսան հազար հուրիները։

Վրա հասավ ներկայացման երեկոն։ Աննետան, քաշվելով բազկաթոռների վերջին շարքը, խանդավառ հանդիսա-

տեսնելի կողմից, բարեբախտաբար, մոռացված, չկարողացավ մինչև վերջը նստել։ Տանջահար ու թշվառ տեսքով նա վեր կացավ ու գնաց։ Գլուխն այրվում էր։ Բերանը դառն էր։ Անընդհատ նույն բանի մասին էր մտածում՝ իր տառապանքների։ Անարդված կիրքը ծվատում էր նրա հոգին։

Աննետան դուրս նկավ հյուրանոցի շուրջը կանաչին տրվող փոքրիկ մարգագետինը, բայց ամբողջովին հեռանալու ուժ չուներ։ Նա թափառում էր լուսավորված դահլիճի շուրջը։ Արևն արդեն մայր էր մտել։ Մութ էր։ Գազանային բնազդը ստիպեց Աննետային խանդոտությամբ հետևել այն դռանը, որտեղից, իհարկե, նրանք երկուսով դուրս կգան։ Կողքի փոքրիկ դուռը դերասանների համար է։ Առանց դահլիճի միջով անցնելու, նրանք կարող են գնալ հանդերձասենյակ, շենքի մյուս թևը։ Եվ իսկապես էլ, նրանք դուրս եկան։ Նանգ առան մարգագետնի սովերոտ մի տեղում, սկսեցին խոսել։ Աննետան թաքնվեց ծառերի հետևում և լսեց, թե ինչպես է ծիծաղում, ինչպես է քրքջում Սիլվիան...

— Չէ, չէ, միայն թե ոչ այսօր։

Իսկ Տուլլիոն համառում էր.

— Բայց ինչո՞ւ։

— Նախ քունս տանում է։

— Կհասցնենք քնել։

— Չէ՛, չէ՛, ես քնից չեմ կշտանում։

— Այդ դեպքում վաղը գիշերը։

— Դիշերները միշտ այսպես է լինելու։ Եվ բացի դրանից, գիշերը ես մենակ չեմ։ Ինձ հսկում են։

— Ուրեմն, երբե՞ք։

Այստեղ չարաճճի Սիլվիան քրքջաց։

— Բայց չէ որ ես ցերեկն էլ չեմ վախենում,— պատասխանեց Սիլվիան։— Իսկ դուք, ինչ է, վախենո՞ւմ եք։

Այլևս Աննետան չկարողացավ լսել։ Փոթորկի նման նրա վրա խուժեց կատաղությունը, զզվանքը, հուսահատությունը, և նա վազեց դեպի խավարը, հեռու ինչ-որ տեղ։ Երևի, լրսվում էր, թե նա ինչպես է գլուխը կորցրած վազում, ինչպես են չարդոտվում ճյուղերը,— այդպես փախչում է հետապնդված գազանը։ Բայց Աննետային այլևս չէր անհանգըս-

տացնում՝ այն բանը, թե իրեն կլսեն։ Ոչինչ հաշվի չէր առնում։ Նա վազում էր ու վազում... Ո՞ւր։ Ինքն էլ չգիտեր։ Նա այդպես էլ երբեք չիմացավ։ Վազում էր խավարի մեջ, տնքում էր, ոչինչ չէր տեսնում առջևում։ Ինչքա՞ն վազեց։ Հի՞նգ րոպե, քսա՞ն րոպե, մի ժա՞մ։ Նա այդպես էլ գա երբեք չիմացավ։ Վազեց այնքան ժամանակ, մինչև որ ոտքը կպավ ծառի արմատին և հասակով մեկ փռվեց՝ ճակատը խփելով ծառաբնին... Նա այդտեղ նա ճչաց, ոռնաց՝ բերանը գետնին սեղմած, ինչպես վիրավոր կենդանին։

Շուրջն ականակիր մութ էր։ Երկինքը՝ սև, ոչ լուսին, ոչ աստղ։ Հողը չէր շնչում, ոչ մի միջատի բզզոց։ Լռություն էր։ Միայն առուն էր խոխոջում, հոսելով այն եղևնու մոտ գտնվող ճալաքարերի միջով, որտեղ Աննետան ընկել, ջարդել էր ճակատը։ Նա մեկ էլ բարձր, զարհուրափ սարահարթ, ճեղքած ձորի խորքից բարձրանում էր գետի կատաղի մրմունչյունը։ Նրա հառաչանքները տանջահար կնոջ տնքոցների արձագանքներ էին, թվում էր, թե դա հողի դարավոր ողբն է։

Աննետան բղավում էր և ոչնչի մասին չէր մտածում։ Ջղաձգային հեկեկոցները, ցնցելով մարմինը, գրում էին այն թախիծը, որի ծանրությունը այսքան օրեր ճնշում էր նրան։ Գանակահարությունը լռում էր։ Նա հանկարծ մարմինը ուժասպառվելով, դադարեց տնքալուց։ Դուրս հորդեց նրա հոգու ամբողջ վիշտը։ Աննետան հասկացավ, որ ինքը լքված է։ Միայնակ է և դավաճանված։ Նրա մտքերի շրջանակը այլևս չէր տարածվում հեռուն։ Ուժ չկար մակաղելու նրանց ցաքուցրիվ հոտը։ Նույնիսկ տեղից կանգնելու ուժ չուներ։ Նա սեղմվեց գետնին... Ա՜խ, եթե գետինը պատռվե՜ր... Գետը շառաչում էր, խոսելով ու մտածելով նրա փոխարեն։

Նա լվաց Աննետայի վերքերը։ Նա վրա հասավ մի պահ, — իսկ այդպիսի պահեր, ըստ երևույթին, քիչ չէին անցել տառապանքների և հոգեկան թուլության մեջ,— և ահա ցավատանջ Աննետան սկսեց դանդաղորեն վեր կենալ տեղից։ Ճակատի պատռվածքը բավական ուժեղ ցավում էր. և այդ ցավը ցրում էր մտքերը։ Աննետան պլոկված ձեռքերը թրջեց առվակի ջրում և դրեց այրվող ճակատի վերքին։ Նա այդպես

երկար նստեց, թաց ափերով սեղմելով քունքերն ու աչքերը, զգալով, թե ինչպես է թափանցում իր մեջ սառը մաքրությունը։ Նա վիշտը մնաց ինչ-որ տեղ, հեռվում։ Ինքը, կողմնակի մարդու նման ունկնդրում էր նրա տնքոցները և արգելն չէր հասկանում իր կատաղության պատճառը։ Նա մտածում էր.

«Ինչո՞ւ, ինչի՞ համար։ Մի՞թե արժե դրա պատճառով վշտանալ...»։

Գետը խավարում կրկնում էր.

«Խելագա՛ր, խելագա՛ր, խելագա՛ր... Ամեն ինչ դատարկ է... ամեն ինչ՝ ունայն...»։

Աննետան դառնորեն ժպտում էր.

«Ի՞նչ էի ուզում ես։ Ինքս էլ չգիտեմ։... Իսկ ո՞ւր է նա՝ մեծ երջանկությունը։ Թող վերցնի ով ուզում է... Ես չեմ ուզում մրցության մեջ մտնել...»։

Եվ հանկարծ հառնեցին նրա առաջ, խուժեցին նրա վրա տեսիլքներն այդ երջանկության, որին նա այնուամենայնիվ ծարավի էր, և այրող պոռթկումներն այն ցանկությունների, որոնք, թեև բանականությունը հերքում էր, դեռ շարունակում էին իշխել նրա մարմնի վրա և որոնց վիճակված էր այդ մարմինը դեռ երկար պահել իրենց իշխանության տակ։ Եվ նրանց հետևից, նրանց անգութ գրոհից հետո սկսեց հընչել խանդի նոզկալի արձագանքը... Աննետան լուռ դիմացավ նրանց գրոհին, կուացավ, կարծես փոթորկի պոռթկումից պաշտպանվելով, ապա վեր բարձրացրեց գլուխը և բարձրաձայն սկսեց խոսել.

— Ես իրավացի չէի... Սիլվիային Տուլլիոն սիրում էր ավելի ուժեղ։ Եվ դա արդարացի է։ Նա ավելի շատ է ըստեղծված սիրո համար, քան ես։ Եվ նա շատ ավելի գեղեցիկ է։ Ես այդ գիտեմ և սիրում եմ նրան։ Սիրում եմ, որովհետև նա այդպիսին է։ Կնշանակի, նրա երջանկությունը պետք է դառնա իմ երջանկությունը։ Ես էգոիստ եմ... Միայն թե ինչու, ինչո՞ւ նա ինձ ատեց։ Մնացածը կարևոր չէ։ Ինչո՞ւ խաբեց ինձ։ Ինչո՞ւ անկեղծորեն չասաց, որ սիրում է Տուլլիոյին։ Ինչո՞ւ ամեն բան անում էր ի հեճուկս ինձ, ինչպես թշնամի։ Եվ առհասարակ նրա ամեն մի գծում, որ

ես աշխատում էի չնկատել, մի ոչ շատ մաքուր, ոչ շատ ազնիվ, ոչ շատ գեղեցիկ բան կա։ Բայց դրանում նա միայն չունի։ Ինչպես կարող էր նա այդ հասկանալ։ Մի տես թե նա մանկությունից սկսած ի՞նչ կյանք է քաշել։ Արդյո՞ք ես իրավացի եմ նրան հանդիմանելիս։ Իսկ ես ինքս անկե՞ղծ էի... Եվ այն, ինչ իմ մեջ էր, մի՞թե ավելի մաքուր էր... Ինչ իմ մե՞ջ էր։ Ինչ իմ մե՛ջ է... Չէ՞ որ ես հիանալի գիտեմ, որ դա առաջվա պես իմ մեջ է...

Աննետան շունչ առավ։ Եվ ավելացրեց.

— Էհ, բավակա՞ն է, պետք է վերջ տալ դրան։ Չէ՞ որ ես ավելի մեծ եմ։ Իսկ ես խենթություն եմ անում... Թող Սիլվիան բախտավոր լինի։

Սակայն «էհ», ասելով, Աննետան որոշ ժամանակ կարծես տեղում քար կտրեց։ Նա ունկնդրում էր լռության ձայնը և մտածում, կրծելով քերծված մատների ծայրերը։ Հետո մի անգամ էլ հառաչեց, վեր կացավ և անխոս ճամփա ընկավ։

Աննետան վերադառնում էր մթության մեջ։ Լուսնի դուրս գալու ժամանակն էր, բայց դեռ հեռու էր, թեև արդեն ըզգացվում էր, որ հորիզոնի հետևում նա բարձրանում է խավարի անդունդից։ Թուլլ ճաճանչները ծոպերի նման կախվել էին լեռնակատարներին, նրանք շրջափակում էին սարահարթը, ինչպես երիզները՝ բաժակը։ Նրանց սև ուրվագծերը ավելի ու ավելի պարզորոշ էին դառնում լուսավորվող ֆոնի վրա։ Աննետան քայլում էր առանց շտապելու և ամբողջ կրծքով, որն հիմա առաջվա նման հավասարաչափ ելևէջում էր, շնչում էր հնձած խոտի բուրմունքը։

Հեռվում ինչ-որ մեկը արագ-արագ գալիս էր ճանապարհով։ Աննետայի սիրտը սկսեց բաբախել։ Նա կանգ առավ։ Ճանաչեց այդ քայլվածքը և շտապից նրան ընդառաջ։ Այնտեղ՝ հեռվում Աննետայի քայլերը նույնպես լսեցին։ Հուզված ձայնը կանչեց։

— Աննե՛տա։

Աննետան չպատասխանեց. չէր կարողանում, նա խիստ ցնցված էր։ Խոխոջաց բերկրանքի առվակը. բոլոր դառնությունների նստվածքը, ինչքան որ կար, անհետացավ։ Ան-

նետան չպատասխանեց, բայց քայլերն ավելի արագացրեց, ավելի՛ ու ավելի՛: Իսկ նա, մյուսը, արդեն վազում էր՝ եվ թախիծով լի ձայնով կրկնում.

— Աննետա՛:

Լեռների մութ պատի հետևից դուրս եկող լուսնի անպարզ ֆոսֆորային շողերի մեջ, լուսավորվող խավարի միջից երևաց մի փոքրիկ գորշավուն կերպարանք: Աննետան ճչաց.

— Հարազա՞տս...

Եվ առաջ նետվեց: Ինչպես կույրը՝ պարզած ձեռքերը...

Նրանք այնքան էին շտապում, որ զարնվեցին իրար: Գրկախառնվեցին: Շուրթերով հպվեցին միմյանց...

— Աննե՞տա:

— Սի՛լվիա:

— Քո՛ւյր իմ: Սիրելի՛ս:

— Քույրի՛կս: Սե՛ր իմ:

Նրանց ձեռքերը խավարի մեջ շոյում էին միմյանց այտերն ու մազերը, հասնում էին մինչև ծոծրակները, շոշափում էին իրար պարանոց, ուսեր, գտնում էին իրենցը, կորցրածը...

— Հարազա՞տս,— բացականչեց Սիլվիան, զգալով, որ Աննետայի ուսերը մերկ են:— Դու առանց վերարկո՞ւ ես: Ծածկվելու բան չունես...

Աննետան նկատեց, որ իր հագին իսկապես երեկոյան շորն է: Նա մրսեց հանկարծ, ցնցվեց:

— Խելագա՞ր ես, պարզապես խելագա՞ր,— գոռում էր Սիլվիան, փաթաթելով քրոջը իր թիկնոցով, և նրա ձեռքերը քրոջ շորի վրա շոշափեցին ինչ-որ ճղված տեղեր: Պատռված է... սա ի՞նչ է: Ի՞նչ է պատահել:— Մազերը ցրիվ են եկել այտերին... Իսկ սա՞ ինչ է: Ծակատե՞ր ինչ է եղել: Դու ընկե՞լ ես, ի՛նչ է Աննետա՛...

Աննետան չէր պատասխանում: Ամեն չկարողանալով դիմանալ, նա գեմքը սեղմեց Սիլվիայի ուսին և սկսեց լաց լինել: Սիլվիան նրան նստեցրեց ճանապարհի մոտ: Լուսինը հաղթահարելով լեռների պատնեշները, լուսավորեց Աննետա-

յի վիրավոր ճակատը, և Սիլվիան համբույրներով ծածկեց այն։

— Ասա, տեսնեմ, այս ի՞նչ ես արել։ Ասա՛, ի՞նչ է եղել։ Անգի՛նս, իմ հարազատ գառնի՛կ, ես այնպե՛ս վախեցա. բարձրացա մեր սենյակը, և դու չկաս... Ես քեզ ձայն տվի... Մի ամբողջ ժամ քե՛զ եմ փնտրում... Ախ, ի՞նչ զարհուրելի բան էր... Ես այնպե՛ս էի վախենում, այնպե՛ս էի վախենում... Նույնիսկ չեմ կարող ասել, թե ինչի՛ց էի վախենում... Ինչո՞ւ գնացիր։ Ինչո՞ւ փախար։

Աննետան չէր ուզում պատասխանել։

— Ինքս էլ չգիտեմ,— ասում էր նա,— ես մի տեսակ վատ զգացի, ուզեցի... մի քիչ ման զալ, թարմ օդ շնչել...

— Ո՛չ, դու ճիշտ չես ասում։ Աննետա՛, ասա՛, ինչ եղել է։

Սիլվիան խոնարհվեց նրա վրա և կամացուկ ավելացրեց.

— Հոգյա՛կս, Տուլլիոյի պատճառո՞վ չէ...

Աննետան ընդհատեց նրան.

— Ո՛չ, ո՛չ։

Բայց Սիլվիան համառում էր.

— Մի՛ ստիր։ Ճի՛շտն ասա։ Ասա՛ քո քրոջը։ Նրա պատճառո՞վ է։

Աննետան աչքերը սրբեց և ասաց, աշխատելով ժպտալ.

— Ասացի՛, որ չէ, հավատացնում եմ քեզ... Մի քիչ սիրտս ծանրացած էր, դա ճիշտ է... Այնպիսի հիմարություն էր, որ... Բայց դա արդեն վերջացած է։ Ես երջանիկ եմ, որ Տուլլիոն քեզ սիրում է։

Սիլվիան տեղից ցատկեց, ձեռքերը բաի տվեց ու կատաղությամբ նետեց.

— Ուրեմն, նրա պատճառո՞վ է... Բայց չէ որ ես բոլորովին, մի փո՛ք անգամ չեմ սիրում նրան։

— Ո՛չ, սիրո՛ւմ ես...

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ։

Սիլվիան ոտքերն սկսեց գետնին խփել։

— Զվարճալի էր գլուխը պատեցնել, ես պարզապես խաղում էի, բայց նա ինձ համար ոչի՛նչ է, ոչի՛նչ է քո հանճառությամբ... Ա՛խ, տղամարդու բոլոր համբույրները քո

արցունքի մի կաթի՛լը չարժեն։— Աննետան երջանկությունից իրեն կորցրել էր։

— Ճի՛շտ, ճի՛շտ ես ասում։

Սիլվիան նետվեց նրա գիրկը։

Երբ նրանք փոքր-ինչ խաղաղվեցին, Սիլվիան Աննետային ասաց.

— Հիմա խոստովանիր. Դու նո՞ւյնպես սիրում էիր նրան։

— Նույնպե՞ս։ Ահա, տեսնո՞ւմ ես։ Արդեն բերանիցդ թռցրիր, որ սիրում ես նրան...

— Ես քեզ ասում եմ՝ չէ՛, և քեզ արգելում եմ... Ես չեմ ուզում այլևս նրա մասին լսել։ Վե՛րջ, ամեն ինչ վերջացած է։

— Վերջացա՛ծ է,— կրկնեց Աննետան։

Նրանք վերադառնում էին լուսնի լույսով ողողված ճանապարհով, վերադառնում էին ժպտալով և խանդավառ, որ նորից գտան իրար։ Հանկարծ Սիլվիան կանգ առավ և, բռունցքը սպառնագին թափահարելով դեպի լուսինը, բացականչեց.

— Ննասո՛ւն... Նա ինձ այդ բոլորի համար կվճարի։

Եվ երկուսն էլ քրքջացին այդ ոչ այնքան պատշաճ հայտարարության վրա, քանի որ երիտասարդությունը երբեք չի կորցնում իր իրավունքները։

— Դու գիտե՞ս մենք ինչ կանենք,— ավելացրեց հիշաչար Սիլվիան։— Կվերադառնանք, անմիջապես իրերը կկապենք և վաղը, հենց վաղն առավոտյան կմեկնենք առաջին իսկ փոստային կառքով։ Տուլլիոն նախաճաշի ժամանակ կգա սեղանի մոտ՝ ոչ-ոք չկա... Թռչնակները թռե՛լ-գնացել են։ Իսկ հետո... (Սիլվիան փռթկացրեց)։ Հա՛, մոռացել եմ... Ես նրան տեսակցություն եմ նշանակել ժամը տասի համար, անտառում, լեռան վրա... Նա ամբողջ առավոտ ինձ է փնտրելու...

Սիլվիան քրքջաց ավելի հնչեղ։ Եվ Աննետան նույնպես։ Դեմքի շատ ծիծաղելի արտահայտություն է ունենալու հիասթափված, մոլեգնած Տուլլիոն։ Խելառնե՛ր։ Դառնությունները մնացին հետևում։

— Սակայն, սիրելի՛ս,— վրա բերեց Աննետան,— այդպես իրեն վարկաբեկելը այնքան էլ գեղեցիկ բան չէ։

— Բա՜ն ասացիր։ Դա ինձ համար ոչինչ չի նշանակում, — առարկեց Սիլվիան։— Ես՝ դա հաշվի չեմ առնում... Ասենք, ժամանակն է, որ ես,— շարունակեց նա, քնքշորեն կծկելով Աննետայի ձեռքը, որը թեթևորեն խաղում էր նրա մկանջի հետ,— ժամանակն է, որ ես խելոքանամ, հիմա՛, երբ ես քո քույրն եմ դառել։ Եվ կխելոքանամ, խոսք եմ տալիս քեզ... իսկ դու գիտե՞ս, որ թեև իմ մեծ քույրն ես, բայց ինձանից խելոք չես եղել։

— Դու հիշտ ես,— մեղայական տոնով ասաց Աննետան։ — Եվ վախենում եմ, որ ժամանակ առ ժամանակ ես ինձ ավելի հիմար եմ պահել... Ա՜խ, մենք տաղտկալի սիրտ ունենք,— շարունակեց Աննետան, սեղմվելով քրոջը։— Երբեք մարդ չգիտի, թե հոգում ինչ է կատարվում. ներսից ինչ-որ բան է բարձրանում և, թվում է, հիմա քեզ կտանի... Իսկ ո՞ւր։

— Ա՛յ հենց այդ պատճառով էլ,— պատասխանեց Սիլվիան, ամուր գրկելով նրան,— ես քեզ սիրում եմ։ Քեզ մոտ դա շա՜տ լավ է ստացվում։

Նրանք արդեն հյուրանոցի մոտքի մոտ էին։ Տանիքները փայլում էին լուսնի լույսի տակ։ Սիլվիան ձեռքերը գցեց Աննետայի վզով և նրա ականջին ջերմորեն ու իր համար անսովոր լրջությամբ շշնջաց.

— Ա՜խ, դու, քույր իմ սիրած։ Ես երբեք չեմ մոռանա, թե դու ինչպես տանջվեցիր այս դիշեր, ինչպես էիր տանջվում իմ պատճառով... Այո, այո, մի՛ ժխտիր։ Ես ժամանակ ունեի այդ ամենի մասին մտածելու, երբ վազում էի, և՛ր փնտրում էի քեզ՝ վշտից դողդողով... Բայց որևէ բան պատահեր... Ես ի՞նչ կանեի... Ես՝ չէի՛ վերադառնա։

— Հարազա՛տս,— հուզված պատասխանեց Աննետան,— դու մեղավոր չես. դու չգիտեիր, որ ինձ ցավ ես պատճառում։

— Գիտեի, շատ լավ գիտեի, որ քեզ տանջում եմ, և նույնիսկ, լսի՛ր, Աննետա՛, և նույնիսկ դա ինձ բավականություն էր պատճառում։

Աննետայի սիրտը փորն ընկավ, բայց նա մտածեց, որ ինքը նույնպես բավականություն կստանար, տեսնելով, ինչպես է Սիլվիան տառապում, և որ պատրաստ էր Նրան ավելի մեծ առաջադրանք պատճառելու: Եվ նա ասաց այդ մասին: Նրանք միմյանց ձեռք սեղմեցին:

— Բայց դա ի՞նչ բան էր, ի՞նչ բան էր դա,— հարցնում էին նրանք իրար՝ ամոթահար ու ճնշված, թեև մխիթարվում էին այն գիտակցությամբ, որ երկուսն էլ իրար նման էին:

— Դա սե՛ր է,— ասաց Սիլվիան:

— Սեր,— մեքենայորեն կրկնեց Աննետան: Եվ տագնապով հարցրեց.— Ուրեմն, հենց դա էլ սեր է, որ կա՞:

— Եվ դիտե՞ս,— նկատեց Սիլվիան,— դա դեռ սկիզբն է:

Աննետան բորբոքված հայտարարեց,— որ այլևս չի ուզում սիրել:

Սիլվիան ծիծաղեց նրա վրա: Բայց Աննետան միանգամայն լուրջ կրկնեց.

— Այլևս չեմ ուզում: Ես ստեղծված չե՛մ սիրո համար:

— Ախ, ահա թե ինչ,— ծիծաղեց Սիլվիան:— Բախտդ չբերեց, խեղճ իմ Աննետա: Բայց դու, դու կդադարես սիրել այն ժամանակ, երբ դադարես ապրելուց:

Հոկտեմբերի առաջին օրերն են՝ ամպամած և խաղաղ։ Օդը անշարժացած է։ Անշտապ թափվում է գոլ, ուղղաձիգ անձրևը։ Խոնավ հողի, մառանի հասած մրգերի, հնձանների խաղողահյութի սուր, թունդ բուրմունք...

Ռիվիերների՝ Բուրգունդիայում գտնվող ամառանոցի բաց պատուհանի մոտ քույրերը իրար դիմաց նստած կարում էին։ Նրանք աշխատում էին գլխահակ և, թվում էր, ուր որ է իրար կզարնվեն ուռուցիկ, մաքուր ճակատներով։ Նրանց ճակատներն իրար շատ նման են՝— ուռուցիկ են, միայն Սիլվիայինը ավելի նեղ է, իսկ Աննետայինը՝ լայն, մեկինը կամակոր է, մյուսինը՝ համառ, այծիկ և ցլիկ։ Բայց երբ գլուխները վեր էին բարձրացնում, նրանց աչքերը հասկացող հայացքներ էին փոխանակում։ Իսկ լեզուները հանգրստանում էին՝ այդ բոլոր օրերի բարբաջանքներից։ Նրանք մի անգամ ևս վերապրում էին տեղափոխության հուզմունքները, իրենց հիացմունքները, մի շնչով ասված խոսքերը և այն ամենը, ինչ իմացել էին և ճանաչել այդքան օրերի ընթացքում, որովհետև հիմա էր, որ նրանք ինչպես պետք է կապվել էին միմյանց և ուզում էին ամեն ինչ տալ իրար ու վերցնել իրարից։ Իսկ առայժմ լռում էին, խորհրդածելով քաքցրած ավարի մասին։

Սակայն իզուր էին ջանում ամեն ինչ տեսնել և ամեն ինչ ունենալ. վերջիվերջո նրանք այդպես էլ առեղծված մրնացին միմյանց համար։ Եվ իսկապես, ամեն մի էակ առեղծված է մյուս էակների համար, և դա իր հմայքն ունի։ Իսկ ինչքա՞ն է նրանցից յուրաքանչյուրի մեջ թաքնված այն-

պիսի բաներ, որոնք անհասանելի են մյուսին։ Իզուր էին նրանք իրենց ասում (քանի որ այդ գիտեին).

«Ի՞նչ է նշանակում փոխըմբռնում։ Հասկանալ—նշանակում է բացատրել։ Իսկ երբ սիրում ես, բացատրելու կարիք չկա...»

Եվ, այնուամենայնիվ, դա մեծ նշանակություն ուներ։ Չէ՞ որ եթե չես հասկանում, ապա չես կարող տիրանալ ամբողջությանը։ Իսկ սիրե՛լ, ինչպես նրանք սիրում էին միմյանց։ Ամեն մեկն իր ձևով էր սիրում։ Ռաուլ Ռիվիերի երկու աղջիկն էլ կենարար ուժեր էին ժառանգել հորից,— այդ ուժերը մեկի մեջ ճնշված վիճակում էին, մյուսի մեջ՝ ցրված։ Նրանց բնավորությունների տարբերությունը հատկապես դրսևորվում էր սիրո մեջ։ Թեթևամիտ ու գորովալից Սիլվիան, որ էությամբ ուրախ էր, չարաճճի, ինքնավստահ, փաստորեն շատ խելամիտ, շուտ բռնկվող էր, բայց երբեք գլուխը չէր կորցնում։ Թևիկները խշխշացնելով, նա թռչում էր միայն իր աղավնատան շուրջը։ Սիրո մեծ դևը թաքնված էր Աննետայի մեջ, և նրա գոյության մասին ինքն իմացավ միայն վերջին կես տարում։ Աննետան նրան ճնշում էր, աշխատում էր թաքցնել նրան, որովհետև սարսափում էր նրանից. բնազդը հուշում էր Աննետային, որ ուրիշները ճիշտ չեն դատի իր մասին—էրոսը վանդակում, աչքերը կապած, անհանգիստ, ագահ և սոված, լուռ զարնվում է աշխարհի վանդակապատերին և դանդաղ կրծում է իր զնդան սրտի պատերը։ Այրող խայթը անվերջ, անձայն և աննկատ խըրվում էր ու տագնապում Աննետայի բանականությունը։ Նա անընդհատ զգում էր այդ խայթը, ընկնելով գրգռող մի ըմբռության մեջ, որի մեջ զգայական ինչ-որ բան կար։ Նրա մաշկը փշաքաղվում էր, երբ նա հպվում էր կոշտ առարկայի, երբ նրան խանգարում էր հագուստը, երբ ձեռքը կահույքի անհարթ փայտին էր քսում կամ պաղեցնող խորդուբորդ պատին։ Նա կարծես ճյուղի դառը կեղև ծամելիս լիներ, և այն ժամանակ ընկնում էր ինչ-որ ինքնամոռացության մեջ ու կորցնում ժամանակի զգացողությունը։ Աննետայի գիտակցությունը երբեմն մթագնում էր, և նա չէր կարող ասել՝ ինչքան է այդ տևում՝ քառորդ վայրկյա՞ն թե՞

մի ժամ, եվ իսկույն մոքերը ժողովում էր։ Նա ամոթ էր զգում, կասկածանքով որսում էր Սիլվիայի հայացքը, որը ձեվացնում էր, թե աշխատում է, իսկ իրականում խորամանկորեն գաղտագողի հետևում էր նրան։ Քույրերը լուռ էին, երկուսն էլ այնպես էին նստել, կարծես բանից անտեղյակ լինեին, իսկ արյան տաք ալիքները ողողում էին Աննետայի այտերը։ Սիլվիան, առանց բան հասկանալու, իր փոքրիկ բթով հոտոտում էր նրա ներքին կյանքը, որը արևի տակ ննջելով, մերթ հանկարծ խաղաղվում էր, մերթ վայրիացած զալարվում՝ ինչպես տերևների տակ գտնվող լորտուն. Սիլվիան համարում էր, որ ավազ քույրը խենթուկ է, որ նա խելքը թոցրել է, իսկապես—մարդկանց նման չէ... Նրան հատկապես զարմացնում էին ո՛չ թե կրքոտ բանկումները, ո՛չ թե տաբարյունությունը և կամ էլ այն, ինչ նա կռահում էր Աննետայի տաղնապալից մոքերում, այլ այն լուրջ, գրեթե ողբերգական էությունը, որ ամեն ինչի մեջ մտցնում էր քույրը։ Ողբերգակա՞ն։ Դա ի՞նչ հնարանք է։ Ո՞ւրջ։ Հանուն ինչի՞ լրջություն բանեցնել։ Ամեն ինչ իր. կարգով էր գնում։ Ամեն ինչ այդպես էլ պետք է ընդունել։ Սիլվիային ամենևին չէին անհանգստացնում նրա զլուխը խոկվող ֆանտազիաները։ Դրանք գալիս ու գնում են։ Այն բոլորը, ինչ լավն է ու հաճելի,— սլարզ է և բնական, իսկ ինչ վատ է և անհաճո,— նույնպես բնորոշ է կյանքին։ Լավ է թե վատ— բարի եղիր կուլ տալ, և ես վայրկենապես կուլ եմ տալիս։ Ինչո՞ւ իզուր ջուր ծեծել։ Ահա, այդ խճճված Աննետան։ Տաք և սառը մոքերի խորքերը, սարսափների և ցանկությունների մանվածքը, կրքոտ և առաքինի զգացմունքների փնջերը իրար են խառնվում հոգու բոլոր անկյուններում... Եվ ո՞վ պետք է այդ խճճվածքը քանդի։ Սակայն ինչպես էլ ուզում է լիներ, հրաշալի, տարօրինակ, անբմբռնելի Աննետան շատ էր զբաղեցնում Սիլվիային, հետաքրքրում, ձգում դեպի իրեն, եվ դրա համար նա ավելի շատ էր սիրում քրոջը։

Լռությունը երկարում էր, նա հագեցված էր տպնապող գաղտնիքներով, եվ Սիլվիան հանկարծ ընդհատում էր այն, սկսում էր բլբլալ։ Արագ-արագ, կիսաձայն, խոնարհված իր կարի վրա, կարծես հայհոյելով այդ լռությունը, նա մրմռ-

մրթում էր ինչ-որ անմիտ բառեր, դուրս էր տալիս դա-տարկ-դատարկ—բոլոր բառերը վերջանում էին «ի»-ով, ստացվում էր «կի-կի-կի-կի», կարծես իսկական սերինոսի շաղակրատանք լիներ, որն ուրախությունից ճռճռում է։ Բայց հանկարծ նա իրեն կարևոր տեսք տալով, կարծես ասում էր. «Ո՞վ, ե՞ս, ես՝ ոչի՛նչ»։ Եվ կամ՝ թեկը ատամի տակ կտրելով, բարձրիկ, խնթխնթան ձայնով երգում էր հիմար մի ռոմանս, որի մեջ խոսվում էր ծաղիկների և ճրուվողող թռչնակների մասին, որևէ թեթևամիտ երգ և, խորամանկորեն իրեն ձևացնելով բարեկիրթ աղջիկ, հանկարծ սարդ ու հստակ շատ կոպիտ անպարկեշտություն էր ասում։ Աննետան տեղից ցատկում էր կես-ծիծաղով, կես-վրդովմունքով.

— Լռի՛ր, լռի՛ր վերջապես։

Եվ թեթևություն էր զգացվում։ Մթնոլորտը նոսրանում էր։ Կարևոր չէ, թե ինչ խոսքեր էին ասվել։ Ձայները, ինչպես ձեռքեր, վերականգնում են կապը։ Մարդ նորից է հաղորդակցվում։ «Ո՞ւր էիր կորել»։ Զգուշացի՞ր լռությունից։ Դու գիտե՞ս արդյոք, որ մոռացման պահը կարող է մեզ մի ակնթարթում բաժանել։ Խոսի՛ր ինձ հետ։ Քեզ հետ եմ խոսում։ Ես բռնել եմ քեզանից։ Բռնիր ինձ ամուր»։

Եվ նրանք բռնել էին միմյանց։ Եվ հաստատ որոշել էին, ինչ էլ պատահի, իրար չլքեն։ Ինչ էլ պատահի, ոչինչ չի վերաբերվի գլխավորին. «Ես ես եմ։ Դու դու ես։ Պայմանավորվեցինք։ Ձեռքդ տուր։ Այժմ է՛լ չի կարելի ետ կանգնել»։ Դա փոխադարձ ինքնազոհաբերություն էր, լուռ համաձայնություն, մի տեսակ հոգևոր միություն, ուժեղ այն տեսակետից, որ ոչ մի արտաքին հարկադրանք—ոչ զրավոր պարտավորություն, ոչ կրոնական կամ քաղաքացիական ներգործություն— չէր ծանրանում դրա վրա։ Ինչ անենք, որ նրանք այդպես տարբեր են։ Սխալվում է նա, որ կարծում է, թե ամենաանքակտելի դաշինքները խարխլվում են նմանության կամ հակադրության վրա։ Ոչ մեկի՛ վրա և ոչ էլ մյուսի, ներքին որոշման վրա է խարխլվում. «Ես ընտրել եմ, ես ուզում եմ, և ես երդվում եմ»,— որոշում , որն անցել է կենսափորձի քուրայով և դրոշմված է կրկնակի հաստա-

Նուն կամքով, ինչպիսին այդ երկու ուսուցիչ ճակատներով աղջիկների կամքն է։ «Դու իմն ես, և հիմա արդեն ես զորությունակ չեմ ոչ քեզ վերադարձնելու, ոչ ետ վերցնելու ինձ... Ասենք, դու ազատ ես. սիրիր ում ուզում ես, արա, ինչ քեզ դուր է գալիս, խաղա, ինչ օյիններ քեզ ձեռ է տալիս, մեղանչիր, եթե խելքիդ փչում է (գիտեմ, որ դու այդ չես անի, բայց եթե նույնիսկ այդպես էլ է),— դա չի խախտում մեր պայմանը... Ով ինչպես ուզում է, թող այնպես էլ մեկնաբանի» եթե Աննետան իր բարեխղճությամբ անգամ հանդրգներ մինչև վերջը, նա ստիպված կլիներ իրեն խոստովանել, որ ամենևին համոզված չէ Սիլվիայի բարոյականությանը, նրա ապագա գործողություններին։ Իսկ Սիլվիան, որ ամեն ինչին սթափ էր նայում, ձեռքը կարել չէր տա, թե Աննետան մի գեղեցիկ օր որևէ ցնցող բան չի անի։ Սակայն այդ բոլորը վերաբերվում էր ուրիշներին և նրանց երկուսի հետ ոչ մի առնչություն չուներ։ Երկուսն էլ հավատում էին իրար, լիովին վստահում միմյանց։ Թող մնացած բոլորը դատավորվեն, ինչպես ուզում են։ Սրանից հետո նրանք փակ աչքերով կանխապես ամեն ինչ ներում էին մեկը մյուսին—միայն թե նրանց արարքները չանդրադառնային իրենց փոխադարձ սիրո վրա։

Այդ ամենը, թերևս, այնքան էլ բարոյական չէր։ Է, թող այդպե՞ս լինի։ Հետագայում բարոյական կյանք վարելու համար ժամանակ դեռ կգտնվի։

Աննետան մի քիչ պեդանտ էր, կյանքը գիտեր գրքերով, — որը, այնուամենայնիվ, չխանգարեց նրան հետագայում ճանաչել այն, (չէ որ կյանքը, հասկանալի է, այլ կերպ է հնչում, քան՝ գրքերում) և այժմ նա հիշեց Շիլլերի սքանչելի տողերը.

Օ՜ իմ որդիներ, աշխարհը լի է, լի է չարությամբ
Եվ նենգ մտքերով։ Ամեն մարդ միայն իրեն է սիրում։
Եվ՞ պատահական հյուսված կապերը անկայուն են շատ։
Մի վայրկյան միայն—և պատռվում է այդ ցանցը խնկույն։
Լոկ բնությունն է միշտ հավատարիմ։ Բնությունն է լոկ
Կանգնած աներեր խարսխի վրա, այն ժամանակ, երբ
Շուրջը ամեն ինչ, կյանքի հուսացող օվկիանոսի մեջ

Տաքցնում է ուղին։ Բարի կամքը մեզ ընկեր է տալիս,
Հաչսզությունը շրջապատում է գինակիցներով,
Նզրայրներն են լոկ, որ ծնունդով են միայն մեզ տրվում։
Երջանկությունը չի տա նրանց մեզ։ Երջանկության հետ
Ընկերն է գալիս։ Եվ այս աշխարհում, որ թշնամանքով
Ու ոխով է լի, շատ հաճախ է նա լինում երկդիմի։

Սիլվիան, իհարկե, այդ տողերը չգիտեր։ Նա, երևի, կհամարեր, որ այդպիսի հատարակ զգացմունք արտահայտելու համար այդքան անհասկանալի բառեր չեն պահանջվում։ Բայց, նայելով աշխատանքը մի կողմ դրած Աննետայի խոնարհած գլխին, ուժեղ պարանոցին, խիտ մազերին, որոնք հավաքած ու կծիկ էին արված, Սիլվիան մտածեց։

«Քուլրա դեռ երազում է, նորից սկսվեցին խելագարությունները։ Ե՞րբ է դա վերջանալու։ Ի՜նչ երջանկություն է, որ ես այստեղ եմ։ Իմ ներկայությամբ նա առանձնապես չի ծավալվի...»։

Չէ որ փոքր քրոջ մեջ համոզմունք կար, թե տատ երևույթին, չափազանցված, որ ինքը խելքի և փորձի գերազանցություն ունի։ Եվ նա կրկնում էր։

«Ես պետք է Աննետային պահպանեմ»։

Սակայն նա ինքն էր հովանավորության կարիք զգում։ Սիլվիան պակաս խելագարը չէր։ Միայն թե նա իր բոլոր արարմունքները առաջուց գիտեր և դրանց վրա նայում էր այնպես, ինչպես տնաուտերն է նայում տնվորներին։ Թեև բնակարան է տալիս նրանց, բայց տալիս է ոչ ձրի։ Եվ հետո էլ։ «Ա՛խր, ինչ ուզում ես, թող ինչ լինում է, լինի»։ Սրբ այդ բոլորը վերաբերում է միայն քեզ—դատարկ բան է։ Գուցե պրծնել միշտ էլ կարելի է... Իսկ պահպանել քրոջը—դա նոր զգացում է և արտասովոր կերպով հաճելի։

Այո, բայց... Աննետան նստել էր գլուխը կախ գցած։ Նա մի կողմ դրեց աշխատանքը, ճիշտ նույնպիսի զգացում փայփայում էր և նա։ Աննետան մտածում էր։

«Իմ սիրելի՛, խելա՞ք քույրիկ։ Ի՜նչ երջանկություն է, որ ես ճիշտ ժամանակին հայտնվեցի քրոջս կողքին, որպեսզի ղեկավարեմ նրան...»

Եվ նա կառուցում էր Սիլվիայի ապագայի պլանները,

պլանները գայթակղիչ էին, բայց դրանց մասին նա չէր խորհրդակցում Սիլվիայի հետ։

Եվ կուշտ երազելով միմյանց երջանիկ ապագայի մասին (իսկ միևնույն ժամանակ, իհարկե, նաև սեփականի), քույրերը բացականչեցին.

— Ա՜խ, ես քո... Ասեղը չարդվեց։

— Ասենք, ոչինչ այլևս չի էլ երևում։

Եվ թողնելով աշխատանքը, նրանք դուրս էին վազում օդ շնչելու։ Միևնույն անձրևանոցով ծածկված, այգու միջով քայլում էին անձրևի ներքո, ծառերի լացող ճյուղերի տակով, որոնք փնջերով թափել էին իրենց տերևները։ Տաղավարում խաղողի թփերից քաղում էին սաթե ողկույզներն ու կլանում, թաց պտուղներն ավելի համով են, և խոսում էին ու անվերջ խոսում... Հանկարծ լռում էին, ներս քաշելով աշնանային քամին, բուրմունքը (որ ուղղակի կուտե՞ր) հասած մրգերի, թափված տերևների, իրենց մեջ առնելով հոկտեմբերյան օրվա անպարզ լույսը, որ հանգչում էր ժամը չորսից սկսած, լսելով թմրած, ննջող դաշտերի լռությունը, անձրև խմող հողի լռությունը, գիշերային լռությունը...

Եվ իրար ձեռք բռնած նրանք երազում էին, թրթռուն բնության հետ միասին, որը վեհերոտ ու խանդավառ փայփայում է գարնան՝ գալիք առեղծվածի հույսը...

Նրանք սովորել էին իրար հետ անցկացնել հոկտեմբերյան այդ զորշ օրերը՝ հյուսված մառախուղից, կարծես սարդոստայնով պատված, և դա նրանց համար դարձել էր այնպիսի մի անհրաժեշտություն, որ երկուսն էլ հարցնում էին իրենց, թե այդ ինչպես են մինչև հիմա ապրել առանց դրան։

Մինչդեռ ապրել էին և դեռ սիրտ ապրեին։ Քանի տարեկանում կյանքը չի շրջափակվում, որքան էլ ուզում է թանկ լինի այն մարդը, ում հետ քեզ հաճելի է ապրել,— հատկապես այդպիսի թևավորված էակների կյանքը։ Նրանք պետք է փորձեն իրենց ուժը օդային ազատ տարածություններում։ Որքան էլ անհողդողդ հաստատվեր նրանց սրտի

կամքը, Ներանց թևերի բնագդը ավելի ուժեղ էր։ Աննետան ու Սիլվիան քնքշորեն սատում էին.

— Մենք ինչպե՞ս կարող էինք առանց իրար ապրել այսքան երկար ժամանակ։

Այնուամենայնիվ չէին խոստովանում իրենք իրենց.

«Բայց չէ՞ որ վաղ թե ուշ ստիպված ենք լինելու (որքա՜ն է ցավալի) ապրել առանց մեկս մյուսի»։

Որովհետև ուրիշ ոչ ոք չի կարող ապրել ձեր փոխարեն և ձեր տեղը, ասենք, դուք ինքներդ էլ այդ չեիք ուզիլ։ Իհարկե, փոխադարձ քնքշանքների պահանջը խորն էր, բայց յուրաքանչյուրն ուներ նաև ուրիշ պահանջ, ավելի ուժեղ, որ սկիզբ էր առնում Իվիների երկու ապչիկների էության ամենաբուն ակունքներից. անկախության պահանջ։ Նրանք հաճար ու մի տարբեր գծեր ունեին, բայց նրանց մեջ ընդհանուր մի գիծ կար, այդ գիծը հենց դա էր (և չէր կարելի ասել, որ նրանց բախտը բերել է)։ Նրանք այդ լավ գիտեին, դա նույնիսկ պատճառներից մեկն էր (նրանք, հիշատ է, դրանում իրենց հաշիվ չէին տալիս), որ այդքան ուժեղ սիրեցին միմյանց, քանի որ յուրաքանչյուրը մյուսի մեջ իրեն էր տեսնում։ Սակայն այդ դեպքում էլ ի՞նչ արժեր միասնական կյանք հիմնադրելու նրանց պլանը։ Ամեն մեկը փայլ ա յում էր այն երազանքը, որ պահպանելու է քրոջ կյանքը, բայց դիտակցում էր, որ քույրը, ինչպես և ինքը, չի համաձայնի դրան։ Դա նրանց քաղցր երազանքն էր, նրանց խաղալիքը։ Նրանք ուզում էին, որ խաղը շարունակվի որքան կարելի է երկար։

Իսկ խաղին վիճակված չէր երկար շարունակվելու։

Եթե նրանք պարզապես երկու անկախ տերություններ լինեին։ Սակայն իրենց ազատությունը թանկ գնահատող այդ հանրապետություն-ճուտիկները, ինչպես և մյուս հանրապետությունները, հակառակ իրենց կամքին, բռնապետական հակումներ ունեին. Ամեն մեկը ձգտում էր մյուսին ենթարկել իր օրենքներին—նրան թվում էր, թե իր օրենքներն ավելի լավ են։ Աննետան, որ հակված էր ինքնագոհացման, ներխուժելով քրոջ տիրապետության բնագավառը, հանդիմանում էր իրեն, բայց ամեն ինչ նորից կըր-

կրնվում էր։ Նրա ամբողջական և կրքոտ բնավորության մեջ, իր կամքին հակառակ, ինչ-որ տիրական մի բան կար։ Նրա բնավորությունը կարող էր քնքուշ սիրո քողի տակ ժամանակավորապես մեղմանալ, բայց նա համառում էր։ Ասենք, պետք է խոստովանել, որ եթե անգամ Աննետան աշխատում էլ էր հարմարվել Սիլվիայի կամքին, ապա Սիլվիան ամենևին չէր ձգտում թեթևացնել քրոջ խնդիրը։ Նա վարվում էր այնպես, ինչպես խելքին փչում էր, իսկ քանի-չորս ժամվա ընթացքում նրա գլխում ծնունդ էին առնում քանի-որից ոչ պակաս ցանկություններ, որոնք միշտ չէր, որ համընկնում էին։ Աննետան, որ մեթոդիկ էր, կարգ ու կանոն սիրող, սկզբում ծիծաղում էր, բայց հետո սկսեց համբերությունը կորցնել՝ այնքան արագ էին փոփոխվում քրոջ տարօրինակությունները։ Նա Սիլվիայի անունը դրել էր «Անդադրուն», «Ես՝ ուզում եմ... Իսկ փաստորեն ի՞նչ եմ ուզում»։ Իսկ Սիլվիան նրան անվանում էր «Փոթորիկ», «Տիկին տիրակալուհի» և «Կեսօր՝ ուղիղ տասերկուսին»— քրոջ ճշտապահությունը գրգռում էր նրան։

Նրանք քնքշորեն սիրում էին իրար և, այնուամենայնիվ, հաղիվ թե կարողանային տևականորեն ապրել միևնույն ձևով։ Նրանց ճաշակներն ու սովորությունները տարբեր էին։ Նրանք միմյանց այնպես էին սիրում, որ Աննետան ներողամտորեն անտես էր անում Սիլվիայի, որը մի քիչ բամբասելու սիրահար էր, շատ նրբորեն ամեն ինչ կարողանում էր նրկատել, իսկ ավելի լավ՝ լսել՝ բայց ոչ այնքան նրբորեն արտահայտել։ Իսկ Սիլվիան ձևացնում էր, թե հափշտակված լսում է, թեև աննկատելիորեն հորանջում էր (Բավական է։ Դե բավակա՞ն է...»), երբ Աննետան, ցանկանալով նրա հետ կիսել բավականությունը, բարձրաձայն ձանձրալի բաներ էր կարդում։

— Աստվա՞ծ, դա ուղղակի հրաշալի է, թանկագինս։

Կամ թե չէ սկսում էր անհեթեթ գաղտնություններ անել կյանքի, մահվան, հասարակական կարգի մասին...

«Դատարկ բա՜ն է... էլ ո՞նց կլինի... մարդիկ է՛լ բան ու գործ չունե՞ն»)

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, Սիլվիա,— հարցնում էր Աննետան։

(«Կարծելը ինձ շա՞տ է պետք»,— մտածում էր Սիլվիան)։

— Նույնը, ինչ որ դու, սիրելի՛ս։

Նվ այդ բոլորը ամենևին չէր խանգարում նրանց միմյանցով հիանալուն։ Բայց մի քիչ նեղում էր, երբ խոսում էին։

Իսկ ինչով լցնեն ժամանակը, երբ նրանք բոլորովին մենակ են ուղիղ անտառի եզրին գտնվող այդ տխուր տանը, երբ նրանց առջևում մերկ դաշտեր են, իսկ վերևում՝ աշնանային կախ ընկած երկինք, որը մառախուղի մեջ ձուլվում է լերկ հարթավայրի հետ։ Իզուր էր Սիլվիան ասում և ինքն էլ հավատում իր ասածին, թե գյուղի համար խելքը գնում է։ Գյուղական ղվարճանքները նրան շուտ ձանձրացրին։ Այստեղ նա՛ոչ մի գործ չուներ, ոչ մի նպատակ չէր հետապնդում, քարշ էր գալիս ստվերի նման։ Բնությո՛ւն, բնությո՛ւն... Անկեղծ ասենք. բնությունը նրան ձանձրույթ էր պատճառում։ Չէ՞, գարշելի տեղեր են այստեղ... Ուղղակի անտանելի են բոլոր այս ղզվելի բաները. քամին, անձրևը, ցեխը (փարիզյան փողոցների ցեխերը, ընդհակառակը, նրան գուր էին գալիս)։ Հնամենի միջնորմների հետևում այս ու այն կողմ էին սլանում մկները, սարդերը գալիս-մտնում էին սենյակները, ձմեռային բնակարանները, իսկ այդ սոսկալի գազանները՝ մոծակները, դիշերները շեփորում էին և խրախճանք սարքում նրա ձեռքերի ու ոտքերի վրա։ Դրանց պատճառով նա շատ էր արցունք թափել՝ գրգռվածությունից ու զայրույթից։ Իսկ Աննետային ուրախացնում էին լայնարձակ տարածությունները և առանձնացած կյանքը՝ սիրելի քրոջ հետ, ձանձրույթ չէր ղգում, նա ծիծաղում էր մոծակների վրա, և Սիլվիային կանչելով իր հետ զբոսանքի գնալու, քայլում էր ցեխերի միջով, չնկատելով, որ քուրը դժգոհ է, ու նոթերը կիտել է։ Քամու անձրևախառն պոռթկումները արբեցնում էին նրան։ Նա մոռանում էր Սիլվիային։ Մեծ-մեծ քայլերով առաջ էր գնում վարած հողի միջով կամ անտառային արահետով, ցնցելով թաց ճյուղերը։ Նա այնքան էլ շուտ չէր մտաբե-

րում լքյալ քրոջը։ Իսկ Սիլվիան, փքված, տրամութ յամբ զննում էր հայելու մեջ իր ուռած դեմքը, ձանձրույթից մեռնում էր և մոածում.

«Տեսնես, ե՞րբ ենք վերադառնալու»։

Եվ, այնուամենայնիվ, հազար ու մի մտադրություններ մեկ կրտսեր Ռիվիերը մի բարի, անդրդվելի մտադրություններ, և ոչինչ չէր կարող այդ փոխել, իսկ գյուղական օդը դրան միայն թարմություն տվեց։ Սիլվիան սիրում էր իր արհեստը։ Սիրում էր հոգով ու սրտով։ Նա պատկանում էր Փարիզի բանվորական անխախտ ընտանիքին։ Աշխատանքը, տեղը և մատնոցը նրա համար պահանջ էին, նա ուզում էր ըթաղեցնել իր մատներն ու միտքը։ Բնածին ճաշակով էր օժտված դեպի կարը։ Նա ֆիզիկական հաճույք էր զգում՝ ամերով շոշափելով որևէ կտոր, թեթև գործվածքներն, մետաքսյա մուսլին, դրանց վրա դարսեր տալով, փոքեր հավաքելով, մատը չրթկացնելով ու խփելով ժապավեններից շինած բանտին։ Ասենք, նրա փոքրիկ խելքն էլ, որը, փառք աստծո չէր չանում հասկանալ այն գաղափարները, որոնցով լցված էր Աննետայի խելացի գլուխը, գիտեր, որ այդտեղ՝ իր բնագավառում փալաս-փուլուսի թագավորության մեջ, ինքն էլ ունի այդպիսի գաղափարներ, որոնցով ում ուզում ես կարելի է հետաքրքրել։ Ուրեմն, ինչ է, կհրամայեիք հրաժարվե՞լ այդ գաղափարներից։ Ասում են, կնոջ համար ամենամեծ հաճույքը գեղեցիկ շորեր հագնելն է։ Շնորհալի կնոջ համար ավելի մեծ բավականություն է այդպիսի շորեր ստեղծելը։ Եվ մի անգամ ճաշակելով այդ հաճույքը, արդեն չի կարելի նրանից հրաժարվել։ Փափկասուն պարապության մեջ էր Սիլվիային քույրը պահում, և երբ Աննետայի գեղեցիկ ձեռքերը սահում էին ստեղների վրայով, Սիլվիան թախիծով հիշում էր մեծ մկրատի շխկշխկոցն ու կարի մեքենայի տկտկոցը։ Եթե որևէ մեկը նրան նվիրեր աշխարհի երեսին եղած արվեստի բոլոր ստեղծագործությունները, նրբանք Սիլվիայի համար չէին փոխարինի սիրելի, անգլուխ մի մանեկենի, որի վրա կտոր ես քաշում, ինչպես խելքդ փչում է, որին շուռումուռ ես տալիս, ու պատում, որի առաջ պպզում ես, որին ծածուկ շոշափում ես կամ, գիրկդ առ-

նելով, պատյտ ես գալիս պարելով, երբ ձևարարը դուրս է գալիս։ Սիլվիան ընդամենը մի քանի բառ ասաց, բայց այդ բառերից դժվար չէր կռահել նրա մտքերի ընթացքը և, Աննետան, բարկանալով ու տեսնելով, թե ինչպես են բոցավառվում քրոջ աչքերը, հասկանում էր, որ Սիլվիան մտովի արդեն աշխատանքի մեջ է։

Եվ ահա, երբ նրանք վերադարձան Փարիզ, և Սիլվիան հայտարարեց, որ ինքը մեկնելու է իր տունը և ձևոնամուխ է լինելու հիմնական աշխատանքի, Աննետան հոգոց հանեց, բայց չզարմացավ։ Սիլվիան սպասում էր, որ իր որոշումը ավիններով կդիմավորվի, այդ պատճառով էլ քրոջ հառաչանքն ու լռությունը նրա սիրտը ավելի շատ շարժեցին, քան ցանկացած խոսքերը։ Նա մոտ վազեց բազկաթոռի մեջ նրսատած Աննետային, ծնկի իջավ նրա առաջ, գրկեց նրան ու համբուրեց։

— Մի՛ զայրանա ինձ վրա, Աննետա՛։

— Հոգյակս,— պատասխանեց Աննետան,— քո երջանկությունը իմ երջանկությունն է, դու հո դա գիտես։

Բայց նրա համար ծանր էր։ Սիլվիայի համար նույնպես։

— Դա իմ մեղքը չէ,— ասաց նա,— ես քեզ այնքա՞ն եմ սիրում, հավատա՛ ինձ։

— Գիտեմ, փոքրիկս, հավատում եմ։

Աննետան ժպտում էր, բայց մի անդամ էլ հառաչեց։ Սիլվիան ծունկի չոքած, ափերով սեղմեց քրոջ երեսը և հպվեց նրան։

— Չհամարձակվե՞ս։ Հիմա՛ր աղջիկ։ Եթե այդպես հոգոցներ ես հանելու, ես չեմ գնա։ Հո ես՝ այդքան անգութ չեմ։

— Իհարկե, ոչ, թանկագինս... Ես իրավացի չեմ, այլևս չեմ անի... Ասենք, ես քեզ չեմ էլ հանդիմանում։ Պարզապես դժվար է բաժանվել։

— Բաժանվել... Բա՞ն ասաց։ Հիմար աղջիկ։ Մենք տեսնվելու ենք, ամեն օր տեսնվելու ենք։ Դու կգաս։ Ես կգամ։ Իմ սենյակը դու կպահես։ Չլինի՞ որոշել ես ձեռքիցս առնել։ Ո՛չ, ո՛չ, սենյակն իմն է, չե՛մ տա։ Հենց որ հոգ-

նեցի, կգամ վայելելու։ Կամ այսպես. երեկո է, դու ինձ չես սպասում, ես գալիս եմ անսպասելի ժամի, իմ ձեռքին բանալի կա, ներս եմ մտնում և քեզ հանկարծակիի բերում... Տե՛ս հա՛, մտքովդ չանցնի չարաճճիություն անես։ Ա՛յ, կտեսնե՛ս, ինքդ կտեսնես, մենք դեռ ավելի կմտերմանանք, և ամեն ինչ մեզ մոտ ավելի լավ կլինի։ Բաժանվե՛լ։ Մի՞թե ես քեզ կթողնեմ, մի՞թե ես կարող եմ յոլա գնալ առանց իմ սքանչելի Աննետայի։

— Ալ դու շողոքորթ, անամոթ աղջիկ,— ասաց Աննետան, ծիծաղելով։— Լավ ես աչքերս կապում։ Դու խորամա՛նկ, խաբեբա՛։

— Աննետա՛, Բավ՛ական է հայհոյես,— խստորեն նկատեց Սիլվիան։

— Դե լավ։ Թող միայն խափլան ասեմ... Այդպես կարելի՞ է։

— Դա մի կերպ կարելի է,— ասաց Սիլվիան մեծահոգաբար։

Նա ընկավ Աննետայի վզով, սկսեց խեղդել նրան իր գրկում։

— Քո ասելով՝ ես խափլա՛ն եմ, ես, քո ասելով, խափլա՛ն եմ։ Ամուր կաց, թե չէ հիմա կուլ կտամ։

Քնքշությամբ ու խորամանկորեն նա Աննետայից նեռոմն ստացավ։ Ինդրեց քրոջը օգնել իրեն, որ իր սեփական արհեստանոցը բացի։ Քանամյա «աղջիկը» ուզում էր արհեստանոցի տիրուհի դառնալ, դուրս գալ ենթակայությունից և իր ենթակայության տակ ունենալ ոչ միայն իր մանեկենը։ Աննետան ցնծաց, ար կարող է նրան փող տալ։ Միասին նախահաշիվ կազմեցին։ Անվերջ քննարկում էին, թե ինչպես նոր տանը ամեն ինչ դասավորեն, մի քանի օր այո ու այն կողմ էին վազվզում բնակարան գտնելու համար, հետո կահույք ընտրեցին և երեսպատման կտոր, այնուհետև բոլորը տեղափոխեցին, ստացան քաղաքային իշխանությունների համաձայնությունը, երեկոները կազմում էին պատվիրատու կանանց ցուցակը, կառուցում էին պլանը պլանի հետևից, ծանր ու թեթև էին անում ամեն մի քայլը։ Այնքան այս ու այն կողմ ընկան, որ Աննետան վերջվերջո

կարծեց, թե Սիլվիայի հետ միասին տնտեսություն է դնում, եվ նրա մտքով նույնիսկ չէր անցնում, որ այսուհետև իրենց կյանքը ընթանալու է տարբեր ճանապարհներով։

Պատվիրատու կանայք չուշացրին հայտնվել Սիլվիայի մոտ։ Աննետան հյուր գնալիս հագնում էր իր սիրելի դերձակուհու կարած ամենագեղեցիկ շորերը և գովաբանում քրոջը։ Նրան հաջողվեց իր շրջապատից մի քանի երիտասարդ կանայք ուղարկել քրոջ մոտ։ Բացի դրանից, Սիլվիան առանց խղճի խայթ զգալու օգտվում էր իր նախկին պատվիրատու տիրուհիների հասցեներից։ Ասենք, նա խելացի էր և չէր շտապում լայնացնել իր գործունեության շրջանակը։ Շտապելու կարիք չկար։ Կյանքը երկար է։ Ժամանակը՝ շատ։ Նա սիրում էր աշխատանքը, բայց ոչ մոլուցքի հասնելու չափ, ինչպես որոշ մարդամոջյուններ, հատկապես կանացի սեռին պատկանողները, որոնք նրա աչքի առաջ աշխատանքով հյուծում էին իրենց։ Նա ուզում էր հաճույքներին նույնպես տեղ հատկացնել։ Աշխատանքը ևս բավականություն է։ Բայց միայն աշխատանքով չէ մարդ գոյություն պահպանում։ «Ամեն ինչից մի քիչ»— այդպիսին էր Սիլվիայի նշանաբանը, որը չափավոր էր իր ախորժակով, բայց լավ բաների սիրահար էր և հնարամիտ։

Նրա կյանքը շուտով այնպես լցվեց, որ Աննետայի համար այնքան էլ շատ ժամանակ չմնաց։ Բայց և այնպես այդ ժամանակի կեսը, ինչ էլ որ պատահեր, Սիլվիան նվիրում էր քրոջը. իր խոստումը նա կատարում էր։ Բայց Աննետայի սրտի համար այդ կեսը բավական չէր։ Նա ինքը չէր կարողանում տրվել կիսով չափ, մեկ երրորդով, մեկ քառորդով։ Աննետային վիճակված էր իմանալ, որ աշխարհը իր զգացմունքներում նման է մանր առևտրականի,— նա այդ զգացմունքները վաճառում է մանրածախ։ Երկար ժամանակ չեռ հասկանում այդ, իսկ ավելի ուշ հարմարվում ևս դրան։ Առայժմ Աննետան առաջին դասերն էր առնում։

Նա լռելյայն տառապում էր, տեսնելով, թե ինչպես է կամաց-կամաց ինքը հեռանում Սիլվիայի կյանքից։ Սիլվիան երբեք այլևս մենակ չէր լինում ոչ տանը, ոչ արհեստանոցում։ Իսկ շուտով նա մենակ չէր լինում նաև այն ժա-

մանակ, երբ չէր աշխատում։ Նորից ընկեր գտավ։ Աննետան եւ քաշվեց։ Քրոջ հանդեպ ունեցած սերը այժմ նրան պահպանում էր և խանդի բռնկումներից, և խիստ դատապարտումից, ինչպես առաջ էր լինում։ Սակայն թախծից չէր պահպանում։ Սիլվիան դեռ շարունակում էր քրոջն այնպես սիրել, որ, չնայած իր թեթևամտությանը, զգում էր, թե ինչպես է վշտացնում նրան։ Եվ ժամանակ առ ժամանակ դուրս էր պրծնում իր մեծ ու փոքր գործերի շրջանակից՝ անսպասելի կերպով, աշխատանքի կամ տեսակցության ժամին, ամեն ինչ թողնում էր, նույնիսկ ամենաանհետաձգելի գործերը, և սլանում Աննետայի մոտ։ Քնքշություն փոթորկի նման վրա էր տալիս։ Եվ քնքշության այդ փոթորիկը խուժում էր Սիլվիայի վրա ոչ պակաս ուժով, քան Աննետայի վրա։ Բայց փոթորիկը հեռանում էր. և երբ նա Սիլվիային Աննետայի մոտից քշում-տանում էր դեպի իր գործերը կամ, ավելի շուտ, դեպի հաճույքները, Աննետան, չնորհակալ իր վրա խուժող քնքուշ շաղակրատանքների, խնդարար խոստովանանքների, ծիծաղի և գրկախառնությունների մրրկին, հառաչում էր՝ է՛լ ավելի տանջվելով մենակությունից ու հոգեկան խռովքից։

Սակայն դա չէր նշանակում, թե Աննետան անելիք չուներ։ Նրա օրերը ծանրաբեռնված էին ոչ պակաս, քան Սիլվիայինը։

Կյանքը, նրա երկակի կյանքը՝ հոգևոր և աշխարհիկ, որ ընդհատված էր հոր մահվան պատճառով, նորից ընկել էր իր հունի մեջ։ Մտավոր պահանջները, որոնք վերջին տարում սրտի թելադրանքներով դուրս էին մղվել, արթնացան նոր ուժով։ Եվ մասամբ այն պատճառով, որ նա ուզում էր լսնել Սիլվիայի գնալուց հետո գոյացած դատարկությունը, մասամբ էլ այն, որ առատ շնորհներով օժտված մարդու ինտելեկտը հասունանում է կրքերով լեցուն կյանքի փորձությունների մեջ, Աննետան գիտական պարապմունքներով զբաղվելու ցանկություն զգաց, և ինքն էլ զարմացավ, որ գիտական հարցերից գլուխ է հանում ավելի լավ, քան առաջ։ Նա տարվել էր կենսաբանությամբ և մոքում հասու-

նացնում էր էսթետիկական զգացմունքի ծագման և բնույթյան մեջ նրա դրսևորումների մասին դիսերտացիայի ծրագիրը։

Աննետան վերականգնեց նաև աշխարհիկ կապերը, վերադարձավ այն շրջապատը, ուր առաջ հաճախում էր հոր հետ։ Հիմա դա նրան առանձնահատուկ բավականություն էր պատճառում։ Նրա իմացասեր մտքի համար, որն ավելի հասունացել էր, հաճելի էր, երբ այն մարդկանց մեջ, ում ինքը, թվում էր, թե հիանալի ճանաչում է, անսպասելի կերպով դրսևորվում էին այնպիսի գծեր, որոնց մասին ինքը նույնիսկ չէր էլ կասկածել։ Պակաս բավականություն չէր պատճառում նրան նաև բոլորովին ուրիշ մի բնագավառ—որոշ բաներ նա խոստովանում էր իրեն, իսկ շատ բաներ էլ թաքցնում էր իրենից. նա հաճույք էր ստանում և այն բանից, որ ինքը դուր է գալիս, և տարփանքի (ու զրկվանքի) մութ ուժերից, որոնք առաջանում են մեր մեջ, և մտքերի ու մարմինների փոխատարած հակամետությունից, որ թաքնվում է խոսքերի խաբուսիկ կեղևի տակ, և տիրանալու խլացրած բնազդներից, որոնք երբեմն դուրս են լողում սալոնային խղճուկ մտքերի հարթ ու միապաղաղ մակերեսը և, կարծես հենց նույն վայրկյանին անհետանում, մինչդեռ իրականում ալեկոծվում են խորքում։

Աշխարհիկ զվարճանքներն ու գիտական զբաղմունքները լցնում էին նրա ժամանակի միայն ոչ մեծ մասը։ Իսկ կյանքը ինչպես պետք է հագեցված էր լինում այն ժամանակ, երբ Աննետան մնում էր միայնակ ինքն իր հետ։ Երկար երեկոներն ու գիշերային ժամերը, երբ քունը անհնության աշխարհն է նետում հոգուն, իսկ հոգու հետ միասին նաև տենդային մտքերը, ինչպես ալիքն է նա նահանջելով, օվկիանոսի մութ խորխորատներից դուրս հանած բյուրավոր կենդանի էակներ թողնում ափին, Աննետան հայում էր իր ներքին ծովի մակընթացությանն ու տեղատվությանը և այն ափը, որ ողողված էր ծովի պարգևներով։ Դա գարնանային գիշերահավասարի շրջանն էր։

Աննետայի մեջ փոթորկվող ոչ բոլոր ուժերն էին նրա համար նորություն։ Քանի դեռ այդ ուժերի հղորությունը կրկնապատկվում էր, նրա մտավոր հայացքը մոլեգնորեն ու

սրատես թափանցում էր այդ ուժերի մեջ։ Նրանց հակասականի ռիթմերից սիրտը տանջվում էր, նվաղում... Հնարավոր չէ հասկանալ, թե այդ շփոթի մեջ կա՞ արդյոք որևէ ներքին կարգ ու կանոն։ Ջայլականության կատաղի պայքարը, որ ամառային ամպրոպի դղրդյունների նման ցնցեցին Աննեսայի սիրտը, երկար ժամանակով թողնց իր ազդեցությունը։ Թեև Տոպլիոյի մասին եղած հիշողությունները չընջվել էին, բայց ներքին հավասարակշռությունը խախտված էր։ Կյանքի խաղաղ ընթացքը, առանց որևէ իրադարձությունների, Անննեսայինն խաթարկանքի մեջ էին գցում. կարելի էր երևակայել, թե ոչ մի բան էլ տեղի չի ունենում, և անհոգորեն կրկնել պահակների բացականչությունը, որ հրաշալի գիշերներին լսվում է Իտալիայում։ «Tempo sereno!» Սակայն շոգ գիշերվա մեջ նորից էին հասունանում ամպրոպները, և անկայուն օդը թրթռում էր տագնապալի քամու շնչից։ Հավիտենական խլրտում։ Մեռած հոգիները, վերակենդանացած, ընդհարվում էին, հանդիպում այդ խանդավառ հոգում... Մի կողմից, հայրական վտանգավոր ժառանգությունը, մոռացված, քուն մտած տարփանքներն էին հանկարծ ելնում, ինչպես ալիքը ծովի խորքից։ Մյուս կողմից՝ այն ուժերը, որոնք գնում էին նրանց ընդդեմ. հոգևկան հպարտությունը, դեպի մաքրությունն ունեցած բուռն ձգտումը։ Եվ մի բուռն ցանկություն ևս— անկախության ձգտումը, ցանկություն, որն այնքան տիրականորեն խառնվում էր Սիլվիայի հետ ունեցած նրա հարաբերություններին և որին վիճակված էր— Աննեսան տագնապով էր այդ կանխազգում,— ուրիշ, ավելի ողբերգական ընդհարումներ սիրո հետ։ Հոգու այդ շարժումներն էին զբաղեցնում նրան, ձմռան երկար օրերին լցնում նրա ազատ ժամանակը։ Հոգին, որ ինչպես շերամի հարևյակ, թաքնվել էր մշուշոտ լույսից հյուսած բոժոժի մեջ, երազում էր ապագայի մասին և անսում ինքն իրեն՝ երազողին...

Եվ հանկարծ հողը գնում է ոտքերի տակից։ Գիտակցության ինչ-որ միջանումներ են, ինչպես լինում էին այս աշնանը, Բուրգունդիայում, մի տեսակ դատարկություններ,

---

1 Պարզ եղանակ է (իտ.)

ուր մարդ գահավիժում է... Դատարկությունն՞ր։ Ոչ, այնտեղ դատարկ չէ, բայց ի՞նչ է կատարվում խորքերում։ Տարօրինակ երևույթները, որոնք աննշմարելի էին, իսկ գուցեև ընդամենը տասը ամիս առաջ գոյություն չունեին և հայտնվել էին ամառվա հոգեկան ցնցումների օրերին, կրկրկրնվում էին ավելի ու ավելի հաճախ։ Աննետան մի աղոտ զգացում ուներ, որ իբր այդ անդունդները իր գիտակցության մեջ հրբեմն բացվում են նաև գիշերները, երբ ինքը քնած է լինում ծանր քնով՝ ինչպես հիպնոզացվածն։ Նա դուրս էր մագլցում այդ անդունդից, կարծես հեռվից հայտրնվելով, և ոչինչ չէր հիշում, բայց և այնպես նրան հետապնդում էր սևեռուն մի միտք, կարծես ինքը շատ կարևոր ինչ-որ բան էր տեսնում, ինչ-որ աշխարհներ, աննկարագրելի մի բան,— այն, ինչը դուրս է գալիս բանականության հասանելի և ըուլլատրելի սահմաններից, ինչ-որ կենդանական և գերմարդկային մի բան, որը մեզ ասլշեցնում է հին հունական քանդակագործների հրեշների մեջ, տաճարների ջրատար խողովակների վրա գտնվող քիմեռների երախներում։ Մատներին կպչող կավի մի գունդ։ Ծրագների անհայտ աշխարհի հետ կենդանի կապն էր զգացվում։ Նա թախծում էր, ամաչում, սիրտը ծանրացած էր։ Այրող զգացումը նվաստացնում և տանջում էր, թվում էր, մարդ հանցակցության մեջ է, բայց չի կարողանում հասկանալ, թե ինչպիսի։ Ամբողջ մարմինը մի քանի օր ներծծվում էր գարշելի հոտով։ Կարծես թե նա, գաղտնիքը պահպանելով, տանում էր օրվա աննկայուն տպավորությունների միջով, և նրա ողորկ, խաղաղ ճակատը, դեպի իր ներսն ուղղված անտարբեր հայացքը, կրծքին խոհեմաբար խաչած ձեռքերը թաքցնում են այդ գաղտնիքը յոթ կողպեքի տակ։— Նիրհող լճակ...

Աննետան անվերջ սավառնում էր երազանքների մեջ—և՛ աղմկոտ փողոցում, և՛ համալսարանում, և՛ գրադարաններում, որտեղ նա տքնաջան պարապում էր, և՛ հյուրասենյակներում՝ դատարկ, աշխարհիկ շաղակրատանքների ժամանակ, որոնց աշխուժացնում էին թեթև ֆլիրտն ու թեթև հեգնանքը։ Երեկույթներին նկատում էին, որ աղջկա հայացքը

տարակա է, նա մտացրիվ ժպտում է—ոչ այնքան նրանից, ինչ իրեն ասում են, որքան այն բանից, ինչի մասին ինքը պատմում է իրեն, որ նա բախտաբերի որսում է մեկնումեկի ասածը և անպատեհ պատասխաններ է տալիս, ականջ դնելով ինչ-որ անհայտ թռչունների երգին, որոնք թաքնված են իր հոգու վանդակում։

Մի անգամ այնքան բարձր երգեց նրա հոգու աշխարհը, որ նա, զարմացած, տարվեց այդ երգով, մինչդեռ կողքին իր բերկրությունը՝ Սիլվիան, քրքջում էր, խլացնում իր հաճելի բլբլոցով, խոսում... Իսկ ի՞նչ էր ասում Սիլվիան դա նկատեց, քրքջաց, ցնցեց քրոջը, նրա ուսերից բռնելով։

— Դու քնա՞ծ ես, քնա՞ծ ես, Աննետա։

Աննետան ժխտում էր։

— Հա, հա, ես տեսնում եմ. կանգնած տեղդ քնում ես, ինչպես կառապանային ծեր յաբու։ Իսկ գիշերներն ի՞նչ ես անում։

— Խաբեբայի մեկը։ Ապա ասա, տեսնեմ, դո՛ւ ինչ ես անում։

— Ե՞ս։ Ուզո՞ւմ ես իմանալ։ Շա՜տ լավ։ Հիմա կպատմեմ։ Չե՞ս ձանձրանա։

— Պետք չէ, պետք չէ,— ծիծաղով կրկնում էր Աննետան, վերջնականապես արթնանալով։

Աննետան ձեռքով սեղմեց քրոջ բերանը։ Բայց Սիլվիան դուրս պրծավ, ձեռքերի մեջ առավ Աննետայի գլուխը և նայեց նրա աչքերին.

— Սքանչելի աչքեր ունես, լուսնոտ։ Դե, ցույց տուր, ինչ կա ներսդ... ի՞նչ ես երազում, Աննետա։ Ասա՛, ասա՛։ Ասա, տեսնեմ, ի՞նչ ես երազում։ Պատմի՛ր։ Դե չո՜ւտ արա, պատմի՛ր։

— Ի՞նչ պատմեմ։

— Ասա, տեսնեմ, ինչ էիր մտածում։

Աննետան պաշտպանվում էր, բայց վերջիվերջո միշտ ստիպված էր լինում հանձնվել։ Քույրերին մեծ բավականություն էր պատճառում ամեն ինչ միմյանց պատմելը,— դրանով էր արտահայտվում նրանց քնքշությունը, իսկ գուցեև՝ էգոիզմը։ Դա նրանց չէր ձանձրացնում։ Եվ այդտեղ Աննե-

տան սկսում էր քանդել իր երազանքների կծիկը, ավելի շուտ սեփական հանգստության, քան Սիլվիայի համար։ Նա, փոքր-ինչ կմկմալով, շատ լուրջ, շատ բարեխիղճ, որից Սիլվիայի ծիծաղը սոսկալի գալիս էր, պատմում էր իր բոլոր մտքերը—խելացնոր, միամիտ, անկեղծ, ցնդած, հանդուգն, երբեմն նույնիսկ...

— Ա՜խ, Աննետա, Աննետա՛։ Դե ասա՛, ասա՛, որ այդպես է, մինչև վերջը,— բացականչում էր Սիլվիան, ձևացնելով, թե սրտմտում է։

Ըստ երևույթին, նրա ներքին կյանքը նույնպես պակաս տարօրինակ չէր (ոչ պակաս և ոչ ավել, քան մեր բոլորինը), սակայն նա այդ մասին չէր մտածում և ամենևին չէր հետաքրքրվում դրանով, քանի որ, ինչպես պատշաճ է գործնական էակին, նա մեկընդմիշտ և անվերապահորեն հավատում էր սոսկ այն բանին, ինչ տեսնում ու շոշափում էր, այն սթափ ու աննշան երազանքին, որը մարմնավորված էր ամենայն երկրայինի մեջ, և մի կողմ էր քաշվում իր հանգիստը խռովող ամեն ինչից, համարելով, որ դա դատարկ բան է։

Քրոջը լսելով, նա ծիծաղից թուլանում էր։ Այ քեզ Աննե՜տա, ո՞ւմ մտքով կանցներ։ Անմեղազուն տեսքով, միանգամայն լուրջ, երբեմն շշմեցուցիչ այնպիսի բանե՜ր կասի, որ... Իսկ ամենահասարակ, բոլորին հայտնի բաներից մեկ էլ տեսար քաշվեց։ Եվ դրանք Սիլվիայի՜ն է հաղորդում այդպիսի կարևոր տեսքով—միայն ծիծաղել կարելի է, ուրիշ ոչինչ։ Աստված գիտե, թե ի՜նչ անհեթեթ մտքեր են գալիս նրա գլուխը։ Սիլվիան համարում էր, որ քույրը լավն է, խելացնոր է և սատանան գիտե թե որքան է անմիտ։ Աննասելի սիրում է գլուխ ջարդել այնպիսի բաների վրա, որոնց մասին միայն կարելի է «երգել, ինչպես երգվում է»։

— Ինչպե՞ս երգել,— ասում էր Աննետան,— երբ իմ մեջ կես դյուժինի չափ մեղեդիներ են հնչում։

— Դա անչափ ուրախալի է,— նկատում է Սիլվիան,—

ուղղակի ոնց որ Բելֆորյան Առյուծի[1] պատվին կազմակերպված տոնախմբությունը լինի։

— Սարսափելի՜ է, — բացականչեց Աննետան, ականջները փակելով։

— Իսկ ես դա պաշտում եմ։ Մի երեք-չորս կարուսել, տիր, տրամվայների զնգոց, փոքրիկ երգեհոն, զանգուլակներ, սուլիչներ, բոլորը գոռգոռում են, մարդ ոչինչ հասկանալ չի կարողանում, աշխատում է մյուսներից բարձր գոռալ, ամեն ինչ ոռնում է, ամեն ինչ հոհոում է, ամեն ինչ շրխկշրխկում է, ամեն ինչ սիրտ է ուրախացնում...

— Դու ուղղակի գեղչկուհի՜ ես։

— Ընդունենք, ձերդ արիստոկրատուհյուն, որ դու ինքդ էլ ես այդպիսին, հենց նոր խոստովանեցիր։ Էհ, իսկ եթե դուր չի գալիս, ինձնից օրինակ վերցրու։ Ինձ մոտ ամեն ինչ կարգ ու կանոնով է։ Ամեն բան իր տեղն ունի։ Ամեն ինչ՝ իր հերթը։

Եվ նա ճիշտ էր ասում։ Ինչ շփոթ էլ թագավորեր Դենֆեր հրապարակի վրայի նրա սենյակում կամ փոքրիկ գըլխում, նա իսկույն ամեն ինչ իր տեղն էր դնում։ Մի ակնթարթում կարգ ու կանոն կարող էր սահմանել ամենաանհույս խառնափնթորության մեջ։ Կարողանում էր զուգակցել առօրեական կյանքի իր բոլոր, այնքան հակասական, պահանջները — և հոգևոր, և նյութական, և մոտիկ, և օտար։ Եվ ամեն ինչ իր արկղն ուներ։ Աննետան ասում էր.

— Դու իսկական կոմոդ ես... Ահա թե դու ի՜նչ ես։

(Եվ ցույց էր տալիս Լյուդովիկոս 15-րդի ժամանակների փոքրիկ պահարանը, որտեղ հոր նամակներն էին։

— Այո, — խորամանկ տեսքով պատասխանում էր Սիլվիան, — «նա» նման է ինձ։

(Խոսքը պահարանի մասին չէր)։

— Իսկ գլխավորը, ես հենց «իսկապեսն» եմ... որ կամ...

Նա ուզում էր Աննետային զայրացնել։ Սակայն Աննետան այլևս «ծուղակ չէր ընկնում»։ Նա արդեն չէր ուզում տիրանալ հոր ամբողջ ժառանգությանը։ Նրա գծերի

[1] Հուշարձան՝ 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի զոհերի պատվին, որ դրված է Փարիզի հրապարակներից մեկում։

իր թաժինը Աննետան ժառանգել էր ծվ հաճույքով կզիջեր դրանք։ Ուրիշ ժամանակ այդ բնակիչները բավական խանգարում էին։

Թե ինչպես այդ պատահեց, նա ինքն էլ չգիտեր, բայց վերջին տարին տրամաբանությունը սկսեց նրան դավաճանել, ամուր ոտքերը, որոնք առաջ հաստատուն կերպով կանգնած էին իրականության աշխարհում, սկսեցին գայթել։ Նա չէր կարողանում պատկերացնել, թե այդ բոլորը հիմա ինչպես նորից ձեռք կբերի։ Աննետան թանկ կվճարեր, որպեսզի ոտքերին լինեին Սիլվիայի կոշիկները, որոնք վստահորեն, առանց տատանվելու կտկտացնում էին կրունկներով գետնի վրա։ Նա զգում էր, որ կտրվել է այն ամենօրյա, ամենժամյա կյանքից, որն իր շուրջը վարում են բոլորը։ Ի հակադրություն քրոջը, նա չափից դուրս շատ էր տոգորված իր ներքին աշխարհի կյանքով և դրնթեև չտոգորված կյանքով այն աշխարհի, որ լուսավորված էր արևով։ Իհարկե, այդ աշխարհը նույնպես կտոգորեր նրան, էՆ ինքը չընկներ սեռական հակումների հզոր թակարդը, իսկ երազիտաները ընկնում են այդ թակարդը շատ ավելի շուտ և շատ ավելի անճարպիկ։ Վտանգավոր ժամը մոտենում էր։ Թակարդները դրված էին։

Միայն թե այդ թակարդները կարո՞ղ են արդյոք երկար պահել նրա հոգին՝ մեծ, ազատասեր։

Բայց առայժմ նրա մտքերը թափառում էին բուն էությունից դուրս, նա, իհարկե, չէր մտածում այդ մասին, իսկ եթե մտածեր, ապա կցատկեր զայրույթով ու վրդովմունքով։ Միևնո՞ւյն է։ Նրա յուրաքանչյուր քայլը իրեն ավելի ու ավելի էր մոտեցնում թակարդին...

Ստիպված եղավ խոստովանել իրեն. դեռ մի տարի առաջ նա տղամարդկանց հետ իրեն պահում էր հանգիստ, հավասարակշիռ, ընկերաբար, դե, իհարկե, փոքր-ինչ կոկետորեն, սիրալիր, բայց անտարբեր—նրանցից ոչինչ չէր սպասում, չէր վախենում նրանցից։ Իսկ հիմա նրանց նայում է միանգամայն ուրիշ աչքերով։ Հետևում էր նրանց, ապրում էր անհանգիստ սպասումներով։ Տուլլիոյի հետ

հանդիպելուց հետո նա կորցրեց իր ամբողջ հոգեկան հանգիստը՝ հանգիստը անխոով, նախանձելի։

Այժմ նա արդեն գիտեր, որ ինքը նրանց շրջանցել չի կարող, և հայրական ժպիտը շարժում էր նրա շրթունքները, երբ հիշում էր իր մանկական դատողությունները ամուսնության մասին։ Կրքի կրեատային խայծոցը մնացել էր նրա մարմնի մեջ։ Ողջախոհ ու կրակոտ, միամիտ ու փորձված, Աննետան հիանալի կերպով հասկանում էր իր բոլոր ցանկությունները։ Նա բանտում էր այդ ցանկությունների իր դիտակցության խորքում, սակայն նրանք հայտարարում էին իրենց ներկայության մասին, շփոթի մատնելով նրա բոլոր մտքերը։ Խելքի գործունեությունը խանգարված էր։ Մտածելու ունակությունը՝ կաթվածահարված, երբ նա պարապում էր, կարդում էր կամ գրում, զգում էր, որ հիմա ամեն ինչ ընկալում է շատ ավելի վատ։ Որևէ բանի վրա կենտրոնանալ կարող էր միայն աներևակայելի լարվածության գնով։ Շուտ հոգնում էր, գրգռվում։ Եվ իզուր էր ջանքեր գործադրում. նրա ուշադրության հանգույցը նույն րոպեին արձակվում էր։ Ամեն բան, ինչի մասին էլ ուզում է խորհելիս լիներ, ծածկվում էր ամպերով։ Այն նպատակները, որոնք նա իր առաջ էր դրել դեպի իմացություն տանող ճանապարհին, պարզորոշ գծագրված,— գերազանց կերպով գծագրված և գերազանց կերպով լուսավորված,— մշուշի մեջ աղոտանում էին։ Նրանց տանող ուղիղ ճանապարհը կտրվում էր հանկարծ։ Աննետան վհատված մտածում էր։

«Ես երբեք նրանց հասնել չեմ կարող»։

Կար ժամանակ, երբ նա հպարտորեն պնդում էր, որ կանայք օժտված են նույնպիսի մտավոր կարողություններով, ինչպես և տղամարդիկ, իսկ այժմ նվաստացած ասում էր իրեն.

«Ես սխալված եմ»։

Նա կարոտից տանջվում էր և, խորհրդածելով, եկավ այն եզրակացության (գուցե՝ ճիշտ, գուցե՝ սխալ), որ կանացի խելքի որոշ թերությունները, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ կնոջ մեջ զարերով չի մշակվել վերա-

ցական մտածողության, խելքի ակտիվ գործունեության օբյեկտիվ, ոչ մի անձնական բանով չաղտոտված այն սովորությիը, որը պետք է իսկական գիտության, իսկական արվեստին, ինչպես և նրանով—այսպիսի բացատրությունն էլ ավելի հավանական է,— որ կինը գաղտնաբար համակված է ամենազոր սուրբ բնազդներով, որոնք բնությունն է դրել նրա մեջ, նրանով, որ այդ շռայլ ներդրումը նեղություն է տալիս։ Աննետան զգում էր, որ մենակ լինել՝ նշանակում է լիարժեք չլինել, լիարժեք չլինել ո՛չ մտավորապես ո՛չ ֆիզիկապես, և ո՛չ էլ զգացմունքների աֆերայում։ Վերջին երկու բնագավառի մասին նա աշխատում էր խորհրդածել որքան կարելի է քիչ. չափազանց հանդագին էին դրանք հիշեցնում իրենց գոյությունը։

Նրա համար վրա էր հասել այն ժամանակաշրջանը, երբ այլևս չէր կարելի ապրել առանց ուղեկցի։ Եվ հատկապես կինը, քանի որ սերը նրա մեջ արթնացնում է ոչ միայն սիրեցյալ կնոջը, սերը նրա մեջ արթնացնում է մայրությունն։ Կինը այդ հարցում իրեն հաշիվ չի տալիս, այդ երկու զգացմունքները ձուլվում են միմյանց։ Աննետան դեռ չէր մտածել ոչ մի, ոչ մյուս զգացմունքի մասին, բայց ամբողջ սրտով ձգտում էր տրվել այն զգացմունքին, որը իրենից և ավելի ուժեղ է լինելու, և ավելի թույլ, որը կկըրկի նրան և կսեղմվի նրա կրծքին։ Եվ մտածելով այդ մասին, Աննետան քնքշությունից ուժասպառվում էր. եթե նրա արյունը կաթ դառնար, նա իր ամբողջ արյունը կտար սիրեցյալին... Ամի՜ր, ամի՜ր, սիրելի՜ս։

Ամբողջը տա՛լ... Ո՛չ, ո՛չ։ Ամբողջը տալ նա չի կարող։ Դա թուլացրած չէ նրան... Տալ ամբո՜ղջը։ Այո, իհարկե իր կաթը, իր արյունը, իր մարմինը, իր սերը... բայց հո բոլո՜րը չէ։ Հոգին էլ հո չպե՞տք է տա։ Հո չպետք է տա կա՞մքը։ Եվ ընդմի՞շտ... Ոչ, ոչ, նա գիտեր, ոչ մի դեպքում դա չի անի։ Եթե ուզի էլ չի կարող։ Չի կարելի տալ այն, ինչ մերը չէ,— իր ազատ հոգին։ Ազատ հոգին ինձ չի պատկանում։ Ես եմ պատկանում իմ ազատ հոգուն։ Չի կարելի այն տնօրինել։ Մեր ազատությունը փրկելը ոչ միայն մեր իրավունքն է, այլև մեր սրբազան պարտքը։

Աննետայի դատողություններում լայնախոհություն չկար — դրանում արտահայտվում էր մոր ժառանգությունը, բայց Աննետան այդ բոլորն ապրում էր բուռն կերպով, նրա փոթորկուն արյունը կարծես տաքացնում էր ամենավերացական մտքերը... Նրա «հոդի՜ն»... «Բողոքական» խո՜սքը (Ինքն այդպես էր ասում, հաճախ կրկնում էր այդ արտահայտությունը)։ Մի՞թե Ռաուլ Ռիվիերի դուստրը միայն մի հոգի ուներ։ Նա անթիվ-անհամար հոգիների տեր էր, և երկու-երեք սքանչելի հոգիներ այդ բազմության մեջ երբեմն չէին կարողանում հարմարվել...

Սակայն ներքին պայքարն ընթանում էր անգիտակցության բնագավառում։ Աննետան դեռ առիթ չէր ունեցել գործնականորեն փորձել իր հակասական կրքերը։ Դրանց պայքարը առայժմ մտքի խաղ էր՝ տաքարյուն, հուզող, բայց ոչ վտանգավոր։ Ոչինչ պետք չէր որոշել, կարելի էր շռայլություն թույլ տալ իրեն՝ մտովի ձեռնարկել այս կամ այն քայլը։

Ինչքա՜ն էին ինքն ու Սիլվիան քրքջում, քննարկելով մեր սրտի այդ պրոբլեմներից մեկը, որն ըմբոշխնում է երիտասարդ սիրտը իր անհոգության ու սպասումի տարիներին, քանի դեռ կյանքը ամեն ինչ մի անգամից չի լուծել քո փոխարեն, ամենաչնչին չափով անգամ, չմտահոգվելով քո սքանչելի օդային ամրոցների մասին։ Սիլվիան հիանալի հասկանում էր Աննետայի զգացմունքների երկատվածությունը, սակայն իր համար ոչ մի բանում հակասություն չկար։ Եվ Աննետան պետք է վարվի այնպես, ինչպես Սիլվիան ինքն է վարվում. դուր է գալիս — սիրիր, դուր չի գալիս — քեզ պահիր ազատ...

Աննետան գլուխն օրորեց.

— Ոչ։

— Ի՞նչը՝ ոչ։

Բացատրել նա չէր ուզում։

Սիլվիան քթի տակ ծիծաղելով, հարցնում էր.

— Համարում ես, որ դա միայն ի՞նձ է սազում։

Աննետան պատասխանում էր.

— Ամենևի՛ն, սիրելիս։ Դու ինքդ լավ գիտես, որ ես քեզ սիրում եմ այնպես, ինչպես ինքդ կաս։

Բայց Սիլվիան չէր սխալվում։ Աննետան հանուն նրա հանդեպ ունեցած սիրո հրաժարվում էր դատապարտել (լուռ հառաչելով) Սիլվիայի ազատ սերը։ Բայց մտքով անգամ չէր անցնում, թե այդպես կարող է վարվել ինքը։ Այդտեղ դրսևորվում էին ոչ միայն մոր պուրիտանական համոզմունքները, որի համար դա խայտառակություն կարող էր համարվել։ Նրա բնավորության ամբողջականությունը, զգացմունքի լիակատարությունը—ահա ինչն էր, որ թույլ չէր տալիս մանրացնել սերը։ Չնայած անպարզ, բայց կյանքով ապրող ազնվականության հզոր կանչին, Աննետան այն ժամանակ չէր կարողանում առանց վրդովմունքի մտածել, որ լինում է այնպիսի սեր, երբ մարդու էությունը, զգացմունքները, սիրտը, միտքը, իր նկատմամբ ունեցած հարգանքը, հարգանքը ուրիշի հանդեպ, կրքով համակված հոգու սրբազան պոռթկումը, խրախճանք չեն անում բոլորը միասին։ Մարմինը հանձնել և պահպանել հոգին—ոչ, այդ մասին խոսք անգամ լինել չի կարող... Դա գավաճանությո՞ւն է։ Այդպես, ուրեմն, մնացել է մի լուծում միայն. ամուսնանալ, սիրել ամբողջ կյանքում։ Կարո՞ղ էր արդյոք այդ երազանքը իրականանալ մի աղջկա համար, ինչպիսին Աննետան էր։

Կարող էր, թե չէ, բայց երազելը չէր արգելվում։ Եվ նա երազում էր։ Նա դուրս էր եկել իր երիտասարդության անտառի բացատը այն սքանչելի ակնթարթին, երբ վերջիվերջո ծառերում անձնատուր լինելով գրգանքներին, երազանքների շղարշի տակ, հանկարծ տեսնում ես, որ արևով ողողված հարթավայրում հեռուն են փախչում երկար, ոտք չդիպած ճանապարհները։ Իսկ ո՞ր ճանապարհի վրա կմնա քո ոտքերի հետքը։ Մի՛ շտապիր ընտրել. ժամանակ կա։ Խելքը, հապաղելով, ծիծաղում ու վերցնում է ամբողջը։ Երջանիկ աղջիկը, որին անծանոթ են կյանքի առօրյա հոգսերը, որը ողողված է սիրո լույսով, հավաքելով հույսերի մի ամբողջ խուրձ, տեսնում է, որ իր սրտի ընտրությանն են առաջարկում տասնյակ կյանքեր, և նույնիսկ

չհարցնելով իրեն. «իսկ ո՞րը գերադասել»— վերցնում է ամբող խուրձը. նա ուզում է ներծծել դրա բուրմունքը։ Աննետան սիրում էր երևակայել ապագայի պատկերը, և նրա ընտրյալը մերթ մեկն էր լինում, մերթ մյուսը, մերթ երրորդը, նա մի կողմ էր նետում կծած պտուղը, փորձում էր մի այլը, նորից էր վերցնում շպրտածը, նույն րոպեին համոտեսում էր մի ուրիշը նույնպես, և ոչ մի կերպ չէր ընտրում։ Տատանումների շրջան, շրջան անհո՞գ և խանդավառ։ Սակայն այդ շրջանում ևս մարդը շուտով սկսում է ճանաչել, թե ինչ է հոգնածություն, ուժերի ընկճող անկումը, իսկ երբեմն էլ առանց հույսերի՝ կասկածանքը։

Այդպես էր երազում Աննետան իր կյանքի մասին— իրեն սպասվելիք կյանքերի մասին. նա իր անորոշ սպասումները հայտնում էր միայն Սիլվիային։ Իսկ Սիլվիան զվարճանում էր, որ քույրը անհանգստացած է, որ նա ուժասպառվել է և ոչինչ որոշել չի կարողանում։ Այդ բոլորը նրա համար էլ հասկանալի չէր, քանի որ նա սովորել էր (և պարծենում էր դրանով, Աննետային զայրույթ պատճառելով) նախ որոշում կայացնել, իսկ հետո միայն ընտրել։ Բայց վճիռ կայացնել միանգամից։ Դեռ ընտրելու ժամանակ կլինի։

— Համենայն դեպս,— ասում էր նա ինքնագոհ քմծիծաղով,— գիտես, թե խոսքն ինչի մասին է։

Աննետան մեծ հաջողություն էր ունենում բարձրախավ հասարակության մեջ։ Նրան սիրահետում էին գրեթե բոլոր երիտասարդները։ Այդ պատճառով էլ աղջիկները,— իսկ շատերը Աննետայից գեղեցիկ էին,— նրան չէին սիրում։ Առանձնապես նրանց խոցում էր այն, որ Աննետան կարծես ճիգ ու ջանք չէր էլ թափում՝ դուր գալու համար։ Նա թվում էր ցրված, մի տեսակ բացակա և ոչ մի բան չէր անում, որպեսզի հետաքրքրություն առաջացնի այն տղամարդկանց մեջ, որոնք քարշ էին գալիս իր հետևից կամ շոյի նրանց ինքնասիրությունը։ Մեկ էլ տեսար հանգիստ իր համար տեղավորվում է հյուրասենյակի որևէ անկյունում, թույլ է տալիս նրանց, որ մոտենան իրեն, կարծես անգամ

չի էլ նկատում նրանց ներկայությունը, ժպտում է, ունկնդրում (բայց ոչ ոք չգիտեր, լսո՞ւմ է արդյոք)։ Նրա պատասխանները դուրս չէին գալիս սովորական սիրալիրության սահմաններից։ Եվ այնուամենայնիվ տղամարդիկ շրջապատում էին նրան, աշխատում էին դուր գալ, բոլորը— և բարձրաշխարհիկ առյուծները, և փայլուն ղրուցակիցները և ուղղակի հաճելի երիտասարդները։

Նախանձով կանայք հավատացնում էին, որ Աննետան ձևեր է թափում, որ նրա անտարբերությունը փորձված կոկետուհու ձև է։ Նրանք սկսեցին նկատել, որ որոշ ժամանակից ի վեր Աննետան սկսել է հագնվել ոչ իր չափազանց խստապույն ոճով, այլ էլեգանտ ու պերճաշուք, և որ օրիգինալ արդուզարդերը ցայտունության են տալիս, ինչպես ասում էին, նրա անգույն, ոչ գեղեցիկ արտաքինին։ Չար լեզուները ավելացնում էին, որ Աննետայի շուրջը պատվում են ոչ թե նրա գեղեցիկ աչքերի երկրպագուները, այլ կարողության։ Վայելչագեղ հագնվելու արվեստը, ասենք, Աննետայի շնորհքը չէր։ Դա Սիլվիայի ստեղծագործությունն էր, նրա ճաշակի արդյունքը, նրա հնարամտությունները։ Իհարկե, Աննետան «ձեռնտու հարսնացու» էր, նրա համար հառաչողների խումբը, հասկանալի է, դա հաշվի էր առնում, այդ պատճառով էլ նրանք Աննետայի հանդեպ իրենց նուրբ զգացմունքները դրսևորում էին առանձնահատուկ հարգանքով, բայց հենց այդ դերն էր միայն, որ կատարում էր տվյալ հանգամանքը։ Եթե նա անօժիտ աղջիկ լիներ, երկրպագուների թիվը չէր պակասի, միայն թե նրան խիբահետեին ավելի համարձակ։

Նրա հմայքի ուժը ուրիշ բանի մեջ էր։ Աննետան պըլըտուհի չէր, բայց դրա փոխարեն գործում էին բնազդները։ Հզոր և անխաղաղհարելի բնազդները իրենք գիտեին, ինչ պետք է անեն, և գործում էին անվրեպ։ Որովհետև նրա կամքը մնում էր մի կողմ քաշված։ Քանի դեռ Աննետան ժպտում էր, նվաղելով ու կարծես սուզվելով իր ներքնաշխարհը, լողալով իր ոչ պարզորոշ երազանքների փազաքուշ ալիքների վրայով, ամեն ինչ տեսնելով ու լսելով ինչոր երանավետ կիսաքնության մեջ, նրա փոխարեն խոսում

էր մարմնականը։ Անհաղթահարելի մի կախարդանք էր ցայտում նրա աչքերից, շուրթերից, նրա ամբողջ թարմ, ուժեղ մարմնից, նրա երիտասարդ էությունից, որը ծանրաբեռնված էր սիրո տանջանքներով, ինչպես գլիցինիան՝ ծաղիկներով։ Նրա հմայքը անսահման էր, և ոչ ոքի (բացի կանանց) մտքով էլ չէր անցնում, որ նա գեղեցիկ չէ։ Նա քիչ էր խոսում, բայց բավական էր թեկուզև սովորական դատարկ շաղակրատանքի ժամանակ մի խոսք ասեր, որպեսզի իսկույն բացվեր նրա արտասովոր մտքի լայն հորիզոնը։ Այդ պատճառով էլ նրա մոտ էին ձգտում նրանք, ովքեր կնոջ մեջ հոգի էին փնտրում, և նրան ցանկանում էին այն մարդիկ, ովքեր կռահել էին, որ նրա նիրհող մարմնում (քնած լճախորշում) անհայտ երանությունների գանձարան է թաքնված։

Նա կարծես ոչինչ չէր տեսնում, մինչդեռ իրականում հիանալի տեսնում էր։ Այդպիսին է կանանց հատկությունը։ Աննետան ի լրումն այդ ամենի, նաև հարուստ բնազդ ուներ, որը հաճախ բնորոշ է լինում ուժեղ և գործունյա բնավորություններին։ Շնորհիվ այդ բնազդի մենք առանց խոսքի և ժեստերի իսկույն ևթ սկսում ենք հասկանալ այն համր լեզուն, որով խոսում ենք միմյանց հետ։ Երբ Աննետան ցրված էր թվում, դա նշանակում էր, նա ականջ է դնում իր բնազդի ձայնին։ Սրտերի մթի՞ն անտառ... Ե՛վ նրանք, և՛ նա որս էին փնտրում։ Հետամուտ էին լինում։ Աննետան որոշ ժամանակ ընդհանում էր մերթ մի, մերթ մյուս հետքով և, վերջապես, ընտրություն արեց։

Երիտասարդները, որոնցից նա կարող էր կատարել իր ընտրությունը, այն խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներն էին, կրթված, գործունյա, առաջադեմ (համենայն դեպս նրանք բոլորն էլ այդպես էին մտածում), որոնց պատկանում էր նաև Ռաուլ Ինվիերը։ Վերջերս էր հանդարտվել Դրեյֆուսի գործի բարձրացրած, փոթորիկը։ Այդ «գործը» մոտեցրեց այլախոհներին—նրանց համախմբեց դեպի սոցիալական արդարություն ունեցած բոլորի համար ընդհանուր բնազդական ձգտումը։ Այդ բնազդային ձգտումը, ինչպես հետագայում պարզվեց, դուրս եկավ ոչ ա-

ռանձնապես կայուն։ Սոցիալական անարդարությունը Ռիվիերի համար հանդեցվեց մենամարտի այդ անարդարության։ Իսկ Ռիվիերի նմանները հազարներ էին. աշխարհում տեղի ունեցող անօրինությունները նրան չէին խանգարում հանգիստ քնել։ Նա նույնիսկ հաջողեցրեց առանց խղճի խայթի չափազանց շահավետ գործարքներ կնքել սուլթանի հետ,— և դա այն օրերին, երբ նորին մեծությունը, աչքն առանց թարթելու, թույլ տվեց իրեն ներողամիտ եվրոպայի կողքին կատարել առաջին հայկական կոտորածը, և չնայած դրան, նա խոր և անկեղծորեն վրդովված էր Դրեյֆուսի հռչակավոր գործի համար։ Ջի՛ կարելի չափազանց շատ բան պահանջել մարդկանցից։ Մի անգամ կյանքում նրանք մարտընչել են հանուն արդարության, և արդեն ուժասպառվել են։ Բայց դրա փոխարեն նրանք մի անգամ կյանքում արդարամիտ են եղել—ուրեմն, եկեք երախտապա՛րտ լինենք նրանց։ Նրանք իրենք էլ են իրենց երախտապարտ։ Ռիվիերի շրջապատը, այն ընտանիքները, որոնց սերունդներն այժմ պատվում են Աննեսսայի շուրջը, ամենևին չէին տարակուսում, որ իրենք քիչ բանի չեն հասել իրավունքի պաշտպանության գործում և որ իրենց փառքի ավելացման կարիքը այլևս չունեն։ Այդ մարդիկ մեկընդմիշտ իրենց երևակայեցին առաջադիմության կողմնակիցներ և ձեռքներ ծալեցին։

Խաղաղվելով այդ անցման շրջանում նաև միջազգային դրությամբ, երբ սոցիալական պայքարը դրեթե խլացնում էր ազգային երկպառակությունները, չհաշված արդեն անդուժելի անգլո-ֆոբիան, այդ խանձողը, որ բռնկվել էր դեռ Անգլո-բուրական պատերազմի օրերին և տակավին ծխում էր, օժտված չափավորականների հայրենասիրական ամենևին ոչ ռազմատենչ զգացումներով, որոնք հակված էին դեպի հանդուրժողականությունն ու բարեհոգությունը, քանի որ նրանք պատկանում էին հաղթանակող կուսակցությանը և լավ ապահովված էին,— նրանք կազմում էին հասարակության այն մասը, որը, ըստ երևույթին, խաղ ու պարով էր ապրում, քարոզում էր ազատ բարոյականություն՝ ինչ-որ անորոշ հումանիզմի երանգով, իսկ ավելի

ճիշտ ուտիլիտար, սկեպտիցիզմով լեցուն, առանց որևէ սկզբունքների, բայց նաև առանց որևէ նախապաշարումների... (Ջափից ավելի վատահել չէր կարելի...)։ Նրանց շարքերում հաշվվում էին մի քանի կաթոլիկ-լիբերալներ, թվով ոչ քիչ բողոքականներ, ավելի շատ հրեաներ, իսկ հիմնական մասը կազմում էր բարեվարք ֆրանսիական բուրժուազիան, որը օտար էր կրոնին և կրոնը փոխարինել էր քաղաքականությամբ։ Նա կրում էր ամենատարբեր պիտակները, բայց լրիվ չհրաժարվեց հանրապետական ոգուց, որը երեսուն տարի դիմանալով, ձեռք բերեց ամենահարմար ձևը—կոնսերվատիվիզմը։ Այդտեղ կային նաև սոցիալիզմի երկրպագուներ—երիտասարդ, հարուստ և ուսյալ բուրժուաներ, որոնք հրապուրված էին Ժորեսի պերճախոսությամբ և օրինակով։ Դեռ շարունակվում էր սոցիալիզմի և հանրապետության մեղրամիսը։

Աննետան երբեք լուրջ կերպով չէր հետաքրքրվել քաղաքականությամբ։ Նրա ներքին կյանքն այնքան էր հարուստ, որ դրա համար այլևս ժամանակ չէր մնում։ Բայց կար մի ժամանակ, երբ նա, ինչպես և մյուսները, Դրեյֆուսի գործը ջերմորեն սրտին մոտ էր ընդունում։ Հոր հանդեպ ունեցած սերը Աննետային ստիպում էր ամեն ինչին նայել նրա աչքերով։ Սրտի թելադրանքով, ազատամտությունից, որով օժտված էր նրա բնավորությունը, Աննետային վիճակված էր միշտ պահել ճնշվածների կողմը։ Ահա թե ինչու նա ուժեղ հուզմունքի րոպեներ զգաց, երբ Զոլան և Պիկարը անվախորեն նետվեցին կատաղի գազանի—ըղձության կտրած հասարակական կարծիքի վրա։ Եվ երբ նա անցնում էր «Շերշ-Միդի» բանտի կողքով, ըստ երևույթին, նրա սիրտը նույնպես, ինչպես շատ աղջիկներինը, բարձրաձայն ու տագնապով խփում էր այն մարդու համար, ով տանջվում էր այնտեղ։ Սակայն Աննետան իրեն հաշիվ չէր տալիս այդ զգացմունքների համար։ Նա չէր կարողանում իրեն ստիպել ուշադիր կերպով վերլուծելու Դրեյֆուսի գործը։ Քաղաքականությունը նրա մեջ զզվանք էր առաջացնում։ Նա մի անգամ քիչ մնաց փորձ անի ընտելանալ քաղաքականությանը, բայց նույն այդ ժամանակ ձանձրույթով ու զզվանքով ետ քաշվեց իսկույն, իսկ թե ինչու—նա

չէր էլ փորձում պարզել իր համար։ Աննետան միշտ ճըշմարտության աչքերին էր նայում, և տեսնում էր, որ յուրաքանչյուր կողմը, ընդհանուր առմամբ, խղճուկ էր և համարյա հավասարապես անմաքուր։ Իսկ սիրտը, որ այնքան պարզորոշ չէր տեսնում, ինչպես աչքերը, անվերջ ուզում էր հավատալ, որ արդարության գաղափարների համար մարտնչող կուսակցությունը պետք է կազմված լինի ամենաարդարամիտ մարդկանցից։ Եվ Աննետան հանդիմանում էր իրեն, որ ծուլությունից—այդպես թվում էր— ինքը չկարոզացավ ավելի լավ տեղեկանալ նրանց գործունեությանը։ Ահա թե ինչու էր ինքը նրանց վերաբերվում մի տեսակ սպասողական բարյացակամությամբ, ոչ ավելին,— այդպես, լսելով երաժշտական մի նոր ստեղծագործություն, որի երաշխիքը նշանավոր կոմպոզիտորի անունն է, ակամայից մարդ ակնածանքով է լցվում նրա հանդեպ, ու թեև չի հասկանում այդ ստեղծագործությունը, բայց պատրաստ է նախապես հավատալու, որ այն հիանալի է, և, գուցե, շատ ավելի ուշ միայն մարդ հայտնագործի այդ իր համար։

Աննետան, որ մաքուր սրտով մարդ էր, հավատում էր պիտակների չարատավորվածությանը, չիմանալով, որ չկա ավելի մեծ խաբեություն, քան այն խաբեությունը, որ տեղի է ունենում գաղափարների առևտրում։ Նա դեռ հավատում էր հապճեպորեն մոգոնված որոշ «իզմերի» կենսունակությանը, որոնց վրայի պիտակներն ազդարարում էին տարբեր քաղաքական տրամաբանություններ, և Աննետային գրավում էին նրանք, ովքեր հայտարարում էին առաջադեմ կուսակցությունների մասին։ Նա մոլորվում էր, հոգու խորքում փայփայելով այն հույսը, թե հենց այնտեղ էլ կարող է կյանքի ուղեկից գտնել։ Նա ընտելացել էր ազատ օդին և ձգտում էր դեպի նրանց, ովքեր, ինչպես և ինքը, նողկանք էին զգում հնացած նախապաշարումներից, բորբոսնապատ սովորություններից և անցյալի շենքում կանգնած նեխած օդից։ Նրա մտքով նույնիսկ չէր անցնում սևացնել այդ հնամենի կացարանը։ Չէ որ դա ամբողջական սերունդների երազանքների պահեստարանն էր։ Սակայն օդն այնտեղ գար-

չելի էր։ Եթե որևէ մեկին դա ցանկալի է, թող ինքը մնա։ Իսկ նրան մաքուր օդ է պետք։ Եվ նա աչքերով փնտրում էր մի ընկերոջ, որը կարող էր օգնել նրան վերակառուցել հին տունը, դարձնել այն ընդարձակ ու լուսավոր։

Հյուրասենյակներում քիչ երիտասարդներ չէին հավաքվում, որոնք, թվում էր, թե ընդունակ են նրան հասկանալու, օգնելու նրան։ Շատերը—պիտակով ու անպիտակ—աչքի էին ընկնում իրենց հայացքների համարձակությամբ։ Սակայն, դժբախտաբար, նրանց համարձակությունն ընթանում էր այլ ճանապարհներով։ «Կյանքի պոռթկումը», մի փիլիսոփայի արտահայտությամբ, նրանց մոտ սահմանափակ էր։ Նա երբեք միանգամից չի տարածվում բոլոր կողմերի վրա։ Հազվադեպ, վերին աստիճանի հազվադեպ ես հանդիպում այնպիսի մտածող մարդկանց, որոնք լուսավորում են ամեն ինչ իրենց շուրջը և առաջ են գնում։ Այն մարդկանց մեծամասնությունը, ում հաջողվել է լույս վառել (իսկ այդպիսիները շատ չեն), իրենց ջահերով լուսավորում են միայն մի մասը, մեր առջևում ընկած ճանապարհի մի աննշան մասը, իսկ շուրջը ամենուրեք թագավորում է անթափանց խավար։ Եվ նույնիսկ կարելի է ասել, որ, շարժվելով առաջ, գրեթե միշտ հատուցում ես նրանով, որ նահանջում ես մյուս ուղղությամբ։ Հեղափոխականը քաղաքականության մեջ երբեմն արվեստում լինում է ապաշնորհ պահպանողական։ Իսկ եթե անգամ նա մի կողմ է նետել իր մի բուռը նախապաշարումները (այն նախապաշարումները, որոնց ամենից քիչ է հետևել), ապա ավելի ամուր է կառչում մնացածից։

Ոչ մի բնագավառում այնպիսի ուժով երևան չէր գալիս այն ժամանակ, թե որքան է անհարթ ապագա տանող այդ խորդուբորդ ճանապարհը, որքան սեռերի բարոյական էվոլյուցիայում։ Կինը աշխատելով իր հարաբերությունները խզել անցյալի սխալների հետ, ոտք էր դնում նոր հասարակություն տանող արահետներից մեկի վրա, և հազվադեպ էր նրան հաջողվում հանդիպել մի տղամարդու, որը նույնպես ձգտելիս լիներ դեպի կյանքի նոր ձևերը։ Տղամարդն ուրիշ ճանապարհ էր ընտրում։ Եվ եթե նրանց ուղղաբերձ

հանապարհներին վիճակված էր անգամ լեռան կատարին մի ակնթարթ խաչվել, ապա նրանք թիկունքով իրար էին շրջվում։ Նպատակների այդպիսի զանազանությունը այն դարաշրջանում հատկապես զարմանք էր պատճառում Ֆրանսիայում, որտեղ կանանց մտավոր զարգացումը նախկինում ևս էր մնում, իսկ ահա արդեն մի քանի տարի է պատրաստվում էր թռիչք կատարել, որի համար տղամարդիկ այն ժամանակ իրենց հաշիվ չէին տալիս։ Ասենք, իրենք կանայք էլ միշտ չէ, որ պարզ կերպով պատկերացնում էին այդ, մինչև որ մի գեղեցիկ օր իրենք դեմ չառան մի պատի, որը նրանց բաժանում էր ուղեկիցներից։ Հարվածը սարսափելի էր։ Աննետային վիճակվեց,— և դա թանկ նստեց նրա վրա,— հանդիպել այդպիսի տխուր թյուրիմացության։

Հոգիներն ամբողջական պարսով էին ճախրում Աննետայի շուրջը, և նրա աչքերը, նրա ցրված աչքերը, որոնք անշմարելի կերպով զննում էին յուրաքանչյուրին, նոր միայն ընտրություն կատարեցին։ Բայց ոչինչ չասացին։ Նա ուզում էր ավելի երկար ձևանալ ինքն իր առջև, իբրև թե դեռ շարունակում է տատանվել։ Երբ այլևս անվճռականությունը չի տանջում, ապա հաճելի է մտովի կրկնել. «Չէ որ ես դեռ ոչնչով կապված չեմ»— և վերջապես լայնորեն բացել հույսի դարպասները։

Նրանք երկու հոգի էին—քսանութ-երեսուն տարեկան երկու երիտասարդ—Մարսել Ֆրանկը և Ռոժե Բրիսսոն,— հենց դրանց միջև էլ Աննետան տատանվում էր՝ ապագայի պլաններ կազմելով, թեև հիանալի գիտեր, ով է իր ընտրյալը։ Երկուսն էլ պատկանում էին բուրժուական ունևոր ընտանիքների, նրբաճաշակ էին, բարեկիրթ, խելացի, սակայն և՛ նրանց շրջապատող միջավայրը, և՛ քնավորությունները միանգամայն տարբեր էին։

Մարսել Ֆրանկի մեջ, որը կիսով հրեա էր, մի հմայք կար, որ հաճախ ծնվում է երկու ռասաների լավագույն ներկայացուցիչների խառն ամուսնությունից։ Միջին հասակ, նրբաձև կազմվածք, դեմքի փայլատ գույն, կապույտ աչքեր, սպաստավոր քիթ, շեկ մորուք։ Նրա երկարավուն պրոֆիլը, փոքր-ինչ ձիային, հիշեցնում էր Ալֆրեդ դը Մյուսեի

պրոֆիլ։ Նույնպիսի խելացի, փաղաքշող հայացք՝ մերթ քնքուշ, մերթ հանդուգն։ Նրա հայրը, որ մահուդի առևտրով զբաղվող հարուստ վաճառական էր եղել, ճարպիկ գործարար և խանդավառ մարդ, որ հակված էր եղել դեպի ժամանակակից արվեստը, աջակցել էր երիտասարդ ժուռնալիստուհուն, գնել էր Վան-Գոգի և մաքսատան պաշտոնյա Ռուսսոյի կտավները, ամուսնացել էր մի գեղեցկուհի տուլուզուհու հետ,— վերջինս թատերական ուսումնարանում երկրորդ մրցանակ էր ստացել և որոշ ժամանակ Անտուանի և Պորելի մոտ առաջին դերեր էր կատարում։ Իսկ Ֆրանկը, որ հաստատակամ մարդ էր, սկզբում նրան վերցրեց գրոհով, իսկ հետո օրինական կերպով ամուսնացավ հետը։ Այդ ժամանակ նա թողեց բեմը, չնայած իր աղմկալից հաջողությանը, և մեծ ոգևորով սկսեց վարել միաժամանակ և ամուսնու գործերը և իր զրական սալոնը, որը արվեստի աշխարհում շատ լավ հայտնի էր։ Ամուսիններն ապրում էին համերաշխ. լուռ համաձայնությամբ նրանք մատների արանքով էին նայում մեկը մյուսի վարքագծին, հանուն ընդհանուր շահերի ամեն ինչ այնքան հմտորեն էին դասավորում, որ խուսափում էին բոլոր տեսակի բամբասանքներից, և դաստիարակեցին իրենց միակ որդուն փոխադարձ բարեկամության մթնոլորտում—ծիծաղելի, բայց ներողամիտ։ Մարսել Ֆրանկը յուրացրեց այն միտքը, որ աշխատանքն ու հաճույքը ներդաշնակում են, որ ապրելու արվեստը հենց դրանց իմաստուն զուգակցման մեջ է։ Եվ նա ուսումնասիրում էր այդ արվեստը նույնպիսի խորությամբ, ինչպես ամեն մի ուրիշ արվեստ, և գարձավ նրա հմուտ գիտակը։ Նա ծառայում էր ազգային թանգարանների վարչությունում և վաղուց արդեն հայտնի էր որպես արվեստագետ։ Նրա դանդաղկոտ, խորաթափանց, հանդուգն և միևնույն ժամանակ ներողամիտ հայացքը կարողանում էր կարդալ ոչ միայն նկարները, այլև կենդանի դեմքերը։ Եվ Աննետայի հոգին կարդում էր ավելի լավ, քան նրա բոլոր երկրպագուները։ Աննետան դա լավ գիտեր։ Երբեմն նա հազիվ էր սթափվում իր մշուշապատ երազանքներից կամ, խոսելով մի բանի մասին, սկսում էր մտածել բոլորովին մի ուրիշ բան—և հանկարծ հայացքը

հանդիպում էր Մարսիլ Ֆրանկի հետաքրքրվող հայացքին, որը կարծես նրան ասում էր.

«Աննետա, ես ձեզ տեսնում եմ ամբողջությամբ, ոնց որ մերկ»։

Եվ ահա թե ինչն էր տարօրինակ. նա՝ մաքրաբարո Աննետան, ամենևին չէր քաշվում, նույնիսկ ուզում էր հարցնել.

«Եվ ի՞նչ, ես ձեզ դո՞ւր եմ գալիս»։

Նրանք իրար հասկանալի ժպիտներ էին փոխանակում։ Թող պոկի Աննետայի վրայից շղարշը, նրա համար միևնույն է. Աննետան գիտեր, որ ինքը երբեք նրան չի պատկանելու։ Մարսելն այդ կարդում էր նրա հոգու մեջ, բայց չէր անհանգստանում, մտածում էր.

«Կապրենք—կտեսնենք»։

Քանի որ Մարսելը գիտեր ուրիշին։

Ուրիշը՝ Ռոժե Բրիսսոն, նրա լիցեական ընկերն էր։

Ֆրանկը հիանալի հասկանում էր, որ Աննետան նախապատվությունը տալիս է Բրիսսոյին։ Համենայն դեպս՝ առայժմ... է, իսկ հետո՞... Հետո՝ կտեսնե՞նք..., Բրիսսոն գեղեցիկ էր. անկեղծ, հաճելի, պարզ դեմք ուներ, ուրախ շագանակագույն աչքեր, համաչափ, փոքր-ինչ կոպտավուն դիմագծեր, լիքը-լիքը այտեր, պինդ ատամներ, մաքուր սափրված էր, խելացի ճակատի վերևում կողքի սանրած պատանեկորեն սև ու խիտ մազերի դեզով։ Նա բարձրահասակ էր, թիկնեղ, ոտքերը երկար էին, ձեռքերը մկանուտ, քայլվածքը թեթև, շարժումները կորուկ։ Նա լավ էր խոսում, շատ լավ ձայնը մի տեսակ սրտագին ու հաճելի էր, մելոդիկ, ցածր և հնչեղ, որ բոլորին այնքան դուր էր գալիս, որ դուր էր գալիս նաև իրեն։ Սակայն նա մրցակցում էր Ֆրանկի հետ, հազվադեպ ընդունակություններ ուներ, ամեն ինչ ակնթարթորեն ըմբռնում էր, սովոր էր, որ իր պարապմունքները հաջող են ընթանում, սակայն գիտությունից ոչ պակաս սիրում էր մկանները զարգացնող վարժությունները։ Բուրգունդիայում լինելիս— նրա ծնողների հողը, անտառները և խաղողի այգիները սահմանակցում էին Ռիվիերների դաստակերտի հետ — առանց հոգնության թափառում էր, որսորդությամբ զբաղվում, ձիով մաև գալիս։ Եվ Աննետան այն կոմներում

զբոսնելիս հաճախ էր հանդիպել նրան։ Սակայն այն ժամանակ նա քիչ էր մտածում ուղեկցի մասին, սիրում էր թափառել մենակ։ Ասենք, Ռոժեն նույնպես, ընկնելով լայնարձակ տարածությունները, դուրս պրծնելով Փարիզից մի քանի ամսով, պատանի Իպպոլիտի դերն էր կատարում. ձևացնում էր, թե իր համար ավելի ուրախալի է ժամանակն անց կացնել ձիու և շան հետ, քան աղջկա։ Նրանք հանդիպում էին տուբյամբ, միայն խոնարհվում և հայացք էին փոխանակում միմյանց հետ։ Սակայն դա նույնպես անհետաք չանցավ։ Դրանից մնաց երկու ֆիզիկապես լավ ընտրված էակների հաճելի հիշողություն և չգիտակցված հակում միմյանց նկատմամբ։

Ռոժեի ծնողները այդ մասին հաճախ էին մտածել։ Ոչ միայն երիտասարդ զույգը,— թվում էր, այդ դաստակերտները նո՛ւյնպես ստեղծված էին նրա համար, որպեսզի միանային։ Սակայն քանի դեռ Ռաուլ Ռիվիերը կենդանի էր, նրանց հարաբերությունները, թեև բարի դրացիական, բայց մի տեսակ սառն էին և օտարոտի։ Ամենազվարճալին այն էր, որ երբեք իր ազատասիրությունը չզոհաբերող Ռիվիերը ճարտարապետական աշխատանքների պատվերներ էր վերցնում արիստոկրատական և ռեակցիոն շրջաններից, խորամանկորեն խնկարկում էր նրանց և (այս անգամ առանց փոխաբերության) այցելում պատարագները, եթե դա պետք էր գործի համար, որպեսզի ուշադրություն գրավի, որի համար և իրենց գավառում, ռադիկալ հանրապետականների մեջ, ռեակցիոների, նույնիսկ կլերիկալի անուն էր հանել (մի բան, որ նրան ծիծաղ էր պատճառում)։ Իսկ Բրիսսոնները ռադիկալիզմի պատվարներն էին։ Դատավորական դասին պատկանող նրանց տոհմի բոլոր ներկայացուցիչները,— փաստաբաններ և դատախազներ,— պարծենում էին նրանով, որ արդեն մի դարից ավելի է, ինչ իրենց տոհմը հանրապետության կողմնակից է (և իսկապես, Առաջին Հանրապետության ժամանակաշրջանում դա այդպես էլ կար, սակայն նրանք բոլորն էլ մոռացկոտության հետևանքով չէին հիշատակում, որ իրենց նախահայրը, Կոնվենտի նախկին անդամը, պարգևատրված է եղել Լիլիայի չքանշանով, երբ

Բուրբոնները վերադարձան), հավատում էին հանրապետությանը, ինչպես ամենք հավատում են աստծուն, և երևակայում էին, որ իբր թե իրենք հանրապետության բոլոր տրադիցիաների կրողներն են. դիրքը պարտավորեցնո՞ւմ է։ Այդ պատճառով էլ Բրիսսոները իրենց պարտքն էին համարում խստորեն հանդիմանել Ռաուլ Ռիվիերին և նրանից հեռու էին մնում։ Այդ վերաբերմունքը, ասենք, ամենևին չէր վշտացնում Ռաուլին, քանի որ վերջինս նրանցից պատվեր չէր սպասում։ Բայց ահա սկսվեց Դրեյֆուսի նշանավոր գործը, և Ռիվիերը— դա բոլորի համար պարզ էր—իր համար անսպասելի կերպով հայտնվեց առաջադիմական կուսակցության մեջ։ Եվ վայրկենապես նրան արդարացրին։ Խաչ դրին անցյալի վրա։ Նրա մեջ բարձր հասարակական և հանրապետական հատկություններ հայտնագործեցին,— նա դրանք իր մեջ չէր էլ կասկածում, բայց, ըստ երևույթին, նրանից օգուտ դուրս կորզելու առիթը ձեռքից բաց չէր թողնի, եթե մահը չխճճեր նրա բոլոր պլանները։

Բրիսսոների պլանների վրա դա չանդրադարձավ։ Այդ համոզված հանրապետականները, որոնք մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում վարպետորեն զուգակցում էին իրենց սկզբունքների հանդեպ ունեցած ակնածալից վերաբերմունքը իրենց շահերի նկատմամբ ունեցած ակնածալից վերաբերմունքի հետ, հարուստ էին և, հասկանալի է, ձգտում էին ավելի հարստանալ։ Հայտնի էր, որ Ռիվիերը դատերը բավական լավ կարողություն է թողել։ Վատ չէր լինի նրա բուրգունդյան դաստակերտը միացնել Բրիսսոների կալվածքին։ Ճիշտ է, Բրիսսոների համախոհները երկրորդական տեղ են հատկացնում հարստության հաշվումներին, թեև դա հենց առաջին բանն է, ինչ նրանց գլուխն է գալիս, երբ խոսքը վերաբերվում է ամուսնությանը, պնդում են նրանք, նախ և առաջ պետք է հաշվի առնել, թե ինչ է իրենից ներկայացնում աղջիկը։ Տվյալ դեպքում աղջիկը բավարարում էր բոլոր պահանջներին։ Այն, ինչ հայտնի էր աղջկա մասին, հաստատում էր Բրիսսոների կարծիքը. և նրա դրական բնավորությունը և այն, ինչ ասում էին նրա՝ հորը նվիրված լինելու մասին։ Հմայքի ունակությունները, պարզությունը։

Հրաշալի կերպով կարողանում է իրեն պահել հասարակության մեջ։ Հավասարակշռված է։ Հիմար չէ։ Առողջ է։ Ճիշտ է, ինչ-որ անբնական բան էին տեսնում նրա սորբոնյան պարապմունքների մեջ, նրա հետազոտություններում, դիսերտացիայում։ Բայց ենթադրում էին, որ պարզապես կրթված, ձանձրացող աղջիկը իր համար այդպիսի զվարճանք է հնարել և որ այդ բոլորը տևելու է մինչև առաջին երեխան։ Ի դեպ, վատ չէ ցույց տալ բոլորին, որ նրանք, Բրիսսոները, լուսավորության երկրպագուներ են, նույնիսկ կանանց լուսավորության, միայն թե դա խանգարող հանգամանք չհանդիսանա։ Աննետան, փառք աստծո, առաջին ուսյալ կինը չէր լինի ընտանիքում։ Տիկին Բրիսսոն՝ Ռոժեի մայրը, և Ռոժեի քույրը՝ մադմուազել Ադելը, հայտնի էին — և մասամբ արդարացի — ոչ միայն որպես սրտադին, այլև որպես խելացի կանայք, և մասնակցում էին տղամարդ Բրիսսոների թե հոգևոր, թե գործարար կյանքին։ Աննետայի կրթությունը երաշխիք էր ծառայում, որ գոնե այդտեղ կլերիկալիզմի ներգործությունից վախենալու կարիք չի լինի, իսկ դա այնպե՞ս է կարևոր։ Ընդհանրապես նոր ընտանիքում նրան քնքշորեն կհովանավորեին, դա նրան զերծ կպահեր ամեն տեսակի կործանիչ հափշտակվածություններից։ Իրենց սիրելի աղջկա համար այնքա՞ն հեշտ կլինի միաձուլվել նրանց հետ, ում ազգանունը կրելու է,— նա որքացած է և ինչքան է իրեն երջանիկ զգալու, երբ երկրորդ մոր և ավագ քրոջ թևի տակ ընկնի, որոնց ուզածը մի բան էր միայն. ղեկավաբել նրան։ Չէ՞ որ Բրիսսո դամաները—իսկ նրանց աչքից ոչինչ չէր վրիպում—գտնում էին, որ Աննետան շատ համակրելի, բարեկիրթ, մեղմ, քաղաքավարի, զուսպ, հեզ (նրանց կարծիքով դա թերություն չէր), փոքրինչ սառնավուն (իսկ դա համարյա առաքինություն էր) աղջիկ է։

Եվ այսպես, Ռոժեն իր ամբողջ ընտանիքի համաձայնությամբ—այդ հարցը նախապես քննարկել էին—սկսեց սիրահետել Աննետային։ Ռոժեն ոչինչ չէր թաքցնում իր հարազատներից, միշտ համոզված էր, որ իրեն հավանություն կտան։ Բոլոր մտրիկները պաշտում էին այդ հատուկացած

երեխային նույն վերաբերմունքը նաև ինքն էր նրանց վերադարձնում։ Բրիսսոների ընտանիքում փոխադարձ երկրպագություն էր թագավորում։ Ճիշտ է, որոշ հիերարխիա պահպանվում էր, բայց յուրաքանչյուրը գնահատվում էր բարձր։ Եվ իսկապես, չէր կարելի չընդունել, որ նրանք բոլորն էլ օժտված են բավական մեծ խելքով, համեմի արտաքինով, հարստությամբ։ Եվ նրանք—որ բարեկիրթ մարդիկ էին—նույնպես դա ընդունում էին, նույնիսկ մեծ հաճույքով, բայց դա ցույց չէին տալիս այն մարդկանց, որոնց որոշակիորեն իրենցից ցած էին համարում։ Աստված, ով էլ կարող էր դրանում կասկածել, տեսնելով, թե ինչպիսի հանգիստ վստահությամբ է շնչում նրանց դեմքերը։ Նրանք վստահ էին իրենց վրա, իսկ ամենից շատ վստահ էին Ռոժեի վրա։ Ռոժեն նրանց սիրո առարկան էր, նրանց հպարտությունը և, թերևս, ոչ առանց հիմքերի։ Դեռ երբեք Բրիսսոների տոհմածառը այդպիսի հյութեղ պտուղ չէր տվել։ Ռոժեն օժտված էր իր տոհմի լավագույն գծերով, իսկ եթե անգամ ժառանգած ուներ նաև նրա թերություններից, ապա դրանք չէին գրգռում. Ռոժեն այնքան էր սիրելի, այնքան էր երիտասարդ, որ այդպիսի թերություններ չէին էլ նկատում։ Իսկ տաղանդ նա ինչքան ասես ուներ. ամեն ինչ նրան սրրվում էր հեշտությամբ, հատկապես հռետորական արվեստը։ Պերճախոսությունը Բրիսսոների ժառանգական հողային սեփականությունն էր։ Նրանց տոհմում մի փաստաբան արդեն հռչակ էր վայելում, նրանք բոլորն էլ բնածին հակում ունեին դեպի ճարտասանությունը։ Աննարադարացի կլիներ պնդել, թե նրանք պետք է խոսեն, որպեսզի մտածեն, ինչպես շատախոս հարավցիները։ Ոչ թե նրա համար, որ խոսելը նրանց հարկավոր էր,—դա անվիճելի է։ Քոլեջի նախադասություններում կարծես փթթում էին նրանց բոլոր ունակությունները։ Ռոժեի հայրը, նախկինում այն նշանավորագույն շաղակրատներից մեկը, որոնք փառքով էին պսակել դեպուտատների պալատի ամբիոնը,— ընտրողները նրա հետ վատ խաղ խաղացին, երկրորդ անգամ չընտրելով,— շնչահեղձ էր լինում, իր կճեպի մեջ ներփակված պերճախո-

սությունից, և Ռոժեն, որն այն ժամանակ վեց տարեկան էր, հոր հետ նստելով բուխարու մոտ, միամտորեն ասում էր.

— Հայրի՛կ, ապա ինձ համար մի ճա՛ռ ասաւ

Հիմա դա ինքն էր անում։ Երիտասարդի առաջին իսկ ելույթները փաստաբանների ժողովներում և դատարաններում նրան փայլուն հռչակ բերեցին, ինչպես և սազական էր բոլոր Բրիսսոներին, նա իր ամբողջ տաղանդը ի սպաս դրեց քաղաքականության։ Նրա համար հիանալի տրամփլին հանդիսացան Դրեյֆուսի գործի հետ կապված միտինգները։ Նա մարտ նետվեց, խոսեց, ինչքան սիրտն ուզում էր։ Պատանեկան ավյունը, համարձակությունը, հեղեղի պես թափվող դեղեցիկ բառերը, սքանչելի արտաքինը—մի խոսքով, այդ ամենը գրավում էր խանդավառ դրեյֆուսականուհիների և երիտասարդության համակրանքը։ Բրիսսոների գերդաստանը,— իսկ այդ գերդաստանը միայն մի մտածմունք ուներ, չլինի թե հանկարծ ետ մնա առաջադիմության ճանապարհից, և ամենից շատ վախենում էր, չլինի թե հանկարծ ժամանակից շուտ ավելորդ մի քայլ անի դեպի առաջ,— զգուշորեն հետախուզելով հողը, իր ժառանգորդին, իր հայարտությանը և հույսին սոցիալիզմի ուղու վրա դրեց, բայց հույժ ուղղամիտ սոցիալիզմի։ Ասենք, իր՝ Ռոժեի, հոտառությունն էլ էր տանում դեպի այդ ուղին։ Նա, ինչպես այն ժամանակ երիտասարդության լավագույն ներկայացուցիչները, ընկավ Ժորեսի հմայքի ազդեցության տակ և աշխատում էր փոխ առնել հիանալի հռետորի խոսելաձևերը, հռետոր, որի ճառերը լի էին մարգարեական նախանշումներով ու ամեն տեսակի պատրանքներով։ Նա հանդիսավորապես հայտարարեց, որ ժողովրդի և ինտելիգենցիայի պարտքը մտերմանալն է։ Եվ այդ դարձավ նրա այնքան սիրճախոս ելույթների թեման։ Թեև դրա համար պարզապես սպատ ժամանակ չունեցող ժողովուրդը շատ բան նույնիսկ չհասկացավ էլ, ապա միևնույն է, դա զարդարեց բուրժուազիայի երիտասարդ ներկայացուցիչների ազատ ժամանակը։ Ռոժեն—նրան օգնեց բաժանորդագրությունն ու բարեկամների նեղ շրջանակը—հիմնեց խմբակ, թերթ, կուսակցություն։ Իսկ ինքը դրա վրա հսկայական ժամանակ

վատանց և մի քիչ դրամ։ Բոլոր Բրիստոները գիտեին հաշիվ անել, գիտեին նաև խելացի կերպով ծախսել։ Նրանց շրջում էր այն, որ իրենց որդին նոր սերնդի առաջնորդն է։ Նա նրանք հող էին նախապատրաստում մոտեցող ընտրություններ համար։ Ռոժեի համար տեղ էր նախատեսվել ապագա դեպուտատների պալատում։ Եվ նա այդ գիտեր։ Ռոժեն սովոր էր, որ իրեն վաղ մանկությունից բոլոր մեծավորները հավատ են ընծայում, և անվերապահորեն հավատում էր իրեն։ Նա կարդին չգիտեր, թե ինչ համոզմունքներ ունի ինքը, սակայն բոլորովին կասկած չուներ դրանց ճշմարտության մեջ մի մեծամտություն։ Նա լի էր ինքնավստահությամբ և բոլորովին դա չէր թաքցնում։ Նրա չախտը ամեն ինչում բերում էր։ Ռոժեն սովորել էր դրան, նրան թվում էր, թե դա միանգամայն բնական է։ Նրա մտքով չէր էլ անցնում դրանով հպարտանալ և կցնցվեր, եթե հանկարծ հաջողությունը դավաճաններ իրեն. նշանակում է այն հիմքերին, որոնք նա սրբորեն հարգում էր, կործանիչ հարված հասցրած կլիներ։ Նա այնքան լա՛վն էր։ Էգոիստ էր, նույնիսկ չիմանալով այդ և ամենևին էլ ոչ արմատացած, այլ մի սեսակ միամիտ, բարեսիրտ էր, գեղեցիկ, կարող էր ուրիշներին տալ, բայց մատրվում էր միայն ուրիշներից վերցնել և չէր պատկերացնում, որ չորևէ մեկը կարող է իրեն ինչ-որ բան մերժել։ Յածրասիրտ, հիանալի, արտադին, պահանջկոտ տատանին անվերջ սպասում էր, որ ամբողջ աշխարհը իր ոտքերը կընկնի։ Եվ իսկապես, նա շատ հմայիչ էր։

Եվ Աննետան հրապուրվեց։ Նա թեև Ռոժեի մասին բավական ճիշտ կարծիք էր կազմել, բայց դա չխանգարեց Աննետային, որ ինքը ավելի բուռն սիրի նրան։ Աննետային գորովում էին նրա թուլություններն, որոնք իր համար անսահման թանկ էին։ Նրան թվում էր, թե հենց այդ թուլությունների պատճառով է, որ Ռոժեի մեջ այդքան երեխայություն կա,— ավելի, քան առնականություն։ Եվ այդ երկակիությունը ուրախացնում էր Աննետայի սիրտը։ Նրան դուր էր գալիս, որ Ռոժեն ոչինչ չի թաքցնում. իսկույն երևում էր, թե նա ինչպիսին է։ Իրենով հիացած լինելու Ռոժեի

միամիտ խանդավառությունը խոսում էր այն մասին, թե նա ինչպիսի անմիջական բնավորության տեր է։

Աննետայի հետ Ռոժեն առանձնապես անկեղծ էր այն պատճառով, որ սիրահարվել էր նրան։ Բուռն, անզուսպ։ Նա զգացմունքների մեջ կիսատ-պռատություն չգիտեր։ Իսկ ինչ տեսնելուն է վերաբերում, ամեն ինչ կիսով չափ էր տեսնում։

Սերը Աննետայի հանդեպ բռնկվեց մի անգամ երեկոյան, հյուրասենյակներից մեկում,— Ռոժեն շատ բարձր տրամադրության մեջ էր և փայլում էր պերճախոսությամբ։ Աննետայի շուրթերից ոչ մի խոսք չէրավել։ Բայց նա հրաշալի ունկնդիր էր։ (Համենայն դեպս Ռոժեին այդպես էր թվում)։ Աննետայի խելացի աչքերում նա կարդում էր իր սեփական մտքերը և գտնում, որ դրանք դառնում են ավելի պարզ, ավելի վեհ։ Աննետայի ժպիտը նրան ուրախություն էր պատճառում—կնշանակի, ինքը լավ է խոսում, իսկ ավելի խոր քնկերություն նրան բերում էր այն գիտակցությունը, որ Աննետան կիսում է նրա մտքերը։ Իսկ որքա՜ն սքանչելի էր նրա ունկնդիրը։ Ի՜նչ հրաշալի խելք, ինչ վեհ հոգի էր շողում նրա սևեռուն և արտահայտիչ հայացքում, նրա անկեղծ ժպիտի մեջ։ Նա խոսում էր մենակ, և իրեն թվում էր, թե զրուցում է Աննետայի հետ։ Համենայնդեպս հիմա Ռոժեն խոսում էր միայն նրա համար, և զգում էր, որ այդ մտովի երկխոսությունը—խորհրդավոր, լուին—վեհացնում է իրեն...

Աննետան, ճիշտն ասած, չէր էլ լսում։ Նա այնքան էր խելացի, որ իսկույն որսաց Ռոժեի զլխավոր միտքը և սովորական ըրվածությամբ հետևում էր միայն գեղեցիկ, հարթ նախադասություններին։ Սակայն Աննետան օգտվում էր այն բանից, որ Ռոժեն կլանված է սեփական ճառերով, և որոշից ավելի ուշադիր զննել նրան. աչքերը, բերանը, ձեռքերը և այն, թե խոսելիս ինչպես է շարժվում Ռոժեի կզակը, ինչպես են փքվում նրա գեղեցիկ քթանցքները՝ վրնջացող հովատակի քթանցքների նման, և ինչքան հաճելի ձևով է նա արտաբերում որոշ տառեր, և ինչ էր այդ ամենը արտահայտում—և՛ արտաքնապես, և՛ ներքնապես...

Աննետան դիտեր ինչպես նայել։ Տեսնում էր, թե ինչպես է Ռոժեն ուզում, որ իրենով աքանչանան, տեսնում էր, ինչպես է Ռոժեին դուր գալիս, որ իրեն հավանում են և այն, որ Աննետան Ռոժեին համարում է դեղեցիկ, խելացի, պերճախոս, զարմանալի։ Աննետան չէր գտնում,— ոչ, քեռևս, մի քիչ, մի փոքր—որ Ռոժեն ծիծաղելի է։ Ընդհակառակը, լի էր գորովանքով։

(«Այո, սիրելիս, դու լավն ես, հրաշալի ես, խելացի ես, պերճախոս ես, զարմանալի ես... Դու ուզում ես, որ ես ժպտա՞մ։ Ահա, սիրելիս, ես նույնիսկ երկու անգամ քեզ ժպտացի... և քեզ այնքան քնքշորե՛ն եմ նայում... Գո՞հ ես»)։

Եվ հոգու խորքում ծիծաղում էր, տեսնելով, թե Ռոժեն որքան է երջանիկ, ինչպես է ցնծում, դեղդեղում ավելի բարձր, ինչպես գարնանային թռչնակ։

Ռոժեն ըմբոշխնում էր գովեստները, ըմպում էր դրանք, չխառնելով, չավելացնելով դրանց վրա սեփական ծաղրից և ոչ մի կաթիլ, ծարավ էր զգում, չէր հագենում երբեք։ Եվ արբենալով իր երգից, նրան էր խառնում նաև այն էակին, որը զմայլվում էր իրենով։ Ռոժեն պատկերացրեց, որ Աննետան իր մեջ եղած ամենալավի, անեղծի, հանճարեղի մարմնացումն է, և սկսեց պաշտել նրան։

Իսկ նա, ում հոգուն հենց առաջին հայացքից հպվեց սերը, զգաց, որ խեղդվում է Ռոժեի անհուն սիրո մեջ, և բոլորովին դադարեց դիմադրելուց։ Անհետացավ նույնիսկ փուղաքուշ հեգնանքը, որով նա, կարծես զրահներով, ծածկում էր իր թրթռացող սիրտը, և նա գեմ տվեց կրքին իր անպաշտպան կուրծքը։ Որքա՜ն էր նա ծարավի սիրու։ Ինչքա՜ն էր հաճելի հագեցնել ծարավը (Աննետան կանխապես ճաշակում էր այդ), հպվելով շուրթերին նրա, ով այնքա՜ն դուր էր գալիս իրեն։ Իսկ այն, որ Ռոժեն կոտհեց նրա ցանկությունը և այդքան բուռն կերպով շուրթերով ձգտեց դեպի նա, լցնում էր Աննետայի սիրտը խանդավառ երախտագիտությամբ։

Բոցը մոլեգնեց։ Յուրաքանչյուրը բռնկվում էր մյուսի կրքերից և սնում նրան իր կրքերով։ Եվ որքան ավելի բո-

ցայտունչ էր սիրահարների զգացմունքը, այնքան ավելի շատ էին ապաստում նրանք մեկը մյուսից և այնքան ավելի շատ էին ձգտում գերազանցել փոխադարձ ապաստանները։ Դա շատ էր հոգնեցնում։ Բայց նրանք պահեստում երիտասարդության չվատնած ուժեր ունեին։

Իսկ առայժմ Աննետայի ուժերը ննջում էին անգործության մեջ։ Այդ ուժերին ազատություն չէին տալիս։ Նրա վրա հարձակ Ռոժեի զգացմունքը։ Աննետան խեղդվում էր։ Ռոժեն նրան թույլ չէր տալիս շունչ առնել։ Ռոժեն բնավորությամբ մարդամոտ էր, անզուսպ, և պահանջ էր զգում ամեն ինչ արտահայտել, ամեն ինչ կիսել Աննետայի հետ. կիսել մաքիրը ապագայի, ներկայի և անցյալի մասին։ Որքա՜ն մանրամասներեն էր նա խոսում։ Դա նրա հատկությունն էր։ Իսկ դրան ավելացրած, նա ուզում էր ամեն ինչ իմանալ, ամեն ինչ յուրացնել։ Նա ներխուժում էր Աննետայի գաղտնիքների մեջ։ Աննետան, նահանջելով, վերջապես մի կերպ պաշտպանվում էր։ Այդ բոլորը նրան մասամբ վրդովում էր, մասամբ ուրախություն պատճառում և զվարճացնում։ Նա հաճախ էր փորձում այդ գրոհի համար բարկանալ Ռոժեի վրա, բայց նվաճողն այնքա՜ն էր սիրելի։ Եվ Աննետան հաճույքով լիշում էր, չէր դիմագրում ուրիշի կամքի բռնությանը («Et cognovit lam»,— Ռոժեն նրան ամեննին չդիտեր....), իսկ երբեմն թաքուն այրվում էր ամբողջովին մերթ զայրույթից, մերթ հաճույքից։

Այո, այնքան էլ խելամիտ չէ առանց դիմադրության տրվել ամբողջովին։ Երբեմն, աշխարհի երեսին ամեն ինչ մոռանալով, մարդ վստահում է իր գաղտնիքները, իսկ հետո նա, ում դու վստահել ես, շուռ է տալիս դրանք հենց քո դեմ։ Սակայն Աննետան ու Ռոժեն այդ մասին քիչ էին մտածում։ Սիրո այդ շրջանում նրանց մեջ ոչինչ իրար դուր չգալ չէր կարող, ոչինչ չէր կարող զարմանք պատճառել։ Այն ամենը, ինչ հաղորդում էր սիրելին, ոչ միայն ամենափոքրիկ չափով չէր զարմացնում Աննետային, այլև, թվում էր համընկնում է իր չարտահայտած կարծիքի հետ։ Ռոժեն այժմ իրեն չէր հետևում— հետևում էր ավելի քիչ, քան առաջ, իսկ

Աննետան նրա անկեղծ խոստովանությունները լսում էր ներողամտորեն, սակայն, իր կամքից անկախ, բոլորը հիշում էր ամենայն մանրամասնությամբ։

Ուրախալի էր, որ նրանք այդքան ընդհանուր բան ունեին անցյալում, իսկ ավելի ուրախալի էր, որ ներկան և անցյալը սուզվում են ապագայի մասին ունեցած երազանքների մեջ—նրանց ապագայի, քանի որ Աննետան թեև դեռ ոչինչ չի ասել, չի խոստացել ոչինչ, բայց նրա համաձայնության վրա այնպես էին հույս դնում, այնպիսի հաշիվներ էին անում, այնպես էին այդ համաձայնությունը պահանջում, որ նա վերջիվերջո ինքն էլ պատկերացրեց, թե արդեն տվել է այդ համաձայնությունը։ Կիսափակելով իր երջանիկ աչքերը, Աննետան լսում էր, թե ինչպես է Ռոժեն (նա պատկանում էր այն մարդկանց թվին, ովքեր վաղվա օրից ավելի շատ բավականություն են ստանում, քան այսօրվա) անսպառ ոգևորությամբ նկարագրում շողշողուն մի կյանք, որը հարուստ է մտքերով, լեցուն է օգտակար գործունեությամբ, նախապատրաստված է... Ո՞ւմ համար։ Նրա՞ Ռոժեի՞։ Իհարկե, Աննետայի համար նույնպես, չէ՞ որ այսուհետև նա Ռոժեի մասնիկն է։ Եվ Աննետան չէր վրդովվում, որ իր անձնավորությունից ոչինչ չի մնում, նա անսահման շատ էր կլանված իր հրաշալի Ռոժեով,— չէր կարողանում նրան լսելուց, նրան նայելուց կշտանալ, չէր կարողանում կշտանալ ուրախությունից։ Ռոժեն շատ էր խոսում սոցիալիզմի, արդարության, մարդասիրության մասին, ազատագրված մարդկության մասին։ Հիրավի հոյակապ էր։ Խոսքով Ռոժեի հոգեկան ազնվությունը սահման չուներ։ Դա հուզում էր Աննետային։ Նրան բերկրալի էր թվում այն միտքը, որ ինքն էլ մասնակցություն կունենա Ռոժեի գործունեության մեջ՝ հանուն ամենազոր բարիքի։ Ռոժեն երբեք Աննետային չէր հարցրել, թե նա ինչ է մտածում այդ մասին։ Ենթադրվում էր, որ Աննետան մտածում է նույն ձևով, ինչպես և ինքը։ Ասենք, նա չէր էլ կարող ուրիշ կերպ մտածել։ Ռոժեն խոսում էր նրա փոխարեն։ Ռոժեն խոսում էր իրենց երկուսի փոխարեն— չէ որ նա ավելի լավ էր խոսում։ Ռոժեն ասում էր.

— Ահա թե մենք ինչ կանենք... Մենք կունենանք...

Աննետան ոչինչ չէր ժխտում։ Ընդհակառակն, քիչ էր մնում շնորհակալություն հայտնի։ Պլաններն այնքան անբնդգրկելի էին, այնքան անորոշ, այնքան անշահախնդիր, որ ուշադրի պատճառ չկար, որ նա իրեն խաբված համարեր։ Ռոժեն նրա համար դարձել էր լույս, դարձել էր ազատություն։ Թերևս, դրա մեջ ինչ-որ անորոշ մի բան կար։ Աննետան, թերևս, ուզում էր, որ ամեն ինչ ավելի ստույգ լինի։ Բայց չէ՞ որ այդ ամենը ավելի ուշ կգա, հո միանգամից ամեն ինչ չե՞ս արտահայտի։ Ուրեմն, եկեք հաճույքը երկարացնենք։ Եկեք այսօր վայելենք ապագային վերաբերող անսահման պլանները...

Ամենից շատ Աննետան հաճույք էր ստանում Ռոժեի հմայիչ դեմքին նայելիս, զգալով, թե ինչպես են ազահաբար միմյանց ձգտում նրանց սիրահար մարմինները, որոնց միջով հանկարծ էլեկտրական հոսանքներ էին անցնում, ցանկությունների հուր, որ բոցկլտում էր նրանց երկուսի մեջ էլ, որոնք հզոր էին անեղծ երիտասարդության ուժով, որոնք առողջ էին, ամուր, կրակոտ։

Ռոժեն ամենից շատ պերճախոս էր դառնում այն ժամանակ, երբ հանկարծ լռում էր։ Եվ այդ պահերին խոսքերը, լռելով, նրանց առաջ նկարում էին զմայլիչ պատկերներ, իսկ հայացքներն հանդիպում էին. և թվում էր, թե հանկարծ նրանք հավեցին միմյանց։ Վրա էր հասնում կրքի այնպիսի մի բուռն պահ, որ քիչ էր մնում շունչները կտրվի։ Ռոժեն այլևս չէր ուզում ոչ գայթակղել և ոչ էլ խոսել։ Աննետան այլևս չէր մտածում ոչ մարդկության ապագայի և ոչ էլ նույնիսկ իր ապագայի մասին։ Նրանք մոռանում էին ամեն ինչ, ամեն ինչի մասին, ինչ նրանց շրջապատում էր. մոռանում էին այն, որ իրենք հյուր են, այն, որ իրենց շուրջը մարդիկ կան։ Այդ վայրկյաններին նրանք միաձուլվում ու դառնում էին մի ամբողջություն, ինչպես մոմը կրակի վրա։ Ոչինչ գոյություն չուներ, բացի իրար քաշող նրանց ցանկությունից—բնության այդ օրենքից, որ միակն է, ամենակուր և մաքուրը՝ ինչպես կրակ։ Աննետայի աչքերը մթնում էին, բոցավառվում էին այտերը, իսկ հետո, հաղթահարելով

գլխապատյտը, նա սրտատրոփ ու տանջալից համոզվածությամբ մտածում էր, որ կյա օրը և նա կորվի գայթակղությանը...

Ոչ որի համար նրանց կրքերն այնպես գաղտնիք չէր, ինչպես Ռոժեի համար։ Նրանք չէին կարող այդ կրքերը թաքցնել։ Թող Աննետան լռեր,— աչքերը խոսում էին նրա փոխարեն։ Նրանք այնպիսի պերճախոսությամբ էին արտահայտում իրենց համաձայնությունը և առանց խոսքի, որ բռլորի կարծիքով, ասենք, հենց իր՝ Ռոժեի կարծիքով էլ նա արդեն մի տեսակ լուծյայն կապել էր իրեն խոստումով։

Եվ միայն Բրիսսոների ընտանիքը տեսադաշտից չէր կորցնում, որ Աննետան դեռ հեռու է դրանից։ Ռոժեի խոստովանությունները Աննետան լսում էր ակնհայտ բավականությամբ, բայց պատասխան չէր տալիս, խուսափում էր, ճարպկորեն խոսակցությունը փոխում որևէ վտեմ թեմայի շուրջ, իսկ պարզամիտ Ռոժեն զոհաբերում էր որսը հանուն միրաժի և, առանց մտածելու ու նվաղած, սկսում էր դատողություններ անել։ Աննետան այդպիսով շրջանցում էր պատասխանը։ Բրիսսոները, որ փորձով իմաստնացած մարդիկ էին, մի երկու-երեք անգամ նկատել էին աղջկա խորամանկությունը բանեցնելը և որոշել իրենք ձեռնամուխ լինեն գործին։ Իհարկե, նրանք ամենևին չէին կասկածում Աննետայի համաձայնությանը. չէ՞ որ նրա համար այդպիսի փայլուն ամուսնությունը երջանկություն էր։ Բայց, ինչպես ասում են, պետք է հաշվի առնել խելառ աղջիկների քմահաճույքները։ Բրիսսոները կյանքը փսեին։ Գիտեին կյանքի բոլոր թակարդները։ Դրանք խորամանկ գավառային ֆրանսիացիներ էին։ Եթե հարցի լուծումը ձգձգվում է, պետք է ընդառաջ գնալ—այդպես է խորհուրդ տալիս հեռատեսությունը։ Բրիսսոնների երկու դամաներն էլ ճանապարհ ընկան։

Գոյություն ուներ մի առանձնահատուկ ժպիտ, որը նրանց ծանոթների շրջապատում, Փարիզում, կոչում էին Բրիսսոնների ժպիտ. քծնողական ու քաղցրմեղը, սիրալիր ու ներողամիտ, կատակով, բայց միևնույն ժամանակ զգուշավոր, ամեն ինչ կանխատեսող ու բարեխղճություն արտա-

հայտող, սակայն միանգամայն անտարբեր։ Այդ ժպիտը առատաձեռն պարգևներ էր խոստանում, միայն թե այդ պարգևները հենց խոստումներ էլ մնում էին։ Երկու Բրիսսո դամաներն էլ այդպիսի ժպիտով էին ժպտում։

Տիկին Բրիսսոն՝ Ռոժեի մայրը, որ բարձրահասակ, երիվլիլ, լայներես, տոզած այտերով, չաղ, ծանրամարմին, տպավորիչ կեցվածքով և փարթամ կրծքով մի կին էր, խոսում էր մեղմ ձայնով և այնպիսի չափազանցված ինքնասիրություն շոյող բաներ էր ասում, որ մշտապես աննկեղծ Աննետան իրեն մի տեսակ վատ էր զգում։ Տիկին Բրիսսոն շողոքորթում էր ոչ միայն Աննետային (որը դա շուտով, և թեթևացած, նկատեց)։ Գովեստներ շռայլելու մեջ նա երբեք չէր ժլատանում։ Եվ մշտապես ամեն ինչ համեմում էր կատակներով—այդպես էին Բրիսսոները քաղաքավարությունից մղված դրսևորում իրենց բոլորին բնորոշ ինքնավստահությունը, ցանկանալով ցույց տալ, որ իրենք իրենց այդ գծին վերաբերվում են բարեսիրտ ծաղրով, և բարեհոգաբար են ընդունում այդ պարգևը։

Ռոժեի քույրը՝ մադմուազել Բրիսսոն, որը նույնպես բարձրահասակ էր և գեր, այնպիսի շեկ, նույնիսկ գունաթափ մազեր ուներ, որ թվում էր, թե սպիտակ են, ինչպես ալբինոսինը։ Դրան ավելացրած այտերի վրայի բլենձե դիմափոշու շերտը և ներկած շրթունքները։ Նա աշխատում էր նմանվել Լյուդովիկոս 15-րդի ժամանակների գունամատիտ նկարներին։ Նատիեն կարող էր նրանից նկարել Ֆեբա Բուրգունդացուն—սեթևեթ, անգույն և մարմնեղ։ Մայրը այդ պնդակազմ աղջկան «խեղճ պատվիկ» էր կոչում, քանի որ մադմուազել Բրիսսոն, թեև իրեն հիանալի էր զգում, զննելով հայելու մեջ իր գունատ այտերը, որոշեց, որ առողջությունը թույլ է, բայց նպատակահարմար չէր գտնում խնամել իրեն։ Սակայն դրա փոխարեն օգտվում էր առիթից, որպեսզի ցույց տա, թե ինքն ինչքան է դիմացկուն, և ինչպես է արհամարհում իր սեռի փափկասուն ներկայացուցիչներին, որոնք մի փոքրիկ ճանկռվածքի համար տնքտնքոցը դնում են։ Եվ իսկապես, նա ուղղակի զարմանալի աղջիկ էր—գործունյա, անխոնջ, ամեն ինչ կարդում էր, ամեն տեղ

լինում, բան չկար, որ չիմանար, տեղյակ էր նկարչությունը, երաժշտություն հասկանում էր, դատողություններ էր անում գրականության մասին, ամեն օր տիկին Բրիսսոյի հետ այցելություններ էր կատարում, ի թիվս այն երկու-երեք հարյուր այցելությունների, որ նրանք պետք է կատարեին որոշակի ժամանակի ընթացքում, իր հերթին այցելուներ էր ընդունում, ճաշկերույթներ տալիս, հաճախում էր համերգներ, թատրոն, պալատի նիստերին և ցուցահանդեսներ, անձնատուր չէր լինում հոգնածությանը և չէր տրտնջում դրանցից, — միայն, եթե հարմար առիթ էր ներկայանում, հառաչում էր, բայց իսկույն ևեթ արիաբար հաղթահարում էր դա նույնպես։ Սակայն տանջելով իր մարմինը, նա կարողանում էր նաև պահպանել իր ուժերը—սիրում էր կուշտուկուռ ուտել (ինչպես ամբողջ ընտանիքը) և քնում էր խոր ու առանց երազների։ Մադմուազել Բրիսսոն և՛ իր սրտի և՛ մարմնի տիրուհին էր։ Նա, առանց շտապողականություն ցուցաբերելու, հող էր պատրաստում իր ամուսնության համար՝ ինչ-որ քառասուն տարեկան քաղաքական մի գործչի հետ, որն այժմ անդրծովյան խոշոր գաղութներից մեկի նահանգապետն էր։ Մադմուազել Բրիսսոյի մտքով չէր էլ անցնում մեկնել այնտեղ՝ նրա հետ ամուսնանալու համար։ Փարիզից և Բրիսսոների տոհմից հրաժարվել նա մտադրվում էր այն դեպքում միայն, երբ իր երջանկացած ընտրյալը նրան Ֆրանսիայում առաջարկի այնպիսի պայմաններ ու դիրք, որոնք արժանի են իրեն։ Իսկ ընդհանրապես աշխատում էր, որ բարձր աղբյուրներում այդ ընտրյալին չմոռանային։ Նրանք մտերիմ ու գործնական նամակագրություն ունեին միմյանց հետ։ Տարածության վրա գտնվող այդ սիրավեպը շարունակվում էր արդեն մի քանի տարի։ Ժամանակը կգա, և մադմուազել Բրիսսոն կամուսնանա։ Նա չէր շտապում։ Ամուսինը արդեն տարիքն առած մարդ կլիներ։ Ավելի լավ—այդպես էր համարում մադմուազել Բրիսսոն։ Նա պայծառ գլուխ ուներ։ Ասենք, բոլոր Բրիսսոններն էլ ուսներին գլուխ ունեցողներ էին։ Իսկ մադմուազել Բրիսսոյի գլուխը վերին աստիճանի հակված էր դեպի քաղաքականությունը։ Մադմուազել Բրիսսոն, ըստ մոր խոսքերի, իսկա-

կան էգերիան[1] էր։ Տիկին Բրիսսոն սքանչանում էր մատուռազել Բրիսսոյի գիտելիքներով։ Մատուռազել Բրիսսոն սքանչանում էր տիկին Բրիսսոյի անտեսվարությամբ ու խելքով։ Նրանց հարաբերություններում շատ բան կար ցուցադրական, շինծու։ Աննեսայի ներկայությամբ նրանք անբնդհատ համբուրվում էին։ Չէ որ դա այնքա՜ն հաճելի էր։

Սակայն որոշ ժամանակից ի վեր նրանք սկսել էին չափավոր գովասանել մեկը մյուսին—նրանք հիմա շողոքորթում էին Աննեսային։ Շռայլում էին ամեն տեսակի հաճոյախոսություններ նրան, նրա տանը, արդուզարդին, ճաշակին, խելքին, գեղեցկությանը։ Նրանք այնպիսի գովեստներ էին ասում Աննեսային, որ վերջինիս համար լսելը տհաճ էր։ Սակայն չէր կարելի բոլորովին անտարբեր վերաբերվել այն բանին, որ ուրիշները քո մասին շոյիչ կարծիքի են, հատկապես եթե նրանք, այդ ուրիշները, քո աչքում պատգամավորն են այն մարդու, որին դու քնքշորեն սիրում ես։ Մյուս կողմից էլ, ինչպես չհավատաս գովեստներին. չէ՞ որ Բրիսսո դամաները մի գլուխ Ռոժեի անունն էին հիշատակում, ինչի մասին էլ որ խոսելիս լինեին։ Նրա հասցեին արված գովասանքներին միահյուսում էին նաև Աննեսային արված գովասանքները։ Կատակով ու համառորեն ակնարկում էին այն մասին, թե նրա վրա Աննեսան ինչպիսի տպավորություն է գործել, այն մասին, որ իրենք չիտեն, թե Աննեսան ինչ է ասել նրան,—Ռոժեն հիացմունքով իսկույն եթե բոլորը պատմում էր նրանց (պատմում էր ամեն ինչ. Աննեսան և՛ գայրանում էր և՛, չնայած դրան, զգացվում)։ Մադամ Բրիսսոները առանց գույներ խնայելու պատկերում էին Ռոժեի փայլուն ապագան, և տիկին Բրիսսոյի ձայնը հնչում էր հուզիչ, անկեղծությամբ, երբ նա ասում էր հայտնում, նույնիսկ վստահություն, որ Ռոժեն կգտնի— ասենք, նա փաստորեն արդեն գտել է—կյանքի արժանի ընկերուհի։ Նրանք Աննեսայի անունը չէին տալիս, բայց ամեն ինչ հասկանալի էր։ Այդ խորամանկությունները

---

[1] էգերիա— հռոմեական աստվածուհի, հռոմեական առասպելական թագավոր Նումա Պոմպիլիի խրատատուն և հովանավորուհին։

տեսանելի էին հեռվից նույնիսկ չզինված աչքով։ Դա հենց դիտավորյալ այդպես էր արվում։ Դա հիշեցնում էր սալոնային ֆանտ խաղը. խոսակցությունը սկսվում էր մի բառի համար, որը յուրաքանչյուրի լեզվի ծայրին էր, բայց ասել չէր կարելի։ Թվում էր, տիկին Բրիսսոն ժպիտով դարանամուտ է լինում այդ բառին, որն ուր որ է թռչելու էր Աննետայի շուրթերից, որպեսզի հայտարարի.

«Ֆա՜նտ»։

Աննետան ժպտում էր, բերանը բացում։ Բայց բառը չէր թռչում...

Բրիսսոններն Աննետային հրավիրում էին Պրովանս փողոցի վրա գտնվող իրենց բնակարանը՝ ընտանեկան երեկույթներին։ Աննետան ծանոթացավ անձամբ իր՝ Բրիսսոհոր հետ, որը մի բարձրահասակ, գեր տղամարդ էր՝ թավ հոնքերի տակից նայող խորամանկ աչքերով, երևույթը կարմիր, մորուքն սպիտակ, կեղծաբարո, ճարպիկ փաստաբանի սովորություններով։ Նրա մաշված սրահոսություններն ու սիրալիրությունները Աննետային պարզապես ճնշում էին։ Նա նույնպես քիչ էր մնացել սալոնային խաղ խաղալու փորձ աներ, բայց իր այլաբանություններով անընդհատ հիմար դրության մեջ էր ընկնում։ Դրանք վախեցրին Աննետային։ Տիկին Բրիսսոն ամուսնուն նշան արեց, որ չխառնվի։ Այդ ժամանակ ամուսինը խաղից դուրս եկավ, սկսեց լռելյայն հետևել նրան, քմծիծաղում էր և լիովին համաձայն էր, որ դա իր բանը չէ։ Կանայք շատ ավելի լավ գործը ղլուխ կբերեն։

Տիկին Բրիսսոն վարպետորեն գործը առաջ տարավ։ Սկզբում նա Աննետայի հետ հրավիրեց ընդամենը մի երեքչորս մոտիկ բարեկամների, հետո՝ երկու, հետո՝ մեկ, հետո էլ՝ ոչ ոքի, բացի Աննետայից։ Եվ Աննետան մեն մենակ, երես առ երես հայտնվեց չորս Բրիսսոնների տանը։ «Ընտանիքի շրջապատում»,— տիկին Բրիսսոն խոսում էր գորովագին, կեղծ մեղմությամբ, մայրական խոստումնալից տոնով։ Աննետան զգում էր, որ ինքը ծուղակում է, բայց չէր փախչում,— այդպես նա իրեն լավ էր զգում Ռոժեի կողքին։ Նրա նկատմամբ ունեցած սիրո պատճառով Աննետան նե-

րողամտորեն էր վերաբերվում Ռոժեի ծնողներին, աչքերը փակում էր այն ամենի առաջ, ինչ որ նրանց միջավայրում իրեն խուլ կերպով գրգռում էր։ Կանացի նուրբ հոտառությունը նախազգուշացրեց Բրիսսո դամաներին (թեև մեծ էր նրանց ինքնասիրությունը, բայց դա երբեք չէր վնասում նրանց շահերին). լուռ փոխադարձ համաձայնությամբ նրանք կամաց-կամաց ետ քաշվեցին—ավելի քիչ էին խոսում, ծանր ու թեթև էին անում իրենց խոսքերը, հաճախ էին սիրահարներին թողնում միայնակ, չէին խառնվում նրանց խոսակցությանը։ Սակայն Ռոժեի գործի լավագույն պաշտպանը նա ինքն էր։ Նա դառնում էր ավելի ու ավելի սիրահարված, նրան ավելի ու ավելի էր անհանգստացնում Աննետայի զսպվածությունը, որը գուցե այդքան նրան չհուզէր, եթե Ռոժեի մայրն ու քույրը նրա ուշադրությունը չդարձնեին դրան, և երբեք Ռոժեն այդքան հմայիչ չէր եղել, ինչպես այն ժամանակից ի վեր, երբ տատանվեց նրա ինքնավստահությունը։ Նա այլևս չէր ճամարտակում, նրա պերճախոսությունը հանգավ։ Կյանքում առաջին անգամ նա աշխատում էր կարդալ ուրիշի հոգին։ Ռոժեն նստած էր Աննետայի կողքին, և նրա հնազանդ, այրվող, անկուշտ հայացքը աղերսում էր կենդանի առեղծվածը, փորձում էր կռահել այն։ Աննետան ըմբռնում էր և՛ նրա խուճապը, և՛ նրան ոչ բնորոշ վեհերոտությունը, և՛ այն, թե ինչպիսի վախկոտ սպասումով է Ռոժեն դարանամուտ լինում իր՝ Աննետայի, ամեն մի շարժմանը։ Աննետան տատանվում էր։ Այնպիսի պահեր էին լինում, երբ նա պատրաստ էր համաձայնություն տալ, արտաբերել վճռական խոսքը։ Եվ, այնուամենայնիվ, չէր արտաբերում։ Վերջին վայրկյանին բնազդորեն ետ էր քաշվում, ինքն էլ չիմանալով ինչո՛ւ։ Հանկարծ սկսում էր խուսափել սիրո խոստովանությունից, որն ուզում էր անել Ռոժեն, և համաձայնություն տալուց։ Աննետան դուրս էր պրծնում ձեռքերից...

Բայց ահա ծուղակը փակվեց։ Մայր ու աղջիկ Բրիսսոները, թաքնվելով կից սենյակներից մեկում, ուշադիր ականջ էին դնում անպտուղ խոսակցությանը։ Ժամանակ առ ժամանակ գործունյա տեսքով անցնում էին հյուրասենյակով,

ժպտում էին։ Մի քանի սիրալիր խոսք էին ասում, բայց կանգ չէին առնում։ Իսկ սիրահարները շարունակում էին իրենց երկար զրույցը։

Մի անգամ երեկոյան նրանք մտացրիվ թերթում էին մի ալբոմ, որն առիթ էր ծառայում, որպեսզի նրանք գլուխները մոտեցնեն իրար։ Այդպես կիսաձայն մտքեր էին փոխանակում, և հանկարծ լռեցին։ Աննետան խկուն վտանգն զգաց։ Նա ուզում էր տեղից ցատկել, բայց Ռոժեի ձեռքը արդեն գրկել էր նրա իրանը, իսկ ագահ շրթունքները սեղմվել էին Աննետայի կիսաբաց շուրթերին։ Աղջիկն ուզում էր պաշտպանվել։ Բայց ինչպե՞ս պաշտպանվեր ինքն իրենից։ Նրա շուրթերը համբույրը վերադարձրին, մինչդեռ ուզում էին նրանից խուսափել։ Եվ այնուամենայնիվ նա դուրս պրծավ, սակայն հենց այդ րոպեին, հյուրասենյակի մյուս ծայրից, շնփորեց տիկին Բրիսսոյի սրտաշարժ ձայնը.

— Ա՜խ, սիրելի աղջիկս։

Եվ նա սկսեց կանչել.

— Ադե՛լ... Պարո՞ն Բրիսսո...

Եվ շփոթահար Աննետան չհասցրեց էլ ետ նայել, երբ նրան շրջապատեց Բրիսսոների ամբողջ ընտանիքը՝ ցնծող, խանդաղատանքով։ Տիկին Բրիսսոն Աննետային ծածկում էր համբույրներով, աչքերին սեղմում թաշկինակը և անընդհատ ասում.

— Դե սիրե՛ք նրան։

Մադմուազել Բրիսսոն կրկնում էր.

— Քույրի՛կս։

Իսկ Պարոն Բրիսսոն, ինչպես միշտ, սխալ թույլ տվեց.

— Վերջապե՛ս։ Ձուր տեղը ինչքա՜ն ժամանակ կորցրինք...

Մինչ այդ բոլորը տեղի էր ունենում, Ռոժեն Աննետայի առաջ չոքած, համբուրում էր նրա ձեռքերը, երկչոտ, ամոթահար հայացքով խնդրում էր նրան, որ ների, և կրկնում էր.

— Մի՛ մերժեք։

Աննետան կարծես քարացած, ընդունում էր այդ համբույրները։ Ռոժեի աչքերի թախանձանքը, որոնք նա այն-

քան սիրում էր, շղթաներով կապանքել էր նրան։ Աննետան վերջին ճիգը գործադրեց, փորձեց դիմադրել.

— Չէ՞ որ ես դեռ ոչինչ չեմ ասել։

Բայց Ռոժեի աչքերում այնպիսի մի անկեղծ հուսահատություն առկայծեց, որ Աննետան չկարողացավ դիմանալ։ Նա իրեն ստիպեց ժպտալ։ Իսկ երբ Ռոժեի դեմքը երջանկությունից շողշողաց, Աննետայի դեմքը նույնպես ցնծաց ուրախությունից, որն ինքը պարգևում էր Ռոժեին։ Աննետան ձեռքերով սեղմեց տղայի գլուխը։ Ռոժեն տեղից թռավ խանդավառ գոռալով։ Եվ նրանք ծնողների օրհնող հայացքի տակ համբուրվեցին նշանադրության համբույրով։

Երբ Աննետան երեկոյան տանը մնաց մենակ, զգաց, որ պարտված է։ Այլևս նա իր տերը չէ։ Նա տրվե՞ց... Տրվեց... Տվեց իր կյանքը... Սիրտը թախծից ճմլվում էր։

Աննետան կապերի ամրությունը չափազանցում էր, կապեր, որոնք նա հենց նոր համաձայնեց ընդունել։ Նա այն ժամանակակից աղջիկներից չէր, որոնք փեսացուի մոտ, հաճելիորեն կոտրատվելով, խոսում են ապահարզանի մասին։ Աննետան մի ձեռքով չէր տվել, որպեսզի մյուսով վերցնի։ Նա այլևս ինքն իրեն չէր պատկանում։ Պատկանում էր այդ բոլոր Բրիսսոններին։ Եվ հանկարծ նրան թվաց, որ բոլոր Բրիսսոնները իր թշնամիներն են։ Այն ամենը, ինչ նա լիուլի տեսել էր վերջին շաբաթների ընթացքում, այժմ նրա առաջ կանգնել էր պայծառ լույսի տակ. և Բրիսսոնների բոլոր ջանքերը՝ Աննետայի հետ մտերմանալու համար, որպեսզի խճճեն նրան, և նրա ազատության դեմ կազմակերպված դավադրությունը, և, վերջապես, այդ կատակերգությունը—հարկադրեցին Աննետային համաձայնություն տալ և հանկարծակիի բերին նրան... (Չլինի՞ թե այդ ամենին մասնակցում էր նաև Ռոժեն, ինքը՝ Ռոժեն)։ Եվ նա մազերը ցցեց, ինչպես փոքրիկ գազանը՝ շուրջկալի ժամանակ, որը տեսնում է, թե ինչպես են իրեն բոլոր կողմերից նեղում, զգում է, որ հիմա կկործանվի, և ահա, գլուխը կախելով ուր որ է կնետվի որսահալածների վրա, որ ճանապարհ բացի իրեն կամ մեռնի, բայց և լուծի վրեժը։ Առաջին անգամ այդ բոլորը, որ նրա մեջ նողկանք առաջացրեց դեպի Բրիս-

ասները, բայց որի մասին մինչև հիմա նա աշխատում էր չմտածել, Աննետային այդպես զզվելի, դարշելի և անտանելի թվաց... Նույնիսկ ինքը՝ Ռոժեն... Երբեք Աննետան չի համաձայնի ապրել, պարփակվելով այդ մարդու, այդ քնտանիքի, հետաքրքրությունների այդ շրջանակի փոքրիկ աշխարհում, հետաքրքրություններ, որոնք խորթ էին իրեն, որոնք երբեք իր համար հարազատ լինել չեն կարող։ Աննետան որոշեց կապերը խզել...

Կապերը խզե՞լ. Բայց ինչպե՞ս։ Չէ՞ որ նա հենց նոր իրեն խոստումով կապեց։ Ռոժեն կհամաձայնի՞ արդյոք։ Հարկավոր է, որ համաձայնի։ Նա չի կարող Աննետային խանգարել... Եվ Աննետան ատելությամբ լցվեց դեպի նա, մտածելով, որ Ռոժեն, թերևս, կփորձի հակառակվել։ Հիմա արդեն ուրիշի տառապանքները հաշիվ չէին. առանց տատանվելու Աննետան կփշրեր նրա սիրտը, միայն թե վերադարձներ իր ազատությունը։ Հետո Աննետան պատկերացրեց Ռոժեի աղերսող աչքերը, և սիրտը դողաց... Բայց միևնո՞ւյնն է։ Կործանվողի էգոիզմը, ինքնապաշտպանության բնազդը հաղթահարեցին ամեն ինչ, հաղթահարեցին քընքշություն, հաղթահարեցին կարեկցություն։ Անհրաժեշտ էր փրկվել։ Եվ վա՜յ նրան, ով փակեր Աննետայի ելքի ճանապարհը։

Ամբողջ գիշերը Աննետան շուռումուռ էր գալիս մի կողքից մյուսը, նրան տանջում էր ահեղային անքնություն, նա կանխապես տառապում էր Ռոժեի հետ ունենալիք հանդիպումից։ Աննետան ասաց, Աննետան քննեց այն բոլոր խոսքերը, որոնք Ռոժեն կասի իրեն, իսկ ինքը՝ Ռոժեին։ Աննետան փորձում էր համոզել նրան, վիճում էր, համբերությունից դուրս գալիս, խղճում էր նրան, ատում։ Սթափվեց արշալույսին—ուժասպառ, բայց վճռականությամբ լեցուն։ Նա կգնա Ռոժեի մոտ... Ասենք, չէ։ Կգրի—այդպես ավելի հեշտ կլինի արտահայտել մինչև վերջ այն, ինչ ուզում է, և ոչ ոք իրեն չի ընդհատի։ Ամեն ինչին վերջ կլինի։ Իսկ որպեսզի Բրիսոնները փորձ էլ չանեն նորից իրեն տիրանալ, Փարիզից կգնա—մի քանի օր կթաքնվի քաղաքից դուրս որևէ հյուրանոցում։ Աննետան վեր կացավ, նամակը գրեց—

հազար անգամ կշռադատելով բոլոր բառերը, իսկ հետո շատ-շատ սկսեց հավաքել իրերը։

Պատրաստություն տեսնելու ամենաթունդ րոպեին հայտնվեց Ռոժեն։ Աննետայի մտքով չանցավ էլ, որ պետք է հսկել տան մուտքը, չէր սպասում, որ Ռոժեն այդքան շուտ կգա։ Ռոժեն ներս մտավ, սիրուց և անհամբերությունից այրվելով—նա իր գալստյան մասին զեկուցող ծառայից առաջ ընկավ։ Ռոժեն ծաղիկներ էր բերել։ Նա երջանիկ էր ու լցված երախտագիտությամբ։ Եվ այնքան էր քնքուշ, այնքան երիտասարդ, այնքան հմայիչ, որ Աննետան, տեսնելով նրան, հետը խոսելու ուժ չգտավ իր մեջ։ Նրա բոլոր իմաստուն որոշումները մոռացվեցին, հենց առաջին իսկ հայացքից նրա սիրտը նորից խլեցին։ Սիրահարվածներին բնորոշ զարմանալի անբարեխղճությամբ նա նույն րոպեին գտավ ճիշտ նույնքան փաստարկներ ամուսնության օգտին, որքան մի քանի րոպե առաջ ուներ հակառակը։ Նա փորձում էր պայքարել, բայց բերկրությունը շողշողում էր նրա գիշերվա քաշած տառապանքներից սև շրջանակներով երիզված աչքերի մեջ։ Աննետան նայում էր իր Ռոժեին, որը սքանչացած հայացքը մեխել էր նրա աչքերի մեջ և նայում։

«Բայց չէ՞ որ ես որոշել էի... Ախր ես պետք է, այնուամենայնիվ, որոշեմ... իսկ ի՞նչ էի որոշել»։

Բայց այդտեղ էլ ի՞նչ իմանաս, երբ աշխարհում գոյություն ունի այդպիսի մի հայացք, որը մինչև հատակը խմում է հոգիդ։ Մտածե՞լ։ Ինչպե՞ս մտածես այդտեղ, ինչպե՞ս քեզ գտնես նորից։ Աննետան ինքն էլ ոչինչ չգիտեր, նա կործանվում էր... Իսկ առայժմ ինչքա՞ն է լավ, երբ քեզ այդպես սիրում են։ Միայն մի բան նա կարողացավ անել—դրա համար աներևակայելի ջանքեր պահանջվեցին. խնդրել Ռոժեին, որ նա հարսանիքի համար չշտապի։ Եվ Ռոժեի դեմքի արտահայտությունը անմիջապես դարձավ այնքան հիասթափված, այնքան վշտաբեկ, որ Աննետան արիություն չունեցավ շարունակել։ Մի՞թե կարելի է վշտացնել իր համար այդքան հարազատ տղային։ Եվ Աննետան շտապեց փաղաքշել Ռոժեին, հանգստացնել, ասել, որ սիրում է նրան։ Նա երկչոտորեն փորձեց պնդել հետաձգումը, բայց

Ռոժեն այնպիսի մի եռանդով ընդդիմացավ, կարծես իր կյանքի հարցը լուծելիս լիներ։ Վերջապես, քնքուշ վիճաբանություններից հետո, նրանք համաձայնեցին մեկը մյուսին չխոսվ չափ զիջել և որոշեցին ամուսնանալ ամռան կեսին։

Իսկ հետո Ռոժեն մեկնեց։ Աննետան հայելու մեջ նայեց իր շվարած դեմքին և նորից տատանվեց։ Ինչպե՞ս դուրս գալ այս խճճված վիճակից։ Նա աչքը գցեց մեկնելու համար հավաքած իրերին։

— Գործս արի՛, վերջացրի։

Ուսերը թոթվեց, սկսեց ծիծաղել։ Ի՞նչ հիանալի տղա է այդ Ռոժեն։ Նորից կոմոդը դրեց սպիտակեղենն ու մյուս իրերը, որոնք պատրաստել էր՝ ճամպրուկի մեջ դնելու համար։

«Ճվ այնուամենայնիվ,— մտածում էր նա,— ես չեմ ուզում, չե՛մ ուզում...»

Կատաղելով, նա շապիկները ձեռքից ցած գցեց։ Թրը՛փ։ Դրանց հետևից ընկան հարդարանքի խոզանակները... Նա ոտքով մի կողմ շպրտեց իրերի կույտը, զայրացավ...

Հետո սկսեց հավաքել, կռացավ դեպի հատակը։ Բայց չվերջացնելով՝ հավաքելը, հանկարծ հոգնածություն զգաց և նստեց ուղղակի պարկետին—կամքի ուժով պարծենալը գուր էր։

— Բավակա՞ն է,— նկատեց նա, գորգի վրա փռվելով։— Իմ առջևում դեռ չորս ամիս ժամանակ կա—կհասցնեմ որոշումս փոխել...

Նա դեմքը թաղեց բարձի մեջ և, պառկելով փորի վրա, սկսեց հաշվել օրերը...

Բրիսսոները խելամտորեն ընդառաջ գնացին Աննետայի ցանկությանը և համաձայնեցին հարսանիքը հետաձգել. նրանք վախենում էին շտապելով գործը փչացնել։ Բայց անհրաժեշտ համարեցին առայժմ Աննետային շրջապատել հոգատարությամբ։ Չի կարելի նրան ձեռնաթող անել. տարօրինակություններով աղջիկ է, մեկ էլ տեսար ձեռքներիդ գուրս պրծավ։

Մոտենում էր ծաղկազարդի կիրակին։ Բրիսսոները Աննետային հրավիրեցին զատիկն իրենց մոտ՝ Բուրգունդյան

կալվածքներում անցկացնել։ Աննետան հրավերքն ընդունեց դժկամորեն. դա գայթակղիչ էր և սարսափելի—սարսափելի, որովհետև կծանրացներ շղթաները, որոնք արդեն կապանքել էին նրան, սարսափելի, որովհետև, կամ ամբողջապես ակորցնի իրեն, կամ ամեն ինչ կփշրի, սարսափելի էին նաև ամեն տեսակի ուրիշ բաները, ավելի վտանգավոր, որոնք ինքը չէր ուզում հասկանալ։ Նա նույնիսկ փորձ էլ չէր անում ձեռք քաշել սիրահարվածությունից ու անվճռականությունից, որոնցով իրեն օրորում էր,— այդ ամենը մի քիչ նեղում էր իրեն, բայց դրա մեջ կար նաև իր հմայքը։ Ուզում էր, որ այդ վիճակը շարունակվի երկար, երկար։ Բայց Աննետան լավ էր հասկանում, որ դա վնասակար է և որ ինքը դրա իրավունքը չունի... Ռոժեի առաջ։

Վերջապես նա վճռեց իր տագնապների մասին անկեղծորեն ասել քրոջը։ Մինչև հիմա Աննետան մի խոսք անգամ Սիլվիային չէր ասել Ռոժեին սիրելու մասին, մինչդեռ նրան ամեն ինչ խոստովանում էր. հաճախ էր պատմում իր համար մյուս հառաչողների մասին։— Այո, բայց չէ՞ որ մյուսներին ինքը չէր սիրում։ Իսկ ահա Ռոժեի անունը թաքցընում էր։

Սիլվիան խորը հառաչեց, Աննետային անվանեց «տափուկ» և սկսեց խելագարի նման քրքջալ, երբ Աննետան փորձեց բացատրել նրան իր անվճռականության, կասկածների, տառապանքների պատճառը։

— Էհ, իսկ թռչնակդ լա՞վն է,— հարցրեց նա։

— Լավն է,— պատասխանեց Աննետան։

— Նա քեզ սիրո՞ւմ է։

— Այո։

— Դո՞ւ էլ ես սիրում։

— Ես էլ եմ սիրում։

— Բա էլ ի՞նչն է խանգարում։

— Ախ, այդ բոլորն այնքա՞ն բարդ է. Ինչպե՞ս բացատրեմ։ Ես նրան սիրում եմ... Շատ եմ սիրում... նա շա՞տ լա՞վն է։

(Աննետան սկսեց Սիլվիայի ծաղրական հայացքի տակ հափշտակված նկարագրել Ռոժեին։ Հետո հանկարծ լռեց)։

— Շատ, շատ եմ սիրում նրան... Եվ միևնույն ժամանակ չեմ սիրում... Նրա մեջ ինչ-որ բան կա... Ես նրա հետ չեմ ապրի... երբեք... Եվ հետո... Նա ինձ չափազանց շատ է սիրում։ Քիչ է մնում ուժի։

(Սիլվիան քրքջաց)։

— Իսկապես, որ ծողնեմ, ամբողջովին կուժի, իմ ամբողջ կյանքը, մտքերն իմ, շնչածս օդը... Օ՜, իմ Ռոժեն սիրո՞ւմ է ուտել։ Ուղղակի հաճույք է նրան տեսնել սեղան նստած։ Լա՜վ ախորժակ ունի։ Բայց չէ՞ որ ես չեմ ուզում, որ ինձ ուտեն։

Աննետան նույնպես սրտանց ծիծաղում էր, ծիծաղում էր և Սիլվիան, գրկելով քրոջ վիզն ու նստելով նրա ծնկներին։ Աննետան շարունակում էր.

— Սարսափելի բան է հանկարծ զգալ, որ քեզ այ այսպես, կենդանի-կենդանի կուլ տվին, որ քեզ մոտ քեզանից մի նշույլ անգամ չմնաց, որ դու այլևս չես կարող մի չնչին մաս անգամ քեզանից պահպանել... Իսկ դա Ռոժեի մարսում չի էլ անցնում։ Խելագարի նման սիրում է ինձ, բայց, իմ կարծիքով, նա, ինչպես ասեմ, չի էլ ջանում ինձ հասկանալ, նույնիսկ չի էլ մտածում այդ մասին։ Եկավ, վերցրեց, տարավ...

— Դա շա՞տ հաճելի բան է,— վրա բերեց Սիլվիան։

— Ո՛ր մարդում միայն հիմարություններ են,— ասաց Աննետան, քրոջը գրկելով։

— Բա ի՞նչ էիր ուզում, որ լինի։

— Ամուսնություն։ Դա կարևոր բան է։

— Կարևո՞ր։ Ընդունենք, որ այնքա՞ն էլ կարևոր չէ։

— Ի՞նչ։ Տրվել ամբողջովին, ոչինչ չպահպանել—և դա կարևո՞ր չէ։

— Ախր ո՞վ է այդ մասին բան ասում։ Միայն խելագարնե՛րը։

— Բայց նա ուզում է ամե՛ն ինչին տիրանալ։

Սիլվիան քրքջում էր, ձկան նման խլպլտալով։

— Ախ դու իմ թռչնա՛կ։ Իմ անխե՛լք։ Հիմա՞, միամիտ...

(Նրան թվում էր, թե այդտեղ ոչ մի բարդ բան չկա.

ասա ինչ ուզում ես, տուր ինչ ուզում ես, իսկ մնացած բոլորը պահպանիր ու ձայն մի հանիր։ Նա, սիրելով, ձեռ էր առնում տղամարդկանց ու նրանց պահանջները։ Առանձնապես մեծ խորամանկություն չունեն)։

— Այո, բայց չէ՞ որ ես, ես նույնպես խորամանկ չեմ,— ասաց Աննետան։

— Դա իսկապե՞ս որ այդպես է,— բացականչեց Սիլվիան։— Դու ամեն ինչ լուրջ ես ընդունում։

Աննետան տխուր տեսքով համաձայնեց։

— Ուղղակի ոնց որ դժբախտություն լինի։ Ես էլ կուզեի քեզ նման լինել։ Արի ու մի ասա, որ բախտդ բերել է։

— Արի փոխենք։ Քոնը տուր ինձ,— առաջարկեց Սիլվիան։

Աննետան ամենևին էլ չէր ուզում փոխել։ Սիլվիան գնաց, գոտեպնդելով քրոջը։

Եվ այնուամենայնիվ Աննետան չէր հասկանում իրեն։ Բոլորովին մոլորվել էր։

«Հետաքրքի՞ր է,— մտածում էր նա։— Ես ուզում եմ ամեն ինչ տալ։ Եվ ուզում եմ ամեն ինչ պահպանել...»

Հաջորդ օրը—դա մեկնելու նախօրյակն էր,— երբ Աննետան, իրերը դասավորելով, նորից սկսեց իրեն տանջել, եկավ մի անսպասելի հյուր և ուժեղացրեց նրա տագնապը, որը նա հանկարծ ավելի պարզ գիտակցեց։ Նրան զեկուցեցին Մարսել Ֆրանկի մասին։

Մարսել Ֆրանկը սիրալիր և քաղաքավարի խոսեց ինչ-որ բանի մասին, և ապա ակնարկեց նշանդրեքը—Ռոժեն դա պաղտնի չէր պահել։ Շնորհավորեց Աննետային. նրա տոնի մեջ և աչքերում հաճելիորեն ծիծաղելի և սրտագին մի բան կար։ Աննետան նրա հետ իրեն անկաշկանդ էր զգում, ինչպես խորաթափանց ընկերոջ հետ, որին պետք չէ, որ ամեն ինչ ասես, և որից ոչինչ թաքցնելու կարիք չկա, որովհետև դեռ խոսքը բերանից դուրս չեկած, հասկանում ես նրան։ Խոսք բացեցին Ռոժեի մասին, որին Մարսել Ֆրանկը նախանձում էր—և ժպտալով այդ խոստովանեց։ Աննետան գիտեր, որ նա ճշմարտություն է ասում, որ նա սիրահարված է

իր՝ Աննետայի վրա։ Բայց դա ամենևին չէր խանգարում իրենց։ Աննետան հարցրեց, թե նա ինչ կարծիքի է Ռոժեի մասին,— այդ երիտասարդները իրար լավ ծանոթ էին։ Մարսելը գովեստներ շռայլեց, բայց Աննետան համառում էր, որ Ռոժեի մասին պատմի ոչ թե այդպիսի հանրահայտ բաներ։ Այդ պատճառով էլ Մարսելը կատակելով պատասխանեց, որ Ռոժեին նկարագրելու կարիք չկա,— չէ որ Աննետան նրան նույնքան լավ է ճանաչում, որքան և ինքը՝ Մարսելը։ Եվ այդ ասելով, նա այնպիսի խորաթափանց և սևեռ հայացքով էր նայում, որ Աննետան իրեն վատ զգաց և աչքերը փախցրեց։ Հետո Աննետան նույնպես դիմահար հայացքով նայեց Մարսելին, նկատեց նրա նուրբ քմծիծաղը, այդ քմծիծաղը ապացուցում էր, որ նրանք միմյանց հասկացան։ Խոսք բացվեց ինչ-որ աննշան բաների մասին, բայց Աննետան հանկարծ ընդհատեց այդ խոսակցությունը և մտահոգված հարցրեց.

— Անկեղծորեն ասեք, դուք գոնո՞ւմ եք, որ ես իրավացի չեմ։

— Ես երբեք չեմ համարձակվի հայտարարել, որ դուք իրավացի չեք,— պատասխանեց նա։

— Խնդրեմ, առանց հաճոյախոսության։ Միայն դուք եք, որ ինձ կարող եք ճշմարտությունն ասել։

— Դուք գիտեք, որ իմ դրությունը այդ հարցում չափազանց նուրբ է։

— Գիտեմ։ Բայց ես գիտեմ նաև այն, որ դա չի ազդի ձեր դատողությունների անկեղծության վրա։

— Շնորհակալ եմ,— ասաց Մարսելը։

Աննետան շարունակեց.

— Դուք համարում եք, որ ո՛չ Ռոժեն, ո՛չ ես իրավացի չե՞նք։

— Համարում եմ, որ դուք սխալվում եք։

Աննետան գլուխը կախեց։ Հետո ասաց.

— Ես էլ եմ այդպես համարում։

Մարսելը չպատասխանեց։ Նա դեռ շարունակում էր նայել Աննետային ու ժպտալ։

— Ինչո՞ւ եք ժպտում։

— Ես համոզված էի, որ դուք այդպես եք մտածում։ Աննետան աչքերը գցեց նրա վրա։

— Հիմա ասացեք, դուք ի՞նչ կարծիքի եք իմ մասին։

— Այդ կարծիքը ձեզ ոչինչ չի սովորեցնի։

— Բայց կօգնի ավելի լավ ամեն ինչ հասկանալ։

— Դուք սիրահարված խռովարար եք,— պատասխանեց Տարսելը։— Մշտապես սիրահարված (ներեցեք) և մշտապես խռովարար։ Ձեր մեջ տրվելու պահանջ կա և կա պահանջ՝ ձեզ պահպանելու...

(Աննետան տեղից վեր ցատկեց, չկարողացավ զսպել իրեն)։

— Դուք նեղացա՞ք։

— Ամենևին, ամենևին, ընդհակառա՛կը։ Դա շատ հիշտ է։ Հետո՞, շարունակե՛ք։

— Դուք մարմնավորված անկախություն եք,— շարունակեց Մարսելը,— բայց միայնության մեջ ապրել չեք կարող։ Այդպիսին է բնության օրենքը։ Դուք դա մյուսներից ավելի սուր եք զգում, որովհետև ավելի զգայուն եք։

— Այ, դո՛ւք ինձ հասկանո՞ւմ եք։ Հասկանում եք ավելի լավ, քան նա, բայց...

— Բայց դուք նրան եք սիրում։

Այդ ժամում ոչ մի դառնություն չկար։ Նրանք ընկերաբար նայում էին իրար և, ժպտալով, մտածում էին, թե որքան հետաքրքիր բան է մարդկային բնությունը։

— Այո, հեշտ չէ,— ասաց Աննետան,— հեշտ չէ երկուսով միասին ապրելը։

— Սխալվում եք, միանգամայն հեշտ կլիներ, եթե մարդիկ դարերի ընթացքում չհաջողեցնեին կյանքը բարդացնել՝ մեկը մյուսին խանգարելով։ Պետք է դրան վերջ տալ, ուրիշ ոչինչ։ Բայց, հասկանալի է, մեր թանկագին Ռոժեի, ինչպես և ամեն մի կարգին, պահպանողական ֆրանսիացու համար այդ միտքը երբեք հասկանալի լինել չի կարող։ Նրանք բոլորն էլ կհամարեին, թե իրենց վերջը եկել է, եթե հանկարծ անցյալը դադարեր նրանց խանգարելուց։ «Որտեղ խոչընդոտներ չկան, այնտեղ չկա նաև քաղցրություն», հատկա-

պես երբ նա, ում խանգարում են, ինքն էլ է խանգարում իր մերձավորին։

— Իսկ դուք ինչպե՞ս եք, այնուամենայնիվ, նայում ամուսնությանը։

— Որպես ձեռնտվությունների և հաճույքների խելամիտ միության։ Կյանքը խաղողի այգի է, որից օգտվում են միասին. մշակում են և խաղողը հավաքում միասին։ Բայց գինին միշտ երկուսով խմելը, երես առ երես, ոչ ոք պարտավոր չէ։ Դիմում են փոխադարձ զիջումների. մեկը մյուսից ուզում և մեկը մյուսին տալիս է հաճույքների ողկույզ, որն ունի նրանցից յուրաքանչյուրը, բայց խելամըտորեն թույլ են տալիս միմյանց քաղի գնալ նաև ուրիշ տեղ։

— Չլինի՞ դուք մարտնչում եք հանուն ազատության։

— Դա հնացած, անդրջրհեղեղյան արտահայտություն է։ Ես մարտնչում եմ հանուն սիրո ազատության, որը բոլոր տեսակի ազատություններից ամենակենսականն է։

— Էհ, դա ինձ ամենից քիչ է պետք,— ասաց Աննետան։ — Ամուսնությունն ինձ համար խաչմերուկ չէ, որտեղ մարդ տրվում է առաջին հանդիպածին։ Ես տրվում եմ մի մարդու։ Եվ եթե ես դադարեի նրան սիրելուց կամ սիրեի մի ուրիշին։ ապա հենց նույն օրը կհեռանայի։ Ես ոչ ինքս ինձ կբաժանեի նրանց միջև, և ոչ էլ բաժանում կհանդուրժեի։

Մարսելը հեգնանքով թոթվեց ուսերը, կարծես ասելով. «Մի՞թե դա կարևոր է...»

— Գիտե՞ք ինչ, բարեկամս,— նկատեց Աննետան,— բանից պարզվում է, որ դուք ինձ համար շատ ավելի խորթ եք, քան Ռոժեն։

Կնշանակի, դո՞ւք էլ եք կողմնակից այն հին բարի սխեմային, որը հռչակում է. «Եկեք խանգարենք մեկս մյուսին»։

Ամուսնական կապի վեհությունը հենց նրա մեջ է, որ նա խարսխվում է միասնության վրա, երկու սրտերի հավատարմության վրա,— առարկեց Աննետան։— Էլ ի՞նչ կմնա նրանից, չհաշված որոշ գործնական առավելություններ, եթե դա նույնպես վերանա։

— Այնպիսի բան, որը նույնպես քիչ կարևոր չէ,— նրան հատեց Մարսելը։

— Բայց և բավական չէ, որպեսզի փոխհատուցես քո բերած զոհողություններդ դիմաց,— պատասխանեց Աննետան։

— Եթե դուք այդպես եք դատում, ուրեմն էլ ինչո՞ւ եք տրտնջում։ Հագեք այն շղթաները, որոնցից ձեզ ուզում էին փրկել։

— Ազատությունը, որին ես ձգտում եմ,— առարկեց Աննետան,— սրտի ազատություն չէ, ես զգում եմ, որ իմ ուժերը կբավարարեն այդ սիրտը անբասիր պահել այն մարդու նկատմամբ, որին ես այն նվիրել եմ։

— Դուք լրիվ համոզվա՞ծ եք,— անվրդով հարցրեց Մարսելը։

Աննետան լրիվ համոզված չէր։ Կասկածը ծանոթ էր նույնպես և նրան։ Հիմա խոսում էր իր մոր աղջիկը, և ոչ թե ամբողջ Աննետան։ Սակայն նա չէր ուզում համաձայնել, մանավանդ Մարսելի հետ վիճելիս։ Աննետան ասաց.

— Ես այդպես եմ ուզում։

— Համառել այդպիսի գործերո՞ւմ,— նկատեց Մարսելը՝ էր նուրբ քմծիծաղով։— Չէ՞ որ դա միևնույն է, եթե մարդ վերցնի ու որոշում կայացնի, որ կարմիր կրակը դառնա կանաչ կրակ։ Սերը փոփոխվող լույսերով փարոս է։

Բայց Աննետան համառորեն պնդում էր.

— Ոչ ինձ համար։ Ես այդպես չեմ ուզում։

Աննետան հիանալի կերպով զգում էր, թե որքան կարևոր է նրա համար և՛ փոփոխության պահանջը, և՛ պահանջը՝ անփոփոխ մնալու—երկու բոցավառ բնածին հակում, որ հատուկ է ուժեղ բնավորությանը։ Բայց հերթականորեն վրդովվում էր այն հակումը, որին թվում էր, թե ավելի մեծ վտանգը իրե՛ն է սպառնում։

Մարսելը լավ ճանաչելով հպարտ և համառ այդ աղջկան, քաղաքավարությամբ խոնարհվեց։ Աննետան, որն իր մասին դատում էր նույնքան ճիշտ, որքան Մարսելն էր դատում նրա մասին, փոքր-ինչ շփոթահար ասաց.

— Մի խոսքով, ես չէի ուզի...

Այդ դիջումից հետո, որն Աննետան թույլ տվեց, ելնելով իր բնավորության ճշմարտախոհությունից, նա շարունակեց ավելի վստահ, զգալով, որ հիմա ինքը իր միջավայրում է։

— Բայց ես կուզեի, որ, միմյանց նվեր բերելով անկեղծ սերը, յուրաքանչյուրը պահպաներ իր իրավունքը ապրել այնպես, ինչպես սիրտն է հուշում, գնալ իր ճանապարհով, որոնել իր ճշմարտությունը, պաշտպանել, եթե դրա կարիքը լիներ, իր գործունեության դաշտը,— մի խոսքով, պահպանել իր հոգևոր կյանքի օրենքը և չզիջել դա հանուն այն օրենքի, որն ուրիշն է պահպանում, թեկուզև աչխարհում ամենաթանկ էակը, քանի որ ոչ ոք իրավունք չունի ոչ զոհաբերել իր համար ուրիշի հոգին, և ոչ էլ իր հոգին՝ ուրիշի համար։ Դա հանցագործություն է։

— Այդ բոլորը հիանալի է, սիրելի բարեկամս,— ասաց Մարսելը,— բայց գիտե՞ք ինչ, բոլոր այդ խոսակցությունները հոգու մասին ինձ չվերաբերող բաներ են։ Ըստ երեվույթին, դա ավելի շուտ Ռոժեին է վերաբերում։ Ընդ որում ես վախենում եմ, որ տվյալ դեպքում նա այդ հասկանում է բոլորովին ոչ այդպես։ Ես լիակատար պարզությամբ չեմ պատկերացնում, կարող են արդյոք Բրիսսոները իրենց ընտանեկան շրջանակում հասկանալ, որ հնարավոր է ինչ-որ ուրիշ «հոգևոր» օրենք, բացի իրենց՝ Բրիսսոնների քաղաքական և անձնական ապահովությունը պահպանող օրենքից։

— Ի դեպ,— ծիծաղելով ասաց Աննետան,— վաղը ես մի երկու-երեք շաբաթով մեկնում եմ նրանց մոտ՝ Բուրգունդիա։

— Ինչ կա որ, ահա և ձեզ համար առիթ կլինի համեմատելու ձեր և նրանց իդեալները,— պատասխանեց Մարսելը։— Չէ՞ որ նրանք էլ են մե՛ծ իդեալիստներ։ Ասենք, գուցեև ես մոլորության մեջ եմ։ Կարծում եմ, որ դուք իրար հետ լեզու կգտնեք։ Ըստ էության, դուք ստեղծված եք միմյանց համար։

— Ձեռ մի՛ առեք,— ասաց Աննետան։— Հենց այդպես էլ կանեմ, այնտեղից կվերադառնամ որպես կատարյալ Բրիսսո։

— Սատանա՜ն տանի՝ հետաքրքի՜ր պատմություն կլինի՝ այդպիսի բան չանեք, խնդրո՜ւմ եմ՝ Բրիսսո կդառնաք, թե չեք դառնա, մեր Աննետային պահպանեցեք։

— Ավա՜ղ՝ ես կուզեի այդ Աննետային կորցնել, բայց վախենում եմ չհաջողվի,— նկատեց Աննետան։

Մարսելը հրաժեշտ տալով, համբուրեց նրա ձեռքը։

— Բայց և այնպես, շատ ափսոս...

Մարսելը գնաց։ Եվ Աննետան նույնպես ափսոսաց, բայց ոչ այն, ինչ Մարսելն էր ափսոսում։ Մարսելը ճիշտ էր ճանաչում Աննետային, բայց հասկանում էր նրան ոչ ավելի, քան Ռոժեն, Ռոժեն բոլորովին չէր ճանաչում Աննետային։ Նրան հասկանալ կարող էին ավելի «հավատացյալ» հոգիները— ավելի ազատ հավատացյալները, քան գրեթե բոլոր երիտասարդ ֆրանսիացիների հոգիներն են։ Նրանք, ովքեր հավատացյալ են, հավատում են կաթոլիցիզմի ոգով, իսկ դա նշանակում է ենթակայություն և հրաժարում մտքի ազատ թռիչքից (հատկապես նրա խոսքը կնոջն է վերաբերում)։ Իսկ նրանք, ովքեր մտածում են ազատ, հազվադեպ են խորհրդածում հոգու նվիրական պահանջների մասին։

Երբ հաջորդ օրը Աննետան ժամանեց, Ռոժեն կատրով սպասում էր Բուրգունդիայի փոքրիկ կայարանում։ Նրան տեսնելուն պես Աննետայի բոլոր կասկածներն անհետացան։ Ռոժեն այնպե՜ս ուրախացավ։ Պակաս չուրախացավ նաև Աննետան։ Նա անսահմանորեն երախտապարտ էր Բրիսսո դամաններին. նրանք ինչ-որ պատրվակ էին հնարել և չէին եկել դիմավորելու։

Գարնանային պարզ երեկո էր։ Հորիզոնի ոսկեգույն կլոր ֆոնի վրա քնքշորեն կանաչին էր տալիս ալիքավոր մի ժապավեն— լուսավոր դալար սաղարթները— վարած դաշտերը վարդագույն էին։ Գեղգեղում էին արտույտներ։ Շարաբանը սլանում էր ողորկ ճանապարհով, որ զրնգում էր կրակոտ ձիու սմբակների տակ, զով քամին մտրակում էր Աննետայի վարդագունած այտերին։ Աննետան սեղմվել էր իր երիտասարդ ուղեկցին, իսկ վերջինս շարաբանը վարում էր, ծիծաղում, ինչ-որ բան ասում Աննետային, հետո հանկարծ

թևքվում էր ու ընթացքի ժամանակ համբույր քաղում նրա շուրթերից։ Աննետան չէր դիմադրում։ Նա սիրում էր, սիրո՞ւմ էր Ռոժենին։ Բայց դա չէր խանգարում նրան գիտակցել, որ ինքը հիմա ուր որ է նորից կսկսի դատապարտել Ռոժենին ու դատապարտել իրեն։ Մի բան է դատապարտել, մի ուրիշ բան է սիրել։ Աննետան սիրում էր նրան, ինչպես սիրում էր օդը, երկինքը, մարգագետինների բուրմունքը, ինչպես գարնան մի մանիկը... Խորհրդածությունները թողնենք մինչև վաղը։ Աննետան արձակուրդ է վերցրել այսօրվա համար։ Վայելենք այս սքանչելի ժամը։ Դա երբեք չի կրկնվի։ Աննետային թվում էր, թե իր սիրեցյալի հետ ճախրում է երկրի վրա։

Նրանք տեղ հասան շատ շուտ, թեև վերջին ոլորանից ոտքով էին բարձրանում բարդիների ծառուղիով, իսկ երբ կանգ առան, որպեսզի ձին շունչ առնի, երկար նստեցին լուռ, ամեր գրկած միմյանց, դղյակի ճակատը ծածկող բարձր պարսպի պաշտպանության տակ։

Բրիսսոները գուրգուրեցին Աննետային։ Զգուշորեն խոսակցությունը տարան դեպի այն հիշողությունները, որոնք կապված էին նրա հոր հետ, գտան ինչ-որ սրտագին խոսքեր։ Ընտանիքի շրջանակում անցկացրած առաջին երեկոն Աննետան անձնատուր եղավ փայփայանքներին. նրախտապարտ էր, հուզված,— երկա՞ր ժամանակ էր, ինչ նա ընտանեկան ջերմություն չէր տեսել։ Նա բավականություն էր զգում պատրանքներից, Բրիսսոններից յուրաքանչյուրն աշխատում էր իր ձևով լինել սիրալիր։ Աննետայի դիմադրողականությունը թուլացավ։

Իսկ գիշերն Աննետան արթնացավ, լսելով, թե ինչպես է հին տան լռության մեջ մուկը ճանկռոտում, և նրան խկուն պատկերացավ մկան թակարդը. նա մտածեց.

«Ես ընկա ծուղակը...»։

Աննետային համակեց տխրությունը, նա փորձեց հանգըստացնել իրեն.

«Ո՛չ, ինչ եմ ասում, չէ որ ես դա չեմ ուզում, ամենևին էլ ես ծուղակ չեմ ընկել...»։

Հուզմունքից Աննետայի ուսերը բրանեցին։ Նա իրեն տասց.

«Վաղը ես Ռոժեի հետ լրջորեն կխոսեմ։ Անհրաժեշտ է, որ նա ինձ ճանաչի։ Պետք է ազնվորեն ծանր ու թեթև անել, մենք կարո՞ղ ենք արդյոք միասին ապրել...»։

Եկավ վաղվա օրը, և նա այնքա՜ն ուրախ էր Ռոժեին տեսնելու համար, այնքա՜ն հաճելի էր սուզվել նրա ջերմ սիրո մեջ, շնչել նրա հետ թարմ հեռուներից եկող արբեցուցիչ նուրբ բուրմունքները, երազել երջանկության մասին (գուցեև անիրականանալի, բայց ո՞վ գիտե։ Ո՞վ գիտե։ Դուցե այդ երջանկությունը ուղղակի նրա կողքին է... Միայն ձեռքդ մեկնիր...), որ բացատրությունները հետաձգեց մինչև մյուս օրը... Եվ հետո նորից մինչև հաջորդ օրը... Եվ ապա դարձյալ հաջորդը...

Եվ ամեն գիշեր թախիծը համակում էր Աննետային, այնպիսի մի սուր թախիծ, որ սիրտը մրմռում էր։

«Պետք է, պետք է խոսել... Պետք է խոսել հենց իր՝ Ռոժեի համար... օրըստօրե նա ավելի ու ավելի է կապվում ինձ, կապվում եմ և ինքս ես իրավունք չունեմ լռելու։ Չէ՞ որ դա նշանակում է խաբել նրան...»։

Տե՜ր իմ աստված, տե՜ր իմ աստված, ինչքա՜ն թուլացում է դառել Աննետան։ Իսկ առաջ նա այդպես թույլ չէր։ Բայց սիրո շունչը նման է այն այրող քամիներին, որից մարդ հյուծվում է, այրվում է, տապալվում գետին, զգում է, ինչպես է նվազում սիրտը, ինչպես է կորցնում ուժերը, թուլանում և ընկնում է ինչ-որ տարօրինակ խոնջության մեջ։ Վախենում է շարժվել։ Վախենում է մտածել։ Երազանքների մեջ սսկված հոգին սարսափում է իրականությունից։ Աննետան լավ գիտեր, որ բավական է շարժվել—և երազանքը կփշրվի...

Բայց ընդունենք, որ մենք չենք շարժվում—մեր փոխարեն շարժվում է ժամանակը, և օրերը իրենց սլացքի մեջ տանում են այն պատրանքը, որը մարդ այնքա՜ն կուզեր պահել։ Ձուր ես դու հետևելու քեզ—եթե գոք առավոտից

իրիկուն միմյանց հետ եք, ուրեմն, վերջիվերջո, դու զգացնել կտաս քեզ, զգացնել կտաս քո ամբողջ էությունը։

Եվ Բրիսսոնների ընտանիքը իրեն ցույց տվեց առանց չափազանցումների։ Ժպիտը ցուցանակ էր։ Աննետան տուն մտավ։ Տեսավ գործերով զբաղված ձանձրալի բուրժուաներին, որոնք անկշտում բավականությամբ վարում էին իրենց կալվածքները։ Այդտեղ սոցիալիզմի մասին խոսք անգամ չկար։ Կոչ էին անում միայն սեփականատիրոջ իրավունքների դևկլարացիայի, և ոչ թե մյուս անմահ սկզբունքների։ Վայն եկել էր նրան տարել, ով ոտնձգություն աներ այդ սեփականության դեմ։ Նրանց պահակների բան ու գործն այն էր, որ անդադար պատասխանատվության էին ենթարկում բոլորին։ Ասենք, Բրիսսոներն անձամբ իրենք էլ էին ամեն ինչը հսկում խստորեն, մի բան, որ նրանց ուրախություններ և դառնություններ աղբյուրն էր։ Նրանք դարան մտած տեղից կարծես կռիվ էին գնում իրենց ծառաների, ֆերմերների, այգեգործների և բոլոր հարևանների դեմ։ Կովարարությունը, դատամոլությունը, որ հատկանշական էր նրանց տոհմի և բոլոր գավառացիների համար, ֆարթամորեն փթթում էր այդ ընտանիքում։ Հայրիկ Բրիսսոն ուրախ ծիծաղում էր, երբ իրեն հաջողվում էր ծուղակի մեջ բռնել նրան, ում դարանակալում էր։ Սակայն վերջում ծիծաղողն ինքը չէր լինում. հակառակորդը պատրաստված էր նույն՝ բուրգունդական կավից, նրան հնարավոր չէր հանկարծակիի բերել։ Հաջորդ օրը, որպես վրեժ, նա իր ձեվով որևէ խարդավանք էր սարքում։ Եվ ամեն ինչ սկսվում էր նորից։

Իհարկե, Աննետային չէին քաշում ամենօրյա այդ վեճերի մեջ։ Բրիսսոները դրանք քննարկում էին հյուրասենյակում կամ ճաշասեղանի շուրջը, երբ Ռոժեն ու Աննետան, թվում էր, տարված էին միմյանցով։ Բայց Աննետան սուր ուշադրություն ուներ, և նա հետևում էր բոլոր բաներին, ինչի մասին որ խոսում էին շուրջը։ Ասենք, Ռոժեն նույնպես երբեմն ընդհատում էր իր քնքուշ զրույցը և խառնվում ոգեվորությամբ տարվող ընդհանուր խոսակցությանը։ Այդտեղ բոլորն էլ սկսում էին տաքանալ. խոսում էին առանց մեկը

մյուսին լսելու, մոռանում էին Աննետային։ Կամ պնդում էին, իբրև թե նա այդ իրաղարձությունների վկան է, որոնց մասին Աննետան գաղափար էլ չուներ։ Այդպես շարունակվում էր, մինչև որ տիկին Բրիսսոն հիշում էր այն անձնավորության գոյությունը, որ լսում է իրենց, վեճն ընդհատում էր, ժպտում էր նրան իր քաղցր ժպիտով և խոսակցությունը փոխում ծաղիկներով ծածկված ուրիշ ուղու վրա։ Եվ բոլորը, կարծես ոչինչ չէր պատահել, նորից դառնում էին բարեհամբույր և սիրալիր։ Ցուցադրական առաքինությունների և ազատ կատակների զվարճալի խառնուրդը բնորոշ էր նրանց խոսակցության ոճին—համապատասխան այն բանին, ինչպես զուգակցվում էին դղյակում լայն ու փարթամ կյանքը և ժլատությունը։ Զվարճասեր Բրիսսոն սիրում էր կատակներ անել։ Աղջիկ Բրիսսոն սիրում էր խոսել պոեզիայի մասին։ Այդ թեմայով բոլորն էին այստեղ դատողություններ անում։ Ծրևակայում էին, որ պոեզիայի դիտակներ են։ Իսկ ճաշակները մոտ քսան տարով հնացած էր։ Արվեստի բոլոր տեսակների մասին նրանց դատողությունները անխախտ էին։ Դրանք հիմնվում էին պատշաճ կերպով ստուգված և «իբենց այսինչ բարեկամի կողմից» արտահայտած կարծիքի վրա, որը ակադեմիայի անդամ է, ընդ որում ոտից գլուխ զարդարված շքանշաններով։ Աշխարհում չկա ավելի վախկոտ, փոքրիկ խելք— նույնիսկ կշիռ ունեցող մարդկանց մոտ,—քան խոշոր բուրժուազիայի այդպիսի ներկայացուցիչներինն է, որոնք իրենց առաջավոր մարդ են համարում և՛ արվեստի բնագավառում և՛ քաղաքականության, բայց որոնք առաջավոր մարդիկ չեն ոչ մեկում և ոչ էլ մյուսում, քանի որ թե մեկ և թե մյուս բնագավառներում նրանք հանդես են գալիս—և այդ անում են միանգամայն գիտակցորեն—լոկ այն բանից հետո, երբ մյուսները նրանց փոխարեն շահել են ճակատամարտը։

Աննետան զգում էր, թե ինքը որքան է հեռու նրանցից։ Նա ուշադիր զննում էր, լսում նրանց ասածները և մտածում.

«Ես ի՞նչ գործ ունեմ բոլոր այս սուբյեկտների հետ»։

Այն միտքը, թե Բրիսսո մոր կամ դստեր խելքին կարող

է փչել, որ իրեն հովանավորեն, արդեն ոչ թե վրդովում, այլ ծիծաղ էր պատճառում Աննետային։ Նա իրեն հարց էր տալիս, թե ինչ կմտածեր Սիլվիան, եթե նրան այդպիսի ընտանիք պարգևեին։ Ա՜յ թե ախուվախ կքաշեր, ա՜յ թե կծիծաղեր։

Եվ երբեմն Աննետան, մենակ մնալով այգում, նույնպես սկսում էր ծիծաղել։ Պատահում էր այնպես, որ Ռոժեն լսում էր այդ ծիծաղը, զարմանում էր և հարցնում.

— Այդ ի՞նչն է ձեզ այդպես ծիծաղ պատճառել։

Աննետան պատասխանում էր.

— Ոչ մի բան, սիրելիս։ Ինքս էլ չգիտեմ։ Հենց այնպես, հիմարություն է...

Եվ աշխատում էր ընդունել իր սովորական բարեկիրթ տեսքը։ Սակայն հաղթահարել իրեն չէր կարողանում — ծիծաղում էր ավելի հնչեղ, և նույնիսկ տիկին Բրիսսոյի երեսին։ Ներողություն էր խնդրում, իսկ Բրիսսո դամաները խոսում էին ներողամտորեն, բայց թեթևակի վրդովմունքով.

— Նա դեռ բոլորովին երեխա է։ Թող ծիծաղի իր համար։

Բայց միշտ չէր, որ Աննետայի ծիծաղը գալիս էր, նրա հիանալի տրամադրությունը մեկ էլ տեսար հանկարծ մոայլվում էր։ Բերկրությամբ ողողված ամբողջական ժամեր, նա Ռոժեի հանդեպ լի էր լինում քնքշությամբ ու վստահությամբ, բայց հանկարծ առանց մի անցումի, առանց որևէ պատճառի թախիծը, կասկածանքը, տխրությունը տիրում էին նրան։ Հոգեկան անհավասարակշռությունը, որ սկիզբ էր առել այն աշնանը, ոչ միայն չանցավ, այլև, թերևս, ուժեղացավ փոխադարձ սիրո այդ ամիսների ընթացքում։ Ջյան հյուսքի նման վրա էին թափվում ինչ-որ տարօրինակ հակասական տրամադրություններ. Աննետան գրգռվում էր, խայթում թունոտ կերպով, ձեռ էր առնում, հայում անվրտտահորեն ու գոռոզաբար, զայրանում էր — և չէր կարելի բացատրել, թե ինչից։ Նա քիչ ջանքեր չէր թափում իրեն հաղթահարելու համար։ Ոչ մի լավ բան չէր ստացվում. նա ամփոփվում էր ինչ-որ տագնապալից, քշնամական լռության մեջ։ Բանականությունը առաջվա պես պայծառ էր,— ահա

թե ինչու էին նրան զարմացնում արամադրության այդպիսի արագ փոփոխությունները, և նա հանդիմանում էր իրեն։ Եվ, չնայած դրան, զրեթե ամեն ինչ մնում էր նույնը։ Բայց դրա փոխարեն, ընդունելով իր թերությունները, Աննետան— և դա ավելի շուտ գալիս էր գիտակցությունից, քան հոգուց, — սկսում էր ներողամտաբար վերաբերվել բոլոր այդ «խրտվիլակների» թերություններին։ (Դարձյա՞լ... Տգե՞տ... «Ներեցեք, էլ չե՞մ անի...») Չէ՞ որ նրանք Ռոժեի հարազատներն էին, իսկ եթե ինքն ընդունում էր Ռոժեին, ուրեմն, պետք է ընդուներ նաև նրանց։ Հարցը միայն այն էր, թե արդյոք Աննետան Ռոժեին ընդունո՞ւմ է։ Տեր աստված, մի՞թե դա կարևոր է, մի՞թե մնացածը կարևոր է, երբ մարդ երկուսով է պաշտպանվում։

Բայց երկուսո՞վ է արդյոք։ Պաշտպանի՞ նրան Ռոժեն։ Նախքան իրեն հարցնելը, թե ինքը ընդունում է արդյոք Ռոժեին, պետք է իմանալ, թե ինքը Ռոժեն էլ կընդունի՞ իրեն արդյոք անկեղծորեն, բայց սրտով, երբ տեսնի Աննետային հենց այդպես, ինչպես որ նա կա իրականում։ Որովհետև մինչև հիմա Ռոժեն տեսել էր միայն նրա բերանն ու աչքերը։ Իսկ ահա այն, ինչ նա—իսկական Աննետան—մտածում էր, ինչ ուզում է, թվում էր, Ռոժեն առանձնապես չի էլ ջանում իմանալ. նա գտնում էր, որ շատ ավելի հարմար է նրան հնարել։ Սակայն Աննետան հույսով շոյում էր իրեն, որ, երբ իրենք համարձակորեն նայեն միմյանց սրտի մեջ, սերը նրանց կօգնի որոշել այսպես.

«Ես վերցնում եմ քեզ։ Վերցնում եմ քեզ այն ամենով, ինչ որ կա քո մեջ։ Վերցնում եմ քեզ քո բոլոր թերություններով, քո կրքերով, քո պահանջներով, կյանքի քո օրենքով։ Դու այն ես, ինչ որ կաս։ Քո մեջ եղած հենց ամեն ինչով էլ ես քեզ սիրում եմ»։

Աննետան գիտեր, որ ինքը պատրաստ է հանուն սիրո ամեն ինչի գնալու։ Վերջին օրերը նա երկա՜ր-երկար հետևում էր Ռոժեին իր մեծ աչքերով, որոնք ամեն ինչ նկատում էին, մանավանդ որ դրանցից ոչ ոք չէր զգուշանում։ Ռոժեն դարձել էր շատ անշրջահայաց. նա իրեն դրսևորում էր որպես ավելի տիպիկ Բրիսսո, քան Աննետան այդ կուզեր,

ինքնամոռաց կերպով պաշտպանում էր այն, ինչ ձեռնտու էր իր հարազատներին, խորամուխ էր լինում բոլոր վեճերի մեջ, ամեն ինչում մտցնելով քաշքշուկասիրության ոգին։ Որոշ գծեր, որոնք խոսում էին նրա բնավորության փաժանության, նրա մանրության մասին, Աննետային զզվանք էին պատճառում։ Բայց նա չէր ուզում Ռոժեին դատապարտել այնքան խիստ, ինչպես կդատապարտեր մի ուրիշին։ Աննետան կարծում էր, որ այդ բոլորը նրա մեջ պատահական է։ Ռոժեն շատ բաներում Աննետային ներկայանում էր որպես փոքրիկ մի երեխա, որը կուրորեն ենթարկվում է իր հարազատներին, ակնածալից դյուրահավատությամբ հետևում է նրանց օրինակին։ Աննետային թվում էր, որ Ռոժեի միտքը, հակառակ նրա փքուն ճառերին, համարձակ չէ։ Բեև նա սկսել էր հասկանալ, որքան անհիմն են հասարակարգի բարելավման Ռոժեի բոլոր նախագծերը, և արդեն հիմարացած չէր զուտ խոսքերի վրա հիմնված նրա իգեալիզմով, այնուամենայնիվ չէր զայրանում Ռոժեի վրա, քանզի գիտեր, որ նա չի ուզում իրեն՝ Աննետային խաբել, որ հիմարացածը հենց Ռոժեն ինքն է։ Աննետան նույնիսկ պատրաստ էր ճիգ ծախսով վերացնել նրա ճանապարհից այն ամենը, ինչը կարող էր ցրել Ռոժեի համար կենսական կարևորություն ունեցող պատրանքը։ Նույնիսկ նրա անկեղծ էգոիզմը, որը երբեմն այնպես գրգռում էր Աննետային, այժմ արդեն չէր վախեցնում նրան, թվում էր անվնաս։ Փաստորեն Ռոժեի բոլոր թերությունները թուլությունից եկող թերություններ էին։ Եվ զվարճալին այն էր, որ նա երևակայում էր հենց իր ուժով... Նոփված մարդ է... Aes triplex[1] .... Ախ՛ղճ Ռոժե։ Դա պարզապես հուզի՛չ է։ Աննետան կամացուկ ծիծաղում էր նրա վրա, բայց պահպանում էր նրա համար ներողամտության մի ամբողջ զանձարան։ Նա շատ էր սիրում Ռոժեին։ Ոչինչ հաշվի չառնելով, համարում էր, որ նա բարի է, մեծահոգի, հրապուրվող։ Այդպես վարվում է քնքուշ մայրը, որի ձեռքը չի պատժում հարազատ մանկանը՝ փոքրիկ մեղքերի համար, որոնք նրա աչքերում ամենևին էլ սարսափելի չեն. նա գտնում է, որ երեխան դրանց համար պատասխանատու

[1] Երիցս պղինձ... (լատ.)։

չէ, և պատրաստ է նրան ավելի շատ խղճալ ու փայփայել։ Էլ չասենք այն, որ, Աննետան Ռոժեին նայում էր ո՞չ միայն ներողամիտ մոր աչքերով։ Նրա աչքերը սիրահարվածի աչքեր էին, իսկ սիրահարվածի աչքերը շատ աչառու են։ Խոսողը մարմնականն էր։ Բարձր էր հնչում նրա ձայնը։ Բանականությունը կարող էր ասել, ինչ ուզում է—ձարելի է այնպես անսալ նրա ձայնին, որ նույնիսկ լուսանքը կիրք բորբոքի։ Այո, Աննետան ամեն ինչ տեսնում էր։ Բայց ինչպես նա, ով, խոնարհելով գլուխը և կկոցելով աչքերը, տեսնում է, թե որքան ներդաշնակ են զուգակցվում լանդշաֆտի բոլոր գծերը, այդպես էլ Աննետան, տեսնելով Ռոժեի ահռելագծերը, նրանց վրա նայում էր այնպիսի տեսանկյունից, որ այդ գծերը մեղմանում էին։ Նա հասել էր այնտեղ, որ պատրաստ էր սիրել Ռոժեի մեջ նույնիսկ այն ամենը, ինչ նողկալի է. չէ՞ որ քեզ ավելի շատ ես տալիս, սիրելով թերություններն այն մարդու, որին ինքդ սիրում ես։ Իսկ երբ սիրում ես այն, ինչը ուրիշի մեջ հիանալի է, ոչ թե տալիս, այլ վերցնում ես։ Աննետան խորհում էր.

«Ես քեզ սիրում եմ այն բանի համար, որ դու կատարյալ չես։ Դու կղայրանայիր, եթե իմանայիր, որ ես այդ տեսնում եմ։ Ների՛ր։ Ես ոչինչ էլ չեմ տեսել... Իսկ այ ես քեզ նման չեմ. ես ուզում եմ, որ դու ինձ տեսնես իմ ամբո՛ղջ անկատարելիությամբ մեջ։ Եղիր, ինչ որ կաս—հենց դա էլ ես գնահատում եմ։ Իմ անկատարելիության մեջ ես ինքս ավելի շատ եմ, քան մնացած բոլոր բաներում։ Եթե ինձ վերցնում ես, ապա կվերցնես հենց այդ ձևով։ Կվերցնե՞ս։ Ասենք, դու չես ուզում ինձ ճանաչել։ Իսկ ե՞րբ ջանք կթափես ուշադիր նայելու ինձ»։

Ռոժեն չէր շտապում։ Աննետան հաճախ էր դուր փորձում քաշել նրան դեպի այդ վտանգավոր ուղին, իսկ տղան կարծես խուսափում էր դրանից։ Բայց ահա մի անգամ, երբ նրանք զբոսնում էին, Աննետան հանկարծ լռեց, կանգ առավ, բռնեց նրա ձեռքերը և ասաց.

— Մենք պետք է խոսենք, Ռոժե։

— Խոսե՞լ,— կրկնեց նա, ծիծաղելով։— Իսկ, իմ կար-

ծիքով, մենք բացի խոսելուց, ուրիշ ոչինչ չենք էլ անում։

— Ես այդ չեմ ասում,— պատասխանեց Աննետան,— խոսքս սիրալիր խոսքերի մասին չէ. խոսենք լրջորեն։

Ռոժեի դեմքին վախ հայտնվեց։

— Մի վախեցիք,— նկատեց Աննետան։— Ես ուզում եմ ձեզ հետ խոսել իմ մասին։

— Ձեր մասի՞ն,— ասաց Ռոժեն, շողշողալով։— Ի՞նչ կարող է լինել առավել հաճելի։

— Սպասեք, սպասեք,— վրա բերեց Աննետան։— Ինձ լսեք մինչև վերջը, և այն ժամանակ, թերևս, այլևս այդպես չասեք։

— Ոչ մի նոր բան ես չեմ լսի։ Այսքան օրեր մենք միմյանց հետ ենք անցկացրել և մի՞թե ամեն ինչ դեռ չենք ասել իրար։

— Ես ընդամենը հասցրել եմ համաձայնել,— առարկեց Աննետան, ծիծաղելով։— Չէ՞ որ խոսողը միայն դուք եք լինում։

— Այ թե չարն եք հա՛,— ասաց Ռոժեն։— Մի՞թե ես ձեր մասին չեմ խոսում։

— Այո, իմ մասին նույնպես։ Նույնիսկ իմ փոխարեն եք խոսում։

— Ձեր կարծիքով, ես շա՞տ եմ խոսում,— պարզասիրտ տեսքով հարցրեց Ռոժեն։

Աննետան շուրթը կծեց։

— Ոչ, ոչ, Ռոժե, սիրելիս, ինձ դուր է գալիս, երբ դուք խոսում եք։ Բայց երբ դուք խոսում եք իմ մասին, ես նրբանում եմ և լսում։ Այդ բոլորն այնքա՞ն սքանչելի է, այնքա՞ն սքանչելի, որ ես մտածում եմ. «Թող այդպես լինի»։ Բայց չէ՞ որ դա այդպես չէ։

— Դուք աշխարհում առաջին կինն եք, որ դանգատվում է, թե իր պորտրեն սքանչելի է։

— Ես գերագասում եմ, որպեսզի այդ պորտրեում նմանություն լինի։ Չէ՞ որ դուք, Ռոժե, մտադիր չեք հիանալի պորտրեն կախել ձեր տանը։ Ես կենդանի մարդ եմ, ես կին եմ, որն ունի իր ցանկություններն, կրքերն, մտքերի աշխարհը։ Դուք համոզվա՞ծ եք, որ նա կարող է մտնել ձեր տուն՝ իր բոլոր եղած չեղածով։

— Ես նրան ընդունում եմ փակ աչքերով։

— Բացեք այդ աչքերը, խնդրում եմ։

— Ես տեսնում եմ ձեր հստակ հոգին, դա արտացոլվում է ձեր դեմքին։

— Իմ սիրելի, իմ լա՜վ Ռոժե։ Դուք ոչինչ տեսնել չեք ուզում։

— Ես ձեզ սիրում եմ։ Դա ինձ բավական է։

— Ես էլ եմ ձեզ սիրում։ Եվ դա ինձ բավական չէ։

— Բավական չէ՞,— հարցրեց Ռոժեն ընկճված ձայնով։

— Ոչ։ Ես պետք է տեսնեմ։

— Ի՞նչ եք ուզում տեսնել։

— Կուզեի տեսնել, ինչպիսին է ձեր սերն իմ նկատմամբ։

— Ես աշխարհում ձեզ ամենից շատ եմ սիրում։

— Հասկանալի՜ է։ Դուք մանրացնելու բնավորություն չունեք։ Բայց ես չեմ հարցնում, ձեր սերն իմ նկատմամբ ինչքան է, հարցնում եմ ինչպիսին է այն... Այո, գիտեմ, որ ես ձեր ցանկալին եմ, բայց դուք հատկապես ի՞նչ կուզեիք դարձնել ձեր Աննետային։

— Իմ կեսը։

— Ահա՜ թե ինչ... Բանն այն է, բարեկամս, որ ես կես չեմ։ Ես Աննետա եմ, ամբողջությամբ վերցրած։

— Այդպես ընդունված է ասել։ Ես ուզում եմ ասել, որ դուք ես եմ, և ես դուք եք։

— Ոչ, ոչ, մի եղեք ես։ Թող իմ ես, Ռոժե, ես ինքս լինեմ։

— Մենք միացնում ենք մեր կյանքերը, և մի՞թե հետաքրքիր մեր կյանքը միասնական չի լինելու։

— Այ հենց դա էլ ինձ անհանգստացնում է։ Վախենում եմ, որ միևնույն կյանք մենք չունենանք։

— Ձեզ ի՞նչն է անհանգստացնում, Աննետա։ Ի՞նչ կա ձեր սրտում։ Դուք ինձ սիրում եք, ճի՞շտ է։ Սիրում եք։ Գրելխավորը դա է։ Մնացածի մասին մի անհանգստացեք։ Մնացածով ես կզբաղվեմ։ Այ կտեսնեք. ես ամեն ինչ այնպես կկազմակերպեմ,— իմ հարազատների հետ միասին, որոնք կդառնան ձեր հարազատները, մենք այնպես կկազմակեր-

պենք մեր կյանքը, որ ձեզ միայն մի բան կմնա. թույլ տաք որ ձեզ ձեռքերի վրա ման ածեն։

Աննետան, գլուխը կախելով, ոտքով գետնին ուժ էր գծում։ Նա ժպտում էր.

«Սիրելի՛ պատանի։ Ոչինչ չի հասկանում...»։

Ապա աչքերը բարձրացրեց Ռոժեի վրա, որը շատ հանգիստ պատասխանի էր սպասում։

— Ռոժե, ինձ նայիր։ Ես ուժեղ ոտքեր ունեմ, ճի՞շտ է։

— Ուժեղ և գեղեցիկ,— պատասխանեց Ռոժեն։

— Բանն այդ չէ...— ասաց Աննետան, մատը թափ տալով։— Ես անխոնջ քայլող եմ, ճի՞շտ է։

— Անկասկած,— հաստատեց Ռոժեն,— և դա ինձ հիացմունք է պատճառում։

— Մի՞թե դուք կարծում եք, որ ես կհամաձայնեմ, որ ինձ ձեռքերի վրա ման ածեն։ Դուք շատ, շատ բարի եք, և ես երախտապարտ եմ ձեզ, բայց ինձ թույլ տվեք, որ ես ինքս քայլեմ։ Ես նրանցից չեմ, ովքեր վախենում են ճանապարհային հոգնածությունից։ Ասել դա ինձանից, նշանակում է խլել կյանքի նկատմամբ ունեցած իմ հակումը։ Ինձ թբեմն թվում է, որ դուք և ձեր հարազատները—բոլորով պատրաստվում եք գործել ու ընտրել իմ փոխարեն, որ դուք, Ռոժե, բոլոր հարմարություններով տեղաբաշխում եք այդ նպատակի համար նախատեսված դարակներում ձեր կյանքը, նրանց կյանքը, իմ կյանքը,— ամբողջ ապագան։ Բայց ես այդ չէի ուզի։ Ես դա չեմ ուզում։ Ես զգում եմ, որ ճանապարհի սկզբին եմ։ Ես փնտրում եմ։ Ես գիտեմ, որ պետք է փնտրեմ, պետք է փնտրեմ ինքս ինձ։

Ռոժեի դեմքի արտահայտությունը փայլող էր և ծիծաղելի։

— Իսկ ի՞նչ եք փնտրելու։

Նա կարծում էր, որ այդ ամենը երեխայական քմահաճույք է։ Աննետան այդ զգաց և հուզված ասաց.

— Մի՛ ծիծաղեք վրաս։ Ես ինձանից առանձնապես ոչինչ չեմ ներկայացնում, չեմ երևակայում ինձ... բայց, չնայած դրան, գիտեմ, որ ես գոյություն ունեմ, որ ինձ կյանք է տրված—կարճ մի կյանք... Կյանքը երկար չէ, և մարդ մի-

այն մի անգամ է ապրում։ Ես իրավունք ունեմ... Ոչ, ոչ թե իրավունք, եթե ուզում եք,— դա էգոիստորեն է հնչում... իմ պարտականությունն այն է, որ ես դա բաց չթողնեմ, չնեղեմ հենց այնպես...

Ռոժեին դա չհուզեց, ընդհակառակը, նեղացրեց.

— Կնշանակի, ձեր կարծիքով, դուք կյանքը հենց այնպես նետո՞ւմ եք։ Բա՞ց եք թողնում ձեր ձեռքից։ Մի՞թե նա մի ստանա լավ, հիանալի կիրառում։

— Իհարկե, կստանա... Բայց ինչպի՞սի։ Դուք ինձ ի՞նչ եք առաջարկում։

Ռոժեն նորից սկսեց խանդավառությամբ նկարագրել իր քաղաքական կարիերան, ապագան, որի մասին ինքը երազում էր, իր ակնկալությունները—անձնական և հասարակական—իրենց ամբողջ վեհությամբ։ Աննետան լսեց նրան, հետո մեղմորեն ճառի ամենաթունդ տեղը ընդհատեց, որովհետև այդ թեման Ռոժեին երբեք չէր ձանձրացնում։

— Այո, Ռոժե,— ասաց նա։— Իհարկե։ Դա շատ, շատ հետաքրքիր է։ Բայց ճիշտը որ ասեմ,— միայն թե մի նեղացեք,— ես այդքան հաստատ, ինչպես դուք, չեմ հավատում այն գործին, որին դուք ձեզ նվիրել եք։

— Ի՞նչ։ Դուք դրան չե՞ք հավատում։ Բայց չէ՞ որ դուք հավատում էիք, երբ ես մեր ծանոթության սկզբին, Փարիզում, ասում էի այդ մասին...

— Ես մի քիչ փոխել եմ իմ կարծիքը,— պատասխանեց Աննետան։

— Ձեզ ի՞նչը հարկադրեց փոխել։ Ոչ, ոչ, դա հնարավոր չէ... Դուք ձեր կարծիքը նորից կփոխեք։ Իմ մեծահոգի Աննետան չի կարող անտարբեր լինել ժողովրդական գործին, հասարակության բարեփոխությա՞նը։

— Ես ամենևին էլ անտարբեր չեմ,— ասաց Աննետան։ — Ես անտարբեր եմ միայն քաղաքական պրոբլեմների նկատմամբ։

— Դրանք կապված են մեկը մյուսի հետ։

— Ոչ բոլորովին։

— Մեկի հաղթանակը իր հետևից կբերի նաև մյուսինը։

— Կասկածում եմ։

— Այնուամենայնիվ դա առաջադիմությանը և ժողովրդին ծառայելու միակ միջոցն է։

(Աննետան մտածեց. «Ծառայելով սեփական անձին»։ Բայց նա ամաչեց)։

— Իսկ ես տեսնում եմ նաև ուրիշ միջոցներ։

— Ինչպիսի՞։

— Ամենահինը, որը և առայժմ դեռ ամենալավն է։ Նրանց միջոցը, ովքեր հետևում էին Քրիստոսին. ամեն ինչ տալ, ամեն ինչ մի կողմ նետել՝ հանուն մարդկանց ծառայելուն։

— Դա ուտոպիա է։

— Այո, թերևս։ Դուք ուտոպիստ չեք, Ռոժեն։ Ես այդպես էի մտածում սկզբնական շրջանում։ Իսկ հիմա զրանում հավատս կորցրել եմ։ Քաղաքական գործունեության մեջ ձեզ դեկավարողը գործնական ջիղն է։ Դուք շատ տաղանդավոր եք, և ես համոզված եմ, որ հաջողության կհասնեք։ Ձեր գործին ես կասկածում եմ, բայց ձեզ չեմ կասկածում։ Ձեր առջևում հրաշալի կարիերա կա։ Ես կանխատեսում եմ, որ դուք կուսակցության լիդեր եք լինելու, ճանաչում ունած հռետոր, որը պառլամենտում մեծամասնություն է իմբավորելու, լինելու եք մինիստր...

— Բավական է, վերջ տվեք,— բացականչեց Ռոժեն։— «Մակբեթ, դու թագավո՞ր կդառնաս»։

— Այո, ես թերևս, գուշակ եմ... ուրիշների համար։ Բայց, ցավոք սրտի, ոչ ինձ։

— Բայց չէ՞ որ այստեղ ամեն ինչ պարզ է։ Եթե ես մինիստր դառնամ, ապա դա ձեզ վրա էլ կանդրադառնա... Անկեղծ ասացեք, մի՞թե դուք դրա համար չեք ուրախանա։

— Ի՞նչի համար։ Եթե մինիստրի կի՞ն դառնամ։ Տե՛ր աստված։ Ո՞չ մի չափով։ Ներեցեք, Ռոժե,— ձեզ համար, իհարկե, ես կուրախանամ։ Եվ եթե ես ձեզ հետ լինեմ, ապա, իհարկե, կաշխատեմ որքան կարելի է լավ խաղալ իմ դերը, երջանիկ կլինեմ ձեզ օգնելու համար... Բայց (չէ՞ որ դուք ուզում եք, որ ես անկեղծ լինեմ, ճի՞շտ է) խոստովանում եմ. այդպիսի կյանքը չէր լցնի, ամենևին չէր լցնի իմ կյանքը։

— Դա միանգամայն հասկանալի է։ Կինը, որն ստեղծված է քաղաքական գործիչի կյանքի ուղեկից դառնալու համար,— վերցրեք, օրինակ, այնպիսի հիանալի կնոջ, ինչպիսին իմ մայրն է,— դրանով չի սահմանափակվի։ Նրա իսկական դերը օջախի մոտ է։ Նրա կոչումը՝ մայրության մեջ։

— Գիտեմ, չէ՞ որ ոչ ոք չի էլ ժխտում, որ դա է մեր կոչումը,— ասաց Աննետան։— Բայց (ես վախենում եմ ձեզ այդ ասել, վախենում եմ, ինձ չհասկանաք)... ես դեռ չգիտեմ, թե մայրությունը ինչ կտա ինձ։ Երեխաներ ես շատ եմ սիրում։ Կարծում եմ, որ շատ կապված կլինեմ իմ երեխաներին... (Ձեզ դո՞ւր չի գալիս այդ բառը։ Այո, ձեզ թվում է, որ ես սառն եմ)։ Գուցե, պաշտեմ նրանց... Հնարավոր է։ Չգիտեմ... Բայց ես չեմ ուզում դատողություններ անել այն մասին, ինչը ես չեմ զգում։ Եվ, անկեղծորեն ասած, այդ «կոչումը» իմ մեջ դեռ լրիվ չի արթնացել։ Իսկ այժմ, քանի դեռ կյանքը իմ մեջ չի արթնացրել այն, ինչը ինձ համար անհայտ է, ես կարծում եմ, որ կինը ոչ մի դեպքում չպետք է իր ամբողջ կյանքը առ դեպի երեխան ուղեցած իր սիրուն... (Մի կիտեք ձեր նոթերը)։ Ես համոզված եմ, որ կարելի է շատ սիրել իր երեխային, բարեխղճորեն կատարել անային պարտականությունները, բայց և այնպես հարկավոր է պահպանել իր «ես»-ի հարստությունը հանուն այն բանի, ինչը աշխարհում ամենակարևորն է։

— Ամենակարևո՞րը։

— Հանուն իր հոգու։

— Ջեմ հասկանում։

— Ինչպե՞ս ստիպել ուրիշին քո ներքին կյանքը հասկանալ։ Բառերն այնքա՜ն են մշուշապատ, անպարզ, անհեթեթ։ Հոգին... Սիծաղե՜լի է խոսել սեփական հոգու մասին։ Դա ի՞նչ է նշանակում։ Մարդ չի կարող բացատրել, թե ինչ է։ Բայց դա կա։ Դա ես ինքս եմ, Ռոժե։ Ամենաճշմարտացի՜ն է իմ մեջ, ամենանվիրականը։

— Մի՞թե դուք չեք տալիս ինձ ձեր բոլոր ամենաճշմարտացին, ամենանվիրականը։

— Բոլորը տալ չեմ կարող, —ասաց Աննետան։

— Կնշանակի, դուք ինձ չե՞ք սիրում։

— Ոչ, Ռոժեն, սիրում եմ։ Բայց բոլորը տալ ոչ ոք չի կարող։

Դա սեր չէ։ Երբ սիրում ես, միտք անգամ չի լինում, թե պետք է ինչ-որ բան պահպանես քեզ համար։ Սեր.., սեր... սեր...

Եվ նա անսահման երկար մի ճառ ասաց։ Աննետան լըսում էր, թե նա ինչպես է ճոռոմ խոսքերով գովերգում ամբողջովին տրվելը, ինչպես է գովաբանում բերկրանքը ինքնազոհաբերման, որը կատարվում է հանուն սիրելի մարդու երջանկության։ Եվ մտածում էր.

«Սիրելիս, ինչի՛ համար ես դու այդ բոլորն ասում։ Ենթադրում ես, որ ես, իբրև, դա չգիտե՞մ։ Կարծում ես, որ իբր ես չէ՞ի կարող ինձ զոհաբերել քեզ, եթե դրա կարիքը լիներ, և դրա մեջ բերկրանք չէ՞ի գտնի։ Բայց մի պայմանով. որպեսզի դու այդ չպահանջես... Ինչո՞ւ ես դա պահանջում։ Ինչո՞ւ ես դու դրան այնպես սպասում, որ կարծես դա քո իրավունքն է։ Ինչո՞ւ դու հավատ չունես իմ նըկատմամբ, իմ սիրո հանդեպ»։

Վերջապես Ռոժեն լռեց, և Աննետան ասաց.

— Այդ բոլորը հիանալի է։ Ես ընդունակ չեմ, ինչպես դուք գիտեք, այդպիսի փայլով արտահայտել իմ մտքերը։ Բայց առիթի դեպքում, գուցե, ես ընդունակ լինեի այդ զգալու...

— Գո՜ւցե։ Առիթի դեպքո՜ւմ,— բացականչեց Ռոժեն։

— Դուք գտնում եք, որ դա քիչ է, ճի՞շտ է։ Մինչդեռ դա ավելի շատ է, քան ձեզ թվում է... Բայց ես չեմ սիրում խոստանալ ավելին (մեկ էլ տեսար դուրս եկավ նույնիսկ ավելի քիչ), քան կարող եմ կատարել։ Վաղօրոք չգիտեմ... Պետք է վստահել միմյանց։ Մենք կարգին մարդ ենք։ Սիրում ենք մեկս մյուսին, Ռոժե։ Իրար համար անելու ենք այն ամենը, ինչ կարելի է։

— Այն ամենը, ինչ կարե՞լի է։— ձեռքերը տարածելով, նորից բացականչեց Ռոժեն։

Աննետան ժպտաց։

— Դուք համաձա՞յն եք ինձ վստահել,— շարունակում

Էր Աննետան։— Ես ստիպված եմ ձեր ուշադրությունը դրան հրավիրել։ Դեռ ասելու շատ բաներ կան...

— Ասացեք,— զգուշորեն պատասխանեց Ռոժեն։

— Ես ձեզ սիրում եմ, Ռոժե, բայց ուզում եմ արդարամիտ լինել։ Մանկությունից սկսած, ես ապրել եմ բավական ինքնամփոփ և ազատ ու անկաշկանդ կյանքով։ Հայրս ինձ լրիվ անկախություն էր տվել, որը ես չէի չարաշահում, քանի որ դա ինձ բնական էր թվում և որովհետև դա առողջ էր։ Ես սովորել եմ դատողություններ անել, և հիմա ինձ համար դժվար է առանց դրա յոլա գնալ։ Ես ինձ հարիվ եմ տալիս, որ որոշ չափով տարբերվում եմ իմ դասակարգի աղջիկների մեծամասնությունից։ Եվ այնուամենայնիվ, ինձ թվում է, որ ես նույնն եմ զգում, ինչ որ զգում են և նրանք։ Միայն ես համարձակվո՛ւմ եմ ասել այդ, ավելի պարզ եմ գիտակցում այդ ամենը... Դուք ուզում եք, որ ես իմ կյանքը միացնեմ ձերին։ Դա ես ինքս էլ եմ ուզում։ Մեզանից յուրաքանչյուրի ամենանվիրական ցանկությունը իր սրտի ուզած ուղեկիցն է։ Եվ ես կարծում եմ, Ռոժե, որ դուք կարող էիք այդպիսին լինել... եթե... եթե ուզեիք...

— Եթե ես ուզենա՞յի,— բացականչեց Ռոժեն։— Դուք պարզապես կատակում եք։ Հենց դա է, որ ես ուզում եմ։

— Եթե դուք իսկապես ուզենայիք դառնալ իմ կյանքի ուղեկիցը։ Ես կատակ չեմ անում։ Մտածե՞ք... Չէ՞ որ մեր կյանքերի միացումը չի նշանակում մեկի կամ մյուսի ոչնչացում... Իսկ դուք ի՞նչ եք առաջարկում ինձ։ Ճիշտ է, դուք չեք խոստովանում, որովհետև մարդիկ դեռ շատ վաղուց ընտելացել են այդպիսի անհավասարությանն։ Իսկ ինձ համար այդ անհավասարությունը նորություն է... Դուք իմ կյանքի մեջ եք մտնում ոչ միայն ձեր սիրով։ Մտնում եք ձեր մտերիմներով, բարեկամներով, ծանոթներով, ձեր հարաբերություններով, ձեր կարիերայով, ձեր ապագայով, որը պարզ է ձեզ համար, մտնում եք ձեր կուսակցությամբ և նրա դավանանքներով, մտնում եք ձեր ընտանիքով ու նրա տրադիցիաներով— մտնում եք մի ամբողջ աշխարհով, որը պատկանում է ձեզ, մի ամբողջ աշխարհով, որը հենց դուք ինքներդ եք։ Իսկ ինձ, որ նույնպես ունեմ իմ աշխարհը և որ

ինքս նույնպես մի ամբողջական աշխարհ եմ, դուք ասում եք. «Ի՞նչ քո աշխարհը։ Շպրտի՛ր այն մի կողմ և մտիր իմը»։ Ես պատրաստ եմ մտնելու, Ռոժեն, բայց պատրաստ եմ մրտնելու ամբողջապես և ամբողջությամբ։ Ընդունո՞ւմ եք ինձ ամբողջովին և ամբողջությամբ։

— Բայց չէ՞ որ իմ ուզածն էլ հենց այդ է, տիրանալ ամբողջությանը,— պատասխանեց Ռոժեն,— մինչդեռ դուք հենց նոր ասացիք, որ ամբողջը ինձ տալ չեք կարող։

— Դուք ինձ չեք ուզում հասկանալ։ Ես ասում եմ. «Ուզո՞ւմ եք, արդյոք ինձ ընդունել իմ ազատությամբ։ Եվ արդյոք ընդունում եք ինձ ամբողջովին և ամբողջությամբ։

— Ազատությա՞մբ,— պատասխանեց զգուշավոր Ռոժեն։— Ֆրանսիայում բոլորն ազատ են հազար յոթ հարյուր ութսունիններ թվականից...

(Աննետան ժպտաց. «Տակից դո՞ւրս եկավ»)։

— Պետք է, վերջապես, պայմանավորվել։ Պարզ է, որ, ամուսնանալով, դուք իսկույն ևեթ կդադարեք ամբողջովին ազատ լինելուց։ Ուրիշ խոսքով ասած, ձեզ վրա կվերցնեք որոշ պարտականություններ։

— Ես այդ բառը այնքան էլ չեմ սիրում,— ասաց Աննետան,— թեև դրա իմաստը ինձ չի վախեցնում։ Ուրախությամբ, հաճույքով ես ինձ վրա կվերցնեի հոգսերի և աշխատանքների մի մասը այն մարդու, որին ես սիրում եմ,— այն պարտականությունները, որոնք մարդ ստիպված է լինում կատարել համատեղ կյանքի ժամանակ։ Եվ որքան ավելի դժվարին լինեին դրանք, այնքան ավելի ինձ համար թանկ կհամարեի, որովհետև ինձ կօգներ սերը։ Սակայն նույնիսկ ի սեր դրա ես չեմ հրաժարվի այն պարտականություններից, որոնք ինձանից պահանջում է իմ անձնական կյանքը։

— Իսկ դրանք ի՞նչ պարտականություններ են։ Դատելով այն բանից, ինչ դուք ինձ պատմեցիք և ինչ, ինձ թվում է, ես ինքս էլ գիտեմ, ձեր կյանքը, իմ սիրելի Աննետա, ձեր կյանքը, որ մինչև հիմա այնքան խաղաղ, այնքան համեստ է եղել, առանձին պահանջներ կարծես թե ձեզ չի ներկայացրել։ Իսկ հիմա ի՞նչ է ուզում։ Դուք նկատի ունեք ձեր

պարապմունքնե՞րը։ Կուզե՞ք դրանք շարունակել։ Եթե խոստովանեմ, իմ կարծիքով, գործունեության այդ տեսակը խաթում է կանանց սպասումները։ Եթե, իհարկե, կոչված չեն դրան։ Ես կարծում եմ, որ դա ընտանեկան կյանքում խանգարիչ հանգամանք է... ասենք, չեմ կարծում, թե դուք ծանրաբեռնված եք աստծո սույն շնորհով։ Դուք չափազանց երկրային եք, հավասարակշռված։

— Ոչ, խոսքը կոչման մասին չէ։ Այն ժամանակ դա շատ հեշտ կլիներ. մարդ պարզապես կհետևեր իր կոչմանը... Այն խնդրանքը, պահանջը (ինչպես դուք եք ասում), որը ինձ կյանքն է ներկայացնում, այնքան էլ հեշտ չէ ավելի պարզ արտահայտել. դա այնքան էլ որոշակի պահանջ չէ, բայց արտասովոր կերպով լայն է։ Խոսքը իրավունքի մասին է, որից պետք է օգտվի ամեն մի կենդանի շունչ. դավաճանելու իրավունքի մասին։

— Դավաճանե՞լ։ Դավաճանել սիրո՞ւն,— նորից բացականչեց Ռոժեն։

— Եթե անգամ հոգին հավիտենապես է պահպանում հավատարմությունը,— իսկ ես սիրո ձգտում եմ ամբողջ կյանքի ընթացքում,— նա իրավունք ունի դավաճանելու... Ես հասկանում եմ, Ռոժե. ձեզ վախեցնում է ինքը «դավաճանել» բառը։ Այդ բառը ինձ նույնպես անհանգստացնում է։ Երբ ներկա ժամը սքանչելի է, մարդ ուզում է նույնիսկ շո՞ւնչը պահել... Ափսոս, որ ժամանակը չի կարելի կանգնեցնել հավիտենապես... Բայց չէ՞ որ մենք իրավունք չունենք այդ անելու... ասենք, դա չենք էլ կարող։ Տեղում կանգ առած չեն մնում։ Ապրում ես, գնում, քեզ ինչ-որ բան հրում է, պետք է, պե՞տք է շարժվել առաջ։ Սերը դրանից չի տուժի։ Սերը տանում են իրենց հետ. չէ՞ որ նա կարող է տևել ամբողջ կյանքի ընթացքում, բայց ամբողջ կյանքը նա չի լցնում։ Ապա մտածեք, Ռոժե, սիրելիս, որ ձեզ սիրելով, ես կարող եմ հանկարծ զգալ (և արդեն զգում եմ), որ խեղդվում եմ ձեր գործունեության և ձեր մտքերի շրջանակում։ Ես չեմ ուզում դատապարտել ձեր ընտրած ուղին, բայց ինչո՞ւ ինձ հարկադրել, որ ես գնամ այդ ուղիով։ Մի՞թե դուք արդարացի չեք համարում ինձ ազատություն տալը, որպեսզի

ես լուսամուտը բացեմ, երբ օդը ինձ չի բավարարում, և նույնիսկ դուռը (օ, ես հեռուն չեմ գնա), որպեսզի ես ունենամ իմ գործունեության փոքրիկ բնագավառը, իմ հոգևոր պահանջները, իմ սեփական համակրությունները, որպեսզի ես բանտարկված չմնամ երկրագնդի ինչ-որ մի կետում, սահմանափակ մտահորիզոնով, այլ աշխատեմ լայնացնել այն, որպեսզի ես կարողանամ փոփոխել իրադրությունը, կարողանամ գնալ... (ես ասում եմ եթե դա պետք լինի... ես դեռ չգիտեմ։ Բայց բոլոր դեպքերում ես պետք է ղգամ, որ այդպես վարվելու համար ազատ եմ, ազատ եմ՝ այդ ցանկանալու համար, ազատ եմ շնչելու, ազատ եմ... ազատ եմ՝ ազատ լինելու համար... եթե անգամ ես երբեք չօգտվեմ էլ իմ այդ ազատությունից)։ Ներեցեք, Ռոժե, բայց գուցե, դուք գտնում եք, որ այդ պահանջը անմտությո՞ւն է, երեխայությո՞ւն։ Դուք իրավացի չեք, հավատացնում եմ ձեզ, դա իմ գոյության իմաստն է, շունչը, առանց որի չի կարելի ապրել։ Խլեք ինձանից այդ ամենը, և ես կմեռնեմ... Հանուն սիրո ես ամեն ինչ կանեմ... Բայց հարկադրումն ինձ համար սպանություն է։ Հենց միայն հարկադրության միտքը ինձ վրդովում է... Ոչ, երկու էակների միությունը նրանց համար չպետք է դառնան շղթաներ։ Այդ միությունը պետք է փարթամորեն ծաղկի։ Ես կուզեի, որ մենք չխանդեինք իրար՝ ազատ, գործունյա կյանքի համար, որ մեր երջանկությունը միմյանց օգնելը լիներ։ Դա ձեզ համար երջանկություն կլինի՞ արդյոք, Ռոժե։ Կսիրե՞ք արդյոք ինձ որպես այդպիսին—որպես ազատ մարդու, որպես ձեզանից ազատի։

(«Այն ժամանակ ես քեզ ավելի՜ մոտ կլինեի...»— մտածում էր այդ պահին Աննետան)։

Ռոժեն լսում էր նրան մտահոգ, գրգռված, փոքր-ինչ նեղացած, ինչպես ուզածդ տղամարդը, եթե նրա տեղը լիներ։ Աննետային հարկ էր, որ գործին կպչեր ավելի վարպետորեն։ Սակայն նա այնպես էր ձգտում անկեղծ լինել, այնպես էր վախենում նրան խաբեության մեջ քաշելուց, որ ընդգծում էր հենց այն, ինչը, իր կարծիքով, Ռոժեի համար ամենատհաճն էր։ Եվ եթե Ռոժեի զգացմունքը լիներ ավելի

խոր, նա այդ կհասկանար։ Մինչդեռ Ռոժեին,— եթե չխոսենք այն մասին, թե ինչպես էր խոցված նրա ինքնասիրությունը,— փոթորկում էր երկակի մի զգացում. նա չէր ուզում լուրջ ընդունել կանացի այդ քմայքը և վրդովվում էր հոգևոր այդ բունտը տեսնելիս։ Նա չընկալեց իր սրտին ուղղված տագնապալից այդ կոչը։ Նա հասկացավ սոսկ մի բան. որ իրենց գլխին ինչ-որ անհասկանալի մի վտանգ է կախվել և որ նրա՝ սեփականատիրոջ իրավունքները ոտնահարվում են։ Եթե նա ավելի փորձված լիներ կանանց հետ հարաբերվելու հարցում, կթաքցներ իր վիրավորանքը և կխոստանար, կխոստանար, կխոստանար... այն ամենը, ինչ Աննետան ցանկանում էր։ «Սիրահարի խոստումները դատարկ խոսքեր են։ Ինչո՞ւ ժլատություն ցուցաբերել»։ Բայց թեև Ռոժեն թերություններ ուներ, ուներ նաև արժանիքներ. այդ, ինչպես ասում են, «բարի տղան» անչափ շատ էր լցված իրենով՝ կանանց լավ ուսումնասիրելու համար, որոնց հետ, ի լրումն դրա, քիչ էր գործ ունեցել։ Նա վրդովմունքը թաքցնել չկարողացավ։ Աննետան մեծահոգի խոսքեր էր սպասում, բայց հիասթափությամբ նկատեց, որ իրեն լսելով, Ռոժեն մտածում է միայն իր անձի մասին։

— Խոստովանում եմ, Աննետա,— սկսեց նա,— ես ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ ձեր խնդրանքը։ Դուք մեր ամուսնության մասին այնպես եք խոսում, կարծեք դա ձեզ համար բանտ է։ Ես այն տպավորությունն ստացա, որ ձեր ուշ ու միտքը միայն այն է, թե ինչպես կարող էք դրանից դուրս պրծնել։ Իմ տան լուսամուտներին վանդակներ չկան, և տունն այնպես է կառուցված, որ նրա մեջ մարդ շատ հեշտ է շնչում։ Չի կարելի ապրել, դռները կրնկի վրա բացած, իսկ իմ տունը ստեղծված է նրա համար, որպեսզի այն լքեն։ Դուք ասում եք, որ կուզեիք հեռանալ այնտեղից, ստեղծեիք ձեր անձնական կյանքը, ծանոթներ գտնեիք, գտնեիք մտերիմների և նույնիսկ, եթե ես ձեզ ճիշտ հասկացա, հնարավորություն ունենայիք լքել ընտանեկան օջախը, երբ ձեր խելքին փչեր, գնայիք ասված գիտե ինչեր փընտրելու—փնտրելու մի բան, որ ձեզ չի հաջողվել գտնել տանը,— իսկ հետո վերադառնայիք երբ ձեր սիրտն ուզի... Դա

լուրջ բան չէ, Աննետա։ Դուք մինչև վերջը դա չեք կշռադատել։ Մի՞թե ամուսինը կարող է տանել այնպիսի մի վիճակ, որն այնքան նվաստացուցիչ է իր և այնքան երկդիմի՝ իր տիկնոջ համար։

Այդ առարկությունները, թերևս, զուրկ չէին առողջ դատողությունից։ Սակայն լինում են րոպեներ, երբ սոսկ առողջ դատողությունը առանց սրտի մասնակցության—անմտություն է։ Աննետան, փոքր-ինչ խոցված, ասաց զոռոզ և սառը տոնով, որը թաքցնում էր նրա հուզմունքը.

— Ոտժե, կնոջը, որին սիրում ես, պետք է հավատաս։ Չի կարելի, ամուսնանալով նրա հետ, վիրավորել նրան, մտածելով, թե նա ձեզանից ավելի քիչ է պահպանում ձեր պատիվը։ Չլինի՞ դուք մտածում եք, թե այնպիսի կինը, ինչպիսին ես եմ, կարող է իրեն պահել երկդիմի, ստորացնել ձեզ։ Ձեր ամեն մի ստորացում, ստորացում կլիներ նաև նրա համար։ Եվ որքան նա ավելի ազատ լիներ, այնքան ավելի շատ կզգար, որ իր պարտքը ձեր կյանքի այն կողմի պահպանումն է, որը դուք նրան վստահել եք։ Պետք է ինձ վերաբերվել ավելի մեծ հարգանքով։ Թե՞ ինձ չեք վստահում։

Ոտժեն զգաց, որ կասկած հայտնելը վտանգավոր է, որ դա միայն կհեռացնի Աննետային, և մտածելով, որ, թերևս, չարժե կանացի այդ բոլոր հերյուրանքներին այդքան մեծ նշանակություն տալ, որ ժամանակ կլինի նաև հետագայում այդ ամենը քննարկել (եթե Աննետան դա հիշի), վերադարձավ իր առաջին մտքին. բոլորը կատակ դարձնել։ Եվ այդպես, նա ավելի նպատակահարմար համարեց նախազգուշորեն ասել.

— Ես ձեզ վստահո՞ւմ եմ ամեն ինչում, Աննետա։ Հավատում եմ ձեր գեղեցիկ աչքերին։ Միայն երդվեք, որ միշտ ինձ սիրելու եք, որ սիրելու եք միայն ու միայն ինձ։ Ավելին ես ձեզանից չեմ պահանջում։

Սակայն փոքրիկ Կորդելիան չէր կարողանում հաշտվել այն բանի հետ, որ իր զրուցակիցը այնքան թեթևամտորեն խուսափում է ուղղակի պատասխանից, որից կախված էր իր ամբողջ կյանքը, և հրաժարվեց խոստանալ անհնարինը.

— Ոչ, Ռոժե, ես չեմ կարող, չեմ կարող երդվել դրա համար։ Ես ձեզ շատ եմ սիրում, բայց չեմ կարող խոստանալ այն, ինչն ինձանից չի՛ կախված։ Ես ձեզ խաբած կլինեի, մինչդեռ ես երբեք ինձ թույլ չեմ տա ձեզ խաբել։ Խոստանում եմ միայն մի բան. ոչինչ ձեզանից չթաքցնել։ Եվ եթե դադարեմ ձեզ սիրելուց կամ սիրահարվեմ մի ուրիշին, դուք այդ մասին առաջինը կիմանաք,— նույնիսկ ավելի շուտ, քան նա, ում սկսեմ սիրել։ Դո՛ւք էլ այդպես վարվեք։ Եկեք, Ռոժե, ճշմարտացի՛ լինենք։

Սակայն դա Ռոժեին ամենևին ձեռ չէր տալիս։ Ճշմարտությունը նեղում է, այդ պատճառով էլ նա Բրիստոների տանը մշտական այցելու չի եղել։ Բավական է շեմի մոտ նրա բախոցը լսվի, իսկույն շտապում են պատասխանել.

«Մարդ չկա»։

Ռոժեն ևս չհապաղեց նույնը անել։ Նա բացականչեց։

— Սիրելիս, ինչքա՜ն եք լավը։ Իսկապես, եկեք որևէ ուրիշ բանի՛ մասին խոսենք...

Աննետան զբոսանքից վերադարձավ հիասթափված։ Չէ՞ որ նա անկեղծ զրույցի հետ մեծ հույսեր էր կապում։ Ճիշտ է, դիմադրություն կանխատեսում էր, բայց հաշվի էր առնում, որ Ռոժեի միտքը կլուսավորի նրա սիրտը։ Եվ ամենից շատ Աննետային վշտացնում էր ոչ թե այն, որ Ռոժեն չհասկացավ իրեն, այլ այն, որ նա նույնիսկ չուզեց հասկանալ։ Կարծես այդ ամենի մեջ նա Աննետայի համար ոչինչ ողբերգական չէր տեսնում։ Ռոժեն մակերեսային մարդ էր և ամեն ինչ իր արշինով էր չափում։ Իսկ բարդ ներաշխարհ ունեցող կնոջը ոչ մի բան ավելի վշտացնել չէր կարող։

Աննետան չէր սխալվում։ Նրա խոսքերը տարակուսանքի մեջ գցեցին, խոցեցին Ռոժեին, բայց Ռոժեն չէր ենթադրում, թե այդ խոսքերը որքան են լուրջ, կարծում էր, որ դրանք կմնան առանց հետևանքի։ Նա խորհրդածում էր այն մասին, որ Աննետայի գլուխը տարօրինակ, մի քիչ պարադոքսալ մտքեր են գալիս, որ Աննետան «օրիգինալ» աղջիկ է, դրանից դժգոհ էր։ Ռոժեի մայրը, նրա քույրը հաջողեցրել էին լինել արտասովոր կանայք և լինել «ոչ օրիգինալ»։

Բայց հո չէր կարելի բոլորից պահանջել այդպիսի տաղանդ։ Աննետան ուրիշ արժանիքներ ուներ, որոնք Ռոժեն, թերևս, առանձնապես չէր էլ գովաբանում, բայց որոնք (պետք է խոստովանել) հիմա նա ավելի բարձր էր գնահատում։ Այդ նախապատվության մեջ մարմինն ավելի նշանակալից դեր էր խաղում, քան բանականությունը, բայց բանականությունը նույնպես այդտեղ դեր էր խաղում։ Ռոժեին դուր էր գալիս, ինչպես է Աննետան առաջին իսկ պոռթկման ազդեցության տակ տաքանում,— դուր էր գալիս, երբ նրա այդ պոռթկումը իր ինքնասիրությունը չէր շոշափում։ Նա չէր անհանգստանում։ Աննետան ամբողջ շիփշիտակությամբ ասաց, որ սիրում է նրան։ Ռոժեն համոզված էր, որ Աննետան իրենից չի բաժանվի։

Նա նույնիսկ գլխի չէր ընկնում, թե ինչպիսի ներքին դրամա է տեղի ունենում իր առջև։ Իրականում Աննետան այնքան էր սիրում նրան, որ չէր կարողանում հաշտվել Ռոժեի սովորական մարդ լինելու հետ։ Աննետան ուզում էր հավատալ, որ ինքը սխալվում է։ Նա քիչ փորձեր չէր արել նորից խոսել Ռոժեի հետ, դրա մեջ իր ամբողջ հոգին էր դրել։ Ռոժեն չէր ճանաչում անկախ կյանք վարելու Աննետայի իրավունքը, սակայն ի՞նչ տեղ էր նա գոնե թողնում իր կյանքում Աննետայի համար։ Նորից ու նորից նա գալիս էր նույն վհատեցնող եզրակացություններին։ Իր նայիվ եսասիրությամբ Ռոժեն նրան տեղավորում էր ճաշի սեղանի շուրջը, հյուրասենյակում և անկողնու մեջ։ Նա այնքան սիրալիր էր, որ ուզում էր Աննետային պատմել իր գործերի մասին, իսկ Աննետային մնում էր միայն համաձայնել նրա հետ։ Ռոժեն արդեն չէր ուզում ճանաչել կնոջ իրավունքը որպես կոլեգայի, որը կարող էր քննադատել նրա քաղաքական գործունեությունը և փոփոխել այն, ավելին. նա չէր ուզում թույլատրել Աննետային զբաղվել հասարակական մի գործունեությամբ, որը տարբերվում էր իր գործունեությունից։ Ռոժեին միանգամայն բնական էր թվում (դարեր շարունակ այդպես էր ընդունված), որ սիրող կինը ամուսնուն պետք է տա իր ամբողջ կյանքը, իսկ փոխարենը ստանա ամուսնու կյանքից ընդամենը մի մասնիկ։ Ռոժեի հոգու

խորքում թաքնված էր իր գերադասության վստահությունը, ինչը հնուց բնորոշ է տղամարդուն, որը կարծում է, թե՛ այն ամենը, ինչ ինքը տալիս է, իր էությամբ շատ ավելի արժեքավոր է։ Ասենք, Ռոժեն դա չէր խոստովանում. չէ՞ որ նա հիանալի տղա էր և հարգալից ֆրանսիացի։ Պատահում էր, որ Աննետան որպես կնոջ որոշ իրավունքների ապացույց, օրինակ էր բերում ամուսնու իրավունքները։

— Դրանք տարբեր բաներ են,— քմծիծաղով ասում էր Ռոժեն։

— Ինչո՞ւ,— հարցնում էր Աննետան։

Ռոժեն ճարպկորեն խուսափում էր պատասխանից։ Այնքան էլ վտանգավոր չէ տատանել համոզմունքը, որը չի քննարկվում։ Իսկ Ռոժեի համոզմունքները քարացած էին։ Եվ Աննետան ճիշտ ճանապարհ ընտրեց, երբ ուզեց ստիպել նրան իր իսկ նկատմամբ թերահավատություն զգալ։ Աննետայի զիջողականությունը, և այն, թե ինչպես էր նա աշխատում Ռոժեին իր հայացքները ներշնչելու զուր փորձից հետո համաձայնության գալ, Ռոժեն մեկնաբանում էր որպես Աննետայի վրա ունեցած իշխանության նոր ապացույց։ Եվ դառնում էր ավելի ու ավելի ինքնավստահ, համակվում մեծամտությամբ։ Պատահում էր, Աննետան հանկարծ բորբոքվում էր, նրա ձայնը զայրույթից սկսում էր դողալ։ Եվ Ռոժեն նույն րոպեին ձայնը կտրում էր, խոսակցությունը փոխում, կիրառում էր այն մեթոդը, որը, նրա կարծիքով, շատ հաջող էր. ծիծաղով խոստանում էր այն ամենը, ինչ իրենից ուզում էին։ Ասում են, գործը խոսքով չէ։ Իսկ Ռոժեի համար այդ բոլորը միայն խոսքեր էին։ Եվ Աննետան դրանից և՛ վիրավորանք էր զգում, և՛ ցավ։

Առաջ էին գալիս նաև ուրիշ, ավելի կարևոր հարցեր։ Վտանգի տակ էր ընկնում Աննետայի և Սիլվիայի բարեկամությունը։ Պարզ էր, որ ամեն մի անկախություն ունեցող աղջիկ դժվար թե ընդունվեր այդ միջավայրում, իսկ դերձակուհին՝ առավել ևս։ Փառամոլ, բծախնդիր Բրիսսոները ոչ մի գնով թույլ չէին տա, որ իրենք կամ իրենց հարսը այդպիսի խայտառակող ազգականուհի ունենան։ Հարկ կլիներ նրան թաքցընել։ Իսկ Սիլվիան չէր համաձայնի, Աննետան նույնպես։

Յուրաքանչյուրը իր ձևով հպարտ էր, և քույրերը հպարտանում էին մեկը մյուսով։ Աննետան սիրում էր Ռոժեին։ Նա ավելի ուժեղ էր ձգտում դեպի ազան, քան ինքը այդ խոստովանում էր, բայց երբեք նրա համար չէր զոհաբերի Սիլվիային։ Նա անչափ շատ էր սիրում քրոջը։ Թող որ այդ սերը խավարած լիներ, բայց Աննետան չէր մոռանում, որ մի ժամանակ Սիլվիայի շնորհիվ էր ինքը հասկացել կրքի ամբողջ խորությունը (այդ մասին գիտեր միայն ինքը, նույնիսկ Սիլվիան լրիվ չէր կռահում այդ)։ Այն ժամերին, երբ և Ռոժեն և Աննետան անկեղծորեն իրար գաղտնիքներ էին հայտնում, Աննետան շատ բաներ էր պատմում Ռոժեին։ Ռոժեն կարծես սկսեց հետաքրքրվել, հուզվեց։ Այո, բայց պայմանով, որ այդ բոլորը անցյալ է։ Նրան ամենևին ձեռ չէր տալիս նման վարկաբեկող ազգակցությունը։ Եվ հոգու խորքում Ռոժեն նույնիսկ որոշեց ստիպել Աննետային հարաբերությունները խզել Սիլվիայի հետ, ասպիճանաբար, այնպես, որ ինքը՝ Ռոժեն կարծես տեղյակ էլ չէ։ Նա չէր ցանկանում, ոչ ոքի հետ կիսել իր կնոջ սերը։ Իր կնոջ... «Այդ շունը ինձ է պատկանում»։ Ռոժեն, ինչպես և նրա ամբողջ ընտանիքը, շատ բարձր էր գնահատում այն, ինչ իրեն էր պատկանում։

Եվ որքան ավելի երկար էր հյուրընկալվում Աննետան նրանց մոտ, այնքան ավելի շատ էր զառնում նրանց սեփականությունը—այդպես գործն ընթացավ հենց այն րոպեից, երբ նրանք սկսեցին Աննետայի նկատմամբ բարյացակամություն ցուցաբերել։ Բրիսսոները ամեն ինչ իրենց բուռն էին հավաքում։ Ամեն օր հազար ու մի մանրուքում երևան էր գալիս Բրիսսո դամանների տնային բնապետությունը։ Նրանք, ինչպես ասում են, «պատրաստի» կարծիքներ ունեին ամեն ինչի մասին—անկախ նրանից, խոսքը տնտեսությա՞նն էր վերաբերվում, բարձրաշխարհիկ դիվարճալիքների՞ն, կենսական գործերի՞ն, թե՞ հոգևոր կյանքի մեծագույն պրոբլեմներին։ Մեկընդմիշտ. կախվում էր, փակցվում պիտակը։ Ամեն ինչ կանխորոշված էր. ինչը պետք է գովաբանել, ինչը պետք է մերժել։ Առանձնապես շատ բան պետք էր մերժել։ Ի՞նչը միայն չէր ենթարկվում օստրակիզմի։ Ինչքա՜ն մարդիկ, առարկաներ, կարծիքներ և

գործողություններ էին դատապարտում, ինչին ասես, որ անդարձ և վերջնական դատավճիռ չէր կայացվում։ Նրանց խոսելու տոնը և ժպիտը այնպիսին էին, որ մարդ վիճել անգամ չէր ուզում։ Նրանց ամբողջ տեսքը ասում էր (նրանք հաճախ իսկապես էլ այդպես էին ասում). «Այստեղ երկու կարծիք լինել չի կարող, հոգյակս»։

Իսկ երբ Աննետան այնուամենայնիվ փորձում էր ապացուցել, որ նա իր կարծիքն ունի, նրանք անփութորեն արտասանում էին.

— Հոգյակս, դուք, իսկապե՞ս որ, տարօրինակ եք։

Եվ Աննետան իսկույն ևեթ ձայնը կտրում էր։

Նրա հետ արդեն վարվում էին, ինչպես յուրայինի հետ, բայց աղջիկը լավ չէր վարժեցրած, անհրաժեշտ էր նրան սովորեցնել այն ամենը, ինչը որ ընդունված էր նրանց շրջանակում։ Եվ բոլոր Բրիսսոները նրան սովորեցնում էին, թե ինչ կարգով են ընթանում նրանց օրերը, ամիսները և տարվա եղանակները, ինչպիսի ծանոթներ ունեն այստեղ, գավառում, ինչպիսի ծանոթներ ունեն Փարիզում, ինչ ազգակցական կապեր կան, ինչ այցելություններ, ճաշեր—վերջ չուներ բարձրաշխարհիկ պարտավորությունների այդ շղթան, պարտավորություններ, որոնցից տիկնայք տնքում են և որոնցով շատ պարծենում, քանի որ մշտական վազվզուքները թեև հոգնեցնում են նրանց, բայց նաև պատրանք են ստեղծում, իբրև թե նրանք ինչ-որ գործի են ծառայում։ Անիմաստ այդ կյանքը, երկդիմությունը, մշտական պայմանականությունները Աննետայի համար անհանդուրժելի էին։ Ամեն ինչին, երևի, նախօրոք ժամանակ էր հատկացվում. և աշխատանքներին և հաճույքներին, քանի որ նրանք ևս ունեին իրենց հաճույքները, միայն թե ժամանակը նախապե՞ս էր հատկացվում... Կեցցե՛ն չնախատեսված բարդությունները, որոնք խախտում են կենսաձևերը։ Սակայն ոչ մի հույս չկար, որ նույնիսկ այդպիսի բարդությունները կարող են խախտել այստեղ կենսաձևը։ Աննետան զգում էր, որ իրեն զնդանել են՝ ինչպես պատի մեջ դրված քար։ Կիր ու ավազով։ Հռոմի ցեմենտ է խառնված Բրիսսոների ընտանիքի հետ...

Աննետան չափազանցում էր նրանց կենսաձևի անսասա-

նությունը։ Այդ կյանքում, ինչպես և ամեն ինչում, դեր էին խաղում պատահականությունը, չնախատեսված հանգամանքները։ Բրիստո դամաները խոսքով ավելի սարսափելի էին, քան գործով։ Նրանք ուզում էին իշխողի դերում լինել, սակայն այնքան էլ անհնար չէր նրանց քթից քարշ տալը,— պետք էր միայն գտնել նրանց թույլ լարն ու նվագել այդ լարի վրա։ Շողոքորթել, գովաբանել։ Եվ խորամանկ աղջիկը գնահատելով նրանց ճիշտ, կորոշեր այսպես.«Ասացեք, ինչ ուզում եք։ Իսկ ես իմ ձևով եմ անում»։

Ըստ երևույթին, նրանց երբեք չէր հաջողվի ճնշել այնպիսի անդրդվելի մի կամք, ինչպիսին Աննետային էր։ Բայց Աննետան հիմա ապրում էր այնպիսի ներվային գրգռված վիճակում, որը կանանց համակում է, երբ նրանք այնքան երկար են զննում իրենց մտքերն զբաղեցնող որևէ առարկա, որ արդեն կորցնում են այդ առարկայի իսկական էության մասին ունեցած պատկերացումը։ Բավական էր առավոտյան որևէ խոսքով վրդովել նրան, և երեկոյան արդեն նրա երեվակայությունը հրեշ էր ծեփում։ Աննետային սարսափեցնում էր այն պայքարը, որ նա հարկադրված էր անընդհատ մղել, և նա կրկնում էր, որ ինքը երբեք չի կարող իրեն պաշտպանել բոլոր Բրիստոներից։ Նա զգում էր, որ ինքը առանձնապես ուժեղ չէ։ Թերահավատ էր իր էներգիայի նկատմամբ, վախենում էր իր բնավորության համար, վախենում էր անսպասելի տատանումներից, որոնց պատճառով երբեք չէր հավասարակշռվում նրա անհանգիստ միտքը, վախենում էր տրամադրության հանկարծակի, անբացատրելի փոփոխություններից։ Եվ, իհարկե, այդ բոլորը տեղի էր ունենում այն բանի հետևանքով, որ չափազանց բարդ էր նրա շնորհներով օժտված նատուրան։ Նրան վիճակված էր միայն աստիճանաբար, տարիների ընթացքում նորից ձեռք բերել խաղաղություն, իսկ մինչ այդ նա ապրում էր մշտական սպառնալիքի տակ, որ մի ուժ ուր որ է իրեն հանկարծակիի կբերի, և այն ժամանակ նրան կհամակի զայրույթը, վրան խոնջություն կիջնի, բուռն ցանկության կզգա,- կտրվի մտորմունքին,— կենթարկվի դավադիր, ճակատագրական պատահականություններին, որոնք դարան մտած կլինեն

բոպեի շրջադարձում, ճանապարհին ընկած ժայռաբեկորնե-
րի հետևում...

Եվ փաստորեն նա այդպիսի խուճապի մեջ էր այն պատ-
ճառով, որ սկսել էր կասկածել իր սիրուն։ Ինքն անգամ
ոչինչ չէր հասկանում... ոչ այն է դադարել էր սիրելուց, ոչ
այն է սիրում էր առաջվա նման։ Նրա բանականությունն ու
սիրտը—բանականությունն ու զգացմունքները—պայքար էին
մղում միմյանց դեմ։ Բանականությունը ամեն ինչ տեսնում
էր շատ պարզ. նա արդեն չէր մոլորվում։ Իսկ սիրտը՝ ոչ,
նա մարմինն էր փոթորկվում, որովհետև կորցնում էր սի-
րեցյալին, կիրքը որոտում էր.

«Ջե՞մ ցանկանում հրաժարվել»։

Աննետան զգում էր, ինչպես է ընդվզում մարմինը, և դա
ատորացնում էր նրան։ Նրա հոգու ուժերը աննկուն կերպով
դիմադրում էին, կոչ էին անում նրա վիրավորված հպար-
տությանը։ Նա ասում էր.

— «Ես դադարել եմ Ռոժեին սիրելուց...»։

Եվ այժմ, անբարյացակամությամբ զննելով Ռոժեին, նա
պատճառ էր որոնում, որպեսզի դադարի նրան սիրելուց։

Ռոժեն ոչինչ չէր նկատում։ Նա Աննետային շրջապատում
էր ուշադրությամբ, ծաղիկներով, քնքուշ հոգատարությամբ։
Ջէ՞ որ Ռոժեն համարում էր, որ պարտիան տարել է։ Նա ոչ
մի վայրկյան չմտածեց այն մասին, որ հպարտ, վայրի հո-
դին, հայացքներից թաքնված, հետևում է իրեն, այրվում է
իրեն նվիրաբերելու ցանկությամբ, բայց միայն նրան, ով
իրեն ասի խորհրդավոր պարոլը, որ նշանակելու է, թե իրենք
հարազատ են միմյանց։ Իսկ նա դեռ շարունակում էր չա-
սել այդ բառը։ Ընդհակառակը, ասում էր ինչ-որ չմտած-
ված բառեր, որոնք խոցում էին Աննետայի սիրտը, թեև նա
դա ցույց չէր տալիս։ Իսկ մի րոպե հետո նա արդեն չէր
հիշում, թե ինչի մասին էր խոսում։ Իսկ Աննետան, որը
կարծես ոչինչ չէր էլ լսել, կարող էր նրա ասածը բառ առ
բառ կրկնել և տասը օր և տասը տարի հետո։ Մնում էր
վառ մի հիշողություն, բացված վերքը։ Եվ դա տեղի էր
ունենում Աննետայի կամքին հակառակ, քանի որ նա մեծա-
հոգի էր և հանդիմանում էր իրեն, որ ոչ մի բան ի վիճակի

չի մոռանալու։ Ասենք, աշխարհի ամենաթարի կինը ներում է նրանց, ովքեր իրեն հոգեկան ցավ են պատճառել, բայց երբեք այդ ցավի մասին չի մոռանում։

Օրերն անցնում էին, և ավելի ու ավելի հաճախ էր պատրվում նուրբ այն գործվածքը, որը սերն էր հյուսել։ Ոչ ոք այդ չէր նկատում։ Գործվածքը առաջվա նման պրկված էր, բայց նույնիսկ ամենաթեթև շնչից նա տագնապալից ծածանվում էր։

Աննետան հետևելով Ռոժեին ընտանեկան շրջանակում, տեսնում էր, թե Բրիսսոների ամբողջ ընտանիքին բնորոշ ինչքան գծեր կա նրա մեջ, տեսնում էր, թե նա որքան է կոպիտ, որքան են չոր նրա որոշ բառերը, ինչպես է նա արհամարհում հասարակ մարդկանց, և մտածում էր.

«Նա խունանում է։ Կանցնի մի քանի տարի—և այն ամենից, ինչ ես սիրել եմ նրա մեջ, հետք անգամ չի մնա»։

Սակայն Աննետան դեռ սիրում էր նրան, այդ պատճառով էլ ուզում էր խուսափել դառը հուսահատությունից, ստորացուցիչ վիճաբանություններից, որոնք—Աննետան այդ կանխատեսում էր—կառաջանան, եթե նրանք միացնեն իրենց կյանքը։

Ջատկից երկու օր առաջ որոշումն արդեն ընդունված էր։ Տանջալից դիշեր։ Ստիպված եղավ հաղթահարել դիպի Ռոժեն ունեցած ձգտումը, տրորել համառ հույսը, որը ոչ մի կերպ չէր ուզում մեռնել։ Երևակայության մեջ Աննետան արդեն բույն էր հյուսել իր և Ռոժեի համար։ Ինչքա՜ն երազանքներ կային երջանկության մասին,— այնպիսի երազանքներ, որոնց մասին մարդ կամացուկ ինքն իրեն շշնջում է։ Եվ դրանից հրաժարվե՞լ։ Ընդունել, որ սխալվել ես։ Անընդհատ կրկնել, որ դու ստեղծված չե՛ս երջանկության համար։

Աննետան այդ կրկնում էր, որովհետև հուսահատված էր։ Մի ուրիշը նրա փոխարեն ոչ մի դեպքում չէր մերժի Ռոժեին։ Իսկ ինչո՞ւ ինքը չի կարող ընդունել նրան։ Ինչո՞ւ ի վիճակի չէ զոհաբերելու իր «եսի» մի մասնիկը։ Այո, նա ուժ չուներ այդ անելու։ Որքա՜ն անհեթեթ է կառուցված

կյանքը։ Անհնար է ապրել առանց փոխադարձ սիրո, իսկ առավել ևս՝ առանց անկախության։ Թե մեկը, թե մյուսը սրբություն է։ Եվ մեկը և մյուսը անհրաժեշտ է, ինչպես օդը։ Ինչպե՞ս համատեղել դրանք։ Քեզ ասում են. «Զոհաբերի՛ր քեզ։ Իսկ եթե չես կարող քեզ զոհաբերել, ուրեմն, էլ դա ի՞նչ սեր...»։ Բայց գրեթե միշտ նրանք, ովքեր ստեղծված են մեծ սիրո համար, բոլորից ավելի անզուսպ են ձգտում անկախության, քանի որ նրանց բոլոր զգացմունքները ուժեղ են։ Եվ եթե նրանք հանուն սիրո զոհաբերում են իրենց հպարտությունը, ապա զգում են, որ ստորացված են իրենց սիրո մեջ, որ պատվազրկում են իրենց սերը։ Ոչ, դա ամենևին էլ այդքան հեշտ չէ, ինչպես փորձում են այդ մեզ ներշնչել ինքնաստորացման քարոզիչները կամ քարոզիչները զոռոզամտության— քրիստոնյաներն ու նիցշեականները։ Ուժը չէ մեր մեջ հակադրվում թուլությանը, առաքինությունը՝ արատին, այլ միմյանց դեմ հանդես են գալիս երկու ուժեր, երկու առաքինություն, երկու պարտք։ Աշխարհում միակ ճշմարիտ բարոյականությունը, որը համապատասխանում է կյանքի ճշմարտությանը, կարող էր համարվել ներդաշնակություն քարոզող բարոյականություն։ Բայց մարդկային հասարակությունը մինչև հիմա գիտե միայն մի բարոյականություն, որը կեղծիքով համեղացրած կեղեքում և ինքնահրաժարում է քարոզում։ Աննետան չէր կարողանում ստել։

Ուրեմն, ի՞նչ անել։ Որքան կարելի է շուտ, ամեն գնով գուրս գալ այդ երկիմաստ վիճակից։ Նա համոզվեց, որ իրենց համատեղ կյանքը անհնարին է, կնշանակի, պետք է կապերը խզել, և առանց հապաղելու։

Կապերը խզե՞լ... Աննետան պատկերացրեց, թե ինչպե՞ս է ապշելու ամբողջ ընտանիքը, ինչպես է վրդովվելու... Այդ բոլորը դատարկ բաներ են... Բայց ինչպե՞ս կվշտանա Ռոժեն։ Սիրեցյալի դեմքը խավարում հայտնվեց նրան... Եվ երբ Աննետան նրան տեսավ, կրքի հեղեղը նորից ետ շպրտեց մնացած բոլորը։ Մերթ ջերմություն, մերթ սառնություն էր համակում Աննետային, և, անկողնու մեջ մեջքին

պառկած, առանց շարժվելու և փակելու աչքերը, նա աշխատում էր սանձել իր սիրտը։

«Ների՛ր ինձ, Ռոժե, հարազա՛տս,— ազաչում էր նա։— Ա՛խ, եթե ես կարողանայի ազատել քեզ այդ տառապանքից։ Բայց չեմ կարող, չե՛մ կարող»։

Եվ այդտեղ նա սիրո այնպիսի մի մակընթացություն զգաց, խղճի այնպիսի մի խայթ, որ պատրաստ էր նետվել դեպի Ռոժեն, ծնկի գալ նրա մահճակալի առաջ, համբուրել նրա ձեռքերը, ասել նրան.

«Կանեմ այն ամենը, ինչ ուզում ես...»։

Ինչպե՞ս։ Աննետան դեռ սիրո՞ւմ էր նրան... Նա զայրացավ...

«Ո՛չ, ո՛չ։ Ես այլևս չե՛մ սիրում նրան...»։

Աննետան ստում էր իրեն, մոլուցքով բռնված.

«Այլևս չե՛մ սիրում նրան...»։

Ջո՛ւր էր։ Նա դեռ շարունակում էր սիրել Ռոժեին։ Եվ այդքան սաստիկ դեռ երբեք չէր սիրել նրան։ Ըստ երևույթին, դա նրա ամենավեհ զգացումը չէր։ (Բայց ի՞նչ է նշանակում վեհ զգացում։ Եվ ի՞նչ է նշանակում ո՛չ վեհ զգացում)։ Ո՛չ, և ամենավե՛հը և ամենա ո՛չ վեհը։ Մարմինը և հոգի՛ն։ Ա՛խ եթե այսպես լիներ. դադարեցիր հարգելուց, դադարեիր և սիրել։ Ինչքա՜ն լավ կլիներ։ Բայց երբ տառապում ես նրա շնորհիվ, ում սիրում ես, սիրուց չես ազատվում, դառնությամբ գիտակցում ես միայն, որ անզոր ես դադարել սիրելուց... Աննետայի զգացմունքները վիրավորված էին, և նա տառապում էր այն բանից, որ իրեն չեն վստահում, չեն հավատում նրան, տառապում էր այն պատճառով, որ Ռոժեի սերը խորը չէ։ Նա այնպե՞ս էր տառապում, նրա համար այնքա՞ն էր վշտալի տեսնել, թե ինչքա՜ն հույսեր իր մեջ խորտակվեցին, որոնց մասին նա ոչ ոքի չէր պատմում։ Ով դա հենց այն պատճառով, որ ինքը այդպես չերմ էր սիրում Ռոժեին, և իր համար այնքա՜ն կարևոր էր նրան ստիպել, որ համաձայնի իր ինքնուրույնությանը։ Աննետան ուզում էր ամուսնական կապի մեջ մտնել, որ դառնա ոչ թե պարզապես կին, դիմակազրկված, անզործունյա, այլ ազատ ու հավատարիմ ընկեր։ Իսկ Ռոժեն դրան

ոչ մի նշանակություն չէր տալիս։ Եվ Աննետան նորից զգաց, թե որքան է ցավալի իր համար, և որքան է զայրանում նրա վիրավորված սիրտը...

«Ոչ, ո՜չ։ Ես այլևս նրան չե՜մ սիրում։ Ջպետք է սիրեմ, այլևս չեմ ուզում սիրել...»։

Բայց այստեղ Աննետան չդիմացավ, և չհասցրեց դադարել վրդովմունքի ճիչը, երբ նա սկսեց լաց լինել... Խավարում... լռության մեջ... Ավա՜ղ։ Նա լսում էր բանականության պաղ ձայնը... այրվում էր... Նա չէր ուզում իրեն խոստովանել, բայց ինչպի՜սի ուրախությամբ ամեն ինչ կզոհաբերեր Ռոժեին, ամեն բան, ինչ պատկանում էր իրեն, նույնիսկ անկախությունը, եթե նկատեր նրա հոգու գոնե մի ազնիվ շարժումը։ Եթե Ռոժեն փորձ աներ, միա՜յն ու միայն փորձ աներ զոհաբերել իրեն, և ոչ թե ձգտեր սոսկ այն բանին, որ Աննետային զոհ դարձնի իր համար։ Չէ՞ որ Աննետան Ռոժեին նույնիսկ թույլ չէր տա զոհաբերվել։ Աննետան ոչինչ նրանից չէր պահանջի, բացի մեծահոգությունից, բացի իսկական սիրո այդ ապացույցից։ Բայց թեև Ռոժեն իր ձևով սիրում էր Աննետային, այնուամենայնիվ զգացմունքները այդպես ապացուցելու համար անընդունակ էր։ Դա նույնիսկ նրա ժառով չէր էլ անցնում։ Ռոժեն Աննետայի այդ ցանկությունները պարզապես կհամարեր կանացի քմայք, որը չի կարելի լուրջ ընդունել, որի մեջ ոչ մի իմաստ չկա։ Ուրեմն, Աննետան էլ ինչ ցանկանա։ Սատանան գիտե, թե ինչի համար սկսեց լաց լինել։ Որովհետև սիրո՜ւմ է նրան։ Ուրեմն, ի՞նչ անել։

«Դուք սիրում եք ինձ, ճի՞շտ է։ Սիրում եք։ Դա՜ է գլխավորը...»։

Այո, Աննետան չէ՞ր մոռացել այդ խոսքերը։

Աննետան արցունքների միջից ժպտաց։ «Սիրելի՜ Ռոժե։ Պետք է նրան ընդունել այն ձևով, ինչպես որ նա կա։ Կարիք չկա նրա վրա բարկանալու։ Բայց մենք մեզ չենք վերափոխի։ Ոչ նա, ոչ ես։ Համատեղ ապրել մենք չենք կարող...»։

Աննետան աչքերը սրբեց։

«Այդպես, սա պետք է վերջացնել...»։

Անքուն գիշերն անցավ (Աննետան միայն լուսադեմին ննջեց և քնեց մի երկու ժամ), և նա վեր կացավ՝ վճռակամությամբ լցված։ Լուսաբացի հետ Աննետան նաև խաղաղվեց։ Նա հագնվեց, սովորականից ավելի հանգամանորեն և ուշադիր հետևելով հարդարանքի ամեն մի մանրուքին և վանելով իրենից այն ամենը, ինչ կարող էր նրա մեջ կասկած առաջացնել, խնամքով ու սառնարյուն սանրեց մազերը։

Ժամը մոտ իննին Ռոժեն ուրախ բախեց դուռը։ Նա Աննետային կանչում էր զբոսանքի—առավոտները դա նրանց մոտ սովորություն էր դարձել։

Եվ նրանք դուրս եկան։ Նրանց հետևից, թռչկոտելով, վազում էր մեծ շունը։ Հետո թեքվեցին այն ճանապարհը, որը տանում էր դեպի անտառի թավուտը։ Ծառերը կանաչել էին, և թարմ սաղարթների միջով թափանցում էին արևի շողերը։ Ճյուղերից հոսում էր թռչունների երգը։ Ամեն քայլի վրա թռչունների ճախրանք էր, թևերի թափահարում, տերևների շրշյուն, ճյուղերի խշշոց, անտառի միջով փախչող փոքրիկ գազանների շփոթահար վազք։ Շունը զրգռված հաչում էր, հոտոտում հողը, պոչյաններ էր տալիս։ Կավշտում էին ճայերը։ Կաղնու կատարին դունդունում էին երկու վայրի աղավնի։ Իսկ հեռվում ինչ-որ տեղ լսվում էր կկվի ձայնը— մերթ մոտենալով, մերթ հեռանալով նորից, անդադար կրկնելով իր վաղեմի ու հին կատակը։ Գարնան թունդ ժամանակն էր...

Ռոժեն ուրախ աղմկում էր, խենթություններ անում, բրջջում, գրգռում շանը, ինքը նույնպես հիշեցնելով մի մեծ ու աշխուժ շուն։ Աննետան լուռ քայլում էր նրա հետևից։ Մտածում էր.

«Ահա այստեղ... Ոչ, այ այնտեղ, ոլորանին...»։

Նա նայում էր Ռոժեին։ Անսում անտառին... Ինչպե՞ս ամեն ինչ իսկույն կփոխվեր, եթե ինքը սկսեր խոսել։ Ոլորանն անցան։ Աննետան լռում էր։ Հետո ձայն տվեց.

— Ռոժե՛։

Մի տեսակ անվստա՛հ, խո՛ւլ հնչեց նրա ձայնը և խրզվեց... Ռոժեն չլսեց։ Նա ոչինչ չէր նկատում։ Գոնվում էր

Աննետայի առջևում և, կուացած, մանուշակ էր քաղում։ Խոսում էր, անընդհատ խոսում էր։ Աննետան նորից ձայն տվեց.

— Ռոժե՛։

Այս անգամ նրա ձայնի մեջ այնպիսի տառապանք կար, որ Ռոժեն տագնապով շրջվեց։ Նվ նոր միայն նկատելով, թե որքան է գունատվել Աննետայի խիստ դեմքը, մոտեցավ... Ռոժեն սարսափեց։ Աննետան ասաց.

— Ռոժե, մենք պետք է հրաժեշտ տանք իրար։

Զարմանքը, վախը աղավաղեցին Ռոժեի դեմքը։ Նա կամաց հարցրեց.

— Ի՞նչ ասացիք։ Ի՞նչ ասացիք։

Աննետան հաստատորեն կրկնեց ասածը, աշխատելով չնայել նրան.

— Մենք պետք է հրաժե՛շտ տանք իրար, Ռոժե, պետք է հրաժե՛շտ տանք, որքան էլ ուզում է դա ախուր լինի։ Ես համոզվեցի, որ չեմ կարող, չեմ կարող, ձեր կինը դառնալ...

Աննետան չկարողացավ խոսքը վերջացնել։ Ռոժեն ընդհատեց նրան.

— Ո՛չ, ո՛չ, դա ճիշտ չէ՛։ Լռեցե՛ք, լռեցե՛ք։ Դուք խելագարվե՛լ եք...

— Ես գնում եմ, Ռոժե՛,— ասաց Աննետան։

— Գնո՞ւմ եք։ Ջե՛մ թողնի...— բղավեց նա և, ճանկելով Աննետայի ձեռքերը, սեղմեց ցավեցնելու աստիճան։

Նվ հանկարծ տեսավ այնպիսի հպարտ, այնպիսի հաստատակամ և սառը մի դեմք, որ իսկույն հասկացավ. ամեն ինչ կորած էր։ Այդտեղ Ռոժեն բաց թողեց Աննետայի ձեռքերը, սկսեց ներում խնդրել, պահանջել, աղերսել.

— Աննետա՛, սիրելի՛ս։ Մնացե՛ք, մնացե՛ք այստեղ... Ո՛չ, դա հնարավոր չէ... Ախր ի՞նչ պատահեց։ Ո՞րն է իմ մեղքը։

Խստացած դեմքը կրկին մեղմացավ խղճահարությունից։

— Եկեք նստենք, Ռոժե՛...— ասաց Աննետան։

Ռոժեն հնազանդորեն նստեց նրա կողքին մամռապատ փոքրիկ բլրի վրա։ Նրա աչքերն առանց կտրվելու նայում

էին Աննետային, աղերսանքով հետևում էին նրա ամեն մի խոսքին։

— Հանգստացե՛ք, մենք պետք է բացատրվենք... Խընդրում եմ, հանգստացեք։ Հավատացեք, որ ինձ համար նույնպես շատ դժվար է հանգստություն պահպանելը... Ես ինձ կհարկադրեմ խոսել...

— Իսկ դուք մի՛ խոսեք,— ասաց Ռոժեն։—Սա պարզապես խելագարությո՛ւն է...

— Այդպե՛ս է պետք։

Նա ուզեց Աննետայի բերանը ձեռքով փակել։ Աննետան մի կողմ քաշվեց։ Նրա վճիռն, ըստ երևույթին, այնքան անդրդվելի էր, չնայած հոգեկան խռովքին, որ Ռոժեն դա հասկացավ, հրաժարվեց պայքարից և լսում էր ճնշված, շփոթահար, չհամարձակվելով արթեն նրան նայել։

Աննետան, որի ձայնը հնչում էր անվրդով, սառը, խիստ, թեև անընդհատ կտրվում էր, երկու-երեք անգամ լռեց, որպեսզի շունչ առնի, բայց ասաց այն ամենը, ինչ որոշել էր ասել. ասաց պարզ, մտածված, պատշաճավոր արտահայտություններով, որոնք հենց այդ պատճառով ավելի անողոք էին թվում։ Նա անկեղծորեն ուզում էր փորձել, կարո՞ղ են արդյոք իրենք ապրել միասին։ Սկզբում նա հույս էր տածում, ամբողջ սրտով ուզում էր այդ։ Եվ տեսավ, որ դա անիրագործելի երազանք է։ Շատ բան է նրանց բաժանում։ Անչափ մեծ է տարբերությունը սրտում, մտածելակերպում։ Աննետան մեղքը վերցնում է իր վրա։ Հիմա նա վստահորեն հավատացած է, որ ամուսնությունը իր համար չէ։ Նրա հայացքները կյանքի, կնոջ անկախության վերաբերյալ չեն համընկնում Ռոժեի հայացքների հետ։ Գուցե և Ռոժեն իրավացի է։ Գրեթե բոլոր տղամարդիկ, իսկ գուցե նաև կանայք, Ռոժեի կարծիքին են։ Աննետան, երևի, ճիշտ չէ։ Բայց ճիշտ է թե ճիշտ չէ, այդպիսին է նրա բնավորությունը։ Ինչո՞ւ վիշտ պատճառել ուրիշին և իրեն նույնպես։ Նա ստեղծված չէ երկուսով ապրելու համար։ Նա Ռոժեին է վերադարձնում նրա պարտականությունները և նորից է ստանում ազատություն։ Ասենք, նրանք փաստորեն ոչնչով կապված էլ չէին։ Նրանց հարաբերություններում ոչ մի կեղծիք չկար։ Եվ

պետք է անջատվեն նույնպես առանց կեղծիքի, ինչպես բարեկամներ։

Աննետան խոսում էր աչքերը չհեռացնելով իր ոտքերի մոտ կանաչող խոտի ցողուններից, նա վախենում էր նայել Ռոժեին։ Բայց լսում էր նրա ընդհատ շնչառությունը, և ասելիքը մինչև վերջն հասցնելը Աննետայի համար հեշտ չէր։ Բայց ասաց ինչև վերջը և համարձակվեց հայացքը գցել Ռոժեի վրա։ Այստեղ ցնցված էր և Աննետան։ Ռոժեի դեմքն այնպիսին էր, որ թվում էր, թե նա խեղդվում է։ Նա կարմրել էր, շնչում էր աղմկալից, դուռալու ուժ չուներ։ Նա մի տեսակ անճարպիկ թափահարեց ջղաձգորեն սեղմված ձեռքերը և, դժվարությամբ շունչ քաշելով, տնքալով ասաց.

— Ո՛չ, ո՛չ, չե՛մ կարող, չե՛մ կարող...

Եվ հանկարծ հեկեկաց։

Անտառեզրի վարելահողից լսվեց մի գյուղացու ձայն և գութանի ճռինչ։ Աննետան իրեն կորցրեց, բռնեց Ռոժեի ձեռքից, տարավ դեպի անտառի խորքը, ճանապարհից որքան կարելի է հեռու։ Ռոժեն ամբողջովին թուլացել էր, հնազանդորեն գնում էր և անընդհատ կրկնում.

— Չե՛մ կարող, չե՛մ կարող... ի՞նչ կլինի ինձ...

Աննետան քնքշորեն խնդրում էր նրան լռել։ Բայց Ռոժեն համակված էր հուսահատությամբ. վիրավորված սերը, վիրավորված ինքնասիրությունը, այն միտքը, որ բոլորին հայտնի է դառնալու իր ստորացումը, որ իր այնքան երազած երջանկությունը հիմա արդեն անիրականալի է,— ամեն ինչ խառնվել էր իրար. հասունացած այդ երեխան, կյանքից երես առած, որ երբեք ոչ մի բանում մերժում չէր ստացել, ճնշված էր իր պարտությամբ։ Դա աղետ էր, նրա բոլոր հույսերի խորտակում, նա կորցնում էր իր հանդեպ ունեցած հավատը, կորցնում էր ոտքերի տակի հողը, նա ձեռքը որևէ բանի գցելու տեղ չուներ։ Աննետան, հուզված նրա հուսահատությունից, ասում էր.

— Բարեկա՛մս... բարեկա՛մս... Մի՛ լացեք։ Դուք ձեր առջևում հիանալի կյանք ունեք... Ես պետք չեմ ձեզ։

Իսկ Ռոժեն անընդհատ կրկնում էր.

— Ես չեմ կարող առանց ձեզ ապրել։ Ես ոչ մի բանի

այլևս չեմ հավատում... Չեմ հավատում այլևս, որ կյանքը հաջողվել է ինձ...

Եվ ծնկաչոք աղերսում էր.

— Մնացե՛ք։ Մնացե՛ք... Ես ամե՛ն ինչ կանեմ, ինչ դուք ուզում եք... ամե՛ն բան, ինչ ցանկանաք...

Աննետան շատ լավ գիտեր, որ նա չի կատարի իր խոստումը, բայց սիրտը փափկեց և քնքշորեն պատասխանեց.

Ո՛չ, բարեկամս, թեև դուք այդ ասում եք անկեղծորեն, բայց ձեր խոսքը կատարել դուք չեք կարող, իսկ եթե կատարեք էլ, ապա դա ձեզ համար շատ ծանր կլինի, ինձ համար նույնպես։ Մեր կյանքը կդառնար համատարած վհճերի բուն։

Ռոժեն հասկացավ, որ ինքը չի կարող տատանել Աննետայի որոշումները, և ողողվեց արցունքներով, ինչպես երեխան, սեղմվելով նրա ոտքերին։ Աննետայի սիրտը տեղի տվեց սիրուց ու խղճահարությունից։ Նրա կամքը թուլանում էր։ Աննետան ուզում էր հակահարված տալ, բայց չդիմացավ Ռոժեի արցունքներին։ Նա այլևս իր մասին չէր մտածում, մտածում էր միայն Ռոժեի մասին։ Նա փաղաքշում էր իր ծնկներին դրած սիրելի գլուխը, քնքուշ խոսքեր էր մրմնջում։ Աննետան բարձրացրեց իր անսփոփ հատունացած փոքրիկ տղային, թաշկինակով սրբեց նրա աչքերը, նորից րոնեց ձեռքից, ստիպեց քայլել։ Ռոժեն լրիվ ուժասպառվել էր, նա Աննետային թուլատրում էր իր հետ անել այն ամեն ը, ինչ սիրտն ուզում է, և ամբողջ ժամանակ լաց էր լինում։ Նրանք քայլում էին, և ճյուղերը մտրակում էին նրանց էրեսներին։ Գնում էին անտառով, չտեսնելով ոչինչ, չմտանալով, թե ուր են գնում։ Աննետան զգում էր, ինչպես են իր մեջ գնալով լայնանում խոովքն ու սերը։ Նա խոսում էր, Ռոժեին բռնած.

— Մի՛ լացեք։ Իմ սիրելի՛... իմ փոքրի՛կ տղա... Մի՛ տանջեք հոգիս... ես չեմ կարող դիմանալ դրան... լաց մի՛ լինիր։ Ես սիրում եմ ձեզ... ես սիրում եմ քեզ, իմ խեղճ փոքրիկ Ռոժե...

Իսկ Ռոժեն հեկեկալով կրկնում էր.

— Չե՛ք սիրում...

— Ո՛չ, սիրո՛ւմ եմ քեզ, սիրո՛ւմ եմ, դու երբեք այդպիսի չես սիրել ինձ, ես հազար անգամ ավելի եմ սիրում... Քեզ համար ես ամեն ինչի պատրաստ եմ... Այո, պատրաստ եմ ամեն ինչի... Չէ որ դու ի՛մն ես, Ռոժի՛ն,

Այդպես նրանք քայլում էին, և հանկարծ անտառը նոսրացավ,— նրանք հայտնվեցին Ռիվիերների կալվածքը շրջապատող պարսպի, նրանց հին տան մոտ։ Ծանոթ վայրեր... Աննետան նայեց Ռոժենին, և հանկարծ Աննետայի մեջ խուժեց կիրքը։ Մոխրացնող մի փոթորիկ։ Զգացմունքները հարբեցին, կարծես՝ ակացիայի արբեցնող բուրմունքից... Աննետան վազեց դեպի դուռը, բաց չձողնելով Ռոժենի ձեռքը։ Նրանք մտան դատարկ տունը։ Ծածկոցափեղկերը փակ էին։ Պայծառ լույսից հետո նրանք երկուսն էլ կարծես կուրացան։ Ռոժենն կպչում էր կահույքներին։ Ոչինչ չէր տեսնում, ոչ մի բանի մասին չէր մտածում, նա հնազանդորեն քայլում էր—հուրհրացող ձեռքը մթության մեջ նրան տանում էր տան առաջին հարկի սենյակներով։ Աննետան չէր տատանվում, որոշումն անդառնալիորեն ընդունված էր... Ամենահեռավոր սենյակում, որը քույրերինն էր, որտեղ դեռ անցյալ աշնանից մնացել էր նրանց մուրմինների բուրմունքը, Աննետան Ռոժեի հետ մոտեցավ լայն մահճակալին, որի վրա ինքն ու Սիլվիան այն ժամանակ քնում էին, և, թուլացած խղճահարությունից ու կրքից, տրվեց նրան։

Երբ հանդարտվեց կրքերի պոռթկումը և սթափվեցին, նրանց աչքերն արդեն սովորել էին խավարին։ Սենյակը կարծես լուսացած լիներ։ Ծածկոցափեղկերի ճեղքերից, խաղալով, ձգվում էին լույսի շերտերը, ասես հիշեցնելով, որ այնտեղ, պատերից այն կողմը, պայծառ օր է։ Ռոժենն համբույրներով ծածկում էր Աննետայի մերկ մարմինը։ Նա բուռն կերպով իր երախտագիտությունն էր հայտնում նրան...

Բայց ահեղիքը վերջացնելով, հանկարծ լռեց, կպավ Աննետային, դեմքով սեղմվեց նրան... Աննետան պառկել էր լուռ, անշարժ— և մտածում էր... Պարտեզում, պատի տակ գտնվող վարդերի թփերի մեջ, դղդղում էին մեղուները։ Եվ

Աննետան լսեց, ինչպես լսվում է հեռվում մարող երգի ձայնը, որ Ռոժեի սերը թռել հեռանում է...

Նա արդեն այնքան շատ չէր սիրում Աննետային։ Ռոժեն ինքն էլ ամոթով ու ցավով զգում էր այդ, բայց դա հնարավոր համարել չէր ցանկանում։ Հոգու խորքում նա վիրավորված էր, որ Աննետան այդ քայլին դիմեց։ Տղամարդու ծիծաղելի պահանջկոտություն։ Նա ձգտում է դեպի կինը, իսկ երբ այդ կինը հավատով ու անկեղծությամբ տրվում է իրեն, նա պատրաստ է կնոջ հոգեկան ազնվությամբ լի այդ քայլը դիտել որպես անհավատարմություն։

Աննետան թեքվեց դեպի Ռոժեն, բարձրացրեց նրա գլուխը, լռելյայն երկար-երկար նայեց նրա աչքերին, տխուր ժպտաց։ Իսկ Ռոժեն զգաց, որ Աննետայի հայացքը թափանցեց իր հոգու խորքը, բայց աշխատեց նրան մոլորության մեջ գցել։ Որոշեց, որ ամենից լավ է կրակոտ ու սիրահարված ձևանալ։

— Հիմա, Աննետա, դուք չեք կարող գնալ,— ասաց Ռոժեն։— Ես պարտավոր եմ ձեզ հետ ամուսնանալ։

Աննետան նորից տխուր ժպտաց։ Նա այնքան լավ էր կարդում Ռոժեի սիրտը։

— Ո՛չ, բարեկամս,— նկատեց Աննետան,— ամենևին էլ պարտավոր չե՛ք։

Ռոժեն սթափվեց.

— Ես ուզում եմ...

Իսկ Աննետան.

— Ես մեկնում եմ։

Ռոժեն հարցրեց.

— Ինչո՞ւ։

Աննետան չհասցրեց էլ պատասխանել, երբ Ռոժեն արդեն հասկացավ, թե նա ինչու է մեկնում։ Այնուամենայնիվ իր պարտքը համարեց այդ մտքից հետ կանգնեցնել։ Աննետան ձեռքով նրա բերանը փակեց։ Ռոժեն կրքոտ, զայրույթով համբուրեց նրա ափը... Չէ որ ինքն այնպե՞ս էր սիրում նրան։ Ռոժեն ամաչում էր իր մտքերից։ Չլինի՞ Աննետան նկատեց։

Եվ փափուկ, քնքուշ ափը սեղմվեց Ռոժեի շրթունքներին, կարծես ասելով.

«Ոչինչ էլ չնկատեցի...»։

Ժամանակ առ ժամանակ հեռվից թռչում գալիս էր գյուղական զանգի զողանջը... Նրանք երկար ժամանակ լուռ էին, վերջապես Աննետան հառաչեց։ Այսպես, ուրեմն, այս անգամ ամեն ինչ վերջացած է...

— Գնալու ժամանակն է, Ռոժե...— ցածր ձայնով ասաց Աննետան։

Գրկող ձեռքերը բացվեցին։ Ռոժեն ծնկի եկավ անկողնու առաջ, ճակատով սեղմվեց Աննետայի մերկ ոտքերին։ Կարծես ուզում էր նրան ապացուցել.

— «Ես քոնն եմ»։

Բայց Ռոժեին չէր հաջողվում իրենից վանել ինչ-որ անցանկալի մտքեր։

Նա սենյակից դուրս եկավ— Աննետան մնաց մենակ և սկսեց հագնվել։ Ռոժեն, ցանկապատին հենված նրան սպասում էր տան նախապարտեզում, և, մտացրիվ լսելով անտառների և դաշտերի աղմուկը, ըմբռշխնում էր այն բանի հիշողությունը, ինչը հենց նոր կատարվել էր։ Ճնշող մտքերը անհետացան։ Նա երանության մեջ էր. բավարարված էին նրա և ինքնասիրությունը և հեշտասիրությունը։ Ռոժեն հպարտ էր։ Նա մտածեց.

«Խե՜ղճ Աննետա»։

Բայց նույն վայրկյանին սթափվեց.

«Սիրելի՜ Աննետա»։

Աննետան դուրս եկավ տնից։ Հանգիստ ինչպես միշտ։ Միայն թե շատ գունատված... Ո՞վ կարող էր ասել, թե ի՜նչ ապրումներ նա ունեցավ այն վայրկյաններին, երբ մենակ էր մնացել. կրքի բռնկումնե՞ր էին դրանք, կարո՞ղ, հուսահատությո՞ւն։ Ռոժեն ոչինչ չնկատեց, կլանված էր միայն իրենով։ Նա ընդառաջ դնաց, նորից փորձ արեց համբուրել նրան։ Աննետան մատը դրեց շրթունքներին. պետք չէ։ Պարտեզը շրջապատող կենդանի ցանկապատի մոտ պոկեց ալոճենու մի ճյուղ, մեջտեղից ջարդեց, ճյուղի կեսը մեկնեց

Ռոժեին։ Իսկ երբ դուրս էր գալիս դարպասից, շուրթերով հպվեց Ռոժեի շուրթերին։

Անտառային շավիղով նրանք վերադառնում էին լուռ։ Աննետան նրան խնդրեց լռությունը չխզել։ Ռոժեն բռնել էր Աննետայի ձեռքը և շատ քնքշացած էր։ Աննետան աչքերը կիսափակ ժպտում էր։ Հիմա նրան տանում էր Ռոժեն, նվ արդեն մոռացել էր, թե մի ժամ առաջ ինչպես էր լալիս այստեղ...

Իսկ անտառի թավուտում շան հաչոցը խրտնեցնում էր վայրի թռչուններին ու կենդանիներին...

Հաջորդ առավոտյան Աննետան մեկնեց։ Դրա շարժառիթը մի նամակ էր, ինչ-որ ծեր ազգականուհու հանկարծակի հիվանդությունը։ Բայց Բրիսսոներին չէր կարելի խաբել։ Նրանք բոլորն էլ Ռոժեից լավ էին տեսնում և վերջին ժամանակները կռահում էին, որ Աննետան ձեռքներից գնալու է։ Սակայն նրանց համար պատշաճ չէր ցույց տալ, որ իբրև իրենք այդ բանը հնարավոր էն համարում, և ձևացնել, որ մեկնումը ոչ մի կասկած իրենց մեջ չի առաջացնում։ Մինչև վերջին րոպեն անսպասելի բաժանման և շուտափույթ հանդիպման սյուժեով ֆարս էր խաղացվում։ Աննետայի համար դժվար էր այդ հարկադրական դերը, բայց Ռոժեն նրան խնդրեց, որ իր այդ որոշումը նա հայտարարի ավելի ուշ, գրի Փարիզից։ Աննետան ինքն էլ իրեն խոստովանեց, որ այդ մասին Բրիսսոնների ընտանիքին բանավոր հաղորդելը իր համար նույնպես շատ տհաճ կլիներ։ Այդ պատճառով էլ, հրաժեշտ տալով միմյանց, նրանք ժպտում էին, խոսում արհեստական աշխուժությամբ, գրկախառնվում, բայց այդ ամենի մեջ սրտագին վերաբերմունք չկար։

Ռոժեն նորից Աննետային տարավ շարաբանով, բայց այս անդամ արդեն դեպի կայարան։ Երկուսն էլ տխուր էին. Ռոժեն, ինչպես պատշաճ է կարգին մարդուն, նորից էր խնդրում Աննետային իր հետ ամուսնանալ։ Նա ասաց, որ ինքը պարտավոր է Աննետայի հետ ամուսնանալ,— չէ՞ որ նա ջենտլմեն է։ Ռոժեի մեջ ջենտլմենական նույնիսկ չափազանց շատ բան կար։ Հիմա, արդեն, Ռոժեի կար-

ծիքով, ինքը իրավունք ուներ Աննետային ցույց տալ իր իշխանությունը, ի բարօրություն հենց Աննետայի։ Նա համարում էր, որ Աննետան, իրեն տրվելով, կորցրել է սեփական արժանապատվության զգացումը, որ այսուհետև նրանց վիճակը ամենևին էլ միևնույնը չէ, և որ ինքը պետք է համառորեն պնդելով հասնի ամուսնության։ Աննետան շատ լավ էր հասկանում, որ եթե իրենք հիմա ամուսնանան, ապա Ռոժեն նրան ինքնուրույնությունից զրկելիս իր համար հազար անգամ ավելի շատ արդարացումներ կգտնի, քան առաջ։ Իհարկե, Աննետան երախտապարտ էր Ռոժենին, որ նա այդպես համառ է, տակտով։ Բայց... Աննետան մերժեց նրան... Ռոժենն ներքուստ զայրանում էր։ Չէր կարողանում հասկանալ Աննետային (նա երևակայում էր, թե առաջ հասկանում էր)։ Եվ խստորեն դատապարտեց Աննետային։ Բայց իրեն չմատնեց։ Իսկ Աննետան ամեն ինչ նկատեց-տրտմության, հեգնանքի և, ինչպես միշտ, քնքշության ծիծաղելի զգացումով։ (Չէ՞ որ այդ ամենի մեջ Ռոժեն էր)։

Երբ մոտենում էին կայարանին, Աննետան իր ձեռնոց հագած ձեռքը դրեց Ռոժեի ձեռքի վրա։ Ռոժեն ցնցվեց։

— Աննե՜տա։

— Արի ներե՛նք միմյանց,— ասաց Աննետան։

Ռոժեն ուզում էր պատասխանել, բայց չէր կարողանում։ Ձեռքերը չէին բաժանվում իրարից։ Եվ իրար չէին նայում։ Բայց զգում էին իրենց աչքերը լցվող արցունքները, և երկուսն էլ այդ գիտեին...

Հասան կայարան— հարկավոր էր, որ իրենց հավաքեին։ Ռոժեն Աննետային վագոն նստեցրեց։ Նրա կուպեում մարդիկ կային։ Ստիպված եղան սահմանափակվել միայն սովորական սիրալիրություններով։ Բայց իրար նայելուց չէին հագենում— ուզում էին, որ հիշողության մեջ դրոշմվի սիրելի դեմքը։

Շոգեքարշը սուլեց։ Նրանք իրար ասացին.

— Յոհաննե՛ս։

Իսկ մատածեցին.

«Մնաս բարյա՛վ հավիտյան»։

Գնացքը մեկնեց։ Ռոժեն տուն էր վերադառնում երեկոյան կողմ։ Նա տխուր էր և զայրացած։ Զայրացած էր Աննետայի վրա։ Զայրացած էր իր վրա։ Կարոտը տանջում էր նրան։ Նա ապրում էր թեթևության զգացում—0՛, ինչպիսի ամոթ։

Ռոժեն ձին կանգնեցրեց ամայի ճանապարհին և, ուժասպառ իր նկատմամբ ունեցած արհամարհանքից և սիրուց, սկսեց դառնորեն լաց լինել։

Աննետան վերադարձավ Բուլոնյան անտառի տունը և սկսեց ճգնավորի կյանք վարել։ Բրիսսոներին գրած նամակը գնաց, և Աննետան խզեց իր կապը աշխարհի հետ։ Բարեկամներից ոչ ոք չգիտեր, որ նա վերադարձել է։ Նամակները չէր բացում։ Ամբողջ օրերով տնից դուրս չէր գալիս։ Պառավ հորաքույրը երբեք չէր հասկանում նրան և, ընտելանալով, ամենևին չէր անհանգստանում և չէր խանգարում Աննետայի առանձնությունը։ Կյանքն արտաքնապես կարծես դադարել էր։ Բայց դրա փոխարեն մյուսը—ներքին կյանքը—գարձել էր ավելի լարված։ Լռության մեջ ժամանակ առ ժամանակ մղեգնում էր վիրավոր կիրքը։ Աննետային հարկավոր էր միայնակ մնալ, որպեսզի միայն այդ կրքով ապրի։ Փոթորկալի բռնկումներից հետո նա իրեն մի տեսակ ընկճված ու արնաքամ էր զգում։ Շրթունքները չորանում էին, երեսն այրվում էր, ձեռքերն ու ոտքերը սառույց էին կտրում։ Հետո երկար ժամանակ ընկնում էր թմրության մեջ, երազում էր ծանր կիսաքուն վիճակում։ Նա երազում էր հարթմանի և չէր փորձում ղեկավարել իր մտքերը։ Նրան հաճախում էին ինչ-որ աղոտ զգացումներ, և այդ զգացումներն անթիվ էին ու անհամար... Մոայլ մի թախիծ, դառը քնքշություն, բերանում մոխրի ինչ-որ համ, անիրականալի երազանքներ, հիշողությունների հանկարծակի բռնկվող ինչ-որ շող, որից սիրտը պատրաստ էր դուրս թռչել կրծքից, վհատության սուր բռնկումներ, խոցված հպարտության և կրքի տառապանքներ, կործանման զգացում, ինչ-որ անուղղելի, ճակատագրական մի բանի զգացում, որի հանդեպ ապարդյուն են բոլոր ճիգերը,— այդ բոլորը սկզբում ընկ-

ճում էր, հետո սկսում էր թախիծ ներշնչել, այնուհետև կամաց-կամաց փոխվում էր անտարբերության, երանգավորվում անցնող տրամության, որի մեջ զարմանալիորեն հաճելի ինչ-որ բան կար։ Աննետան չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ...

Մի անգամ նա երազում տեսավ, որ ինքը ուռճացած բողոջներով ծանրաբեռնված անտառում է։ Կարծես բոլորովին մենակ։ Վազում էր անտառի թավուտով։ Ճյուղերը կառչում էին նրա շորից։ Թաց թփուտը չէր թողնում։ Ահա դուրս պրծավ, բայց շորը պատռեց, նա ամաչում է—չէ՞ որ կիսամերկ է։ Կոացավ, ճղճղված յուրկայի լաթերով ծածկվեց։ Եվ ահա տեսնում է. առջևում գետնին դրված է մի կլոր զամբյուղ, արևով ողողված տերևների կույտի տակ, ոչ թե գեղին կամ ոսկերանգ տերևների, այլ արծաթագույն, ճերմակ, ինչպես կեչու կեղևը, ճերմակ, ինչպես բարակ, անշափ բարակ կտավ։ Նա հուզված զննում է, չոքում։ Հանկարծ կտավի տակ ինչ-որ բան շարժվեց։ Սիրտը ուժգին բաբախում է, նա մեկնում է ձեռքերը,— և հանկարծ արթնանում է... Հուզմունքը չանցավ... Նա չէր կարողանում հասկանալ, ինչ է կատարվում իր հետ։

Եկավ օրը, երբ Աննետան ամեն ինչ հասկացավ։ Նա այլևս միայնակ չէր։ Նրա մեջ արթնանում էր կյանքը, նոր կյանքը...

Անցնում էին շաբաթները, իսկ նա իր մեջ կրում էր մի ամբողջ աշխարհ։

«... Սեր, մի՞թե այդ դու ես։ Սեր, որ ինձ լքեցիր այն ժամին, երբ ես երևակայում էի, թե արդեն տիրացել եմ քեզ, արդյոք դո՞ւ չես հիմա իմ մեջ։ Պինդ, անսահման պինդ եմ ես քեզ բռնել, և դու չես կարող գնալ, օ իմ հարազատ գերի, ես պինդ եմ բռնել քեզ, դու իմ արգանդում ես։ Վրեժ լուծիր, կլանի՛ր ինձ։ Պատլիկ իմ, կրծի՛ր իմ արգանդը, խմի՛ր արյունս։ Դու այդ ես եմ։ Դու իմ երազանքն ես։ Երկրի վրա ես քեզ չգտա և քեզ ստեղծեցի ինքս ինձանից... Ահա թե երբ, Սեր, ես տիրացա քեզ։ Ես մարմնացա նրա մեջ, ում սիրո՞ւմ եմ...»։

ԳԻՐՔ
ԵՐԿՐՈՐԴ

Ա Մ Ա Ռ

To strive, to seek, not to find, and not to yield.

Ձգտել, որոնել, չգտնել, բայց և չհուսահատվել:

Մասն առաջին

Փակ ծածկոցափեղկերով սենյակում թագավորում էր կիսախավարը։ Աննետան սպիտակ պենյուարով նստել էր մահճակալին, նրա հենց նոր լվացած մազերը թափվել էին ուսերն ի վար։ Բաց լուսամուտից ներս էր լցվում ոսկի չգոստոսյան օրվա հետհասօրյա շոգը։ Այստեղ կարծես զգացվում էր պատուհաններից այն կողմ ինչ-որ արևի տակ ննջող Բուլոնյան անտառի քնկոտ թմրությունը։ Եվ Աննետան զգում էր խաղաղ երանության նույնպիսի վիճակ։ Նա կարող էր ժամերով պառկել, անշարժ, ոչնչի մասին չմտածելով և պահանջ չզգալով որևէ բանի մասին մտածելու։ Նրա համար բավական էր այն գիտակցությունը, որ ինքը մենակ չէ, որ հիմա երկուսով են, և նույնիսկ փորձ էլ չէր անում զրուցելու այն փոքրիկ մարդուկի հետ, որն ապրում էր իր մեջ,— Աննետան համոզված էր, որ նա՝ այդ փոքրիկ մարդուկը, նույն բանն է զգում, ինչ ինքը՝ Աննետան, և, կնշանակի, նրանք առանց խոսքի հասկանում են միմյանց։ Այդ պատիկի մասին մտածելիս նրա մեջ բարձրանում էր քրնքշության ալիքը։ Եվ ապա, քնկոտորեն ժպտալով, Աննետան նորից էր սուզվում իր երանավետ մոռացության մեջ։

Սակայն այն ժամանակ, մինչ հոգին ննջում էր, զգացումները պահպանում էին զարմանալի խորաթափանցություն, ակնթարթորեն արձագանքելով օդի և լույսի ամենաաննկատ թրթռումներին։ Ահա այգուց տարածվեց ելակի քաղցրավուն բուրմունքը... Եվ Աննետան արդեն երանությամբ է ներս քաշում այդ բույրը, լիզվին զգալով պտղի համը։ Նրա լսողությունից չի վրիպում ոչ մի ձայն, և ամեն

ինչ նրան հաճույք է պատճառում—գեփյուռի հպումից առաջացած տերևների շրշյունը, ինչ-որ մեկի ոտքի տակից եկող ավազի ճրթճրթյունը, փողոցից լսվող ձայները, երեկոյան ժամերգության կանչող զանգերի ղողանջը։ Հեռվում, ինչպես վիթխարի մրջնանոց, բվվում է Փարիզը։ 1900 թվականի Փարիզը... Համաշխարհային ցուցահանդեսի ամառը։ Մարսյան դաշտը հիշեցնում էր վիթխարի մի տակառ, որի մեջ արևի տակ եփում էին մարդկային խաղողի հազարավոր ողկույզները... Այդ հրեշավոր եռքը այնքան էր մոտ, որ Աննետան լսում էր և զգում նրա ձայնը, և միևնույն ժամանակ բավական հեռու էր, այնպես որ նա իրեն անվտանգ էր զգում և դրանից ավելի՛ մեծ վայելք ստանում իր անկյունի զովությունից ու խաղաղ անդորրից։ «Օ՛, ունայնություն ունայնությանց։ Իսկական երջանկությունն այստեղ է, իմ ներսո՛ւմ...»։

Անուշադիր և զգոն ականջով, ինչպես կատվինը, Աննետան մեկը մյուսի հետևից որսում էր բոլոր ձայները և ծուլորեն հետևում, ինչպես են դրանք մարում։ Ահա ներքևում զնգաց մուտքի դռան զանգը, և նա ճանաչեց Միլվիայի մանրիկ քայլերը, որը, ինչպես միշտ, ոչ թե քայլում, այլ վազելով բարձրանում էր աստիճաններն ի վեր։ Աննետան ուզում էր մենակ մնալ։ Սակայն նրա երջանկությունն այնքան էր հաստատ, որ ինքն առանց կասկածելու գիտեր. ով էլ ուզում է գա, նա ոչնչով չի կարող մթագնել այդ երջանկությունը։

Միլվիան նորությունն իմացավ ընդամենը մի շաբաթ առաջ։ Նա գարնանից Աննետայի մասին ոչ մի տեղեկություն չուներ։ Բայց, զբաղված լինելով իր նոր սիրավեպով, որը թեև առանձնապես խորը չէր հուզում նրան, չէր նկատում Աննետայի երկարատև լռությունը։ Իսկ երբ այդ սիրավեպը վերջացավ և դա արդեն չէր զբաղեցնում նրա մտքերը, Միլվիան ժամանակ գտավ քրոջ մասին մտածելու և սկսեց անհանգստանալ։ Որոշելով հորաքրոջից տեղեկանալ, թե ինչ է պատահել Աննետային, նա գնաց Բուլոնյան առափնյակում գտնվող նրանց տունը և շատ զարմացած էր, իմանա-

լով, որ Աննետան վերադարձել է— և այն էլ այդքա՜ն վաղուց։ Նա ուզում էր ինչպես պետք է քրոջը ամոթանք տալ այդպիսի անուշադրության համար, բայց Աննետան նրա համար պատրաստեց նաև երկրորդ անակնկալը. հուզմունքը ծածկելով, նա Սիլվիային անմիջապես ամեն ինչ պատմեց, առանց որևէ բան թաքցնելու։ Սիլվիան մեծ ճիգերի գնով կարողացավ ստիպել իրեն մինչև վերջ լսել։ Ինչպե՞ս Աննետան, խելամիտ Աննետա՜ն կարող էր այդպիսի հիմարություն թույլ տալ, և վերջում էլ հրաժարվել ամուսնանալո՜ւց—ոչ դա չտեսնված բան է, դա չի՜ կարելի հնարավոր համարել։ Նորահայտ Լուկրեցիան վրդովված էր։ Նա հարձակվեց Աննետայի վրա, նրան անվանեց խելագար։ Աննետան դրան վերաբերվեց հանգիստ ու մեղմ։ Պարզ երևում էր, նրա վրա ոչնչով չես ազդի։ Սիլվիան տեսնում էր, որ այդ կամակորի հետ ինքը չոլա գնալ չի կարող։ Նա քիչ էր մնում ծնծի Աննետային։ Բայց կարելի՞ էր արդյոք երկար զայրանալ այդ քնքուշ էակի վրա, որը դինաթափող ժպիտով լսո՜ւմ էր նրան։ Եվ հետո—մայրության թաքուն կախարդանքը...

Սիլվիան նզովում էր այդ մայրությունը որպես դժբախտություն, բայց նա կին էր, և դա նրա մեջ ակամա խանգարողատանք էր առաջացնում...

Այնուամենայնիվ նա վճռական դիտավորությամբ այսօր էլ էր եկել «շարժելու» Աննետային, կոտրելու, վերջիվերջո, նրա անմիտ կամակորությունը, ստիպելու նրան, որ պահանջի ամուսնություն, այլապես... «այլապես ես կզայրանա՜մ»։ Նա փոթորկի նման խուժեց սենյակ։ Նրանից վառոդի և բրնձի դիմափոշու հոտ էր գալիս։ Եվ, այսպես ասած, թափ առնելու համար, չհասցնելով անգամ բարևել Աննետային, նա սկսեց հայհոյել այն «ցնդածներին, որոնք օրերն անց են կացնում մութ սենյակում փակված»։ Բայց, նայելով Աննետայի երջանիկ աչքերին, Աննետայի, որը նրան պարզեց իր երկու ձեռքերը, Սիլվան չդիմացավ և համբուրեց քրոջը։ Ասենք, նա դրանից հետո էլ շարունակեց Աննետային հանդիմանել.

— *Խելագարվե՞լ ես։ Դու խելագարվե՞լ ես։ Ամբողջովին*

Խելքդ թողրե՛լ ես, Աննդրեմ, հիացեք սրանով. մազերն արձակել է, զարդարվել սպիտակ շորով—հրեշտակ, ուրիշ ոչինչ... Այ թե դրան հավատողը կսխալվի՜... Լա՛վ անմատչելին է։ Անպե՞տք աղջիկ...

Նա ցնցեց Աննետայի ուսը։ Իսկ սա հոգնած ու զոհունակ տեսքով համբերությամբ տանում էր այդ բոլորը։ Միլվիան հանկարծ լռեց, տիրադը չվերջացնելով, երկու ձեռքով բռնեց քրոջ գլուխը, մազերը նրա ճակատից ետ գցեց.

— Նայեք, վարդի պես թա՛րմ է։ Դեռ երբեք նրա դեմքը այսպիսի հրաշալի գույն չի ունեցել։ Եվ ի՞նչ հաղթական տեսք։ Էլ ո՞նց չուրախանաս։ Եվ չե՞ս ամաչում։

— Բոլորովի՛ն,— ասաց Աննետան։— Ես դեռ երբեք այսքան երջանիկ չեմ եղել։ Ես իմ մեջ այնքա՛ն ուժ եմ զգում, այնպես լա՛վ եմ զգում ինձ։ Միայն հիմա է, որ իմ կյանքը այսպես լցված է, և ոչինչ այլևս ինձ պետք չէ։ Ես վաղուց էի ուզում երեխա ունենալ—դեռ այն ժամանակ, երբ ինքս երեխա էի։ Այո, ես յոթ տարեկան էլ չկայի, բայց արդեն երազում էի այդ մասին։

— Սո՛ւտ ես ասում,— առարկեց Միլվիան։— Կես տարի էլ չկա ինչ դու ինձ ասում էիր, որ երբեք հակում չես ունեցել դեպի մայրությունը։

— Մի՞թե։ Ես այդպիսի բա՞ն եմ ասել,— շփոթված հարցրեց Աննետան։— Ախ հա՛, հա, իսկապես... է, ինչ կա որ,— ես ոչ այն ժամանակ էի ստում, և ոչ էլ հիմա... Ինչպե՞ս բացատրեմ քեզ։ Չեմ հնարում։ Ես դա լավ եմ հիշում։

— Գիտեմ, ինձ էլ է այդպիսի բաներ պատահում,— նկատեց Միլվիան։— Ամեն անգամ, երբ մեկն ու մեկն ինձ դուր է գալիս, ես սկսում եմ երևակայել, թե ամբողջ կյանքում հենց նրա մասին եմ երազել։

Բայց Աննետան դժգոհությամբ դեմքը ծռմռեց։

— Ո՛չ, դու չե՛ս հասկանում։ Իմ մեջ հիմա սկսեց խոսել իմ իսկական հոգին։ Եվ ինձ միշտ հենց դա՛ է պետք եղել, միայն թե ես չէի համարձակվում խոստովանել ինձ, մինչև որ ժամանակը եկավ. վախենում էի խաբվել։ Իսկ հիմա... Օ, հիմա ես տեսնում եմ, որ դա ավելի՛ հրաշալի է, քան

սպասում էի... Եվ դրա մեջ ես ինձ գտա, ամբողջությամբ։ Ես ոչինչ այլևս չեմ ուզում...

— Երբ քեզ պետք էր Ռոժեն կամ Տուլլիոն, դու նույնպես ոչինչ այլևս չէիր ուզում,— թունոտ նկատեց Սիլվիան։

— Ախ, դու ոչինչ, ոչինչ չե՞ս հասկանում...Մի՞թե կարելի է համեմատել։ Երբ ես սիրում էի (չէ որ դուք դա սեր եք համարում), ոչ թե ե՛ս էի ուզում, այլ ուզողը իմ մեջ ինչ-որ բան էր, որին ես պետք է հնազանդվեի... Եվ ինչպե՞ս էի ես տառապում այդ ուժից, որ համակել էր ինձ, որին ես չէի կարողանում հակառակվել։ Քանի՞-քանի անգամ եմ ես աղոթել աստծուն, որ ազատի ինձ։ Եվ ահա իսկապես որ եկավ ազատությունը—դա նա է, նա՝ իմ մանկիկը, նա եկավ ինձ օգնության, երբ ես չարչարվում էի այն տառապանքի աքցանների մեջ, որին սեր են կոչում։ Նա եկավ և փրկեց ինձ... Ա՜խ դու իմ փոքրիկ փրկարար...

Սիլվիան քրքջաց։ Նա բոլորովին ոչինչ չհասկացավ քրոջ բացատրություններից։ Բայց մի բան նրա համար հասկանալի էր նաև առանց բացատրության. Աննետայի մեջ արթնացած մայրական բնազդը։ Եվ դա մտերմացնում էր երկու քույրերին։ Նրանք սկսեցին խանդաղատանքով շաղակրատել փոքրիկ անծանոթի մասին (ինչ է լինելու, տղա թե՞ աղջիկ) խոսեցին նրա աշխարհ գալու հետ կապված հաղար ու մի աննշան, բայց միևնույն ժամանակ այնպիսի կարևոր բաներից, որոնց մասին խոսելուց կանայք երբեք չեն հոգնում։

Այսպես քույրերը երկար զրուցում էին, մինչև որ Սիլվիան հանկարծ սթափվեց, հիշելով, որ ինքը փաստորեն եկել է Աննետային ինչպես պետքն է հանդիմանելու և ոչ թե ձայնակցելու նրան։ Եվ ասաց.

— Աննետա, բավական է հիմարություններ դուրս տաս։ Ամեն ինչը իր ժամանակն ունի։ Ռոժեն պարտավոր է ամուսնանալ քեզ հետ։ Եվ դու պետք է դա պահանջես։

Աննետան հոգնածորեն մերժեց նրան։

— Նորից դու քո աստծն ես կրկնում։ Ես քեզ չասացի՞, որ Ռոժեն դա ինքն էր ինձ առաջարկում, բայց ես չուզեցի։

— Շա՜տ բան կարող ես չուզել։ Եթե մարդ հիմարություն է անում, պետք է դա ընդունի և կարողանա ուղղել։

— Իսկ ես ոչ մի ցանկություն չունեմ որևէ բան ուղղելու։

— Ախր ինչո՞ւ։ Չէ՞ որ դու սիրահարված էիր Ռոժեին։ Ես համոզված եմ, որ դու դեռ հիմա էլ ես սիրահարված։ Ինչ է կատարվել ձեր մեջ։

Աննետան չէր պատասխանում։ Սիլվիան շարունակում էր իր հարցուփորձը, առանց քաշվելու արտահայտելով իր ենթադրությունները Ռոժեի հետ կապեր խզելու հնտիմ պատճառների վերաբերյալ։ Աննետան, վերջապես, վճռական մի շարժում արեց։ Սիլվիան նայեց նրան ու շփոթվեց. Աննետայի շրթունքները զայրագին սեղմված էին, հոնքերը կիտած, աչքերը նայում էին զայրույթով։

— Հը, ի՞նչ է։

— Ոչինչ,— կարճ ասաց Աննետան և թափով շուռ եկավ։

Սիլվիան փորփրեց այն վերքը, որն Աննետան ուզում էր մոռացության տալ։ Նրա բնավորության ինչ-որ խորը թաքնված և հակասական հատկություններից պատճառով, որոնք իրեն իսկ անհասկանալի էին, Աննետան, ուրախանալով, որ ինքը երեխա է ունենալու, միևնույն ժամանակ զայրանում էր այն մարդու վրա, որը նրան տվել էր այդ երեխան։ Նա իրեն չէր ներում ցանկասիրության և քնքշանքի այն անսպասելի պոռթկումը, որն իրեն հանձնեց այդ մարդու իշխանությանը,— չէր ներում նաև նրան, որ այդպես օգտագործեց իր թուլությունը։ Հենց այդ բնազդական վրդովմունքն էր Ռոժեի մոտից փախչելու, Ռոժեի հետ այլևս չհանդիպելու վճռի իսկական պատճառը (պատճառ, որը նա թաքցնում էր ոչ միայն ուրիշներից, այլև իրենից)։ Հոգու խորքում Աննետան նրան ատում էր։ Ատում էր այն բանի համար, որ սիրից նրան։ Բայց քանի որ ինքը ազնիվ խելքի տեր էր, իր մեջ ճնշում էր այդ, իր կարծիքով, հիմար բնազդները։ Ուրեմն, էլ ինչո՞ւ է Սիլվիան հիմա նրան հարկադրում նորից քննության առնել այդ բոլորը...

Նայելով քրոջը, Սիլվիան վերջ տվեց իր հարցուփորձերին, և Աննետան հանդարտվեց։ Հիմա նա արդեն ամաչում էր այն զգացմունքների համար, որոնք նկատեց իր մեջ և իրենից անկախ ցույց տվեց Սիլվիային։ Փորձելով իրեն խաբել, նա շատ հանգիստ ասաց.

— Ես չեմ ուզում ամուսնանալ։ Ես ստեղծված չեմ այդպիսի՛ սերտ կապերի համար։ Դու ինձ կարող ես ասել, որ միլիոնավոր կանայք հարմարվում են այդ կապերին, որ ես չափազանց լուրջ եմ նայում ամուսնությանը։ Ի՞նչ կարող ես անել, որ ես այդպիսին եմ,— ամեն ինչ լուրջ եմ ընդունում։ Երբ ես տրվում եմ, տրվում եմ ամբողջությամբ—և շուտով սկսում է շունչս կտրվել. ինձ թվում է, թե ես քարը վզիցս կապած խեղդվում եմ։ Գուցե ես բավականաչափ ուժեղ մարդ չեմ, չեմ կարողանում ինքս ինձ պաշտպանել։ Չափազանց սերտ կապերը լիանանների նման ծծում են իմ ուժերը, և ես այլևս ուժ չեմ ունենում անձնական կյանքի համար։ Իմ սիրած մարդուն դուր գալու համար ես ամբողջ ուժով ձգտում եմ լինել այնպիսին, ինչպիսին նա կուզենար ինձ տեսնել։ Իսկ դա միշտ վատ է վերջանում. եթե ինքդ քեզ դավաճանում ես, բռնանալով քո էության վրա, ապա դադարում ես ինքդ քեզ հարգելուց, և կյանքը անտանելի է դառնում, իսկ եթե ըմբոստանում ես—ուրիշին ես տառապանք պատճառում... Ոչ, Սիլվիա, ես էգոիստ եմ, և պետք է մենակ ապրեմ։

(Աննետան չէր ստում, այդ ասելով, նա պարզապես բերում էր այն փաստարկները, որոնք ճշմարտությունը ծածկում էին հենց իրենից։

— Սիծաղելի բաներ մի՛ ասա,— առարկեց Սիլվիան։— Մի՞թե քեզ նման կինը կարող է առանց սիրո ապրել։

— Ես առո՛ւմ եմ սերը,— ասաց Աննետան։— Բայց նա այլևս ինձ ոչինչ անել արդեն չի կարող, ո՛չ։ Հիմա ես պաշտպան ունեմ։

— Համա՞ր թե պաշտպան է,— բացականչեց Սիլվիան։— Ոչնչից նա քեզ չի պաշտպանի, ինքդ պետք է նրան պաշտպանես։ Դու չես ուզում քեզ ամուսնությամբ կաշկանդել, իսկ մտածե՞լ ես, թե ինչպես է քեզ կաշկանդելու այդ կենդանի գունդը, ինչպիսի բեռ է լինելու քեզ համար։

— Դա երջանկությո՞ւն է։ Երբ հիշում եմ, թե շուտով նա ինչպես է իմ գրկում լինելու։ Իմ ձեռքերն այնքա՞ն վաղուց են կարոտել այդ բեռին։

— Դու կյանքը չգիտես, դրա համար էլ այդպես ես ասում։ Ո՞վ է նրան պահելու։

— Ես։

— Իսկ հայրը՞։ Չէ՞ որ նա էլ ի՛ր իրավունքներն ունի երեխայի վրա։

Ջայրույթի մի նոր ջղաձգություն անցավ Աննետայի դեմքի վրայով... Իրավո՞ւնք։ Իրավունք Աննետայի երեխայի վրա... Այո, դա նաև նրա երեխան է, այն տղամարդու երեխան, որը սաղմնավորվել է կույր կրքերի վայրկյանին. հայրը արդեն մոռացել է այդ վայրկյանը, իսկ իրեն այդ վայրկյանը կապանքել է ամբողջ կյանքի ընթացքում։ «Ոչ մի դեպքում... Երեխան իմն է, ի՛մը»։ Նա բարձրաձայն ասաց.

— Երեխան ի՛մն է լինելու և ուրիշ ոչ ոքինը։

— Նա կընտրի նրան, ում ուզենա։

— Ես գիտեմ, ում կընտրի նա։

— Գայթակղի՞չ... իսկ եթե նա այնուամենայնիվ հետադայում քեզ հանդիմանի, որ իրեն զրկել ես հորի՞ց։

— Ես նրա սիրտը այնպես կլցնեմ, որ այնտեղ նույնիսկ ամենափոքրիկ տեղ չի մնա ուրիշի համար։

— Դու հրեշավո՞ր էգոիստ ես։

— Այո, իհարկե, ես քեզ չասացի՞։

— Եվ դրա համար դու կպատժվես։

— Ինչ արած, եթե ես չստիպեմ ինձ սիրել, ավելի վատ ինձ համար։ Բայց չկա այնպիսի ուժ, որ ինձ խանգարի նրան սիրել և ինձանից խլի նրան։

— Եթե իսկապես նա քեզ համար այդպես թանկ է, դու պետք է ամենից առաջ մոռածես նրա ապագայի մասին։ Քիչ կանայք չեն երեխա ունենալու համար ամուսնանում այնպիսի մարդկանց հետ, որոնք իրենց սրտով չեն...

— Գիտես ինչ, Սիլվիա, դա ուղղակի վրդովեցուցի՛չ է,— ասաց Աննետան։— Ինձ օրինա՞կ ցույց տալ այնպիսի կանանց, որոնք ի սեր երեխայի իրենց դատապարտում են կեղծիքով, իսկ երբեմն էլ՝ ատելությամբ լեցուն կյանքի։ Դու ինձ հիշեցնում ես այն մորը, որն իր դստերն ասում էր, թե ի սեր նրա է, որ ինքը չի հեռացել ամուսնուց, թեև

նրանց ընտանեկան կյանքը դժոխք է եղել։ Իսկ աղջիկը նրան պատասխանեց. «Ուրեմն, դու կարծում էիր, որ դժոխքը հարմա՞ր ընտանեկան օջախ է երեխայի համար»։

— Երեխային հայր է պետք։

— Իսկ ինչպե՞ս են հազարավոր երեխաներ մեծանում առանց հոր։ Ինչքա՞ն երեխաներ կան, որոնք բոլորովին չեն իմացել, թե հայրն ինչ է, կամ հորից զրկվել են վաղ մանկական հասակում, և մայրը մենակ է դաստիարակել նրանց։ Ով ինչ, մի՞թե նրանք այդ պատճառով ավելի վատն են։ Երեխային սեր է պետք—ահա և բոլորը։ Ինչո՞ւ ես կարծում, որ իմ սերը բավական չէ նրա համար։

— Դու չափից շատ ես հույսդ դնում քո ուժերի վրա, Աննետա։ Իսկ գիտե՞ս արդյոք, թե քեզ ինչ է սպասում։

— Գիտե՜մ, գիտե՜մ։ Մանկական թաթիկները զրկելու են իմ վիզը։

— Իսկ դու մտածե՞լ ես, թե մարդիկ ինչքան թանկ են նստեցնելու դա քեզ վրա։ Բանը եթե այդտեղ է հասել, քեզ համար ավելի լավ է ամուսնացած կին լինել, որն իր ամուսնուն դավաճանում է ում հետ պատահի, բայց ոչ երբեք «աղջիկ-մայր», ինչպես որ նրանք են այդ անվանում։ Համաձայնվե՞լ մայրության բոլոր տառապանքներին ու տանջանքներին, նախապես չապահովելով իրեն օրինական ամուսնության շտամպով,— չէ որ դա երբեք չի ներվում ձեր կարգի կնոջը... Այդպիսի բանը եթե ինձ պատահեր, դեռ ոչինչ։ Ինձ նմանները կարող են տնօրինել իրենց մարմինը, ինչպես ուզում են,— դա ոչ ոքի չի անհանգստացնի։ Իսկ քո բուրժուաներին նույնիսկ հենց այդպիսի բան է պետք. միտես, թե ինչպես են նրանք, օրինակ, «լուիզայի»[1] մեջ, փառաբանում ժողովրդի ծոցից դուրս եկած աղջիկների ազատ սերը։ Բայց բուրժուական միջավայրի աղջիկը—արգելանո՛ց է։ Դու նրանց սեփականությունն ես։ Քեզ կարելի է ձեռք բերել միայն նոտարի մոտ կնքված պայմանագրով։ Դու չես կարող ազատ կերպով տրվել, ասելով. «Դա իմ իրավունքն

[1] «Լուիզա»— 19-րդ դարի ֆրանսիական կոմպոզիտոր Գյուստավ Շարպանտիեի օպերան։

է»։ Աստվա՜ծ հեռու տանի, դա ինչպե՞ս կարելի է։ Մենք ո՞ւր կհասանենք, եթե սեփականությունն սկսի ապստամբվել իր տիրոջ դեմ և հայտարարի. «Ես ազատ եմ։ Արի՜, սերմնացան...»։

Նույնիսկ ջղայնացած ժամանակ Սիլվիան ընդունակ չէր չուրջ խոսելու։

— Բոլորի կողմից ընդունված բարոյականությունը տղամարդիկ են ստեղծել,— ժպտալով ասաց Աննետան։— Այդ ես դիտեմ։ Նրանք դատապարտում են այն կնոջը, որը համարձակվել է երեխաներ ծնել ամուսնությունից դուրս և իր կյանքը չի նվիրաբերել այդ երեխաների հորը։ Եվ շատ կանանց համար ամուսնությունը սարկություն է, քանի որ նրանք չեն սիրում իրենց ամուսիններին։ Նրանք նույնպես կգերադասեին միայնակ ու ազատ լինել, կգերադասեին իրենք դաստիարակել իրենց երեխաներին, սակայն այդ անելու արիությունը չունեն։ Իսկ ես կաշխատեմ ունենալ։

— Խե՜ղճ, հիմար աղջիկ։— Սիլվիայի ձայնում կարեկցանք էր զգացվում։— Դու մինչև հիմա ապրել ես ինչպես քարե պատի հետևում,— նախապաշարմունքներն ու արտոնությունները այն բուրժուազիայի, որը քեզ փակի տակ էր պահում, պաշտպանում էին քեզ կյանքի դաժանություններից։ Բավական է դուրս պրծնես դեպի ազատություն— քեզ այլևս ներս չեն թողնի նորից։ Իսկ այն ժամանակ դու կճանաչես, թե ի՜նչ է կյանքը։

— Այո, Սիլվիա, դու իրավացի ես. մինչև հիմա ես կյանքում օգտվել եմ արտոնություններից։ Կնշանակի, արդարացի է, որ հիմա էլ իմ հերթն է եկել ճաշակելու այն տառապանքները, որոնք ձեզ են բաժին ընկել։

— Դա չափազանց ո՜ւշ է։ Դրանց պետք է ընտելանալ մանկությունից։ Իսկ քո հասակում արդեն հնարավոր չէ... Դեռ բախտավորություն է, որ դու հարուստ ես և ստիպված չես լինի կարիք ճաշակելու։ Բայց կան ուրիշ տառապանքներ—բարոյական... Քո կլանից դու կվտարվես, բոլորը քեզ կդատապարտեն, ամեն օր դու տառապելու ես մանր վիրավորանքներից ու խայթոցներից... Իսկ քո սիրտը փափուկ է և քնքուշ։ Նա արնաքամ է լինելու։

— Թող լինի՛, երբ մարդ երջանկությունը թանկ է գնում, այն լինում է ավելի քաղցր։ Ես ուզում եմ նորմալ մարդկային երջանկություն ունենալ, ազնի՛վ ու մաքուր, ուրիշ ոչինչ։ Եվ չեմ վախենում մարդկանց բամբասանքներից։

— Իսկ եթե այդ բամբասանքներից տառապի քո մանկի՞կը։

— Մի՞թե նրանք կհամարձակվեն։ Էհ, ինչ կա որ, այն ժամանակ մենք երկուսով կկռվենք այդ վախկոտների հետ։

Աննետան շտկվեց և ցնցեց մազերը, ինչպես առյուծն իր բաշը։

Սիլվիան, նայելով նրան, փորձում էր պահպանել դեմքի մոայլ արտահայտությունը, բայց իրեն դադար չկարողացավ—քրքջաց և, ուսերը թոթվելով, հոգոց հանեց և ասաց.

— Խե՛ղճ իմ խենթուկ...

Աննետան շողում քնքշությամբ հարցրեց.

— Իսկ դու մեզ կօգնես, ճի՞շտ է։

Եվ Սիլվիան, մոլեգին համբուրելով նրան, բռունցքով ապտակաց պատին.

— Ապա թող փորձեն քեզ ձե՛ռք տալ։

Նա գնաց։ Վեճից հոգնած Աննետան վերադարձավ իր երազանքներին։ Մի հաղթանակ—քրոջ վրա—տարա՛ծ էր։ Բայց այդ խոսակցությունը նրա հոգում մի աղոտ անհանգըստություն թողեց,— Սիլվիայի բերնից թռած մի խոսք տանջում էր նրան։ Մի՞թե իր երեխան երբևէ կհանդիմանի Աննետային...

Նա պառկեց մեջքին և, ձեռքերը փորին ծալելով, սկսեց ականջ դնել, թե ինչ է կատարվում իր ներսում. փոքրիկն արդեն սկսում էր խաղալ։ Եվ Աննետան—ինչպես այդ հիմա հաճախ էր լինում—սկսեց անգամ զրուցել նրա հետ։ Հարցնում էր, արդյոք այդ լա՞վ է, որ ինքը որոշել է մենակ տիրանալ նրան։ Համառորեն աղերսում էր, որ նա պատասխանի, իրավացի՞ է արդյոք ինքը, արդյոք նա գո՞հ է մոր վճռից։ Չէ՞ որ նա չի ուզում այնպիսի բան անել, որի համար հետագայում իր որդին կարող էր հանդիմանել։ Եվ մանկիկը, իհարկե, պատասխանում էր, որ մայրը ճիշտ է վարվում, որ ինքը գոհ է այդ վճռից։ Ասում էր, որ ոչ ոքի հետ չի ուզում

բաժանել իր մորը և, եթե նա որոշել է ամբողջովին իր կյանքը նվիրաբերել իրեն, ապա պետք է ազատ լինի և ապրի իր հետ միասին՝ Մայր և որդի...

Աննետան ուրախությունից ծիծաղում էր։ Նրա սիրտն այնպես էր լցված, որ բառերը մարում էին շուրթերին։ Գլուխը ծանրացել էր, և, խոնջացած, հարբած երջանկությունից, նա շուտով քնեց։

Երբ Աննետայի հղիությունը սկսեց արդեն նկատելի դառնալ, Սիլվիան քրոջն ստիպեց Փարիզից հեռանալ։ Աշունը մոտենում էր, և բոլոր ծանոթները, որոնք ամառն անց էին կացնում քաղաքից դուրս, շուտով պետք է վերադառնային։ Հակառակ Սիլվիայի երկյուղներին, Աննետայի մտքով չանցավ էլ հակառակվել։ Մարդկային ասեկոսեները նրան չէին սարսափեցնում, բայց հիմա այն ամենը, ինչը կարող էր նրա մեջ ներքին աննկուղչակության պատճառ դառնալ, նրա համար անտանելի էր։ Ո՞չ մի բան չպետք է խանգարեր նրա հոգեկան անդորրը։

Սիլվիան նրան տարավ Լազուրափը, բայց Աննետան այնտեղ չմնաց։ Ամեն ինչ այդտեղ խանգարում էր նրա կենտրոնանալուն։ Ծովի մոտիկությունը ծնում էր ինչ-որ ճնշող անհանգստություն։ Աննետան իրեն լավ էր զգում միայն ցամաքում։ Նա ընդունակ էր սքանչանալ օվկիանոսով, բայց չէր կարողանում ապրել նրա հետ մոտիկ հարևանությամբ։ Նա իր վրա զգում էր օվկիանոսի տիրական կախարդանքը, սակայն նրա շունչը անբարերար էր իր համար. այդ շունչը չափազանց շատ գաղտնի անձկություններ էր արթնացնում, հոգու խորքից վեր էր հանում այն, ինչն Աննետան չէր ուզում խոստովանել։ Ոչ, միայն թե ո՞ւ հիմա։ Դեռ ժամանա՞կը չէ, ոչ... Երբեմն մարդկանցից լսում ես, թե նրանք սրան կամ նրան չեն սիրում, որովհետև վախենում են սիրահարվել (իսկ դա չի՞ նշանակում արդյոք, որ նրանք արդեն սիրում են)։ Աննետան զգուշանում էր ծովից, որովհետև զգուշանում էր հենց իրենից, այն վտանգավոր Աննետայից, որից ինքը ուզում էր փախչել ինչ գնով էլ ուզում է լինի։

Նա մեկնեց դեպի Հյուսիս և Սավոյայի լճերի մոտերքը, լեռնալանջերին ընկած մի փոքրիկ գյուղում, որոշեց իջևա-

նել ու մնալ ամբողջ ամեռը։ Սիլվիային նա այդ մասին գրեց, երբ արդեն հաստատվել էր այնտեղ։ Սիլվիայի արհեստը նրան թույլ չէր տալիս Փարիզից բացակայել, նա կարող էր քրոջ մոտ գալ շատ հազվադեպ ու ոչ երկար ժամանակով, և նա անհանգստանում էր, որ Աննետան այդպիսի խուլ անկյունում մենակ է։ Մինչդեռ Աննետան իր կյանքի այդ շրջանում ամենից շատ ձգտում էր մենակ մնալ, և ոչ մի տեղ նրա համար բավականաչափ մեկուսացած չէր թվում։ Նա սրտանց վայելք էր զգում իր խաղաղ ապաստարանից։ Որքան ավելի էր հարստանում նրա ներաշխարհը, այնքան ավելի ուժեղ էր նա զգում շրջապատի խաղաղ, անամպ անդորրի պահանջը։ Սիլվիան իզուր էր կարծում, թե Աննետայի համար այդ վիճակում ծանր է նեռված լինել օտար մարդկանց մեջ։ Ամենից առաջ Աննետայի հոգում քնքշության այնքան պաշար կար, որ նրա համար ոչ ոք օտար չէր թվում, իսկ քանի որ բարյացակամությունը միշտ պատասխան բարի զգացմունք է առաջացնում, ապա նա ևս ուրիշների համար երկար ժամանակ օտար չէր մնում։ Ասենք, տեղի բնակիչները հետաքրքրասիրությամբ աչքի չէին ընկնում և չէին ձգտում մոտիկից ծանոթանալ նրան։ Մոտով անցնելիս բարևում էին, մի քանի սիրալիր խոսքեր էին փոխանակում տան շեմից կամ ցանկապատի վրայով։ Աննետայի հանդեպ եղած վերաբերմունքը շատ բարյացակամ էր։ Հասկանալի է, այդ կարգի բարյացակամության վրա ծանր րոպեին առանձնապես չի կարելի հույս դնել, բայց այդքանն էլ լավ է թեկուզ այն պատճառով, որ զարդարում է սովորական ընթացքի մեջ գտնվող կյանքը։ Աննետայի համար ավելի հաճելի էր այդ անծանոթ հիանալի մարդկանց անտարբեր սիրալիրությունը, որոնք չէին խցկվում նրա հոգու մեջ, քան հարազատների և բարեկամների բռնապետական հոգատարությունը, որոնք յուրացնում են ձեզ իրենց հովանավորությամբ կեղեքելու իրավունքը։

Նոյեմբերի կեսը... Լուսամուտի տակ նստած Աննետան կար էր անում և նայում առաջին ձյունով ծածկված մարգագետիններին, ճերմակ պարիկներով ծառերին։ Բայց նրա հայացքը անընդհատ դառնում էր դեպի նամակը... Դա փա-

բիզի քաղաքական ոլորտներից մի աղչկա հետ Ռոժե Բրիսսոյի ամուսնության հաղորդագիրն էր (Աննետան այդ աղջկան ճանաչում էր)... Այո, Ռոժեն ժամանակ չէր կորցրել։ Բրիսսո դամաները, վրդովված Աննետայի փախուստից, ավելի շուտ, քան Ռոժեի անհաջողությունը կարող էր հայտնի դառնալ, շտապել էին դուխ բերել նրա համար մի ուրիշ ամուսնություն։ Իսկ Ռոժեն զայրույթից համաձայնվել էր և հավանություն տվել նրանց ընտրությանը։ Աննետան հասկանում էր, որ ինքը ոչ զարմանալու և ոչ էլ վշտանալու պատճառ ունի։ Նա նույնիսկ աշխատում էր հավատացնել իրեն, որ ինքը ուրախ է խեղճ Ռոժեի համար։ Բայց և այնպես նորությունը նրան հուզեց ավելի շատ, քան ինքը ուզում էր։ Որքա՜ն հիշողություններ էին դեռ համակում նրա հոգին ու մարմինը։ Եվ այդ մարմնի մեջ սաղմնավորվում էր այժմ մի նոր կյանք, որին գոյության էր կոչել ինքը Ռոժեն... Ինչ-որ տեղ մթին խորքում կենդանանում էին այն օրերի հուզմունքները... «Ոչ, ոչ, Աննետա, մի՛ թողնիր, որ դրանք վեր բարձրանան»։ Նա զգվանքով մտաբերեց ապրած սիրո տենդային շտապողականությունը։ Յանկասիրության երբեմնի պոռթկումների մասին միտքն անգամ հոգեմաշ էր անում, նրա մեջ առաջացնում նողկանքի բողոք։ Եվ թշնամական զգացմունք իր երեխայի հոր հանդեպ... (Այժմ Աննետան արդեն դա չէր թաքցնում իրենից)։ Էգի նախնադարյան առելության արձագանքը դեպի իրեն բեղմնավորող որձը...

Աննետան կարում էր ու կարում, նա ուզում էր ամեն ինչ մոռանալ։ Այդպես հաճախ էր լինում. երբ նրա հորիզոնի վրա ամպրոպաբեր թուխպ էր հայտնվում և նրան տանջում էր անհանգստությունը, Աննետան ձեռքը գցում էր աշխատանքին, ինչպես հավատացյալը, տերողորմյային։ Նա կար էր անում, և նրա մտքերը պատշաճորեն կարգավորվում էին։

Ահա և այսօր նա հասավ դրան։ Ջանասեր, լուռ աշխատանքի մի կես ժամ և տագնապը անցավ, ժպիտը նորից լուսավորեց Աննետայի դեմքը։ Երբ նա գլուխը վեր բարձրացրեց կարից, աչքերում արդեն խաղաղաբեր մի արտահայտություն կար։ Նա բարձրաձայն ասաց.

— Ինչ կա որ, թող այդպես լինի։

Արևը խաղում էր ձյան վրա։ Աննետան աշխատանքը մի կողմ դրեց, հագնվեց՝ զբոսանքի գնալու համար։ Վերջին ժամանակներս նրա ոտքերը մի քիչ այտուցվում էին, բայց նա իրեն ստիպում էր մաղ գալ, և դրսի այդ զբոսանքները նրան մեծ բավականություն էին պատճառում. չէ՞ որ նա զբոսնում էր ոչ թե մենակ, այլ իր մանկան հետ։ Նա արդեն իրեն զգացնել էր տալիս։ Հատկապես երեկոները նա լցնում էր Աննետայի մարմինը և կամացուկ հրում բոլոր կողմերից, կարծես ասելով.

«Տեր աստված, այս ինչքա՜ն է նեղ։ Սրան մի օր վերջ է լինելո՞ւ թե չէ...»։

Ով կրկին քնում էր։ Ծերեկը զբոսանքի ժամանակ նա իրեն խելոք էր պահում։ Կարելի էր կարծել, թե մայրը նրա աչքերով է նայում իր շուրջը,— այդքան նոր էր Աննետային թվում ամեն ինչ։ Գույների ինչպիսի՜ թարմություն։ Բնությունը կարծես հենց նոր էր դրանք քսել կտավին։ Լավ էին նաև Աննետայի այտերի գույները։ Նրա սիրտը բաբախում էր ավելի ուժգին, արյունը տարածելով մարմնով մեկ։ Աննետան ըմբոշխնում էր բուրմունքները, և ամեն ինչ համեղ էր թվում։ Երբ ոչ ոք չէր տեսնում, նա բռերով ձյուն էր վերցնում և ուտում... ի՜նչ հրաշալի բան է... Նա հիշում էր, որ մանկության տարիներին նույնն էր անում, բավական է դայակը շրջվեր... Նա ծծում էր նաև խոնավ եղեգի սառցակալած ցողունները—դրանից կոկորդում սկսում էր քաղցր, ուժասպառող մի դող, և երանությունից Աննետան հալվում էր, ինչպես հալվում էին ձյան փաթիլները իր լեզվի վրա...

Մի երկու ժամ թափառելով քաղաքից դուրս գտնվող ձյունապատ ճանապարհներով, ձմռան երկնքի գորշ կամարների տակ, մենակ—և ոչ մենակ, որովհետև նա այդտեղ էր. նրա մեջ, Աննետան գնում էր տուն կարմիր, հողմահարված այտերով և շողշողուն աչքերով, անսալով իր ներսից եկող գարնան ճովողյունին։ Ճանապարհին մտնում էր հրուշակարան. նա չէր կարողանում դիմանալ քաղցր ուտելու դայթակղությանը—շոկոլադ կամ մեղր (մանկիկը քաղցրի այնպիսի՜ սիրահար էր)։ Իսկ հետո, օրվա վերջին, գնում էր

եկեղեցի և նստում բեմի առաջ, որը մեղրի նման մուգ ոսկեգույն էր։ Եվ նա, Աննետան, որը երբեք չէր հետևում կրոնական արարողություններին, հավատացյալ չէր (այդպես նա մտածում էր), այժմ նստում էր այստեղ այնքան ժամանակ, մինչև որ եկեղեցին փակում էին, և, աղոթելով ու սիրելով, երազում էր։ Երեկոն վրա էր հասնում, բեմի վրայի կանթեղները մեղմ օրորվելով, հավաքում էին խավարում եղած լույսի վերջին ցոլքերը։ Աննետան նստում էր մի տեսակ թմրած, փոքր-ինչ մրսելով թեթև բրդե վերարկուի մեջ և տաքանում էր միայն իր արևի մասին ունեցած մրտքերով։ Սրտում սրբազան լռություն էր։ Երազանքների մեջ նրան պատկերվում էր իր երեխայի կյանքը, քաղցրությամբ ու անդորրով լեցուն, պաշտպանված նրա սիրող ձեռքերի ջերմությամբ։

Երեխան ծնվեց նոր տարվա առաջին օրերին։ Տղա էր։ Սիլվիան եկավ երեխային ընդունելու ճիշտ ժամանակին։ Չնայած ցավերին, որոնցից Աննետան ժամանակ առ ժամանակ տնքոցներ էր արձակում (բայց ոչ թե լալիս), նա լարվածորեն ուշադիր էր, հետաքրքրությամբ լեցուն և փոքր-ինչ հիասթափված, զարմացած նկատելով, որ իրեն ավելի շուտ իրադարձության կողմնակի դիտորդ է զգում, քան գլխավոր գործող անձ։ Սպասվելիք մեծ զգացումը նա իր մեջ չէր գտնում։ Այն րոպեից, ինչ ծննդաբերությունն սկսվում է, կինը ծուղակի մեջ է։ Այդ ծուղակից նա ոչ մի կերպ խուսափել չի կարող, պետք է գնա մինչև վերջը։ Եվ այդ ժամանակ հնազանդվում ես ու լարում բոլոր ուժերդ, որպեսզի դա որքան կարելի է շուտ վերջանա։ Ամեն ինչ պարզ գիտակցում ես, բայց հոգու և մարմնի ուժը ամբողջովին գործադրվում է՝ ցավին դիմանալու համար։ Երեխայի մասին բոլորովին չես մտածում։ Քնքշությունների և հիացմունքի դրսևորման ժամանակ չէ։ Առաջ սիրտ լցնող այդ զգացմունքները հիմա արդեն քաշվում են հետին պլան։ Ննդաբերությունը իսկական «աշխատանք[1]» է, ծանր, լարված աշխա-

[1] «Travail» բառը ֆրանսերեն նշանակում է «աշխատանք» և «ծննդաբերություն»։

տանք, մարմնի և մկանների աշխատանք, որի մեջ ոչինչ գեղեցիկ և բարերար չկա... մինչև ազատագրության այն րոպեն, երբ զգում ես, որ քո միջից հանկարծ դուրս սողաց փոքրիկ մարմինը... Վերջապե՛ս։

Սրտում իսկույն նորից բռնկվում է բերկրությունը։ Առաջմներըը չխկչխկացնելով, ուժասպառ, զդալով, որ սուզվում է պաղ օվկիանոսի հատակը ինչ-որ տեղ, Աննետան պարզում է սառած ձեռքերը, որ բռնի և իր ջարդոտված մարմնին մոտեցնի նրա կենդանի պտուղը—սիրելի որդուն։

Այժմ նա երկատվել էր։ Չկար այլևս երկուսը մեկի մեջ, ինչպես առաջ։ Կար մի մասնիկ, որը կորվել էր նրանից և ապրում էր տարածության մեջ առանձին, ինչպես մոլորակի փոքրիկ արբանյակը, կար ինչ-որ մի նոր փոքրիկ մեծություն, որի հոգեբանական նշանակությունը վիթխարի է։ Եվ զարմանալի բան է, այդ նոր զույգի մեջ, որը ոտեղծվել էր մի էակի ճեղքման շնորհիվ, մեծը հենարան է փնտրում փոքրի մեջ ավելի հաճախ, քան փոքրը մեծի մեջ։ Փոքրիկ մանկան ճիչը իր անզորությամբ նրան ուժ էր հաղորդում։ Որքա՜ն է մեզ հարստացնում սիրելի էակը, երբ նա չի կարող ապրել առանց մեզ։ Իր կոշտացած պտուկներից, որոնք ագահորեն ծծում էր փոքրիկ ձագուկը, Աննետան երանությամբ որդու մարմնի մեջ էր լցնում կաթի հեղեղներն ու հույսերը, որոնք լցվել ու ճնշում էին նրա կուրծքը։

Եվ ահա սկսեց այդ vita nuova*-յի առաջին հուզումնալից ցիկլը—աշխարհի հայտնագործությունը։ Նա հին է, ինչպես աշխարհը, բայց դա նորից է վերապրում օրորոցի վրա խոնարհված ամեն մի մայր։ Անխոնջորեն արթուն մնալով իր քնած գեղեցիկ մանկան համար, Աննետան տրոփող սրտով հսկում էր, որ նա չարթնանա։ Մանկիկը շափյուղյա աչքեր ուներ, որոնք նման էին երկու մուգ մանուշակների և այնքան էին շողշողուն, որ Աննետան նրանց մեջ իրեն նայում էր, ինչպես հայելում։ Ի՞նչ էր տեսնում այդ մանկան հայացքը, անորոշ ու անհուն, ինչպես մեծ երկնային աչքը, որի մեջ անհայտ է, թե ինչ է թաքնված—դառարկությո՞ւն*

Թե խորություն անհուն, բայց որի վճիտ կապույտում ամփոփված է մի ամբողջ աշխարհ... Եվ ինչպիսի հանկարծական սովերներ են գցում այդ մաքուր հայելու վրա տառապանքների, անհայտ տենչերի, գաղտնի փոթորիկների թուխպերը, որոնք չգիտես, թե որտեղից են հայտնվում։ Ի՞նչ են դրանք, իմ անցյալի սովերնե՞րը թե քո ապագայի։ Միևնույն մեդալի շիտակ թե՞ հակառակ երեսը։ Մանկիկ իմ, դու—ես եմ անցյալում։ Իսկ ես—դու ես ապագայում։ Բայց ինչպիսին ես դու լինելու։ Եվ ի՞նչ եմ ես հիմա,— հարցնում էր Աննետան փոքրիկ սֆինքսի աչքերից արտացոլվող իր պատկերին։ Եվ ժամ առ ժամ հետևելով, թե ինչպես է մանկան գիտակցությունը դուրս լողում անդունդից, Աննետան, ինքն այդ չիմանալով, տեսնում էր այդ հոմունկուլոսի մեջ մարդկության ծագման նորից ու նորից կրկնվող պրոցեսը։

Մեկը մյուսի հետևից էր բացում իր լուսամուտները դեպի աշխարհ փոքրիկ Մարկը։ Նրա աղոտ հայացքի հարթ մակերեսի վրա արդեն սկսում էին առկայծել ավելի պարզ արտացոլվածքներ,— ինչպես թռչունների երամները, որոնք փնտրում են, թե որտեղ կարելի է իջնել։ Մի քանի շաբաթ հետո այդ կենդանի թփի վրա բացվեց առաջին ծաղիկը. ժպիտը։ Իսկ հետո սկսեցին ծլվլալ նրա ճյուղերի մեջ թառած թռչունները... Մոռացվա՜ծ էր առաջին օրերի ողբերգական մղձավանջը։ Մոռացված էր անհայտ աշխարհի հանդեպ ունեցած սարսափը, աղաղակը այն էակի, որին կոպտորեն պոկեցին մայրական մարմնից և տկլոր, տանջահար դուրս քաշեցին դեպի պայծառ լույսը... Փոքրիկ մարդուկը հանդարտվեց և տեր դառավ կյանքին։ Եվ այդ կյանքը նրան դուր էր գալիս։ Նա հետազոտում էր այն, շոշափում էր և ագահորեն փորձում բերանով, աչքերով, տոտիկներով, թաթիկներով։ Նա ուրախանում էր իր ձեռք բերածի համար և հիացմունքով զվարճանում այն ձայներով, որոնք հնչում էին իր ֆլեյտայից։ Եվս մի նոր հայտնագործություն. ձա՜յնը։ Նա հափշտակված լսում էր ինքն իրեն։ Ավելի մեծ բավականություն այդ երգեցողությունը պատճառում էր նրա մորը։ Աննետան արբենում էր դրանով։ Նա լսում էր մանկան թույլ ձայնը, որ նման էր առվակի թոթովանքի, այդ

ձայնից նրա սիրտը հալվում էր։ Նույնիսկ երբ ձայնը հասնում էր ականջ ծակող սուր ճիչերի, Աննետան ցանկագրգիռ երանություն էր զգում։

— Ճչա, ճչա՛, ավելի բարձր, սիրելիս։ Հայտնի՞ր քո իրավունքների մասին։

Եվ նա հայտնում էր իր մասին այնպիսի եռանդով, որը խրախուսանքի կարիք չէր զգում։ Բոլոր ձևերի ճիչերով նա արտահայտում էր իր ուրախությունը, զայրույթը և տարբեր տեսակի քմահաճույքները։ Աննետան որպես անփորձ մայր և անպետք դաստիարակ, միայն խանդաղատում էր և չէր կարողանում չհիթարկվել այդ բռնակալական պահանջներին։ Նա պատրաստ էր գիշերը տասն անգամ վեր կենալ, միայն թե երեխան լաց չլիներ։ Եվ նա թույլ էր տալիս այդ անկշտում տգրուկին ծծել իրեն առավոտից մինչև իրիկուն։ Դա օգուտ չէր տալիս նաև երեխային։ Իսկ իրեն առավել ևս —նա իրեն շատ վատ էր զգում։

Գարնանը, երբ տեսության գնաց քրոջը, Սիլվիան նկատեց, որ Աննետան նիհարել է, և դա նրան անհանգստացրեց։ Աննետան առաջվա նման թվում էր շատ երջանիկ, բայց նրա երջանկության մեջ ինչ-որ տենդագին բան էր զգացվում։ Ամեն մի փաղաքշական խոսքից նա արհատվում էր։ Խոստովանում էր, որ անքուն է մնում, որ ուրիշներից ծառայություն պահանջել չգիտե և գործնական դրժվարությունների առաջ անզեն է, դժվարություններ, որոնք հանդիպում են երեխային խնամելու և նրա առողջության մասին հոգալու ժամանակ։ Աննետան այդ ասում էր, ինծու ծիծաղելով իր թուլամտության վրա, բայց նրա տոնի մեջ արդեն չկար նախկին երջանիկ վստահություն։ Նրան զարմացրել էր այն հայտնագործությունը, որ ինքը ամենևին էլ այնքան ամրակազմ ու դիմացկուն չէ, ինչպես կարծում էր։ Առաջներում նա երբեք չէր հիվանդացել և դրա համար էլ չգիտեր իր ուժերի սահմանը, երևակայում էր, թե այդ ուժերը կարող է ծախսել առանց ետ նայելու։ Իսկ հիմա պարզվում էր, որ դրանց պաշարը մեծ չէ և չի կարելի անպատիժ անցնել սահմանը։ Այդ ի՞նչ փխրուն բան է մարդկային կյանքը։ Ուրիշ ժամանակ Աննետային այդ միտ-

քը չէր տանջի, բայց հիմա, երբ նրա կյանքը երկատվել էր, երբ այդ փխրուն կյանքից կախված էր մի ուրիշ շատ ավելի փխրուն կյանք... Տե՛ր աստված, Ի՞նչ կլինի, եթե ինքը մեռնի։ Աննքուն գիշերներին Աննետան նորից ու նորից վերադառնում էր այդ սարսափելի մտքին։ Նա ականջ էր դնում, թե ինչպես է քնում երեխան, և բավական է մի աննշան փոփոխություն որսար—շնչառության արագացում, տնքոց կամ րոպեական լռություն,— իսկույն սիրտը մարում էր։ Սիրտը սողոսկած տագնապը երկար էր քուն դնում այնտեղ։ Աննետան այլևս չգիտեր ինչ բան է գիշերային ժամերի սրբազան, անհոգ հանգիստը, երբ, հանգստանալով շարժումից ու մտքերից, մարմինը և հոգին երազում են անքուն, նման այն ջրային ծաղիկներին, որոնք մեղմորեն օրորվում են գիշերային լճակի մակերեսին։ Սիրտն ընդունակ է գնահատել հանգստի դրախտային երանությունը միայն այն բանից հետո, երբ կորցրել է այն։ Հետ այսու Աննետան զգույշ է, յուրաքանչյուր ակնթարթը նրան բերում է նոր տագնապներ ու կասկածանք։ Նույնիսկ այն քանի մեջ, որ թվում էր ամենահուսալին, նա սրտի դողով վտանգ էր զգում...

Սիլվիային դժվար էր խաբել։ Իր թուլությունների վրա ծիծաղող Աննետայի առնական ուրախության հետևում Սիլվիան տեսավ քրոջ ֆիզիկական տկարությունն ու այն թախիծը, որը կենդանին զգում է նախորդ դուրս։ Նա որոշեց, որ Աննետային հարկավոր է հեռանալ այստեղից և բնակություն հաստատել Փարիզից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող որևէ գյուղական տնակում։ Այն ժամանակ Սիլվիան կարող է այցելել նրան համարյա ամեն օր, և դրա հետ միասին Աննետայի վերադարձը խոսակցություններ չի առաջացնի։ Աննետան դեմ չէր վերադառնալ—բայց բացեիբաց—Փարիզ, իր տունը։ Նա ոչ մի առարկություն լսել չէր ուզում։ Իզուր էր Սիլվիան նրան ապացուցում, որ դա խելացնորություն է, որ նա հանգիստը կորցնելու վտանգի է ենթարկում։ Աննետան համառում էր։ Հպարտությունը նրան թույլ չէր տալիս հասարակական կարծիքի առաջ ունեցած սարսափի պատճառով թաքնվել մարդկանցից։ Բոլոր այն երջանիկ ժամանակը, քանի դեռ երեխային կրում էր իր մեջ,

Աննետան չէր մտածում, թե ինչ կասեն մարդիկ։ Նա ապրում էր իր երջանկության հետ առանձնացած— ուրիշ ոչ մի բանի համար տեղ չէր մնում։ Հիմա նրա երջանկությունը նույն չափով մեծ էր, բայց նա ուզում էր այդ մասին պատմել աշխարհին, նրա համար ծանր էր, որ ինքը դա պետք է թաքցնի։ Դա վիրավորում էր նրան։ Ինչպե՞ս թե՝ թաքցնել մարդկանցից, որպես ինչ-որ ամոթալի բան, իր գա՞նձը, իր հպարտությո՞ւնը։ Չէ որ դա նույնն է թե հրաժարվե՞լ նրանից...

«Հրաժարվե՞լ քեզանից, իմ լուսավոր արև։— Նա ջերմաջերմ համբուրեց որդուն։— Ես չպետք է գնայի։ Ես պետք է քո մասին հայտնեի բոլորին հենց առաջին իսկ օրը։ Ոչ, բավակա՞ն է տափկնոցի խաղալ։ Ես քեզ ցույց կտամ նրանց և կասեմ. «Նայեք, տեսեք որքա՞ն է գեղեցիկ։ Ինքներդ ասացեք, դուք, ուրիշ մայրեր,— չէ՞ որ այսպիսի տղա ձեզանից ոչ մեկը չունի»։

Աննետան վերադարձավ Փարիզ և մնաց այնտեղ։ Ռաուլ Ռիվիերի աղջիկը լավ էր հասկանում, որ այնքան էլ հեշտ չի լինելու հասարակությանն ստիպել հաշտվել նրա արարքի հետ։ Նա, ինչպես և հայրը, արհամարհում էր «բարձր աշխարհի» կարծիքը, բայց հորից չսովորեց ճարպկորեն շրջանցել բարձրաշխարհիկ կանոններն ու նախապաշարումները, ձևացնելով, որ ենթարկվում է դրանց։ Ոչ, նա մտադիր էր կռվել դրանց հետ և հաղթել։

Առաջին փորձը բավական հաջող էր։ Պառավ Հորաքույր Վիկտորինան Աննետայի բացակայության ժամանակ մնացել էր որպես տան պահապան—դա արդեն երկար տարիներ նրա պարտականությունն էր։ Փոքր-մոքր կնոջ վախսունն անց էր, բայց դեմքը թարմ գույն ուներ, այտերը ողորկ էին, առանց որևէ կնճիռի, երիզված պապիլյոտկաներով կիպ կպած խոպոպիկներով։ Հանգիստ, հեզ ու անշար, ծայր աստիճան վեհերոտ, նա կարողանում էր զերծ պահել իրեն այն ամենից, ինչը կարող էր խանգարել նրա անդորրը։ Աննետան մանկությունից սովոր էր հորաքրոջը տեսնել տնտեսության հոգսերով տարված։ Խեղճ պառավը ազատել էր

նրան տնային բոլոր հոգսերից, հետևում էր, որ տունը մաքուր լինի և հանգստավետ, հսկում էր խոհանոցը (նա ինքն էլ սիրում էր համեղ բաներ ուտել),— մի խոսքով, գտնվում էր նվիրված ծեր աղախնու վիճակում, որից չեն ամաչում, որովհետև նա մի տեսակ դարձել է տնային կահավորանքի առարկա, կարծես կահույքի պես մի բան։ Հորաքրոջ կարծիքի հետ հաշվի չէին նստում, ասենք նա իր կարծիքը չուներ էլ։ Եղբոր տանը ապրելու երեսուն տարիների ընթացքում Վիկտորինա Հորաքույրը կարող էր շատ տարօրինակ բաներ տեսնել ու լսել, բայց նա ոչինչ ոչ տեսել էր և ոչ էլ լսել։ Միայն զոռով կարելի էր նրան ստիպել տեսնելու այն, ինչը նա չէր ուզում նկատել, իսկ Ռաուլը հետու էր դրանից։ Բարեկամների նեղ շրջանակում Ռաուլը Վիկտորինա Հորաքրոջը անվանում էր իր ապարանքի խուլ ու համր պահապանը։ Ռաուլը բացեիբաց ծիծաղում էր նրա վրա, ծաղրում և ձեռ առնում, կոչում էր «հաստամարմին հիմար» և հաճախ լացացնում էր, իսկ հետո ամեն կերպ գլուխը յուղելով, շշմփոցով պաչում էր թշերը և թույլ տալիս, որ իրեն երես տան, ինչպես ծեր երեխային։ Վիկտորինան հիշում էր Ռաուլին որպես ոսկի սիրտ ունեցող մարդու, դեռ ավելին— որպես սրբի, մի բան, որը կարող էր գերազմանում ոչ քիչ զվարճություն պատճառել՝ Ռաուլ Ռիվիերին, եթե երկրային բերկրությունների այդ անկշտում սիրահարին կարող լինեի որևէ բան ուրախություն պատճառել նրա համար ատելի անդրշիրիմյան աշխարհում։

Վիկտորինա Հորաքույրը նույնքան բարձր կարծիք ուներ նաև եղբոր աղջկա մասին։ Աննետայի համար դժվար չէր ներշնչել հորաքրոջը այդպիսի կարծիք։ Դառնալով տան տիրուհին, Աննետան դարձավ նաև այն պաշտամունքի առարկան, որով այդ ծեր տնային կատուն շրջապատում էր նախկին տանտիրոջը։ Հարկավոր էր միայն չխորտակել նրա պատրանքները։ Եվ Աննետան շատ քաջ տվեց մինչև այդ քայլին դիմելը, նա երկար թաքցնում էր հորաքրոջից իր պատմությունը։ Փարիզից մեկնելը նա բացատրեց իր անառողջ վիճակով և ճանապարհորդելու ցանկությամբ։ Դա քիչ ճշմարտանման էր, բայց հորաքույրը կարծես հավատաց։

Նա թեև հետաքրքրվող կին էր, բայց վախենում էր այն նո-
րությունները, որոնք կարող էին նրան հուզմունք պատճա-
ռել։ Սակայն այլևս չէր կարելի նրան այդպես անտեղյակ
թողնել։ Եվ, երբ երեխան ծնվեց, Սիլվիան որոշեց այդ մա-
սին հայտնել հորաքրոջը։ Խեղճ պառավը քիչ էր մնացել
կաթվածահար լինի։ Նրա համար շատ դժվար էր հասկանալ,
թե ինչ կատարվեց,— չէ՞ որ նա երբեք ոչ մի նման բանի
չէր հանդիպել։ Նա եղբոր աղջկան հուսահատ նամակներ էր
գրում, լի մութ ակնարկներով և այնքան խառնափնթոր, որ
կարելի էր կարծել (այդպես հավատացնում էր Աննետան—
երիտասարդությունը անողոք՞մ է), թե դա հենց ինքը Վիկ-
տորինա հորաքույրն է մի քանի րոպե առաջ ազատվել։ Ան-
նետան ախփում էր նրան, ինչպես կարող էր։ Սիլվիան հա-
մոզված էր, որ ծեր դաման կլքի Աննետայի տունը։ Բայց
այդպիսի միտք ամենից քիչ կարող էր գալ Վիկտորինա հո-
րաքրոջ գլուխը։ Նրա հոգին անելանելի տոլորության մեջ
այս ու այն կողմ էր ընկել։ Նա բոլորովին անընդունակ էր
որևէ խորհուրդ տալու— նրան՝ իրեն էր հարկավոր մի խոր-
հուրդ ավող։ Վիկտորինա հորաքույրը կարողանում էր մի-
այն լալ և բողոքել։ Բայց քանի որ արցունքներով չես կարող
ապրել, իսկ ապրել այնուամենայնիվ պետք է, ապա վեր-
ջիվերջո Վիկտորինա հորաքույրը սկսեց Աննետային պատա-
հած դժբախտությանը նայել որպես երկնքից առաքված
փորձություն։ Նա արդեն սկսել էր այդ փորձությանն ընտե-
լանալ, մանավանդ որ Աննետայի բացակայությունը հեռաց-
նում էր այդ ցավալի իրադարձությունը։ Բայց ահա Աննե-
տան տեղեկացրեց նրան, որ վերադառնում է Փարիզ։

Տուն մտնելիս Աննետան հուզվում էր։ Կայարանում նրան
դիմավորեց միայն Սիլվիան։ Հորաքույրը չէր կարող այդ
քայլն անել։ Երբ նա սանդուղքով իջնելիս լսեց մուտքի դը-
ռան շիկոցը, արագ-արագ ետ դարձավ, վազեց իր սենյա-
կը և փակվեց այնտեղ։ Աննետան նրան գտավ արցունքների
մեջ ողողված։ Գրկելով Աննետային, նա անընդհատ կըր-
կրնում էր.

— Իմ խե՜ղճ աղջիկ... Ախր դա ինչպես... ինչպե՞ս պա-
տահեց...

Աննետան աշխատելով հուզմունքը թաքցնել, ասաց կեղծ վճռականությամբ, արագ և ուրախ.

— Հետո բոլորը կպատմեմ, ժամանակ շատ կա։ Իսկ հիմա գնանք ճաշելու։

Պառավը ենթարկվեց և գնաց ճաշասենյակ։ Նա շարունակում էր հեծկլտալ, իսկ Աննետան համոզում էր նրան.

— Դե լավ, լա՛վ, հորաքույր, սիրելիս, լաց մի լինի...

Հորաքույրը զուր էր փնտրում հիշողության մեջ այն ամենը, ինչ պատրաստվում էր ասել։ Նա նախօրոք պատրաստել էր բողոքների, խրատների, հանդիմանությունների, բացականչությունների մի բավական մեծ պաշար։ Բայց այդ ամբողջ պաշարից նա ոչինչ չէր կարողանում հիշել և միայն խոր հառաչանքներ էր արձակում։ Աննետան իսկույն ևեթ մանկանը յուշց տվեց նրան, որ երանելի քնի մեջ էր, փոքրիկ գլուխը ետ գցած, և այդ քնքուշ թմբլիկ էակին տեսնելուն պես հորաքույրը էքստազի մեջ ընկավ և ձեռքերը միացրեց իրար, ինչպես աղոթելիս. նրա՝ ծեր դայակի սիրտը նույն րոպեին ուխտեց հավատարմորեն ծառայել տան նոր գլխավորին։ Եվ այդ ժամից սկսած Վիկտորինա հորաքույրը, երիտասարդանալով, լծվեց իր փոքրիկ կուռքի կառքին։ Ժամանակ առ ժամանակ նա մտաբերում էր, որ փոքրիկն այդ, այնուամենայնիվ, խայտառակեց իբենց տունը, և նորից հուզմունք էր ապրում։ Բայց Աննետան, շարունակելով չինծու անհոգությամբ շաղակրատել, աչքի պոչով դիտում էր սիրելի պառավին և, նկատելով, որ կրկին ձգվեց նրա դեմքը, հարցնում էր.

— Հը, էլի ի՞նչ պատահեց։ Հանգստացի՛ր, վերջապես։

Հորաքույրը անկապ-անկապ բողոքներ էր թափում։

— Հա՛, հա՛,— ասում էր Աննետան, թփթփացնելով պառավի ձեռքերին։— Հա՛։ Բայց ասա, տեսնենք, ուզածդ ի՞նչ է։ Ուզում էիր, որ մենք զրկվե՞նք մեր թանկագին տղայից։

(Աննետան լավ գիտեր ինչ է անում, շողոմորեն ընդգծելով «մեր» բառը)։

Սնոտիապաշտ հորաքույրը սարսափով բողոքում էր.

— Ի՛նչ ասածդ, Աննետա, վե՛րջ տուր։ Դու քո գլխին

փորձանք կբերես... Ինչպե՞ս կարելի է այդպիսի բաներ ասել։

— Ուրեմն, դեմքդ մի՛ թթվեցնիր։ Քանի որ մեր տղան աշխարհ է եկել,— ի՞նչ է մնում անել։ Մնում է նրան սիրել և նրանով ուրախանալ, ուրիշ ոչինչ չի մնում։

Հորաքույրը կարող էր, իհարկե, հարցնել.

— «Այո, բայց ինչո՞ւ է հայտնվել»։

Սակայն նա այլևս սիրտ չէր անում ափսոսալ դրա համար։ Հասկանալի է, դա պահանջում էր բարոյականությունը, դա պահանջում էին հասարակությունը և կրոնը։ Ասենք, նրա պատվի և հանգստության համար էլ (թերևս, հատկապես հանգստության համար) շատ ավելի լավ կլիներ, եթե այդ երեխան գոյություն չունենար։ Ինչ-որ տեղ խոր խորքում, ուղղակի հոգու հատակին, իրար էր գալիս թաքուն մի ափսոսանք, որի մասին հորաքույրը նույնիսկ ինքն իրեն չէր խոստովանում։

«Տե՛ր աստված, ավելի լավ կլիներ այդ դժբախտ աղջիկը ինձ ոչ մի բան պատմած չլիներ»։

Այդքան հակասական մտքերն հաշտեցնելը անհնարին էր, և վերջիվերջո Վիկտորինա հորաքույրը որոշեց այդ մասին այլևս չմտածել։ Ննջարկվելով ծեր թխսի բնազդին, որն ամբողջ կյանքում ուրիշների ճառեր է ածեցրել, նա հպատակվեց հանգամանքներին։

Բայց Աննետան դրանից առանձնապես չուրախացավ։ Հաղթանակներ են լինում, որոնք ավելի շատ անախորժություններ են բերում, քան օգուտ։ Շատ շուտով հորաքրոջ միջոցով տուն թափանցեցին Աննետային հուզող մարդկային ասեկոսեներ։ Տիկին Վիկտորինան շաղակրատ էր, հետաքրքրվող և ագահորեն ականջ էր դնում այն ամենին, ինչ հարևանները խոսում էին իր եղբոր աղջկա մասին։ Նա արցունքն աչքերին վազելով տուն էր գալիս և բոլորը պատմում Աննետային։ Աննետան քնքշանքով հանդիմանում էր հորաքրոջը դրա համար, բայց հիմար բամբասանքներն այնուամենայնիվ դառնացնում էին նրան։ Եվ պատավը տուն էր գալիս, Աննետան ակամա դողով հարցնում էր իրեն.

«Տեսնես հիմա՞ ինչ է պատմելու»։

Նա հորաքրոջն արգելում էր իր հետ այդ մասին խոսել։ Բայց երբ Վիկտորինա հորաքույրը լռում էր, ավելի վատ էր ինում. նա Աննետայի հոգին հանում էր իր բազմանշանակ ակնարկներով ու թերասումներով, հառաչանքներով, դեմքի հուսաբեկ արտահայտություններով։ Եվ Աննետայի հոգում զժգոհություն էր կուտակվում այն թունոտ հասարակական կարծիքի դեմ, որի հետ նա փորձում էր հաշվի չնստել։

Եթե Աննետան ավելի խելամիտ լիներ, կխուսափեր այդ կարծիքի հետ ընդհարվելու բոլոր հնարավորություններից։ Բայց իրեն խելամիտ պահելու համար նա չափից ավելի կենդանի մարդ էր։ Մարդը խելամիտ է դառնում միայն իր անխելամիտ արարքի պատճառով այրվելուց հետո։ Այդպես է մարդկային բնավորությունը. արհամարհելով բարձրախավ հասարակության կարծիքը, Աննետան, այնուամենայնիվ, այրվում էր իմանալու ցանկությունից, թե ինչ է խոսվում իր հետևից։ Ամեն առավոտ նա դողում էր այն մտքից, թե հիմա օրը իրեն կբերի տհաճ բամբասանքների սրձագանքը, բայց այն օրերին, երբ այդպիսի սրձագանքներ իրեն չէին հասնում, նա պատրաստ էր ինքը վազել իմանալու դրանց մասին։ Ասենք, նրան ազատում էին այդ նեղությունից։ Հարազատներից—հորեղբոր տղաներից ու աղջիկներից, որոնց հետ նա միայն պաշտոնական բարեկամական հարաբերությունների մեջ էր,— անհանդուրժելի խրատական տոնով զայրագին նամակներ էին գալիս։ Դատավորների և ընտանեկան պատվի պաշտպանների դերով հանդես եկող նրանց ելույթները պետք է ավելի շուտ ծիծաղ պատճառեին, քան վրդովեին Աննետային, որը գիտեր այդ աբիստարխների[1] ամբողջ գաղտնիքները, քանի որ հայրը հաճույքով էր նրան իրազեկ դարձնում ընտանեկան խրոնիկայի քողարկված մանրամասներին։ Սակայն Աննետան չէր ծիծաղում։ Այդպիսի նամակ ստանալով, նա ճանկում էր գրիչը և արագ-արագ թունոտ պատասխան գրում, որը կատաղեցնում էր հարազատներին, նրանց տալով ավելորդ մի

1 Արիստարխ— ալեքսանդրյան բանասեր (2-րդ դ. մ. թ. ա.) Հոմերոսի և մյուս հույն հեղինակների հրատարակիչը և մեկնաբանը, որի անունը դարձել է հասարակ անուն։

չարժառիթ՝ իրեն դատապարտելու համար—և հիմա արդեն անողոքաբար։

Բարքերի այդ խստապահանջ ցենզորները կարող էին իրենց միջամտությունը բացատրել դոնե ազգակցական իրավունքներով։ Իհարկե, նրանք դա չարաշահում էին, բայց այդ իրավունքները համենայն դեպս օրինականացված են սովորույթով։ Իսկ ինչո՞ւ էին այդքան դաժան նրա նկատմամբ բոլորովին կողմնակի մարդիկ, որոնք ոչ մի վնաս չունեին այն բանից, որ նա ապրում է այնպես, ինչպես սիրտն ուզում է։ Մի անգամ փողոցում, հանդիպելով ինչ-որ բարձրաշխարհիկ հաճելի դամային, որի սալոնում ինքը առաջ լինում էր, Աննետան կանգ առավ, որպեսզի մի քանի սիրալիր խոսքեր փոխանակի։ Բայց դաման, հետաքրքրվող հայացքով ոտից գլուխ չափելով Աննետային, լսում էր նրան սառը անքաղաքավարությամբ, համարյա չէր պատասխանում և շուտով գնաց։ Մյուս ծանոթը, որին Աննետան նամակ էր գրել, որովհետև նրանից ինչ-որ բան պետք է իմանար, այդ նամակին չպատասխանեց։ Աննետան, այնուամենայնիվ, շարունակում էր այդ փորձը. նա դիմեց իր մոտ ընկերուհիներից մեկին, տարիքն առած մի դամայի, որին շատ հարգում էր, և նրան այցելելու թույլտվություն խնդրեց։ Այդ դաման միշտ շատ քնքուշ դգաշունքներ էր տածում դեպի Աննետան, բայց այս անգամ Աննետան նրանից մի խճճված նամակ ստացավ, որի մեջ դաման ափսոսանք էր հայտնում, թե ինքը չի կարող ընդունել նրան, քանի որ Փարիզից մեկնելու է... Բոլոր այդ խայթոցները սրում էին Աննետայի զգայնությունը։ Նա սկսեց վախենալ նոր վիրավորանքներից, բայց որքան էլ տարօրինակ լինի, Աննետայի չղերը ծվատող այդ սարսափը նրան հրում էր անախորժություններին ընդառաջ, ստիպում էր մարտահրավեր նետել մարդկանց։

Այդպես, օրինակի համար, ստացվեց Լյուսիլ Կորդիեի հետ։ Աննետան և նա վաղուցվա ծանոթներ էին, և այն շրջանակում, որտեղ երկուսն էլ միշտ լինում էին, Լյուսիլը բոլորից շատ դուր էր գալիս Աննետային։ Նրանց միջև առանձնահատուկ մտերմություն չկար, բայց միշտ սիրով հանդի-

պում էին իրար։ Ծվ ահա Աննետան հորաքրոջից իմացավ, որ Լյուսիլի քույրը նոր է ամուսնացել։ Լյուսիլը Աննետային այդ մասին չէր հայտնել, բայց Աննետան այնուամենայնիվ նրան շնորհավորական նամակ գրեց։ Լյուսիլը լուծյուն պահպանեց։ Պատճառը պարզ էր, իսկ Աննետան չգիտք է համառեր։ Բայց նա ինչ-որ տարօրինակ պահանջի պատճառով համառում էր, որպեսզի մի ավելորդ անգամ ևս հարցնի նրանից, ինչը շատ լավ գիտեր, և ցավ պատճառի իրենն։

Նա գնաց Լյուսիլի մոտ։ Հյուրասենյակից լսվում էր ձայների աղմուկ։ Աննետան, երբ արդեն ներս էր մտնում, հիշեց, որ այսօր Լյուսիլի մոտ ընդունելության օր է։ Բայց նահանջելն արդեն ուշ էր... Հյուրասրահում աշխույժ խոսակցություն էր գնում։ Այստեղ մոտ տասը մարդ կար, համարյա բոլորն էլ Աննետայի ծանոթներն էին։ Նրա հայտնվելուն պես բոլորն էլ լռեցին։ Միայն մի քանի վայրկյան։ Աննետան, հուզված, ինչպես մի մարդ, որը մարտի է նետվում, ժպտալով ներս մտավ և, առանց շուրջը նայելու, գնաց դեպի Լյուսիլը։ Վերջինս մի տեսակ շփոթված վեր կացավ և Աննետային ընդառաջ եկավ։ Լյուսիլը փոքրամարմին, նրբագեղ, շեկ մազերով մի կին էր, կկոցած աչքերի խորամանկ և խանդաղորով քնքուշ արտահայտությամբ, հաճելի, բայց ճմրթված դեմքով, որին փոքր-ինչ առաջ ցցված ատամները մկան մռութի նմանություն էին տալիս։ Լյուսիլը խելացի էր, ցույց էր տալիս, որ մարդկանց սիրում է և բուռն կերպով տարվում է գաղափարներով, իսկ իրականում խորապես անտարբեր էր և մարդկանց և գաղափարների նկատմամբ։ Զգուշավոր, այնքան էլ ոչ անկեղծ, բնավորությամբ թույլ, նա ուզում էր բոլորին դուր գալ, իսկ որ գլխավորն է—աշխատում էր բոլորի հետ էլ լեզու գտնել և ամեն ինչին հարմարվել։ Աննետայի վարքագիծը անձամբ նրան բոլորովին չէր վրդովում։ Իր հետաքրքրվող սրածայր փոքրիկ քթով Լյուսիլը նախօրոք զգում էր ամեն մի սկանդալ և զվարճանում էր դրանցով։ Այն, ինչ պատահել էր Աննետային, նրան պարզապես հիմար արկած էր թվում և միայն զվարճացնում, բայց նա հասկացավ էր հատում բարձր խավի կարծիքի հետ և

այդ պատճառով հիմա դժվարին դրության մեջ էր։ Երբ Աննետան նրան գրեց, որ վերադարձել է Փարիզ, Լյուսիլը մտածեց.

«Ինչպիսի՞ անախորժություն։ Հիմա ի՞նչ պատասխանեմ նրան»։

Նա չէր ուզում վշտացնել Աննետային, բայց չէր ուզում նաև բարձրախավ աշխարհում ռիսկի ենթարկել իր անունը։ Չիմանալով ինչ վճիռ կայացնի, նա պատասխանը մի օրից մյուսն էր գցում։ Պատրաստվում էր հանդիպել Աննետայի հետ— հիմա չէ, որոշ ժամանակ հետո («Հո դա շտապ չէր»), և այնպես, որ ոչ ոք չիմանա։ Դա չէր խանգարում հետևից ծաղրել Աննետային և, նրա մասին ուրիշների հետ խոսելիս, վրդովված առաքինության տեսք ընդունել։

Նրա հյուրասրահում Աննետայի հանկարծակի հայտնվելը («ոչ, դա արդեն չափն անցնո՜ւմ էր») հարկադրում էր Լյուսիլին որոշումն անմիջապես ընդունել։ Նա Աննետայի վրա շատ ավելի զայրանում էր այն բանի համար, որ վերջինս իր հետ այդպիսի զզվելի խաղ խաղաց, քան թե այն, որ Աննետան ապօրինի երեխա է ծնել։ («Թող երկուսը ծներ, խնդրեմ,— միայն թե ինձ հանգիստ թողնի»...)։

Լյուսիլի աչքերում մի պահ բռնկվեց չար կրակը, բայց նա սեղմեց Աննետայի պարզած ձեռքը և վերջինիս ժպիտին պատասխանեց մեղրածոր ժպիտով, որն այնքան ծանոթ էր Աննետային,— նրա գայթակղիչ քնքշությանը ոչ ոք չէր դիմանում։ Սակայն դա միայն առաջին րոպեին էր։ Լյուսիլի արագաշարժ աչքերը և լարած լսողությունը վայրկենապես որսացին շրջապատողների տրամադրության հեգնանքը։ Նրա դեմքը անմիջապես սառցային արտահայտություն ստացավ, և, քաղաքավարությունից Աննետային մի քանի խոսք ասելուց հետո, արհեստական աշխուժությամբ վերականգնեց ընդհատված զրույցը։ Մնացած բոլորը, կարծես լուռ պայմանավորվածությամբ, նույնպես սկսեցին խոսակցությունը։

Աննետան, որին չէին ներգրավում ընդհանուր խոսակցության մեջ, իրեն լքված զգաց։ Բայց անձնատուր չեղավ։ Նա գիտեր Լյուսիլի թուլակամությունը։ Եվ, կատարելապես զինված իր հպարտ ժպիտով, նստեց այն հյուրերի միջև,

որոնք նրան չտեսնելու էին տալիս՝ աշխուժորեն դատարկ ֆրազներ փոխանակելով, և սկսեց նայել իր շուրջը։ Հայացքով նրան հանդիպելիս, հյուրերն աչքերը թարթում էին և մի կողմ նայում։ Միայն դամաներից մեկն էր, որ չհասցրեց նրանից փախցնել իր աչքերը, որոնք կատաղի արտահայտությամբ ուղղված էին Աննետայի վրա։ Աննետան ճանաչեց Մարիա-Լուիզա դը Բոդրյուի՝ հարուստ նոտարի դստեր, գատական չինովնիկի տիկնոջ լայն կարմիր դեմքը, այն չինովնիկի, որի ընտանիքը շատ վաղուց Ռիվիերների հետ արտաքնապես բարեկամական հարաբերություններ էր պահպանում, բայց հոգու խորքում չէր սիրում նրանց։ Այդ հաղթանդամ տիկնոջ մեջ մարմնավորվել էին նրա դասակարգի՝ խոշոր բուրժուազիայի, ամենակայուն գծերը. կարգ ու կանոնի հանդեպ ունեցած սերը, ազնվությունը, հարցասիրության բացակայությունը, արտի և հատկապես մտքի չորությունը։ Բոլոր օրինականացված առաքինությունները. աներևոյթ հավատը—խիստ ձևական, զուտված բոլոր տեսակի կասկածներից ու մտքերից, կարծես այն փորոտիքից մաքրել էին մսագործի վաճառասեղանին,— և սեփականության կուլտը, բոլոր տեսակների սեփականության. իր ընտանիքի, իր ունեցվածքի, իր երկրի, իր կրոնի, իր բարոյականության, իր տրադիցիաների, իր հակակրությունների,— մի խոսքով, իր պասիվ և կոմպակտ «եսի», որ նման է արևը ծածկող ժայռաբեկորի։ Նրա կողքին տեղ չկա՞ Դիոգենի տակառի համար։ Բոլոր Բոդրյուների համար առանձնապես ատելի էր ամեն տեսակի անկախությունը—կրոնական, բարոյական, մտավոր, քաղաքական և հասարակական։ Անկախությունը նրանց մեջ առաջացնում էր օրգանական զզվանք, և այդ անկախության բոլոր ձևերի համար նրանք մի ընդհանուր անուն ունեին. «անարխիզմ», որը նրանք արտաբերում էին որպես հայհոյական խոսք։ Այդ «անարխիզմը» նրանք միշտ գտնում էին Ռիվիերների ընտանիքում։ Եվ Մարիա-Լուիզան, ինչպես և նրա բոլոր հարազատները, Աննետային վերաբերվում էր բնազդային թերահավատությամբ։ Նա չէր նեղրում Աննետային այն ազատությունը, որը նրան երիտասարդական տարիներին տվել էին իր դաստիարակները։ Գու-

ցե Մարիա-Լուիզայի Աննետայի մասին ունեցած աննպաստ կարծիքի մեջ նաև նախանձի նշույլ կար։ Բացեիբաց այդ կարծիքն արտահայտելու համար նրան խանգարում էր միայն մի բան. Ռիվիերների հարստությունը։ Հարստությունը մարդկանց մեջ հարգանք է առաջացնում, նա հասարակական կարգի ամենահուսալի նեցուկն է։ Բայց դա միայն այն դեպքում, եթե սասանված չէ հասարակական կարգի հիմքը— օրինական ընտանիքը։ Դրան հետևում են հասարակության սյուները, և ավելի լավ է նրանց չբարկացնել։ Աննետան ոտնձգություն արեց բարոյականության սրբազնագույն օրենքների դեմ, և պահապան շունը արթնացավ։ Այդ շունը դեռ լուռ էր—նա երբեք հասարակության մեջ չէր գոմռում, բայց աչքերն այդ մասին էին խոսում։ Մարիա-Լուիզա դը Բոդրյուի հայացքում Աննետան կատաղի արհամարհանք կարդաց։ Բայց նա հանգիստ նայեց բարոյականության հսատաֆուշ պահապանին և, բարևելով նրան գլխի բարեկամական շարժումով, հարկադրեց նրան պատասխանել։ Վրդովմունքից խեղդվելով, որ չի կարողանում ընդդիմանալ այդ բռնությանը, Մարիա-Լուիզան գլուխ տվեց, փոխհատուցելով իրեն նրանով, որ Աննետայի վրա նետեց շատ խիստ մի հայացք։ Աննետան դրան վերաբերվեց անտարբեր—նա արդեն Մարիա-Լուիզային չէր նայում։ Եվ աչքերը, արագ հայացք ձգելով հյուրասրահին, նորից կանգ առան Լյուսիլի վրա։

Առանց որևէ շփոթմունքի նա խառնվեց խոսակցությանը։ Ընդհատելով Լյուսիլին, ինչ-որ դիտողություն արեց և նրան հարկադրեց պատասխանել։ Զրուցողները ստիպված եղան նրան ընդունել իրենց շրջանակը։ Նրան ակամայից լսում էին—ընդ որում ոչ միայն քաղաքավարությունից դրդված, այլ հետաքրքրությամբ և ոչ առանց բավականության, որովհետև Աննետան սրամիտ էր։ Բայց լսում էին, առանց պատասխանելու, շինծու ցրվածությամբ, և հենց նույն րոպեին խոսք էին բացում ուրիշ բանի մասին։ Խոսակցությունը մարում էր, լոկ ժամանակ առ ժամանակ մի պահ բռնկվելով, ցատկելով մի բանից մյուսի վրա։ Շուտով Աննետան նկատեց, որ ինքը մենակ է շաղակրատում ընդհանուր լռության մեջ։ Նա լսում էր իր ձայնը, ինչպես կողմնակի մարդու

ձայն։ Աննետան իսկական կին էր, զգայուն, տպավորվող և հպարտ, և այդ տորթացուցիչ մանրամասնություններից ոչ մեկը դուրս չպրծավ նրանից։ Փոքր հասակից սովորելով հասկանալ սալոնների կեղծ լեզուն, ինչպես և նրանից օգտվելու եղանակը, Աննետան այդ դիտավորյալ անուշադրության, երկիմաստ ծաղրանքների և կեղծավոր քաղաքավարության տակ կռահում էր իրեն վիրավորելու ցանկությունը։ Եվ նա տանջվում էր, բայց ծիծաղում և շարունակում էր խոսակցությունը։ Իսկ շրջապատողները մտածում էին.

«Մի տես թե ի՜նչ ինքնավստահություն ունի այս աղջիկը»։

Լյուսիլը, որպեսզի գլուխն ազատի Աննետայից, օգտվեց դամաններից մեկի գնալու առիթից և նախասրահ դուրս եկավ՝ նրան ճանապարհ դնելու։ Աննետան մենակ մնաց մարդկանց այդ խմբի մեջ, որոնք հաստատորեն որոշել էին չնկատել նրան։ Ջցանկանալով երկարացնել այդ տանջանքը, նա արդեն պատրաստվում էր վեր կենալ և նույնպես գնալ։ Բայց այդ ժամանակ հյուրասրահի մյուս ծայրից նրան մոտեցավ Մարսել Ֆրանկը։ Նա եկել էր վաղուց, սակայն Աննետան այնպես էր կլանված իրեն համակած հուսահատությունը թաքցնելու ճիգերով, որ նրան չնկատեց։ Իսկ Մարսելը, ծաղրական կարեկցությամբ հետևելով նրան, զարմանում էր Աննետայի հանդգնության վրա և մտածում.

«Ինչի՞ համար է սրա խելքին փչել այստեղ գալ՝ այդ անամուսիններին գրգռելու։ Եվ՞ղ ֆանտազյոր։ Միծաղից կարելի է մեռնե՞լ...»։

Նա որոշեց, որ պետք է Աննետային փրկել։ Մոտեցավ, սիրալիր բարևեց։ Աննետայի աչքերը շնորհակալությամբ շողշողացին։ Իսկ նրանց շուրջը բոլորը լուռ էին, բոլորի դեմքերը ինքնամփոփ էին, լարված...

— Ա՜խ, մեծ ճանապարհորդուհի,— ասաց Մարսելը։— Վերջապես վերադարձաք։ Հը, սրտի ուզածի չափ նայեցի՞ք «միջերկրական ջրերի լազուրին»։

Մարսելն ուզում էր խոսակցությունը անվտանգ հունի մեջ դցել։ Բայց Աննետան (ո՞ր սատանան հրեց նրան։ Ինչ էր դա— հպարտությո՞ւն, անգիտակցական ճշմարտությո՞ւն թե՞ պարզապես անկեղծություն) ուրախ պատասխանեց.

— Արդեն մի քանի ամիս է, ինչ ես լազուրը տեսում եմ միայն իմ փոքրիկ մանկան աչքերում։

Ծաղրանքի թեթև քամին ալեկոծեց ամբողջ ներկա հասարակությանը։ Ոմանք քմծիծաղում էին, ոմանք՝ թաքուն իրար նայում։ Իսկ Մարիա-Լուիզա դը Բոդրյուն զայրույթով տեղից կանգնեց։ Նա ամբողջովին կարմրատակած, առաջ ցցելով փարթամ կուրծքը, որը մաղձոտ արհամարհանքից այնպիսի մոլեգնությամբ էր լեռնացել, որ լիֆը պայթում էր, աթոռը մի կողմ հրեց և, առանց որևէ մեկին հրաժեշտ տալու, դուրս եկավ։ Ջերմությունը հյուրասրահում իսկույն ևեթ իջավ մի քանի աստիճանով։ Աննետան Մարսել Ֆրանկի հետ մնաց իր անկյունում մենակ։ Մարսելը ծաղրական կարեկցանքով նայեց նրան և փնթփնթաց.

— Որքա՜ն եք դուք անզգույշ։

— Իսկ ինչո՞ւմն եք դուք տեսնում իմ անզգուշությունը, — հարցրեց Աննետան բարձր ու պարզորոշ։

Հայացքով նա կարծես ինչ-որ բան էր փնտրում իր ոտքերի տակ։ Մի րոպեից հետո նա հանգիստ ու անշտապ վեր կացավ և գնաց դեպի ելքը, սառը խոնարհումներով բոլորին հրաժեշտ տալով, որին պատասխանում էին նույնպես սառնորեն։

Փողոցում Աննետային տեսնողը, երբ նա գնում էր իր սահուն քայլվածքով, գլուխը բարձր պահած և ազնվակիրթ անխռով տեսքով, ոչ մի դեպքում չէր կռահի, թե ինչ փոթորիկ է մոլեգնում նրա վիրավոր սրտում։ Միայն տուն վերադառնալուց հետո, երբ նա փակվեց երեխայի հետ իր սենյակում, ազատություն տվեց աղի արցունքներին։ Այնուհետև, մանկանն ամուր սեղմելով կրծքին, հանդգնորեն սկսեց ծիծաղել։

Փարիզում քիչ ինտելիգենտ մարդիկ չկային, որոնք Աննետային հարգանքով կընդունեին իրենց շրջապատի մեջ,— հատկապես այն միջավայրում, որին ճարտարապետ Ռիվիերի աղջիկը պետք է որ լավ ճանաչեր. դերասանների միջավայրում, որոնք հետու էին բարձրաշխարհիկ հասարակու-

թյան ֆիլիստերությունից և չունեին նրա նախապաշարումները, թեև նրանց մեջ շատ ուժեղ է ընտանեկան տրադիցիաների ոգին և նույնիսկ ազատ միությունների մեջ են նրանք բուրժուական առաքինություններ մտցնում։ Բայց Աննետան մինչև հիմա քիչ հանդիպումներ էր ունեցել դերասանների կանանց հետ։ Աննետայի համար, նրա զգայծուծության և առողջ, հավասարակշռված խելքի դեպքում, խորթ էր ամեն տեսակի բոհեման և առանձնապես դուր չէին գալիս այդ դամանների շարժուձևերն ու խոսակցությունները, թեև գնահատում էր նրանց անվիճելի արժանիքները. արիությունը, անկեղծությունը, կյանքի կոփվածությունը։ Իսկ սովորական կյանքում, պետք է ճիշտ ասել, մարդկանց միջև եղած մտերմությունը խարխափում է ոչ այնքան հարգանքի, որքան միևնույն հակումների և սովորությունների վրա։ Ընդամին Ռաուլ Ռիվիերը վաղուց էր կորցրել իր նախկին ընկերներին։ Հենց որ հաջողությունը նրա առաջ բացեց հարըստության և պատիվների աշխարհը տանող դուռը, այդ անհագ ախորժակների տեր մարդը խզեց հարաբերությունները haud aurea mediocritas[1]-ի հետ։ Նա խելացի էր և այդ պատճառով աշխատանքի մարդկանց ընկերությունը ավելի բարձր էր գնահատում, քան Փարիզի սալոնների և կլուբների ընկերությունը, որի մասին նեղ շրջաններում խոսում էր անողոք հեգնանքով։ Այնուամենայնիվ նա հիմնավորվեց հենց այդ բարձրաշխարհիկ հասարակության մեջ, քանի որ այստեղ էր գտնվում ավելի առատ ձրի կերը։ Բայց և այնպես նա հնարը գտնում էր գաղտնի կերպով թափանցել ուրիշ, բավական այլազան մի հասարակության մեջ, որտեղ գոհացում էր տալիս հաճույքների նկատմամբ ունեցած իր կրքերին և բավարարում անսահմանափակ ազատության պահանջը, որը նրան պետք էր, քանի որ ինքը երկդիմի, իսկ երբեմն էլ եռադիմի կյանք էր վարում։ Այդ մասին ոչ ոք չգիտեր, իսկ աղջկանը հայտնի էր միայն նրա աշխարհիկ և գործարարական կյանքը։

Աննետայի ծանոթների շրջապատը կազմված էր գլխա-

[1] ոչ ոսկի միջակությունների (լատ.)

վորապես խոշոր բուրժուազիայի հարուստ և բավական ազնվակիրթ անդամներից, բուրժուազիա, որը որպես նոր իշխող դասակարգ, մեծ ճիգերի գնով ստեղծել էր իր համար վերջիվերջո տրադիցիաների ինչ-որ թույլ մի նմանակ և իշխանության մյուս ատրիբուտների հետ միասին գնել էր նաև լուսավորվածություն։ Բայց այդ լուսավորվածությունը հիշեցնում էր լուսամփոփի տակ գտնվող լամպի լույսի, և ամենից շատ բուրժուազիան վախենում էր չլինի թե հանկարծ տեղաշարժվի կամ լայնանա սեղանի վրայի լուսավորված շրջանակը, քանի որ ամենաաննշան փոփոխությունը կարող էր տատանել իր նկատմամբ ունեցած նրա վրստահությունը։ Իսկ Աննետան, բնազդորեն ձգտելով դեպի լույսը, այն փնտրում էր, որտեղ կարող էր, փնտրում էր իր համալսարանական պարապմունքներում, որոնք իր միջավայրում համարում էին օրիգինալություն։ Սակայն լսարաններից ու գրադարաններից եկող լույսը արհեստականորեն մեղմացված էր,— դրանք ոչ թե ուղիղ, այլ բեկբեկված շողեր էին։ Աննետան ձեռք էր բերել այնտեղ մտքի համարձակություն, բայց համարձակություն մաքուր վերացական, որը նույնիսկ նրա ամենաշնորհալի ուսանող ընկերների մեջ ապրում էր լիակատար պրակտիկ անճարակության և երկչոտության հետ՝ ռեալ իրականության հետ ընդհարվելու ժամանակ։ Մի վարագույր էլ կար, որը Աննետայի աչքերից փակում էր իր փոքրիկ աշխարհից դուրս գտնվող կյանքը. դա նրա հարստությունն էր։ Աննետայի կամքին հակառակ, այդ անջրպետը նրան անջատում էր մարդկային մեծ համայնքից։ Աննետան նույնիսկ չէր գիտակցում, թե ինչ աստիճան է ինքը անջատված աշխարհից։ Այդպիսին է հարստության հակառակ երեսը, դա արտոնյալների փարախ է, բայց և այնպես՝ փարախ, ցանկապատով շրջապատված արոտավայր։

Եվ բացի այդ, այժմ, երբ պետք էր դուրս գալ նրա միջից ազատություն, Աննետան, որ վաղուց էր նախատեսել այդպիսի հնարավորություն և մտածել նրա մասին առանց որևէ սարսափի, արդեն չէր ուզում դուրս գալ։ Դատապարտել նրան դրա համար կարող է միայն նա, ով մարդկանց

չի ներում տրամաբանության բացակայությունը։ Մարդը— իսկ կինը հատկապես—բաղկացած է ոչ ամբողջական կտորից, մանավանդ այն անցման շրջանում, երբ նորի խոռվահույզ պոռթկումներին և ծարավին խառնվում է սովորությունների արդեն դրանց կաթվածահարող պահպանողական ուժը։ Մի թափով չես կարող ազատվել քո միջավայրի նախապաշարումներից և պինդ արմատացած պահանջներից։ Դրան ընդունակ չեն նույնիսկ ամենաազատասեր հոգիները։ Ախտանշանները, կասկածները մարդու հոգին հանում են, նա ոչինչ զոհաբերել չի ուզում, ամեն ինչ ուզում է պահպանել։ Ազնիվ Աննետան չէր ուզում ստել, անկեղծորեն ծարավի էր սիրո և ազատության, և այնուամենայնիվ նա ախտոտում էր զրկվել նախկին կյանքի առավելություններից։ Նա պատրաստ էր կապերը խզել իր սոցիալական միջավայրի հետ, բայց չէր կարողանում հանդուրժել այն բանը, որ հասարակությունը ինքն է վտարում նրան։ Նա չէր հաշտվում լքյալի իր վիճակի հետ։ Նրա երիտասարդ հպարտությունը, որին կյանքը դեռ չէր հասցրել կոտրել, ծառս էր լինում այն մրտքից, որ պետք է ապաստան փնտրի ուրիշ միջավայրում, թեև շատ ավելի արժանի, բայց պակաս արտոնյալ և փայլուն։ Դա բարձրաշխարհիկ հասարակության աչքում նշանակում էր իրեն հաղթված համարել։ Նրան թվում էր ավելի հեշտ է մնալ միայնակ, քան լինել ապադասակարգայնացած։

Այդ, առաջին հայացքից, չնչին և դատարկ հոգսը զուրկ չէր հիմքերից։ Դասակարգային պայմանականությունների և հանդգնաբար դրանց դեմ ելած ապստամբողի միջև տեղի ունեցող պայքարում ամբողջ դասակարգը համախմբվում է անզգույշի դեմ, դուրս է շպրտում նրան, հարկադրում է փախչել և դարանամուտ է լինում նրա ամեն մի ոչ ճիշտ քայլին, աշխատելով այդպիսով արդարացնել նրա վտարումը։

Չէ՞ որ նույն ճշտությամբ գործում է նաև մայր բնությունը. հենց որ նրա արարածներից որևէ մեկը ցուցաբերում է թուլության նշաններ և դառնում անպաշտպան ու մաշելի որս, սարդերը իսկույն խճճում են նրան սարդոս-

տայնով։ Եվ դրանում անբնական ոչինչ չկա, չկա՞ ոչ մի գաղտնի նենգություն։ Այդպիսին է բնության օրենքը։ Նրա թագավորության մեջ երբեք որսորդությունը չի դադարում։ Եվ ամեն մեկն իր հերթին լինում է կամ որսորդ, կամ որս... Աննետան հիմա որս էր։

Որսորդները հայտնվեցին և սկսեցին գործել պարզասիրտ անկեղծությամբ։ Աննետայի մոտ հյուր եկավ նրա բարեկամը, Մարսել Ֆրանկը։

Նա տանը մենակ էր։ Երեխային Վիկտորինա հորաքույրը դուրս էր տարել սովորական զբոսանքի։ Աննետան, փոքրինչ հոգնած, հանգստանում էր իր սենյակում։ Նա ոչ ոքի չէր ուզում տեսնել, բայց երբ նրան հանձնեցին Մարսելի այցետոմսը, ուրախացավ և ընդունեց նրան։ Աննետան երախտապարտ էր Մարսելին, որ նա Լյուսիլի հյուրասրահում պաշտպանեց իրեն։ Ճիշտ է, պաշտպանեց զգուշորեն, չվարկաբեկելով իրեն, բայց Աննետան ավելին չէր էլ պահանջում։

Մարսելին նա ընդունեց առանց ծիսականությունների, ինչպես հին բարեկամի, թախտի վրա կիսապառկած, առավոտյան պենյուարը հագին։ Այն օրից ի վեր, ինչ նա մայր էր դառել, կորցրել էր կարգ ու կանոնի հանդեպ ունեցած այն սերը, իր հարդարանքի նկատմամբ այն հավաքվածությունն ու պահանջկոտությունը, որի համար Սիլվիան միշտ ձեռ էր առնում։ Մարսելը ամենևին չէր ափսոսում դրա համար։ Նա գտնում էր, որ Աննետան լավացել է. թարմ, հաճելի լցվածություն, քնքուշ գորովաթախծություն, երջանկությունից բարիացած աչքերի խոնավ շողշողանք։ Աննետան շաղակրատում էր նրա հետ բավականությամբ և անկաշկանդ,— նրան ուրախացնում էր, որ ինքը նորից է գտել խորաթափանց բարեկամին, որին մի ժամանակ հաղորդում էր իր բոլոր կասկածները։ Մարսելի մեջ Աննետային դուր էին գալիս նրա նուրբ վարվեցողությունը և աշխույժ միտքը, նա վստահում էր Մարսելին։ Ֆրանկը, ինչպես միշտ, կես խոսքից հասկանում էր նրան, հետը խոսում էր սրտագին, բայց Աննետան հենց սկզբից իր հանդեպ ունեցած վերա-

բերմունքի մեջ զգաց իրեն ապշեցնող մտերմավարության մի նոր նրբերանգ։

Նրանք վերհիշում էին իրենց վերջին հանդիպումը, որը տեղի էր ունեցել Աննետայի Բուրգունդիա՝ Բրիսսոների մոտ կատարելիք չարագուշակ ուղևորությունից առաջ, և Աննետան խոստովանեց, որ Մարսելն այն ժամանակ ճիշտ գուշակեց նրա ապագան։ Այդ ասելով, Աննետան նկատի ուներ միայն Ռոժեի հետ տեղի չունեցած ամուսնությունը, բայց հանկարծ կարմրեց այն մտքից, որ Մարսելը կարող է իրեն այլ կերպ հասկանալ և հոգու խորքում կծիծաղի իր վրա։ Իսկ Մարսելը խորամանկորեն ասաց.

— Դուք ինքներդ էլ դա գիտեք ինձանից ոչ վատ։

Եվ հանցակցի տեսքով սկսեց ձեռ առնել այդ ամբողջ պատմության ընթացքը։ Աննետան իրեն անհարմար վիճակում էր զգում, բայց աշխատում էր հեգնանքի դիմակի տակ թաքցնել այդ։

Իսկ Մարսելն ավելի՛ շատ թափ առավ.

— Այո, դուք այդ ինձանից լա՛վ գիտեք։ Մենք տղամարդիկս, պարզապես ծիծաղելի ենք, երբ երևակայում ենք, թե կանայք պետք է մեզանից սովորեն մեր գովելի իմաստությունը։ Մենք իսկույն խաբվում ենք, երբ նրանք շողում ձայնով, դուրեկան աչքները լայն բացած մեզ նայելով, երկչոտորեն հարցնում են, թե ինչ անեն իրենք։ Նրանք՝ իրենք այդ հիանալի գիտեն և պարզապես երես են տալիս մեր մոլուցքին. չէ՞ որ մենք շատ ենք սիրում ուսուցանել։ Մինչդեռ ոչ թե մենք կանանց, այլ կանա՛յք մեզ կարող են դաս տալ։ Երբ ես գուշակում էի, որ Բրիսսոյին չի հաջողվի ձեզ գցել իր ցանցը, ես ոչ մի կերպ չէի կարծում, որ դուք դուրս կսլրծնեք ցանցից այդքան փայլուն կերպով։ Դա ես անվանում եմ իսկական քաջություն։ Կեցցե՛ք։ Դա էր պակաս այդպես չլինեիք, եթե դուք որևէ բան վճռել եք... Ես գովում եմ, գովո՛ւմ եմ ձեր խիզախությունը։

Աննետան լսում էր նրան շփոթահար։ Տարօրինա՛կ է։ Նա համարձակվել է պաշտպանել իր իրավունքը՝ վարվելու համար այնպես, ինչպես վարվեց։ Դեռ վերջերս Լյուսիլի հյուրասրահում նա պատրաստ էր այդ իրավունքը պաշտպա-

նել ամբողջ աշխարհի առաջ։ Իսկ հիմա նրան տհա՜ճ էին թվում Մարսելի գովասանքները և այդ նոր տոնը։ Դա վիրավորում էր Աննետայի առաքինությունը և սեփական արժանապատվության զգացումը։ Նա ասաց.

— Մի՛ գովաբանեք ինձ։ Ես այնքան էլ համարձակ չեմ, ինչպես դուք եք կարծում. ես չէի ուզում այն, ինչ տեղի ունեցավ։ Մտքովս էլ չէի անցկացնում այդ...

Սակայն Աննետայի հպարտությունն ու խղճմտանքը չէին հաշտվում կեղծիքի հետ, և նա իսկույն ուղղեց իրեն.

— Ոչ, դա ճի՛շտ չէ։ Իհարկե, ես մտածում էի այդ մասին։ Բայց ոչ թե այն պատճառով, որ ուզում էի, այլ այն, որ դրանից վախենում էի։ Եվ մի բան մինչև հիմա ինձ հասկանալի չէ. ինչպե՞ս ես կարող էի ընդառաջ գնալ այն բանին, ինչից վախենում էի, ինչը ամենևին չէի ուզում։

— Է՛հ, դա բնական է,— ասաց Մարսելը։— Այն, ինչից մենք սարսափում ենք, միշտ ձգում է մեզ։ Եթե որևէ բանից վախենում ես, դա դեռ ամենևին էլ չի նշանակում, որ հոգուդ խորքում այդ չես ցանկանում։ Բայց համարձակվել անել մի բան, որը քեզ սարսափեցնում է, ամենևին էլ ամեն մարդ չէ, որ ընդունակ է դրան։ Իսկ դուք համարձակվեցիք։ Դուք չվախեցաք սխալ գործելուց։ Չի կարելի կյանքն անցկացնել առանց սխալներ թույլ տալու։ Չէ՞ որ սխալվել— նշանակում է ճանաչել։ Իսկ ճանաչելն անհրաժեշտ է... Ինձ այնուամենայնիվ թվում է, սիրելիս, որ, այդպիսի համարձակություն ցուցաբերելով, դուք պետք է ձեռնարկեիք որոշ նախազգուշական միջոցներ։ Ձեր պարտնյորը շատ մեղավոր է, որ ձեզ վրա այդպիսի բեռ է դցել։

Աննետան, որոշ չափով վիրավորված, առարկեց.

— Դա ինձ համար ամենևին էլ բեռ չէ։

Մարսելը, մտածելով, որ Աննետան մեծահոգությունից դրդված ուզում է Ռոժեին արդարացնել, ասաց.

— Դուք, ուրեմն, մինչև հիմա սիրո՞ւմ եք նրան։

— Ո՞ւմ,— հարցրեց Աննետան։

— Է՛հ, հիմա արդեն պա՛րզ է, որ այլևս չե՛ք սիրում,— ֆիծաղով նկատեց Մարսելը։

— Ես սիրում եմ իմ երեխային,— ասաց Աննետան։—

Մնացածը ինձ համար արդեն անցյալ է։ Իսկ անցյալի մասին երբեք չի կարելի ճիշտն իմանալ, եղե՞լ է, թե՞ չի եղել։ Մարդ դադարում է անցյալը հասկանալուց։ Դա տխուր բան է...

— Բայց դա նույնպես իր հաճույքն ունի,— հարեց Մարսելը։

— Ես այդ հաճույքը բոլորովին չեմ զգում։ Զգացումնեերից երանություն ստանալը իմ բնավորության մեջ չկա,— ասաց Աննետան։— Իսկ այ տղաս—դա արդեն ներկա է, և դա ամբողջ կյանքի ընթացքում։

— Այդ ներկան մեզ դուրս է մղում, և կգա մի օր, երբ դուք ձեր հերթին նրա համար անցյալ կդառնաք։

— Ի՞նչ կարող ես անել։ Ի միջի այլոց ասեմ, ես ուրախություն եմ զգում նույնիսկ այն բանից, որ նրա փոքրիկ տոտիկները սրտում են ինձ։

Մարսելն սկսեց ծիծաղել Աննետայի՝ որդու նկատմամբ ունեցած բուռն սիրո վրա։ Իսկ Աննետան ասաց.

— Դուք ինչպե՞ս կարող եք ինձ հասկանալ։ Չէ՞ որ դուք չեք տեսել իմ Մարկին—դա իսկական հրաշք է։ Ասենք, եթե տեսնեիք էլ, չէիք կարողանա գնահատել նրան։ Դուք պիտանի եք միայն նկարների, քանդակագործության, ամեն տեսակի անօգուտ խաղալիքների մասին կարծիք հայտնելու համար։ Իսկ աշխարհի միակ հրաշքը—երեխայի փոքրիկ մարմինը—դուք ընդունակ չեք մինչև վերջը տեսնել՝ ինչպես պետք է։ Միառ էլ չունի ձեզ այդ նկարագրել...

Բայց նա այնուամենայնիվ սկսեց նկարագրել—մանրամասն, սիրով։ Աննետան ինքն էլ էր ծիծաղում իր հիացական, կրակոտ չափազանցություննների վրա, բայց ոչինչ իրեն անել չէր կարող։ Նրան սթափեցրեց Միայն Մարսելի ներողամտորեն ծաղրական հայացքը։

— Ես ձեզ ձանձրացրի... Ներեցե՛ք... Դա ձեզ հասկանալի՞ չէ։

Ոչ, Մարսելը հասկանում էր, Մարսելն ընդունակ էր ամեն ինչ հասկանալու։ Ինչ կա որ, ամեն մարդ իրենն է գովում։ Ճաշակի մասին չեն վիճում...

— Այսպես, ուրեմն, եկեք հանրագումարի բերենք,—

ասաց Մարսելը։— Դուք երեխա եք ծնել, ինչպես ասում են, թփի տակ, ծնել եք և, հետևաբար, դուրս եք եկել սահմանված կարգ ու կանոնի և օրինական ամուսնության դեմ։ Ընդորում դուք ամենևին չեք զղջում և մարտահրավեր եք նետում հասարակության բոլոր հիմքերին։

— Ո՞ր հիմքերին,— հարցրեց Աննետան։— Ես ոչ ոքի և ոչ մի բանի չեմ կպչում։

— Ինչպե՞ս։ Իսկ հասարակության կարծի՞քը, իսկ տրադիցիա՞ն, իսկ Նապոլեոնի կոդե՞քսը։

— Ես ուրիշների կարծիքի հետ գործ չունեմ։

— Ահա հենց դա էլ ամենահանդուգն մարտահրավերն է, հենց դա է որ մարդիկ երբեք չե՞ն ներում... Էհ, լավ, թող այդպես լինի։ Ամեն ինչ խզված է, դուք հեռացել եք ձեր կլանից։ Իսկ հետո՞ ինչ։ Դուք ի՞նչ եք մտադիր անելու հիմա։

— Նույնը, ինչ անում էի մինչև հիմա։

Մարսելը սկեպտիկորեն նայեց նրան։

— Իսկ ի՞նչ է։ Դուք կարծում եք, որ ես չե՞մ կարող առաջվա պես ապրել։

— Ջարժի՜... Եվ բացի այդ...

Մարսելն ապացույցի փոխարեն նրան հիշեցրեց Լյուսիլի մոտ կատարած այցելությունը. հազիվ Աննետան կարողանա հույս դնել, թե բարձրաշխարհիկ հասարակության մեջ կզբաղեցնի նախկին տեղը։ Աննետան ինքն էլ էր այդ հասկանում, դա նրան բացատրելու կարիք չկար։ Լինելով խիստ խոցված, նա ոչ մի ցանկություն չուներ նոր փորձեր անելու։ Բայց նրան զարմացնում էր, որ Մարսելն այդքան համառորեն դա ընդգծում է։ Սովորաբար նա լինում էր ավելի տակտով։ Աննետան ասաց.

— Վերջին հաշվով ինձ համար հիմա միևնույն է—ես երեխա ունեմ։

— Բայց դուք հո չե՞ք կարող ձեր կյանքը սահմանափակել երեխայի դաստիարակությամբ։

— Իմ կարծիքով, դա նշանակում է ոչ թե սահմանափակել, այլ ավելի լայնացնել, հարստացնել։ Որդուս մեջ ես մի ամբողջ աշխարհ եմ տեսնում, աշխարհ, որը պետք է հասունանա, և պետք է հասունանամ նաև ես նրա հետ։

Մարսելը մեծ ազարտով, բայց և ոչ պակաս հեգնանքով սկսեց Աննետային ապացուցել, որ այդ փոքրիկ աշխարհը չի կարող գոհացնել այնպիսի ազահ և պահանջկոտ բնավորության, ինչպիսին Աննետայինն է։ Աննետան հոնքերը կիտած, լսում էր նրան, սրտում զգալով կսկծացող մի ցավ, և մտովի վրդովված բողոքում էր.

«Ո՛չ, ճի՛շտ չէ»։

Այնուամենայնիվ, Աննետան չէր կարողանում ձեռ քաշել որոշ անհանգստությունից. նա հիշում էր, որ Մարսելը մի անգամ արդեն իրենից հեռացել է գտնվել։ Բայց ինչո՞ւ է նա այդքան ճիգ ու ջանք թափում՝ Աննետային համոզելու համար։ Հանուն ինչի՞ է նա այդպես կաշվից դուրս գալիս, ապացուցելով, որ Աննետային հարկավոր է օգտվել ձեռք բերած ազատությունից և չվախենալ հասարակությունից դուրս գտնվող կյանքից (Մարսելը դա կոչում էր «բուրժուական պայմանականություններից վեր գտնվել»)։

Աննետայի մեջ ապրում էին երկու կամ նույնիսկ երեք Աննետա, և սովորաբար խոսում էր մեկը, իսկ մյուսները լսում էին։ Բայց այդ րոպեին երկուսը միանգամից սկսեցին խոսել. մեկը խանդավառ էր և սենտիմենտալ, որ հեշտությամբ ենթարկվում էր խաբուսիկ տպավորություններին, մյուսը՝ մարդկային սրտի գաղտնի զսպանակների ծաղրասեր և լուրջ դիտորդ էր։ Այդ երկրորդ Աննետան սուր աչքեր ուներ, նա Մարսելին կատարելապես ճանաչում էր։ Դերերը փոխվեցին։ Առաջ Մարսելը կարդում էր Աննետայի գաղտնի մտքերը։ Հիմա... (Այդ երբվանի՞ց արդյոք։ Երբվանի՛ց. Աննետայի հետ տեղի ունեցած «մետամորֆոզից» հետո) հիմա նա՝ Աննետան, ձեռք է բերել ուրիշ մարդկանց գաղտնի մղումները կռահելու ունակություն։ Դրանց թարմությունը (ճիշտն ասած, ոչ միշտ միատեսակ հետաքրքիր) զբաղեցնում էր Աննետային և շեղում նրա ուշադրությունը սեփական հոգսերից։

Աննետան պառկել էր բազկաթոռի մեջ, ձեռքերը գլխատակը դրած, և նայում էր առաստաղին, բայց միևնույն ժամանակ կիսակախ թարթիչների տակից աչքի պոչով հետևում էր հեռաորություն անող Մարսելին։ Աննետան նախ-

օրոք գիտեր այն ամենը, ինչ Մարսելն ասելու էր, գիտեր, հիմա ինչ տեղի կունենա, բայց նրան չէր խանգարում մի քիչ ծիծաղելի հետաքրքրության պատճառով, որի համար իրեն հանդիմանում էր։

(«Բայց Մարսելն ինքը նոր ասաց, որ ամեն ինչ պետք է տեսնել և ճանաչել։ Այո, ճանաչել... ուսումնասիրել...»)։

Եվ Աննետան ուսումնասիրում էր իր բարեկամին...

(«Օ, ես նրան հիանալի՜ հասկանում եմ... Աննետան ընկավ, ինչպես պտուղը՝ ծառից, և Մարսելը մտածում է, որ վատ չի լինի Աննետային վերցնել ընկած տեղից։ Մարսելը հենց դրա համար է կամացուկ թափ տալիս ծառը, որպեսզի պտուղը որքան կարելի է շուտ պոկ գա և ցած ընկնի։ Նա ուզում է օգտվել իմ մոլորությունից... Մինչդեռ նա ինձ սիրո՜ւմ էր... Այո, սիրում էր... Ա՜խ թե պտուղ են այդ տղամարդիկ... ինչքան մեղմաձա՜յն է դանդռնում... Արդեն քնքշանում է... Իսկ հիմա նա... Զգուշացիր, Աննետա։ Գրազ եմ գալիս, որ հիմա կսկսի...»)։

Աննետան հանկարծ շատ մոտիկից տեսավ իր վրա խոնարհված Մարսելի խաբուսիկ մորուքը, շրթունքները, որ պատրաստ էին համբուրելու... Աննետան որոշեց նրան ազատել ստորացումից։ Եվ, ճիշտ ժամանակին տեղից ելնելով, ձեռքերը դրեց Մարսելի ուսերին և թեթևակի նա հրեց նրան իրենից, ասելով.

— Մնաք բարո՜վ, բարեկամս։

Մարսելը նայեց Աննետայի աչքերին, որոնք խորաթափանց և գաղտնի խորամանկությամբ ուսումնասիրում էին իր դեմքը, և ժպտաց։ Մարսելը հիասթափված էր։ Բայց դա ազնիվ պայքար էր։ Մարսելը իրենից չէր թաքցնում, որ հենց այս րոպեին իրեն ամենայն սառնությամբ մերժեցին։ Եվ այնուամենայնիվ նա համոզված էր, որ Աննետան իր նկատմամբ անտարբեր չէ։ Արի ու դրանից որևէ բա՜ն հասկացիր։ Այդ տարօրինակ աղջիկը նրանից դուրս էր պրծնում։

Մարսելն այլևս չէր գալիս, Աննետան նույնպես չէր կանչում նրան։ Նրանք մնում էին բարեկամներ, բայց զայրանում էին մեկը մյուսի վրա։ Հենց Մարսելի նկատմամբ անտարբեր չի-

նելու պատճառով էր, որ Աննետային այդպես վիրավորեց այն, ինչ ինքը կարդաց Մարսելի մտքերում։ Աննետան չվիրավորվեց. դա սովորական պատմություն է, նույնիսկ չափազանց սովորական... Ոչ, Աննետան չէր նեղացել Մարսելից։ Բայց նա չէր կարողանում մոռանալ... Լինում է, որ բանականությունը ներում է, իսկ սիրտը ի վիճակի չէ համաձայնվել դրա հետ... Գուցե Աննետայի գաղտնի վրդովմունքը մասնավորապես բացատրվում էր նրանով, որ Մարսելի ազատ վարվելակերպը նրա հետ՝ Աննետային ստիպեց ավելի սուր զգալ իր դրության փոփոխությունը, քան Լյուսիլի սալոնում տեղի ունեցած ոչ սիրալիր ընդունելությունը։ Աննետան տեսավ, որ այլևս չի կարող հույս դնել հարդանքի նշանների վրա, որոնք հասարակությունը ցույց է տալիս իր այն անդամներին, ովքեր խոնարհաբար պահպանում են պայմանականությունները և արտաքին պատշաճությունը։ Սրանից հետո նա զրկված է պաշտպանությունից։ Նա ստիպված է լինելու ինքն իրեն պաշտպանել։

Աննետան ոչ ոքի չէր ընդունում։ Նա վախենում էր Սիլվիային պատմել իր ունեցած անախորժությունների մասին. չէ՞ որ Սիլվիան դա կանխագուշակում էր և հիմա կսկսեր հրճվել։ Աննետան ամեն ինչ գաղտնի էր պահում և, առանձնանալով բոլորից, որոշեց ապրել միայն երեխայի համար։

Երբ փոքրիկ Մարկը երեկոյան դեմ, Մարսելի այցելությունից հետո, զբոսանքից վերադարձավ, Աննետան նրան դիմավորեց մոլեգին ցնծությամբ։ Մորը տեսնելով, փոքրիկը ժպտալով, ծռվեց դեպի նրա կողմը և սկսեց բոլոր չորս թաթիկներով թափահարել։ Իսկ Աննետան նետվեց երեխայի վրա, ինչպես սոված գայլը՝ որսի, ծածկեց նրան համբույրներով, ձևացնելով, թե ատամներով կտորներ է կծում ու պոկում նրա մարմնից։ Բերանն էր առնում նրա տոտիկները և, շորերը հանելով, շրթունքներով նրա ամբողջ մարմինը վերից վար խտուտ էր ածում...

— Հա՜մ։ Հիմա քեզ կուտե՜մ... Եվ այն հիմարը համարձակվում էր ինձ հավատացնել, որ դու ինձ համար բավակա՜ն չես,— բացականչում էր Աննետան, կարծես երեխային վկա կոչելով։— Քեզ ինչպե՞ս է դուր գալիս այդպիսի անպատկառու-

թյունը... Այդ դո՞ւ չես ինձ համար բավական, դո՛ւ, իմ տերը, իմ փոքրիկ աստվա՛ծը... Դեհ, ասա, որ դու իմ աստվածուհյունն ես... Իսկ ես, իսկ ե՛ս ինչ եմ այն ժամանակ։ Աստծո մա՛յրը... Ամբողջ աշխարհը մերն է։ Մեզ համար ա՛մեն ինչ մատչելի է, ինչ երկուսով կարելի է անել... Մենք կարող ենք ամեն ինչ տեսնել, ամեն ինչ ունենալ, ամեն ինչ փորձել, համտեսել, ամեն ինչ արարել...

Նրանք իսկապես էլ արարում էին ամեն ինչ, —մի՞թե հայտնագործելը և արարելը միևնույն բանը չէ։ Մեր փառավոր ֆրանսերեն լեզվով «գտնել» նշանակում է «հնարել»։ Մարդիկ գտնում են այն, ինչ հնարում են, և հայտնագործում են այն, ինչ ստեղծում են, ինչի մասին երազում են, ինչ բռնում են երազանքների գետից։ Մոր և երեխայի համար սկսել էր մեծ հայտնագործությունների դարաշրջանը։ Մանկան առաջին խոսքերը, շրջապատող աշխարհը հետազոտելու նրա փորձերը, աշխարհ, որ նա կարծես թաթիկներով ու տոտիկներով էր չափում... Յուրաքանչյուր առավոտ Աննետան և նրա որդին գնում էին այդ աշխարհը նվաճելու։ Եվ Աննետան երանություն էր զգում ոչ ավելի պակաս, գուցե և ավելի շատ, քան երեխան։ Նա կարծես նորից էր վերապրում իր մանկությունը, բայց հիմա արդեն լրիվ գիտակցությամբ, ուրեմն, նշանակում է, նաև լրիվ բերկրությամբ։ Քիչ չէ՛ր ուրախանում և նրա տղան։ Նա գեղեցիկ երեխա էր, գնդիկ, պինդ, մի տեսակ դուրեկան համով վարդագույն խոզուկ։ (Սիլվիան ասում էր. «ուզում ես հենց հիմա շամփուրին խրես, էլ ի՞նչ սպասել»)։ Նրա ճկուն և թմբլիկ մարմնում ղգացվում էր լարված էներգիայի առատություն, ինչպես ռետինե գնդակի մեջ, որը ուր որ է կսկսի ցատկոտել։ Յուրաքանչյուր նոր հպումը կյանքի հետ երեխային փոթորկալից ցնծություն էր պատճառում։ Երևակայության անսահման ուժը, որով օժտված է երեխան, հարստացնում էր նրա հայտնագործությունները, և խնդությունը անլուրելի զրնգում էր նրա մեջ։ Աննետան ոչ մի բանում նրան չէր զիջում, և կարելի էր կարծել, թե նրանց միջև մրցություն է տեղի ունենում— ով կարող է ավելի շատ ուրախանալ և ավելի շատ ազմուկ բարձրացնել։ Սիլվիան անվանում է Աննետային խե-

լագար, բայց նա ինքն էլ երբեք Աննետայի տեղը լիներ, իրեն կպահեր ճիշտ նույն ձևով։ Անդադրուն քաշկռտոցից հետո վրա էին հասնում կատարյալ հանգստի և երանելի ուժասպառության ժամերը։ Փոքրիկը, վազվռտուքից հոգնած, իսկույն քաղցը-քաղցը քնում էր։ Աննետան նույնպես խոնջությունից ոտքի վրա չէր կարողանում կանգնել, բայց կովում էր ներհի գեմ, որպեսզի որքան կարելի է երկար հիանա քնած երեխայով։ Նա իր մեջ ճնշում էր քնքշության բռնկումները, և սերը նրա, ինչպես մոմը, որին ձեռքով ծածկում են, որպեսզի քնածին չարթնացնի, այրվում էր լուռ և երկինք բարձրացող երկար բոցով։ Նա աղոթում էր, ինչպես մի ժամանակ կույս Մարիամը մսուրի մոտ... Նա երկրպագում էր իր որդուն...

Դրանք հրաշալի, խնդությամբ լուսավորված ամիսներ էին։ Բայց արդեն ոչ այնպես պայծառ, ինչպես անցյալ տարի։ Ոչ այնպես անամպ։ Աննետայի երջանկության մեջ ինչ-որ մի չափազանցորեն հիացական ու անհանգիստ բան կար։

Այնպիսի ուժեղ և առողջ անհատականություն, ինչպիսին Աննետան է, պետք է ստեղծագործեր, մշտապես ստեղծագործեր, դրա մեջ դնելով հոգու և մարմնի բոլոր ուժերը։ Ստեղծագործեր կամ գոնե իր մեջ կրեր ապագա ստեղծագործություննեերը։ Դա անհաղթահարելի պահանջ է, և այդպիսի մարդիկ երջանկություն են գտնում միայն այդ պահանջի հագեցման մեջ։ Ստեղծագործության ամեն մի շրջան ունի իր սահմանը, իր թռիչքի և դրանից հետո անխուսափելիորեն վրա հասնող ցածրացման գիծը։ Աննետան արդեն անցել է այդ կորագծի բարձրագույն կետով։ Սակայն մոր ստեղծագործական բրռնկումը շարունակվում է երեխայի ծնունդից հետո դեռ բավական երկար։ Սնուցումը շարունակում է մոր արյան անցման պրոցեսը երեխայի արյան մեջ, և անտեսանելի կապերը իրար են միացնում երկու մարմինները։ Երեխայի ստեղծագործական ուժերի լիակատարությունը լրացնում է մոր հոգում տեղի ունեցող այդ ուժերի անկումը։ Սաղրացող գետը ձգտում է իր մեջ առնել ափից դուրս հորդող առվի ջրերը։ Նա փոթորկվում է, խառնվելով առվին, բայց առուն շարունակում է իր ընթացքը, անցնում է գետից առաջ, իսկ գետը

մնում է հետևում։ Աննետայի երեխան արդեն հետևանում էր նրանից, և Աննետան նրա հետևից հագիվ էր հասնում։

Դեռ երեխայի լեզուն ամբողջական ֆրազը չէր հաղթահարում, իսկ միտքը արդեն իր գաղտնարաններն ուներ, իր արգելված արկղները, և նրանց բանալին երեխան թաքցնում էր բոլորից։ Աստվա՞ծ գիտե, թե նա ինչ էր այնտեղ թաքցնում։ Ըստ երևույթին, մարդկանց մասին իր դատողությունները, մտքի պատառիկները, կերպարների, զգացումների, սիրելի բառերի անկանոն կուտակումը։ Նա դեռևս չգիտեր, ի՛նչ են նշանակում այդ բառերը, բայց այդ բառերի ձայնը իրեն դուր էր գալիս, և նա կրկնում էր դրանք իր երգեցիկ մենախոսություններում, որոնք ոչ սկիզբ ունեին, ոչ շարունակություն, ոչ վերջ։ Նա հստակ գիտակցություն ուներ, որ ինքը ինչ-որ բան թաքցնում է, թեև ինքը, գուցեև, դեռևս չգիտեր էլ, թե ինչ։ Եվ որքան ավելի շատ էին շրջապատողները ձգտում իմանալ, ինչ է նա մտածում, այնքան ավելի շատ նա խորամանկում էր, ճգնելով, որ դա ոչ ոք չիմանա։ Նրան նույնիսկ բավականություն էր պատճառում բոլորին մոլորության մեջ գցել. նրա փոքրիկ լեզուն, նույնքան անզոր, որքան և թաթիկները, բառերը դեռ խառնում էր, իսկ նա արդեն փորձ էր անում ստել, թըլըսորել մեծերին։ Չէ որ այնքա՜ն հաճելի է և քեզ և ուրիշներին քո իրավունքները ապացուցել, ձեռ առնել նրանց, ովքեր ուզում են ներս մտնել այն աշխարհը, որը միայն քեզ է պատկանում։ Այդ կենդանի փոքրիկ դունդը, դեռ նոր միայն աշխարհ գալով, արդեն անսխալ հոտառությամբ հասկանում էր, ինչ է նշանակում «իմը» և «քոնը». «Ես լավ թութուն ունեմ, բայց քեզ չեմ տա»։ Նրա ունեցած պաշարը ընդամենը մտքի պատառիկներ էին, բայց նա արդեն պատեր էր կանգնեցնում, որպեսզի դրանք թաքցնի մոր աչքերից։ Աննետան, բոլոր մայրերի նման անհեռատես, հպարտ էր նրանով, որ փոքրիկը այդքան հաստատորեն կարողանում է «չէ» ասել, որ նրա մեջ այդքան վաղ դրսևորվում է ինքնուրույն անհատը։ Աննետան կարևորությամբ հայտարարում էր.

— Նա երկաթյա կա՜մք ունի։

Եվ երևակայում էր, որ այդ երկաթը ինքն է կոփել։ Բայց ո՞ւմ դեմ։

Ամենից առաջ հենց իր դեմ, քանի որ այդ պատլիկ անձնավորության համար Աննետան ոչ թե «ես էր», այլ օտար աշխարհ,— ճիշտ է, կենդանի, ջերմ, փափուկ և կաթով լցված աշխարհ, որն օգտակար էր, որտեղ մարդ ուզում էր իշխել։ Բայց, այնուամենայնիվ, արտաքին աշխարհ։ «Այս աշխարհը—ես չեմ, բայց նա ինձ է պատկանում։ Իսկ ես, ես ոչ մի չափով չեմ պատկանում նրան...»։

Ոչ, նա չէր պատկանում Աննետային։ Եվ Աննետան արդեն այդ սկսել էր զգալ. պատլիկը ցանկանում էր պատկանել միայն ինքն իրեն։ Որդին զգում էր մոր կարիքը, բայց մայրը նույնպես զգում էր որդու կարիքը,—փոքրիկին դա հուշում էր բնազդը։ Դուցե էգոցենտրիզմով ամրացված այդ բնազդը որդուն ասում էր, որ մայրը իր կարիքն զգում է անհամեմատ ավելի շատ, քան որդին մոր կարիքը, դա նշանակում է, որդին իրավունք ունի չարաշահելու այդ։ Եվ դա իսկապես էլ ճի՛շտ էր։ Որդին մորը շատ ավելի էր պետք, քան մայրը որդուն...

«Է՛հ, ինչ կա որ, արդարացի է դա թե ոչ,— շահագործի՛ր լինձ, փոքրիկ հրեշ։ Միևնույն է, ինչ էլ ուզում ես արա, դու չես կարող երկար ժամանակ առանց ինձ յոլա գնալ։ Դու իմ իշխանության տակ ես։ Ահա ես քեզ վաննայի մեջ եմ դնում։ Բողոքիր, իմ ձկնիկ, ինչքան ուզում ես... Մի նայիք, թե ինչպի՛սի զայրույթով է երեսը ծռմռում։ Այս մարդուկը բերանն այնպես է չռել, կարծես վիրավորված ինքնասիրությունից շունչը կտրվում է, տեսնելով, որ իր հետ այնպես են վարվում, կարծես իր լինի... Իսկ ես քեզ այնուամենայնիվ կշրջեմ, և մի անգա՛մ էլ... Աստված իմ, ինչպի՛սի երաժշտություն... Դու երգիչ ես դառնալու, տղա՛։ Ապա, մի անգա՛մ էլ վերցրու վերին «դոն»... Կեցցե՛ս։ Դու երգում ես, իսկ ես քեզ կստիպեմ պարել... Բա խայտառակությո՛ւն չէ այսպես օգտվել քո անզորությունից։ Ախ, զզվելի մամա... Իմ խե՛ղճ տղա... Ոչինչ, դու քո վրեժը կհանես նրանից, երբ մեծանաս... Իսկ առայժմ բողոքիր։ Ահա հենց էլ չե՛մ նայի քո ամբողջ արժանապատվությանը և տուտուզիկդ կպաչեմ...»։

Փոքրիկը քացի-քացի էր անում։ Աննետան քրքջում էր։ Նա Աննետայի ձեռքերին էր, բայց ի՞նչ օգուտ։ Չէ որ Աննետան տնօրինում էր միայն խեցին, իսկ խխունջը սողալով հեռանում էր նրանից դեպի իր ապաստարանի խորքը։ Եվ օրըստօրե ավելի ու ավելի էր դժվարանում նրան բռնելը։ Դա որսորդություն էր, զվարճալի, ինչպես սիրո պայքարը։ Բայց և այնպես որսորդություն, պայքար, որը չէր թողնում շունչ քաշել։ Ստիպված էր լինում անընդհատ զգաստ լինել։

Հազարավոր մշտական մանր-մունր հոգսերը, որոնք երեխան պահանջում է, լցնում են օրը։ Իր ամբողջ պարզությամբ ու միակերպությամբ հանդերձ, նրանք տեղ չեն թողնում ուրիշ ոչ մի բանի համար։ Ոչ մի բանի վրա նրանից դուրս, միայն նրանից, միտքը չի կարողանում կենտրոնանալ։ Ամենասրընթաց միտքը տասն անգամ ընդհատվում է։ Երեխան ամեն ինչ դուրս է մղում, մսի այդ փոքրիկ կտորը ձեզանից ծածկում է ամբողջ հորիզոնը։ Աննետան դրա համար չէր ափսոսում։ Ասենք, նա ժամանակ էլ չէր ունենում ափսոսանքների համար։ Նա ապրում էր մշտական հոգնածության և մտահոգության վիճակում, և այդ վիճակը, որը սկզբում նրա համար փրկարար էր, օրըստօրե ավելի ու ավելի նկատելի կերպով դառնում էր ուժասպառության աղոտ զգացում։ Կյանքի այդպիսի շրջանում մարդու ուժերը հալվում են, իսկ հոգին թափառում է, ինչպես լուսնոտ, և, հանկարծ արթնանալով, չի իմանում ուր գնալ։ Մի օր Աննետան արթնացավ հենց այդ հոգնածության զգացումով, որը կուտակվել էր բազմաթիվ ամիսների ընթացքում։ Եվ անորսալի ստվերը մթագնեց այն խնդությունը, որն ապրում էր Աննետայի մեջ։

Աննետան ուզում էր հավատալ, որ դա միայն ֆիզիկական գերհոգնածություն է։ Եվ որպեսզի ինքն իրեն հավատացնի, թե իր երջանկությունը անփոփոխ է, նա սկսեց այն դրսևորել չափազանց հախուռն կերպով։ Հատկապես մարդկանց ներկայությամբ. նա կարծես վախենում էր, թե ուրիշները կնկատեն այն, ինչ ինքը չէր ուզում տեսնել։ Իսկ երբ մենակ էր մնում, անսահման ուրախությունից հետո վրա էր հասնում ուժերի անկումը։ Դա ի՞նչ էր՝ թախի՞ծ։ Ոչ։

Անհասկանալի անձկություն, խուլ տագնապ, անբավարարվածության ինչ-որ զգացում, որը նա աշխատում էր վանել իրենից։ Աննետան ոչինչ չէր սպասում արտաքին աշխարհից— առայժմ նա դեռ յոլա էր գնում առանց նրա,— բայց նա տառապում էր այն բանից, որ իր բնավորության ինչ-որ կողմերը կիրառում չէին գտնում իրենց համար։ Անգործության էր մատնված դեռ վաղուց նաև նրա մտավոր կարողություններից ինչ-որ մի մասը, իսկ դա խախտում էր ներքին հավասարակշռությունը։ Զրկված լինելով մարդկանց հետ շփվելուց, ամբողջովին թողնված լինելով իր տնօրինությանը, Աննետան զգում էր, որ իր հոգին կարոտից սկսում է մռմռալ, և աշխատում էր դա խլացնել ընթերցանությամբ, հույս ունենալով, որ գրքերը կփոխարինեն մարդկանց։ Բայց գրքերը մնում էին բացած միևնույն էջում. նրա ուղեղը ետ էր վարժվել ճիգեր գործադրելուց, մոռացել էր, թե ինչպես պետք է հետևել բառերի շղթայի զարգացմանը։ Երեխայի մասին ունեցած մշտական հոգսերը, անընդմեջ խուժելով նրա մտքերի մեջ, խախտում էին նրանց ընթացքը, ցրում ուշադրությունը և միայն տեղաշարժում ննջող, թուլացած գիտակցությունը, ինչպես ափի մոտ կապված մակույկ, որը թռչկոտում է ալիքների վրա և չի կարողանում ոչ առաջ շարժվել, ոչ էլ մնալ իր տեղում կանգնած։ Փոխանակ գրա դեմ պայքարելու։ Աննետան փակված նստում էր, տրվելով բայց գրքի վրա քնկոտ երազանքներին կամ աշխատում էր խլացնել իր կարոտը փոթորկուն քնքշանքների պայթյուններով և երեխայի հետ վարած չարաճճի շաղակրատանքներով։ Հետևելով, թե Աննետան ինչպես է ապարդյուն կերպով փորձում երեխայի վրա ծախսել իր բազմակողմանի հոգևոր էներգիայի ամբողջ պաշարը, Սիլվիան նրան ասում էր.

— Քեզ հարկավոր է հաճախակի դուրս գնալ, մարմնամարզությամբ զբաղվել, շատ զբոսնել, ինչպես առաջ։

Աննետան գլուխը նրանից ազատելու համար խոստանում էր հաճախ դուրս գնալ,— և տեղից չէր շարժվում։ Դա իր պատճառն ուներ, որը նա պահում էր իր մեջ. Աննետան վախենում էր նախկին ծանոթների հետ հանդիպումներ ունե-

նալուց և սաւը օտարութեան վիրավորանքի դրսևորումներից։ Այդպիսին էր արտաքին պատճառը, որը նա բերում էր ինքն իր համար։ Ուրիշ վիրավորանքները ամենևին չէին անհանգստացնում։ Իսկ այժմ նրա մեջ հայտնվել էր մարդկային ամեն տեսակի շփումներից խուսափելու ցանկություն՝ նևրաստենիայի նշան։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ Փարիզից չհեռանալ, բնակություն չհաստատել գյուղում, ինչպես խորհուրդ էր տալիս Սիլվիան։ Աննետան դրա դեմ առարկություն չուներ, բայց ոչինչ չէր նախաձեռնում. հարկավոր էր ինչոր բան որոշել, իսկ Աննետան չէր ուզում դուրս գալ իր քնկոտ թմրութիւնից։

Ով նա հաշտվել էր այն բանի հետ, որ օրերը սահում էին առանց չնչին իսկ հուզումների, անգործունյա և խաղաղ, ինչպես տեղատվությունից առաջ անդորրված ծովը։ Դա կյանքի հավիտենական ռիթմում տեղի ունեցող ընդմիջում էր, թվացող կանգառ։ Շնչառությունը դադարեց։ Բերկրությունը հեռանում է ոտքերի ծայրերի վրա։ Անաղմուկ քայլերով մոտենում է դժբախտությունը։ Նա դեռ չկա, բայց արդեն nescio quid[1] նախազգուշացնում է. «Ջշարժվե՛ս... Նա դուռն մո՞տ է»։

Դժբախտությունը եկավ։ Բայց բոլորովին ոչ այն, որին սպասում էին։ Իզուր ենք մենք փորձում նախապես պատկերացնել գալիք երջանկությունը կամ դժբախտությունը։ Ով մեկը և մյուսը միշտ գալիս են բոլորովին այլ, անսպասելի կերպարով։

Մի անգամ գիշերը, երբ Աննետան սավառնում էր ինչ-որ տեղ երկնքի և երկրի միջև, երջանկության և հոգեկան խավարի սահմանագծում, երբ սահում էր դեպի քնի թագավորությունը, չգիտակցելով ինքը այդ թագավորության այն թե այս կողմումն է գտնվում, հանկարծ նա վտանգ զգաց։ Դեռ չիմանալով, թե դա ինչ վտանգ է և որտեղից է գալիս այդ վտանգը, նա ուժերը հավաքում էր, որպեսզի օգնության նետվի իր կողքին քնած երեխային։ Նրա գիտակցությունը,

[1] ինչ-որ բան (լատ.)

որ զգաստ էր նույնիսկ քնած ժամանակ, արդեն հուշից նյարդային, որ երեխային ինչ-որ բան վտանգ է սպառնում։ Աննետան հաղթահարեց իր քունը և անհանգստացած սկսեց լսողությունը լարել։ Այո, նա չէր սխալվում, չէ՞ր կարող սխալվել։ Չէ որ նույնիսկ խոր քնի մեջ նա միշտ զգում էր սիրելի մանկան շնչառության ամենաաննշան իսկ փոփոխությունը։ Երեխայի շնչառությունն արագացած էր և անհամաչափ, և Աննետան նրա հետ ունեցած ինչ-որ խորհրդավոր մարմնական կապի շնորհիվ զգաց, որ ինքն էլ սկսեց դժվարությամբ շնչել։ Նա լույսը վառեց ու խոնարհվեց երեխայի վրա։ Երեխան չարթնացավ, բայց նրա քունն անհանգիստ էր, անընդհատ շուռումուռ էր գալիս։ Մորը մխիթարում էր այն որ երեխայի երեսը կարմրած չէ։ Ձեռք տալով փոքրիկին, Աննետան նկատեց, որ երեխայի մաշկը չոր է, իսկ թաթիկներն ու տոտիկները՝ սառը։ Աննետան նրան ծածկեց ավելի տաք, և երեխան կարծես հանդարտվեց։ Եվս մի քանի րոպե նա հետևում էր երեխային, հետո լույսը հանգցրեց, մտովի համոզելով իրեն, որ դա դատարկ տագնապ է։ Բայց շուտով երեխայի շնչառությունը նորից արագացավ և դարձավ ընդհատուն։ Աննետան ինչքան կարող էր խաբում էր իրեն.

«Ոչ, նա ամենևին էլ ծանր չի շնչում, դա հուզմունքից է ինձ այդպես թվում...»։

Եվ նա իրեն ստիպում էր պառկել անշարժ, կարծես երեխային ներշնչելով իր կամքը։ Բայց կասկած արդեն լինել չէր կարող— երեխայի շնչառությունը գնալով արագանում էր, սկսում էր շնչահեղձություն։ Հանկարծ նա հազաց և, արթնանալով, սկսեց լաց լինել։ Աննետան տեղից ցատկեց, գրկեց երեխային։ Երեխան ամբողջապես այրվում էր, դեմքը գունաթափ էր, շրթունքները կապույտ երանգ էին ստացել։ Աննետան խելքը թռցնում էր։ Արթնացած Վիկտորինա հորաքույրը նույնպես իրար անցավ։ Ի լրումն դրա, այդ օրը նրանց հեռախոսը ցանցի վերանորոգման պատճառով անջատված էր, և բժիշկ կանչելու հնարավորություն չունեին։ Իսկ մոտակայքում ոչ մի դեղատուն չկար։ Բուլոնյան առափնյակում գտնվող նրանց տունը մեկուսի էր, և աղախինը ոչ մի տրամադրություն չուներ այդ ուշ ժամին ընկնել

ամայի փողոցները։ Սոխակված եղան սպասել մինչև առավոտ։ Իսկ հիվանդության նշանները գնալով դառնում էին ավելի ու ավելի նկատելի։ Գլուխ կորցնելու բոլոր հիմքերը կային։ Եվ Աննետան արդեն մոտ էր դրան, բայց, հասկանալով, որ դա ոչ մի կերպ չի կարելի, իրեն չէր կորցնում։ Հորաքույրը նվնվում էր, այս ու այն կողմ գնում իրեն, ինչպես լուսամփոփի տակ մտած ճանճը։ Աննետան նրան խստորեն ասաց.

— Քո ախուվախից օգուտ չկա։ Օգնիր ինձ, իսկ եթե դու ոչ մի բանի ընդունակ չես, գնա քնիր և ինձ հանգիստ թող։ Ես երեխային ինքս մենակ կփրկեմ։

Եվ շվարած հորաքույրը իրեն հավաքեց։ Երեխային ուշադիր զննելով, նա իր երկար տարիների փորձի հիման վրա, ցրեց Աննետայի ամենաստոսկալի երկյուղներից մեկը. դա խոհ չէր։ Կասկածները Աննետային դեռ շարունակում էին տանջել, հորաքրոջը, ըստ երևույթին, նույնպես. չէ՞ որ սխալվելը շատ հեշտ էր։ Ասենք, եթե դա նույնիսկ խոհ էլ չէ, բայց մի՞թե քիչ մահացու հիվանդություններ կան։ Այն, որ իրենք ոչ մի բան այդ հիվանդությունների մասին չգիտեին, ավելի շատ էր ուժեղացնում նրանց սարսափը։ Բայց թեև Աննետայի հոգին սարսափից սառում էր, այնուամենայնիվ, նա անում էր այն, ինչ պետք էր, և անում էր հանգիստ։ Ոչինչ չխմանալով, անսալով միայն մայրական բնազդին, նա ամենալավ ձևով էր հետևում երեխային (ինչպես նրան բժիշկն ասաց հաջորդ օրը). չէր թողնում, որ երեխան երկար ժամանակ պառկի միևնույն դիրքով, անընդհատ փոխում էր, աշխատելով թեթևացնել շնչառությունը։ Սերը նրան թելադրում էր այն, ինչ թելադրել չէր կարող ոչ փորձը, ոչ գիտելիքները, —չէ՞ որ նա զգում էր բոլոր այն տանջանքները, ինչը և իր փոքրիկը։ Աննետան տառապում էր նույնիսկ ավելի ուժեղ— պատասխանատվության զգացումից...

Քի՞չ է ասելը պատասխանատվություն։ Ծանր վիշտը, իսկ հատկապես սիրելի անձնավորության հիվանդությունը, հաճախ մեզ դարձնում է սնոտիապաշտ, և մենք մեղադրում ենք մեզ նրա տառապանքների համար։ Աննետան ոչ միայն իրեն հանդիմանում էր նրանում, որ անզգույշ էր եղել և ինչպես պետքն է չէր պահպանել երեխային,— ոչ, նա ար-

դեն հայտնաբերում էր իր մեջ ինչ-որ հանցագործ հետին մտքեր. այն միտքը, որ ինքը հոգնել է երեխայից, չգիտակցված ափսոսանքի ստվերը այն մասին, որ ամբողջ կյանքը նրան է տրված... Զգո՞ւմ էր նա արդյոք ժամանակ առ ժամանակ իսկապես այդպիսի հոգնածություն և ափսոսանք, և ճնշո՞ւմ էր արդյոք դրանք իր մեջ: Ըստ երևույթին, այո՛ եթե դրանք հիմա մտաբերվում էին... Ասենք, ինչպե՞ս կարող ես իմանալ, չի՞ հորինել արդյոք դա ինքը, ելնելով մեզ բոլորիս բնորոշ պահանջից— այն դեպքում, երբ անզոր ենք գործով օգնելու, —տենդագին կերպով փնտրել դժբախտության պատճառները և հաճախ մեր դեմ ուղղել մեր հուսահատության ամբողջ ուժը...

Աննետան մեղադրում էր ոչ միայն իրեն, այլև հզոր ճշնամուն— անհայտ աստծուն: Զգուշորեն, համաչափ շարժումներով վերցնելով երեխային, որպեսզի նրա շնչառությունը հեշտանա, Աննետան նայում էր երեխայի այտուցված փոքրիկ դեմքին և մտովի, ջերմորեն նրանից ներում էր խնդրում, որ լույս աշխարհ է բերել, պոկել է խաղաղ անգոյությունից և նետել կյանքի մեջ, դարձնելով նրան տառապանքների, պատահականությունների, ինչ-որ անհայտ, կույր ուժի չար քմահաճույքների զոհը: Մայրը ցցած, ինչպես իր որջի մուտքը պաշտպանող գազան, նա զգում էր հզոր աստվածկործանիչների մոտեցումը, պատրաստվում էր փրկել նրանցից իր ձագուկին և նախապես մռնչում էր նրանց վրա, ատամները ցույց տալով: Նման ամեն մի մոր, երբ նրա որդուն վտանգ է սպառնում, Աննետան փոխվեց Նիոբայի, որը, մահաբեր նետը իր վրա ուղղել տալու համար, կատաղի մարտահրավեր է նետում սպանողին...

Մինչդեռ շրջապատողներից ոչ մեկը չէր կռահում այն համր պայքարի մասին, որն Աննետան մղում էր իր որդու համար:

Առավոտյան բժիշկը եկավ: Նա Աննետային գովեստի խոսքեր ասաց, որ սա իրեն չի կորցրել և կարողացել է երեխային ցույց տալ առաջին օգնությունը, ասաց, որ համաիսրող մոր չափից ավելի անհանգստությունը միայն վնաս է բերում հիվանդին: Բայց Աննետան բժշկի բոլոր ասած-

ներից միտը պահեց մի բան. որ Փարիզում հիմա մոլեգնում են կարմրուկը և գրիպը և որ նրա որդին երևի թոքերի բորբոքում ունենա։ Նշանակում է, նա մեղավոր է որդու առաջ— ինչո՞ւ չլսեց տված խորհուրդը և Փարիզից չհեռացավ։ Նա անխնա կերպով դատապարտում էր իրեն։ Այդ զղջումը համենայն դեպս այն օգուտը բերեց, որ Աննետայի գիտակցությունից դուրս մղեց մյուս բոլոր հանդիմանությունները, որոնք նա իրեն էր ուղղում, և այդպիսով մի տեսակ նվաղեցրեց նրա մեղքի չափերը։

Լսելով այդ տխուր լուրը, իսկույն ևեթ վազեց եկավ Սիլվիան, և հիմա փոքրիկ հիվանդը հիվանդախնամների պակաս չէր զգում։ Բայց Աննետային հնարավոր չէր նրա անկողնուց հեռացնել։ Նա գրեթե չէր քնում և գիշեր ու ցերեկ անփոփոխորեն մնում էր իր պոստում։ Փոքրիկ մարմնից դուրս տված քրտինքը թրջում էր նաև Աննետայի մաշկը, երեխայի շնչահեղձությունից Աննետայի ջերմությունը սկսում էր բարձրանալ։ Ցավը մորը և որդուն հունցել ու մի խմոր էր գարձրել։ Եվ երեխան կարծես դա հասկանում էր. այն րոպեներին, երբ նա ցավից կուչուվիճ էր անում, սարսափահար սպասելով հազի նոր նոպայի, նրա աչիկները կշտամբանքով ու աղերսանքով մոր աչքերն էին փնտրում։ Նա, թվում էր, ասում է.

«Այ, հիմա նորից ցավալո՞ւ է։ Նա հիմա կգա։ Փրկի՛ր ինձ»։

Եվ Աննետան պատասխանում էր, փոքրիկին սեղմելով իրեն.

«Այո, այո, ես քեզ կփրկե՛մ։ Մի՛ վախենա։ Նա քեզ չի դիպչի»։

Սակայն, չնայած դրան, նոպան վրա էր հասնում, երեխան սկսում էր խեղդվել։ Բայց նա մենակ չէր տառապում, մայրը գալար-գալար էր գալիս որդու հետ, փորձելով կտրել երեխային խեղդող օդակը։ Փոքրիկն զգում էր, որ մայրը կռվում է իր համար, որ մեծ պաշտպանը իրեն չի լքի։ Եվ վստահությունը, որ հնչում էր Աննետայի փաղաքշական ձայնի մեջ, նրա մատների հպումը մանկանը հույս էին ներշնչում և ասում նրան.

«Ես այստեղ եմ»։

Փոքրիկը լաց էր լինում և թաթերով ծնծում օդը, բայց գիտեր, որ մայրը կհաղթի նրան, անառնունին։

Եվ Աննետան հաղթում էր։ Հիվանդությունը անձնատուր էր լինում։ Օդակը լայնանում էր։ Ամբողջ մարմնով դողդողար, ձագուկը տրվում էր մայրական փրկարար ձեռքերի իշխանությանը։ Որքա՜ն թևթև էին շնչում նրանք երկուսն էլ այդպիսի տանջանքներից հետո։ Օդի շիթը, որ լցվում էր երեխայի բերանը, թարմացնում էր նաև մոր կոկորդը, երանությամբ լցնում նրա կուրծքը։

Այդպիսի դադարները լինում էին ոչ տևական, դրանց հաջորդում էր վիճակի վատացումը։ Պայքարը շարունակվում էր, սպառելով ուժերը։ Երեխայի վիճակը լավացավ, բայց հանկարծ խիստ ռեցիդիվ տվեց, որի պատճառը պարզ չէր։ Անձնվեր հիվանդապահները հուսահատվեցին—յուրաքանչյուրն իրեն մեղադրում էր որևէ անուշադրության մեջ, որը խանգարեց ապաքինմանը։ Աննետան մտովի կրկնում էր.

«Եթե երեխան մեռնի, ես ինքնասպանություն կգործեմ»։

Այդ օրերի ընթացքում նա քունը կորցրեց։ Այն ժամերին, երբ երեխային պետք էր Աննետայի օգնությունը, նա ուժերը հավաքում էր։ Բայց երբ փոքրիկը քնում էր, և Աննետայի փոքր-ինչ հանգստացած սիրտը կարողանում էր իրեն թույլ տալ դադար առնելու, մտքերն սկսում էին այս ու այն կողմ նետվել ավելի ուժեղ։ Նրանք թռչկոտում էին, ինչպես ուժեղ քամու հոսանքի տակ գտնվող հեռախոսային լարերը։ Աննետան սիրտ չէր անում փակել աչքերը, նա վախենում էր մենակ մնալ իր խելագար ուղեղի հետ։ Նորից էր վառում լամպը և փորձում կարգի բերել մտքերը, որոնցից գլուխը պտույտ էր գալիս։ Դա վեճ էր իր հետ, վեճ մանկական, անհեթեթ, անահավաստ ֆանտազիաների հետ —համենայն դեպս այդպես էին նրանք ներկայանում Աննետայի սթափ մրտքին, որը սովորել էր մտածել տրամաբանորեն։ Նրան թվում էր, թե վտանգը կախվել է իր վրա այն պատճառով, որ չափից ավելի է եղել իր երջանկությունը, և որպեսզի որդին ապրի, ինքը պետք է դրա դիմաց վճարի որևէ դժբախտությամբ։ Դա ազոտ, բայց ամուր արմատացած հավատ էր փոխհատուց-

ման դաժան օրենքի հանդեպ, հավատ, որը սկիզբ է առել մարդկության հեռավոր անցյալից։ Բայց նախնադարյան ցեղերը, որպեսզի կատաղած չարչի-աստծու սիրտը գութ գցեն, չարչի, որը ձրի ոչինչ չի տալիս և ամեն ինչ վաճառում է միայն կանխիկ փողով, նրան զոհաբերում էին իրենց առաջնեկին, այդ գնով վստահություն առնելով, որ իրենցից չի խլի մյուս բոլոր մնացածը, ինչ նրանք կյանքում թանկ են գնահատում։ Իսկ Աննետան, ընդհակառակը, որպես փրկագին իր առաջնեկի համար, պատրաստ էր և կյանքը տալու և ունեցած ամեն ինչը։

— Վերցրու, բոլորը վերցրու—մխայն թե երեխան կենդանի՛ մնա,— ասում էր նա աստծուն։

Բայց նույն րոպեին մտածում էր.

«Ինչքա՜ն հիմար բան եմ ասում։ Չէ՞ որ ինձ լսող չկա...»։

Միևնույն է, հին ատավիստական բնազդը իր շուրջը փնտրում էր չերմեռանդ աստծու ներկայությունը։ Եվ համառ, կատաղի սակարկությամբ առևտուր անելով նրա հետ, կրկնում էր.

«Արի պայմանագի՛ր կնքենք։ Ես վճարում եմ կանխիկ։ Երեխային ինձ տուր, իսկ փոխարենը վերցրու ինչ ուզում ես»։

Կարծես հենց այդ սնոտիպաշտությունը արդարացնելու համար, ճակատագիրը Աննետային բռնեց խոսքի վրա։ Մի առավոտյան Վիկտորիա հորաքույրը գնաց նոտարի մոտ փողի, որն Աննետան դեռ վաղուց պետք է նրանից ստացած լիներ, և վերադարձավ արցունքով ողողված։ Այդ առավոտ Աննետան երջանիկ էր. վերջապես նա կարող էր հանգիստ լինել որդու կյանքի համար։ Բժիշկը հենց նոր գնաց, ասելով, որ երեխան առողջանում է։ Աննետան ուրախությունից խելքը կորցրել էր, բայց դեռ դողում էր, չհամարձակվելով վերջնականապես հավատալ իր անսպասելի երջանկությանը։ Եվ հենց այդ նույն րոպեին դուռը բացվեց, և երևաց հորաքրոջ այլայլված դեմքը։ Աննետայի սիրտը թռավ, նա մտածեց.

«Ի՞նչ նոր դժբախտություն է պատահել»։

Պառավի լեզուն հուզմունքից փաթ էր ընկնում։ Վերջապես ասաց.

— Գրասենյակը փակ է։ Մեծ Գրենյոն անհետացել է։

Աննետայի ամբողջ ունեցվածքը վստահված էր այդ նոտարին։ Սկզբում Աննետան բան չհասկացավ, իսկ հետո (բացատրեք այդ, եթե կարող եք)... հետո դեմքը պայծառացավ և նա թեթևացած մտածեց.

«Հենց ա՛յդ...»։

Ահա՜ նա, փրկարար դժբախտությունը։ Թշնամին նրանից փրկագին վերցրեց որդու համար...

Մի րոպե անց Աննետան արդեն ուսերը թոթվեց, զարմանալով իր հիմարության վրա։ Եվ այնուամենայնիվ շարունակում էր մտովի խոսել նրա հետ։

«Հը, էլ պահանջ չունե՞ս։ Բավարարվա՞ծ ես։ Ահա և ես հաշիվներս փակեցի։ Այլևս քեզ ոչինչ պարտք չեմ»։

Աննետան ժպտաց... խեղճ մարդիկ։ Կառչելով իր բաժին երջանկությունից և տեսնելով, որ այդ երջանկությունը անընդհատ հեռանում է ու հեռանում իրենից, նրանք փորձում էին պայմանագիր կնքել կույր բնության հետ, որին ստեղծում են երևակայության մեջ՝ ըստ իրենց պատկերի և նմանության։

Ըստ իր պատկերի և նմանությա՞ն։ Մի՞թե ես նման եմ այդ բնությանը, նախանձոտ, գիշատիչ, դաժան։ Ո՞վ գիտե, Ո՞վ կարող է ասել. «ես այդպիսին չեմ»։

Աննետան սնանկացած էր։ Նա սկզբում չէր պատկերացնում աղետի չափերը։ Առաջին րոպեին դեռ կարելի էր մոլորության մեջ ընկնել։ Բայց երբ նա սառնարյուն կերպով քննության առավ դրությունը, ստիպված եղավ ընդունել, որ պատժված է ըստ արժանվույն։

Աննետան գիտեր գործարարական հարցերից գլուխ հանել— նա հոր նման սթափ և գործնական խելք ուներ, թվերը նրան չէին վախեցնում։ Երբ տոհմական ծագումով սերում ես խելամիտ և ձեռներեց գյուղացուց կամ մանր բուրժուազիայից, ապա քո մեջ գործնական ջիղը կարող ես խլացնել միայն գիտակցորեն ճգտելով դրան։

Հոր կենդանության ժամանակ Աննետան ազատված էր ամեն կարգի նյութական հոգսերից, իսկ հետո վերապրում էր

երկարատև հոգեկան բեկում և, ամբողջապես կլանված ներ-քին կյանքով, իր կրքերի գերին էր դարձել։ Այդպիսի, «մոլա-գարուբյան» ոչ ամբողջովին նորմալ վիճակին նպաստում էին նրա պարապուբյունն ու ապահովվածուբյունը։ Նա իր ժառանգուբյանը վերաբերող հոգսերից մի կողմ էր քաշվում զվանքով, որի մեջ ինչ-որ անառողջ բան կար, քանի որ հարստուբյունը որպես պարագիտիզմ արհամարհող իդեա-լիստը մոռանում է, որ նա դրա իրավունքը ունի միայն այն դեպքում, եթե ինքը հրաժարվել է իր հարստուբյունից։ Իսկ երբ իդեալիզմը աճում է այնպիսի հողում, որը հարստու-բյամբ է պարարտացված և, սնունդ առնելով նրանից, այն-պիսի տեսք է ընդունում, թե իբրև արհամարհում է,— դա պարազիտիզմի վատթարագույն տեսակն է։

Որպեսզի գլուխն աղատի իր դրամական գործերը վարելու տխուր պարտականուբյունից, Աննետան ամբողջ ունեցվածքը հանձնեց նոտարի՝ սիրելագույն մեծ Գրենյուի ձեռքը։ Դա իրենց ընտանիքի վաղեմի բարեկամն էր, հարգարժան մի մարդ, որը հայտնի էր իր աղնվուբյամբ և բոլորի կողմից ճանաչված էր որպես իր գործի գիտակ։ Նա երեսուն տարի շարունակ վարում էր Ռիվիերի բոլոր գործերը։ Ճիշտ է, Ռաուլը գործերի մեջ երբեք ոչ ոքի ամբողջովին չէր ապա-վինում։ Նոտարի նկատմամբ ունեցած վստահուբյամբ հան-դերձ, նա մանրամասնորեն ստուգում էր ամեն մի փաստա-բուղթ։ Բայց ձեռք առնելով այդպիսի նախազգուշական միջոցներ, նա այնուամենայնիվ վստահում էր մեծ Գրեն-յուին։ Իսկ եթե Ռաուլ Ռիվիերի նման հարստուբյուն ունե-ցող մարդը որևէ մեկին վստահում է, նշանակում է այդ մարդը արժանի է այդպիսի վստահուբյան։ Եվ մեծ Գրեն-յուին կարելի էր վստահել, ինչքան կարելի է մեր հասարա-կուբյան մեջ ընդհանրապես վստահել մարդուն (պահպանե-լով բոլոր նախազգուշուբյունները)։

Նոտարն իր կլիենտների ընտանիքներում ստիպված է լինում դառնալ աշխարհիկ խոստովանահոր նման մի բան, և մեծ Գրենյուն Ռիվիերների ընտանեկան շատ գաղտնիք-ներին իրազեկ էր։ Քիչ բան կար Ռաուլի արկածներից և տիկին Ռիվիերի դառնուբյուններից, որ նրա համար անհայտ

մնացած լիներ։ Նա պատրաստակամությամբ երկուսին էլ լսում էր. տիկնոջը՝ կարեկցաբար, ամուսնուն՝ ներողամտորեն։ Կնոջ համար մեր Գրենյուն խորհրդատու էր և գնահատում էր նրա առաքինությունները, իսկ ամուսնու համար ընկեր էր և հավանություն էր տալիս նրա արատներին (գալլական տեսակետից այդպիսի արատները իրենց հերթին չէ՞ որ նույնիսկ առաքինություններ են)։ Պատմում էին, որ մեր Գրենյուն ինքն էլ էր հաճույքով մասնակցում Ռաուլի նրբորեն ընտրած զվարճանքներին։ Մեր Գրենյուն մազերն սպիտակած, մոտ վաթսուն տարեկան մարդ էր, թույլ կազմվածքով, այտերը վարդագույն, նրբակիրթ շարժուձևերով։ Ջավեշտական ու լեզվանի, շատ հրաշալի մարդ, սքանչելի դերասան, նա սիրում էր շաղակրատել և, որպեսզի գրավի լսողների ուշադրությունը, սկսում էր միշտ շատ ցածր, մարող ձայնով, շունչը փորն ընկած, իսկ հետո, երբ շուրջը կարեկցական լռություն էր տիրում, նրա ձայնը աստիճանաբար հասնում էր այնպիսի հնչեղության, որին կարող էր նախանձել ուզածդ կլարնետը, և չէր ցածրացնում մինչև որ մեր Գրենյուն չէր շարադրում այն ամենը, ինչ ասելու էր։ Այդ հնամիտ նոտարը, որ մոլություն ուներ դեպի ամեն տեսակի նորամուծություն, այդ ծեր բուրժուան և պատվարժան pater familias[1]-ը, որը պարծենում էր, թե իր կլիենտների թվում դերասանուհիներ են եղել, ուտողխմողներ և ուրախ «փոքրիկ աղչկերք», սիրում էր բոլորին հիշեցնել իր տարիքի մասին և, երբեմն էլ չափն անցնելով, իրեն ծերունի էր ձևացնում, բայց սոսկալի վախենում էր, թե կհավատան, և գաղտնի կերպով, գործադրելով բոլոր ճիգ ու ջանքերը, աշխատում էր ապացուցել, որ ինքը դեռ ժիր է և բոլոր երիտասարդներին գրպանը կդնի։

Մեր Գրենյուն Աննետային գիտեր դեռ մանկությունից և նրա շահերը մոտ էր ընդունում իր սրտին։ Նա համարում էր միանգամայն բնական, որ ծնողների մահից հետո Աննետան իրեն է վստահել ունեցած կայք ու կարողությունը։ Եվ սկզբնական շրջանում նա, պրոֆեսիոնալ աղնվությունից մղ-

[1] ընտանիքի հայրը (լատ.)

ված, բարեխղճորեն իրագեկ էր պահում Աննետային բոլոր գործերի մասին և վճռականորեն ոչ մի բան չէր ձեռնարկում, առանց նրա համաձայնության։ Բայց դա շուտով Աննետային ձանձրացրեց։ Այդ ժամանակ նոտարը սկսեց նրանից լիազորագրեր վերցնել՝ այս կամ այն գործարքի մեջ մտնելու համար և ներկայացնել համառոտ հաշվետվություններ (որոնք Աննետան առանձնապես չէր էլ լսում)։ Ավելի ուշ նրանք իրենց միջև որոշեցին, թե քանի որ Աննետան Փարիզից մեկնելիս հաճախ իր հասցեն չի թողնում, ապա մեծ Գրենյուն նրա գործերը կվարի ինքնուրույն կերպով, առանց Աննետայի հետ խորհրդակցելու։ Եվ ամեն բան հիանալի իր տեղն ընկավ. նոտարն ինքը վարում էր բոլոր գործերը. Աննետայի եկամուտները գնում էին նրա մոտ, իսկ ինքն Աննետան ստանում էր նոտարից այնքան դրամ, ինչքան որ իրեն պետք էր գալիս։ Վերջիվերջո մեծ Գրենյուն, որպեսզի օրինական իրավունք ունենա տնօրինելու Աննետայի փողերը, գլխի ընկավ նրանից պահանջելու ընդհանուր լիազորագիր... Այդպես էլ ամեն ինչ ընթանում էր... Աննետան արդեն տարուց ավելի էր, ինչ չէր տեսել մեծ Գրենյուին, իսկ Գրենյուն ամեն երեք ամիսը մի անգամ կանոնավոր կերպով ուղարկում էր նրան պայմանավորված գումարները։ Աննետան ապրում էր մեկուսացած, հասարակության մեջ չէր լինում, լրագրեր չէր կարդում և իրադարձությունների մասին իմացավ շատ ավելի ուշ, քան այն տեղի էր ունեցել։ Մերուի Գրենյուն չափն անցել էր։ Նա շահամոլ չէր, բայց սպեկուլյացիաներով հրապուրվեց։ Իր կլիենտների ներդրումներն ավելացնելու համար, նա դրանք տեղավորել էր վտանգավոր ձեռնարկություններում—և փողերը կորան։ Փորձելով կորածը ետ վերադարձնել, նա վերջնականապես սնանկացրեց կլիենտներին։ Աննետային ոչ մի բան չասելով այդ մասին, Գրենյուն սպեկուլյացիայի էր ենթարկել նրա ոչ միայն բոլոր կանխիկ դրամները և իր տնօրինությանը հանձնած շարժական գույքը, այլև, օգտվելով տարբեր տեսակի խորամանկություններից, որոնք թույլ էր տալիս լիազորագրի ոչ բոլորովին ճիշտ կազմած տեքստը, գրավ դրեց նրա երկու տունը—մեկը Բուլոնյան առափնյակում, մյուսը՝ Բուրգունդիայում։ Տեսնե-

լով, որ ամեն ինչ կորավ, նոտարը փախուստի դիմեց։ Նա ամոթից մեռնում էր մարդկանց առաջ, մտածելով, թե իրեն ինչպես են խաբել, և այդ ամոթը նրա համար, թերևս, ավելի ծանր էր, քան անպատվությունը։

Ի լրումն այդ ամենի, Աննետան, ամբողջովին կլանված երեխայի հիվանդությամբ, արդեն մի քանի շաբաթ շարունակ նամակ չէր բացում և այդ պատճառով չպատասխանեց ոչ վարկատուների ծանուցագրերին, որոնց մոտ Գրենյուն գրավ էր դրել նրա տները, ոչ էլ դատական պրիստավի։ Երեխան այդ ժամանակ հիվանդության ռեցիդիվ ուներ, և Աննետան ամբողջովին գլուխը կորցրել էր։ Ուշադրություն չդարձնելով այն բանին, որ այդ նամակները հասցեագրված են անձամբ իրեն, և ոչ թե իր հավատարմատարին, Աննետան, առանց կարդալու դրանք ուղարկում էր նոտարին։ Նոտարը նույնպես չէր կարդում— այն հասարակ պատճառով, որ «փախուստի մեջ» էր... Իսկ երբ երեխան, վերջապես, սկսեց լավանալ, և Աննետան կարող էր մտածել իր դրության մասին, գործին արդեն օրինական ընթացք էր տրվել, և քանի որ Աննետան ճիշտ ժամանակին չվճարեց վարկատուներին, նրանք իրավունք ունեին վաճառելու գրավ դրված տները։ Սթափվելով իր անզգայությունից, Աննետան խիզախորեն դիմավորեց այդ շշմեցուցիչ հարվածը։ Անմիջապես նրան վերադարձավ իր ամբողջ էներգիան և հորից ժառանգած գործարարական ըմբռնողականությունը, որը նրա համար փրկին էր փոխարինում։ Այդ պայքարում Աննետան հանդես բերեց վճռականություն և պայծառ միտք, որոնք հիացմունք էին պատճառում դատավորին, ինչը, այնուամենայնիվ, չխանգարեց նրան գործը իր օգտին որոշելու համար, քանի որ Աննետայի ամբողջ իրավացիությամբ հանդերձ, օրենքը այս դեպքում գտնվում էր ոչ նրա կողմը։ Աննետան հենց սկզբից հասկացավ, որ գործը տանուլ է տվել, բայց, սառնասրտորեն հնարավոր համարելով պարտությունը, նա հաշվում էր, որ դա անարդարացի է, և չէր կարող առանց մարտի հանձնվել։ Մանավանդ որ հիմա խոսքը վերաբերվում էր իր երեխայի ունեցվածքին։ Եվ Աննետան այն պաշտպանում էր կամակոր ու խորամանկ գեղջկուհու համառությամբ, որը

չցանկանալով տեղից շարժվել, փակում էր իր դաշտը տանող ճանապարհը ու, թեև գիտեր, որ զավթիչները միևնույն է ներս կխուժեն, աշխատում է ժամանակ շահել։ Բայց Աննետան ի՞նչ կարող էր անել։ Հնարավորություն չունենալով վարկատուներին վերադարձնել փողը և չցանկանալով ազգականներից կամ նախկին բարեկամներից օգնություն խնդրել (որոնք ամենայն հավանականությամբ, կմերժեին, և այն էլ ստորացուցիչ ձևով), Աննետան չկարողացավ խանգարել գրավ դրված տների վաճառքը։ Նրա ամբողջ հնարամտությունը և համառ էներգիան օգնեցին միայն այնքանով, որ գործը կարճ ժամանակով հետաձգեցին, բայց ոչ մի հույս չկար, որ ժամկետն անցնելուց հետո դատարանը վճիռը կփոխի։

Այդպիսի փորձանքի մեջ հուսահատվելը միանգամայն ներելի կլիներ Սիլվիան, օրինակի համար, թեև ինքը բոլորովին վնաս չէր կրել, վերջ չէր տալիս ոչ ողբին ու լացուկոծին, ոչ վրդովմունքին ու պնդումներին, թե հարկավոր է դատ բանալ, դատ բանալ, դատ բանալ... Իսկ Աննետան, ընդհակառակը, շնորհիվ այդ պատմության, կարծես նորից էր հոգեկան հավասարակշռություն ձեռք բերել։ Նրա գլխին եկած փորձանքը կարծես օդը թարմացրեց, ցրեց մթնոլորտը այն ճնշող սենտիմենտալության, որը վերջին երկու-երեք տարին թուլացրել էր նրա հոգին։ Համոզվելով, որ ոչինչ փոփոխել չի կարելի, Աննետան, առանց անօգուտ բողոքների ու տրտունջների, հաշտվեց հանգամանքների հետ։ Նա սկսեց հոգու թեթևության համար ամեն ինչում մեղադրել Գրենյուին, ինչպես այդ անում էր Սիլվիան՝ նոտարի գլխին զարհուրելի անեծքներ թափելով։ Վերուկն ինքն էր խորտակվել։ Նա՝ Աննետան, նույնպես։ Բայց Աննետան երիտասարդ ձեռքեր ուներ, և լողալ գիտեր։ Նա այդ մասին մտածում էր, թերևս, ոչ առանց բավականության։ Որքան էլ տարօրինակ լինի, սնանկացումը Աննետայի հոգում, վշտի հետ միասին, առաջացրել էր նաև հետաքրքրություն, որը մեզ հրում է վտանգին ընդառաջ, և նույնիսկ գաղտնի մի ուրախություն այն մտքից, որ ինքը փորձելու է իր մեջ եղած չօգտագործված ուժերը։ Թառուլը կհասկանար դատերը— չէ՞ որ նա նույն-

պես հաջողության գագաթնակետին հասած ժամանակ երբեմն գայթակղիչ ցանկություն է ունեցել ոչնչացնել իր ամբողջ կյանքի գործը, որպեսզի ստանա ամեն ինչը նորից ստեղծելու հաճույքը։

Բուլոնյան առափնյակի տնից պետք էր դուրս գալ։ Բուրգունդիայի կալվածքը շուտափույթ վաճառված էր ծիծաղելի էժան գնով։ Պարզ էր, որ ամբողջ ունեցվածքի վաճառքից ևկած դրամը հազիվ բավական լիներ պարտքի և դատական ծախսերի վճարման համար, իսկ եթե որևէ բան մնար էլ,— դա հերիք չէր անի իր ու հորաքրոջ ապրելու համար։ Հարկավոր էր ապրուստի նոր միջոցներ փնտրել։ Եվ ամենից առաջ կրճատել ծախսերը և ապրել ինչքան կարելի է ավելի համեստ։ Սկավեցին բնակարանի որոնումները։ Սիլվիան քրոջ համար բնակարան գտավ այն տան հինգերորդ հարկում, որտեղ ինքն ապրում էր անտիեսոլում։ Նոր բնակարանի սենյակները, որ լուսամուտներով նայում էին բակին, փոքր էին, հարմարավետ, անաղմուկ։ Ամբողջ կահույքն այստեղ տեղափոխելու մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Աննետան որոշեց վերցնել միայն ամենաանհրաժեշտը։ Բայց Վիկտորինա հորաքույրը արցունքն աչքերին աղաչում էր պահպանել բոլորը։ Աննետան նրան ապացուցում էր, որ խելամիտ բան չէ իրենց վիճակում դեռ ավելորդ փող վճարել կահույքի պահպանման համար և որ պետք է ընտրել միայն մի մասը, բայց հորաքույրը ոչնչից ձեռ քաշել չէր ուզում։ Վերջապես Աննետան ինքը վճռական կերպով ջոկեց այն ամենը, ինչ պետք է տեղափոխվեր նոր բնակարան, և դրանցից բացի թողեց ևս մի քանի իրեր, որոնք առանձապես թանկ էին պառավի համար, իսկ մնացածը վաճառեց։

Սիլվիային ապշեցնում էր Աննետայի այդ «անխղճությունը»։ Սակայն չի կարելի կարծել, թե քաջարի աղջիկը բոլորովին չէր վշտանում։ Նա սիրում էր այդ տունը, որն իրեն վիճակված էր լքելու... Ինչքա՜ն հիշողություններ, ինչքա՜ն երազանքներ էին կապված դրա հետ։ Բայց Աննետան դրանք հեռու էր քշում իրենից, շատ լավ հասկանալով, որ չի կարելի անպատիժ դրանց ազատություն տալ։ Դրանք չա-

փազանց շատ էին, դրանք կարող էին Աննետային լցնել ամբողջությամբ, իսկ հիմա նրան պետք էին բոլոր ուժերը։

Միայն մի անգամ Աննետան զիջեց նրանց գրոհին, գրոհ, որ շատ անսպասելի էր։ Դա ցերեկն էր, տեղափոխվելուց քիչ առաջ։ Հորաքույրը գնացել էր եկեղեցի, իսկ Մարկը Սիլվիայի մոտ էր։ Մենակ մնալով տանը, որտեղ ամեն ինչի մեջ արդեն զգացվում է մեկնելու մոտիկությունը, Աննետան չոքել էր մինչև կեսը փաթաթած գորգի վրա և ծալում էր պատից հանած գոբելենը։ Նա տարված էր գործով, և, մինչ նրա արագաշարժ ձեռքերն աշխատում էին, գլուխն զբաղված էր տեղափոխության հետ կապված հազար ու մի հաշիվներով։ Բայց, երևի, նաև հիշողությունների համար տեղ գտնվեց. նրա հայացքը, որ մի րոպեաչափ արդեն ցրված թափառում էր շրջապատից հեռու ինչ-որ տեղ, հանկարծ, կարծես մառախուղի միջով, նկատեց մի նկար այն գոբելենի վրա, որ ծալում էր։ Եվ Աննետան ճանաչեց այդ նկարը։ Դա գունաթափ, համարյա թե չնչված մի նկար էր, թիթեռի թևեր էին, թե՞ ծաղկի թերթեր։ Միթե միևնույն չէ։ Բայց այդ նկարի վրա հաճախ էին մանկության տարիներին կանգ առնում նրա աչքերը, և այդ կանվայի վրա նրանք հիմա ասեղնագործում էին անցած օրերի պատկերները։ Այդ պատկերները հանկարծակի հայտնվեցին խավարի միջից... Աննետայի ձեռքերը անշարժացան, ուղեղը դեռ որոշ ժամանակ համառորեն, բայց արդեն առանց որևէ կապի, շարում էր թվերը, հետո դադրեց։ Աննետան, սահելով հատակին, գլուխը դրեց փաթաթած գորգի վրա, ծնկները ծալեց, ձեռքով ծածկեց աչքերը... և, առաջաստը բարձրացնելով, հանձնվեց քամու և ալիքների կամքին։ Աննետան մի տեղ չէր, որ թափառում էր... Հիշողությունների այնպիսի մի բաղմություն հորդեց (ապրվա՞ծ, թե՞ երազանքներ էին)— ինչպե՞ս պետք է դրանցից գլուխ հաներ... Լռության մի վայրկյանի գլխապտույտ սիմֆոնիա։ Նրա մեջ ամփոփված է շատ ավելին, քան մի ամբողջ կյանքի բովանդակությունն է։ Երբ միտքը աշխատում է, գիտակցությանը թվում է, թե նրան հնթակա է մեր ամբողջ ներաշխարհը, իսկ իրականում նրան տրված է տեսնելու միայն ալիքի կատարը այն ակնթարթին, երբ նրան ոսկեզօծում է

արևի շողը։ Միայն երազանքին է մատչելի այդ երերուն խորքը՝ իր փոթորկուն ռիթմով, միայն երազանքներին են մատչելի այդ սերմերը, որոնց քշում են դարերի մրրիկները, մտքերը նրանց, ովքեր մեզ կյանք են տվել, և նրանց, ում կյանք ենք տալու մենք, վիթխարի այդ խումբը հույսերի և ափսոսանքների, որոնք շրջված են դեպի անցյալը կամ ապագան... Աննարտահայտելի հարմոնիան, լուսավորման վայրկյանը, որ երբեմն ծնվում է մի հարվածից։ Աննետայի հոգում դա արթնացրեց գորբելենի վրայի գունաթափ ծաղիկների փունջը...

Երկար լռությունից հետո սթափվելով, Աննետան շտապով տեղից ցատկեց և դողդողացող, անդյուրաշարժ մատներով սկսեց արագ-արագ և առանց նայելու փաթաթել գորբելենը։ Աննետան նույնիսկ դա էլ չվերջացրեց և, սնդուկի մեջ գցելով մինչև կեսը միայն փաթաթված գորբելենը, դուրս թռավ սենյակից... Ոչ, նա չէր ուզում այդ մտքերի հետ մենակ մնալ։ Ավելի լավ է դրանց զոռով քշել։ Անցյալի մասին դեռ ժամանակ կլինի հետագայում խոսել, երբ ինքն էլ արդեն անցյալ դառած կլինի... Այո, հետագայում, ավելի ուշ, կյանքի մայրամուտին։ Իսկ հիմա նա շատ մտահոգված էր ապագայով։ Հարկավոր էր այդ ծանրությունը տանել։ Երազանքները առջևում էին... «Չեմ մտածելու այն մասին, ինչը հետևում է մնացել արդեն։ Չի կարելի ետ նայել...»։

Նա քայլում էր փողոցով վճռական ու շտկված, քայլերն ավելի ու ավելի արագացնելով և կենտրոնացած նայելով տարածության մեջ ինչ-որ տեղ։ Տարիներ... Կյանքը առջևում է, նրա երեխայի կյանքը, նրա սեփական, նոր կյանքը...
Նա մտածում էր գալիք օրերի Աննետայի մասին։

Այդ տեսիլքը կանգնած էր նրա աչքերի առաջ նաև նոր բնակարան փոխադրվելու երեկոյան։ Սիլվիան արհեստանոցը փակելուց անմիջապես հետո վազեց քրոջ մոտ՝ վերև— նա կարծում էր, որ Աննետայի համար ծանր կլինի, և ուզում էր տխուր մտքերից նրա ուշադրությունը ցրել։ Բայց Աննետան ինչ-որ գործ էր անում նոր, նեղլիկ բնակարանում, տագտակալի օրերից հետո բոլորովին հոգնած չզգալով իրեն։

Նա փորձում էր պատի չափազանց նեղ պահարանում տեղավորել սպիտակեղենն ու շորերը։ Քանի որ դա Աննետային չէր հաջողվում, նա կանգնելով տաբուրետի վրա և սավանները ձեռքին բռնած, նոր պլաններ էր մտածում և նայում մինչև վերջը ճխտված դարակներին։ Այդ անելիս նա տղայի նման սուլում էր վագներյան ֆանֆարան, որը, ինքն էլ այդ չնկատելով, զվարճալիորեն աղավաղում էր։ Սիլվիան, որ հետևում էր նրան, ասաց.

— Այ կեցցե՛ս, Աննետա (դա ասված էր ոչ բոլորովին անկեղծ)։

— Ինչո՞ւ— հարցրեց Աննետան։

— Թե ես լինեի քո տեղը, կատաղությունից խելքս կթռցնեի։

Աննետան միայն ծիծաղեց և, իր գործով տարված, ձեռքի շարժումով կանգնեցրեց Սիլվիային։

— Ահա՛։ Կարծես թե հնարը գտա՛...— բացականչեց նա։

Եվ ձեռքերն ու գլուխը խրելով պահարանը, սկսեց այնտեղից ինչ-որ բան հանել ու նոր ձևով տեղը դնել։

— Ահա, արդեն իմ ուզած ձևով դարձավ... Հիմա դու կարգավորվեցիր։

(Այդպես նա պահարանի հետ էր խոսում, որը լեփլեցուն էր, հավաքված և հնազանդված)։

Աննետան հպարտ իր հաղթանակով, տաբուրետից ցած թռավ։

— Սիլվա, կրակի՛ կտոր։— Նա բռնեց Սիլվիայի կզակից։— Փոքր ժամանակ մենք բոլորս էլ դոմինոյի խաղաքարերից տնակներ էինք կառուցում։ Մի՞թե դու դիվոտում էիր, երբ տնակը փուլ էր գալիս։

— Բա առանց դրա՞ն։ Իսկույն դոմինոն գետնովն էի տալիս։

— Իսկ ես ասում էի. «բո՛ւխ»։ Բայց ոչինչ, ուրի՛շը կկառուցեմ...»։

— Դու գուցե ասես, որ դիտավորյա՞լ էի սեղանը հրում...

— Գուցե և հրում էիր, չեմ երաշխավորում, որ չէիր հրում։

— Անարխի՛ստ,— ասաց Սիլվիան։

— Ասացե՛ք, խնդրեմ։ Իսկ դու անարխի՞ստ չես։

Ոչ, Սիլվիան անարխիստ չէր։ Նա սիրում էր ծիծաղել իշխանության և կարգերի վրա, բայց գտնում էր, որ դրանք հարկավոր են... թեկուզև ուրիշների՜ համար։ Ոչ, ասենք, իր համար նույնպես. ի՞նչ հաճույք կա ապստամբելու, եթե ոչ գլխին իշխանություն չկա։ Էհ, իսկ ինչ կարգերին է վերաբերում— Սիլվիան միշտ էլ պայքարել է դրա համար։ Գոյություն ունեցող կարգերին նա հայհոյում էր այն պատճառով, որ դրանք իրեն դուր չէին գալիս։ Բայց այն, որ այդ կարգերը սահմանված էին բոլորի համար, Սիլվիան դրան հավանություն էր տալիս։ Կարգ պե՜տք է լինի։ Այն օրից ի վեր, ինչ նա ինքն էլ է կանոնավորել իր կյանքը, տնտեսուհի դառել և ինքնուրույն կերպով վարում է իր գործերը, նա հաստատորեն սահմանված կարգերի կողմնակից է։ Աննետան զարմանքով արեց այդ հայտարարությունը։ Եվ դա միակը չէր։ Մարդուն ոնց որ պետքն է ճանաչում ես միայն այն ժամանակ, երբ նրան զննում ես ամենօրյա գործունեության մեջ, որտեղ բնականոն դրսևորվում են նրա ուժերը, հակումները և ներքին մղումները... Առաջ Աննետան Սիլվիային տեսնում էր միայն անհոգ պարապության շրջաններում։ Կարելի՞ է արդյոք դատել կատվի մասին, քանի դեռ նա փափուկ բարձի վրա միայն գրգանքների է տրված։ Նրան պետք տեսնել որս անելիս, երբ մեջքը աղեղի նման դուրս է ցցված, իսկ աչքերը վառվում են կանաչ լույսով։

Այժմ Աննետան Սիլվիային տեսնում էր իր գործունեության ոլորտում, փոքրիկ տեղամասում, որը նա իր համար ձեռք էր բերել փարիզյան ջունգլիներում։ Արհեստանոցի երիտասարդ տիրուհին լրջորեն էր կպել գործի, ոչ ոք չէր կարող գործերը վարելու մեջ համեմատվել նրա հետ։ Աննետան լրիվ հնարավորություն ուներ նրան հետևել մոտիկից, քանի որ տեղափոխվելուց հետո առաջին շաբաթները նա նախաճաշում ու ճաշում էր Սիլվիայի մոտ. նրանք որոշեցին ընդհանուր տնտեսություն վարել, մինչև որ Աննետան վերջնականապես իր գործերը կարգի բերի։ Աննետան ևս իր հերթին աշխատում էր օգտակար լինել քրոջը և արհեստանոցում օգնում էր նրան։ Այդպիսով, նա Սիլվիային տեսնում էր օրվա ցանկացած ժամին, պատվիրատու կանանց. վար-

պետուհիների շրջանում, երես առ երես։ Եվ նրա մեջ հայտնաբերում էր այնպիսի գծեր, որոնց մասին առաջ չգիտեր,—կամ, գուցե, այդ գծերը հայտնվել էին միայն վերջին երկու-երեք տարո՞ւմ...

Փաղաքուշ Սիլվիան Աննետայի խորաթափանց աչքերից չէր կարող այլևս համայիլ ժպիտների տակ թաքցնել իր բնավորության որոշ կոպտությունն ու չոր դատողականությունը.— նույնիսկ հափշտակվածության րոպեներին նա սթափորեն ամեն ինչ ծանր ու թեթև էր անում։ Սիլվիան վարպետուհիների ոչ մեծ մի անձնակազմ ուներ, որին դեկավարում էր հիանալի։ Շնորհիվ իր նուրբ դիտողականության և մարդկանց գերելու ունակությունների, նա ընտրել էր հարմար աղջիկների և կարողացել նրանց կապել իր հետ։ Սիլվիայի գլխավոր օգնականը, Օլիմպիան, որ հիանալի աշխատող էր, տարիքով իրենից մեծ և ավելի փորձված, անուշիկ կին էր և չէր կարողանում իր շահերը պաշտպանել։ Փարիզում այդ դավառուհին իրեն լքված էր զգում, նրան ամեն կողմից կլպշտում էին, բոլորը ծաղրում—տղամարդ թե կին, տերերը թե ընկերուհիները։ Այդքանը գիտակցելու համար նրա խելքը կարում էր, բայց կամքի ուժ չուներ, որպեսզի դրանց հակահարված տար, այդ պատճառով էլ նա փնտրում էր այնպիսի մեկին, որ իրեն չխաբի և, օգտվելով իր թափած աշխատանքից, ազատի նրան ինքն իրեն տնօրինելու անհրաժեշտությունից։ Սիլվիայի համար ոչինչ չարժեր իրեն ենթարկել և նրան և մյուսներին։ Պետք էր միայն հետևել, որ մրցակցության զգացումը, ինչը նա բորբոքում էր վարպետուհիների մեջ, չխանգարեր նրանց համերաշխությանը։ Հարկավոր էր ճարպկորեն օգտվել նրանց մրցակցությունից, խրախուսել նրանց ջանասիրությունը և, իմաստուն կառավարության օրինակով, ստեղծել մրցակիցների միություն, հիմնված ընդհանուր գործի նվիրվածության վրա։ Սիլվիայի աշխատողները հպարտանում էին իրենց փոքրիկ արհեստանոցով, բռնված էին երիտասարդ տիրուհու առաջ աչքի ընկնելու ծարավով, և դա ենթարկում էր նրանց Սիլվիայի դավադրական իշխանությանը։ Սիլվիան հաճախ էր նրանց ստիպում աշխատել մինչև ուժասպառություն, բայց

այդ դեպքում ինքն էր օրինակ տալիս, և ոչ ոք չէր դժգոհում։ Մեղմ հանդիմանությունը, ուրախ ծաղրանքը, որ պոռթկուն քրիջի աստիճան էր տալիս, առաջ էին մղում ուժից ընկած լքվածին, ստիպում էին դիմանալ մինչև վերջը։ Աղջիկները հիանում էին իրենց տիրուհիով և խանդում էին նրան մեկը մյուսի նկատմամբ։ Իսկ Սիլվիան, խրախուսելով նրանց այդ զգացումը, ինքը մնում էր անտարբեր։ Երեկոները, երբ աղջիկները գնում էին, Սիլվիան քրոջ հետ խոսում էր նրանց մասին սառը անտարբեր տոնով, որ վրդովում էր Աննետային։ Բայց չնայած դրան, կարիքի դեպքում, երբ նրանք հիվանդանում էին կամ փորձանքի մեջ ընկնում, Սիլվիան առանց օգնության նրանց չէր թողնում։ Սակայն նա մոռանում էր այդ աղջիկներին, լինեին հիվանդ թե առողջ, երբ չէր տեսնում նրանց։ Սիլվիան ժամանակ չուներ բացականչելու մասին մտածելու։ Ժամանակ չուներ որևէ մեկին երկար սիրելու համար։ Նա այնքան գործ ուներ, որ ոչ մի ազատ րոպե չէր մնում. հարդարանք, տնտեսություն, ուսել, կարել, չափսափորձում, շաղակրատանք, սեր, զվարճանքներ։ Եվ ամեն ինչ ստույգ հաշվված էր—ամեն ինչ ընդհուպ մինչև լուության այն ժամերը (միշտ կարճ) ցերեկային հոսանքի և գիշերային հանգստի միջև, երբ նա մենակ էր մնում ինքն իր հետ։ Երազանքի համար ոչ մի անկյուն։ Սիլվիան ինքն իրեն էլ կողքից զննում էր նույնպիսի հետաքրքրվող, սթափ աչքերով, ինչպես և ուրիշներին։ Ներքին կյանքը հասցված էր մինիմումի. ամեն ինչ արտահայտվում էր գործողություններ և խոսքերի մեջ։ Սիլվիայի համար միանգամայն խորթ էր ինքն իրեն խոստովանելու Աննետային բնորոշ պահանջը։ Աննետան նույնիսկ իրեն կորցնում էր, դիտելով այդ հոգին, որտեղ ամեն ինչ ափաշկարա երևում էր։ Ո՞չ մի մեկուսի անկյուն։ Իսկ եթե անգամ կար էլ (ամեն սրտում դա գոյություն ունի), նրա դուռը շատ ամուր փակված էր։ Սիլվիային չէր հետաքրքրում, թե ինչ կա այնտեղ, խորքում, այդ դռան հետևում։ Նրան պետք էր միայն մի բան—լիակատար իշխանությամբ կառավարել իր փոքրիկ աշխարհը, վայելել ամեն ինչի հաճույքը. և աշխատանքի, և կյանքի բերկրության, ու այնպես, որ ամեն ինչը իր ժամանակին լինի, որպեսզի

ոչ մի բան բաց չթողնել, ուրեմն, կնշանակի առանց կրքերի, առանց ծայրահեղությունների, քանի որ հավիտենական գործունյա վազվզուքը և «ճախրանքը» չեն գոյակցում մեծ կրքերի հետ և նույնիսկ բացառում են նրանց հնարավորությունը։ Կարելի էր կասկած չունենալ, որ Սիլվիան երբևէ գլո՜ւխը կկորցնի սիրուց։

Փաստորեն նա ինչպես պետքն է հենց միայն Աննետային էլ սիրում էր։ Եվ ինչքա՜ն դա տարօրինակ էր։ Ինչո՞ւ էր նա սիրում այդ բարձրահասակ աղջկան, որի հետ ինքը ընդհանուր ոչինչ չուներ— կամ գրեթե ոչինչ։

Այն պատճառով, որ այդ «գրեթե ոչինչը» ինչ-որ շատ կարևոր մի բան էր, գուցե ամենագլխավորը. արյան ձայնը... Ոչ միշտ են մի սերնդի մարդիկ նշանակություն տալիս արյունակից ազգակցությանը, բայց երբ տալիս են,— դա ի՜նչ թաքնված ուժ է։ Արյան ձայնը շշնջում է մեզ.

«Այն, մյուս, մարդը — նույնպես ես եմ։ Բովանդակությունը նույնն է, բայց ձուլված է ուրիշ կաղապարի մեջ։ Դա ես եմ՝ ուրիշ տեսքով։ Ես ինձ ճանաչում եմ ուրիշ հոգու մեջ...»։

Եվ այդ ժամանակ մարդ ուզում է իրեն ետ խլել այդ ուզուրպատորից... Այստեղ գործում է երկու—ոչ, երեք—տեսակի հակում։ Մեզ հրապուրում են և՛ նմանությունը, և՛ հակադրությունը, և դեռ երրո՜րդ խայծը, որը բոլորովին էլ ամենաթույլը չէ. մյուս մարդուն նվաճելու բերկրությունը...

Որքա՜ն ընդհանուր գծեր կային Աննետայի և Սիլվիայի միջև։ Հպարտություն, անկախություն, ուժեղ կամք, կարգավորված միտք, ցանկասիրություն։ Բայց մեկի մոտ այդ բոլորը շրջված էր դեպի ներս, մյուսի մոտ—դեպի դուրս։ Նրանք կարծես միևնույն հոգու երկու կիսագնդեր էին իրենցից ներկայացնում։ Նրանք ստեղծված էին միևնույն էլեմենտներից, սակայն յուրաքանչյուրը իր բնավորության առանձնահատկությունների մեջ արմատավորված ինչ-որ անհասկանալի պատճառներով ժխտում էր իր երկրորդ կեսը, ցանկանում էր տեսնել միայն մեկին— նրան, որը մակերեսին էր կամ նրան, որը թաքնված էր խորքում։ Քույրերի մերձեցումը հիմա, երբ նրանք միասին էին ապրում, սպառնում էր

տատանել յուրաքանչյուրի սովորական պատկերացումը իր մասին։ Նրանց փոխադարձ կապվածությունը ձեռք էր բերել թշնամանքի երանգ։ Եվ որքան ավելի ամուր էր կապվածությունը, այնքան ավելի սուր էր դառնում թաքնված թշնամանքը, քանի որ քույրերից ոչ մեկը չէր կարողանում իրեն ենթարկել մյուսին, և երկուսն էլ այդ զգում էին։ Աննետան Սիլվիայից ավելի լավ էր կարողանում կարդալ իր մտքերը և ավելի ազնիվ էր, այդ պատճառով էլ նա իրեն դատապարտում էր և զսպում։ Անցել էր այն ժամանակը, երբ նրա տիրական և պահանջկոտ սերը ձգտում էր կլանել Սիլվիային։ Իսկ Սիլվիան դեռ չէր հրաժարվել ավագ քրոջը իրեն ենթարկելու թաքուն ցանկությունից։ Եվ նա բնավ չէր զանգատվում, որ հանգամանքները իրեն հնարավորություն էին տվել ղեկավար դառնալ քրոջ գլխին, ընդգծել իր գերազանցությունը Աննետայի առաջ։ Չէ որ պետք էր, որ նա իրեն փոխհատուցի երիտասարդական տարիների իրենց ճակատագրերի անհավասարության համար։ Այդ չգիտակցված զգացումով էր բացատրվում, նույն չափով նաև դեպի քույրն ունեցած քնքուշ սիրով, այն գաղտնի բավականությունը, ինչ Սիլվիան զգում էր շնորհիվ այն բանի, որ Աննետան աշխատում էր իր արհեստանոցում, նրա ղեկավարության ներքո։ Սիլվիան ուզում էր Աննետային հավաքագրել ընդմիշտ։ Եվ նա քրոջը հանձնարարում էր ընդունել պատվիրատուներին, նախշեր անել՝ սպիտակեղենի վրա ասեղնագործելու համար։ Սիլվիան աշխատում էր քրոջը համոզել, որ, արհեստանոցում աշխատելով, նա կայուն աշխատավարձ կունենա, իսկ հետագայում նույնիսկ կարող է դառնալ նրա ընկերակցուհին։

Աննետան կասկածում էր Սիլվիայի ցանկությունը, բայց բոլորովին մտադիր չէր ենթարկվել այդ ցանկությանը։ Նա կամ Սիլվիայի առաջարկությունները լսելու էր տալիս, կամ, եթե վերջինս շատ էր կպչում իրենից, պատասխանում էր, որ ինքը ստեղծված չէ նման զբաղմունքի համար։ Այդպիսի դեպքերում Սիլվիան հեգնանքով հարց ու փորձ էր անում, թե այդ ո՞ր զբաղմունքն է, որի համար նա իրեն ստեղծված է համարում։ Դա Աննետայի ինքնասիրությունը վիրավորում էր։ Երբ մարդուն, որը երբեք հարկադրված չի եղել աշխա-

տանք թափել մի կտոր հացի համար, կարիքն ստիպում է աշխատանք փնտրել, նրա համար դա ծանր է այն տեսակետից, որ չգիտե, թե ինքն ինչի է պետքական և առհասարակ պետքակա՞ն է արդյոք որևէ բանի համար, չնայած իր կրթությանը։ Սակայն պետք էր ինչ-որ մի բան որոշել։ Աննետան չէր ուզում ապրել քրոջ միջոցների հաշվին։ Իհարկե, Սիլվիան այդ նրան զգացնել չէր տա, նա հաճույքով էր օգնում քրոջը։ Բայց, բավականությամբ ծախսելով փողերը Աննետայի կարիքների վրա, նա չէր մոռանում, թե ինչքան է ծախսված. նրա աջ ձեռքը միշտ գիտեր, ինչ է տալիս ձախը։ Ավելի լավ դա գիտեր ինքը՝ Աննետան։ Նրա համար անհանդուրժելի էր այն միտքը, որ Սիլվիան, հաշվելով իր մուտքն ու ելքը, Աննետայի վրա ծախսված գումարը գրում է (իհարկե, մտովի), որպես պարտք... Անիծյա՛լ փող։ Թվում էր, ի՞նչ հաշիվներ կարող են լինել երկու միմյանց սիրող սրտերի միջև։ Աննետայի և Սիլվիայի սիրո մեջ դրանք չկային, իսկ կյանքում—կային։ Կյանքը ղեկավարողը միայն սերը չէ։ Կյանքը ղեկավարվում է նաև փողով։

Այդ ճշմարտությունը Աննետան առաջ շատ վատ գիտեր։ Բայց հիմա նա այդ արագ յուրացրեց։

Առանց որևէ բան Սիլվիային ասելու, նա ձեռնամուխ եղավ աշխատանք փնտրելու։ Ամենից առաջ որոշեց գնալ այն օրիորդական կոլեջի տնօրենի մոտ, որն ինքը ավարտել էր։ Տիկին Աբրահամը մի ժամանակ բարեհաճ վերաբերմունք ուներ դեպի իր ընդունակ և հարուստ աշակերտուհին, որն ազգեցիկ մարդու աղջիկ էր, և Աննետան հույս էր դնում նրա կարեկցանքի վրա։ Այդ հիանալի կինը, որ Ֆրանսիայում կանանց կրթության առաջին չատագովներից մեկն էր, օժտված էր բացառիկ հատկություններով—եռանդով ու առողջ դատողությամբ, իսկ դրանք լրացնում էր (կամ երբեմն, ելնելով հանգամանքներից, չափավորում) նրա սթափ քաղաքական հոտառությունը, որին շատ տղամարդիկ կարող էին նախանձել։ Իսկ կոլեջի շահերը տիկին Աբրահամը ավելի մոտ էր ընդունում իր սրտին, քան իր սեփականը։ Նա ազատախոհ կին էր և նույնիսկ չէր թաքցնում (իհարկե, ի ցույց

չդնելով) կղերականների հանդեպ ունեցած որոշ արհամարհանքը, որը նրան չէր կարող վնաս հասցնել, քանի որ իր կոլեջում սովորում էին ռադիկալ բուրժուազիայի ոլորտներից եկած աղջիկներ և երիտասարդ հրեուհիներ։ Սակայն պետք է ասել, որ նրա համար մերժված քրիստոնեական բարոյականությանը փոխարինում էր քաղաքացիականը, որը թեև այնքան էլ կայուն չէր և հիմնավորված, բայց և այնպես նեղ էր և պահանջկոտ (ի միջի այլոց դա բնական է. որքան ավելի կամայական է դոգման, այնքան ավելի նա դաժան է)։ Աննետան, շնորհիվ բարձրաշխարհիկ հասարակության մեջ ունեցած դիրքի, բարեկամական հարաբերությունների մեջ էր տնօրենի հետ և նրա հետ խոսում էր ազատ և անկեղծ։ Նա սիրում էր ծաղրել հռչակավոր հանրաճանաչ բարոյականությունը, և տիկին Աբրահամը, որ սկեպտիկ մտքի տեր կին էր, բավականությամբ ու ժպիտով լսում էր անհարգալից աղջնակի տիրադնները։ Այո, նա ժպտում էր—բայց միայն այն ժամանակ, երբ խոսում էին երես առ երես, փակ դռների հետևում։ Հենց որ դուռը բացվում էր, տիկին Աբրահամը հիշում էր իր կոչումն ու պաշտոնական դիրքը և նրան էր վերադառնում աշխարհիկ կոդեքսի պատվիրանների հանդեպ ունեցած երկաթի պես ամուր հավատը, կոդեքս, որը մշակված էր բարոյականության պահպանման մի քանի խրատամոլների կողմից։ Կարելի էր ասել, որ տիկին տնօրենի խիղճը իր բնական վիճակում անտարբեր էր դեպի պայմանական բարոյականությունը. իսկ երբ այդ խիղճը ծածկվում էր պաշտոնականության սովորական զրահով, նա խստորեն նախատում էր Աննետայի վարքը։ Իսկ տիկին Աբրահամը այդ վարքի մասին արդեն գիտեր. Աննետայի պատմությունը տարածվել էր Փարիզի բոլոր սալոններում։

Բայց Աննետայի սնանկացման մասին տիկին Աբրահամը դեռ ոչինչ չգիտեր։ Եվ երբ Աննետան նրա մոտ եկավ, տիկին Աբրահամը անհրաժեշտ չհամարեց անկեղծորեն հայտնել իր կարծիքը նրան։ Նախ պետք էր իմանալ, թե Աննետան ի՞նչ նպատակով էր եկել և չէ՞ր կարելի արդյոք դրանից որևէ օգուտ դուրս կորզել կոլեջի համար։ Այդ պատճառով էլ տիկին Աբրահամը նախկին աշակերտուհուն դիմավորեց սիրա-

լիր, թեև որոշ չափով զսպված։ Բայց հենց որ իմացավ, թե Աննետան իր մոտ է եկել խնդրողի դերում, տիկին Աբրահամը հիշեց խայտառակությունը, և նրա ժպիտը սառեց դեմքին։ Խայտապարտելի վարք ունեցող անձնավորությունից փող ընդունել դեռ կարելի է, բայց նրան օգնելը—անվայել բան է։ Տիկին Աբրահամի համար դժվար չէր մերժման պատճառ գտնել անամոթ հավակնողի համար. նա ասաց, որ կոլեջը ուսուցչի կարիք չունի։ Իսկ երբ Աննետան խնդրեց, որ տիկին Աբրահամը իրեն հանձնարարի ուրիշ դպրոցական հաստատությունների տնօրեններին, վերջինս չցանկացավ թեկուզև անորոշ խոստումներ տալ նրան։ Նա մեծ դիվանագիտուհի էր այն դեպքում, երբ գործ էր ունենում բախտի անիվի կողմից վեր հանված մարդկանց հետ, բայց ամեն մի դիվանագիտություն իսկույն մի կողմ էր թողնում, երբ բախտի անիվը նույն այդ մարդկանց ցած էր նետում։ Իսկ դա լուրջ սխալ է. չէ՞ որ նրանք, ովքեր այսօր ներքևում են, կարող են նորից վերևում հայտնվել։ Լավ դիվանագետը պետք է հաշվի առնի ապագան։ Բայց տիկին Աբրահամի համար միայն ներկա գոյություն ուներ, իսկ ներկա դեպքում Աննետան դեպի հատակ էր իջնում։ Դա տխուր էր, սակայն տիկին Աբրահամը խեղդվողներին փրկելու սովորություն չուներ։ Նա չէր թաքցնում իր սառնությունը։ Աննետան շարունակում էր նրա հետ խոսել հանգիստ ու անկաշկանդ, ինչպես հավասարը հավասարի հետ, մի բան, որը հիմա միանգամայն անպատեհ էր, և տիկին Աբրահամը, որպեսզի Աննետային ցույց տա իր տեղը և հիշեցնի նրան իրենց վիճակների միջև եղած տարբերությունը, հայտարարեց, որ անկեղծորեն ինքը չի կարող նրան հանձնարարական տալ որևէ տեղ։ Աննետան բռնկվեց և քիչ էր մնացել բարձրաձայն արտահայտի իր վրդովմունքը, բայց նրա զայրույթը շատ արագ նստեց, փոխվելով արհամարհանքի։ Հանկարծ նրան կուվելու մի երեխայական ցանկություն համակեց, ինչպես մի ժամանակ,— սիրտն այնպե՞ս էր ուզում ծաղրուծանակ թափել տնօրենի գլխին։ Աննետան տեղից կանգնելով, ասաց.

— Համենայն դեպս չմոռանաք իմ մասին, եթե ուզենաք կոլեջում նոր բարոյականության կուրս մտցնել։

Այդ ակնհայտ անպատկառությունից շփոթված, տիկին Աբրահամը նայեց Աննետային և չոր պատասխանեց.

— Մեզ հինն էլ է բավական։

— Համենայն դեպս, չէր խանգարի մի քիչ այն լայնացնել։

— Իսկ դուք ի՞նչ կուզեիք մտցնել։

— Մի շատ դատարկ բան,— հանգիստ պատասխանեց Աննետան,— անկեղծություն և մարդկայնություն։

Տիկին Աբրահամը, խորը խոցված, Աննետային հակահարված էր տալիս։

— Ով, իհարկե, ազատ սիրո իրավունք։

— Ոչ, երեխա ունենալու իրավունք։

Տիկին Աբրահամի մոտից դուրս գալով Աննետան ուսերը թոթովեց, մտաբերելով իր անօգուտ հոխորտանքի մասին։ Ի՞նչ հիմարություն... Ի՞նչ միտք ունի թշնամիներ վաստակել... Այնուամենայնիվ նա իրենից անկախ ծիծաղեց, հիշելով բարկացած հակառակորդուհու ֆիզիոնոմիան։ Կինը չի կարող ուրիշ կնոջը խայտառակելու հաճույքից իրեն զրկել։ Համենայն դեպս, այդ ուրիշը, տիկին Աբրահամը, իսկույն զայրույթը ողորմածության կփոխի հենց որ նա, Աննետան, դիրք նվաճի հասարակության մեջ։ Իսկ այդ դիրքը Աննետան կնվաճի։

Աննետան եղավ նաև ուրիշ ուսումնական հաստատություններում, բայց ազատ տեղեր չգտնվեցին։ Դրանք չկային միայն կանանց համար։ Լատինական դեմոկրատիաները բաժին հատկացված են տղամարդկանց համար։ Երբեմն նրանք իրենց ծրագրերի մեջ են մտցնում ֆեմինիզմը, բայց թերահավատորեն են վերաբերվում դրան։ Տղամարդիկ բոլորովին չեն շտապում զենքը իրենց մրցակիցների ձեռքը տալ— կանանց ձեռքը, որոնք դեռ հիմա էլ, քսաներորդ դարի արշալույսին, մնում են ճնշված։ Բայց այդ դրությունը շուտով կփոխվի՝ շնորհիվ Հյուսիսի կանանց տոկունության։ Միայն բոլոր մյուս երկրների հասարակական կարծիքի ճնշման տակ մեզ մոտ հազիվհազ կհամաձայնեն ճանաչել աշխատավոր կնոջը, որն ուզում է օգտվել բոլոր իրավունքներից։

Մի երկու-երեք տեղում Աննետան կարող էր մշտական աշխատանք ստանալ, եթե դրան չխանգարեր նրա նրբանկատությունը։ Այդ տեղերում պատրաստ էին աչք փակել Աննե-

տալի հիվիմատ դրության առաջ, եթե նա ինքը համաձայն լիներ ճշմարտանման որևէ բացատրություն տալ դրան, ասեր, որի ինքը կամ այրի է, կամ ամուսնուց բաժանված։ Բայց Աննետան ինչ-որ անհեթեթ հպարտության պատճառով տրված հարցերին որպես պատասխան ճշմարտությունն էր ասում։ Եվ մի քանի անհաջողություններից հետո նա այլևս չէր դիմում կոլեջներին։ Աննետան համալսարան նույնպես չգնաց, թեև իր մասին այնտեղ լավ հիշողություններ էր թողել և կարող էր բավական ազատախոհ մարդիկ գտնել, որոնք չէին դատապարտի նրան և կօգնեին աշխատանք ճարելու։ Բայց Աննետան վախենում էր նոր վիրավորանքներից։ Նա դեռ նորեկ էր աղքատության թագավորության մեջ։ Նրա հպարտությունը դեռ չէր հասցրել կոշտուկավորվել...

Սկսեցին մասնավոր դասերի որոնումները։ Աննետան չէր ուզում ոչ մի բան խնդրել բուրժուական միջավայրի իր ծանոթներից, գերադասելով թաքցնել նրանցից իր ձախորդությունները։ Նա դիմեց այն ժամանակ Փարիզում անլեզալ կերպով գոյություն ունեցող վարձակալման— ավելի ճիշտ, շահագործման գրասենյակին։ Բայց Աննետան պահանջվածի չափ ճարպիկ չէր, բարենպաստ ձևով իրեն ցույց տալ չգիտեր։ Նա իրեն պահում էր զուռզ, մարդկանց զայրացնում էր իր ընտրողականությամբ. իրեն թույլ էր տալիս քմահաճակություն, փոխանակ համաձայնության տալու պատահած աշխատանքին, ինչպես բազմաթիվ դժբախտ կանայք, որոնք չունենալով հանձնարարականների անհրաժեշտ քանակություն և դիպլոմ, պատրաստ են սովորեցնել ինչ պատահի և աննշան կոպեկներով աշխատելու առավոտից մինչև իրիկուն։

Վերջապես, Սիլվիայի պատվիրատուների միջոցով Աննետան օտարերկրացուհիների հետ պարապելու մի քանի դասեր ստացավ։ Նա ֆրանսերեն խոսել էր սովորեցնում ամերիկուհիներին, որոնք նրա հետ սիրալիր էին, առաջարկում էին երբեմն կառքով շրջել, բայց ծիծաղի հասնելու չափ քիչ էին վճարում և նույնիսկ չէին էլ հասկանում, որ պետք է թանկ վճարեն։ Նրանք առանց մտածելու, հարյուր ֆրանկ էին վճարում մի զույգ կոշիկի համար, իսկ Աննետան նրանցից

մի դասի համար ընդամենը մի ֆրանկ էր ստանում (այն ժամանակ[1] դժվար չէր այնպիսի ուսուցչուհի գտնել, որը վերցնում էր նույնիսկ հիսունական սանտիմ)... Աննետան, թեև ընտրելու հնարավորություն էլ չուներ, սկզբում չէր համաձայնում այդպիսի ամոթալիորեն ցածր վճարի, բայց երկար որոնումներից հետո ավելի լավ ոչինչ չգտավ։ Նյութապես ապահով բուրժուազիան պատրաստ է ուզածիդ չափ ծախսել արտոնյալ դպրոցներում սովորող իր երեխաների ուսման վրա, քանի որ այդ ծախսերը արվում են հասարակության աչքի առաջ, բայց դրա փոխարեն տնային ուսուցիչներին նա նողկալիորեն շահագործում է։ Չէ՞ որ դա ոչ ոք չի իմանա, և այդտեղ դու գործ ունես ընչազուրկ, թշվառ մարդկանց հետ, որոնք կամակորություն երբեք չեն անի. եթե մեկը հրաժարվի, նրա փոխարեն ուրիշ տասը կգտնվեն, որոնք դեռ կաղաչեն էլ, որպեսզի իրենց վերցնես։

Միայնակ և անփորձ Աննետայի համար պաշտպանվելը դժվար էր, բայց նա ուներ Ռիվիերների գործնական ջիղը, իսկ հպարտությունը թույլ չէր տալիս նրան համաձայնել ստորացուցիչ պայմանների, որոնց ուրիշները համաձայնում էին։ Աննետան այն հեզ գառնուկներից չէր, որոնք ախ ու վախ են անում, բայց համաձայնում են։ Նա ախ ու վախ չէր անում, բայց և չէր համաձայնում։ Եվ, հակառակ ամեն կարգի սպասումների, այդպիսի տակտիկան հաջողություն էր ունենում. մարդիկ վախկոտ են։ Աննետան «չէ» էր ասում այնպիսի բարձրամիտ հանդիսավորությամբ, որը անհնար էր դարձնում ամեն մի սակարկություն։ Նրա հետ չէին համարձակվում վարվել այնպես, ինչպես ուրիշների, և առաջարկել այդպիսի չնչին վճար։ Բայց թե իրեն վճարածն էլ առանձնապես շատ չէր։ Ստիպված էր լինում ծանր աշխատանք թափել, որպեսզի իրեն և երեխային կերակրե։ Նրա աշակերտները ապրում էին հեռու և քաղաքի տարբեր ծայրերում, իսկ Փարիզում այդ ժամանակ դեռ ոչ ավտոբուս կար, ոչ մետրո։ Երեկոյան դեմ Աննետայի ոտքերն արդեն սկսում էին տնքալ։ Կոշիկներն այդքան ճանապարհ գնալուց շուտով մաշվում էին։ Բայց Աննետան շատ առողջ էր, և նրան բավականություն

[1] 1903—1904 թթ.—Ռ. Ռ.

էր պատճառում այն, որ ինքն է իր հացը վաստակում։ Համենուն մի կտոր հացի թափած այդ աշխատանքը Աննետայի համար հետաքրքիր և նոր ապրումներ էին։ Ամեն անգամ, երբ նա շահագործողների հետ ընդհարվելիս դուրս էր գալիս հաղթանակով, շատ գոհ էր մնում իր օրից, նման այն խաղամոլներին, որոնք շահելիս ուրախանում են, մոռանալով, թե ինչքան աննշան է խաղադրամը։ Աննետան սովորում էր մարդկանց ճանաչել։ Այն, ինչ նա տեսնում էր այդ մարդկանց մեջ, միշտ չէր, որ աչք էր ուրախացնում։ Բայց կյանքում ամե՞ն ինչ պետք է իմանալ։ Նա ծանոթացավ անհայտ աշխատանքի աշխարհի հետ։ Ճիշտ է, իսկական, խոր մերձեցում չկար, քանի որ երեխայությունը անջատում է մարդկանց, ապա աղքատությունը նույնպես անջատում է նրանց ոչ պակաս չափով։ Յուրաքանչյուրը կլանված է իր աշխատանքով և հոգսերով։ Եվ ամեն մեկը մյուսի մեջ տեսնում է ոչ այնքան դժբախտության ընկերոջը, ինչքան մրցակցի, որը նրանից խլում է երկրային բարիքների ինչ-որ մի մասը։

Այդպիսի զգացում Աննետան նկատում էր այն կանանց մեջ, որոնց հետ նա կյանքի բերումով մրցակցության մեջ էր մտել, և դա նրան հասկանալի էր. չէ՞ որ այդ կանանց համեմատությամբ ինքը կարող էր երջանիկ համարվել։ Եթե նա նույնիսկ աշխատում էլ էր, որպեսզի քրոջ համար բեռ չդառնա ապա այնուամենայնիվ նա քույր ուներ, և աղքատության սարսափները չէին սպառնում իրենն։ Աննետան վաղվա օրվա նկատմամբ տենդագին անվստահություն չէր զգում։ Կյանքում երեխան նրա համար սփոփանք էր, և ոչ ոք այդ երեխան նրանից խլելու ոտնձգություն չէր անում։ Ինչպե՞ս կարելի էր համեմատել նրա ճակատագիրը թեկուզև այն կնոջ ճակատագրի հետ, որի պատմությունը ինքն ուրիշ էր ունեցել իմանալու,— ուսուցչուհու, որին ազատել էին այն բանի համար, որ նա, ինչպես և Աննետան, համարձակություն էր ունեցել անամուսին մայր դառնալու։ Ճիշտ է, սկզբում նրան հանդուրժել էին աշխատանքի վայրում, պայման դնելով նրա առաջ՝ թաքցնել, որ ինքը երեխա ունի։ Նա որպես շնորհազրկված, արտաքսվել է մի խուլ գյուղ աշխատելու և ստիպված էր եղել բաժանվել իր փոքրիկից։ Բայց երբ երեխան հի-

վանդացավ, նա չկարողացավ դիմանալ և սլացավ նրա մոտ։ Ուսուցչուհու գաղտնիքը բացվեց, և գյուղի առաքինի բնակիչները սկսեցին կոպտորեն ծաղր ու ծանակի ենթարկել նրան։ Իսկ համալսարանական ղեկավարությունը, իհարկե, հավանություն տվեց «ժողովրդի վճռին», փողոց շպրտելով մորը երեխայի հետ, որպես բարոյականության կոդեքսը խախտողների։ Ահա՛ թե ումից է Աննետան հարկադրված խլելու հացի խղճուկ կտորը։ Նա իր ծառայությունները չէր առաջարկում այնտեղ, որտեղ աշխատանք էր ուզում ստանալ այդ կինը։ Բայց միշտ իրեն գերազանցում էին ուրիշներից հենց այն պատճառով, որ, աշխատանքի ավելի պակաս կարիք ունենալով, ինքն այնպիսի համառությամբ հետամուտ չէր լինում դրան, ինչպես մյուսները։ Մարդիկ չեն հարգում նրան, ով քաղցած է։ Եվ կյանքից դուրս մնացած դժբախտները Աննետայի մեջ տեսնում էին այն զավթիչին, որը կողոպտում էր իրենց։ Նրանք գիտակցում էին, որ արդարամիտ չեն նրա նկատմամբ, բայց երբ մարդն ինքն է անարդարության զոհ հանդիսանում, նա պետք է որևէ մեկի վրա թափի իր վիրավորանքը։ Աննետան հիմա ականատես էր լինում ամենասոսկալի պայքարին, աշխատավորների պայքարին ոչ թե բնության դեմ, ոչ թե հանգամանքների դեմ, ոչ թե հարուստների դեմ, որպեսզի նրանցից մի կտոր հաց պոկեն,— ոչ, նա հիմա ականատես էր լինում աշխատավորների պայքարին մեկը մյուսի դեմ, իրար ձեռքից փշրանք խլելուն, որ ցած էր ընկնում հարուստների կամ ժլատ Կրեսոսի— պետության սեղանից... Ահա թե ի՛նչ էր անում ծանր աղքատությունը։ Իսկ կանանց համար դա ավելի ծանր էր, հատկապես այն ժամանակվա, դեռ չհամախմբված կանանց. նրանք իրար հետ կռվում էին նախնադարյան վայրենիների նման, երես առ երես։ Փոխանակ իրենց ուժերը համախմբելու, նրանք այդ ուժերը բաժան-բաժան էին անում...

Աննետան գոտեպնդվում էր, թեև սիրտը հաճախ էր արնակոլոլ լինում, և, ուշադրություն չդարձնելով ոչնչի վրա, ուրախ գնում էր առաջ, մղված իր անշնորհակալ խնդրի թարմությունից, կիրառում փնտրող ուժերի պաշարից և իր օրերը խնդությամբ լուսավորող փոքրիկի մասին ունեցած մտքից։

Մարկն ամբողջ օրն անց էր կացնում Սիլվիայի արհեստանոցում։ Վիկտորինա հորաքույրը տեղափոխությունից հետո շուտով մահացավ։ Նա չկարողացավ տանել հին տնից, հին կահույքից և կեսգարյա խաղաղ կյանքի սովորություններից անջատվելու վիշտը։ Իսկ քանի որ Աննետան առավոտից մինչև իրիկուն տանը չէր լինում, Սիլվիան երեխային տանում էր իր մոտ։ Պատվիրատու կանայք ու վարպետուհիները նրան փաղաքշում էին, ինչպես տան կատվի ձագուկին։ Տեղ չէր մնում, որ նա չոքեչոք չմտնի, հետազոտում էր ամեն քունջ ու պուճախ կամ նստում սեղանի տակ և ճարմանդներ ու ծլանքներ հավաքում, ետ տալիս թելերի կծիկները։ Նրան անընդհատ քաղցրավենիք էին ուտեցնում և ծածկում համբույրներով։ Այն ժամանակ Մարկի երեք տարին նոր էր լրացել։ Նա Աննետայի նման բաց շիկահեր երեխա էր, ծանր հիվանդությունից հետո դեռ գունատված։ Այդ փոքրիկ երեխայի համար կյանքը անընդմեջ փոփոխվող տեսարան էր ներկայացնում։ Սիլվիան կարող էր մտաբերել իր սեփական կյանքի վաղ մանկության տպավորությունները, երբ նա, մտնելով մոր սեղանի տակ, ականջ էր դնում պատվիրատու կանանց խոսակցություններին։ Բայց մեծահասակների համար, որոնք աշխարհին նայում են իրենց ոտնացուպերի բարձրությունից, բացվում է բոլորովին ուրիշ տեսադաշտ,— նրանք արդեն չեն տեսնում այն, ինչ որսում են երեխայի աչքերը։ Եվ Մարկի փոքրիկ, վարդագույն ականջները նույնպես շա՜տ բան կարող էին լսել արհեստանոցում, երբ բացվում էին կանանց անպատկառ, անամոթ և ծաղրական լեզուները։ Սիլվիան և իր համայնքը չէին մեղանչում արտակարգ խստաբարոյությամբ։ Սիծաղի և բամբասանքների տակ ասեղը ավելի արագ է շարժվում մատների մեջ... Երեխայի ներկայությունից ոչ ոք չէր ամաչում. «Շա՜տ է հասկանում»... Ըստ երևույթին, Մարկը իսկապես էլ չէր հասկանում, բայց նա ամեն ինչ ներծծում էր իր մեջ, ոչ մի բան բաց չէր թողնում։ Երեխաներն ամեն ինչ վերցնում են, ամեն ինչ շոշափում, ամեն ինչ հետազոտում։ Վա՜յ նրան, ինչ առանց հսկողության է և ընկնում է նրանց ձեռքը։ Մտնելով սեղանի տակ, Մարկը բերանն էր խրում այն ամենը, ինչ վերևից ընկնում էր,—

թխվածքի փշրանք, կոճակ, կորիզ։ Այդ նույն ձևով էլ նա յուրացնում էր ամեն մի բառ,— ճիշտ է, դեռ առանց հասկանալու, բայց հասկանալու համար։ Եվ այդ բառերը նա ծամում էր, սերտում, երգում...

— Ա՛խ դու խոզուկ...

Աշկերտուհին խլում էր փոքրիկից ժապավենը, որը նա ծծում էր կամ հետազոտությամբ զբաղված խրում քիթը։ Բայց չէր կարելի նրանից խլել լսած կամ կուլ տված բառերը։ Առայժմ դրանք նա դեռ չէր օգտագործում—ինչի՞ն էր պետք։ Բայց դրանցից ոչ մեկը զուր չէ՛ր կորչում։

Դուրս քաշված սեղանի կամ յուրկաների տակից, որտեղ նա հետաքրքրությամբ դիտում էր ոտքերի և կոշիկների մեջ սեղմված գերի մատների շարժումները, և ստիպված լինելով ընդունել այնպիսի կեցվածք, որը հասունացածների աշխարհում համարվում է նորմալ և վայելուչ, փոքրիկը խելոք և հնազանդ նստում էր ցածրիկ աթոռին։ Սիլվիայի կամ մի ուրիշ կնոջ ոտքերի մոտ, որովհետև նրա մորաքույրը հազվադեպ էր հանգիստ մնում միևնույն տեղում նստած։ Նա այտը քսում էր յուրկայի տաք կտորին և, գլուխը ետ դցած, ներքևից վերև նայելով, տեսնում էր խոնարհված դեմքեր, աշխույժ ու շողշողուն, շարժուն բիբերով աչքեր, թելը կտրող կամ ներքին շուրթը կծող ատամներ, որոնց միջև թքի պրղպրջակներ էին գոյանում, իսկ փոքր-ինչ վերև՝ կարմիր երակներով թրթռացող ռունգներ։ Կամ դիտում էր, թե ինչպես է սեղը վազվզում մատների մեջ։ Ժամանակ առ ժամանակ որևէ մեկի ձեռքը խոտուտ էր ածում նրա կզակի տակը, մատնոցը մատին մի ձեռք, և մատնոցը սառեցնում էր նրա վիզը... Փոքրիկը այդտեղ էլ, ինչպես միշտ, աչքից ոչինչ բաց չէր թողնում. այդ ուրիշի ձեռքի չբրմուքությունը կամ թարմությունը, այդ ձեռքը ծածկող փափուկ աղվամազը, մաշկի վրայի վարդագույն արտացոլանքն ու սաթի սուվերները, կանացի մարմնի հոտը... Իհարկե, նա բոլորը նկատում էր անգիտակցաբար։ Աշխարհը ընկալող երեխայի բազմակողմանի գիտակցության մեջ ամեն ինչ անցողակի տպավորվում էր, ինչպես լուսանկարչական ժապավենի վրա... Արհեստանոցի կանանց մտքով չէր էլ անցնում, որ նրանք ոտից գլուխ դրոշմվում են

այդ զգայուն թանթիկի վրա։ Բայց Մարկը նրանց ընկալում էր ոչ ամբողջությամբ, այլ մի տեսակ կտոր-կտոր, և որոշ կտորներ չէին բավականացնում— ինչպես գլուխկոտրուկ խաղում, որտեղ պատկերների մասերը իրար են խառնված։ Այստեղից էլ Մարկի անբացատրելի համակրանքները, տարատեսակ և բուռն, բայց անցողիկ։ Շրջապատողները դրանք պարզապես քմայքներ էին համարում, սակայն բանն այդտեղ այնքան նրա անկայունությունը չէր, որքան այն, որ երեխային հրապուրում էր ոչ թե մարդը, այլ այդ մարդու մեջ որոշակի մի բան։ Դժվար է ասել, թե հատկապես ի՛նչն էր դուր գալիս երեխային նրան շրջապատող այս կամ այն կնոջ մեջ։ Ինչպես իսկական կատվի ձագուկ, նա սիրում էր ոչ թե մարդկանց, այլ ավելի շուտ իրեն փայփայող նրանց փափուկ ձեռքերը։ Նա արհեստանոցը սիրում էր, որպես այդ փաղաքշանքների մի ամբողջություն, դա նրա տան օջախն էր։ Մարկը ակնհայտ էգոիստ էր և լիակատար իրավունք ուներ դրա համար. փոքրիկ ստեղծագործողին ամենից առաջ պետք էր ստեղծել իր «ես»։ Այո, նա անկեղծ էգոիստ էր, նույնիսկ իր սիրո մեջ։ Նա շողոմորեն գգվում էր մեծերին, որովհետև ուզում էր դուր գալ և որովհետև դրանից բավականություն էր ստանում։ Ընդ որում գգվում էր ոչ թե բոլորին, այլ իր ընտրյալներին։

Առաջին իսկ օրից նրան ամենից շատ դուր եկավ Սիլվիան։ Նա բնազդով, ինչպես ընտանի կենդանին, անմիջապես հասկացավ, որ Սիլվիան այդ օջախի աստվածն է, տիրուհին և իշխանուհին, որը կերակրում է, համբույրներ է տալիս, որը «եղանակ է ստեղծում» և, կնշանակի, ձեռնտու է նրան սիրաշահել։ Իսկ ավելի ձեռնտու է նրա սիրելին լինել։ Եվ փոքրիկը շատ շուտ նկատեց, որ այդ արտոնությունը իրեն է տրված։ Ասենք, նա ամենևին չէր էլ կասկածում, որ ինքն արժանի է դրան, և գոնում էր, բայց, այնուամենայնիվ, որոշ բավականությամբ, որ արհեստանոցի գերագույն տիրուհու կողմից ցուցաբերված ուշադրության հաճելի և շոյիչ նշանները հենց այդպես էլ պետք է լինեին։ Սիլվիան նրան երես էր տալիս, փաղաքշում, հիանում նրա ճարպկությամբ, բառիկներով, խելքով, զեղեցկությամբ, աչքերով, քթով, բևրա-

նով։ Նա բոլոր հաճախորդներին նույնպես ստիպում էր սքանչանալ երեխայով, և այնպես էր պարծենում, կարծես ինքն էր նրան աշխարհ բերել։ Ճիշտ է, երբեմն Սիլվիան նրան «խոզի ճուտ» և «անպետք տղա» էր անվանում, ցույց էր տալիս իր ուժը, շրպպացնում էր, բայց դրանից Մարկը չէր նեղանում և նույնիսկ դրա մեջ առանձնապես տհաճ ոչինչ չէր գտնում (որը և չէր խանգարում նրա բարձրաձայն հակատակվելուն)։ Ամեն մարդ չէ, որ արժանանում է թագուհու ձեռքի ապտակի՜ն։ Եթե դա արհեստանոցի աղջիկներն անեին կամ աննշան մեկնումեկը, Մարկը ոչ մի դեպքում դա չէր հանդուրժի, աստված ո՞չ անի։ Բացի դրանից, Սիլվիան առանձին վերցրած էլ, առանց իր գալիսոնի, դուր էր գալիս նրան։ Մարկի հոգում կուտակված տպավորությունների անկանոն կույտի մեջ ամենից շատ բանը Սիլվիայից էր։ Երեխան սիրում էր թաղվել նրա յուբկայի մեջ և, գլուխը սեղմելով Սիլվիայի փորին, կարծես նրա մարմնի միջով, լսել Սիլվիայի ծիծաղն ու ձայնը։ Կամ, մագլցելով նրա ծնկներին, թաթիկներով գրկում էր նրա վիզը և քիթը, շրթունքները ու աչքերը քսում Սիլվիայի նուրբ այտին, ականջի մոտի շեկ խոպոպներին, որոնցից այնքան լավ հոտ էր գալիս։ Երեխայի համար շոշափելիքի զգայարանը նույնն է, ինչպես մեծերի համար աչքերը։ Շոշափելը թալիսման է, որ նրա առջևում ետ է հրում պատնեշները և օգնում նրան երազներ հյուսել այն մասին, ինչ ինքը կարծես տեսել է՝ երազներ կյանքի մասին։ Փոքրիկ Մարկը հյուսում էր իր երազը։ Եվ դեռ չիմանալով, թե ինչ են այդ շեկ խոպոպները, այդ այտը, այդ ձույնը և ծիծաղը, այդ Սիլվիան, ինչ բան է «ես» և «իմը» նա արդեն մտածում էր.

«Սա իմն է»։

Աննետան տուն էր գալիս միայն երեկոյան, միշտ շատ քաղցած։ Ամբողջ օրը նա թափառում էր անսեր աշխարհում, ինչպես անջուր անապատում, և ապրում էր այն աղբյուրի մտքով տարված, որից երեկոյան խմելու էր։ Նա լսում էր այդ աղբյուրի խոխոջյունը, նախապես արդեն կանխավայելում էր, թե ինչպես շուրթերով կհպվի նրան։ Եվ երբեմն

փողոցում, երբ հիշելով իր երեխային, նա ժպտում էր, որևէ անցորդ կարծում էր, թե այդ գեղեցիկ կինը իրեն է ժպտում։ Ինչպես մսուրքի մոտիկությունն զգացող ձի, Աննետան մերձենալով Սիլվիայի տանը, քայլն արագացնում էր, իսկ տեղ հասնելով, վերջապես, չնայելով հոգնածությանը, վազքով բարձրանում էր սանդուղքն ի վեր և երջանկությունից ծիծաղում։ Դուռը բացվում էր, նա իրեն գցում էր սենյակ և նետվում երեխայի վրա. գրկում սեղմում էր նրան, ճխլում, խելագարի պես համբուրում աչքերը, քիթը, վիզը, որտեղ պատահեր, աղմկով արտահայտում իր ուրախությունն ու ջերմ քնքշությունը։ Իսկ Մարկը, որ մինչև նրա գալը զբաղված էր լինում խաղով, կամ, հարմարորեն փափուկ պուֆին նստած, լուրջ-լուրջ կավիճով ձողիկներ էր նկարում, կամ զվարճանում տարբեր գույնի թելեր խճճելով, դժգոհ էր մնում մոր ներխուժումից։ Այդ խոշոր, կրակոտ կինը ներս էր վազում բոլորովին անսպասելի, հափռում էր նրան շատ աննրբանկատ, պտտեցնում էր, ուղղակի ականջներին ինչ-որ բան էր բղավում, խեղդում համբույրներով... Ոչ, դա նրան ամենևի՛ն դուր չէր գալիս։ Նրան տնօրինում էին իր կամքին հակառակ—դա վրդովի՛չ էր։ Մարկը ոչ մի կերպ դրա հետ չէր կարողանում հաշտվել։ Եթե նա զայրացած դիմադրում էր, Աննետան սկսում էր ավելի կատաղի համբուրել ու գդել նրան, բա ծվծվո՛ցը, ծիծա՛ղը... Աննետայի մեջ Մարկին ոչ մի բան դուր չէր գալիս.-աննրբանկատություն, աղմկոտություն, կոպտություն... Մարկը շատ լավ հասկանում էր, որ մայրն իրեն սիրում է, սքանչանում է իրենով, Մարկը նույնիսկ համաձայն էր— Թող համբո՛ւրի։ Բայց մարդ իրեն պետք է կարգի՛ն պահի։ Թե դա ո՞րտեղից է լույս ընկել այդ տարօրինակություններով։ Այ, Սիլվիա մորաքույրն ու նրա աղջիկները շատ ավելի լավն էին։ Նրանք խաղում էին իր հետ և նույնպես ծիծաղում էին ու աղմկում, բայց երբեք այդքան մոլեգնորեն չէին աղաղակում, այդպես կոպտորեն չէին հափռում իրեն, չէի՛ն խեղդում համբույրներով։ Մարկը չէր հասկանում, թե ինչու Սիլվիան, այդքան լավ կարողանալով շշպռել իր ենթականերին, կարգին վարվեցողություն չի սովորեցնում այդ անդաստիարակ անձնավորությանը, այդ ինչպես է, որ մորա-

քույրը փորձ չի անում նրան պաշտպանել այդ կոպտություններից։ Իսկ Սիլվիան, ընդհակառակը, Աննետայի հետ վարվում էր սիրալիր և ինչպես հավասարի հետ—մյուսների հետ նա այդպես չէր խոսում։ Նա Մարկին անընդհատ կրկնում էր.

— Դե մի քիչ քնքո՜ւշ եղիր։ Համբուրի՛ր մամային։

Այո, այդ կինը նրա մայրն է, նա այդ, իհարկե, գիտեր, բայց այդպես վարվելու համար դա դեռ պատճա՞ռ չէ։ Մարկը հասկանում էր, որ Աննետան նույնպես ինչ-որ տնային իշխանություն է։ Նա դեռ շատ լավ էր հիշում մոր կրծքի ջերմությունը, նա դեռ պահպանում էր իր ափսոի փոքրիկ բերանում նրա կաթի քաղցր համը, իսկ ձագուկի իր մարմրնում՝ իրեն ծածկող թևի ոսկեգույն սուլերը։ Եվ դեռ վերջերս, երբ ինքը այնպես հիվանդ էր և անտեսանելի թշնամին սեղմում էր իր կոկորդը, նրա վրա ամբողջ գիշերները մինչև լույս խոնարհվում էր ամենազոր պաշտպանի գլուխը... Այո, այո, բոլորն այդպե՞ս էր։ Բայց հիմա Աննետան այլևս նրան պետք չէր։ Եթե նա անգամ պահպանում էլ էր ինչ-որ տեղ հիշողության խորքում բոլոր այդ հուշերը՝ շատ ու շատ ուրիշների հետ, ապա դրանք նրա համար արդեն ոչ մի նշանակություն չունեին։ Երբևէ հետագայում, գուցե... Հետո կերևա... Իսկ հիմա ամեն մի ակնթարթը երկնքի նոր նվերներ էր բերում նրան—հասցրու միայն հավաքե՛լ։ Երեխաները անշնորհակալ ժողովուրդ են։ Mens momentanea[1]... Մի՞թե դուք կարծում եք, թե նրանք ժամանակ ունեն վերհիշելու այն, ինչը երեկ նրանց ուրախություն էր պատճառում։ Նրանց համար թանկ է լոկ այն, ինչ այսօր է հաճույք պատճառում իրենց։ Աննետան մեծ սխալ գործեց, թույլ տալով ուրիշներին ստվերում թողնել իրեն այսօր և երեխայի համար դառնալ ավելի հաճելի և նույնիսկ ավելի կարևոր։ Ինչո՞ւ այդ մաման, ամբողջ օրը աստված գիտե որտեղ թափառելու և երեկոյան այդքան անպատեհ հայտնվելու և նրա վրա նեղվելու փոխարեն, մշտապես չէր զբաղվում նրա հետ, չէր հոգում նրա մասին, ինչպես Սիլվիան ու բոլոր աղջիկները։ Իսկ եթե այդպես է,

[1] Հոգի, որն ակնթարթով է ապրում... (լատ.)։

ավելի՛ վատ իր համար։ Եվ Մարկը միայն ներողամտորեն էր հանդուրժում Աննետայի փոթորկուն փաղաքշանքները, պատասխանելով սիրահարված մոր անհեթեթ հարցերի անձրևին դժկամ և անտարբեր «այոներով», «ոչերով», «բառևներով», իսկ հետո, այտը սրբելով, փախուստով փրկում այդ տարափից, և վերադառնում իր խաղերին կամ Սիլվիայի ծնկների վրա։

Աննետան չէր կարող չտեսնել, որ Մարկը Սիլվիային սիրում է ավելի շատ, քան իրեն։ Սիլվիան դա էլ ավելի լավ էր տեսնում։ Նրանք միասին ծիծաղում էին դրա վրա, և երկուսն էլ կարծես դրան փոքրագույն նշանակություն անգամ չէին տալիս։ Բայց գաղտնաբար Սիլվիան իրեն շոյված էր զգում, իսկ Աննետան խանդում էր։ Նրանք չէին ուզում այդ զգացմունքները նույնիսկ իրենք իրենց խոստովանել։ Սիլվիան բարի աղջիկ էր և անբարեհամբույր երեխային ստիպում էր համբուրել Աննետային։ Այդ հարկադրական համբույրները Աննետային քիչ էին ուրախացնում, բայց դրա փոխարեն Սիլվիան գոհ էր։ Նա չէր խոստովանում իրեն, որ կողոպտում է աղքատի այգին, իսկ հետո թագավորական առատաձեռնությամբ մի քանի պտուղ է տալիս այդ աղքատին նրա իսկ այգուց։ Այդպիսի բաները մարդիկ իրենք իրենց չեն ասում, որպեսզի չխռովեն ձանձրացնող խիղճը, բայց դրա փոխարեն նրանք լուության մեջ ավելի շատ բավականություն են ստանում դրանից։ Եվ Սիլվիան առանց որևէ գիտակցված նենգության սիրում էր քրոջ ներկայությամբ ընդգծել երեխայի վրա ունեցած իր իշխանությունը, Մարկի փաղաքշանքները նրան ավելի մեծ բավականություն էին պատճառում հատկապես այն ժամանակ, երբ Աննետան ներկա էր լինում։ Աննետան շինծու կատակով անփութորեն ասում էր.

— Աչքից հեռու եղար, սիրտը մոռանո՞ւմ է։

Բայց հոգում նա կատակելու տրամադրություն չուներ։ Սա այն տեղը չէր, որ կարելի էր հեգնել։ Աննետայի միայն միտքն էր ծաղրասեր, իսկ սիրում էր կուրորեն, ինչպես կենդանիները են սիրում։ Այդ՝ բառի լիակատար իմաստով կնոջ համար ծանր էր թաքցնել իր զգացմունքները։ Բայց

չէ որ նրան ձեռ պահնեին, եթե ինքը բացեր նրանց առաջ իր խեղճ, սիրտ քաղց զգացող սիրտը։ Եվ նա Սիլվիայի և մյուս աղջիկների ներկայությամբ անտարբեր էր ձևանում և հագեցած, խոսում էր օրվա իրադարձությունների մասին, մարդկանց մասին, որոնց հանդիպում էր, պատմում էր այն, ինչ լսում, անում և խոսում էր այսօր,— մի խոսքով, այն ամենի մասին, ինչի նկատմամբ ինքը անտարբեր էր (և այն էլ ինչքա՜ն անտարբեր...)։

Բայց գիշերը, երբ Աննետան, վերադառնալով տուն, երեխայի հետ մենակ էր մնում, նա կարող էր անզուսպ կերպով տրվել իր վշտին։ Ասենք, ոչ միայն վշտին, այլև ուրախությանը, սիրտ բուռն պոռթկումներին։ Այստեղ ոչ ոքից պետք չէր զգուշանալ, ոչ մեկից իր զգացմունքները թաքցնելու կարիքը չկար։ Այստեղ նրա տղան պատկանում էր միայն իրեն, նրան տիրապետում էր անբաժանելիորեն։ Եվ Աննետան մի քիչ այդ չարաշահում էր, հոգնեցնելով երեխային իր հախուռն քնքշությամբ։ Փոքրիկ դիվանագետը, հասկանալով, որ այստեղ, Սիլվիայից հեռու, նա անօգնական է, թաքցնում էր իր դժգոհությունը. մինչև վաղը պետք էր մի կերպ չդժվել այդ խելացնոր մոր հետ։ Մարկը խորամանկ հնարք էր գտնում. ձևացնում էր, թե իբրև քունը սարսափելի տանում է։ Երկար ձևացնելու կարիք չէր լինում—Մարկը տպավորություններով լի օրից հետո իսկույն քնում էր։ Իսկ մինչև այդ նա աչքերը փակ պահում էր մոր գրկում—կարծես ամբողջովին ուժասպառված, ինչպես մահվան դատապարտված գառնուկ։ Եվ Աննետան ուզած-չուզած պետք է նրան անկողին դներ, ընդհատելով մանկան թոթովանքը։ Իսկ փոքրիկ կոմեդիանտը կես քնի մեջ, որից աստիճանաբար արթնանում էր, մինչև իրեն ցած էին տանում, գաղտագողի զվարճանում էր, թարթիչների արանքից նայելով դյուրահավատ մորը, որը անհուն սիրով և լռելյայն զննում էր որդուն։ Այդպիսի րոպեներին Մարկը գիտակցում էր իր գերազանցությունը և մորը դրա համար շնորհակալ էր։ Նա երբեմն նույնիսկ թափով գրկում էր մոր վիզը իր թաթիկներով, երբ Աննետան չոքած էր լինում նրա փոքրիկ մահճակալի մոտ։ Այդ անսպասելի փաղաքշանքը Աննետային հատուցում էր

ամեն ինչի դիմաց։ Բայց դա հաճախ չէր պատահում։ — Մարկը քնքշություններ դրսևորելու մեջ ժլատ էր։ Եվ Աննետան անկողին էր մտնում քաղցը չհագեցրած։ Նա շուտ չէր քնում, երկար ժամանակ շուռումուռ էր գալիս, ականջ էր դնում երեխայի շնչառությանը, իսկ գլխում մտքերը տեն-դագին կերպով այս ու այն կողմ էին սլանում... Նա ինքն իրեն կրկնում էր. «Մարկը նույնիսկ ինձ չհամբուրեց քնե-պես պետքն է... Նա ինձ չի սիրում...»։ Եվ սիրտը ցավագին մղկտում էր։ Բայց նա իսկույն իրեն թափ էր տալիս. «Ես այդ ի՞նչ եմ հնարում»։

Պետք էր անմիջապես վանել այդ միտքը,— մի՞թե կարելի է այդ մտքի հետ ապրել։ Ոչ, դա ճի՞շտ չէ... Նա ինչպե՞ս կարող է մեղադրել իր հիանալի որդուն... Եվ Աննետան հապճեպորեն հաջորդաբար քննեց իր հիշողությունները, փնտրելով ու գտնելով այն ամենը, ինչ լավագույնն էր, երե-խայի մեջ եղած քնքշության բոլոր փայլատակումները, նրա փաղաքշական բառիկները։ Մտաբերելով դրանք, Աննետան պատրաստ էր անկողնուց վեր ցատկել և կրկին նետվել երեխային համբուրելու... «Ոչ, պետք չէ արթնացնել, սը՜ս... ի՞նչ թեթև շնչառություն է... Դու իմ գանձ... Ինչքա՜ն լավ կլինի միասին, երբ դու մեծանաս...»։

Ներկան բավական վհատեցուցիչ էր, և Աննետան այդ տանելի դարձնելու համար պատկերում էր որդու ապագա մտերմությունը իր հետ այն ձևով, ինչպես ինքը կուզեր։ Աննետային կուռք էր պետք, որպեսզի ծառայություն մատու-ցելիս վատնի այն ուժերը, որոնք որոշ ժամանակից ի վեր նորից էին թափառում իր մեջ և զրկում հանգստից։

Դա արդեն այն տագնապալից տխրությունը չէր, այն ներվային անհանգստությունը, որոնք տանջում էին նրան Մարկի հիվանդությունից առաջ և որոնց մոռանալ տվեց այդ հիվանդությունը։ Անցան այն անգործունյա օրերը, երբ նա իրեն ունայնացած էր զգում,— ո՛չ ուժ, ո՛չ հետաքրքրու-թյուն որևէ բանի հանդեպ, լիակատար հանդարտություն՝ տեղատվությունից առաջ...

Այժմ օվկիանոսում վրա էր հասել նոր մակընթացություն, որն արդեն ավետում էր իր մասին դիշերային անդորրում

լեռնացող ալիքների մռնչյունով։ Մայրությունը ժամանակավորապես մեղմացրել էր կրքերը, իսկ աշխատանքային կյանքից եկած մշտագո ֆիզիկական հոգնածությունը այն պատնեշն էր, որն առնում էր դրանց առաջը։ Բայց, կուտակվելով ինչ-որ տեղ խորքում, նրանք զարնվում էին այդ պատնեշին, ինչպես ժայռերին ծեծող ալիքները։ Մարդկային հոգու աճը տեղի է ունենում պարուրաձև, և Աննետայի հոգին այժմ մոտիկ էր այն վիճակին, որը նա մի անգամ արդեն տարել էր, մի հինգ տարի առաջ, Գրիգոնյան հոթելում տոթակեզ ամռան և այն գարնան միջև, երբ նա սիրեց Ռոժե Բրիսսոյին։ Այո, վիճակը մոտ էր այն մյուսի՛ն, առաջվանին, բայց ոչ ամբողջովին։ Վերադառնալով անցյալին, մենք միայն պատյաններ ենք տալիս նրա վերևում, առանց ցած իջնելու։ Աննետան այդ տարիների ընթացքում հասունացել էր։ Նրա հուզմունքի մեջ արդեն չկար երիտասարդ աղջկա կույր մաքրությունը։ Նա դարձել էր կին, և նրա ցանկությունները սուր էին և պարզորոշ։ Նա հիմա դիտեր ուր են տանում իրեն այդ ցանկությունները,— հենց այդ պատճառով էլ նա չէր ուզում նրանց ականջ դնել։ Նրա կամքը հասունացել էր նույնպես, ինչպես մարմինը։ Ներքին կյանքը դարձել էր ավելի հարուստ, և բոլոր ապրումները զգայական երանգ ունեին։

Այդպիսով, այդ ծանոթ և ահաբեկող կրքերի նոր երևան գալը, ինչպես տոթ կեսօր, ամպրոպ էր ավետում։ Ճնշող լռությունը իր մեջ թաքցնում էր մոտալուտ տագնապներ։ Դա եկել էր փոխարինելու անհոգ ուրախությանը, երիտասարդ առավոտի անփույթ տրամություններին։ Մինչև այժմ Աննետայի երեսին իջնող ստվերները արագ անհետանում էին։ Հիմա նա մշտապես լարված էր։ Եթե Աննետան մարդկանց մեջ մոռանում էր հետևել իրեն, եթե երեխայի ներկայությունը չէր շեղում ուշադրությունը, նա լռակյաց էր, և հոնքերի միջև հայտնվում էր ցայտուն մի ծալք։ Իրեն բռնելով այդ մտքի մեջ, նա առանց աղմուկի դուրս էր գալիս սենյակից։ Եվ եթե մեկնումեկը, անհանգստացած նրա բացակայությունից, որոշեր նրան փնտրել, նա Աննետային կգտներ իր բնակարանում,— նա սենյակն էր հավաքում, անկողինը

գցում, շրջում էր ներքնակը, կահույքը մաքրում կամ սրբում լուսամուտները, իրար անցնելով ավելի շատ, քան պետք էր, բայց անկարող՝ դրանով խլացնել հոգեկան խռովքը։ Նա հաճախ էր մտքերի մեջ ընկնում գործ անելիս, շորը ձեռքին կանգ առնելով աթոռի վրա կամ հենվելով լուսամուտի գոգին։ Այդպիսի րոպեներին նա մոռանում էր ոչ միայն անցյալը, այլև ներկան, մեռածներին և կենդանիներին, մոռանում էր նույնիսկ երեխային։ Նա նայում էր և ոչինչ չէր տեսնում, ունկնդրում էր առանց լսելու, մտածում էր առանց մտքերի։ Դատարկության մեջ հուրհրացող բոց։ Բայց ծովում հողմի բերանն ընկած առագաստ։ Նա զգում էր, ինչպես է այդ հողմի հզոր շունչը թափանցում իր մեջ, և նավը ինչպես է ցնցվում իր բոլոր կայմերով... Աստիճանաբար անվերջությունից հայտնվում էին նրան շրջապատող իրերի դեմքերը։ Լուսամուտից, որի մոտ նա կանգնած էր, լսվում էին բակից եկող ծանոթ հնչյունները։ Աննետան ճանաչում էր իր տղայի երգեցիկ ձայնը։ Բայց նա նույնպես չէր խախտում Աննետայի հարթմնի երազանքը, միայն ուրիշ երանգ էր տալիս... Դա նման էր ամառային օրը երգող թռչունի երգի... Օ՜ արևով ողողված սիրտ, սիրո ինչպիսի՜ պաշար է դեռ պահվում քո մեջ։ Լիաբո՜ւռ վերցնել կյանքը... Բայց որսը չափազանց ծանր էր... Հոգին չէր կարողանում այդ պահել և սուզվում էր հրե անդունդի մեջ, որտեղ ո՜չ երգ կար, ո՜չ իր փոքրիկի ձայնը, ո՜չ ինքը՝ Աննետան,— ոչինչ, միայն հզոր, այրող բաբախյուն էր...

Աննետան արթնանում էր իր երազանքներից, դեռ կանգնած մինուլն տեղում՝ պատուհանի մոտ։

Բայց գիշերները սևեռուն երազները, որոնք, կարծես Մարկի ծնվելուց հետո չքացել էին, այժմ նորից էին վերադառնում, անընդմեջ փոխարինելով մեկը մյուսին։ Աննետան մեկից մյուսի մեջ էր գլորվում, կարծես հարկից հարկ։ Իսկ առավոտյան վեր էր կենում ջարդված ու կարծես այրված, որ մի գիշերվա մեջ տասը գիշերների ապրումներ է ունեցել։ Եվ չէր ուզում վերհիշել այն, ինչ ինքը երազում տեսել էր...

Շրջապատողները նկատում էին, որ նրա դեմքը մոտհոգված է, հայացքը ցրված։ Նրանց համար հասկանալի չէր

Աննետայի մեջ տեղի ունեցած փոփոխությունը, բայց նրանք չէին անհանգստանում, դա բացատրում էին արտաքին պատճառներով-նյութական դժվարություններով։ Մինչդեռ այդ տագնապալից փոփոխությունը խոր վերափոխության սկիզբ էր։ Աննետան այդ չէր գիտակցում և վերապրում էր դա որպես յուրատեսակ հղիության շրջան, ավելի տանջալից, քան ապագա մայրությունը։ Ասենք, դա հենց յուրատեսակ մի մայրություն էր—թաքնված հոգու ծնունդ։ Այդ հոգին, որպես սերմ, թաղված է մարդկային բուսահողի խորքում, որն իր մեջ սերունդների թափուկներ է պահպանում։ Նրան այդտեղից դուրս կորզելը ամբողջ երկար կյանքի գործ է։ Այո, մի ամբողջ կյանք է գնում մարդու այդ ծննդի համար։ Եվ հաճախ մանկաբարձուհին մահն է լինում։

Աննետան գաղտնի սարսափ էր զգում անհայտ էակի առաջ, որը երբևէ նրա միջից դուրս է պրծնում ազատություն։ Սարսափի և ամոթի նոպաների ժամանակ նա ամփոփվում էր ինքն իր մեջ, ամբողջովին սուզվում էր իր փոթորկուն ներքին կյանքը, միայնակ մնալով իր մեջ գտնվող այդ նոր մարդու հետ։ Հարաբերությունները նրանց միջև թշնամական էին։ Մինոլորտը հագեցած էր էլեկտրականությամբ, և այդ նախաամպրոպային անդորրի ժամանակ մերթ կապանքաղերծվում էին, մերթ հանդարտվում մրրիկները։ Աննետան վտանգ էր զգում։ Իզուր էր նա աշխատում դեպի ստվեր հրել այն, ինչը շփոթի էր մատնում իրեն։ Ստվերում թե ստվերից դուրս—միևնույն է, դա իր մեջ էր մնում իր խռովահույզ հոգում։ Իսկ իմանալ, որ քո հոգին վերից մինչև վար բնակեցված է անհայտ էակներով,— դա այնքան էլ հանգստացուցիչ բան չէ...

«Չէ որ այդ բոլորը ես եմ... Բայց ի՞նչ է ուզում ինձանից այդ «էակը»։ Ի՞նչ եմ ես ինքս ուզում»։

Աննետան պատասխանում էր իրեն.

«Դու այլևս ցանկանալու բան չունես։ Այն, ինչ ուզում էիր, արդեն ունես»։

Կամքի ճիգերով Աննետան իր սիրո ամբողջ ավյունը փոխադրում էր երեխայի վրա։ Մայրական կրքի այդ բորբոքումները նրան երջանկություն չէին բերում։ Աննորմալ,

չափն անցնող, հիվանդագին (քանի որ դրանք անհաջող փորձեր էին, այլ ուղի փոխադրելու միանգամայն ուրիշ բնազդներ, որոնց խարել չէր կարելի) կիրքն այդ կարող էր միայն հիասթափության հանգեցնել։ Նա վանում էր երեխային։ Մարկն ըմբոստանում էր իր հանդեպ ցուցաբերած այդ բռնության դեմ և արդեն մորից չէր թաքցնում վրդովմունքը։ Աննետան Մարկին ձանձրացնում էր իր փաղաքշանքներով, և նա այդ արտահայտում էր կարճ ու զայրագին մենախոսություններում, որոնք Աննետան, բարեբախտաբար, չէր լսում։ Բայց մի անգամ Սիլվիան դրանք թաքուն լսեց և սաստիկ նախատեց նրան, ընդ որում ամբողջ կոկորդով մեկ քրքջալով։ Մարկը, դռան հետևը անկյունում կանգնած, խոսում էր պատի հետ։ Ձեռքերը թափահարելով, նա վճռական ու զայրագին կրկնում էր.

— Ձանձրացրե՞լ է ինձ այդ կինը։ Ձանձրացրե՞լ է...

Ցանկանալով պատմել որևէ մեկի կյանքի պատմությունը, մենք նկարագրում ենք նրա իրադարձությունները։ Կարծում ենք, թե հենց դա էլ կյանքն է։ Բայց դա միայն նրա քաղաքն է։ Կյանքը այն է, ինչ տեղի է ունենում մեր ներսում։ Իրադարձությունները դրսից ներգործում են նրա վրա լոկ այն ժամանակ, երբ դրանց մատնանշողը և, ես նույնիսկ կասեի, հարուցողը կյանքն է։ Հենց այդպես է լինում դեպքերի մեծամասնությունը։ Մի ամսվա ընթացքում տասնյակ իրադարձություններ են տեղի ունենում մեր շուրջը, բայց դրանք մեր մեջ ոչ մի կերպ արձագանք չեն գտնում, որովհետև այդ իրադարձությունները մեզ համար նշանակություն չունեն, բայց եթե դրանցից որևէ մեկը մեզ սաստիկ կերպով դիպչի, կարելի է երաշխավորել, որ մենք գնում էինք դրան ընդառաջ և հանդիպեցինք կես ճանապարհին։ Եթե հարվածը գործողության մեջ է դնում մեր ներսում որևէ զսպանակ, նշանակում է այդ զսպանակը լարված էր և հարվածի էր սպասում։

1904 թվականի վերջին Աննետայի հոգեկան լարվածությունը սկսեց թուլանալ, և այդ ներքին փոփոխությունը,

թվում էր, կապված է եղել որոշ փոփոխությունների հետ, որոնք այն ժամանակ տեղի էին ունենում նրա շուրջը։

Սիլվիան ամուսնանում էր։ Նա քսանվեց տարեկան էր և արդեն բավական վայելել էր ազատության բերկրությունը, գտնում էր, որ ժամանակն է նաև ընտանեկան կյանքի ուրախությունը ճաշակել։ Սիլվիան ամուսին էր ընտրում զգուշորեն, առանց շտապելու։ Սիրային կապերից նա ամրություն չէր պահանջում, միայն թե բավականությո՛ւն պատճառեին։ Իսկ ամուսինը պետք է լինի լավորակ, ամուր նյութից։ Իհարկե, Սիլվիան ուզում էր, որ այդ ամուսինը, բացի դրանից, նաև իրեն դուր գա։ Բայց չէ որ դուր գալը լինում է տարբեր ձևով։ Երբ մարդուն ամուսին ես ընտրում, նրանով հրապուրվելը ամենևին էլ պարտադիր չէ։ Սիլվիան այդ գործում ղեկավարվում էր բանականության փաստարկներով և նույնիսկ գործնական նկատառումներով։ Նրա ձեռնարկությունը փրթթում էր։ «Սիլվիա։ Ջգեստներ և վերարկու» ցուցանակի տակ գտնվող արհեստանոցը հիանալի համբավ ուներ, որին և արժանի էր, և միջին բուրժուազիայի շրջաններում նվաճել էր ընտրյալ կլիենտներ. այստեղ կարում էին նրբագեղորեն, ճաշակով և չափավոր գներով։ Արհեստանոցը հասել էր այն սահմանին, որը Սիլվան չէր կարող անցնել միայնակ, սեփական ուժերով։ Նրան այնպիսի կոմպանյոն էր պետք, որ կարողանար անցնել այդ գիծը, կարողանար ընդլայնել ձեռնարկությունը, նրա կանաչի զգեստների արհեստանոցին միացնելով տղամարդկանց բաժին։

Ոչ ոքի հաղորդակից չդարձնելով իր պլաններին, Սիլվիան սկսեց հարմար մարդ փնտրել։ Ի վերջո արեց վերջնական ընտրությունը։ Եվ, ընտրությունը կատարելով, որոշեց ամուսնանալ իր ընտրյալի հետ։ Իսկ սե՞րը։ Սերը, ասում էր Սիլվիան, հետո կգա, դրա համա՞ր էլ ժամանակ կլինի։ Նա չի ամուսնանա այնպիսի մարդու հետ, որին չկարողանա սիրել։ Բայց սերը գլխավորը չէ։ Առաջին տեղում գո՞րծն է։

Նրա ընտրյալի անունը Լեոպոլդ Սելվ էր, և նրանց ծանոթության առաջին իսկ րոպեին արհեստանոցի երիտասարդ սիրուհին նոր ֆիրմայի համար անուն գտավ, որը գեղեցկությամբ փայլելու էր ցուցանակի վրա. «Սելվ և Սիլվիա»։

Սակայն, թեև կնոջ համար հնչեղ անունը քիչ նշանակություն չունի, Սիլվիան այնքան հիմար չէր, որ բավարարվեր միայն դրանով. Սելվը հիանալի զույգ էր։ Այդ ոչ այնքան երիտասարդ (արտաքուստ նրան երեսունհինգից պակաս չէին տա) և բավական երևելի, ինչպես ասում են, «կարգին չձևված, բայց ամուր կարված», փթթուն կարմրաշեկ մազերով տղամարդը փարիզյան նշանավոր մի դերձակի մոտ ծառայում էր որպես ավագ ձևարար։ Նա լավ գիտեր իր արհեստը, շատ փող էր աշխատում և, բացի դրանից, լուրջ մարդ էր և ոչ զբոսամոլ. Սիլվիան տեղեկություններ հավաքեց։ Եվ վճիռը կայացվեց—առայժմ միայն Սիլվիայի գլխում։ Նա դեռ չէր հարցրել, Սելվը համաձա՞յն է թե չէ։ Բայց դա ամենից քիչ էր նրան անհանգստացնում. Սիլվիան գիտեր, որ նպատակին կհասնի։

Սելվը նրա ամուսինը գառնալու պատվին բոլորովին չէր հետամտում։ Այդ ուրախ, ամենևին ոչ փառասեր մարդը, որ բավական մեծ էդոիստ էր, իր հարմարություններն ու սովորույթները բարձր գնահատող, որոշել էր ամուրի մնալ։ Նա մտադրություն չուներ թողնելու, թեև համեստ, բայց եկամտաբեր և իրեն ոչ մի պատասխանատվությամբ չծանրաբեռնող իր տեղը այն դերձակի արհեստանոցում, որը Սելվին բարձր էր գնահատում։ Բայց Սիլվիան շատ շուտ շրջեց նրա բոլոր պլանները և հանգիստը խանգարեց։ Նրանք հանդիպեցին (հանդիպումը նախապես կազմակերպել էր Սիլվիան) աշնանային մի ցուցահանդեսում, ուր երկուսն էլ ձգել էին մոդաններին ծանոթանալու համար։ Սիլվիային շրջապատել էին երկրպագուները—մի քանի երիտասարդներ, որոնք ջունդ սիրահարված էին նրան, և նա աջ ու ձախ ժպիտներ էր շռայլում, սուր և ուրախ խոսքեր թափում, ոչ մի ուշադրություն չդարձնելով Սելվի վրա։ Այնուհետև, երբ Սելվը (ոչ առանց վշտանալու) բավական գնահատեց նրա սիրալիրությունը և արամտությունը, որ նախատեսված էր ոչ իր համար, Սիլվիան անսպասելի կերպով նրան արժանացրեց բարյացակամ ուշադրության։ Այժմ նա դիմում էր միայն ու միայն նրան—ժյուռանները գնացին հետին պլան։ Այդ հանկարծակի շրջադարձը կաշառեց Սելվին, մանավանդ որ նա այդ վիրագրեց

իր անձնական արժանիքներին։ Դա Սիլվիայի կողմից ճարպիկ քայլ էր— ու Սելվը թակարդն ընկավ։ Եվ նա հրաժե՜շտ տվեց իր բոլոր բարի մտադրություններին։

Որոշ ժամանակից հետո Սիլվիան խնդրեց Աննետային ճաշից հետո երեկոյան գալ իր մոտ, այն ժամին, երբ արհեստանոցում սովորաբար արդեն ոչ ոք չէր լինում։

— Ես քեզ խնդրում եմ գալ, որովհետև սպասում եմ մի մարդու,— ասաց նա։

Աննետան զարմացավ։

— Իսկ ես ինչի՞ եմ պետք։ Մի՞թե դու մենակ չես կարող նրան ընդունել։

— Այդպես ավելի քաղաքավարի կլինի,— կարևորությամբ առարկեց Սիլվիան։

—Ուշացած ես մտաբերում քաղաքավարությունը։

— Լավ է ուշ, քան երբեք,— պատասխանեց Սիլվիան միևնույն անվրդով լրջությամբ։

— Ի՞նչ, ես գլուխ ցավեցնում։ Ես էլ դրան հավատացի։

— Էհ, մի հավատա։

Աննետան մատով սպառնաց նրան.

— Իսկ ո՞վ է այդ մյուսը։ Ո՞ւմ ես մտադրվել խաբել։

— Ահա նա գալիս է։

Սելվը զանգը տվեց։ Նա, ըստ երևույթին, դժգոհ էր, որ Սիլվիային մենակ չբռնեցրեց։ բայց, որպես բարեկիրթ մարդ, աշխատեց այդ թաքցնել։ Հեշտ չէ բարենպաստ տպավորություն թողնել երկու երիտասարդ և ճարտար կանանց միջավայրում, որոնք ում ասես կշփոթեցնեն, հատկապես երբ նրանք խոսքները մեկ են արել։ Սելվը զգում էր, որ իրեն ուսումնասիրում են երկու զույգ աչքեր։ Մի քանի բավական դժվար ըմբռնելի կոմպլիմենտներից հետո, որոնց մի մասը քաղաքավարությունից դրդված նա հատկացրեց Աննետային, Սելվը խոսեց գործերից, իր արհեստից, խոսեց շատ զբաղված մարդու իր կյանքի մասին։ Աննետան մեծահոգաբար ձևացնում էր, թե հետաքրքրվում է, հարցեր էր տալիս։ Սելվը սկսեց ավելի հավատ ընծայել, նրա լեզուն բացվեց։ Խոսում էր այն դժվարությունների մասին, որոնք խանգարել են և թույլ չեն տվել նրան իր համար ճանապարհ հարթել, խոսում

էր ձախորդությունների ու հաջողությունների մասին և ամեն կերպ աշխատում էր իրեն ցույց տալ ամենալավ կողմից։ Նա պարզասիրտ մարդու տպավորություն էր թողնում, որը բարի է և գոհ իրենից։ Սելվը բաց խաղ էր խաղում, մինչդեռ Սիլվիան, որ ավելի զգույշ էր, մինչև իր թղթերը սեղանին դնելը, աշխատում էր աչքը գցել իր խաղընկերոջ խաղաթղթերին։ Աննետան, շուտով մղված հետին պլան, դիտում էր այդ խաղը և զարմանում ոչ այնքան քրոջ ճարպկության վրա, որքան նրա բնատրության։ Սիլվիայի համար դժվար չէր լինի գտնել ավելի շահավետ զույգ։ Բայց նա բոլորովին դրան չէր ձգտում։ Արտակարգ գեղեցիկ և պլպլան տղամարդիկ նրան հավատ չէին ներշնչում։ Հասկանալի է, նա չէր ամուսնանա հիմար կամ այլանդակ մարդու հետ։ Ոսկյա միջին, խելքը գլխին օգնական, և ոչ թե կարգադրիչ— ահա թե ի՞նչ էր պետք նրան։ Նա հասկանում էր, որ ամուսնության մեջ յուրաքանչյուր կողմը պետք է տա, բայց ուզում է վերցնել. դա առաջարկի և պահանջի նման բան է։ Մինչդեռ նրան պետք էր միայն մեկը, նա ինքը իր գլխի տերն էր և այդպես էլ ուզում էր մնալ։ Իսկ Սելվին ի՞նչ էր պետք։ Որպեսզի նրան հենց այնպես սիրեին, իր գեղեցիկ աչքերի համար... Եհ՜ղե տղա։ Հո նա չէ՞ր կարող այդքան շատ երևակայել իրեն— չէ՞ որ նա գիտեր, որ գեղեցիկ չէ և նույնիսկ հրապույր չունի։ Բայց և այնպես նա ուզում էր, որ կինը սիրելով ամուսնանա իր հետ... Բա դա ծիծաղելի չէ՞։ Մտածելով այդ մասին, Սելվը ուսերը թոթվում էր, մտովի ծիծաղելով այդ թուլության վրա, քանի որ իր ամբողջ պարզասրտությամբ հանդերձ նա հիմար չէր, կյանքը ճանաչում էր և կանանց վերաբերվում էր թերահավատորեն. ինչպես ֆրանսիացիների մեծամասնությունը։ Բայց սիրո պահանջը մարդու մեջ այնքա՞ն է ուժեղ։ Ա՛խ, սրտի այդ հիմար պահանջը... «Իսկ ինչո՞ւ չի կարելի ինձ սիրել։ Ես ումի՞ց եմ պակաս»։ Այդպես էր Սելվը հնազանդությունից անցնում ինքնագոհության։ Նա ձգտում էր սերը ձեռք բերել, ինչպես ողորմածություն։ Դա վատ տակտիկա էր... Եվ ինչպե՞ս նա չէր կարողանում ոչինչ թաքցնել։ Երբ նրա խոշոր, երկնագույն, դուրս պրծած աչքերը հարցնում էին. «Դուք ինձ սիրո՞ւմ եք...»— Սիլվիան, հիշե-

լով, որ անվստահությունը սնում է սերը, պատասխանում էր խանդագորով հայացքներով, որոնք ոչ հա էին ասում, ոչ չէ։

Երբ քույրերը մենակ մնացին, Աննետան ասաց Սիլվիային.

— Լավ չէ, ես դու նրա հետ այդպես սե՞ր ես խաղում։

— Իսկ ինչո՞ւ,— առարկեց Սիլվիան, հայելու մեջ իրեն նայելով։— Խաղը մոմի գինը կհանի։

— Կնշանակի, դա լո՞ւրջ է։

— Շատ լուրջ է։

Ես չեմ կարող պատկերացնել, որ դու կամուսնանաս։

— Իզո՞ւր։ Ես մտադիր եմ դա նույնիսկ ոչ թե մե՛կ կամ երկու անգամ անել...

— Ջե՛մ սիրում, երբ դու այդպիսի բաներով ես կատակ անում։

— Ախ դու, փրկության շրջիկ Բանակ։ Բա էլ ի՞նչ կատակ անեմ։ Դե, դե՛, տիկին Բուտ (Սիլվիան արտասանում էր «Բոտ[1]»), գեղեցիկ հոնքերդ մի՛ կիտիր։ Ես դեռ ամուսին փոխելու մտադրություն չունեմ, ամենից առաջ պետք է գործել, թե դա ինչ բան է։ Ես ուզում եմ երկա՛ր ժամանակով ամուսնանալ։ Բայց եթե ամուսնությունը կայուն դուրս չեկավ,— ինչ արած, ստիպված պետք է լինեմ ուրիշին փնտրել։

— Ես քեզ համա՛ր չեմ անհանգստանում,— ասաց Աննետան։

— Ահա՛ թե ինչ։ Էհ, ինչ կա որ, շնորհակալություն, որ Նրա համար ես անհանգստանում։ Ուրեմն, նա քեզ գերե՞ց։

— Սիլվիա, նա քո ոտյգը չէ։ Բայց նա հիանալի տղա է,— ափսոս, եթե դու նրա կյանքը խաթարես։

Սիլվիան ժպտաց հայելու մեջ իր պատկերին։

— Մեծ բա՜ն է, էլ ո՞նց կլինի։ Մարդիկ միշտ իրար կյանք խաթարում են։ Իհա՛րկե, նա ուզի-չուզի կտառապի... Ախ՛ղճ տղա։ Ես չէի ուզի նրա տեղը լինել... Դե լավ, լավ, ես կատակ եմ անում, մի՛ անհանգստանա նրա համար։ Մի՞թե դու կարծում ես, որ ես չգիտեմ իմ Ադոնիսի հատկություններր։ Նա ոչնչով չի փայլում, բայց վստահել նրան կարելի է—ես այդ գործերից

---

[1] Բուտ— փրկության բանակի հիմնադիր կնոջ ազգանունը։ Ծանոթ.՝ ռուս. խմբ.։

լավ եմ գլուխ հանում։ Իհարկե, ես դա նրան չեմ ասի. տղամարդուն երբեք երես չպետք է տալ, այլապես կսկսի երևակայել, թե քեզ վրա ինչ-որ իրավունքներ ունի։ Բայց ես նրա բոլոր հատկությունները գիտեմ։ Այնքան հիմար չեմ, որ նրան նեղացնեմ, —չէ որ դա կնշանակեր ի՞նքս ինձ վնասել։ Իհարկե, չեմ երաշխավորի, թե նրան չեմ կատաղեցնելու (դա նրան օգտակա՞ր է—թող մի քիչ լղարի), բայց հոգին կհանեմ— չափից շատ չէ, այնքան, ինչքան հարկավոր է։ Ինքնըստինքյան հասկանալի է, միայն այն դեպքում, երբ բողոքելու բան չունենամ, թե չէ թող ինքն իրեն մեղադրի. պարտքի տակ չեմ մնա, միշտ կանխի՞կ եմ վճարում։ Ես ազնիվ առևտուր եմ անում. գնորդներին խաբում եմ ճիշտ այնքան, որպեսզի կարելի լինի կերակրվել, ոչ ավելի։ Բայց եթե նրանք փորձում են ինձ խաբել,— ապա այն ժամանակ ես արդեն չե՞մ ամաչում։

— Սա ի՞նչ կին է։ Երբեք չի՞ կարելի ստիպել, որ լուրջ խոսի,— բացականչեց Աննետան։

— Եթե բոլոր լուրջ բաների մասին մարդ լուրջ խոսի, այն ժամանակ կյանքը անտանելի կլինի,— ասաց Սիլվիան։

Լեոպոլդը շուտով նորից եկավ, և Սիլվիան չուզեց տանջել տղային։ Նա շտապ զննեց հակառակորդի դիրքերը և, դուրս չգալով պաշտպանական ամրությունների հետևից, ստուգեց նրա սպառազինումը, ամունիցիան և պրովիանտը, իսկ հետո արդեն կամավոր հանձնվեց։ Նա առանց որևէ դժվարության, աննկատելիորեն ներշնչեց Սելվին իր մտահղացումը, և Լեոպոլդը մինչև կյանքի վերջը պահպանեց այն պատրանքը, թե իր մեջ ծագեց «Սելվ և Սիլվիա» մեծ արհեստանոցի բացման միտքը։

Հարսանիքը որոշեցին անել հունվարի կեսին—մի սեզոն, երբ դերձակները քիչ աշխատանք են ունենում։ Նախահարսանիքային վերջին շաբաթները ուրախ ժամանակ էր նաև արհեստանոցի կանանց համար։ Ցնծող Լեոպոլդը հյուրասիրում էր ամբողջ կոմպանիային, տանում էր թատրոն և կինո։ Բոլոր այդ աղջիկներն այնպե՞ս էին սիրում ուրախանալ։ Երբ նրանցից մեկնումեկը ամուսնանում է, նրանց թվում է, թե,

կարծես, այդ իրենց ընդհանուր տունը երջանկություն է բերում։ Եվ յուրաքանչյուրը, դիմավորելով Թանկագին հյուրին, մտովի նրա ականջին շշնջում է.

«Լավ նայիր հա՛, չմոռանաս։ Հաջորդ հերթը ի՞մն է...»։

Ընդհանուր ուրախությունը վարակեց նաև Աննետային։ Թվում էր, թե նա պետք է հիմա ավելի ցայտուն զգա, թե որքան անհաջող է դասավորվել իր սեփական կյանքը։ Մինչդեռ նա հարցնում էր իրեն, թե այդ ուր կորան իր բոլոր դառնությունները. դրանք սահեցին իր վրայից, ինչպես շապիկը կոնքերից։ Օ՛ երիտասարդություն, վիշտը քո համար հո կա, հո չկա... Չի կարելի ասել, թե Սիլվիայի ամուսնությունը Աննետային հիացմունք էր պատճառում։ Նա քնքշորեն սիրում էր քրոջը, հիմա մի քիչ տխրում էր, երբ մտածում էր, որ իրենք այլևս այնքան մտերիմ չեն լինելու։ Եվ բացի դրանից, ցավալի էր, որ այդպիսի լավ աղջիկը ամուսնանում է բավական հասարակ մի տղայի հետ։ Այդպիսի ամուսնու մասին չէր երազում Աննետան քրոջ համար։ Բայց մարդկանց ի՞նչ գործն է ուրիշի երազանքը։ Եվ նրանք իրավացի են... Ամեն մարդ յուրովի է երջանիկ։

Սիլվիան գոհ էր։ Լեոպոլդի սերը և նրա բացահայտ հիացմունքը շոյում էին Սիլվիայի փառասիրությունը և կամացկամաց նվաճում սիրտը։ Նա քրոջն ասում էր, որ ինքը գնահատում է իր փեսացուի ծանրաբարոյությունն ու լրջությունը, որ Լեոպոլդը իր համար հուսալի ընկեր կլինի և ոչ մի բանում իրեն չի նեղի։ Ճիշտ է, ինքը մտադրություն չուներ նրան դավաճանելու, բայց երբեք չի կարելի երաշխավորել ապագայի համար, իսկ Լեոպոլդը նրանով է լավ, որ խստորեն հաշիվ չի պահանջի Սիլվիայից՝ նրա վարքագծի համար,— դրանում նա համոզված է։ Լեոպոլդը չէր ձգտում իմանալ Սիլվիայի անցյալը, նա հավատում էր Սիլվիային, և Սիլվիան դրա համար շնորհակալ էր նրանից։

Կյանքը Լեոպոլդին քիչ պատրանքներ էր թողել և նրան պարձել էր հանդուրժող։ Սիլվիան նրան սովորեցրեց, որ վարքի ամենալավ կանոնը ազնիվ և թերահավատ մարդու էգոիզմն է, էգոիզմը բարի և պահանջկոտ մարդու, որը ուրիշներից չի ակնկալում այն, ինչ ինքը տալ չի կարող։

Սիլվիան ընդհանուր ավելի շատ բան ուներ Հեռոլդի, քան Աննետայի հետ։ Աննետային նա, իհարկե, ավելի շատ էր սիրում։ Բայց եթե Աննետան տղամարդ լիներ (այդպես ասում էր Սիլվիան, ծիծաղելով), ինքը երբեք չէր ամուսնանա նրա հետ։ Ոչ, ոչ, դա վա՜տ կվերջանար։ Իսկ Սելվի հետ նա իրեն անվտանգ էր զգում։ Հանգիստ վստահության այդ զգացումը նրան ազատում էր փեսացուի մասին խորհրդածելու անհրաժեշտությունից։ Նա մտածում էր հարսանիքի և պսակազգեստի մասին, որն իր համար կարելու էր, մտածում էր իր ապագա տնտեսության և վիճխարի առևտրական նախագծերի մասին։ Եվ այդ մտքերը ծնում էին լիակատար բավականության զգացում։

I.

Հարսանիքը տեղի ունեցավ ձմռան արևոտ մի օր։ Հենց Սելվը բոլորին տարավ Վենսենի անտառը։ Կազմակերպել էին ուրախ զբոսախնջույքներ։ Աննետան հաճույքով էր դրանց մասնակցում։ Ուրիշ ժամանակ նրա համար տհաճ կլիներ այդ աղմկոտ խնջույքի որոշ չափով գռեհիկ բնույթը։ Հիմա նա այդ չէր նկատում։ Զվարճանում էր հիանալի պատանիների և աղջիկների հետ, որոնց համար ծանր աշխատանքային օրերի մեջ դրանք երանելի հանգստի ժամեր էին։ Աննետան մասնակցում էր խաղերին և բոլորին գերում իր աշխուժությամբ ու վարակիչ ուրախությամբ։ Սիլվիան սովոր էր քրոջը տեսնել սառն ու մեծամիտ և հիմա զարմանքով էր դիտում, թե նա ինչպես է սրտանց ուրախանում։ Ահա նա աչքակապուկի է խաղում. կապած աչքերով, հուզմունքից կարմրած, ամբողջ բերանով մեկ ժպտալիս և կզակը առաջ ցցած, կարծես ուզելով սլացակի արևի շողը բռնել, գնում է քայլերը մեծ-մեծ, գայթելով, ձեռքերը տարածած, ինչպես թևեր, և քրքջում է ամբողջ կոկորդով... Նայելով այդ վառվռուն կնոջ գեղեցիկ, ուժեղ մարմնին, մեկը չէ, երևի, որ մտածել է. «Տեսնես ո՞ւմ կնվաճի։ Ո՞վ կնվաճի, տեսնես նրան...» Բայց Աննետան, թվում էր, մտածում է միայն խաղի մասին... Ո՞ւր էին կորել բոլոր հոգսերը, որոնք դեռ երեկ ճնշում էին նրան։ Ո՞ւր է նրա կենտրոնացած, լար-

ված, ներս գնացած հայացքը։ Այո, նրա մեջ անկասկածելիորեն ինչ-որ հոգեկան մի ճկունություն կար... Սիլվիան իր ծառայությունն էր համարում, որ կարողացել է Աննետային մոռանալ տալ հոգսերը, և ուրախանում էր դրա համար։ Բայց Աննետան լավ գիտեր, որ իր նոր տրամադրության պատճառը շատ ավելի խորն է։ Հարսանիքի ուրախությունից չէր, որ նրա սիրտը թեթևացած էր, այլ ընդհակառակը. նա հարսանիքում այդպես ուրախ էր այն պատճառով, որ տագնապը անցել էր։

Բայց ի՞նչ էր տեղի ունեցել։ Տեղի էր ունեցել տաբօրինակ մի բան, և ոչ միանգամից,— միայն թե դա, այդ նորը հայտնվեց հանկարծակի, մի գեղեցիկ օր։

Դա Սիլվիայի հարսանիքից մի քանի շաբաթ առաջ էր, մի կիրակի առավոտ։ Աննետան կիսահագնված նստած էր իր հարդարանքի սեղանի հայելու առաջ։ Կիրակի օրերը նա սիրում էր հագնվել դանդաղ, առանց շտապելու,—չէ որ մյուս օրերին պետք էր տնից շուտ դուրս գալ։ Նա ծուլանում էր շարժվել, կուտակված հոգնությունը իրեն զգացնել էր տալիս։ Մարկը վեր կենալուն պես վազեց մորաքրոջ մոտ։ Նա աշխուժորեն հետաքրքրվում էր առաջիկա հարսանիքով և Սիլվիային ծիծաղ էր պատճառում իր նկատողություններով, որոնք նա անում էր թրծված մարդու տոնով։ Լեոպոլդը նրան երես էր տալիս. Սիլվիային սիրաշահելու համար նա հոգածում էր նաև նրա շնիկի մասին։ Եվ Մարկը, շոյված, հպարտ՝ հաստատացած մարդու իր նկատմամբ ունեցած այդ ուշադրությամբ, ամբողջ օրը անց էր կացնում ներքևում, իսկ մոր մոտ գժկամությամբ էր վերադառնում։ Աննետան դա նկատում էր դառնությամբ ու վհատորեն։ Բայց այդ կիրակնօրյա առավոտը հոգնածությունը վշտից ուժեղ էր, և դրա հետ խառնվում էր ինչ-որ նոր թաքուն զգացում, որը զուրկ չէր հաճելիությունից։ Աննետան ըստ սովորության այնուամենայնիվ հառաչեց։ Բայց նա վայելում էր այդ հաճելի խոնջանքը այն գիտակցությամբ, որ այսօր կարելի է, փառք աստծո, հանգստանալ, մեկնվելով բազկաթոռի մեջ... Կիրակի է։ Առաջ Աննետան դա չգիտեր գնահատել ոնց որ պետքն է։

«Հոգնա՞ծ եմ ես։ Հոգնա՞ծ եմ։ Ինչքա՞ն լավ է, որ ոչ մի տեղ գնալու կարիք չկա... Մարդ քնի ու քնի հազա՞ր տարի... Նստի հենց այսպես, թեկուզ անհարմար դիրքով, առանց որևէ շարժում անելու... Կարծես կախարդված է և վախենում է կախարդանքը ի չիք դարձնի։ Չե՞մ շարժվելու Ինչքա՞ն է լավ»...

Աննետան նայում էր լուսամուտից, նայում էր դիմացի տանիքին։ Փոի ծխնելույզից ծուխ էր բարձրանում։ Նրա գունատ օղակները քամուց գալար-գալար գալով ու պարելով, աշխուժորեն վազում էին դեպի բիլ երկինքը։ Աննետայի աչքերը ծիծաղում էին, հոգին սլանում էր վեր և այդ ծխի քամահաճ արաբեսկների հետ, ազատված երկրային ծանրությունից, պարում էր լույսի թեթև շողերի վրա։ Նրա հոգին բաց էր արևի և քամու առաջ։ Աննետան կիսաձայն երգում էր... Եվ հանկարծ նա հիշեց մի երիտասարդի հայացք, որը հիացմունքով երեկ օմնիբուսի մեջ իրեն էր նայում։ Աննետան նրան չի ճանաչում և, իհարկե, երբեք այլևս չի հանդիպի։ Բայց այդ հայացքը, որը նա բռնեց անսպասելի կերպով գլուխը շրջելիս (իսկ երիտասարդը կարծում էր, Աննետան իրեն չի տեսնում), այնքան պարզասրտորեն էր Աննետային ասում իր գեղեցկության մասին, որ նրա սրտում կենդանի ուրախության զգացում թողեց... Աննետան ձևանում էր իր առաջ, իբրև չգիտե, թե որտեղից է այդ ուրախությունը... Բայց երբ հայելին անդրադարձրեց ժպիտը, նա հանկարծ իրեն տեսավ այն մարդու աչքերով, որը Աննետային երբևէ սիրելու է... Ո՞ւր եք դուք, հոգսեր... Նրանք դեռ ինչ-որ տեղ դղրդում էին, բայց հեռու, շատ հեռու, և այն էլ միայն ժամանակ առ ժամանակ...

«Ոչ, բավական է, բավակա՞ն է։ Ինչի՞ համար է սա... Այս բոլորը պետք է վերջացնե՛լ»։

Այդպիսի մտքերը Աննետայի համար նոր չէին։ Նա արդեն քանի անգամ նույն բանը կրկնել էր ինքն իրեն։ Բայց չէր կարելի սպասել, թե նա իր որոշումը կկատարի։ Բանականությունը լավ խորհրդատու է, բայց ի՞նչ օգուտ նրա խորհուրդներից։ Սրտին կարելի է համոզել միայն սրտի փաստարկներով։

Հիմա այդպիսի փաստարկների պակաս էլ չկար։ Հիմա Աննետան պատրաստ էր անհեթեթություն համարել իր մայրական սիրո կրքոտությունը։ Բայց նա այդ համարում էր այն պատճառով, որ նրա մեջ վերակենդանացել էին ուրիշ պահանջներ, որոնք ինքը մինչև հիմա իր ներսում ճնշել էր։ Նա այլևս չէր կարողանում, չէր ուզում դրանք ժխտել։ Եվ, հենց որ լռելյայն ընդունեց դրանք, իրեն ազատագրված զգաց։ Սթափված երիտասարդության ձայնը նրան առում էր.

«Ոչինչ չի կորել։ Դու դեռ երջանկության իրավունք ունես։ Քո կյանքը դեռ նոր է սկսվում...»։

Շուրջն աշխարհը վերակենդանացավ։ Աննետան նորից ամեն ինչի համն զգաց։ Նույնիսկ խավար օրերին էլ էին լույսի նշույլներ երևում։ Նա ոչ մի պլան ապագայի համար չէր կազմում։ Պարզապես ուրախանում էր այդ նվաճած ապագայի մտքից, ինչպիսին էլ որ ուզում է դա լիներ... Այո, այո, նա երիտասարդ է, երիտասարդ, ինչպես այդ պատանի, ակսվող տարին... Ամբողջ կյանքը Աննետայի առջևում է... Նա երբեք չի՞ հագենա այդ կյանքից։

Փետրվարի սկիզբը հիանալի ժամանակ է։ Փարիզում դա լի է կախարդանքով։ Գարունն զգացվում է դեռ միայն երկնքում և սրտի մեջ, բայց չուրջը ամեն ինչ արդեն թվում է մի տեսակ զարմանալիորեն մաքուր, լուսավոր ու պայծառ, ինչպես արթնացող երեխայի խնդությունը։ Վրա է հասնում տարվա ամենասքանչելի ժամանակը։ Թռչունները դեռ չեն երևում, բայց օդում արդեն լսվում է նրանց թռիչքը. թվում է, կանգնած ես երկինք խոյացող աշտարակի կատարին, և տեսնում ես թևերի թուխպեր, ծիծեռնակների երամներ, որոնք անցնում են ծովերը և թռչում դեպի մեզ մոտ։ Եվ ահա նրանք այստեղ են, նրանք երգո՞ւմ են իմ սրտում։

Ինչպես ամեն մի առողջ մարդ, Աննետան սիրում էր տարվա բոլոր եղանակները։ Նա հեշտությամբ էր ընտելանում դրանց, կարծես ներծծում էր նրանց թաքնված ուժերի մի մասը։ Գարունը, վերակենդանացած այդ ժամանակը, նրան լցրել էր բերկրալի հուզմունքով։

Քայլելը, աշխատանքը— ամեն ինչ նրան բավականություն

էր պատճառում։ Աննետան վերադառնում էր տուն հաճելիորեն հոգնած և գերազանց ախորժակով։ Ամեն ինչ նրան կենդանի կերպով զբաղեցնում էր, նորից արթնացավ մտավոր կյանքի հանդեպ եղած հետաքրքրությունը, հետաքրքրքրությունը դեպի այն ամենը, ինչ նա անուշադրության էր մատնել վերջին չորս տարիներին,— դեպի երաժշտությունը, դրքերը։ Չնայած հոգնածությանը, նա երբեմն դուրս էր գալիս նաև երեկոները, վազում էր Փարիզի մյուս ծայրը՝ համերգ լսելու, որի համար տոմս էր ճարել Սիլվիան, որը դժվար էր տանում հղիության սկիզբը, քրոջը նախանձում էր։

Երեկոյան զբոսանքների ժամանակ Աննետայի հետևից հաճախ էին պոչ դառնում տղամարդիկ։ Մտացրիվ, կլանված իր երազանքներով, նա այդ մարդկանց երկար ժամանակ չէր նկատում, բայց հանկարծ, ինքն իր մեջ խոսելու ժամանակ, նրա ուշադրությունը գրավում էր մի զգացում, որ կարծես ինչ-որ մեկը հետևում է իրեն։ Սթափվելով, նա հետաքրքրությամբ շրջվում էր, նայում այն մարդուն, որն իրեն ինչ-որ բան էր շշնջում, ուսերը թոթվում էր կամ դժկամորեն դեմքը ծռմռում և շարունակում ճանապարհը, քայլերն արագացնելով ու ինքն իրեն փնթփնթալով.

— Մի այս ծեր հիմարի՜ն տեսեք։

Հիմարը, հաճախ ոչ թե ծեր էր լինում, այլ երիտասարդ։ Եվ այդ ժամանակ Աննետան մտածում էր։

«Մի տասը տարուց հետո, թերևս, Մարկն էլ է նույն բանն անելու...»։

Եվ վրդովված կանգ էր առնում։ Պատանին հանդիպում էր նրա զայրացած հայացքին, որ նախատեսված էր ապագա Մարկի համար, և ձեռ էր քաշում։ Իսկ Աննետան արդեն նորից էր ժպտում, պատկերացնելով այդ պատանու տեղը իր Մարկին, հասունացած, գեղեցիկ,— ինչ էլ ուզում է լիներ, դա զվարճալի էր և շոյում էր նրա մայրական ինքնասիրությունը։ Բայց նա նույն րոպեին սթափվում էր և սկսում մտովի նախատել իրեն... Դեռ ավելին, նախատում էր Մարկին։

— Պարապ-սարապի մե՜կը,— փնթփնթում էր նա։— Ասպա մի թող գամ տուն, ականջնե՜րդ պոկելու եմ։

(Եվ այդպես էլ անում էր)։

Այդ փոքրիկ արկածները Անետային զվարճություն էին պատճառում միայն սկզբում։ Իսկ երբ դրանք սկսեցին ավելի հաճախակի...

«Ո՞չ, դա անտանելի է դառնում։ Մի՞թե կինը հանգիստ չի կարող փողոցով անցնել։ Բավական է առանց որևէ հետին մտքի աչքդ աջ ձգես կամ ձախ և կամ էլ ժպտաս—խուսքն քեզ արդեն կասկածում են, որ սեր ես փնտրում։ Ես դա լավ գիտեմ, այդ սերը, բավական կո՞ւշտ եմ դրանից։ Տղամարդիկ համոզված են, թե մենք առանց իրենց չե՞նք կարող ապրել։ Այդ դանդալոշները չեն հասկանում, որ կարելի է առանց նրանց էլ երջանիկ լինել, երջանիկ՝ հենց այնպես, նրանից, որ եղանակը լավն է, նրանից, որ դու երիտասարդ ես և ունես այն քիչը, որը քեզ պե՞տք է... Էհ, թող երևակայե՛ն, ինչ ուզում են։ Հո ես նրանց մասին չեմ մտածում։ Այդ էր պակաս մտածեի... Մի՞թե նրանք երբեք չեն փորձել իրենց կողմնակի աչքով նայել»։

Բայց ինքը նայում էր նրանց։ Նվ ազատությունից առաջացած իր երանելի արբեցման մեջ ոչ մի կերպ հակված չէր նրանց իդեալականացնել։ Նա իրեն հարցնում էր. Ինչպե՞ս կարելի է տղամարդով հրապուրվել։ Նվ իսկապես, դա ոգե՞ղ կենդանի է։ Պետք է մարդ գլուխն ամբողջովի՛ն կորցրած լինի, որպեսզի գայթակղվի նրանով... Նվ Ռիվիերի դուստրը, որպես կլասիկ տիպի իսկական ֆրանսուհի, առողջ ոգով և Ռաբլե ու Մոլիեր կարդացած, մտաբերում էր այն խոսքերը, որոնք Դորինան ասում է Տարտյուֆին։

Աննետան ծիծաղե՞լ էր սիրո վրա... (Ախ, որքա՜ն էր նա խորամանկում ինքն իր հետ...)։ Նա ձեռ էր առնում այդ սերը, մինչդեռ սերը թաքնվում էր նրա սրտում և, ձևացնելով, թե ննջում է, սպասում էր իր ժամին։ Կռվշտացը իսկական գրոհի նախապատրաստություն էր։ Թշնամին մոտենում էր։ Թշնամին—և նրա հետ միասին բարեկամը...

Հը՞, կարելի՞ էր արդյոք այդպիսի բան սպասել։ Ով ուզում է լինի, միայն թե ոչ նա... Ճակատագրի ինչպիսի՜ ծաղր։

Ժուլիեն Դավին մոտ երեսուն տարեկան էր—գրեթե

նույնքան, որքան և Աննետան։ Դա երիտասարդ, միջահասակ փոքր-ինչ կուզիկ տղա էր։ Եթե բավական զեղեցիկ չափանակագույն աչքերը չլիներին, հնձ և լուրջ, որոնք մեղմ փաղաքշանքով լուսավորվում էին նրանց համար, ովքեր կարողանում էին նրան ընտելացնել, ժուլիենի տխուր դեմքը անհրապույր կլիներ։ Ելունդածածկ ճակատ, որ կտրված էր ծալքով, մեծ քիթ, դուրս ցցված այտոսկրեր, սև փոքրիկ մորուք և մեղմ գծագրված շրթունքներ, ծածկված չափազանց երկար բեղերով (ժուլիենը կարծես նպատակ էր դրել թաքցնել այն ամենը, ինչ իր մեջ լավագույնն էր, ու դեղնավուն գեմք, որ կարծես հին փղոսկր լիներ,— երևում էր, որ մարդը ավելի շատ գրքերով է սնվում, քան արևով։ Դեմքը և՛ խելք էր արտահայտում, և՛ արտացավութիւն, բայց մի տեսակ խամրած էր, անշարժ,— կյանքը և կրքերը գեռ իրենց հետքը չէին թողել նրա վրա։ Ընդհանուր առմամբ, ժուլիեն Դավին անբարեհաջող ու վհատ մի անձնավորութիւն էր։

Նա Աննետայից ավելի միամիտ էր և անփորձ, իսկ Աննետան իր կարճատև, բայց փոթորկուն պիրուց հետո էլ առանձնապես հմտացած չէր պիրո գործում։ Եվ եթե, հոբից ժառանգած հոտառութիւնը և Սիլվիայի անկեղծ խոստովանութիւնները, որոնք երբեմն արժեին Նավարրայի թագուհու զրույցներին, թույլ չտվին նրան մնալ անհայտութեան մեջ։ Բայց այդպիսի դասերը վատ են յուրացվում, եթե պիրոտը սեփական փորձով չէ ամեն ինչ ճանաչում։ Խոսքերն այն չեն, ինչ որ ունայ իրականութիւնն է։ Եվ պատահում է, որ, ընդհարվելով կյանքում այն բանի հետ, որի մասին միայն վերջերս ենք կարդացել գրքերում, մենք չենք կարողանում ճանաչել այն։ Չնայած Աննետայի ամբողջ լավատեղյակութեյանը, փաստորեն նա հիմա էր, որ պետք է գրեթե ամեն ինչ ճանաչեր։ Իսկ ժուլիենը՝ ամեն ինչ։

Ժուլիենը մինչև հիմա չգիտեր սերն ինչ է։ Մեզ մոտ Ֆրանսիայում դժկամութեյամբ են խոսում այդպիսի «կուլտի» մասին, և ժողովրդի մեջ նրանք թիրախ են ծառայում ամեն տեսակի ազատ կատակների համար, քանի որ մեր ժողովուրդը թեև սրամիտ է, բայց բավական ամուր է կապած

մտածողության հին եղանակներից։ Մինչդեռ այդպիսի «կուլտուրա» շատ կան։ Դրան նպաստում են կրոնական համայնքները, բարոյական պուրիտանիզմը կամ բնածին, երբեմն էլ հիվանդագին, ամաչկոտությունը, իսկ ամենից հաճախ—ծանր աշխատանքը, որ կլանում է ամբողջ երիտասարդ տարիները, աղքատությունը, գռեհիկ սիրո նկատմամբ ունեցած զզվանքը և հարգանքը դեպի այն իսկական սերը, որը գալու է (իսկ նա չի գալիս), և ընդմիշտ բոլոր դեպքերում, ըստ երևույթին, սառը տեմպերամենտը, հյուսիսցիներին յուրահատուկ սրտի դանդաղ արթնացումը (դանդաղությունն այդ, ընդ որում, բոլորովին չի բացատրում ապագայում ուժեղ կրքերը,— ընդհակառակը. սիրտը դրանք կուտակում է և պահպանում որպես պաշար)։ Այո, այդպիսի մարդիկ շատ կան, և երիտասարդական երջանկությունը անցնում է, ոչինչ նրանց չհատկացնելով, Այդ սրբակյացները դատարկ ձեռքերով մնում են մի կողմ կանգնած։

Ժուլիենը կյանքում գրեթե ամեն ինչ ճանաչում էր բանականությամբ։ Նա մեծացել էր աղքատ և աշխատասեր բուրժուաների ընտանիքում։ Ամբողջ ընտանիքը բաղկացած էր երեք հոգուց։ Հայրը, որ ուսուցիչ էր, աշխատանքից տանջված, շուտ էր մահացել։ Մայրն ամբողջությամբ իրեն նվիրել էր որդուն, որը նրան վճարում էր նույնպիսի անձնազոհ սրտով։ Ժուլիենը կրոնամոլ էր և, չնայած իր լիբերալ համոզմունքներին, պահպանում էր բոլոր ծիսակատարությունները, որպես հավատացյալ կաթոլիկ։ Նա վարում էր անխոնջ աշխատանքով լեցուն մի կյանք, որը միապաղաղ էր փոքր-ինչ տանելի մտավոր աշխատանքի սառը բերկրության և սովորություններին բավականություն պատճառելու շնորհիվ։ Ոչ մի հետաքրքրություն դեպի քաղաքականությունը, նողկանք հասարակական գործունեության հանդեպ, ներքին, ինքնամփոփ կյանքի պաշտամունք ընտանիքի միջավայրում։ Դա ազնիվ և համեստ մի սիրտ էր, որ հասկանում էր հնազանդ և կայուն առաքինությունների արժեքը, և իր խորքում պոետական էր։

Ժուլիենը ծառայում էր որպես լիցեյի դաստատու։ Աննեատյի հետ նա ծանոթացել էր դեռ համալսարանում, երբ և

ինքը, և Աննետան քանի տարեկան էին։ Աննետան առաջին իսկ օրից գրավեց նրան։ Բայց այն ժամանակ Աննետան, որ հարուստ էր, շրջապատված երկրպագուներով, որ երիտասարդությամբ փայլում էր, էգոիստ էր, ինչպես բոլոր երջանիկները, որ անտարբեր էր և օտար, Ժուլիենին երկյուղ էր ներշնչում։ Նրա ընկերներն ավելի համարձակ էին և գրավեցին Աննետայի մոտ այն տեղը, որն ինքն ուզում էր զբաղեցնել։ Ժուլիենը նրանց նախանձում էր, բայց նրանց հետ մրցելու փորձ չէր անում. նա իրեն մյուսներից ցած էր համարում, միշտ հասկանում էր, որ ինքն անբարեհաս է, անճարպիկ, վատ հագնված։ Նա չէր կարողանում արտահայտել իր զգացմունքները, և մարդկանց մեջ ոչ ճիշտ պատկերացում էր ստեղծվում նրա խելքի և անկեղծության մասին։ Այն գիտակցությունը, որ ինքը գեղեցիկ չէ, կաթվածահար էր անում Ժուլիենին նաև այն պատճառով, որ նա զգայուն էր ամեն մի գեղեցիկի նկատմամբ, և Աննետայի գեղեցկությունը գաղտնի կերպով հուզում էր նրան։ Նա Աննետային գեղեցկուհի էր համարում և չուներ իր ընկերների համարձակությունը, որոնք, սիրահետելով նրան, իրար մեջ, առանց քաշվելու, քննարկում էին նրա արտաքին բոլոր արժանիքներն ու թերությունները—չափազանց խիտ հոնքերը, ուռուցիկ աչքերը, կարճ քիթը։ Ժուլիենը չէր նկատում այդպիսի մանրամասնությունները։ Բայց նա միակն էր Աննետային շրջապատող բոլոր երիտասարդներից, որն զգում էր այդ կենդանի ձևի ներքին ներդաշնակությունը, հասկանում էր նրա իմաստը։ Չէ որ ամեն մի ձև ինչ-որ ներքին բովանդակության արտահայտությունն է, սակայն մարդկանց մեծամասնությունը նկատում է միայն նրա արտաքին առանձնահատկությունները։ Ժուլիենի համար Աննետայի աչքերը, ճակատը, խիտ հոնքերը մի միասնություն էին կազմում նրա բնավորության ուժի և աշխույժ մտքի հետ։ Նա Աննետային նայում էր հեռվից, մի հայացքով նրան ամբողջությամբ ընդգրկելով։ Եվ առաջին իսկ հայացքից Աննետային հասկացավ ճիշտ, շատ ավելի ճիշտ, քան հետո, երբ, ավելի մոտիկից ծանոթանալով, աշխատում էր ճանաչել նրան։ Ժուլիենը ուներ այն հեռատես միտքը, որը մոտիկից վատ է

տեսնում։ Երբեմն այդ տիպի մարդիկ հանճարեղ են լինում, բայց նրանք յուրաքանչյուր քայլի սայթաքում են, կպչելով այն բանին, ինչը նրանց ոտքի տակ է։

Ժուլիենը և Աննետան նորից մի անգամ առավոտյան հանդիպեցին սբ. Ժենևեվայի գրադարանում, առաջին հարկի մեծ երկշարք լուսամուտներ ունեցող դահլիճում։ Նրանք գրեթե տասը տարի իրար չէին տեսել, և Ժուլիենը հասցրել էր խելամտորեն վանել իր մտքերից Աննետայի կերպարը, իսկ այդ առավոտ Աննետան հանկարծ նորից հայտնվեց նրա առաջ։ Նա աչքերը բարձացրեց գրքից և իրենից մի քանի քայլի վրա, սեղանի մյուս կողմում, տեսավ Աննետային, որը ընթերցանությամբ էր զբաղված։ Գեղեցիկ շագանակագույն մազերին մորթե գլխարկ էր դրած, վերարկուն գցած էր ուսերին (եղանակը դեռ ձմեռային էր, զատկից առաջ, իսկ դահլիճը չէր տաքացվում, և մեծ լուսամուտներից փչում էր հրապարակից եկող սառը քամին։ Ժուլիենը նստած էր վերարկուով, օձիքը բարձրացրած։ Իսկ Աննետայի վիզը բաց էր, և նա չէր մրսում)։ Հենվելով սեղանին և ձեռքը այտի տակ դրած, Աննետան նստել էր իր սովորական, Ժուլիենին այնքան ծանոթ դիրքով—գլուխը խոնարհած, փոքր-ինչ թեքված առաջ և շիկավուն հոնքերը կիտած նա արագ-արագ կարդում էր թերթերը և կրծմրծում մատիտի ծայրը։ Ժուլիենը նայում էր նրան նույն հուզմունքով, ինչպես մի ժամանակ, երբ քսան տարեկան էր։ Բայց նրա մտքով չանցավ էլ մոտենալ և խոսել Աննետայի հետ։

Աննետան ընթերցում էր նույնքան հափշտակված, որքան հափշտակված անում էր ամեն մի գործ, բայց այդ ժամանակ նրան զբաղեցնում էր ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ուրիշ մրտքեր։ Դաղափարները, որոնք նա փնտրում էր գրքերում և որոնք նրան լրջորեն հետաքրքրում էին, հազվադեպ էին Աննետայի առաջ կանգնում առանց այն կերպարային շքախմբի, որը ընդհանուր քիչ բան ուներ այդ գաղափարների հետ։ Աննետան այդ կերպարները վանում էր իրենից, բայց ժամանակ առ ժամանակ նրանք վերադառնում էին և համառորեն բախում՝ ուղեղը մտնելու համար։ Նույնիսկ մտածող կինը երբեք չի կարող ամբողջովին կենտրոնանալ այն

բանի վրա, ինչ կարդում է. չափազանց ուժեղ է սեփական մտքերի և զգացումների հոսքը։ Աննետան հաճախ էր ընդհատում ընթերցանությունը, որպեսզի նրանց առաջ «բացի շուշյները»։

Եվ ահա երբ նա, գրքից կտրվելով, ցրվածորեն հայացքը ման էր ածում դահլիճում, նրա աչքերը հանդիպեցին իրեն հետևող Ժուլիենի աչքերին։ Առաջին ակնթարթին Աննետային թվաց, թե դա նույնպես անցյալի կերպարներից մեկն է, որոնք հենց նոր թափառում էին նրա երևակայության մեջ։ Բայց, նույն վայրկյանին սթափվելով (այդպես առավոտներն արթնանալիս, նա մի թոհիչքով քնից վերադառնում էր դեպի կյանքը), Աննետան տեղից կանգնեց և, հանդիպումից ուրախացած, սեղանի վրայով Ժուլիենին մեկնեց ձեռքը։

Ժուլիենը, շփոթահար, անհարմարորեն, մոտեցավ և նրա տեց նրա կողքին։ Սկսվեց զրույցը։ Ընդ որում, զրույցն ընտիպված շարունակում էր միայն ինքն Աննետան։ Ժուլիենը խոսում էր շատ քիչ, նա շշմել էր այդ անսպասելի հաջողությունից։ Աննետան նույնպես ուրախացել էր. երջանիկ անցյալը հառնել էր նրա առաջ։ Ժուլիենը այդ անցյալում շատ աննշան դեր էր խաղում, նա ընդամենը շղթայի սովորական օղակ էր։ Հիշողությունների երթը արագ ծավալվեց, — և ահա Ժուլիենը հայտնվեց ինչ-որ տեղ վերջում։ Իսկ նա երևակայում էր, թե ինքը դեռ իրեն տեսնում է Աննետայի զվարթորեն շողշողացող աչքերում, և հուզմունքից չէր գիտակցում, թե ինչ է պատասխանում նրան։ Ժուլիենն աշխատում էր (և որքա՜ն անհմուտ) թաքցնել իր հիացմունքը։ Նա գտնում էր, որ Աննետան ավելի է գեղեցկացել, քան էր, ընդ որում նա դարձել է մի տեսակ ավելի մարդկային և պարզ, նրա մեջ ինչ-որ նոր բան էր զգացվում... Իսկ հատկապես ի՞նչ Ժուլիենը նրա մասին ահա արդեն վեց տարի է, ինչ ոչինչ չի լսել, այն ժամանակից ի վեր, ինչ հայրը մահացել է։ Աննետայի պատմությանը նա անտեղյակ էր, քանի որ ոչ ոքի հետ չէր հանդիպում և փարիզյան բամբասանքները նրա ականջը չէին ընկել։ Ժուլիենը հարցրեց Աննետային, թե արդյոք նա նույն տե՞ղն է ապրում, Բուլոնի առափնյակում։

— Ինչպե՞ս, դուք ոչինչ չգիտե՞ք։ Ջէ որ ես այնտեղից վաղուց եմ փոխադրվել։ Այո, այո, ինձ դուրս արին իմ տնից...

Ժուլիենը չհասկացավ։ Աննետան նրան կարճ և ուրախ անհոգությամբ բացատրեց, որ անանկացավ և դրա մեղքն իրենն է, քանի որ չէր զբաղվում իր դրամային հարցերով...

— Եվ ինձ տե՞ղն է,— ավելացրեց նա։

Եվ սկսեց ուրիշ բաներից խոսել։ Ոչ մի խոսք իր մասին, իր կյանքի մասին։ Ոչ թե այն պատճառով, որ ուզում էր թաքցնել,— ոչ, պարզապես դա ոչ ոքի չէր վերաբերում։ Եթե Ժուլիենն սկսեր համառորեն հարցուփորձ անել նրանից, հարցեր տար, Աննետան ճշմարտությունը կասեր։ Բայց նա ոչինչ չհարցրեց,— համարձակություն չունեցավ, և, բացի դրանից, Ժուլիենը կլանված էր մի մտքով. կնշանակի, Աննետան հիմա աղքատ է, աղքատ է ինչպես ինքը... Հույսի այրող քամին արդեն խուժեց Ժուլիենի հոգին։

Հուզմունքը թաքցնելու համար Ժուլիենը առանց քաշվելու ընկերաբար նայեց այն բրոշյուրը, որն Աննետան հենց նոր մի կողմ էր դրել.

— Ի՞նչ եք կարդում։

Էջերը թերթեց։ Դա գիտական ամսագիր էր։ Աննետայի առաջ դրանցից մի ամբողջ դարս էր դրված։

— Ահա,— ասաց Աննետան,— աշխատում եմ նորից գործին ծանոթանալ։ Դա հեշտ է։ Ես հինգ տարի կորցրել եմ։ Ստիպված եմ գլուխս պահելու համար դասեր տալ, և պարապելու ժամանակ չի մնում։ Հիմա զատիկ է, դասեր չկան, ես ազատ եմ—ահա և փորձում եմ կորածը վերականգնել, կրկնակի բժիշկներով եմ կուլ տալիս։ Տեսնում եք—նա ցույց տվեց բացած ամսագրերը—ուզում եմ այդ բոլորը հաղթահարել։ Բայց նյութը շատ է, չեմ հասցնում,— ամեն ինչ նորից պետք է սովորեմ։ Իմ բաց թողած ժամանակվա ընթացքում այնքան նյութ է կուտակվել, որ... Հոդվածներում այնպիսի աշխատություններ են վկայակոչվում, որոնց մասին ես գաղափար էլ չունեմ... Աստվա՛ծ իմ, ինչքան արագ է գիտությունը առաջ գնում։ Բայց ես կհասնեմ, այ կտեսնե՛ք։ Ես չեմ ուզում ետ մնալ ճանապարհից—ես հաշմանդամ

չեմ։ Այնքան հիանալի հայտնագործություններ կան։ Ես ուզում եմ ամեն ինչ իմանալ...

Ժուլիենը ագահորեն լսում էր։ Աննետայի բոլոր ասածներից նա մի բան միտը պահեց. Աննետան ապրում է իր աշխատանքով, նա հեշտությամբ չի վաստակում իր մի կտոր հացը— և այնուամենայնիվ նա առույգ է և ուրախ... Աննետան հիմա նրա աչքում այնպիսի բարձունք էր բարձրացել, որին նախկին Աննետան երբեք չէր հասնում։ Եվ Աննետան նրան տանում էր իր հետևից, վարակել էր կյանքի այն խրնդությամբ, որն իրեն մինչև հիմա անծանոթ էր։

Գրադարանից դուրս եկան միասին։ Ժուլիենը հպարտ էր նրանով, որ իր հետ այդպիսի գեղեցիկ կին կա, և մինչև հիմա դեռ ուրախությունից խելքը գլուխը չէր գալիս. նա չէր կարծում, թե Աննետան այդքան լավ իրեն հիշում է։ Չէ՞ որ մի ժամանակ Աննետան, թվում էր, գրեթե իրեն չէր նկատում։ Իսկ այ հիմա նա այնպիսի մանրուքներ է հիշեցնում իրեն, որոնց մասին ինքը վաղուց է մոռացել։ Աննետան հարցուփորձ արեց Ժուլիենի մոր մասին։ Ժուլիենը գրանից այնպես էր զգացվել, որ շփոթմունքն սկսեց հալվել։ Այժմ արդեն Ժուլիենն սկսեց իր մասին պատմել, բայց գործը դժվարությամբ էր առաջ գնում, լեզուն չոր ու ցամաք էր։ Աննետան լսում էր բարեհոգի հեգնանքով— նա անընդհատ ցանկություն էր զգում Ժուլիենին հուշել պետք եղած բառը։ Ժուլիենի լեզուն այն ժամանակ միայն բացվեց ու ինքն էլ դարձավ ինքնավստահ, երբ Աննետան սկսեց հրաժեշտ տալ։ Ժուլիենը հասցրեց միայն հարցնել, թե նա գրադարան կգա՞ արդյոք նորից, և ուրախությամբ լսեց պատասխանը. «Այո, վաղը»։

Ժուլիենը տուն վերադարձավ սաստիկ հուզված։ Նա իրենից ամաչում էր, բայց մխիթարվում էր այն մտքից, որ վաղը գործը կշտկի։ Իսկ այսօր նա ուզում էր մտածել միայն այդ մտերմության հրաշքի մասին։ Աննետան, տատապելով այն միջավայրում, ուր նրան քաշել էր Սիլվիան, նույնպես ուրախացել էր այն տարիների ընկերոջ հանդիպման համար, երբ ինքը ապրում էր մտավոր լարված կյանքով։ Ճիշտ է, հարպկությամբ Ժուլիենը աչքի չի ընկնում— օ՛, ոչ,— բայց

նա լուրջ, համակրելի և հիանալի տղա է... այնուամենայնիվ ի՞նչ սառցի կտորն է...

Աննետան հաջորդ օրն էլ չկարողացավ կարծիքը Ժուլիենի մասին փոխել։ Ժուլիենը սառած վիճակից դուրս էր գալիս միայն տանը, երբ մենակ էր լինում։ Բայց բավական է Աննետային տեսներ, իսկույն նորից լեզուն կապ էր ընկնում. Դա իրեն՝ Ժուլիենին էլ ապշեցնում էր։ Նա ուզում էր Աննետային այնքա՞ն բան ասել (այդ խոսակցությանն այնպես էր պատրաստվում, ինչպես դասախոսության), և հանկարծ ամեն ինչ ցնդում էր, երբ նա հանդիպում էր Աննետայի հայացքին։ Այն, ինչ ասում էր, լոկ անհամ խոստովանությունների էքստրակտն էր, խոստովանություններ, որոնք բազմաթիվ անգամ տաքացրել էր իր մեջ... Նա ինքն էլ ձանձրանում էր լսել, թե ինչպես է ծամծմորում։ Վստահությունը նրան վերադառնում էր միայն այն ժամանակ, երբ խոսքը ոչ թե իրեն էր վերաբերվում, այլ գիտության նվաճումներին։ Այդ ժամանակ նա սկսում էր խոսել հստակ, պարզ և նույնիսկ աշխուժանում էր։ Աննետային հենց այդ էլ պետք էր։ Ձգտելով լրացնել իր գիտելիքները, նա Ժուլիենի վրա հարցերի տարափ էր թափում, որոնց Ժուլիենը պատասխանում էր հաճույքով, որովհետև Աննետան արագաշարժ միտք ուներ, և եթե աշխույժ երևակայությունը հաճախ նրան քաշում էր կեղծ ճանապարհի վրա, ապա բավական էր մի բառ, որպեսզի նա ամեն ինչ հասկանա և մտքերը շարժվեն հարկավոր ուղղությամբ... Ժուլիենին դուր էին գալիս Աննետայի ուշագիր դեմքը և աչքերը, որոնք ուղղակի մխրճվելով նրա մեջ, որպեսզի սլացակի բռնեն Ժուլիենի միտքը, հանկարծ պայծառանում էին, դա նշանակում էր, որ Աննետան հասկացավ... Մտքերի փոխանակման բերկրությո՞ւն, որ անտեսանելի արևի նման լուսավորո՞ւմ են վիթխարի հորիզոնները։ Նոր հայտնագործությունների ուղիներով միասին գնալու բերկրություն, որտեղ Ժուլիենը Աննետայի համար ուղեցույց էր։ Ի՞նչ երանություն էր նրանց երկուսի համար այդ զրույցը՝ խոր լռության մեջ այն դահլիճի, որը լցված էր գրքերով, տաճա՞ր էր մտքի։

Երանությո՞ւն էր Ժուլիենի համար, բայց ոչ կողքի նըս-

տածներին։ Քանի որ նա խոսում էր արդեն ամբողջ ձայնով, մոռանալով, որ շուրջը մարդիկ են։ Աննետան ժպիտով ընդհատեց նրան և տեղից կանգնեց՝ գնալու համար։ Ժուլիենը դուրս եկավ նրա հետ, բայց փողոցում, որտեղ նրա առաջ գրասեղան ու գրքեր չկային, նորից դարձավ խղճուկ ու անօգնական, ինչպես նախօրեին։ Աննետան փորձում էր, որ Ժուլիենը խոսի ինքն իր մասին—զո՜ւր ջանքեր էին։ Եվ այնուամենայնիվ Ժուլիենը ոչ մի կերպ չէր կարողանում բաժանվել Աննետայից, որոշել էր նրան ուղեկցել մինչև տուն։ Նա իրեն լարված էր պահում, ինչպես ներքուստ կծկված մարդը, ամաչկոտությունից կոպիտ էր, իսկ երբեմն նույնիսկ՝ անքաղաքավարի... Մի խոսքով, նա անտանելի՜ էր։ Իսկ Աննետան թեթևակի զրգռված մտածում էր.

«Օ՜, տեր աստված, ինչ անեմ, որ գլուխս շուտ ազատեմ սրանից»։

Ժուլիենը նկատեց նրա լռակյացությունը, բերանի անկյուններին ծաղրական ծալքերը։ Նա հանկարծ կանդ առավ և վշտացած ասաց.

— Ներեցեք, ես ձեզ ձանձրացրի... Այո, գիտեմ, գիտեմ, ես ձանձրալի մարդ եմ... Ջեմ կարողանում խոսել, ետ եմ վարժվել... Դա նրանից է, որ ես միշտ մենակ եմ։ Իմ մայրը լավն է, շատ լավը, բայց ես մտքերս նրա հետ բաժանել չեմ կարող։ Այդ մտքերից շատերը նրան կտագնապեն, նա դրանք չի հասկանա... Եվ ինձ ամբողջ կյանքում չի հանդիպել մի մարդ, որի համար այդ մտքերը հետաքրքիր լինեին... Ասենք, ես դա արդեն չեմ էլ սպասում... Դուք այնքան բարի էիք, համբերությամբ լսում էիք ինձ, և ահա ես էլ ուզեցի ձեզ պատմել... Բայց դա հնարավոր չէ, հնարավոր չէ հաղորդել, դա պետք է մարդ իր մեջ պահի... Ոչ ոքի հետաքրքիր չէ... Եվ տղամարդը պետք է կարողանա լռել... լուռ ապրել... Ներեցեք, որ ձեզ ձանձրացրի...

Աննետան հուզված էր։ Ժուլիենի խոսքերում անկեղծ հուզմունք էր հնչում։ Այդ համեստության և տխուր հպարտության խառնուրդը ապշեցնում էր նրան, պաղ զսպվածության տակ Աննետան տեսնում էր ծանր հիասթափությունը և վիրավորված զգացմունքը։ Եվ, տարված այն հոգեկան

պոռթկումով, որին երբեմն ընդդիմանալ չէր կարողանում, Ժուլիենի հանդեպ զգաց մի քնքուշ կարեկցանք։ Նա չերմությամբ ասաց.

— Ո՜չ, ո՜չ, ոչինչ մի՛ ափսոսացեք։ Ես ինքս պետք է ձեզ շնորհակալ լինեմ։ Շատ լավ է, որ դուք այդպես խոսում եք ինձ հետ... այսինքն, փորձում էիք խոսել,— նույն րոպեին ուղղեց նա իրեն, հազիվ նշմարելի ծաղրով, որի մեջ այս անգամ ոչինչ վիրավորական չկար։— Այո, այո... հեշտ չէ, երբ մարդ սովոր չէ... Իսկ ինձ դո՞ւր է գալիս, որ դուք սովոր չեք ձեր մասին խոսել... Աշխարհում զավզակները չափազանց շա՜տ են։ Ինչևէ, ես, գուցե, ձեզ սովորեցնեմ... Դուք դե՞մ չեք։ Չէ որ դուք ոչ ոք չունեք, ում հետ կարող էիք իսկապես զրուցել։

Հուզմունքը Ժուլիենին խանգարեց պատասխանել։ Բայց նրա աչքերում Աննետան վեհերոտ երախտագիտություն կարդաց։ Ու թեև Աննետան վաղուց պետք է տուն գնացած լիներ, նա ետ դարձավ, որ մի քանի րոպե ևս միասին զբոսնեն։ Աննետան խոսում էր Ժուլիենի հետ, ինչպես բարի քնկեր, ինչպես մայր, սրտագին ու պարզ, և այդ տոնը ազդում էր Ժուլիենի վրա այրվող ճակատին հպվող պաղ ձեռքի նման։ Այո, Ժուլիենը շատ ընկճված էր, այդ հասուն երեխան, տեսքով այդքան մոայլ, հոգատար վերաբերմունքի կարիք էր զգում... Հիմա նա սկսել էր վերակենդանանալ... Բայց տուն գնալու ժամանակն էր։ Աննետան հարցրեց, թե նա ի՞նչ ուզում արդյոք երբեմն հանդիպել իր հետ։ Երկուսն էլ որոշեցին, որ գրադարանում կատարած իրենց աշխատանքը նրանք կարող են նույնպիսի հաջողությամբ անել նաև Լյուքսեմբուրգյան այգում կամ...

— Իսկ ինչո՞ւ ոչ ինձ մոտ։

Նվ հրավիրելով նրան իր մոտ եկող մի կիրակի, Աննետան սլացավ, առանց պատասխանի սպասելու...

Ախ, ինչքա՜ն պերճախոս նա կարող էր լինել հիմա, իսկ Աննետան արդեն չկար... Ժուլիենը սկսեց մտաբերել բոլորը սկզբից, հիացած էր Աննետայի բարությամբ։ Նվ քանի որ այդ հավասարակշռված մտքով մարդը ընդունակ չէր սրտի

գործերում պահպանել չափը, ապա համոզված լինելով, որ իրեն վիճակված չէ սերը կիսել որևէ մեկի հետ, առանց մի հետևողականության անցավ հույսին, որ, գուցե...

Աննետան բնավ չէր կռահում այն, ինչ տեղի էր ունենում Ժուլիենի հոգում։ Նրա նոր ընկերոջ անբարեհաս արտաքինը Աննետայի համար իսկական երաշխիք էր, որ ինքը չի սիրահարվի նրան, և Աննետայի մեջ նույնիսկ ծիծաղելի համոզմունք էր առեղծվել, թե իրեն՝ Ժուլիենին նույնպես հենց այդ հանգամանքն է խանգարում սիրահարվել։ Աննետան հարգում էր նրան, նրան կարեկցում էր, իսկ կարեկցանքը ծնում էր համակրանքի զգացում։ Հաճելի էր դիտակցել, որ ինքը լավություն է անում ուրիշ մարդու, և դրանից Ժուլիենը է՛լ ավելի հաճելի էր դառնում նրա համար։ Աննետայի մտքով իսկ կասկած չէր անցնում Ժուլիենի իսկական զգացմունքների մասին, իսկ առավել ևս՝ նրա նկատմամբ ունեցած իր զգացմունքների։

Աննետան մոռացել էր իր հրավերի մասին, բայց հաջորդ կիրակի օրը Ժուլիենը այդ հիշեցրեց նրան, այցելության գալով, և Աննետան դիմավորեց Ժուլիենին զարմացած ու անկեղծ ուրախությամբ։ Իսկ Ժուլիենը, ամբողջ շաբաթն սպասելով այդ րոպեին, միայն դրա մասին մտածելով, չնկատեց Աննետայի զարմանքը և տեսնում էր սոսկ նրա ուրախությունը, որը իրեն ոգևորում էր։ Այդ օրը գարշելի եղանակ էր, և Աննետան տնից դուրս գալու մտադրություն չուներ։ Նա չէր սպասում, թե մեկնումեկը կգա, և հագնված էր անփույթ, տնավարի։ Սենյակում անկարգություն էր թագավորում—դրան նպաստել էր երեխան։ Ինչքան էլ ուզում է դուք կարգ ու կանոն սիրեք, երեխաները ձեզ կստիպեն հրաժարվել այդ սովորությունից, ճիշտ այնպես, ինչպես և շատ հիանալի պլաններից, որոնք դուք կազմել եք առանց նրանց։ Ժուլիենը բոլորն իրեն վերագրելով, այդ գեղատեսիլ անկանոնության մեջ տեսավ, իհարկե, ոչ թե արհեստական էֆեկտ, այլ ապացույց, որ իրեն ընդունում են առանց ձևականության, ինչպես բարեկամի, ինչպես յուրայինի։ Նա ներս մտավ թրթռացող սրտով, բայց, հաստատ վճռելով այս ան-

գամ բարենպաստ տպավորություն գործել, իրեն կարևոր և ինքնավստահ մարդու տեսք տվեց։ Դա նրան բոլորովին չէր սազում։ Ընդ որում, Աննետայի համար տհաճ էր, որ Ժուլիենը իրեն այդ տեսքով է հանդիպում, և նա վրդովվում էր անսպասելի հյուրի վրա՝ նրա առանց այլևայլության ներս խուժման համար։ Հենց որ Ժուլիենը նկատեց Աննետայի սառնությունը, նրա ինքնավստահությունը միանգամից ցրնդեց։ Մի անհարմար լռություն տիրեց։ Ժուլիենը այլևս չէր համարձակվում որևէ խոսք արտասանել։ Աննետան գոռոզ ու հեգնական արտահայտությամբ սպասում էր...

«Մի՛ երևակայիր, սիրելիս, որ ես այսօ՛ր էլ եմ քեզ փրկելու...»։

Բայց աչքի պոչով տեսնելով, թե ինչ խղճուկ, վհատված տեսք ունի «նվաճողը», Աննետան հանկարծ զգաց գրության ամբողջ կոմիզմը և բարձր քրքջաց։ Լարվածությունը միանգամից անհետացավ, նա Ժուլիենի հետ սկսեց ընկերաբար խոսել։ Ժուլիենը շվարել էր, նա ոչինչ չէր հասկանում, բայց թեթևացած նույնպես անցավ բնական տոնին և, վերջապես, բարեկամական զրույցն սկսվեց։

Աննետան պատմում էր իր աշխատանքի մասին։ Նրանք երկուսն էլ եկան այն եզրակացության, որ իրենք ստեղծված չեն այն գործի համար, ինչ անում են։ Ժուլիենը բուռն կերպով տարվում էր այն գիտությամբ, որը դասավանդում էր, բայց...

— ... Իսկ նրանք ընդունա՞կ չեն որևէ բան հասկանալու։ Նստում են, ինչպես քնկոտ հանճեր, և աչքները բաց ու խուփ են անում։ Գուցե մի երկու-երեք հոգու աչքերում երբեմն ինչ-որ բան երևա, մնացածները—կարծես ձանձրույթի ժա՛յռ լինեն։ Քրտինքի մեջ կորած չարչարվում ես այդ ժայռի հետ, մինչև որ հաջողվում է (այն էլ ոչ միշտ) տեղից շարժել մի վայրկյան, իսկ հետո նորից է այն ընկնում հատակին։ Ապա փորձիր այնտեղից դո՛ւրս բերել այդ ժայռը։ Նրանց սովորեցնել—միևնույնն է, թե հո՛ր փորել... Իհարկե, դժբախտ երեխաները մեղավո՛ր չեն։ Նրանք, ինչպես և մենք, դեմոկրատիզմի մանիայի զոհերն են, որի կամքը կատարելու համար պահանջվում է բոլոր երեխաների գլուխնե-

րը մտցնել դիտելիքների միևնույն քանակը, թեև նրանք դեռ չեն հասել այն հասակին, երբ որևէ բան կարող են հասկանալ։ Հետո էլ քննություններ։ Դա գյուղատնտեսական մըրցանակաբաշխություններից մի բան է—այդ քննությունների ժամանակ կշռում են ուսուցչի թափած աշխատանքների արդյունքը, այն ուսուցչի, որն աղավաղված բառերի և հում, անձև դիտելիքների խառնուրդով լցնում է մանկական ուղեղները, մի խառնուրդ, որից մեր աշակերտների մեծամասնությունը շտապում է ազատվել, հենց որ քննությունները տա, և որը նրանց մեջ ամբողջ կյանքի ընթացքում զզվանք է առաջացնում։

— Իսկ ես երեխաներին պաշտում եմ,— ասաց Աննետան, ծիծաղելով։— Նույնիսկ ամենաանպետքներին։ Ոչ մեկին չեմ կարողանում անտարբեր նայել,— ուղղակի ուզում եմ ճանկել ու տանել տուն... Բայց, ավա՛ղ, ստիպված եմ լինում ա՛ևկո՛վ բավարարվել։ Դա էլ բավական է, ի՞նչ կարծիքի եք։

(Աննետան ցույց տվեց ամբողջ սենյակով մեկ ցաք ու ցրիվ իրերը, բայց Ժուլիենը ոչինչ չհասկացավ ու միայն հիմարավարի ժպտաց)։

— Այո, ափսո՛ս։ Երբ ես փոքրիկ երեխա եմ տեսնում, որն ինձ դուր է գալիս, գողանալու ցանկություն եմ զգում։ Իսկ ինձ դուր են գալիս բոլորը։ Նույնիսկ ամենատգեղ երեխաների մեջ ինչ-որ մի բան կա թարմ... գարնանային... հույսերի անսահմանությո՛ւն։ Բայց ես ի՞նչ կարող եմ նրանց համար անել։ Եվ մի՞թե ինձ թույլ կտան որևէ բան անել։ Չէ՞ որ ես նրանց ինչպես պետք է չեմ էլ տեսնում։ Նրանց ինձ վստահում են մի ժամով—հետո վազում եմ ուրիշների մոտ։ Եվ իմ փոքրիկ աշակերտները ձեռքից ձեռք են անցնում։ Ինչ մի ձեռքն անում է, մյուս ձեռքը ոչնչացնում է։ Այդպիսով ոչինչ էլ չի ստացվում։ Չձևավորված հոգիները անհոգի ֆիգուրներ են, որոնք միայն բոստոն և պադեկատր պարել գիտեն։ Հաստատացածները այդ մասին մտածելու ժամանակ չունեն—չէ որ մենք ոչ թե ապրում ենք, այլ սլանում։ Բոլորն են սլանում։ Ոչ թե կյանք է, այլ արշավի դա՛շտ։ Երբեք ոչ մի կանգառ։ Մեռնում են վազքով,

ասենք, նրանք առանց այդ էլ մեռած են, այդ դժբախտները, որոնք իրենց համար շունչ առնելու ո՞չ մի օր չեն թողնում։ Նրանք մեզ էլ հանգստություն չեն տալիս, նրանց, ովքեր այդ չեն ուզում...

Ժուլիենը շատ լավ հասկանում էր Աննետային։ Նրան արդեն պետք չէր բացատրել, թե որքա՜ն սպանիչ է վաղվզուքը մարդկային և որքա՜ն հիանալի են անդորրն ու մենությունը։ Ավելի շատ նրան Աննետայի հետ մերձեցրեց այն, ինչ Աննետան ասաց դրանից հետո. որ, բարեբախտաբար, այդ չրհեղեղի մեջ դեռ կան կղզյակներ, որտեղ կարելի է պատսպարվել,— սքանչելի բանաստեղծություններ, իսկ որ գլխավորն է, երաժշտություն։ Պոեզիայով Ժուլիենը չէր տարվում. պոեզիայի լեզուն նրա համար մատչելի չէր, և Ժուլիենը նրան վերաբերվում էր մի տեսակ թերահավատությամբ, ինչպես մտքի շատ մարդիկ, որոնք հաճախ իրենց համար սեփական պոեզիա են ստեղծում, բայց չեն զգում խոսքերի խոր և թրթռուն երաժշտությունը։ Սակայն մյուս երաժշտությունը, ձայների լեզուն, նրանց մատչելի է։ Ժուլիենը Աննետային ասաց, որ ինքը սիրում է երաժշտություն, բայց, դժբախտաբար, հնարավորություն չունի համերգներ գնալու—ժամանակ և փող չկա։

— Ես էլ քիչ ունեմ թե մեկից, թե մյուսից,— նկատեց Աննետան։— Բայց և այնպես գնում եմ։

Ժուլիենը կյանքի եռանդի այդպիսի պաշար չուներ։ Աշխատանքային օրից հետո նա նստում էր տանը, չորս պատերի մեջ։ Եվ ոչ մի գործիք նվագել չգիտեր։ Աննետայի սենյակում նա դաշնամուր տեսավ։

— Դուք նվագո՞ւմ եք։

— Այո, բայց դա այնքան էլ հե՜շտ չէ,— ասաց Աննետան ծիծաղով։— Մի՞թե նա թույլ կտա հանգիստ նստել դաշնամուրի առաջ։

Զարմացած և աղոտ կերպով անհանգստացած Ժուլիենը հարցրեց, թե այդ ո՞վ է նրան խանգարում նվագել։ Այդ րոպեին Աննետան ուշադրությունը լարեց. սանդուղքի վրա մանկական ոտքեր էին թփթփում։ Նա նետվեց դուռը բանալու.

— Ահա և նա։ Հիմա դուք կտեսնե՞ք այս հրեշին։

Աննետան ներս թողեց Մարկին, որը ներքևից էր գալիս, մորաքրոջ մոտից։

Ժուլիենը դեռ ոչինչ չէր հասկանում։

— Սա իմ տղան է... դե բարևիր, Մարկ։

Ժուլիենը միանգամից երկնքից թրմփաց գետին։ Աննետան ոչ մի կերպ չէր կարծում, որ դա նրան այդպես կապշեցնի։ Նա շարունակում էր ուրախ-ուրախ խոսել, իր մոտ պահելով Մարկին, որն ուզում էր դուրս պրծնել։

— Ինչպես տեսնում եք, ես այնուամենայնիվ ժամանակը զուր չեմ կորցրել։

Ժուլիենը համարձակություն չունեցավ որևէ բան պատասխանելու— միայն իր դեմքին պատկերացրեց ճիգերով սարքած և բավական հիմար մի ժպիտ։ Նա ուժերը լարած, աշխատում էր թաքցնել իր հուզմունքը։ Մարկը, որ այդպես էլ չբարևեց հյուրին, հաջողեցրեց դուրս պրծնել մոր ձեռքից։ (Մարկը բարևելու արարողությունը հիմար բան էր համարում և միշտ խույս էր տալիս դրանից, մորը թույլ տալով «ամեն տեսակի բաներ ասելու» ,— նա հիանալի գիտեր, որ մի րոպե հետո մայրը կմոռանա իր արարքը և կսկսի ուրիշ բաներից խոսել. «Այդ կանայք այնքա՜ն անխելք են...»)։ Թաքնվելուց վարագույրի ծալքերի մեջ, Ժուլիենից չորս քայլի վրա, երեխան կանգնել էր, վարագույրի առասանը մատների մեջ պտտելով, մոայլորեն նայում էր «օտարին»։ Նա շատ շուտ իր մանկական ձևով (և ոչ այնքան սխալ) գնահատեց իրադրությունը։ Ժուլիենը նրան դուր չեկավ, և այդ կարծիքը վերջնական էր։ Գործը վճռված էր մեկընդմիշտ։

Ժուլիենը, որին այդ համառ զննումը ավելի շատ շփոթեցրեց, փորձում էր խոսակցությունը Աննետայի հետ շարունակել և միևնույն ժամանակ չէր դադարում մտածել իրեն հետաքրքրող հարցի շուրջը։ Դրա հետևանքով նրա խոսքերն ու մտքերը միայն խճճվում էին։ Այնուամենայնիվ նա կամաց-կամաց հանգստացավ։ Ճիշտ է, ոչ բոլորովին։ Նա ոչ մի րոպե չէր կասկածում, որ Աննետան ամուսնացած է. այդքան վստա՞հ էր Աննետան իրեն պահում։ Բայց ո՞ւր է ամուսինը։ Կենդանի է, թե՞ մեռել է։ Աննետան սգավորի շորեր չէր հագ-

նում... Ոչ, Ժուլիենը չէ՞ր կարողանում հանգստանալ... Ո՞ւր է կորել այդ մաթդը։ Այդպիսի հարց տալ նա ուղղակի չէր համարձակվում։ Ամեն տեսակի կողմնակի մանևրներից հետո նա, վերջապես, սիրտ արեց անփույթ կերպով, մի տեսակ հռետորներեն (նրան ի միջի այլոց թվում էր, որ դա արված է շատ ճաքպկոզեն), խոսակցության մեջ խրել մի հարց.

— Եվ գուք վաղուցվանի՞ց եք մենակ ապրում։

Աննետան առարկեց.

— Ամենից առաջ ես մենակ չեմ։— Եվ ցույց տվեց երեխային։

Ժուլիենը այդպես էլ ուրիշ ոչինչ չիմացավ։ Բայց Աննետայի պատասխանից կարելի էր եզրակացնել, որ նրանք երեխայի հետ երկուսով են ապրում, և դա նա ասում էր ուրախ, այդ պատճառով էլ Ժուլիենը որոշեց, որ Աննետան վաղուց է այրիացել, շատ վաղուց, և այլևս չի վշտանում։ Աչառու մարդու տրամաբանությունը հաճոյակատարեն նրան հուշում էր կարծես անհերքելի եզրակացությունը.

«Եվ այդպես, պարոն Մալըրուկը վախճանվեց...»։

Ի՞նչ արած, աստված հոգին լուսավորի։ Նա այլևս վտանգավո՞ր չէ։ Ժուլիենը նրա դագաղին մի բուռ հող գցեց և, շրշվելով դեպի փոքրիկը, շինծու ժպտաց։ Հիմա Մարկը սկսում էր նրան դուր գալ։

Բայց արի ու տես, որ նա Մարկին բոլորովին դուր չէր գալիս։ Ժուլիենին աստմային մարմինների կառուցվածքը շատ ավելի հասկանալի էր, քան մանկական հոգին։ Մարկը իսկույն հասկացավ, որ նրա սիրալիրությունը անկեղծ չէ։ Նա մեջքը շուռ տվեց դեպի հյուրը և փնթփնթաց.

— Ես չե՞մ ուզում, որ նա ինձ վրա ծիծաղի։

Աննետային զվարճացնում էին իր որդու ողորմածությունը շարժելու Ժուլիենի զուր փորձերը։ Նա իր պարտքը համարեց մեղմացնել Մարկի անքաղաքավարությունը և սկսեց հարցուփորձ անել Ժուլիենից, թե ինչպես է նա ապրում, լսելով վերջինիս պատասխանները սկզբում փոքր-ինչ անուշադիր, հետո աշխույժ հետաքրքրությամբ։ Եվ Ժուլիենը, որին հաճելի կիսախավարը միշտ համարձակություն և վստահություն էր տալիս, հիմա իր մասին պատմում էր անկեղծո-

բեն։ Նա պարզ սիրտ ուներ, երբեք չէր անձնվիրում— դրանից երբեք, չնայած դուր գալու ցանկությանը։ Ամեն բանում, ինչ նա այդպիսի անկեղծությամբ ասում էր, հոգու մաքրություն էր զգացվում, որը նրա տարիքի փարիզեցու համար անսովոր էր։ Իր համար թանկ բաների մասին նա խոսում էր հոգեկան մեծ տակտով, որի տակ կռահվում էր դժվարությամբ զսպվող հուզմունքը։ Լիակատար անկաշկանդության այդ րոպեներին, քաջալերված Աննետայի կարեկցական ուշադրությունից, Ժուլիենը զրուցարում էր իր իսկական «եսը», և հոգեկան գեղեցկության փայլը կենդանացնում էր նրա դեմքը։ Աննետան նրան նայում էր սևեռուն, մի այնպիսի զգացումով, որը բոլորովին նման չէր նախկին սիրալիր անտարբերությանը։

Այդ օրից ի վեր նրանք սկսեցին կանոնավոր կերպով ամեն կիրակի օր հանդիպումներ ունենալ, իսկ երբեմն էլ՝ սովորական օրերին, երբ ազատ ժամեր էին գտնում։ Ժուլիենի այցելությունների համար առիթ էին ծառայում գրքերը, որոնք նա տալիս էր Աննետային ընթերցելու, բացատրելով նրան այն, ինչից Աննետան ինքը չէր դժվարանա գլուխ հանել։ Մարկի համար Ժուլիենը բավական թանկ նվերներ էր գնում, բայց ընտրում էր անհաջող, և նրա փոքրիկ թշնամին բոլորովին դրանց համար շնորհակալ չէր,— Մարկը համարում էր, որ այդ խաղալիքները չափազանց մանկական են և վիրավորում են նրա արժանապատվությունը։ Սակայն ոչինչ չէր կարող տատանել Ժուլիենի մեծահոգությունն ու առատաձեռնությունը, որը հաստատ կերպով որոշել էր չնկատել այն, ինչ իրեն չփոթեցնում է։ Այդպես միայնակ մարդիկ, որոնք առաջ թերահավատորեն բոլորից մի կողմ են քաշվել, այն րոպեից, ինչ մեկին սիրեցին ու հրաժարվեցին իրենց թերահավատությունից, արդեն ընդունակ չեն և չեն ուզում ոչինչ հաշվի առնել. նրանք տրվում են ամբողջ հոգով։ Ժուլիենը ինքնախաբեության մեջ լինելով համոզված, վառ գույներով էր պատկերում և մեկնաբանում, ինչպես իրեն ձեռնտու է, այն տպավորությունները, որոնք նա տանում էր իր հետ՝ Աննետայի հետ յուրաքանչյուր հանդիպումից հետո,— բոլորը, ինչպես Աննետան ասում էր, բոլորը,

ինչ շլացնում էր նրան (ընդամին նա անգիտակցաբար վառ գույներով էր պատկերում նաև ինքն իրեն)։ Աննետայի անուշադրությունը, նրա ցրված ուշադրությունը, նույնիսկ նրա լռակյացությունը, երբ Աննետան ձանձրանում էր նրանից,— բոլորը Ժուլիենի աչքում նրան դարձնում էր է՛լ ավելի ցանկալի և սրտառուչ։ Նվ հայտնաբերելով նրա մեջ նոր անոր գծեր, Ժուլիենը լրացնում էր իր կողմից իր համար ստեղծած Աննետայի կերպարը։ Նա փոփոխում էր դա տասնյակ անգամ, ու թեև պորտրեն արդեն գրեթե բոլորովին նման չէր լինում սկզբնականին, Ժուլիենը հավատարիմ էր մնում իր սիրուն. նա պատրաստ էր իր իդեալը փոփոխել այնքան անգամ, քանի անգամ փոխվում էր սիրելի կնոջ կերպարը։

Աննետան վերջապես կռահեց Ժուլիենի զգացմունքները։ Սկզբում այդ սերը նրան ծիծաղ էր պատճառում, հետո սիրտը շարժեց. Աննետան դրա համար նրան շնորհակալ էր, նույնիսկ շատ էր շնորհակալ («Աշխարհի ամենագեղեցիկ տղամարդը կարող է տալ միայն այն, ինչ ունի... Շնորհակալ եմ քեզանից, իմ սիրելի Ժուլիեն...»), բայց հետո դա սկսեց նրան թեթևակի անհանգստացնել։ Աննետան ազնվորեն իրեն զգուշացնում էր, որ պետք չէ թույլ տալ, որպեսզի Ժուլիենը ոտք դնի այդ վտանգավոր ճանապարհին... Բայց Ժուլիենին դա այնքա՞ն ուրախություն էր պատճառում, իսկ Աննետայի համար դա տհաճ չէր... Աննետան զգայուն էր դեպի քնքշությունը, աշխուժությամբ ու հաճույքով էր արձագանքում դրան։ Թերևս, նույնիսկ չափից ավելի հաճույքով։ Աննետան այդ գիտակցում էր։ Սերը և հիացմունքը, որոնք նա կարդում էր Ժուլիենի աչքերում, նրա համար, կարծես, փաղաքշանք լիներ, որն Աննետան ուզում էր նորից ու նորից զգալ... Այո, նա հասկանում էր, որ այդ, թերևս, այնքան էլ լավ չէ իր կողմից։ Բայց դա այնքա՞ն էր բնական։ Աննետայի համար դժվար էր զրկել իրեն այդ ուրախությունից։ Պետք էր որոշ ճիգեր գործադրել— և նա գործադրեց, բայց ոչինչ չստացվեց։ Այն ամենը, ինչ նա ասում էր՝ Ժուլիենին իրենից հեռացնելու համար (իսկապե՞ս էր արդյոք նա ասում այն, ինչ պետք է), միայն ավելի շա՛տ էր նրան

կապում իր հետ։ Աննետան որոշեց, որ դա ճակատագիր է և ճակատագրին դեմ գնալ չես կարող... Նա ծիծաղում էր իր վրա, իսկ Ժուլիենը անհանգստությամբ հարցնում էր իրեն, թե Աննետան արդյոք իր վրա չի՞ ծիծաղում...

«Կեղծավո՞ր։ Կեղծավո՞ր։ Եվ դու չե՞ս ամաչում...»։

Ոչ, Աննետան չէր ամաչում։ Կարելի՞ է արդյոք հակառակվել անբաժանելիորեն քեզ նվիրված ուրիշ սրտի երջանկությանը։ Չէ՞ որ այդ երջանկությունը զարդարում է նաև քո կյանքը։ Եվ նրանից ի՞նչ վնաս։ Ինչո՞վ է վտանգավոր այդ սիրտը, եթե Աննետան միանգամայն հանգիստ է, տիրապետում է իրեն և միայն բարիք է ուզում, միայն բարիք ուրիշ մարդու համար։

Աննետան չգիտեր, որ մեկը այն գաղտնի ճանապարհներից, որոնցով սերը դավադրորեն սողոսկում է սիրտը, հաճախ լինում է հպարտ և ուրախալի այն գիտակցությունը, որ դու պետք ես ուրիշ մարդու։ Այդպիսի զգացումը առանձնապես հեշտ նվաճում է իսկական կնոջ սիրտը, քանի որ այդ զգացումը բավարարում է, առաջինը, կնոջ բարիք գործելու պահանջը (այդ նա ընդունում է), երկրորդը՝ կնոջ փառասիրությունը (այդ նա ժխտում է)։ Այդ զգացումն այնքան է ուժեղ, որ ազնիվ սիրտ ունեցող կինը հաճախ ընտրում է ոչ թե նրան, ով իր համար սիրելի է, բայց կարող է առանց իրեն լալա գնալ, այլ նրան, ով ավելի քիչ է սիրելի, բայց հովանավորության կարիք է զգում։ Եվ մի՞թե հենց դրանում չէ մայրության էությունը։ Ախ, եթե հաստնացած որդին միշտ մնար նրա համար որպես փոքրիկ ձագուկ...։ Մոր սիրտ ունեցող կինը,— իսկ Աննետան հենց այդպիսին էր,— սիրում է օժտել տղամարդուն, որի սերր կոչ է անում իրեն, այնպիսի երևակայական արժանիքներով, որոնք նա չունի։ Այդ կինը բնազդաբար աշխատում է նկատել սոսկ այն լավը, ինչ նրա մեջ կա։ Ժուլիենը շատ արժանիքներ ուներ, իսկ Աննետան ուրախանում էր, տեսնելով, թե ինչպես է անհետանում նրա երկչոտությունը և դրսևորվում իսկական հոգին՝ գորովագին երջանիկ, ինչպես երջանիկ է լինում ապաքինվողը։ Աննետան շարունակ ինքն իրեն կրկնում էր, որ այդ մարդուն ոչ ոք մինչև հիմա

չի հասկացել, նույնիսկ հարազատ մայրը, որի մասին Ժյուլիենը մշտապես խոսում էր և որի հանդեպ նա սկսել էր արդեն ժուլիենին խանդել։ Մսենը, նա ինքն էլ, խեղճը, իրեն չէր ճանաչում... Ով կարող էր կարծել, որ այդ խորդուբորդ Լագանիի տակ այդպիսի քնքշություն է թաքնված, զգացմունքների այդպիսի նրբություն... (Աննետան չափազանցում էր)։ Ժուլիենին պետք է հավատ ուրիշների նկատմամբ, հավատ իր հանդեպ, իսկ այդ հավատը չկար։ Նրան պետք է, որ մեկնումեկը իրեն հավատա, այն ժամանակ ինքն էլ հավատով կլցվի։ Դե լավ, ահա՛ նա, Աննետան, նրան հավատո՞ւմ է։ Աննետան Ժուլիենին հավատում էր այն պատճառով, որ դա նրան անհրաժեշտ էր։ Եվ վերջիվերջո դա անհրաժեշտ դառավ նաև Աննետայի համար... Ժուլիենը աչքի առաջ այնպես էր փթթում, ինչպես ծաղիկն է փթթում արևի շուլերի տակ։ Իսկ ուրիշի հանար արև լինելը— հաճելի է... «Փթթի՛ր սիրտ...»։ Ո՞ւմ սրտի մասին էր Աննետան խոսում—Ժուլիենի՞ սրտի մասին, թե՞ իր։ Նա ինքն էլ այդ արդեն չգիտեր։ Քանի որ ինքն էլ էր փթթում այն գիտակցությունից, որ Ժուլիենին երջանիկ է դարձնում։ Սիրով հարուստ սիրտը մեռնում է, եթե չի կարողանում անել քաղցածներին... Տրվե՛լ Հավիտենապե՛ս տրվել ամբողջությամբ...

Աննետան տրվում էր նույնիսկ չափազանց շռայլորեն։ Նրա առաջ չէր կարելի մնալ անդրդվելի։ Ժուլիենը արդեն չէր թաքցնում իր կիրքը։ Եվ Աննետան բավական ուշացումով զլխի ընկավ, որ իրեն էլ է վտանգ սպառնում...

Երբ Աննետան տեսավ, որ իր կյանքի մեջ պատրաստ է սեր խոժռելու, փորձ արեց պաշտպանվել. որոշեց լուրջ չընդունել Ժուլիենի զգացմունքները։ Բայց Աննետան արդեն ինքն իրեն չէր հավատում, իսկ նրա տակտիկան Ժուլիենին միայն ավելի համառ էր դարձնում, որի բացատրությունները դառնում էին ավելի կրակոտ։

Այսուհետ արդեն Աննետան վախեցավ։ Նա աղաչում էր Ժուլիենին իրեն չսիրել, լինել միայն իր բարի ընկերը...

— Բայց ինչո՞ւ,— հարցնում էր Ժուլիենը։— Ինչո՞ւ

Աննետան չէր ուզում բացատրել... Նա բնազդորեն վախենում էր սիրուց, որովհետև դեռ հստակորեն հիշում էր իր տառապանքները և կանխազգում նոր տանջանքներ։ Աննետան սեյֆը և քննդնում էր և վանում իրենից։ Նա և ծարավի էր սիրո և փախչում էր այդ սիրուց։ Նա անկեզծ էր, երբ դիմադրում էր Ժուլիենին, իսկ սրտի խորքում ուզում էր, որ նա կոտրի իր դիմադրությունը...

Այդ պայքարը դեռ երկար կշարունակվեր, եթե մի իրադարձություն չարագացներ հանգույցի լուծումը։

Աննետայի և նրա քրոջ ամուսնու միջև պարզ և բարեկամական հարաբերություններ հաստատվեցին։ Նա հիանալի տղա էր, թեև մի քիչ կոպիտ, բայց շիտակ և մյուս հոգեկան արժանիքներից ոչ զուրկ։ Աննետան նրան բարձր էր գնահատում, իսկ Լեոպոլդը Աննետային վերաբերվում էր որոշ չափով նույնիսկ չափազանցված հարգանքով։ Սանոթության առաջին իսկ օրից նա Աննետայի մեջ տեսնում էր ուրիշ կարգի էակի, քան ինքն էր և Սիլվիան, և նրանից մի տեսակ քաշվում էր։ Այդ իսկ պատճառով էլ ավելի էր շնորհակալ Աննետայից նրա բարեկամական բարեհաճության համար։ Սիլվիային սիրահետելու օրերին Աննետան Լեոպոլդի դաշնակիցն էր։ Նա հաճախ էր Լեոպոլդին օգնության հասել, երբ Լեոպոլդի հարբեցողն, վստահ իր իշխանությանը, չարաշահում էր այն և սկսում ծաղրել նրան։ Նույնիսկ դեռ հիմա էլ Աննետան աննկատելի կերպով միջնորդի դեր էր խաղում, երբ ամուսինների միջև թյուրիմացություններ էին տեղի ունենում կամ երբ Սիլվիան ձանձրույթից ամուսնուն տանջում էր անսպասելի կամակորություններով և խելառ արարքներով։ Այդպիսի դեպքերում Լեոպոլդը, ոչինչ չհասկանալով, գնում էր Աննետայի մոտ՝ իր ցավերը նրան հայտնելու, և Աննետան քրոջը խելքի բերելու միտքն իր վրա էր վերցնում։ Այդ զրույցների ժամանակ Լեոպոլդը քենուն իր մասին այնպիսի բաներ էր պատմում, որոնք նա կնաջը չէր ասել։ Սիլվիային դա հայտնի էր, և նա կատակով ծաղրում էր Աննետային, իսկ սա էլ նրա կատակներն ըն-

դունում էր բարեհոգաբար և ուրախ։ Հարաբերություններն այդ երեքի մեջ շատ անկեղծ էին և պարզ։ Լեոպոլդը երբեք դժգոհություն չէր հայտնում, որ կնոջ քույրը և նրա երեխան, որը հաճախ բավական խանգարում էր մեծահասակներին, այդպիսի տեղ էին գրավում իր տանը։ Նա նույնիսկ համարում էր, որ Սիլվիան բավարար չափով չի օգնում քրոջը, հիանում էր Աննետայի արիությամբ և երես տալիս նրա թաղային Աննետան Սիլվիայից իմացել էր իր հանդեպ ունեցած նրա ամուսնու վերաբերմունքի մասին և դրա համար Լեոպոլդին երախտապարտ էր։

Սիլվիայի հղիության շրջանը ծանր ժամանակ էր բոլոր շրջապատողների համար, իսկ առանձնապես՝ նրա ամուսնու։ Հաճախակի կռիվները Լեոպոլդին վանում էին կնոջից։ Սիլվիան բոլորովին չէր ուզում նրանից ազատվել։ Ամբողջ բանն այն էր, որ հղիությունը խիստ տանջում էր Սիլվիային։ Նա իրեն բնավ չէր պահպանում և չէր ուզում ոչ մի բան փոխել իր ապրելակերպի մեջ։ Բայց դրանից նա ավելի էր վատանում։ Հղիության երկար ամիսները նրա մոտ անցնում էին բոլորովին ոչ այնպես, ինչպես Աննետայի մոտ. Աննետայի համար դրանք անվերջանալի անուրջներ էին, խաղաղ երանություն, որը շատ շուտ վերջացավ։ Իսկ Սիլվիան ընդունակ չէր տրվել երազանքների։ Նա դարձել էր զրգռված, չէր ուզում հրաժարվել իր պարտականություններից, իրավունքներից, հաճույքներից։ Վերջիվերջո ներվային ուժեղ գերհոգնածությունը քայքայեց նրա առողջությունը և բնականորեն անդրադարձավ բնավորության վրա։ Երբ մարդ տանջվում է, նրա մեջ պահանջ է առաջանում նաև ուրիշներին տանջել։ Սիլվիան տանջվում էր, տառապում, և նրան զայրացնում էր, որ ամուսինը իր հետ միասին չի տառապում։ Նա աշխատում էր հասնել դրան, նրա հոգին հանում էր իր կատաղի և անհեթեթ բծախընդրություններով, տրամադրության մշտական փոփոխություններով և նույնիսկ— ա՛յ քեզ անսպասելի բան— խանդոտ սիրահարվածությամբ, որը, այնուամենայնիվ, չէր խանգարում նրան ամուսնու դլխին անընդհատ հանդիմանանքներ

տեղալէ Օրեր էին լինում, երբ Լեոպոլդը ուղղակի իրեն կորցնում էր և չգիտեր ինչ անի։

Աննետան միշտ կողքին էր, միշտ պատրաստ էր լսելու նրա բողոքները։ Լեոպոլդը բարձրանում էր վերև՝ նրա մոտ, որպեսզի սիրտը թեթևացնի։ Համբերությամբ լսելով մինչև վերջը, Աննետան միշտ կարողանում էր Լեոպոլդին սփոփել և ուրախացնել այնպես, որ սա ինքն էլ էր հաճախ ծիծաղում իր փոքրիկ անախորժությունների վրա։ Այդ զրույցները նրանց միջև ստեղծում էր հանցակցություն, ինչպիսին լինում է այն մարդկանց միջև, որոնք իրար հետ կապված են միայն իրե՛նց հայտնի գաղտնիքներով։ Եվ Սիլվիայի ներկայությամբ նրանք երբեմն խորամանկորեն հայացքներ էին փոխանակում։ Սրկուսն էլ ազնիվ էին և այդ պատճառով բոլորովին չէին վախենում իրենց միջև ստեղծված մտերմությունից, թեև անմեղ, բայց ոչ անվտանգ։ Աննետան բավականություն էր զոնում այդ մտերմական ծաղրանքի և անմեղ կոկետության մեջ, դրանում ոչ մի անպատշաճ բան չտեսնելով։ Իսկ Լեոպոլդին հենց դա էլ պետք էր— նա վաղուց էր իր վրա զգում Աննետայից եկող ուժի և կենսունակության հմայքը։ Իսկ Աննետան այդ ժամանակ ամբողջովին կլանված էր այն հայտնագործությամբ, որ Ժուլիենն իրեն սիրում է։ Այդ սերը քաղցրորեն հուզում էր նրան և ամբողջ մնացած աշխարհը նրա համար կարծես մշուշի մեջ լիներ։ Երբ Ժուլիենի հանդիպումից հետո նա Լեոպոլդին էր լսում և նույնիսկ ինչ-որ պատասխան տալիս նրան, Աննետայի ժպիտը կանխանշանակված էր լինում Ժուլիենի համար։ Իսկ Լեոպոլդը, իհարկե, այդ իմանալ չէր կարող։

Լեոպոլդը գիտեր, ինքն ինչ է ուզում։ Եվ որպես կանոնավոր մարդ, կռվում էր իր հետ։ Սակայն կանոնավոր մարդն էլ է մարդ, և նրան չի կարելի կրակի հետ խաղալ։

Մայիսյան մի կիրակի օր նրանք չորսով— Սիլվիան, Աննետան, Լեոպոլդը և փոքրիկ Մարկը— զբոսանքի դուրս եկան դեպի Սու։ Ընդամենը մի ժամ քայլելուց հետո Սիլվիան հոգնեց և, նստելով բլուրի սաորոտում, ասաց.

— Էհ, երիտասարդներ, դուք վերև մագլցեք, եթե տրամադրություն ունեք։ Իսկ մենք ձեզ այստեղ կսպասենք։

Նա Մարկի հետ մնաց ներքևում, իսկ Լեոպոլդն ու Աննետան առույգորեն շարունակեցին ճանապարհը։ Աննետան ուրախ էր, աշխույժ, Լեոպոլդի հետ իրեն պահում էր որպես բարի ընկեր... Այդ պարզ ու հասարակ մարդու հետ նա հանգստանում էր հոգեկան այն լարվածությունից, որը նրան պատճառում էր ժուլիենի սերը և բարձր նյութերի մասին նրա վարած զրույցները։ Կածանը ոլոր-մոլոր գնում էր ինչ-որ մի մեծ դաստակերտի ձգվող ցանկապատի երկարությամբ, իսկ մյուս կողմից իջնում էր բլրալանջը, որ ծածկված էր ծաղկող թփուտներով։ Բարձրանալով վերև, նրանք ցանկապատի ճեղքերից տեսնում էին լանջերով իջնող պտղատու այգիները, որոնք ծածկված էին ձյունաճերմակ և վարդագույն ծաղիկների նրբահավով։ Երկնքի կապույտը անսովոր մեղմ կանաչ երանգ ուներ, որի վրայով սահում էին փութկոտ թուխպերը։ Ուրախ քամին չարաճճիորեն կծմծում էր, ինչպես աշխուժ շան ձագուկը։ Աննետան երգելով քայլում էր առջևից և ծաղիկներ քաղում։ Լեոպոլդը կրնկակոխ գնում էր նրա հետևից։ Նա տեսնում էր ինչպես է Աննետան կռանում, որի պինդ ոտինքները պրկում էին հագի թեթև շորը, տեսնում էր նրա մերկ թևերը, սաստիկ քամուց վարդագույնած մերկ պարանոցը, և աղվամազե խոպոպիկների փրփուրի միջից երևացող փոքրիկ ականջախեցին։ Ականջի ծայրը արյան կաթիլի պես ալին էր տալիս։ Նրանց աջ կողմից ձգվում էր խիստ թեք բլրալանջը, իսկ ճանապարհն առջևում նման էր նեղ միջանցքի, որտեղից դուրս էր խուժում ուժեղ քամին և խփում ուղղակի նրանց երեսներին։ Աննետան, առանց շրջվելու, ձայն տվեց իր ուղեկցին։ Լեոպոլդը չէր պատասխանում։ Աննետան կռացած շարունակում էր ծաղիկ հավաքել և կատակով ինչ-որ բան էր ասում Լեոպոլդին։ Բայց քանի որ վերջինս լռում էր, Աննետան հանկարծ այդ լռության մեջ վտանգ զգաց։ Ծաղիկները մի կողմ շպրտելով, նա արագ շտկվեց, բայց չհասցրեց շրջվել և հանկարծ... քիչ մնաց ընկներ. Լեոպոլդը հետևից վրա պրծավ և կոպտորեն

գրկեց նրան։ Աննետան ծոծրակին զգաց նրա արագացած շնչառությունը և, ապահ շուրթերը սկսեցին համբուրել նրա վիզը, այտերը։ Աննետան մի ակնթարթում ամբողջովին պրկվեց, կորացավ և— որտեղի՞ց այդքան ուժը— մոլեգնորեն ետ հրեց իրեն գրկող տղամարդուն։ Լեոպոլդը ակամա ձեռքերը բաց թողեց, և հիմա արդեն նրանք կանգնած էին երես առ երես— Աննետան և նրան վիրավորողը։ Աննետայի աչքերը ցասումնալից փայլատակում էին։ Սակայն Լեոպոլդը չէր ուզում որսին բաց թողնել ձեռքից։ Եվ նրանց միջև իրար դեմ առելությամբ լցված երկու կենդանիների կատաղի մարտ սկսվեց։ Կատաղի, բայց կարճ։ Աննետան, որին բնազդական զայրույթը ուժ տվեց, այնպես հրեց Լեոպոլդին, որ նա հազիվ մնաց ոտքերի վրա կանգնած։ Լեոպոլդը կանգնել էր նրա առաջ կրկնակի ստորացված, կարմրատակած ու ծանր շնչելով։ Նրանք զայրագին հայացքով չափում էին միմյանց։ Ոչ մեկը ոչ մի խոսք չէր արտասանում... Աննետան, արագ-արագ մագլցելով բլրալանջը, խցկվեց պարսպի ճեղքով ներս և վազեց ներքև։ Լեոպոլդը խկույն լրջացավ, սկսեց նրան կանչել։ Բայց Աննետան նրանից քսան քայլ հեռավորության վրա, թույլ չէր տալիս, որ Լեոպոլդը իրեն մոտենա։ Նրանք իջնում էին բլուրն ի վար, պարսպով իրարից բաժանված, անվստահ, թշնամանքով և շփոթահար նայելով միմյանց։ Լեոպոլդը այլայլված ձայնով նրան աղերսում էր ետ դառնալ, ներել իրեն։ Աննետան ձևացնում էր, թե չի լսում նրան, բայց լսում էր, և Լեոպոլդի ձայնի մեջ հնչող խուճապը մեղմացրեց նրան։ Աննետան քայլերը դանդաղեցրեց...

— Աննե՜տա,— աղաչում էր Լեոպոլդը։— Աննե՜տա։ Մի փախչեք... Ես ձեզ ձեռք չեմ տա... Տեսնում եք, ես տեղումս կանգնած եմ, մոտ չեմ գա... Ես անասունի նման վարվեցի։ Ես ամաչում եմ, սոսկալի ամաչում եմ... Հայհոյեք ինձ ինչքան ուզում եք, բայց մի՜ փախչեք։ Ասված վկա, ես ձեզ մատով անգամ չե՜մ կպչի... Ես ինքս էլ եմ ինձ համար զզվելի... Տեսնում եք, ես ծնկաչոք ձեզանից ներողություն եմ խնդրում։

Եվ Լեոպոլդը անճարպկորեն ծնկի եկավ։ Նա խղճուկ և ծիծաղելի տեսք ուներ։

Աննետան մռայլ, անշարժ, լսում էր, կիսով չափ շրջված այն կողմը, և առանց նրան նայելու։ Բայց, իրենից անկախ, հայացքը Լեոպոլդի կողմը շրջելով, տեսավ, թե որքան է նվաստացած այդ մարդը, և խորը հուզվեց։ Աննետայի ջերմ սրտում ուրիշների զգացմունքներն այնպիսի արձագանք էին գտնում, կարծես դրանք նրա սեփական զգացմունքներն էին։ Լեոպոլդին տանջող ամոթը Աննետայի այտերը ներկեց։ Նա դիմքով շրջվեց դեպի Լեոպոլդը և ասաց.

— Վե՛ր կացեք։

Լեոպոլդը տեղից ելավ, և Աննետան բնազդաբար մի քանի քայլ ետ գնաց։ Լեոպոլդն ասաց.

— Դուք դեռ շարունակում եք ինձանից վախենալ։ Ինձ երբե՞ք դուք այդ չեք ների։

— Այդ մասին այլևս չխոսենք,— չոր-չոր ասաց Աննետան։

Նրանք իջան ներքև, դեպի ճանապարհը։ Աննետան համր էր և սառը։ Բայց Լեոպոլդը չէր կարողանում լուռ մնալ. նա շատ վշտացած էր և փորձում էր արդարանալ։ Բայց խեղճը պերճախոսությամբ աչքի չէր ընկնում, չէր կարողանում դեղեցիկ արտահայտվել։ Նա միայն վշտացած անընդհատ կրկնում էր.

— Ես խո՛ղ եմ։

Աննետան, դեռ հուզված, քմծիծաղը զսպում էր։ Նրա զգացումները դժվարությամբ սկսում էին հավասարակշռվել։ Նրա համար և զվվելի էր և ծիծաղելի հիշել այդ տեսարանը։ Լեոպոլդին Աննետան այդ չէր ներել, բայց միևնույն ժամանակ չէր կարողանում չիղճալ այդ մարդուն, որը, իր հետ միասին քայլելով, այդքան ստորացած, զղջում էր և անընդհատ ներողություն անկապ բառեր քրթմնջում։ Աննետան նրան լսում էր դրգռված, կարեկցությամբ, հեգնանքով։ Լեոպոլդը ամեն կերպ աշխատում էր բացատրել «այդ գարշելի խենթությունը, որ համակում է մարմինը...»։ Այո, այդ խենթությունը ծանոթ էր և իրեն... Ասել դա Լեոպոլդին, իհարկե, պետք չէր, բայց նա այնպիսի դժբախտ տեսք ուներ, որ Աննետան իրենից անկախ ասաց.

— Գիտեմ։ Դա ո՞ւմ հետ չի լինում։ Ինչևէ, մոռանա՛նք։

Նրանք լուռ շարունակեցին ճանապարհը, հոգիները ծանրացած, մոայլ և շփոթահար։ Երբ արդեն հասնում էին այն տեղը, որտեղ Սիլվիային թողել էին, Աննետան այնպիսի մի շարժում արեց, որ կարծես ուզում էր ձեռքը մեկնել Լեոպոլդին, բայց չմեկնեց և միայն ասաց.

— Ես բոլորը մոռացա։

Լեոպոլդի սիրտը թեթևացավ, սակայն նա դեռ անհանգըստանում էր։ Նա չարություն արած տղայի նման հարցրեց.

— Դուք ոչինչ չե՞ք պատմի։

Աննետան թեթևակի կարեկցանքով ժպտաց։

Ոչ, նա ոչինչ չասաց, բայց Սիլվիայի սուր աչքերը առաջին իսկ հայացքից ամեն ինչ կարդացին նրանց դեմքերի վրա։ Սիլվիան ոչ մի հարց չտվեց։ Դարձի ճանապարհին աղմկոտ շաղակրատանքի ժամանակ, որով երեքն էլ աշխատում էին թաքցնել իրենց խռովքը, Սիլվիան ուշադիր հետևում էր քրոջը և ամուսնուն։

Այդ օրից ի վեր Աննետան ու Լեոպոլդը այլևս մենակ չէին մնում, Խանդոտ կինը նրանց հետևում էր։ Ասենք, Աննետան ինքն էլ էր Լեոպոլդից զգուշանում։ Նա չէր կարողանում թաքցնել իր թերահավատությունը, և նեղացած Լեոպոլդը լուռ չարություն էր պահում իր մեջ։

Աննետայի աչքերը բացվեցին։ Այլևս չէր կարելի առաջվա նման մարդկանց վստահել, վստահել իրեն իսկ։ Չէր կարելի կյանքում քայլել իր ճանապարհով ուրախ, ինչպես առաջ, ուշադրություն չդարձնելով այն բանին, որ նա իրենից անկախ ցանկություն է արթնացնում ուրիշների մեջ, ցանկություն, որը ինքը չի բաժանում նրանց հետ։ Ժամանակակից հասարակության մեջ, ժամանակակից բարքերի պայմաններում նրա՝ միայնակ, երիտասարդ և ազատ կնոջ վիճակը ոչ միայն Աննետային դատապարտում էր այն բանին, որ տղամարդիկ կպչեն իրենից, այլև բոլորի աչքում այդ կպչողներին արդարացնում էր։ Ոչ ոք հնարավոր չէր համարում, որ նա, այդքան համարձակ խզելով իր հարաբերությունները պայմանականությունների հետ, ուզում է ամփոփվել իր կարծեցյալ այրության մեջ, պահպանելով հավատարմու-

թյունը հայտնի չէ թե ում նկատմամբ։ Նա ինքը, խաբելով իրեն, իր կյանքի նպատակը տեսնում էր մայրության մեջ։ Եվ մայրական զգացմունքը անկասկած պայծառ բոցով այրվում էր նրա հոգում։ Բայց մյուս կրակը նույնպես առաջվա պես վառվում էր Աննետայի մեջ։ Նա աշխատում էր մոռանալ այդ կրակի մասին, որովհետև վախենում էր դրանից։ Ընդմիշտ նա երևակայում էր, որ ուրիշ ոչ ոք այդ կրակը չի տեսնի։ Բայց սխալվում էր. կրակը, հակառակ նրա կամքին, ժայթքում էր դեպի դուրս։ Եվ եթե ոչ ինքը, ապա ուրիշներն էին վտանգում իրենց՝ այդ կրակի զոհը դառնալուց։ Լեոպոլդի դեպքը հենց նոր այդ ապացուցեց։ Դա զզվելի էր, զայրո՜ւյթ էր պատճառում։ Միրաժից չկուրացած աչքերը այն մարդու, ով չի սիրում, սիրո ակտի մեջ տեսնում են անմիտ և նողկալի անասնություն։ Այ հենց այդպիսին էր Աննետայի աչքում Լեոպոլդի հանցափորձը։ Բայց նրա խիղճը անհանգիստ էր. Չէ՞ որ նա ինքն էր Լեոպոլդի մեջ բորբոքել վավաշոտությունը։ Աննետան հիշեց իր չմտածված կոկետությունը, տնազնները, կանացի ամեն տեսակ խորամանկությունները... Ի՞նչն էր Աննետային մղում դրան։ Ցանկությունների այն զսպված ուժը, այն ներքին կրակը, որին կամ պետք է տնել, կամ հանգցնել իր մեջ։ Հանգցնել այն մենք չենք կարող, այդ չպե՞տք է անենք։ Չէ՞ որ նա կյանքի արևն է, առանց այդ արևի կյանքը սուզված կլիներ խավարի մեջ։ Բայց թող այդ արևը չմանվի՛ Ապոլոնի կառքին, որը տրվեց Փաեթոնի անփորձ ձեռքը, թող չկործանի՜ այն, ինչ ինքը պետք է կենդանացնի։ Թող երկնքում կատարի իր համար սահմանված ուղին...

Ուրեմն, ամուսնությո՞ւն։ Աննետան երկար ժամանակ իրենից հեռացնում էր այդ եզրակացությունը, բայց նրան սպառնող վտանգների գիտակցությունը Աննետային հանգեցրեց այն մտքին, որ սիրո և հարգանքի, խաղաղ բարեկամության վրա խարսխված ամուսնությունը կլինի այն պատվարը, որը կսանձի կրքի դևերին և կպաշտպանի նրան տղամարդկանց հետապնդումից։ Եվ որքան ավելի շատ էր նա իրեն համոզում դրանում, այնքան ավելի թույլ էր դիմադրում Ժուլիենի աղերսանքներին։ Ամեն ինչն էլ, կարծես

խոսքը մեկ արած, տրամադրում էր նրան դեպի այդ ամուսնությունը. նյութական ապահովության և հոգեկան հանգստության հեռանկարը, ընտանեկան օջախի պահանջը, սրտի հակումները: Նա ուզում էր դիջել Ժուլիենի աղերսանքներին, և նորանոր հիմքեր էր գտնում նրան սիրելու: Ասենք, նրան ոչ մի հիմքեր պետք չէին— նա առանց այդ էլ Ժուլիենին սիրում էր: Նրա մեջ արդեն ստեղծագործական աշխատանքներ էր գտնում, որը սրտի ընտրյալին երազանքի հրաշալի տեսիլք էր դարձնում: Ժուլիենը այդ բանում նրանից առաջ էր ընկնել: Բայց Աննետայի և՛ երևակայությունն էր ավելի հարուստ և՛ հոգին ավելի կրքոտ, և նա շատ շուտով ավելի հեռուն գնաց, քան Ժուլիենը:

Այլևս չզսպելով իրեն, Աննետան ազատություն տվեց իր անմիջական և կրակոտ բնավորությանը: Նա չէր դիմում խոթաքաննկությունների, որոնցով ուրիշ կանայք, ավելի ճարպիկները, ծածկում են իրենց պարտությունը, ձևացնելով, որ իրենց սիրտը չի նվաճված: Աննետան իր սիրտը բացեիբաց նվեր բերեց— նա իր սիրո մասին հայտնեց Ժուլիենին: Եվ այդ օրից սկսած Ժուլիենը կորցրեց հանգիստը:

Ժուլիենը կանանց քիչ էր ճանաչում: Կանայք նրան և ձրկում էին և շվոթի մատնում: Ջանքեր անելով նրանց ճանաչել, նա իրեն թույլ էր տալիս համարձակորեն դատել նրանց մասին: Ոմանց իդեալականացնում էր, ոմանց խստորեն դատապարտում: Իսկ նրանք, ովքեր այդ կատեգորիաներից ոչ մեկի տակ չէին ընկնում, Ժուլիենի մեջ ոչ մի հետաքրքրություն չէին արթնացնում: Մարդիկ, որոնք շատ երիտասարդ են (իսկ Ժուլիենը իր անփորձության շնորհիվ այդպիսին էր մնացել), միշտ շատախոսական են եզրակացություններ անում: Կանխված իրենցով և իրենց ցանկություններով, նրանք ուրիշների մեջ տեսնում են լոկ այն, ինչ ուզում են տեսնել:

Հոգեկան սիրո մեջ, ինչպես և մարմնական, ամեն մի տղամարդ, միամիտ թե խորամանկ, մտածում է միայն իր մասին, բայց ոչ երբեք սիրելի կնոջ: Նա չի ուզում իմանալ, որ այդ կինը ապրում է իր առանձին կյանքով: Նա կարող էր այդ հասկանալ հենց սիրո միջոցով: Եվ սերը իսկապես դա սովորեցնում է այն փոքրաթիվ մարդկանց, ովքեր ընդունակ

ն յուրացնելու նրա դասերը, բայց այդ էլ միայն ի դժբախտություն իրենց և այն կանանց, ում նրանք սիրում են, որովհետև ճշմարտությունը նրանց համար բացվում է միշտ չափազանց ուշ։ Դարեր շարունակ մարդիկ միամտորեն զարմանում են և գանգատվում մարդկային հոգու անմխիթար միայնությունից, որը հասկանալի է դառնում սիրո դառը փորձից։ Սրտերի միաձուլման անիրականանալի երազանքը մարդկանց վազելի սխալն է։ Քանի որ մի՞թե «սիրել» չի նշանակում «սիրել ուրիշին»։ Ժուլիենը այնպիսի էգոիստ չէր, ինչպես Ռոժե Բրիսսոն, բայց, ճաշակած չլինելով իսկական սեր, նա նույնքան քիչ էր ընդունակ իրեն զոհաբերելու, որքան և մյուսը։ Եվ դեռ ավելի քի՛չ էր ճանաչում կանանց։ Այդ աշխարհը Ժուլիենին պետք էր մոցնել զգուշորեն ձեռքից բռնած։

Աննետան ի ծնե էլ աչքի չէր ընկնում իր հաշվենկատությամբ ու զգուշությամբ, ասենք, սերը նո՛ւյնպես նրան ո՛չ միայն այդ չէր սովորեցրել, այլ, ընդհակառակը, դարձրել էր ավելի դյուրահավատ և շռայլ։ Այժմ, երբ Աննետան համոզված էր, որ սիրում է և սիրված է, նա ոչինչ չէր թաքցնում Ժուլիենից։ Աննետան զգում էր, որ իր համար սիրելի մարդու մեջ ոչինչ չի կարող իրեն վանել,— ուրեմն ինքն ինչո՞ւ գունազարդվի նրա համար։ Լինելով հոգով առողջ, նա չէր ամաչում երևալ այնպես, ինչպես ստեղծված է։ Թող նա, ով իրեն սիրո՞ւմ է, տեսնի նրան այնպես, ինչպես որ ինքը կա։ Աննետան լավ գիտեր Ժուլիենի միամտությունը, նրա անհամարձակությունն ու անփորձությունը սիրո մեջ և այդ մասին մտածում էր հաճույքով, ծաղրական քնքշությամբ։ Նրան դուր էր գալիս, որ ինքը առաջինն է բացում Ժուլիենի համար կանացի սրտի գաղտնիքները։

Մի անգամ Աննետան անսպասելի կերպով եկավ նրա բնակարանը։ Դուռը բացեց Ժուլիենի մայրը, ծեր մի կին, ալեհեր, կոկիկ սանրված, հանդիստ դեմքով և ուշադիր, խիստ աչքերով։ Անվստահությամբ զննելով Աննետային, տիկինը սառը քաղաքավարությամբ նրան տարավ փոքրիկ հյուրասենյակը, մաքուր և յուրտ, որտեղ կահույքի վրա ծածկոցնեք էր քաշված։ Դունաթափ ընտանեկան լուսանկարներն ու թան-

գարանային նկարների պատճենները վերջնականապես սառեցնում էին այդ սենյակի մթնոլորտը։ Աննետան մենակ նստել էր և սպասում։ Հարևան սենյակում փսփսացին, ապա շտապով հյուրասենյակ մտավ Ժուլիենը։ Նա և ուրախ էր Աննետայի այցելության համար և մի քիչ իրեն կորցրած, չգիտեր ինչ ասի, և Աննետային պատասխանելով, նայում էր ոչ թե նրան, այլ ինչ-որ մի կողմ։ Նրանք նստել էին ուղիղ թիկնակներով անհարմար աթոռների վրա, որոնք խանգարում էին անկաշկանդ դիրք ընդունելուն։ Նրանց բաժանում էր սեղանը, այն սալոնային փոքրիկ սեղաններից մեկը, որի վրա հնարավոր չէ կոթնել և որի ոտքերը անընդհատ մարդու ծնկների են կպչում։ Մոմած, առանց գորգի հատակից և ապակիների տակի հերթարիում հիշեցնող մեռած դեմքերից բարձրացող ցրտում բառերը մարդու շրթունքների վրա սառում էին, և ակամայից ձայնը ցածրացնելու ցանկություն էր առաջանում։ Այդ հյուրասենյակը դրականորեն սառեցնում էր հոգին։ Աննետան մտածում էր. միթե Ժուլիենն այստեղ իրեն պահելու է մինչև գնալը։ Վերջապես նա խնդրեց Ժուլիենին ցույց տալ իր աշխատասենյակը։ Մերժելն անհնար էր, ասենք, Ժուլիենն ինքն էլ էր ուզում։ Բայց նա այնպիսի մի անվճռական տեսք ուներ, որ Աննետան հարցրեց.

— Ձեզ համար դա տհա՞ճ է։

Ժուլիենն առարկեց և Աննետային տարավ իր աշխատասենյակը, նախապես ներողություն խնդրելով սենյակի անկարգության համար։ Անկարգությունը նրա սենյակում ավելի քիչ էր, քան Աննետայի մոտ իր այցելության առաջին օրը, բայց անկարգությունն այստեղ մի տեսակ վհատ էր, անարտահայտիչ։ Սենյակը Ժուլիենի համար և որպես աշխատասենյակ էր ծառայում և որպես ննջարան։ Գրքեր, նշանավոր փոթագրանկար, որի վրա պատկերված էր Պաստերը, աթոռների վրա թղթերի կույտեր, ծխամորճը սեղանին, ուսանողական մահճակալ։ Պատին՝ մահճակալի վերևը, Աննետան նկատեց մի ոչ մեծ խաչելություն՝ տոսախի շյուղի հետ։ Նստելով մի անհարմար բազկաթոռի վրա, Աննետան, տանտիրոջը կյանքի կոչելու համար, սկսեց վերհիշել իրենց ուսանողական տա-

րիները։ Աննետան խոսում էր անկաշկանդ, առանց սեթևեթանքի, խոսում էր իրենց ծանոթ բաների մասին։ Իսկ Ժուլիենը ցրված էր, շփոթված Աննետայի այցելությունից և ազատ խոսակցությունից։ Ժուլիենին, ըստ երևույթին, անհանգստացնում էր այն, ինչ տեղի էր ունենում հարևան սենյակում։ Նրա շփոթմունքը հաղորդվեց Աննետային, բայց Աննետան իրեն աննկուն էր պահում և վերջիվերջո ստիպեց Ժուլիենին մոռանալ այն, թե ինչ կասեն Ժուլիենը աշխուժացավ, և երկուսն էլ սրտանց սկսեցին ծիծաղել։ Միայն երբ Աննետան պատրաստվում էր գնալ, և Ժուլիենը նրան տարավ ճանապարհ գնելու, նա կրկին իրեն մի տեսակ անհարմար զգաց։ Նրանք միջանցքով անցան Ժուլիենի մոր սենյակի կողքով։ Դուռը կիսաբաց էր, բայց տիկին Դավին ձևացրեց, թե չի տեսնում նրանց,— նրբանկատությունից կամ նրա համար, որպեսզի Աննետային հրաժեշտ չտա։ Կանայք առաջին իսկ հայացքից դարձան թշնամիներ։ Այդ համարձակ աղջկա այցելությունը, նրա ազատ շարժուձևերը, հնչեղ ձայնը, ծիծաղը, աշխուժությունը տիկին Դավիի մեջ տհաճ մի զգացում էին առաջացրել։ Նա վտանգ զգաց։ Իսկ Աննետան հայտնվելով նրանց տանը, հասկացավ, որ իր և Ժուլիենի միջև միշտ անտեսանելի կերպով կանգնելու է նրա մայրը, և հեռացավ նրան թշնամորեն տրամադրված։ Պատավ դամայի սենյակի կողքով անցնելիս Աննետան նկատեց, որ նա մեջքով շրջվեց դեպի դուռը, և այդ պատճառով դիտավորյալ կերպով խոսում ու ծիծաղում էր շատ բարձր։ Ընդամին Աննետան խանգոտորեն մտածեց.

«Ես Ժուլիենին քեզանից կխլե՞մ»։

Հաջորդ շաբաթ Ժուլիենը նրա մոտ հյուր եկավ երեկոյան, ճաշից հետո։ Նա առաջին անգամ մոր հետ խոսեց Աննետայի մասին, և ուզում էր իր վճիռը հաստատուն դարձնել։ Այդ երեկո նրանք մենակ էին։ Մարկին Լեոպոլդը կրկես էր տարել։ Ժամը տասնմեկի մոտ Ժուլիենը պատրաստվեց գնալու, և Աննետան որոշեց ճանապարհ դնել նրան, որպեսզի մի քիչ ոտքով քայլի և շնչի գիշերային զով օդը։ Բայց երբ նրանք հասան Ժուլիենենց տուն, վերջինս անհանգստացավ, մտածելով, որ Աննետան մենակ է վերադառնալու։ Նրա վախի

վրա Աննետան միայն ծիծաղեց, բայց Ժուլիենը անսպասման ուզում էր նրան ուղեկցել, և Աննետան չհակառակվեց, որովհետև ուզում էր որքան կարելի է երկար մնալ նրա հետ։ Նրանք վերադարձան, ընտրելով ամենաերկար ճանապարհը, և իրենք էլ չնկատեցին, թե ինչպես հայտնվեցին Սենայի բարձր ափին։ Հունիսյան տաք գիշեր էր։ Նրանք նստեցին նստարանին։ Բարդիներն աղմկում էին մութ գետի վրա, ջրի վրա խաղում էին լապտերների կարմիր և ոսկեգույն լույսերը։ Երկինքը թվում էր հեռու, աստղերն այնքան գունատ էին, կարծես քաղաք-տզրուկը դրանցից ծծել էր ամբողջ արյունը։ Ներքևում լույս էր, իսկ վերևում, որտեղ նստած էին Աննետան ու Ժուլիենը, մութ գիշերն էր թագավորում։ Երկուսն էլ լուռ էին (խոսքերն արդեն չէին կարող արտահայտել նրանց զգացմունքները) և աչքները վեր չէին բարձրացնում, բայց ամեն մեկը կարդում էր մյուսի հոգին։ Աննետայի սիրտը ջերմանում էր այն ցանկություններից, որոնք նա կռահում էր Ժուլիենի մեջ։ Ժուլիենը նստել էր անշարժ, երկչոտությամբ կաշկանդված, չհամարձակվելով նույնիսկ Աննետային նայել։ Իսկ Աննետան գլուխն առանց շրջելու, խավարում ժպտում էր և, ժպտալով ջրի վրայի կարմիր ցոլքերին, տեսնում էր ոչ թե դրանք, այլ Ժուլիենին։ Նա երբեք սիրտ չի անի... Եվ հանկարծ Աննետան ինքը թեքվեց ու համբուրեց նրան...

Ժուլիենը տուն վերադարձավ սիրով և շնորհակալությամբ արբած, բայց նրա ուղեղի մեջ խրվել էր խուլ անհանգստության դավադիր խայթը... Մոր թունոտ խոսքերը, «աղքատ և անամոթ աղջիկների մասին, որոնք ամուսիններ են որսում», նա իսկույն ևեթ զայրույթով դուրս նետեց հիշողության միջից, բայց փշի ծայրը մնաց մաշկի տակ։ Ժուլիենն ամաչում էր իրենից։ Նա մտովի Աննետային ներում էր խնդրում։ Նա գիտեր, որ վիրավորական կասկածանքը կեղծ էր։ Նա սրբորեն հավատում էր Աննետային։ Եվ այնուամենայնիվ ինչ-որ բան տանջում էր նրան։ Ամեն մի նոր հանդիպումը Աննետայի հետ սաստկացնում էր այդ տագնապը։ Աննետայի անկախությունը, նրա անկաշկանդ շարժուձևերը, ազատամտությունն ու դատողությունների համարձակությունը, հատկապես բարոյականության հարցերում, ամեն տեսակի նա-

խապաշարմունքների հանգիստ ժխտումը— բոլորը վախեցնում էր Ժուլիենին։ Ժուլիենի մտահորիզոնը նեղ էր, ինչպես նրա կոստյումները, բնավորությամբ նա որոշ չափով նոթոտ էր, հակված դեպի մռայլություն։ Իսկ Աննետան, ընդհակառակը, աչքի էր ընկնում լայն հանդուրժողականությամբ և կենսախնդությամբ։ Ժուլիենը չէր հասկանում, որ Աննետան իր անձնական կյանքում կարող է լինել նույնպիսի խստաբարո պուրիտանուհի, ինչպես ինքը, իսկ ուրիշներին մոտենալ այլ չափանիշով, նրանց սեփական չափանիշով և հանդես բերել նրանց նկատմամբ հեգնական ներողամտություն։ Հանդուրժողականությունն ու հումորը Ժուլիենին խորթ էին, նրան շփոթմունքի մեջ էին գցում։ Աննետան այդ նկատել էր, և երբ նա որևէ բանի մասին դատում էր անարդարացի, չափազանց ուղղամիտ խստությամբ, Աննետան չէր փորձում նրա վզին փաթաթել իր տեսակետը. նա ծիծաղում էր այդ միամիտ անհաշտության վրա, որը իրեն նույնիսկ մասամբ դուր էր գալիս։ Աննետայի ծաղրական ժպիտները Ժուլիենին անհանգստացնում էին ավելի շատ, քան նրա խոսքերը։ Ժուլիենի մեջ տպավորություն էր ստեղծվում, որ որոշ բաների մասին Աննետան շատ ավելին գիտե, քան ինքը։ Դա այդպես էլ կար։ Ժուլիենը իրեն հարցնում էր. ինչքա՞ն շատ են փաստերն Աննետան ի՞նչ գիտի։ Ինչ կարգի փորձ է Աննետան հասցրել ձեռք բերել։

Այդ նուրբ հոգեկան կազմակերպվածություն ունեցող, բայց աղքատ կենսական ուժերով մարդուն, նույն ձևով, ինչպես և նրա մորը (մոր անբարյացակամ նկատողությունները դրան նպաստում էին) բնազդորեն անհանգստացնում էր առողջ, փթթուն, կենսախնդություն ճառագայթող Աննետան։ Նա Ժուլիենի մեջ և բուռն ցանկություն էր առաջացնում և երկչոտություն։ Նրանց երկուսով կատարած զբոսանքների ժամանակ Ժուլիենն իրեն շատ խղճուկ և վտիտ էակ էր թվում Աննետայի կողքին։ Էլ ավելի շատ Ժուլիենին շփոթի էր մատնում Աննետայի հիանալի անկաշկանդվածությունը՝ ուզածդ իրադրության մեջ։ Թե՞ Աննետան նկատեր նրա շփոթմունքը։ Իրեն դուր կգար, բայց Ժուլիենին դա ստորացուցիչ էր թվում։ Աննետան ոչինչ չէր նկատում։ Նա ամբողջովին

կլանված էր նրանով, ինչը երգում էր իր ներսում։ Աննետայի մտքով չէր անցնում, որ ոչ ոք սրտի այդ երգը չի լսում, և նա չէր հասկանում Ժուլիենի տագնապալից հայացքները, երբ նա մտովի հարցնում էր իրեն։

«Ո՞ւմ և ինչի՞ն է Աննետան ժպտում...»։

Աննետան այդ րոպեներին նրան այնքա՜ն հեռու էր թվում...

Ժուլիենը առաջվա նման— ո՛չ, առաջվանից ավելի շատ— գնահատում էր նրա խելքի արժանիքները, հոգեկան եռանդը։ Եվ միևնույն ժամանակ Աննետան նրա համար մնում էր որպես վտանգավոր հանելուկ։ Ժուլիենին ծվատում էին երկու հակադիր զգացումներ. անհաղթելի ձգտումը դեպի նա— և աղոտ անվստահությունը, որպես մի տեսակ մնացորդ նախնադարյան բնազդի, որ մեր օրերի տղամարդուն ու կնոջը վերադարձնում է դեպի սեռերի սկզբնական թշնամանքը, որոնց համար մարմնական սերը յուրահատուկ պայքար էր։ Այդ անվստահությունը— ինքնապաշտպանական բնազդը— թերևս, ամենից ուժեղ այնպիսի տղամարդկանց մեջ է դրսևորվում, ինչպիսին Ժուլիենն է — սուր մտքով, բայց անբավարար փորձով։ Քանի որ նրանք կանանց չեն ճանաչում, ապա նրանց համարում են կամ ավելի պարզ, քան են, կամ խարդավանքի մարմնացում։

Աննետան ավելի էր սաստկացնում Ժուլիենի տատանումները, քանի որ նա մերթ ամեն ինչ ասում էր Ժուլիենին, մերթ ամեն ինչ թաքցնում էր իր մեջ, խանդավառ անկեղծությունից անցնում էր ծածկամտության և երբեմն զբոսանքների ժամանակ գրեթե ամբողջ ճանապարհին լռում էր... Ախ, այդ սարսափելի լռությունը (ո՛ր տղամարդը դրանից չի՞ տառապել), երբ քեզ հետ քայլող ընկերուհու հոգին հեռանում է ինչ-որ անհայտ, քեզ համար ընդմիշտ անմատչելի գնացավառներ... Իհարկե, միշտ չէ, որ այդ լռության տակ խոր գաղտնիքներ են թաքնվում։ Լինում է այնպես, որ նրանց խորությունը քո կրունկներից է... Բայց չէ որ լռության վարագույրը անթափանց է, աչքը նրա միջով ոչինչ չի տեսնում, և ուղեկցողը լիակատար հնարավորություն ունի անելու ամենասոսկալի ենթադրությունները։ Այդպիսի մար-

դու մտքով, ինչպիսին Ժուլիենն է, երբեք չի անցնի, որ այդ գաղտնիքները միայն իր ֆանտազիան է, իսկ կինը հաճախ լռում է այն պատճառով, որ զգում է, թե որքան քիչ է իրեն հասկանում տղամարդը։ Լինում էին օրեր, երբ Աննետան Ժուլիենի մոտ եղած ժամանակ լռակյաց էր դառնում, հեգնորեն ու հոգնած հաշտվելով այն բանի հետ, որ Ժուլիենը իրեն ճիշտ չի հասկանա։ Նա դիտեր, որ Ժուլիենը սիրում է իր ստեղծած Աննետային, իսկ իրական Աննետային չէր կարող սիրել։

«Ինչ կա որ... Եթե դու այդպես ես ուզում... Լա՛վ։ Թող ես չլինեմ այնպիսին, ինչպիսին կամ, այլ այնպիսին, ինչպիսին քեզ եմ թվում...»։

Բայց այդ լուռ հնազանդությունը երկար չտևեց։ Հենց որ Աննետան հասկացավ, թե անկեղծ բացատրություններն կարող են վտանգավոր լինել (քանի որ Ժուլիենը ընդունակ չէ դրանք ճիշտ հասկանալու) և ավելի դիվանագիտորեն կլիներ լռություն պահպանել, նա սկսեց խոսել։ Լռել՝ Ժուլիենին ավելորդ տանջանքներից ազատելու համար,— այո, դրան նա համաձայն էր։ Բայց իր լռությամբ խաթել նրան՝ ոչ։ Եթե ճըշմարտությունն ասելը նրա համար վտանգավոր էր, ուրեմն հենց այդ պատճառով չի կարելի լռել։ Որքան ավելի շատ ռիսկ էր լինում, այնքան ավելի ուժեղ էր դառնում Ժուլիենին ընդառաջ գնալու Աննետայի հպարտ վճռականությունը։ Սիրո սպասավելիք փորձության մասին մտածելիս նրա սիրտը ավելի ուժգին էր բաբախում։ Եթե Ժուլիենը փորձությանը դիմանա, Աննետան ավելի ջերմ կսիրի նրան։ Իսկ եթե ո՞չ... Բայց նա անպայման կդիմանա՞։ Չէ՞ որ Աննետան Ժուլիենի համար թանկ է։ Ինչ լինում է լինի։

Աննետան ազնիվ խաղ էր խաղում, բայց որոշ տղամարդիկ զերադասում են, որ իրենց խաղընկեր կինը խորամանկություն անի։ Սիլվիան (նա գիտեր Ժուլիենի սիրո և ներքաշել ամուսնության մասին) Աննետային սովորեցնում էր.

— Ասված ո՞չ անի ամբողջ ճշմարտությունը նրան պատմես։ Իհարկե, որոշ բաներ ստիպված կլինես ասել. միևնույն է, երբ ամուսնությունը դրանցելու լինեք, նա թղթե-

րից կիմանա... Բայց ճշմարտությունը միշտ կարելի՞ է հարմար ձևով ներկայացնել, թեև նա քեզ սիրում է, ամեն ինչը չտեսնելուն կտա։ Միայն թե մոքովդ չանցնի ինքդ բացես։ Դա հիմարության գագաթնակե՞տը կլինի։ Հարսանիքից հետո ժամանակ կլինի այդ բոլորի մասին խոսել...

Սիլվիան խոսում էր, ինչպես կենսափորձով հարուստ մարդը։ Նա մտահղվում էր քրոջ բարօրության մասին (ասենք, իր բարօրության մասին նույնպես, քանի որ դեմ չէր որքան կարելի է շուտ Աննետային իր տնից հեռացնել) և գտնում էր, որ ամենևին էլ պարտադիր չէ մարդկանց ճշմարտությունն ասել, իսկ առանձնապես՝ փեսացուին։ Այդքանն էլ բավական է, որ նրան սիրում են։ Աննետայի պատմությունը փաստորեն բավական անմեղ բնույթի բան էր, բայց տղամարդիկ թուլլ են։ Նրանք ճշմարտությանը չեն դիմանում։ Ճշմարտությունը պետք է նրանց հրամցնել փոքրիկ դոզաներով...

Աննետան Սիլվիային լսում էր հանգիստ, իսկ մինչև վերջ լսելուց հետո սկսում էր խոսել մի այլ բանի մասին։ Քրոջն առարկելը նա համարում էր անօգուտ, քանի որ միևնույն է որոշել էր իր ձևով անել։ Սիլվիան իր հայացքներն ուներ, Աննետան՝ իր։ Աննետան գերադասում էր Սիլվիային չասել այն, ինչ մտածում էր։ Սիլվիան մնում է Սիլվիա, ոչինչ անել չե՞ս կարող։ Անկախ ամեն ինչից, Աննետան այնուամենայնիվ նրան սիրում էր... Ապա թող փորձեր ուրիշ որևէ մեկը նրան այդպիսի բաներ ասել,— այնպիսի՞ հայացքով ոտից գլուխ կչափեր։

«Ախ՞ղճ Սիլվիա։ Նա տղամարդկանց մասին դատում է նրանցով, որոնց ինքը հանդիպե՞լ է կյանքում։ Իսկ իմ ժուլիենը քաղաքովին ուրիշ ցեղից է։ Նա ինձ սիրում է այնպես, ինչպես ես կամ։ Նա կսիրի նաև այն Աննետային, ինչպիսին ես եղել եմ նախկինում։ Ես նրանից որևէ բան թաքցնելու կարիքը չունեմ։ Ես ոչնչով մեղավոր չեմ նրա առաջ։ Թեև եղել է մեկը, որին ես չարիք եմ պատճառել, ապա այդ մեկը հենց ես եմ...»։

Աննետան հասկանում էր, թե որքան վտանգավոր կարող է լինել անկեղծությունը, բայց հավատում էր ժուլիենի

մեծահոգությանը, եվ որոշելով բոլորը ասել նրան, խոսակցությունը բացեց իր անցյալի մասին։ Մինչև այդ նա և Ժուլիենը, երկուսն էլ բնորոշ ողջախոհ զսպվածությամբ, միշտ խուսափում էին այդ թեմայից։ Բայց Աննետան հաճախ էր կարողացել Ժուլիենի աչքերում նրան տանջող այն հարցը, որը նա վախենում էր տալ,— հարցը այն մասին, ինչ Ժուլիենը և ուզում էր իմանալ, և չէր ուզում։

Աննետան քնքշորեն իր ափով ծածկից Ժուլիենի ձեռքը և ասաց.

— Բարեկամս, ես այնքա՞ն եմ գնահատում ձեր հաճելի երբանկատությունը... Ես ձեզնից այնքա՞ն եմ դրա համար շնորհակալ... Ես ձեզ սիրում եմ... եվ պետք է, վերջապես, ձեզ պատմեմ իմ մասին այն, ինչը դուք չգիտեք։ Ես մեղքերից զուրկ չեմ։

Ժուլիենը վախեցած մի շարժում արեց, կարծես բողոքելով այն բանի դեմ, ինչ Աննետան ուզում էր ասել, կամ, գուցե, ցանկանալով այդ արգելել նրան։ Աննետան քմծիծաղ տվեց.

— Մի՛ վախեցեք։ Ես այնքան էլ մեծ մեղսագործ չեմ։ Գուցե ես այդպես եմ կարծում։ Բայց կարող է պատահել, որ ես իմ նկատմամբ չափազանց ներողամիտ եմ։ Վերնախավն այդ բաներին ուրիշ աչքով է նայում։ Դատեք ինքներդ, ես վստահում եմ ձեր դատավճռին։ Եթե դուք ասեք, որ ես մեղավոր եմ, ուրեմն, դա այդպես էլ կա։

Եվ նա սկսեց պատմել։ Թաքուն տագնապելով ավելի շատ, քան ինքն ուզում էր ցույց տալ, Աննետան նախապես նշուադատել էր, ինչ և ինչպես ասել Ժուլիենին։ Բայց, թեև նա համարում էր, որ դա շատ հեշտ է, խոսելն այդ մասին, պարզվեց, որ դժվար է։ Անհարմարության զգացումը հաղթահարելու համար նա աշխատում էր անտարբեր երևալ։ Չնայած հոգում շատ հուզված էր, բայց խոսքերում երբեմն նույնիսկ թեթև հեգնանք էր դուրս ժայթքում. այդպիսին էր նրա ինքնապաշտպանության ձևը... Ժուլիենը այդ բոլորը չհասկացավ։ Նա Աննետայի տոնի մեջ տեսավ միայն անպատշաճ թեթևամտություն և բարոյական զգացողության բացակայություն։

Ամենից առաջ նա ասաց, որ ինքը ամուսնացած չի եղել։ Ժուլիենը հենց դրանից էր վախենում և նույնիսկ, ճիշտն ասած, հոգու խորքում դրանում համոզված էր։ Բայց նա այնուամենայնիվ հույս ուներ նրանից լսելու, որ դա այդպես չէ։ Եվ երբ Աննետան հաստատեց նրա ենթադրությունը, այնպես, որ այլևս կասկած լինել չէր կարող, Ժուլիենը սարսափեց։ Մակերեսային լիբերալիզմը նրան չէր խանգարում հոդում մնալ ուղղափառ կաթոլիկ, և նրան օտար չէր մեղքի գաղափարը։ Ժուլիենը իսկույն ևեթ մտածեց մոր մասին. նա դրա հետ ոչ մի կերպ չի հաշտվի։ Պայքար էր սպասվում։ Ժուլիենը բուռն կերպով սիրահարված էր։ Չնայած այն ցավին, որը նրան պատճառեց Աննետայի խոստովանանքը, չնայած նրան, որ Աննետայի անցած-գնացած «մեղքերը» նրա համար իսկական հարված էր, նա սիրում էր այդ կնոջը և, որպեսզի տիրանար նրան, պատրաստ էր պայքարի մտնել մոր հետ։ Բայց նա թույլ էր և օգնության կարիք էր զգում — Աննետան պետք է օգներ նրան։ Մարտը տանելու համար Ժուլիենը պետք է հավաքեր իր բոլոր ուժերը։ Ոգեշնչել նրան կարող էր միայն պատրանքը — նա պետք է իդեալականացներ Աննետային։ Եվ եթե Աննետան ավելի խորամանկ լիներ, նա այդ հաշվի կառներ և օգներ նրան։

Աննետան տեսնում էր, թե ինչ վիշտ պատճառեց Ժուլիենին իր խոստովանությունը։ Ու, թեև նա դրան պատրաստ էր, բայց ցավում էր Ժուլիենի համար։ Սակայն Աննետան անհնար էր համարում նրան խնայելը. եթե նրանք որոշում են միասին ապրել, յուրաքանչյուրը պետք է տանի մյուսի փորձություններն ու նույնիսկ սխալների բաժինը։ Նա անգամ չէր էլ ենթադրում, թե Ժուլիենի հոգում ինչ պայքար է տեղի ունենում, ասենք եթե անգամ ենթադրեր, միևնույն է, կհավատար, որ սերը հաղթելու է։

— Խե՛ղճ իմ Ժուլիեն,— ասաց նա,— ես ձեզ վշտացրի՞։ Ներեցեք, ինձ համար նույնպես ծանր է... Դուք իմ մասին ավելի լավ կարծիքի էիք։ Դուք ինձ բարձր էիք դասում, չափազանց բարձր... Իսկ ես ընդամենը թույլ կին եմ... Բայց մի բան կասեմ, եթե ես անգամ ինձ խաբել եմ, ապա ուրիշներին երբեք չեմ խաբել։ Ես եղել եմ անկեղծ։ Ես միշտ ազնիվ մարդ եմ եղել...

— Այո, այո, ես բոլորովին չեմ կասկածում,— արագ վրա բերից Ժուլիենը։— Նա ձեզ գայթակղել է, ճի՞շտ է։

— Ո՞վ,— հարցրեց Աննետան։

— Դե այդ սրիկան... Ներեցե՛ք... Այն մարդը, որը ձեզ լքել է...

— Ո՛չ, նրան դուք իզուր եք մեղադրում,— ասաց Աննետան— Մինակ ես եմ մեղավոր։

Այդ «մեղավոր» բառով Աննետան ուզում էր միայն նրան հասկացնել տալ, որ ամբողջ հոգով ինքը ցավում է նրան պատճառած վշտի համար, իսկ Ժուլիենը ապահորեն կպավ այդ բառից։ Իր հուզմունքի մեջ նա կարչում էր այն մտքից, որ Աննետան խաբված զոհ է և որ նա զղջում է... Ժուլիենը անհունորեն ուզում էր հավատալ այդ «զղջմանը». զղջումը որոշ իմաստով փոխհատուցում էր նրան իր ունեցած հիասթափության համար, դա նրա վիրքին սպեղանի էր, որը թեև չէր ապաքինում, ապա գոնե ցավը դարձնում էր պակաս սանջալից։ Աննետայի զղջումը Ժուլիենին բարոյական գերազանցություն էր տալիս Աննետայի նկատմամբ, թեև ի պատիվ Ժուլիենի պետք է ասել, որ նա այդ չէր չարաշահի։ Եվ վերջապես, քանի որ Ժուլիենը համոզված էր, թե Աննետան «մեղք» է գործել, ապա չէր կասկածում, որ «զղջումը» նրա պարտքն է։ Նա սերտաճել էր այդ քրիստոնեական հասկացություններին հետ։ Ամենաազատամիտ քրիստոնյաները չեն կարողանում դրանցից հրաժարվել։

Բայց Աննետան պատկանում էր ուրիշ կարգի մարդկանց։ Ուխվիերները քրիստոնեական բարոյականության տեսակետից կարող էին լինել մաքուր կամ անմաքուր, բայց եթե նրանք մնում էին մաքուր, ապա այդ անում էին ոչ բնավ ի հաճույս անտեսանելի աստծո կամ նրա չափազանց տեսանելի ներկայացուցիչների՝ օրենքի իրենց քարտուղիկներով, այլ պարզապես դեպի մաքրություն ունեցած սիրո, որ նրանք հասկանում էին որպես հոգեկան մաքրություն ու գեղեցկություն։ Իսկ եթե նրանք լինում էին «անմաքուր», համարում էին, որ դա իրենց անձնական գործն է, իրենց խղճի գործը, և ոչ թե ուրիշների։ Աննետան իրեն պարտավոր չէր համարում որևէ մեկին հաշիվ տալ իր արարքների համար։ Նրա խոստովանանքը Ժուլիենի

առաջ սիրտ կամավոր ընծա էր։ Աննետայի աղնվությունը պահանջում էր, որ նա ժուլիենին պատմի իր կյանքի պատմությունը, բայց բացել նրա առաջ իր ներքին կյանքը Աննետան պարտավոր չէր. նա այդ արեց կամավոր կերպով։ Եվ ահա նա հիմա տեսնում էր, որ ժուլիենը կգերադասեր, որպեսզի ինքը գունաղարդի ճշմարտությունը։ Բայց Աննետան կեղծ արդարացումներ հնարելու համար չափազանց հպարտ էր, ասենք, կարևոր էլ չէր համարում արդարանալ։ Ընդհակառակը, հասկանալով, թե ժուլիենն ինչ է ուզում իրենից, նա շտապեց նրան բացատրել, որ ինքն է տրվել սիրածին։

Ցնցված ժուլիենը չէր ուզում ոչինչ լսել։

— Ո՛չ, ո՛չ, չե՞մ հավատում.— ասաց նա։— Դուք այդ մեծահոգությունի՞ց եք ասում։ Դուք ձեզ վրա եք վերցնում մեղքը, որպեսզի պաշտպանեք այդ անարգ մարդուն։

— Ես այդտեղ ո՛չ մի մեղք չեմ տեսնում,— առանց այլևայլության առարկեց Աննետան։

Աննետայի խոսքերը ապշեցրին ժուլիենին։ Նա հրաժարվում էր դրանք հասկանալ։

— Դուք աշխատում եք նրան արդարացնել...

— Ես ինչի՞ց պետք է նրան արդարացնեմ։ Այստեղ ոչ ոք մեղավոր չէ։

Ժուլիենը չէր հանձնվում։

— Աննետա, աղաչո՛ւմ եմ ձեզ այդպիսի բաներ չասեք։

— Իսկ ինչո՞ւ։

— Դուք ինքներդ էլ գիտեք, որ դա վատ է։

— Ո՛չ, չգիտեմ։

— Ինչպե՞ս։ Դուք ոչ մի բանի համար չե՞ք ափսոսում։

— Ափսոսում եմ միայն, որ ես ձեզ վշտացրի։ Բայց հասկացեք, սիրելի բարեկամ. չէ՞ որ այն ժամանակ մենք իրար հետ նույնիսկ քիչ էինք ծանոթ։ Ես կարող էի ազատ կերպով ինքս ինձ տնօրինել, իմ պարտականությունները միայն իմ նկատմամբ էին։

Ժուլիենը մտածեց. «Իսկ մի՞թե դա քիչ է», բայց բարձրաձայն ոչինչ չհամարձակվեց ասել։

— Այնուամենայնիվ դուք ցավո՞ւմ եք, որ այդպես վարվեցիք,— հարցրեց նա համառորեն։— Ընդունո՞ւմ եք, որ դա սխալ է եղել։

Ժուլիենը չէր համարձակվում Աննետային դատապարտել։ Բայց նա այնպես էր ուզում, որ Աննետան ինքն իրեն դատապարտի։

— Գուցեև սխալ է։

— Գուցեև,— վստահորեն կրկնեց Ժուլիենը։

— Չգիտեմ,— ասաց Աննետան։

Նրա համար պարզ էր, թե Ժուլիենն ինչ է ուզում դուրս կորզել իրենից... Ինչ կա որ, գուցեև սխալվել է, եթե սիրո և կարեկցանքի անկեղծ պոռթկումին տրվելը սխալ է։ Այո, կարող է լինել... «Ես կարող եմ իմ հոգում վշտանալ անկեղծ մոլորության համար, բայց ոչ ոքի առաջ պարտավոր չեմ արդարանալ։ Իմ սիրտը մենակ է տարել իր վիշտը, այդ վիշտը նա տարել է լռության ու միայնության մեջ, այդպես էլ նա հիմա մենակ պետք է իմանա իր ափսոսանքների մասին։ Ոչ ոքի դա չի վերաբերվում։ Ափսոսա՞նք... եկեք անկե՛ղծ լինենք մինչև վերջը։ Ես ոչի՛նչ չեմ ափսոսում»։ Փոքրր-ինչ լռելուց ու մտածելուց հետո նա պատասխանեց Ժուլիենի հարցին.

— Ոչ, ես դա սխալ չեմ համարում։

Թերևս, այս անգամ Աննետան չափն անցկացրեց, վրդովված Ժուլիենի անգիտակից փարիսեցիությունից... Խե՛ղճ Ժուլիենն։ Բայց նույնիսկ այդ րոպեներին, երբ նա Ժուլիենին ամենից թունդ էր սիրում, Աննետան չհանձնվեց, չարտահայտեց ոչ մի զղջում, որին Ժուլիենը սպասում էր... «Ես ուրախ կլինեի ասել այն, ինչ նա ուզում է, բայց չե՛մ կարողանում... Չէ որ դա ճիշտ չէ...»։ Ի՞նչ ափսոսալ։ Աննետան իրավունք ուներ անել այն, ինչ արել էր, և հետո չէ՞ որ դա նրան երջանկությո՛ւն է տվել։ Ճիշտ է, նա դրա համար թանկ վճարեց, բայց հասավ դրան, այդ երջանկությանը՝ երեխային։ Եվ նա մենակ գիտեր, որ այդ պարգևը նրան ոչ միայն բնավ չպատվաստեց, ինչպես պնդում է հիմար հասարակական կարծիքը, այլ նրան դարձրեց ավելի մաքուր, երկար ժամանակով ազատեց սրտի փոթորիկներից, խաղաղություն տվեց նրան և անդորր... Ոչ, ինչ էլ ուզում է լինի. Աննետան այդպիսի ստորություն չի՛ անի։ Նա ապագա սերը չկորցնելու համար չի՛ զրպարտի անցյալի սերը։ Ան-

նետան մինչև օրս էլ երախտապարտ էր Ռոժեին, ճակատագրի այդ գործիքին, որն այնքան քիչ էր արժանի այն սիրուն և կյանքի այն բոցին, որը նա հարուցել էր Աննետայի մեջ...

Ժուլիենը խանդոտի հոտառությամբ կռահեց Աննետայի մտքերը։

— Իսկ դուք մինչև հիմա նրան սիրո՞ւմ եք։

— Ոչ, բարեկամս, չեմ սիրում։

— Բայց դուք նրա վրա նույնիսկ չե՞ք զայրանում։

— Իսկ ինչի՞ համար ես նրա վրա զայրանամ։

— Դուք մինչև հիմա նրա մասի՞ն եք մտածում։

— Ես ձեր մասի՞ն եմ մտածում, Ժուլիեն։

— Բայց չէ՞ որ դուք մինչև հիմա նրան չեք մոռացել։

— Ես չեմ կարող մոռանալ նրան, ով ինձ ուրախություն է տվել, թեև այդ ուրախությունն այլևս չկա։ Ինձ մի՛ հանդիմանեք դրա համար, ինձ համար հիմա բոլորից թանկը դո՛ւք եք։

Արդարության զգացումը Ժուլիենի մեջ բավական զարգացած էր. նա գնահատեց Աննետայի շիտակությունը և հոգու խորքում ընդունում էր նրա ազնվությունը։ Ժուլիենի համար դա անսպասելի երևույթ էր—նոր կին, որի արտասովոր բարոյական բարձրությունը Ժուլիենի համար նոր աշխարհ էր բացում։ Բայց նրա հոգու մյուս կողմերը ապրստամբեցին։ Վիրավորված էր որձի բնազդը։ Բարձրաձայն սկսեցին խոսել կաթոլիկական և բուրժուական նախապաշարմունքները։ Աննետայի կերպարը նրա հոգում ապականվել էր կնոջն ստորացնող կասկածանքներով։ Փոխանակ ատելի շատ հավատալու այն կնոջը, որն այդքան ազնվորեն և շիտակ ասել էր իր անցյալի մասին, Ժուլիենը, իմանալով, որ Աննետան մի ժամանակ թուլություն է ցուցաբերել, այլևս չէր կարողանում հավատ ընծայել նրան։ Նա արդեն կասկածում էր, թե Աննետան հավատարիմ կլինի իրեն։ Ժուլիենը մտածում էր այն մյուսի մասին, որը տիրացել էր Աննետային, որից նա երեխա էր ունեցել։ Նա կենդանի է... Ժուլիենը վախենում էր խաբված լինելուց։ Վախենում էր ծաղրի առարկա դառնալ։ Նա իրեն խորապես

դժբախտ էր համարում և ստորացված և չէր կարողանում ներել։

Հասկանալով, թե ինչ պայքար է տեղի ունենում Ժուլիենի հոգում, տեսնելով, ինչպիսի վտանգ է սպառնում նրա հույսերին, Աննետան սկսեց դողալ։ Չէ՞ որ այն սերը, որն ինքը ներշնչել է Ժուլիենին, համակել է ամբողջությամբ նաև իրենն՝ իր քնքշության ամբողջ ուժը, երջանկության ամբողջ ծարավը Աննետան կենտրոնացրել էր Ժուլիենի վրա։ Փաստորեն Աննետան այստեղ նույնպես խաբվեց, բայց միայն կիսով չափ. Ժուլիենը անարժան չէր նրան, նա շատ դրական գծեր ուներ, որի համար նրան կարելի էր սիրել։ Ժուլիենը և Աննետան շատ տարբեր մարդիկ էին, բայց կարող էին համակերպվել, եթե աշխատեին հասկանալ միմյանց և ցուցաբերեին որոշ հանդուրժողականություն։ Իհարկե, դա նրանց համար հեշտ չէր լինի, բայց մի՞թե չարժեր մեծ սիրո համար վճարել այդպիսի ոչ մեծ տառապանքներով։ Աննետան կարող էր բարերար ազդեցություն ունենալ Ժուլիենի վրա, նա կարող էր Ժուլիենի համար դառնալ ուժի և կյանքի հանդեպ ունեցած հավատի աղբյուր—այնպիսի հավատի, որը ինչպես հզոր մի հողմ, փչելով Ժուլիենի առագաստները, նրան կտաներ այնտեղ, ուր առանց Աննետայի նա երբեք չէր կարող հասնել։ Իսկ Ժուլիենի զգայուն քնքշությունը, նրա հարգանքը դեպի կինը, նրա բարոյական անաղարտությունը և նույնիսկ միամիտ կրոնականությունը, որը խորթ էր Աննետայի համար, Աննետայի վրա բարերար ազդեցություն կունենային, նրա կրքոտ բնավորությունը հավասարակշռության մեջ կդնեին, նրան կյանքում հուսալի, խաղաղ և անդորրավետ ապաստան կտային և վստահելի սեր.»

Վայ այն սրտերին, որոնք սիրո կողմից չափազանցված թյուրիմացությունների պատճառով քամուն են տալիս իրենց երջանկությունը, և գիտեն այդ, և հանդիմանում են իրենց, և հանդիմանելու են ամբողջ կյանքում, բայց ամուր կպչում են այն բանից, ինչը նրանց բաժանում է։ Հենց այն պատճառով, որ նրանք անչափ թունդ են սիրում, բարոյական զիջումներ չեն գնում։ Մինչդեռ նրանք արհամարհանքով այդ

պիսի միջումներ կանեին այն մարդկանց, ում նկատմամբ իրենք անտարբեր էն...

Աննետային տանջում էր այն, որ ինքը այդպիսի փոթորիկ առաջացրեց Ժուլիենի հոգում։ Իրավացի՞ է արդյոք Ժուլիենը։ Աննետան իր դատողությունները անսխալական չէր համարում։ Նա միշտ աշխատում էր հասկանալ նաև ուրիշի տեսակետը։ Նրա բնավորությունը դեռ լրիվ չէր ձևավորվել։ Բարոյական բնազդը շատ ուժեղ էր, բայց համոզմունքները վերջնականապես մշակված չէին, և Աննետան իրեն իրավասու էր համարում դրանք վերանայել։ Նա շատ շուտ հասկացավ, թե որքան է կեղծ իրեն շրջապատող հասարակության բարոյականությունը։ Նա ոչ մի բանում հենարան չէր գտնում, բացի իր բնավորությունից, իսկ այդ բնավորությունը հաճախ նրան հեռու էր տանում ճշմարտությունից։ Եվ Աննետան որոնում էր։ Որոնում էր այնպիսի մարդկային մտքեր, որոնց մթնոլորտում կարելի է շնչել։ Եվ երբ աղնիվ հոգու էր հանդիպում, ինչպիսին Ժուլիենն էր, ագահորեն աշխատում էր այդ հոգին ճանաչել մոտիկից, ստուգելով, թե արդյոք չի՞ արձագանքի իր կանչին։ Այդ խոովարարը որևէ մեկին հավատալու ծարավի էր։ Եվ նա անընդհատ որոնում էր, հոգևոր հայրենիք էր որոնում իր համար... Ինչքա՜ն էր նա ուզում Ժուլիենի հետ ընդհանուր հայրենիք գտնել, ընդունել նրա օրենքները, եթե անգամ այդ օրենքները դաժան պարտեի՞ն նրան։ Բայց միայն ցանկությունը քիչ է։ Աննետան չէր կարողանում հաշտվել այն բանի հետ, ինչ Ժուլիենն էր ուզում—դա մի տեսակ անբնակա՞ն էր։

Նա Ժուլիենին քնքշորեն ասաց.

— Ես տեսնում եմ, որ դուք էլ եք ինձ դատապարտում, ինչպես դատապարտեց բարձրախավ աշխարհը։ Դրա համար ես ձեզ չեմ հանդիմանում։ Ինձ հիացմունք են պատճառում բարոյականության պահապաններն ու նրանց օրենքների խստությունը։ Նրանք իրենց տեղն ունեն աշխարհում, և ես գիտեմ, այդ օրենքները ամուր արմատներ են գցել ձեր կարգի մարդկանց մեջ։ Բնական է, որ դուք ենթարկվում եք գրանց։ Ես հարգում եմ ձեր համոզմունքները... Բայց հասկացե՛ք, սիրելիս, ես չեմ կարող, որքան էլ ուզում է ձգնեմ,

ղղջալ այն արարքի համար, որի պատճառով բոլորն ինձ պարսավում են,— չեմ կարող, որովհետև այդ արարքն ինձ տվել է իմ երեխային... Ժուլիե՛ն, բարեկա՛մս, ինչպե՞ս հրաժարվել նրանից, ինչը ինձ համար միակ սփոփանքն է, ամենամաքուր բերկրությունը, որի նմանը, գուցե, ճակատագիրն ինձ այլևս չուղարկի։ Ուրեմն մի՛ փորձեք այդ բերկրությունը նշավակել, այլ ավելի լավ է, եթե ինձ սիրում եք, բաժանե՛ք ինձ հետ իմ երջանկությունը։ Դրա մեջ ոչի՛նչ վիրավորական ձեզ համար չկա...

Աննետան խոսում էր—և զգում էր, որ Ժուլիենը իրեն չի հասկանում, որ իր խոսքերը միայն ավելի շատ են գրգռում նրան։ Աննետայի սիրտը շատ ծանրացած էր։ Ի՞նչ անել։ Խաբե՞լ նրան։ Ո՛չ, բավական ստորացուցիչ է և այն, որ ինքը կարող էր մտածել այդ ելքի մասին... Բայց ինչպե՞ս թույլ տալ, որ ճեղքն ավելի լայնանա իրենց հարաբերությունների մեջ, որոնք իր համար այնքան թանկ են։ Նա զգում էր այդ ճեղքը, ինչպես սեփական սրտի վերք։ Եվ Ժուլիենի հետ ունենալիք յուրաքանչյուր հանդիպումից առաջ նա սարսափով իրեն հարց էր տալիս, թե այսօր ի՛նչ կկարդա նրա դեմքին...

Ժուլիենը, ինչպես շատ տղամարդիկ, երբ նրանք համոզված են, որ իրենց սիրում են, ստորաբար օգտվում էր դրանից և դիտակցորեն տանջում Աննետային։ Հիմա նա արդեն փորձում էր իր իշխանությունը Աննետայի վրա։ Ժուլիենն արդեն բարձր չէր գնահատում Աննետային, որովհետև վրատահ էր, որ Աննետան իրեն բարձր է գնահատում...

Իսկ Աննետան ամեն ինչ հասկանում էր, ամե՛ն ինչ։ Նա իրեն անիծում էր այն բանի համար, որ Ժուլիենի առաջ ցույց տվեց իր թուլությունը։ Եվ շարունակում էր ցույց տալ։ Նա անոտապաշտորեն ինքն իրեն կրկնում էր. եթե վիճակված է, որ ինքը դառնալու է Ժուլիենի կինը, ինչ էլ ուզում է ասի, միևնույն է կդառնա, իսկ եթե ոչ, ապա միևնույն է Ժուլիենին կկորցնի։

Բայց հոգու խորքում նա ուզում էր հավատալ, որ այդ հնազանդությամբ ինքը կհարուցի ճակատագրի ողորմածությունը, և Ժուլիենը կմեզմանա...

«Ահա ես ինձ քո ձեռքն եմ հանձնում։ Մի՞թե դրա համար դու ավելի քիչ ես սիրելու...»։

Ժուլիենի մտքում լարված աշխատանք էր կատարվում։ Նա սիրում էր Աննետային (ո՛չ, ցանկանո՞ւմ էր նրան) նույնքան շատ և, ինչ իմանաս... (Ասենք, նա չէր ուզում ոչինչ իմանալ...)։ Մի խոսքով, նա առաջվա պես ուզում էր, որ Աննետան իր կինը դառնա։ Բայց հիմա համոզված էր, որ ոչ մայրը դրա համար կտա իր համաձայնությունը, և ոչ էլ ինքը կդիմի այդ քայլին։ Պատճառներ շատ կային. և ծանրը վիրավորանքը, և վիրավորված տղամարդկային սնափառությունը, և այն, որ նա գատապարտում էր Աննետային «անբարոյականության» համար, և սարսափը. «ի՞նչ կասեն մարդիկ», և խանդը՝ խառնված զզվանքի հետ... Այնուամենայնիվ նա աշխատում էր իր մեջ այդ զգացմունքները չքորքոթել։ «Լավ, լավ, գիտե՛մ, բայց առաջ մի՛ վազեք...»։ Նրա միտքը դիմում էր ամեն տեսակի խորամանկությունների, որպեսզի բավարարի միաժամանակ և գաղտնի փաստարկները՝ ամուսնության դեմ, և նրա ցանկությունները... Աննետան անցյալում իրեն պահում էր որպես առանց նախապաշարումների մի կին, որպես ազատ սիրո կողմնակից։ Ժուլիենը դրան հավանություն չէր տալիս, ո՛չ։ Բայց, փաստորեն, եթե Աննետան այդպիսին է, ինչո՞ւ, ուրեմն, նա չմերձենա նաև Ժուլիենի հետ, եթե Ժուլիենին սիրում է։

Ժուլիենը դա այդպես կոպտորեն, ուղղակի երեսին, նրան չասաց։ Նա սկսեց վկայակոչել իրենց ամուսնության համար ամեն տեսակի անհաղթահարելի խոչընդոտները։ Երբ Աննետան հերքում էր մի փաստարկը, Ժուլիենը հնարում էր մյուսը. խոսում էր մոր դիմադրության մասին, որի հետ իրենց անհրաժեշտ կլինի ապրել, այն մասին, որ ինքը շատ ուշ նյութական վիճակի մեջ է, իսկ Աննետան սովոր է փարթամության, բարձրաշխարհիկ կյանքի (Ժուլիենը դիտավորյալ մոռանում էր, որ խեղճը արդեն երկու տարի է, ինչ դասերի՛ է վազում), խոսում էր իրենց բնավորությունների ու տեմպերամենտի տարբերության մասին (Այդ վերջին փաստարկը առաջ քաշվեց ամենավերջում, ի սարսափ և հուսահատություն Աննետայի, որն արդեն երևակայում էր,

թե բոլոր արգելքներն ինքը վերացրել է)։ Ժուլիենը համառ կեղծությամբ աշխատում էր սևացնել իրեն, որպեսզի Աննետային ապացուցի, թե ինքը նրա համար հարմար ամուսին չէ։ Աննետան չգիտեր լաց լինի, թե ծիծաղի։ Ցավալի էր լսել, թե նա ինչպես է ամեն տեսակի պատճառներ փնտրում, որպեսզի գլուխն ազատի։ Բայց Աննետան, մոռանալով հպարտությունը, ձևացնում էր, թե չի հասկանում, ամբողջ ճիգ ու ջանքը գործադրում էր՝ դրանց դեմ առարկություն գտնելու համար, հուսահատորեն պայքարում էր, որպեսզի նրան թույլ չտա հեռանալ։

Իսկ Ժուլիենը չէր էլ մտածում հեռանալ։ Նա չէր հրաժարվում վերցնել։ Հրաժարվում էր տալուց...

Երբ Ժուլիենի ճիգերի և մանևրների նպատակը, վերջապես, Աննետայի համար պարզ դարձավ, երբ նա հասկացավ, թե Ժուլիենն ինչ է ուզում իրենից, Աննետան այնքան չվրդովվեց, որքան զրանից իրեն ճնշված զգաց։ Նա այլևս վրդովվելու ուժ չուներ։ Արժե՞ր արդյոք պայքարը շարունակել։ Ահա՛ թե նա ինչ է ուզում... Եվ այն էլ ո՞վ, Ժուլիե՛նը... Ողորմե՛լի մարդ... Մի՞թե նա իրեն չի ճանաչում։ Զգիտի՞, թե ինչն է Աննետային կապել իրեն։ Չէ՞ որ Աննետան նրան սիրում է միայն ու միայն բարոյական կայունության և մաքրության համար։ Ահա թե ո՛ւմ չի սազի, բոլորովի՛ն չի սազի դոնժուանի, կնամոլի, թեթևամիտ սիրեկանի դերը։ (Նույնիսկ վշտի ժամանակ Աննետան պահպանում էր հումորի զգացումը և կյանքում ողբերգականի կողքին նաև ծիծաղելին նկատելու մտքի սթափ ունակությունը)։

«Սիրելիս,— մտովի ասում էր նա Ժուլիենին քնքշանքի, կարեկցանքի և զղվանքի ծաղրական զգացումով։— Սիրելիս, դու ինձ շատ ավելի դուր էիր գալիս, երբ դաժանությամբ դատապարտում էիր ինձ։ Քեզ այդ իրավունքը տալիս էին սիրո մասին ունեցած քո նեղ, բայց վեհ հասկացությունները։ Իսկ հիմա դու այդ իրավունքը կորցրիր։ Ի՞նչ անեմ ես այն խղճուկ սերը, որը դու հիմա ինձ առաջարկում ես, սերը՝ առանց վստահության։ Եթե վստահություն չկա, ապա մեզ ոչինչ այլևս չի կապում միմյանց հետ...»։

Սերը տարբեր է լինում. այնտեղ, որտեղ մի սերը ծաղ-

կում է, մյուսը թատամում է։ Մարմնական սերը ավարտվում է առանց հարգանքի։ Սերը, որ հիմնված է հարգանքի վրա, չի կարող նվաստանալ մինչև հասարակ վայելքը։

«Ո՞չ,— մտովի բացականչում էր Աննետան զայրույթի պոռթկումով։— Ես ավելի շուտ առաջին պատահած մարդու սիրուհին կդառնամ, եթե նա ինձ դուր գա, միայն թե ո՞չ քո։ Ջե՞ որ ես քեզ սիրում եմ...»։

Ժուլիենի հետ այդպիսի հարաբերությունները նրա համար ամոթալի կլինեին և ստորացուցիչ։ Ամե՞ն ինչ կամ ոչինչ։

Եվ Ժուլիենի թաքնված նկրտումներին տրվեց փափուկ, բայց վճռական հակահարված, որը խիստ վիրավորեց նրան։ Խստորեն դատապարտելով միմյանց, նրանք այնուամենայնիվ չկարողացան դադարել սիրելուց, չկարողացան հաշտվել այն մտքի հետ, որ երջանկություն չի լինելու։ Թաքուն ձգտելով և աղերսելով մեկը մյուսին, նույնիսկ առաջարկելով իրենց, նրանք ի վիճակի չէին արտաբերել այն բառը, որը նրանց կմիացներ. Ժուլիենին խանգարում էր հոգեկան անզորությունը, որով, հազվադեպ բացառությամբ, աչքի են ընկնում տղամարդիկ (և դա համարձակվո՞ւմ է հաստատել տղամարդը), խանգարում էր այն փոքրոգությունը, որը նշանը երբեք չեն խոստովանում։ Աննետային խանգարում էր կանացի անհաղթահարելի հպարտությունը, որը կանայք նույնպես չեն ուզում խոստովանել։ Քանի որ և տղամարդկանց, և կանանց այնպես է այլանդակել տղամարդկանց տիրապետության վրա հիմնված մեր հասարակարգի պայմանական բարոյականությունը, որ և նրանք, և մյուսները մոռացել են, թե բնությունն իրենց ինչպիսին է ստեղծել։ Միշտ չէ, որ թույլ են նրանք, ում մեզ մոտ թույլ սեռ են անվանում։ Կնոջ մեջ օրգանական ուժերն, ուժերը երկրային, ավելի շատ են։ Ու, թեև նա խճճված է տղամարդու կողմից լարած ցանցի մեջ, բայց միշտ մնում է որպես չնվաճված գերի...

Ժուլիենը աղոտ կերպով կռահում էր Աննետայի համառության իսկական պատճառները և բոլորովին չէր կասկածում նրա ներքին ազնվության։ Բայց նա չէր կարողանում

հաղթել իր փոքրոգությունը, հաշվի էր նստում մարդկանց կարծիքի հետ, որոնց հարգում էր ավելի քիչ, քան Աննետային։ Նա կհաշտվեր Աննետայի անցյալի հետ, եթե բարձրախավ հասարակության ձայնը չլիներ (նա իրեն համոզել էր, որ դա իր խղճի ձայնն է)։ Ժուլիենը քաջություն չուներ ամուսնանալու այն կնոջ հետ, որին ընտրել էր, և իր վախկոտությունը անվանում էր պատվի զգացում, բայց նա չէր կարողանում մինչև վերջը խաբել իրեն և զայրանում էր Աննետայի վրա, որ նա նույնպես չէր ուզում խաբել Ժուլիենին։ Մնում էր միայն կապերը խզել, բայց դա էլ չէր համարձակվում անել։ Եվ երբ Աննետան ասում էր, որ իրենք պետք է բաժանվեն, Ժուլիենը կառչում էր նրանից, տատանվում, տանջվում էր ինքը և տանջում Աննետային։ Նա չէր ուզում ամուսնանալ—և չէր ուզում հրաժարվել Աննետայից։ Այդ դաժան խաղ էր։ Ժուլիենը մերթ նրա հույսը քաջալերում էր, մերթ շատ խորը խոցում նրա սիրտը։ Երբ Աննետան նրա նկատմամբ առանձնահատուկ քնքշություն էր ցուցաբերում, Ժուլիենն ամփոփվում էր ինքն իր մեջ և նրան ետ վանում, իսկ երբ Աննետան, հնազանդվելով անհրաժեշտությանը, ուզում էր հեռանալ, Ժուլիենը քնքշանում էր։

Աննետան ծանր էր ապրում վիրավորված սիրո տառապանքները։ Սիլվիան նկատեց, որ քրոջը ինչ-որ բան տանջում է, և վերջիվերջո նրանից խոստովանություն դուրս կորզեց։ Նա տեսավ Ժուլիենին և իսկույն ատամովը տվեց նրան։

— Նա այն մարդկանցից է, որոնց մինչև չստիպես, իրենք վճռական քայլի չեն դիմի։ Ձևեր շատ կան, այնպես արա, որ նրա համաձայնությունն ստանաս։ Հետո նա հենց ինքը քեզանից շնորհակալ կլինի։

Բայց Աննետայի համար անտանելի էր այն միտքը, որ Ժուլիենը հետագայում կարող է նրան մեղադրել (թեկուզև մտովի միայն), որ ամուսնացել է Աննետայի հետ։ Երբ արդեն չէր կարելի չտեսնել, որ դա անհուսալի թյուլակամ մարդ է և որ չի կարելի նրանից սպասել որևէ հաստատուն վճիռ, որից այդ անկայուն հոգին հետագայում չհրաժարվի, Աննետան իսկույն նրա հետ կապերը խզեց։ Նա դրեց Ժուլիե-

ինն, որ այլևս չի ուզում երկարացնել անօգուտ տառապանքները։ Ինքը տանջվում է, նա տանջվում է, իսկ չէ՞ որ ապրել պետք է։ Աննետան պետք է աշխատի որդու համար, Ժուլիենը նույնպես իր գործերն ունի կյանքում, և Աննետան չափազանց երկար նրան կտրեց այդ գործերից։ Ինչի՞ համար ուժերը սպատիլ։ Մանավանդ որ դրանք այնքան էլ քա՞ջ չեն։ Թեև նրանք չեն կարող միմյանց երջանկություն տալ, ուրեմն պետք էլ չէ, որ իրար դժբախտացնեն։ Պետք է վերջ տալ հանդիպումներին։ Աննետան շնորհակալություն էր հայտնում նրան ամեն ինչի համար։

Ժուլիենը չպատասխանեց նամակին։ Լուռ՝ յուֆ տիրեց... Նրա հոգում կռվում էին վիրավորանքը, ափսոսանքը և քավարարված կիրքը...

Նրանց սերը գաղտնիք չէր շրջապատողներից և ոչ մեկի համար։ Դա նկատեց նաև Լեոպոլդը և չկարողացավ Սիլվիային թաքցնել իր դրգռվածությունը։ Աննետային տիրելու իր խայտառակ փորձի տհաճ հիշողությունը Լեոպոլդի հոգում ակամա վերհիշեցրեց էր Թոզել Աննետայի նկատմամբ, ու, թեև այն ժամանակից մի քանի ամիս էր անցել, այդ վերհիշեցրեց ոչ միայն չէր մեղմացել, այլ, ընդհակառակը, ավելի էր սրվել, քանի որ հիմա նա արդեն ինքն իրեն կարող էր ասել, իբր մոռացել է, թե ինչն է դրա դրդապատճառը։ Սիլվիային, որն առանց այդ էլ զգույշ էր, զարմացրեց ամուսնու տարօրինակ վարքագիծը։ Նա սկսել էր հետևել ամուսնուն— և այժմ այլևս չէր կասկածում. Լեոպոլդը խանդում է Աննետային։ Սրտի ինչ-որ զարմանալի տրամաբանությամբ Սիլվիան զայրանում էր դրա համար ոչ թե ամուսնու, այլ Աննետայի վրա և արդեն քիչ էր մնացել ատելություն զգա քրոջ նկատմամբ։ Այդպիսի ծայրահեղությունները մասամբ բացատրվում էին Սիլվիայի ծանր ֆիզիկական վիճակով։ Բայց դժբախտությունը այն էր, որ երբ նույնիսկ այդ վիճակն անցավ, դրա հարուցած զգացումները մնացին։

Հոկտեմբերին Սիլվիան աղջիկ ունեցավ։ Բոլորն ուրախացել էին։ Աննետան դեպի երեխան այնպիսի խանդավառ քնքշություն էր զգում, կարծես դա իր սեփականը լիներ։

Բայց Սիլվիայի համար բնավ հաճելի չէր իր երեխային տեսնել Աննետայի գրկում։ Նա այլևս չէր փորձում թաքցնել թշնամանքը, որը մինչև այդ ճնշում էր իր մեջ։ Վերջին մի քանի շաբաթը Աննետան, լսելով քրոջ վիրավորական նկատողություններըը, դա բացատրում էր նրա անառողջ վիճախով, բայց հիմա արդեն չէր կարող կասկածել, որ Սիլվիան գաղարել է իրեն սիրելուց։ Նա լռում էր, աշխատելով ոչ մի բանով չհակառակել քրոջը։ Աննետան դեռ ջարդնակում էր հուսալ, որ իրենց նախկին քնքուշ բարեկամությունը կվերադառնա։

Սիլվիան անկողնուց վեր կացավ։ Հարաբերությունները քույրերի միջև արտաքնապես մնում էին նույնը, և կողմնակի մարդիկ ոչ մի փոփոխություն չէին նկատում։ Բայց Աննետան սառը թշնամանք էր զգում Սիլվիայի մեջ, և նրա համար դա ցավալի էր։ Ուզում էր բռնել Սիլվիայի ձեռքը և հարցնել.

«Քեզ ի՞նչ է պատահել։ Ինչո՞ւ ես զայրանում, սիրելիս, ասա՞»։

Բայց սիրտ չէր անում։ Սիլվիայի հայացքը սառեցնում էր նրան։ Նա բնազդով զգում էր, որ եթե Սիլվիան սկսի խոսել, ապա անուղղելի բան է ասելու։ Ավելի լավ էր լռել։ Աննետան քրոջ վերաբերմունքի մեջ վիրավորելու, խոցելու գիտակցված ցանկություն էր զգում։ Դրա դեմ անհնար էր դիմել։

Մի անգամ Սիլվիան Աննետային հայտարարեց, որ ինքը պետք է խոսի նրա հետ։ Աննետայի սիրտը ուժգնորեն բաբախեց, նա մտովի իրեն հարցնում էր.

«Ինչ-որ բա՞ն կասի ինձ»։

Սիլվիան վիրավորական ոչինչ չասաց, ոչ մի ծպտուն չհանեց իր դրգռվածության վերաբերյալ։ Նա խոսք բացեց այն մասին, որ Աննետային հարկավոր է ամուսնանալ։

Աննետան փորձեց զգուշորեն խուսս տալ այդ թեմայից։ Բայց Սիլվիան համառ կերպով խնամախոսում էր նրան Լեոպոլդի ընկերներից մեկի համար։ Նա մի քիչ մակլեր էր, մի քիչ ժուռնալիստ, մի մարդ, որ զուրկ չէր որոշ «փայլից», ուներ բարձրաշխարհիկ շարժուձևեր և տարբեր տեսա-

կի (չափազանց տարբեր) եկամուտներ. զբաղվում էր մեքենաների առուծախով, ռևկլամներ էր հորինում, միջնորդի դեր էր կատարում, բարձրաշխարհիկ սալոններում և ակումբներում կլիենտներ էր հավաքագրում տարբեր ձեռնարկությունների համար և կոմիսիոն գրամներ սառնում երկու կազմից էլ։ Ուրեմն ինչքա՞ն էր փոխվել Սիլվիայի վերաբերմունքը քրոջ նկատմամբ, եթե նա այդպիսի մարդու համար կարող էր խնամախոսություն անել։ Աննետային վիրավորեց իր հանդեպ հարգանք չունենալու այդ գիտակցված վերաբերմունքը, որը սիրո լիակատար բացակայության վկայություն էր։ Նա մի շարժումով Սիլվային ընդհատեց, որը գունազարդումներով նկարագրում էր Քեկնածուի արժանիքները։ Սիլվիան խիստ բարկացավ և փնթփնթալով հարցրեց, թե այդ ինչպիսի՞ ամուսին պետք է լինի, որ նրան ձեռ տա։ Աննետան պատասխանեց, որ ոչ մի, նա ուզում է ապրել մենակ և լինել ինքնուրույն։ Սիլվիան դրան առարկեց, վրա բերելով, որ այդպես ասելը հեշտ է, բայց պետք է դեռ կարողանալ նաև ինքնուրույն լինել։

— Իսկ մի՞թե ես չեմ կարողանում։

— Դո՞ւ, խի՜ստ կասկածում եմ։

— Դու արդարացի չես իմ նկատմամբ։ Ես կարող եմ ինքս ինձ կերակրել։

— Այո՛, ուրիշների օգնությամբ։

Տոնի մեջ, որով այդ ասվեց, ավելի շատ, քան խոսքերում, վիրավորելու ցանկություն էր զգացվում։ Աննետան բռնկվեց, բայց լուռ մնաց—նա չէր ուզում բանը կռվի հասցնել։

Այդ օրից ի վեր Սիլվիայի վատ տրամադրությունը դրսևորվում էր արդեն բացեիբաց։ Ամեն ինչ բռնկման առիթ էր տալիս. ամենափոքր առարկությունը խոսակցության ժամանակ, զգեստի որևէ մանրամասն, Աննետայի ճաշից ուշանալը, փոքրիկ Մարկի աղմկոտ վազվզոցը սանդուղքով։ Միասնական զբոսանքները դադարեցին։ Եթե նրանք պայմանավորվում էին կիրակի օրը ամբողջ ընտանիքով որևէ տեղ գնալ, Սիլվիան վեհապետի հետ առանձին էր մեկնում, քրոջն առանց զգուշացնելու, իսկ հետո Աննետային մեղա-

գրում էր, թե իբր նա ժամանակին չեկավ։ Կամ թե չէ վերջին րոպեին նախատեսված զբոսանքի մասդրությունը փոխում էին։

Աննետան տեսնում էր, որ իր ներկայությունը Սիլվիային նեղում է։ Նա անհամարձակորեն ակնարկեց, որ ուզում է բնակարան փնտրել ուրիշ թաղամասում, իր աշակերտներին ավելի մոտ։ Նա հույս ուներ, որ դրա դեմ բարձրաձայն առարկություններ կհանդիպի, որ իրեն կսկսեն համոզել տեղից չշարժվել։ Բայց նրան կարծես չլսեցին էլ։

Աննետան փոքրոգություն ցուցաբերեց— մնաց իր տեղում։ Նա կառչում էր իրեն մտերիմ այդ մարդուց, զգալով, որ նրան կորցնում է։ Աննետայի համար ծանր էր ոչ միայն Սիլվիայից բաժանվելը. նա կապվել էր փոքրիկ Օդետտային։ Մի ծանր վիրավորանք չէր, որ նա լուռ տանում էր, ձևացնելով, թե ոչինչ չի նկատում։ Բայց սկսեց ավելի հազվադեպ երևալ։

Սակայն Սիլվիան համարում էր, որ դա էլ է չափազանց հաճախ։ Նա դեռ նորմալ վիճակի չէր հասել, հիվանդագին խանդը տանջում էր նրան։ Մի անգամ, երբ Աննետան ուրախ-ուրախ խաղում էր Օդետտայի հետ, ուշադրություն չդարձնելով Սիլվիայի չոր պահանջի վրա՝ երեխային հանգիստ թողնել, Սիլվիան, համբերությունը կորցրած, տեղից ցատկեց, խլեց Աննետայի ձեռքից երեխային և բղավեց.

— Կորի՛ր այստեղից։

Նրա հայացքում այնքան թշնամանք կար, որ ցնցված Աննետան հարցրեց.

— Ես քեզ ի՞նչ արի, ասա, խնդրեմ։ Ինձ այդպես մի նայիր, դա սարսափելի է։ Դու ուզում ես, որ ես գնա՞մ։ Որ գնամ մեկընդմիշտ և այլևս չգա՞մ։

— Վերջապես գլխի՛ ընկար,— ասաց նա չարախնդորեն։ Աննետան սիրտնեց.

— Սի՛լվիա։

Բայց Սիլվիան սառը կատաղությամբ շարունակում էր.

— Դու ապրում ես իմ հաշվին։ Լավ, թող այդպես լինի։ Բայց այդքանն էլ բավակա՞ն է։ Իսկ իմ ամուսինն ու աղ-

չիկը—միայն իմն են։ Ձեռքերդ ետ քաշիր նրանցից, հասկա՞նալի՞ է։

Աննետան սպիտակած շուրթերով վշտացած կրկնում էր.

— Սի՛լվիա... Սի՛լվիա...

Բայց հանկարծ նա նույնպես համբերությունը կորցրեց ու բղավեց.

— Ողորմելի՛ կին... Դու այլևս ինձ երբե՛ք չես տեսնի։

Նա նետվեց դեպի դուռը և վազքով դուրս սլացավ։

Իսկ Սիլվիան, թեև հոգու խորքում ամաչում էր իր կոպտության համար, շինծու կերպով ծիծաղեց.

— Այո, ինչպե՞ս չէ։ Հենց այսօր կգա։

Մասն երկրորդ

Աննեհատան դուրս վազեց Սիլվիայի մոտից այն հատուած մտադրութեամբ, որ երբեք այլևս այստեղ չվերադառնայ։ Նա լաց էր լինում։ Ամօթից այրվում էր և զայրութից խեղդվում։ Այդպիսի փոթորկուն բնավորութեամբ կանայք, ինչպիսին նա էր և Սիլվիան, դադարելով միմյանց սիրելուց, անխուսափելիորեն պիտք է հասնեին ատելութեան։

Աննեհատային անհնարին էր թվում Սիլվիայի հետ միևնույն հարկի տակ մնալը։ Թէև կարելի լիներ, նա հենց հաջորդ օրը կտեղափոխվեր։ Ի բարեբախտութիւն իր, Աննեհատան ստիպված եղավ ենթարկվել անհրաժեշտութեանը. պիտք էր տան տիրոջը նախազգուշացնել բնակարանից հրաժարվելու մասին, գտնել նորը։ Զայրութի առաջին պոռթկումով Աննեհատան պատրաստ էր ամբողջ կահույքը փոխադրել որևէ պահեստ և առայժմ հյուրանոց գնալ ապրելու։ Բայց հիմա փողերը քամուն տալու ժամանակը չէր։ Աննեհատայի խնայողութիւնները շատ քիչ էին—նա իր վաստակածը համարյա ամբողջութեամբ ծախսում էր։ Մինչև հիմա նա երբեք օգնութեան համար քրոջը չէր դիմել, բայց այն գիտակցութիւնը, որ կարիքի դեպքում կա մեկը, ում կարելի է դիմել, նրան վստահութիւն էր տալիս և ազատում եկող օրվա մշտական հոգսից։ Իսկ այժմ, երբ նրա մտքով անցավ հաշվել, թէ իրեն ինչքան է պետք ապրելու համար, նա վշտացած համոզվեց, որ միայն իր վաստակը բավական չէ։ Մինչև հիմա ծախսերն ավելի քիչ էին, որովհետև ինքն ու Սիլվիան, ապրելով մոտիկ հարևանութեամբ, անտեսութիւնը միատեղ էին վարում։ Մարկի ամբողջ հաղուստեղենը Սիլվիայի նվերներից

էր կազմված, ասենք, Աննետայի շորերը նույնպես Սիլվիայի իր արհեստանոցում էր կարում, վերցնելով նրանից միայն կտորի արժեքը։ Դրան ավելացրեք նաև այն, որ Աննետան օգտագործում էր Սիլվիայի իրերը, այն ամենը, ինչ կարող էր երկուսին էլ ծառայել։ Այնուհետև մանր-մունր նվերները, կիրակնօրյա միատեղ զբոսանքները, այն համեստ հաճույքները, որոնք տանելի են դարձնում առօրյա միապաղաղությունը։ Բացի այդ, Սիլվիան ապառիկ ապրանքներ էր վերցնում իրենց թաղի առևտրականներից, իսկ դա նաև Աննետային էր վճարները հետաձգելու հնարավորություն տալիս։ Բայց հիմա նա պետք է համակերպվեր ամեն ինչի դիմաց կանխիկ դրամ վճարելու փաստի հետ։ Սկզբնական շրջանը դժվար էր լինելու. տեղափոխությունը, նոր բնակարանի վարձը նախապես վճարելը, տեղավորվելու ծախսերը։ Եվ պետք էր որոշել ամենագլխավոր հարցը. երեխային ո՞վ է պահելու։ Հարցը բարդ էր։ Իրեն և երեխային կերակրելու համար Աննետան պետք է աշխատեր, կնշանակի, տնից դուրս պետք է գնար, բայց այդ դեպքում ո՞ւմ մոտ թողնել երեխային։ Աննետան հասկանում էր, որ երբեք ինքը գլուխ չէր հանի այդ դժվարություններից, եթե դրանք իր առաջ կանգնեին ավելի շուտ, երբ Մարկը դեռ բոլորովին փոքր էր։ Բայց ինչպե՞ս են գլուխ հանում ուրիշ կանայք։ Աննետան խղճում էր այդ դժբախտներին և արհամարհում իրեն։

Երեխային տալ պանսիոնով փակ դպրո՞ց։ Մարկը արդեն այն հասակում էր, որ կարող էր լիցեյ ընդունվել։ Բայց Աննետան ոչ մի կերպ չէր ուզում փակել նրան այդ գազանանոցներից որևէ մեկում։ Այն բոլորից հետո, ինչ նա լսում էր այդ փակ ուսումնական հաստատությունների մասին (մեր ժամանակներում կարգ ու կանոնները այստեղ մի քիչ լավացել են), և հոտառությամբ էլ կռահում այդ համընդհանուր կույտի ֆիզիկական ու բարոյական մթնոլորտը, Աննետան հանցագործություն էր համարում երեխային գցել այդտեղ։ Նա իրեն հավատացրել էր, որ Մարկի համար այնտեղ դժվար կլինի։ Բայց դե ինչպե՞ս իմանաս— գուցե նա ուրո՞ախ կլիներ այնտեղ ընկնել ու ազատվել մորից։ Սակայն ո՞ր մայրը կարող է պատկերացնել, որ ինքը բեռ է իր սեփական երեխայի

համար։ Աննետան չէր համաձայնում նրան նույնիսկ կիսապանսիոն տալ։ Նա մի գլուխ կրկնում էր, որ տղայի առողջությունը թույլ է, որ նա հատուկ դիետայի կարիք ունի, որ նրա սննդին Աննետան՝ ինքը պետք է հետևի։ Բայց տուն վազել այն ժամերին, երբ Մարկը պետք է ուտեր, շատ հոգնեցուցիչ էր, երբեմն նրան անհրաժեշտ էր լինում հենց այդ ժամերին գնալ Փարիզի մյուս ծայրը։ Գալ, գնալ, մշտապես շարժման մեջ լինել։ Այն, ինչ նա դասերով վաստակում էր, ապրելու համար չէր բավարարում։ Մշտական կերպով ինչ-որ անհետաձգելի, շտապ ծախսեր էին լինում, որ նա չէր նախատեսել։ Տղան շուտ էր մեծանում, իսկ Աննետան կուզեր, որ նրա աճը չանցներ իր հագուստից, ինչպես չի անցնում իր կճեպից լոբու աճը. չէ որ նրան հագուստով ապահովելը շա՜տ դժվար էր։ Նա չէր կարող չթարմացնել նաև իր զգեստները — այդ պահանջում էր եթե ոչ նրա հպարտությունը, ապա մասնագիտությունը։ Հետևապես, ստիպված էր լինում փնտրել լրացուցիչ աշխատանք՝ փող վաստակելու համար. տանը կատարելիք արտագրություններ, թարգմանություններ, թարգմանական խմբագրություն (անշնորհակալ, վատ վարձատրվող մի աշխատանք)։ Քարտուղարի աշխատանք հիմնարկություններում՝ շաբաթը մեկ-երկու անգամ։ Դրանց համար քիչ էին վճարում, բայց բոլորը միասին կարող էր զգալի լրացուցիչ վաստակ կազմել։ Մարդ ստիպված էր լինում հանձն առնել պատահած աշխատանքը։ Աննետան այդպես էլ անում էր։ Դրա համար նրան ատում էին քաղցած մրցակցուհիները, որոնց հետ Աննետան հիմա նորից էր հանդիպում՝ մի կտոր հաց վաստակելու հետևից ընկած։ «Բայց սենտիմենտալություններին վե՛րջ,— ասում էր ինքն իրեն Աննետան։— Պետք է գնաս քո ճանապարհով։ Մեր կյանքում ոչ ոք չի ղրջվում, որպեսզի ընկածին վեր հանի»։ Երբեմն նա հարևանցիորեն նկատում էր նեղը գցած մրցակցուհու չարությամբ ծամածռված դեմքը, պշնամական հայացքը, որին ուրիշ ժամանակ ինքը հաճույքով կօգներ։ Բայց հիմա չէ՛ր կարելի, պետք էր առաջինը հասցնել։ Հիմա Աննետան գիտեր, որտեղ աշխատանք փնտրել, և կարողանում էր ընտրել դեպի այդ աշխատանքը տանող ամենակարճ ճանա-

պարհըւ նրա դիպլոմն ու գիտական աստիճանը ուրիշների առաջ նրան առավելություն էին տալիս։ Եվ նա գիտեր, որ այդ առավելությունը տալիս է նաև իր ինքնավստահությունը, աչքերը, ձայնը, հագուստը, վարձողներին գերելու կարողությունը։ Երբ պետք էր լինում ընտրություն կատարել նրա և մյուս թեկնածուների միջև, վարձողները, հազվադեպ էին տատանվում։ Իսկ դուրս մնացածները նրան այդ չէին ներում։

Աննետան իր օրվա ժամերը բաշխել էր խելամտորեն և խիստ։ Ո՞չ մի րոպե աննպատակ խորհրդածությունների համար։ Ապրել առանց դադարի։ Յուրաքանչյուր օր լցված էր պռնկեպռունկ։ Ահա առաջին շաբաթները նա ապրում էր մշտական դողը սրտում, չնմանալով, կարող է արդյոք կերակրել իրեն ու որդուն։ Այնուհետև նա հարմարվեց նոր կյանքին, հանգստացավ և նույնիսկ սկսեց բավականություն գտնել դժվարությունները հաղթահարելու մեջ։ Իհարկե, այն հազվադեպ րոպեներին, երբ գործելու անհրաժեշտությունը նրան լարված վիճակում չէր պահում, երեկոները, երբ գլուխն իջեցնում էր բարձին, նրա ուղեղում մտքերը խռնվում էին, թե ինչպես ծայրը ծայրին հասցնի, և ամեն տեսակի ուրիշ հոգսեր. «Իսկ ի՞նչ կլինի, եթե անկողին ընկնեմ... Հիվանդանամ... Ոչ, չե՛մ ուզում այդ մասին մտածել։ Քնել, քնե՛լ...»։ Բարեբախտաբար, օրվա ընթացքում նա անչափ հոգնում էր, և քունը երկար իրեն սպասել չէր տալիս։ Իսկ հետո բացվում էր նոր օրը, որտեղ նման սարսափներն ու ամեն տեսակի «եթեները» տեղ չունեին, տեղ չունեին այն ամենը, ինչ ջլատում է մարդու ուժերը, քայքայում է ջղերը, չորացնում է հոգին։ Աշխատանքն ու կարիքը ամեն ինչ իր տեղն էին դնում, ցույց էին տալիս, թե ինչն է անհրաժեշտություն և ինչը՝ շռայլություն։

Անհրաժեշտությունը հացն էր հանապազօրյա։ Շռայլությունը՝ սրտի պահանջները... Դե հիմա ասեք, կարո՞ղ էր արդյոք Աննետան առաջ պատկերացնե՛լ, որ երբևէ սրտի այդ պահանջները իրեն թվալու են ինչ-որ երկրորդական բաներ... Իսկ հիմա հենց այդպես էր։ Թող դրանց անսան նրանք, ովքեր շա՛տ ազատ ժամանակ ունեն։ Իսկ իր ժամանակը քիչ է, հազիվ է ամեն ինչին բավարարում։ Յուրաքանչյուր

գործողության համար մի միտք—ո՛չ ավելին։ Աննետան ուժերի առատություն էր զգում, նա անվտանգության մեջ էր, ինչպես ալիքների մեջ թողնված և ջրի մեջ հաստատորեն նստած մակույկն է։

Աննետան երեսուներեք տարու մեջ էր, եռանդը դեռ չէր սպառվել։ Նա համոզվում էր, որ ոչ միայն հովանավորության կարիք չի զգում, այլև առանց ուրիշի օգնության ավելի ուժեղ է դարձել։ Դաժան կյանքը նրան կոփել էր։ Եվ առաջին բարեբարությունը, որ այս կյանքը Աննետային ցույց էր տվել, դա այն էր, որ նա ազատվել էր Ժուլիենի մասին ունեցած հանգիստ չտվող մտքերից, մերթ համր, մերթ մոլեգին սիրո թախծից, որը թունավորել էր նրա բոլոր նախընթաց տարիները։ Աննետան հանկարծ տեսավ իր սենտիմենտալ երազանքների, այդ քնքշության, փափկության, երկերեսանիորեն թաքցվող զգացակաևության ամբողջ կեղծությունը. նրա համար հիմա դրանք հիշելն անգամ զզվելի էր։ Ոչ, կռվել անողորմ կյանքի դեմ, դիմանալ նրա խոցող հպումներին, կամքից անկախ ինքդ էլ կարծրանաս — դա լա՛վ է, դա կենդանացնում է և ամրացնում։ Կյանքի՛ էր վերակոչվում նրա հոգու նշանակալից մասը, լավագույնը, զուցեև, իհարկե, առավել առողջը։

Աննետան այլևս չէր սուզվում երազանքների մեջ և չէր տանջում իրեն... Նա չէր տագնապում նույնիսկ որդու առողջության համար։ Երբ Մարկը հիվանդանում էր, Աննետան անում էր այն ամենը, ինչ պետք էր, բայց նախապես չէր անհանգստանում և հետագայում չէր մտաբերում այդ։ Նա ամեն ինչի պատրաստ էր, համարձակ էր և հավատում էր իրեն։ Եվ դա եղավ բոլոր փորձանքների դեմ լավագույն միջոցը։ Համառ աշխատանքի առաջին տարիների ընթացքում Աննետան ոչ մի օր չհիվանդացավ։ Ասենք, տղան էլ երբեք այլևս ոչ մի ուրիթ չէր տալիս լուրջ անհանգստության համար։

Աննետայի մտավոր կյանքը հիմա նույնպես խիստ սահմանափակ էր, ինչպես և սրտի կյանքը։ Կարդալու համար գրեթե ժամանակ չէր մնում։ Թվում էր, թե դա նրան պետք է վշտացնի... Բոլորովի՛ն։ Նրա միտքը դատարկությունը

լրացնում էր սեփական պաշարից։ Միտքը աշխատանք ուներ ինչքան ասես. պետք էր պատկերացում կազմել բոլոր կատարված հայտնագործությունների մասին։ Իսկ նոր կյանքի առաջին ամիսներին Աննետան բազմաթիվ հայտնագործություններ արեց։ Կարելի է ասել, ամեն ինչ նրա համար հայտնագործություն էր։ Սակայն փաստորեն ի՞նչն էր փոխվել նրա կյանքում։ Ի՞նչն էր նոր։ Աշխատա՞նքը։ Բայց Աննետան աշխատանքին ծանոթ էր և առաջ (այդպես նրան թվում էր)։ Եվ քաղաքը և մարդիկ այսօր նույնն էին, ինչպես և երեկ...

Այնինչ բոլորը մի օրում փոխվեց։ Այն ժամից, ինչ Աննետան մի կտոր հացի հետևից էր ընկել, նրա համար սկսեց նաև աշխարհի իսկական հայտնագործությունը։ Սերը և նույնիսկ մայրական զգացմունքները հայտնագործություն չէին։ Դրանք նրա միջից էին, իսկ կյանքը միայն երևան բերեց մեկի և մյուսի ինչ-որ փոքր մասը։ Բայց հենց որ Աննետան անցավ աղքատների լագերը, աշխարհը հայտնագործվեց նրա համար։

Աշխարհը մեզ տարբեր ձևով է ներկայանում, խախուտ այն բանից, թե մենք որտեղից ենք նայում նրան—վեր՞ից թե ներքևից։ Աննետան հիմա կարծես գնում էր փողոցով, տների երկար շարքերի միջով։ Փողոցում միայն ասֆալտն ես տեսնում, ցեխը, քո կյանքին սպառնացող ավտոմեքենաները, հետիոտների հոսքը։ Տեսնում ես գլխավերևիդ երկինքը (երբեմն պարզ), եթե դու ժամանակ ունես վերև նայելու։ Իսկ մնացյալ բոլորը անհետանում է տեսադաշտից. նախկին կյանքի ամբողջ բովանդակությունը, հասարակությունը, զրույցները, թատրոնները, գրքերը, այն ամենը, ինչ շոյում էր քո սիրտն ու միտքը։ Լավ գիտես, որ դրանք կան, և, գուցե, դեռ սիրում ես այդ ամենը, բայց ստիպված ես լինում մոռանալ ուրիշ բանի մասին. նայել ոտքերիդ տակ և առաջ, զգուշորեն խուսանավել, քայլել արագ... ինչպես շտապում են բոլո՞ր մարդիկ... Վերևից նայելով, տեսնում ես միայն այդ գետի ծուլլ ծփանքը։ Դեսը մարմանդ է թվում, դյուր-

հետև մենք չենք նկատում նրա արագ ընթացքը։ Վազք, վա՜զք հացի հետից...

Աննետան առաջ էլ հազար անգամ մտածել էր աշխատանքի և կարիքի աշխարհի մասին, այն կյանքի մասին, որը հիմա վարում էր նաև ինքը։ Բայց նրա այն ժամանակվա մտքերը վճռականորեն ոչինչ ընդհանուր չունեին այն բանի հետ, ինչ նա մտածում էր հիմա, երբ այդ աշխարհի մասնիկն էր դարձել...

Առաջ նա հավատում էր մարդու իրավունքների դեմոկրատական ճշմարտությանը և անարդարացի էր համարում, որ մասսաները խաբեբայական ճանապարհով զրկված են այդ իրավունքներից։ Հիմա նա անարդարացի էր համարում (եթե դեռ կարելի էր խոսել արդարության և անարդարության մասին) այն, որ իրավունքներից օգտվում են արտոնյալները։ Մարդու համար ոչ մի իրավունք գոյություն չունի։ Մարդը ոչնչի իրավունք չունի։ Ոչինչ չի պատկանում նրան։ Մարդը ստիպված է լինում վճռականապես ամեն ինչ նորից պայքարով ձեռք բերել ամեն օր։ Այդպես է պատգամել տերը «Քո ճակատի քրտինքով պետք է վաստակես քո հացը»։ Իսկ իրավունքները դա— խորամանկ հնարանք է ուժասպառ մարտիկի, որն ուզում է իր համար ապահովել անցած-գնացած հաղթանակի ավարները։ Մարդու իրավունքները— դա անցած օրվա կուտակած ուժն է։ Բայց միակ ռեալ գոյություն ունեցող իրավունքը— դա աշխատանքի իրավունքն է։ Ամենօրյա նվաճումները... Որքա՜ն անսպասելի Աննետայի առաջ կանգնեց այդ տեսարանը— գոյության համար մղվող կռվի դա՜շտը։ Բայց դա Աննետային բնավ սարսափ չազդեց։ Այդ անվեհեր կինը մարտն ընդունում էր, որպես անհրաժեշտություն, համարելով այդ որպես սովորական բան։ Աննետան պատրաստ էր այդ մարտին, նա երիտասարդ էր և ուժերով լեցուն։ Կհաղթի— ավե՜լի լավ։ Կպարտվի— ավե՜լի վատ իր համար։ (Բայց այդպիսի կինը չի՜ պարտվի...) Աննետան կարեկցանքը չէր մերժում, նա մերժում էր միայն թուլությունը։ Մարդու առաջնագույն պարտքը փոքրոգի չլինելն է։

Աշխատանքի այդ օրենքը նոր ձևով էր ամեն ինչ բա-

ցատրում։ Աննետան ատուգում էր իր նախկին համոզմունքները, և հին բարոյականության ընկորների վրա բարձրանում էր նոր բարոյականությունը—անկեղծության և ուժի, և ոչ թե փարիսեցիության ու թուլության... Քննելով այդ նոր բարոյականության լույսի տակ իրեն տանջող տարակուսանքները, հատկապես այն, որը նա թաքցրել էր հոգու ամենախորքում. «ես իրավունք ունեի՞ արդյոք երեխա ծնելու»,— Աննետան իրեն պատասխանում էր.

«Այո, եթե կարողանամ նրան մեծացնել, եթե կարողանամ նրանից մարդ դուրս բերել։ Կարողանամ— նշանակում է, ճիշտ եմ վարվել։ Իսկ եթե չկարողանամ— կնշանակի, վարվել եմ սխալ։ Ահա միակ բարոյականությունը, մնացած ամեն ինչ երեսպաշտություն է...»։

Այդ վերջնական դատավճիռը կրկնապատկում էր նրա ուժերը և պայքարի բերկրանքը...

Ահա ինչի մասին էր խորհրդածում Աննետան, քայլելով Փարիզի փողոցներով, աճապարելով մի աշխատանքից մյուսին։ Քայլելը մտքերին մի տեսակ մտրակում ու առաջ էր քշում։ Այժմ, երբ նրա օրվա ժամերը խստորեն բաշխված էին, երազանքները նորից ներկայացրին իրենց իրավունքները։ Բայց հիմա այդ երազանքները ատույգ էին, լուսավոր, պարզորոշ, առանց որևէ մշուշի։ Որքան ավելի քիչ ժամանակ էր Աննետան այդ երազանքներին տրամադրում, այնքան համառ էին նրանք լցնում յուրաքանչյուր ազատ րոպեն, նման այն բաղեղին, որը, աճելով ու ծավալվելով, ծածկում է պատերը։ Մարդկային իսկական բարոյականության մասին իր նոր, ավելի լայն հասկացությունները Աննետան ատուգում էր ամենօրյա փորձով։ Աշխատանքն ու աղքատությունը նրա աչքերը բացեցին։ Նոր ձևով էր նրա առաջ մերկանում ժամանակակից կյանքի կեղծիքը, որը նա չէր նկատում, քանի դեռ ինքը խճճված էր այդ կեղծիքով, այդ կյանքի հրեշավոր անօգտակարությունը—այդ կյանքի ինը տասներորդը, հատկապես կանացի կյանքի... Ուտել, քնել, ծնել... Ընդ որում, վերջինը հենց այն տասներորդ մասն է, որը օգտակար է։ Իսկ մնացած բոլո՞րը։ Այսպես կոչված քաղաքակրթությո՞ւնը։

Այն, ինչը անվանում են մտավոր գործունեություն»... Բայց իսկապե՞ս մարդը, volgus umbrarum[1] ստեղծված է մտածելու համար։ Նա ուզում է դրանում իրեն համոզել, նա իրեն ներշնչել է այդ գաղափարը և հետևում է դրան, ինչպես ավանդությամբ սրբագործված ամեն ինչին։ Իսկ իրականում նա երբեք չի մտածում։ Չի մտածում, երբ լրագիր է կարդում, երբ նստած է գրասեղանի մոտ, երբ պատրաստ է գործում առօրյա աշխատանքի անվի մեջ։ Անիվը պտտվում է նրա հետ միասին, —և միշտ անօգուտ։ Մտածո՞ւմ են արդյոք այն աղջիկները, որոնց նա՝ Աննետան, սովորեցնում է։ Ի՞նչ են նրանք հասկանում այն բառերից, որոնք լսում են, կարդում, արտասանում։ Ի՞նչի է հանգում նրանց գոյությունը։ Որոշ ուժեղ և մթին բնազդներ փտում են խաբուսիկ չքեղության կույտի տակ։ Ցանկանալ և վայելել... Միտքը նույնպես խաբուսիկ չքեղություն է, որով նրանք զարդարում են իրենց։ Ո՞ւմ են մարդիկ խաբում։ Իրենք իրենց... Ի՞նչ է թաքնված ժամանակակից քաղաքակրթության պատյանի տակ՝ իր չքեղության, արվեստի, վազվզուքի և աղմկարարության հետ միասին։ Ա՜խ, այդ աղմկարարությունը։ Դա քաղաքակրթության դիմակներից մեկն է, որը հագնում են այն նպատակով, որպեսզի մտածեն, թե այդ քաղաքակրթությունը ինչ-որ նպատակի՞ է ձգտում։ Ի՞նչ նպատակի։ Նա առաջ է քշում միայն այն բանի համար, որպեսզի մոռացության տրվի... Քաղաքակրթության պատյանի տակ դատարկություն է։ Իսկ մարդիկ պարծենում են դրանով։ Նրանք պարծենում են այդ կեղծ փայլով, դատարկ խոսքերով, զիզիպիզիներով։ Որքա՜ն հազվադեպ են այն մարդիկ, որոնց կյանքը անհրաժեշտության օրենքի իրականացումն է։ Հազարամյա գազանը ոչինչ չի հասկանում և չի անտես իր աստվածների և իմաստունների ձայնին. այդ գազանի համար նրանք ևս մի զիզիպիզի են։ Նա դուրս չի գալիս իր ցանկությունների փակ շրջանակից և ձանձրույթից... Ինչքա՜ն է խախուտ մարդկային հասարակության շենքը։ Նա կանգուն է մնում միայն սովորույթի ուժով։ Նա կփլվի միանգամից։

---

[1] Ստվերների ամբոխը (լատ.)

Ողբերգական մտքեր։ Բայց դրանք չմթագնեցին Աննետայի ջերմ հոգին։ Չէ՞ որ ուրախությունն ու վիշտը մարդու մեջ ծնվում են ոչ թե վերացական գաղափարների ազդեցության տակ, այլ ինչ-որ ներքին խոր պատճառներով։ Ոչ հզոր հոգին կարող է կարոտից հյուծվել նաև անամպ երկնքի տակ, իսկ առողջ և ուժեղ հոգին կայտառորեն դիմանում է փոթորիկներին, թաքնվելով թուխպերի հետևում, ինչպես արևը, և հաստատ հավատալով, որ այդ փոթորիկը կանցնի։ Երբեմն Աննետան տուն էր գալիս հոգնած, ջարդված, և ապագան նրան թվում էր մռայլ ու անհույս։ Նա մանում էր անկողին, քնում էր—իսկ գիշերվա կեսին արթնանալով, կարող էր անհոգորեն ծիծաղել, հիշելով զվարճալի երազը։ Կամ երբեմն նստում է երեկոյան, աշխատանքի վրա կորացած, և, մինչ մատները իրենց գործն են անում, իր գործն է անում նաև ուղեղը։ Հանկարծ նրա գլուխն է գալիս որևէ ծիծաղելի միտք—և ահա Աննետան արդեն ուրախ է։ Նա աշխատում է ծիծաղը զսպել, որ Մարկին չարթնացնի։ Նա ինքն իրեն կըրկնում է. «Ինչքա՜ն եմ հիմար,— և աչքերը սրբում է։ Իսկ սիրտն արդեն թեթևացած է։ Այդ մանկական հանկարծակի անցումները տխրությունից ուրախության՝ նախնիներից եկած փրկարար ժառանգություն էր։ Երբ սիրտը պատում էին թուխպերը, հանկարծ բարձրանում էր ուրախության քամին և դրանք ջրոսմ։

Ոչ, Աննետային պե՞տք չէին ոչ զվարճալիքներ, ոչ գրքեր։ Նա իր սեփական հոգում կարդալու շատ բան ուներ։ Իսկ ամենահետաքրքրաշարժ գիրքը նրա որդին էր։

Մարկի յոթ տարին շուտով լրանալու էր։ Պայմանների փոփոխությունը նա շատ ավելի հեշտ տարավ, քան կարելի էր սպասել. չէ՞ որ ամեն մի փոփոխություն, դեպի լավը թե դեպի վատը, այնուամենայնիվ, փոփոխություն է։ Փոքրիկն այդ դեպքում ինքն էլ էր օձի նման շապիկը փոխում... Ոքքա՜ն են երեխաները անշնորհակալ։ Մարկն հիմա հիանալի կյանք էր գնում առանց Սիլվիայի փաղաքշանքների և երես տալու (իսկ Սիլվիան այնքա՜ն էր վստահ նրա վրա ունեցած իր

իշխանությամբ)։ Ընդամենը մի երկու օրից հետո Մարկը դադարեց նույնիսկ մորաքրոջն հիշել։

Հասունացած մարդիկ ճիշտ չեն պատկերացնում, թե երեխաներին ինչն է դուր գալիս և ինչը՝ ոչ։ Այն բոլոր նորություններից, ինչ հայտնվել էր Մարկի կյանքում, նրան ամենից շատ ուրախացնում էր լիցեյը, ուր մայրը, հաղթահարելով իր դժկամությունը, նրան ուղարկում էր, և մեկ էլ այն ժամերը, երբ նա տանը մենակ էր մնում և երբ իրեն ոչ ոք չէր զբաղեցնում։

Աննետաան տեղավորվից խիտ բնակեցված Մոնժ փողոցում։ Դիք սանդուղք, փոքրիկ, նեղ բնակարան՝ վեցերորդ հարկում, քաղաքի աղմուկ։ Բայց դրա փոխարեն լուսամուտներից լայն տեսարան էր բացվում, տանիքների վրա տարածվող ընդարձակություն, և Աննետային ուրիշ ոչինչ պետք չէր։ Աղմուկը նրան չէր խանգարում. որպես իսկական փարիզուհի, նա սովոր էր աղմուկին ու երթևեկությանը, և գրեթե զգում էր դրանց կարիքը։ Նա նույնիսկ մի տեսակ ավելի լավ էր երազում այդ եռուզեռի մեջ։ Ասենք, գուցեև, հասունացման հետ նրա բնավորությունն էր փոխվել։ Ֆիզիկական կյանքի լիակատարությունն ու կանոնավոր աշխատանքը Աննետային վստահություն տվին իր ուժերի նկատմամբ, նա ձեռք բերեց այն հոգեկան հավասարակշռությունը, որը նախկինում միշտ չէր, որ այցելում էր նրան, իսկ եթե անգամ այցելում էր, ապա ոչ երկար ժամանակով։

Բնակարանի մի մասը, որի լուսամուտները փողոցին էին նայում, բաղկացած էր Աննետայի սենյակից, որը միևնույն ժամանակ նաև հյուրասենյակ էր ծառայում (մահճակալի փոխարեն այստեղ բազմոց էր դրված), Մարկի փոքրիկ սենյակից և ապակեպատ ելուստից, որը դուրս էր գալիս երկու փողոցների անկյունը։ Միջանցքի մյուս կողմում, որտեղ մութ էր լինում նույնիսկ օրը ցերեկով, գտնվում էին բակի վրա բացվող լուսամուտներով ճաշասենյակը և խոհանոցը, ուր համարյա ամբողջ տարածությունը սալօջախն ու կոնքն էին զբաղեցնում։

Մոր սենյակից որդու սենյակը տանող դուռը մշտապես բաց էր, և Մարկը դեռ չափազանց փոքր էր՝ դրա դեմ բողո-

քելու համար։ Նա անսեռ մանկական և առաջին պատանեկության ապրող փոքրիկ տղամարդու միջև ընկած անցման շրջանի տարիքում էր. առաջինից դուրս էր եկել, իսկ երկրորդին դեռ չէր հասել։ Մարկը երբեմն կիրակի առավոտներն առաջվա նման մտնում էր մոր ծոցը և հանդիսավոր օրերին թույլ էր տալիս նրան, որ իրեն հագցնի։ Ճիշտ է, ուրիշ ժամանակ նա ունենում էր նույնիսկ չափից ավելի ամաչկոտության նոպաներ, ամեն տեսակի տարօրինակություններ և հատկապես գաղտնամտության շրջաններ, որի ժամանակ նա տանել չէր կարողանում, երբ խառնվում էին իր գործերին։ Մարկը կամացուկ փակում էր իր սենյակը տանող դուռը։ Աննետան նորից էր բացում։ Նա չէր կարողանում որևէ մի շարժում անել, որ մայրը լսի։ Դա անտանելի էր։ Մնում էր միայն, որ տեղում բոլորովին չշարժվի— այդպիսի դեպքերում մայրը նրան մոռանում էր, բայց ոչ երկար ժամանակով, ո՛չ երկար...

Ի հաճույս նրա, Աննետան քիչ էր լինում տանը. դուրս գնալը նրան անհրաժեշտ էր։ Լիցեյը, որտեղ Մարկը սովորում էր, հեռու չէր, Աննետան որդուն այնտեղ էր տանում առավոտները, իսկ երբ ազատ էր լինում (մի բան, որ հազվադեպ էր պատահում), նաև ցերեկը։ Բայց լիցեյից նրան տուն տանելու համար չէր կարողանում գալ, այդ ժամերին նա դասեր էր ունենում։ Մարկը տուն էր վերադառնում մենակ, և մորը դա անհանգստացնում էր։ Նա փորձեց հարևանների հետ պայմանավորվել, որպեսզի, երբ նրանք ազատնում ուղարկեն լիցեյ իրենց երեխային բերելու, նրա հետ տուն բերի նաև Մարկին։ Բայց Մարկին այդ դուր չէր գալիս, և նա, չսպասելով ազատնում, մշտապես ֆլկում էր։ Արտաքինից հպարտ, բայց հոգում փոքր-ինչ վախենալով, նա մենակ գնում էր տուն և փակվում դատարկ բնակարանում։ Մինչև մոր գալը այնքա՞ն լավ էր։ Աննետան հանդիմանում էր նրան ինքնագլխությունի և անկախության համար։ Բայց, ինքն իրեն չխոստովանելով այդ վատ զգացմունքը, Աննետան գոհ էր, որ որդին ընկերներ չունի։ Նա ամեն տեսակի ընկերոջ չէր վստահում, վախենում էր, լինի հանկարծ որդուն փչացնեն... Նրա որդո՞ւն։ Նշանակում է, Աննետան հաստատ համոզված

էր, որ որդին իրե՞ն է պատկանում։ Իհարկե, նա աշխատում էր չափավորել իր սիրո էգոիզմը։ Երբ Մարկը դեռ բոլորովին փոքր էր, Աննետան նրան մի տեսակ կուլ տալու, այդ փոքրիկ էակին իր մեջ լուծելու կույր և ագահ պահանջ էր զգում։ Հիմա արդեն այդպես չէր—հիմա նա Մարկի մեջ անհատ էր տեսնում։ Բայց նա իրեն համոզել էր, որ ինքը ունի երեխայի հոգու բանալին, որ ինքը իր որդուց ավելի լավ գիտի, թե ինչն է նրա երջանկությունը, և ինչ է նա ուզում։ Աննետան ձգտում էր կերտել այդ հոգին ըստ պատկերի և նմանության այն աստծո, որին ինքը թաքուն պաշտում էր։ Ինչպես մայրերի մեծամասնությունը, իրեն անընդունակ համարելով կյանքում ստեղծելու այն, ինչ ուզում է, նա երազում էր, որ դա կստեղծի նա, ում մեջ հոսում է իր արյունը։ (Վոտանի հավիտենակա՞ն երազանքը, որը հավիտենապես մնում է անիրականանալի)։

Սակայն, որպեսզի ձևավորի որդու հոգին, նա պետք է այդ հոգին ամուր պահեր իր ձեռքերում։ Թույլ չտար, որ որդին դո՜ւրս պրծնի... Եվ Աննետան դրա համար անում էր այն ամենը, ինչ կարող էր, անում էր ավելի՜ն, քան պետք էր։ Իսկ Մարկը օրըստօրե ավելի ու ավելի էր հեռանում նրանից։ Աննետան վհատորեն նկատում էր, որ ինքը զնալով ավելի քիչ է հասկանում որդուն։ Նա միայն մի բան գիտեր լավ. որդու մարմինը, նրա առողջական վիճակը, նրա հիվանդությունները, դրանց ամենափոքր նշանները— այստեղ Աննետայի հոտառությունը երբեք չէր խաբում իրեն։ Այդ սիրելի, նրբանուրբ փոքրիկ մարմինը նրա աչքերի առաջ էր, նա հպվում էր այդ մարմնին, լվանում, խնամում նրան... Թվում էր, թե կարելի է թափանցել նրա էության մեջ... Բայց ի՞նչ էր թաքնված Մարկի հոգում։ Աննետան աչքերով կլանում էր տղային, գրկում էր անհագուրդ ձեռքերով, նա ամբողջովին իրեն էր պատկանում...

— Տե՜ր աստված։ Այս ինչպես եմ քեզ սիրում, գազա՜նի հոտու։ Իսկ դու սիրո՞ւմ ես ինձ։

Մարկը քաղաքավարի պատասխանում էր.

— Սիրում եմ, մամա։

Բայց ի՞նչ էր նրա մտքինը։

Յոթ տարեկանում Մարկը ի հայտ չէր բերում ոչ մի ժառանգական հատկանիշ։ Աննետան զուր էր նրան ուսումնասիրում, փնտրելով գոնե որևէ նմանություն, աշխատելով համոզել իրեն, որ այդ նմանությունը կա... Ոչ, Մարկը նման չէր մորը. ճակատն ուրիշ էր, ուրիշ էր աչքերի բացվածքը։ Նա Ռիվիերներից չէր ժառանգել նաև նրանց բերանի բնորոշ ձևը, որն առանձնապես նկատելի էր Աննետայի մոտ. նրանց շրթունքները մի քիչ դուրս էին ցցված,— թվում էր, ներքին ուժի ճնշումը, կամքի լարումը փոքր-ինչ վեր է բարձրացնում, ինչպես դրժոն է բարձրացնում խմորը։ Միակ բանը, ինչ Մարկը վերցրել էր մորից,— աչքերի գույնը,— կորչում էր օտար գծերի մեջ։ Բայց որտեղի՞ց էր այդ օտարը։ Հորի՞ց։ Բրիսաների ընտանիքի՞ց։ Նույնպե՞ս չէ։ Համենայն դեպս, առայժմ դա նկատելի չէր, և Աննետան խանդոտորեն ինքն իրեն կրկնում էր.

«Երբե՞ք»։

Բայց մի՞թե նրա համար այդքան տհաճ կլիներ որդու դեմքին տեսնել Ռոժեի որևէ գիծ։ Մի՞թե դա նրան գաղտնի ուրախություն չէր պատճառի։ Հիշելով այն մարդուն, որին մի ժամանակ ինքը տրվել էր, Աննետան, չհաստատվանելով այդ իրեն, ոչ միայն դառնություն էր զգում, այլև թախիծ։ Նա թախծում էր, ասենք, ոչ այնքան իսկական Ռոժեի համար, որքան այն, որին ինքը հնարել էր, և փաստորեն հենց այդ, իր երազանքով ստեղծած Ռոժեին էլ տրվել էր մի ժամանակ։ Եթե Աննետան նորից նրան տեսներ իր որդու մեջ, յուրահատուկ հպարտության զգացում կունենար, կարծես, Ռոժեից վերցնելով այն ձևը, որին սիրում էր, և բնակեցնելով նրա մեջ իր հոգին, Աննետան հաղթանակ էր տանում նրա դեմ։ Այո, նա կուզեր, որ Մարկը արտաքինով նմանվի Ռոժեին, իսկ հոգով՝ իրեն։

Սակայն Մարկը նման չէր ոչ հորը, ոչ մորը։ Ռոժեի դեմքը չուներ այն յուրահատկությունն ու արտահայտչականությունը, որոնք բնորոշ էին Ռիվիերներին, բայց նրա դեմքը աչքի էր ընկնում հատարակ և ճիշտ դիմագծերի գեղեցկությամբ։ Դա մի գիրք էր, որը հեշտ էր կարդացվում։ Իսկ

Մարկի մանկական դեմքի արտահայտությունը անորսալի էր։ Ինչպե՞ս նրան հասկանալ։

Գեղեցիկ և նուրբ, բայց ոչ ճիշտ դիմագծեր, նեղ ճակատ, կանացի կզակ, փոքր-ինչ կկոցված աչքեր, քիթ... (Որտեղի՞ց էր նրան այդպիսի քիթը, երկար ու սուր, նուրբ քթանցքներով)։ Իսկ մեծ, գունատ շուրթերով քիչ ծուռ բերա՞նը։ Ամեն ինչ այդ դեմքի վրա անորոշ էր, հեղհեղուկ. դա հիշեցնում էր արտաքուստ անշարժ, բայց փաստորեն անկայուն ու փերփրացող գետին... Իհարկե, տղայի բնավորությունը դեռ չէր ձևավորվել, նրա մեջ ոչինչ դեռ որոշակի չէր դարձել։ Բայց ի՞նչ ուղղությամբ կգնա այդ ձևավորումը։ Թե՞ այդպես էլ միշտ կմնա անորոշ։

Նրա տարած ծանր հիվանդության ժամանակից ի վեր այդ երեխան առաջին հայացքից թվում էր (իսկ գուցե նաև այդպիսի՞ն էր) ներվային և տպավորվող։ Բայց ավելի ուշադիր զննման դեպքում նա զարմացնում էր իր հանգիստ զսպվածությունով, դեմքի անտարբեր և ինքնամփոփ արտահայտությամբ։ Ոչ մի անհնազանդություն, մռայլություն, երբեք նրանից «ոչ» բառը չես լսի։

— Լավ, մամա...

Բայց հետո պարզվում էր, որ նա ամենևին ուշադրություն չի դարձրել այն բանի վրա, ինչ նրան ասել են. նա պարզապես չի լսել... Իսկապե՞ս չէր լսել։ Դժվար է ասել։ Մարկը նայում էր Աննետային, սպասելով, թե ինչ է լինելու։ Իսկ Աննետան նայում էր նրան և մտածում. «Փոքրիկ աֆի՞նքս»։ Նա աֆինքս էր բոլորի համար, առավել ևս, որ ինքն իրեն չէր ճանաչում։ Նա ինքն իր համար նույնպիսի հանելուկ էր, ինչպես և մորս։ Մեծ հո՞գս չէր։ Ցոթ տարեկանում մենք դեռ չենք ձգտում և դեռ չենք փորձում ճանաչել մեզ։ Բայց դրա փոխարեն Մարկը ձգտում էր ճանաչել Աննետային, իր տիրուհուն և ստրկուհուն։ Եվ դրա համար ժամանակ նա շատ ուներ, որովհետև Աննետան ամբողջ օրերով Մարկին իր մոտ էր պահում։ Մայր ու որդի զննում էին միմյանց, բայց Աննետային այդ զննումը ոչինչ չէր տալիս։

Աննետան սխալվում էր, կարծելով, որ տղան Ռիվիերներից և ոչ մեկին նման չէ իր մտքի հատկություններով

Մարկը զարմանալի կերպով հիշեցնում էր պապին՝ Ռաուլ Ռիվիերին։ Բայց Աննետան շատ քիչ էր ճանաչում հորը, թեև համոզված էր, որ նրան լավ գիտե։ Նա չափազանց շատ էր կախարդված իր հորով և այդ պատճառով ամբողջ կյանքի ընթացքում այդպես էլ չճանաչեց իսկական Ռաուլին։ Երբեմն նրա մտքով ենթադրություններ էին անցնում, հատկապես այն բանից հետո, երբ նա կարդաց հոր նշանավոր նամակագրությունները։ Բայց նա իրեն թույլ չէր տալիս այդ մասին մտածելու։ Նա ուզում էր պահպանել հոր մասին քնքուշ և ակնածալից հիշողությունները, թող որ մի վայրկյան տատանված և փոքր-ինչ գունազարդված։ Ընդ որում Աննետան Ռաուլին ճանաչում էր միայն որպես այդպիսին, ինչպիսին նա կար իր կյանքի վերջին տարիներին։ Բայց եթե ծերուկ Ռիվիերը կարողանար այն աշխարհից վերադառնալ և իրեն հատուկ սրատեսությամբ զննել իր ապօրինածին թոռնիկին, նա կասեր.

— Ես սկսում եմ նորի՛ց ապրել։

Դա բոլորովին էլ այդպես չէր։ Ոչինչ երբեք չի կրկնվում։ Մարկի մեջ վերակենդանացել էին միայն պապի որոշ գծերը։

Բնության նե՛նգ խաղ։ Աննետայի գլխավերևում այդ երկու հանցակիցները ձեռք էին մեկնում միմյանց։ Եվ ամենից ապշելին այն էր, որ անկեղծ սրտի տեր Աննետան մյուս գծերի հետ միասին պապից թոռնիկին էր փոխանցել ձևանալու հիանալի կարողությունը։ Այդ այլևս էր ոչ մարգկանց ստելու անհրաժեշտությունից։ Ռաուլ Ռիվիերը իրեն բավական ուժեղ էր զգում, նրա մեջ բավական ներողամիտ արհամարհանք կար իր ժամանակակիցների նկատմամբ, և նա բնավ չէր վախենա նրանց առաջ իր ամբողջ մերկությամբ երևալուց։ Այդպիսի ցանկություն նա հաճախ էր ունենում, և բոլորը հետո կրկնում էին նրա դաժան և ծաղրական խոսքերը... Ոչ, դա խաբեբայություն չէր, այլ զվարճանալու, անպատիժ կերպով խեղկատակություն անելու պահանջ։ Հումորի զգացում, դեր խաղալու, իր զգացմունքները գրիմ անելու, մարդկանց մոլորեցնելու չարաճճի ցանկություն։ Փոքրիկի մեջ այդպիսի ժառանգական գիծը երևան էր գալիս, իհարկե, անմեղ ձևով։ Այդ անկայուն և բարդ հոգին,

փաստորեն բոլորովին ոչ չարաճճի և ոչ թեթևամիտ, ծնվելիս ընկել էր որոշակի ժառանգական գծերով թաղանթի մեջ և օգտվում էր այն զենքից, որը նրան տվել էր բնությունը։ Ճիշտ այդպես էլ, եթե այդ հոգին ընկներ բրդով կամ փետուրներով ծածկված կենդանու մարմնի մեջ, նա կգործադրեր իր կտուցը, ճանկերը, թևերը։ Բայց այդ հոգին դրել էին ծերուկ Ռիվիերի մաշված հնոտիքի մեջ, և նա բնազդորեն ընդօրինակել էր պապի կեղծավորությունն ու խորամանկությունը։

Մեծահասակների միջավայրում Մարկը միշտ զգաստ էր և կարողանում էր նրանց մեջ նկատել այն ամենը, ինչ իրեն էր վերաբերվում. դրան էր ուղղված նրա ամբողջ բնական գիտողականությունը։ Եվ եթե նա գլխի էր ընկնում, թե ինչպիսին են իրեն համարում մեծահասակները, բնազդաբեն այդ դերի մեջ էր մտնում, եթե միայն նրա մեջ հակառակվելու ցանկություն չէր հայտնվում։ Իսկ այդպիսի ցանկություն հայտնվում էր, երբ նրան զրկում էին կամ ինքն էր ուզում գլխարձանալ։

Նրա սիրելի զբաղմունքներից մեկը մտովի այդ կենդանի խաղալիքները մասերի բաժանելն էր, նրանց մեջ զսպանակներ, թույլ տեղեր գտնելը, նրանց փորձելը, նրանց հետ խաղալը, նրանց գործի դնելը։ Դա այնքան էլ դժվար չէր. մեծահասակները բավական պրիմիտիվ էին և գյուրահավատ, իսկ Մարկի մայրը՝ հատկապես։

Աննետան Մարկի մեջ հետաքրքրություն էր արթնացնում։ Նա ինչ-որ գաղտնիք ուներ։ Այդ գաղտնիքին վերաբերող ակնարկությունները Մարկը լսել էր Սիլվիայի արհեստանոցում, երբ ինքը նստում էր իր վրա ուշադրություն չդարձնող վարպետուհիների ոտքերի մոտ։ Մարկը շատ բան չէր հասկանում, բայց հենց այդ պատճառով էլ նրանց խոսքերը իրեն ավելի հետաքրքիր ու խորհրդավոր էին թվում, և նա փորձում էր մեկնաբանել դրանք։ Դուշակում էր, հորինում... Այդ ականջները սրած, շողշողացող աչքերով փոքրիկ գազանի գլուխը մշտապես աշխատում էր։

Այժմ, երբ նա հաճախ մոր հետ տանն էր նստում (երբեմն մի քանի օր շարունակ, որովհետև Մարկի առողջությունը թույլ էր, նա ձմեռը շատ շուտ մրսում էր, և մայրը մշտապես

դողում էր նրա վրա), Աննետան նրա զննումների գլխավոր առարկան էր. Մարկը երգելիս լիներ թե խաղալիս կամ որևէ բան պատրաստելիս— նա միևնույն ժամանակ հետաքրքրությամբ հետևում էր մորը: Մարկի միտքը նույնքան փութկոտ էր և անհանգիստ, որքան և աշխույժ էին ոտքերը: Թեկուզև մեջքով կանգնած լիներ դեպի ձեզ, նա, միևնույն է, ձեզ տեսնում է, կարծես ծոծրակին աչքեր կան, և նրա կատվային փոքրիկ ականջները, ինչպես ֆլյուգեր, ձայնի ուղղությամբ պտտվում են բոլոր կողմերը: Թող որ նրա ուշադրությունը նման է պտտվող փարոսի, թող որ նա միանգամից մի քանի նապաստակների հետևից է ընկնում, նա երբեք հետքը չի կորցնում և ոչ էլ վհատվում է, իմանալով, որ վաղը կսկսի նորից... Այն նապաստակը, որին հետապնդում էր Մարկը, հեշտությամբ բռնվում էր: Հրապուրվող, սիրառատ, մարդամոտ Աննետան ժլատություն չէր անում. նա շռայլում էր իրեն առանց ետ նայելու:

Աննետան մերթ Մարկի հետ վարվում էր, ինչպես փոքրիկի հետ,— և այդ ժամանակ Մարկը նեղանում էր ու գըտնում, որ մայրը ծիծաղելի է, մերթ զրուցում էր նրա հետ, ինչպես մտքով իրեն հավասար, հասունացած ընկերոջ,— և տղան սկսում էր ձանձրանալ, նա ինքն իր մեջ մորն անվանում էր «ձանձրացնող»: Երբեմն Աննետան որդու ներկայությամբ սկսում էր բարձրաձայն մտածել, արտասանել ամբողջական մենախոսություններ, կարծես Մարկն ընդունակ էր որևէ բան հասկանալու: Այդպիսի դեպքերում Մարկը որոշում էր, որ մայրը ցնդած է, և զայրացած ու ծաղրանքով դիտում էր նրան: Մարկը չէր հասկանում մորը, բայց չէ որ դա երբեք չի խանգարում դատել մարդուն:

Մարկը շատ հարմար ձև էր հնարել, որը պիտանի էր բոլոր դեպքերի համար. դա բարեկիրթ տղայի լկտի և ցրված քաղաքավարությունն էր, տղա, որը ձևացնում էր, իբրև թե լսում է այն, ինչ պարտավոր էր լսել, բայց բնավ դրանով չի հետաքրքրվում (նա իր գործերն ունի) և միայն սպասում է, որ մեծահասակները որքան կարելի է շուտ վերջացնեն խոսելը: Երբեմն նա մորը հաճույք պատճառելու համար քնքուշ և սիրալիր որդու դեր էր խաղում: Նա գիտեր, որ մայ-

րը հենց այս րոպեին ուրախությունից կբոցավառվի։ Աննետան ամբողջ սրտով արձագանքում էր նրա փաղաքշանքներին, իսկ Մարկը մոր նկատմամբ ներողամիտ արհամարհանք էր զգում այն բանի համար, որ նա այդքան հեշտ խաբվում է։ Երբ Աննետան իրեն այնպես չէր պահում, ինչպես սպասում էր Մարկը, տղան զայրանում էր, բայց հարգում էր մորն ավելի շատ։

Մարկն ընդունակ չէր այդ դերը երկար տանել։ Երեխաները դրա համար չափազանց ճկուն են և անկայուն։ Մարկը պատկերում էր սիրող որդու և քնքշություններով գորովում Աննետային, իսկ մի րոպե անց անամոթաբար ցույց էր տալիս իր անտարբերությունը նրան, և Աննետան իրեն կորցնում էր, չիմանալով ինչ մտածի։

Պատահում էր, որ, չդիմանալով հիասթափությանն ու վիրավորանքին (հատկապես այն հազվադեպ րոպեներին, երբ նրա մեջ ազոտ կասկածանք էր հայտնվում, թե Մարկը համառ կերպով ինչ-որ դեր է խաղում), Աննետան իրեն հատուկ բռնկվողությամբ (թող նրան ներեն ժամանակակից մանկավարժները) վրդովված շրպպացնում էր Մարկին... Իհարկե, դա բոլոր կանոններին դեմ էր և վիրավորում էր երեխային։ Անգլոսաքսոնուհու աչքում Աննետան, հասկանալի է, դրանով իրեն հավիտենապես խայտառակում էր։ Բայց մեզ, հին ֆրանսիացիներիս, այդպիսի բաները դարմանալի չեն... «Qui bene amat[1]...» Այդ ասացվածքը միշտ կարելի է լսել բուրժուական ընտանիքներում, որտեղ լատիններենը դեռ լրիվ չեն մոռացել։

Մեզ բոլորիս մանկության տարիներին մեծահասակները այդ ձևով էին ապացուցում իրենց սերը։ Ով մենք, ինչպես և Աննետայի որդին, մեր հոգու խորքում համարում էինք, որ չորսից երեք դեպքում այդ շրպպոցները տեղին են ստացել։ Բայց եթե մենք, ինչպես Մարկը, չէինք դադարում սիրել նրան, ով այդ շրպպոցներով մեզ պարգևատրում էր, ապա, ճիշտն ասած, այդ շրպպոցներից հետո Աննետան որոշ չափով կորցնում էր մեր աչքում իր հեղինակությունը։ Գուցե

[1] Ով շատ է սիրում... (լատ.)

հենց այդ պատճառով մենք, ինչպես և Մարկը, ավելի հաճախ էինք առիթ տալիս, որ մեզ շրպտացնեն։

Շրպտոց ստացողին հարմար առիթ էր ներկայանում պատկերել իրեն որպես զոհի։ Եվ Աննետան զղջալով, որ չարաշահել է իր ուժը, իրեն մեղավոր էր զգում և սկսում շարժել Մարկի ողորմածությունը։ Իսկ Մարկը հենց դրան էր սպասում, որպեսզի Աննետան առաջինը մոտենա։

Թուլության հաղթանակ։ Այդ զենքից հատկապես գիտեն օգտվել կանայք։ Բայց այստեղ կնոջ դերում ներկայանում էր երեխան։ Այդ փոքրիկը, որի շուրթերին դեռ չէր չորացել մայրական կաթը, կեսից ավելին կանացի էր և օժտված աղջնակների խորամանկությամբ և աճպարարությամբ։ Աննետան անզոր էր այդ փոքրիկ խաբեբայի դեմ։ Մարկի հետ տնղի ունեցող ընդհարումների ժամանակ Աննետան ներկայացնում էր ուժեղ սեռը, այդ հիմար ուժեղ սեռը, որն իր ուժից ամաչում է և պատրաստ է, կարծես, նրա համար ներում խընդրելու։ Պայքարը անհավասար էր։ Փոքրիկը ծանակում էր նրան։

Սակայն չպետք է կարծել, թե Մարկը պարզապես խորամանկ կոմեդիանտ էր, որ ձեռ էր առնում մարդկանց։ Նրա, ինչպես և նրա պապի մեջ, դոյակցում էին հակառակ գծեր։ Շատ քչերն էին ընդունակ տեսնելու այն, ինչ թաքնված էր ծեր Ռիվիերի ծաղրածուի դիմակի հետևում, տեսնելու այն ողբերգությունը, որը որոշ «նվաճողներ» թաքցնում են երբեմն ուրախ ցինիզմի և երանության ծարավի տակ։ Ռաուլի հոգում մութ խորխորատներ կային, ուր ոչ ոքի չէր թույլատրվում նայել։ Այդպիսի գաղտնիքները թաքնվում են գալլական ծիծաղի տակ շատ ավելի հաճախ, քան մենք կարծում ենք, բայց մարդիկ դրանք պահպանում են իրենց ներսում։ Աննետան նույնպես ուներ այդպիսի գաղտնիքներ, և նա երբեք հորը իրազեկ չէր պահել դրանց մասին։ Սակայն նա հոր գաղտնիքները չգիտեր ճիշտ նույն ձևով, ինչպես հիմա չգիտեր որդու հոգին։ Նրանցից յուրաքանչյուրը միշտ ամփոփված էր մնում ինքն իր մեջ։ Տարօրինակ ամաչկոտություն։ Մարդիկ ավելի քիչ ամաչում են իրենց արատներն ու

ստոր ախտրժակները ի ցույց դնելուց (իսկ Ռաուլը— նա մինչև անգամ դրանցով պարծենում էր), քան հոգեկան ողբերգությունը դրսևորելուց։

Մարիկը իր ողբերգությունն ուներ։ Առանց եղբայրների և ընկերների մենակ մնացող երեխան բավական ազատ ժամանակ ունի՝ կյանքի մառաններում թափառելու համար։ Իսկ Ռիվիերների մառանները խոր էին և ընդարձակ։ Մայր ու որդի կարող էին այնտեղ հանդիպել, բայց նրանք իրար չէին տեսնում։ Հաճախ, կարծելով, որ իրարից շատ հեռու են, մայր ու որդի գնում էին իրար կողքի, անցնելով մեկը մյուսին, որովհետև երկուսն էլ քարշ էին գալիս խավարի մեջ՝ կապած աչքերով։ Աննետային խանգարում էր տեսնել կրքի դևը, որը մինչև այժմ տիրապետում էր նրան, տղային՝ էգոիզմը, որ բնական էր նրա հասակում։ Բայց Մարիկը դեռ միայն քառանձավ տանող ճոպաքի մոտ էր և եղջը չէր փնտրում, ինչպես պատերին կպչելով փնտրում էր Աննետան։ Մարիկը թաքնվել էր առաջին աստիճաններից մեկի վրա և անրջում էր ապագայի մասին։ Դեռ ընդունակ չլինելով կյանքը հասկանալու, նա արդեն այդ կյանքը ստեղծում էր երազանքներում։

Նրան չվիճակվեց հեռու գնալ, շուտով նա դեմ առավ մի սարսափելի պատի, որի առաջ մարդկային հոգին սոսկումով բռնկված ծառա է լինում. նա մոտիկից տեսավ մահը։ Այդ ալառը բարձրանում էր բոլոր կողմերից, որին շրջանաձև ճանապարհի նման գոտևորում ու կողքից գնում էր հիվանդությունը։ Ելք փնտրելն իզուր էր։ Պատը համատարած միաձույլ էր, ոչ մի ճեղք։ Մարիկին ասելու կարիք չկար, որ այդտեղ պատ է։ Նա խավարում իսկույն ևեթ դա նկատեց և մազերը ցցած, սկսեց ձիու նման փնչացնել։ Նա ոչ ոքի հետ չէր խոսում մահվան մասին, և ոչ ոք մահից չէր խոսում նրա հետ։ Կարծես բոլորը պայմանավորվել էին այդ մասին լռել։

Աննետան, ինչպես բոլոր այժմյան երիտասարդ կանայք, վատ մանկավարժ էր։ Եթե նա դեռ երիտասարդ աղջիկ էր, շատ զբույցներ էր լսել մանկավարժության վերաբերյալ և ինքն էլ հաճույքով ու մեծ լրջությամբ էր դատողություններ անում նրա մասին, դաստիարակության մեթոդներին տալով ավելի շատ նշանակություն, քան առաջվա մայրերը, որոնք

երեխաներին կուրորեն էին մեծացնում։ Բայց երբ նա երեխա ունեցավ, անզեն գտնվեց կյանքի մաղուցած հնազար ու մի անակնկալների առաջ, և շատ դեպքերում չդիտեր, թե ինչ որոշում ընդունի։ Աննետան տեսություններ էր ստեղծում — և չէր կիրառում գրանք կամ մերժում էր առաջին իսկ փորձերից հետո, և վերջիվերջո, հույսը դնելով բնազդի վրա, թողնում էր, որ ամեն ինչ իր կարգով գնա։

Կրոնը այն հարցերից մեկն էր, որն առանձնապես մտահոգում էր նրան. Աննետան չգիտեր, թե գործնականորեն ինչպես դա լուծի իր որդու համար։ Իր երիտասարդական տարիների ընկերուհիների մեծամասնությունը, որ կազմված էր հանրապետական հարուստ բուրժուազիայի միջավայրից եկած աղջիկներից, դաստիարակված էր կրոնասեր մայրերի և ոչ կրոնասեր հայրերի կողմից, քայց չէր տառապում երկու աշխարհայացքների ընդհարումից. բարեքաշխարհիկ հասարակության մեջ այդ հայացքները հիանալի կերպով գոյակցում են, ինչպես ուրիշ շատ հակասություններ, քանի որ այստեղ ոչ մի զգացում երբորդ չափում չունի։ Աննետան նույնպես համաձայնում էր եկեղեցի—քան պարտականության, ինչպես լիցեյ։ Առաջին հազորդությանը նա պատրաստվում էր, ինչպես քննության, բարեխղճորեն, բայց առանց որևէ հոգեկան հուզմունքի։ Հանգիսավոր ժամերգությունները, որոնց նա մասնակցում էր ֆրենց հարուստ ծխի եկեղեցում, նրա աչքում բարքաշխարհիկ զվարճալիքների նման մի բան էր հանդիսանում։ Հարաբերությունները իր միջավայրի հետ խզելով, Աննետան թողեց նաև բոլոր կրոնական պարտավորությունները։

Ժամանակակից հասարակությունը (իսկ եկեղեցին նրա հենարաններից մեկն է) կարողացել է մարդկային մեծ զգացմունքներն այնպես ալլանդակել ու գոհհայացնել, որ Աննետան, հոգում պահպանելով հավատի զանձերը, որոնք հավելյալով կհերիքեին հարյուր կեղծ ճգնավորի, իրեն հավատացյալ չէր համարում։ Դա այդպես էր, որովհետև Աննետան կրոնը նույնացնում էր ազոթքների փնթփնթման և եկեղեցական արարողությունների հնացած էկզոտիկայի հետ։ Կրոնը հարուստների համար շռայլանք էր և միխիթարական խաբ-

կանք՝ աղքատների աչքերի և սրտի համար, խաբկանք, որը հաստատում էր գոյություն ունեցող կարգ ու կանոնը, հետևապես նաև նրանց աղքատությունը։

Այն ժամանակից ի վեր, ինչ Աննետան դադարել էր եկեղեցի հաճախել, նա ոչ մի անգամ դրա պահանջը չէր զգում։ Նա չէր գիտակցում, որ իր ինքնախարազանման բուռն պոռթկումները, հախուռն զրույցները իր խղճի հետ— նույն ժամերգություններն են։

Աննետան չէր ուզում իր որդուն ներշնչել այն, առանց ոչի ինքը հիանալի յոլա էր գնում։ Գուցե նրա համար այդ հարցը չառաջանար էլ, եթե (ի՞նչ պարադոքս) դա Սիլվիան չքարձրացներ։ Այո, Սիլվիան, որը փարիզյան ճնճղուկից ավելի կրոնասեր չէր, բայց միևնույն ժամանակ իրեն կարգին ամուսնացած կին չէր համարի, եթե գործը գլուխ գար առանց եկեղեցու օրհնության։ Ով նա անվայելուչ էր գտնում այն, որ Աննետան տղային չի կնքել։ Աննետան ուրիշ կարծիքի էր, բայց և այնպես համաձայնեց այդ անել, որպեսզի Սիլվիան կարողանա դառնալ Մարկի կնքամայրը,— և այլևս այդ մասին չէր մտածում։ Այդպիսին էր գրությունը, քանի դեռ Ժուլիենը չէր հայտնվել։ Այն, որ Ժուլիենը հավատացյալ էր և պահպանում էր բոլոր ծիսակատարությունները, Աննետային հավատացյալ չդարձրեց, բայց նրան որոշ հարգանք ներշնչեց դեպի այդ ծիսակատարությունները, և նա սկսեց խորհել այն հարցի վրա, որին մինչև այդ նշանակություն չէր տալիս։ Ի՞նչ անել Մարկին։ Ուղարկել եկեղեցի՞։ Սովորեցնել այն, ինչին ինքը չէ՞ր հավատում։ Նա այդ հարցը տվեց Ժուլիենին, և վերջինս վրդովվեց։ Ժուլիենը սկսեց տաք-տաք համոզել նրան, որ երեխայի առաջ պետք է բացել աստվածային ճշմարտությունները։

— Բայց եթե ինձ համար դրանք ճշմարտություննե՞ր չեն։ Նշանակում է, ես պետք է ստեմ, եթե Մարկն սկսի ինձ հարցեր տալ։

— Ո՛չ, մի՛ ստիր, բայց մի խանգարի նրա հավատալուն, որովհետև դա պետք է նրա բարօրության համար։

— Ոչ, խաբեությունը չի՛ կարող նրա համար բարօրություն լինել։ Ով երբ նա իմանա, որ ես խաբել եմ, կարո՞ղ է

արդյոք ինձ հարգել։ Նա իրավացի չի՞ լինի ինձ հանգիմանելիս։ Նա կդադարի ինձ հավատալուց, և, ի՞նչ իմանաս, չի՞ խանգարի արդյոք Մարկի վզին փաթաթված այդ կրոնը նրա հետագա խելամիտ զարգացմանը։

Ժուլիենն այդտեղ նոթերը կիտեց, և Աննետան շտապեց խոսակցությունը փոխել։

Բայց, այնուամենայնիվ, ի՞նչ անել։ Նրա ընկերուհիները, որ բողոքականներ էին, խորհուրդ էին տալիս Մարկին ուսումնասիրելու բոլոր կրոնները, որից հետո ինքը ընտրի, երբ տասնվեց տարեկան կդառնա։ Աննետան քրքջում էր. ի՞նչ տարօրինակ հասկացություններ կրոնի մասին։ Կարծես դա մի առարկա է, որից քննություն են տալիս։

Աննետան այդպես էլ ոչինչ չորոշեց։ Մարկի հետ զբոսնելիս եկեղեցի էր մտնում, նստում էր անկյունում, և երկուսով հիանում էին վեր խոյացող քարե սյուների անտառով, գունավոր ապակիների միջով այդ թավուտը թափանցող լույսի փայլքով, կամարների թռիչքով և ճերմակ դասերով։ Նրանք ըմբոշխնում էին մեղմ միասլաղաղ երգը։ Այստեղ հոգին կարծես անուրջների և մտասուզության մեջ մաքրվում էր...

Մարկին, թերևս, դուր էր գալիս այդպես նստել, մոր ձեռքը բռնած, լսել և կամացուկ փսփսալ նրա հետ։ Ճաք էր, հաճելի, գրեթե հեշտասեր մի երանություն էր հոսում մարմնով...

Այո, եթե դա շարունակվեր չափից ոչ ավելի երկար։ Մարկին իսկույն ձանձրացնում էր նիրհուն, քնքշացող լռությունը։ Նա շարժվելու պահանջ էր զգում, մտածում էր կոնկրետ բաների մասին։ Ուղեղն աշխատում էր. զննում էր, նկատում։ Մարկը տեսնում էր, որ եկեղեցում բոլորն աղոթում են, իսկ իր մայրը՝ ոչ։ Եվ իր մեջ եզրակացություններ էր անում, առանց բարձրաձայն արտահայտելու։ Նա առհասարակ հազվադեպ էր հարցեր տալիս, շատ ավելի հազվադեպ, քան ուրիշ երեխաները. նա շատ ինքնասեր էր և վախենում էր, որ իրեն հիմարի տեղ կդնեն։

Բայց մի անգամ նա այնուամենայնիվ հարցրեց.

— Մամա, աստվածն ի՞նչ է։

Աննետան պատասխանեց.

— Չգիտեմ, սիրելիս։

— Բա դու ի՞նչ գիտես։

Աննետան ծիծաղեց և որդուն քաշեց իրեն.

— Այ, օրինակ, գիտեմ, որ քեզ սիրում եմ։

Էհ, դա Մարկի համար նորություն չէր, դրա համար շարժեր եկեղեցի գալ։

Մարկը առանձնապես տպավորվող բնավորություն չուներ, և ամենափոքրիկ հակում անգամ չուներ դեպի սրտի այն բոլոր ազատ հուզմունքները, որով մխիթարվում են «այդ կանայք»։ Աննետան իրեն կատարյալ երջանիկ էր զգում, երբ ազատ իր հետ էր լինում, երբ նրան առանձնապես չէին ձանձրացնում նյութական հոգսերը և հաջողվում էր հանգիստ շրջավող աշխատանքներից որևէ ազատ ժամ գտնել։ Աննետան կարիք չուներ աստծուն հեռու փնտրելու— աստված նրա սրտում էր։ Իսկ Մարկը կարող էր իր մասին ասել, որ իր սրտում միայն ինքն է, Մարկը, իսկ մնացյալ բոլորը— դատարկ բան է։ Նա պահանջում էր, որ ամեն ինչ լինի պարզ և ստույգ։ Ո՞վ էր վերջիվերջո այդ աստվածը։ Դա այն մա՞րդն էր, որ կանացի յուքկայի նման ինչ-որ բան հագած և ոսկեզօծ կրծկալը կրծքին կանգնում է զոհասեղանի առաջ։ Թե՞ մուտքի մոտ կանգնած դռնապանը՝ ցուլը ձեռքին, կարճ շալվարով ու արնաքամկները կիպ գրկող գուլպաները հագին։ Թե՞ եկեղեցու պատին նկարած մարդիկ— մեկական հոգի յուրաքանչյուր ընթերասեղանում— որոնք քաղցրորեն ժպտում էին, ճիշտ և ճիշտ ինչպես այն շողում դամաները, որոնց նա ուսանել չէր կարողանում։

— Մամա, գնա՞նք։

— Ինչո՞ւ։ Մի՞թե այստեղ վատ է։

— Լա՞վ է... բայց գնանք տուն։

Այնուամենայնիվ, ի՞նչ է աստված... Մարկն այլևս այդ հարցով չէիմանց մորը։ Երբ մեծահասակները խոստովանում են, որ իրենք որևէ բան չգիտեն, նշանակում է դա նրանց չի հետաքրքրում... Եվ Մարկը ինքնուրույն շարունակում էր իր հետազոտություններ։ Բազմաթիվ անգամ լսված աղոթքի խոսքերը. «Հայր մեր, որ երկնքումն ես» (այդպիսի ապրելավայրը ավելի զարգացած երեխաներին թվում էր արդեն այն

ժամանակներում կասկածելի, քանի որ երկնքին վիճակված էր նրանց համար դառնալ սպորտի նոր արենա), աստվածաշունչը, որը նա անտարբեր հետաքրքրությամբ թերթում էր, ինչպես ամեն տեսակի հին գրքերը, հարցերը, որոնք նա անփութորեն տալիս էր մեծահասակներին, և իսկույն լսած պատասխանները. «Աստված անտեսանելի էակ է։ Նա է ստեղծել աշխարհը...» Ահա՛ թե ինչ... Բայց դա մի տեսակ անհասկանալի՛ էր։ Աբենք, Մարկը իր մոր որդին էր. աստված նրա երևակայությունը չէր զբաղեցնում։ Մի տիրակալ ավել կամ պակաս— մի՞թե նույնը չէ...

Բայց Մարկին հետաքրքրում էր ուրիշ բան. սեփական գոյությունը, և այն, ինչ այդ գոյությանը սպառնում էր, և այն, ինչ նրա հետ կատարվելու էր հետո։ Հիմար խոսակցությունները, որոնք տեղի էին ունենում Սիլվիայի արհեստանոցում, բավական վազ գրավեցին նրա ուշադրությունը գեպի այդ հարցերը։ Աղչիկները սիրում էին նոսկալի պատմություններ, որոնցից մարդու մարմինը փշաքաղվում էր, և առանց դադարի պատմում էին ամեն տեսակի դժբախտ դեպքերի, հանկարծամահության, հիվանդությունների, թաղումների մասին... Մահը նրանց գրգռում էր։ Իսկ երեխայի մեջ այդ բառը առաջացնում էր բնազդական սարսափ, ամեն ինչ նրա մեջ ծառս էր լինում։ Ահա այդ մասին նա շատ էր ուղում հարցուփորձ անել մորը։ Բայց հոգով առողջ Աննետան երբեք չէր խոսում մահից և երբեք չէր մտածում նրա մասին։ Նա երբ ժամանակը չուներ։ Հարկավոր էր կերակրել իրեն և երեխային։ Եթե մարդու միտքը առավոտից մինչև իրիկուն զբաղված է այս աշխարհով, ապա անդրգերեզմանային աշխարհի մասին մտածելը պարապ զբաղմունք է, անմատչելի շռայլանք։ Միայն այն ժամանակ, երբ մեր սիրած մարդիկ մեզանից հեռանում են այն աշխարհը, այդ անհայտ աշխարհը մեր մտքերում զբաղեցնում է գլխավոր տեղը։ Իսկ Աննետայի տղան այստեղ էր, իր հետ։ Ճիշտ է, եթե Աննետան նրանից զրկվեր, և կյանքը, և մահը նույն ձևով կկորցնեին նրա համար ամեն մի արժեք։ Այդ կրքոտ բնավորությանը չէ՞ր կարող բավականություն պատճառել հենց

անպտուղ սովերների աշխարհը, աշխարհը առանց սիրելի մարմնի։

Մարկը տեսնում էր, որ մայրը ուժեղ է և համարձակ, միշտ զբաղված է և չի բաժանում որդու սարսափները, և Մարկը ամաչում էր նրա առաջ ցույց տալ իր թուլությունը։ Կնշանակի, ի՛նքը պետք է դրանից գլուխ հանի, իսկ դա այնքան էլ հեշտ չէր։ Բայց, ինքնըստինքյան հասկանալի է, փոքրիկ մարդուկը չէր զրաղվում բարդ, վերացական հարցերի լուծմամբ։ Նրա խոհերի ընթացքը այսպիսին էր. մահը— ուրիշ մարդկանց անհայտացումն է։ Էհ, թող անհայտանան, դա ինձ չի վերաբերում։ Բայց ես ի՞նքս— մի՞թե ես էլ կարող եմ անհայտանալ.

Ինչ-որ մի անգամ Սիլվիան Մարկի ներկայությամբ ասաց.

— Ինչ կարող ես անել, բոլորս էլ մեռնելու ենք...

Մարկը հարցրեց.

— Իսկ ե՞ս։

Սիլվիան ծիծաղեց։

— Դու դեռ քո առջևում շատ ժամանակ ունես։

— Ինչքա՞ն։

— Մինչև ծերանալդ։

Բայց Մարկը հիանալի գիտեր, որ թաղում են նաև երեխաներին։ Եվ հետո, եթե ծերանա, միևնույն է, նա նույն Մարկն է մնալու։ Մարկը ինքն էլ մի օր կմահանա... Դա սոսկալի՛ է։ Մի՞թե ոչ մի կերպ հնարավոր չէ փրկվել։ Չէ որ պետք է մի բան լինի, ինչից կարելի է կառչել,— ինչպես, ասենք պատին խփած այս մեխն է։ Գոնե մի ձեռք կլինի, որից կարելի է բռնել... «Չեմ ուզում անհետ կորչել...»։

Այդպիսի ձեռքի պահանջը, բնականորեն, կարող էր նաև նրան, ինչպես շատ շատերին, թերել դեպի աստծուն, դեպի օգնություն պարզած այն ձեռքը, որին սարսափն ու հուսահատությունը նկարում են մարդկանց համար։ Բայց մայրը, ըստ երևույթին, չէր փնտրում այդպիսի հենարան, և դա բնական էր, որպեսզի Մարկը նույնպես այդ միտքը մի կողմ նետեր։ Աննետայի նկատմամբ ունեցած իր քննադատական վերաբերմունքով հանդերձ, Մարկը ամբողջովին նրա ազդե-

ցուցյան տակ էր գտնվում։ Եթե Աննետան, չնայած այն բանին, ինչ սպասում էր նաև իրեն, կարող է հանգիստ մնալ, նշանակում է, Մարկը ևս իր պարտքն էր համարում պահել իրեն նույն ձևով աննկուն, ինչպես և մայրը։ Այդ ներվային, նուրբ, վախկոտավուն տղան այնուամենայնիվ զուր չէր Աննետայի տղան։ «Եթե նա իր կին տեղով չի վախենում, ուրեմն, ես առավել ևս չպետք է վախենամ»։

Բայց չմտածել այդ մասին, ինչպես չեն մտածում մեծահասակները,— ահա այդ մեկը նա չէ՞ր կարողանում։ Միտքը գալիս ու գնում է, և չի կարելի նրան խանգարել, հատկապես գիշերը, երբ չես քնում... է, ինչ կա որ, այն ժամանակ չպետք է վախենալ այն մասին մտածելուց, թե ինչ է կատարվում մարդու հետ, երբ նա մեռնում է...

Իհարկե, Մարկը դա ոչ մի կերպ չէր կարող իմանալ։ Նրան պահպանում էին մահվան հետ կապված ամեն տեսակի մռայլ տպավորություններից։ Մարկը մահը տեսնում էր միայն թանգարանի որոշ նկարներում։ Սոսկումից կարկամած, նա շոշափում էր իր մարմինը... չկանչով մի կերպ իմանալ, տեսնել։ Մի անզգույշ բառը նրա առաջ բացեց այն անդունդը, ուր նա տեսնում էր նայել։

Մի անգամ ամառ ժամանակ Մարկը պարապ ցցված էր լուսամուտի մոտ և զվարճանում էր ճանճ բռնելով ու նրանց թևերը պոկելով։ Նա նայում էր ու ծիծաղում, թե ինչպես են այդ անթև ճանճերը թափթփած տալիս իրենց ոտիկները։ Մարկը չէր կարծում, թե նրանց ցավ է պատճառում։ Նա դրա մեջ միայն զվարճանք էր տեսնում։ Ճանճերը նրա համար կենդանի խաղալիքներ էին, և նրանց չարդելը հասարակ բան էր... Այդ զբաղմունքի վրա մայրը նրան տեսավ և զայրույթով, որը երբեք չէր կարողանում զսպել, բռնեց ուսերից և սկսեց ցնցել, ասելով, որ Մարկը անպետք, գարշելի տղա է...

— Լա՞վ կլիներ, եթե քո ձեռքերն այդպես չարդեին։ Մի՞թե դու չես հասկանում, որ ճանճերը նույնպես ցավ են զգում, ինչպես դու։

Մարկը շինծու կերպով քթի տակ սկսեց ծիծաղել, բայց մոր խոսքերը նրան ապշեցրին։ Այդպիսի բան նրա մտքով չէր էլ անցնում։ Կնշանակի կենդանիներն զգում են նույնը, ինչ

որ նաև ինքը... Մարկը հակված չէր նրանց խղճալու, բայց այդ ժամանակից ի վեր նա ճանճերին նայում էր արդեն ուրիշ աչքով, ուշադիր, տագնապալից և թշնամաբար... Փողոցում ընկած ձի... Տրորած, վնգստացող շուն... Նա ագահությամբ զննում էր նրանց... իմանալու ցանկությունն այնքան ուժեղ էր, որ խլացնում էր գութը։

Քանի որ այդ փտած, գորշ, անարև և անսառնամանիք ձմեռվա ընթացքում տղան շատ էր նիհարել և հաճախակի թեթև, բայց նենդավոր մրսածություններ խմել էին նրա այտերի ամբողջ կարմրությունը, ապա Աննետան զատկի մոտերքը երկու շաբաթով գյուղացիներից մի սենյակ վարձեց Բիևրի հովտում։ Այդ սենյակում ընդամենը մի լայն մահճակալ կար, և նա Մարկի հետ միասին այդ մահճակալի վրա էր քնում։ Մարկին դա առանձնապես դուր չէր գալիս, բայց նրա կարծիքը չէին հարցնում։ Դրա փոխարին նա ամբողջ օրը, ի հաճույս իր, մենակ էր լինում։ Աննետան գործերով Փարիզ էր գնում և տղային ուշ դարձնելու պարտականությունը հանձնարարում էր տան տերերին, իսկ վերջիններս նրան բոլորովին չէին հետևում։ Մարկն առավոտից ծկում էր դաշար։ Նա ուշադիր զննում էր ամեն ինչ, փնտրելով և կենդանի էակների մեջ և անշունչ առարկաներում ինչ-որ մի բան, իրեն անծանոթ, բայց շատ մոտիկից իրեն վերաբերող, քանի որ ամեն ինչում, ինչ կատարվում էր բնության մեջ, նրան թվում էր, թե դրա և իր սեփական գոյության միջև ինչ-որ անտեսանելի մի կապ կա։ Մի անգամ, անտառում թափառելիս, հեռվից տղաների ձայն լսեց։ Սովորաբար նա չէր մասնակցում նրանց խաղերին, որովհետև ուզում էր պարագլուխ դառնալ, բայց դրա համար բավական ուժ չուներ։ Իսկ հիմա Մարկը նրանց մոտ գնալու ցանկություն զգաց։ Մոտ գնալով, նա տեսավ, որ հինգ թե վեց տղաներ կանգնած են մի խեղանդամված կատվի շուրջ։ Ինչ-որ մեկը կատվի մեջքը ջարդել էր, և տղաները զվարճանում էին նրանով, որ շուռ-շուռ էին տալիս կատվին, վայտով բզում էին, ամեն կերպ տանջում։ Մարկը, առանց մի րոպե իսկ մտածելու, նետվեց թոկից փախածների վրա, և բռունցքները գործի դրեց։ Անսպասելիությունից սթափվելով, տղաների բազմությունը գո-

ուժասպառությունով հարձակվեց Մարկի վրա, որ ծեծից Մարկին հաջողվեց փախչել, բայց փախավ ոչ շատ հեռու— կանգ առավ մի քանի քայլի վրա և թաքնվեց ծառի հետևում։ Նա կանգնել էր, ականջները փակած, իսկ հեռանալ չէր համարձակվում... Մի երկու րոպեից հետո նա ավելի մոտ գնաց։ Ջարտճինները նրան ձեռ առան։ Նրանք բղավում էին.

— Է՛յ, վախկո՛տ։ Ինչո՞ւ վախեցար։ Արի այստեղ նայենք, կատուն սնց է սատկում։

Նա մոտեցավ, չցանկանալով, որ իրեն թրջված հավի տեղ դնեն։ Մանավանդ որ ուզում էր նայել։ Կենդանին կիսով չափ հանված աչքով քնկած էր կողքի վրա։ Մարմնի հետին մասը, արդեն կաթվածահար, անշարժացած էր, իսկ կողը շընչառությունից դեռ ելնում և իջնում էր։ Կատուն փորձում էր գլուխը բարձրացնել և հուսահատ խռխռացնում էր։ Նա տանջվում էր, իսկ մահը չէր գալիս։ Տղաները ծիծաղից ծամածռվում էին։ Մարկը լուռ նայում էր, կարծես կարկամած։ Հանկարծ նա ճանկեց մի քար և սկսեց մոլեգնորեն խփել կենդանու գլխին։ Խռխռան առնոցը Մարկի ականջները ծակեցին։ Բայց նա խփում էր ավելի ու ավելի ուժեղ, կատաղածի նըման։ Ամեն ինչ վերջացած էր, իսկ նա դեռ խփում էր..

Տղաները շփոթված նայում էին նրան։ Մեկը փորձեց կատակել, բայց Մարկը, դեռ քարը սեղմած իր արյունոտ մատներով, կատաղած հայացքը կիսած հոնքերի տակից հառեց նրա վրա։ Նա մահվան պես գունատ էր, շրթունքները դողում էին։ Տղաները փախան։ Հեռվից Մարկի ականջին էր հասնում նրանց ծիծաղի ու երգի ձայնը։ Ատամները սեղմած, նա տուն գնաց։ Տանը ոչինչ չպատմեց։ Բայց գիշերը անկողնու մեջ հանկարծ ճչաց։ Աննետան նրան գրկեց։ Նրա նուրբ մարմինը ամբողջությամբ դողում էր...

— Դու սարսափելի երա՞զ տեսար։ Դե լա՛վ, լա՛վ, կամաց, հարազատս, մի՛ վախենա...

Իսկ Մարկը մտածում էր.

«Ես կատվին սպանեցի։ Հիմա ես գիտեմ, ինչ է նշանակում մահ»։

Հպարտության ինչ-որ սոսկալի զգացում... Նա հիմա գիտե, տեսավ, թե ինչպես իր ձեռքերով կյանք խլեց, ու նաև մի

ուրիշ զգացում, որ Մարկը չէր հասկանում,— ապրափի և հետաքրքրության խառնուրդ, այն անբացատրելին, որը սպանողին կապում է նրա զոհի հետ, արյունից կպչուն մատները՝ չնչխված գլխի հետ... Այդ ո՞ւմ արյունն է։ Դժբախտ կատուն դադարեց շնչելուց։ Իսկ Մարկը, կատվին սպանողը, դեռ տառապում էր նրա հոգեվարքի տանջանքներից...

Բարերախտաբար, այդ հասակում միտքը երկար ժամանակ համակված չի մնում միևնույն գաղափարով։ Մարկին տանջող միտքը վտանգավոր կդառնար, եթե նա կենտրոնանար այդ մտքի վրա։ Սակայն ուրիշ պատկերներ սրընթաց անցան նրա ուղեղի միջով և թարմացրին այն։ Այնուամենայնիվ այն միտքը մնում էր ինչ-որ տեղ խորքում և ժամանակ առ ժամանակ իրեն հիշեցնել էր տալիս մռայլ բընկումներով, որոնք հառնում էին գիտակցության մեջ, ինչպես առվի տիղմոտ հատակից մակերես բարձրացող օդի ծանր պղպջակներ։ Հոգու փափուկ կեզևի տակ թաքնված է պինդ միջուկը. միտքը մահվան մասին և ուժի, որը, ոչնչացնում է... Ինձ սպանում են, և ես նույնպես կարող եմ սպանել...' Բայց ես չեմ ուզում սպանե՛լ... Ապա տեսնենք, ո՞վ ում կհաղթի։ Ես պետք է կռվեմ...»։

Այդ հպարտությունը, այդ մութ փառամոլությունը ամրապնդում էին նրան, ինչպես պողպատյա պատվածք... Որտեղի՞ց էր այդ պողպատը նրա բնավորության մեջ, եթե ոչ մորից, որին Մարկը, այնուամենայնիվ, արհամարհում էր և՛ անզսպության համար, և՛ այն բանի, որ նրա սիրո հետ կարելի էր խաղալ։ Մարկը գիտեր, որ դա նրանից է։ Նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը Սիլվիային ավելի շատ էր սիրում, երկվհետև Սիլվիան նրան երես էր տալիս, նա բնազդով կռահում էր, որ Աննետան Սիլվիայից բարձր է, և, գուցե, փորձում էր ընդօրինակել մորը։ Բայց Մարկը կարևոր էր համարում պաշտպանվել նվաճողական նկրտումներից այն կնոջ, որը Մարկին չափից ավելի էր սիրում ու սպառնում իրենով լցնել նրա կյանքը։ Եվ Մարկը առաջվա պես տրամադրված էր մոր դեմ և նրան պահպանում էր տարածության վրա։ Նա մոր մեջ նույնպես թշնամու էր տեսնում։

Սիլվիան անհետացավ նրանց հորիզոնից։ Առաջին ամիսների զայրույթը անցավ, և նա արդեն թեթև խղճի խայթ էր զգում քրոջ մասին մտածելիս, որն, ըստ երևույթին, հիմա դժվարությամբ էր ապրում։ Նա սպասում էր, թե Աննետան օգնության կդիմի իրեն. Սիլվիան այդ օգնությունը չէր մերժի նրան, բայց ինքն առաջարկել չէր ուզում։ Սակայն Աննետան ավելի շուտ կթողներ կատր-կատր անեին իրեն, քան Սիլվիայից որևէ բան կխնդրեր։ Երկու քույրն էլ համառում էին։ Փողոցում իրար հանդիպելիս նրանք շտապում էին անցնել միմյանց կողքից ու գնալ։ Բայց մի անգամ փոքրիկ Օդետտային վարպետուհիներից մեկի հետ նկատելով փողոցում, Աննետան չկարողացավ զսպել քնքշանքի պոռթկումը. նա երեխային գրկեց և պինդ-պինդ համբուրեց։ Սիլվիան նույնպես Մարկին հանդիպելով, երբ տղան դպրոցից տուն էր գնում (Մարկը ձևացրեց, թե չի նկատում Սիլվիային), կանդնեցրեց նրան և ասաց.

— Այդ ինչ է, ինձ չե՞ս ճանաչում։

Եվ, կհավատա՞ք արդյոք, այդ պազանի ճուտը քարացած դեմքով միայն երկու բառ ասաց.

— Բարև, մորաքույր։

Մոր հարաբերությունները Սիլվիայի հետ խզվելուց հետո նա ինքնուրույն կերպով մի քանի եզրակացություններ արեց։ Եվ, արդարացի թե ոչ, կարևոր համարեց՝ բռնել մոր կողմը... «My country, right or wrong»[1]։

Զայրույթից քիչ մնաց Սիլվիայի շունչը կտրվեր։ Նա հարցըրեց.

— Հը, ո՞նց եք, լա՞վ եք։

Մարկը չոր պատասխանեց.

— Այո, լավ ենք։

Սիլվիան նայում էր, թե նա ինչպես է հեռանում, փքված ու լարվածությունից կարմրած։ Մարկը հագնված էր մաքուր և վայելուչ։ Փսլնքո՜տ։ «Լավ ենք...» Սիլվիան պատրաստ էր ապտա՜կ հասցնելու նրան։

Այն, որ Աննետան կարողացել էր առանց նրա օգնության

[1] Լավ թե վատ, բայց դա իմ հայրենիքն է (անգլ.)։

գլուխ հանել կարիքից, միայն սաստկացրեց Սիլվիայի վրդովմունքը։ Բայց նա ափիթը բաց չէր թողնում որևէ բան իմանալու քրոջ մասին և չէր հրաժարվել նրան զեկավարելու ցանկությունից։ Սթեն ոչ գործնականորեն, ապա զգնե մտովի։ Նրան հայտնի էր, թե Աննետան ինչ խիստ կյանք է վարում, և չէր հասկանում, թե նա ինչու է իրեն դատապարտել ինքնազրկման։ Սիլվան բավական լավ էր ճանաչում քրոջը և համոզված էր, որ նրա խառնվածքի կինը սահեցված չէ այդպիսի հոգնական ինքնասահմանափակման և անուրախ կյանքի համար։ Ինչպե՞ս կարելի է այդ աստիճան բռնանալ իր էության վրա։ Ո՞վ է նրան հարկադրում այդու կյանք վարել։ Ամուսին չգըտնըվեց, բայց չէ որ բազմաթիվ ընկերներ կգտնվեն, որոնք ուրախ կլինեն տանելի դարձնել նրա կյանքը։ Եթե Աննետան գիմեր այդ քայլին, Սիլվիան, գուցե, ավելի քիչ հարգեր նրան, բայց քույրը ավելի մոտ կլիներ իրեն։

Միայն Սիլվիան չէր, որ զարմանում էր։ Աննետան ինքն էլ Սիլվիայից ավելի չէր հասկանում, թե ինչն է իրեն հարկադրում մենակյացի կյանք վարել, որտեղի՞ց է այդ վայրի սարսափը, որ սոխպում է նրան խուսափել ոչ միայն ամեն մի հնարավորությունից, այլև մարդկային բնական ուրախություններին վերաբերող մտքից, որը նրան չի կարող արգելել ոչ մի կրոն, հասարակական բարոյականության ոչ մի օրենք։ (Սկզեցական բարոյականությանը նա չէր հավատում։ Եվ միթե ինքը իր գլխի տերը չէր)։

«Ինչի՞ց եմ վախենում»։

«Ինքս ինձնից...»։

Բնազդը չէր խաբում Աննետային։ Տենչերով, ցանկություններով, կույր հնշտասիրությամբ փոթորկվող այդպիսի կնոջ համար գոյություն չունի անհնդ վայելք, առանց հետևանքների խաղ. ամենաչնչին մղումը նրան կարող է զոհ դարձնել այն ուժերին, որոնց նա արդեն չի կարող տերապետել։ Աննետան հասկանում էր, թե մի ժամանակ ինչ բարոյական ցնցում առաջացրին իր մեջ սիրո հետ ունեցած կարճատև ընդհարումները։ Իսկ հիմա նրան ավելի մեծ վտանգ էր սպառնում։ Հիմա նա չէր կարող դիմանալ։ Բավական է նա իրեն ազատություն տա, կիրքը իսկույն կհամակի նրան ամբողջապես, տեղ չթողնելով հավատին, որը նրան այնքան պետք էր... Ինչ հավա՞տ

Հավատ իր նկատմամբ։ Ոչ թե հպարտություն, ոչ, այլ հավատ դեպի այն անըմբռնելին, այն առտվածայինը, ինչ դրված է հոգու մեջ և ինչը նա ուզում էր առանց արատավորելու փոխանցել որդուն։ Աննետան հասկանում էր, որ իր նման կինը, եթե նրա համար բացառված է ամուսնական կյանքը իր խիստ օրինավորությամբ, պետք է ընտրի երկուսից մեկը. կամ լիակատար բարոյական ինքնազսպումը, կամ լիակատար ենթարկություն իր զգայական բնազդներին։ Ամեն ինչ կամ ոչինչ... Ուրեմն, այդ դեպքում ո՞չինչ։

Սակայն, հակառակ այդ հպարտ վճռականությանը, ահա արդեն մի քանի ամիս էր, ինչ Աննետային համակել էին չար, կոկորդը խեղդող թախծի նոպաները, երբ նա ասում էր իրեն.

«Ջուր տեղը կյանքը կորչո՞ւմ է»։

Նորից Աննետայի հորիզոնում հայտնվեց Մարսել Ֆրանկը։ Պատահականությունը նրան հանդիպեցրեց Աննետային։ Մարսելը նրա մասին վաղուց արդեն չէր մտածում, բայց նաև չէր մոռացել նրան։ Այդ ժամանակի ընթացքում Մարսելը քիչ սիրային արկածներ չէր ունեցել։ Դրանք խոր հետք չէին թողել նրա զիջող սրտում,— թողել էին միայն մանր կնճռաներ՝ խորամանկ աչքերի շուրջը, ինչպես ճանկերի հետքեր, և որոշ հոգնածություն ու բարեհոգի արհամարհանք այդ հեշտ հաղթանակների և իր՝ հաղթանակողի նկատմամբ։ Հենց որ նա նորից տեսավ Աննետային, զգաց այն, իրեն նախկին հանդիպումներից ծանոթ, հոգևական-թարմության և վճռականության տպավորությունը, որը տարօրինակ կերպով այդ հղփացած սկեպտիկին քաշում էր դեպի Աննետան։ Մարսելը ուշադիր ուսումնասիրում էր նրա դեմքը. այո, ըստ երևույթին, Աննետայի համար նույնպես այդ տարինները զուր չէին անցել։ Նրա աչքերի խորքում առկայծում էր ինչ-որ թաքցրած մի բան, հոգեկան ցնցումների հետքը։ Բայց Աննետան այժմ թվում էր ավելի խաղաղ և վստահ իր վրա։ Եվ Ֆրանկը նորից ափսոսաց, որ այդ հիանալի և առողջ հոգով ընկերուհին արդեն երկու անգամ դուրս է պրծել իր ձեռքից։ Ասենք, դեռ ուշ չէ։ Երբեք, թվում էր, նա և Աննետան այնքան մոտ չէին եղել ընդհանուր լեզու գտնելու հնարավորության։

Ոչ մի բանի մասին Աննետային չհարցնելով, Մարսելը կարողացավ ամեն ինչ իմանալ նրա զբաղմունքի և նյութական վիճակի մասին։ Շուտով Ֆրանկը նրան առաջարկեց բավական լավ վարձատրվող մի աշխատանք. պետք է մի մանկավոր գրադարանի կատալոգի համար քարտարան կազմել, գրադարան, որը նրան հանձնարարված էր կարգի բերել։ Այդպիսով, Մարսելը բնական առիթ գտավ՝ շաբաթը մի քանի ժամ Աննետայի հետ անցկացնելու համար։ Նրանք գտել էին միաժամանակ և աշխատելու, և զրուցելու հնարը։ Նրանց միջև շուտ վերականգնվեց նախկին բարեկամական մտերմությունը։

Մարսելը երբեք Աննետային չէր հարցնում, թե նա ինչպես է ապրել բոլոր այդ տարիներին։ Նա պատմում էր իր մասին, և դա լավագույն միջոցն էր Աննետային խոստովանության տրամադրելու, նրա մտքերն իմանալու համար։ Զրույցների անսպառ թեման Ֆրանկի սիրային արկածներն էին։ Այդ հիշողությունները Մարսելին բավականություն էին պատճառում, և նա հաճույքով էր դրանք բաժանում Աննետայի հետ, իսկ Աննետան լսում էր, զվարճանում, երբեմն էլ թեթևակի կշտամբում նրան։ Մարսելն առաջինն էր ինքն իր վրա ծիծաղում, ինչպես ծիծաղում էր աշխարհում ամեն ինչի վրա։ Ծիծաղում էր նաև Աննետան, լսելով նրա անհամեստ խոստովանությունները,— դրանում, ինչպես և ամեն բանի մեջ, ինչը չէր վերաբերվում իրեն՝ Աննետային, երևան էր գալիս նրա ազատամտությունը։ Իսկ Մարսելը այլ կերպ էր հասկանում նրան։ Մարսելին դուր էին գալիս Աննետայի ուրախ, աշխույժ միտքը և ներողամտությունը։ Նա Աննետայի մեջ բարոյականության հարցերում հետք անգամ չէր գտնում նախկին խստաբարոյությունից, երիտասարդ աղջկա անհանդուրժողականությունից, որի աշխարհայացքը սահմանափակված է նրա առաքինությամբ։ Այն ժամանակ, երբ Ֆրանկն ու Աննետան մրցում էին իրոնիկ դատողություններով, Ֆրանկը մտածում էր. «Որքա՜ն հրաշալի կլիներ մարդ մեկընդմիշտ իրեն կապեր այդ խելացի ընկերոջը, կիսել նրա հետ այն ամենը, ինչ դեռ տեղի է ունենալու կյանքում... Ինչ ձևո՞վ։ Հենց ինչպես իրեն Աննետային հար-

մա՞ր կլինի։ Սիրուհի, կին—թող ի՞նքը որոշի»։ Մարսելը առանց նախապաշարումների մարդ էր։ Նա նշանակություն չէր տալիս այն բանին, որ Աննետան «ապօրինի» երեխա է ծնել։ Նույն ձևով քիչ էր հետաքրքրում նրան, թե Աննետան դրանից հետո որևէ ոտման ունեցել է թե չէ։ Աննետայի ինտիմ կյանքը Մարսելի մեջ հետաքրքրություն չէր առաջացնում—ամեն մարդ կարող է իր գաղտնիքներն ունենալ, ամեն մարդ որոշակի ազատության իրավո՞ւնք ունի։ Նրան Աննետայից միայն մի բան էր պետք. որպեսզի իրենց համատեղ կյանքում Աննետան միշտ ուրախ լինի և խելամիտ, լինի իր բարի ընկերը, կիսի հետաքրքրություններն ու հաճույքները (իսկ հաճույքների տակ նա հասկանում էր ամեն ինչ. մտավոր կյանքը, սերը և մյուս բոլորը)։

Մարսելն այնքան շատ էր այդ մասին մտածում, որ, վերջապես, Աննետայի առաջ բացեց իր մտքերը։ Դա տեղի ունեցավ մի անգամ երեկոյան գրադարանում, երբ նրանք աշխատանքը վերջացնում էին և մայր մտնող արևը հին այգու ծառերի միջից ոսկեզօծում էր գրքերի շագանակագույն կազմերը։ Աննետան շատ զարմացավ։ Ինչպես թե, նա դարձյա՞լ նույն բանին է անդրադառնում։ Մի՞թե դա արդեն վերջացած չէ։ Աննետան ասաց.

— Բարեկամս, դա շա՞տ հաճելի բան է ձեր կողմից։ Բայց կարիք չկա այլևս այդ մասին մտածելու։

— Ո՛չ, կարիք կա,— առարկեց Մարսելը։— Իսկ փաստորեն ինչո՞ւ չմտածել։

«Եվ իսկապես, ինչո՞ւ,— մտածեց Աննետան։— Ինձ համար այնքան է հաճելի նրա հետ շաղակրատել, հանդիպումներ ունենալ հետը... Ո՛չ, ո՛չ, դա անհնարի՞ն է։ Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող...»։

Մարսելը նստած է ուղիղ նրա դիմաց, սեղանի մյուս կողմին, և նրա շիկահեր փոքրիկ մորուքը լուսավորված է արևով։ Սեղանի վրայից մեկնվելով, նա բռնում է Աննետայի ձեռքերը և ասում.

— Դե լավ, հինգ րոպե մտածեք, եղա՞վ։ Ես ուրիշ ոչինչ այլևս ձեզ չեմ ասի... Մենք իրար ճանաչում ենք... քանի տարի արդեն։ Տասներկո՞ւ, թե՞ տասնհինգ։ Ուրեմն, ես ոչինչ

բացատրելու կարիք չունեմ։ Այն ամենը, ինչ ես կարող էի ասել, ձեզ առանց այդ էլ հասկանալի է։

Աննետան չի փորձում ձեռքերը ետ քաշել, նա ժպտում է և նայում Մարսելին։ Նրա վճիտ հայացքը սևեռված է Մարսելի վրա, բայց Մարսելին չի հաջողվում բռնել այդ հայացքը, որովհետև նա արդեն ինչ-որ տեղ հեռվում է։ Աննետան հիմա նայում է իր ներսը։ Նա խորհում է.

«Ինչո՞ւ այդ մասին միտք չունի մտածել... Ամեն ինչի մասին պետք է մտածել։ Դա ինչո՞ւ է անհնար։ Նա ինձ համար զզվելի չէ... Գեղեցիկ է, համայիչ, բավական բարի է, խելացի, և հաճելի մարդ է... Ինչքա՜ն հեշտ կարող էի ապրել... Բայց չէ որ ես չեմ կարող ապրել, ինչպես նա, ապրել նրա հետ... Նա մարդկանց դուր է գալիս, նրան նույնպես ամեն ինչ աշխարհում դուր է գալիս, բայց նա ոչինչ չի հարգում. ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց, ո՛չ Աննետային...» (Աննետան հիմա մտածում էր իր մասին, որպես ինչ-որ կողմնակի մարդու)։ Իհարկե, Մարսելը չի զլանա ուշադրության նուրբ նշաններ ու բարձրաշխարհիկ հարգանք ցույց տալ, և գուցե, դա հենց ապացուցում է իմ նկատմամբ ունեցած նրա բարեհաճությունը... Բայց ի՞նչն է, որ այդ հաճելի սկեպտիկը լուրջ է ընդունում։ Նա բոլորովին չի հավատում մարդուն և հաճույք է ստանում իր անհավատությունից։ Նա հանցակցի ներողամիտ հետաքրքրությամբ մարդկային թուլություններն է հաշվում։ Ես կարծում եմ, որ նա կհիասթափվեր, եթե մի գեղեցիկ օր համոզվեր, որ մարդուն հարգելու շատ պատճառներ կան... Հիանալի տղա է։ Այո, կյանքը նրա հետ հեշտ կլիներ, այնքան հեշտ, որ ինձ համար իմաստը կկորցներ...»։

Դրանից հետո Աննետային խոսքերը չեն բավարարում՝ մտքերն արտահայտելու համար։ Բայց մտքերը հոսում են, թեև չեն տեղավորվում բառերի մեջ, և վճիռը դառնում է հաստատուն։

Մարսելը բաց թողեց նրա ձեռքերը։ Նա զգում է, որ տարվեց։ Տեղից կանգնելով, նա գնում է դեպի լուսամուտը և, հենվելով շրջանակին, փիլիսոփայական հանդարտությամբ ծխախոտ է վառում։ Նա կանգնել է Աննետայի հետևում և գննում է նրան։ Իսկ Աննետան նստել է անշարժ, պարզած

ձեռքերը սեղանից չվերցնելով, կարծես Մարսելը դեռ նրա առջևում է։ Մարսելը տեսնում է նրա գեղեցիկ շիկահեր ծոծրակը, կլոր ուսերը... Ամեն ինչ կորած է... Եվ ո՞ւմ համար, ինչի՞ համար է նա իրեն պահպանում։ Որևէ մի նոր հիմարությա՞ն համար, ինչպիսին Բրիսսոյի հետ տեղի ունեցած պատմությունն էր... Ոչ, նա գիտե, որ Աննետայի սիրտը ըզբաղված չէ... Ուրեմն, բանն ինչո՞ւմն է։ Հո Աննետան քարից չէ։ Չէ՞ որ նա սիրելու և սիրվելու պահանջ է զգում։

Բայց Աննետայի մեջ ամենուժեղ պահանջը հավատալու պահանջն է... Հավատալ այն բանին, ինչ անում ես, ինչ ֆնտրում ես կամ ինչի մասին երազում ես։ Չնայած բոլոր հիասթափություններին, հավատ ունենալ իր և կյանքի նկատմամբ... իսկ Մարսելը սպանում է հարգանքը ամեն ինչի հանդեպ։ Աննետայի համար ավելի հեշտ կլիներ կորցնել մարդկանց հարգանքը, քան իր հավատը դեպի կյանքը։ Չէ՞ որ հենց այդ հավատից էլ նա ուժ էր առնում։ Իսկ առանց գործուն ուժի Աննետան ոչինչ է։ Պասսիվ երջանկությունը նրա համար մահ է։ Ամենաէական տարբերությունը մարդկանց միջև այն է, որ կյանքում ոմանք ակտիվ են, ոմանք՝ պասսիվ։ Իսկ պասսիվության բոլոր տեսակներից ամենասարսափելին Աննետայի աչքում մտքի պասսիվությունն էր, որը, Մարսել Ֆրանկի մտքի նման երանությամբ հանգչում էր անհավատության մեջ և, նույնիսկ չհանգստացնելով իրեն կասկածներով, հաճույքով տրվում է դեպի ոչինչ տանող անտարբերությանը... «Չէ՞ որ դա ինքնասպանությո՞ւն է...— մտածում է Աննետան։— Ոչ, ես համաձայն չեմ... Ի՞նչ է ինձ սպասում առջևում։ Գուցե, ես չճաշակեմ ոչ երջանկություն, ոչ լիակատար գոհունակություն։ Գուցե, իմ կյանքը անհաջող լինի։ Բայց հաջող է թե ոչ, նրա մեջ թափ կա, ձգտում կա՝ դեպի նպատակ գնացող... Անհայտ նպատակ գնացող։ Խաբուսի՛կ, գուցե։ Էհ ի՞նչ կա որ։ Զգտումը հո պատրանք չէ։ Եվ թող ես ընկնեմ ճանապարհին— միա՛յն թե ընկնեմ իմ ճանապարհին...»։

Աննետան հանկարծ նկատեց, որ իրենք երկուսով էլ վա-

զուց արդեն լուռ են և որ Ֆրանկը իր տեղում չէ։ Նա շրջվեց և, Ֆրանկին տեսնելով, ժպիտը երեսին, տեղից վեր կացավ։

— Ներեցե՛ք ինձ, Մարսել, սիրելիս։ Եվ Թող ամե՛ն ինչ մնա այնպես, ինչպես կա։ Բարեկամ լինել միմյանց— դա այնքա՞ն է լավ։

— Իսկ ուրիշ ձևով ավելի լավ չէ՞։

Աննետան գլուխն օրորեց. ոչ։

— Այդ-պես...— ծոր տվեց Մարսելը։— Ահա և ես երրորդ անգամ քննությունից կտրվեցի։

Աննետան քրքջաց և, մոտենալով նրան, չարաճճիորեն ասաց.

— Ուզո՞ւմ եք ստանալ գոնե այն, ինչ ես ձեզ մերժեցի երկրորդ քննության ժամանակ։

Եվ, ձեռքերը փաթաթելով Մարսելի վզին, Աննետան համբուրում է նրան... Սա քնքուշ է, այս համբույրը... Բայց սըխալվել չի կարելի. սա միայն ընկերական է...

Եվ Մարսելը չի խաբում իրեն։ Նա ասում է.

— Էհ, ի՞նչ արած, դեռ հույս կա, որ մի քսան տարուց հետո ես ստանամ այն, ինչ ինձ մերժվեց երրորդ քննությանը։

— Ոչ,— ծիծաղով առարկեց Աննետան։— Կա վերջնակետա՛յն հասակ։ Ամուսնացե՛ք, սիրելիս։ Ձեզ մնում է միայն ընտրել. բոլոր կանայք դրան են սպասում։

— Միայն թե ո՞չ դուք։

— Ես կմնամ հին ամուրի։

— Ա՛յ կտեսնեք, ճակատագիրը ձեզ կպատժի, և դուք կամուսնանաք, երբ արդեն հիսուն տարեկանին հասնեք։

«Ծղրա՛յր, պետք է մեռնել...»։ Իսկ մինչև այդ...

— Իսկ մինչև այդ կապրեք որպես միանձնուհի՞...

— Գիտեք, այդպիսի կյանքն էլ իր հրաշալիքներն ունի...

Աննետայի խոսքերը իր ճգնավորական կյանքի հրաշալիքների մասին բացարձակ պարծենկոտություն էին։ Ամենևին էլ դա լավ կյանք չէր, և Աննետան հաճախ էր զգում այդ կյանքի նեղվածքը։ Նման կարգի միանձնուհու համար քիչ էր մի մենաստան կառավարելը և մի աստծո պաշտելը։

Աննետայի մենաստանը սահմանափակված էր վեցերորդ հարկում գտնվող փոքրիկ բնակարանի պատերով, նրա միակ աստվածը երեխան էր։ Դա այնքան քի՞չ էր և միևնույն ժամանակ այնքա՞ն չափից դուրս մեծ։ Աննետային դա չէր բավարարում, բայց նա պակասը լրացնում էր երազանքներով։ Այդ բարիքից նա ինչքան ասես ուներ։ Աննետային ամենօրյա կյանքը թվում էր պուրիտանական և աղքատ, բայց նա դա փոխհատուցում էր իր երևակայական կյանքով։ Այդտեղ, խաղաղության մեջ, որ ոչնչով չէր խանգարում, շարունակվում էր հավիտենական «հմայվածությունը»։

Սակայն ինչպե՞ս դրա հետևից թափանցել մարդկային հոգու գաղտնարանները։ Երազանքը հո բառերից չի՞ հյուսված։ Իսկ որպեսզի ուրիշները քեզ հասկանան, որպեսզի դու ինքդ հասկանաս քեզ, պետք է օգտվել բառերից, այդ ծանր և կպչուն մասսայից, որն իսկույն ևեթ չորանո՞ւմ է մատների վրա։ Աննետան նույնպես, որպեսզի հասկանա այն, ինչ տեղի էր ունենում իր մեջ, երբեմն հարկադրված էր լինում կամացուկ վերապատմել իրեն խոսքերով իր երազանքները։ Այդպիսի վերապատմությունները ստույգ չեն, դրանց նույնիսկ չի կարելի վերափոխություն անվանել. դրանք նենգափոխում են երազանքը, բայց ոչ մի կերպ չեն պատկերում այն։ Ուղեղը, ընդունակ չլինելով հասնել հոգուն նրա թռիչքի ժամանակ, հեքիաթներ է հորինում, և այդ հեքիաթները զբաղեցնում են նրան, սակայն դրանք խաբուսիկ պատկերացում են տալիս այդ մեծ ֆեերիայի կամ ներքին դրամայի մասին...

Անծայրածիր ջրային տարածություն, եզրեզր ողողված հովիտ, հրի, ջրի, ամպերի անափ գետեր։ Այստեղ դեռ խառնված են բոլոր տարերքները, և հազարավոր հոսանքներ են խճճված, ինչպես մազեր, բայց միասնական ուժը հյուսում և քանդում է լույսի ցոլքերով ողողված նրանց երկար ու սև մազափնջերը։ Այդպիսին է մարդկային ոգու անզսպելի ուժը, և լռակյաց հովիվը, ծանկությունը, աշխարհների տիրակալը, քշում է նրա երազանքների նախիրը Հույսի մշուշապատ արոտավայրերը։ Իսկ ձգման անհաղթահարելի ուժը մերթ զոհիթափ, մերթ դավաճանորեն աննկատելի լանջով քաշում է նրանց դեպի ներքև, և ագահ անհունը կլանում է նրանց։

Աննետան իր մեջ զգում է համայված գետի հոսքը, փաթաթում և ետ է տալիս նրա ոլոր-մոլոր կոհակների հյուսվածքները, տրվում է այդ հոսանքին, խաղում է նրանց ուժի հետ, որն իրեն տանում է... իսկ երբ հանկարծ արթնացած բանականությունը փորձում է ուղղություն տալ այդ խաղին, ապա Աննետան, կտրված իր երազից, արդեն փնտրում է ուրիշը, որ սուզվի նրա մեջ։ Եվ ահա նա իմաստուն կերպով ստեղծում է այդ երազը հիշողության մեջ տպավորված իր կյանքի ակնթարթներից, անցյալի կերպարներից, արդեն ապրած սիրուց, կամ այն սիրուց, որը, գուցե, գեռ նոր է վիճակված ապրելու... Եվ Աննետան կարծես հավատում է, թե մեծ երազանքը շարունակվում է։ Բայց միևնույն ժամանակ գիտե, որ այդ Երազանքը թռել է։ Դա նրան չի հուզում։ Ինչպես ավետարանական փեսացուն, երազանքը կվերադառնա այն ժամին, երբ նրան չեն սպասում։

Ինչքա՜ն կանացի հոգիներ կան, որոնք Աննետայի հոգու նման դրսևորում են իրենց թաքնված ուժերը և ձգտումները լոկ այդ երազանքների ներքին կյանքի մեջ։ Նա, ով կարողանա կարդալ նրանց խորքը, այնտեղ կհայտնաբերի մութ կրքեր, հիացմունք, անդունդի տեխիլքներ։ Միևչդեռ առօրյայի խաղաղ ընթացքի մեջ այդ կանայք, որոնք զործերով զբաղված սառը, բանական, իրենց տիրապետող և առաքինի քաղքենիներ են, ներքին ռեակցիայի շնորհիվ (երբեմն չափից ավելի խիստ, ինչպես Աննետայինը), նույնիսկ պարծենում են իրենց աշակերտների կամ երեխաների առաջ սառը բանականությամբ և դեպի բարոյախոսությունն ունեցած իրենց հակումով։

Սակայն Աննետայի որդին թույլ չի տա, որ իրեն հիմարի տեղ դնեն։ Ոչ, այդ տղային նա չի՛ կարող խաբել։ Մարկը սրատես աչքեր ունի։ Նա կարողանում է կարդալ այն, ինչ բառերի տակ է թաքնված։ Նա նույնպես սիրում է երազել։ Ամեն օր լինում են ժամեր, երբ նա իրեն թագավոր է զգում։ Նա բնակարանում մենակ է, մենակ իր երազանքների հետ։ Աննետան,— ինչպես միշտ, անզգույշ,— թեթևամտորեն երեխայի տրամադրության տակ է թողնում հոր զրադարանից պահպանված և իր սեփական զրքերի կույտը։ Այդտեղ ուզա-

ծըղ ամեն ինչը կա։ Ահա արդեն մի քանի տարի է, ինչ Անետան գրադարակների վրա հարձակում գործելու ժամանակ չունի։ Դրանով զբաղվում է նրա փոքրիկ որդին։ Ամեն օր լիցեյից վերադառնալուց հետո, երբ մայրը տանը չի լինում, Մարկը դուրս է գալիս որսի։ Նա կարդում է անկանոն, ինչ ընկնի ձեռքը։ Մարկը շուտ սովորեց արագ կարդալ, շատ արագ, և քառատրոփ սլանում է էջերի միջով որսի հետևից։ Այդ ընթերցանությունը խիստ խանգարում է նրա դպրոցական պարապմունքներին, և նա ցրված, վատ աշակերտ է համարվում,— երբեք դասերը չգիտի և անփույթ է վերաբերվում իր պարտականություններին։ Ուսուցիչը շատ կզարմանար, եթե պատանի որսագողը նրան պատմեր, թե իր աչքերը բ՛նչ են գտել որսի ժամանակ անձեռնմխելի անտառներում։ Գրադարակներում նրա ձեռքն են ընկնում նաև «կլասիկներ», բայց այստեղ նրանք բոլորովին ուրիշ բուրմունք ունեն, քան դպրոցում։ Այն ամենը, ինչ Մարկն այդպիսով հավաքում է ազատության մեջ իր համար նոր աշխարհում, հրաշալի արգելված պտղի համ ունի։ Այդտեղ առայժմ ոչինչ չկա, ինչը կարող էր կեղտոտել նրա երևակայությունը կամ նույնիսկ կոպտորեն լուսավորել նրան սրոշ բանների վերաբերյալ։ Վտանգավոր տեղերում տղայի աչքերը բոցավառվում են, բայց վազում են առաջ, չնկատելով թակարդի մեջ այն խայծը, որը գրգռում է մարմնական բնազդները։ Նա անհոգրեն երջանիկ է, կյանքի տաք շունչը կպչում է նրա երեսին, և գրքերի այդ անտառում նրա քթանցքները հետաքրքրաշարժ վտանգի, հավիտենական պայքարի՝ սիրո... հոտ են առնում։

Սիրո... Բայց տասը տարեկան երեխայի համար սերն ի՞նչ է։ Ամբողջ այն երջանկությունը, որը դեռ չկա, բայց որը կլինի, և նա կվերցնի այդ... Իսկ ինչպիսի՞ն կլինի այդ երջանկությունը։ Իր տեսածի և կարդացածի բեկորներից տղան փորձում է ստեղծել այդ երջանկությունը իր երևակայության մեջ։ Նա ոչինչ չի տեսնում—և տեսնում է ամեն ինչ։ Նա ուզում է ամեն ինչ։ Ամեն ինչ ունենալ։ Ամեն ինչ սիրել։ (Լինել սիրված—ահա թե ինչն է նրա համար սիրո իսկական իմաստը. «Ես սիրում եմ ինձ, ես ինձ պետք է սիրեն... Բայց ո՞վ...»)։ Այն, ինչ նա պահպանում է իր հիշողության մեջ,

բոլորովին չի օգնում նրան։ Այդ բոլորը չափազանց մոտ է և դրա պատճառով պարզ չի երևում։ Նրա հասակում անցյալ դեռ գոյություն չունի կամ այդ անցյալը այնքա՞ն աննշանակալից է։ Նրա համար գոյություն ունի միայն ներկա—թեմա՝ հազար վարիացիաներով...

Ներկա՞։ Տղան աչքերը բարձրացնում է և տեսնում մորը։ Կլոր սեղանի մոտ, նավթի լամպի տաք լույսի ներքո, նրանք երկուսով նստած են։ Երեկոյան, ճաշից հետո, Մարկը սովորում է (ենթադրվում է, որ սովորում է) վաղվա դասերը, Աննետան նորոգում է իր շորը։ Ոչ Մարկը, ոչ նա չեն մտածում այն մասին, թե ինչ են անում։ Նրանք տրվում են երևակայության սովորական աշխատանքին, երևակայություն, որ միշտ պատրաստ է իրենց ծառայելու։ Երազանքները հոսում են, և Աննետային հոսանքը տանում է։ Իսկ տղան նայում է անուրջներով տարված մորը... Նրան դիտելը հետաքրքիր է, շատ ավելի հետաքրքիր, քան դաս սովորելը...

Թվում էր, թե Մարկը չի տեսել այն, ինչ այս բոլոր տարիներին տեղի է ունեցել նրա շուրջը, և չգիտք է հասկանար մոր ապրումները։ Մինչդեռ նրա աչքից ոչինչ չէր վրիպում։ Ժուլիենի սերը դեպի Աննետան, Աննետայի սերը դեպի Ժուլիենը—այդ բոլորը Մարկը աղոտ կերպով կռահում էր։ Եվ, անդիտակցաբար մորը խանդելով, ուրախանում էր նրա սիրո անհաջող ավարտի համար, ինչպես տանջանքների այան շուրջը պարող փոքրիկ մարդակերը։ Մայրը մնաց իրենն։ Դա նրա սեփականությո՞ւնն է։ Կնշանակի, Մարկը նրան թա՞նկ էր գնահատում։ Այո, այն օրվանից, երբ մի ուրիշը ուզում էր նրան խլել իրենից։ Մարկը զննում էր Աննետային—նրա աչքերը, շուրթերը, ձեռքերը։ Նա բավականություն էր ստանում ամեն մի գծից, յուրաքանչյուր մանրամասի մեջ ամբողջ մի աշխարհ տեսնելու երեխաներին բնորոշ ընդունակությամբ... Եվ միշտ չէ, որ երեխաները սխալվում են... Թարթիչների ստվերը, բերանի կորագիծը նրա համար հոգին կախարդող խորհրդավոր, անընդգրկելի բնապատկեր էին։ Մարկի հայացքը մեղվի նման ճախրում էր Աննետայի կիսաբաց բերանի վրա, ներս թռչում այդ ալ դռնից, նորից դուրս պրիս... Տարված իր հետազոտությամբ, Մարկը մոռանում էր նրան, ում ուսումնասիրում էր... Նրան համակում էր

երանելի մի թմրություն... Սթափվելով դրանից, նա մտաբերում էր (բո՛ւռ) վաղվա դասերը, որևէ տհաճ ընկերոջ, վատ թվանշան, որը մորից թաքցնում էր... Իսկ հետո կրկին նրան կախարդում էր կիսախավարում վառվող լամպի լույսը, աղմկող Փարիզի մեջ գտնվող իրենց սենյակի լռությունը,— և դա մի զգացում էր, որ կարծես ինքը ինչ-որ կղզում է կամ մակույկով լողում է ծովում՝ ափ հասնելու քաղցր սպասումով և սպասումով այն բանի, թե ինչ կգտնի այնտեղ, ի՛նչ կտանի այնտեղից իր մակույկով: Այդ մակույկի մեջ, որը բեռնավորված էր իր հույսերի գանձերով և այն ամենով, ին, նա կնվաճի կյանքից, փոքրիկ վիկինգը նստեցնում էր նաև կեռ հոնքերով և գեղեցիկ շեկ մազերով իր մորը... Ինչպե՞ս էր Աննետան հանկարծ Մարկի համար գառնում սիրելու Սիրահարվածի խանդավառությունը Մարկի մեջ միանում էր աստվածային մանկական անմեղության հետ... Գիշերները նա չէր քնում, ականջ դնելով մոր շնչառությանը... Եվ խորհրդավոր կյանքը հուզում, կլանում էր նրան...

Այդպես անց՚նում են նրանք երկուսով: Բայց Աննետան արդեն բաց ծովում է և ընտելացած է տևական նավարկություններին, իսկ Մարկը հենց նոր ափից հեռացավ, և ամեն ինչ նրա համար նորություն է: Եվ հենց այն պատճառով, որ ամեն ինչ տղայի համար նորություն է, նա զննում է ավելի սևեռուն և հաճախ ավելի հեռուն է տեսնում, քան մայրը: Մարկը երբեմն զարմանալի լուրջ պահեր է ունենում: Ճիշտ է, դրանք երկար չեն տևում: Ինչպես կենդանիներինը, նրա լարված, ուշադիր հայացքը սկսում է թափառել. նա արդեն ոչ ոքի չի տեսնում: Բայց այն րոպեներին, երբ կենտրոնացնում է ուշադրության և սիրո ամբողջ անսպառ ուժը մոր՝ իր միակ ընկերուհու վրա, որն իր հետ միասին փակված է այս տոթ անդորրում, նա ամբողջովին ներծծվում է Աննետայի հոգու բուրմունքով, առանց հասկանալու, կռահում է նրա ամենափոքր թրթիռը, և լինում է լուսավորման մի պահ, երբ կպչում է նրա գաղտնիքներին:

Նա շուտով կկորցնի Աննետայի սրտի բանալին: Կկորչի հետաքրքրությունը, իսկ դրա հետ նաև տեսնելու ունակությունը: Երեխայի հոգում կռվում էին լույսն ու ստվերը.

լույսը՝ ներսից, ստվերը՝ դրսից։ Երբ մարմինը զարգանում է, ստվերը աճում է նրա հետ միասին և ծածկում է լույսը։ Մարդը ձգտում է դեպի վեր—և շրջվում է արևից։ Նա ամենից շատ երեխա է թվում այն ժամանակ, երբ նրա մեջ երեխայությունը ամենից քիչ է։ Երբ նա մեծանում է, նրա ներքին տհասողությունը դառնում է տահճանափակ։ Հիմա Մարկը, ամենաչնչին չափով իսկ չկասկածելով դեռ ախրապետում էր պայծառատեսության կախարդական ընակությանը։ Երբեք մայրն այնքան մոտ չէր եղել նրան, որքան կյանքի այդ շրջանում։ Եվ պետք է շատ տարիներ անցներ, որպեսզի Մարկը նորից զգար մոր հանդեպ նույնպիսի մտերմություն։

Բայց հիմա մոր նկատմամբ ունեցած հակումը հաղթեց նրա անվստահությունը։ Մարկն այլևս չէր ընդդիմանում քնքշության պոռթկումներին, որոնք ստիպում էին նրան հանկարծ փաթաթվել մոր վզին, դեմքով սեղմվել նրա կրծքին։ Իսկ Աննետան համարյա արդեն դրա հույսը կորցրել էր...

Անցավ մի քանի ամիս, արբեցուցիչ, ինչպես երիտասարդ ու երջանիկ սերը։ Մոր և որդու մտերմության մեղրամիսը։ Սերն այդ, մարմնական, ինչպես ամեն մի սեր, անմեղ էր և աստվածայնորեն մաքուր։ Կենդանի վարդ...

Ժամանակն անցնում է, այդ անկրկնելիորեն սքանչելի ժամանակը... Անցնում էին սերտ մտերմության, միատեղ ինքնամփոփ կյանքի, ներքին խիստ կարգապահության տարիները։ Տարիները հարո՛ստ։ Աննետան՝ ուժերի ծաղկման շրջանում, անխռով, աննվաճ։ Երեխան՝ մանկական իր փոքրիկ աշխարհի ամբողջ փայլով ու սքանչելիությամբ։

Բայց բավական է օդի մի թեթև տատանում, որպեսզի խախտվի հոգիների այդ ներդաշնակությունը։ Արդյոք ամո՞ւր են փակված դռները...

Մի անգամ կիրակի առավոտ Աննետան տանը մենակ էր—Մարկը ընկերոջ հետ գնացել էր Լյուքսեմբուրգյան այգին գնդակ խաղալու։ Աննետան ոչինչ չէր անում. նա ուրախ էր, որ ազատ օրը կարելի է լուռ, անշարժ նստել բազկաթոռի մեջ։ Նրա մտքերը մի բանից մյուսին էին թռչում, և նա

հնազանդ ու հոգնած տրվում էր դրանց հոսանքին։ Գումը բախեցին։ Աննետան չէր ուզում բացել։ Խախտե՞լ հանգստի այդ ժամը... Աննետան տեղից չշարժվեց։ Բախեցին մի անգամ ևս, հետո սկսեցին համառ կերպով զանգ տալ։ Աննետան դժկամորեն տեղից վեր կացավ, բացեց դուռը... Սիլվիա՞ն է։ Երկար ամիսներ էին, ինչ նրանք չէին տեսնվել... Աննետայի առաջին զգացումը ուրախությունն էր, և նրա սրտադին ողջույնին Սիլվիան պատասխանեց նույն ձևով։ Բայց հետո նրանք հիշեցին հին վիրավորանքները, հիշեցին իրենց լարված հարաբերությունների մասին, և երկուսով էլ անհարմար զգացին։ Սկսվեցին քաղաքավարի հարցերը առողջության մասին։ Քույրերը առաջվա նման միմյանց հետ «դու»-ով էին խոսում, և խոսակցության տոնը նույնն էր, ինչպես առաջ, բայց չկար նախկին ջերմությունը։ Աննետան մտածում էր. «Ինչո՞ւ է եկել։ Ի՞նչ է ուզում»։— Իսկ Սիլվիան չէր շտապում բացատրել իր այցելության պատճառը։ Դռնից-դեռնից խոսելով, նա, թվում էր, զբաղված է ինչ-որ թաքուն մտքով, որը չէր ուզում միանգամից արտահայտել։ Բայց վերջիվերջո ամեն ինչ պարզվեց։ Սիլվիան անսպասելիորեն ասաց.

— Աննետա, արի սրան վե՛րջ տանք։ Մենք երկուսս էլ մեղավոր ենք։

Սակայն Աննետան հպարտ էր և իրեն մեղավոր չէր ճանաչում։ Համոզված լինելով,— չափից դուրս համոզված,— որ ինքը արդարացի է, և, հակված չլինելով մոռանալու անարդարությունը, նա ասաց.

— Ոչ, ես ոչնչով քեզ չեմ վիրավորել։

Սիլվիային դուր չեկավ, որ, թեև ինքը առաջին քայլը արեց, բայց Աննետան իրեն ընդառաջ չի գալիս։ Նա գրգռված ասաց.

— Երբ մարդ մեղավոր է, գոնե քաջություն պետք է ունենա այդ խոստովանելու։

— Մեղավորը ոչ թե ես եմ, այլ դու,— համառությամբ առարկեց Աննետան։

Այստեղ Սիլվիան վերջնականապես զայրացավ և վրդովված մեջտեղ բերեց իր բոլոր հին դժգոհությունները։ Աննե-

տան նրան պատասխանում էր զոռոզաբար։ Նրանք արդեն պատրաստ էին իրար ասելու ամենադաժան ճշմարտությունները։ Սիլվիան, որ համբերությամբ աչքի չէր ընկնում, տեղից վեր կացավ, պատրաստվելով գնալու, բայց նորից նստեց ու ասաց.

— Գլուխը փայտի՞ց է։ Սրան ոչ մի կերպ չես կարող ստիպել խոստովանելու, որ ինքը իրավացի չէ։

— Ես ինչո՞ւ պետք է սուտ ասեմ,— առարկեց անդրդվելի Աննետան։

— Կարող էիր գոնե քաղաքավարությունից համաձայնել, որպեսզի ամեն ինչի մեղավորը ես չլինեի։

Երկուսն էլ քրջացին։

Հիմա նրանք նայում էին իրար արդեն ուրախ և հաշտված։ Սիլվիան ծռեց քիթ ու բերանը, Աննետան նրան աչքով արեց։ Բայց երկուսն էլ զենքերը ցած չէին դրել։

— Սատանայի մե՛կը,— ասաց Սիլվիան։

— Ես ոչ մի բանում մեղք չունեմ,— կրկնեց Աննետան։— Դու ես...

— Դե լավ, արի ամեն ինչ նորի՛ց չսկսենք... Լսիր, ես քեզ անկեղծորեն ասեմ. իրավացի եմ թե ոչ, ես այստեղ չէի գա իմ սեփական նախաձեռնությամբ։ Ե՛ս էլ մոռացկոտներից չեմ...

Եվ նորից կես-ծիծաղ, կես-լուրջ, չարությամբ և կատակի խառնուրդով, սկսեց տաք-տաք հավատացնել, որ Աննետան ուզում էր նրա ամուսնուն խելքահան անել։ Աննետան միայն ուսերը թոթվեց։

— Մի խոսքով, կարող ես ինձ հավատալ, ես քո մոտ իմ կամքով չէի՞ գա,— եզրափակեց Սիլվիան։

Աննետան հարցական նայեց նրան։ Սիլվիան պարզաբանեց.

— Դա Օդետտան ինձ ստիպեց։

— Օդետտա՞ն։

— Այո։ Նա հարցնում է, ինչո՞ւ Աննետա մորաքույրը այլևս մեզ մոտ չի գալիս։

— Ինչպե՞ս։ Մի՞թե նա ինձ չի մոռացել,— զարմացավ Աննետան։— Իսկ ո՞վ է նրան իմ մասին հիշեցրել։

— Չգիտեմ... Նա ինձ մոտ տեսել է քո լուսանկարը։ Բացի դրանից, նրան, ըստ երևույթին, շատ հուզել է փողոցում քեզ հանդիպելը։ (Կամ, գուցե, նա ձեր տո՞ւն է եկել...)։ Ախ դու բանսարկու։ Տեսքից, թվում է, անմատչելի ես, չոր, իսկ տես, թե ինչպես ես կարողանում սրտեր նվաճել։

(Սիլվիան կատակում էր ոչ բոլորովին անկեղծ)։

Աննետան հիշեց երեխայի փոքրիկ, նուրբ մարմինը, որին գրկեց պատահական հանդիպման ժամանակ, խոնավ շրթունքները, որ հպվեցին իր այտին։ Սիլվիան շարունակեց.

— Ստիպված եղա ասել, որ մենք խռով ենք։ Նա հարցրեց ինչի համար։ Ես ասացի. «Դա քո գործը չէ»։ Բայց այսօր առավոտյան, երբ ես մոտեցա նրա մահճակալին և ուզեցի համբուրել, նա հանկարծ ասում է. «Մամա, ես չեմ ուզում, որ դու խռով լինես Աննետա մորաքրոջ հետ»։ Ես նրա վրա գոռացի. «Ինձ հանգի՞ստ թող»։ Տեսա երեխայի տրամադրությունն ընկավ։ Ես գրկեցի և հարցրի. «Հը, ի՞նչ ես հնարել քեզ այդքան դո՞ւր եկավ այդ մորաքույրը։ Նա քո ինչի՞ն է պետք։ Դե լավ, եթե այդքան ուզում ես, մենք կհաշտվենք»։ Օդեստան ծափ տվեց. «Իսկ Աննետա մորաքույրը ե՞րբ կգա մեր տուն»։— «Երբ ինքն ուզի»։— «Ոչ, դու հիմա գնա նրա մոտ և կանչիր...»։ Եվ ես եկա... Այդ փոքրիկ անպետքը ինձ ինչպես ուզում, այնպես էլ պտտեցնում է... Այնպես որ՝ արի մեր տուն։ Մենք այսօր քեզ ճաշին սպասում ենք։

Աննետան նստել էր, աչքերը հառել գետնին, և ոչ «հա» էր ասում, ոչ «չէ»։ Սիլվիան վրդովվեց։

— Ես հույս ունեմ, դու չես ստիպի, որ քեզ թախանձանքով խնդրեմ։

— Ոչ— ասաց Աննետան, այլևս քրոջից չթաքցնելով իր շողշողացող աչքերը, որոնք լի էին արցունքով։

Նրանք պինդ-պինդ համբուրվեցին։ Բուռն քնքշանքի պահին, որ խառնված էր վրդովմունքի հետ, Սիլվիան կծեց Աննետայի ականջը։ Աննետան ախ արեց։

— Ա՛յ ես քո ինչն եմ ասել։ Դու կծո՞ւմ էլ ես։ Եվ ինձ էլ խելագար է անվանում։ Կատաղե՞լ ես, ինչ է։

— Այո՜, այո՛, Ո՞նց չկատաղեմ, երբ դու ձեռքիցս և՛ ամուսնուս առար, և՛ աղջկաս...

Աննետան սրտանց քրքջաց՝

— Ամուսնուդ կարո՞ղ ես թողնել քեզ՝ ես նրա հետևից չեմ ընկել՝

— Ես նույնպես՝ Բայց նա իմն է, և ես արգելո՞ւմ եմ նրան ձեռք տալ՝

— Այդ դեպքում դու նրա վրա մակագրված ցուցանա՜կ կախիր՝

— Ո՛չ, ես մակագրված ցուցանակը քեզ վրա կկախեմ՝ Այլանդա՜կ՝ Այդ ի՞նչ կա որ մեջ՝ Ինչի՞ համար են բոլորը քեզ սիրում՝

— Քեզանից բաներ մի՜ հնարի՝

— Այո, այո, բոլո՜րը՝ Եվ Օդետտան, և այդ ցանցառ լեռ-պոլդը, և ուրիշները... Բոլորը անխտիր... Ես նո՜ւյնպես... Ես քեզ տանել չեմ կարողանում՝ Ուզում եմ քեզանից գլուխս ազատել, բայց դա ինձ չի՜ հաջողվում՝ Ո՞չ մի կերպ՝ Դու ամուր բռնել ես՝

Նրանք բռնեցին իրար ձեռք, և երկուսն էլ ծիծաղեցին իրար աչքերի նայելով արդեն քույրական ընքշությամբ՝

— Ախ դու իմ պառա՜վ՝

— Այո, այդ մի բանը ճի՜շտ ասացիր՝

Նրանք իսկապես երկուսն էլ ծերացել էին՝ Եվ երկուսով էլ այդ նկատեցին՝ Սիլվիան, որպես գաղտնիք, քրոջը ցույց տվեց կեղծ ատամը, որը նա դրել էր, թաքցնելով դա բոլորից՝ Աննետայի քունքերը ճերմակել էին, բայց նա դրանք չէր թաքցնում՝ Սիլվիան դրա համար նրան պչրուհի անվանեց՝

Նրանք դարձյալ մտերիմներ էին, ինչպես առաջ... Եվ պատկերացրեք, եթե Օդետտան չլիներ, նրանք երբե՜ք այլևս իրար չէին տեսնի...

Աննետան երեկոյան Մարկի հետ եկավ ճաշի՝ Օդետտան թաքնվել էր, նրան չէին կարողանում գտնել՝ Աննետան գընաց փնտրելու և գտավ վարագույրի հետևում՝ Նա կռացավ, որ երեխային վերցնի, պպզեց և մեկնեց ձեռքերը՝ փաղաք-

շորեն համոզելով նրան։ Օդետտան շրջվեց, համառորեն աչքերը վեր չէր բարձրացնում։ Հետո անսպասելի պոռթկումով ընկավ նրա վզովն։ Սեղանի շուրջը, որտեղ Օդետտան բախտ ունեցավ նստել իր մորաքրոջ կողքին, նա հուզմունքից ոչ մի բառ չէր կարողանում ասել և աշխուժացավ միայն ճաշի վերջում, երբ քաղցրեղեն մատուցեցին։ Մեծահասակները խմում էին վերահաստատված բարեկամության կենացը, հետո լեռպոլդը կատակով առաջարկեց խմել Մարկի և Օդետտայի ապագա ամուսնության կենացը։ Մարկը վիրավորվեց— նա նշան էր բռնել ավելի վերև, ինչ Օդետտան դա լուրջ ընդունեց։ Ճաշից հետո երեխաներն սկսեցին խաղալ, բայց իրար հետ չլոլա չէին գնում, Մարկը Օդետտային վերաբերվում էր արհամարհանքով, և աղջիկը վիրավորված էր։ Շուտով ծնողները, որ զրույցով էին զբաղված, շրպոցների և լացի ձայն լսեցին։ Կովողներին բաժանեցին իրարից։ Նրանք դեռ երկար փրփրված էին իրար վրա։ Օդետտան օրվա տպավորություններից հուզված էր։ Նրա քնելու ժամանակը եկավ, բայց նա քմահաճություններ էր անում և չէր ուզում պառկել։ Աննետան ասաց, որ ինքը նրան կտանի անկողին, և աղջիկը համաձայնեց։ Աննետան նրա շորերը հանեց, պառկեցրեց, համբուրելով թմբլիկ ոտքերը։ Օդետտան հիացմունքի մեջ էր։ Աննետան նստեց նրա կողքին, մինչև որ երեխան քնեց (դա երկար չտևեց), իսկ երբ վերադարձավ ճաշասենյակը և Մարկին տեսավ Սիլվիայի ծնկներին նստած, կատակելով ասաց.

— Արի փոխենք։ Ուզո՞ւմ ես։

— Համաձայն եմ,— պատասխանեց Սիլվիան։

Բայց հոգու խորքում ոչ մեկը և ոչ էլ մյուսը չէին ուզում փոխել։ Մինչդեռ Մարկը, թերևս, ավելի կսազեր Սիլվիային, իսկ աղջիկը՝ Աննետային։ Սակայն հարազատ երեխան միշտ հարազատ է մնում։

Բայց արի ու տես, որ փոխանակման գաղափարը երեխաներին շատ դուր եկավ։ Լսելով այդ կատակով խոսակցությունը, նրանք սկսեցին կպչել ծնողներից։ Եվ որպեսզի երեխաներին հաճույք պատճառեն, նրանք համաձայնեցին։ Ամեն շաբաթ երեկո մայրերի միջև տեղի էր ունենում փո-

խանակությունն. շաբաթ գիշերը և ամբողջ կիրակի օրը Օդետտան անց էր կացնում Աննետայի մոտ, իսկ Մարկը՝ Սիլվիայի։ Կիրակի երեկոյան ամեն մի երեխային վերադարձնում էին իր ծնողին։ Այդ միջթաղավորության շրջանում նրանց անաստվածորեն երես էին տալիս։ Ով, հասկանալի է, նրանք տուն էին վերադառնում դժկամորեն, քմահաճություններ էին անում, և ամբողջ քնքշությունը պահպանում էին այն մեկի համար, որը միայն տոնական օրերին էր նրանց համար մայր դառնում։

Օդետտան Աննետայի գորովը շարժում էր իր մանկական փաղաքշանքներով, փոքրիկ գաղտնիքներով, որոնք նա հազորդում էր մորաքրոջը, անխոնջ բլբլոցներով։ Այդ բոլորից Աննետան զուրկ էր։ Մարկը, ժառանգելով մոր կրակոտ տեմպերամենտը, կարողանում էր այն զսպել ավելի լավ, քան մայրը։ Նա չէր սիրում անկեղծություն անել, հատկապես հարազատների հետ, որովհետև նրանք կարող էին չարաշահել իր վստահությունը։ Օտարների հետ դա այնքան էլ վտանգավոր չէ, նրանք շատ բաների վրա ուշադրություն չեն դարձնում... Իսկ Օդետտան Սիլվիայի նման էր, էքսպանսիվ, փաղաքշող, և ընդ որում սիրող սրտիկ ուներ։ Նա բարձրաձայն արտահայտում էր այն բոլորը, ինչ Աննետան ուզում էր լսել։ Նկատելով, թե դա ինչպես է մորաքրոջը բավականություն պատճառում, փոքրիկ խորամանկը սկսեց կրկնապատկել իր քնքշանքների դոզան։ Նա Աննետայի հոգում արթնացնում էր նրա մանկության տարիների սեփական ապրումների արձագանքները։ Գոնե այդպես Աննետային թվում էր, և մասամբ հենց դրա համար էր նա սիրում աղջկան։ Լսելով Օդետտային, Աննետան վերհիշում էր մանկական տարիները, որոնք իր այժմյան մտքերի տաք լույսի ներքո նրան բոլորովին ուրիշ կերպ էին ներկայանում։

Որքան բերկրալի էին այդ կիրակնօրյա առավոտները։ Փոքրիկը պառկած լայն մահճակալի վրա (նրա համար տոն էր մորաքրոջ հետ քնելը, հարմար տեղավորվելով Աննետայի գրկում, իսկ նա անծպտուն տանում էր աղջկա քացիները և վախենում նույնիսկ շնչել, որ չարթնացնի երեխային), դիտում էր շորն արդեն հագած Աննետային և ճոճտում էր

ծոի ճուտի նման։ Մահճակալի լիակատար տերը դարձած, նա ձգվում էր անկողնու լայնությամբ, որպեսզի ապահովի իր համար այդ սեփականությունը, և Աննետայի թիկունքում ամբողջ ուժով չարաճճիություն էր անում։ Աննետան հայելու առաջ սանրվելով, միայն քթի տակ ծիծաղում էր, երբ հայելու մեջ տեսնում էր օդում թափահարվող բորիկ տոտիկներն ու բարձի վրայի խռիվ մազերով ահ փոքրիկ գլուխը։ Չարաճճիությունները Օդետտային չէին խանգարում հետևել Աննետայի յուրաքանչյուր շարժմանը, և նա սկսում էր զվարճալի դատողություններ անել մորաքրոջ հարդարանքի մասին։ Այդ շաղակրատանքների մեջ երբեմն նշմարվում էին բոլորովին անսպասելի լուրջ դիտողություններ, որոնք Աննետային ստիպում էին զգուշանալ։

— Ինչ ասացի՞ր։ Ապա կրկնի՛ր։

Բայց Օդետտան չէր հիշում ինչ ասաց, այդ պատճառով էլ մի ուրիշ բան էր հնարում, արդեն ոչ այնքան հետաքրքիր։ Ժամանակ առ ժամանակ նրան համակում էին քնքշության փոթորկուն պոռթկումները։

— Աննետա՛ մորաքույր։ Աննետա՛ մորաքույր։

— Հը, ի՞նչ է։

— Ես քեզ այնքա՛ն եմ սիրում, այնքա՛ն եմ սիրում...

Աննետային ծիծաղ էր պատճառում այն ջերմությունը, որով Օդետտան այդ հայտարարում էր։

— Չի՛ կարող պատահել։

— Հա, չի՛ կարող։ Ես քեզ խելագարի՛ պես սիրում եմ։

(Իհարկե, Օդետտայի անկեղծությանը խառնվում էր նաև դերասանության ինչ-որ մասնիկ—դա նրա արյան մեջ էր)։

— Ահա՛ թե ինչ... Իսկ ավելի լավ կլիներ առանց որևէ խելագարության։

— Աննե՛տա մորաքույր, ես ուզում եմ քեզ համբուրել։

— Հիմա։ Սպասիր։

— Չէ, հենց հիմա՛ եմ ուզում։ Արի՛ այստեղ։

— Լավ։

Եվ Աննետան հանգիստ շարունակում էր մազերը սանրել։

Օդետտան սրտնեղությունից անկողնում գլխկոնծի էր տալիս, սավաններով ծռմռելով բոլոր կողմերի վրա։

— Ա՜խ, ինչ անսիրտ կի՜ն է սա։

Աննետան քրքջալով սանրը դցում էր ու վազում մահճակալի մոտ.

— Կապի՜կ։ Այդ որտեղի՞ց ես սիրտել։

Օդետտան խենթորեն համբուրում էր նրան։

— Բավակա՜ն է, բավակա՜ն է... Ինձ կխեղդե՜ս... Օ՜ֆ... Ահա, սանրվածքս ամբողջովի՜ն խառնեցիր իրար... այս ձևով ես երբեք հագնվելս չե՜մ վերջացնի... Ինձ հանգիստ թող, ավազա՜կ։

Աղջկա ձայնում արդեն վախ էր զգացվում, նա քիչ էր մնացել լաց լիներ։

— Աննետա մորաքույր, դու ինձ սիրում ես, չէ՞։ Ես ուզում եմ, որ դու ինձ սիրե՜ս։ Դե, խնդրո՜ւմ եմ, սիրի՜ր ինձ։

Աննետան աղջկան իրեն էր սեղմում։

— Ա՜խ,— ցնծությա՜մբ ասում էր Օդետտան,— ես ուրախությա՜մբ կյանքս քեզ կտամ։

(Դա բուլվարային վեպի մի արտահայտություն էր, որ արհեստանոցում կարդացել էին նրա մոտ)։

Եթե Մարկն այդպիսի տեսարաններին ներկա էր լինում, արհամարհանքով շրթունքները սեղմում էր և սեփական գերազանցության տեսքով, ձեռքերը գրպանը խրելով և ուսերը վեր քաշած, սենյակից դուրս էր գալիս։ Նա արհամարհում էր կանացի շաղակրատանքն ու սենտիմենտալությունը։ Ինչպե՞ս կարելի է դուրս տալ այն ամենը, ինչ զգում ես։ Մարկն իր ընկերոջն ասում էր.

— Կանայք բոլորն էլ ինչքա՜ն են հիմար։

Հոգու խորքում Մարկը վիրավորված էր, որ իր մայրը քնքուշ փաղաքշանքներով ողողում է Օդետտային։ Նա ինքը այդ քնքշություններից փախչում էր, բայց նրան դուր չէր գալիս, երբ այդ փաղաքշանքները ուրիշի համար էր շռայլվում։

Իհարկե, նա կարող էր մորը վճարել նույն ձևով և Մարկը հենց այդպես էլ անում էր. որպեսզի պատժի Աննետային անշնորհակալության համար, նա Սիլվիայի հետ տասն անգամ ավելի սիրալիր էր, քան երբևէ մոր հետ։ Սակայն, ճիշտն ասած, ինչքան էլ մորաքույրը երես էր տալիս նրան,

Մարկը նրանից գոհ չէր. Սիլվիան նրա հետ վարվում էր, ինչպես երեխայի հետ, իսկ Մարկը դա տանել չէր կարողանում։ Ամեն կիրակի Սիլվիան, ցանկանալով Մարկին բավականություն պատճառել, նրան տանում էր հրուշակարան։ Քաղցրեղենի նկատմամբ Մարկը, իհարկե, անտարբեր չէր, բայց նրան դուր չէր գալիս, երբ Սիլվիային թվում էր, թե դա Մարկի համար այդքան կարևոր է։ Դա վիրավորական էր։ Եվ հետո Մարկը շատ լավ էր հասկանում, որ մորաքույրը իրեն բանի տեղ չի դնում։ Սիլվիան նրանից բոլորովին չէր ամաչում, և դա Մարկին հնարավորություն էր տալիս բավարարելու իր հետաքրքրասիրությունը, բայց ինքնասիրությունը վիրավորվում էր, քանի որ նա դրա մեջ արհամարհանքի երանգ էր տեսնում։ Այո, նրա համար հաճելի կլիներ, եթե Սիլվիան նրա մեջ տեսներ իսկական, հասունացած տղամարդու, և ոչ թե երեխայի։ Վերջապես (բայց Մարկը դժկամորեն դա խոստովանում էր իրեն), դիտելով Սիլվիային ինտիմ պայմաններում, Մարկը կորցրեց բոլոր պատրանքները։ Անփույթ կինը նույնիսկ չէր էլ ենթագրում այն ամենը, ինչ արթնանում էր տասը տարեկան երեխայի մաքուր և անհանգիստ հոգում, չէր ենթադրում Մարկի հրևակայությամբ ստեղծված կնոջ հեքիաթային կերպարի մասին, մրտքով չէր անցնում, թե որքան հիվանդագին են առաջին հիասթափությունները։ Սիլվիան Մարկի ներկայությամբ բոլորովին չէր հետևում իր շարժուձևերին և խոսքերին, կարծես Մարկը նրա համար տնային փոքրիկ շուն էր կամ կատու (Իսկ փաստորեն մենք նույնիսկ չգիտենք էլ, թե հաճախ չի՞ վիրավորում արդյոք մեր վարքագիծը նման բնության կենդանիներին...»։ Հիասթափությունից քնազդորեն ինքնապաշտպանություն փնտրելով, հիասթափություն, որ նրա մեջ առաջացնում էր խորտակված կուռքը, Մարկը հանգում էր հապճեպ եզրակացություններ, որոնք համակված էին շատ միամիտ ցինիզմով և որոնց մասին ավելի լավ է լռեսել։ Նա եռանդագին կերպով իր առաջ (ուրիշների մասին Մարկն այն ժամանակ չէր մտածում) հագեցած տղամարդու դեր էր կատարում։ Եվ նույն այդ ժամանակ անմեղ երեխայի հուզմունքով ու կույր ագահությամբ ըմբոշխնում էր կնոջ հանելուկային և զգայական կախար-

դանքը։ Կինը նրա մեջ զզվանք էր արթնացնում և հրապույր։

Զզվանքի հետ խառնված հրապույր... Ո՞ր տղամարդուն է անծանոթ այդ զգացումը։ Կյանքի այդ շրջանում Մարկի մեջ խոսում էր զզվանքը։ Բայց նույնիսկ զզվանքը սուր արտահայտված համ ուներ, որի համեմատությամբ նրա հասակակիցների մյուս բոլոր ապրումները անալի էին թվում։ Օդետտային Մարկը արհամարհում էր և գտնում, որ այդպիսի փոքրիկ աղջկա հետ ընկերություն անելը ստորացնում է իր արժանապատվությունը։

Այո, Օդետտան փոքրիկ աղջիկ էր, բայց, որքան էլ տարօրինակ թվա, այդ փոքրիկի մեջ արդեն երևան էր գալիս կինը։ Հակառակ նշանավոր մանկավարժների տեսություններին, որոնք մանկությունը բաժանում են խիստ սահմանազատված շրջանների, յուրաքանչյուր շրջանին վերագրելով որևէ բնորոշ մի գիծ, դեռ մանկության տարիներին, դեռ վաղ մանկական հասակում դրսևորվում են մարդու բոլոր տվյալները, պարզ է դառնում նրա կրկնակի կերպարանքը— ներկայի և ապագայի (էլ չխոսենք անցյալի մասին, վիթխարի և անթափանց, որն իրենով որոշում է թե մեկը և թե մյուսը), բայց որպեսզի տարբերել այդ կերպարանքը, պետք է շատ ուշադիր լինել. Մանկության այգաբացի աղջամուղջում այդ կերպարանքը հայտնվում է միայն առկայծումներով։

Այդ առկայծումները Օդետտայի մեջ նշմարվում էին ավելի, քան երեխաների մեծամասնության մեջ։ Նա շուտհասուկ էր։ Լինելով ֆիզիկապես շատ առողջ, աղջիկն իր մեջ թաքցրնում էր ցանկասիրական այնպիսի բնազդներ, որոնք չէին համապատասխանում նրա հասակին։ Ումի՞ց էր նա դրանք ժառանգել, Աննետայի՞ց, թե՞ Սիլվիայից։ Աննետային թվում էր, թե այդ փոքրիկ աղջկա մեջ ճանաչում է իրեն, երբ նույն տարիքին էր։ Բայց Աննետան սխալվում էր. նա ամենևին էլ այդպիսի շուտհասուկ չէր։ Դիտելով Օդետտային, նա հիշում էր սեփական մանկությունը և հոգու միամտությամբ այդ հասակին այնպիսի կրքեր էր վերագրում, որոնք ինքը ունեցել էր տասնչորս-տասնհինգ տարեկանում։

Օդետտայի հոգին նման էր այն թռչնանոցին, որը լցված է

թափահարվող թևերի աղմուկով։ Այստեղ թռչունների նման սլանում էին սիրո առաջին անորսալի բռնկումները, ծնելով լույս և ստվերներ։ Անխոով բավականության րոպեները փոխվում էին ներվային լարվածությամբ, աղջիկը երբեմն առանց պատճառի ուզում էր լաց լինել, իսկ երբեմն բարձրաձայն ծիծաղել։ Դրան փոխարինում էր հոգնածությունը, հուզմ անտարբերությունը ամեն ինչի նկատմամբ։ Իսկ մեկ էլ տեսար, անհայտ պատճառով, որևէ մեկի խոսքը կամ ժեստը, նրա կողմից իր ձևով մեկնաբանված, նորից է ուրախացնում աղջկան, և նա կատարյալ երջանկանում է... Երջանկությունից թուլացած, արբեցած դրանով, ինչպես խաղողով կշտացած կեռնեխը, նա շաղակրատում էր ու շաղակրատում... Եվ հանկարծ— հո՛պ... Օդետտան անհայտանում էր, ոչ ոք չգիտեր, թե նա ուր է կորել, իսկ հետո նրան գըտնում էին խորդանոցի անկյունում թաքնված, որտեղ նա վայելում էր իր, չգիտես որտեղից թռած-եկած, բերկրությունը, որը ինքն իսկ դժվարանում էր հասկանալ։ Կարծես թռչունների երամներ էին գալիս ու գնում նրա հոգու մեջ, կայծակից արագ մեկը մյուսին փոխարինելով...

Երբեք չի կարելի իմանալ, թե մինչև որ պահն է, որ երեխաները անկեղծ են իրենց զգացմունքների մեջ. այդ զգացմունքները, որոնք գոյություն են ունեցել իրենցից շատ ու շատ առաջ, նրանց մոտ են գալիս անցյալի անհայտ հեռուներից, նրանք առաջինն են զարմանում այդ զգացմունքների վրա և, կարծես ձգտելով դրանք ստուգել, դառնում են այդ ապրումները պատկերող դերասաններ։ Անգիտակցաբար երկատվելու այդպիսի ունակությունը ինքնապաշտպանության բնազդային միջոց է, քանի որ այդ ունակությունը օգնում է տանելու այն բեռը, որը նրանց նուրբ ուսերի համար չափազանց ծանր է։

Օդետտային համակում էին մերթ մեկին, մերթ մյուսին սիրահարվելու պոռթկումները, իսկ երբեմն էլ՝ ոչ մեկին, և այդ սիրահարվածությունը նա ակամայից արտահայտում էր որոշ թատերականությամբ, ոչ միշտ բարձրաձայն, երբեմն կամացուկ, մենախոսությունների ձևով, որոնք նա արտասանում էր առանձնացած, միայն նրա համար, որ սիր-

որ դատարկի։ Արտահայտելով իր զգացմունքները բառերով և ժեստերով, նա կարծես մի տեսակ թուլացնում էր նրանց ճնշումը։ Քնքշության այդպիսի պոռթկումներ նա ամենից շատ ունենում էր Աննետայի հանդեպ, կամ Մարկի, և կամ էլ երկուսի հանդեպ միասին, և հաճախ, մտածելով Մարկի մասին, նա սեր էր բացատրում ոչ Մարկին, այլ Աննետային, որովհետև Մարկը ծիծաղում էր նրա վրա, Մարկը արհամարհում էր նրան, և Օդետտան այդ պատճառով Մարկին ատում էր։ Օդետտան տառապում էր ստորացումից ու խանդից և ուենչում էր նրանից վրեժ լուծել... Բայց ինչպե՞ս։ Ինչպես Մարկին ցավ պատճառել։ Շատ, շատ ցավ։ Ինչո՞վ նրան խոցել։ Ավա՜ղ, նրա ճանկերը դեռ մանկական էին։ Ինչքա՞ն է ցավալի... Հասկանալով, որ նա ոչինչ Մարկին անել չի կարող (առա՜յժմ), Օդետտան անտարբեր էր ձևանում... Բայց չա՞տ ցավալի է գիտակցել սեփական անզորությունը և դժվար է անտարբեր ձևանալ, երբ մարդ միշտ ուզում է մերթ ծիծաղել, մերթ լաց լինել։ Այդպիսի ինքնազսպումը Օդետտայի բնավորությունից չէր, դա ճնշում էր նրան։ Նա ապատիայի մեջ էր ընկնում, քանի մանկական տիրական աշխուժությունը, ուրախությանը և շարժման պահանջները չէին ստիպում նրան նորից խաղի անցնել։

Աննետան դիտում էր, կռահում (երբեմն երևակայությամբ լրացնում) մանկական հուսաբեկության այդ նոպաները և, մտաբերելով իր սեփականը, կարեկցում էր Օդետտային։ Ինչքա՞ն է նա ինքը սրտի ավյուն վատնել, սիրելով, ցանկանալով, տանջվելով,— և ո՞ւմ համար, ինչի՞ համար։ Ինչի՞ էր դա պետք։ Ինչպիսի՞ անհամապատասխանություն այն սահմանափակ նպատակի հետ, որը մեր առաջ է դնում բնությունը։ Որքա՞ն է վատնող բնությունն այդ, և ինչպե՞ս է առանց մտածելու նա բաշխում սիրելու ունակությունը։ Ոմանց տալիս է չափից ավելի շատ, ոմանց էլ՝ չափազանց քիչ։ Իրեն և Օդետտային Աննետան դասում էր այն մարդկանց շարքը, որոնց չափից ավելի շատ է տրված, իսկ իր որգուն դասում է զուրկ մնացածների շարքը։ Ավելի լավ Մարկի համար։ Խե՛ղճ տղա...

Բայց տղան ամենևին էլ այդքան խեղճ չէր։ Նրա հոգեվոր կյանքը պակաս հարուստ չէր, քան Օդետտայինը, նրա

գլխում մտքերը խլրտում էին նույնքան մոլեգին (միայն թե նա դրանք չէր արտահայտում), իսկ զգացմունքները պակաս ուժեղ չէին, բայց կենտրոնացած էին ուրիշ բանի վրա։ Այո, Մարկը խոր անտարբերություն էր զգում դեպի այն, ինչը զբաղեցնում էր այդ «կանանց»։ Նրան հուզում էին ուրիշ կրքեր։ Լինելով մտավորապես Օդետտայից ավելի զարգացած, և կլանված զգացմունքների կյանքով, շատ ավելի պակաս, զգացմունքներ, որոնք Մարկի մեջ արթնանում էին ավելի գանդաղ, քան Օդետտայի, այդ տղան, արդեն զգալով մութ ցանկությունների մակընթացությունը, ձգտում էր, ինչպես իսկական տղամարդ, գործել և իշխել։ Նա երազում էր այնպիսի հաղթանակների մասին, որ կնոջ սրտի նկատմամբ տարած հաղթանակը (եթե մանկության այդ շրջանում նա կարող էր մտածել այդ մասին) նրան կթվար միանգամայն ողորմելի։ Անցյալ սերունդների տղանները տարվում էին դինվորներով, վայրենիներով, ծովահեններով, Նապոլեոնով, ծովային արկածներով։ Իսկ Մարկը զառանցում էր ավտոմոբիլներից, աէրոպլաններից, ռադիոներից։ Այն ժամանակ աշխարհին զբաղեցնող գաղափարները գլխապտույտ առաջացնող շուրջպարով թռչկոտում էին նրա շուրջը։ Մեր մոլորակին ցնցում էր շարժման տենդը։ Ամեն ինչ սլանում էր, թռչում, ճեղքելով օդն ու ջրերը, շուռումուռ էր գալիս, պըտրտվում։ Մոլեգին գյուտարարության հրաշքները փոխակերպում էին տարերքը։ Մարդկային հզորությունը այլևս սահման չուներ, դա նշանակում է, մարդու կամքի առաջ նույնպես արգելքներ չկային։ Տարածությունն և ժամանակ գոյություն չունեին, դրանք անհետացել էին դուրս մղվելով արագության կողմից։ Տարածությունն ու ժամանակը, ինչպես և մարդիկ, այլևս հաշվի չէին առնվում։ Մի բան կար, որ նշանակություն ուներ. կամքը, անսահմանափակ կամքը։

Մարկը չատ թույլ պատկերացում ուներ ժամանակակից գիտության սաղմերի մասին։ Նա, առանց որևէ բան հասկանալու, կարդում էր մոր բաժանորդագրված ժուռնալը։ Բայց ծննդյան օրից նա արդեն ապրում էր գիտության հրաշքների մթնոլորտում։ Անհնարին այդ մթնոլորտը չէր նկատում,

պրովհետև նա գիտությանը հասու էր դառնում սխոլաստիկ ճանապարհով, նա չէր շնչում այդ գիտությունը օդի հետ միասին։ Գրատախտակի վրա կավիճով գրած թվերը, երկրաչափական ֆիգուրաները, եզրակացությունները—ահա թե որն էր նրա համար գիտությունը։ Իսկ Մարկի համար դա հեքիաթային ուժ էր ներկայացնում։ Հատկապես այն պատճառով, որ տղայի բանականությունը դեռ լռում էր և չէր կաշկանդում նրան, Մարկը տրվում էր երևակայության ցնծությանը, նույնքան մշուշապատ և բոցավառ, որքան այն, ինչը լցնում էր արքոնավորդների առագաստները։ Նա երազում էր ամենաարտասովոր սխրանքների մասին. ամբողջ երկրագունդի միջով թունել փորել, առանց ափրոպլանի օդ բարձրանալ, Մարսը միացնել երկրագնդին, կոճակի մի սեղմումով պայթեցնել Գերմանիան կամ որևէ այլ պետություն (նրա համար միևնույն էր, թե որ)։ «Վոլտ», «ամպեր», «ռադիում», «կարբյուրատոր» խորհրդավոր բառերի հետևում, որոնք նա օգտագործում էր ապլոմբով, բայց հենց այնպես, առանց մտածելու, նրան հազար ու մի գիշերվա հեքիաթներ էին թվում։ Մի՞թե նա այդպիսի բարձունքներից գետին կիջներ և կնվաստանար մինչև մի հիմար աղջկա մասին եղած միտքը։

Սակայն, թեև մարմինն ու միտքը երկվորյակներ են, բայց երբեք միասին չեն քայլում։ Միշտ նրանց երկուսից մեկնումեկը (ոչ միշտ միևնույնը) աճի տեսակետից ետ է ընկնում, իսկ մյուսը շտապում է առաջ ընկնել։ Ֆիզիկապես Մարկը դեռ երեխա էր, և այն ժամանակ, մինչ նրա միտքը ճախրում էր երկնքում, ինչ-որ կապած թել պահում էր նրան, ձգում էր ներքև, որտեղ այնքան հաճելի էր խաղալ։ Եվ երեմն նա, ավելի լավ բան չլինելու պատճառով, իջնում էր մինչև մանկական զվարճալիքները, իսկ հաճախ էլ առանց որևէ զոռոզամտության ամբողջ հոգով տրվում էր խաղերին՝ «հիմար աղջկա» հետ։

Դրանք հաճելի դադարներ էին, որոնք, սակայն, երկար չէին տևում։ Օդետտան և Մարկը միանգամայն տարբեր երեխաներ էին, և նրանց տարբերությունը ոչ միայն տարիքի մեջ էր և նրանում, որ Օդետտան աղջիկ էր,— ոչ, ամբողջ բա-

նը խաւնվածքների տարբերությունն էր։ Օդետտան, որը ոչ գեղեցիկ, ավելի շատ հոր նման (միայն նրա աչքերն էին նմանվում Աննետային), կլոր երեսով, լիքը այտերով, կճատաքիթ աղջիկ էր, կազմվածքով ամուր էր և առողջ— նրա քնավորության խանդավառությունը բոլորովին հավատարակշռությունը չէր խախտում,— ընդհակառակը, մի տեսակ քնական ելք էր տալիս կենսական ուժերի ավելցուկներին։ Օդետան երբեք չէր հիվանդացել մանկական տարիքի թեթև ոչ մի հիվանդությամբ։ Մարկի օրգանիզմում, ընդհակառակը, ծանր հիվանդությունը, որ նա տարել էր կյանքի առաջին տարում, նկատելի հետք էր թողել։ Ճիշտ է, հետագայում քնածին առողջությունը հաղթել էր, բայց մանկության մի մասը փչացել էր հիվանդությունների դեմ օրգանիզմի մղած մշտական պայքարի հետևանքով, որի ժամանակ նա հազվադեպ չէր հաղթված դուրս գալիս։ Մարկը հաճախակի էր հիվանդանում, և աննշան մրսելը բրոնխիտ էր առաջացնում և ջերմություն։ Տղայի ինքնասիրությունը դրանից տառապում էր, քանի որ նա բնազդորեն սիրում էր միայն հզպարտ և ուժեղ մարդկանց։

1911 թվի վերջին, այսինքն՝ քույրերի հաշտությունից մեկ տարի հետո, Մարկը, ինչպես հաճախ ձմեռը նրան պատահում էր, մրսեց, որը բարդացում տվեց, դարձավ գրիպ և այդ պատճառով անհանգստացրեց հարազատներին։ Օդետտան եկավ տղայի մոտ։ Դա նրան արգելում էին, վախենալով, որ չլինի թե ինքն էլ վարակվի, բայց աղջիկը խորամանկորեն հնար գտավ երեկոյան մտնել Մարկի մոտ, երբ երկու մայրերն էլ հարևան սենյակում ինչ-որ բանով զբաղված էին։ Օդետտան շատ կարեկցում էր նրան, և Մարկին այս անգամ դավաճանեց նրա սովորական զսպվածությունը։ Նա խիստ հուզված էր։

— Օդետտա, նրանք ի՞նչ են խոսում։

(Նա կարծում էր, թե հիվանդությունը վտանգավոր է, և դա իրենից թաքցնում են)։

— Չգիտեմ, ոչինչ չեն խոսում։

— Իսկ բժի՞շկը։

— Բժիշկն ասաց, որ դա հասարակ բան է։

Մարկի սիրտը մի քիչ հանգստացավ, բայց նա դեռ չէր հավատում։

— Իսկ դու ճի՞շտ ես ասում, Ոչ, ես չեմ հավատում։ Ինձանից թաքցնում են... Ես շատ լավ գիտեմ իմ հիվանդությունն ի՞նչ է...

— Ի՞նչ է։

Մարկը լռում էր։

— Մարկ, քո հիվանդությունն ի՞նչ է։

Բայց նա ամփոփվեց իր հպարտ և թշնամական լռության մեջ։ Օդետտան անհանգստացավ։ Նա իսկույն հավատաց, որ Մարկը ծանր հիվանդ է, և նրա անհանգստությունը անմիջապես փոխանցվեց Մարկին։ Ջափազանցելու և մելոդրամատիզմի իրեն բնորոշ հակումով, Օդետտան ձեռքերը տարածեց.

— Ա՜խ, Մարկ, խնդրում եմ, այդպես մի՛ հիվանդանա։ Ես չե՞մ ուզում, որ դու մեռնես։

Մարկը մեռնելու փոքրագույն իսկ ցանկություն չուներ։ Նա սիրում էր, որ իրեն կարեկցեն, բայց այդքան շատ կարեկցանք նա չէր պահանջում։ Լսելով Օդետտայից այն, ինչից նա ինքը վախենում էր, Մարկը կարկամեց սարսափից։ Նա չէր ուզում այդ ցույց տալ, բայց չդիմացավ.

— Ահա, կնշանակի, դու ինձանից թաքցնո՞ւմ էիր։ Դու գիտես, որ ես խիստ հիվա՞նդ եմ...

— Ոչ, ոչ, ես ոչինչ չգիտեմ, ես չեմ ուզում, որ դու այդպես հիվա՞նդ լինես... Օ՜յ, Մարկ, չմեռնե՞ս։ Եթե դու մեռնես, ե՞ս էլ քեզ հետ կմեռնեմ։

Օդետտան լացով ընկավ նրա վրին։ Մարկը խիստ հուզված էր և նույնպես լաց եղավ, ինքն էլ չիմանալով, թե ում է խղճում, իրե՞ն, թե Օդետտային։ Աղմուկի վրա վազեցին եկան երկու մայրերն էլ, կշտամբեցին նրանց և Օդետտային տարան։ Բայց այդ րոպեն երեխաներին շատ մոտեցրեց։

Ինչևիցե, առավոտյան Մարկի տրամադրությունը արդեն փոխվեց։ Տագնապը անցավ և նա նույնիսկ զայրացած էր իր վրա, որ երեկ երեկոյան այդքան վախկոտ գտնվեց (մեծահասակները նրա սարսափը ցրելու համար ծիծաղեցին Մարկի վրա)։ Նա զայրացած էր նաև Օդետտայի վրա, որը իր

հիմար հուզմունքով իրեն այդպիսի փոքրոգության հասցրեց: Եվ բացի այդ... նա լսում էր Օդետտայի ծիծաղը, հետևից տեսնում էր նրան առողջ ու փթթուն, և դրա համար զայրանում էր նրա վրա: Մարկը նախանձում էր առողջության այդ ավելցուկին և իրեն նվաստացած էր զգում:

Երկար ժամանակ ապաքինումից հետո Մարկին տանջում էր այն գիտակցությունը, որ նա մատնեց իրեն, խայտառակվեց մորաքրոջ աղջկա առաջ: Ավելի տհաճ էր նաև այն գիտակցությունը, որ նա իսկապես էլ այն ժամանակ վախեցավ, և աղջիկը տեսավ այդ վախը: Իսկ Օդետտան հանդարտվելով, այնուամենայնիվ, ննջգործեն մտքում պահեց այդ րոպեն: Նա այն ժամանակ Մարկին տեսավ առանց ոտնացուպերի—տեսավ պարզապես փոքրիկ, վախկոտ մի տղայի: Այդպես Օդետտան նրան ավելի շատ էր սիրում: Բայց Մարկը Օդետտային ոչ մի կերպ դա չէր կարողանում ներել:

Մարկը ապաքինվեց: Օդետտան ծաղկում էր: Անցյալ ամառ նա առաջին անգամ գնաց հաղորդման և դրանով շատ էր հպարտանում: (Այն ժամանակ եկեղեցին, ինչպես Ջոկոնդան, անմեղ հոգիներ էր փնտրում և, իր երկար կասկածելի քթով ստնելով ժամանակի հոտը, որոշեց, որ մաքրությունն ու անմեղությունը պահպանվում է միայն մինչև յոթ տարեկան հասակը): Դրանից հետո Օդետտան արդեն իրեն հասուննացած կին էր համարում և, աշխատելով բոլորին այդ ապացուցել, սանձում էր իր աշխուժությունը, հիշեցնելով կապած ուլիկին: Բայց այդ ուլիկը յուրաքանչյուր րոպե կարող էր մի ոստյունով դուրս պրծնել ձեր ձեռքից... Սիլվիայի գործերը շատ լավ էին, նա իրեն երջանիկ էր զգում: Ասենք, Աննետան նույնպես քրոջ ընտանիքում բավարարում էր սիրո իր պահանջը, արդեն ոչ այնքան սուր, ինչպես մի ժամանակ, այլ չափավոր դարձած՝ տարիների և փորձությունների հետևանքով: Նրա համար, թվում էր, վրա է հասել կյանքի անփոթորիկ շերտը: Ամեն ինչ խոսում էր հաստատուն բարեհաջողության մասին:

Հոկտեմբերի վերջն էր: Շոգ և կուրացուցիչ օրերից մի օր, երբ ոչ մի ամպիկով չստվերված արևի լույսը թվում է

մերկ, ինչպես և տերևաթափ ծառերը, ժամը չորսին Աննետան նստած էր Սիլվիայի մոտ։ Բակին նայող լուսամուտները բացված էին, որպեսզի ներս թափանցեն աշնան արևի շողերը, օսկեղեն ու քաղցր, ինչպես մեղրը։ Կանայք երկուսն էլ ուշադիր զննում էին ու շոշափում նոր կտորների նմուշները և, ամբողջովին սուզված իրենց զբաղմունքի մեջ, աշխույժ զրուցում էին Օդետտան— նրա ութ տարին արդեն լրացել էր, և դրա առաջին օրը նշել էին ծնունդը—միջանցքի մյուս կողմում գտնվող հեռավոր սենյակներից մեկում էր, որի լուսամուտները բացվում էին փողոցի վրա։ Նա հենց նոր էր հետաքրքրվող քիթը խրել կիսաբաց դռնից ներս, ցանկանալով իմանալ, ինչ են անում մայրն ու մորաքույրը։ Նրան ետ քշեցին, խստորեն հրամայելով մինչև ճաշ դասերը վերջացնել։ Մարկը լիցեյում էր և կես ժամից հետո պետք է գար։

Ժամանակն ընթանում էր անշտապ և հավասար, առանց որևէ արգելքի, անծածանք, և, թվում էր, այդպես շարունակվելու է ամբողջ կյանքի ընթացքում։ Քույրերն իրենց լավ էին զգում, բայց միտք էլ չունեին դրա համար ուրախանալու. դա բնական էր։ Բակում, պատը ծածկող բաղեղների մեջ ծաղրը ծլվլում էին։ Աշնանային ճանճերը դզդզում էին հաճույքից, վայելելով վերջին տաք օրերը և արևում ջերմացնելով փայտացող թևիկները։

Քույրերը ոչինչ չէին լսում... Ոչ մի բան։ Եվ այնուամենայնիվ երկուսն էլ միանգամից լռեցին, միևնույն վայրկյանին, կարծես զգալով, որ կտրվեց այն բարակ թելը, որից կախված էր նրանց երջանկությունը...

Մուտքի դռան զանգը հնչեց։

— Մի՞թե Մարկն է։ Ոչ, նրա գալու համար դեռ շուտ է։

Նորից զանգ։ Հետո դուռը արագ-արագ բախեցին... Մեկ-մեկ այնպիսի շտապկոտ մարդի՞կ են լինում... Հի՞մա...

Սիլվիան գնաց դուռը բացելու։ Աննետան նրա հետևից, մի քանի քայլ ետ ընկած։

Դռան մոտ շնչակտուր դռնապանուհին ինչ-որ բան էր գոռգոռում, ձեռքերը թափահարելով։ Առաջին ակնթարթին նրանք չհասկացան...

— Դուք դեռ ոչի՞նչ չգիտեք, տիկին, Դժբախտություն է պատահել... փոքրիկ օրիորդը...

— Ո՞վ։

— Մադմուազել Օդետտան... Ախ՛ղճ երեխա...

— Ի՞նչ, ի՞նչ։

— Ընկել է...

— Ընկե՞լ է...

— Այո, ներքևում է։

Սիլվիան ոռնաց։ Մի կողմ հրելով դռնապանուհուն, նա աստիճաններով գլխապատառ սլացավ ներքև։ Աննետան ուզեց նրա հետևից վազել, բայց ոտքերը ծալվեցին, սրտի ուժեղ թրթռոցը խանգարում էր քայլել։ Ստիպված եղավ սպասել։ Նա դեռ կանգնած էր վերևում, բազրիքից կախված, երբ փողոցից լսվում էին Սիլվիայի վայրի ճիչերը...

Բայց ի՞նչ էր պատահել։ Երևի, Օդետտան, որ հանգիստ նստել չգիտեր և, դասերը պատրաստելիս անընդհատ տեղից ցատկում էր և քիթն ամեն տեղ խրում, լուսամուտից դուրս է նայել, որպեսզի տեսնի Մարկը գալիս է թե չէ. և չափից ավելի է կախվել... Ախղճ երեխան նույնիսկ չի հասցրել հասկանալ, թե ինչ կատարվեց...

Երբ Աննետան, օրորվելով, վերջապես, ցած իջավ, տեսավ փողոցում ամբոխված մարդկանց, խելքը կորցրած Սիլվիային, և նրա թևերին ընկած երեխայի փոքրիկ, ջարդուված մարմինը՝ անկենդան կախված ձեռքերով ու գլխով, որ կարծես մորթված գառ լիներ։ Մազերի սև գլխարկի տակ գանգի ջարդվածքը չէր երևում։ Միայն քթից մի քիչ արյուն էր հոսել։ Աչքերը դեռ բաց էին, կարծես հարցնում էին... Պատասխանը մահը տվեց։

Աննետան սարսափի ճիչով գետին կրնկներ, եթե նրան կաթվածահար չաներ Սիլվիայի վայրի ճիչերը։ Նրա աղաղակներում լսվում էր մարդկային տառապանքների ամբողջ անսահմանությունը։ Սիլվիան, չոքած, գրեթե կրծքով պառկել էր երեխայի վրա, որին սալարկից էր վերցրել։ Նա խելահեղ ճիչերով երեխային ցնցում էր ու ձայն տալիս, կանչում Օդետտային։ Սիլվիան անիծում էր—ո՞ւմ, ի՞նչ Երկին-

քը, երկիրը... Նա խելագարվում ատելությունից ու հուսահատությունից...

Աննետան առաջին անգամ տեսավ, որ քույրն էլ է բռնկված ուժեղ կրքերով։ Սիլվիան ինքն էլ իր մեջ երբեք չէր ենթադրել այդպիսի կրքեր, քանի որ կյանքը մինչև հիմա նրան խնայել էր, տալով դրանք դրսևորելու։ Այժմ Աննետան նրա մեջ ճանաչում էր իր արյունը։

Քրոջ հուսաբեկությունը Աննետային թույլ չէր տալիս ազատություն տալ իր հուսահատությանը։ Սիլվիային օգնելու և մխիթարելու համար նա պետք է ուժեղ լիներ և հանգիստ, և դա նա կարողացավ։ Աննետան բռնեց Սիլվիայի ուսերից։ Սիլվիան նրա ձեռքերից դուրս էր պրծնում և շարունակում աղաղակել, բայց Աննետան կռացավ և վերցրեց նրան։ Եվ Սիլվիան ենթարկվելով, վերջապես, այդ տիրական քնքշությանը, հանդարտվեց, բարձրացրեց գլուխը։ Տեսնելով շուրջը ամբոխված մարդկանց, նա մոայլ հայացքով նայեց բոլորին և, առանց որևէ բառ ասելու, երեխային գրկած գնաց դեպի տուն։

Սիլվիան նոր էր ոտքը շեմից ներս դրել, երբ նրա հետևից գնացող Աննետան անկյունում նկատեց Մարկին, որը դպրոցից վերադառնում էր։ Եվ չնայած իր վշտի ծանրությանը և դժբախտ փոքրիկ աղջկա հանդեպ ունեցած մեծ սիրուն, նրա սիրտը կրծքի տակ սկսեց թրթռալ.

«Ի՞նչ բախտավորություն է, որ Մարկը չէ»։

Աննետան Մարկին ընդառաջ վազեց, որպեսզի խանգարի նրա տեսնելուն։ Մոր առաջին իսկ խոսքերից Մարկը սիրտ առավ և սեղմեց առամներքը։ Աննետան Մարկին հեռու տարավ այն տեղից, որտեղ կատարվել էր դժբախտությունը, և ասաց, որ Օդետտան սաստիկ ջարդվել է։ Բայց Մարկը երեխաներին բնորոշ հոտառությամբ հասկացավ, որ նա մահացել է։ Ջղաձգորեն սեղմելով ձեռքերը, նա փորձում էր վանել այդ սարսափելի միտքը։ Սակայն, չնայած հուզմունքին, նա ամբողջ ժամանակ իրենով էր զբաղված, հետևում էր իր շարժումներին և դեմքի արտահայտությանը, կողքից նայող մարդկանց։ Մարկը անհարմար զգաց, նկատելով, որ մայրը փողոցում առանց գլխարկի է և որ մարդիկ շրջվում նայում

են իրենց։ Այդ անախորժությունը չեղեց նրա ուշադրությունը և օգնեց հանգստանալ։ Տեսնելով, որ նա իրեն տոկուն է պահում, Աննետան նրանից կես ճանապարհին բաժանվեց, ասելով, որ Մարկը տուն գնա, իսկ ինքը շտապեց Սիլվիայի մոտ։ Սիլվիան, ամբողջովին ուժասպառ ընկնելով աթոռին, նստել էր անկյունում, ննջեցյալի մահճակալի մոտ, ոչինչ չլսելով և չհասկանալով, շնչելով ծանր ու աղմկոտ, ինչպես ուժասպառված ձին։ Վարպետուհիները իրար էին անցել աղջկա շուրջը։ Աննետան լողացրեց Օգետտայի փոքրիկ մարմինը, նրան մաքուր սպիտակեղեն հագցրեց և դրեց անկողին, ինչպես այն հեռավոր երեկոներին (միայն երեկ, իսկ ինչքա՜ն, ինչքան հեռու էր այն ժամանակը), երբ նա գալիս էր լսելու իրեն հաղորդվող մանկական գաղտնիքները։ Անելով այն ամենը, ինչ հարկավոր էր, Աննետան մոտեցավ Սիլվիային և բռնեց նրա ձեռքը։ Խոնավ ու սառը մատները անկամորեն ընկած էին իր ձեռքի մեջ։ Աննետան սեղմում էր այդ մատները, որոնցից, թվում էր, կյանքը հեռացել է։ Նա չէր համարձակվում քրոջը մխիթարանքի խոսքեր շշընջալ, որոնք, միևնույն է, չէին թափանցի հուսահատության պատնեշի միջով։ Միայն քույրական սիրով և կարեկցանքով լեցուն ֆիզիկական հպումն էր, որ կարող էր աստիճանաբար հասնել Սիլվիայի սրտին։ Աննետան գրկեց Սիլվիային, ճակատով սեղմվեց նրա այտին։ Աննետայի աչքունքները կաթում էին քրոջ պարանոցին ու կրծքին, կարծես նրա համար, որ հալեցնեն Սիլվիայի սիրտը պատած սառույցի կեղևը։ Սիլվիան լուռ էր և անշարժ։ Բայց մատներն արդեն սկսել էին թույլ կերպով պատասխանել Աննետայի սեղմուժին։ Երբ լեռպոլղը եկավ, Աննետան նրանց թողեց միասին։

Նա գնաց տուն և Մարկին ասաց ամբողջ ճշմարտությունը։ Բայց Մարկը այդ ճշմարտությունը ինքն էլ գիտեր։ Նա թաքցնում էր հուզմունքը, որովհետև այդ հուզմունքը վախեցնում էր իրեն, և աշխատում էր պահպանել իր հանգիստ և վստահ տեսքը։ Դա նրան հաջողվում էր միայն այն ժամանակ, քանի դեռ ինքը լուռ էր։ Բայց հենց որ նա սկսեց խոսել, ձայնը կերկերաց ու կտրվեց։ Նա վազեց մյուս սենյակը, որպեսզի առանձնության մեջ լաց լինի։ Աննետան

մայրական հոտառությամբ կռահում էր մանկական սրտի թախիծը՝ մահվան հետ առաջին հանդիպման ժամանակ և որդու հետ այլևս այդ վտանգավոր թեմայի մասին չխոսեց։ Նա պարզապես Մարկին նստեցրեց իր ծնկներին, ինչպես դա անում էր վաղ մանկական տարիներին։ Մարկի մտքով էլ չանցավ նեղանալ այն բանի համար, որ իր հետ այնպես են վարվում, ինչպես երեխայի, և, կարծես փրկություն փնտրելով, փարվեց նրա տաք կրծքին։ Այդպես նրանք երկուսով էլ հանդարտվեցին, օրորելով իրենց սարսափը այն գիտակցությամբ, որ իրենք միայնակ չեն, որ իրենք երկուսով կարող են պաշտպանվել այդ սարսափից։ Հետո Աննետան սոխակից տղային պահանջել քնելու, համոզելով նրան համարձակ լինել, ինչպես հարկն է տղամարդուն, և չվախենալ, եթե ինքը հարկադրված լինի գիշերը գնալ և Մարկին մենակ թողնել։ Մարկը խոստացավ։

Եվ Աննետան ուշ գիշերին նորից գնաց այն տունը, որտեղ տեղի էր ունեցել ողբերգությունը։ Նա ուզում էր նստել մահացածի մոտ։ Սիլվիան արդեն դուրս էր եկել իր մոայլ անզգայությունից։ Չվերադարձավ նաև առաջին րոպեների նրան ալեկոծող հուսահատությունը։ Բայց ծանր էր նրան նայելը։ Աննետան, ներս մտնելով, տեսավ, որ նա ժպտում է։ Ըստ երևույթին, նրա խելքը պղտորվել էր։ Լսելով Աննետայի քայլերի ձայնը, նա աչքերը բարձրացրեց, նայեց քրոջը և, մոտենալով նրան, ասաց.

— Օդետտան քնել է։

Բռնելով Աննետայի ձեռքը, Սիլվիան նրան տարավ մահճակալի մոտ.

— Մի նայիր, թե ինչքա՜ն է լավը։

Սիլվիան այդ ասում էր ուրախությունից ցնծալով, բայց Աննետան նրա դեմքին թաքուն տագնապի ստվեր նկատեց։ Եվ երբ Սիլվիան մի րոպեից հետո նորից կիսաձայն ասաց. «Նա քաղցր-քաղցր քնած է, ճի՞շտ է»,— Աննետան, հանդիպելով նրա տենդագին հայացքին, որ պատասխանի էր սպասում, պատասխանեց այն, ինչ նրանից ուզում էին լսել.

— Այո, նա քնած՝ է։

Աննետան Սիլվիայի հետ գնաց կողքի սենյակը։ Այնտեղ

նստել էին Լեոպոլդը և վարպետուհիներից մեկը։ Նրանք փորձում էին խոսակցություն սկսել՝ Սիլվիայի մտքերը ցրելու համար։ Բայց նրա միտքը, ինչպես վիրավոր, այս ու այն կողմ էր նետվում, մի բանից մյուսին ցատկելով և կանգ չառնելով ոչնչի վրա։ Նա վերցրեց ինչ-որ ձեռագործ, րոպեն մի անգամ դա մի կողմ էր գցում, հետո նորից էր վերցնում ու նորից գցում մի կողմ, կարծես ականջ դնելով հարևան սենյակից եկող շնչառությանը, և անընդհատ կըրկրնում էր.

— Ինչքա՞ն ամուր է քնած։

Այդ ասելով, նա հայացքը շրջում էր դեպի շրջապատողները, որպեսզի նրանց... ոչ, որպեսզի իրեն համոզի դրանում։ Մի անգամ, մոտենալով մահճակալին, նա կռացավ մահացած աղջկա վրա և սկսեց նրան սիրալիր խոսքեր ասել։ Աննետայի համար տանջանք էր այդ լսելը, նա ուզում էր, որ քույրը լռի։ Բայց Լեոպոլդը կամացուկ աղաչում էր նրան Սիլվիային չխանգարել.—Թող սփոփվի պատրանքով։

Պատրանքը ինքն իրեն ցրվեց։ Սիլվիան վերադարձավ իր տեղը, նորից ձեռքն առավ աշխատանքը և այլևս ոչինչ չէր ասում։ Նրա շուրջը խոսում էին, բայց Սիլվիան չէր լսում։ Շուտով մյուսները նույնպես լռեցին։ Սենյակում վհատ մի լռություն կախվեց... Հանկարծ Սիլվիան ճչաց։ Դա երկար, առանց խոսքի ճիչ էր։ Կրծքով սեղանին ընկնելով, նա սկսեց գլուխը խփել սեղանին։ Շուտով վերցրին ասեղներն ու մրկրատը։ Երբ Սիլվիան դարձյալ կարողացավ խոսել, սկսեց անիծել աստծուն։ Նա երբեք չէր հավատացել աստծուն, բայց հո պետք էր սիրտը թեթևացնել։ Եվ, ահեղորեն փայլեցնելով աչքերը, նա աստծու գլխին կոպիտ հայհոյանքներ էր թափում...

Սիլվիան շուտով ուժասպառվեց, և նրան անկողին տարան։ Նա անշարժ պառկել էր։ Աննետան նրանից չէր հեռանում, մինչև որ չքնեց։

Աննետան տուն էր վերադառնում բոլորովին չարդված։ Փողոցների վրա արդեն բարձրանում էր սպիտակավուն լուսաթացը... Մարդիկ քնած չէր։ Աննետան սկսեց հանվել, ցրտից դողդողալով։ Բայց վերջին րոպեին, երբ արդեն պատ-

բաստվում էր պառկելու, նա բորիկ, միայն շապիկով նետվեց որդու սենյակը։ Անչափ շատ էր նա այդ օրը տառապել, չափազանց երկար էր գոտեպնդվում։ Նա մոլեգնաբար համբուրում էր տղայի շրթունքները, աչքերը, ականջներն ու վիզը, համբուրում էր նրա ձեռքերն ու ոտքերը, անընդհատ կրկնելով.

— Հարազատս, փոքրիկս... Դու ինձ չե՞ս լքի, չե՞ս լքի ինձ...

Մարկը վախեցած էր, շփոթված, սաստիկ հուզված։ Նա լալիս էր մոր հետ միասին, խղճալով ավելի շատ իրեն, քան ուրիշներին։ Բայց ուրիշներին նույնպես։ Հիմա նա զգաց իր կարոտի վիշտը, նա ողբում էր այդ սերը, որին աչառ մերժում էր։ Քնքշությամբ ու թախիծով էր նա վերհիշում այն երեկոն, երբ ինքը հիվանդ էր և Օդետտան սողոսկեց իր մոտ։ Եվ մոտածեց.

«Բայց և այնպես մեռնողը ե՞ս չեմ։ Ես կենդա՞նի եմ...»։

Աննետան դողում էր այն մտքից, որ իր առաջ այդպիսի մի օր էլ կա։ Նա այդ օրը տանելու ուժ չէր ունենա։ Բայց մնացած հետագան նա վերապրում էր ոչ այդպիսի սոսկում պատճառող սրությամբ, ինչպես առաջին ժամերն էին։ Երբ տառապանքը հասնում է մինչև բարձրագույն կետին, նա անխուսափելիորեն սկսում է իջնել։ Դրանից կամ մեռնում են, կամ ընտելանում են դրան։

Սիլվիան իրեն հավաքեց։ Նրա դեմքը մեռելի պես գունատ էր, քթի մոտ և բերանի անկյուններում խոշոր ծալքեր էին զոյացել (դրանք թեև հետագայում մի քիչ հարթվեցին, բայց հավիտյան իրենց հետքը թողին Սիլվիայի դեմքի վրա)։ Բայց նա հանգիստ էր, գործունյա, վարպետուհիների հետ ձեռնամուխ եղավ սգո զգեստները ձևելուն և կարելուն։ Նա կարգադրություններ էր անում, հսկում էր բոլորին, նա աշխատում էր, նրա ձեռքի շարժումները ստույգ էին և նույնքան վստահ, ինչպես և հայացքը։ Երբ նա Աննետայի վրա շորը փորձում էր, Աննետան վախենում էր այնպիսի խոսք ասել, որ կարող էր Սիլվիային հիշեցնել թաղման մասին։ Բայց Սիլվիան ինքը խոսք բացեց դրա մասին—հանգիստ, սառնարյուն։ Նա չէր ուզում ոչ ոքի հանձնարարել

թաղման հետ կապված հոգսերը, և ինքը կարգադրություններ արեց մինչև ամենափոքր մանրուքը։ Այդ արհեստական հանգստությունը Սիլվիան պահպանեց մինչև թաղման վերջը, եվ միայն կրոնական արարողություննների կատարմանը նա ընդդիմացավ սաստիկ, մտաստւզ զայրույթով։ Սիլվիան աստծուն չէր ներում իր դստեր մահը... Մինչև այդ դժբախտությունը Սիլվիան բնազդորեն անհավատ էր, բայց կրոնին վերաբերվում էր միայն անտարբերությամբ, և ոչ թե թշնամանքով։ Չխոստովանելով այդ, թեթևակի ծիծաղելով իր վրա, նրա սիրտը նույնիսկ շարժվեց, երբ իր քնքուշ աղջկան տեսավ հաղորդվելու պատրաստվածի սպիտակ զգեստով... Իսկ հիմա նա գիտեր, որ ամեն ինչ խաբեություն է, այո՛, այո՛... Սրիկա՛ աստված... Երբևէ Սիլվիան չի՞ ների նրան։

Աննետան վախենում էր, որ գերմարդկային այն ճիգերը, որոնք Սիլվիան գործադրում էր իր վրա, կվերջանան հուսահատության նոր նոպայով, երբ նա գերեզմանից տուն վերադառնա։ Բայց նրան չհաջողվեց մնալ քրոջ հետ։ Սիլվիան շատ խիստ տոնով Աննետային ասաց, որ նա տուն գնա։ Աննետայի ներկայությունը նրա համար անհանդուրժելի էր. չէ որ Աննետան տղա՛ ունի...

Հաջորդ օրը անհանգստացած Լեոպոլդը եկավ Աննետայի մոտ և պատմեց, որ Սիլվիան ամբողջ գիշերը չպառկեց։ Նա չէր լալիս, չէր գանգատվում, լուռ տառապում էր։ Իրեն չխնայելով, նա սկսեց առաջվա պես արհեստանոցում աշխատել։ Սովորական պարտականություններն իրենցը պահանջում էին ավելի համառ կերպով, քան կյանքն ինքը։ Սիլվիայի հոգեկան ծանր վիճակը արտահայտվում էր միայն մի քանի մանր-մունր բաներում. մի անգամ նա շորը ծուռ ձևեց (այդպիսի վրիպում նրա հետ երբեք չէր պատահում) և, ոչինչ չասելով, շպրտեց մի կողմ։ Մի ուրիշ անգամ մկրատով մատիները կտրեց։ Երեկոները նրան համոզում էին պառկել։ Բայց նա ամբողջ գիշերները մինչև լույս անկողնու մեջ նստում էր առանց աչք փակելու, չպատասխանելով նրանց, ովքեր հետն սկսում էին խոսել։

Եվ ամեն առավոտ մինչև արհեստանոցում աշխատանքն սկսելը նա գնում էր գերեզմանատուն։

Այդպես անցավ երկու շաբաթ։ Մի անգամ Սիլվիան հանկարծ օրը ցերեկով ինչ-որ տեղ անհետացավ։ Գալիս էին պատվիրատու կանայք, սպասում էին։ Մոտեցավ ընթրիքի ժամը— նա դեռ չկար։ Խփեց ժամը տասը, տասնմեկը։ Ամուսինը վախենում էր, թե նա հուսահատությունից ինքնասպանություն է գործել։ Վերջապես, գիշերվա ժամը մեկին նա տուն վերադարձավ և այդ գիշեր քնեց մինչև լույս։ Նրանից որևէ բան իմանալ չհաջողվեց։ Հաջորդ երեկոները նա դարձյալ ինչ-որ տեղ էր գնում։ Հիմա նա արդեն խոսում էր շրջապատողների հետ և, թվում էր, մեղմացել է, բայց համառ կերպով թաքցնում էր, թե երեկոներն ուր է գնում։ Վարպետուհիներն սկսեցին փսփսալ։ Բարի ամուսինը խղճում էր նրան և, ուսերը թոթվելով, Աննետային ասում.

— Թերևս Սիլվիան նույնիսկ ինձ դավաճանում է, ես չեմ կարող նրա վրա բարկանալ. նա այնքա՜ն տառապեց... Թերևս դա կարող է նրան հետապնդող մտքերը ցրել... Ի՞նչ կա որ, թող անի։

Աննետան մի անգամ դարանակալեց Սիլվիային, երբ վերջինս դուրս էր գալիս տնից, և զգուշորեն նրան հասկացրեց, թե ինչ անհանգստություն և ինչ կասկածներ են առաջացնում նրա բացակայությունները, ինչպես են դրանք վշտացնում նրա հարազատներին։ Սիլվիան սկզբում չէր ուզում նույնիսկ կանգ առնել և կատարյալ անտարբերություն ցուցաբերեց այն բանի նկատմամբ, թե ինչ կարող են մտածել նրա մասին։ Բայց իմանալով ամուսնու բարության մասին, նա զգացվեց և, զիջելով սիրտը թեթևացնելու հանգրծական պահանջին, Աննետային տարավ իր սենյակը։ Այստեղ նա դուռը փակեց և, քրոջ կողքին նստելով, կիսաձայն, խորհրդավոր տեսքով, փայլեցնելով աչքերը, պատմեց Աննետային, որ ամեն երեկո գնում է հոգևհմանների խմբակը, որը հավաքվում է սեղանի շուրջը, և այնտեղ զրուցում է իր մեռած աղջկա հետ։ Աննետան, չհամարձակվելով ցույց տալ իր զգացմունքները, սոսկումով լսում էր Սիլվիային, որը գորովանքով պատմում էր նրան Օդեստայի պատասխաննեըր։ Հիմա արդեն հարկավոր չէր Սիլվիային ստիպել, որ խոսի, նրա համար ուրախություն էր բարձրաձայն կրկնել աղջկա

խոսքերը, այդ խոսքերի մեջ նա դնում էր իր ամբողջ հոգին։ Աննետան չէր համարձակվում խորտակել այն պատրանքը, որով հիմա ապրում էր քույրը։ Իսկ Լեոպոլդը—նա նույնիսկ պատրաստ էր Սիլվիային խրախուսել։ Այդ հասարակ և առողջամիտ մարդու աչքում Սիլվիայի ինքնաներշնչումը ավելի վատ չէր ամեն տեսակի ուրիշ կրոնից։ Աննետան խորհրդակցեց բժշկի հետ, և բժիշկն ասաց, որ պետք չէ Սիլվիային ձեռք տալ այնքան ժամանակ, քանի դեռ նա չի հաղթահարել իր վիշտը։

Այժմ Սիլվիան ցնծություն էր զգում։ Նայելով նրան, Աննետան մտովի հարցնում էր իրեն, ավելի լա՞վ չէ մայրական սրբազան վիշտը, քան այդ անհեթեթ ուրախությունը, որը վիրավորանք է հասցնում մահվան խորհրդավորությանը։ Արհեստանոցում Սիլվիան արդեն չէր թաքցնում իր կապերը անդրաշխարհի հետ։ Աղջիկները նրան հարց ու փորձ էին անում սեանսների մասին—Սիլվիայի պատմածները նրանց նույնպիսի բավականություն էին պատճառում, ինչպես այն վեպերը, որոնք լրագրերում են տպագրվում։ Մտնելով արհեստանոց, Աննետան լսում էր, ինչպես են նրանք աշխուժորեն քննարկում Սիլվիայի վերջին զրույցը մահացած Օդետտայի հետ։ Իսկ մի անգամ նա տեսել էր, ինչպես է աշակերտուհիներից մեկը քթի տակ ծիծաղում, դեմքը թաքցնելով ձեռքին բռնած կտորի հետևում։ Սիլվիան, որ դեռ վերջերս այնքան զգայուն էր ծաղրանքի նկատմամբ և վարպետորեն գործի էր դնում այն, այժմ շաղակրատում էր, չնկատելով ոչինչ և ամբողջովին կլանված իր ցնորական գաղափարով։

Դրանով գործը չվերջացավ։ Մի անգամ երեկոյան, Աննետային ոչինչ չասելով, Սիլվիան Մարկին իր հետ տարավ սեանսի։ Նա նորից խանդավառ սիրով բոցավառվեց դեպի երեխան, և նրա դեմքը պայծառանում էր, երբ Մարկը գալիս էր։ Մարկին տանը չգտնելով, Աննետան իսկույն գլխի ընկավ բանն ինչումն է։ Բայց երբ երեխան ուշ երեկոյան վերադարձավ, լարված ու այլայլված, Աննետան զսպեց իրեն և հարցուփորձ չարեց։ Գիշերը քնի մեջ Մարկը դողում էր։ Աննետան վեր կացավ և, քնքշորեն շոյելով գլուխը հանգըստացրեց նրան։

Առավոտյան նա շատ խիստ խոսեց Սիլվիայի հետ։ Երբ բանը Աննետայի որդուն էր վերաբերվում, նա չէր կարողանում ներել քրոջը։ Այս անգամ նա չթաքցրեց իր խոր զզվանքը Սիլվիայի վտանգավոր խելագարությունների նկատմամբ և կատեգորիկ կերպով արգելեց երեխային դրանց մեջ քաշել։ Ուրիշ ժամանակ Սիլվիան կպատասխաներ ոչ պակաս խրոտությամբ, բայց հիմա նա միայն առեղծվածորեն քմծիծաղեց, գլուխը կախելով, որպեսզի չհանդիպի Աննետայի ցասկոտ հայացքին։ Սիլվիան ներքին հաստատ համոզմունք չուներ իր հայտնագործությունների ճշմարտության մեջ, և նա զգուշանում էր քրոջ խիստ քննադատությունից։ Նա չուզեց Աննետայի հետ վիճել և ոչինչ չխոստացավ— մի խոսքով, իրեն պահում էր ինչպես անկարգություն թույլ տված կատուն, որը խորամանկորեն և շողոմաբար լսում է, թե ինչպես են իրեն կշտամբում, բայց, այնուամենայնիվ, իր ուղածն է անում։

Սիլվիան այլևս չէր համարձակվում Մարկին տանել իր հետ, բայց հաղորդում էր նրան այն ամենը, ինչ լսում էր հոգեհմանների սեանսների ժամանակ, և շատ դժվար էր խանգարել այդ զրույցները, որոնք Մարկը գաղտնի էր պահում նույնքան զգույշ, որքան և մորաքույրը։ Նա Մարկին պատմում էր, որ Օդետտան իր հետ խոսում է Մարկի մասին։ Հենց դա էլ Սիլվիային կապում էր երեխայի հետ. իբրև թե Օդետտան Մարկին կտակել էր մորը։ Սիլվիան միջնորդի դեր էր կատարում երկու երեխաների միջև, յուրաքանչյուրին հաղորդելով, թե ինչ ասաց մյուսը։ Մարկը փաստորեն նրան չէր հավատում։ Քննադատական միտքը, որ նա ժառանգել էր պապից, Մարկին պաշտպանում էր այդ անհեթեթությանը հավատալուց, բայց այդ հավատը հուզում էր նրա երևակայությունը։ Մարկը դա լսում էր մի տեսակ հետաքրքրությամբ և ինչ-որ աղոտ զզվանքով։ Տարվելով այդ անառողջ խաղով, նա միևնույն ժամանակ խստորեն դատապարտում էր Սիլվիային, տարածելով իր ատելությունը բոլոր կանանց վրա։ Այդ գերեզմանային մթնոլորտը վտանգավոր էր նրա տարիքի տղայի համար։ Ջափազանց շուտ էր նրա վրին փաթաթվել կյանքի և մահվան սոսկալի կատակերգության ծանրությու-

նր։ Մարկը կարծես թե իր շուրջն զգում էր քայքայվող մարմինների հոտը, նա խեղդվում էր այդ հոտից։ Եվ քանի որ նրա միտքը այնքան զարգացած չէր, որ իրեն պաշտպաներ, ապա պատանեկության կենսական փոթորկուն ուժերը երևան էին գալիս աղոտ բնազդներում, որոնք թափառում էին նրա մեջ, ինչպես գազաններ գիշեր ժամանակ։ Սարսափելի՜ երամ։ Կարելի է կարծել, որ էմբրիոլոգիայի ինչ-որ օրենքի շնորհիվ մարդու հոգեկան օրգանիզմը զարգացման պրոցեսում անցնում է բոլոր կենդանական ստադիաներն ավելի շուտ, քան վեր է բարձրանում մտքի և կամքի բարձր ատիճանին։ Բարեբախտաբար, դա կարճատև է, այդ շրջանը, որը հիշեցնում է մեր ծագումը՝ վայրի կենդանիներից։ Դա տեսիլքների շքերթ է։ Ամենալավն այն է, որ դրանց թույլ տրվի անցնել որքան կարելի է շուտ և, քաշվելով մի կողմ, ոչ մի բանով չարթնացնել նրանց մութ գիտակցությունը։ Բայց այդ շրջանը զերծ չէ վտանգներից, և ամենանուրբ զգոնությունը չի կարող երեխային նրանից պահպանել, քանի որ փոքրիկ Մակբեթը միայն ինքն է տեսնում այդ ուրվականներին։ Մյուս բոլորին, նույնիսկ ամենամոտիկներին, Բանկոյի տեղը դատարկ է թվում։ Մեծահասակները լսում են երեխայի առույգ ձայնը, նայում են նրա անմեղ դեմքին, չնկատելով պայծառ աչքերի խորքում անցնող վտանգավոր նավերները։ Ասենք, նա ինքն էլ, քննախույզ դիտորդը, հազիվ թե կասկած ունենա նրանց գոյության մասին։ Ինչպե՞ս նա ճանաչի ապահովության այդ բնազդները, բնազդները դաժանության և նույնիսկ... հանցագործության հակումը, եթե նրանք հայտնվել են մի օտար աշխարհից, որտեղ ինքը չի ծնվել։ Չկա մի արատավոր միտք, որը նրան չկպչի կյանքի այդ շրջանում, որի համը նա տեսա՞ծ չլիներ։

Երկու կին էին հովանավորում Մարկին, և երկուսն չէին ենթադրում, թե երբեմն ինչպիսի բարոյական հրեշ դառնում այդ սիրեցյալը, որը միշտ նրանց աչքի առջև է։

Սիլվիան կամաց-կամաց հանգստացավ։ Նրա պատմությունները հոգեհմանների սեանսների մասին այլևս չէին հնչում այնքան խորհրդավոր, նա դրանց մասին հիմա հաղորդում էր անհուզմունք, անցողակի, առանց որևէ կպչունու-

թյան։ Շուտով նրա տոնում նույնիսկ նկատելի դարձավ ինչ-որ հարկադրվածություն, իսկ հետո նա ամբողջովին դադարեց այդ մասին խոսելուց և այլևս չէր պատասխանում հարցուփորձերին... Հիասթափվե՞ց արդյոք և չէր ուզում դա խոստովանե՞լ։ Թե՞ հոգնածությունն էր հաղթում նրան։ Սիլվիան դա ոչ ոքի չասաց։ Սակայն երկար զրույցների ժամանակ, որոնք նա առաջվա նման վարում էր Մարկի հետ, անդրաշխարհը գնալով ավելի քիչ տեղ էր գրավում և վերջիվերջո անցավ հետին պլան։ Թվում էր, Սիլվիան նորից ձեռք բերեց հոգեկան հավասարակշռություն։ Գլխին եկած դժբախտության մասին կողմնակի աչքին ասում էին նրա արտաքինում տեղի ունեցած որոշ փոփոխություններ միայն։ Նա պառավել էր, և վիշտը ոչ միայն չէր ոգեշնչել նրա դիմագծերը, այլև, ընդհակառակը, դրանց մի տեսակ կոպիտ մարմնականություն էր տվել։ Ձևերը դառել էին փարթամ, նրա մեջ նույն նրբագեղությունն էր, բայց ավելի շատ փայլ կար։ Կյանքի հզոր բուռդը հաղթել էր տանջող թախծին։ Եվ նոր դառնություններն ու խնդություններն, օրերի թափվող տերևները, անցած ճանապարհների փոշին կամաց-կամաց լցնում էին նրա սրտում գերեզմանի մթին բացվածքը։

Երևութականությունը խաբուսիկ է...

Ոիվիերների ընտանիքում կյանքը դարձյալ ընթանում էր սովորական կարգով։ Բայց աղետը նրանց սրտերում ճեղք էր թողել։

Տիեզերքի կյանքում երեխայի անհետացումը շատ փոքրիկ իրադարձություն է։ Մահը քայլում է մեր միջև և ոչ ոքի չպետք է զարմացներ։ Այն օրից ի վեր, ինչ մենք աշխարհ ենք գալիս, տեսնում ենք մահվանն աշխատանքի լծված և ընտելանում ենք նրա մասին եղած մտքին։ Համենայն դեպս կարծում ենք, որ ընտելացել ենք։ Մենք գիտենք, որ վաղ թե ուշ այդ մահը կգա նաև մեզ մոտ և իր գործը կանի։ Մենք կանխատեսում ենք վիշտը։ Բայց դա ոչ միայն վիշտ է, դա ինչ-որ ավելի մեծ բան է։ Թող յուրաքանչյուրն իրեն հարցնի, այդպես է դա թե ոչ։ Եվ մեծամասնությունը կհամաձայնի, որ ինչ-որ մեկի մահը հեղաշրջում է առաջ բերել իր կյանքի մեջ։ Դա նման է դարաշրջանների փոփոխությանը։

Ante, Post Mortem...[1] *Մարդն անհետացավ— և մեր ամբողջ կյանքին հարված է հասցված, ողջերի ամբողջ աշխարհը, որը երեկ լույսի թագավորություն էր, այսօր պատվում է խավարով... փոքրիկ մի քար, փոքրիկ մի քար ընկնում է կամարից— և կամարը փլվում է։ Անէությունը կլանում է ամեն ինչ, նա սահման չի ճանաչում։ Եթե մի փոքր «ես»-ը ոչինչ է, ապա նաև ամեն տեսակի «ես»-ն է կորցնում նշանակությունը։ Եթե այն, ինչ ես սիրել եմ, այլևս չկա, ապա ես, սիրողս, նույնպես դարձա ոչինչ, քանի որ ես գոյություն ունեմ լոկ նրա մեջ, ինչ սիրում եմ... Եվ նրա մահվամբ հանկարծ ի հայտ է գալիս այն ամենի անիրականությունը, ինչ ապրում և ջնջում է մեր շուրջը։ Եվ բոլորն են հանգում դրան, բայց յուրաքանչյուրն իր ձևով։ Մեկը բնազդով, մեկը բանականությամբ, մեկը նայում է ուղղակի դրա երեսին, մեկը վախկոտորեն աչքերը մի կողմ է փախցնում։*

Ընտանեկան ծառից չարվեց ընկավ մի փոքրիկ շյուղ՝ Օդետտան։ Մյուս ճյուղերը շարունակում էին աճել և ընձյուղներ արձակել։ Բայց չորսից երեքը աճում էին խեղդված։

Ամենից քիչ այդ աղետը անդրադարձավ հոր վրա։ Թաղման օրը ցավալի էր նրան նայել, նա նման էր ուժասպառված ու գետին ղլորված ձիու, որի կուրծքը ու կողերը դժվարությամբ են բարձրանում։ Բայց անցավ երկու շաբաթ— և նա նորից էր արդեն հափշտակված իր գործերով, կյանքի տիրական պահանջները հաղթահարեցին վիշտը, նա աշխատում էր, երկու հոգու կեր ուտում, շրջագայում և մոռացության տալիս։

Երկու կանանցից Աննետային ավելի շուտ կարելի էր որբացած մոր տեղ դնել։ Նա անմխիթար էր։ Որքան ավելի շատ էր շրջապատի կյանքում ջնջվում մահացած աղջկա հետքը, այնքան ավելի էր սրվում նրա վիշտը։ Օդետտան ավելի շատ նրա երեխան էր, քան Սիլվիայի։ Այդ դուստրը, որ ստեղծված չէր Աննետայի մսից ու արյունից, բայց նրա հոգու ընտրյալն էր, որի համար նա հեղում էր իր քնքշության ամբողջ պաշարը, իրեն ավելի մոտ էր, քան հարազատ

[1] *Մինչև մահ, մահից հետո...* (լատ.)։

որդին։ Հիմա նա իրեն նախատում էր, որ այնքան էլ շատ չի սիրել Օգետտային, որ զլացել է փաղաքշանքների մեջ, որոնք այնքան պետք էին այդ անհոգ տրտիկին։ Նա իրեն ներշնչում էր, որ պետք է մենակ պահպանի այդ փոքրիկ աղջկա հիշատակը, որովհետև մյուս բոլորը կամաց-կամաց մոռանում են նրան։

Սիլվիան այժմ ցույց էր տալիս տարօրինակ աշխուժություն— փութաջան և անհանգիստ։ Խոսում էր բարձրաձայն, համեմելով հոգնեցուցիչ խոսքերի հեղեղը սրախոսություններով ու անպարկեշտ նկատողություններով, որոնք նրա արհեստանոցի ժողովուրդը դիմավորում էր քրքիջի պոռթկումով, իսկ Մարկը դրանք վայրկենապես որսում էր և ծածուկ ըմբոշխնում։ Մարկը նույնպես ձեռից գնացել էր։ Սկսել էր վատ սովորել, պարապ-սարապ մեն էր գալիս, թեթևսոլիկի կյանք էր վարում, թույլ էր տալիս քմահաճություններ. դա հոդու ռեակցիան էր, որը պաշտպանվում էր իրեն համակած սարսափից։ Բայց շրջապատողներից ո՞վ կարող էր դա կռահել։ Չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը մյուսների համար փակ դիրք է։ Քեզ անտարբեր են համարում, մինչդեռ դու ծարավի ես բացվելու—և չես կարողանում... «Տառապանքների ընդհանրություն չկա...»։

Մահացածի նկատմամբ ունեցած սերը Աննետային դարձրել էր անարդարացի՝ ապրողների նկատմամբ։ Նա ապրողների մեջ միայն էգոիստների էր տեսնում, որոնք ամեն կերպ կառչում են կյանքից, հիշողությունները ետ հրելով դեպի հոգու խորքը, և՝ վրդովվում էր դրա համար նրանց վրա։

Բայց ահա մի անգամ, կիրակի օրը, երբ Մարկը Լեոպոլդի հետ գնացել էր ինչ-որ սպորտային մրցման, Աննետան գալով Սիլվիայի մոտ, մուտքի դուռը բաց գտավ։ Միջանցքից նա ծանր ու երկար տնքոցների ձայն լսեց։ Դա Սիլվիան էր, որ իր սենյակում նստած, խոսում էր ինքն-իրեն և լալիս։ Աննետան ոտքերի ծայրի վրա նորից դուրս եկավ սանդղահարթակ, փակեց մուտքի դուռը և զանգը խփեց։ Սիլվիան բացեց դուռը։ Նրա աչքերը կարմրել էին։ Նա բացատրեց, որ դա հարբուխից է, և իսկույն սկսեց շաղակրատել աղմկոտ և կոպտավուն ուրախությամբ։ Պատմեց անպարկեշտ անեկ-

դոտներից մեկը, որոնցից նա միշտ հարյուրների պաշար ուներ։ Աննետայի սիրտը մրմռաց։ Կնշանակի, այս բոլորը միայն կե՞ղծ բաներ են։ Բայց դա կեղծ էր միայն կիսով չափ։ Սիլվիան ամենից առաջ աշխատում էր խաբել ոչ թե ուրիշներին, այլ ինքն իրեն։ Խոր, աննշույլ, անել հուսահատությունը նրան հասցրել էր կյանքի նկատմամբ մի տեսակ խեղկատակային, կեղծ արհամարհանքի։ Նրան միայն մի ելք էր մնացել. մոռանալ և կրել անհոգ ցինիզմի այդ դիմակը, որը վերջիվերջո փոխել էր նրա իսկական դեմքը։ «Աշխարհում ամեն ինչ դատարկ բան է և ձվի կճեպ էլ չարժի։ Ազնվությունը, վեհանձնությունը—դատարկ խոսքեր են... Ոչինչ լուրջ չպե՞տք է ընդունել։ Ո՛չ։ Օգտվե՛լ կյանքից և ծիծաղե՛լ կյանքի վրա։ Մի բան կա անհրաժեշտ—աշխատանքն է, որովհետև աշխատանքը պահանջ է և որովհետև առանց աշխատանքի չես կարող ապրել...»։

Դեռ շատ բան էր պահպանվել այդ ավերված կյանքում։ Սիլվիայի մեջ բնազդները բանականությունից ավելի ուժեղ էին։ Ու թեև նա կարծես ամեն ինչ սրբել թափել էր, Աննետան և Աննետայի որդին ամուր արմատներ էին գցել նրա սրտում։ Նրանք երեքով կարծես իրար էին ձուլվել որպես մի էակ։ Ինչևիցե, այդ բնազդային, գրեթե կենդանական սերը հիանալի կերպով գոյակցում էր Սիլվիայի մեջ չարակամ զգացմունքների հետ։ Սիլվիան, որ անողորմ էր իր նկատմամբ, անողորմ էր նաև Աննետայի հանդեպ։ Նա Աննետայի հետ խոսում էր ծաղրանքով, որովհետև Աննետայի լրջությունը և բարոյական պահանջկոտությունը, նրա հուշերով լեցուն լուռ թախիծը ջղայնացնում էին Սիլվիային, ինչպես համր նախատինք։

Եվ դա իսկապես էլ նախատինք էր։ Աննետան այն աստիճանի մեծահոգի չէր, որ քրոջը խնայեր։ Ճիշտ է, նա տեսնում էր, որ Սիլվիան փախչում է վշտից, ինչպես որսը՝ շնից, և խղճում էր նրան։ Նա գանգատվում էր մարդկային թուլությունից և միևնույն ժամանակ արհամարհում էր մարդկանց այն բանի համար, որ նրանք վշտի բուժման համար զոհաբերում են ամենաթանկ բանը և միշտ պատրաստ են դավաճանել իրենց ամենասուրբ զգացմունքներին,

Թրպեսզի բթացնեն դաժան և հանգիստ չտվող ցավը։ Դա այդքան սաստիկ խոցում էր Աննետային նաև այն պատճառով, որ նրա մեջ նույնիսկ բարձրաձայն խոսում էր կյանքի փոքրոգի ծարավը, և նա իրեն դատապարտում էր դրա համար։

Ահա ինչով էր բացատրվում դժբախտությունից հետո նրա մոայլ մտասուզվածությունը առաջին ամիսներին, նրա բարոյական անհանդուրժողականությունը, պեսիմիստական ու գոռոզամիտ, որի տակ նա թաքցնում էր սրտի վերքը...

Տխուր ձմեռից հետո նորից եկավ գատիկը։ Կիրակի մի առավոտ Աննետան թափառում էր Փարիզում։ Երկինքը պարզ չէր, օդը՝ անշարժ։ Սուզված իր վշտի մեջ, Աննետան լսում էր զանգերի վհատ ղողանջները։ Հնչյունները հյուսվում էին ու դառնում զրնգացող մի ցանց, պարուրում էին նրա հոգին, անհոգ տարիների հոսանքից քաշում դեպի ավազոտ ափը, որտեղ փռված ընկած էր մահացած աստվածը։ Աննետան մտավ եկեղեցի։ Եվ առաջին իսկ րոպեից զգաց, որ արցունքները խեղդում են իրեն։ Երկար զսպվելուց հետո նրանք ժայթքում էին հիմա առատաշիթ։ Աննետան այդ արցունքներին ազատություն տվեց։ Դեռ երբեք նրան այդպես հասկանալի չէր եղել զատկի այդ օրվա ողբերգական իմաստը։ Ընթերցասեղանի անկյունում չոքած, գլուխը կախած խոնարհաբար, նա երգեհոն էր լսում, լսում էր երգեցողություն, բերկրանքի հիմներ էր լսում... Ախ, այդ բերկրությո՜ւնը... Ահա այդպես էլ Սիլվիան է ծիծաղում, իսկ սիրտը լալիս է այնտեղ, խորքում... Այո, հիմա նա հաստատ գիտեր. նահատակ Քրիստոսը մեռած է, նա հարություն չառա՜վ։ Իսկ նրա բոլոր մերձավորների վշտալի սերը, սերը հարյուրավոր սերունդների զուր է ճգնում հերքել նրա մահը... Բայց որքա՜ն է վշտալի ճշմարտությունը բարձր հարության մասին նշած առասպելից, որքա՜ն է նրա մեջ ավելի շատ իսկական կրոնականությունը։ Ա՜խ, այդ բուռն կերպով սիրող սրտի հավիտենական տխուր ինքնախաբեությունը, սիրտ, որը չի՛ կարողանում հաշտվել սիրելի էակի կորստյան հետ...

Աննետան չուներ մեկը, որի հետ կարողանար բաժանել իր մտքերը։ Եվ ամփոփվելով իր մեջ փոքրիկ հանգուցյալի հետ, նա փրկում էր նրան երկրորդ և սարսափելի մահից. մոռացությունից։ Նա իր և ուրիշների հետ վարած այդ պայքարում անհերթ էր։ Բայց քանի որ ուրիշի մտքերի վրա բռնի կերպով ազդելու ամեն մի փորձ հակառակ գործողություն է առաջացնում, ապա այն մարդիկ, որոնց դատապարտում էր Աննետան, իրենց վիրավորված զգալով, պարսավում էին նրան ավելի խիստ, քան հարկավոր էր։ Եվ օտարումը նրանց և Աննետայի միջև գնալով ավելանում էր։

Մարկը և Աննետան դարձան գրեթե միանգամայն օտարներ։ Մարկը գնալով ավելի ու ավելի էր հեռանում մորից։ Այդ անհամերաշխությունը դեռ վաղուց էր հասունանում։ Բայց մինչև վերջին ժամանակները տղան թաքցնում էր իր վերաբերմունքը, զուսպ էր և զգուշավոր։ Ամբողջ այն երկար ժամանակը, որը նա անց էր կացրել Աննետայի հետ միասին, Մարկը խուսափում էր վիճել մոր հետ. ուժերը հավասար չէին, իսկ Մարկը ամենից առաջ ուզում էր, որ իրեն հանգիստ թողնեն։ Եվ նա հնազանդորեն թույլ էր տալիս, որ մայրն իր ուզածն արտահայտի։ Այդպիսով, Աննետան աստիճանաբար որդու առաջ դրսևորում էր իր բոլոր թուլություններըը, իսկ որդին իրենը ցույց չէր տալիս։ Հիմա, մորաքրոջ մեջ գտնելով իր դաշնակցին, Մարկն արդեն չէր վախենում բացել խաղաթղթերը։ Քանի-քանի անգամ է եղել, որ, երբ մայրը փորձ է արել որդու մտքերն իմանալ, որդին խխունջի նման քաշվել է իր պատյանի մեջ, և մայրը, զայրանալով դրանից, ասել է.

— Հը, դո՛ւրս արի բնիցդ։ Գոնե մի անգամ ցույց տուր, գլխումդ ի՞նչ կա։ Թե՞ խոսել չգիտես։

Օ, նա խոսել գիտեր— այդ տեսակետից Աննետան կարող էր հանգի՛ստ լինել։ Եվ հիմա նա խոսում էր... Ավելի լավ էր լո՛ւռ մնար, ինչպես առաջ... Դա ի՞նչ համառ, վիճասեր տղա էր։ Նա այլևս չէր վախենում մորը հակաճառելուց։ Ոչ, հակառակվում էր նրա ամեն մի խոսքին։ Եվ տեսնեիք թե ի՛նչ անպատկառ տոնով էր առարկում մորը։

Դա սկսվեց մի տեսակ հանկարծակի, միանգամից, և,

անկասկած, դրա համար մասամբ մեղավոր էր Սիլվիան, որը դավադրորեն խրախուսում էր քրոջ որդու ընդվզումը։ Բայց Մարկի վարքագիծն ուներ նաև ավելի խոր պատճառ։ Նրա մեջ տեղի ունեցող փոփոխությունը բացատրվում էր սեռական հասունացման մոտեցումով։ Տղան մի քանի ամսըվա ընթացքում կարծես վերածնված լիներ. նրա մեջ դրսեվորվեց միանգամայն ուրիշ բնավորություն, քմահաճ, կոպիտ շարժուձևեր։ Նախկին լռակյացությունը նրան համակում էր միայն ժամանակ առ ժամանակ, և դա արդեն երեխայի հաշտասեր, քաղաքավարի, փոքր-ինչ խորամանկ լռություն չէր, երեխայի, որն ուզում է դուր գալ,— հիմա նրա մեջ թշնամանք ու անհնազանդություն էին զգացվում։ Նրա հիմարության հասնող անքաղաքավարությունը, կոպիտ տոնը, անբացատրելի դաժանությունը, որով նա պատասխանում էր Աննետայի մայրական քնքշություններ, շատ էին խոցում մոր սիրտը։ Լինելով բավականաչափ զինված բարձրաշխարհիկ հասարակության դեմ, Աննետան անզեն էր այն մարդկանց նկատմամբ, ում սիրում էր։ Որդու ամեն մի կոպիտ խոսքը նրան վշտացնում էր, հասցնում արցունքի։ Աննետան դա ցույց չէր տալիս, բայց Մարկը ամեն ինչ հիանալի հասկանում էր։ Այնուամենայնիվ, նա չփոխեց իր վարքագիծը. թվում էր, աշխատում է ամեն ինչ մորն հակառակ անել։

Նա, իհարկե, կամաչեր այդ ձևով վարվել օտարների հետ։ Բայց մայրը նրա համար օտար չէր։ Նա կապված էր մոր հետ, և այն էլ ինչպե՞ս։ Ինչպես կենդանի պտուղ, որը, երբ ժամանակը գա, դուրս է գալիս մայրական արգանդիցս։ Նա ստեղծված է մոր մսից ու արյունից, և, երբ այդ միսն ու արյունը դառնում է պտղի միսն ու արյունը, նա պատռում է այն։

Մարկի մեջ շատ գծեր կային, որոնք մորից չէին ժառանգված և օտար էին մոր համար։ Սակայն, որքան էլ այդ տարօրինակ լինի, այդ գծերը չէին մոր և որդու միջև եղած գժտության պատճառը, այլ այն գծերն էին, որոնք նրանց մեջ ընդհանուր էին։ Անկախության նախանձախնդիր ծարավը Մարկի մեջ դեռ ցայտուն արտահայտված անհատականության արդյունք չէր, և մոր հետ ունեցած ամեն մի նմանու-

թյուն Մարկին վտանգավոր ոտնձգություն էր թվում։ Պաշտպանվելով այդ նմանությունից, Մարկը աշխատում էր ամեն ինչում տարբերվել Աննետայից։ Ինչ էլ որ Աննետան ասեր, ինչ էլ որ աներ նա, Մարկը ամեն ինչ ասում և անում էր հակառակը։ Աննետան քնքուշ էր—Մարկը անզգայի դեր էր խաղում, Աննետան անկեղծ էր—Մարկը իրեն պահում էր ինքնամփոփ։ Աննետայի կրակոտությանը նա հակադրում էր իր սառն անտարբերությունն ու կոպտությունը։ Եվ այն, ինչի դեմ Աննետան կռվում էր, այն, ինչը վանում էր Աննետային (ա՛խ, որքա՜ն լավ էր ճանաչում Մարկը նրա բնավորությունը),— այդ ամենը Մարկին հրապուրում էր, և նա շտապում էր այդ մասին հաղորդել մորը։ Քանի որ մայրը բարոյականության կողմնակից էր, այդ փսլնքոտը պարծենում էր անբարոյականությամբ հենց իր առաջ, իսկ որ գլխավորն է —ուրիշների առաջ։

— Բարոյականությունը մտացածին բան է,— մի անգամ հայտարարեց նա մորը։

Եվ դյուրահավատ մայրը դա լուրջ ընդունեց։ Աննետան բոլորը վերագրում էր Սիլվիայի վատ ազդեցությանը, որին դուր էր գալիս շփոթ մտցնել մոր կողմից այնքան խելամտորեն դաստիարակված այդ պատանու ուղեղի մեջ։ Հո՞պ— և վայրի սերմերի մի բուռ նետված է մարգի մեջ, և տակնուվրա են արված փութաջանորեն քերած ուղիները... Սիլվիան բավական փաստարկներ էր գտնում իրեն համոզելու համար, որ ինքը հանուն Մարկի շահերի է գործում։ «Խեղճը աճում է, ինչպես չերմոցային ծառը փոքրիկ նեղ տակառի մեջ... Ահա մենք նրա տեղը կփոխենք...»։ Եվ դեպի քույրն ունեցած իր ամբողջ սիրով հանդերձ, նա խոցող և դաժան բավականությամբ զողանում էր Աննետայից այդ սիրտը, նրա ընծյուղը։

Մարկը, ինչպես բոլոր երեխաները, զգոն այն բանի նկատմամբ, ինչ իրեն էր վերաբերվում, նկատեց քույրերի միջև տեղի ունեցող գաղտնի մենամարտը և, իհարկե, աշխատում էր դրանից օգուտ քաղել իր համար։ Նուրբ խարդավանքով նա ակնհայտ նախապատվություն էր տալիս Սիլվիային և ուրախանում էր, տեսնելով, որ մայրը խանդում է։

Աննետան արդեն իր խանդը չէր թաքցնում։ Եվ (ավելի մեծ հիմքերով, քան Սիլվիան) այդ խանդը բացատրում էր որդու համար ունեցած տագնապով։ Սիլվիան սիրում էր քրոջ տղային, և նա բավականաչափ առողջ դատողություն ուներ. Սիլվիայի կյանքի մակերեսային իմաստությունը ավելին արժեր, քան ուզածդ խոր և լրջամիտ իմաստությունը։ Սակայն այդ իմաստությունը պետքական չէր տասներեք տարեկան տղայի համար, Մարկը դրանից վտանգավոր դասեր էր ստանում։ Այդ իմաստությունը տղայի մեջ սրում էր ախորժակը դեպի կյանքը, իսկ Հարգանք չէր ներշնչում։ Իսկ երբ կյանքի հանդեպ ունեցած հարգանքը չափազանց շուտ է անհետանում,— դա արդեն դժբախտությո՞ւն է։ Սիլվիան ոչ մի կերպ չէր կարող Մարկի մեջ լավ ճաշակ պատվաստել, բացի հագնվելուց։ Նա Մարկին տանում էր կինո, որտեղ ցուցադրվում էին հիմար ֆիլմեր, տանում էր երաժշտասրահներ, իսկ Մարկը այնտեղից բերում էր սարսափելի քառյակներ ու տպավորություններ, որոնք քիչ տեղ էին թողնում լուրջ մտքերի համար։ Դա անդրադառնում էր նրա պարապմունքների վրա։ Աննետան զայրանում էր և Սիլվիային արգելում Մարկին հետը տանել։ Բայց դա լավագույն միջոց էր մորաքրոջ և քրոջ տղայի միջև կապն ամրացնելու համար։ Մարկը համարում էր, որ իր մայրը բռնակալություն է անում, և շուտով հայտնագործեց, որ մեր օրերում ճնշվողների դերը շատ ձեռնտու է։ Իսկ Աննետան իր դարը փորձով իմացավ, որ բռնակալի վիճակը այնքան էլ անվտանգ չէ և հաճելի։

Այժմ Մարկը յուրաքանչյուր քայլում նրան զգացնել էր տալիս, որ ինքը զոհ է, իսկ Աննետան չարաշահում է իր իշխանությունը։ Ի՞նչ արած, թող այդպես լինի։ Աննետան հաստատ որոշեց օգտագործել իր իշխանությունը՝ որդուն խելքի բերելու համար։ Նա չէր ցանկանում այլևս տանել նրա թեթևամտությունը, անպատկառ սեթևեթանքը, անվայելուչ ծաղրանքը։ Մարկին սանձելու համար Աննետան, ի հակադրություն այդ անառակության, սկսեց ընդգծել իր բարոյական կանոնները։ Իսկ Մարկին դա ձեռնտու էր. նա վաղուց էր առիթի սպասում՝ մոր հետ այդ մասին խոսելու համար։

Մի անգամ, առարկելով մոր ինչ-որ արգելման դեմ, Մարկը վկայակոչեց մորաքրոջ կարծիքը։ Աննետան բռնկվեց և ասաց, որ Սիլվիան իրավունք ունի մտածել և անել այն, ինչ ուզում է, և դրա համար չի կարելի նրան դատապարտել, բայց այն, ինչ վայել է Սիլվիայի համար, բոլորովին վայել չէ Մարկի համար, և նա չպետք է նմանվի Սիլվիային։ Ամեն բանում չէ, որ նա կարող է օրինակ ծառայել։

Մարկը մինչև վերջը լսեց այդ տիրադը և անփութորեն նկատեց.

— Այո, բայց գոնե նա ամուսին ունի...

Առաջին րոպեին Աննետան պատասխան չգտավ. նա չէր ուզում հասկանալ... Ինչ ասաց Մարկը՞։ Ոչ, չի՛ կարող պատահել... Հետո արյունը երեսը տվեց։ Աննետան նստել էր անշարժ, նրա ձեռքերը, որ հենց նոր զբաղված էին աշխատանքով, անհոգորեն ընկած էին ծնկներին։ Մարկը նույնպես տեղից չշարժվեց։ Նա մի քիչ ամաչեց, և սպասում էր, թե ինչ է լինելու... Լռությունը երկար տևեց։ Զայրույթի ալիքը հորդեց դեպի Աննետայի ջերմ սիրտը։ Բայց նա թույլ տվեց, որ արյունը ետ հորդի։ Վրդովմունքը փոխվեց արհամարհական կարեկցանքով։ Աննետան հեգնաբար քմծիծաղեց։

«Դժբա՜խտ երեխա»,— մտածեց նա և, վերջապես, բարձրաձայն ասաց, նորից դառնալով աշխատանքին.

— Դու, ըստ երևույթին, կարծում ես, որ ամուսին չունեցող կինը, որն ինքն է աշխատում՝ իր երեխային կերակրելու համար, ավելի քի՞չ է արժանի հարգանքի։

Մարկը կորցրեց իր ամբողջ ինքնավստահությունը։ Նա ոչինչ չպատասխանեց, ներողություն չխնդրեց։ Բայց այլայլված էր։

Այդ գիշեր Աննետան աչքը փակել չկարողացավ... Ուրեմն, նա իզո՞ւր իրեն զոհաբերեց։ Այն, որ նրան դատապարտեց բարձրաշխարհիկ հասարակությունը,— դա հասարակ բան է։ Բայց նա, Մարկը, որին Աննետան նվիրել էր իր ամբողջ կյանքը։ Եվ նա ինչպե՞ս է իմացել։ Ո՞վ է նրան ներշնչել այդ միտքը։ Աննետան չէր կարողանում Մարկի վրա զայրանալ, բայց ընկճված էր։

Իսկ Մարկը քնում էր հանգիստ։ Նա խղճի որոշ խայթեր

էր զգում, բայց քունը այդ խայթերից ավելի ուժեղ դուրս եկավ։ Քնից կշտանալով, նա կմոռանար նույնիսկ մտածել այդ մասին, եթե մոր տագնապալից հայացքը նորից չարթնացներ այդ զգացումները։ Մարկի համար տհաճ էր, որ մայրը չի մոռացել երեկվա եղածը։ Բայց նա սիրտ չէր անում նրան ասել, որ խիղճն իրեն տանջում է։ Մարկը դրանից տառապում էր, և նա, մանկական տրամաբանությամբ, զայրանում էր մոր վրա։

Երկուսն էլ ոչ մի խոսք այլևս չասացին երեկվա տեսարանի մասին։ Բայց այդ օրվանից նրանց հարաբերությունների մեջ ինչ-որ բան փոխվեց։ Սովորական համբույրներում ինչ-որ հարկադրվածություն էր զգացվում։ Աննետան դադարեց Մարկին վերաբերվել ինչպես երեխայի...

Որտեղի՞ց Մարկն իմացավ։ Լիցեյում տեղի ունեցած խոսակցությունները նրան ստիպեցին մտածել, թե նա ինչու է մոր ազգանունը կրում։ Վաղուցվա ակնարկները, որոնք նա մի ժամանակ լսել էր արհեստանոցում և որոնք այն ժամանակ հասկանալի չէին իրեն, հիմա նրան հասկանալի դարձան։ Նա մտաբերեց նաև Սիլվիայի որոշ նկատողությունները, որ անզգուշորեն ասվել էին Մարկի ներկայությամբ... Մայրը նրա համար առեղծված էր։ Նա գրգռում էր Մարկին և միևնույն ժամանակ տղային հուզում էր մորը շրջապատող կրքերի մթնոլորտը, կրքեր, որոնց նա չէր հասկանում, բայց զգում էր իր չանճուտիկային հոտառությամբ... Այդ բոլորի վերաբերյալ նա մշուշապատ և ֆանտաստիկ ենթադրություններ էր անում, որոնք մեկը մյուսի հետ չէին կապվում։ Մարկին ոստիկ զբաղեցնում էր իր ծննդյան գաղտնիքը։ Ինչպե՞ս այդ իմանալ... Նրա վիրավորիչ պատասխանը Սիլվիայի մասին մոր արած նկատողության վերաբերյալ մասամբ թակարդ էր, որը նա դրել էր մորը բռնելու համար... Աննետայի անհայտ անցյալը Մարկի մեջ հետաքրքրության և զայրույթի խառնուրդ էր առաջացնում։ Աշխարհում ոչ մի գնով նա չէր համաձակվի Սիլվիային հարցընել այդ. ենթադրելով, որ մայրը ինչ-որ մեղք է գործել, Մարկը յուրովի պաշտպանում էր նրա պատիվը, բայց նա վիրավորված էր այն բանից, որ մայրը իրենից ինչ-որ

կարևոր դաղտնիք է թաքցնում։ Այդ դաղտնիքը նրանց միջև կանգնած էր ինչպես մի երրորդ անձնավորություն։

Նրանց միջև իսկապես էլ մի երրորդ անձնավորություն էր կանգնած։ Մարկի մտքով չէր էլ անցնում, որ երբեմն նա Աննետայի հիշողության մեջ արթնացնում էր այդ «երրորդին» կերպարը, իր հոր կերպարը... ոչ, ավելի վատը,— բոլոր Բրիսսոնների կերպարը։ Մոր և որդու միջև սկիզբ առած խուլ պայքարում տղան բնազդորեն զինվում էր այն ամենով, ինչ իր մեջ Աննետային հակառակ էր գտնում։ Եվ այդպիսով, նա, ինքն այդ չիմանալով, փորփրում, գտնում էր երբեմն և գործի դնում այն բոլոր գծերը, որոնք փոխառնված էին Բրիսսոնների զինարանից. հայտնի ներողամիտ քմծիծաղ, ինքնագոհություն, թեթևամտություն և կեղծ բարեպաշտություն, անբարյացակամ համառություն, որին ոչինչ երերել չէր կարող։ Մարկի մեջ այդ գծերը նշմարվում էին ոչ պարզորոշ, ինչպես սովևր, ինչպես ջրի միջի արտացոլանք։ Բայց Աննետան դրանք ճանաչում էր և մտածում.

«Բրիսսոնները նրան ինձանից խլեցի՞ն...»։

Մի՞թե Մարկը իսկապես էլ Աննետայի համար օտար էր։ Բրիսսոններից ժառանգած գծերը, այն, ինչ զենք էր ծառայում Մարկի ձեռքին՝ Աննետայի դեմ կռվելու համար, տղային դարձնում էին օտար։ Բայց այդ զենքը բռնող ձեռքը Աննետայի մսից ու արյունից էր։ Այստեղ պայքար էր գնում երկու էակների միջև, որոնք չափազանց հարազատ էին միմյանց, չափազանց մտերիմ, և պայքարն այդ պարզապես Սիրո և Ճակատագրի հազարավոր քմահաճույքներից մեկն էր։

Մարկը ընկեր չուներ։ Այդ տասներեքամյա տղան ամբողջ օրը անց էր կացնում դասարանում երեք տասնյակ ուրիշ երեխաների հետ, բայց ընկերներից մի կողմ քաշված։ Երբ նա ավելի փոքր էր, հաճույքով էր բլբլում, խաղում, աղմկում։ Բայց ահա արդեն մոտ երկու տարի էր, ինչ նրան համակել էին լռակյացության նոպաները, մենակության ձգտումը։ Դա ամենևին էլ չէր նշանակում, որ նրան ընկերներ պետք չեն. Մարկն ընկերների կարիքն զգում էր, թերևս, ավելի շատ, քան առաջ։ Այո՛, հենց այդպես։ Այդ պահանջը

չափազանց ուժեղ էր, նա չափազանց շատ բան էր նրանցից պահանջում և չափազանց շատ էլ կարող էր տալ... Այդ գարնանային թուփը ոտից գլուխ պատվա՞ծ էր փշերով։ Նրա ինքնասիրությունը միշտ պատրաստ էր ծառս լինելու։ Ամեն մի մանրուք նրան սոսկալի վիրավորում էր, և նա վախենում էր դրանից, իսկ որ գլխավորն է— վախենում էր, չլինի թե ուրիշները այդ նկատեն. չի կարելի ցույց տալ իր թուլությունը և այդպիսով կոզիրը տալ թշնամու ձեռքը (չէ որ ամեն մի բարեկամի մեջ թշնամի է թաքնված)։

Այն, ինչ Մարկը կռահեց (կամ ավելի ճիշտ, ենթադրեց) իր ծննդյան և մոր անցյալի վերաբերյալ, նրան պահում էր ինչ-որ մոայլ անհարմարության վիճակում։ Գրքերից որոշ տեղեկություններ քաղելով, նա հասկացավ, որ ինքը «արտամուսնական» զավակ է։ (Ռոմանտիկ գրքերում, որոնք նա կարդացել էր, օգտագործվում էր ուրիշ բառ, ավելի կոպիտ և ավելի արտահայտիչ)։ Վերջիվերջո ապօրինի ծնունդը Մարկի համար դարձավ հպարտության առարկա, և նա արդեն պատրաստ էր այդ արխաիկ վիրավորական բառում ինչ-որ ազնվության երանգ տեսնել։ Նա իրեն չէր համարում այնպիսին, ինչպես բոլորը, հետաքրքիր, միայնակ, նույնիսկ կորստական։ Նա պատրաստ էր տեղ գրավել Շիլլերի և Շեքսպիրի դիվային հերոսների միջև, նույնիսկ ապօրինածինների, ինչպես և ինքը։ Այդ հանգամանքը իրավունք էր տալիս նաև նրան արհամարհելու «բարձրախավ հասարակությանը» և արտահայտել իր արհամարհանքը մեծամիտ սիրադներով— իհարկե, in petto[1].

Բայց երբ Մարկը հայտնվում էր այդ «բարձրախավ հասարակության» մեջ, այսինքն՝ դասարանում, ընկերների շրջապատում, նա դառնում էր երկչոտ, կասկածամիտ, իր գաղտնիքից ընկճված և վախենում էր, չլինի թե այդ գաղտնիքը իմանան։ Նրա տարօրինակ վարքագիծը, դեմքի «ճակատագրական» արտահայտությունը, բարակ, փոխվող ձայնը, հեշտությամբ կարմրող աղջկա երեսը և երիտասարդ աքաղաղի ավյունը—բոլորը գրավում էր մյուս տղաների ու-

[1] *Մտքում (իտ.)։*

շադրությունը և ծաղրի առիթ տալիս։ Այդ դատարկապորտներից մեկը նույնիսկ սկսեց կես-կատակ, կես-լուրջ նրանից կպչել զազրելի առաջարկություններով։ Մարկին դա ցնցեց։ Նրա ցասումն ու նողկանքը այնքան էին ուժեղ, որ հուզմունքից գիշերը հիվանդացավ։ Մարկը չէր ուզում այլևս հաճախել լիցեյ, բայց ինչպե՞ս մորը բացատրել պատճառը։ Մարկը որոշեց, որ ինքը, առանց մոր օգնության, կստիպի, որ իրեն հարգեն։ Խուճապի մեջ նա մտովի կրկնում էր.

«Ես նրան կսպանեմ»։

Մարկն այն հասակում էր, երբ տղաների մեջ արթնանում են սեռական բնազդները։ Դրանք նրան անհանգստացնում էին և վախեցնում։ Մայրը, որ տարօրինակության չափ առաքինի էր, ոչինչ չէր տեսնում և չգիտեր։ Իսկ Մարկը ամոթից կմեռներ, եթե մայրը իմանար։ Եվ միայնակ, արհամարհելով իրեն, գլուխը կորցնելով, նա հնազանդվում էր ամոթալի բնազդի սարսափելի պահանջներին... Ի՞նչ կարող է անել երեխան, խեղճ երեխան, որը հանձնված է այդ տարերային ուժերի իշխանությանը։ Դաժան, տանջող բնությունը տասներեքամյա մարդու մարմնի մեջ հրդեհ է վառում, և կրակն այդ, սնունդ չգտնելով, լափում է հենց իրեն՝ այդ մարդուն։ Եթե տղայի մեջ լավ տվյալներ կան, նա կարող է փրկվել, ընկնելով մյուս ծայրահեղության մեջ. հոգու ճգնավորական էկզալտացիայի, որը հաճախ մարմինը քայքայում է։ Այն ժամանակվա երիտասարդությունը իրենց հայրերից ավելի երջանիկ էր— նա արդեն սկսել էր դիմել սպորտի այրական արվեստին։ Մարկը ուրախ կլիներ հետևել ուրիշների օրինակին, բայց բնությունը այդտեղ նույնպես նրան դեմ էր. բնությունը նրան չէր օժտել դրա համար անհրաժեշտ ֆիզիկական ուժերով։ Ախ, ինչքա՜ն էր նախանձում նա առողջներին և ուժեղներին։ Ինչպիսի՜ նախանձախնդրությամբ էր հիանում նրանցով։ Նրա հիացմունքը աստելության էր նմանվում... Երբե՞ք նա այդպիսին լինել չի կարող, ինչպես նրանք են...

Ցանկությունները, ամեն կարգի ցանկությունները, մաքուր, անմաքուր,— կատարյալ քաոս էին... Դրանք տանջում էին նրան, ինչպես չար ոգիներ... Եվ նա կդառնար ճակատագրի խաղալիք — ոչինչ չէր կարող նրան փրկել, եթե նրա

մեջ դրված առողջ բարոյականությունն ու ազնվությունը չլինեին, դեռ ավելին. չլինեին անգիտակից վեհանձնությունը, որբազան կրակի կայծը, տքնություններուն արգասիքը, տոհմի լավագույն ներկայացուցիչների արիություններն ու համբերատարությունները, այն, ինչ չի հանդուրժում ոչ կեղտ, ոչ անպատվություն, թույլ չի տալիս խայտառակ անկում, այն, ինչ մարդուն օգնում է ճանաչել սուր հոտառությամբ վատն ու ստորը և ոչնչացնել դրանք իր մեջ, դուրս քաշելով մտքի ամենանվիրական գաղտնարաններից։ Իսկ եթե նա միշտ չէ, որ կարող է պաշտպանվել կեղտից, ապա միշտ դատապարտում է այդ կեղտը, դատապարտում է, խարազանում և պատժում է իրեն...

Կեցցե՛ Հպարտությունը... Sanctus[1] ... Այնպիսի բնավորությունների համար, ինչպիսին Մարկն է, հպարտությունը հոգեկան առողջության գրավականն է։ Դա աստվածային էության հաստատումն է ամենաազնիվ բնավորությունների մեջ, դա փրկության ակունքն է։ Եթե հպարտությունը չլիներ, մի՞թե միայնակ, սեր չճանաչող մարդը կարող էր կռվել ստոր ցանկությունների դեմ։ Ի՞նչ նպատակ կունենար կռվելը, եթե նա չհավատար, որ սեփը է պահպանի ինչ-որ բարձրագույն արժանիքներ և հանուն նրանց հաղթանակի կամ մեռնի։

Մարկն ուզում էր հաղթանակել։ Հաղթել այն, ինչ նրան և հասկանալի էր և անհասկանալի։ Հաղթել մի բանի, որը դեռ չի ճանաչված, բայց մարդու զգվանք է ներշնչում։ Հաղթել կյանքի առեղծվածը և այն ստորը, որ կա իր մեջ... Ա՛վ, այդտեղ նույնպես, ինչպես և ամեն ինչում, նա անհամար պարտություններ կրեց։ Փորձում էր աշխատել, կարդալ, զգաստանալ, բայց իրեն դավաճանում էր, զգում էր, որ արիությունը կորցնում է։ Նորի՛ց նույն անիծյալ թուլակամությունը... Ոչ, կամքի ուժ նա ունի, բայց դա դեռ զարգացած չէ, այնքան չէ, որ կարողանա նվաճել այն, ինչ ուզում է, ինչ նպատակ է դրել։ Մերթ նրան տանջում են հետաքրքրությունն ու ցանկությունները, առողջ և անառողջ, և բոլոր կողմերից պաշարում են հիվանդությունները, մերթ նա ընկնում

---

1 Սուրբ եղիցի (լատ.)։

է ինչ-որ անզգայության մեջ և ընդունակ չէ ոչնչով զբաղվել, ոչ մի բանի վրա կենտրոնանալ։ Նա բաց է թողնում ներկան, ընկնելով անչափ առաջ։ Նրան արդեն մտահոգում է ապագան, մասնագիտության ընտրությունը։ Նա գիտե, որ դա պետք է որոշել որքան կարելի է շուտ, բայց նա դեռ չի կարող կանգ առնել որևէ բանի վրա, այս ու այն կողմ է նետվում բոլոր հնարավորությունների միջև, ամեն ինչ նրա համար հետաքրքիր է,— և միևնույն ժամանակ անկարևոր, միատեսակ իրեն է քաշում և վանում իրենից։ Նա ինքն էլ չգիտե, ինչ է ուզում, նա նույնիսկ ընդունակ չէ հիմա ուզել կամ չուզել։ Ներքին մեխանիզմը դեռ կարգի չի գցած։ Նա նետվում է առաջ— և հանկարծ տեղում կանգ է առնում կամ պեմ առնում ինչ-որ բանի ու նորից հայտնվում հատակին։

Այդ ժամանակ նա հետազոտում է հատակը։ Այդ տառապող տղան ընդունակ է ավելի շուտ, քան որևէ մեկը, զգալ դատարկությունն ու ձանձրույթը այն դարաշրջանի, որը սլանում է դեպի կործանում։ Նա սուր կերպով զգում է, որ իր ոտքերի առաջ ֆանտունդն է բացել երախը...

Իսկ մայրը ոչինչ չի նկատում։ Նա իր առջևում տեսնում է մի դեռահաս տղայի, որի մեջ երեխայական դեռ շատ բան կա։ Տեսնում է մոայլ, պահանջկոտ, անհնազանդ, հիվանդագին կերպով նեղացկոտ մի սեթևեթողի և ճռճռան ֆրազների բերահարի։ Մերթ նա պարծենում է անվայելուչ արտահայտություններով, մերթ հանկարծ վախենում է ամենաչնչին անպարկեշտությունից։ Ամենից շատ Աննետային զայրացնում են Մարկի ծաղրանքները։ Աննետան չի էլ ենթադրում, ինչքան դառնություն կա այդ ծաղրանքների մեջ։ Ավելի քիչ նա կռահում է նաև, որ դա Մարկի կողմից մարտահրավեր է վիրավորանք հասցնող ճակատագրին։ Տղան սուր կերպով զգում է, որ բախտը իրեն զուրկ է թողել։ չէ որ նա թույլ է, տգեղ, նա ապաշնորհ ոչնչությո՛ւն է։ Նա իրեն այդպիսին է համարում և, վերջնականապես հուսահատված, իր իսկական թերություններին ավելացնում է նաև մի ամբողջ կույտ հնարովի թերություններ։ Նա կարծես փնտրում է, թե էլ ինչով իրեն ստորացնի... Ահա կողքով անցնում են երկու երիտասարդ բանվորուհի։ Նրանք ծիծաղում են— իսկ Մարկը

համոզված է, որ իր վրա են ծիծաղում։ Նրա մտքով չի էլ անցնում, որ այդ աղջիկները սիրախաղակ են անում իր հետ, որ իր վախվորած աղջնակի կարմրատակած երեսը ամենևին էլ նրանց տգեղ չի թվում... Նա ուսուցիչների աչքերում կարծեցյալ արհամարհական կարեկցանք է կարդում դեպի միջակ աշակերտը։ Նա վատահ է, որ իր այն ընկերները, որոնք ավելի ուժեղ են և ամրակազմ, արհամարհում են իրեն իր թուլության համար և գլխի են ընկնում, որ ինքը վախկոտ է։ Մայրահեղ ներվայնության պատճառով նա երբեմն փոքրոգի է լինում և իրեն բնորոշ աղնվությամբ դա խոստովանում է և իրեն խայտառակված համարում։ Իրեն պատժելու համար նա ուրիշներից գաղտնի ամեն տեսակի վտանգավոր խնդիրներ է սարքում — ընդամին սառը քրտինքը վրա է տալիս, բայց դրա փոխարեն նա մի քիչ ռեաբիլիտացվում է իր սեփական աչքում։ Այդ պատանի Նիկոմեդը հաճախ է ծիծաղում իր և իր պարտությունների վրա։ Բայց նա զայրացած է կյանքի դեմ, որն իրեն այդպիսին է դարձրել, և ամենից շատ զայրացած է մոր դեմ։ Իսկ մայրը չի հասկանում, որտեղից է գալիս այդ թշնամությունը։ «Ի՞նչ էգոիստ է։ Նա միայն իր մասին է մտածում...»։

Միայն իր մասի՞ն։ Բայց եթե նա չմտածի իր մասին, ի՞նչ դուրս կգա նրանից։ Եթե նա ինքը չպաշտպանվի, ո՞վ կպաշտպանի նրան։

Այդպես մայր ու որդի ապրում են իրար կողքի, միայնակ, յուրաքանչյուրն ամփոփված իր մեջ։ Քնքշությունների ժամանակն անցնում էր։ Աննեատան սկսում է կրկնել բոլոր մայրերի գանգատները.

— Նա ինձ ավելի շատ էր սիրում, երբ դեռ փոքր էր։

Իսկ Մարկը գալիս է այն եզրակացության, որ մայրերը երեխաներին սիրում են միայն իրենց բավականության պատճառելու համար, որ ամեն մեկը միայն իրեն է սիրում...

Ոչ, նրանցից ամեն մեկը ուզում էր սիրել մյուսին։ Բայց երբ մարդ վտանգի մեջ է, նա ստիպված է մտածել իր մասին։ Ուրիշների մասին նա կմտածի հետո։ Ինչպե՞ս կփրկևս ուրիշին, եթե ինքդ չփրկվես։ Իսկ քեզ համար փրկվելն անհնարին է, եթե մի ուրիշը կախված է քո վզից։

Երբ որդին սկսեց Աննետայից խույս տալ, Աննետան ինչպես և Մարկը, գազազեց։ Ֆիտակցորեն սիրո առաջ սիրտը փակելով, քանի որ չկար մեկը, որի համար զնդեր այդ սերը, Աննետան հիմա ձգտում էր հագեցնել իր մտավոր քաղցը և բավարարել գործելու պահանջը։ Նա աշխատում էր ամբողջ օրը, երեկոները կարդում էր, իսկ գիշերը՝ ամուր քնում։ Գազազած Մարկը և՛ նախանձում էր այդ հանգիստ կնոջը և՛ արհամարհում նրան՝ առողջության համար, այն բանի համար, որ նա, ինչպես Մարկին թվում էր, լինդունակ չէ որևէ բանից տառապել։

Մինչդեռ Աննետան տառապում էր հենց այն պատճառով, որ չգիտեր ո՛ւմ հետ բաժանի իր մտքերը։ Նա դատարկությունը լցնում էր աշխատանքով, մոռացությունն էր փնտրում գործունեության մեջ... Բայց լոկ աշխատելու համար աշխատելը հոգու դատարկությունը չի լցնում... Եվ ինչի՞ն զոհաբերեր այն անօգուտ ուժերը, որոնք նա զգում էր իր մեջ։

Զոհաբերե՛լ... Ա՜խ, տալու, իրեն զոհաբերելու այդ պահա՞նջը... Աննետան դրան հանդիպում էր ամեն քայլափոխի, և հաճախ դա նրա մեջ միայն կարեկցանք էր առաջացնում, իսկ երբեմն էլ պարզապես անհեթեթ էր։ Ուշադիր Աննետան մշտապես դեմքեր և բնավորություններ էր ուսումնասիրում։ Նա կարվում էր իր սեփական ցավերից, խորամուխ լինելով ուրիշների ցավերի մեջ։ Ասենք, գուցե, Աննետայի կյանքի այդ շրջանում, երբ նրա սիրտը քարացել էր (այդպես էր նա երևակայում), մարդկային տառապանքների տեսարանը, իսկ հատկապես տեսարանը պարտությունների և հրաժարումների, նրա մեջ ավելի շուտ հետաքրքրություն էր առաջացնում, քան կարեկցանք։ Կանանց միջև, որոնք, ինչպես և Աննետան, պայքար էին մղում հասարակության դեմ, ճգնելով դուրս կորզել այդ հասարակությունից գոնե աղքատիկ միջոցներ՝ իրենց գոյությունը պահպանելու համար շատերը կործանվել էին ոչ այնքան կյանքի դաժանության պատճառով, որքան սեփական թուլությունից և ինքնահրաժարումից։ Գրեթե բոլորը իրենց զոհաբերում էին հանուն որևէ կապվածության և չէին կարողանում առանց դրան ապրել։ Կարելի էր կարծել, թե այդ ինքնահրաժարման մեջ է նրանց կյանքի

ամբողջ իմաստը, բայց հենց դա էլ նրանց գերեզման էր իջեցնում...

Մեկը զոհաբերում էր իրեն պատռված մոր կամ էգոիստ հոր համար։ Մյուսը՝ հանուն գեհենական ամուսնու կամ անհավատարիմ սիրեկանի։ Երրորդը («Այ ինչպես ես»— մտածում էր Աննետան)— հանուն երեխայի, որը նրան ամենևին չի սիրում, որը նրան մոռանալու է, որը վաղը, գուցե, նրանից երես շրջի... «է, հետո՞ ինչ։ Եթե նույնիսկ խաբված լինել, լքված, մոռացված նրա կողմից— ինձ համար ուրախությո՞ւն է... Եթե ինձ հաճելի է նրանից քոթո՞ւկ ստանալ... Օ՜, ծաղր, օ՜, ինքնախաբեություն...»։ Իսկ ուրիշ կանայք, նրբանք, ովքեր չգիտեն ում համար են ապրում դեռ ինչպե՞ս են մեզ նախանձում։ Նրանց համար ընտանիքին փոխարինում են շունը, կատուն, թռչունը— յուրաքանչյուրը իր պաշտամունքի առարկան ունի։ Եթե իսկապես պետք է, որ նրանք անպայմանն մեկնումեկին երկրպագեն, ուրեմն, ավելի լավ է երկրպագեն տե՛ր աստծուն։ Գոնե նա բարձրագույն էություն է... Ես նույնպես ունեմ իմ պաշտամունքը, իմ անհայտ աստվածը, իմ սեփական ճշմարտությունը, և կիրքը, որն ինձ ստիպում է որոնել այդ ճշմարտությունը, գուցե նո՞ւյնպես ինքնախաբեություն է։ Բայց ես դա կիմանամ այն ժամանակ, երբ նպատակին հասնեմ։ Եթե անգամ դա խաբեություն է, ապա գոնե վեհ խաբեություն է,— արժե, որ դա զոհեր ունենա...

Աննետան ընդվզում էր որոշ զոհերի անմտության դեմ։ «Ոչ, բնությունը չի՛ ուզում, որ լավագույնը իրեն զոհաբերի պակաս արժանավորին։ Իսկ եթե անգամ ուզում է, ինչո՞ւ պետք է ես ենթարկվեմ նրան։ Ոչ, ոչ, բնությունը չի պահանջում այդ։ Նա մեզ սովորեցնում է զոհաբերվել հանուն լավագույնի, վեհի և ավելի ուժեղի...»։

Զոհաբերվել ինչ գնով էլ ուզում է լինի, հանուն արժանավոր կամ անարժանի — թերևս, նույնիսկ ավելի լավ է հանուն անարժանի, որովհետև այդ ժամանակ տվյալ զոհը ավելի նշանակալից է, այդ ժամանակ տվյալ զոհաբերությունն արվում է հանուն զոհաբերության... Այո, դա համաձայն որոշ մարդկանց աստծո մասին ունեցած պատկերացման... Cre-

do quia absurdum...[1] *Ինչպիսին տե՛րն է, այնպիսին էլ ծառաներն են... Դա նույն այն աստվածն է, որն արդեն յոթերորդ օրը ննջում էր իր թափած ջանքերից հետո, համարելով, որ ամեն ինչ արեց, և արեց լավ։ Եթե մարդիկ նրան լսեին, կյանքի սայլը կանգ կառներ անիվի առաջին պտույտից հետո։ Աշխարհում ամբողջ առաջընթացը տեղի է ունենում այդ աստծո կամքին հակառակ...*

Eiat[2]. *առա՛ջ հրենք մեր սայլը։ Եվ նույնիսկ սպառնալիքի տակ, որ նա կտրորի մեզ, ես ուզում եմ, որ սայլը շարժվի։*

Մի տխուր ծանոթություն ավելի սաստկացրեց Աննետայի զայրույթը այն անիմաստ զոհերի դեմ (նա ի՞նչ գիտեր այդ զոհերի մասին), որ ավելի արժանավոր մարդիկ մատուցում են պակաս արժանավորներին։

Իր ժամանակին, երբ Աննետան այս ու այն կողմ էր ընկել՝ նեյիի օտարերկրուհիների կուրսերում դասատուի տեղ ստանալու համար, նա մրցակից դուրս եկավ մի երիտասարդ կնոջ, և Աննետային դուր եկավ այդ կնոջ դեմքը, որ կոպտացված էր, բայց նուռնդով լեցուն։ Աննետան փորձում էր զբոսույգի մեջ մտնել նրա հետ, բայց վերջինս Աննետային վերաբերվեց անվստահ և, ըստ երևույթին, մտածում էր միայն այն մասին, թե ինչպե՛ս մրցակցին իր ճանապարհից հեռացնի։ Այն ժամանակ Աննետան դեռ սովոր չէր այդպիսի պայքարին, որը խոր կերպով իրեն զզվելի էր, և պաշտպանվել չգիտեր։ Ցանկանալով դեպի իրեն տրամադրել այդ մրցակցին և ձեռք բերել նոր բարեկամի, Աննետան նույնիսկ իր տեղը զիջեց նրան։ Երիտասարդ կինը ոչ մի շնորհակալություն չհայտնեց, նրա բոլոր մտքերը զբաղված էին վաստակի հետևից ընկնելով։ Նա հիշեցնում էր այն մրջյունին, որը մշտապես շտապում է, եռուզեռի մեջ է, զբաղված է միայն կուտակելով։ Աննետան նրան ամենևին չէր հետաքրքրում։

Այդ հանդիպումից հետո Աննետան նրան տեսադաշտից կորցրեց։ Իսկ երբ վեց տարի անց պատահականությունը

---

1 *Հավատում եմ, որովհետև անհեթեթ է (լատ.)։*

2 *Եղիցի (լատ.)։*

նորից նրանց հանդիպեցրեց, երկուսն էլ արդեն այն չէին, ինչպես առաջ։ Աննետան հիմա հակված չէր մրցակիցների նկատմամբ մեծահոգությոսն կամ ավելորդ ներքանկատություն ցուցաբերել։ Նա իրեն ասում էր. «Կյանքն այսպիսին է, և ես չեմ կարող այդ կյանքը փոխել։ Ես ուզում եմ ապրել և առաջին հերթին պետք է մտածեմ իմ մասին...»։

Սկսվեց պայքարը։ Դա երկար չտևեց։ Հենց առաջին հարձակումից հետո Աննետայի հակառակորդը նոկաուտ ստացավ... Որքա՞ն էր նա պառավել այդ վեց տարիների ընթացքում։ Աննետային ապշեցրեց այդ արագ քայքայումը։ Նա հիշում էր վարպագույն այտերով այդ թխահեր կնոջը, հիշում էր նրա այտերի վրա սևին տվող երկու-երեք խալերը, որոնք կարծես բուլկու միջի չամիչ լինեին, հիշում էր այդ սիրուն, ամրակազմ գեղչկուհուն՝ կարուկ, արագ շարժումներով, նուրբ, չորավուն դիմագծերով, որոնք բավական հաճելի կլինեին, եթե մոայլ արտահայտությունը և համառ ճակատը չլինեին, իսկ հիմա տեսնում էր նիհար, կնճռոտ դեմք, մոաղ հայացք, բերանի մոտ դառը ծալքեր, ներս ընկած այտեր— երիտասարդ կինը թառամել էր, ինչպես արևից խանձված խոտը։

Երկուսն էլ— և Աննետան և Ռութ Գիլլոնը— ուզում էին քարտուղարուհու տեղ ստանալ մի ինժիների մոտ։ Այստեղ պետք էր աշխատել շաբաթը երկու օր— կարգի բերել գործարարական թղթակցությունները և ընդունել հաճախորդներին։ Աննետան Ռութին հանդիպեց միջանցքում, նրանք թըշնամական հայացքներ փոխանակեցին։ Ռութն ասաց.

— Դուք տեղի համա՞ր եք եկել։ Տեղն ինձ են խոստացել։

Աննետան պատասխանեց.

— Ինձ տեղ չեն խոստացել, բայց ես եկել եմ իմ ծառայություններն առաջարկելու։

— Իզուր։ Տեղն ինձ է հասնելու։

— Իզուր է թե չէ, բայց ես կխոսեմ։ Որից հետո թող վերցնեն ում ուզում են։

Մի քանի րոպեից հետո Աննետային կանչեցին առանձնասենյակ, և ինժեները նրան ընտրեց։ Նրան արդեն ճանաչում էին որպես բարեխիղճ և հասկացող աշխատողի։

Դուրս գալով, նա դեմառդեմ հանդիպեց Ռութին և սառնությամբ անցավ նրա կողքից։ Ռութը կանգնեցրեց Աննետային և հարցրեց.

— Ընդունվեցի՞ր։

— Այո։

Աննետան տեսավ, ինչպես Ռութի դեմքը բռնկվեց, և խիստ խոսքեր էր սպասում։ Բայց Ռութը ոչինչ չասաց։ Նա Աննետայի հետևից դուրս եկավ, իջավ ներքև։ Փողոցում Աննետան շրջվեց և արագ հայացք գցեց հաղթված մրցակցի վրա։ Ռութի ընկճված տեսքը նրա սիրտը շարժեց։ Եվ հակառակ իր որոշման, որ ուզում էր կարծր լինել, նա մոտեցավ Ռութին և ասաց.

— Ես շատ ցավում եմ... Բայց ի՞նչ կարող ես անել, չէ՞ որ պետք է ապրել։

— Դե, խմա՛րկեն,— ասաց Ռութը։— Ուրիշների բախտը բերում է, իսկ իմը՝ երբեք։

Նա խոսում էր արդեն բոլորովին ուրիշ տոնով,— վհատ, բայց առանց որևէ անբարյացակամության։ Երբ Աննետան ուզեց նրա ձեռքը բռնել, Ռութը ետ քաշվեց։

— Բավական է, մի՛ վշտացեք։ Այսօր ձեր բախտը չբերեց, վաղը կբերի։

— Ոչ, իմ բախտը երբեք չի բերի։

Աննետան նրան հիշեցրեց իրենց առաջին հանդիպման մասին, երբ աշխատանքն ստացավ Ռութը։ Ռութը լռում էր և մռայլ տեսքով քայլում Աննետայի կողքից։

— Չե՞մ կարող արդյոք ձեզ որևէ բանով օգնել,— հարցրեց Աննետան։

Նորից Ռութի դեմքը շառագունեց։ Վիրավորված ինքնասիրությունի՞ց, թե՞ հուզմունքից։ Նա չոր-չոր ասաց.

— Ո՛չ։

Աննետան համառ կերպով շարունակում էր.

— Ես շատ ուրախ կլինեի...

Եվ բարեկամաբար նրան թևանցուկ արեց։ Ռութը հանկարծակիի գալով, ներվայնորեն նրա ձեռքը սեղմեց իրեն և շրջվեց, շրթունքը կծելով։ Հետո զայրացած դուրս պրծավ ու գնաց։

Աննետան թողեց, որ նա գնա, բայց աչքերով դեռ երկար հետևում էր նրան։ Նա հասկանում էր այդ կնոջը։ Այո, մենք իրավունք չունենք մեր կարեկցանքը փաթաթել այն մարդու վզին, ով այդ չի խնդրում...

Մի քանի օրից հետո, մտնելով կաթնամթերքների խանութը, Աննետան այնտեղ տեսավ Ռութ Գիլյոնին, որն ինչ-որ բան էր գնում, և ձեռքը պարզեց նրան։ Այս անգամ Ռութ Գիլյոնը իր ձեռքը տվեց, բայց սառցի նման պաղ ուեսքով։ Ասենք, նա փորձում էր սիրալիր լինել, մի քանի սովորական նախադասություններ ասաց։ Աննետան արդեն գոհ այդ հանդեսո հաջողությունից, խոսակցությունը շարունակեց։ Նրանք խոսում էին մթերքների գներից։ Աննետան հոգու խորքում գարմացած էր, որ Ռութը իրենից ավելի շատ ծախսեց թարմ ձվերի և խտացրած կաթի վրա։ Ռութը, կարծես պարծենալով, դրամը վճարեց նրա աչքի առաջ։ Դուրս գալով, Աննետան նկատեց.

— Որքա՞ն է ամեն բան թանկացել։

Նվ, կարծես թե արդարանալով, որ ձու էր գնում, ավելացրեց.

— Սա իմ տղայի համար է։

Ռութը պարծենկոտության միևնույն երանգով արձագանքեց.

— Իսկ ես ամուսնուս համար եմ գնում։

Աննետան ոչինչ չիմանալով Ռութի կյանքի մասին, հարցրեց.

— Ինչ է, նա հիվա՞նդ է։

— Ոչ, բայց առողջությունը շատ թույլ է։

Եվ հպարտությամբ սկսեց բացատրել, թե որքան հոգս է պահանջում նրա ամուսնու առողջությունը։ Արդեն իմանալով, որ նա կաուչուկամիտ է և ինքնասեր, Աննետան ոչ մի հարց չէր տալիս և սպասում էր, մինչև Ռութն ինքը գառնա ավելի անկեղծ։ Բայց Ռութն այլևս ոչինչ չպատմեց, և նրանք արդեն սկսեցին հրաժեշտ տալ միմյանց, երբ հանկարծ Աննետան հիշեց, որ Ռութին կարող է աշխատանք առաջարկել— մի օտարերկրացի կնոջ գրքի խմբագրությունը։ Այդ աշխատանքը հանձնարարել էին իրեն, բայց նա ազատ ժամանակ

չուներ։ Ռութին անմիջապես սկսեց աշխուժացած շնորհակալություն հայտնել Աննետային, ասելով, որ իրեն փողը շատ է պետք։ Աննետան հարցրեց նրա հասցեն, դեպք է, մեկ էլ տնտես նորից որևէ աշխատանք գտնվեցե։ Ռութը, թվում էր, տատանվում է, պատասխանեց խուսափողական։ Այդ ժամանակ Աննետան զայրացած ասաց.

— Չէ՞ որ դա ձեր օգտի համար է։ Որ այդպես է, լավ, այդ դեպքում հիշեք, որտեղ եմ ես ապրում...

Եվ նա ասաց իր հասցեն։ Ռութը շատ դժկամորեն հայտնեց իրենը։ Աննետան, խոր կերպով խոցված, իր մեջ որոշեց այլևս այս ու այն կողմ չընկնել նրա համար։

Սակայն մի քանի շաբաթ անց Ռութն ինքը եկավ նրա մոտ։ Սկզբում ներողություն խնդրեց իր անսիրալիր վերաբերմունքի համար։ Եվ այդ օրը իր մասին որոշ բաներ պատմեց (ճիշտ է, ոչ շատ)։

Ռութը հարուստ գյուղացու աղջիկ էր, բայց նա հոր հետ կռվել էր, քանի որ վերջինս հակառակվել էր դստեր Փարիզ մեկնելու և այնտեղ ուսուցչուհի դառնալու ցանկությանը։ Հայրը նրա ինքնասիրությանը սաստիկ կպել էր, և Ռութը երդվել էր, որ երբեք նրանից ոչ մի օգնություն չի ընդունի։ Նա ուզում էր ապրել իր աշխատանքով։ Եվ ջլատվեց։ Ծոանդ նրա մեջ շատ կար, բայց մտավոր աշխատանքը հոգնեցնում էր։ Նա տքնում էր գրքերի վրա, ինչպես ձին վարելիս։ Արյունը խփում էր գլուխը, տրոփում էր քունքերում, հաճախ ստիպված էր լինում պարապմունքները թողնել։ Վերջիվերջո նա սկսեց տատապել նևրաստենիայով, որը խանգարեց քննություններ տալուն։ Հարկադրված եղավ սահմանափակվել մասնավոր դասերով։ Նա դժվարությամբ էր հնար գտնում այդ դասերի միջոցով այնքան վաստակել, որպեսզի մի կերպ ապրի։ Հետո նա սիրահարվեց և ամուսնացավ մի մարդու հետ, որը նրա համար ավելորդ բեռ դառավ։ Ասենք, նա այդ մասին ոչ մի խոսք չասաց։ Աննետան դա իմացավ ավելի ուշ և ոչ Ռութից, բայց բավական խելացի էր, որպեսզի Ռութի առաջին իսկ այցելության ժամանակ գուշակեր ճշմարտությունը մի մասը։ Զգուշորեն հարցուփորձ անելով նոր ծանոթին, Աննետան իմացավ, որ նրա ամուսինը անորոշ ըղ-

բաղմունքի մարդ է։ Ռութը բացատրեց, որ նա «ինտելիգենտ» է, «դերասան», «գրող», բայց այդպես էլ պարզ չեղավ, թե վերջին հաշվով նա ինչ է գրում։ Բանաստեղծություններ։ Պոեզիայից Ռութը հասկանում էր ոչ ավելի շատ, քան ուզածդ գավառական քաղքենին, բայց հարգանքով էր վերաբերվում պոեզիային։

Ռութը բոլորովին ցանկություն չուներ Աննետային ծանոթացնել իր «դերասանի» հետ։ Նա ամուսնուն փակի տակ էր պահում։ Իսկ ինքը այդ օրից ի վեր սկսեց հաճախ լինել Աննետայի մոտ, նույնիսկ չափազանց շուտ-շուտ։ Վերջիվերջո նա սկսեց ձանձրացնել իր բարեկամության ապացույցներով, ծաղիկներ էր բերում, ուշադրության ամեն տեսակի նշաններ էր ցույց տալիս, ոչ միշտ հաջող և Աննետային միայն զայրույթ պատճառող։ Ռութի սիրատենչ հոգին իր զգացմունքներում չափ չգիտեր. ամե՞ն ինչ կամ ոչինչ։ Նա երբեք ընկերուհի չէր ունեցել, մինչև հիմա ոչ մեկի առաջ չէր բացել սիրտը։ Եվ որոշելով Աննետայի հետ ընկերություն ունել, լիակատար տիրացել էր նրան։ Իսկ Աննետայի համար այդ կապվածությունը շուտով բեռ դարձավ, և նա հասկացավ, որ ամուսնու համար նույնպես Ռութի սերը պետք է որ թեթև բեռ չլինի։

Վերջապես Աննետային անսպասելի կերպով հաջողվեց տեսնել Ռութի գանձը. այդ խղճուկ, գորշ, երկնագույն պլըտոր աչքերով անձնավորության մեջ Աննետան իսկույն կասկածեց աբսենթի գաղտնի սիրահարին։ Վերին աստիճանի փառամոլ, բայց իր ուժերին անվստահ և բավական սահմանափակ այդ մարդը ակնհայտորեն հուզվում էր, չիմանալով, ինչ տպավորություն թողեց հյուրի վրա։ Կնոջը նա բոլորովին չէր սիրում, բայց գտնում էր, որ քնքուշ հոգսերի առարկա լինելը շատ հարմար է, և, վճռած տեսք տալով իրեն, հոգնատանջ տրտնջում էր առողջությունից, դառնությամբ մանրամասնորեն պատմում էր իր չճանաչված տաղանդի, գրչակից եղբայրների սև նախանձի մասին... Աննետան իր խորաթափանց աչքերով տեսնում էր նրա ամբողջ էությունը։ Աննետայի հետ այդ մարդը զգույշ էր և, նրա լռության մեջ հեգնանք որսալով, իսկույն չափավորեց իր եռեմիական

ողբը։ Բայց Ռութը բերանը բաց լսում էր նրան, ընդունակ չլինելով որևէ քննադատության, հպարտ, ինչպես Արտաբանը[1] ...«Թող քո՞րշ գա իր պատրանքների հետ։ Նրան հարկավոր է մեկնումեկին սիրել, հարկավոր է ամուսին, որպեսզի նրա գլխով պատյա գա։ Նրա հոգին նվիրված աղախնու հոգի է, նա պատրաստ է ամուսնու ոտքերի տակ պառկել...»։ Սակայն Ռութի և ամուսնու միջև երբեմն փոթորկալից կռիվներ էին տեղի ունենում։ Մի անգամ, սանդուղքով բարձրանալիս, Աննետան լսեց «պոետի» ողբալից ձայնը։ Նա տնքում էր ու ախուվախ անում, իսկ Ռութը խփում էր նրա այտերին։

Աննետան արդեն չէր կասկածում, որ այդ պատարկապորա մարդը վատնում է Ռութի վաստակի մեծ մասը։ Նա խմում էր, խաղում ձիարշավներում։ Բայց Ռութը երբեք չէր տրտնջում։ Նա իր բերանից ամեն ինչ կտրում էր, որպեսզի փող հավաքի ամուսնու բանաստեղծությունների գրքույկը հրատարակելու համար։ Բայց ամուսինը առանձնապես չէր շտապում բանաստեղծություններ գրել։ Եվ մի օր, հաշվելով իր խնայողությունները։ Ռութը հայտնաբերեց, որ ժողեն երեք քառորդը գողացել է։ Նա ինքն իրենից գողացե՞լ է։

Այդ օրը Ռութի հպարտությունը կոտրվել էր, և նա անկեղծորեն Աննետային պատմեց իր վիշտը։ Ռութը չէր բողոքի, եթե միայն իր հարցը լիներ։ Բայց այդքան տարիներ նա ուժից ընկնում էր հանուն ամուսնու (Ռութն ասաց «հանուն նրա փառքի»), իսկ այդ ամուսինը իր ձեռքով ամեն ինչ քանդեց...

Մի խոստովանություն իր հետևից մի ուրիշ խոստովանություն էր բերում։ Շուտով Աննետան համարյա ամեն ինչ իմացավ Ռութի ծանր կյանքի մասին։ Նրա առողջությունը քայքայված էր, նա օրըստօրե հալումաշ էր լինում։ Ռութն այլևս չէր կարող Աննետայից թաքցնել իր մաքերը։ Մահվանից առաջ նրա աչքերը բացվեցին, նա հասկացավ, որ այդ մարդը ոչնչություն է, որ նա երբեք իրեն չի սիրել։ Ժողեն

[1] Լա Կալպրենեդայի «Կլեոպատրա» (1647) վեպի հերոսը։ Նրա հպարտությունը առակ է դարձել։

Հիմա գրեթե տանը չէր լինում — նա աշխատում էր ծլկել, քանի որ Հիվանդ ու տխուր կնոջ ընկերակցությունը նրան ոչ մի հաճույք չէր պատճառում։

Երբ վրա հասան Ռութի վերջին օրերը, նա այլևս իրեն չէր խաբում։ Այնուամենայնիվ, նա անկեղծ հպարտությամբ հավատացնում էր, որ ոչինչ չի ափսոսում, որ պատրաստ է այդ բոլորը նորից վերապրել...

— Դա ինձ սպանեց։ Բայց ես դրանով էի ապրում։

Նա ոչ մի բանի չէր հավատում, ոչինչ չէր սպասում ոչ այս և ոչ էլ այն աշխարհում...

Ռութը մահացավ ուղեղի արյան գեղումից։ Աննետան մենակ էր մեռնողի անկողնու մոտ։

Ժոզեն, տեսնելով, որ վերջը մոտ է, փախավ և միայն որոշ ժամանակից հետո վախվորած տեսքով հայտնվեց սենյակում։ Նրա վշտացածությունը երկար չտևեց։ Մի քիչ նրվնջավուց հետո նա առաջին հերթին ասաց.

— Տե՛ր աստված, հիմա ես ի՞նչ եմ անելու։

Աննետան պատասխանեց.

— Մի ուրիշին կգտնեք, որպեսզի ձեզ պահի...

Ժոզեն ատելությամբ նայեց Աննետային։

Այնուամենայնիվ նա չառարկեց, երբ Աննետան իր գրպանից վճարեց թաղման համար։

Մեռյալի դլխավերևը նստած, Աննետան մտածում էր.

«Ահա՛ քեզ օրինակ։ Ինչքա՜ն հպարտություն կար սրա մեջ, ինչքա՜ն կամքի ուժ, ասկետական ինքնազոհությո՜ւն... Իսկ ինչի՞ համար։ Ի՞նչ հիմարություն է։ Բոլորն այդպիսի մի անասունի՞ տալ... Խե՜ղճ Ռութ։ Նրա մեջ քիչ կարծրություն կար... Պետք է լինել ավելի կարծր...»։

Դա ռեակցիա էր սրտի գայթակղության դեմ, անիծյալ սրտի, որը անընդհատ մեզ խաբո՜ւմ է... խելքն ու մարմինը գիտեն, ինչ են ուզում, իսկ սիրտը կույր է։ Աննետան ինքն իրեն ասում էր, որ պետք է լինի սրտի առաջնորդողը... Նա ըմբոստացավ սիրո դեմ, ինքնազոհաբերման դեմ, բարությա՛ն դեմ...

Մեղանից ամեն մեկի կյանքում, ինչպես և հասարակու-

թյան կյանքում, զգացմունքների մոդանները փոփոխվում են։ Նրանք չեն կրկնվում— կարելի է ասել, որ նրանց անմիատեսակությունը հիմնական օրենքն է հանդիսանում։ Քանի դեռ տիրապետում է այս կամ այն մոդան, բոլորը սրբորեն հետեվում են նրան և արհամարհանքով են վերաբերվում անհետների, հնացած մոդաներին, հասատատ հավատալով, որ այն մոդան, որին իրենք հետևում են, է և միշտ լինելու է ամենալավը։ Աննետան այդ շրջանում տարված էր կաթոլիության մոդայով...

Բայց ինչպիսի մոդայով էլ ուզում ես հագնվիր, մարդը միշտ մնում է այն, ինչպես որ կա։ Նա չի կարող յոլա գնալ առանց ուրիշ մարդկանց։ Ամենահպարտը նույնիսկ մտերմության կարիք է զգում։ Եվ որքան հանգամանքներն ավելի շատ են նրան հարկադրում ամփոփվել իր մեջ, այնքան դավադիր և չարագործ միտքը ավելի շուտ է մատնում նրան։

Աննետան իրեն շատ ուժեղ էր թվում։ Ուժեղ կենսափորձով, հատատատակամությամբ և խելքով, սթափ գործնականությամբ։ Հիմա նա համոզված էր, որ ապրում է հենց այնպես, ինչպես ուզում էր։ Իհարկե, ստիպված է աշխատել, բայց չէ որ դա նույնպես իր բարի կամքով է անում։ Նա այլևս չէր վախենում անգործ մնալուց, ոչ մեկի օգնության կարիքը չէր զգում։ Եվ նրա համար վճռականորեն միևնույն էր, դա մարդկանց դուր է գալիս թե չէ։

Վերջին ժամանակները Աննետան ստիպված էր լինում մրցակցել արդեն ոչ թե կանանց, այլ տղամարդկանց հետ, որովհետև նա սկսել էր դասեր տալ տղաներին, պատրաստել նրանց լիցեյի ընդունելության և փոխադրման քննություններին։ Այդ գործը նա լավ էր հաղթահարում, բայց նրա հաջողությունների հետ միասին աճում էր նաև այն մարդկանց թշնամանքը նրա դեմ, ովքեր նրա պատճառով անաշխատանք էին մնում։ Այդ մարդիկ իրենց կողոպտված էին զգում։ Այդտեղ արդեն ասպետական քաղաքավարության տեղ չէր։ Բոլորից աննրբանկատներն ու կոպիտները ամուսնացած տղամարդիկ էին. նրանց հրահրում էին իրենց կանայք։ Աննետայի դեմ գործի էին դրվում ամեն տեսակի զրպարտանքներ. ինչ ասես, որ նրա մասին չէին հնարում, բացատրելով,

թե ինչ միջոցներով է նա ձեռ գցում ամենաձեռնտու դասերը։ Իսկ Աննետան ժպտում էր խիստ, գերող ժպիտով և շարունակում ճանապարհը, արհամարհելով մարդկանց կարծիքը։

Բայց հոգու խորքում աննկատելիորեն կուտակվում էր երկար տարիների դաժան աշխատանքի և պայքարի խոնջությունը։ Նա վաղուց էր մտել չորրորդ տասնամյակի մեջ։ Տարիներն անցնում էին, ոչինչ նրանց չէր կարող կանգնեցնել։ Եվ Աննետայի հոգում գլուխ էր բարձրացնում խուլ զայրույթը... Կյանքը կորավ, անցավ առանց սիրո, առանց իսկական գործի, առանց գեղեցկության, առանց հզոր բերկրանքի... Մինչդեռ նա ստեղծվա՞ծ էր՝ այդ բոլորի վայելքն զգալու համար...

Բայց ի՞նչ միտք ունի այդ մասին մտածել։ Չափազա՞նց ուշ է։

Այդպե՞ս է արդյոք։ Մի՞թե ուշ է։

Մասն երրորդ

Սոլանժը կլոր, բարեհոգի դեմք ուներ, ինչպես հնամենի նկարների մադոննաները, փոքր-ինչ ծերակերպ և միևնույն ժամանակ մանկական։ Կնճիռներով շրջապատված ծիծաղող աչքեր, հաճելի քթիկ և բանտիկով շրթունքներ, ծանրավուն ծնոտ, նուրբ մաշկ և ալ-կարմիր այտեր։ Նա սիրում էր խիստ խորամտությամբ զատողություններ անել լուրջ բաների մասին, խորամտություն, որն այնքան զվարճալի էր այդ բարեհոգի, ծիծաղկոտ երեսին, որից Սլանժը փութաջանորեն ճրգնում էր վանել ուրախ արտահայտությունը։ Նա խոսում էր միշտ արագ, վախենալով՝ չլինի թե կարվի իր կարևոր մըտքերի թելը։ Եվ իսկապես, մեկ էլ տեսար նախադասությունն առանց վերջացնելու հանկարծ լռում է և, գլխի մեջ դատարկություն զգալով, հարցնում.

«Ինչ էի ուզում ասե՞լ...»։

Եվ ունկնդիրները հազվադեպ էին հուշում, որովհետև նրանք Սոլանժին չէին լսում։ Բայց նրա շաղակրատանքը ոչ ոքի չէր զայրացնում։ Սոլանժը այն շատախոսներից չէր, որոնք համառորեն ուշադրություն են պահանջում իրենց ձանձրալի դատողությունների համար։ Նա գոռոզ չէր և պատրաստ էր նույնիսկ հեզորեն ներողություն խնդրել ուրիշներից, որ ձանձրույթ է պատճառում նրանց։ Ընդունակ չլինելով ոչ մի միտք մինչև վերջը մտածելու, նա իմաստական միամիտ հակվածություն ուներ և աչքի էր ընկնում մեծ փութեռանդությամբ։ Սոլանժի թափած ջանքերից ոչ մի օգտավետ բան չէր ստացվում. մտքերը կանգ էին առնում կես ճանապարհին, լուրջ գրքերը— Պլատոն, Գյույո, Ֆուլիե— շաբաթներով,

իսկ երբեմն էլ ամիսներով բաց էին մնում նույն էջի վրա։ Այն գրքերը, որոնք շարադրում էին հիանալի և մեծ մտքեր, հասարակական օգնության իդեալական ալտրուիստական նախագծեր կամ դաստիարակության նոր սիստեմներ, Սոլանժի համար խաղալիքներ էին, որոնցով նա միտքը զվարճացնում էր։ Այդ գրքերի մասին նա շուտ մոռանում էր, և նրանք թափված մնում էին անկյուններում ու աթոռակների տակ, մինչև որ պատահականորեն նորից նրա աչքով էին ընկնում։ Այդ բարի քաղքենին, որ միշտ բարեհամբույր էր, սիրալիր ու լավ, լրջամիտ ու հավասարակշիռ, որ փոքր-ինչ խստականոն էր, բայց դրանով ոչ ոքի նեղություն չէր պատճառել,— մի խոսքով— որ շատ հաճելի էր, անկեղծորեն իրեն երևակայում էր բարձր մտավոր պահանջներ ունեցող կին, իսկ իրականում միայն սիրում էր միևնույն արտահայտություններով դատողություններ անել իդեալների և նըման բաների մասին, միշտ նույն ձևով հանգիստ, տակտով, պարկեշտ, ողորկ ու կատարյալ անթովանդակ։

Սոլանժը երեք-չորս տարով Աննետայից փոքր էր և մի ժամանակ Աննետայի նկատմամբ զգացել էր այն անբացատրելի համակրանքը, որը անշառ և հասարակ մարդկանց քաշում է դեպի վտանգավոր նատուրաները։ Ճիշտ է, դա սովորաբար տարածության վրա գտնվող սեր էր։ Իսկապես, լիցեյում Սոլանժը քիչ էր շփվում Աննետայի հետ, քանի որ նըրանք սովորում էին տարբեր դասարաններում։ Բայց միջանցքի բազմաթիվ հանդիպումներն ու փոքրիկ Սոլանժին հասած «մեծահասակների» կյանքի որոշ արձագանքները բավական էին, որպեսզի նա սկսեր հեռվից երկյոտաբար պաշտել Աննետային։ Իսկ այդ բոլորը Աննետայի մտքով չէր էլ անցել։ Լիցեյն ավարտելուց հետո Սոլանժը լրիվ մոռացել էր Աննետային։ Նա ամուսնացավ և դրանով էլ երջանիկ էր— երջանկության համար նրան քիչ բան էր պետք. միայն թե ամուսինը ոչ այլևնդակ լիներ, ոչ ուժեղ կրքերի տեր մարդ, իսկ Վիկտոր Մուտոն-Շևալիեն, գոհունություն աստծու, ոչ մեկից էր, ոչ մյուսից։ Նա մասնագիտությամբ քանդակագործ էր, բայց, ռենտա և հարուստ կին ունենալով, կյանքում շատ տեղ չէր հատկացնում ստեղծագործական տառապանք-

ներին։ Լինելով ճաշակից ոչ զուրկ, նա, այնուամենայնիվ, առանձին պահանջ չէր զգում իր արվեստում մարմնավորել երևէ այլ բան կամ այլ ձևով, քան այդ անում էին բոլոր դասրաշրջանների նրա նշանավոր արվեստակից եղբայրները։ Նրա համար օտար էին փառասիրությունն ու մանր զգացումները (իսկ գուցե, նաև մնացյալ մյուսները), և այդ պատճառով նա միանգամայն բավարարվում էր այն գիտակցությամբ (համենայն դեպս, հույս էր տածում), որ իր գաղափարները լրիվ և կատարյալ արտահայտել են ուրիշները— Միքելանջելոն, Ռոդենը, Բուրդելը կամ պակաս խոշոր վարպետները (քանի որ նա էկլեկտիկ էր և յուրաքանչյուրից մի բան փոխ էր առնում)։ Այդպիսի երջանիկ ճակատագրի դեպքում փաստորեն չարժեր նեղություն պատճառել իրեն և ըստեղծագործել, սակայն ինքնասիրություն չոյող այն պատրանքը, որ ինքն էլ է արվեստագետների մեծ եղբայրության անդամ, ախորժակը սրում էր դեպի կյանքը։ Վիկտորն իրեն շոյում էր այն մտքով, որ մարդիկ դեպի իրեն նույնպես տածում են այն գորովալից հարգանքը, որը նա իր պարտքն էր համարում ցուցաբերել արվեստի կորիֆեյների հանդեպ, ցավելով այն դժվարությունների համար, որոնց նրանք հանդիպել են իրենց ճանապարհին։ Այդպիսի դժվարություններ ծանոթ են եղել նաև իրեն— ճիշտ է, մեծ մասամբ լսածով։ Եվ նա ճգնում էր իր ուրախ կերպարանքին մոայլ մելամաղձության արտահայտություն տալ, երբ լսում էր «Պաթետիկ սոնատը», որը դաշնամուրի վրա եռանդագին կերպով ընկճընդացնում էր նրա կինը (չէ՞ որ Բեթհովենը նույնպես պատկանում էր մեծ եղբայրությանը)։ Սոլանժը տվեց նրան այն ամենը, ինչ նա փնտրում էր ամուսնական կյանքում։ Խաղաղ սեր, անխոտոտ պահանջ բարություն, հեզ և հանգիստ բնավորություն, հանդուրժողականություն, սենյակային իդեալիզմ, որը վախենում է քամուց և վատ եղանակից, ամեն ինչով սքանչանալու հակում, որը կյանքն այնքան հարմարավետ է դարձնում։ Կարճ ասած, Սոլանժի և նրա ամուսնու գաղտնի իդեալը այն էր, ինչը կարելի է արտահայտել մի բառով— անդորր.. Եվ դրամական միջոցներն ու հոգեկան առանձնահատկությունները նրանց համար ապահովում էին

այդ անդորրը։ Ոչ մի նյութական հոգս նրանց չէր սպառնում, և կարելի էր վախենալ, թե նրանք որևէ ուրիշ հոգս ներս կթողնեն իրենց խաղաղ տունը։

Սակայն նրանք ներս թողին Աննետային։ Եթե կարողանային ենթադրել, թե ինչպիսի փոթորիկներ է իր մեջ թաքցրնում այդ Frau Sorge[1]-ն, նրանք սոսկալի կերպով իրար կանցնեին։ Բայց այդ մասին Մուտոն-Շեվալիե ամուսինները այդպես էլ ոչինչ չիմացան. նրանք երեխաների նման խաղում էին դինամիտի հետ։ Եթե այդ ամուսիններն իմանային, ինչ են բռնել իրենց ձեռքում, սարսափից կխելագարվեին։ Բայց ոչինչ չկասկածելով և խաղալով ուզածների չափ, նրանք առանց որևէ վատ մտադրության այդ դինամիտը սիրալիր կերպով գցեցին իրենց բարեկամների պարտեզը։ Նրանք Վիլլարների պարտեզը գցեցին Աննետային։

Հանդիպելով Աննետային, Սոլանժն անմիջապես համոզվեց, որ իր մեջ կենդանացան նախկին զգացումները. նա նորից սիրահարվեց Աննետային։ Սոլանժին, ինչպես և բոլորին, հայտնի էր Աննետայի «անհանդուրժելի» պատմությունը։ Բայց Սոլանժը բարի էր, և եթե նրա զգացմունքներում խորություն չկար, ապա չկար նաև չափն անցնող կեղծ բարեպաշտություն, այդ պատճառով էլ նա չէր դատապարտում Աննետային։ Պետք է ասել, որ Սոլանժը ո՛չ ամբողջովին էր հասկանում Աննետային։ Այն ներողամտությամբ, որը այդ հաճելի կնոջ ամենահամակրելի գիծն էր, Սոլանժը որոշեց, որ Աննետան կամ խաբված է եղել և լքված, կամ լուրջ պատճառներ է ունեցել այդպես վարվելու համար, ինչպես վարվել է։ Բոլոր դեպքերում, դա նրա անձնական գործն է և ոչ ոքի չի վերաբերվում։ Այդպես որոշելով, Սոլանժը դեմ դուրս եկավ բարձրաշխարհիկ հասարակության կարծիքին։ Աննետայի հետ հանդիպելուց հետո նա ամեն ինչին տեղեկացավ նրա մասին և հիացավ նրա արիությամբ ու անձնազոհությամբ։ Դա մեկն էր այն հերթական խանդավառություններից, որոնք ժամանակավորապես դուրս էին մղում

[1] Տիկին Հոգս (գերմ.)։

Սոլանժի սրտից մյուս բոլոր զգացմունքները։ Վիկտոր Մունտոն-Շեվալիեի համար, որի հետ Սոլանժը կիսեց իր հիացմունքները, դա խանդաղատանքի ավելորդ առիթ էր— նա գորովաշարժ էր լինում Աննետայի ազնիվ սրտի համար, իսկ զուգընթացաբար՝ նաև կնոջ ու իր սեփական վեհանձնության։ (Չէ որ մերձավորի բարոյական գեղեցկությամբ ըմբռնչանալը իր սեփականն ապացուցելու լավագույն միջոցն է)։ Երկու ամուսիններն էլ լի էին ամենաբարի մտադրություններով։ Նրանց միջև որոշված էր, որ այդ խեղճ կնոջը, հասարակական անարդարության այդ զոհին, չի կարելի թողնել միայնության մեջ, առանց բարոյական աջակցության։ Եվ Մունտոն-Շեվալիե ամուսինները, հաղթահարելով վեց հարկ, եկան Աննետային այցելության։ Նրանք Աննետային անակնկալի բերին, որն զբաղված էր տան հոգսերով, և դրանով նա Մունտոն-Շեվալիե ամուսինների սիրտն ավելի շարժեց։ Իսկ Աննետայի սառնությունը վերագրեցին նրա սեփական արժանապատվության ազնիվ զգացումին։ Նրանք գնացին այն բանից հետո միայն, երբ Աննետայից խոսք առան, որ նա ամենամոտիկ մի երեկո առանց որևէ ձևականության տղայի հետ կգա իրենց մոտ ճաշելու։

Աննետան առանձնապես չէր ուրախանում այդ վերականգնված ծանոթության համար։ Նրան զայրացնում էր ամեն տեսակի տափակությունն և կեղծությունն։ Հոգեկան միայնության տարիները Աննետայի մեջ զարգացրել էին վայրենու հոտառություն։ Հասարակությունից երկար ժամանակով հեռանալը վտանգավոր է. հետո դժվար է լինում նրա մեջ վերադառնալ, մարդ չափազանց սուր կերպով է զգում ծաղիկների տակ նեխման հոտը։ Մունտոն-Շեվալիեների հարմարավետ փոքրիկ աշխարհում Աննետան իրեն լավ չէր զգում, նրանց ընտանեկան երջանկությունը Աննետայի մեջ նախանձ չէր առաջացնում։ «Բարեհոգի, բարեհոգի, բարեհոգի»,— ինչպես ասում է Մոլիերը։ «Ոչ, չնորհակալություն, դա ինձ համար չէ...»։ Աննետան այն վիճակում էր, երբ ծարավի ես զգալու կյանքի սուր շունչը...

Եվ նրա ցանկությանը վիճակված էր իրականանալ։

Բարի Սոլանժը շուտով նրան այգեխաչ հնարավորություն ընձեռեց...

Աննետան հագնվում էր, երբեսզի Սոլանժի մոտ ճաշի գնա։ Այդ երեկո նրան այնտեղ հանդիպում էր սպասվում Մուտոն-Շևալիե զույգի բարեկամների հետ, որոնց մասին Սոլանժը արդեն հասցրել էր Աննետայի ականջը տանել,— բժիշկ Վիլլարի, որն այն ժամանակ ընդհանուր ճանաչում գտած և Փարիզում մեծ համբավ վայելող վիրաբույժ էր, և նրա սքանչելի երիտասարդ տիկնոջ հետ։ Աննետան հուզվում էր. «Գուցե չգնա՞մ...»։ Նա արդեն քիչ էր մնացել Սոլանժին ներողություն խնդրող մի երկտող ուղարկի։ Բայց Մարկը, որը ձանձրացել էր մոր հետ երես առ երես տանը նստելուց, ուրախանում էր որևէ տեղ գնալու ամեն տեսակի հնարավորության համար, և Աննետան չէր ուզում նրան զրկել այդ զվարճանքից։ Ընդ որում նա իր հուզմունքը անհնթեթի էր համարում. «Բանն ինչո՞ւմն է։ Ի՞նչն է ինձ անհանգստացնում...»։ Նրան տանջում էր վատ նախազգացումը։ Ի՞նչ անմտություն։ Նա ուսերը թոթվեց։ Հաղթեց զգաստ խելքը, որը նրա մեջ գոյակցում էր անհնազանդ բնազդների հետ։ Աննետան հագնվելը վերջացրեց և, որդուն թևանցուկ արած, գնաց Սոլանժի մոտ։

Սնոտի նախազգացումը շուտով արդարացավ։ Այն, որ մեր կանխազգացումները իրականանում են, դրա մեջ ոչ մի հրաշք չկա։ Չէ՞ որ կանխազգացումը ինչ-որ բանի նախատրամադրություն է, որը մենք վախենում ենք ապրել։ Հետևաբար, նախազգուշացնելով մեզ ապագա ապրումի մասին, բնազդը գործում է ոչ որպես կախարդ, այլ ավելի շուտ որպես ստորերկրյա ակունքներ որոնող, որը հողի թեթև ցնցումից իմանում է, որ այդտեղ գետնի տակ եղած ջրերը ճեղքում են երկրագնդի կեղևը։

Հյուրասենյակի շեմին, կանխազգացումը նորից ծակեց Աննետային։ Բայց նա միայն հոնքերը կիտեց և, ներս մտնելով, անմիջապես հանգստացավ։ Ավելի շուտ, քան Սոլանժը Ֆիլիպ Վիլլարին կներկայացներ Աննետային, վերջինս մի հայացքով որոշեց, որ նա տհաճ մարդ է։ Եվ ինչ-որ թեթևություն զգաց։

Ֆիլիպը հեռու էր զեղեցիկ լինելուց. նա ո՛չ բարձրահասակ, պնդակազմ, ուռուցիկ ճակատով, որ կախված էր պողպատյա կապտություն ունեցող աչքերի վրա, խիստ զարգացած ծնոտներով և սրածայր կզակով մի մարդ էր։ Նա իրեն լավ էր տիրապետում և նրա սառը քաղաքավարության մեջ ինչ-որ տիրական բան կար։ Սեղանի շուրջը նա նստած էր Աննետայի կողքին և, մասնակցելով ընդհանուր խոսակցությանը, որը շարունակում էր Սոլանժը (ըստ իր սովորության՝ մի առարկայից մյուսին ցատկելով), ընդմիջումներին զրուցում էր կողքին նստածի հետ։ Ֆիլիպ Վիլլարը ամեն ինչի մասին խոսում էր կարճ, հստակ և վճռական. ոչ մի արգելակում ո՛չ խոսքերի մեջ, ո՛չ մտքերի։ Որքան ավելի շատ էր Աննետան նրան լսում, այնքան ավելի շատ նրա մեջ աճում էր անբարյացակամությունը դեպի այդ մարդը։ Պատասխանելով Վիլլարին, Աննետան աշխատում էր այդ անբարյացակամությունը թաքցնել սառը անտարբերության դիմակի տակ։ Իսկ Վիլլարը, թվում էր, մեծ նշանակություն չէր տալիս, թե նա ինչ է ասում,— հավանական է նա Աննետայի մասին դատում էր Սոլանժի հիմար գովեստներով։ Իրեն պահելու Վիլլարի մաներան սահմանակցում էր անքաղաքավարության հետ։ Դա ոչ ոքի չէր զարմացնում— բոլորը ընտելացել էին նրա կոպտությանը։ Բայց դա Աննետային զայրացնում էր։ Զևացնելով, որ Վիլլարին չի նայում, Աննետան աչքի պոչով հետևում էր նրան, ուսումնասիրում գիծը գծի հետևից— և ոչ մեկը նրան դուր չէր գալիս։ Բայց ընդհանուր տպավորություն չէր գումարվում առանձին դիտումներից, և, վերջացնելով իր հանգիստ և սառնարյուն դննումները, նա հանկարծ նախկին անհանգստություն զգաց։ Ֆիլիպի ձեռքը շարժումը, ճակատի կնճիռը... Այո, Աննետան վախենում էր այդ մարդուց։ Նա մտածեց. «Գոնե նա ինձ չնայեր»։

Սոլանժը խոսք բացեց մի գրողի մասին, որը, ինչպես նա արտահայտվեց, «օժտված է արցունքներ առաջացնելու շնորհքով»։

— Լա՛վ շնորհք է,— նկատեց Ֆիլիպը։— Արցունքնե-

րը հիմա կյանքում էլ թանկ չարժենն, իսկ արվեստում լալկանությունից զզվելի բան չկա։

Տիկնայք աղմկալից բողոքեցին։ Տիկին Վիլլարն ասաց, որ արցունքը կյանքի սփոփանքներից մեկն է, իսկ Սոլանժը— որ դա «հոգին զարդարող ալմաստ է»։

— Իսկ դուք ինչո՞ւ չեք առարկում,— հարցրեց Ֆիլիպը Աննետային։— Նո՞ւյնպես մատակարարողներից արցունքի պաշար եք հավաքում։

— Ինձ համար իմ ունեցածն էլ բավական է, ես ուրիշի արցունքների կարիքը չեմ զգում։

— Կնշանակի սնվում եք ձեր սեփական պաշարների՞ց։

— Իսկ դուք արցունքներից ինձ ազատելու միջոց չգտե՞ք։

— Կարծր եղեք։

— Սովորո՞ւմ եմ,— պատասխանեց Աննետան։

Ֆիլիպը խեթ-խեթ նայեց նրան։

Շուրջը խոսակցությունը շարունակվում էր։

— Ահա թե ո՞ւմ պետք է այդ սովորեցնել,— ասաց Ֆիլիպն Աննետային, հայացքով ցույց տալով Մարկին, որի աշխույժ դեմքը միամտորեն մատնում էր այն զգացմունքները, որոնք արթնացնում էր նրա մեջ սեղանի շուրջը նստած նրա հարևանուհին՝ գեղեցկուհի տիկին Վիլլարը։

— Վախենում եմ, որ նա առանց այդ էլ չափազանց հակված է դրան,— պատասխանեց Աննետան։

— Ավելի՛ լավ։

— Բայց ո՛չ նրանց համար, ովքեր նրա ճանապարհին են կանգնում։

— Թող նրանց վրայով անցնի։

— Ձեզ համար ասելը հե՛շտ է։

— Իսկ դուք մի կողմ քաշվեք, ուրիշ ոչինչ։

— Օ, ոչ, դա անբնական կլիներ։

— Ամենևին։ Անբնական է հենց դրա հակառակը—անչափ շատ սիրելը։

— Ինչպե՞ս։ Հարազատ երեխայի՞ն։

— Ում ուզում է լինի, իսկ հարազատ երեխային՝ հատկապես։

— Բայց ես պե՞տք եմ նրան։

— Ապա մի ձեր տղային նայեք։ Մի՞թե ձեր մասին է նա մտածում։ Նա պատրաստ է ձեզանից հրաժարվել մի փոքրիկ պատառի համար, եթե իմ կինը թույլ տա իր ձեռքից ուտել։

Սփռոցի վրա դրված Աննետայի մատները չղաձգորեն սեղմվեցին... օ, որքա՜ն էր նա այդ րոպեին ատում Ֆիլիպին... Ֆիլիպը նայում էր Աննետայի մատներին...

— Բայց ես նրան ստեղծել եմ և չեմ կարող հրաժարվել նրանից,— ասաց Աննետան։

— Դո՜ւք չեք նրան ստեղծել,— առարկեց Վիլլարը։— Նրան բնությունն է ստեղծել։ Դուք եղել եք միայն այդ բնության գործիքը, և հիմա նա ձեզ մի կողմ է շպրտում։

— Իսկ ես չեմ թողնի, որ ինձ նեղեն...

— Կնշանակի պատերա՞զմ։

— Պատերա՜զմ։

Այս անգամ Ֆիլիպը նայեց ուղիղ նրա երեսին։

— Դուք կպարտվեք,— ասաց նա։

— Գիտեմ։ Այդպես միշտ է լինում։ Բայց այնուամենայնիվ մենք դեռ կկռվենք։

Սառը անտարբերության դիմակի միջից Աննետայի աչքերը փայլում էին ուրախ մարտահրավերով։ Բայց Վիլլարը մի հայացքով թափանցեց նրա էության մեջ։ Աննետան իրեն մատնեց։

Ֆիլիպը ուժեղ մարդ էր։ Ուժեղ կամքը նրա օժտված բնավորության հիմնական հատկություններից մեկն էր։ Այդ կամքը երևան էր գալիս բժշկի նրա աշխատանքում, նրա կայծակնային դիագնոզներում, դա նրա ձեռքին վստահություն էր տալիս վիրահատությունների ժամանակ, իսկ անձնական կյանքում դրսևորվում էր նրա բոլոր գործողություններում ու վճիռներում։ Սովորած լինելով հայացքով թափանցել մարդկային մարմնի խորքերը, նա իսկույն Աննետային զննեց ամբողջությամբ վերցրած, նրա կրքերով, հպարտությամբ, տագնապներով, նրա փոթորկուն տեմպերամենտով և անկում հոգով, եվ Աննետան իրեն բռնված զգաց։ Քաշելով

իսկույն երեսկալն ու իջեցնելով սաղավարտը, նա զայրույթից ալեկոծվելով, հակառակորդի հայացքներից սառչե զրահով անջատվեց։ Այն բանից, թե ինչպես էր կծկվում սիրտը, նա հիմա գիտեր, որ թշնամին մտերիմ է։ Թշնամի՞ն։ Այո, սե՛րը... (Ախ, ինչքան է այդ զոհհիացրած բառը հեռու այն դաժան ուժից, որն այդ բառը նշում է...) Նկատելով Ֆիլիպի մեջ հանկարծ իր նկատմամբ արթնացած հետաքրքրությունը, Աննետան հակադրեց նրան հեգնական խստաբարոյություն, վառ թաքցրած թշնամանք։ Բայց հենց դա էլ նրան մատնեց։ Լինելով անշափ շիտակ և բարբոքուն, նա չէր կարողանում կեղծել իրենն։ Նույնիսկ այդ թշնամանքը նրան գլխովին մատնում էր։ Մեն միայն Ֆիլիպը ամեն ինչ հասկացավ։ Նա այլևս փորձ չարեց խոսակցությունը վերսկսելու համար. արդեն բավական բան իմացավ։ Եվ, անտարբեր տեսքով բոլորին պատմելով իր պրակտիկայից ինչ-որ ևՙ ծիծաղելի, ևՙ ողբալի մի դեպք, Ֆիլիպը թաքուն հայացքով չափում էր նրան, ում ինքը տիրանալու էր։

Ներկաներից ոչ ոք ոչինչ չնկատեց։ Մուսոն-Շևալիե ամուսիններն ափսոսանքով նշեցին, որ Աննետան ու Ֆիլիպը բոլորովին իրար դուր չեկան. ինչպես երևում է, շատ տարբեր բնավորության մարդիկ են։ Ասենք, Աննետային Վիլլարների հետ ծանոթացնելով նրանք ավելի շատ հույս ունեին, որ Աննետան կմտերմանա տիկին Վիլլարի հետ, քանի որ «նրանք պարզապես ստեղծված են մեկը մյուսի համար»։ Եվ հաճույքով նշեցին, որ դրանում նրանք չսխալվեցին։

Նոեմի Վիլլարը մանրանրբին կրեոլուհի էր, մարմնով գեղեցիկ և ոսկերանգ, ինչպես տապակած ադավնին։ Ամեն ինչ նրա մեջ սքանչելի էր. եղնիկի աչքերով նեղ երեսը, նրբագեղ քիթն ու շրթունքները, որոնք խողովակի նման այնպես էին կլոր ու ձգված առաջ, կարծես ինչ-որ բան էին ուզում վերցնել, ակնհայտորեն մերկ, երիտասարդ, կլոր և անբասիր ձևի ատինքները, քնքուշ ձեռքերը, բարակիկ իրանը, փոքրիկ առքերը, նուրբ կառուցվածքը։ Նոեմին երեխա-կնոջ պես էր խաղում մերթ հիացական, մերթ թախծագրքով, որ հեշտությամբ չարաճճիությունից ու ծիծաղից անցնում էր արցունքների և սիրալիր ու առատ քնքշանքներ էր շռայլում։ Նա բոլորին թույլ

էակ էր թվում, տպավորվող, զգայագեղ և առանձնապես ոչ խելացի։ Իսկ իրականում ամեն ինչ հակառակն էր։ Այդ կընոջ մեջ սառը հաշվենկատությունը զուգակցվում էր զգայականության հետ, ուժեղ կրքերը՝ չոր սրտի։ Նա ամեն ինչ նրկատում էր, ծանր ու թեթև անում, հաշվի առնում, անխոնջ և մշտական, իսկ նրա թուլությունը եղեգնի թուլություն էր, որը ծովում, բայց հանկարծ այնպե՞ս է շտկվում ու շրմփացնում... Փուխր հողի պատյանի տակ (Նոեմին միայն ինքը գիտեր, որքա՞ն ճիգեր արժի այդ գնդապրվեստական գունազարդումը) նա ստեղծված էր բեռոնից։ Իսկ խելք փոխ առնելու կարիք չուներ, նրա խելքը ավելին էր, քան պետք էր, բայց նա դրանից օգտվում էր միայն նրա համար, որպեսզի պահպանի այն միակը, ինչը բարձր էր գնահատում, ինչին խանդաղատությամբ ուզում էր տիրանալ միայն ինքը. ամուսնուն։ Դա ամուսնության էր և հաշվով և փոխադարձ կրքով—նրանցից յուրաքանչյուրը այդ ամուսնության մեջ իր փառասիրության ու զգայականության բավարարությունն էր փնտրում։ Նոեմին որոշեց Ֆիլիպի կինը գտնել շատ ավելի շուտ, քան Ֆիլիպը այդ ընտրությունն արել էր, և նույնիսկ ավելի շուտ, քան Ֆիլիպն ուշադրություն էր դարձրել նրա վրա։ Այդ մարգը, որքն, ինչպես և նրա նշանավոր փարիզյան եղբայրակիցներին, նույն ձևով հրապուրում էին և ուժասպառ մասնագիտությունը և աղմկոտ բարձրաշխարհիկ կյանքը, ժամանակ էր գտնում բազմաթիվ սիրավեպեր հաստատելու համար։ Սրտակերի նրա համբավը քիչ չէր նպաստել, որ Նոեմին խենթի պես սիրահարվի Ֆիլիպին և որոշի ինչ գնով էլ ուզում է լինի տիրանա նրան և պահի միայն ու միայն իր համար։ Սիրուհիների մեջ Ֆիլիպը խելք չէր փնտրում, նրան պետք էին լավ կազմվածք ունեցող, առույջ, նրբագեղ և հիմար կանայք։ Նա սիրում էր ասել. կինը որքան հիմար լինի, այնքան ավելի լավ է։ Նոեմին ամենևին հիմար չէր, բայց դա ի՞նչ նշանակություն ուներ։ Երբ կինն ուզում է տղամարդուն գերել, նա կարող է հայելու առաջ ոչ միայն աչքերն այնպիսին դարձնել, ինչպիսին տղամարդուն դուր է գալիս, այլև իր խելքը հարմարեցնել այդ տղամարդու ճաշակին։ Նոեմին հարբեցրել էր Ֆիլիպին իր երիտասարդ մարմնով և անչափ

կրակոտ ու անհուն սիրով— և ագահորեն տիրացել էր նրան։

Սակայն սիրուհու կարիերան սինեկուրա չէ։ Նրա համար պետք է յուրատեսակ տաղանդ ունենալ։ Բայց հանգիստ՝ երբեք։ Ֆիլիպը սիրո ստրկացման երկար շրջանից հետո սկսեց հոգնել։ Նեոմին ապշեցուցիչ արագությամբ կռահում էր ամենափոքր փոփոխության նշաններն անգամ իր ամուսին-սիրեկանի սրտում և միշտ զգաստ էր պահում իրեն։ Ֆիլիպի համար աննկատելի, իր խանդոտ զգոնության շնորհիվ, Նեոմին կարողանում էր իր ենթադրյալ մրցակցին խայթող քննադատության և ծաղրի ենթարկելով խափանել վտանգը և, գործի դնելով ամեն տեսակի խորամանկություն, բորբոքելով նրա ցանկասիրությունը, նորից էր հրապուրում դեպի իր ցանցը դուրս պրծնելու պատրաստ ամուսնուն։ Սկզբում Նեոմին դրա մեջ մի տեսակ խաղ էր տեսնում, բայց դա երկար չտևեց։ Ֆիլիպին հետևելուց ավելի շատ նա ստիպված էր լինում իրեն հետևել, միշտ լինել ուշադիր, միշտ պատրաստ լինել ուղղել կամ քողարկել անխուսափելի թերությունները, որոնք իրենից հետո թողնում է կյանքի ամեն մի դավաճան ակնթարթ, յուրաքանչյուր ապրած օր կամ տարի։ Նեոմին արդեն առաջին թարմության կին չէր, գույները խունացել էին, նրա դեմքի նուրբ դիմագծերը մի տեսակ սրվել էին, ցամաքել, կուրծքը լցվել էր, և պարանոցը սպառնում էր կորցնել իր նրբագեղությունը։ Վտանգի մեջ գտնվող բնության սքանչելի ստեղծագործությանը օգնության էր շտապում արվեստը և ոչ միայն փրկում էր, այլև հմայք էր ավելացնում նրան։ Բայց ի՜նչ հավիտենական լարվածություն։ Փոքրագույն անփութությունը, թուլության րոպեն կարող էին մատնել նրա գաղտնիքը տիրոջ արթուն աչքին, և Ֆիլիպը չէր մոռանա այն, ինչը մի անգամ տեսել էր։ Միայն թույլ չտալ, որ իրեն հանկարծակիի բերի... Ինչպե՜ս ծանր հոգեվիճակ ապրեց Նոեմին մի անգամ առավոտյան, երբ կոտրվեց նրա վերևի ատամը։ Նա օրվա կեսը թաքնվել էր ատամնաբույժի մոտ, իսկ երբ տուն վերադարձավ, Ֆիլիպը տեսավ նույն այն անխռով ժպիտը և ոչինչ չկասկածեց, դավաճանությունից բացի (իսկ դա այնքան սարսափելի չէ, ինչպես ջարդված ա-

տամը...), խաղը պետք էր շարունակել շատ զգույշ։ Ֆիլիպը այն ամուսիններից չէր, որին հեշտությամբ կարելի էր խաբել՝ նրա ձեռքը վատ ապրանք խրելով,— նա գիտակ մարդ էր։ Նոեմիի սիրտը միշտ մարում էր, երբ Ֆիլիպի հայացքը կանգ էր առնում նրա վրա, հայացք, որը Նոեմին, կատակով իրեն քաջալերերով, «իքս-ճառագայթներ» էր կոչում, հայացք, որի ներքո նա իրեն այնպես էր զգում, ինչպես չինվորը ատուգատեսին։ Նոեմին հարցնում էր իրեն. «Նկատեցի՞ր»... Ֆիլիպը նկատում էր և ամեն ինչ գիտեր, բայց ցույց չէր տալիս, թե գիտե։ Այն արվեստը, որը Նոեմին գործի էր դնում, նրա աչքում կարծես Նոեմիի բնական տվյալների մի մասը լիներ։ Քանի դեռ արդյունքը Ֆիլիպին բավարարում էր, ամեն ինչ կարգին էր։ Բայց վա՜յ Նոեմիին այն օրը, երբ էֆեկտը չէր հաջողվում։ Նոեմին երկու գիշեր անգամ չէր կարողանում դափնիների վրա հանգչել։ Ստիպված էր լինում ամեն անգամ նվաճել դրանք։ Ընդամին անհրաժեշտ էր թաքցնել մտահոգությունը։ Որպեսզի տիրոջը դուր գար, Նոեմին միշտ պետք է երևար ուրախ, երիտասարդ, ցնծուն։ Երբեմն դա տանջալից դժվար էր։ Խոնջության րոպեներին, երբ նրան ոչ ոք չէր տեսնում, Նոեմին ծանրորեն ընկնում էր բազմոցի վրա, հոնքերի միջև հայտնվում էր ցայտուն մի ծալք, ջղածիգ քմծիծաղը ծռում էր թանձրորեն ներկած, կարծես արյունածորող շրթունքները... Բայց թուլության նոպան տևում էր ընդամենը մի երկու-երեք րոպե։ Հարկավոր էր արագ իրեն հավաքել։ Եվ նա զգաստանում էր։ Երիտասարդ, ուրախ, շողշողուն... իսկ ինչո՞ւ այդպիսին չլինել։ Նա միշտ այդպիսին է լինելու, և Ֆիլիպը նրան է պատկանում։ Նա Ֆիլիպին ձեռքից բա՜ց չի թողնի... Եվ, վերջապես, եթե բռնակալը, առանց որի Նոեմին ապրել չի կարող, նրան դավաճանի, Նոեմին կարող է վրեժ լուծել... Այո՜, այո՜։ Նոեմին ունի իր գաղտնիքները, և այդ մասին կարելի կլինի խոսել, երբ որ դա Ֆիլիպը ցանկանա... Իսկ հիմա Նոեմին ծիծաղում է, և ամենևին էլ ոչ չինծու,— նա գոհ է և իրենից և Ֆիլիպից, նա վստահ է, որ Ֆիլիպին բռնած է ամուր։ Եվ, իհարկե, հենց այդ ժամին էլ Ֆիլիպը նրա ձեռքից ծլկեց։ Բայց Նոեմիի արվեստը չօգնե՞ց։ Ջուր էին բոլոր գործերն ու ջանքերը։ Միշտ վրա է հասնում մի պահ, երբ զգոնու-

բյունը թուլանում է։ Նույնիսկ Արգուսը— անգամ նա՛ քնեց։ Սիրելյալի սիրտը, որին գերության մեջ էին պահում, ձգտում էր դեպի դուրս, ինչպես գաղանը վանդակի միջից։

Բնությունը սիրում է մեզ հիմարացնել, երբ գա ձեռնտու է նրան, հին կավատուհուն։ Նոեմին կյանքում առաջին անգամ նայեց մի ուրիշ կնոջ առանց որևէ խանդոտության երկյուղի։ Նվ այդ կինը Աննետան էր։

Նոեմին միշտ համոզված էր, որ Ֆիլիպը առանձ չի կարողանում մոռանալ և զարգացած կանանց։ Ամենից քիչ նրան կարող էր տանջապատել Աննետայի մասին եղած միտքը։ Դատելով այն կանանցով, որոնք մինչև հիմա Նոեմիի մրցակիցներն էին եղել, և իրենով իսկ, Նոեմին այն կնոջը, որը կարող է ամուսնուն ձեռքից առնել, պատկերում էր իր նման մի ինքնաբուխ, ազնիվ ջուտ թխահեր և, իհարկե, գեղեցիկ, նրբերան, քմահաճ, որը կարող է օգտվել իր գեղեցկությունից։ Ֆիլիպը բազմիցս կատակով պնդում էր, որ կինը բացարձակապես ստեղծված է տղամարդու պահանջմունքի համար և մեզ ժամանակներում պետք է լինի սենյակային զիզիպիզու նման մի բան, որը ծանրամարմին չէ, շատ տեղ չի զբաղեցնում, խնամքով պահպանվում է և հյուրասենյակի ու ննջարանի զարդարանք է հանդիսանում։ Ֆիլիպը խոշոր կանանց չէր սիրում և նրբագեղությունը գնահատում էր ավելի, քան գեղեցկությունը։ Նա ասում էր, որ հոգևոր հաղորդակցությունը, երբ ինքը դրա պահանջն զգում է, տղամարդկանց մեջ է փնտրում։ Իսկ կնոջից պահանջում է միայն մի բան — «ոգեշունչ մարմին»։ Նոեմին նրա հետ չէր վիճում. չէ որ նա հենց այնպիսին էր, ինչպիսին Ֆիլիպի ուզածն էր։ Իսկ Աննետան ոչ մի ձևով այդ չափանիշներին չէր բավարարում։ Բարձրահասակ և ուժեղ, գեղեցիկ, բայց որոշ չափով ծանր գեղեցկությամբ, երբ ոչինչ նրան չէր ոգեշնչում, զուրկ ամեն տեսակի նրբագեղությունից (երբ չէր ձգտում նրբագեղ լինել),— մի խոսքով, իսկը մարգագետնում ննջող Յունոն-Հորթ, Աննետան Նոեմիին բոլորովին վտանգավոր չէր թվում։ Իսկ այն, որ նա Ֆիլիպի հետ սառն էր, ինչպես սառույց, Աննետան դրանով Նոեմիին ավելի շատ տրամադրեց դեպի իր կողմը։ Աննետան իր հերթին հիանում էր Նոեմիով,

քանի որ շատ զգայուն էր գեղեցկության նկատմամբ, և նրան հրապուրում էին այն կանայք, որոնք նման չէին իրեն։ Նեմիի հետ զրուցելիս Աննետան ցույց տվեց, որ ցանկության դեպքում կարողանում է հմայիչ կերպով ժպտալ։ Ֆիլիպի աչքից ոչինչ չվրիպեց։ Եվ նրա մեջ հակում էր ծնվում Աննետայի այդ երկու դեմքերի նկատմամբ, որոնցից մեկը իրե՞ն չէր ուղղված... (Այդպե՞ս էր դա արդյոք... Սերը, երբ մենք նրան վանում ենք մեզանից, գործի է դնում այնպիսի՞ հմուտ մանևրներ...)։ Բույլ չտալով Ֆիլիպին խափանցելու իր մտքերի մեջ, ծածկվելով նրանից իր դիմակներից ամենանրբագույնի հետևում, Աննետան այնուամենայնիվ դեմ չէր պարբսպի միջով ցույց տալ իր ամենախարդական կերպարը... Եվ այդ կերպարը Ֆիլիպը տեսավ Տան տերերին ինչ-որ նորություն պատմելով, նա հյուրասենյակի մյուս ծայրից հետևում էր իր կնոջը, որը, ինքն այդ չիմանալով, օգնում էր ամուսնուն։ Աննետան և Նեմիին միմյանց ամեն տեսակի սիրալիրություններ էին շռայլում, որոնք Նեմիի մոտ միշտ պատրաստ կային։ Աննետան այդ ժամանակ բարդ զգացում էր ունենում, որն ազատ չէր դեպի Ֆիլիպն ունեցած հակումից։ Նրա ականջը անընդհատ որսում էր սուր ձայնի հնչյուններ, որոնք հյուրասենյակի մյուս ծայրից էին գալիս, և Ֆիլիպը գիտեր, որ իրեն լսում են...

Աննետան ատում էր նրան, ատում էր... Ֆիլիպի մեջ մարմնացած էր այն չարն ու ուժեղը, որն Աննետան ճնշում էր իր մեջ, ուզում էր ճնշել. տիրական և անողոք հպարտությունը, իշխելու ձգտումը, կամքի, մտքի և ազահ ցանկասեր մարմնի պահանջները, կիրքը առանց սիրո, որն ավելի ուժեղ է, քան սերը։ Այդ ամենը Աննետան վաղուց էր իր մեջ ատում, իսկ հիմա ատում էր Ֆիլիպի մեջ։ Բայց նա բռնվել էր անհավասար մարտի. նրա դեմ երկուսն էին— Ֆիլիպը և Աննետան ինքը։

Ֆիլիպ Վիլլարը դուրս էր եկել վերին Բուրգունդիայի մանրը բուրժուական միջավայրից։ Նրա հայրը, որ փոքրիկ գավառական քաղաքում տպարանատեր էր, եռանդուն, աշխույժ, համարձակ մի մարդ էր և իր եռանդով ու միջոցների մեջ

անխարդախությամբ հանդերձ կարող էր հաջողություն ձեռք բերել ավելի լայն ասպարեզում։ Սակայն դրա համար հարձակումը քիչ էր—պետք էր նաև կարողանալ իր վիճակը պահպանել որոշակի սահմաններում, իսկ Վիլլարը մշտապես անցնում էր այդ սահմանները։ Քաղաքականության պղտոր ալիքների հետ ընթացող, տեղական բուլվարային լրագրիկի պատասխանատու խմբագիրը, որ հանրապետական-գամբետիստ էր, թունդ հակակղերական, մեծ կշռի գործարար, ընտրություններից ժամանակ եռանդագին կերպով մեծ դործունեություն ծավալող, վերջիվերջո գերազանցեց օրենքով թույլատրվող (ոչ սովորույթով) անվանարկման և շանտաժի չափերը, և գնաց դատի։ Դատապարտված, տապալված այն մարդկանց կողմից, ում ծառայում էր, նա ի լրումն ամենի հիվանդացավ և սնանկացավ վերջնականապես։ Նրա ունեցվածքը աճուրդով վաճառվեց, և հիմա, երբ նա ոչ ոքի չէր կարող օգտակար լինել և ոչ ոքի համար վտանգավոր չէր, նրա գլխին թափվեց ամբողջ քաղաքի սանձարձակ ատելությունը։ Նա գայլի կատաղությամբ պաշտպանվում էր հիվանդությունից, աղքատությունից, մարդկային զայրույթից։ Հուսահատությունն ու գազազությունը վերջնականապես քայքայեցին նրա առողջությունը, նա մեռավ, մինչև վերջին շունչը անհագ կատաղությամբ դավաճանության համար անիծելով նախկին ընկերներին։

Ֆիլիպի մայրը, որ անսասան հոգու տեր կին էր, մի գեղջկուհի Յուրյան սարահարթերից, որի բնակիչները սովոր են սաստիկ քամիներից չորացած անբերրի հողի հետ կռվելու, առանց ձեռքերը խնայելու աշխատում էր որպես օրավարձու բանվոր, որպես լվացք անող, մտնում էր ամեն տեսակի ծանր աշխատանքի տակ, դիմացկուն էր, ինչպես բեռնատար ձին, փոշի համար հոգի էր տալիս, բայց ազնիվ էր, բարեխիղճ և շատ խիստ էր իր նկատմամբ։ Նրանից վախենում էին, նրա առաջ՝ հաճոյակատարություն անում. բոլորը գիտեին, որ նրա հանգուցյալ ամուսինը քիչ սկանդալային գաղտնիքներ չի հայտնել նրան։ Ճիշտ է, նա իր վտանգավոր լեզուն միշտ իրեն էր քաշում և ոչ ոքի շանտաժի չէր ենթարկում, բայց այնուամենայնիվ նա ինչ-որ բան գիտեր և

այդ պատճառով ավելի խելամիտ էր նրան ծառայության համար վճարել, քան առանց այդ ծառայությունների յոլա գնալ։ Այդ կնոջ մեջ, որն իր դժվարին կյանքում երբեք ոչ տատանվել էր իմացել, ոչ տարակուսանք, այրվում էր հոգեկան եռանդի մոլեգին և անսպասելի մոայլ կրակը— չէ որ նա այն տեղերից էր, որտեղ մարդկանց երակների մեջ հոսում էր իսպանական արյան խառնուրդը, որը գոյակցում էր մաքուր գալլական մտքի սթափության հետ։ Այդպիսի մարդիկ ոչնչի չեն հավատում, և գործում են միշտ այնպես, որ կարծես հարցը հոգու փրկության կամ կործանման մասին լինի։

Ֆիլիպի մայրը միայն իր որդուն էր սիրում։ Եվ դա ինչպիսի՜ դաժան սեր էր։ Ֆիլիպից նա չէր թաքցնում այն, ինչի մասին լռում էր ուրիշների մոտ. նա որդու մեջ դաշնակցի էր տեսնում։ Նրա բոլոր փառասիրական հույսերը կենտրոնացված էին միայն որդու վրա։ Բայց, իրեն զոհաբերելով, նա այդ նույնը պահանջում էր նաև որդուց։ Հանուն ինչի՞ Ֆիլիպը պետք է իրեն զոհաբերեր։ Հանուն իր վրեժի։ (Այո, իր և մոր վրեժի—չէ՞ որ դա միևնույն բանն է)։ Ոչ մի քննջություն, ոչ մի երես տալ, իսկ որ գլխավորն է, ոչ մի նվնվոց. «Սահմանափակի՛ր քեզ ամեն ինչում։ Ժամանակը կգա ամեն ինչով կուրախանաս...»։ Երբ որդին դպրոցից տուն էր գալիս (մայրը միայն ինքը գիտեր, ինչպիսի՜ ջանքեր և դիվանագիտություն իրենից պահանջվեցին, որպեսզի դպրոցում որդու համար թոշակ պոկի, իսկ հետագայում էլ մեծ քաղաքի լիցեյում), ծեծված կամ վիրավորված՝ բուրժուաների կովարար տղաների կողմից, որոնք իրենց հայրերից անբարյացակամություն էին ժառանգել այդ ընտանիքի նկատմամբ, մայրը նրան ասում էր.

— Իսկ դու աշխատիր ժամանակին դառնալ նրանցից ուժեղ։ Այն ժամանակ նրանք քո ոտքերը կլիզեն։

Նա մշտապես Ֆիլիպին ասում էր.

— Հույսդ միա՛յն քեզ վրա դիր։ Ուրիշ ո՛չ ոքի։

Եվ նա ոչ ոքի վրա հույս չէր դնում և շուտով ստիպեց, որ իրեն հարգեն։ Մայրը կառչում էր կյանքից և կարողացավ դիմանալ այնքան ժամանակ, մինչև որ Ֆիլիպը, փայ-

լուն կերպով լիցնելը վերջացնելով, դիմում տվեց՝ Փարիզում բժշկական ֆակուլտետն ընդունվելու համար։ Նա արդեն քննություններ էր տալիս, երբ մայրը, Թոքերի բորբոքումով հիվանդանալով, պառկեց։ Բայց նա իր հիվանդության մասին որդուն չգրեց, որպեսզի նրան չտագնապի, քանի դեռ բոլոր քննությունները չի տվել։ Եվ մահացավ առանց որդուն իր սնճռոնի, զալարագիծ ձեռագրով, որը նման էր խազագրության գարնանը դուրս գցած մատներին, փութկոտությամբ պահպանելով կետադրության բոլոր նշանները, նա որդուն անխնայաղաթար գրած նամակից խնամքով կտրած թղթի մաքուր թերթիկի վրա գրեց.

«Ես մեռնում եմ։ Գնա, տղաս, չհանձնվիս»։

Եվ Ֆիլիպը չհանձնվեց։ Փարիզից գալով տուն, որպեսզի մորը թաղի, նա որոշ փաքրիկ խնայողություններ գտավ, որ մայրը ետ էր դցել նրա համար։ Այդ փողերով նա մի տարի ապրեց։ Հետո ինքն իր տնօրինությանը թողնված, նա օրվա, իսկ երբեմն էլ դիշերվա կեսը վատնում էր, որպեսզի վաստակի այն, ինչը նրան պետք էր ապրելու և սովորելու համար։ Ոչ մի աշխատանք նրան չէր սարսափեցնում։ Նա խրովիլակներ էր լցնում, քանդակագործի մոտ դառնում էր բնորդ, կիրակի օրերը վարձվում էր՝ քաղաքից դուրս գտնվող սրճարաններում սպասավորներին օգնելու համար, իսկ շաբաթ երեկոները ծառայում էր խրախճանքի հաստատություններում։ Նրան նույնիսկ պատահել էր, որ մի անգամ ձմեռը, առավոտյան, քաղցած աշխատի ձյուն մաքրողների արտելում։ Ֆիլիպը կանգ չէր առել նաև անպատկառ մուրացկանության առաջ, դիմել էր բարեգործական օգնության, նվաստացուցիչ փոխառությունների, որոնք իրավունք լին տալիս ամեն ոչնչության մի հարյուր սուի համար, որը դու ի վիճակի չես վերադարձնել, քեզ հետ վարվել կոպիտ և արհամարհանքով (ճիշտ է, նրա հայացքին հանդիպելով, պարտատերերը այլևս այդ անել չէին համարձակվում, բայց դրա փոխարեն իրեն փոխհատուցում էին ուրիշ ձևով, նրանից վրեժ էին լուծում եթե ոչ արհամարհանքով, ապա առնությամբ, հեռանից ցեխեն էին կոխում)։ Ֆիլիպը հասավ այն բանին, որ մի քանի ամսվա ընթացքում (երբ նա խելագարի

պես աշխատում էր) փող էր վերցնում փողոցային ինչ-որ պոռնկուհուց։ Եվ բնավ չէր ամաչում. չէ որ նա այդ անում էր ոչ իր համար (նա զրկանքներից չէր վախենում և չէր խնայում իրեն), այլ ապագա կարիերայի։ Իհարկե, նա նույնպես ամեն տեսակի պահանջներ ուներ—կուզեր ամեն ինչ վայելել,— բայց նա դրանք խեղդում էր իր մեջ։ Հետո՞։ Նախ՝ հաղթանակե՞լ։ Իսկ հաղթանակելու համար պետք է դիմանալ։ Դիմանա՞լ ինչ գնով էլ ուզում է լինի։ Հաղթանակն ամեն ինչ մաքրում է։ Եվ նա կհաղթի՛։ Ֆիլիպն իր մեջ հանճարի կայծ էր զգում։

Նա իր վրա գրավեց պրոֆեսորների, ընկերների ուշադրությունը։ Նրան հանձնարարում էին տարբեր տեսակի գիտական աշխատանքներ, իսկ հետո այն մարդիկ, ովքեր արդեն ճանաչում էին գոհ, այդ աշխատանքների տակ իրենց անունն էին դնում, պատրաստության համար մի քանի ուղղումներ մացնելով։ Ֆիլիպը թույլ էր տալիս իրեն շահագործեն, որպեսզի իրավունք ունենա այն մարդկանց հովանավորության, ովքեր իրենց փոխարինելու եկած երիտասարդներին ճանապարհ չէին տալիս։ Սակայն այդ պարոնայք առանձնապես չէին շտապում Ֆիլիպին ճանապարհ տալ։ Նրանք հարգանք էին ցույց տալիս Ֆիլիպին։ Բայց հարգանքը մի դրամ է, որն ազատում է ամեն տեսակի ուրիշ վճարներից։ Նրան, իհարկե, գնահատում էին,—և ինչո՞ւ չգնահատեին։ Բայց գրանից մարդ չի կշտանա։ Չնայած լեռնցու իր ամբողջ ֆիզիկական դիմացկունությանը, Ֆիլիպը գերհոգնածությունից ու թերսնումից արդեն հազիվ էր ոտի վրա կանգնում, երբ հանդիպեց Սոլանժին։ Դա այն բազմաթիվ բարեգործական հաստատություններից մեկում էր, որոնք Սոլանժը հովանավորում էր անկեղծ, թեև ոչ միշտակաև մեծահոգությամբ ու շռայլությամբ,— մանկական կլինիկայում։ Այստեղ Սոլանժը տեսավ, թե Ֆիլիպն ինչպես է իր ամբողջ ուժերը տալիս այն հիվանդ երեխաների փրկությանը, որոնք մահվան դատապարտված էին համարվում։ Այն մոլեգին համառությամբ, որով նա հաղթանակ էր նվաճում ամենուրեք, որտեղ հաղթանակի թեկուզ մի շանս կար, Ֆիլիպը գի-

չերներն անց էր կացնում այդ երեխաների մահճակալների մոտ և մարդկային կյանքի համար մղվող ճակատամարտերից չուրս էր գալիս գունաթափ, ուժասպառ, բայց տենդագին ու ոգեշունչ շողշողացող աչքերով։ Այդպիսի հաղթանակներից հետո նա նույնիսկ մի տեսակ լավանում էր և դառնում զարմանալիորեն բարի հենց նոր փրկված փոքրիկ պացիենտի նկատմամբ։ Արդյոք սիրո՞ւմ էր նա այդ երեխաներին։ Գուցե։ Դա վստահությամբ չի կարելի ասել։ Բայց նրանց հիվանդությունների դեմ մղված պայքարում վերջին խոսքը իրեն էր պատկանում։

Ֆիլիպի վիճակն իմանալով, Սոլանժն ապրեց, ինչպես այդ հաճախ նրա հետ լինում էր, «մոլագարության» շրջանը, երբ նրա հիացմունքի առարկան ծածկում էր նրանից բոլոր հորիզոնները։ Նա, ով ուզում էր դրանից օգտվել, պետք է ժամանակ չկորցներ։ Իսկ Ֆիլիպը ժամանակ երբեք չէր կորցնում։ Այդ խեղդվողը ամուր բռնեց իրեն մեկնած ձեռքից։ Նա տիրացավ ոչ միայն մատներին, այլև ամբողջ թևին մինչև ուսը, կտիրանար նաև մնացած ամեն ինչին, եթե չհայտնագործեր, որ Սոլանժը, որևէ մեկով տարվելիս, բոլորովին չի ձգտում սիրային հարաբերությունների։ Նա հեշտությամբ բռնկվեց, բայց այդ հիացմունքները բնավ չխախտեցին նրա հոգեկան անդորրը։ Առաջին անգամ էր Ֆիլիպը հանդիպում մի կնոջ, որն իրենով հետաքրքրվեց առանց շահախնդրության։ Սքանչելի Սոլանժը բերկրության ակունքը իր մեջ էր գտնում։ Իսկ ուրիշներից նա պահանջում էր միայն, որպեսզի նրանք չխորտակեն այն պատրանքները, որոնք ինքն է իր համար ստեղծում։ Փաստորեն նա ամենևին չէր ձգտում մոտիկից ճանաչել մարդկանց։ Նա չէր ուզում ուրիշ մարդու մեջ տեսնել այն ամենը, ինչը կարող էր իրեն դուր չգալ, և դրանից հրաժարվում էր, պատճառաբանելով, որ դա նրա իսկական «եսը» չէ։ Իսկ «իսկական» նա համարում էր այն ամենը, ինչ իր սրտով էր։ Այդպես էր նա իր համար հորինում այն աշխարհը, որը բնակեցված էր հաճելի, անգույն մարդկանցով, ինչպիսին ինքն էր։ Ֆիլիպը նրան չէր խանգարում իր ստեղծած աշխարհն այդ ձևով պատկերացնել—

դեպի Սոլանժն ունեցած թեթև արհամարհանքին խառնվում էր ակամա հարգանքի ինչ-որ մի մասնիկ։ Ֆիլիպը հիմարներին տանել չէր կարողանում, իսկ հիմար նրանց էր համարում, ովքեր աշխարհը չեն տեսնում այն ձևով, ինչպես որ այն կա։ Բայց Սոլանժի բարությունը, Սոլանժի, որն իսկապես բարիք էր գործում, և ոչ թե միայն շաղակրատում այդ բարիքի մասին, Ֆիլիպի համար նորություն էր։ Ինչպիսին էլ ուզում է լինեն մարդու արժանիքներն ու թերությունները, ամենից առաջ նրանք պետք է լինեն իսկական։ Սոլանժը բարի էր ինչպես որ պետք է։ Երբ նա իմացավ, Ֆիլիպն ինչ-ինչ կարիքի մեջ է և ինչքան շատ է աշխատում, խոստացավ Ֆիլիպին օժանդակություն ցույց տալ այնքան ժամանակ, մինչև որ նա համալսարանը վերջացնի և հանձնի ավարտական քննությունները, և դրանով Ֆիլիպին հանգիստ աշխատելու հնարավորություն տվեց։ Ավելին, նա օգտվեց իր լայն կապերից և բժշկական ֆակուլտետի ազդեցիկ պրոֆեսորներից մեկին ստիպեց հետաքրքրվել Ֆիլիպով կամ, ավելի ճիշտ (քանի որ այդ խելամիտ մարդը չէր կարող ավելի շուտ չընկատել նրան անհանգստացնող քաղցած գայլի ունակությունները), ցուցաբերել այդ շահագրգռվածությունը բացեիբաց և ոչ թե պահել գաղտնի— intus et in cute[1]. Վերջապես, այդ նույն Սոլանժը ավելի ուշ Ֆիլիպին ծանոթացրեց ամերիկյան նավթային թագավորի հետ, որը ցանկանում էր իր անունն անմահացնել ուրիշի աշխատանքներով, և դա Ֆիլիպի առաջ արագ ճանապարհ բացեց դեպի փառքը, որը նա համարձակ սիրանքներով իր համար նվաճեց սկզբում Օվկիանոսից այն կողմ, սույն փարավոնի հիվանդանոց-պալատում։

Ֆիլիպի համար ուսման դժվար տարիներին երբեմն պատահում էր, որ Սոլանժը միանգամայն մոռանում էր իր հովանավորյալի կարիքի մասին և ցրվածության հետևանքով մի քանի ամիս նրան օժանդակություն ցույց չէր տալիս։ Հարուստները իրենց ամբողջ բարի մտադրություններով հանդերձ ընդունակ չեն հասկանալու, որ շատ ուրիշները ստիպ-

[1] Ներսում, պատյանի տակ (լատ.)։

ված են լինում մշտապես փողի մասին մտածել։ Փողը աղքատների հոգսն է։ Սոլանժը Ֆիլիպին համերգի տոմսեր էր ուղարկում։ Այդ համայիլ դամային թատրոնի օթյակում օժանդակության մասին հիշեցնելու համար Ֆիլիպը ստիպված էր լինում ահագին ամոթ կուլ տալ։ Երբեմն դա լինում էր այն միակ սնունդը, որ Ֆիլիպը կուլ էր տալիս ամբողջ օրվա ընթացքում։ Սոլանժը զարմանքից աչքերը չռում էր.

— Մի՞թե... Ախ, սիրելի բարեկամս, այս ինչքա՜ն եմ ես ցրված... Հենց որ վերադառնամ տուն...

Նա խոստանում էր, հետո նորից մոռանում մեկ-երկու օր և, վերջապես, փողն ուղարկում էր և փողի հետ՝ ամենաքնքուշ ներողություններ։ Ֆիլիպը կատաղելով անհամբերությունից ու նվաստացումներից, երդվում էր, որ սրանից հետո սովից կսատկի, բայց այլևս նրանից փող չի խընդրի։ Սակայն մեռնելը հեշտ է նրանց համար, ովքեր չեն ուզում ապրել։ Իսկ նա ուզում էր... Եվ նա ամեն անգամ, երբ դա պետք էր լինում, Սոլանժին հիշեցնում էր փողի մասին։ Իսկ նա չէր զայրանում Ֆիլիպի վրա։ Եթե Սոլանժը նույնիսկ հաճախ մոռանում էր («Դուք գիտե՞ք, ինչքան հոգսեր ունեմ....»), ապա, երբ նրան հիշեցնում էին, փողը միշտ հասույթով էր տալիս...

Ի՜նչ արտասովոր հարաբերություններ գոյություն ունեին այդ երիտասարդ և կրքոտ, երկրային բոլոր բարիքների նկատմամբ քաղց զգացող տղամարդու և մի քիչ ընդամենը նրանից մեծ այն կնոջ միջև, որը գեղեցիկ էր, նրբագեղ, սիրալիր— մի խոսքով, ոնց որ ասում են, իսկական ընտիր պատառ էր։ Այդ տարիների ընթացքում նրանք հաճախ էին առանձնացած հանդիպումներ ունենում և կասկածի փոքրագույն նրբերանգ անգամ չէր թաքնվում նրանց մտերմության միջև։ Սոլանժը հանգիստ, ուղղակի մոր նման Ֆիլիպին խորհուրդներ էր տալիս, օգնում էր նրան լուծելու հանդերձանքի, բարձրաշխարհիկ էտիկետի և գործնական կյանքի բոլոր տեսակի հարցերը։ Ֆիլիպի հպարտությունը ջնավ դրանից չէր տուժում, ընդհակառակը, նա ինքն էլ հաճախ Սոլանժից խորհուրդ էր հարցնում և նույնիսկ հաղոր-

դում նրան իր փառասիրական պլանները և հիասթափությունները։ Ֆիլիպը համարձակ կերպով այդ կարող էր անել— Սոլանժը խուլ էր ամեն տեսակ վատ, ամեն տեսակ կենսականորեն-ռեալ բաների նկատմամբ։ Ինչ կարևորություն։ Նա Ֆիլիպին լսում էր մինչև վերջը, իսկ հետո իր բարի ժպիտը երեսին ասում էր.

— Դուք պարզապես ուզում եք ինձ վախեցնել։ Բայց ես ձեզ չեմ հավատում։

Սոլանժը հավատում էր միայն այն բանին, ինչը չէր համապատասխանում իրականությանը։

Եվ Ֆիլիպը, որ անողորմ էր, ամեն մի միջակության նկատմամբ, բացառություն էր անում միայն Սոլանժին։ Նա պարզապես ձեռնպահ էր մնում Սոլանժի մասին ամեն տեսակի դատողություններից։

Յոթ թե ութ տարի առաջ Ֆիլիպը Ամերիկայից վերադարձել էր Փարիզ, ուր ավելի շուտ էր հասել նրա փառքը, հասել էր ամերիկյան ձևով՝ աղմկալից, բայց հաստատուն և անվիճելիորեն արժանի։ Նրա անփոփոխ խնամատարի՝ Սոլանժի, օգնությունը, որի շնորհիվ լկտի դոլարներին իշխանավորների հովանավորությունն ավելացավ, մաքրեց Ֆիլիպի ճանապարհը, չնայած եռակի այն պատնեշին, որ բարձրացրել էր մարդկային հետամնացությունը, նախանձը, և արդարացի նկրտումները նրանց, ով վաղուց առաջ քաշվելու իր հերթին էր սպասում։ Անվիճելի էին նրանց իրավունքները թե չէ— Ֆիլիպը լոք տվեց ու անցավ դրանց վրայով։ Նա ո՛չ արժանի պատիվներ և առավելություններ չէր ընդունի։ Բայց, գիտակցելով, որ դրանց ինքը արժանի էր, նա ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում՝ դրանք նվաճելու համար։ Ֆիլիպն այնքան էր արհամարհում մարդկանց, որ չէր համչում անհրաժեշտության դեպքում օգտագործել նրանց ստոր գենքը՝ հենց այդ մարդկանց դեմ հաղթանակ տանելու համար։ Նա չէր նողկում ականջ ծակող լրագրային ռեկլամից, նման պղնձափողերի ոռնոցին, որով մի ժամանակ ուղեկցվում էր գյուղական տոնավաճառային քեմահարթակ-

ների վրա ատամ քաշողների հայտնվելը։ Նա դարձավ մոդայիկ ցուցահանդեսների, գլխավոր փորձերի, վերնիսաժների, պաշտոնական հանդեսների մշտական հաճախորդը։ Չէր խուսափում սենսացիոն հարցազրույցներից, գրում էր նաև ինքը (ամենից լավն այն է, որ մարդ ինքը պաշտպանի իր շահերը) և մի երկու-երեք անգամ լրագրերում հանդես գալով իր ընդդիմախոսներին ապացուցեց, որ գրչին ավելի վատ չի տիրապետում, քան նշտարին։ Սիրողների համար նախազգուշացո՞ւմ։ Ո՛չ մի թերատուժյուն։ Ֆիլիպն այնպես էր ձեռքը մեկնում մարդու, որ կարծես ուզում էր հարցնել. «Միուժյուն թե՞ պատերազմ»։ Նա ոչ մի հնարավորություն չէր տալիս նրան չեզոքությամբ քողարկվելու։

Եվ միևնույն ժամանակ—կատաղի աշխատանք, ոչ մի զիջում ո՛չ իրեն, ո՛չ ուրիշներին, ո՛չ մի սարսափ ռիսկի առաջ, փայլուն նվաճումներ, որոնք չէր կարելի ժխտել և որոնք հիվանդանոցի բոլոր բժիշկներին դարձրին նրա ջերմ կողմնակիցները։ Համարձակ զեկուցումներ ակադեմիայում, որոնք դրգռում էին հավասարակշռված գլուխների կատաղի անվստահությունը, գլուխներ, որոնք չեն սիրում, որ իրենց վրդովեն։ Հոմերական ճակատամարտեր, որտեղ գրեթե միշտ վերջին, վճռական խոսքը իրենն էր լինում։

Ֆիլիպը երկչոտներին սարսափ էր ազդում։ Նա ոչնչի տեղ չէր գնում մարդկային անձնավորությունը, եթե նրան թվում էր, որ գործը վերաբերվում է գիտության կամ մարդկության շահերին։ Նա պատրաստ էր հանցագործների վրա փորձեր դնել, ոչնչացնելով այլանդակներին, ամորձատել աննորմալներին, վտանգավոր փորձեր կատարել կենդանի մարդկանց վրա։ Նա ատում էր ամեն տեսակի սենտիմենտալություն, չէր կարեկցում պացիենտներին, թույլ չէր տալիս նրանց նվնվալ և բողոքել։ Նրանց տնքոցներն ու ախուվախերը Ֆիլիպին չէին հուզում։ Բայց երբ մարդուն պետք էր փրկել, նա փրկում էր նրան, թեկուզև դաժան միջոցներով. ապաքինելու համար նա կտրում էր որտեղ պատահի։ Նա դաժան սիրտ ուներ և քնքուշ ձեռքեր։ Նրանից վախենում էին, բայց բոլորն էլ ուզում էին անպայման նրա մոտ բուժվել։ Նա մեծ

փողեր էր պլոկում հարուստներից, իսկ աղքատներին բաժանում էր ձրի։

Ֆիլիպը հիմա ապրում էր հարուստ և փարթամ, շքեղության համի ընկած։ Նա կարող էր առանց ափսոսանքի ցանկացած րոպեին հրաժարվել այդ շքեղությունից, բայց համառում էր, որ քանի դեռ կարելի է, կյանքից ամեն ինչ պետք է վերցնել։ Կնոջը նա նայում էր որպես այդ շքեղության մի մասի, և, ըմբռշխնելով թե՛ մեկը և թե մյո՛սը, նրանցից չէր պահանջում ավելին, քան նրանք կարող են տալ։ Նա Նոեմիից իր մտավոր կյանքի մեջ մասնակցություն չէր պահանջում և չէր փորձում նրան ներգրավել այդ կյանքի մեջ։ Նոեմին նույնպես դրա հետևից չէր ընկնում. նա համարում էր, որ տիրապետելով ամեն ինչի, բացի նրա մտքերից, տիրապետում է առյուծի բաժնին։ Իսկ Ֆիլիպը այն կարծիքին էր, որ տղամարդը պարտավոր է իր կյանքում կնոջը ավելի տեղ չհատկացնել, քան ինքն է հատկացնում Նոեմիին. մտածող կինը նույնն է թե մեծածավալ կահույքը։

Բայց այդ դեպքում ինչո՞վ նրան անմիջապես գերեց Աննետան։

Նրանով, ինչով որ Աննետան նման էր իրեն։

Նրանով, ինչ նրանց մեջ ընդհանուր էր և ինչ միայն Ֆիլիպը կարող էր կարդալ Աննետայի հոգում։ Երբ նրանք առաջին անգամ խաչաձևեցին իրենց հայացքները, ինչպես սրեր, երբ հնչեցին առաջին խոսքերը, ինչպես պողպատի հարվածը պողպատին, Ֆիլիպն ասաց իրեն.

«Նա այս բոլոր մարդկանց նայում է նույն ձևով, ինչպես և ես։ Մենք երկուսով էլ միևնույն ցեղատեսակից ենք»։

Միևնույն ցեղատեսակի՞ց։ Փաստերը ուրիշ բան էին ասում։ Աննետան սոցիալական սանդուղքով ներքև իջավ այն ոլորտից, դեպի ուր Ֆիլիպը բարձրանում էր, լարելով իր բոլոր ուժերը, և նրանք հանդիպեցին այդ աստիճաններից մեկի վրա։ Ճիշտ է, այդ րոպեին նրանք թվում էին միևնույն մակարդակի վրա. երկուսն էլ իրենց օտարներ էին զգում այդ միջավայրում, զգում էին այդ միջավայրի թշնամի, երկուսն էլ կարծես պատկանում էին ուրիշ ռասայի,

որ մի ժամանակ տիրապետել է աշխարհը, իսկ հիմա զրկված է իշխանությունից, ցրված աշխարհով մեկ, գրեթե վռնացած է երկրի երեսից։ Վերջիվերջո ո՞ւմ է հայտնի սեռունդների գաղտնիքները, նրանց հաջորդականությունն աշխարհում, գաղտնիքները այն հազարամյա պայքարի, որտեղ մարդկությունը կարծես գնում է միջակության վերջնական հաղթանակին... Սակայն լինում են հանկարծակի վերելքներ, երբ աշխարհի առաջվա տիրակալը մի օրով նորից է տիրանում իր սեփականությանը։ Արդյո՞ք դա նրա սեփականությունն էր, թե ոչ, Ֆիլիպը իր իրավունքներն էր ներկայացնում։ Նա Աննետային համարեց իրենը և որոշեց տիրանալ նրան։

Աննետան տուն վերադարձավ վատ տրամադրությամբ, գլուխը մի տեսակ ծանրացած և, Մարկի հետ առանց խոսելու, անմիջապես պառկեց։ Նա իրեն ամայացած էր զգում։ Քնել նա չէր կարողանում։ Ստիպված էր զգաստ մնալ և անընդհատ վանել մի կերպար. հենց որ նա ընկնում էր քնային թմրության մեջ, այդ կերպարը հայտնվում էր իր առաջ։ Նրան մոռանալու համար Աննետան փորձում էր մտածել առօրյա գործերի մասին, բայց դրանք նրա համար հիմա կորցրել էին ամեն մի հետաքրքրություն։ Այն ժամանակ, ահեղ վտանգից փրկության փնտրելով, նա օգնության էր կանչում դաշնակցին, որի մասին ուրիշ ժամանակ վախենում էր նույնիսկ հիշել, քանի որ նա կարող էր իր հոգում արթնացնել անցած-գնացած հուզմունքները։ Այդ դաշնակիցը Ժուլիենն էր և այն մտքերը, որոնցով կարոտն ու երազանքը շրջապատում էին սիրեցյալի անունը,— ավելի շուտ երևակայական, քան իրական։ Սակայն Ժյուլիենի մասին եղած մտքերը հայտնվում էին ընդամենը մի ակնթարթ և սառույցից սառն էին։ Աննետան անպայման ուզում էր դրանց պահել։ Բայց ձեռքում մնում էր լոկ թառամած ծաղիկների մի փունջ։ Հանկարծակի հայտնված պայծառ արևը խմեց այդ ծաղիկների ամբողջ հյութը։ Փորձելով կենդանացնել նրանց, Աննետան իր տենդոտին տաք ձեռքերով միայն վերջնականապես թառամեց-

րեց դրանք։ Նա անկողնում այս ու այն կողմ էր նետվում, մի գլուխ շրջում բարձը։ Բայց անհրաժեշտ էր քնել—առավոտյան նրան սպասում էր աշխատանքը։ Նա մի փոշեգեղ խմեց և սուզվեց մոռացության մեջ։ Սակայն երբ մի քանի ժամից հետո արթնացավ, տագնապը դեռ ներկա էր նրա մեջ։ Աննետային թվում էր, թե նույնիսկ քնի ժամանակ էլ այդ տագնապը իրենից չի անջատվում։

Աննետայի հուզմունքը չանցավ ոչ այդ օրը, ոչ հաջորդ օրերին։ Նա գնում ու գալիս էր, դասեր էր տալիս, խոսում էր, ծիծաղում—ամեն ինչ այնպես էր, ինչպես միշտ, լավ լարված մեքենան շարունակում էր աշխատել ինքն իրեն։ Բայց ներսը անհանգիստ էր։

Մի գորշ օր, երբ նա քայլում էր Փարիզով, հանկարծ ամեն ինչ ողողվեց լույսով... Փողոցի մյուս կողմով անցավ Ֆիլիպ Վիլլարը... Աննետան տուն վերադարձավ խնդությամբ թևավորված։

Երբ նա փորձեց իրեն հաշիվ տալ, թե ինչն էր իր մեջ այդպիսի ուրախություն առաջացրել, նա այնպես հուսահատվեց, կարծես քաղցկեղի ուռուցք հայտնաբերեց իր մոտ... Կնշանակի, նորից, նորից թակարդն ընկա։ «Սե՛ր։ Սեր մի տղամարդու նկատմամբ, որն իր համար ավելորդ տառապանքների նոր աղբյուր է հանդիսանալու, սեր դեպի մի մարդ, որն իրեն բոլորովին անծանոթ է, բայց անկասկած վտանգավոր և չարաբաստիկ, սեր դեպի ուրիշ կնոջ ամուսինը։ Եվ չէ որ ինքը նրան չի սիրում, ոչ, որովհետև սիրում է ուրիշի՛ն։ Ուրիշի՞ն։ Իհարկե, նա դեռ Ժուլիենի՛ն է սիրում։ Ուրեմն, ինչպե՞ս ինքը կարող է Ժուլիենին սիրելով, սիրահարվել ուրիշին։ Իսկ նա սիրահարված է, դա պարզ է... Բայց ինչպես, ինչպե՞ս կարող է սիրտը պատկանել միանգամից երկուսին։ Ոչ, տրվել ամբողջովին, անբաժան կերպով կարելի՛ է միայն մեկի՛ն»։

Այդպես էր նա մտածում, քանի որ երբ Աննետայի սիրտը տրվում էր, ապա տրվում էր ամբողջությամբ... Եվ հիմա նա իրեն թվում էր պոռնկուհուց ավելի վատ. պոռնկուհին

տալիս է մարմինը, իսկ նա սիրտն է տվել երկուսին միանգամից,— մի՞թե դա ավելի խայտառակ չէ։

Արդյո՞ք Աննետան անկեղծ էր, ազնիվ էր ինքն իր նկատմամբ։ Անկասկած։ Նա չէր հասկանում, որ ինքը մի սիրտ չունի միայն, որ իր մեջ չի ապրում միայն մի էակ։ Մարդկային հոգու թավ անտառում կողք-կողքի աճում են և մտքերի բարձրակատար, շինափայտի ծառեր և ցանկությունների խիտ թփուտներ—քանի տարբեր տեսակի։ Սովորական ժամանակ, երբ նրանք ննջում են, նրանց չես էլ կարող տարբերել։ Բայց բավական է հողմը սլանա անտառի միջով, և դրանց բոլորի ճյուղերը ընդհարվում են իրար... Կրքերի ընդհարումը վաղուց է Աննետայի մեջ արթնացրել նրա բազմատեսությունը։ Նա միաժամանակ պարտքի և անզուսպ հպարտության մարդ էր, և բուռն կերպով սիրող մայր, և չուռն կերպով սիրահարված կին, սիրահարված ոչ թե մեկին, այլ շատերին... Նա նման էր փոթորկվող անտառի, որ ձեռքերը տարածում է վիթխարի երկնքով մեկ, նետում դեպի շրջոր կողմերը... Բայց ստորացած, գրեթե ճնշված իր մեջ չտնվող այդ ուժից, որն իրեն հակառակ տնօրինում էր նրա կամքը, Աննետան մտածում էր.

«Ինչի՞ էր պետք իր մեջ ամրացնել այդ կամքը և պայքարել երկար տարիներ, եթե բավական է մի ակնթարթ, որպեսզի ամեն ինչ կործանվի։ Եվ որտեղի՞ց է նա, այդ ուժը»։

Աննետան մոլեգնորեն ժխտում էր այդ անհայտ ուժը, որպես ինչ-որ օտար մի բան։ Մի՞թե նա այդ ուժի մեջ չճանաչեց իրեն, իր իսկական խառնվածքը։ Այո, ճանաչեց, և դա ամենածանրն էր. ինչպե՞ս կարող ես ինքդ քեզանից փախչել։

Բայց Աննետան այնպիսի կին չէր, որ հնազանդորեն զիջեր այն ճակատագրական ներքին ուժին, որին ինքը ատում էր։ Նա վճռեց իր մեջ խեղդել ստորացուցիչ այդ կիրքը։ Եվ լարված աշխատանքը կօգներ նրան այդ բանին հասնելու, եթե Նոեմին չլիներ։

Աննետան նրանից մի փոքրիկ նամակ ստացավ— այդ երբագեղ կինը գրել էր խոշոր ձեռագրով, որի մեջ բարձրաշ-

Նարհիկ նրբաճաշակության տակ չորության և վճռականության էր զգացվում։ Մի քանի սիրալիր խոսքերով Նոեմին հրավիրում էր Աննետային ճաշի։ Աննետան քաղաքավարության համար հրաժարվեց, գրելով, որ խիստ զբաղված է։ Նոեմին երկրորդ անգամ նրան հրավիրեց և այս անգամ գրեց, որ շատ է ուզում նրա հետ տեսնվել և խնդրում է այցելել ցանկացած իրիկունը, երբ դա Աննետայի համար հարմար կլինի։ Աննետան հաստատ որոշելով չնեղանալ իրեն վտանգի, որ ինքը կանխազգում էր, նորից հրավերքը մերժեց, վկայակոչելով աշխատանքային օրվա վերջում սաստիկ հոգնածությունը։ Նա կարծում էր, որ հիմա վերջնականապես գլուխն ազատած կլինի Նոեմիից։ Բայց փոքր Պանդարը[1], որը ձանձրույթի և նենգ չարաճճիությունների ժամերին հագնում է Ամուրի հազարավոր դիմակներից մեկը, Նոեմին հանգիստ չէր տալիս, մինչև որ նա Աննետային չբերեց իր փարախը։ Եվ մի անգամ երեկոյան, երբ Աննետան դասերից վերադառնալով, ճաշ էր պատրաստում (պարապ մարդիկ հենց այդ ժամն են միշտ ընտրում իրենց այցելությունների համար), հայտնվեց Նոեմին և սկսեց ճովողել, հագեցնելով շաղակրատանքը հավիտենական բարեկամության հավաստիացումներով։ Աննետան, չփոթված այն բանից, որ իրեն դտել են այդ հանգամանքներում, և ակամայից սիրաշահված այն անձնավորության քնքշանքներից, որի մեջ նա անգիտակցորեն կարծես փնտրում էր մի ուրիշի արտացոլումը, վճռական կերպով հրաժարվեց Վիլլարների տանը ճաշելուց, բայց հարկադրված էր խոսք տալ, որ Նոեմիին կայցելի։ Ընդամին նա զգուշաբար հարցրեց, թե ո՞ր ժամին հաստատապես կարելի է Նոեմիին մենակ բռնեցնել տանը։ Նոեմին նկատեց, որ Աննետան չի ցանկանում հանդիպում ունենալ իր ամուսնու հետ։ Նա այդ բացատրեց Աննետայի ամաչկոտությամբ և Ֆիլիպի նկատմամբ ունեցած հակակրանքով։ Դա ավելի շատ նրան տրամադրեց դեպի նոր ընկերուհին։ Տուն վերադառ-

[1] Պանդար— Տրոիլի և Կրեսիդայի սիրո մասին հունական ասքի դրական անձը։ Փոխաբերական իմաստով—կավատ։

նալով, Նոեմին անզգուշություն ունեցավ Ֆիլիպին պատմելու իր այցելության մասին և բոլոր հավատարիմ ընկերուհիների սիրալիր խարդավանությամբ եռանդագին կերպով մանրամասն նկարագրեց Ֆիլիպին այն ամենը, ինչը, նրա կարծիքով, կարող էր վերջնականապես դցել կնոջը Ֆիլիպի աչքում. թափթփվածությունն ու մուրացկանային պայմանները, թանաքի և խոհանոցային հոտերը— մի խոսքով, Աննետային սալօջախի կողքին։ Ֆիլիպը գիտեր նրա անվեհեր պայքարի մասին, իսկ ավելի լավ գիտեր աղքատության հոտը, այդ պատճառով էլ կնոջ պատմածը նրան հանգեցրեց բոլորովին ուրիշ մտքերի— ոչ այն, որոնց վրա Նոեմին հույս էր դրել։ Բայց նա դրանք չարտահայտեց։

Եվ բոլորովին ոչ պատահաբար մի քանի օր անց Աննետան, Նոեմիի մոտից դուրս գալով, փողոցում հանդիպեց Ֆիլիպին, որը տուն էր գնում։ Քանի որ Աննետան այդ հանդիպումը չէր փնտրում, նա անհրաժեշտ չհամարեց պայքարել իրեն համակած գաղտնի ուրախության դեմ։ Նրանք մի քանի խոսք փոխանակեցին միմյանց հետ։ Այն ժամանակ, երբ նրանք կանգնած խոսում էին, նրանց կողքով մի երիտասարդ կին անցավ, և Ֆիլիպը նրան բարևեց։ Աննետան ճանաչեց տաղանդավոր դերասանուհուն, որն անցած ձմեռ Կատյուշա Մասլովա էր խաղում։ Այդ դերասանուհին Աննետային շատ դուր էր գալիս, և Աննետան նրան նայեց հիացմունքով։

— Դուք ճանաչո՞ւմ եք նրան,— հարցրեց Ֆիլիպը։

— Ես նրան «Հարության» մեջ եմ տեսել։

— Հա՛,— Ֆիլիպը արհամարհանքով քմծիծաղեց։

Աննետան զարմացավ.

— Մի՞թե ձեզ նրա խաղը դուր չի գալիս։

— Բանը խաղը չէ։

— Կնշանակի, պիե՞սն է։ Դուք այդ պիեսը չե՞ք սիրում։

— Ոչ,— ասաց Ֆիլիպը։

Եվ, նկատելով, որ Աննետան հետաքրքրությամբ բացատրության է սպասում, շարունակեց.

— Քայլենք մի քիչ, ուզո՞ւմ եք։ Սա բավական անքաղա-

քավարի է իմ կողմից, բայց, ճիշտն ասած, ամեն տեսակի քաղաքավարությունները այնպիսի մարդկանց համար չեն, ինչպիսին մենք ենք։

Նրանք քայլում էին կողք-կողքի։ Աննետան և շփոթված էր և գոհ։ Ֆիլիպն սկսեց խոսել պիեսի մասին կատակի և գրգռվածության խառնուրդով, ճիշտ այնպես, ինչպես ինքը Տոլստոյն էր (նրան տե՞ղն է) հաճախ խոսում այնպիսի մարդկանց հետ, որոնց չէր սիրում։ Բայց հանկարծ նրա ծիծաղը եկավ իր այդ խիստ տոնի վրա, և նա, իրեն ընդհատելով, ասաց.

— Ես իրավացի չեմ... Երբ ես պիես եմ նայում, միաժամանակ տեսնում եմ այն բոլորին, ովքեր այդ պիեսը նայում են, տեսնում եմ կարծես նրանց ուղեղային թաղանթի միջով։ Եվ տեսարանը գեղեցիկներից չի երևում։

— Որոշ մարդկանց համար դա գեղեցիկ է,— առարկեց Աննետան։

— Այո, որոշ մարդիկ օժտված են կյանքի խղճուկությունը գունազարդելու շնորհքով։ Դա նրանց ազատում է այդ խղճուկության դեմ պայքարելու պարտականությունից։ Ուրիշների գծբախտությունը այդ հարգելի իդեալիստներին բերկրության րոպեներ է պատճառում, առիթ տալով անվտանգ էմֆետիկական և ֆիլանտրոպական էմոցիաների համար։ Բայց շատ ավելի լավ րոպեներ մարդկանց տառապանքներն են պատճառում ծովահեններին, որոնք նրանց շահագործում են։ Սենտիմենտալությամբ, ինչպես դրոշակով, քողարկվում են ամեն տեսակի հայրենասիրական լիգիաներն ու բնակչության աճին աջակցող ընկերությունները, սենտիմենտալությամբ են արդարացնում փոխառության տոմսերի թողարկումը, գաղութային պատերազմները և մյուս ֆիլանտրոպական հնարանքները... Դո՞ր լալկանության... Եվ դրա հետ միասին չի եղել մի դար, որ սրանից ավելի շահամոլ և ավելի գիշատուրկ լինի։ Դար բարի տերերի (կարդացե՞լ եք Պիեռ Համպին), որոնք գործարանի կողքին կառուցում են եկեղեցի, միկիտան, հիվանդանոց և պոռնկատուն... Այդ տերերը իրենց կյանքը բաժանում են երկու մա-

սի. մեկն անցնում է քաղաքակրթության, առաջադիմության, դեմոկրատիայի մասին արած ճամարտակություններուն մեջ, մյուսը՝ մեր ազգային նողկալի շահագործման և կործանումների մեջ, մեր ժողովրդի այլասերման, Ասիայում ու Աֆրիկայում մյուս ժողովուրդների բնաջնջման մեջ... իսկ դրանից հետո նրանք գնում են թատրոն՝ ախուվախ անելու Մասլովայի ճակատագրի համար կամ ճաշից հետո ննջում են Դեբյուսիի քաղցր մեղեդիների տակ։ Անուրա՞խ է լինելու նրանց արթնացումը։ Աճում ու կուտակվո՞ւմ է կատաղի ատելությունը։ Աղետը մոտ է... Ավելի՛ լավ։ Նրանց գարշելի դեղերը ծառայում են միայն նրա համար, որպեսզի օգնեն հիվանդությունը պահպանելուն։ Հարկ է լինելու դիմել վիրաբուժական միջամտության։

— Իսկ այդ դեպքում հիվանդը կփրկվի՞։

— Ես գրոհում եմ հիվանդության վրա։ Չի փրկվի— ավելի վատ իր համար։

Դա ասված էր զայրույթի պահին։ Աննեետան ժպտաց։ Ֆիլիպը խեթ-խեթ նայեց նրանց։

— Դա ձեզ չի՞ սարսափեցնում։

— Ես հիվանդ չեմ,— ասաց Աննեետան։

Ֆիլիպը կանգ առավ և արդեն ուշադիր նայեց նրան։

— Դա երևում է։ Ձեր վրայից առողջությունը կաթում է... Ձեզ հետ ես հանգստանում եմ ֆիզիկական ու բարոյական քայքայման գարշահոտությունից։ Ամենաանտանելին բարոյականն է... Ներեցեք ինձ այս մաղձոտ երկար ճառի համար։ Ես նիստից եմ գալիս, որտեղ տարտյուֆների մի շայկա քննարկում էր հիվանդություններին պաշտոնական օգնություն ցույց տալու հարցը, այսինքն՝ հիգիենայի հարցը։ Ես խեղդվում եմ զայրույթից ու նողկանքից։ Եվ երբ ձեզ տեսա, այդքան հպարտ ու հոգով առողջ, տեսա ձեր վճիտ աչքերը, ձեր համարձակ կեցվածքը, իմ մեջ էգոիստական ցանկություն հայտնվեց շնչել այն թարմ օդը, որը շրջապատում է ձեզ։ Իսկ հիմա ինձ լավ եմ զգում։ Շնորհակալություն։

— Օհո՛։ Դուք արդեն ի՞նձ էլ բժիշկ դարձրիք։ Եվ դա

այն ամենից հետո, ինչ դուք այստեղ ասացի՞ք նրանց մասին։

— Դուք բժիշկ չեք։ Դուք դեղ եք Թվածին։

— Հետաքրքիր մոտեցում ունեք դուք դեպի մարդիկ։

— Ես նրանց բաժանում եմ երկու կատեգորիայի. ներշնչման և արտաշնչման, այսինքն նրանք, ովքեր առողջացնում են կյանքը, և նրանք, ովքեր այն թունավորում են։ Երկրորդ կատեգորիային պետք է սպանել։

— Էլ ո՞ւմ եք պատրաստվում սպանել։

— Է՜լ,— հարեց Ֆիլիպը։— Դուք համարում եք, որ ինձ համար բավական է միայն պացիենտներին սպանելը։

— Ոչ, ոչ, դա իմ բերանից անզգուշաբար դուրս թռավ,— ծիծաղով արդարանում էր Աննետան...— Հին, կլասիկ մակարդ է... իսկ կարելի՞ է իմանալ, այդ ո՞վ է այդպես ձեզ վրդովել այսօր։

— Հիմա այդ մասին նույնիսկ չեմ ուզում հիշել, երբ մենք միասին ենք։ Բայց երկու խոսքով կպատմեմ ձեզ։ Խոսքը վերաբերվում է մի ամբողջ թաղի վտանգավոր տներին, որոնք փնթի թագավոր Հենրիխի ժամանակներից, թագավոր, որը գյուղացուն հավի սուպ էր խոստանում, քաղցկեղի և թոքախտի բույն են հանդիսանում։ Արդյունքը հիասնալի է. վերջին քսան տարում մահացության տոկոսը հասել է ութսունի։ Ես այդ մասին հաղորդեցի Սանիտարական կոմիտեին և արմատական միջոցներ պահանջեցի. այդ տները պետությունը պետք է գնի նրանց տերերից և քանդի։ Սկզբում ինձ հետ կարծես թե համաձայնեցին, առաջարկեցին զեկուցագիր ներկայացնել։ Ես այդ գրեցի, գալիս եմ, բանից պարզվում է, պատգամախոսները իրենց տված խոսքից արդեն ետ են կանգնել. «Ձեր զեկուցագիրը, սիրելի և հարգելի կոլեգա, ուժեղ տպավորություն է թողնում... Հիանալի փաստաթուղթ է... Պետք է այդ մասին մտածել... Տեսնենք, տեսնենք ինչ կլինի... Իհարկե, այդ տներում շատերն են մահացել, բայց արդյո՞ք նրանց մահվան պատճառը այդ տներն են»։ Մեկը ինձ ցույց է տալիս տեղեկանքներ (թե երբ էլ հասցրին դրանք հարինել), որոնց մեջ մեռած մարդկանց տնատերերի կողմից

կաշառված հարաստանները հավաստիացնում են, որ հանգուցյալը գերեզմանատան տոմսը ստացել է այն ժամանակ, երբ դեռ նստած է եղել ուղևորների սրահում կամ քաղցկեղը դժբախտ պատահարի հետևանքով է եղել։ Մյուսը համաձայն չէ, որ հին տները ավելի վտանգավոր են առողջության համար, քան նորերը, և հավատացնում է, որ հին տները ավելի ընդարձակ են և նրանցում ավելի շատ օդ կա, իսկ որպես օրինակ ցույց է տալիս իր սեփական տունը... Պնդում են, թե ծայրահեղություններ պետք չեն. բարեկարգել— այո, բայց քանդել՝ ոչ։ Բավական կլինի ինչպես պետքն է մաքրել, և տնատերերը հանձն են առնում դեզինֆեկցիա անել։ «Ընդ որում մենք աղքատ ենք, ոչինչ չունենք, որտեղի՞ց փող վերցնենք՝ այդ տները գնելու համար»։ Երևի փող իսկույն կգտնեին, եթե խոսքը նոր թնդանոթներին վերաբերվեր... Մինչդեռ քաղցկեղն սպանում է ուզածդ թնդանոթից ավելի լավ... Վերջապես ի լրումն խեղկատակության, ավագուրներից մեկն սկսեց խոսել դեղեցկության մասին. բանից պարզվում է, այն հյուղերը, որոնք կառուցված են այդ ծեր խոզ Հենրիխի ժամանակներից, անհրաժեշտ է պահպանել արվեստի և պատմության համար։ Ես ինքս էլ եմ արվեստ սիրում, դուք ինձ մոտ կարող եք և հին և նոր վարպետների շատ հիանալի կտավներ տեսնել։ Բայց հնությունն ինձ համար գեղեցկության նշան չէ (եթե միայն խոսքը մեր սքանչելի տիկիններից որևէ մեկի մասին չէ)։ Ով միևնույն է, եթե նույնիսկ հին անցյալը իր գեղեցկությունն ունի, ես ՉՈՒԼ ՀԱՄ ՏԱ, որ այդ անցյալը թունավորի ներկան։ Բոլոր տեսակի երեսապաշտություններից ինձ համար ամենից շատ զզվելի է այսպես կոչված էսթետների երեսապաշտությունը, էսթետների, որոնք իրենց ամլությունը ներկայացնում են որպես վսեմ աղնվություն։ Դրա վերաբերյալ նույնպես ես բավական շատ կոպտություններ ասացի... Տաք վիճաբանությունների ժամանակ մի կոլեգա աննկատելիորեն ինձ նշան է անում, տանում է մի կողմ և ասում. «Դուք, ըստ երևույթին, չգիտե՞ք, որ այդ տնատերը, այդ ճիճուն, որը սնվում է իր վարձակալների դիակներով,— առևտրի և մա-

տակարարման Գլխավոր կոմիտեի նախագահն մտոիկ բարեկամն է։ Նա ընտրությունների ժամանակ իշխողի դեր է կատարում և կոալիցիաներ ստեղծում։ Նա մեկն է այն «գորշ կարդինալներից», որոնք թաղավորում են ամեն տեսակի դեմոկրատական միավորումներում և դեմոկրատական բանկետներում, ֆրանկմասոնների կեղտոտ կլիկի անտեսանելի պարագլուխը, պարագլուխը այդ «ազատ քարտաշների», որոնք ոչ թե կառուցում, այլ խարխլում են մեր հանրապետության շենքը։ Եվ ժողովրդի այդ բարեկամը չի ցանկանում, որ ժողովրդին տեղափոխեն իր գերեզմանից...» Լսեցեք, լսեցեք շարունակությունը, դա ամենահետաքրքիրն է. այդ բոլորն արվում է ֆիլանտրոպիայի դրոշի տակ... Վերջում իմ քթի տակ են խրում բնակարանային վարձակալների բավական համարձակ գրած պետիցիան. նրանց ուրիշ աներ տեղափոխելու նախագծի դեմ շարադրած բողոքը։ Դե հիմա ասեք, ես ի՞նչ կարող եմ անել մենակ բոլորի դեմ։ Ասում են, ավղուրները ժպտում են։ Ինչ արած, ես էլ էի ժպտում։ Բայց ես նրանց հայտարարեցի, որ լավ կատակը պետք չէ իր մեջ պահել, և, քանի որ ես էգոիստ չեմ, հենց վաղը այդ կբաժանեմ «Մատենի» ընթերցողների հետ։ Նրանք գոռգոռացին։ Բայց ես իմ ասածը կանեմ։ Գիտե՞մ, ինչ է լինելու։ Ինձ վրա են հարձակվելու բոլոր այդ մասոնները։ Եվ, իհարկե, առիթը բաց չեն թողնի նաև Հիպոկրատի այն ժառանգորդները, որոնց վերջերս իրենց տեղն եմ դրել, ինչպես պետք է։ Նրանք գիտեն ինչով ինձ անախորժություն պատճառեն։ Բայց ոչի՛նչ, կկռվենք։ Կարծեմ, դուք այդպե՞ս ասացիք, տիկին ոազմիկ... Հիշո՞ւմ եք, այն երեկո, Սոլանժենց տանը... Կաթծում եմ, դա ձեր սրտո՞վ է։

— Այո, կռվել անարդարության դեմ— դա հիանա՛լի է։ Ես դա սիրում եմ։ Ափսո՛ս, որ ես տղամարդ չեմ։

— Դրա համար պետք չէ տղամարդ լինել։ Չէ՞ որ դուք էլ եք ստիպված եղել կռվել...

— Այո, և ես դրա համար բոլորովին չեմ տրտնջում։ Բայց ես չեմ ուզում խեղդվել։ Կանանց ճակատագիրը մառա-

նում տարվող պայքարն է։ Իսկ դուք, դուք կռվում եք ազատ ոդում, լեռան գագաթին։

— Օհո՛։ Ձեր քթանցքները լայնանում են, ինչպես մարտական ձիունը, երբ վառոդի հոտ է առնում... Ես այդպես էլ դիտեի... Ես դա նկատեցի դեռ այն երեկո։

— Այն երեկո դուք ծիծաղում էիք ինձ վրա։

— Ամենևին ոչ։ Այդ բոլորը ինձ այնքա՞ն է ծանոթ և այնքա՞ն մոտիկ— ես ինչպե՞ս կարող էի ձեզ վրա ծիծաղել։

— Դուք ինձ ձեռ էիք առնում։ Եվ փորձում էիք անկեղծության կոչել...

— Ես անմիջապես տեսա... Եվ չսխալվեցի։

— Այնուամենայնիվ, սկզբում դուք ինձ վերաբերվեցիք որոշ արհամարհանքով։

— Սատանան տանի, ինչպե՞ս ես կարող էի կարծել, որ Սոլանժի մոտ այսպիսի կնոջ կհանդիպեմ, ինչպիսին դուք եք։

— Այդ դեպքում, իսկ դո՞ւք։ Դուք ինչպես եք ընկել այնտեղ։

— Իմ բանն ուրիշ է։

— Ինչպես երևում է, ձեզ դո՞ւր է գալիս սենտիմենտալությունը։

— Ըհը, հիմա դուք սկսում եք ձե՞ռ առնել... Եե՛ղ Սոլանժ։ Եկեք նրա մասին չխոսենք։ Ես գիտեմ այն ամենը, ինչ դուք կարող էիք նրա մասին ասել։ Բայց Սոլանժը— տաքուկ է։

Աննետան ոչինչ այլևս չհարցրեց, միայն նայեց նրան։

— Երբևէ ես ձեզ կպատմեմ... Նրան ես շատ բանով եմ պարտական...

Նրանք կանգ առան։ Ժամանակն էր բաժանվելու։ Աննետան ժպտալով ասաց.

— Դուք այնքան չար չեք, ինչքան թվում եք։

— Իսկ դուք, գուցե, այդքան բարի չեք։

— Կնշանակի, մեր երկուսից լավ միջին մեծություն կստացվի։

Ֆիլիպը նայեց նրա աչքերին.

— Ուզո՞ւմ եք։

Ֆիլիպը չէր կատակում։ Արյունը խփեց Աննետայի երեսին։ Նա պատասխան չգտավ։ Ֆիլիպի հայացքը կաշկանդեց նրան և բաց չէր թողնում։ Ասա՞ց նա որևէ բան։ Թե՞ ոչինչ չասաց։ Աննետան չգիտեր, բայց Ֆիլիպի շրթունքներին նա կարդաց. «Ես ուզում եմ ձեզ...»։

Ֆիլիպը գլուխ տվեց ու գնաց։

Աննետան մնաց մենակ, հրով ամբողջովին բռնկված։ Նա քայլում էր, չնկատելով ճանապարհը, ինքն էլ չիմանալով ուր է գնում, և տասը րոպեից հետո նորից հայտնվեց այն տեղում, որտեղ Ֆիլիպից բաժանվեց։ Այդտեղ միայն նա սթափվեց և տեսավ, որ պտտվել է Լյուքսեմբուրգյան այգու շուրջը։ Աննետայի գլուխն այրվում էր, և երեք բառ այնքան պարզորոշ էին մտել ուղեղի մեջ, որ կարծես հրի նման բոցկլտում էին սև ֆոնի վրա։ Նա ճգնում էր չնջել դրանք... Արդյոք Ֆիլիպն արտասանե՞ց այդ բառերը... Աննետան հիշեց Ֆիլիպի անխռով դեմքը, և փորձեց դրանում կասկածել, բայց բառերը չէին անհետանում։ Նրա ներքին դիմադրությունը թուլացավ և հանկարծ միանգամից կոտրվեց... Աննետան մտածեց. «Կնշանակի, ճակատագիր է... էհ, ի՞նչ կա որ... Ես գիտեի, որ այդպես է լինելու...» Ընդամենը մի ժամ առաջ նա կըմբոստանար այդպիսի մտքերի դեմ, իսկ հիմա թեթևություն զգաց։ Վիճակը նեռված էր...

Աննետան տուն վերադարձավ պայծառ գլխով։ Տենդագին հուզմունքը փոխվեց հանգիստ վճռականության։

Նա գիտեր. եթե Ֆիլիպն ուզում է, ուրեմն, դրան կհասնի։ Ասենք, չէ՞ որ Աննետան էլ նույն բանն է ուզում։ Նա ազատ է, ոչինչ նրան չի կաշկանդում... Նոեմի՞ն։ Նոեմիի նկատմամբ նա միայն մի պարտականություն ունի. չխաբել նրան։ Եվ չի էլ խաբի։ Նա բացեիբաց իրենը կվերցնի... Իրե՞նը։ Ուրիշի ամուսնո՞ւն... Բայց կույր կիրքը շշնջում էր նրան, որ Նոեմին իրենից Ֆիլիպին գողացել է։

Աննետան ոչինչ չէր անում՝ անխուսափելին արագացնելու համար։ Նա չէր կասկածում, որ Ֆիլիպը կգա։ Սպասում էր։

Նվ Ֆիլիպը եկավ։ Նա ընտրեց այնպիսի մի ժամ, երբ Աննետային կարելի էր տանը մենակ գտնել։ Երբ Աննետան գնաց դուռը բացելու, հանկարծ սարսափը համակեց նրան։ Բայց նա իրեն ասաց. «Այդպես պե՞տք է»,— և բացեց։ Միայն գունատությունն էր մատնում Աննետայի հուզմունքը։ Ֆիլիպը մտավ սենյակ։ Նրանք կանգնած էին իրարից մի չանի քայլի վրա, և Ֆիլիպը լուրջ արտահայտությամբ աչքի տակով նրան էր նայում։ Որոշ լռությունից հետո նա ասաց.

— Ես ձեզ սիրում եմ, Ռիվիեր։

«Ռիվիեր» բառը նա այնպես էր արտասանում, որ մտքում պատկերացում էր առաջանում գետի հոսանքի մասին։

Դողալով և չշարժվելով տեղից, Աննետան պատասխանեց.

— Իսկ ես չգիտեմ, սիրո՞ւմ եմ ձեզ արդյոք... կարծում եմ, որ ոչ... Գիտեմ միայն մի բան. ես ձերն եմ։

Ժպիտը լուսավորեց Ֆիլիպի լուրջ դեմքը։

— Դա լավ է, որ դուք չեք խորամանկում և չեք ստում... Ես նույնպես ձեզ ճշմարտությունն ասացի։

Ֆիլիպը մոտեցավ նրան։ Աննետան բնազդաբար ետ-ետ գնաց և, կպչելով պատին, անօգնական կերպով մեջքով ու ձեռնափերով սեղմվեց պատին։ Աննետայի ոտքերը թուլանում էին։ Ֆիլիպը կանգ առավ և դեմ առ դեմ նայեց նրան։

— Մի վախեցեք,— ասաց Ֆիլիպը, և նրա խիստ աչքերում առկայծեց քնքշություն։

Հանգիստ, արհամարհանքի նրբերանգով, պարտվածի տոնով, որը հանձնվում է, Աննետան ասաց.

— Ի՞նչ եք ուզում ինձանից։ Ձեզ իմ մարմի՞ն է պետք։ Ես դա չեմ մերժի ձեզ։ Ձեզ հենց այդ էլ պե՞տք է։

Ֆիլիպը մի քայլ արեց և նստեց նրա ոտքերի մոտ, ցածրիկ բազկաթոռի վրա։ Աննետայի զգեստը հպվում էր նրա այտին։ Ֆիլիպը բռնեց նրա անկամորեն հնազանդ ձեռքը, ներշնչեց բուրմունքը նրա, շրթունքներով հպվեց այդ ձեռքին և, խոնարհվելով, այդ ձեռքը նախ դրեց իր ճակատին, ապա աչքերին։

— Ահա ես ինչ եմ ուզում։

Աննետան մատների տակ զգաց կարճ խուզած մազերի

կոշտ խոզանակը, ուռուցիկ ճակատը, քունքերի երակների զարկը։ Այդ տիրական մարդը տրվում էր նրա պաշտպանությանը... Աննետան խոնարհվեց նրա կողմը, Ֆիլիպը գլուխը բարձրացրեց։ Դա նրանց առաջին համբույրն էր։

Հաջորդ ակնթարթին Ֆիլիպը ամուր գրկեց Աննետային, որը նրա մոտ ծնկի իջավ, առանց դիմադրելու, հազիվհազ շնչելով։ Բայց Ֆիլիպը, չնայած իր կրքոտությանը, չէր շտապում օգտվել հաջողությունից։ Նա ասաց.

— Ուզում եմ ամեն ինչ։ Դու ինձ պետք ես որպես սիրուհի, բարեկամ, ընկեր, որպես կին... պետք ես ամբողջությամբ։

Աննետան ազատվեց նրա գրկից։ Նրա հայացքի առաջ հանկարծ կանգնեց Նոեմիի կերպարը։ Հենց նոր Աննետան նրան ջնջեց իր մտքերից։ Բայց երբ Ֆիլիպը նույնն արեց, Աննետան վրդովմունքի պես մի բան զգաց։ Նրա մեջ վիրավորված էր ֆրանկմասոնական համերաշխության զգացումը, որը համախմբում էր բոլոր կանանց, նույնիսկ ախոյաններին, աղամարդու դեմ, որը ի դեմս մի կնոջ վիրավորում է նրանց բոլորին։

Աննետան ասաց.

— Ձեզ չի կարելի այդպիսի բան ուզել։ Դուք ուրիշ կնոջ եք պատկանում։

Ֆիլիպն ուսերը թոթվեց։

— Ոչինչ չի պատկանում ուրիշ կնոջ։

— Պատկանում է ձեր անունը և հավատարմությունը։

— Ձեր ինչի՞ն է պետք իմ անունը։ Դուք տիրանում եք մնացյալ ամեն ինչին։

— Անունն ինձ պետք չէ, բայց հավատարմություն պետք է. ես ձեզ խոստանում եմ հավատարմություն և ձեզանից էլ նույնն եմ պահանջում։

— Ինչ արած, ես ընդունում եմ ձեր պայմանը։

Բայց Աննետան, որ հենց նոր Ֆիլիպից հավատարմություն էր պահանջում, հանկարծ վրդովվեց.

— Ոչ, ոչ։ Դուք ուզում եք դավաճանել նրան, ով բազմաթիվ տարիներ կյանքը կիսում է ձեզ հետ, և հավատար-

մություն եք խոստանում ինձ, որիս ընդամենը երրորդ անգա՞մ եք տեսնում։

— Ձեզ ճանաչելու համար ինձ բավական էր նույնիսկ ոչ քե երեք անգամ տեսնել, այլ ավելի քիչ։

—Ո՛չ, դուք ինձ չեք ճանաչում։

— Ճանաչում եմ։ Կյանքն ինձ սովորեցրել է արագ ճանաչել մարդկանց։ Չէ՞ որ կյանքն անցնում է, և ոչ մի ակնթարթ չի կրկնվում։ Պետք է միանգամից որոշել, ինչ ես ուզում կամ ոչինչ չուզել։ Դուք անցնում եք իմ կողքով, Ռիվիեր, և, եթե ես ձեզ չվերցնեմ, կկորցնեմ ձեզ։ Ահա և ձեզ վերցնո՛ւմ եմ։

— Իսկ հանկարծ ու սխալվեցիք։

— Գուցե և սխալվեմ։ Ես գիտեմ. ցանկությունը մեզ կուրացնում է, մենք հաճախ խաբվում ենք։ Բայց եթե մենք հրաժարվեինք ցանկություններից, ամբողջ կյանքը սխալ կլիներ։ Ձեզ տեսնելը և չցանկանալը այնպիսի մի սխալ կլիներ, որը ես երբեք ինձ չէի ների։

— Ախր դուք ի՞նչ գիտեք իմ մասին։

— Շատ ավելին, քան դուք կարծում եք։ Ինձ հայտնի է, որ դուք հարուստ եք եղել և հիմա աղքատ եք։ Որ դուք երջանիկ երիտասարդություն եք ունեցել և որ ամեն ինչ կորցրել եք, արտաքսվել եք ձեր միջավայրից, բայց չեք հուսահատվել և պայքարել եք։ Ավ-ով, իսկ ես գիտեմ, թե դա ինչ է նշանակում, այդպիսի պայքար մղելը. ես ինքս էլ եմ երեսուն տարի շարունակ ամեն օր եղել այդ պայքարի մեջ, ձեռնամարտ եմ մղել, և քսան անգամ քիչ է մնացել հանձնվեմ, թեև ամեն ինչին սովոր եմ եղել և օրորոցից իմացել եմ ինչ բան է նողկալի աղքատությունը։ Իսկ ձեր մաշկը նուրբ է, ձեզ մանկության տարիներին երես են տվել և փաղաքշել։ Եվ այնուամենայնիվ դուք աննկուն եք մնացել։ Դուք չեք հանձնվել, չեք գնացել ոչ մի փոքրոգի կոմպրոմիսի։ Դուք չեք աշխատել պայքարից գլուխ ազատել որևէ կանացի ձևով— գայթակղելով տղամարդկանց կամ ազնիվ ելք ընտրելով. շահադիտական ամուսնությամբ։

—Իսկ դուք կարծում եք, այդպիսի ամուսնություն ինձ հաճա՞խ են առաջարկել։

— Թե չեն առաջարկել, նշանակում է նույնիսկ ամենասահմանափակ տղամարդիկ հասկանում են, որ դուք այն կանանցից չեք, ում գնում են պայմանագրով։

— Ախո՛ւ չեմ, այո։

— Ինձ նաև հայտնի է, որ դուք սիրել եք և երեխա ունեցել, բայց չեք ուզել նրա հոր կինը դառնալ։ Ինչպիսի զգացմունքներ են ձեզ ղեկավարել, դա ձեր գործն է։ Ինձ համար կարևորն այն է, որ դուք համարձակվել եք վախկոտ վերնախավի առաջ պաշտպանել ձեր իրավունքը— ոչ թե վայելքի, այլ աշխատանքի իրավունքը, իրավունքը որդի ունենալու, և չնայած աղքատությանը, դաստիարակել եք նրան առանց ուրիշի օգնության։ Դուք ոչ միայն պաշտպանել եք ձեր իրավունքները— դուք իրականացրել եք դրանք ամբողջ տասներեք տարի։ Ես փորձով գիտեմ, ինչ է նշանակում աշխատանքի և մշտական հոգսերի տասներեք տարի, մինչդեռ դուք իմ դեմ կանգնած եք առանց կոտրվելու, հպարտ, ազնիվ, առանց հոգեկան հոգնածության փոքրագույն իսկ հետքի։ Պարտության երկու տեսակ կա. կատարյալ ապատիա և դառնություն... Երկրորդից ես ինքս էլ չեմ ազատվել, իսկ դուք կարողացել եք երկուսից էլ խուսափել... Ինձ համար, որ լավ ծանոթ եմ կյանքի պայքարին, պարզ է, ինչ արժի այդպիսի կինը, ինչպիսին դուք եք։ Այդ լուրջ ժպիտը, վճիտ աչքերը, հոնքերի հանգիստ գիծը, այդ անխոնջ, ազնիվ ձեռքերը, ամեն ինչում դտնվող պայծառ ներդաշնակությունը, իսկ ներսում՝ այրող կրակը, պայքարի մշտական բերկրալից թրթիռը, երբ նույնիսկ դուք պարտված եք լինում... «Ոչինչ, մենք դեռ կկռվենք...»։ Մի՞թե դուք կարծում եք, որ ինձ նման մարդը ընդունակ չէ գնահատել ձեզ նման կնոջը, իսկ գնահատելով, չի դիմի ամեն ինչի՝ նրան տիրանալու համար... Ռիվիեր, դուք ինձ պետք եք։ Ես ուզում եմ, որ դուք իմը լինեք։ Լսեցեք ինձ, ես չեմ խաբի ձեզ. Թեև ես ձեզ բարիք եմ ցանկանում, ես ոչ թե ձեզ համար, այլ ինձ համար եմ ուզում ձեզ սիրել։ Եվ ինձ հետ ձեզ ոչ թե բերկրանք է սպասում, այլ նոր փորձություններ... Դուք իմ կյանքը չգիտեք... Նստեցեք ահա այստեղ, իմ կողքին, իմ գեղեցկահո՛ն...

Աննետան նստեց հատակին և աչքերը բարձրացրեց դեպի Ֆիլիպը։ Ֆիլիպը բռնեց նրա ձեռքերը և այլևս բաց չէր թողնում այնքան ժամանակ, քանի դեռ խոսում էր։

—Ես ինձ համար նվաճել եմ անուն, հաջողություն, ես դրամ ունեմ և այն, ինչ դրամը կարող է տալ։ Բայց դուք չգիտեք, ես դա ինչպես եմ ձեռք բերել և ինչպես եմ հիմա պահում իմ ձեռքում։ Ես այդ բոլորը պոկել եմ ուժով և ուժով էլ պահում եմ։ Ես բռնություն եմ գործադրել իմ ճակատագրի վրա,— եթե ճիշտ է, որ ճակատագիր գոյություն ունի։ Ես ինձ համար ճանապարհ եմ հարթել հանգամանքներին և մարդկանց կամքին հակառակ։ Եվ երբեք չեմ կարողացել (ասենք, չեմ էլ ուզել) բժշկել իմ կողմից ուրիշի ինքնասիրությանը հասցրած վերքերը, չեմ ջանացել, որ մարդիկ նեբեն ինձ իմ հաջողությունները և իմ ընթացքի ժամանակ տրորած ուրիշի շահերը։ Իմ հարգելի կոլեգաները հույս էին դնում, որ հաջողությունը, վերջապես, ինձ վրա կազդի որպես նարկոզ։ Ոչ մի նման բան տեղի չունեցավ։ Նրանք զգում են, որ ես նրանց համար օտար մարդ եմ և, ինչքան էլ ուզում է ինձ յուղեն, իրենց համար յուրային չեմ դառնա։ Դա այն պատճառով, որ ես չեմ կարող մոռանալ այն հրեշավոր խաբեությունն ու անարդարությունը, որոնք տեսել եմ պատանեշի այն կողմը։ Ես բավական ժամանակ ունեի մեր հասարակության մեջ թագավորող կեղծիքի մասին մտածելու համար, կեղծիք, որը ինտելիգենցիայի կաստան, որպես ամենահավատարիմ շուն միշտ պահպանել է ի հեճուկս այն ամենի, ինչ նրանից սպասում են և ինչ նա ինքը վերագրում է իրեն։ Չարժե խոսել այն փոքրաթիվ ճարպիկների մասին, որոնք, պարփակվելով իրենց արվեստի և տեսությունների աշտարակում, ոչ մի բան չհարգող մարդկանց համբավ են հանել, բայց, դուրս գալով իրենց աշտարակից, շատ քաղաքավարի հանում են իրենց շլյապաները աշխարհում իշխող հիմարության առաջ։ Չէ՞ որ ես չլսված խենթություն եմ գործում. չե՞մ ցանկանում նրանց հետ սիլիբիլի անել։ Նույնիսկ հիմա էլ եմ պատրաստվում արշավի գնալ մի քանի սրբազան խաբեբայությունների դեմ, որոնք ծանր բեռի նման ընկնում են մարդու առանց այն էլ ազ-

գաուրյունից արդեն կորացած ուսերի վրա և հազարավոր մարդկանց դատապարտում անսահման տառապանքների։ Ինձ, իհարկե, իր հաշոցով կդիմավորի ցերբերը երեքերախանի, որոնց անուններն են. երկերեսանի բարոյականություն, երկերեսանի հայրենասիրություն, կրոնական կեղծ բարեպաշտություն։ Բայց այդ մասին ես ձեզ կպատմեմ հետո... Ինձ նույնպես պարտություն է սպասում, ես այդ գիտեմ, բայց այնուամենայնիվ կռվում եմ, որովհետև դա պետք է նաև այն պատճառով, որ ես սիրում եմ պայքարի խնդությունն ու տառապանքները... Հիմա դուք հասկանում եք, ինչու ձեր խոսքերը այն երեկո ինձ համար այնպիսի լուր հանդիսացան, որը սիրտն է տալիս սրտին... իսկ դա ձեր մտքով չէր էլ անցնում։ Այո, ձեր խոսքերն ասված էին ինձ համար, և ես ուզում եմ, որ այդ խոսքերն արտաբերող շրթունքները նույնպես դառնան իմը։

Աննետան շուրթերը ցցեց նրա առաջ։ Ֆիլիպն իր ուժեղ ձեռքերով փաղաքշորեն սեղմեց նրա այտերը։

— Ռիվիեր, դուք ինձ պետք եք։ Ես հույս չունեի, որ ձեզ կգտնեմ։ Իսկ հիմա դուք իմն եք, և ես ձեզ բաց չեմ թողնի։

— Պի՜նդ բռնեք։ Նայեք, որ հանկարծ ձեզանից չծլկե՜մ։

— Իսկ ես գիտեմ ինչով ձեզ կապել. ձեզ առաջարկում եմ ինձ հետ բաժանել իմ ծանր կյանքը, վտանգները, թշնամիների դեմ մղված պայքարը։

— Այո, դուք ինձ ճանաչում եք... Բայց ինչպե՞ս կարող եք ինձ առաջարկել այն, ինչը տվել եք ձեր նոեմիին։ Դուք դրա իրավունքը չունե՞ք։

— Դա նրա ինչի՞ն է պետք։ Նա այդպիսի ոչ մի բանի մասին լսել անգամ չի ուզում։ Նա կյանքից հեռացնում է ճըշմարտությունը, աշխատանքը և տառապանքները։

Աննետան լուռ նայեց Ֆիլիպին, և Ֆիլիպը նրա աչքերում կարդաց մի հարց, որն Աննետան չտվեց։

— Դուք մտածում եք. «Ուրեմն, ինչո՞ւ է սա նրա հետ ամուսնացել...»։ Այդ կինը միշտ ատում է, այո, այո, նրա մեջ ամեն ինչ կեղծիք է, մազերի արմատներից մինչև եղունգների ծայրը... Իսկ ամենագլխավորն այն է, որ ես հենց դրա

Համա՞ր էլ նրա հետ ամուսնացել եմ։ Ես նրան գրեթե սիրում եմ դրա համար... Երբ սուտը կատարելության հասցված արվեստ է, նա մի լավ թատրոն արժե... (Մի՞թե մենք չգիտենք, որ թատրոնը, որ գրեթե ամեն տեսակի արվեստը ստում է... Բացառություն են կազմում միայն մի քանի խենթեր, որոնք իրենց վարքագծով ամաչեցնում են արհեստի եղբայրակիցներին, և սրանք էլ հաստատում են, որ այդ մարդիկ արվեստագետներ չեն, որ նրանք միայն փչացնում են պատիվը և գինը գցում...) է, իսկ եթե մեր հասարակության մեջ ամեն ինչ սուտ է, ուրեմն, մենք իրավունք ունենք պահանջելու, որ այդ սուտը գոնե հաճելի լինի։ Այդ պատճառով էլ ես գերադասում եմ ապրել և շփվել այն մարդու հետ, ով գեղեցիկ է ստում։ Նրանք ինձ չեն կարող խաբել, ես ամեն ինչ տեսնում եմ։ Նոեմիի հրապուրիչ կոշմերը նույն ձևով կեղծ են, ինչպես նրա զգացմունքները։ Բայց կեղծումը հաջողված է։ Դա Նոեմիին պատիվ է բերում։ Ես նրանով երեկոները հիանում եմ, երբ տուն եմ գալիս իմ քերթարանից, որտեղ հոտած մսի տեսքն ու հոտը վիրավորում է աչքը և թունավորում շնչառությունը։ Նոեմին ուրախ կարկաչող առու է, և ես այդ առվակի մեջ լվացվում եմ։ Թող ստի, ինչքան ուզում է։ Դա ի՞նչ նշանակություն ունի։ Եթե հանկարծ նրա խելքին փչեր ճշմարիտ բաներ ասել, ասելու բան չէր ունենա։

— Ինչքա՞ն եք դաժան։ Նա ձեզ սիրում է։

— Անկասկած։ Ես նրան նույնպես։

— Իսկ եթե դուք նրան սիրում եք, ես ձեր ինչի՞ն եմ պետք։

— Ես նրան սիրում եմ հենց այնպես, ինչպես նրան պետք է։

— Դա շատ է։

— Շա՞տ է։ Նրա համար, գուցե։ Բայց ոչ ինձ համար։

— Բայց ես կարո՞ղ եմ ձեզ տալ այն, ինչ տալիս է նա։

— Դո՞ւք։ Դուք խաղալիք չեք։

— Իսկ ես ափսոսում եմ, որ չեմ կարող խաղալիք լինել։ Ամբողջ կյանքը խաղ է։

— Այո, բայց ախր դուք հավատո՞ւմ եք այդ խաղին։

Դուք այն խաղացողներից եք, ովքեր շատ լուրջ են վերաբերվում խաղին։

— Դուք նույնպես։

— Ես դա գիտակցորեն եմ ուզում։

— Իսկ ձեզ ո՞վ ասաց, որ ես այդ չեմ ուզում։

— Ուրեմն, հիանա՛լի է, երկուսով էլ լուրջ կխաղանք։

— Ոչ, ես չեմ ուզում մի երջանկություն, որն ավերակների վրա է կառուցված։ Ես ինքս տառապել եմ և չեմ ուզում, որ իմ պատճառով ուրիշներն էլ տառապեն։

—Կյանքում ամեն ինչ գնվում է տառապանքով։ Այդպես է բնության օրենքը— երջանկությունը միշտ ավերակների վրա է կառուցվում։ Եվ ամեն ինչ վերջիվերջո ավերակների է վերածվում— համենայն դեպս այն ամենը, ինչ կառուցվա՞ծ է։

— Ես այդ անել չեմ կարող— չեմ կարող ուրիշ կնոջ դժբախտացնել։ Խե՛ղճ Նոեմի։

— Նա ձեզ ավելի քիչ կխղճար, եթե նրան պետք լիներ ձեզ տրորել։

— Ես էլ եմ այդպես կարծում։ Բայց նա ձեզ սիրում է։ Իսկ սերն սպանելը հանցագործություն է։

— Ուզում եք դուք թե չէ, դա վերջացած է։ Դուք նրան սպանեցիք հենց միայն ձեր հայտնվելով։

— Դուք մտածում եք միայն ձե՞ր մասին։

— Երբ սիրում ես, միշտ այդպե՞ս է լինում։

— Ճի՞շտ չէ։ Այ, օրինակ, ես մտածում եմ և իմ, և ձեր և այն կնոջ մասին, որը ձեզ սիրում է, և այն ամենի մասին, ինչ թանկ է ինձ համար։ Ես կուզեի, որ իմ սերը ձեզ համար խնդություն լիներ և բարիք։

— Սերը մենամարտ է։ Չի կարելի այս ու այն կողմ նայել, այլապես դու կործանված ես։ Նայեք ուղիղ հակառակորդի աչքերին, որը ձեր դե՞մ է կանգնած։

— Հակառակորդի՞։ Այդ ո՞ւմ։

— Իմ։

— Ախ, ձե՛ր... Դա ինձ չի վախեցնում։ Իսկ Նոեմին... Նա ինձ թշնամի չէ, նա ոչ մի վատ բան ինձ չի արել։ Ես ինչպե՞ս կարող եմ նրա կյանքը խորտակել։

— Ուրեմն, ինչ, ձեր կարծիքով, ավելի լավ է նրան խաբե՞լ։

— Խաբե՞լ։ Ոչ, այդ դեպքում ավելի լավ է խորտակել նրա կյանքը... կամ իմը. հրաժարվել ձեզանից։

— Դուք չեք հրաժարվի։

— Ի՞նչ գիտեք։

— Այնպիսի կինը, ինչպիսին դուք եք, թուլությունից չի նահանջում։

— Ինչո՞ւ թուլությունից։ Գուցե դա թուլությո՞ւն չէ, այլ ուժ է։

— Հրաժարման մեջ ես ուժ չեմ տեսնում։ Մենք իրար սիրում ենք։ Ես համոզված եմ, որ դուք ինձանից չեք հեռանա։

— Մի՛ երաշխավորեք։

— Բայց չէ՞ որ դուք ինձ սիրում եք։

— Սիրում եմ։

— Կնշանակի՞...

— Կնշանակի... Դուք իրավացի եք, ես չեմ կարող... ես ի վիճակի՛ չեմ ձեզանից հրաժարվել։

— Ուրե՞մն։

— Ուրեմն, թող լինի, ինչ լինելու է...

Նրանք դեռևս ոչինչ չէին ասել «նրան»։

Աննետան երդվում էր իրեն, որ Ֆիլիպին չի պատկանելու, քանի դեռ Նոեմիի հետ չի խոսել։ Բայց կրքի ուժը հաղթեց նրա վճռականությունը։ Կրքի համար չի կարելի ժամ ընտրել, կիրքը ինքն է ընտրում ժամը։ Եվ հիմա արդեն Աննետան էր ետ պահում Ֆիլիպին կնոջ հետ բացատրվելուց։ Աննետային սարսափեցնում էր Ֆիլիպի անողոքությունը։

Ֆիլիպը առանց խղճի որևէ խայթի կարող էր Նոեմիին խաբել։ Նա կնոջն այնքան չէր հարգում, որ իրեն պարտավոր համարեր նրան ճշմարտությունն ասելու։ Բայց եթե Ֆիլիպն ստիպված լիներ ասելու ճշմարտությունը, կասեր առանց խնայելու։ Երբ կիրքը համակում էր նրան, նա սարսափելի մարդ էր դառնում, սոսկալի անգութ։ Կրքից բացի, ոչինչ նրա համար գոյություն չուներ։ Նոեմիի հանդեպ ունեցած

Երա սերը— դա տիրոջ սեր էր՝ թանկ արժեցող ստրկուհու նկատմամբ— փաստորեն Նոեմին նրա համար հենց այդպիսին էլ կար։ Ինչպես շատ կանայք, նա գրա հետ հաշտվել էր. երբ ստրկուհին իր տիրոջը ձեռքի մեջ է պահում, էլ ի՞նչ կարող է համեմատվել նրա իշխանության հետ։ Նա ամեն ինչ է, մինչև այն օրը, երբ դառնում է ոչինչ։ Նոեմին դա հասկանում էր, բայց հաստատ կերպով հաշվի էր առնում իր երիտասարդությունն ու գեղեցկությունը և հույս ուներ, որ այդպես լինելու է դեռ շատ տարիներ։ Իսկ դրանից հետո ուզում է ջրհեղե՞ղ լինի... Բացի դրանից, նա մշտապես զգույշ էր։ Նոեմին գիտեր Ֆիլիպի անցողակի դավաճանությունների մասին, բայց դրանց մեծ կարևորություն չէր տալիս, որովհետև դրանք ճիշտ էր որակում. դրանք ապագա չունեցող կապեր էին։ Վրիժառությունից մղված, նա նույնպես իրեն թույլ էր տալիս որոշ թեթև «զվարճանքներ» և թաքցնում էր ամուսնուց։ Մեն միայն մի անգամ, երբ Ֆիլիպի անհավատարմությունը նրան այրող ցավ պատճառեց, Նոեմին գազազած նրան դավաճանեց, ինչպես պետք էր։ Դա նրան քիչ բավականություն տվեց և նույնիսկ մի քիչ զզվելի էր, բայց գոնե փոխհատուցեց ամուսնուն։ Դրանից հետո նա Ֆիլիպի նկատմամբ դարձավ ավելի քնքուշ։ Եվ նրա գրկում չարախինդ հաճույքով մտովի ասում էր Ֆիլիպին.

«Չէ՞ որ ես քեզ դավաճանում եմ, սիրելիս։ Այո, այո, դու հիմա կոտոշավո՞ր ես։ Քեզ այդպես էլ պե՞տք է...»։

Վախը այն բանից, որ չլինի թե հանկարծ Ֆիլիպն իմանա ճշմարտությունը, ավելի էր սրում հաճույքը։ Իսկ Ֆիլիպը որոշակի ոչինչ չգիտեր, ոչ մի փաստ, բայց կնոջ զեմքին կարդում էր, որ նա իրեն սուտ է, և հասկանում էր, որ եթե նա դեռ չի դավաճանել, ապա համենայն դեպս մտադրվել է դավաճանել։ Նոեմին ամուսնու հայացքներում շանթեր էր նկատում։ Այդ ձեռքերն ընդունակ էին կնոջը կատ-կատո անել... Բայց Նոեմին իրեն հանգստացնում էր այն մտքով, որ ամուսինը ոչինչ չգիտի և երբեք էլ չի իմանա։ Եվ աչքերը փակում էր հեզ աղավնու քնքշանվաղությամբ։ Ֆիլիպը կոպտորեն ասում էր.

— Ի՞նձ նայիր։

Բայց Նոեմին արդեն հասցնում էր աչքերին հանգիստ և անմեղ արտահայտություն տալ։ Ֆիլիպը գիտեր, որ այդ աչքերը սուտ են, և այնուամենայնիվ չէր ընդդիմանում նրանց կախարդանքին։

Նա չէր զայրանում Նոեմիի վրա, բայց եթե նրան բռներ ուրիշի հետ, ոսկորները չարդուփշուր կաներ։ Ֆիլիպը երբեք այդ կնոջից չէր սպասում այն, ինչ նա չէր կարող տալ իրեն. անկեղծություն և հավատարմություն։ Քանի որ Նոեմին դուր էր գալիս իրեն, ապա քանի դեռ նա Ֆիլիպին դուր էր գալիս, ամեն ինչ կարգին էր։ Բայց Ֆիլիպն իրեն իրավատու էր համարում կապերը խզել նրա հետ, հենց որ Նոեմին դադարի իրեն դուր գալուց։

Աննետան Ֆիլիպից ավելի խղճով էր։ Նա, որպես կին, ավելի լավ էր հասկանում, ինչ է կատարվում Նոեմիի հոգում։ Գուցե, Նոեմին կեղծ է և ունայնամիտ, գուցե, նա հավատարիմ չէ Ֆիլիպին, բայց նա Ֆիլիպին սիրո՞ւմ է։ Ոչ, Նոեմիի համար դա խաղ չէր, ինչպես Ֆիլիպն էր հավատացնում։ Նոեմին ներաճել էր նրա մեջ, ինչպես Ֆիլիպի մարմնի մի մասն։ Նոեմին իր սիրո մեջ ներդրել էր ոչ միայն ցանկասիրությունը, այլև սրտի ամբողջ խորությունը, ինչպիսին էլ որ դա լիներ՝ բարի թե չար։ Այո, ինչպիսին էլ ուզում է այդ սիրտը լիներ, սիրո մեջ նշանակություն ունի միայն մի բան. նրա ուժը, այդ տիրական մագնիսը, որը մեկին հարկադրում է մարմնով և հոգով ներաճել մի ուրիշի մեջ։ Նոեմին Ֆիլիպից կառչում էր, ինչպես իր կյանքի նպատակից, ինչպես այն բանից, որը նա ուզո՞ւմ էր, ուզո՞ւմ էր, ուզո՞ւմ էր այդքան տարիներ։ Կինը միշտ չէ, որ գիտե, ինչու է սիրահարվում։ Բայց երբ նա սիրահարվում է, կորվել չի կարող։ Անչափ շատ ուժ ու ցանկություններ է նա վատնած լինում և հեշտությամբ չի կարող դրանք փոխադրել նոր օբյեկտի վրա։ Նա, ինչպես պարազիտային բույս, փաթաթվում է իր ընտրյալի շուրջը։ Եվ որպեսզի նրան պոկեն, ստիպված պետք է լինեն կտրել կենդանի-կենդանի։

Նոեմիին կասկածանքներն սկսեցին տանջել։ Սկզբում սիրտը հազիվ նկատելի, կամաց-կամաց ճմլվում էր։ Նրանց ընտանեկան կյանքում ոչինչ չէր փոխվել. Ֆիլիպը նույնն էր,

ինչպես միշտ,— կոպիտ, լռակյաց։ Նա մշտապես ինչ-որ տեղ էր շտապում, Նոեմիին ականջ էր դնում, առանց նրան լսելու, անընդհատ իր մտքերի հետ էր և աչքերի մեջ տարօրինակ կրակ կար։ Նա այդ շրջանում ամբողջովին կլանված էր մի բավական տհաճ գործով— լրագրային մի անողոք բանավեճով, որին հենց ինքն էլ ծայր էր տվել։ Նոեմին դա գիտեր և ամենևին էլ չէր փափագում, որ Ֆիլիպը նրան հաղորդակից դարձնի իր հոգսերին։ Երբ նա այդպես տարված էր լինում որևէ բանով, ուրիշ ոչնչի մասին մտածել չէր կարողանում և չէր նկատում կնոջը։ Նոեմիին միայն մնում էր սպասել և թույլ տալ, որ Ֆիլիպը պաս պահի. այդպիսի պահերից հետո նա վերադառնում էր կնոջ մոտ ավելի մեծ ախորժակով։ Բայց այս անգամ պասը ոնց որ թե չափազանց երկարեց։ Առաջ Նոեմին այդպիսի դեպքերում սկսում էր զվարճության համար ամուսնու հետ սիրակատակներ անել, իսկ Ֆիլիպը, զայրացած, որ իրեն կտրում են կարևոր մտքերից, կոպիտ հակահարված էր տալիս նրան։ Ու թեև Նոեմին շատ բարձրաձայն վրդովվում էր Ֆիլիպի չորությունից, բայց բոլորովին չէր բարկանում։ Նոեմին նմանվում էր այն երեխային, որը շրխկանի հետ է խաղում. որքան ձայնն ավելի բարձր հնչի, այնքան հաճույքն ավելի շատ... Բայց այս անգամ (կատաստրո՞ֆա) շրխկանը չէր տրաքում... Կոկետության բոլոր հնարքները կպչում էին Ֆիլիպի անտարբերությանը և փշրվում։ Ֆիլիպը դրանք նույնիսկ չէր նկատում... Կասկածը մկան պես անցավ Նոեմիի հոգով, վերադարձավ և հաստատուն կերպով բույն դրեց այնտեղ։ Նա կամաց-կամաց կրծեց, կրծեց մինչև որ հասավ մարմնին։ Վերջապես մի օր Նոեմին ոռնաց...

Մի անգամ առավոտյան նրանք անկողնում պառկած էին կողք-կողքի։ Ֆիլիպի աչքերը բաց էին։ Նոեմին հենց նոր էր արթնացել, բայց քնած էր ձևանում և աննկատելի հետևում էր Ֆիլիպին։ Նոեմին բնազդով նրա դեմքին որսում էր ինչ-որ մի ուրիշի արտացոլումը (քանի որ միտքը առանց մեր գիտակցության ընդունում է այն կերպարի ձևը, որն այդ մտքի մեջ ապրում է)։ Նոեմին իսկույն ևեթ խանդոտությամբ զգաստացավ և, անշարժ պառկած, աշխատելով հավասարա-

չափ շնչել, ինչպես շնչում են քնածները, փակ թարթիչների տակից հայացքով խրվեց ամուսնու մեջ։ Ագահորեն նա ուսումնասիրում էր այդ մարդու դեմքը, որն իրեն այդքան մոտիկ էր և այնքան հեռու, մարդ, որը պատկանում էր Նոեմիին և մշտապես մնում էր օտար։ Ֆիլիպի ազդրը կպած էր Նոեմիի ազդրին, մինչդեռ նրանց անդունդ էր բաժանում... Այո, այո, Նոեմին չսխալվեց, Ֆիլիպը ինչ-որ նոր հոգսեր ուներ, և ոչ գործարարական, ոչ... Հոգսե՞ր արդյոք։ Նա տեսավ, որ Ֆիլիպը ժպտաց... Ֆիլիպն ուրիշ կնոջ մասին էր մտածում... Որպեսզի ամուսնուն պոկի այդ ուրվականից և փորձի իր իշխանությունը նրա վրա, Նոեմին ճրրաց, ինչպես երազի մեջ և երկու ձեռքով գրկեց Ֆիլիպին։ Ֆիլիպը սառնորեն ետ քաշվեց իրեն կպած մարմնից և, կարծելով, թե կինը քնած է, կամացուկ վեր կացավ, հագնվեց և դուրս գնաց։ Նոեմին ոչ մի շարժում չարեց... Բայց հենց որ Ֆիլիպը իր հետևից դուռը փակեց, նա անկողնուց վեր թռավ։ Նրա դեմքը ծամածռվել էր, բռունցքներով նա խփում էր կրծքին, հազիվհազ զսպելով կարոտի և զայրույթի ճիչը։

Այդ րոպեից ի վեր Նոեմին սկսեց լրտեսությունը։ Լարված, սրտի դողով հետևում էր և հոտոտում։ Նոեմիի ձեռքերը քոր էին գալիս, նա այրվում էր իր ախոյանին կտոր-կտոր անելու ցանկությամբ... Օ, կամացո՜ւկ, առանց աղմո՜ւկի... ճանկերով խրվել նրա սրտի մեջ... Սակայն Նոեմին այդ սիրտը չէր գտնում։ Ո՞ւմ կրծքի տակ էր այդ սիրտը թաքնվում... Որսորդի տենդագին փութկոտությամբ, որը անտառում հետևում է գազանին, նա հետախուզում էր ծանոթների շրջանը և, ներկած բերանի հրիտասարդ ժպիտի տակ թաքցընելով սուր ատամները, ուսումնասիրում էր Ֆիլիպի դեմքի յուրաքանչյուր գծիկը, երբ վերջինս կանանց միջավայրում էր լինում, դարանակալում էր նրանցից յուրաքանչյուրի հայացքը, շարժումները, ձայնի երանգը։ Նոեմին կարծես թոկից բռնած ու մարաղ մտած շներ էր պահում իր ներսում, որոնք հոտոտում էին գազանների հետքերը... Բայց այդ հետքը ամեն անգամ կեղծ էր դուրս գալիս։ Գազանը ծլկում էր...

Տարօրինակ կուրացումը, որի պատճառով Նոեմին հենց ամենասկզբից իր հետազոտման տեսադաշտից մի կողմ

քշից Աննետային, շարունակվում էր վերջին շաբաթների ընթացքում նա բոլորովին մոռացել էր Աննետային, որը նրանց տանը չէր երևում. Աննետան իրեն մեղավոր էր համարում և ոչ միայն չէր հպարտանում, այլև, ընդհակառակը, ամաչում էր իր գաղտնի հաղթանակից, իր գողացած երջանկությունից։ Նոեմիից նա խուսափում էր։ Առիթներ դրա համար շատ կգտնվեին, եթե Նոեմին նրան տեսնելու ցանկություն հայտներ։ Բայց Նոեմին այդպիսի ցանկություն չէր հայտնում, նա անչափ շատ տագնապներ ուներ, և ուշ ու միտքը Աննետան չէր։

Ջուր էր Նոեմին աշխատում իրեն համոզել, թե Ֆիլիպի քմահաճույքը կանցնի։ Նրա սառնության ակներև սիմպտոմները ոչ միայն չէին անհետանում, այլև դառնում էին ավելի նկատելի. անտարբեր անուշադրություն դեպի խոսքերը, դեպի դեմքի արտահայտությունը, դեպի կնոջ ներկայությունը, կատարյալ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ։ Եվ դեռ ավելին. երբ Նոեմին համառ կերպով փորձում էր ամուսնուն հիշեցնել իր գոյության մասին, նրա դեմքին ձանձրույթի, բարկության և վատ քողարկված զզվանքի արտահայտություն էր տեսնում, արտահայտություն այնպիսի մի մարդու, որն ուզում է խուսափել տհաճ շփումից...

Նոեմին դողում էր կատաղությունից ու վիրավորված սիրուց։ Նա չէր կարողանում այլևս իրենից թաքցնել գլխին եկած դժբախտության ամբողջ լրջությունը։ Խելագարվում էր։ Ընդ որում, հարկավոր էր նաև մշտապես ճիգերը լարել, որ չմատնի իրեն... Անընդհատ, անընդհատ երևա ուրախ, վրեատահ, մշտապես Ֆիլիպին քաշի խայծի վրա... որին ամուսինը չէ՞ր էլ նայում։

Նոեմիին տանջում էր անորսալի, անհայտ ախոյանի մասին եղած միտքը։ Նրա մեջ կատաղի ատելություն էր բարձրանում դեպի այդ կինը... Ուզում էր զայրույթից գլուխը պատին խփել, որ չի կարողանում բռնել այդ կնոջը... Ջուր էր նա հեռևում բոլոր ծանոթ կանանց։ Բոլոր... բացի Աննետայից։ Ամենից քիչ Աննետային էր կասկածում։ Աննետան ի՛նքն իրեն մատնեց։

Մի անգամ փողոցում, իրենից մի քանի քայլի վրա, նա

նկատեց Նոեմիին, որը դեպի իրեն էր գալիս։ Նոեմին նրան չէր տեսել, նա քայլում էր գլուխը կախ և ցրված նայում շուրջը։ Նրա գեղեցիկ դեմքը մահու չափ գունատ էր և թվում էր ծերացած։ Այդ րոպեին նա չէր հետևում իրեն և շուրջը ոչ ոքի չէր նկատում։ Վերջին ժամանակներս նա դարձել էր մոլագար, որն ընկճված ցասումով մտքում անընդմեջ պատում է հանդիստ չտվող գաղափարի աղացաքարերը։ Աննետային ապշեցրեց Նոեմիի տեսքը։ Նա կարող էր աննկատելի անցնել Նոեմիի կողքով կամ ետ դառնալ։ Բայց շտապելով հանդիպումից խույս տալ, նա սխալ թույլ տվեց. մայթից իջավ և անցավ փողոցի լայնքով։ Դա մի վայրկյան իսխատեց հետիոտների շարժումը և գրավեց Նոեմիի ուշադրությունը։ Նա ճանաչեց Աննետային և հասկացավ, որ Աննետան ուզում է խուսափել հանդիպումից։ Աչքը նրանից չկտրելով, Նոեմին տեսավ, թե ինչպես Աննետան, հասնելով հակառակ մայթը, գողտուկ նայեց իրեն և անմիջապես շրջվեց։ Նոեմիի գլխում կուրացուցիչ կայծակի նման մի բան փայլատակեց. նա՞ է...

Նոեմին շունչը կտրվելով կանգ առավ, եղունգները խրելով ափերի մեջ, առամները սեղմած և մազերը ցցելով։ Նա հիշեցնում էր կատաղի, մեջքը դուրս ցցած կատվի։ Այդ րոպեին նա մարդասպանի աչքեր ուներ։ Ինչ-որ անցորդի հայացք Նոեմիին հիշեցրեց, որ նա ապրում է մի աշխարհում, որտեղ պետք է իրեն ձևացնել և ստել, և որ նա մի րոպե դավաճանել է այդ կանոնին։ Նոեմին վերադարձավ իրականությանը։ Բայց մի տասը քայլ անելուց հետո չդիմացավ և պոռթկաց կատաղի ծիծաղով։ Թշնամին գտնված է... Գաղտնիքը նրա ձեռքո՞ւմ է...

Նոեմիի հանդիպումը Աննետայի տրամադրությունը սաստիկ զցեց։ Ֆիլիպին տրվելու օրից սկսած խիղճը նրան անընդհատ տանջում էր։ Ոչ թե այն պատճառով, որ նա մեղք էր համարում պատկանել նրան, ում սիրում էր։ Նրանց կապում էր իսկական, առողջ, ուժեղ սերը։ Նա ոչ արդարացման կարիք ուներ, ոչ կեղծելու։ Ոչ մի հասարակական պայմանականություններ չէին կարող նրան հաղթել։ Կրքի

այդ տեղի մեջ Աննետայի մտքով չէր էլ անցնում, թե նա ինչ-որ պարտք ունի Նոեմիի առաջ։ Փիլիպի իսկական կինը նա էր, Աննետան, և նա չէր ճանաչում ուրիշին, այն մյուսին, որը ընդունակ չէր եղել Փիլիպի համար աշխատանքի և պայքարի ընկեր լինել, չէր կարողացել Փիլիպին երջանկություն տալ։ Սակայն այդ վստահությունը Աննետային չէր խանգարում հիշել, որ նրա երջանկությունը նվաճված է ուրիշի դժբախտության գնով։ Նա իրեն համոզում էր, որ այդպիսի դատարկ և թեթևամիտ կինը, ինչպիսին Նոեմին է, ընդունակ չէ ուժեղ տառապանքներ ունենալու, որ նա հեշտությամբ կհրաժարվի Փիլիպից։ Բայց հոտառությունը հակառակ բան էր հուշում, և այն, ինչ նա կարողացավ անել, դա պարզապես այն էր, որ դադարեց Նոեմիի մասին մտածելուց։ Առաջին օրերը երջանկության էգոիզմը օգնեց նրան։

Սակայն Նոեմիին հանդիպելուց հետո դա արդեն անհնար դարձավ։ Աննետան ժամված էր իրեն զոհաբերելու դժբախտ ընդունակությամբ և, հակառակ սեփական զգացմունքների, համակվել ուրիշի զգացմունքներով, հատկապես նրանց տառապանքներով, որոնք նա կռահում էր առաջին իսկ հայացքից։

Աննետան տուն վերադարձավ Նոեմիի վշտից ցնցված, վերապրելով այդ վիշտը գրեթե նույնքան սուր, որքան և ինքը՝ Նոեմին։ Նա այլևս չէր կարողանում դատողություններով զսպել ազատել, զինվել սիրո իրավունքներով։ «Նոեմին նույնպես սիրում է։ Եվ տառապում։ Մի՞թե տառապող սերն ավելի քիչ իրավունք ունի, քան տառապանք պատճառող սերը... Ոչ մի իրավունք չունի։ Մեզանից մեկը ստիպված պետք է լինի տառապել։ Ես կամ նա՜...»։

«Նա՜»։ Դեպի Փիլիպն ունեցած կիրքը թույլ չէր տալիս Աննետային ընտրություն կատարելու.... Բայց դա բոլորովին էլ ուրախալի չէր։

Աննետան մտածում էր. «Գոնե պետք է նրա վիշտը չծանրացնե՞լ։ Հանցագործություն է դա այդքան երկարացնել, ինչպես մենք ենք անում, թողնել, որ վերքը թարախակալվի, փոխանակ չդողացող ձեռքով վիրահատելու և

կապելու։ Մենք խույս ենք տալիս ազնիվ խոստովանություններից և ծաղկում, որ Նոեմին ինքը գլխի ընկնի իր դժբախտության մասին— դա և՛ վախկոտություն է, և՛ դաժանություն»։

Աննետան առաջին իսկ օրը Ֆիլիպին հայտարարեց.

— Ես չեմ ուզում թաքնվել։

Նա ինչպե՞ս կարող է, օրից օր զցելով, թույլ տալ այդպիսի անվայել վիճակ... Դրանում մեղավորը դարձյալ իր հոգեկան փափկությունն էր... Նա մի անգամ չէ, որ Ֆիլիպին ասել էր.

—Պետք է Նոեմիին հայտնել։

Բայց երբ Ֆիլիպն ուզում էր այդ անել, նա թույլ չէր տալիս, վախենալով, նրա կոպիտ շիտակությունից։ Այն, ինչ Ֆիլիպը դադարում էր սիրելուց, շարտում էր ինչպես մզած լիմոն։ Հին կապերը նրան նեղում էին։ Նա ասում էր.

— Արի սրան վերջ տանք։

Իսկ Աննետան պատասխանում էր.

— Ոչ, ոչ, միայն թե ո՜չ այսօր։

Աննետան հասկանում էր, թե դա ինչպիսի ցավ կպատճառի Նոեմիին։ Տե՜ր աստված, որքա՜ն ծանր է սպանել մարդկային հոգին։

Ֆիլիպն առանց դրա՜ն էլ մտածելու շատ բան ուներ։ Նրա օրերն անցնում էին լրագրային հարձակումների և հասարակական կարծիքի դեմ մղած կատաղի պայքարում։ Աննետան տեսնում էր, որ հիմա իր հոգսերով Ֆիլիպի գլուխը տանելու ժամանակը չէ։ Ֆիլիպը վտանգավոր կամպանիա էր սկսել։ Նա իր վրա էր վերցրել ծննդաբերության սահմանափակման գործում լիգայի ստեղծման նախաձեռնությունը։ Նա ատելությամբ էր լցված տիրապետող բուրժուազիայի անամոթ կեղծավորության դեմ, այն բուրժուազիայի, որը ամենևին հոգ չտանելով կյանքի հիգիենիկ պայմանների բարելավման և աշխատավորների կարիքները թեթևացնելու մասին, շահագրգռված է միայն նրանում, որ մարդիկ բազմանան՝ իրեն թնդանոթի միս և իր ձեռնարկություններին բանվորական ձեռքեր մատակարարելու համար։ Իսկ իրենք, այդ պարոնայք, չեն ուզում շատ երեխաներ ունենալ, որ-

պեսզի իրենց կյանքը չբարդացնեն և չիամխտեն այդ կյանքի յաբեկեցությունը։ Իսկ այն, որ չչափավորված որդեծնությունը հաստատուն է դարձնում աղքատությունը, հիվանդությունները, ժողովրդի ստրկացումը— դա նրանց չի անհանգստացնում։ Նրանք այդ որդեծնությունը հայտարարել էին կրոնական ու հայրենասիրական պարտք։ Ֆիլիպը չէր կասկածում, որ դուրս գալով դրա դեմ, ինքը թշնամիներ է վաստակում։ Բայց երբեք վտանգը նրան չէր կանգնեցնում։ Նա նետվեց առաջ։ Հակառակորդների ցասումը գերազանցեց նրա սպասումները։

Նա բազմաթիվ մարդկանց համար ատելի դարձավ. ամենից առաջ իր մասնագետ եղբայրակիցների, գիտության քրմերի, ում ինքնասիրությունը, շահերը և գիտական հեղինակությունը վիրավորված էր, այնուհետև իր դուրս մղած մրցակիցների և նույնիսկ որոշ կոմմանակիցների համար, երեսին անողոքաբար շիում էր ճշմարտությունը, քանի որ նա այնպիսի մարդ չէր, որ փովատանքների համար սիրալիրությամբ վճարեր, և երախտագիտությունը չէր պատկանում նրա առաքինությունների թվին։ Նա բոլոր հավանություններն ընդունում էր ըստ պատշաճի և մյուսներին հատուցում ըստ արժանվույն— ուրիշ ոչինչ, իսկ դա շա՜տ չէր։ Բարերարներին նա վերաբերվում էր առանց որևէ հարգանքի— միակ բացառությունը Սոլանժն էր. Ո՞ր ոքի ո՞չ մի արտոնություն։ Այդպիսով, պետք էր սպասել, որ հարձակումները նրա վրա լուժեղ են լինելու, իսկ պաշտպաններ քիչ կգտնվեն։ Ֆիլիպը խանգարում էր այն մարդկանց մանևրներին, ովքեր խդեալների վրա սպեկուլյացիա էին անում։ Ամեն անգամ, հենց որ ազնվացեղ ժուլիկ-ֆիլանտրոպների որևէ հերոսական կազմակերպություն էր ստեղծվում, կարելի էր չկասկածել, որ Ֆիլիպը դուրս կգա դրա դեմ։ Նա ցինիկի բավականությամբ մերկացնում էր առաքինի կեղծավորների խորամանկությունը։ Պատկառելի ոլորտներում գա նրա համար նույնպես խելագարի, անարխիստի, հիմքեր խարխլողի համբավ էր (Scotto voce[1])

1 Շշնջոցով (իտ.)։

ստեղծում։ Այդ քչփչոցները առայժմ դեռ չէին հասել հասարակությանը, Պասկվինոյի՝ ծախու մամուլի, սարսափելի ականջին։ Թշնամիներն սպասում էին հարմար պահի։ Eccolo![1] Հիմա շատ հարմար առիթ պատահեց...

Տեղի ունեցավ հայրենասիրական ջայրույթի պայթյուն։ Գործին խառնվեց մամուլը։ Այդ համընդհանուր վրդովմունքի արձագանքները հասան նույնիսկ պառլամենտին, և այնտեղ անմահ ճառեր ասվեցին ի պաշտպանություն չքավորների մեծաքանակ սերունդ ունենալու իրավունքի։ Մի քանի էնտուզիաստներ օրինագիծ առաջարկեցին. այդ օրինագիծը խստորեն պետք է պատժեր ամեն մի պրոպագանդայի համար, որն ուղղակի կամ անուղղակի պայքարում է հանուն ազգաբնակչության կրճատման։ Ազատամիտ մամուլը ուռեցնում էր որդեծնությունը սահմանափակելու համար Ֆիլիպի բերած փաստարկները և իր շարադրանքում առաջին պլան քաշեց էգոիստական վայելքի մոտիվը, լուծյան մատնելով մարդասիրության մասին եղած նկատառումները։ Դա վարկաբեկում էր Ֆիլիպի բոլոր ելույթները։ Նա կողմնակիցներ ձեռք բերեց հասարակության թշնամիների մեջ։ Իր հակառակորդներին նա պատասխանում էր մի խոշոր թերթի էջերում, պատասխանում էր շատ խիստ և ուղղակիորեն։ Բայց իմբագրություն բողոքի նամակներ թափվեցին, և Ֆիլիպը այդ ամբիոնը կորցնելու վտանգի էր ենթարկվում։ Նա հրապարակային դասախոսություններ էր կարդում, ելույթներ էր ունենում փոքրիկ ժողովներում։ Նա գրոհում էր իր թշնամիների վրա նույնպիսի մոլեգին կրքոտությամբ, ինչպես թշնամիներն իր վրա։ Նրանք զգոն կերպով հետևում էին Ֆիլիպի ամեն բառին, սպասելով, որ Ֆիլիպի որևէ անզգուշությունը իրենց ձեռքը զենք կտա և կօգնի նրան կործանելու։ Բայց նրանց անողոք հակառակորդը սանձում էր իր պոռթկումները և իրեն թույլ չէր տալիս ոչ մի քայլ անցնելու այն բանի սահմանը, ինչ ինքն ուզում էր ասել։ Ֆիլիպն իր համար մեծ հռչակ նվաճեց, նա հիացմունք էր առաջացնում, ծաղր, ատելություն։

---

[1] Ահա նա (իտ.)։

Ճակատամարտից բարձրացած փոշիներում նա շնչում էր ամբողջ կրծքով։

Այդ փոթորիկների մեջ նա կարո՞ղ էր արդյոք մտածել Նոեմիի մասին։

Նոեմին շտապում էր տուն։ Նա մտաբերում էր Ֆիլիպի և Աննետայի առաջին հանդիպումները, որոնք տեղի էին ունեցել իր աչքի առաջ, և ցասումնալից նզովում էր իր հիմարությունը և նրանց խարդավանքը։ Հենց որ նա հայտնվեց իր բնակարանում, ազատություն տվեց կատաղությանը։ Դա կատարյալ պատուհասողմ էր։ Մի ակնթարթում նա ամեն ինչ սրբեց։ Հիմա Նոեմիին արցունքով ողողված, հուսահատական ջղաձգումների մեջ տեսնողը հազիվ կարողանար նրան ճանաչել։ Գեղեցիկ դեմքը ծամածռված էր, նա կծում ու ծվատում էր թաշկինակը, ամուսնու գրասեղանի թղթերը կատարելապես ավերեց, զայրույթը թափեց իր շան գլխին, որի խելքին փչել էր քամվել իրեն, և թուխակի, որին քիչ մնաց խեղդի... Իհարկե, նա կանխատեսորեն դուռը բանալիով փակել էր. ֆուրիայի դեր կատարել կարելի էր միայն փակ դռների հետևում,— չէ՞ որ դա նրան չէր զարդարում։ Դեմքին կոպիտ արտահայտություն էր իջել, կարծես ծերացած և ճմռթված լիներ։ Բայց հայելու մեջ իրեն այդպես կատաղած ու տգեղ տեսնելով, Նոեմին ոչ միայն չվշտացավ, այլև մի տեսակ իրեն թեթևացած զգաց. դա պարզապես վրեժ էր Ֆիլիպի նկատմամբ։ Հետո նա իրեն խղճաց, վշտացավ տգեղացած դեմքի համար։ Այդ խղճահարությունը ցրեց Նոեմիի զայրույթը, և նա, կծկվելով գորգի վրա, սկսեց բարձրաձայն հեկեկալ... Նրա համար քիչ ժամանակ էր մնացել, Ֆիլիպը շուտով պետք է վերադառնար, և Նոեմին աշխատում էր լացել-վերջացնել մինչև ամուսնու գալը. արցունքներից խեղդվում էր, հեկեկում էր կրկնակի բարձրաձայն, արագ և անզուսպ... Նոեմին դեռ փոթորկվում էր, բայց մրրիկը գնալով սկսել էր մեղմանալ։ Անհիշաչար շնիկը մոտեցավ և լիզեց տիրուհու ականջը։ Նոեմին, ողբալով համբուրեց շանը, հետո տեղում ուղղվեց, ոտքը շփելով նստեց գորգի վրա և հանդարտվեց։ Նա մտածում էր։ Հանկարծ

արշում ընդունելով, տեղից ցատկեց, ետ գցեց մազերը, որոնք կախվել էին աչքերին, հավաքեց սենյակով մեկ շաղ տված իրերը, սեղանի վրայի թղթերը նախկին ձևով դասավորեց, հետո խնամքով ու հանգամանորեն երեսը պուդրա քսեց, ներկեց, ուղղեց շրթերը և սկսեց սպասել։

Ֆիլիպը նրան գտավ խաղաղված ու սիրալիր։ Նոեմին սկզբում փորձեց ամենահասարակ զենքը։ Խոսակցության մեջ նա անմեղ տեսքով ճարպկորեն մի քանի գարշելի բառեր ասաց ատելի ախոյանի մասին։ Քաղցր ձայնով մի երկու-երեք նենգ դիտողություններ արեց Աննետայի հասցեին։ Նրա արտաբերին վերաբերող, իհարկե։ Նոեմին համարում էր, որ բարոյական հատկությունները երկրորդական բաներ են. հոգին՝ հոգի, իսկ մերը, այնուամենայնիվ, պահպանվում է դեպի մարմինն ունեցած ցանկությամբ։ Նոեմին մեծ վարպետ էր ուրիշ կանանց գեղեցկությունում որևէ պակասություն հայտնաբերելու մեջ, պակասություն, որը երբ մատնացույց են անում, արդեն հնարավոր չէ մոռանալ։ Այս անգամ նա իրեն գերազանցեց. չէ՞ որ ախոյանին նրա սիրեկանի առաջ վանող տեսքով ի ցույց դնելը հրապուրիչ խնդիր է, ի՞նչ խոսք։

Ֆիլիպը լսեց մինչև վերջը, բայց աչքն էլ չթարթեց։ Նոեմին տակտիկան փոխեց։ Սկսեց Աննետային պաշտպանել, հերքելով մարդկանց ասեկոսեները, գովաբանել նրա առաքինությունները (այդպիսի գովասանքները ոչնչի չեն պարտավորեցնում)։ Նոեմին ուզում էր Ֆիլիպին խոսակցության մեջ քաշել, նրան ստիպել, որ իրեն մատնի, հրապուրելով քաշել նրան դեպի պատրաստված թակարդը։ Բայց նրա գովասանքներին, ինչպես չարախոսություններին, Ֆիլիպը վերաբերվեց անտարբերությամբ։ Նոեմին գործի դրեց կոկետությունն ու սիրախաղերը, փորձում էր Ֆիլիպի մեջ բորբոքել խանդը, ծիծաղով սպառնում էր նրան, որ եթե Ֆիլիպը երբևէ նրան խաբի, Նոեմին ոչ միայն նույն ձևով կվարվի, այլ մի բան էլ ավելին։ Ֆիլիպը նույնիսկ չժպտաց և, ինչ-որ գործ վկայակոչելով, պատրաստվեց գնալու։

Այդտեղ Նոեմին նորից բորբոքվեց։ Նա բղավեց, որ ամեն ինչ ինքը գիտե, որ իրեն հայտնի է Աննետայի հետ ունեցած

նրա կապերը։ Նոեմին սպառնում էր, նախատում, աղաչում, կրկնում, որ ինքնասպանություն կգործի։ Ֆիլիպը միայն թոթվեց ուսերը և, առանց խոսք ասելու, շարժվեց դեպի դուռը։ Նոեմին վազեց նրա հետևից, ուսերից բռնեց, շրջեց իր կողմը և, նայելով նրա աչքերին, բղավելով հարցրեց.

— Ֆիլի՞պ։ Դու ինձ այլևս չե՞ս սիրում...

Ֆիլիպը նայեց նրա երեսին.

— Ո՛չ։

Եվ դուրս եկավ։

Եթե Նոեմին առաջ բռնված էր մոլուցքով, ապա հիմա լրիվ խելքը թռցրել էր։ Մի քանի ժամ շարունակ նա կարծես դառանցանքի մեջ լիներ։ Ծանր ու թեթև էր անում վրիժառության բոլոր միջոցները, մեկը-մյուսից անհեթեթ ու սարսափելի։ Սպանել Ֆիլիպին։ Սպանել Աննետային։ Ինքնասպանություն գործել։ Խայտառակել Ֆիլիպին։ Զրպարտել Աննետային։ Նենգանդամ դարձնել։ Վրան ծծմբաթթու լցնել.... Օ, ի՜նչպիսի հաճույք կստանա, եթե այլանդակի նրան... Վիրավորի նրա պատիվը։ Ստիպի նրան որքու համար տանջվել։ Գրել ուղարկել անանուն նամակներ... Տենդագին շտապողականությամբ Նոեմին խզբզեց մի քանի տող, նամակը պատռեց, նորից սկսեց, պատռեց նորից... Նա հիմա ընդունակ էր ամենը հրդեհելու...

Բայց ոչ մի այդպիսի բան չարեց, կամաց-կամաց հանդրստացավ, ուժերը հավաքեց։ Եվ այն ժամանակ գործի դրեց սիրահարված կնոջ հանճարեղ հնարամտությունը։

Նա հասկացավ, որ Ֆիլիպին ոչինչ անել չի կարող... երբևէ նա վրե՞ժ կլուծի Ֆիլիպից այդ բոլորի համար... Բայց Ֆիլիպը հիմա անխոցելի է։ Ուրեմն, պետք է Աննետայից բռնացնել։ Եվ Նոեմին գնաց Աննետայի մոտ։

Նա դեռ չգիտեր, թե ինչ է անելու, բայց ամեն ինչի պատրաստ էր։ Revolver-ը դրեց պայուսակի մեջ։ Ճանապարհին նա ամեն կարգի տեսարաններ էր մտածում, բայց հետո հրաժարվում էր դրանցից։ Նա բնազդով կռահում էր Աննետայի պատասխանները և դրանց համապատասխան շտկում էր իր պլանը, իսկ հետո, վերջին րոպեին, հանկարծ դա ամբողջովին փոխում էր։ Կատաղությունը մարակում էր նը-

րան, երբ նա, գրեթե վազքով, շնչահեղձ, սանդուղքով բարձրանում էր Աննետայի մոտ։ Պայուսակի կտորի միջով Նոեմին չղաձգորեն սեղմում էր ուսվերը։ Բայց երբ դուռը բացվեց և նա երես առ երես կանգնեց Աննետայի առաջ, իսկույն ամեն ինչ պարզ դարձավ. իր կողմից մի շարժում, որևէ խիստ բառ— և բորբոքված Աննետան ավելի անողոքաբար կկանգնի հանուն իր սիրո պաշտպանության։

Եվ Նոեմիի կատաղությունը ակնթարթորեն շոգիացավ։ Արագ քայլելուց կարմրած ու քրտնամխած, նա ծիծաղելով նետվեց Աննետային գրկելու։ Զարմացած այդ ներխուժումից, Նոեմիի քնքշություններից շփոթահար, Աննետան չարունակում էր զուսպ մնալ։ Սակայն անսպասելի հյուրը, ներս մտնելով, իսկույն, առանց ձևականությունների, գնաց ննջարանը։ Արագ հայացքով հավաստիանալով, որ Ֆիլիպն այնտեղ չէ, նա նստեց բազկաթոռի թևին և սկսեց սիրալիր խոսքեր տեղալ Աննետայի վրա, որը լարված տեսքով կանգնած էր նրա առաջ։ Շաղակրատանքը չդադարեցնելով, Նոեմին մի ձեռքով նույնիսկ գրկեց Աննետայի իրանը, մյուսով քաշքշում էր գլխաշորը։ Եվ անսպասելի ողողվեց արցունքներով... Առաջին րոպեին Աննետային թվաց, թե դա նույնպես խաղ է... Բայց ո՞չ։ Նոեմին լաց էր լինում միանգամայն լուրջ, դրանք իսկական արցունքներ էին...

— Նո՜եմի։ Ի՞նչ է պատահել ձեզ։

Նոեմին չէր պատասխանում և, դեմքը սեղմելով Աննետայի կրծքին, շարունակում էր լաց լինել։ Աննետան, հուզված այդ մեծ վշտից, փորձում էր նրան հանգստացնել։ Վերջապես, Նոեմին բարձրացրեց գլուխը և, հեկեկալով, ցնքաց.

— Ե՞ւ տվեք ինձ նրան։

— Ո՞ւմ,— հարցրեց հանկարծակիի եկած Աննետան։

— Դուք գիտե՞ք։

— Բայց, իսկապես...

— Այո, դիտե՞ք, գիտե՞ք։ Ես նույնպես գիտեմ, որ դուք նրան սիրում եք։ Եվ որ նա ձեզ է սիրում... Ինչի՞ համար դուք նրան խլեցիք ինձանից։

Եվ նորից արցունքներ։ Աննետան ծանրացած սրտով լսում էր, թե Նոեմին ինչպես է աղիողորմ հիշեցնում դեպի Աննետան ունեցած իր վստահության և համակրանքի մասին։ Նա ի վիճակի չէր որևէ բանով առարկելու, որովհետև ինքը նույնպես դատապարտում էր իրեն։ Այդ տրամաբանության հանդիմանությունները, որոնք զերծ էին ամեն տեսակի բորբոքումներից, կպչում էին նպատակին։ Միայն երբ Նոեմին կշտամբանքով ասաց, որ Աննետան չարաշահել է իր բարեկամությունը այն նպատակով, որ իրեն խաբի, Աննետան փորձ արեց արդարանալ։ Նա առարկեց, որ սերը հալել է իր կամքից անկախ և նվաճել է իրեն։ Նոեմին, որին այդ խոստովանությունները բոլորովին չհուզեցին, աշխատում էր դրանց ուրիշ իմաստ տալ. նա ձևացրեց, իբրև թե ինքն էլ է արդարացնում Աննետային, և համարում է, որ ամենամեծ հանցավորը Ֆիլիպն է։ Նոեմին ամուսնու հասցեին վիրավորական բաներ էր ասում։ Այդ ձևով նա ոչ միայն իր զայրույթն էր թափում, այլև ուզում էր Աննետային զզվանք կամ գոնե անվստահություն ներշնչել Ֆիլիպի նկատմամբ։ Բայց Աննետան սկսեց պաշտպանել Ֆիլիպին։ Նա չէր կարող թույլ տալ, որ Ֆիլիպին խաբեբա և գայթակղիչ անվանեին։ Ֆիլիպն ուզում էր գործել ազնվորեն։ Այդ հարցում Աննետան ինքն է մեղավոր, նա՛ չէր թույլ տալիս Ֆիլիպին խոսելու Նոեմիի հետ։ Նոեմին ատելության թունդ պահին ավելի համառ սկսեց մեղադրել Ֆիլիպին, բայց Աննետան չէր նահանջում։ Վեճը կատաղի և կոպիտ բնույթ ստացավ։ Կարելի էր կարծել, որ այդ երկուսից Ֆիլիպի իսկական կինը Աննետան է։ Եվ, ըստ երևույթին, Նոեմին հանկարծ այդ հասկացավ։ Մոռանալով ամեն տեսակի զգուշության, նա զայրույթով ճչաց.

— Ես ձեզ արգելո՞ւմ եմ խոսել նրա մասին։ Այո, արգելում եմ... Նա իմն է։

Աննետան ուսերը թոթովեց.

— Նա ոչ ձերն է, ոչ իմը։ Նա ի՛նքն է իր տերը։

Նոեմին բորբոքված կրկնեց.

— Նա ի՛մն է։

Եվ սկսեց խոսել իր իրավունքների մասին։
Աննետան չոր ասաց.
— Սիրո մեջ ոչ մի իրավունք լինել չի կարող։
Նոեմին կրկին բղավեց.
— Նա իմն է, և ես նրան չե՞մ տա։
Աննետան առարկեց.
— Նա ինձ է սիրում, և դուք չեք կարող նրան պահել։

Երկու կինն էլ բշնամաբար նայում էին միմյանց. Աննետան զրահավորված էգոիզմով և անհերթ վճռակամությամբ, Նոեմին՝ նրան ապտակ հասցնելու ցանկությունից այրվելով։ Նա Աննետային ոտից գլուխ աչում էր։ Նոեմին պատրաստ էր ծաղրուծանակի ենթարկել Աննետայի տգեղությունը, մորթակել նրան ամենադաժան, անուղղելի խոսքերով։ Դա ի՜նչ երանություն կլիներ... Բայց նա գլխի ընկավ, որ դա իր վրա շատ թանկ կնստի,— և զսպեց իրեն։

Նոեմին հանկարծ ճարպկորեն վերցրեց հատակին ընկած պայուսակը և այնտեղից ճանկեց ուլվերը... Ո՞ւմ վրա ուղղել։ Դա նա ինքն էլ դեռ չգիտեր... Իր վրա՞... Սկզբում դա կեղծ էր։ Բայց երբ Աննետան նետվեց դեպի նա և բռնեց Նոեմիի ձեռքը, Նոեմին տարվեց խաղով։ Երկու կանանց միջև սկսվեց պայքար։ Նոեմին չոքեց, Աննետան նրա վրա խոնարհված, կանգնած էր։

Հեշտ չէր այդ խելագարին զսպել։ Հիմա նա իսկապես էլ ուզում էր ինքնասպան լինել... Սակայն, երբ ուլվերը հպվեր Աննետայի կրծքին, ի՞նչ կրքով նա ոտքը կքաշեր... Բայց Աննետան ետ հրեց Նոեմիի ձեռքը, ուլվերը կրակեց, և փամփուշտը մեխվեց պատին։ Նոեմին այդպես էլ չիմացավ, թե փաստորեն ում վրա էր նշան բռնել—իր թե՞ ախոյանի...

Նա ուլվերը ցած դցեց, դադարեց կռվելուց։ Վրա հասավ ներվային ռեակցիան։ Նոեմին սահեց դեպի հատակը՝ Աննետայի ոտքերի մոտ։ Նա, ուժասպառված, հեծկլտում էր, հիստերիան համակել էր նրան։ Դյուրազգաց Աննետան ըստկզբում ենթադրեց, թե Նոեմին տեսարան է խաղում (բայց մի՞թե նման դեպքում կիմանաս, որտեղ է վերջանում խաղը և սկսվում իսկական դրաման)։ Այդ չանաչաժը, ինքնասպանության այդ կարծեցյալ փորձը առաջին րոպեին նրա մեջ

խուլ զրգռվածություն առաջացրեց... Բայց հիմա արդեն հնարավոր չէր կասկածել այդ խեղճ, վշտաբեկ կնոջ առաքինությունը։ Աննետան աշխատում էր պահպանել հատուկամությունը, շրջվեց, բայց ոչինչ չէր օգնում։ Սկսեց ամաչել իր կասկածանքների համար, և նա խոր կարեկցանքի զգացումով ծնկի եկավ Նոեմիի կողքին, պահելով նրա գլուխը։ Նա փորձում էր Նոեմիին հանգստացնել, մայրաբար խոսելով նրա հետ.

— Դե լա՛վ, լա՛վ, անուշիկս... Բավակա՞ն է։ Վի՞րջ տվեք...

Նա իր ուժեղ ձեռքերով գրկեց Նոեմիին և բարձրացրեց հատակից։ Գրկում զգալով հեծկլտոցներից ցնցվող հնազանդ, երիտասարդ մարմինը, Աննետան մտածեց.

«Մի՞թե, մի՞թե իմ պատճառով է մարդն այդպես տառապում»։

Բայց մյուս ներքին ձայնը առարկում էր.

«Իսկ մի՞թե դու չէիր համաձայնի քո սիրո համար վճարել ինչպիսի տառապանքներով էլ ուզում է լինի»։

«Այո, իմ, բայց ո՞չ ուրիշի»։

«Եվ իմ, և ուրիշի։ Ինչի՞ համար ուրիշներին ավելի շատ խնայել, քան ինձ»։

Աննետան նայեց Նոեմիին, որը կիսաուշաթափ ընկած էր իր ձեռքերին... Ինչքա՜ն է նա թեթև... Կարծես թռչնակ լինի... Նրան հանկարծ պատկերացավ, թե դա իր աղջիկն է։ Եվ Աննետան, իրենից անկախ, նրան ավելի ամուր սեղմեց իրեն։ Նոեմին աչքերը բացեց, և Աննետան մտածեց.

«Իսկ եթե նա իմ տղեր լիներ, մի՞թե կվեճար ինձ»։

Նոեմին նայում էր Աննետային ընկճված տեսքով։ Աննետան նրան նստեցրեց բազկաթոռին և, կողքին կանգնած, ձեռքը նրա ճակատին դնելով (Նոեմին ներքնատես սկսեց դողալ զայրալի հպումից, բայց բնազդ դա ցույց չտվեց), հարցրեց այնպիսի մի տոնով, որով խոսում են լացող երեխայի հետ.

— Ուրեմն, դուք շա՞տ եք սիրում նրան։

— Այո, միայն ինքո՞ն ամբողջ կյանքում։

— Ես էլ եմ սիրում նրան։

Նոեմին, խանդից խայթված, շտկվեց տեղում և կոպտորեն ասաց.

— Այո, բայց ես երիտասարդ եմ։ Իսկ դուք... (նա կմկմաց) դուք կյանքից ձերն արդեն վերցրել եք և կարող եք առանց նրա յոլա գնալ։

Աննետան դառնությամբ մտովի մինչև վերջը հասցրեց այն խոսքը, որը Նոեմին բարձրաձայն չասաց. Նա մտածում էր.

«Այո, ես ծերությունից հեռու չեմ գտնվում։ Ահա այդ պատճառով էլ կառչում եմ երիտասարդության վերջին ժամից, երջանկության այս վերջին շողից։ Եվ դա բաց չեմ թողնի ոչ մի դեպքում... էխ, եթե քոնի նման իմ թանկագին երիտասարդությո՜ւնն էլ առջևումս լիներ...

Եվ տխրությամբ ավելացրեց.

«Ես, հավանական է, դա նորից այնպես չէի ապրի, ինչպես պետք է»։

Նոեմին տեսնելով Աննետայի մռայլված դեմքը, վախեցավ, չլինի թե հանկարծ փչացնի գործերը և կորցնի այն մի քիչը, ինչին արդեն հասել է։ Նա շտապելով ասաց.

— Ես միանգամայն հասկանում եմ, որ նա ձեզ սիրում է... Դուք սիրուն եք... (Աննետան մտածեց. «Ստախոս»)։ Ես գիտեմ, որ դուք շատ բաներում ինձանից բարձր եք... Եվ հատկապես նրանում, ինչ Ֆիլիպն այնպես գնահատում է... Եվ ես նույնիսկ չեմ կարողանում ձեզ վրա զայրանալ, որովհետև, ոչինչ հաշվի չառնելով, ձեզ սիրում եմ...

(«Ստախոս։ Ստախոս»,— մտովի կրկնում էր Աննետան)։

—Մեր ուժերը հավասար չեն։ Դա արդարացի չէ, ո՜չ, ո՜չ... Ես դժբախտ կին եմ և միայն կարող եմ լաց լինել։ Ես ոչինչ եմ։ Դա գիտեմ... Բայց ես նրան սիրում եմ, սիրում եմ, և առանց նրա ապրել չեմ կարող։ Ի՞նչ կլինեմ ես, եթե դուք նրան ինձանից խլեք։ Ինչի՞ համար նա ամուսնացավ ինձ հետ,— մի՞թե նրա համար, որ լքի։ Չեմ կարող, չե՞մ կարող ես։ Ամբողջ կյանքը նրա մեջ է, ես ուրիշ ոչ մի թանկ բան չունեմ աշխարհում...

Այս անգամ նա չէր սուտ, և Աննետան նորից նրան խղճաց։ Աննետային բնավ չէին անհանգստացնում ամուսնու

նկատմամբ ունեցած իրավունքների վերաբերյալ Նոեմիի հայտարարությունները. նա չէր ճանաչում մի մարդու իրավունքները մյուս վրա, հավիտենական տիրապետության այդ կոնտրակտները, որոնք կնքում են մարդն ու կինը։ Բայց նրա համար ցավալի էր տեսնել դաժան բնության ծաղրուծանակը, որն իրարից բաժանելով երկու սիրահարներին, երբեք սերը չի սպանում երկուսի սրտերում միաժամանակ, այլ այնպես է անում, որ մեկը դադարի սիրելուց ավելի շուտ, և նա, ով ավելի թունդ է սիրում, միշտ դառնում է զոհ։ Նրա համար նողկալի էր, որ ինքը՝ Աննետան, այդ մեծ տանջարարի գործիքն էր դառել։ Այո, կյանքը պատկանում է ուժեղներին։ Եվ սերը տատանումներ չգիտի։ Նպատակին հասնելու համար նա տրորում է ամեն ինչ։ «Վա՜յ թուլլերին... Բայց ինչո՞ւ ես այդ ասել չեմ կարող։ Ուզում եմ, մինչդեռ խոսքերը լուծո՞ւմ են կոկորդումս։ Զզվե՞լի է, չեմ կարող... Գուցե ես բավականաչափ ուժե՞ղ չեմ սիրում նրան։ Կամ ես արդեն պառավե՞լ եմ, ինչպես Նոեմին ասաց։ Ես թուլլերի կողմն եմ... Ո՜չ, ո՜չ, Ո՜չ։ Այդ բոլորը սուտ է... Ի՞նչ իրավունքով է նա կանգնում իմ երջանկության ու իմ միջև։ Ես Ֆիլիպին չեմ զիջի Նոեմիին։ Թող լաց լինի, ինձ ի՞նչ նրա արցունքները... Ես կանցնեմ նրա վրայով»։

Բայց երբ Աննետան կատաղությամբ նայեց փուված Նոեմիին, վերջինս, որ նույնիսկ արցունքների միջով էլ արթուն կերպով հետևում էր իր ախոյանին, հափռեց բազկաթոռի մեջքին դրած Աննետայի ձեռքը, սեղմեց այդ ձեռքը իր այտին և աղերսանքով ասաց.

— Մի՛ խլեք Ֆիլիպին ինձանից։

Աննետան ուզեց ձեռքը ետ քաշել, բայց Նոեմին ամուր էր բռնել։ Բազկաթոռից փոքր-ինչ բարձրանալով, Նոեմին արդեն երկու ձեռքով կպավ Աննետային և ստիպեց նրան խոնարհվել ու նայել իրեն։

— Մի՛ խլեք նրան ինձանից։

Աննետան ձեռքը պոկեց իրեն կառչած մատներից և զայրույթով ճչաց.

— Ո՜չ, Ո՜չ... Չե՞մ ուզում։ Ես պետք եմ նրան։

Նոեմին կակիծով ասաց.

— Նրան ոչ ոք պետք չէ։ Նա մեկայն իրե՞ն է սիրում։ Առաջ նա ինձանից էր հաճույք ստանում, հիմա՝ ձեզանից։ Նա ձեզ էլ կլքի ինձ նման։ Նա ընդունակ չէ ոչ մեկին կապվելու։

Նոեմին սկսեց խոսել Ֆիլիպի մասին։ Նրա դատողությունները խիստ էին, բայց շատ խորն էին և դիպուկ։ Աննետան ապշած էր նրա մտքի սրությունից։ Այդ փոքր-մոր կինը, որ թվում էր այնքան թեթևամիտ և դատարկ, կարդում էր իր ամուսնու հոգին զայրույթից ու տառապանքից ծնունդ առած նուրբ խորաթափանցությամբ։ Եվ Ֆիլիպի մասին նրա մի քանի դաժան դիտողությունները խիստ համընկնում էին այն երկյուղների հետ, որոնք շատ ավելի վաղ էին ծնվել Աննետայի մեջ։ Աննետան Նոեմիին ասաց.

— Եվ այնուամենայնիվ դուք նրան սիրո՞ւմ եք։

— Սիրում եմ։ Ես նրան պետք չեմ, բայց նա ինձ պետք է... Կարծում եք դա հե՞շտ է—այդպես զգալ մեկի կարիքը և այնուհանդերձ իմանալ, որ դու նրա համար ոչինչ ես, որ նա արհամարհո՞ւմ է քեզ... Ես էլ եմ նրան արհամարհում, արհամարհո՞ւմ եմ։ Բայց չեմ կարողանում առանց նրա ապրել... Եվ ինչի՞ ես նրան հանդիպե՞ցիր։ Ես ինքս ուզեցի նրան։ Ուզեցի և առա... Իսկ հիմա ոչ թե նա, այլ ես եմ նրա ձեռքին... Ախ, եթե ես կարողանայի՛ մոռանալ նրան, և այնպես, որ կարծես երբեք չե՞մ էլ ճանաչել... Ոչ, չե՞մ ուզում... Ես այդքան ուժ չունեմ։ Ես անչափ շատ եմ ներաձել նրա մեջ։ Ամբողջ էությամբ։ Ատո՞ւմ եմ նրան։ Ատո՞ւմ եմ սերը։ Եվ ինչո՞ւ, ինչի՞ համար են մարդիկ սիրահարվում։

Նոեմին ուժասպառված լռեց, աչքերն այս ու այն կողմ շրջելով, ինչպես հետապնդված գազանը, որ փնտրում է, թե որտեղ իրեն փրկի։ Կանայք երկուսով էլ գլուխները կախեցին, կարծես հնազանդվելով ինչ-որ տարերային դաժան ուժի։

Նոեմին համառ ու վհատ կրկին սկսեց նույն երգը.

— Ի՜նձ թողեք նրան։

Աննետան ուրիշի այդ համառ կամքը զգում էր, ինչպես

ծովահրեշի կպչուն շոշափուկներ։ Նա մի անգամ էլ ուժ գըտավ իր մեջ դուրս պրծնել ու բղավել.

— Ջե՜մ ուզում։

Նոեմիի աչքերում փայլատակեց չար կրակը, մատները չղաձգորեն սեղմվեցին։ Բայց նա հեզ ու աղեկտուր ասաց.

— Դե լա՜վ, սիրեցե՜ք նրան։ Եվ թող նա էլ ձե՜զ սիրի։ Բայց նրան մի՜ խլեք ինձանից։ Սկեք երկուսո՜վ էլ նրան պահպանեցե՜ք, դուք և նա։

Աննետան նողկանքով վանեց նրան, և դա Նոեմիին կատաղեցրեց.

— Կարծում եք, ինձ համար զզվելի՞ չէ այդ մասին մտածել։ Դուք ինձ համար գարշե՜լի եք։ Ես ձեզ ատո՜ւմ եմ։ Բայց ես չեմ ուզում Ֆիլիպին կորցնել...

Աննետան շրջվեց նրանից և ասաց.

— Իսկ ես ձեր հանդեպ ոչ մի ատելություն չունեմ։ Ձեզ համար ծանր է, ինձ համար՝ նույնպես։ Բայց բաժանել իրար մեջ սիրելի մարդուն—նողկալի՞ բան է։ Դա հանցագործությո՜ւն է սիրո հանդեպ։ Թող ես զո՜հ լինեմ կամ դահիճ, բայց ատոր և փոքրոգի ես լինել չեմ ուզում։ Ես կեսը չեմ ցանկի՝ պահպանելու համար նրան, ում սիրում եմ։ Ես տալիս եմ բոլորը և ուզում եմ բոլորն ունենալ։ Կամ ոչինչ։

Նոեմին սեղմելով ատամները, մռռվի բղավեց.

«Բայց այդպես քեզ ոչինչ չի մնա»։

(Ասենք, նույնիսկ այդ բաժանումն առաջարկելով, նա նորից հույս ուներ ամբողջովին տիրանալու)։

Բազկաթոռից վեր ցատկելով, Նոեմին վազեց Աննետայի մոտ, ծնկի եկավ, գրկեց նրա ոտքերը.

— Ներեցե՜ք... Ես ի՜նքս էլ չգիտեմ, ինչ եմ ասում, չգիտեմ ինչ եմ ուզում։ Ես դժբախտ եմ և չեմ կարողանում այդ տանել... Ի՞նչ անեմ։ Ասացեք, ի՞նչ անեմ։ Օգնեցե՜ք ինձ։

— Օգնե՞մ ձեզ։ Դուք ինձանից օգնությո՜ւն եք խնդրում։

— Այո, ձեզանի՜ց։ Էլ ո՞ւմ մոտ գնամ, ո՞վ ինձ կօգնի... Ես միայնակ եմ։ Ոչ ոք չունեմ, բացի այդ մարդուց։ Ես նրա առաջ չեմ կարող բացել իմ սիրտը... Իսկ մինչ նա, ես մայր ունեի, որն զբաղված էր միայն իրենով և իր վարձանքներով... Ես ոչ մեկը չունեմ, որի հետ կարու-

դանամ խորհրդակցել... Ես ոչ մի ընկերուհի չունեմ... Երբ ես ձեզ հետ ծանոթացա, կարծեցի, թե ընկերուհու գտա։ Իսկ դուք դարձաք իմ ամենադաժան թշնամին... Ինչի՞ համար դուք այդքան չարություններ արիք իմ դեմ։

— Իմ խեղճ փոքրիկ, մի՞թե ես մեղավոր եմ։ Ես այդ չէի ուզում...— ասաց վշտաբեկ Աննետան։

Նոեմին անմիջապես կառչեց Աննետայի շուրթերից դուրս պրծած սիրալիր բառից։

— Դուք ասացիք «իմ փոքրիկ աղջի՛կ»... Այո, եղե՛ք իմ մայրը, իմ ավագ քո՛ւյրը... Մի՛ կործանեք ինձ։ Սովորեցրեք ի՛նչ անեմ։ Ես չեմ ուզում Ֆիլիպին կորցնել... Ինձ խորհո՛ւրդ տվեք, խորհո՛ւրդ տվեք ինձ... Ես կանեմ այն ամենը, ինչ դուք ասեք...

Նոեմին սառում էր միայն կիսով չափ։ Նա այնքան էր սովոր մշտապես դեր խաղալու, այնքան էր մտնում այդ դերի մեջ, որ արդեն զգում էր նաև այն, ինչ պատկերում էր։ Համենայն դեպս Աննետայի սիրտը շարժելու նրա սերը, ցավը, հույսերը անկեղծ էին, Աննետայի, որից կախված էր ամեն ինչ, ընդհուպ մինչև այն վստահությունը, որ նա արտահայտում էր դեպի Աննետան,— չէ՞ որ դա նրա՝ հուսահատությամբ դրած վերջին խաղաթուղթն էր։ Եվ Նոեմիից չծածկվեց Աննետայի հուզմունքը, որը վերջինս թաքցնել չգիտեր։ Աննետան թուլանում էր։ Նոեմիի անզորությունն ու հրնազանդությունը նրան զինաթափեցին։ Նա իր մեջ առարկելու ուժ չէր գտնում։ Ճիշտ է, Նոեմիին չհաջողվեց նրան խաբել։ Ախոյանի քաղցր-մեղմ ինտոնացիաներում Աննետան կեղծիքն զգում էր։ Նա չէր խանգարում Նոեմիին խոսել, բայց, լսելով, կարդում էր նրա հոգին։ Նա մտածում էր. «Ի՞նչ անել։ Ջո՞հ դառնալ։ Ի՞նչ անմտություն։ Չե՞մ ուզում։ Ես չեմ սիրում այդ կնոջը։ Նա սուտ է ասում, նա ատում է ինձ։ Այո, բայց տանջվում է...»։ Եվ Աննետան շոյում էր իր առջևում չոքած Նոեմիի գլուխը, իսկ վերջինս անընդհատ հեծկլտում էր ու ողբում, միևնույն ժամանակ հետևելով Աննետային, կռահելով նրա տատանումները, հետամուտ լինելով նրան, ինչպես որսին, չունչը կտրվելով ու դողալով՝ մերթ անհանգստությունից, մերթ շատ սուր ուրախությունից։

ժամանակ առ ժամանակ նա շուրթերին էր սեղմում իր ախոյանի ձեռքերը, որոնք հաճույքով կկծոտեր, և առանց հոգնության կրկնում էր իր ուզածը.

— Ֆիլիպին ի՞նձ վերադարձրեք։

Այդ ժամանակ Աննետան, հոնքերը կիտելով, փորձեց նրան ետ հրել։ Նա Նոեմիի աչքերում խորամանկություն էր տեսնում և ցավ, կեղծիք և սեր, լարված սպասում... Վերջապես, տեղի տալով րոպեական թուլությանը, նա քմծիծաղ տվեց (այդ քմծիծաղում և հոգնածություն կար, և կարեկցանք, և նողկանք՝ իր, Նոեմիի և ամեն ինչի նկատմամբ) և, շրջվելով, ասաց.

— Ի՞նչ արած, վերցրեք նրան ձեզ։

Հազիվ էր արտասանել այդ բառերը, Աննետան արդեն ափսոսաց այդ ասելու համար։ Նոեմին տեղից ընդոստ վեր կացավ և նետվեց Աննետային համբուրելու, ողողեց նրան փոթորկուն փաղաքշանքներով... (Դեռ երբեք Նոեմիի առեւտությունը Աննետայի նկատմամբ այդքան ուժեղ չէ՞ր եղել։ Վերջապես նա հանձնվե՞ց... Բայց հանձնվե՞ց արդյոք...)։

Աննետան արդեն ասում էր.

— Ո՛չ, ո՛չ...

Նոեմին կարծես չէր լսում։ Նա Աննետային անվանում էր իր սիրելի, հավատարիմ բարեկամը, նրան հավիտենական երախտագիտության և սիրո երդում էր տալիս։ Նա ծիծաղում էր և լալիս։

Սակայն Նոեմին զուր ժամանակ չէր կորցնում անարդյունք զեղումների համար։ Նա ուզեց իմանալ, Աննետան ինչ է անելու, որպեսզի Ֆիլիպին իրենից հեռացնի։ Աննետան վրդովվեց։

— Ես ձեզ այդպիսի բան չե՞մ խոստացել։

— Ոչ, խոստացա՛ք, խոստացա՛ք...

— Դա պարզապես լեզվիս ծայրից թռավ...

— Բայց չէ որ դուք ինքներդ ասացիք...

— Դուք զոռով պոկեցիք ինձանից այդ խոսքը...

— Ոչ, Աննետա, դուք այնպիսի մարդ չեք, որ ե՛տ վերցնեք ձեր խոսքը։ Դուք ասացիք. «Վերցրեք նրան ձեզ»։

Այո, այո, Աննետա, դուք այդպե՞ս ասացիք։ Դե հաստատ՞ եք, որ այդպես ասացիք։ Դուք չեք կարող դա ժխտել...

— Ախ, թողեք ինձ, թողեք,— հոգնած կրկնում էր Աննետան։— Ես չե՞մ կարող, չե՞մ ուզում։ Բավական է ինձ տանջեք...

Նա նստեց, իրեն ամբողջովին չարդված զգալով։ Իսկ Նոեմին շարունակում էր նրան չարչարել։ Դերերը փոխվեցին։ Աննետան չէր կարող Ֆիլիպից հրաժարվել—սերը նրա մեջ պինդ արմատներ էր գցել։ Իսկ Նոեմին ոչինչ իմանալ չէր ուզում. թող Աննետան սիրի ինչքան ուզում է, միայն թե բաժանվի՞ Ֆիլիպից։ Նոեմին ուզում էր, որ Աննետան հենց այս րոպեիս, առանց հետաձգելու, կապերը խզի Ֆիլիպի հետ։ Իսկ թե ինչպես այդ անել, Նոեմին կարող է ինչքան ուզում եք միջոցներ ասել։ Նա Աննետայի բկին չոքել էր, գործի դնելով կեղծավորությունը, աղերսանքները, համբույրները, նա խլացնում էր Աննետային խոսքերի հեղեղով, դիմում էր նրա սքանչելի սրտին, խնդրում էր, թախանձում, պահանջում, շտապեցնում, թելադրում պատասխանները...

Աննետան նստել էր մի տեսակ ընդարմացած, առանց մի խոսք ասելու։ Նա նույնիսկ փորձ չէր անում այդ հեղեղի դեմն առնել։ Սեղմած շրթունքներ, մոայլ հայացք... Վերջապես Նոեմին լռեց, շփոթված նրա անշարժությունից։ Նա բռնեց Աննետայի ձեռքերը— ձեռքերը սառն էին, խոնավ։

— Դե պատասխանեք, պատասխանե՞ք։

Աննետան առանց Նոեմիին նայելու, մրմնջեց.

— Թողե՞ք ինձ...

Դա ասվեց այնքան թույլ, որ Նոեմին ավելի շուտ նրա շրթունքների շարժումից կռահեց, քան լսեց ասած խոսքերը։ Նոեմին նորից հարցրեց.

— Դուք ուզում եք, որ ես գնա՞մ։

Աննետան դրական գլխով արեց։

— Կգնամ, բայց դուք խոստանո՞ւմ եք։

Աննետան հոգնած կրկնեց.

— Թողեք ինձ, թողեք ինձ... Ինձ հարկավոր է մենակ մնալ։

Նոեմին հայելու առաջ արագ-արագ սանրվածքն ուղղեց և, քայլը գցելով դեպի դուռը, ասաց.

— Մենք բարով .. Բայց հիշիր. դուք խոստացա՛ք...

Աննետան վերջին անգամ փորձեց բողոքել.

— Ո՛չ ես ոչինչ խոսք չեմ տվել...

Նոեմին ցասման նոր բռնկում զգաց։ Իր բոլո՛ր ճիգերից հետո... Բայց բնազդը Նոեմիին հուշեց, որ միտք չունի լարը չափից ավելի ձգել... Միևնո՞ւյն է, գործն արած է։

Նոեմի՛ն գնաց։

Նա իմացավ ախոյանի թուլությունը և համոզված էր, որ նրան ոտքի տակ կտա։

Նոեմիի գնալուց հետո Աննետան որոշ ժամանակ տեղից չէր շարժվում։ Այդ ձգձգված տեսարանից նա վերջում տանջահար էր եղել։ Աննետայի համար ավելի հեշտ կլիներ դիմադրել հանկարծակի գրոհին, եթե նրա ուժերը արդեն սպառված չլինեին կրքի և լարված աշխատանքի կրկնակի ծանրության հետևանքով, իսկ որ գլխավորն է, անընդմեջ տենդի պատճառով, որի մեջ ապրում էր, տենդ, որն առաջացել էր Ֆիլիպի պայքարի մեջ մասնակցություն ունենալուց և այդ մոլեգին հոգու տեր մարդու մտերմությունից։ Այդպիսի ֆիզիկական և հոգեկան ուժասպառության պայմաններում նա ինչպե՞ս կարող էր կռվել իրեն տանջող խրոճի թաքուն խայթոցների դեմ։ Իսկ Աննետայի թուլությունը Նոեմիին ձեռնտու էր։ Նա հանդիպից նախապատրաստված հողի և իր ախոյանի մեջ գտավ դաշնակցի։

Նոեմին առանձին վերցրած մեծ դեր չէր խաղում Աննետայի տագնապների մեջ։ Որպես մարդ, նա Աննետային առանձնապես դուր չէր գալիս։ Որպես ախոյան, միանգամայն տհաճ էր։ Աննետան Նոեմիին համարում էր կեղծ, նենգ, ոչ բարի կին։ Խանդը Աննետային դարձրել էր անարդարամիտ, և նա հիմա Նոեմիին նույնիսկ գեղեցիկ չէր համարում, թեև առաջ նրանով հիացած էր։ Այդ կնոջ մեջ ամեն ինչ Աննետային թվում էր կեղծ,— ամեն ինչ, բացի նրա վշտից։ «Նոեմին թե մի ուրիշը—միևնույն է, դա տառապող մարդ է, տառապող՝ իմ պատճառով...» Եվ տարօրինակ կարեկցանքը մղկտացնում էր Աննետայի սիրտը։

Այդ գիտությունը վերջին տարիներին նրա մեջ զարգացրել էր մարդկային տառապանքների տեսարանը, կարիքը և երկու մահը— Օդեստայի և Ռուիթի։ Դրանք Աննետայի հոգում աղոտ ճեղք էին թողել։ Աննետան դա թուլություն էր համարում, համարում էր հիվանդության նման մի բան և, թերևս, նա իրավացի էր։ Ապրելն անհնարին կդառնար, եթե մենք մեր սրտին մոտ ընդունեինք մարդկային բոլոր վշտերը։ Երջանկությունը գնվում է մեկնումեկի տառապանքի գնով։ Մի կյանքը անվում է մյուսով, ինչպես կենդանի զոհի մարմնում բնակվածը թրթուրները։ Եվ ամեն մեկը ուրիշի արյունն է խմում։ Դեռ վերջերս արյուն էր խմում նաև Աննետան, առանց այդ մասին մտածելու։ Եվ ուրիշի արյան հետ նրա մեջ բերկրություն և ջերմություն էր լցվում։ Քանի դեռ նա երիտասարդ էր, չէր մտածում իր զոհերի մասին։ Այն օրը, երբ նա սկսեց խորհել այդ զոհերի մասին և իրեն ասաց. «Պետք է կարծր լինել»— այդ օրը թուլության և հոգեկան ընկճվածության սկիզբն էր։ Հիմա Աննետան այդ զգաց. նա արդեն չէր կարող կարծր լինել։ Պառավում էր։ Տասը տարի առաջ նա նռեմիի վրայով կանցներ առանց փոքրագույն իսկ տատանման. «Ես երջանկության իրավունք ունեմ։ Վա՛յ նրան, ով ձեռք կմեկնի իմ երջանկությանը...»։ Այն ժամանակ նա ինքնարդարացման կարիք չուներ։ Իսկ հիմա, որպեսզի կյանքից պոկի երջանկության իր բաժինը, նա արդեն պետք է արդարանար իր խղճի առաջ ոչ միայն այդ երջանկությունն ունենալու պահանջով, այլև ինչ-որ մի բանով էլ։ Մի կտոր հաց վաստակելու համար նա դեռ իր մեջ ուժ էր գտնում առանց տատանվելու ճանապարհից հեռացնել պակաս հաջողակ մրցակիցներին. չէ որ հացի այդ կտորը նրան պետք էր որդու համար։ Նրան օգնում էր կենդանական այն բնազդը, որը գազանին ստիպում է պաշտպանել իր ձագուկներին և կերակրել նրանց ուրիշ գազանների մսով։ Իսկ մյուս բնազդը — ինքնապաշտպանության զգացումը, որն ստիպում է վերցնել և պահպանել իր համար այն, ինչ պետք է իրեն,— թուլացել էր և երևան էր գալիս միայն բռնկումներով։ Մա-

սամբ դա մայրությունն էր դուրս մղել և զբաղեցրել նրա տեղը։

Սակայն հիմա, երբ Աննետայի կյանքում վրա էր հասել բեկումը, որդին նրա համար օգնական չէր հանդիսանում։ Ընդհակառակը, որդին նոր տագնապների և խղճի խայթերի պատճառ էր։ Աննետան չէր կարողանում իրեն խաբել. դեպի Ֆիլիպն ունեցած կիրքը դուրս էր մղում որդու մասին եղած մտքերը։ Աննետան իրեն մեղավոր էր զգում Մարկի առաջ և փորձում էր ամեն ինչ նրանից թաքցնել։ Նա գիտեր իր տղային, նա առաջ նույնպես նկատում էր, որ Մարկը խանդից միշտ ճանկերը հանում է այն մարդկանց ներկայությամբ, որոնց Աննետան սիրում է։ Նա որդուն դրա համար չէր մեղադրում, ընդհակառակը, ուրախանում էր, որ Մարկը չի ուզում ոչ ոքի հետ բաժանել մոր սերը։ Բայց հիմա Աննետան պաշտպանում էր իր երջանկությունը— ո՞ւմից... իր երջանկությունի՞ց։ Մի սերը դուրս եկավ մյուս սիրո դեմ։ Իսկ Աննետան չէր ուզում զոհաբերել նրանցից ոչ մեկին։ Եվ քանի որ երկուսն էլ խանդոտ էին, տիրական և նրան համակում էին ամբողջությամբ, ապա Աննետան ստիպված էր լինում այդ սերերից յուրաքանչյուրին թաքցնել մյուսից։ Բայց դա հաջողվո՞ւմ էր արդյոք։ Մարկը Ֆիլիպին տանել չէր կարողանում։ Նա ոչինչ չգիտեր մոր և նրա կապերի մասին (Աննետան դրանում համոզված էր), բայց, գուցե, հոտառությամբ ինչ-որ բան գլխի՞ էր ընկնում... Աննետան ամաչում էր խորամանկություն բանեցնել նրա հետ, բայց նա շատ ավելի ամոթ էր զգում այն մտքից, որ որդին կարող է կասկածի տակ առնել ճշմարտությունը։ Մինչդեռ փաստորեն Մարկը ոչինչ գլխի չէր ընկնում և Ֆիլիպին ատում էր բոլորովին ուրիշ պատճառներով։

Իսկ Ֆիլիպը Մարկին ուշադրության չէր արժանացնում։ Ինքնըստինքյան հասկանալի է, ամուսնանալով Աննետայի հետ, Ֆիլիպը որպես անվճար հավելված կվերցներ նրա ոչ միայն մեկ, այլև երկու կամ երեք երեխաներին. ոչ հոգեբանորեն, ոչ, նյութապես դա նրա համար ոչ մի դեր չէր խաղում, այնպես որ Ֆիլիպին նույնպես շնորհակալություն հայտնելու կարիք չէր լինի։ Նա Մարկի հանդեպ ոչ մի բարյացակամու-

թյուն չէր զգում, նրան համարում էր ոչ հիմար, բայց ծույլ և ոչ բավականաչափ զարգացած։ Ֆիլիպը, անկասկած, կարող էր շատ շուտ Մարկին իր բուռն հավաքել, բայց նրան ոչինչ չէր կապում տղայի հետ, և նա այդ բնավ չէր թաքցնում։ Ֆիլիպը Մարկի մասին և Մարկի հետ խոսում էր բարեհոգի-կոպիտ տոնով, որը Աննետային շատ էր վիրավորում։ Ընտելանալով կյանքի կոպտությանը, Ֆիլիպը գաղափար անգամ չուներ այն մասին, թե ինչպիսի ուշադիր վերաբերմունք է պահանջում նրբին ու հպարտ նատուրան և որքան հեշտ է վիրավորել նրա առաքինի ամաչկոտությունը։ Արտահայտությունների մեջ ոչնչից չամաչելով, Ֆիլիպը մոր ներկայությամբ Մարկին բժշկական խորհուրդներ էր տալիս և կոպտորեն-անկեղծ խրատներ, որոնք սարսափում էին և պատանուն կարմրել, և մորը,— մորն ավելի շատ, քան որդուն։ Ֆիլիպն այն կարծիքին էր, որ երեխաներից ոչինչ չպետք է թաքցնել։ Այդպես էր կարծում նաև Աննետան։ Եվ Մարկը նույնպես։ Բայց այդ բոլորն այդպես չպետք է ասվեր, ինչպես Ֆիլիպն էր ասում։ Աննետան այդպիսի դեպքերում գրեթե ֆիզիկական տառապանք էր զգում, իսկ Մարկը զգում էր իրեն նվաստացած, և նրա հոգում զայրույթ էր կուտակվում։ Նրա և Ֆիլիպի միջև չէր կարող որևէ փոխադարձ համաձայնություն լինել— անչափ տարբեր էին նրանց խառնվածքները։ Հեշտ էր կանխատեսել ապագայի ընդհարումներն ու մշտական տարաձայնությունները։ Աննետայի՝ կրքոտ սիրուհու և քնքուշ մոր համար, այդ միտքը սարսափելի էր։

Նա չուներ մեկը, որից օգնություն կամ խորհուրդ ապասեր, ամեն ինչ պետք է որոշեր ինքը։ Եվ նա էգոիստական որոշում ընդունեց։ Ի՞նչ կա որ, մի՞թե նա իրավունք չունի մտածելու նաև իր մասին։ Բայց իրավունք ունենալը դեռ քիչ է, եթե այդ իրավունքը պաշտպանել չես կարող։ Իսկ նա պայքարո՞ւմ էր արդյոք դրա համար։ Այո, երբեմն պայքարում էր, ինչպես էգ առյուծ, երբ տեսնում էր, որ երիտասարդությունը, երջանկությունը, կյանքը գնում են անվերադարձ... Երջանկությո՞ւնը... Օ, երջանկության մասին այնպիսի մարդու հետ, ինչպիսին Ֆիլիպն է, մտածելու կարիք անգամ չկար։ Բայց Ֆիլիպը կարող էր նրան տալ ինչ-որ

ավելի մեծ մի բան, անհամեմատ ավելի մեծ, քան երջանկությունն է. նա կարող էր տալ լեցուն մի կյանք, հարուստ մտավոր հետաքրքրություններով ու խիզախումներով, ոչ մի անհոգ անդորր, ոչ մի նիրհուն բարօրություն, այլ մոլեգին, մրրիկների և ամպրոպների աշխարհ, աշխարհ գործունեության, պայքարի և՛ հասարակության հետ, և՛ նրա՝ Ֆիլիպի հետ, դժվարին ու հոգնեցուցիչ կյանք, բայց նրա հետ միասին, իսկական կյանք, որն արժե ապրել։ Իսկ երբ ուժերը սպառվեն, նա կմեռնի երջանիկ այն գիտակցությունից, որ իրեն վիճակված է եղել ապրել այդ մռայլ և բեղմնավոր տարիներին, կմեռնի, առանց ափսոսալու, որ բաժանվում է այդ ամենից... Դա հրաշա՛լի էր... Բայց դրա համար ուժեր էին պետք... Իսկ Աննետային այդ ուժերը կբավարարեին, որպեսզի նա, առանց գլուխը կախելու, մինչև վերջը տանի իր վրա վերցրած բեռը։ Բայց ինչպե՞ս բարձրացնել այդ բեռը։ Պետք էր, որ որևէ մեկն օգներ և նույնիսկ մի քիչ հրեր նրան։ Այ, եթե Ֆիլիպը, այդ բեռը Աննետայի շալակը տալով, ներշնչեր նրան, որ այդպես պե՞տք է։ Եթե նա ասեր. «Տա՛ր։ Տար իմ սիրույն։ Դու ինձ անհրաժեշտ ես...»։ Այդ բառը նրան ուժ կտար հաղթահարելու խղճի բոլոր խայթերը... Իսկ նա պե՞տք է արդյոք Ֆիլիպին։ Նա այդ ասաց Աննետային առաջին օրերը, երբ ուզում էր տիրանալ նրան։ Բայց այլևս չէր կրկնել։ Իսկ Աննետան կուզեր այդ լսել նորից ու նորից, որպեսզի հավատա։ Հասատատ։ Նա տեսնում էր, որ Ֆիլիպը լցված է իրենով, սովորել է աշխատել մենակ, կռվել մենակ, խոչընդոտները հաղթահարել մենակ, և տեսնում էր, որ Ֆիլիպը դրանով պարծենում է։ Ֆիլիպն իր համար նվաստացում կհամարեր ուրիշի օգնությանը դիմելը։ Իսկ Աննետան հարցնում էր իրեն. «Ուրեմն, ես նրա ինչի՞ն եմ պետք»։ Սիրո բարերարությունը ոչ միայն նրանում է, որ սերը մեզ հավատ է ներշնչում ուրիշ մարդու նկատմամբ, այլև նրանում, որ մենք հավատ ենք ձեռք բերում նաև մեր հանդեպ։ Թող նա մեզ երբեք չզրկի իր այդ ողորմածությունից։ Բայց Ֆիլիպը հոգեբանական նրբություններից քիչ էր գլուխ հանում։ Մարմնի մեծ բժշկագետը, ինչպես նրա նմանների մեծամասնությունը, չէր

հետաքրքրվում հոգու հիվանդություններով։ Նա գլխի չէր ընկնում այն տարակուսանքների մասին, որոնք կրծում էին իր կողքին պառկած էնոջը։ Մինչդեռ Ֆիլիպը չպետք է նրան դրդեր դեպի այդ տագնապալից մտքերը։ Հարկավոր էր նրա հետ ամուսնանալ, վե՛րջ դնել դրանց. Աննետան հազիվ լսելի Ֆիլիպին շշնջում էր.

— Միասին մեկնե՞նք։ Որպեսզի ես վերադարձի ճանապարհ չունենա՞մ։

Բայց Ֆիլիպը հիմա շտապելու բան չուներ։ Նա հիմա տարված էր, այո, բայց ոչ միայն դեպի Աննետան ունեցած կրքով, այլև ամեն տեսակի ուրիշ կրքերով, որոնք նրա համար շատ ավելի կարևոր էին. իր իդեաներով, պայքարով՝ հանուն այդ իդեաների, բանավեճով, որ զբաղեցնում էր նրա բոլոր մտքերը նույնիսկ այն ժամերին, երբ Աննետան ուզում էր, որ Ֆիլիպը միայն նրա մասին մտածի։ Ֆիլիպը բոլորովին չէր ուզում ընտանեկան սկանդալ առաջացնել և իր ձեռքերը կապել բարձրաձայն ամուսնալուծության պրոցեսով, քանի դեռ մարտից դուրս չէր եկել։ Նա հաստատուն էր մտադրված էր իր պարտքը կատարել Աննետայի առաջ, բայց միայն ոչ հիմա, այլ ավելի ուշ։ Թող Աննետան համբերի՛։ Չէ որ Ֆիլիպը համբերում էր։ Հիմա, երբ նա տերացել էր Աննետային, դոհ էր իրերի դրությամբ և հակված չէր շուտով դա փոխել։ Ֆիլիպը երևակայում էր, որ Նոեմիին նույնպես կընտելացնի հեզության և երկար համբերության։ Նա շատ վստահ էր իր վրա։ Եվ չէր ուզում տեսնել, որ այդպիսի սպասումը անտանելի է երկու կանանց համար էլ...

«Ինչ կա որ, դա բնակա՞ն է,— մտածեց Աննետան։— Տղամարդու կյանքում— ընդ որում սիրո արժանի տղամարդու,— մենք, կանայքս, երբեք այնպիսի տեղ չենք զբաղեցնում, ինչպիսին զբաղեցնում են նրա գաղափարներն ու գործը—դիտությունը, արվեստը, քաղաքականությունը։ Իր միամիտ էգոիզմը նա համարում էր անշահախնդիր, որովհետև տվյալ էգոիզմը այդ գաղափարներին նվիրված լինելու ծնունդ է։ Այդպիսի դատողական էգոիզմն ավելի սպանիչ է, քան սրտի էգոիզմը։ Ինչքան սրտեր է նա կործանել...»

Աննետային չէր զարմացնում Ֆիլիպի վարքագիծը, որովհետև նա կյանքը գիտեր։ Բայց Աննետայի համար դա ցավալի էր։ Նա այդ ցավի հետ կհաշտվեր, գուցե, նույնիսկ, դա հանդուրժեր ինքնահրաժարման գաղտնի կրքով, մի բան, դեպի որը կանայք այնպես հակված են և որը նրանք սիրո հատուցում են համարում։ Բայց այդտեղ բանն ուրիշ էր. այդտեղ խոսքը վերաբերվում էր նրա ինքնահարգմանը, նրա որդու պատվին, որի վիճակը ստորացուցիչ էր։ Այն, որ Ֆիլիպն այդ չէր հասկանում, խիստ վշտացնում էր Աննետային։ Այո, ուշադրությամբ նա աչքի չէ՞ր ընկնում։ Աննետային հայտնի էր, թե Ֆիլիպն ինչ է մտածում կանանց և սիրո մասին։ Ուրիշ կերպ նա մտածել չէր կարող։ Ֆիլիպի ստացած դաստիարակությունը և կյանքի դաժան փորձը նրան այդպիսին էին դարձրել և որպես այդպիսին էլ Աննետան նրան սիրել էր։ Բայց այն ժամանակ նա հույս ուներ, որ Ֆիլիպին կվերափոխի։ Իսկ հիմա տեսնում էր, որ օրըստօրե կորցնում է իր իշխանությունը նրա վրա։

Ամենից վատն այն էր, որ նա կորցնում էր նաև իր վրա ունեցած իշխանությունը։ Աննետան զգում էր, որ իր մեջ մտել է կրքի դևը և նա գնալով ավելի ու ավելի է խլում իր կամքը, ստրկացնում նրան։ Սիրահարների մենամարտը ազնվորեն տարվում է միայն այնքան ժամանակ, քանի դեռ հակառակորդների միջև գոյություն ունի հավասարություն։ Իսկ երբ մեկը հանձնվում է, մյուսը միշտ չարաշահում է իր հաղթանակը, և պարտվածին ստորացումներ են սպասում։ Աննետան ապրում էր պայքարի այդ տանջալից պահը, որը նախորդում է պարտությանը և կանխորոշում է այն. նա գիտեր, որ ուժերը իրեն երկար չեն բավարարի։ Ֆիլիպի վարքագիծը ցույց էր տալիս, որ նա նույնպես դա հասկանում է։ Նա նույն ձևով (իսկ գուցե և ավելի շատ) բարձր էր գնահատում Աննետային, բայց նրա նկատմամբ հիմա ավելի քիչ էր ուշադիր, կոպտորեն օգտվում էր իր հաղթանակի պտուղներից և իրեն պահում էր, ինչպես նվաճողը գրաված մարզում։ Նրա ամբողջ օրերը կլանում էր եռանդուն և համաչափ աշխատանքը, իսկ գիշերները անց էր կացնում Նոեմիի հետ, ցանկանալով պաշտպանել պատշաճությունը։ Այսպիսով,

Աննետայի հետ ունեցած տեսակցությունները լինում էին կարճ, ոչ մի հոգեկան մտերմություն—միայն բուռն փաղաքշանքներ ու զրկախառնություններ։ Իսկ Ֆիլիպը ցինիկորեն հավատացնում էր, իբրև Աննետային բաժին է հասել այն բանի ամենալավը, ինչ ինքը կարող է տալ։

Աննետան ձգտում էր ազատվել ստորացուցիչ ստրկացումից, որին նրան դատապարտել էր սերը։ Բայց այդ սերը օրըստօրե ավելի ու ավելի էր համակում նրան։ Նվ երբ Աննետան ուզեց ազատվել այդ բռնակալությունից, սերն այնպիսի անզսպությամբ ծառս եղավ, որ սարսափը պատեց Աննետային։ Երբ այդպիսի կրակոտ խառնվածքի տեր կինը, որը տասը երկար տարիներ, զսպելով իր կրքերը դաժան ժուժկալությամբ սանձել ու պահել էր դրանց, հանկարծ ամպրոպային ամառվա ամենաստիակեզ ժամին նրանց ազատություն է տալիս, այդ կրքերը կարող են կործանել նրան։

Աննետան իր փրկությունը միայն մի բանում էր տեսնում. ստիպել Ֆիլիպին, որ նրան հարգի, որպես ապագա կնոջ, որպես ընկերուհու «rei humanae atque divinae»[1], որպես հավասարի։ Նա խնդրում էր, թախիծով աղերսում էր Ֆիլիպին իրեն թողնել այնքան ժամանակ, քանի դեռ չեն կարող բացնիբաց սիրել իրար, դառնալ ամուսիններ։ Ֆիլիպն այդ մասին լսել անգամ չէր ուզում։ Նա սիրո մեջ նույնքան ևնսամնձելի էր, որքան և իր հասարակական գործունեության մեջ։ Նա չէր ուզում ոչ սիրային տեսակցություններից հրաժարվել, ոչ ամուսնանալ Աննետայի հետ ավելի շուտ, քան այդ իրեն հարմար էր։ Նա ձևացնում էր, որ իբրև Աննետայի դիմադրությունը անվայել խորամանկություն է համարում, որով նա ուզում է Ֆիլիպին ավելի ամուր կապել իր հետ։ Մինչդեռ Ֆիլիպը գիտեր, թե Աննետան որքան ինքնամոռաց և անշահախնդիր է սիրում։ Այդ վիրավորական կասկածամտությունը Աննետայի վրա ազդեց, ինչպես ապտակ, և նա հնազանդվեց Ֆիլիպին, տրվելով նրան կրքի մոլեգնությամբ և զզվանքով։ Իսկ Ֆիլիպը ոչինչ տեսնել չէր ուզում. գալիս էր, էգոիստորեն ներկայացնում նրան սիրեկանի իր իրավունքները, առանց մտածելու այն մասին, որ

[1] Մարդկային և աստվածային գործերում (լատ.)։

ամեն մի այդպիսի մարմնական հաղթանակը իրեն հնազանդված կնոջ հոգում կարծես խայտառակության դրոշմ է թողնում։

Աննետան իրեն պատվազրկված էր զգում, նրան թվում էր, թե իր սերը անարգության է մատնել, և եթե նա չցատկի այն թեքությունից, որով դեպի ցած է գլորվում կրքով համակված նրա մարմինը, ուրեմն, կործանված է...

Եվ մի գեղեցիկ օր նա ալանում էր։ Գնաց Սիլվիայի մոտ և խնդրեց նրան մի քանի օր Մարկին պահի, քանի որ իրեն անհրաժեշտ է կարճ ժամանակով Փարիզից մեկնել։ Սիլվիան ոչ մի բանի մասին հարցուփորձ չարեց. նրան բավական էր Աննետայի վրա զցած մի հայացքը։ Այդ կինը, որ հաճախ անհամեմատության հասնելու չափ հետաքրքրվող էր և այնքան քիչ էր հասկանում քրոջ հոգեկան կյանքը, նուրբ հոտառություն էր ցուցաբերում, երբ բանը սիրուն և նրա ողբերգական կատակներին էր վերաբերվում։ Աննետայի հետ ունեցած մտերմության օրերին Սիլվիան երբեք նրան չէր հաղորդում իր սիրային գաղտնիքները (նա պատմում էր միայն իր վաղանցիկ հրապուրանքների մասին) և նույն ձևով էլ չէր սպասում, թե Աննետան իր գաղտնիքները կվստահի քրոջը։ Սիլվիան հասկանում էր, որ յուրաքանչյուր կին ունի իր լռության մեծ ժամերը, որոնց մասին նա իրավունք ունի ոչինչ չասել։ Ոչ ոք չի կարող օգնել նրան այդ ժամերն անցկացնելու համար—նա պետք է ինքը իրեն փրկի կամ կործանվի։ Եվ Սիլվիան քրոջն առաջարկեց ապրել Փարիզի արվարձանում ունեցած իր ամառանոցում, որը գտնվում էր Ժուի-ան-Ժոզայի մոտերքը։ Հուզված Աննետան համբուրեց Սիլվիային և համաձայնեց։

Երկու շաբաթ Աննետան պատսպարվում էր անտառեզրին գտնվող գյուղական այդ տնակում։ Նա նույնիսկ Մարկին չասաց, ուր է գնում։ Միայն Սիլվիային էր հայտնի, նա որտեղ է։

Հենց որ Աննետան թողեց Փարիզը, այդ կախարդական շրջանակը, նա պարզորոշ տեսավ, ինչ խելացնորություն էր իրեն համակել վերջին շաբաթներին, և սարսափեց։ Մի՞թե այդ խելագարը, իր ստրկությամբ հարբած այդ ողորմելի

մորկուհին— նա է, Աննետան։ Չէ որ այդպիսի կիրքը հոգին սպանո՞ւմ է... Շղթան կտրվեց։ Այդ երեկո Աննետան շնչում էր ազատ, նա կարծես առաջին անգամ մարգագետին, անտառ տեսավ, զգաց երկրի անդորրը։ Երկու ամիս թանձր, կարմիր մշուշը նրանից ծածկում էր կենդանի աշխարհը։ Նույնիսկ ամենամոտիկը—որդին—մի տեսակ հեռավոր դաբաձավ... Բայց հենց որ նա ոտքը դրեց դաշտերի մեջ գտնվող այդ տունը, մշուշն իսկույն ցրվեց մայր մտնող արևի շողերի մեջ։ Աննետան լսեց զանգերի ղողանջը, թրռչունների երգը, գյուղացիների ձայները և թեթևության զգացումից լաց եղավ... Երեկոյան, հոգնածությունից ջարդված, նա քնեց, բայց գիշերվա կեսին հանկարծ արթնացավ։ Կարոտը խեղդում էր Աննետային։ Նրան թվում էր, թե վզի շուրջը օձի օղակներ են սեղմում։

Օրերն անցնում էին ստորացուցիչ տառապանքների, կույր պոռթկումների մեջ, որոնք փոխվում էին հանկարծակի պայծառության ժամերով, թմբիրը ցրող մտքի կատարյալ լուսավորությամբ։ Աննետային մշտապես տանջում էր վրտանգի նախազգացումը։ Ու թեև նա զգաստ էր և վճռականությամբ զինված, բավական էր մի աննշան բան, որ նա նորից տապալվեր։

Նա որոշեց ապրել այդտեղ ևս մի որոշ ժամանակ։ Դա վտանգավոր էր. իր անսպասելի մեկնումի հետևանքով նա արդեն առանց այդ էլ մի քանի դասեր կորցրեց։ Ոչ մեծաթիվ կլիենտուրան, որին նա այնքան մեծ դժվարությամբ նրվաճել էր, կարող էր գնալ ուրիշների մոտ։ Սիվիան նամակներն ու ամեն տեսակի ծանուցագրերը ուղարկում էր նրան, բայց իրենից ոչինչ չէր ավելացնում, բացի Մարկի առողջությանը վերաբերող բարի լուրերից։ Սիլվիան խորհուրդներ տալուց ձեռնպահ էր մնում, համարելով, որ Աննետան ինքը գիտի ինչ անել։

Աննետան գերազանց հասկանում էր, որ Փարիզ վերադառնալու ժամանակն է, բայց ուղևորման օրը անվերջ հետաձգում էր... Ինչքան էլ նա ուզում է մնար այստեղ, միևնույն է, չէր կարող արգելել իր մտքերին, որ նրանք Ֆիլիպի մոտ չթռչեին։ Նա ի՞նչ է անում։ Փնտրո՞ւմ է արդյոք իրեն։

Նրանից ոչ մի լուր չկար։ Աննետան և վախենում էր և տենչում այդ լուրը։ Նա իր մտքերից վտարեց Ֆիլիպին և կարծում էր, թե ազատվեց։ Բայց Ֆիլիպը նրանից ձեռ չէր քաշում, ով հանկարծ նա հայտնվեց։

Մի անգամ երեկոյան, երբ Աննետան կլանված էր սևեռուն մտքերով, պարապ-սարապ թափառում էր այգու բոխու ծառուղիով, որը ձգվում էր ոչ բարձր ցանկապատի երկարությամբ, նա ճյուղերի արանքից սպիտակ ճանապարհով մոտեցող մի ավտոմոբիլ տեսավ։ Աննետան նույն րոպեին մտածեց. «Սա նա՛ է...»— և թաքնվեց ծառերի հետևում։ Ավտոմոբիլը ցանկապատի երկայնքով գնաց մինչև այգու վերջը։ Աննետան սրտի բաբախյունով ականջ էր դնում նրա դռռոցին և հասկացավ, որ մեքենան ընթացքը դանդաղեցրեց։ Այգուց մի երեսուն մետրի վրա ճանապարհը ճյուղավորվում էր, հենց այդտեղ էլ ավտոմոբիլը կանգ առավ։ Աննետան վճռեց ճյուղերի արանքից նայել և տեսավ մի մարդու մեջք, որն, ըստ երևույթին, անվճռականորեն նայում էր իր շուրջը և հեռուն։ Աննետան այդ մարդուն ճանաչեց։ Սարսափը պատեց նրան. նա նետվեց շիմշիրե ցանկապատի հետևը, ընկավ գետնին, եղունգներով մխրճվեց նրա մեջ։ Աննետան մտածեց. «Նա նորից ինձ կվերցնի»— և արյունը խփեց գլուխը։ Ուզում էր ճչալ. «Ո՛չ», իսկ արյունը ճչում էր. «Այո՛»։ Նրա մատների տակ փշրվում էին չոր հողի կոշտերը, և դեմքը թաղելով թփուտների մեջ, նա ներս էր քաշում արևից տաքացած շիմշիրի դառնավուն հոտը։ Աննետան զուր էր փորձում ականջներում զգացվող աղմուկի միջով լսել ցանկապատի այն կողմը գտնվող ոտնաձայները։ Վերջապես, ավտոմոբիլը շշակեց ու հեռացավ։ Աննետան սլացավ այգու մյուս ծայրը, դուրս վազեց ճանապարհի վրա և բղավեց.

— Ֆիլի՛պ...

Ավտոմոբիլը ծածկվեց ոլորանի հետևում...

Հաջորդ օրը Աննետան մեկնեց Փարիզ։ Նա գիտե՞ր արդյոք, ինչ է ուզում, ի՞նչ է անելու։ Սիլվիան կարեկցությամբ զննեց նրան, միայն ասաց.

— Երևում է, թեթևացա՞ծ չես...

Եվ ուրիշ ոչինչ չհարցրեց։ Աննետան դրա համար նրանից չնորհակալ էր։ Իրեն ջարդված զգալով, նա լուռ նստել էր անկյունում, չերմանալով քրոջ մոտիկությունից։ Իսկ Սիլվիան քայլում էր սենյակում, առանց խոսակցություն սկսելու, որպեսզի քրոջը թույլ տա խաղաղվելու։ Վերջապես, Աննետան վեր կացավ, մոտգրվելով տուն գնալ։ Երբ նրանք հրաժեշտ էին տալիս միմյանց, Սիլվիան ձեռքերով սեղմեց նրա այտերը, երկար հայացքով նայեց Աննետային և, գլուխը ցնցելով, ասաց.

— Եթե ուրիշ կերպ չես կարողանում, հանձնվի՛ր, քեզ վրա բռնություն մի՛ գործադրիր։ Դա կանցնի։ Ամեն ինչ անցնում է—և՛ լավը, և՛ վատը, և՛ մենք ինքներս... Ուրեմն, արժի՞, դատարկ բաների համար տանջվել...

Բայց Աննետայի համար դա բոլորովին էլ դատարկ բան չէր։ Բանը ոչ միայն Ֆիլիպի հետ ունեցած նրա հարաբերություններն էին, այլև Աննետայի վերաբերմունքը հենց իր նկատմամբ։ Ֆիլիպի մոտ վերադառնալու միտքը, իրեն պարտված ճանաչելը գաղտնաբար նրան դառը վայելք էր պատճառում։ Բայց նրան սարսափեցնում էր ուրիշ պարտություն, ավելի խորը,— ներքին պարտությունը, որի մասին գիտեր միայն ինքը։ Նա իր մեջ կրում էր ամենամահացու թշնամուն։ Տարիներ շարունակ Աննետան երբեք չէր մոռանում այդ թշնամուն և միայն հպարտությունից կամ, գուցե, զգուշությունից չէր ուզում մտածել տուփանքների այդ հորձանուտի մասին, որոնք ժառանգված էին իրենից առաջ ապրած մարդկանցից (գուցե հորի՞ց...)։ Այն ամենը, ինչ նրա ուժն ու հպարտությունն էր հանդիսանում, նրա կամքը, նրա առողջ հոգին, ազատ ու մաքուր շնչառությունը, որ ողողում էր նրա թոքերը,— բոլորն այդ հորձանուտն էր ծծում իր մեջ։ Mors animae...[1] Աննետան որը մաքով, գուցեև, չէր հավատում հոգու գոյությանը, չէր ուզում, որ իր հոգին մեռնի։

Կիրքը նորից նրան վերադարձրեց Փարիզ, Ֆիլիպի մոտ, ինչպես թոկով կապած գերուն,— այդպիսի գերիների նա

[1] Հոգու մահ (լատ.)։

տեսել էր աստրական հարթաքանդակների վրա։ Բայց Աննետան Ֆիլիպի հետ չհանդիպեց. նա խույս էր տալիս Ֆիլիպից։

Ֆիլիպը, նույնպես համակված կրքով, ինչպես և Աննետան, նրա բացակայության ժամանակ գալիս էր և դուռը ծեծում։ Նա զայրացած էր Աննետայի հանկարծակի մեկնելու համար։ Նա ոչ մի կերպ հնարավոր չէր համարում, թե Աննետան կհեռանա իրենից։ Ցանկանալով իմանալ Աննետայի հասցեն, նա տեղեկացավ, որտեղ է ապրում Սիլվիան, և գնաց նրա մոտ։ Հենց առաջին հայացքից Սիլվիան ամեն ինչ հասկացավ և Ֆիլիպին պատերազմ հայտարարեց։ Կատաղի անվստահության զրահով ծածկված, Սիլվիան նայում էր Ֆիլիպին ոչ թե Աննետայի աչքերով, այլ իր սեփական. սա, որպես թշնամի, վտանգավոր մարդ է, և շատ ավելի վտանգավոր՝ որպես սիրեկան, քանի որ նա ծվատում է այն, ինչ սիրում է։ Սիլվիան ճանաչում էր այդ ցեղի տղամարդկանց և երբեք այդպիսիների հետ կապ չէր հաստատում։ Ֆիլիպի համառ հարցումներին, թե Աննետան ուր է գնացել, Սիլվիան չոր պատասխանում էր, որ ինքը ոչինչ չգիտե, բայց դրա հետ միասին ակնարկներով նրան հասկացրեց, որ իրեն դա հիանալի հայտնի է։ Ֆիլիպը ճիգեր էր գործադրում իր վրա, որ զայրույթը թաքցնի, փորձում էր Սիլվիայի գլուխը յուղել։ Բայց Սիլվիան մնում էր անդրդվելի։ Եվ Ֆիլիպը կատաղած հեռացավ։

Նա բոլորովին Աննետայի հետևից ընկնելու մտադրություն չուներ, նրա մտքով էլ չէր անցնի ավտոմոբիլով ալանալ ժուի-ան-ժոզա և կուլ տալ ճանապարհի փոշին։ Նա չէր փնտրում Աննետային, մտադիր չէր օրեր վատնելու ապարդյուն որոնումների վրա։ Նա վստահ էր, որ Աննետան կվերադառնա։ Բայց Ֆիլիպն զգում էր նրա կարիքը, և Աննետային չէր ներում, որ նա թույլ է տվել իրեն անհանգստություն պատճառել իր համար այսպիսի մի դժվար ժամանակ։ Աննետայի դեմ ունեցած զայրույթը և, նույնպիսի չափով, ցրվելու սաստիկ պահանջը Ֆիլիպին մղեցին դեպի իր կինը։ Դա ժամանակավոր և բավական ստորացուցիչ

մերձեցում էր տեղակալուհու համար։ Լավը չունենալու պատճառով Ֆիլիպը օգտագործում էր նրան և սպասում մյուսին։

Սակայն Նոեմին կարողանում էր իր ինքնասիրությունը գրպանում թաքցնել, եթե դա ձեռնտու էր իրեն։ Նա ժամանակ չէր կորցնում։ Դառը փորձով սովորած, Նոեմին հիմա գիտեր անցյալում ինչ սխալ է արել։ Նա հիմա հասկացավ, որ տղամարդուն ձեռից բաց չթողնելու համար, միայն սիրո ցանցերը քիչ են։ Հարկավոր էր շոյել նրա փառասիրությունը ու հարմարվել «տարօրինակություններին»։ Եվ Նոեմին զարմացրեց Ֆիլիպին, անսպասելի հետաքրքրություն ցուցաբերելով ամուսնու ձեռնարկած կամպանիայի նկատմամբ, և նույնիսկ չծուլացավ խորամուխ լինել բոլոր մանրամասնությունների մեջ։ Ֆիլիպը կոահում էր կնոջ գաղտնի նպատակները։ Բայց Նոեմիի մասնակցությունը անկեղծ թվ շինծու, Ֆիլիպի համար հաճելի էր։ Նա հաճույքով համոզվում էր, որ կինը խելացի է։ Հիմա Նոեմին այլևս չէր թաքցընում իր խելքը, հիշելով, որ հենց այդ զենքով է Աննատան իրեն հաղթել Նոեմին դա դործի դրեց էլ ավելի սրած։ Նա չէր ձգտում, ինչպես Աննետան, հասկանալ այդ պայքարի էությունը, գատողություն անել դրա մասին։ Դա նրա ամուսնու և տիրոջ գործն էր։ Նոեմին սահմանափակեց իր դերը նրանով, որ Ֆիլիպին հուշում էր ամեն կարգի ճարպիկ քայլեր, որոնք կարող էին ապահովել նրա հաջողությունը։ Ֆիլիպը սքանչանում էր կնոջ հնարամտությամբ։

Այդ ժամանակի ընթացքում բանավեճը լրագրերում ընդունեց ծայր աստիճան կատաղի բնույթ։ Նոեմին հաղթահարեց այն ձանձրույթն ու զզվանքը, որոնք նրա մեջ առաջացնում էին այդ տղամարդկային վեճերը,— նա հասկացավ, որ ինքը վճռականորեն պետք է խառնվի դրան։ Նոեմին սկսեց հանդուգն սրամտությամբ բարձրաշխարհիկ հյուրասրահներում պաշտպանել ամուսնու համարձակ գաղափարները։ Նրա նրբագեղությունը, հումորը, ուրախ կրակոտությունը, տղայական ավյունի և շինծու լրջության զուգակցումը փոքր-ինչ անհարմար վիճակի մեջ էին դնում, բայց միևնույն ժամանակ զվարճություն էին պատճառում բարձրաշխարհիկ հասարակությանը։ Նա իր կողմը գրավեց

մի քանի երիտասարդ դամաների, որոնք շատ էին ուզում ապացուցել, որ իրենք զերծ են նախապաշարմունքներից։ Իսկ խորամանկ Նոեմին զգուշանում էր կապերը նախապաշարմունքների հետ խզել։ Շուայլորեն հյուրասիրելով նրանց անհարգալից մատնազարկերով, նա միևնույն ժամանակ ինդուլգենցիաների անհրաժեշտ պաշար էր հավաքում՝ բարոյականության պահապանների և պատվարժան մարդկանց լացերի համար։ Նոեմին պատկառելի տեսքով քարոզում էր, որ աղքատները իրավունք ունեն երեխաներ չունենալու, բայց դրա փոխարեն պետությանը և հասարակությանը երեխաներ մատակարարելը հարուստների պարտքն է։ Հարկավոր էր քիչ ապլոմբ չունենալ՝ այդպիսի բաներ հայտարարելու համար, քանի որ ինքը Նոեմին ամուսնության յոթ տարվա ընթացքում ժամանակ չէր գտել այդ պարտքը կատարելու համար։ Բայց հիմա նա եկել էր այն եզրակացության, որ ժամանակն է այդպիսի հերոսություն ցուցաբերելու։

Շուտով Ֆիլիպին հայտնի դարձավ Աննետայի վերադարձը։ Նա փորձում էր Աննետային տանը բռնացնել այն ժամերին, երբ Աննետան մենակ էր լինում։ Բայց Աննետան ձեռնարկել էր անհրաժեշտ նախազգուշական միջոցները, և Ֆիլիպը ամեն անգամ դուռը փակ էր գտնում։ Ոչ վիրավորանքը, ոչ զվարճանքները չէին թուլացնում Աննետայի նկատմամբ ունեցած Ֆիլիպի կիրքը։ Նրա դիմադրությունը Ֆիլիպին միայն կատաղեցնում էր։ Նա այնպիսի մարդ չէր, որին կարելի լիներ այդքան հեշտ հրաժարական տալ...

Նրանք պատահաբար հանդիպեցին փողոցում։ Ֆիլիպին մի քանի քայլի վրա տեսնելով, Աննետան գույնը գցեց, բայց չխուսափեց հանդիպումից։ Մոտենալով, Ֆիլիպը վճռականորեն ասաց.

— Դու տո՞ւն ես գնում։ Գնանք միասին։

— Ոչ,— ասաց Աննետան։

Նրանք մտան եկեղեցու մոտ գտնվող փոքրիկ այգին։ Փոշեպատ մի ծառ հազիվ էր նրանց ծածկում բազմաթիվ անցուդարձ անողների աչքից։ Սոխակած էին զսպել իրենց։ Ֆիլիպը խստորեն ասաց.

— Դու ինձանից վախենում ես։

— Ոչ, ոչ քե քեզանից, այլ ինձանից։

Ֆիլիպի հոգում զայրույթն ու սերը կռվում էին։ Բայց երբ նրա մոայլ հայացքը հանդիպեց Աննետայի հայացքին, որը չխուսափեց նրանից, Ֆիլիպն այդ հայացքի մեջ այնպիսի աննկունորեն ճնշվող տառապանք կարդաց, որ զայրույթն իսկույն հալվեց։ Նա հարցրեց արդեն մեղմորեն.

— Դու ինչո՞ւ փախար ինձանից։

— Որովհետև դու ինձ սպանում ես։

— Ինչ է, դու բոլորովին սիրել չգիտե՞ս։

Գիտեմ։ Հենց այդ պատճառով էլ փախա։ Ես վախենում եմ, որ քեզ կսկսեմ ատել։

— Ատի՞ր, ինչքան սիրող ուզում է։ Ատելությունը նույն սերն է։

— Ո՛չ ինձ համար,— առարկեց Աննետան։— Ես դա չեմ կարող տանել։

— Դու այնքան թույլ չես, որ չկարողանաս տանել բոլոր այն լավն ու վատը, ինչ սերն է տալիս։

— Ես թույլ չեմ, Ֆիլիպ։ Բայց ես ուզում եմ, որ ինձ իսկական սիրեն. հոգով և մարմնով, կիսատ-պռատ սեր չեմ ուզում։

— Հոգին ստա բա՛ն է,— ասաց Ֆիլիպը։

— Ահա՛ քե ինչ։ Իսկ ինչին ես տալիս դու քո բոլոր ուժերը։ Ինչի՞ն ես դու քեզ նվիրաբերել գրեթե օրորոցից—մի՞ քե ո՛չ քո գաղափարներին։

Ֆիլիպն ուսերը թոթվեց.

— Ինքնախաբեությո՞ւն է։

— Բայց չէ՞ որ դու այդ գաղափարներով ես ապրում։ Ես նույնպես իմ իդեալն ունեմ, մի՛ սպանիր այդ իդեալը։

— Փաստորեն ի՞նչ ես ուզում ինձանից։

— Ուզում եմ, որ մինչև այն օրը, երբ մենք կորոշենք, դառնալու ենք ամուսիններ քե ոչ, չհանդիպենք։

— Ախր ինչո՞ւ։

— Որովհետև ես չեմ ուզում, չեմ ուզում այլևս թաքնվել, ոչ մի բաժանություն չեմ ուզում, չե՛մ ուզում, չե՛մ ուզում...

Աննետան նրանից թաքցրեց գլխավոր պատճառը։ Սա իրեն ասում էր.

«Եթե ես նորից հանձնվեմ, շուտով իմ մեջ ոչինչ չի մնա նույնիսկ այն բանի համար, որպեսզի ես ինչ-որ մի ուրիշ բան ուզեմ։ Ես կդադարեմ ինքս ինձ պատկանելուց, ես խաղալիք կդառնամ, որին կկեղտոտեն և ապա կը-կոտրեն»։

Ընդունակ չլինելով հասկանալու հոգու այդ բնապղպային ընդվզումը կործանարար մարմնական կրքերի դեմ, Ֆիլիպը դեռ շարունակում էր Աննետայի համառության մեջ տեսնել անվատահությունն ու խորամանկությունը մի կնոջ, որը նրա վզին է փաթաթում իր կամքը։ Ֆիլիպը, ճիշտ է, դա ուզղակի չէր ասում, բայց և չէր թաքցնում, որ այդպես է մտածում։ Կարդալով այդ նրա դեմքին, Աննետան բաւիով վեր կացավ տեղից և ուզեց գնալ։ Բայց Ֆիլիպը դողալով անհամբերությունից ու ճիգերից, որ նա գործագրում էր իր վրա, որպեսզի անցորդների ուշադրությունը չգրավի, ամուր սեղմեց Աննետայի ձեռքը և, աշխատելով ձայնի մեջ մեղմացնել զայրույթի երանգը, ասաց.

— Ես չե՞մ համաձայնվի, ո՞չ մի գնով չեմ համաձայնվի բաժանվել քեզանից։ Ես ուզում եմ քեզ հետ տեսնվել... Լսիր, մի՛ վիճիր... Այստեղ հնարավոր չէ խոսել... Ես քեզ մոտ կգամ երեկոյան։

— Ո՛չ, ո՛չ։

Ֆիլիպը կրկնեց.

— Այո՛, կգամ։ Ես չեմ կարող առանց քեզ ապրել։ Աննետ, դու էլ առանց ինձ։

Աննետան զայրացավ.

— Ես կարող եմ։

— Սուտ՛ ես։

Նրանք վիճում էին առանց ժեստերի, ցածր, բայց խիստ շշուկով, որի մեջ հոգու աղաղակներ էին հնչում։ Ֆիլիպն ու Աննետան խաչաձևեցին իրենց հայացքները։ Ֆիլիպն առաջինը հանձնվեց և աղերսանքով ասաց.

— Աննե՛տա...

Բայց Աննետայի այտերը դեռ այրվում էին ամոթից, որ

իրեն այդքան կոպիտ ստի մեջ մերկացրին, այրվում էին ամոթից, որովհետև իսկապես էլ նա ստել էր։ Նա ուժով ձեռքը խլեց Ֆիլիպից և գնաց։

Երեկոյան Ֆիլիպը եկավ Աննետայի մոտ։ Ամբողջ օրը Աննետան սարսափով սպասել էր այդ րոպեին, վախենալով, որ ինքը Ֆիլիպից փակվելու հաստատակամություն չի ունենա։ Նա այլևս ընդհարվել չէր ուզում այդ դաժան կրքի հետ։ Աննետան համոզվեց, որ հնարավոր չէ կրծքի մոտ այրվող ջահով ապրել։ Պետք էր պոկել այդ ջահը, մի կողմ շպրտել, քանի դեռ կամքի ուժը չէր դավաճանել։ Իսկ կարո՞ղ էր արդյոք դա։ Չէ՞ որ նա Ֆիլիպին սիրում է։ Նա սիրում է այդ կրակը, որն իրեն այրում է։ Վաղը նա կսիրի և իր խայտառակությունը և ծանր վիրավորանքները։ Ամոթից կարմրելով, նա իրեն խոստովանում էր, որ այսօր առավոտյան նույնպես Ֆիլիպի դեմ ունեցած իր ընդվզման մեջ ցանկասիրության ինչ-որ մաս կար...

Աննետան աստիճանների վրա նրա քայլերը զգաց։ Լսեց դռան զանգը, բայց տեղից չշարժվեց։ Ֆիլիպը զանգը երկրորդ անգամ տվեց, հետո սկսեց դուռը բախել։ Աննետան ետ ընկնելով աթոռի թիկնակին և կախելով ձեռքերը, ինքն իրեն կրկնում էր.

— Ոչ, ոչ...

Ասենք, եթե նա նույնիսկ ուզենար էլ վեր կենալ և բացել դուռը,— միևնույն է, չէր կարող. նրա շունչը կտրվում էր...

Դռան հետևում լռություն էր։ Գնա՞ց...

Աննետան ակամայից վեր կացավ, դեռ չհասցնելով որոշում ընդունել։ Տեղում օրորվելով նա ոտքերի ծայրերի վրա դողդոջող մոտեցավ դռանը։ Պարկետը ոտքի տակ ճռռաց։ Աննետան կանգ առավ։ Անցավ մի քանի վայրկյան, ոչինչ չշարժվեց։ Բայց նա զգում էր, որ Ֆիլիպը սուտ է արել դռան հետևում և սպասում է։ Եվ Ֆիլիպը նույնպես գիտեր, որ Աննետան դռան մյուս կողմում կանգնել և ականջ է դնում... Ծանր լռություն էր կախվել։ Երկուսն էլ հետևում էին միմյանց... Վերջապես, Ֆիլիպի ձայնը դռանը կիպ կպած ասաց.

— Աննետա, դու տանն ես։ Բացի՛ր։

Աննետան, պատին սեղմված, կանգնել էր, զգալով ինչպես է սիրտը մարում, և ձայն չէր հանում.

— Ես գիտեմ, որ դու տանն ես։ Թաքնվելու կարիք չկա... Աննետա, բա՜ց արա։ Ես քեզ հետ խոսելիք ունեմ...

Ֆիլիպը ձայնը ցածրացնում էր, որ ասուիճանների վրա իրեն չլսեն։ Բայց խառն զգացմունքների փոթորկուն ալիքը բարձրանում էր նրա մեջ, նա հիմա ընդունակ էր ամեն դուռը ջարդելու։

— Ես անպայման պետք է քեզ տեսնեմ... Ուզում ես ինչ-որ բան ուզում, միևնույն է, ես ներս եմ մտնելու...

Լռություն։

Աննետա, ես այսօր առավոտյան քեզ վիրավորեցի՞ ների՜ր... Դու ինձ պետք ես։ Ի՞նչ ես ուզում։ Ասա ես ամեն ինչ կանեմ...

Լռություն։ Լռություն։

Ֆիլիպը սեղմում է բռունցքները։ Նա պատրաստ է Աննետային խեղդել։

Շուրթերը դնելով բանալու անցքին, նա մռնչում է.

— Դու իմն ես... Դու իրավունք չունես գնալու...

Հետո.

— Լա՜վ մտածիր։ Թեև դու հիմա չբացես,— մեր միջև ամեն ինչ վերջացած է։

Հետո.

— Աննե՜տա։ Սիրելի՜ս։

Նա նորից համբերությունը կորցնում է.

— Վախկո՜տ։ Վախենում ես աչքե՜րիս նայել։ Դու ուժեղ ես միայն փա՜կ դռան հետևում։

Դռան հետևի ձայնը պատասխանում է.

— Ինչի՞ համար ևք ինձ տանջում։

Ֆիլիպը շփոթված լռեց։

Ձայնը հոգնածորեն կրկնում է.

— Բարեկամս, դուք ինձ տանջեցիք։

Ֆիլիպը հուզված է, բայց խոցված ինքնասիրությունը նրան խանգարում է այդ ցույց տալ։ Նա ասում է.

— Ի՞նչ եք ուզում։

Աննետան պատասխանում է.

— Կարեկցությո՛ւն։

Այն ժոնը, որով դա ասվեց, Ֆիլիպի գութը շարժեց։ Բայց նա դեռ շարունակում է չհասկանալ.

— Ախ, աստված իմ, ձեր ինչի՞ն է դա պետք։

Աննետան ասում է.

— Թողե՛ք ինձ։

Ֆիլիպը նորից բորբոքվում է.

— Դուք ինձ քշո՞ւմ եք։

— Ես աղաչում եմ, ինձ հանգիստ թողնել... Հանգի՛ստ... Թույլ տվեք մի քանի շաբաթ ես մենակ մնամ...

— Ուրեմն, դուք ինձ չե՞ք սիրում։

— Ես պաշտպանում եմ իմ սերը։

— Ինչի՞ց։ Ումի՞ց։

— Ձեզանից։

— Խելագարությո՛ւն... Բա՛ց արա...

— Ոչ։

— Ես այդպե՞ս եմ ուզում։ Դու ինձ պետք ես։

— Ես քո սեփականությո՛ւնը չեմ։

Աննետան կանգնած էր, դողալով, բայց հպարտորեն շտկված, և հայացքով նրան մարտահրավեր էր նետում դռան միջից։ Ֆիլիպը, թեև նրան չէր կարողանում տեսնել, բայց կարծես զգաց հայացքը։ Նա բղավեց.

— Մնաս բարո՛վ։

Աննետան լսում էր, ինչպես է նա գնում, և արյունը սառում էր երակներում։ Նա գիտեր, որ Ֆիլիպը չի նեղի։

Եվ Ֆիլիպը չնեղեց։ Նա այլևս չէր գալիս։

Աննետան անվերջ ինքն իրեն ասում էր.

«Այդպես պետք էր։ Այդպես պետք էր...»։

Բայց չէր կարողանում հաշտվել։ Ուզում էր մի անգամ էլ տեսնել Ֆիլիպին և բացատրել նրան — այս անգամ մեղմ (և ինչո՞ւ Աննետան այն ժամանակ այդպես տաքացավ), — որ նա ոչ թե ուզում է Ֆիլիպին լքել, այլ խանդոտորեն պաշտպանում է իր սերը, իրենց սերն ու հպարտությունը, որին Ֆիլիպը, ինքն այդ չգիտակցելով, բիրտ կերպով ոտնատակ է տալիս։ Աննետան ուզում էր, որ նրանք երկուսն էլ հնարա-

վորութ յուն ունենան իրենց մտքերը ժողովելու, ուշները գըլուխներն հավաքեն կրքի հեղեղի միջև, որը նրանց քշումտանում էր փրփուրի և կեղտերի հետ միասին, քննութ յան առնեն և որոշեն ամեն ինչ ազատ, սթափ, պայծառ գլխով։ Եվ եթե Ֆիլիպը ընտրութ յուն անի, նա պետք է հարգի և իր ապագա կնոջը և իր անձը...

Ֆիլիպը չէր ներում այն կանանց, ովքեր հակառակում էին նրա ցանկութ յուններին։ Եթե Աննետան ուրիշ շրջապատի կին լիներ, Ֆիլիպը նրան կտիրանար բռնութ յամբ։ Բայց այն շրջանակում, որին նրանք երկուսն էլ պատկանում էին, Ֆիլիպի ձեռքերը կապված էին, նա հարկադրված էր հարաբերութ յունները չփչացնել այն հասարակութ յան հետ, որտեղ ուզում էր իշխել։ Եվ նրա վիրավորված կիրքը անցավ այդ կրքի կատաղի բացատմանը. եթե կինը նրա համար կորած է —պետք է արմատով դուրս քաշել սրտից նաև դեպի նա ունեցած սերը։ Նա գիտեր, որ դա Աննետայի համար հարված է լինելու։ Բնազդը նրան հուշում էր, որ Աննետան, չնայած այդ ամենին, սիրում է իրեն...

Երեք ամիս տևող հոգին մաշող մենութ յան, իր հետ ունեցած ծանր և տանջալից վեճերի, ինքնահրաժարման և հույսի, հպարտութ յան և զղջումի, համառ և ապարդյուն բաժանումների երեք ամիսներից հետո Աննետան մի օր հանդիպեց Սոլանժին, և վերջինս, ցնծալով, հաղորդեց նրան այն նրջանկութ յան մասին, որը այցելել է, վերջապես, Վիլլար ամուսիններին. Նոեմին հղիացել էր։

Աննետան ցավատանջ սրտի համար ապաստան էր փընտրում որդու մեջ, որդիական այն սիրո մեջ, որը, ինչպես ասում են, երբեք չի դավաճանում։ Ավա՞ղ, Եվ այդ սերն է դավաճանում, ինչպես ամեն մի սեր։ Մարկից չէր կարելի քնքշութ յան որևէ դրսևորում սպասել, նույնիսկ հասարակ հետաքրքրութ յուն դեպի մայրը։ Նա գեթ երբեք Աննետային այդքան սաոը, չոր, անտարբեր չէր թվացել։ Մարկը բոլորովին չէր նկատում մոր տառապանքները։ Ճիշտ է, Աննետան աշխատում էր դրանք թաքցնել նրանից։ Բայց դա նրան այնքա՞ն վատ էր հաջողվում։ Մարկն այդ տառապանքները

կարող էր կարդալ մոր աչքերում, որոնք անքնությունից խորն էին ընկել, նրա գունաթափ դեմքին։ Այդ տառապանքների մասին էին խոսում Աննետայի նիհարած ձեռքերը, նրա ամբողջ մարմինը, որին կրծում էր դաժան կիրքը։ Բայց Մարկը ոչինչ չէր տեսնում։ Նա մոր վրա չէր էլ նայում։ Մարկը իրենով էր զբաղված։ Եվ այն ամենը, ինչ տեղի էր ունենում նրա հետ, թաքցնում էր մորից։ Մայրը նրան հանդիպում էր միայն ճաշի ժամանակ սեղանի մոտ, բայց այդտեղ նույնպես նա լռում էր, ինչպես համրը։ Մարկի հետ խոսակցություն սկսելու Աննետայի փորձերը միայն հանդում էին այն բանին, որ Մարկը ավելի համառ էր ամփոփվում իր լռության մեջ. Մայրը դժվարությամբ հասավ այն բանին, որ որդին առավոտները բարևի իրեն, իսկ փողոցից տուն գալով, ասի. «Բարի երեկո»։ Մարկը դա կոտրատվել էր համարում և այդ զիջումը մոր համար անում էր (այն էլ ոչ ամեն օր) միայն այն պատճառով, որպեսզի իրեն հանգիստ թողնեին։ Նա շտապողաբար, ձանձրացող տեսքով ճակատը մոտեցնում էր մորը՝ համբուրելու համար, իսկ երբ լիցեյ կամ իր գործերով տեղ չէր գնում (դժվար էր նրանից իմանալ, թե դրանք ինչ գործեր էին), փակվում էր իր սենյակում— ճաշասենյակի և ննջարանի միջև գտնվող պահարանի չափ խորդանոցում, և այդտեղ նրան ձեռք տալ արդեն չէ՛ր կարելի։ Սեղանի շուրջը կամ բուխարու մոտ նա նստում էր մոր կողքին օտարի նման։ Աննետան վշտացած ասում էր իրեն.

«Թե մեռնեմ — նա լա՛ց էլ չի լինի»։

Եվ հիշում էր, թե ինչպես մի ժամանակ երազում էր հարազատ մարդու, որդի-ընկերոջ մասին, ստեղծված իր մսից ու արյունից, որը, ապրելով իր կողքին, առանց խոսքի կկռահեր ու կրաժաներ իր սրտի բոլոր գաղտնիքները։ Որքա՜ն քիչ քնքշություն կա այդ տղայի մեջ։ Եվ ինչո՞ւ է նա այդքան չոր։ Երբեմն կարելի էր կարծել, որ Մարկը ինչ-որ բանի համար մոր վրա զայրանում է։ Բայց ինչի՞ համար։ Այն բանի, որ Աննետան անչափ շա՞տ է նրան սիրում։

«Այո, դա իմ հիվանդությունն է—սիրո մեջ ես չա՛փ չգիտեմ։ Իսկ չափից դուրս սիրել—չի կարելի։ Մարդկանց դա բոլորովին պետք չէ։ Դա միայն նրանց նեղում է... Հարազատ որդիս

ինձ չի՞ սիրում։ Նա տենչում է ինձանից հեռանալ... Ես եմ նրան ծնել, բայց նրա մեջ ինձանից այնքա՞ն քիչ բան կա։ Նա զգում է ոչ այնպես, ինչպես ես եմ զգում... Նա ոչինչ չի՞ զգում...»։

Իսկ այդ ժամանակ Մարկի սիրտը լուսավորված էր առաջին սիրո պոեզիայով։ Նա խենթորեն սիրահարված էր Նոեմիին։ Դա մանկական սեր էր, խելացնոր և ամենակուլ։ Տղան հազիվ թե իրեն հաշիվ տա, ինչ է պետք իրեն սիրելի կնոջից. տեսնել նրան, զգալ նրա ներկայությունը, հպվել այդ կնոջը կամ հաճույք ստանալ նրանից։ Նա, իհարկե, չի մտածում սիրելի կնոջը տիրանալու մասին—նա պարզապես համակված է այդ կնոջով։ Մարկը գրեթե ուշագնաց էր լինում, երբ Նոեմին նրան էր մեկնում իր փոքրիկ ձեռքը և Մարկը շուրթերով հպվում էր նրա ձեռքին, ինչպես շան ձագի ագահ քիթը, ներս քաշելով այդ ծաղկի նման քնքուշ ձեռքի բուրմունքի հետ միասին կնոջ հաճելի մարմնի արբեցնող գաղտնիքը։ Նոեմին Մարկի համար ամբողջությամբ թարմ ծաղիկ էր կամ պտուղ։ Նա այդ պտուղը ատամներով զգուշաբար,— մի քիչ միայն— կծելու համար մեռնում էր, մեռնում էր ապրելուց, թե չի դիմանա, կենթարկվի այդ ցանկությանը։ Եվ ահա մի օր (օ՜ խայտառակություն) նա ենթարկվեց այդ ցանկությանը... Հիմա ինչ-որ բա՞ն է լինելու։ Կարմրած, ամբողջովին դողալով, նա սպասում էր ամենավատ բանին. որ նրան բոլորի ներկայությամբ ամոթանք կտան, կնախատեն և կշպրտեն դուրս։ Բայց Նոեմին միայն զրնգուն քրքջաց և ծվաց.

— Ա՜խ դու շնիկ։

Եվ, Մարկի ականջը քաշելով, մի երկու-երեք անգամ Մարկի քիթը խփեց կծած տեղը, կրկնելով.

— Ներողությո՞ւն խնդրիր, անպե՜տք տղա...

Այդ օրից սկսած, Նոեմին խաղ սկսեց երիտասարդ գազանիկի հետ։ Նոեմին ուրիշ մտադրություններ չուներ։ Նրան պարզապես դուր էր գալիս ձիու առնել սիրահարված տղային և դրան ոչ մի նշանակություն չէր տալիս։ Նոեմիի մտքով էլ չէր անցնում, թե տղան դա լուրջ կընդունի։ Իսկ Մարկը

(Ի՞նչ աստիճանի էր նա, այնուամենայնիվ Աննետայի իսկական որդին)— Մարկը դա բնդունում էր ոչ միայն լուրջ, այլև ողբերգորեն։

Այն նույն երեկոյից, երբ Մարկը առաջին անգամ Նոեմիին տեսավ, այդ կինը նրա համար արգելված դրախտ դարձավ, այն հրաշալի տեսիլքը, ինչպիսին կինը պատկերանում է արբունքի հասնող անմեղ պատանու հայացքի առաջ։ Կնոջ կախարդական կերպարը պատանին ստեղծում է այն բանից, ինչ կա, և այն բանից, ինչ իրականության մեջ չկա, այն բանից, ինչ նա տեսնում է, և այն բանից, ինչ ինքը չի տեսնում, չգիտե, ինչ է ցանկանում և վախենում, և ուզում է, և չի ուզում։ Երազանքը ծնված է պատանուն վախ պատճառող այն հրապույրից, որն ստիպում է տղայի դեռատի մարմնին արձագանքել բնության հաղթական և կոպիտ կանչին։ Գուցե Մարկը ինչպես պետքն է չէր էլ նայել Նոեմիի և ոչ մի գծին։ Բայց այն ամենը, ինչից բաղկացած էր նրա կերպարը, յուրաքանչյուր շարժումը, գլխատի ծալքերը, խոպոպները, ձայնը, նրա դուխիների բուրմունքը և աչքերի փայլը,— այդ ամենը Մարկի ծարավի մարմնում և սրտում առաջացնում էր խնդության և հույսի փոթորկուն ալիքներ, երջանկության անձայն ճիչեր, և նա երջանկությունից ուզում էր լաց լինել։

Եվ այդ նույն օրը, երբ խորը կերպով վշտացած Աննետան առանձնահատուկ չոր և սառը թշնամանք զգաց նրա մեջ և անճարպիկ համառությամբ փորձեց պատճառն իմանալ, դուրս քաշել նրանից թեկուզև մի բառ, մի փաղաքշական խոսք, բայց հարուցեց միայն ցավալի հակահարված,— նույն այդ օրը նրա որդին ապրել էր իր կախարդական երազանքի ամենահուզիչ հայտնությունը։ Մի ամբողջ շաբաթ Մարկը կարծես արբեցման մեջ լիներ։ Նա առանց մոր դիտության շարունակում էր տեսնվել Նոեմիի հետ, իսկ Նոեմին օգտագործում էր նրան որպես լրտես. տղան հոգու միամտությամբ տեղեկացնում էր նրան հակառակորդի ճամբարում տեղի ունեցող բոլոր տեղաշարժերի մասին։ Մի անգամ Մարկը նրան հյուրասենյակում գտավ, և Նոեմին, շաղակրատելով ու իրեն նայելով թաշկինակում թաքցրած փոքրիկ հայելու մեջ, կատակով Մարկի դումատ շրթունքներին պո-

մտքա քսեց։ Տղան չդադարեց սիրելի շրթունքների համը։ Այդ ժամանակից ի վեր նա չէր դադարում այդ համը իր լեզվին զգալուց, Մարկը կարծես ամբողջովին այդ շրթունքների բուրմունքով էր ներծծված։ Այդ ալ նուրբ միշտ կիսաբաց, փոքր-ինչ ցցված վերին շրթով, որը չափազանց կարճ էր կամ չափազանց շարժուն և այդ պատճառով չէր միանում ներքին շրթի հետ, և որը հյութեղ էր, ինչպես բալը, ամենուրեք երևում էր նրա ալքին։ Եվ այն առավոտ, երբ մոր մոտից դուրս գալով և կոպտորեն շրխկացնելով դուռը, Մարկը որոշեց ծլկել լիցեյից և գնալ զբոսնելու, այդ շրթունքներն անընդհատ նրա աչքերի առաջ էին, ծաղկում էին Հուլիայան հրաշալի երկնքի ամպերի պարտեզում, փայլատակում էին շատրվանի աշխույժ շիթերի մեջ, կողքով անցնող կանանց ցրված ժպիտներում։ Այդ կիսաբաց բերանը իր մեջ էր քաշում նրա ամբողջ հոգին, նրա բոլոր մտքերը։

Մարկը գնում էր, ինքն էլ չիմանալով, թե ուր, գնում էր շիկահեր գլուխը ծված ամառային քամուն։ Բայց, ինչքան էլ նա ցրված լիներ և կլանված իր խենթ ֆանտազիաներով, նրա լուսանի նման զգոն աչքերը նկատեցին մյուս մայթի վրա Սիլվիա մորաքրոջը։ Մարկը արագ-արագ թեքվեց դեպի անկյունն։ Նա չէր ուզում մորաքրոջ հետ հանդիպել։ Ոչ թե վախենում էր, որ Սիլվիան իրեն կնախատի դասերից փախչելու համար. նա միայն կծիծաղեր դրա վրա։ Բայց Մարկը հիմա իր գաղտնիքն ուներ, իսկ այդպիսի դեպքերում նա մորաքրոջ ներկայությամբ երբեք իրեն անվտանգ չէր զգում։ Նա մոր նման չէր. բնազդը Մարկին հուշում էր, որ Սիլվիան այդպիսի գաղտնիքներ իմանալու վարպետ է։

Սիլվիան Մարկին չնկատեց։ Մարկը թեթևացած շունչ քաշեց։ Հիմա արդեն կարելի է ամբողջ առավոտը թափառել և վայելել իր սիրո մասին ունեցած մտքերը։ Պարապ-սարապ թրև գալով փողոցներում (ընդ որում սերը նրան չէր խանգարում կանգ առնել ցուցափեղկերի մոտ, որպեսզի հիանա մի տեղ փողկապով, մի ուրիշ տեղ ձեռնափայտով և կամ նայի պատկերազարդ ամսագրերը), նա իր համար աննկատելի գնում էր դեպի նպատակ—ինչպես փարիզյան աղավնիները, որոնք ամեն առավոտ թռչում են փոշոտ տների թաղամա-

սերով, փնտրելով ստվերոտ զբոսայգիների թարմությունը։ Մարկը նույն բանն էր փնտրում, նրան իրենց էին քաշում դարավոր ծառերի կամարները, որտեղ այնքան լավ է երազել աղավնիների ղունղունոցի տակ։

Նա իջավ սուրբ Ժենևվևայի բլուրից և, դուրս գալով հնամենի և մարդաշատ փողոցների լաբիրինթոսից, խաղաղ Բուսաբանական այգու լուսավոր տարածություններում հայտնվեց ավելի շուտ, քան ղլխի ընկավ, որ հենց այդտեղ էլ ուզում էր գալ։

Այստեղ, ինչպես միշտ այդ ժամերին, քիչ ժողովուրդ կար։ Միայն հազվադեպ էին զբոսնողներ պատահում։ Փարիզը հեռվում բվվում էր, ինչպես ձիաբոռ։ Շուրջը թափվում էր ամառային պայծառ օրվա լազուրը։ Մարկը ծառերի մի խմբի մեջ առանձնացած նստարան գտավ. նստեց, փակեց աչքերը, ըմոշխնելով իր թանկագին գաղտնիքը։ Պատանու երկար ներվային ձեռքերը սեղմված էին կրծքին, կարծես նա ուզում էր իր սիրտը փակել անհամեստ հայացքներից։ Այդ ի՞նչ գանձ էր, որը նա պահպանում էր այդքան խնամքով, որի մասին հազիվ էր համարձակվում մտածել։ Նոեմիի խոսքերը—նա այդ խոսքերն ասաց, առանց մտածելու, իսկ Մարկը ագահորեն դրանք բունեց և նրանցից մի ամբողջ աշխարհ ստեղծեց... Երբ Մարկը վերջին անգամ նրա մոտ էր, Նոեմին գրեթե չէր նկատում տղայի ներկայությունը և միայն երբեմն-երբեմն մեքենայորեն ժպտում էր Մարկին։ Նոեմին ամբողջ էությամբ զբաղված էր մեծ իրադարձությունների մասին ունեցած մտքերով (Ֆիլիպը նվաճված է, Աննեսան՝ ստորացված— լիակատա՜ր հաղթանակ... Բայց երբեք ոչ մի բանի համար չի կարելի երաշխավորել։ Վաղը ամեն ինչ կարող է փոխվել։ Ինչ կա որ, թեկուզ մի օր, բայց ի՜մն է...»)։ Այդ մտածելով, Նոեմին բավարարված ու հոգնած հառաչեց։ Մարկը հարցրեց, ինչու է նա հառաչում։ Նոեմիին զվարճացրեց տղայի անկեղծ տագնապը և, որպեսզի նրա հետաքրքրությունը շարժի, նոր հառաչանքով ասաց.

— Դա գաղտնիք է...

— Ի՞նչ գաղտնիք։

Նոեմիի գլխում մի դավադիր միտք փայլատակեց։ Նա պատասխանեց.

— Չեմ կարող ասել։ Ի՞նքդ կռահիր։

Հուզմունքից դողալով, Մարկը խնդրեց.

— Ասացե՛ք։ Ես չգիտեմ։

Կոպերը կիսափակելով, Նոեմին Մարկի վրա քնքշանվադուն մի հայացք գցեց.

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ...

Մարկը կարմրելով, ինչ-որ բան մոթմոթաց— նա արդեն վախենում էր այդ գաղտնիքն իմանալ։ Որպեսզի զվարճանքը երկարացնի, Նոեմին դեմքի խորհրդավոր մի շարժում արեց և ասաց.

— Ուզո՞ւմ ես իմանալ։

Մարկի հուզմունքն այնքան մեծ էր, որ նա պատրաստ էր ճչալու.

«Ոչ, չե՛մ ուզում»։

— Դե լա՛վ, միայն թե ոչ այսօր... Ես քեզ ամեն ինչ կպատմեմ մյուս անգամ։

— Ե՞րբ։

— Շուտով։

— Բայց ե՞րբ։

— Շուտով... Մյուս շաբաթ, երբ դու մեզ մոտ ճաշի գաս։

Շաբաթն անցավ։ Եվ ահա այսօր երեկոյան Մարկը հույս ուներ Նոեմիին տեսնելու։ Տղան ապրում էր միայն այդ բոպեի հույսով։ Նա նախապես արդեն քանի անգամ վերապրեց այդ րոպեն իր երևակայության մեջ։ Բայց ոչ մի կերպ սիրտ չէր անում հասնել մինչև վերջը. դա անչափ հուզում էր նրան... Իսկ կեսը կռահելն այնքա՜ն քաղցր էր։ Եվ, զբոսայգում նստարանին նստած, տղան ուժասպառվում էր երանելի անձկությունից։ Ինչ-որ տեղ զանգն ազդարարեց կեսօրը։ Տաուերից այն կողմ, արևից ողողված ծառուղիում ավազը ճրճրթում էր փոքրիկ մի աղջկա ոտքերի տակ։ Աղջիկը դնդնում էր։ Փոքր-ինչ հեռվում ինչ-որ էկզոտիկ թռչուններ ոլերի մեջ ծլվլում էին իրենց տարօրինակ և հուզիչ լեզվով, իսկ բոլորովին հեռվում, Սենայի վրա, երկար ու ձիգ ոռնում էր բուքսիրային շոգեքարշի շչակը։ Մարկի կողքով, նրան

չնկատելով, անաղմուկ ու դանդաղ, գրկախառն անցավ սիրահարների մի զույգ— բարձրահասակ թխահեր մի աղջիկ և երիտասարդ գունատ մի բանվոր։ Նրանք քայլելիս համբուրվում էին և ագահաբար նայում միմյանց աչքերին։ Մարկը, շունչը պահած, հայացքով նրանց ուղեկցեց մինչև ծառուղու ոլորանը, իսկ երբ նրանք տեսադաշտությունից ծածկվեցին, երջանկությունից բռնկվեց, այն երջանկությունից, որը հենց անցավ իր կողքով, և այն, որը իր համար գալու է,— երջանկությունից, որը մարմնավորված էր այդ երիտասարդ զույգի մեջ, որով շնչում էր Հուլիայան վեպորը և շուրջն ամեն ինչ, որը լցնում էր սիրուց այրվող և ամեն ինչի համար բաց նրա սիրտը։

Մարկը վերադարձավ տուն, թևավորված էքստազի այդ րոպեներով, էքստազ, որն անսահմանորեն ավելի սքանչելի էր, քան նրան ծնունդ տվող կանացի կերպարը։ Նոեմիի սովերը լուծվեց այդ ոսկե հեղեղի մեջ, և նորից այդ սովերը հարուցել կարելի էր միայն կամքի ճիգերով։ Մարկն այդ ուզում էր, բայց սովերը խույս էր տալիս նրանից։ Տղան ինքն իր հետ խորամանկում էր, երևակայելով, թե իբրև ճանաչում է նրան այդ երջանկության կերպարանքով, երջանկություն, որ ցավ պատճառելու աստիճանի սուր է, ճանաչում է այն ամենի մեջ, ինչը լցնում էր նրա հոգին,— ճանաչում էր հույսերում, հերոսական որոշումների մեջ, իր ուժի և բարության այն գիտակցության մեջ, որը, ինչպես թևերի վրա, տանում էր նրան, երբ նա սուրում էր ամենաուղղի ի վեր, չորս աստիճանը մի լոք անելով։ Բայց հենց որ Մարկը հանդիպեց մոր խստատես հայացքին (նա երեք քառորդ ժամ նախաճաշից ուշացել էր), իսկույն ոսկե շղշղոդանքը հանգավ, և նա նորից ծածկվեց մոայլ լռության թուխպերի մեջ։

Աննետան չէր էլ փորձում Մարկի հետ խոսակցություն սկսել։ Նա ուներ իր ճնշոդ թախիծը, որը ոչ ոքի հետ կիսել չէր կարող։ Որդին, իր դիմացը սեղանի մոտ նստած, Աննետային սառը էգոիստ էր թվում։ Նա ագահորեն ուտում էր, որովհետև սաստիկ սոված էր ու նաև այն պատճառով, որ ուզում էր շուտ վերջացնել և նորից սուզվել իր երազանքների մեջ։ Աննետան նայում էր նրան և մտածում.

«Ես նրա համար միայն մի մարդ եմ, որը կերակրում է իրեն,— և ուրիշ ոչինչ»։

Աննետան այլևս բողոքելու ուժ չուներ։ Նա իրեն լքված էր զգում բոլորի կողմից։ Նախաճաշի վերջում Մարկը հանկարծ գլխի ընկավ, որ մորը ոչ մի խոսք չասաց։ Նա մի քիչ սպասեց, բայց որպեսզի հարցուփորձի առիթ չտա, վախից խոսակցություն չսկսեց։ Մի կերպ անձեռոցիկը ծալելով ու խրելով օղակի մեջ, նա տեղից արագ վեր կացավ, խուսափելով մոր աչքերից, և գնաց դեպի դուռը... Արդեն ուզում էր դուրս գալ, երբ հանկարծ մի միտք պահեց Մարկին... Նա հարցրեց։

— Այսօր մենք Վիլլարների մո՞տ ենք գնալու։

Նա դրանում համոզված էր—չէ որ Նոեմին այդպե՛ս ասաց, բայց ուզեց մի ավելորդ անգամ էլ համոզվել։

Աննետան դեռ վհատ ու անշարժ նստած էր սեղանի մոտ։ Որդուն առանց նայելու, նա պատասխանեց.

— Ոչ մի տեղ էլ չենք գնալու։

— Մարկը, շշմած քարացավ շեմին։

— Ինչպե՞ս թե, իսկ ինձ ասացին...

— Ո՞վ ասաց քեզ։

Տղան շփոթահար լռում էր։ Մայրը չգիտեր, որ նա այցելություններ է անում Նոեմիին։ Առանց պատասխան ստալու, նա շտապեց մոր ուշադրությունը շեղել ուրիշ հարցով։

— Իսկ երբ ենք գնալու նրանց տուն,— հարցրեց Մարկը՝ հիասթափված տոնով։

Աննետան ուսերը թոթվեց։ Հիմա Վիլլարների մոտ ճաշելու մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Նոեմին կատակով Մարկին ասաց. «Մյուս շաբաթ», ինչպես կարող էր ասել՝ «Հարյուր տարի հետո»...

Մարկը բաց թողեց դռան բռնակը և անհանգստացած գնաց դեպի սեղանը։ Աննետան նայեց նրան և, նկատելով, որ որդին վշտացած է, ասաց.

— Չգիտեմ։

— Ինչպե՞ս թե չգիտես։

— Վիլլարները մեկնել են,— բացատրեց նա։

Մարկը բղավեց.

— Ճի՞շտ չէ։

Աննետան, թվում էր, չլսեց։ Մարկը անհամբերությամբ հավելց սեղանին դրած մոր ձեռքերին և աղերսեց.

— Չէ՞ որ դա ճիշտ չէ։

Աննետան թմրությունից սթափվեց, վեր կացավ և սկսեց սեղանը հավաքել։

— Բայց ո՞ւր, ո՞ւր են մեկնել նրանք,— ցնցված, ուզում էր իմանալ Մարկը։

— Չգիտեմ,— կրկնեց Աննետան։

Նա ամանեղենը հավաքեց և դուրս եկավ։

Մարկը կանգնել էր իրեն լրիվ կորցրած։ Նրա երազանքը փլվե՞լ էր։ Ոչինչ չէր հասկանում... Այդ հանկարծակի մեկնումը, առանց նախազգուշացման... Չի՞ կարող պատահել։ Նա ուզում էր վազել մոր հետևից, նրանից բացատրություն դուրս կորզելու... Բայց հանկարծ կանգ առավ... Ոչ, դա ճի՞շտ չէ։ Նա միայն նոր գլխի ընկավ. մայրը նկատեց, որ ինքը սիրահարված է, և ուզում է իրենց բաժանել։ Մայրը ատում է, ատո՞ւմ է։ Նոեմին ոչ մի տեղ էլ չի գնացել... Այդ րոպեին Մարկը մորն ատում էր։

Նա դուրս վազեց սենյակից, կծկված գլորվեց սանդուղքն ի վար և բաբախող սրտով ոչ թե գնաց, այլ վազեց Վիլլարների տուն. ուզում էր համոզվել, որ նրանք չեն մեկնել։ Նրբանք իսկապես էլ Փարիզում էին։ Լակեյն ասաց, որ պարոն Վիլլարը հենց նոր մեկնեց, իսկ տիկին Վիլլարը հոգնած է և ոչ ոքի չի ընդունում։ Մարկը խնդրեց այնուամենայնիվ իմանալ, թե Նոեմին արդյոք մի րոպե չի՞ տրամադրի իրեն։ Ծառան գնաց և վերադարձավ. «Մադամը, դժբախտաբար, չի կարող ընդունել»։ Տղան եռանդագին համառում էր. նրա համար անհրաժեշտ է թեկուզ լոկ մի րոպեով տեսնել տիկնոջը, նա շատ կարևոր բան ունի նրան հայտնելու... Դեռ հույսը չկորցնելով, Մարկը իր ղառիթացող, ճնշված ձայնով ինչ-որ անկապ բառեր էր մոթմոթում, կարմրելով ու այնպես ամոթահար շարժելով ձեռքերը, որ կարծես պատրաստ էր լաց լինելու։ Լակեյի հետաքրքրվող և ծաղրական հայացքի տակ Մարկը կորցնում էր մտքի թելը։ Նրան հրում էին դեպի դուռը, բայց նա հիմարորեն ընդդիմանում էր, բղավելով, որ

լակեյը համարձակություն չունենա նրան ձեռք տալ։ Լակեյը, վերջապես, նրան կարգադրեց դուրս կորչել այդտեղից և սպառնաց, որ եթե ձայնը չկտրի, կկանչի դռնապանին, որպեսզի նա աստիճաններից վռնդի Մարկին... Դուռը շրխկալով փակվեց։ Բայց ամոթից տանջահար, նա, կատաղած, դեռ շարունակում էր կանգնել սանդղահարթակին և չէր ուզում հեռանալ։ Եվ հանկարծ մեքենաբար հենվելով դռան փեղկին, զգաց, որ դուռը վատ է փակված և իր ծանրության տակ բացվում է։ Նա հրեց դուռը և նորից հայտնվեց նախասրահում։ Ինչ գնով էլ լիներ, Մարկն ուզում էր մտնել Նոեմիի մոտ։ Նախասրահում ոչ ոք չկար։ Մարկը գիտեր, որտեղ է գտնվում Նոեմիի սենյակը, և արագ խցկվեց միջանցք, որի խորքում ինչ-որ տեղից գալիս էր Նոեմիի ձայնը։ Նա ծառային ասում էր.

— Ինչքա՜ն է ինձ ձանձրացրել այդ տղան... Գրո՜ղը դըբան տանի։ Շատ լավ է, որ հախից եկել եք...

Մարկը սթափվեց միայն սանդղահարթակի վրա։ Նա վազում էր։ Լաց էր լինում, կրճտացնում էր ատամները, գլուխը պտտվում էր։ Շնչակտուր լինելով, նա նստեց աստիճանի վրա։ Չէր ուզում, փողոցում տեսնեին, որ լաց է լինում։ Աչքերը սրբելով ու հանդարտվելով (այդ արտաքին հանգստության տակ զայրույթ ու ցավ էր թաքնված), նա ինքնաբերաբար քայլեց դեպի տուն։ Մարկը կատարյալ հուսահատության մեջ էր... Մեռնե՜լ։ Այո՛, պետք է մեռնե՜լ, այլևս ապրել չի՜ կարելի։ Կյանքում ամեն ինչ այնքան ճղճիմ է և նողկալի, ամեն ինչ կեղծիք է, բոլորը ստում են... Մարգ չգիտի ինչպես շնչել... Սենան անցնելիս Մարկը մտածեց, չնետվի՞ արդյոք ջուրը։ Բայց նրան արդեն նախազգուշացրեց մի ուրիշ դժբախտ։ Առափնյակները սևին էին տալիս, կարծես ճանճերով սփռված լինեին։ Մարդկային բազմությունը—տղամարդ, կին, երեխա— բազրիքներից կախված, ապահորեն նայում էր, թե ինչպես են ջրից հանում մի խեղդվածի։ Ի՞նչ զգացումներ էին նրանց բերել այստեղ։ Շատ քչերին՝ սադիզմը, որոշ մարդկանց՝ կարեկցանքը, իսկ վիթխարի մեծամասնությունը՝ դեպի սենսացիոն պատահարներն ունեցած սերը, պարապ-սարապ հետաքրքրությունը։ Իսկ

քչերը, երևի, չկային այդտեղ, որոնք նայում էին ուրիշի տառապանքներին և մահվանը, որպեսզի նույն վիճակում պատկերացնեն նաև իրենց. «Այ, այդպես ես էլ կտանջվեի», «Այ այդպես նաև ես եմ մեռնելու»: Մարկը տեսնում էր միայն բերանբացների սոսկ հետաքրքրությունը, և դա նրան սարսափ էր ազդում: Սպանե՞մ ինձ: Այո, բայց ոչ մարդկանց աչքի առաջ: Աննեատայի որդին նման էր մորը. նույն վայրի ամբաշխությունը և հպարտությունը: Նա չէր ուզում, որ իրեն նային այս խառնամբոխը, որ իրեն մեռած ժամանակ քաշքշեն ուրիշի ձեռքերը, որ կպչուն հայացքները նրա մերկությունը պղծեն: Եվ ատամները սեղմած, արագ-արագ քայլեց դեպի տուն, որոշելով այնտեղ ինքնասպան լինել:

Այն հանգամանալից հետախուզություններից մեկի ժամանակ, որ Մարկը կատարում էր բնակարանում, երբ մայրը տանը չէր լինում, նա մի ռևոլվեր գտավ: Դա Նեմեթի ռևոլվերն էր, որն Աննեատան նրա գնալուց հետո վերցրեց հատակից և աննկարելի անփութությամբ խրեց սեղանի բաց դարակը: Մարկը դա վերցրեց իրեն և թաքցրեց աչքից հեռու մի տեղ: Որոշումն ընդունված էր: Եվ քանի որ երևխաները միշտ ինչ մտածում են, այն էլ անմիջապես անում են, Մարկը որոշեց իսկույն ևեթ իրականացնել իր մտադրությունը: Մտնելով բնակարան այնպես անաղմուկ, ինչպես և դուրս էր եկել, նա փակվեց իր սենյակում և ռևոլվերը լցրեց — նա տեսել էր, թե ինչպես է այդ անում իր լիցեյի ընկերներից մեկը, մի քիչ իրենից մեծ մի տղա, որը գրպանում ման էր ածում այդ վտանգավոր խաղալիքը և հունարենի դասին, ռևոլվերը բռնելով նստարանի տակ, ծնկների արանքին սեղմած պայուսակի մեջ, թաքուն ցույց էր տալիս հետաքրքրքրվող ընկերներին, թե ինչպես պետք է դա գործածել: Եվ այդպես, զենքը լցրած էր: Մարկը պատրաստվեց կրակելու... Բայց որտե՞ղ այդ անել: Պետք է անել այնպես, որ չվրիպել: Ամենալավը կլինի կրակել հայելու առաջ կանգնած... Բայց այդ դեպքում ինքը որտե՞ղ կընկնի... Ոչ, ավելի լավ է նստել սեղանի մոտ, իսկ հայելին դնել առջևը... Նա հայելին ձեռքից հանեց և, սեղանին դնելով, հենեց բազարանին... Այ այսպես լավ է երևում, ուր պետք է կրակել:

Նա վերցրեց ուսուլները... Բայց ո՞ր տեղը նշան բռնել։ Քունքին,— ասում են դա ամենավստահելի տեղն է... Մարդ իմանա, արդյոք շա՞տ է ցավելու...

Մարկը նույնիսկ մորը չհիշեց։ Նա ամբողջովին կլանված էր իր խաբված սիրով, հոգեկան տառապանքներով, պատրաստություններ տեսնելով... Նա հայելու մեջ նայեց իրեն և զգացվեց. խե՞ղճ Մարկ։ Նա ուզեց անհետանալուց առաջ մարդկանց հայտնել, թե ինչքա՞ն է ինքը տառապել նրանց պատճառով և ինչպե՞ս է ատում նրանց... Ուզում էր իր վրեժը լուծել նրանցից, հարուցել կարեկցանք, հիացմունք... Նա աշակերտական տետրից մի թուղթ պոկեց, ծուռը ծալեց (շտապում էր) և իր անվարժ, մանկական ձեռագրով սկսեց ջանասիրությամբ գրել.

«Ա՛յլևս ապրել չեմ կարող, որովհետև նա ինձ խաբեց։ Մաղդիկ բոլորը չար են։ Ես ոչինչ այլևս չեմ սիրում, և ավելի լավ է մեռնեմ։ Բոլոր կանայք ստախոս են։ Սրիկա են։ Նրանք պիրել չգիտեն։ Ես Նոեմիին ատում եմ։ Երբ ինձ թաղեք, կրծքիս մի թուղթ դրեք և վրան գրեցեք... «Ես մեռնում եմ Նոեմիի պատճառով»։

Գրելով այդ թանկագին անունը, Մարկը լացեց և բերանը սեղմեց թաշկինակով, որ հեկեկանքները խլացնի։ Հետո արցունքները սրբեց, գրածը նորից կարդաց և լրջորեն ասաց ինքն իրեն.

— Ես նրան չպետք է վարկաբեկեմ։

Նա պատռեց գրածը և սկսեց նորը գրել։ Ինչքան էլ աշխատում էր ուղիղ գրել, հուսահատությամբ լեցուն տողերը հրթիռի նման վեր էին սլանում։ Հասնելով «նրանք սիրել չգիտեն» նախադասությանը, Մարկը ավելացրեց «իսկ ես գիտեի, և այդ պատճառով էլ մեռնում եմ»։

Չնայած իր ամբողջ վշտին, նա շատ գոհ էր այդ նախադասությունից, այդ նախադասությունը նրան համարյա մխիթարում էր։ Նա ավելի բարի դարձավ այն մարդկանց նկատմամբ, ում թողնում էր այս աշխարհում, և նամակը վերջացրեց մեծահոգի խոսքերով.

«Ես ձեզ բոլորիդ ներում եմ»։

Հետո ստորագրեց։ Մի քանի վայրկյանից հետո ամեն ինչ

վերջացած կլինի, նա ամեն ինչից կազատվի։ Մարկը նախապես պատկերացնում էր, թե իր մահը ինչ ուժեղ տպավորություն կգործի։

Բայց այն ժամանակ, երբ նա խնամքով քաշում էր իր ստորագրության վերջին գիծը, որն առաջին անգամ վատ էր դուրս եկել, նրա հետևում հանկարծ դուռը կրնկի վրա բացվեց։ Նա հազիվ հասցրեց ձեռքերով ծածկել ուսուվերն ու թուղթը։ Աննետան միայն բառարանին հենած հայելին տեսավ և մտածեց, թե Մարկը իրենով է հիանում։ Նա որդուն ոչ մի դիտողություն չարեց։ Ըստ երևույթին, լինելով սոսկալի հոգնած, նա թույլ ձայնով Մարկին ասաց, որ մոռացել է կաթ գնել և լավ կլիներ, եթե նա վազեր կաթ բերելու, որպեսզի ինքը ստիպված չլինի իջնել ու նորից բարձրանալ վեցերորդ հարկ։ Իսկ Մարկի գլխում միայն մի միտք կար—ինչ անի, որ մայրը չտեսնի այն, ինչը ձեռքերով ինքը ծածկել էր։ Եվ վախենալով տեղից շարժվել, նա կոպտորեն պատասխանեց, որ ժամանակ չունի, զբաղված է։ Աննետան տխուր ժպտալով դուրս եկավ սենյակից և դուռը հետևից փակեց։

Մարկը լսեց, ինչպես է մայրը դանդաղ իջնում աստիճաններով։ Նա հիշեց, թե մայրը ինչ ընկճված տեսք ուներ, և խզճի խայթ զգաց։ Նրա հոգնած դեմքն ու ձայնը Մարկի սիրտը տակնուվրա արին... Նա շտապ-շտապ ուսուվերը գցեց սեղանի դարակը, գրքերի կույտի տակ թաքցրեց իր «կյանքի հրաժեշտը» և դուրս վազեց դեպի աստիճանները։ Նա հասավ մորը և բարկացած գոռաց, որ ինքը կգնա կաթի։ Աննետան վերադարձավ։ Նա մտածեց, որ տղան այնքան էլ անսիրտ չէ, ինչպես իրեն է թվում, և հոգում թեթևություն զգաց։ Բայց Աննետային շատ էր վշտացնում որդու կոպտությունն ու խոտությունը։ Տե՛ր աստված, ինչքա՜ն քիչ քնքշություն կա նրա մեջ։ Ինչ արած, ավելի լավ Մարկի համար։ Նա կյանքում ավելի քիչ կտառապի...

Մարկը մինչև իր վերադառնալը արդեն բոլորովին մոռացել էր ինքնասպանության գործելու որոշումը։ Նա առանց որևէ բավականության սեղանին տեսավ վատ ծածկված իր նշանավոր «կտակը» և արագ խրեց մի ինչ-որ տու-

փի մեջ։ Հիմա Մարկը իրենից վանում էր ինքնասպանության ճնշող միտքը։ Նա զգում էր, թե ինչ սարսուռյուն ու դաժանություն կլիներ դա մոր նկատմամբ, որի վիճակը Մարկին անհանգստացրեց։ Բայց իր հոգատարությունը Մարկը դրսևորում էր բավական անճարպիկ ձևով։ Նա չկարողացավ այդ մասին հարցնել, ինչպես պետք էր, Աննետան չկարողացավ պատասխանել։ Կեղծ ինքնասիրությունից Մարկը թաքցնում էր իր իսկական զգացմունքները, և կարող էր թվալ, թե մոր առողջությանը վերաբերող հարցերը նա տալիս է, դժկամորեն կատարելով իր քաղաքավարական պարտքը։ Աննետան, որ նույն ձևով հպարտ էր, ինչպես Մարկը, չէր ուզում որդուն անհանգստություն պատճառել և խուսափում էր խոսակցությունից։ Նորից երկուսն էլ ամփոփվեցին լռության մեջ։ Խաղաղվելով, Մարկն արդեն իրեն իրավունք վերապահեց զայրանալ մոր վրա, որ ինքը ի սեր նրա հրաժարվեց ինքնասպանությունից... Հոգու խորքում նա հիանալի գիտեր, որ այլևս ինքնասպանության ոչ մի ցանկություն չունի, բայց հո պե՞տք էր մեկնումեկի վրա թափել իր տարած վիրավորանքներն ու ցավը։ Իսկ կատաղությունը ամենից հարմար էր մոր վրա թափել. չէ որ ամենից մոտ գտնվողը միշտ նա էր, և նա կարող էր ամեն ինչ տանել։

Այդպես մայր ու որդի մնում էին յուրաքանչյուրն իր վշտի մեջ մեկուսացված։ Եվ Մարկը, որին սեփական վիշտը արդեն սկսում էր տանջել, զգում էր թե ինչպես է իր մեջ աճում զայրույթը մոր վրա՝ նրա այդ թախծոտ տեսքի համար։ Նա շատ ուրախացավ, նախասենյակում լսելով Սիլվիայի զանգը (Մարկին լավ ծանոթ էր մորաքրոջ զանգելու ձևը)։ Սիլվիան եկել էր, որ Մարկին իր հետ տանի Այսեդորա Դոնկանի երեկոյին. նա հիմա տարվում էր բալետով։ Թեև Մարկն իր պարտքն էր համարում այսուհետև և հոգում և դեմքին (նախ և առաջ դեմքին) պահպանել իր կրած տառապանքների ճակատագրական կնիքը, նա չէր կարող թաքցընել իր հաճույքը, երբ հնարավորություն ներկայացավ դուրս պրծնել տնից։ Մարկը վազեց հագնվելու, դուռը չփակելով, որպեսզի ոչ մի բան բաց չթողնի մորաքրոջ ուրախ

շաղակրատանքից, որը ներս մտնելուն պես սկսեց ինչ-որ անպարկեշտ բան պատմել։ Աննետան լսում էր և, որքան էլ սիրտը ծանրացած լիներ, իրեն ստիպում էր ժպտալ, իսկ իր մեջ մտածում էր.

«Եվ այս նույն կինը ընդամենը մի տարի առաջ հեկեկո՞ւմ էր իր երեխայի դիակի վրա։ Մի՞թե նա ամեն ինչ մոռացել է»։

Աննետան չէր նախանձում այդ հոգեկան ճկունությանը։ Իսկ իր որդու ծիծաղը, որը մյուս սենյակից արձագանքում էր Սիլվիայի սրախոսություններին, վկայում էր, որ Մարկը ևս ընդունակ է նույնպիսի հեշտությամբ մոռանալ։ Վշտացած այդ անսրտությունից, Աննետան չգիտեր, որ նա ինքը նույնպես օժտված է այդ հրաշալի և դաժան շնորհով։ Երբ Մարկը իր սենյակից հայտնվեց, ցնծալով ու ոտից գլուխ հագնված, Աննետան չէր կարող թաքցնել իր այնքան խիստ գժկամությունը։ Մարկին մոր դեմքի արտահայտությունն ավելի շատ վիրավորեց, քան ամենախիստ հանդիմանությունը։ Վրեժխնդիր լինելով մորը չափազանցված զվարթությամբ, Մարկը իրեն պահում էր շատ աղմկոտ և այնպես էր շտապում գնալ, որ նույնիսկ մոռացավ նրան հրաժեշտ տալ։ Նա այդ հիշեց միայն աստիճանների վրա։ Չվերադառնա՞լ արդյոք։ Ոչ, հենց այդպես էլ պետք էր նրան։ Մարկը մոր վրա զայրացած էր։ Ինչպե՞ս թեթևություն է ամբողջ երեկո չհանդիպել նրա կշտամբանքից հայացքներին, իսկ որ գլխավորն է—հետևում թողնել վհատությունը, իրենց տան ճնշող մթնոլորտը և այդ օրվա բոլոր ծանր հուզմունքները... Դա ինչ անվերջանալի օ՞ր էր... Մի քանի ժամվա ընթացքում Մարկը մի ամբողջ կյանք ապրեց, ոչ, մի քանի կյանք, զգաց երանության դառաթը և հուսաբեկության անդունդը... Այդպիսի ծանրությունը կարող էր ուզա՞ծ մարդու ճզմել։ Բայց այդ պատանյակի ճկուն բնավորության համար դա ավելի ծանր չէր, քան ճյուզի համար թռչունը։ Բավական է թռչունը թռչի—և ահա ճյուղը նորից ուղղվում է և ուրախ օրորվում քամուց։ Թռան գնացին անցած օրվա և ուրախությունները և դառնությունները։ Միայն հիշողությու-

նը մնաց։ Տղան շտապում է վանել նաև այդ, սիրտը բացելով նոր խնդութիւնների և տխրութիւնների համար։

Բայց Աննետան չէր կարող իմանալ, թէ ինչ է կատարվում Մարկի հոգում, և քանի որ նա նույնպես ուժեղ կրքերի տեր մարդ էր և այդ պատճառով ամեն ինչ չափազանցում էր, ապա Մարկի վարքագիծը համարեց իր դեմ ուղղված։ Այն ուրախութիւնը, որով Մարկը փախչում էր մորից, ուղղակի խոցեց Աննետայի սիրտը։ Ակամայ դնելով Մարկի ծիծաղին սանդուղքի վրա, Աննետան որոշեց, որ որդին իրեն ատում է, որ որդին նեղվում է իրենից... Այո, այո, դա ամե՛ն ինչից երևում է։ Նա ուզում է մորից ազատվել։ Եթե Աննետան մեռներ, Մարկը ավելի երջանիկ կզգար իրեն, քան հիմա... Ավելի երջանի՛կ... Ասենք, իր՝ Աննետայի համար էլ մահը երջանկութիւն կլիներ։ Անհեթեթ այն միտքը, որ նրա որդին, նրա տղան, կարող է մոր մահը ցանկանալ, ատամիկ խոցեց Աննետայի սիրտը... (Արդյո՞ք անհեթեթ է։ Ի՞նչ իմանաս։ Այդ ո՞ր երեխան է, որ մոլուցքի պահին չի ցանկացել մոր մահը...)։ Այդ զարհուրելի միտքը եկավ այն ժամին, երբ Աննետան կյանքից բռնել էր արդեն թուլացող ձեռքով, և նրա համար դա մահացու հարված էր։

Նա առանց այդ էլ այսօր տանջահար էր եղել սիրո տենդից։ Հիմա, երբ որոշումն արդեն ընդունված էր և իրականացված, երբ նա կատարել էր պարտքը իր առաջ և անուղղելին տեղի էր ունեցել, նրա ուժերը չբավարարեցին դիմանալ ներքին թշնամու գրոհին։ Եվ թշնամական հորդանները խուժեցին նրա վրա։

Աննետան այդ հորդանների հանցակիցն էր։ Նա բացեց նրանց առաջ դարպասները։ Երբ ամեն ինչ կորած է, մարդն իրավունք ունի գո՞նե իր հուսահատութիւնն ըմբռընչնելու։ «Իմ տառապանքը ոչ ոքի չի՛ վերաբերվում, նա միայն ի՛մն է, ուրեմն ես ամբողջովին նրա՞նն եմ տրվելու։ Սիրտ, արնաքա՛մ եղիր։ Ես քո մեջ դանակ եմ խրում, ստիպում եմ նորից տեսնել այն ամենը, ինչ դու կորցրե՛լ ես»։ Աննետայի երևակայութիւնը տենդագին աշխատում էր, իր համար պատկերելով կենդանի Ֆիլիպին։ Նա այդտեղ էր, Աննետայի առջևում, Աննետան խոսում էր նրա հետ, հպվում էր նը-

բան... Տեսնում էր նորից այն ամենը, ինչ սիրում էր Ֆիլիպի մեջ, ինչ հրապուրեց Աննետային նմանությամբ և հակադրությամբ։ Հիշում էր իրենց հանդիպումները, հակառակորդների այդ միությունը, կրքի և պայքարի կրկնակի ավյունը։ Մի՞թե գրկախառնություն ու պայքարը միևնույն բանը չէին։ Եվ այդ երեակայական գրկախառնությունների մեջ այնպիսի ցանկասիրական ուժ կար, որ սիրուց խելագարված Աննետան ուժաթափվում էր, ինչպես Լեդան, որին վրա էր հասել կարապը։ Կրքի փոթորկուն հեղեղը նորից էր նրան տանում, բայց այս անգամ այդ հեղեղի մեջ հուսահատություն էր թաքնված։ Նա ապրում էր այն սարսափը, որը սիրո համար ստեղծված, բայց կյանքում այդ սիրուց բաժին չստացած ամեն մի կին զգում է իր տարիքի բեկման շրջանում. սիրելի մարդու հետ իր կապերի խզումը նրան թվում է հավիտենական հրաժեշտ տալ սիրուն։ Այդ երեկո Աննետան, որդու գնալուց հետո մենակ մնալով իր խեղված սիրո հետ, այս ու այն կողմ էր ընկնում հոգեկան ունայնության տառապանքների մեջ։ Հավիտենապես մեռած սիրո և զուր ապրած կյանքի մասին աննահանջ խոհերը նրա կոկորդը բռնած խեղդում էին։ Համառորեն վերադառնալով, նրանք ոչ մի բոպե հանգիստ չէին տալիս։ Իզուր էր Աննետան փորձում որևէ բանով զբաղվել. նա անցնում էր գործի, գցում էր այդ գործը, տեղից կանգնում, նորից նստում։ Գլուխը դնելով սեղանին, նա ձեռքերը ջարդոտում էր։ Հետապնդող միտքը նրան խելագարեցնում էր։ Նա հասել էր տառապանքների այն սահմանին, երբ կինը պատրաստ է ամեն մի խենթության, միայն թե իրենից փախչի։ Նկատելով, որ խելքը կորցնում է, Աննետան այդ զառանցանքի մեջ հանկարծ վայրի մի պոռթկում զգաց, փողոց դուրս վազելու սարսափելի մի ցանկություն և, ինքնատորացման ցասումով բռնկված, ուղեց անարգանքի ենթարկել իր տանջահար հոգին ու մարմինը և տրվել առաջին իսկ հանդիպած տղամարդուն։ Երբ այդ հրեշավոր միտքը Աննետայի գիտակցությանը հասավ, նա սոսկումից ճչաց։ Բայց սոսկումը կարծես ավելի մտրակեց ամոթալի մտքին, նա չէր ուզում նահանջել։ Այդ ժամանակ Աննետան, ինչպես և նրա որդին, մր-

տածեց ինքնասպանության մասին։ Նա գիտեր, որ ապրելն ի վիճակի չի լինի գլուխն ազատել այդ գայթակղությունից...

Նա տեղից կանգնեց ու գնաց դեպի դուռը։ Բայց, անցնելով բաց լուսամուտի կողքով, հանկարծ որոշեց յած նետվել այնտեղից... Նրա մեջ սկսեց խոսել ողջախոհության բնազդը, որը ձգտում էր հոգին փրկել ապականությունից։ Մ՛ա. այդ երազկոտ հոգին։ Աննետայի միտքը մշուշված չէր բոլորի կողմից ընդունված բարոյականությամբ։ Բայց բնազդը դուրս էր գալիս ավելի ուժեղ, քան միտքը, նա դատում էր ավելի ճիշտ... Լինելով ամբողջովին երկու հակասական ձգտումների իշխանության տակ—դեպի լուսամուտը և դեպի դուռը, Աննետան այս ու այն կողմ չէր նայում։ Եվ, նետվելով դեպի լուսամուտը, ճանապարհին փորով ուժեղ կպավ բուֆետի անկյունին։ Ցավն այնքան ուժեղ էր, որ շունչը կտրվեց։ Կեսից ծալվելով, նա երկու ձեռքով բռնեց ցավացող տեղը, զգալով ինչ-որ սուր չարախնդություն, որ հարվածը հենց փորին է կպել, կարծես նա ուզում էր մարմնի մեջ ճզմել իբեն տնօրինող կույր և հարբած ուժը, աստվածավագրին... Հետո վրա հասավ ռեակցիան։ Աննետան անուժ ընկավ բուֆետի և լուսամուտի միջև գտնվող ցածրիկ բազկաթոռին։ Նրա ձեռքերը սառցի պես սառն էին, երեսը քրտնած։ Սիրտը բաբախում էր անհամաչափ հարվածներով, որոնք գնալով ավելի ու ավելի էին թուլանում։ Նրան թվում էր, թե ինքը ինչ-որ անդունդ է սլանում, գլխում միայն մի միտք էր տրոփում.

«Շո՜ւտ։ Շո՜ւտ...»։

Երբ Աննետան կրկին բացեց աչքերը (Ինչքա՞ն ժամանակ էր անցել։ Մի քանի վայրկյա՞ն... Հավիտենականությո՞ւն...), նա պառկած էր, գլուխը ետ դցած, ինչպես կառափնակոճղին, ծոծրակով լուսամուտի գոգին հենված։ Մարմինը խրված էր բուֆետի և լուսամուտի միջև ընկած անկյունը։ Եվ առաջին բանը, ինչ նա տեսավ, մութ տանիքների վերևում գտնվող հոպիսյան աստղերն էին... Նրանցից մեկի աստվածային լույսը թափանցեց Աննետայի սիրտը...

Գիշերվա լռություն՝ անընդունելի, անծայրածիր, ինչպես հեռուն փախչող հարթավայր... Ներքևում փողոցով անցնում

էին կառքերը, բուֆետում զնգնգում էին բաժակները.— Աննետան ոչինչ չէր լսում... Նա կախված էր երկնքի և երկրի միջև... «Անազմուկ թռիչք»... «Նա դեռ չէր կարողանում վերջնականապես արթնանալ»...

Աննետան հապաղում էր։ Նրա համար սարսափելի էր վերադառնալ այն բանին, ինչը մի ակնթարթով թողել էր,— անսահման հոգնածությանը, տառապանքներին, սիրո մամլիչներին... «Մեր, մայրություն։ Դաժան էգոիզմ, էգոիզմ բնության, որի համար իմ տառապանքները ոչ մի նշանակություն չունեն, որը դարանակալում է իմ արթնացումը, որպեսզի քրքրի իմ սիրտը... Ա՜խ, երանի այլևս չարթնանամ...»։

Բայց Աննետան այնուամենանիվ արթնացավ։ Եվ տեսավ, որ թշնամին անհետացել է։ Այլևս հուսահատություն չկար... Ոչ, կար, բայց արդեն ոչ թե նրա մեջ, այլ նրանից դուրս, նա կարծես լսում էր այդ հուսահատությունը... Օ կախարդա՜նք... օ, ահեղ երաժշտություն, որ անհայտ, լայնարձակ տարածություննե՞ր ես բացում... Աննետան, կարծես կախարդված, լսում էր օդում հնչող հեկեկանքները,— թվում էր, ինչ-որ անտեսանելի ձեռքեր նվագում են Շոպենի «Ճակատագիր» պրելյուդիան։ Աննետայի սիրտը լցվեց երբեք չզգացած բերկրությամբ։ Ոչինչ ընդհանուր չկար մեր ամենօրյա կյանքի ողորմելի խնդության,— խնդություն, որը վախենում է տառապանքներից և պահպանվում է միայն նրանով, որ մերժում է դրանք,— և տառապանքով ծնված այս նոր, վիթխարի խնդության միջև... Աննետան աչքերը փակած լսում էր։ Ձայնը կտրվեց։ Վրա հասավ սպասումի լռությունը։ Եվ հանկարծ տանջահար սրտի խորքից դուրս պրրծավ ազատագրման մի ճիչ... Ապակի կտրող ալմաստի նման այդ ճիչը լուսավոր մի ակոս քաշեց գիշերվա կամարին։ Աննետան, չարդված, ուժասպառ, երբ տառապանքների գիշերը վերջանալու վրա էր, իր մեջ ծնեց մի նոր հոգի...

Անձայն ճիչը, պոռթկ տալով, թռավ և անհետացավ մթի անդունդում։ Աննետան պառկած էր անշարժ և համր։ Պառկած էր երկար։ Վերջապես վեր կացավ։ Գլխատեղի

կոշտությունից վիզը ցավում էր, բոլոր ոսկորները տնքում էին։ Բայց հոգին ազատագրված էր։

Անհաղթահարելի մի ուժ նրան մղեց դեպի սեղանը։ Նա ինքն էլ դեռ չգիտեր ինչ է անելու։ Սիրտը կրծքի տակ լայնանում էր։ Նա չէր կարող իր մեջ պահել այն, ինչով լցված էր։ Աննկատան ձեռքը գցեց գրիչին և անսանձելի պոռթկումով սկսեց աննկարագրելի բանաստեղծական տողերով արտահայտել իր վիշտը.

Դու եկար ինձ մոտ, դու բանեցիր ինձ։— Ձեռքդ եմ համբուրում,
Ես ամբողջ սիրով, դողով բռնկված։— Ձեռքդ եմ համբուրում։

Դու եկար, որ ինձ կործանես, Սե՛ր, այդ լավ եմ հասկանում,
Դողում են ծնկներս։ Արի՛։ Սպանի՛ր։— Ձեռքդ եմ համբուրում։

Կկծես պատուդն ու կնետես. քեզ սի՞րտս եմ նվիրում,
Կծածդ վերքը ինչ օրհնյա՛լ լինի։— Ձեռքդ եմ համբուրում։

Ուզում ես սպրել ինձ ամբողջովին և այդ պայքարում
Ամեն ինչ փշրում, դարձնում ես բեկոր։— Ձեռքդ եմ համբուրում։

Քո այդ ձեռքի մեջ, որ շոյում է ինձ, ես մահս եմ տեսնում,
Եվ մահից առաջ հենց այդ մահաբեր ձեռքդ եմ համբուրում։

Ծե՛, սպանի՛ր ինձ, տառապանքում եմ ես բերկրանք խմում,
Կործանման մեջ եմ գտնում ինձ ազատ։— Ձեռքդ եմ համբուրում։

Դու քո հարվածով հին կապանքներն, օձն ես երկատում
Դու մեռա՝ ես պոկում, պոկում ես շղթաս։— Ձեռքդ եմ համբուրում։

Ո՛ մարդասպան իմ, վերքերիս միջից իմ կյանքն է ծորում,
Կյանքս է դուրս պրծնում խավար գնդանիցս։— Ձեռքդ եմ համբուրում։

Ես քո ակոսած պատն եմ, նոր կյանք եմ ահա ես բերում
Տառապանքի քո ցանած սերմերին։— Ձեռքդ եմ համբուրում։

Ցանի՛ր դու շռայլ տառապանքը սուրբ։ Ես սերմն իմ կրծքում
Կպահեմ, հասնի տանջանքն աշխարհիս։ Ձեռքդ եմ համբուրում։

Փոթորիկ։ Ծովի ալիքները փշրվում են, զարնվելով ժայռին, հոգին լցվում է ցայտքերով ու լույսերով, խոյանում է դեպի երկինք՝ կրքի և արցունքի փրփրափոշի դառած...

Վայրի թռչունների վերջին ճիչ—և հոգին նորից երկրի վրա է։ Տառապած Աննետան ընկնում է մահճակալին և քնում։

Արշալույսին երեկվա դառնություններից գրեթե հետք անգամ չմնաց,— դրանք հալվեցին, ինչպես ձյունը արևի տակ...

Così la neve al sol si disigilla[1].

Դրանց մասին հիշեցնում էր միայն ամբողջ մարմնում զգացվող երանելի ցավը—խոնջություն այն մարդու, որը կռվել է և գիտի, որ հաղթեց։

Աննետան զգում էր, որ տառապանքներից հագեցել է։ Վիշտը նման է կրքի. որպեսզի անցնի, պետք է արբենալ, հասցնել մինչև վերջը։ Բայց քչերն այդ արիություն ունեն։ Եվ այդ շունը միշտ քաղցած է և կատաղած, որովհետև մարդիկ նրան կերակրում են միայն իրենց սեղանի փշրանքներով։ Տառապանքը հաղթում են նրանք, ովքեր համարձակվում են ամբողջովին տրվել այդ տառապանքին, համարձակվում են ասել նրան.

«Ես քեզ ընդունում եմ։ Եվ կբեղմնավորեմ քեզ»։

Ստեղծագործ այդ հզոր գիրկը կոպիտ է և բեղուն, ինչպես ֆիզիկապես տիրանալը...

Աննետան սեղանի վրա տեսավ երեկվա գրած տողերը և, վերցնելով, պատառ-պատառ արեց։ Այդ անկապ բառերը նրա համար հիմա նույն ձևով անհանդուրժելի էին, ինչպես և նրանց մեջ արտահայտված զգացմունքները։ Նա չէր ուզում խախտել իրեն համակած երանությունը։ Աննետան այնպիսի թեթևություն էր զգում, կարծես նրա կապանքները թուլացել էին, կարծես շղթան հենց նոր անջատվեց... Եվ ինչպես կայծակի շողշողանքում, նրա երևակայության մեջ

---

1 Այդպես է հաչում ձյունը արևից (իտ.)։— Դանտե, «Աստվածային կատակերգություն», «Դրախտ» երգ 33-րդ, տ. 64. (Ս. Բ.)։

հառնեց շղթան այդ չարչարանքների, որոնց ցած է նետում հոգին դանդաղորեն, մեկը մյուսի հետևից, անցնելով մի շարք գոյությունների միջով, իր, ուրիշների (դա միևնույն բանն է)... Աննետան հարցնում էր իրեն.

«Ինչի՞, ինչի՞ համար է այս հավիտենական տենչը, կապերը, որոնք միշտ կտրվում են։ Ի՞նչ ազատագրման է ինձ տանում ցանկությունների արյունով շաղախված ուղին...»։

Բայց դա տևեց ընդամենը մի ակնթարթ։ Ինչո՞ւ անհանգըստանալ այն բանից, ինչ լինելու է։ Դա կանցնի այն ամենի նման, ինչ եղել ու անցել է։ Մենք լավ գիտենք. ինչ էլ ուզում է պատահի, կդիմանա՞նք։ Ժողովրդական մի ասացվածք կա, հին հերոսական խոսքեր են, որոնց մեջ և աղերսանք է հնչում և մարտահրավեր. «Թո՛ղ աստված մեր ուսերին այնքան բեռ չդնի, ինչքան մենք կարող ենք տանել»։

Նա, Աննետան, անցա՛վ փորձության միջով, այդ փորձությունը տանելով մի օրում... Հիմա նա հանգստանում էր հոգով և մարմնով...

To strive, to seek, not to find and not to yield.

«Դա լավ է։ Լավ է... Օրերն իմ անհետք չանցան... Իսկ շարունակությունը— վա՛ղը...»։

Աննետան անկողնուց վեր կացավ մերկ։ Տանիքների վերևում գտնվող առավոտյան արևը, պայծառ, օգոստոսյան արևը ողողում էր նրա մարմինը և ամբողջ սենյակը... Նա իրեն երջանիկ էր զգում... Այո, երջանիկ, չնայած այդ բոլորին։

Ամեն ինչ նույնն էր, ինչպես երեկ. գետինը և երկինքը, անցյալը և ապագան։ Բայց այն, ինչ երեկ ճնշում էր,— այսօր խնդություն էր ցայտում։

Մարկը ուշ վերադարձավ, արդեն գիշեր էր։ Մորից հեռու զվարճանալով, Մարկը հիմա իրեն մեղավոր էր զգում, որ նրան մենակ թողեց, և որ մայրը նրա պատճառով, ըստ երևույթին, չի քնել մինչև հիմա։ Նա գիտեր, որ Աննետան, ինչպես միշտ, չի պառկի քնելու, մինչև ինքը չվերադառնա, և սպասում էր սառը հանդիպմանը։ Թեև խիղճը Մարկին

տանջում էր կամ, ավելի ճիշտ, հենց այդ պատճառով— նա դեռ սանդուղքի վրա պատրաստվեց պաշտպանության։ Փոքրող տեսքով, անպատկառ քմծիծաղը շուրթերին, բայց հոգու խորքում ամենևին ոչ վստահ իր վրա, նա խոխրի տակից վերցրեց բանալին և դուրը բացեց։ Բնակարանից ոչ մի ձայն չեկավ։ Վերարկուն նախասենյակում կախելով, Մարկը մի րոպե սպասեց։ Լռություն էր։ Ոտքերի թաթերին նա գնաց իր սենյակը և սկսեց անաղմուկ հանվել։ Նրա սիրտը թեթևացավ։ Առավոտվա խելքը իրիկվանից լավ է։ Բայց դեռ հանվելը չվերջացրած, նա հանկարծ անհանգստացավ։ Մոր սենյակի լուսությունը նրան անբնական թվաց... (Նա, ինչպես և Աննետան, կենդանի երևակայություն ուներ, այդ պատճառով էլ հեշտությամբ տագնապի էր ենթարկվում)։ Ի՞նչ է պատահել... Նա, իհարկե, հազար միլ հեռու էր ամեն տեսակի կասկածներից այն կործանիչ փոթորկի մասին, որն այդ գիշեր բարձրացել էր Հարևան սենյակում։ Բայց նա չէր հասկանում մորը, և Աննետան միշտ նրա մեջ որոշ անհանգստություն էր հարուցում. Մարկը երբեք չգիտեր, թե մայրն ինչ է մտածում։ Սարսափած, նա ինչպես որ կար, բոբիկ ու շապկանց, մոտենալով Աննետայի սենյակի դռանը, բայց ականջը դնելով բանալու անցքին, իսկույն հանգստացավ։ Մայրը ծանր ու անհամաչափ շնչելով, քնած էր։ Վախենալով, չլինի թե հանկարծ հիվանդացած լինի, Մարկը բացեց դուրը և մոտեցավ մահճակալին։ Փողոցային լապտերների լույսով նա տեսավ, որ Աննետան պառկած է մեջքին։ Քանդած մազերը ծածկում էին նրա այտերը, իսկ դեմքն ընդունել էր այն ողբերգական արտահայտությունը, որը մի ժամանակ գիշերներն այնպես զարմացնում էր նրա մոտ քնող Սիլվիային։ Կուրծքը ծանր ու աղմկոտ շնչառությունից սաստիկ բարձրանում և իջնում էր։ Նայելով այդ մարմնին և ուշոտ կռահելով նրա տառապանքներն ու հոգնածությունը, Մարկը և ուրախ, և կարեկցանք էր զգում։ Ծոնարհվելով բարձին, Մարկը դողդոջուն շշուկով ձայն տվեց.

— Մամա՞...

Խոր քնի մեջ այդ կանչը լսելով, որը կարծես հեռվից էր գալիս, Աննետան մի վայրկյան արթնացավ ու ճրթաց։ Ը-

դան վախեցավ, ետ-ետ գնաց։ Աննետան նորից հանդարտվեց։ Մարկը վերադարձավ իր սենյակը և պառկեց։ Այդ օրվա հուզմունքներից առաջացած հոգնածությունն ու նրա հասակին բնորոշ անհոգությունը իրենց վերցրին, և նա պինդ քնով քնեց մինչև առավոտ։

Բայց, հենց որ նա աչքերը բացեց, վերադարձան երեկվա մտքերն ու տագնապը։ Նրան զարմացրեց, որ այդքան ուշ է, իսկ մայրը դեռ չի երևում։ Սովորաբար, Աննետան առավոտները, երբ տղան դեռ անկողնում էր գտնվում, մտնում էր նրա սենյակը (որը որդուն միշտ զայրացնում էր) Մարկին բարևելու և համբուրելու համար։ Այսօր նա չեկավ, բայց Մարկը նրա ոտնաձայները լսեց հարևան սենյակում։ Եվ դուռը բացեց։ Աննետան չոքած սրբում էր կահույքի փոշին և չըշրջվեց։ Մարկը բարևեց։ Աննետան ուրախ նայեց նրան և ասաց.

— Բարի՛ լույս, տղաս։

Եվ կրկին զբաղվեց իր գործով, որդու վրա ուշադրություն չդարձնելով։ Մարկն սպասում էր, որ մայրը հարցուփորձ կանի երեկվա երեկոյի մասին։ Նա տանել չէր կարողանում այդ հարց ու փորձերը։ Բայց այն, որ այսօր Աննետան ոչ մի բան չհարցրեց, վրդովում էր նրան։ Աննետան անընդհատ այս ու այն կողմ էր գնում, կարգի բերելով սենյակը և միաժամանակ հագնվելով. արդեն նրա դասի գնալու ժամանակն էր։ Մարկը մորը հետևում էր հայելու մեջ, որի առաջ Աննետան կանգ առավ. աչքերի տակ շրջանակներ էին, դեմքը դեռ հոգնած էր, բայց աչքերը շողշողում էին, շրթունքները՝ ժպտում։ Մարկը զարմացած էր. նա սպասում էր, թե մորը տխուր կտեսնի, և նույնիսկ պատրաստ էր հոգում խղճալ նրան, իսկ Աննետայի անսպասելի ուրախությունը նրան շփոթի մատնեց և նույնիսկ բարկացրեց,— այդպիսի՞ն էր այդ պատանի տղամարդու տրամաբանությունը...

Իսկ Աննետան իր տրամաբանությունն ուներ։ «Միրտը ունի իր օրենքները» և դրանք իմացվում են այն զգացողությամբ, որը բանականությունից բարձր է։ Աննետայի համար արդեն միևնույն էր, թե ուրիշներն ինչ կմտածեն։ Հիմա նա գիտեր, որ մարդկանցից հասկանալ չպետք է պահանջել։ Թե

նրանք քեզ սիրում են, ուրեմն, սիրում են փակ աչքերով։ Եվ հաճախ չեն իրենց աչքերը փակում։ «Թող լինեն, ինչպիսին ուզում են։ Ես նրանց միևնույն է սիրում եմ։ Առանց սիրո ես ապրել չեմ կարող։ Իսկ եթե ինձ չեն սիրում, ես կսիրեմ և իմ և նրանց փոխարեն — իմ սրտում սերը բավական է»։

Նայելով հայելուն, Աննետան կարծես նրա մեջ ինչ-որ մի բան էր տեսնում, նա ժպտաց, և աչքերը շողշողացին, ինչպես հրի երկու կաթիլ— հավիտենական սիրո հրի։

Մազերը սանրելուց հետո նա ձեռքերն իջեցրեց, շուռ եկավ և, տեսնելով Մարկի նոթոտ դեմքը, հիշելով երեկույթը, ուր նա գնացել էր Սիլվիայի հետ, բռնեց որդու կզակից և ուրախ, վանկ-վանկ արտասանելով ասաց.

— «Պարո՞ւմ էիք։ Շա՜տ ուրախ եմ։ Դե հիմա էլ մի քիչ երգե՛ք»։

Սիծաղեց, նայելով որդու շվարած դեմքին, հայացքով շոյեց նրան, համբուրեց և, սեղանից վերցնելով իր պայուսակը, դուրս եկավ, ընթացքի ժամանակ ասելով.

— Յոհաննե՛ս, իմ ծղրիդ։

Մարկը լսում էր, թե Աննետան ինչպես է նախասենյակում ինչ-որ ուրախ երգ սուլում (ատելով նրան դրա համար, Մարկը միևնույն ժամանակ նախանձեց մորը, քանի որ նա ավելի լավ էր սուլում, քան ինքը)։

Մարկը զայրացած էր։ Երեկվա տագնապներից հետո — այսպիսի անվայե՛լ ուրախություն։ Մայրը նրա համար հանելուկ էր։ Եվ, ընդօրինակելով մեծահասակ տղամարդկանց, Մարկը դրանք վերագրեց կանացի հավիտենական տարօրինակություններին. «La donna mobile...»[1]։

Նա արդեն պատրաստվում էր դուրս գնալու, երբ հանկարծ զամբյուղի մեջ նրա աչքին թղթի մի կտոր ընկավ։ Մարկի հայացքը, որ սուր էր և ագահ, ինչպես գիշատիչ փոքրիկ գազանինը, կանգ առավ այդ պատռված թղթի վրա սկզբում անգիտակցորեն։ Բայց մի քանի բառ կարդալով, Մարկն ուղղակի տեղում քարացավ... Այդ բառերը... Մորաձեռագիրն է... Նա տենդագին արագությամբ հավաքեց թղթի կտորները և սկսեց կարդալ... Սկզբում ձեռքը գցում էր

[1] Փոփոխական կին (իտ.)։

մերթ մի կտորին, մերթ մյուս, ինչպես պատահեր... Ի՜նչ բոցաշունչ բանաստեղծական տողեր են... Պատառ-պատառ եղած, դրանք կտրված երգի նման ավելի շատ էին հուզում ու կախարդում... Մարկը քշշեց զամբյուղը և գտավ թղթի բոլոր կտորները։ Նա համբերությամբ դրանք միացրեց, որ կարելի լինի կարդալ։ Նրա ձեռքերը նույնիսկ դողում էին— այդպես հուզել էր նրան այդ պատահաբար բացած գաղտնիքը։ Կարդացած բանաստեղծությունը ցնցեց նրան։ Ամեն ինչ չէր, որ Մարկը այդ բանաստեղծության մեջ հասկանում էր, բայց այդ մեծավոր երգի վայրի կրքոտությունը նրա առաջ բացում էր սիրո և վշտի անհայտ աղբյուրներ, հիացմունք էր պատճառում և շշմեցնում նրան։ Մի՞թե փոթորկի ժամանակ այդ ճիչերը դուրս են պրծել նրա մոր կրծքից։ Ոչ, ոչ, չի՜ կարող պատահել։ Նա չէր ուզում հավատալ։ Նա համոզում էր իրեն, որ մայրը այդ բանաստեղծությունը որևէ գրքից է արտագրել։ Բայց ո՞ր գրքից։ Եվ չէ որ դա նրան հարցնել չի կարելի... Իսկ եթե գրքից արտագրած չլինի՞... Նրա աչքերը լցվում էին, ուզում էր ճչալ իր հուզմունքի և քնքշության մասին, փաթաթվել մոր վզով կամ ընկնել նրա ոտքերը, բացել նրա առաջ իր սիրտը, կարդալ նրա հոգին... Բայց նա չէր կարող այդ անել։

Իսկ երբ կեսօրին մայրը եկավ նախաճաշելու, տղան, որ ամբողջ առավոտ նրա բանաստեղծությունն էր կարդացել և արտագրել ու, ծրարի մեջ դնելով, թաքցրել ծոցում, նրան ոչինչ չասաց։ Նա նստել էր սեղանի մոտ և նույնիսկ տեղից վեր չկացավ, գլուխը չշրջեց, երբ մայրը ներս մտավ։ Մարկն այրվում էր այդ բոլորն իմանալու ցանկությունից, բայց ամաչկոտությունը նրան կաշկանդում էր, նա աշխատում էր հուզմունքը թաքցնել սառնասրտության դիմակի տակ... Հանկարծ մեկ էլ տեսար այս ողբերգական բանաստեղծությունը նրա հորինածը չէ։ Մարկին նորից համակեցին կասկածները, երբ նա տեսավ Աննետայի հանգիստ դեմքը... Սակայն այն, մյուս, շշմեցնող ևնթադրությունը չէր անցնում. «Իսկ եթե դա այնուամենայնիվ նա լինի՞... Ահա նույն այդ կինը, իմ մայրը, որը նստած է իմ դեմ, սեղանի մոտ...»։ Մարկը չէր հա-

մարձակվում նայել մորը... Բայց երբ Աննետան, մեջքը շրջելով նրա կողմը, սենյակում այս ու այն կողմ էր գնում, տանելով ու բերելով ամաններըը, Մարկը ինկվիզիտորական հայացքով հետևում էր նրան, կարծես հարցնելով.

«Իսկ ո՞վ ես դու»։

Նա չէր կարողանում գլուխ հանել իր աղոտ և տագնապալից տպավորություններից։ Իսկ մայրը, ամբողջությամբ կլանված էր նոր կյանքով, ոչինչ չէր նկատում։

Ճաշից հետո երկուսն էլ դուրս եկան տնից և գնացին տարբեր ուղղություններով։ Մարկը նայում էր մոր հետևից։ Նրան ծվատում էին հակադիր զգացումներ. նա և հիանում էր Աննետայով և զայրանում նրա վրա... Կին է, իսկակա՞ն կին։ Երբեմն նա այնքան մոտիկ է լինում, իսկ երբեմն էլ բոլորովին հեռու, կարծես ուրիշ ցեղի մի էակ... Ոչնչո՞վ նրանք նման չեն մեզ, տղամարդկանցս։ Հասկանալի չէ, ինչ է կատարվում նրա հոգում, ինչու է նա ծիծաղում, ինչու է լաց լինում։ Մարկը նրան արհամարհում է, ատում և ձգտում է դեպի նա, Աննետան նրան պետք է։ Մարկը զայրացած է նրա դեմ իր վրա ունեցած նրա իշխանության պատճառով։ Մարկը հաճույքով կկծեր նրա տղայական ծոծրակը, որը դեռ երբեմն երևում էր իր առջևում, կկծեր, ինչպես կծեց Նոեմիի ձեռքը (ախ, ինչպե՞ս էր այն ժամանակ ուզում կծել ու արնացնել նրա ձեռքը)։ Այդ անսպասելի հիշողության ժամանակ Մարկի սիրտը դողաց։ Նա կանգ առավ սաստիկ դունատված և նողկանքից թքեց։

Մարկը անցնում էր Լյուքսեմբուրգյան այգու միջով, որտեղ երիտասարդները սպորտային խաղեր էին խաղում։ Նա նախանձով նայեց այդ երիտասարդներին։ Նրա մեջ եղած բոլոր ամենալավ բաները, Մարկի բոլոր գաղտնի ցանկությունները քաշում էին նրան դեպի այն գործերը, որոնք պատշաճ են տղամարդուն,— ոչ թե դեպի սերը, ոչ թե դեպի կանայք, այլ դեպի սպորտը, դեպի սխրանքները, որոնք հերոսական համարձակություն և ուժ են պահանջում։ Բայց նա նվազ տղա էր. դաժան ճակատագիրը, վաղ մանկության տարիների հիվանդությունը պատճառ էին դարձել, որ նա ֆիզիկապես լինի

պակաս զարգացած, քան նրա հասակակիցները։ Իսկ նստակյաց կյանքը, գրքերը, այն, որ նա մեծացել էր կանանց միջավայրում,— այդ բոլորը նրան թունավորել էր սիրո թույնով, որը իրեն էր անցել մորից, մորաքրոջից և պապից — Իվվիերների արյունից։ Նա ուրա՞խ կլիներ բացել իր երակը և թափել այդ ամբողջ արյունը։ Ա՜խ, նա որքա՜ն էր նախանձում հրաշալի կազմվածք ունեցող պատանիներին, որոնց գլխում ոչ մի միտք չկար, բայց սրտները լի էր ուրախությամբ։

Նա արհամարհում էր այն շնորհները, որոնք ճակատագիրը էր ուղարկել իրեն, և մտածում էր միայն այն շնորհների մասին, որոնք ճակատագիրը մերժել էր։ Նա տեսնում էր ուժեղ և բարեկազմ մարմինների խաղերն ու պայքարը։ Եվ իր էգոիզմի պատճառով շուրջը ուրիշ պայքար չէր տեսնում— այնպիսի պայքար, որը տանում էր իր մայրը...

Աննետան քայլում էր Փարիզի փողոցներով։ Ամառը լույսի հեղեղներով լցնում էր քաղաքը։ Երկինքը տների տանիքների մեջ նայում էր իրեն, ողողելով նրանց իր հայացքի շողշողուն կապույտով... Ինչքա՜ն լավ է այդպիսի առավոտ լինել դաշտերում, քաղաքից հեռու... Բայց այդ մասին երազելն անգամ միտք չուներ։ Աննետայի մոտ փող չկար, նա չէր կարող Փարիզից դուրս գնալ... Ենթադրվում էր, որ Մարկը մի քանի շաբաթ մորաքրոջ հետ կանցկացնի Նորմանդիայի ծովափում, իսկ ինքը կմնա քաղաքում։ Հպարտությունը նրան թույլ չէր տալիս քրոջ միջոցներով ապրել Նորմանդիայում, և, բացի դրանից, Աննետան դեռ այն ժամանակներից ի վեր, ինչ հոր հետ եղել էր այնտեղ, զզվանք էր զգում դեպի այդ տոնավաճառները, որոնք լեփ-լեցուն էին ձանձրացող և ֆլիրտող դաստարկապորտներով։ Այո, նա պետք է քաղաքում մենակ մնար, և դա ամենևին էլ նրան չէր վշտացնում։ Նա իր մեջ կրում էր և ծով, և երկինք, և բլուրների հետևի մայրամուտներ, և կաթնագույն մառախուղներ, և դաշտեր՝ պարուրված լուսնաշողերի սավանով, և կամաց հալվող ամառային գիշերներ։ Փողոցային խլացուցիչ աղմուկի և մարդկային հեղեղի միջև շնչելով օգոստոսյան օրվա շիկացած օդը, Ան-

նետան վստահ ու արագ քայլերով գնում էր Փարիզով այն նույն թեթև, սահուն քայլվածքով, ինչպես և անցած գնացած տարիներին, ընթանալիս ամեն ինչ նկատելով, և միևնույն ժամանակ այնքան հեռու շրջապատող ամեն ինչից... Փոշոտ սալարկի վրա, ուր դղրդում էին ծանր ավտոբուսների անիվները, նա մտովի թափառում էր բուրգոնդյան անտառների կամարների տակ, այն տեղերում, որտեղ անցել էր նրա երջանիկ մանկությունը, և շնչում էր մամուռի ու բնափայտի կեղևների բուրմունքը։ Նա քայլում էր աշնանային տերևների գորգի վրայով. մերկացած ճյուղերի միջև սկսեց ազմկել անձրևախառն քամին և, թռչելով, իր թաց թևով հպվեց նրա այտին։ Այդ լռության մեջ, ինչ-որ տեղ, զրնգում էր թռչունի կախարդական երգը։ Քամին ու անձրևն արագ անցան... Այդ նույն անտառներում մի ժամանակ թափառում էին երիտասարդ Աննետան և նրա լալկան սիրեցյալը, և այնտեղ ալոճենու կանաչ ցանկապատ կար, և մեղուներ էին դղրդում լքված տան շուրջը... Խնդություններ, տառապանքներ... Որքա՜ն է այդ ամենը հեռու... Աննետան ժպտում էր այն երիտասարդ աղջկան, որի համար տառապանքները անսովոր էին...

«Սպասի՛ր, խեղճ աղջիկ։ Դա դեռ միայն սկիզբն է...»։

«Դու ոչինչ չե՞ս ափսոսում»։

«Ոչ»։

«Ոչ այն, ինչ արել ես, ոչ այն, ինչ չի՛ արված»։

«Ոչ մի բան։ Օ՜ ննջգամիտ խելք, դու ուզում ես ինձ բռնել ափսոսանքների մե՞ջ։ Ջո՜ւր չանքեր են։ Ես ընդունում եմ ամեն ինչ, բոլորը, ինչ եղել է իմ կյանքում, և այն ամենը, ինչ չի եղել։ Ընդունում եմ ամբողջովին իմ ճակատագիրը, նրա իմաստությունը և խենթությունը։ Ամեն ինչ այդ ճակատագրում իսկական է եղել — իմաստունը և խելահեղը։ Մոլորությունը բնորոշ է մարդուն — այդպիսին է կյանքը... Բայց սերը երբեք մոլորություն չի լինում... Թող ծերությունը մոտ լինի,— իմ սրտին չեն հպվել կնճիռները... Եվ որքան էլ այդ սիրտը տառապած լինի, նա երջանիկ է նրանով, որ սիրել է...»։

Աննետան ժպտում էր, երախտապարտությամբ մտածելով նրանց մասին, ում կյանքում ինքը սիրել էր։

Այդ ժպիտի մեջ շատ քնքշություն կար, բայց քիչ չէր նաև զուտ ֆրանսիական անչար հեգնանքը։ Աննետան հետաքրքրությամբ էր նկատում ոչ միայն այն, ինչ սրտաշարժ էր, այլև ինչ ծիծաղելի էր այդ բոլոր տառապանքների մեջ, իր և ուրիշների ցանկությունների և սպասումի այդ եռուզեռում։ «Էլ ի՞նչ եմ սպասում... Սիրո հետ ամեն ինչ վերջացա՛ծ է։ Հիմա ձե՛ր հերթն է»...

Նա մտածում էր ուրիշների մասին — իր որդու մասին, որն ամբողջովին այրվում ու դողում էր, ձեռքերը պարզելով դեպի անհայտ ապագան։ Ֆիլիպի մասին, որը չէր բավարարվում այն ողորմելի սննդով, որով հասարակությունը փորձում էր հագեցնել նրա անկշտում քաղցը։ Սիլվիայի մասին, որը մոռացության էր փնտրում և սպասում իրադարձությունների, որոնք կլցնեին նրա սրտի խորաբաց դատարկությունը։ Նա մտածում էր մարդուկների մի ամբողջ բանակի մասին, որոնք ամբողջ կյանքը ձանձրույթից հորանջում են և անհանգիստ երիտասարդության մասին, որն այս ու այն կողմ է նետվում և սպասում... Ի՞նչի։ Դեպի ի՞նչն է նա մեկնում իր ձեռքերը։

Մոռանալով իրեն, Աննետան դիտում է փողոցային բազմությունը, մարդկային այդ ամբողջ զանգվածը, որ տանում է իր տաղտկալի աշխատանքի ծանր բեռը... Նախիր, որ վազում է, շտապում, կարծես նրան քշողն ավշարկաներ են։ Այդ նախրի մեջ ոչ ոք մյուսներին չի նկատում։ Բոլորը երևակայում են, որ շարժվում են իրենց կամքով, իսկ իրականում նրանց շարժման մեջ դնողը կողմնակի ուժ է, և այդ թվացող անկանոնության մեջ նախանշված ռիթմ կա... Բայց ո՞ւր է նրանց տանում անտեսանելի հովիվը։ Եվ բարի՞ է արդյոք այդ հովիվը։ Ո՞չ։ Նա չարի և բարու այն կողմն է...

Աննետան աշակերտուհիների հետ պարապում էր, ինչպես միշտ, համբերատար և սիրալիր, ուշադիր լսում էր նրանց մինչև վերջը, ամեն ինչ հանգամանորեն բացատրում էր առանց շփոթվելու։ Բայց միևնույն ժամանակ շարունակում էր մտածել իրեն հետաքրքրող հարցերի մասին։ Այն մարդու համար, ում մոտ դա սովորություն է դառել, դժվար չէ ապրել այդպիսի երկակի կյանքով. մեկը — արտաքինը, մարդկանց

միջև, մյուսը— հոգու խորքերում, որը լուսավորված է երա-զանքով։ Մեկը չի խանգարում մյուսին։ Մարդը երկուսն էլ տեսնում է միաժամանակ, ինչպես երաժիշտը, որն աչքերով պարտիտուրա է ընթերցում։ Կյանքը դա նույն սիմֆոնիան է. նրա յուրաքանչյուր ակնթարթը երգում է տարբեր ձայներով։ Այդ ջերմ ներդաշնակությունից անդրադարձած ցոլքերը քնքուշ վարդագույնով ներկեցին Աննետայի երեսը։ Այդ օրը նրա աշակերտուհիները, զարմանալով, որ նա այդքան երիտասարդ տեսք ունի, դեպի Աննետան զգում էին այն ուժեղ հակումը, որը պատանիները չհամարձակվելով դա խոստովանել, զգում են մեծահասակ ընկերուհիների, Նախագուշակների նկատմամբ։ Աննետայի մտքով չէր էլ անցնում, թե նա ինչ հետք է թողնում այսօր բոլոր նրանց սրտերում, ում մոտենում է։

Աննետան տուն վերադարձավ երեկոյան կողմը, նույն ձևով թևավորված, ոտքերի տակ հող չզգալով... Նա չէր կարող բացատրել, թե ինչու է այսօր սիրտն այդքան թեթևացած։ Կնոջ մեծ գաղտնիք, կնոջ, որը խնդության փայլ է ճառագայթում առանց որևէ տեսանելի պատճառի և նույնիսկ ամեն ինչին հակառակ։ Շրջապատող ամեն ինչ, ամբողջ արտաքին աշխարհը այդ րոպեներին նրա համար սոսկ երազանքի աղոտ ստեղծագործության և խանդավառ ֆանտազիայի թեմա էր։

Փողոցներում նրա կողքով անցնում էին բազմաթիվ մտահոգված մարդիկ։ Սլանում էին լրագրավաճառ փոքրիկ տղաները, բարձրաձայն հայտարարելով նորությունները, որոնք նույն րոպեին քննարկում էին անցորդները։ Աննետան նրանց վրա ուշադրություն չէր դարձնում։ Դիմացից եկող տրամվայից ինչ-որ մեկը ձայն տվեց նրան։ Աննետան միանգամից գլխի չընկավ, որ դա Սիլվիայի ամուսինն է։ Քրոջ ամուսնու ասածը չհասկանալով, Աննետան ուրախ ձեռքով արեց նրան... Ինչպե՞ս են շուրջը այս ուրախ կողմ վազվզում բոլորը... Նորից մի կարճ ակնթարթ նրան պատկերացավ գլխապտույտ հեղեղի տեսիլքը, որը աստղային հոսուն զանգվածի նման ուժով դուրս է պրծնում երկնակամարի ճեղքից և գահավիժում այդ հեղեղին կանչող անդունդը... Ո՞ր անդունդը...

Աննետան սանդուղքով բարձրացավ իր բնակարանը։ Դռան

շեմին նրան սպասում էր Մարկը, որի աչքերն ուղղակի փայլատակում էին, իսկ Մարկի հետևում կանգնած էր նույնպես սաստիկ գրգռված Սիլվիան։ Նրանք, ըստ երևույթին, անհամբերությամբ ուզում էին Աննետային ինչ-որ նորություն հայտնել... Ի՞նչ էր պատահել... Երկուսն էլ միանգամից սկսեցին խոսել — ամեն մեկն ուզում էր առաջինը լինել...

— Այդ ի՞նչ եք աղմկում,— ծիծաղելով հարցրեց Աննետան։

Նա միայն մի բառ հասկացավ.

— Պատերազմ է...

— Պատերա՞զմ է։ Ի՞նչ պատերազմ։

Ասենք, նա չզարմացավ... Ահա նա՝ անդո՜ւնդը...

«Ուրեմն, այդ դո՞ւ ես։ Վաղուց էի ես զգում քո կործանարար շունչը»։

Մարկն ու Սիլվիան էլի ինչ-որ բան էին գոռգոռում՝ մեկը մյուսին ընդհատելով։ Նրանց հաճույք պատճառելու համար Աննետան կամքի ճիգով մի րոպե թոթափեց իրենից թմրությունը...

Պատերա՞զմ։ Էհ, ի՜նչ կա որ։ Պատերազմ, խաղաղություն — այդ բոլորը կյանքն է, այդ բոլորը կյանքի խաղն է։ Ով ես կմասնակցե՜մ դրան...

Աննետան մոլի խաղացող էր, Աննետան՝ այդ Համայնա՜ծ հոգին։

«Ես մարտահրավեր եմ նետում աստծուն»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Անետա և Սիլվիա

Առաջին հրատարակության առաջաբանը 29
Մասն առաջին 31
Մասն երկրորդ 116

Ամա՛ո

Մասն առաջին 229
Մասն երկրորդ 390
Մասն երրորդ 493

Ռոմեն Ռոլան

Հմայված հոգին

Խմբագիր՝ Վ. Հ. Բաբայան, *նկարիչ՝* Վ. Ք. Մանդակունի, *գեղ. խմբագիր՝* Ան. Վ. Գասպարյան, *տեխ. խմբագիր՝* Ռ. Հ. Գրիգորյան, *վերստուգող սրբագրիչ՝* Ա. Ս. Հովսեփյան

РОМЕН РОЛЛАН
ОЧАРОВАННАЯ ДУША
(На армянском языке)
Издательство «Айастан», Ереван—1975

Հանձնված է շարվածքի 5/II 1975 թ.։ Ստորագրված է տպագրության 23/IV 1975 թ.։ Թուղթ տպագր. № 2, 84×108 1/32, տպագր.19,25 մամ.= =32, 34 պայմ. մամ., հրատ. 27,9 մամ.։ Պատվեր 2321։ Տպաքանակ 20000։ Գինը՝ 86 կ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։